Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՋԵՐ ՆՐԱ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԻՑ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)
Գ 479

Տպագրվել է պետական աջակցությամբ:

Գևորգյան Համլետ
Գ 479 Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից / Համլետ Գևորգյան
-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2012. 598 էջ

«Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից» պատմագիտական աշխատությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով (15.09.2010թ.) ոչ մասնագիտական բուհերի համար որպես ուսումնական ձեռնարկներ երաշխավորված «Ազատագրական պայքարի հերոսապատումից» և «Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատը» գրքերի վերամշակված և նոր նյութերով լրացված վերահրատարակությունն է:

Աշխատությունում հայրենական պատմագրության մեջ առաջին անգամ, արխիվային նորահայտ վավերագրերի, հուշագրությունների, մենագրությունների ուսումնասիրմամբ՝ ներկայացվում է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի ակզբի հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի առավել կարևորագույն ու արմատական նշանակություն ունեցող իրադարձությունները Արևմտյան Հայաստանում և Կովկասում, մասնավորապես մարտական-հայդուկային ու զինակիր խմբերի ու հայ ինքնապաշտպանական ուժերի մղած հերոսամարտերը:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)

ISBN 978-9939-53-985-0

© Համլետ Գևորգյան, 2012

ԳԻՐՔ 1

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԻՑ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային անկախության վերահաստատումը հնարավորություն ընձեռեց, ի թիվս բազում կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրների, վերագնահատել խորհրդային տարիներին հասկանալի պատճառներով անտեսված, հաճախ նաև միտումնավոր կերպով խեղաթյուրված պատմական անցքերը, ինչպես նաև ազգային կուսակցությունների, հայոց պետականության կառուցմանն ու ազատագրական պայքարին նվիրված պետական, քաղաքական և զինվորական գործիչների գործունեությունը: Արժանվույնս գնահատելով այդ իրողությունը՝ հարկ է ընդգծել, որ հայրենական պատմագիտության համար այսօր էլ պիտի ելակետային նշանակություն ունենա պատմական այդ ժամանակահատվածը օբյեկտիվ վերլուծությամբ և փաստական նյութի անկողմնակալ մեկնաբանությամբ ներկայացնելու չափանիշը:

1895 թ. Հ.Յ. Դաշնակցությունը իր գործունեության ոլորտում որդեգրում և սկսում է կենսագործել պայքարի առավել գործնական և կենսունակ ծրագրեր ու եղանակներ: Ի՞նչ հանգամանքներով էին պայմանավորված Դաշնակցության որդեգրած պայքարի նոր եղանակների ռազմավարությունն ու մարտավարությունը:

1. Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդ 2-ի սանձազերծած կոտորածներն արմատական փոփոխություններ ու տեղաշարժեր առաջացրին հայ իրականության և հայ ազգային կուսակցությունների գործունեության մեջ: Հայ ժողովրդի վրա ծառացած համիդյան հայաջինջ քաղաքականությունն ու հայկական բազմաթիվ բնակավայրերում արդեն տեղի ունեցած կոտորածները հայ ազգային կուսակցություններին թելադրում էին վերագնահատել նախորդ տարիների կենսագործած պայքարի ծրագրերը, ձևերն ու եղանակները:

Իր գործունեության սկզբնավորման շրջանում՝ մինչև 1895 թ. Հ.Յ. Դաշնակցությունը, որը դեռևս նոր-նոր առաջին քայլերն էր անում իր ապակենտրոն կառույցները Երկրի զանազան բնակավայրերում, ինչպես նաև սահմանամերձ տարածքներում հաստատելու ուղղությամբ, գրեթե որևէ գործնական քայլ չի ձեռնարկել մասնակցելու Սասունի և հայկական մյուս բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ համիդյան ջարդարար սուրն անխուսափելիորեն սպառնում էր Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայությանը, հայ ազգային-քաղաքական կուսակցությունները և մասնավորապես ՀՅԴ, պարտավոր էին իրենց առաջնահերթ ու կարևորագույն գերխնդիրը դարձնել ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, որդեգրելն առավել գործուն և կենսունակ ռազմավարություն ու մարտավարություն:

2. Ի տարբերություն հայ ազգային մյուս կուսակցությունների, ՀՅԴ համեմատաբար ավելի լայն հնարավորություն է ձեռք բերում ապակենտրոն իր կառույցները հիմնելու Հայաստանի երկու՝ արևելյան ու արևմտյան հատվածներում, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրներում: Քանի որ Արմենական կուսակցության գործունեության շրջանակները սահմանափակված էին հիմնականում Վասպուրական նահանգով, ուստի հենց այդ պատճառով չէր կարող խոչընդոտել ՀՅԴ կառույցների հիմնադրմանն ու ծավալմանը:

Հնչակյանների գործունեության շրջանակներն ու հնարավորություններն աստիճանաբար թուլանում և սահմանափակվում էին: Պոլսում նրանց նախաձեռնությամբ տեղի ունեցած Գում-Գափուի և Բաբ Ալիի անարդյունավետ ձեռնարկումների ու, մանավանդ, 1894 թ. Սասունի ինքնապաշտպանական մարտերին շատ թույլ մասնակցության պատճառով ժողովուրդը երես էր թեքել ու որևէ հույս այլևս չէր կապում նրա հետ:

Հ. Տասնապետյանի գնահատմամբ «Այդ թուականէն սկսեալ է (նկատի ունի 1896 թ.-Հ.Գ.), որ, յատկապէս հնչակեաններու պառակտումէն եւ անվերադարձ տկարացումէն ետք, Դաշնակցութիւնը փաստօրէն դարձաւ ու մնաց Հայ յեղափոխութեան միակ ղեկավար կուսակցութիւնը»[1]:

Նույնիսկ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, արժանվույնս գնահատելով ՀՅԴ գործնական քայլերն ու Երկրում նրա ապակենտրոն կառույցների արմատավորման իրողությունը, 1896 թ. սեպտեմբերի 20-ի հայրապետական ուղերձում նշում է. «...Դաշնակցութիւն կուսակցութիւնն հայկական նոր ասպետութիւնն է. նորա յառաջամարտիկներն մէկ մէկ ասպետներ հանդիսացան ի Վասպուրական եւ յայլուր: Ելէ՛ք, ելէ՛ք, ժողովո՛ւրդ Հայոց, անդամագրուեցէք հայկական այդ նոր ասպետութեան...»[2]:

3. Կողմնորոշումն ու ապավինումը Երրորդ ուժին, այն է՝ Եւրոպական գերհզոր տերությունների միջամտությամբ Հայկական Հարցը լուծելու և Օսմանյան կայսրության տարածքում հայկական կոտորածները կանխելու հույսն ու ակնկալիքը:

Կարապետ Իզմիրլյանի օբյեկտիվ գնահատմամբ «Թրքահայ Յեղափոխութիւնը իր յոյսը դրած էր եւրոպական միջամտութեան վրայ: Հնչակեան կուսակցութիւնը, ինչպէէ բնորոշած էր իր ծրագրին մէջ, այն հաւատքը ունէր, թէ «...Հաւաստի եւ անխուսափելի է թուրք պետութեան կործանումը... որ պատառ- պատառ պիտի իյնայ ուրիշ պետութիւններու ձեռքը»: Նույնն էր նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան համոզումը. «Շատերու աչքին, կըսէ Մ. Վարանդեան, Թուրքիան քայքայուած, մահամերձ պետութիւն մըն էր. բաւական էր քանի մը հարուած եւ Եւրոպան պիտի միջամտէր եւ մեծ երազը պիտի իրագործուէր»[3]:

Հ.Յ. Դաշնակցությունը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրն էր, մեր ժողովրդի քաղաքական առաջնորդը պատմական կարևորագույն մի ժամանակահատվածում: Անտա-

---

[1] Տասնապետյան Հ., Ինքնունամեայ հաւեկշիռ, Պէյրութ, 1985, էջ 25:
[2] Հայկ Աճէմեա, Հայոց Հայրիկը, Թաւրիզ, 1928, էջ 700:
[3] Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 141:

ռակույս. նրա անցած ուղին անթերի չէ. զերծ սխալներից. բայց անժխտելի է նրա նվիրումն ու գոհաբերությունը Հայոց Ազատամարտին:

Հ.Յ. Դաշնակցության 1895-1908 թթ. գործունեությունը. մասնավորապես մարտական գործողությունների վերլուծությունն ու նկարագրությունը. գիտական կարևոր նշանակություն ունեն մի շարք տեսանկյուններից: Նախ՝ ՀՅԴ 1895-1908 թթ. գործունեության վերլուծությունն ու շարադրանքը հավասարազոր է հայ ազգային-ազատագրական պայքարի այդ ժամանակահատվածի պատմության վերլուծությանն ու շարադրանքին: Երկրորդ՝ հայրենական պատմագիտության համար այսօր էլ պիտի ելակետային նշանակություն ունենա պատմական այդ ժամանակահատվածը օբյեկտիվ վերլուծությամբ եւ փաստական նյութի անկողմնակալ մեկնաբանությամբ վերլուծելու ու ներկայացնելու չափանիշը. քանզի այդ հանգամանքը մեր ժողովրդին անհրաժեշտ է պատմության դասերը ճիշտ գնահատելու և համապատասխան եզրահանգումներ կատարելու համար: Հայրենական պատմագրության մեջ առաջին անգամ առավել մանրամասն վերլուծվում է Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Արևմտյան Հայաստանում 1895-1908 թթ., մասնավորապես մարտական գործողությունների. մարտական ու զինատար խմբերի մղած կռիվների մարտավարությունն ու արդյունքը:

Եթե փորձենք համակողմանիորեն բնութագրել ու կառուցվածքային վերլուծության ենթարկել ազատագրական պայքարը որպես պատմական, հասարակական-քաղաքական օրինաչափ ու անհրաժեշտ երևույթ և առանձնացնենք ու բնութագրենք նրան պայմանավորող էական հատկանիշները. ապա առաջնահերթ է կարևորել և ընդգծել այդ պայքարին զինվորագրվածների ու առաջնորդող ուժերի կենսագործած մարտական գործողությունները: Որևէ վիճահարույց լինել չի կարող այն իրողությունը. որ ազատագրական պայքարի վերջնական արդյունքն ի վերջո մեծապես պայմանավորված է նաև այն մարտական գործողություններով. որոնք կազմակերպում և իրականացնում են ազատագրական պայքարն առաջնորդող կազմակերպությունները:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի (19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկիզբ) կարեւորագույն ու անքակտելի մասը կազմող մարտական գործողությունները բնութագրելիս պիտի առանձնացնել հետևյալ էական հանգամանքները.

1. Ազատագրական պայքարն առաջնորդող ազգային կազմակերպությունների ռազմա-քաղաքական գործունեության ուսումնասիրությունն անհրաժեշտ մատնանշում է. որ այն պայմանավորված չէ ու. բնականաբար. չի կարող բնութագրվել համընդհանուր պատմական նշանակություն ունեցող մեծածավալ մարտական գործողություններով: Եթե որպես ելակետ ընդունենք այդ իրողությունը և անաչառ գնահատենք ազգային-ազատագրական պայքարն իր ամբողջականությամբ ու յուրահատկությամբ. ապա ի թիվս բազում այլ հարցերի. պիտի պատասխանենք նաև հետևյալ հարցին. արդյո՞ք այդ պայքարը կրում էր համժողովրդական բնույթ. թե դրանք հայդուկային-մասնակի. ցուցադրական գործողություններ էին. ապստամբություն կամ ինքնապաշտպանություն:

Թեպետ պատմական տվյալ ժամանակահատվածում ազատագրական պայքարի առաջնորդի դերն ստանձնած Հ.Յ.Դաշնակցությունն իր ապակենտրոն կառույցներն էր հիմնել ոչ միայն Արևմտահայաստանի բազմաթիվ շրջաններում. այլև օտար տերություններում և 2-րդ Ընդհանուր ժողովում ընդունել էր «ուժերու կեդրոնացումը Երկրին մէջ» որոշումը. այնուամենայնիվ. ազատագրական պայքարը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով ձեռք չբերեց համաժողովրդական բնույթ և. բնականաբար. միամտություն ու անհիմն է պնդել ընդհանուր ապստամբության իրականացման հնարավորությունների մասին:

2. Ազատագրական պայքարի առանցքային ու շարժիչ ուժը առանձնակի. փոքր ընդգրկումներ ունեցող. իսկ ավելի հաճախ հայդուկային-պարտիզանական և աբեկչական գործողություններն էին. որոնք թեպետ հիմնականում հերոսական էին. բայց երբեմն չպատճառաբանված և ոչ արդյունավետ:

ՀՅԴ նախաձեռնությամբ կենսագործված առավել մեծածավալ և նշանակալի մարտական գործողությունները Սասունի 1904 թ. ապստամբությունն է. որն. անտարակույս.ավելի շուտ ինքնապաշտպանություն էր և «Խանասորի արշավանք»-ը: Իրենց ընդգրկումներով և իհարկե նաև ձեռք բերած արդյունքով Սասունի ապստամբությունն ու Խանասորի արշավանքը չափազանց հերոս լինելով ընդհանուր ապստամբության չափանիշներից չէին կարող արդարացնել կազմակերպիչների հույսերն ու սպասելիքները:

Ընդհանուր ապստամբության բացակայության պայմաններում ավելի են կարևորվում Երկրում տեղի ունեցած հայդուկային-մարտական գործողությունները. ինքնապաշտպանական մարտերը. ինչպես նաև Արևմտահայաստանի նախանշված շրջանները մեկնող մարտական ու զինատար խմբերի մղած կռիվները. որոնք. առանց բացառության. հերոսապատումի հիասքանչ օրինակներ են:

Պետք է շեշտել. որ մանավանդ հետխորհրդային շրջանում մի շարք պատմաբաններ արժևորեցին հայոց պատմության այս բարդ ժամանակահատվածը: Բայց հարկ է խոստովանել. որ պատմագիտական մշակված հայեցակարգերը ամբողջական չեն. իսկ ՀՅԴ կազմակերպած մի շարք ձեռնարկումների գնահատականը երբեմն ոչ անկողմնակալ ու անաչառ:

Աշխատության մեջ զարգացրել ենք պատմագիտական այն հայեցակարգը. որ ՀՅԴ մարտավարությունը չի հանգեցրել նախատեսված հանգրվանին և ունեցել է հակասական արդյունքներ: Ելակետ ունենալով համազգային հաղթանակի հասնելու գաղափարը. ՀՅԴ արդյունքում ունեցել է մասնակի հաղթանակներ: Սակայն դա ուներ մեղմացուցիչ հանգամանքներ. որոնցից հարկ է առանձնացնել նախ՝ այն բարդ պայմանները և աշխարհագրական միջավայրը. ուր մղվում էր այդ պայքարը. բ) ազատագրական պայքարի փորձի պակասը. գ) մեծ տերությունների դիրքորոշումը:

Աշխատության թեման արդիական է: Այսօր հայ ժողովուրդը կանգնած է քաղաքական երկընտրանքի առջև. և ճիշտ կողմնորոշմամբ միայն կարող է դիմակայել իրեն սպառնացող մարտահրավերներին:

Նորանկախ հանրապետության նկատմամբ մեծ տերությունների որդեգրած վերաբերմունքի մեջ հնի համեմատ քիչ բան է փոխվել: Նրանք դարձյալ իրենց քաղաքական նպատակներից ելնելով՝ շահարկում են և շահարկելու են մեր ժողովրդի ցավոտ և կենսական խնդիրները: Ուստի Արցախյան, հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում, ինչպես նաև մեր հարևանների և գերտերությունների հետ հարաբերություններում պետք է լինենք չափազանց զգուշավոր, ճշտորեն արժևորենք այն, ինչն իսկապես համահունչ է մեր շահերին: Այս ամենից ելնելով՝ կարևոր ենք համարում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի և դրա գլխավոր առաջնորդ կուսակցության՝ Հ.Յ.Դաշնակցության անցած պատմական ուղու խորքային ընկալումը, որը հանգեցրեց սեփական ուժերին ապավինելու ռազմավարության գնահատմանը: Արդյունքում՝ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերն էին և Հայաստանի Հանրապետության հռչակումը:

ԳԼՈՒԽ 1.
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
1895-1896 թթ.

1. 1. ՀՅԴ մարտավարության խնդիրներն ըստ 1895 թ. «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշումների

Մինչև 1895թ. Հ.Յ.Դաշնակցությունն կուսակցությունն առաջնորդվելով 1892 թ. գումարած 1-ին Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ծրագիր-կանոնագրում ամրագրված ծրագրային հիմնադրույթներով, այն է՝ «...ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն...», իր գործունեությունը գլխավորապես ծավալել է Արևմտյան ու Արևելյան Հայաստանի, ինչպես նաև արտերկրի մի շարք հայաբնակ վայրերում կուսակցական կառույցներ հիմնելու և ազատագրական պայքարի գաղափարները հայության շրջանում քարոզելու ուղղությամբ:

Հ. Տասնապետյանի սահմանմամբ. «1892-95 տարիները կազմեցին ՀՅԴ համար, բիւրեղացման, կազմակերպման, եւ ամրապնդման ժամանակաշրջան մը»[1]:

Այդ ժամանակահատվածում Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր կենսագործելու հետևյալ խնդիրները.

1. Ապակենտրոն կազմակերպական կառույցների հիմնում: Այդ նպատակով Արևմտահայաստանի մի շարք շրջաններն են գործուղվում ՀՅԴ գործիչներ, որոնք պիտի կուսակցական մարմիններ (խումբ, ենթակոմիտե, կոմիտե, կենտրոնական կոմիտե) հիմնեին իրենց հանձնարարված շրջաններում:

Համաձայն ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովի ընդունած որոշման, կուսակցական կառույցները պիտի գործեին ապակենտրոն սկզբունքով, իսկ «...գործող կոմիտէներին կապում, միացնում է Ընդհանուր Ժողովը, որը մշակել է ներկայ ծրագիրը, որի վճիռները պարտադրեցուցիչ են բոլորի համար...»[2]:

Պիտի նշել, որ ի տարբերություն հայ ազգային մյուս կուսակցությունների՝ Արմենական ու Հնչակյան, որոնք գործում էին կենտրոնացման սկզբունքով, Դաշնակցությունը շնորհիվ հենց ապակենտրոն կառույցների, կարողացավ առավել դյուրին ամրապնդվել և գործել Արևմտյան Հայաստանում:

Մինչև 1895 թ. ՀՅԴ իր կառույցները հիմնել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի (Տարոն, Սասուն), Վասպուրականի (ք. Վան, Հայոց Ձորի, Շատախի շրջաններում) և Էրզրումի նահանգներում: Տարոնում ու Սասունում գործում էին ՀՅԴ Դուրան -Բարձրավանդակի, իսկ Վասպուրականում Շամի կենտրոնա-

[1] Տասնապետյան Հ., Հ,Յ. Դաշնակցութիւնը իր կազմութիւնէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 23:
[2] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 1:

կան կոմիտեները: Էրզրումի նահանգում Դաշնակցությունը նույնպես հիմնել է կուսակցական կառույցներ. սկզբում «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից Հովհաննես Աստուրյանի, ապա Տիգրան Օքոնյանի և Ռոստոմի գործուն մասնակցությամբ:

Այստեղներում, ՀՅԴ գործունեությանը վերաբերող սկզբնաղբյուրներում չկան այնպիսի տեղեկություններ, որոնք ցույց տան, որ այդ նահանգում վերոհիշյալ գործիչները 1895-1908 թթ. կարողացել են հիմնել Կենտրոնական կոմիտե կամ թեկուզ կոմիտե, որոնց գործունեությունը ինչ-որ չափով համարժեք լիներ Բիթլիսում ու Վասպուրականի նահանգներում ՀՅԴ կառույցների ծավալած գործունեությանը:

Օրինակ, «Դրօշակ»-ին հասցեագրած նամակում (1895 թ. 11/25 յունիս), Ս. Զավարյանը ընկերներին գրում է, որ շատ հարկավոր են մի քանի կնիքներ: Նամակում նշում է նաև այն կառույցների անունները, որոնք պետք է գրված լինեին կնիքների վրա:

Ըստ Ս. Զավարյանի «Ահա ում անունները պէտք է լինին՝ Կարին, տակը՝ Կարնոյ խումբ, Տարօնայ խումբ (կամ կոմիտէ), Խնուսի: Բիւրօ, կամ Ռուսաստանի Ա. Բ. Գ. Դ. կոմիտէ»[1]:

Եթե այդ ժամանակ Էրզրումում (Կարին) կազմակերպված լիներ ՀՅԴ կոմիտե, ապա Ս. Զավարյանն անտարակույս կնշեր ոչ թե «Կարնոյ խումբ», այլ «Տարօնայ կոմիտէ», կամ «Ռուսաստանի Ա. Բ. Գ. Դ. կոմիտէ» անվանման համանմանությամբ «Կարնոյ կոմիտէ»:

Ավելին, ինչպես արդեն նշվել է, եթե Դաշնակցությունը իր կազմակերպական կառույցը կենտրոնական կոմիտեի կարգավիճակով ունենար Արևմտահայաստանի այնպիսի կարևորագույն նշանակություն ունեցող նահանգում, որպիսին Էրզրումն էր, ապա անպայմանորեն իր ներկայացուցիչները կունենար ՀՅԴ Ընդհանուր ժողովներում: Իրականում Էրզրումի կուսակցական կառույցները, անգամ հրավիրյալի կարգավիճակով, չեն ունեցել իրենց ներկայացուցիչները ՀՅԴ 3-րդ և 4-րդ Ընդհանուր ժողովներում:

Ընդհանրացնելով կարելի է եզրակացնել, որ սուլթան Աբդուլ Համիդի սանձազերծած կոտորածների ժամանակ, ճիշտ է, Էրզրումի նահանգում գործել են ՀՅԴ խմբեր, սակայն այդ ամենը բավարար չի եղել ձևավորելու կենտրոնական կոմիտե, կոմիտե, կամ նույնիսկ ենթակոմիտե:

2. Քարոզչական-կազմակերպական աշխատանքներ:

Հայտնի է, որ Հ.Յ. Դաշնակցությունը 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած ծրագրում ոչ միայն ամրագրել էր կուսակցության «Յեղափոխական նպատակը», այլև գործունեության 11 կետերից բաղկացած մարտավարությունը (Միջոց-տաքտիկան), որոնց մեջ էին.

1. «Պրոպագանդա անել Դաշնակցութեան գլխաւոր սկզբունքների, նպատակի եւ գիտակցական վերաբերութեան համար դէպի յեղափոխական գործ...

3. Ամէն միջոց գործ դնել թե՛ խօսքով եւ թե՛ գործով բարձրացնելու ժողովրդի յեղափոխական գործն ու ոգին...»[1]:

Առաջնորդվելով Ընդհանուր ժողովի ընդունած որոշումներով ՀՅԴ ապակենտրոն կուսակցական կառույցները և դրանցում ընդգրկված գործիչներն ու անդամները պիտի աշխատեին ժողովրդի մեջ տարածել ազատության և պայքարի գաղափարները, բարձրացնեին նրա մարտական ոգին ու պայքարի տրամադրվածությունը՝ այսինքն, գաղափարական, բարոյա-հոգեբանական և մարտական պատրաստվածության առումով արևմտահայությանը նախապատրաստեին դիմագրավելու սպասվելիք արհավիրքներին:

3. Ժողովրդի զինում, մարտական խմբերի կազմակերպում:

Իր ընդունած ծրագրում ամրագրելով կուսակցության «Յեղափոխական նպատակը», Հ.Յ. Դաշնակցությունը բնականաբար պիտի մարտավարության հարցում առանձնահատուկ ուշադրություն դարձներ մարտական խմբերի ու ժողովրդի զինման խնդիրներին:

Ըստ կուսակցության որդեգրած մարտավարության, անհրաժեշտ էր.

« 2. Կազմակերպել մարտական խմբեր...

4. Ամէն միջոց գործ դնել ժողովրդին զինելու:

10. Ճանապարհներ հաստատել մարդիկ եւ զէնք տեղափոխելու համար...»[2]:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ հայ ազգային կուսակցությունները, մասնավորապես Հ.Յ. Դաշնակցությունը կարողացել էր պայքարի որոշակի փորձառություն ձեռք բերել ու մարտական խմբեր ուղարկել Արևմտյան Հայաստանի զանազան շրջանները, սակայն պիտի փաստել, որ 1895 թ. հայկական կոտորածների ժամանակ վերոհիշյալ մարտական խմբերի առաջնորդներից վտանգված շրջաններում եղել են՝ Վանի նահանգում Պետոն, Նիկոլ Դումանը, Վարդանը, իսկ Թաքուլն ու Հրայր Դժոխքը գործել են Բասենի և Խնուսի շրջաններում:

1895 թ. Հ.Յ Դաշնակցության գործունեությունում սկսվում է որակական մի նոր շրջան, երբ կուսակցությունը իր դեռևս նոր ձևավորված կազմակերպական կառույցներով պիտի կենսագործեր կենսական կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված էին ժամանակաշրջանի առանձնահատկությամբ ու թելադրանքով, Արևմտյան Հայաստանի ու ընդհանրապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայության իրական կացությամբ:

Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերի հայությունը զինված ու կազմակերպված չէր , ինչն աներկբա նշանակում էր, որ կոտորածները շարունակվելու դեպքում պատրաստ չէր ինքնապաշտպանության:

[1] Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 181:

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 15:
[2] Նույն տեղում:

Սասունի 1894 թ. դեպքերից հետո. Ինչպես է, կատարվածը տեղում ուսումնասիրելու ու համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով եվրոպական տերությունների ներկայացուցիչներն այցելել էին կոտորածի վայրերը. սակայն անցել էին ամիսներ և Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը ցույց էր տալիս, որ հայությանը դարձյալ սպառնում էին անխուսափելի կոտորածներ:

Համանման իրավիճակում Հ.Յ. Դաշնակցությունը ժամանակաշրջանի հրամայականի թելադրանքով, անհրաժեշտաբար իր ուշադրությունն ու կարելիությունը պիտի կենտրոնացներ հայության համար կարևորագույն ու հրատապ նշանակություն ունեցող խնդրի, այն է՝ հայության ինքնապաշտպանության կազմակերպման վրա, ընդամին կյանքի կոչեր ժամանակաշրջանի պահանջներին համահունչ կենսունակ և գործող մարտավարություն:

Գործունեության ինչպի՞սի մարտավարություն պիտի ընտրեր Դաշնակցությունը, որ կարողանար իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում կազմակերպեր արևմտահայության ինքնապաշտպանությունը և կանխեր ջարդերի սպառնալիքը:

Մինչև 1895 թ. ՀՅԴ չէր գումարել մեկ այլ Ընդհանուր ժողով և 1-ին Ընդհանուր ժողովում ընդունված մարտավարությանը վերաբերող 11 կետերը մնացել էին անփոփոխ: Քանի որ Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության հետևանքով հայության գլխին ծառացել էր ջարդերի սպառնալիքը, հետևաբար Դաշնակցությունը իր գործունեությունում պիտի առաջնորդվեր կամ 1-ին Ընդհանուր ժողովում ընդունված մարտավարությամբ, կամ կյանքի կոչեր նոր, ժամանակաշրջանի յուրահատկություններից բխող, առավել կենսունակ մարտավարություն:

Կուսակցության գործունեության առավել արմատական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ, առավել ևս մարտավարական, իրավասու էր որոշումներ կայացնել ՀՅԴ Ընդհանուր ժողովը կամ եթե ծրագրային հիմնարար դրույթներին չէր վերաբերվում՝ ՀՅԴ բյուրոն:

1895թ սկզբներին գումարվում է ՀՅԴ կոմիտեների ներկայացուցիչների Ընդհանուր-ռայոնական ժողովը: Քանի որ Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի ծայրահեղ լարվածության պատճառով նպատակահարմար չէր, որ ՀՅԴ կառույցների ներկայացուցիչները հեռանային իրենց շրջաններից, ուստի ՀՅԴ բյուրոյի որոշմամբ Ընդհանուր-ռայոնական ժողովի աշխատանքներին մասնակցել են ընդամենը 12 շրջանների ներկայացուցիչներ[1]:

Ի դեպ, այդ ժողովը ժամանակին թեպետ կոչվել է «Ընդհանուր», բայց քանի որ նրա աշխատանքներին չեն մասնակցել կուսակցական բոլոր մարմինները, ապա այդ պատճառով մնում է որպես ռայոնական ժողով:

Չնայած հանգամանքների թելադրանքով այդ ժողովին մասնակցել են ՀՅԴ կովկասյան մարմինների ներկայացուցիչները, բայց հասկանալի պատճառներով ժողովականներն առավելապես քննարկել են այնպիսի հարցեր, որոնք

[1] Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 161:

վերաբերում են Հ.Յ. Դաշնակցության գործունեությանն ընդհանրապես և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի խնդիրներին:

Թվում է, որ եթե Ընդհանուր-ռայոնական ժողովում քննարկվող հարցերն առավելապես վերաբերվելու էին ՀՅԴ ընդհանուր և մասնավորապես Արևմտյան Հայաստանում գործող կառույցների գործունեությանը, ապա ժողովի գումարման հիմնական նպատակը պիտի լիներ ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրների քննարկումն ու համապատասխան վճիռների ընդունումը: Սակայն, ժողովի նյութերի և կայացրած որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, կարելի է ասել, Դաշնակցության վերջին երեք տարիների գործունեության յուրօրինակ հաշվետվությունն էր, վերլուծությունն ու գնահատականը, իսկ Հր. Տասնապետյանի գնահատմամբ «1895-ի ժողովը յետադարձ ակնարկով մը գնահատանքը կրնէ 1892-էն-ի վեր կուսակցութեան ունեցած գործունէութիւնը...[1]:

Հիմք ունենալով Ընդհանուր-ռայոնական ժողովի «Ժողովի նպատակը» բաժնի արձանագրությունը, կարելի է ասել, որ այդ ժողովը գումարվել է հետևյալ նպատակով.

1. Քանի որ շատ կարևոր էր կուսակցական կառույցների միջև առավել հստակ ու սերտ կապ ու փոխհարաբերության հաստատելու խնդիրը, այդ պատճառով ժողովի նպատակն էր՝ պարզել վերջին երեք տարիների ընթացքում կուսակցության մեջ ծագած մի քանի անորոշ հարցերը, կառույցների գործած սխալներն ու բացթողումները:

2. Անհրաժեշտ էր հաշվի առնել նախորդ տարիների փորձը, թույլ տված սխալներն ու կատարած ոչ օգտակար, ավելորդ գործողությունները՝ իրականացնել գլխավորը՝ «...գալ համաձայնութեան այն ընթացքի վերաբերմամբ, որ հարկաւոր է բռնել ներկայ բարդ հանգամանքներում, որպէսզի բոլոր խմբերի գործողութիւնների մէջ լինի համերաշխութիւն՝ Դաշնակցութեան վերջնական նպատակին-Տաճկահայաստանի ազատութեանը աւելի կատարելութեամբ հասնելու համար»[2]:

Իհարկե, ժողովում արձանագրվում է Արևմտյան Հայաստանում տիրող ծանրագույն ու տագնապալի կացության իրողությունը, բայց որոշակիորեն չի նշվում, թե ինչպիսի քայլեր պիտի ձեռնարկի կամ գործնականում ինչ կարող է կենսագործել Դաշնակցությունը, եթե Սասունի ողբերգական դեպքերը կրկնվեն հայկական մյուս բնակավայրերում:

Մարտավարության հարցում նույնպես չի կայացվում որևէ նոր որոշում: Կարելի է ասել, որ Դաշնակցության զինանոցում, որպես գործող մարտավարություն (Միջոց-տաքտիկան), մնում է 1-ին Ընդհանուր ժողովի կողմից ընդունված 11 կետից բաղկացած մարտավարությունը:

[1] Տասնապետյան Հ., Հ,Յ. Դաշնակցութիւնը իր կազմութունէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), էջ 39:
[2] «Դիւան...», հ. 1, էջ 161:

Այսուհանդերձ, ժողովում ընդունվում են մի շարք որոշումներ, որոնցից Արևմտյան Հայաստանում գործող կուսակցական կառույցների «Յեղափոխական գործունեութիւնը ուժեղացնելու միջոցներ»-ից կարելի է առանձնացնել.

1. Կարևորելով Արևմտահայաստանում գործող կուսակցական գործիչների ներկայությունն ու գործունեությունը, ժողովը որոշում է. «Գործող ագենտների թիւը բազմացնել. ամենակարեւոր մեր անելիքներից մէկն է շատացնել Տաճկաստանում ղեկավարող, կազմակերպող ուժերի քանակութիւնը...»[1]:

2. Տարբեր շրջաններում գործող ՀՅԴ կառույցների միջև սերտ կապ ու փոխհարաբերություն հաստատելու և հարկավոր պիտույքները, օրինակ զենք ու զինամթերք, մի վայրից մյուսը տեղափոխելու համար անհրաժեշտ էր հնարի կողքին ստեղծել նոր ճանապարհներ ու կայարաններ:

Ժողովի որոշմամբ ամենակարևոր ճանապարհները պիտի լինեին. «1. դէպի Մուշ տանող, 2. Դէպի Վասպուրական, 3. դէպի Ալաշկերտ-Վան»:

3. Օրվա կարևորագույն հրամայականը արևմտահայությանը զինելու, զենք ու զինամթերք ձեռք բերելու խնդիրն էր: Այդ նկատառումով ժողովի որոշումներից երրորդը՝ «Զէնքի եւ դրամական միջոցների հայթայթումը» վերաբերում է հենց վերոհիշյալ խնդրին, որին ժողովը փոքր-ինչ ավելի մեծ ուշադրություն է դարձրել: Որպեսզի այս հարցի վերաբերյալ կայացվեր իրատեսական ու ավելի օգտակար որոշում, նախ պիտի քննարկվեր և հաշվի առնվեր այդ գործում կուսակցության անցած ուղու փորձառությունը իր դրական ու բացասական արդյունքներով ու հետևանքներով:

Դաշնակցության հիմնած ապակենտրոն կառույցները, հատկապես Արևմտյան Հայաստանում գործող, օժտված էին մի կարևոր առանձնահատկությամբ: Նրանք, ըստ էության մարտական կառույցներ էին: Այս առումով Արևմտյան Հայաստանում կազմավորվող ՀՅԴ խմբերի առաջնահերթ գործը զինման խնդիրի լուծումն էր: Այդ հարցը Դաշնակցության գործունեությունում առավել կարևոր ու հրատապ նշանակություն է ձեռք բերում հատկապես 1895 թ., երբ ողջ հայության ու նրա ազատագրական պայքարն առաջնորդող կուսակցությունների գերխնդիրն է դառնում կանխել Օսմանյան կայսրության բռնապետության տակ գտնվող հայ բնակչությանը սպառնացող ջարդերը:

Քանի որ 1-ին Ընդհանուր ժողովից հետո վերոհիշյալ ժողովը իր ընդգրկումով և նշանակությամբ ՀՅԴ գործունեությունում փաստորեն երկրորդն էր, հետևաբար պետք է լուրջ քննարկման առարկա դարձներ Արևմտյան Հայաստանում ձևավորված կուսակցական կառույցների և արևմտահայության զինման հարցը: Իսկ իրականում, այդ հարցում հավատարիմ գտնվելով ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովի ոգուն և հաշվի առնելով կուսակցության իրական հնարավորությունները Ընդհանուր-ռայոնական ժոժողովը փաստում է, որ ներկա պահին կուսակցությունը չի կարող զինել ողովդի մեկ տասներորդ մասն անգամ: Որպես պատճառաբանություն, ժողովը իր որոշման մեջ արձանագրում

[1] Նույն տեղում, էջ 164:

է հետևյալ փաստարկը. «Առաջին՝ ներկայ պայմաններում շատ դժուար է տեղացիների համար զէնք գնել մոլեռանդ մահմետականներից: Երկրորդ՝ շատ անգամ գործին նուիրուած մարդիկ աղքատ լինելով՝ անկարող են ձեռք գցել կռուելու պարագաներ»[1]:

Չնայած ժողովի որոշումների մեջ նշվում են զենք ձեռք բերելու դժվարությունները ու միաժամանակ նաև անհրաժեշտությունը, բայց չեն նշվում դրանց գնման նոր, առավել արդյունավետ միջոցները: Ամենայն հավանականությամբ այս կարևորագույն հարցի վերաբերյալ ՀՅԴ այդ ժամանակ կամ դեռևս չուներ հստակ դիրքորոշում և հնարավորություն, կամ դա այնպիսի գաղտնիք էր, որը ենթակա չէր հրապարակման:

Այսուհանդերձ, զինման, զենք ու զինամթերքի ձեռք բերման հարցում ժողովի որոշումների մեջ կան ուշագրավ տեսակետներ, որոնցից կարելի է առանձնացնել. Ո՞ւմ պետք է տրվեր զենքն ու զինամթերքը:

1. Համաձայն ժողովի որոշման կուսակցության անմիջական պարտականություն էր հեղափոխական խմբերին օգնելը: Այս որոշումը կուսակցության գործունեությունում այսուհետև ունենում է արմատական նշանակություն: Պիտի նշել, որ հեղափոխական խմբերին օգնելը կամ ավելի ստույգ մարտական ու զինատար խմբերի զինումն ու Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններ ուղարկելու մարտավարությանը Դաշնակցությունը հավատարիմ է մնում մինչև 1904 թ. Սասունի դեպքերի ավարտը:

2. Զենքի տարածման գործում, ինչքան էլ համոզիչ չլինի, ժողովի որոշմամբ ՀՅԴ պիտի ունենար օժանդակ դերակատարություն, բայց հնարավորության սահմաններում իրականացներ զենքի ձեռք բերումն ու տարածումը: Հարց է ծագում, եթե Դաշնակցությունը, որը ստանձնել էր հայության ազատագրական պայքարն առաջնորդողի առաքելությունը և զինման հարցում ունենալու էր օժանդակ դերակատարություն, ապա ո՞վ և ինչպե՞ս պիտի լուծեր արևմտահայության համար կենսական նշանակություն ունեցող զինման հարցը:

Համաձայն ժողովի որոշման, եթե այս հարցում ՀՅԴ նույնիսկ օժանդակ դերակատարություն ունենար, ապա զենք տարածելով «...դրանով մեծ զարկ տուած կը լինենք եւ նրան, որ ժողովուրդը ինքը կը ձգտի զինուել ...»[2]:

Ժողովրդի զինումը թեպետ չափազանց կարևոր էր, բայց քանի որ Դաշնակցության հնարավորությունները, ինչպես իրավացիորեն նշվում է 1-ին Ընդհանուր, ապա նաև վերոհիշյալ ժողովում, հեռու էին լուծելու զինման խնդիրը, ապա Ժողովուրդը պիտի ձգտեր զենք ձեռք բերել ու զինվել իր միջոցներով: Այս հարցում, ՀՅԴ կառույցների պարտականությունն էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել ու աջակցել բնակչությանը:

3. Նկատի ունենալով անցյալի փորձը, ժողովը որոշում է, որ Երկրում գործող կուսակցական գործիչները պետք է ձգտեն հնարավորության սահմաններում

[1] Նույն տեղում, էջ 164:
[2] Նույն տեղում:

ձրի զենք չբաժանել. և տալ հատկապես գործին շատ մոտ կանգնած մարդկանց: Ըստ այդ որոշման զենք ձեռք բերելը «...վերապահում է ամէն մի գործող խմբի. որ հարկա. հետամուտ կը լինի թեկուզ քիչ. բայց լաւ զէնքեր գնելու ձեռնահաս եւ փորձուած մարդկանց միջոցով...»[1]:

4. Զենք ու զինամթերք ձեռք բերելու համար. ՀՅԴ խմբերը պիտի ձգտեն հաստատուն ու տնտեսական հիմքերի վրա դնել դրամի հարցը:

Քանի որ կուսակցության առջև ծառացած դժվարագույն խնդիրներից մեկն ֆինանսական միջոցների հայթայթումն էր. այդ պատճառով ՀՅԴ կառույցները պիտի աշխատեին այդ հարցը հնարավորությունների սահմաններում մասնակիորեն լուծել նաև տեղերում: Համաձայն ժողովի որոշման. զենք և զինամթերքի գնման համար նախատեսվող գումարը նախնառաջ պիտի մուծեին կուսակցության անդամագրվածները. ապա նոր միայն ժողովուրդը:

Այս առնչությամբ Ընդհանուր-ռայոնական ժողովը իր որոշմամբ ՀՅԴ խմբերին զգուշացնում է. որ դրամ ժողովելու ժամանակ չպետք է դիմել այնպիսի միջոցների. որոնք կարող էին վիրավորել մարդկանց զգացմունքները[2]:

Այս որոշումը շատ կարևոր էր և խորապես մտածված ու կշռադատված: Հաշվի առնելով հայ ազգային կուսակցությունների և սեփական փորձը. Դաշնակցության համար արդեն գաղտնիք չէր. որ Արևմտյան Հայաստանում կուսակցական կառույցներ հիմնելու ու նրանց գործունեության շրջանակներն ընդարձակելու. խորացնելու համար հարկավոր էր շահել ժողովրդի համակրանքն ու վստահությունը: Այդ պատճառով կարևորելով ՀՅԴ խմբերի գործունեության մեջ բարոյա-հոգեբանական գործոնի դերն ու նշանակությունը՝ Ընդհանուր ռայոնական ժողովը իր որոշումների մեջ ամրագրում է նաև վերոհիշյալ կետը:

5. Ընդհանուր-ռայոնական ժողովը կարևոր նշանակություն տալով քարոզչական աշխատանքներին. հրահանգում է ՀՅԴ խմբերին կազմել խմբագրական մասնաժողովներ ու Բյուրոյի միջոցով կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակ»-ին մշտապես ուղարկել նյութեր և դրանցում բարձրացնել այնպիսի հարցեր. որոնք ունեն հեղափոխական նշանակություն[3]:

Բացի դրանից «...տեղական խմբերը պիտի աշխատեն թռուցիկ թերթերով «Հ. Յ. Դաշնակցութեան այսինչ ճիւղ» ստորագրութեամբ վառ պահել հասարակութեան հետաքրքրութիւնը դէպի յեղափոխական գործը»[4]:

Եթե նույնիսկ Ընդհանուր-ռայոնական ժողովը քննարկվող հարցերի վերաբերյալ ընդուներ համակողմանիորեն փաստարկված որոշումներ. ապա. այնուամենայնիվ. կարևորագույնը զուտ գործնական առումով այդ որոշումների կենսագործումն էր: Ի՞նչ կարող էր անել և ինչի՞ էր ընդունակ Դաշնակցությունը ոչ թե որոշումներ կայացնելիս. այլ գործնականում:

[1] Նույն տեղում. 164-165:
[2] Նույն տեղում, 165:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Դաշնակցությունը հիմք ունենալով նախորդ տարիների փորձառությունն և 1ին Ընդհանուր ու 1895 թ. Ընդհանուր-ռայոնական ժողովի որոշումները. պիտի իր գործունեությունը կենտրոնացներ կազմակերպելու արևմտահայության ինքնապաշտպանությունը. իսկ Հր. Տասնապետյանի սահմանմամբ «...կը նախապատրաստեր յետագայ 5-6 տարիներու յեղափոխական-մարտական գործունեութիւնը. յեղափոխական քարոզչութիւն. կազմակերպութեան ծաւալում. մարդուժի եւ զինամթերքի փոխադրութեան գիծերու հաստատում. ժողովրդի զինում. ֆէտայական թէ տեղական-մարտական խումբերու կազմութիւն. ինքնապաշտպանութեան կամ ժողովրդի պաշտպանութեան կռիւներ՝ յատկապէս 1895-96 թուականներու համիտեան կոտորածներու շրջանը»[1]:

1. 2 Ախլաթ գավառի ինքնապաշտպանությունը

Եթե զուտ գործնական առումով արժևորենք Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը ազգային-ազատագրական պայքարում. ապա անհերկբա պիտի ընդգծել. որ ՀՅԴ իր գործունեությունը Արևմտյան Հայաստանում. ըստ էության. ծավալել է Սասունի 1894 թ. դեպքերից հետո: ՀՅԴ գործունեության մեջ տեղի ունեցած արմատական տեղաշարժը. առավելապես մարտավարական բնույթով. կարելի է ասել. պայմանավորված էր հիմնականում հետևյալ հանգամանքներով.

1. Արտաքին. կապված Հայկական Հարցի նկատմամբ Եվրոպական տերությունների դրսևորած վերաբերմունքի հետ:

Ինչպես հայտնի է. Սասունում տեղի ունեցած դեպքերը տեղում ուսումնասիրելու նպատակով առաջին անգամ 1895 թ. հունվարին այնտեղ են ժամանում եվրոպական տերությունների ներկայացուցիչները: Սասունում կատարած ուսումնասիրությամբ համոզվելով. որ հայության նկատմամբ իրոք կատարվել էր ոճրագործություն. նրանք սուլթան Համիդին են ներկայացնում հայկական նահանգներում բարեփոխումներ անցկացնելու ծրագիր (1895 թ. Մայիսյան ծրագիր - Հ.Գ.):

[1] Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, էջ 19-20:

Սասունի 1894 թ. ողբերգական դեպքերը, ապա նաև արևմտահայության զանգվածային կոտորածներ միանշանակորեն հաստատում էին, որ հայ ազգային կուսակցությունները, որոնք կոչված էին առաջնորդել արևմտահայության ազատագրական պայքարը, այդ ժամանակաշրջանում անպատրաստ էին և ի զորու չէին կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունն ու խոչընդոտելու թուրք իշխանություններին՝ կենսագործելու ծրագրած հայաջինջ քաղաքականությունը: Եվրոպական տերությունների միջամտությունը, Հայկական հարցի վերաբացումը որոշակի հույսեր են արթնացնում ոչ միայն ջարդերի սարսափում ապրող հայության, այլև ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ-ի շրջանում:

Երրորդ ուժին ապավինելը, այն է՝ եվրոպական տերությունների աջակցությամբ Հայկական հարցի լուծումը, հայկական նահանգներում բարեփոխումների իրականացումն ու դրանով իսկ ջարդերի կանխումը կուսակցությունների քաղաքական կողմնորոշման, նրանց որդեգրած ռազմավարության կենսագործման հարցում ձեռք են բերում առաջնահերթ նշանակություն:

2. 1894-96 թթ. համիդյան «արյունոտ» քաղաքականության ծավալման ժամանակահատվածում հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ - գերխնդիրը, բնականաբար, պիտի լիներ արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպումը: Այդ խնդրի կենսագործումը Հ.Յ.Դաշնակցության գործունեության մեջ անհրաժեշտաբար պետք է ձեռք բերեր ռազմավարական նշանակություն, որի իրագործման համար անհրաժեշտ էր մշակել և որդեգրել ժամանակաշրջանի առանձնահատկություններից բխող մարտավարություն: Եթե Հ.Յ. Դաշնակցության գործունեության առաջին շրջանը (1890-1895) Հ. Տասնապետյանի բնորոշմամբ «...կազմեցին բիւրեղացման, կազմակերպման եւ տարածման շրջան մը», ապա ՀՅԴ գործունեության երկրորդ շրջանը, որը պայմանավորված է 1894-96 թթ. համիդյան «արյունոտ» քաղաքականությամբ, կարելի է սահմանել որպես ինքնապաշտպանության, մարտական ու զինակիր խմբերի կազմակերպման և հայդուկային- պարտիզանական կռիվների ու ահաբեկչական գործողությունների շրջան:

Այդ ժամանակահատվածում Արևմտահայաստանում տեղի ունեցող դեպքերի թելադրանքով բազմաթիվ կամավորներ, գլխավորապես հենց Դաշնակցության նախաձեռնությամբ, համախմբվում էին Կարսի նահանգում ու Սալմաստի շրջանում և ձգտում մեկնել Երկիր՝ իրենց մասնակցությունը բերելու արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպմանը: Բացի դրանից, համաձայն դեռևս գործող մարտավարության, Երկրում հաստատված մարտական ուժերը պիտի ձեռնարկեին հայդուկային-պարտիզանական կռիվներ ու ահաբեկչական գործողություններ, որոնք ունեին ոչ թե հարձակողական, այլ առավելապես պաշտպանական բնույթ:

Հ.Յ.Դաշնակցության գործունեությունը արժևորելիս կարելի է մասամբ համաձայնվել Կ. Սասունու հետևյալ ձևակերպմանը. «Ծանր փորձութեան շրջանն էր 1895-96 թթ.-ի փոթորիկը հայկական ազատագրական շարժման համար: Այդ ծանր հարուածը հայ երիտասարդ յեղափոխութեան մէջքը կոտրեց: Վերջնականօրէն հրապարակէն քաշուեցան այլ յեղափոխական կազմակերպութիւնները եւ մէջտեղ մնաց միայն Հ.Յ. Դաշնակցութիւնը»[1]:

ՀՅԴ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցությունը իր գործունեությունն Արևմտյան Հայաստանում, ինչպես արդեն նշվել է, առավելապես ծավալել է Բիթլիսի և Վանի նահանգներում:

Բիթլիսի նահանգը (վիլայեթ) բաղկացած էր չորս (Բիթլիս, Սղերդ, Մուշ, Գենջ) գավառներից (սանջակ): Բիթլիս գավառը իր հերթին բաղկացած էր չորս գավառակներից (կազա), որոնց կազմում եղել են 441 գյուղ: Սղերդի կազմում եղել են հինգ գավառակ և 679 գյուղ, Մուշինը՝ հինգ գավառակ, 567 գյուղ, իսկ Գենջինը՝ երեք գավառակ, 423 գյուղ[2]:

Ազատագրական պայքարի առաջնորդ ազգային կուսակցությունների գործունեության ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ այդ նույն ժամանակահատվածում նրանցից և ոչ մեկը որևէ շոշափելի օգնություն չի ցուցաբերել Սասունին, թեև չէին կարող տեղյակ չլինել այնտեղ տիրող իրավիճակին և նրան սպառնացող ահավոր վտանգի մասին:

Մինչև 1894 թ. Սասունի ինքնապաշտպանական մարտերը Հ. Յ. Դաշնակցությունը դեռ նոր էր կազմավորվել և Սասունում դեռևս չէր հասցրել գործել: Բայց դա չէր նշանակում, որ նրա ուշադրությունից դուրս էր Արևմտահայաստանի կարևորագույն մի այնպիսի շրջան, ինչպիսին Սասունն էր իր բնական ամրակուռ դիրքով և հերոսական անցյալով: ՀՅԴ Սասունի դեպքերի նախօրեին փորձե՞լ է իր կարելիությունների սահմաններում զինական աջակցություն ցույց տալ սասունցիներին, որոնց համար օրհասական այդ օրերին զենք ձեռք բերելը կենսական նշանակություն ուներ:

Հ.Յ. Դաշնակցության կազմավորած մարտական խմբերից մեկը նշանավոր Արաբոյի գլխավորությամբ 1893 թ. գարնանը Կովկասից Երկիր անցնելիս, Մշո դաշտը չհասած, Գյալառաշի ձորում շրջապատվում է թշնամու կողմից: Չնայած հերոսական դիմադրությանը, խմբի անդամները մինչև վերջին փամփուշտը մարտնչում են և նույն ձորում էլ նահատակվում[3]:

Այդ նույն տարում ՀՅԴ աջակցությամբ Տարոն է վերադառնում Մարգար Վարժապետը և հաստատվելով իր հայրենի Վարդենիս գյուղում՝ բուռն գործունեություն է ծավալում մարտական խմբեր կազմակերպելու նպատակով, բայց թուրք իշխանությունները տեղեկանալով նրա կատարած գործերի մասին՝ ձերբակալում են նրան, տանում Բիթլիս ու կախաղան բարձրացնում:

Հնչակյան կուսակցությունը, որի ներկայացուցիչ Համբարձում Բոյաջյանը (Մեծ Մուրադ) ստանձնել էր ինքնապաշտպանության առաջնորդի դերը, նույնպես զինական աջակցություն ցույց չի տվել Սասունին: Սասունցիները խոր

[1] Սասունի Կ. Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 591:
[2] Տե՛ս Ա-ԴՕ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, 1912, էջ 8:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ(Հ.Յ. Դաշնակցության կենտրոնական արխիվ, Բոստոն), թթ. 685, գ. 6, էջ 2-3:

հիասթափություն են ապրել՝ իմանալով, որ «Մուրատը, բացի Կարսէն բերած բերդյան հրացաններէն եւ 2000 փամփուշտներէն, այլ զէնք չունէր»[1]:

Սասունցիների պահանջները բավարարելու համար Մուրադը որոշում է մի խումբ ուղարկել Կովկաս՝ զենք բերելու: Խնդրանքը նշանակում են Հրայրին, որը 50 սասունցիների ընկերակցությամբ մեկնում է Կարս, որտեղից, բան Մուրադի հավատանքն, տեղի հնչակյանների կենտրոնից պիտի ստանար զենք և վերադառնար Սասուն: Հանձնարարությունը Կառնեցի Մկրտիչի և Ղազարաճցի Պողոսի վկայության, իրենք հասնելով Կարս՝ գտնում են Հնչակյան կուսակցության մի քանի անդամների, նրանց հանձնում Մուրադի նամակներն ու զենք պահանջում: Բայց, ի զարմանս սասունցիների, հնչակները չեն բավարարում նրանց պահանջները՝ պատճառաբանելով. «Այդ Կենտրոնին գործն է, մենք զէնքեր չունինք: Ըսին՝ «Ջանմ, միք անէք այդպէս, Սասնոյ վրայ կռիւ է, Մուրատ ուզեն է մնացել, մեզ փութով ճամփած է օգնութիւն հասցնելու: Դուք արիւնի տակ կը մնաք: Էդպես չի լինի»: Օգուտ չունեցաւ: Ըսին, «Կենտրոնի գործն է» ու կանգնեցան: Իսկ Կենտրոնը ո՞ւր է, սասանան գիտէ»[2]:

Հնչակներից անորոշ պատասխան ստանալուց հետո նրանք հարկադրված դիմում են ՀՅԴ Ջրաբերդ (Կարս) կենտր. կոմիտեին՝ ներկայացնում Սասունում տիրող իրավիճակը և խնդրում իրենց զենքեր տալ:

«Երբ ըսինք,- վկայում են Կառնեցի Մկրտիչն ու Պողոսը,– թէ եկած ենք զէնքի, հոն կռիւ կայ, պարապ ինչպէ՞ս դառնանք, անոնք մէկէն ըսին, «Ինչ որ մենք ունինք, ձերը համարեցէք: Մեր տղաներն ալ թող ձեզի մատաղ լինին: Մենք եւ մէկ հաւատի ենք եւ մեր ազգի ազատութիւնը կուզենք...»[3]:

Սասունցիները ՀՅԴ Կարսի կենտր. կոմիտեից ստանում են 26 հրացան, ավելի քան 3000 փամփուշտ և ուղևորվում Սասուն[4]:

Դաշնակցության կողմից Սասունին ցույց տրված մեկ այլ օգնության մասին նշվում է Հովսեփ Արղությանին հասցեագրած Կարսի կենտր. կոմիտեի 1894 թ. հուլիսի 10-ի նամակում. «Մորանից երկու շաբաթ առաջ 17 հոգուց մի խումբ անց կացրինք դէպի Հայրենիք: Այդ խումբը պէտք է գնար մինչեւ Մուրատի մօտ, որը այժմս Սասունում է: Խումբը տանում էր հարկաւոր գործիքներ (նկատի ունի զէնքեր – Հ.Գ.), որ թողնէր այնտեղ եւ դարձեալ վերադառնար մեզ մօտ, բերելով այնտեղից – Մուրատից – տեղեկութիւններ»[5]

Համաձայն այդ նույն նամակի զինախումբը սահմանն անցնելիս հանդիպում է թուրքական զորքի ու կռվի բռնվում: Խմբի մի մասը, որը զինված է եղել ատրճանակներով և 2 հրացաններով, անկարող լինելով հաղթահարել թուրք զինվորների արգելապատնեշը՝ հետ է վերադառնում, իսկ մյուս մասը քաջաբար մարտնչում ու, փախուստի մատնելով հակառակորդին, ազատվում է շրջափակումից և

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 479, գ. 8, էջ 2-3:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] «Դիւան...», հ. Ա, էջ 238:

ուղևորվում Երկիր: Հավանաբար, Հրայրի հրաժարումը Հնչակյան կուսակցությունից և անդամագրումը Դաշնակցությանը մասամբ պայմանավորված է Սասունին մարտական ուժերով, զենքով ապակցելու ՀՅԴ պատրաստակամությամբ: Ընդ որում, ՀՅԴ մասին նա առաջին անգամ դրականորեն է արտահայտվում «Դրօշակ»-ին հասցեագրած հետևյալ գրությունում (1895 թ., հունիս). «... – ծանօթանալով Դաշնակցութեան ծրագրի ապակենտրոնացման, ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինեմ մեղադրելով ամբողջ դաշնակցութիւնը՝ Մուրատին ձեռք չկարկառելուն առթիւ, քանի որ միայն Տ-ի խումբը մերժել է նրան իբր անպայման Հնչակեանի... Դաշնակցականները՝ կուսակցական լինելով մէկտեղ, նրանք հայհոյում են Հ-ի Կենտրոնին, եւ անձնական կրքերից կուրացող պատոտոպիսանեներին, մինչդեռ կը յարգեն բոլոր անձնուրաց գործիչները՝ խոստովանելով որ նրանք հերոսներ են»[1]:

Բիթլիսի նահանգում Դաշնակցության գործունեությունն արժևորելիս իր նշանակությամբ առաջին հերթին աներկբա պիտի առանձնացնել Աղբյուր Սերոբի հայդուկապետության շրջանը: ՀՅԴ գործունեության այդ ժամանակահատվածն առանձնահատուկ է ոչ միայն նշանավոր հայդուկապետի առաջնորդությամբ մղած հայդուկային բազում կռիվներով և ահաբեկչական գործողություններով, այլև նահանգի հայ և մահմեդական բնակչության ու անգամ իշխանությունների վրա ունեցած բացառիկ ազդեցությամբ:

Բիթլիսի նահանգում 1895-1899 թթ. ՀՅԴ ծավալած գործունեության ուսումնասիրությունը միանշանակորեն հավաստում է Կ. Սասունու հետևյալ գնահատականը. «Սերոբ- Աղբիւրը Պիթլիսէն ու Ախլաթէն մինչեւ Մշոյ Դաշտ, ու ապա Սասուն կուսակցական-կազմակերպական գործերը, ինչպես նաեւ յեղափոխական կռիւները կը տանէր զինուորական արշաւանքի մը պէս, իր հասկացողութեամբ եւ խիզախ զինուորական նկարագրով: Այդ ժամանակաշրջանի ֆետայական գործունէութիւնը կարելի է կոչել Սերոբեան շրջան»[2]:

Ըստ Բիթլիսի հոգևոր թեմի առաջնորդ Եղիշէ եպիս. Չիլինկիրյանի (Եղիշե Չիլինկիրյանը այդ ժամանակ վարդապետ էր-Հ. Գ.) «1894-ի գարնան Աղբիւր մտաւ Երկիր: Թաթուլի (Աշոտ Արամյան) եւ Արմենակի (Հրայր Դժոխք) ղեկավարութեամբ սահմանագլխի վրայ կային քանի մը հարիւր մարտիկներ, բայց ներս մտնելու նկատմամբ որոշում չէր կայացած: Իսկ նոյն ամրան մասնակցեցաւ Սասուն գնացող հրոսակախմբի մը, բայց մինչեւ իրենց Մուշի կողմերը հասնելը, Սասունը արդէն ինկած էր»[3]:

Այստեղ կա որոշակի շփոթություն: Ինչպես հայտնի է, Սասունի ինքնապաշտպանությունը ընկել է 1894 թ. օգոստոսի 24-ին: Եթե Սերոբը համաձայն Չիլինկիրյանի վկայության, Երկիր է մտել այն ժամանակ, երբ արդեն, «Սա-

[1] «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», հ. Ա, էջ 238:
[2] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 591:
[3] Եղիշէ եպիս. Չիլինկիրեան, Փնջիկ բարոյական առածներու եւ յիշատակ առաջնորդութեան, Երուսաղեմ, 1928, էջ 86:

շարժերին դարանակալում և փորձում են անակնկալ հարձակումով ոչնչացնել նրանց: Խմբի անդամները ժամանակին նկատում են իրենց հետևողներին և այդ մասին տեղեկացնում Սերոբին, որն այդ պահից սկսած արդեն ստանձնում է մարտախմբերի հրամանատարությունը:

Թեպետ Ախլաթ գավառում գենքը խաչաձևելով քուրդ ավարառուների հետ Սերոբը ձեռք էր բերել մարտական որոշակի փորձառություն, սակայն Չրխանա լեռան մերձակայքում տեղի ունեցած կռիվը նրա կյանքում առաջին մարտական գործողությունն էր, երբ նրան վիճակվում է առաջնորդել մարտական խմբերին ու հանդես գալ որպես հրամանատար:

Այդ կռվի մանրամասները ներկայացնող հուշագրությունների ուսումնասիրությունը մատնանշում է, որ առաջին իսկ մարտում Սերոբը դրսևորել է ռազմագիտական ակնառու կարողություն: Շնորհիվ ճկուն մարտավարության, նրան հաջողվում է հաղթահարել հակառակորդի արգելքներն ու մարտախմբերը դուրս բերել անվտանգ գոտի[1]:

«Չրխանա կռիվ» անվանումը ստացած մարտից հետո մարտախումբը բաժանվում է երկու մասի: Մի մասը՝ թվով 27 հոգի, Սերոբի գլխավորությամբ 1895 թ. հոկտեմբերին թողնում է Խնուսի շրջանը և ուղևորվում Ախլաթ, իսկ մյուս մասը Քեռու (Արշակ Գաֆֆյան) գլխավորությամբ պիտի մնար Բասենում[2]:

1895 թ.-ին Արևմտահայաստանի մի շարք գավառներում, հատկապես Տարոնում և Վասպուրականում, արդեն կային հայդուկային փոքրաքանակ խմբեր, որոնք գործում էին իրարից կտրված, անջատ-անջատ: Շատ կարևոր էր, որ հայդուկների գործողությունները հետայսու ընթանային առավել կազմակերպված: Իսկ այդ կարևոր խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր, որպեսզի հայդուկներն իրենց պայքարում առաջնորդվեին ոչ միայն վրեժխնդրությամբ, այլ նաև համախմբվեին մեկ միասնական, այն է՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարի շուրջը և գործեին համախմբված ու նպատակաուղղված:

Արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպումը դարձնելով գործունեության առաջնահերթ խնդիր՝ Դաշնակցությունը, որպես մարտավարական կարևորագույն քայլ, որոշակի աշխատանքներ է ծավալում մարտական փորձառություն ձեռք բերած և ժողովրդի կողմից հարգանքի արժանացած հայդուկներին իր դրոշի ներքո համախմբելու ուղղությամբ:

Դաշնակցության կողմից 1895 թ. կազմակերպած մարտական խմբերից Սերոբի գլխավորած մարտախումբն առաջինն էր, որը Երկիր է մեկնում կազմակերպելու Ախլաթ գավառի հայության ինքնապաշտպանությունը:

«... 1895 թ. ամառուան ամիսներէն սկսեալ,– գրում է Ռուբեն Տեր Մինասյանը,– Ախլաթ գաւառը ասպարէզ դարձաւ Մօտկանի, Խութի, Չուխուրի, Խիզանի ու Միփանի քիւրտ աշիրէթներու ասպատակութեանց եւ Մանազկերտի ու Բուլանըխի չերքէզներու աւարառութեանց: Ախլաթը ծանրապէս կը հեծէր

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 127-128::

այդ անծանօթ ջրդիրի (աւազակային խումբ) բարբարոսութիւններէն եւ շուարումի մէջ էր, երբ աշնան իր հայրենի գաւառը վերադարձաւ Սոխորդի Սերոբը իր զինուած խմբով»[1]:

Սերոբի մարտական խումբը, փաստորեն, այն միակ մարտունակ ուժն էր, որը պետք է հիմք ծառայեր ողջ գավառի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Սթափ գնահատելով, որ միայն իր խմբով անկարող կլինի կազմակերպել գավառի ինքնապաշտպանությունն ու հայ բնակչության անվտանգությունը, Սերոբը ինքնապաշտպանական մարտախմբեր կազմավորելու նպատակով զինակիցներին ուղարկում է բշնամու հարձակման առավել վտանգավոր ուղղությունները: Օրինակ, Տապավանք գյուղինը հանձնարարում է Սիմոնին (Ազրայել), Ուրտափ և Փրխուս գյուղերինը՝ Բալաբեխ Կարապետին, խնձորեկցի Նատոյին ու Զուլումաթին և պատվիրում մարտախմբեր կազմավորելու համար օգտագործել գյուղացիների մոտ գտնվող բոլոր տեսակի զենքերը[2]:

Սերոբը 10 ֆիդայիներով մնում է Սոխորդում: «Բոլոր գիւղերում Սերոբի հայդուկների շուրջը համախմբուեցաւ տեղական երիտասարդութիւնը, իսկ ինքը՝ Սերոբը մի քանի ընկերներու հետ շրջում էր գիւղից գիւղ՝...»[3]:

Սերոբի զինվորները, որոնք բոլորն էլ ախլաթցիներ էին, քաջածանոթ լինելով գավառին, կարողացան կարճ ժամանակամիջոցում գյուղերում կազմակերպել ինքնապաշտպանական խմբեր, որոնց շարքերը համալրում էին նաև Բիթլիսի նահանգի հայդուկները:

« Առաջին անգամն էր,– նշում է Ե. Չիլինկիրյանը,– որ հայ մարտիկները սկսան կանոնաւոր կերպով վարժուիլ եւ թուցիկ խումբեր կանոնաւոր գոյն ստացան: Գիւղացի կիներ՝ խումբեր կազմելով սկսան հետզհետէ իրենք ալ կարեւոր չափով մասնակցիլ յեղափոխական գործին»[4]:

Կարճ ժամանակ անց Սերոբի գլխավորած մարտախումբը դառնում է Բիթլիսի նահանգի ամենագործուն մարտական ուժ: Թուրք իշխանությունները, տեղում չունենալով կայուն հենարան, հայ բնակչությանը կոտորելու նպատակով օգտագործեցին հարևան շրջանների քուրդ և չերքեզ մահմեդականությանը: Հարևան գավառներում կոտորած ու թալան սանձազերծելուց հետո քուրդ և չերքեզ զինված ամբոխը արշավում է Ախլաթ ու առավել մեծաքանակ ուժերով հարձակվում Սոխորդ գյուղի վրա:

«Ոչ կառավարութիւնէն,– գրում է Ռուբենը,– ոչ ալ քիւրտերէն ծածուկ չէր մնացեր, որ Ախլաթ գաւառի ինքնապաշտպանութեան ոգին էր Սոխորդ գիւղը, Խչէենց տունը, Ռես Մխոն եւ մանաւանդ անոր եղբայր Սերոբը»[5]:

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, էջ 147:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 685, գ. 6, էջ 1:
[3] «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950», Պոսթըն, 1950, էջ 384:
[4] Եղշէ Եպիս. Չիլինկիրեան, նշվ., աշխ., էջ 87:
[5] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 150:

Բիթլիսի կոտորածից մի քանի օր անց թուրք զինվորների աջակցությամբ հասնանցի քրդերը և Դիարբեքիրի չերքեզները հարձակվում են Սոխորդի վրա: Սերոբը ֆիդայիների զինակցությամբ կարողանում է կազմակերպել Ախլաթի հայության գոյապայքարն ու մի շարք կռիվներում գավառի հայ բնակչության գործուն աջակցությամբ պարտության է մատնում հայկական բնակավայրերն ասպատակող թուրք և քուրդ հրոսակախմբերին [1]*:

Հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսամարտերը հարուցել են ոչ միայն քրդերի ու թուրքերի, այլև՝ նահանգի իշխանությունների զարմանքը. «Կառավարությունը կը զարմանար այդ արտասովոր երեւոյթի վրա, քիւրդերը սովալլուկ գայլերու նման փորերնքն կը ճմռէին եւ իրենց կորսընցուցած աւարները կողբային, իսկ հայերը կ օրհնէին Սերոբի անունը եւ անոր համբաւին թեւերը տուած, հրաշագործ սուրբի պէս կը պաշտէին զայն»[2]:

1895 թ. Սերոբի խմբի առաջնորդությամբ Ախլաթի հայության մղած պայքարը մեկ անգամ ևս հավաստեց, որ ջարդերի արհավիրքները կարելի է կանխել միմիայն կայուն ինքնապաշտպանության կազմակերպմամբ:

«Այնտեղ,– պնդում է Ռոստոմը,– որտեղ Դաշնակցությունը զենք էր բաժանել, որտեղ զինավարժ մարդիկ էր պատրաստել կամ հայդուկային խմբեր էր պահել, այնտեղ ժողովուրդը կամ բոլորովին անվնաս է մնացել, կամ թէ համեմատաբար շատ քիչ է վնասուել»[3]:

Իր պնդման իսկությունը հաստատելու համար Ռոստոմը որպես փաստարկ վկայակոչում է Էրզրումի գյուղերը, որոնք ջարդի տարիներին, շնորհիվ իրենց ինքնապաշտպանության, փրկվել էին անխուսափելի կոտորածից [4]:

Պիտի նշել, որ դժվար է անվերապահորեն ընդունել Ռոստոմի այդ վկայության հավաստիությունը: Ե՞րբ, ինչպե՞ս Դաշնակցությունը կարողացավ այդքան կարճ ժամանակահատվածում զենք բաժանել ու կազմակերպել գյուղերի ինքնապաշտպանությունը: Որևէ սկզբնաղբյուրում չի հիշատակվում, բացառությամբ Արշավան գյուղի («Դրօշակ» 1896, թիւ 14), Էրզրումի այն գյուղերի ինքնապաշտպանական մարտերը, որոնց շնորհիվ, ինչպես նշում է Ռոստոմը, փրկվել էին կոտորածից: Մինչև 1895 թ. մայիսի վերջերը Ռոստոմը գտնվում էր Ժենևում, որտեղ խմբագրում էր ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը [5]:

Ըստ Քր. Միքայելյանի, Ռոստոմի ներկայությունը «...հարկաւոր է, որ այդ մարդկանց հետ լինէին ընկերներ, որոնց մենք հաւատում ենք կատարելապէս եւ որոնք կապ կունենային թէ կազմակերպութեան հետ եւ թէ գնացողների հետ»[6]:

---

* Աղբյուր Սերոբի գլխավորած Ախլաթ գավառի ինքնապաշտպանությունը մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան «Էջեր Հայոց Ազատամարտի», Երևան, 2005, էջ 26-56:
[2] «Դրօշակ», 1901, թիւ 2, էջ 39:
[3] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 337-338:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] «Դիւան...», հ. 1, էջ 168:
[6] Նույն տեղում:

Ռոստոմը պիտի ընտրեր Երկիր մեկնող ՀՅԴ գործիչների ու համադրեր նրաց գործունեությունը: Նրա ներկայությունը հատկապես կարևոր էր ինքնապաշտպանություն կազմակերպելու ժամանակ: «Անոր գալով,– նշում է Ռուբեն Տեր-Մինասյանը,– նոր թափ եւ նոր ուղղութիւն կը ստանայ յեղափոխական գործունէութիւնը Էրզրումի եւ Պիթլիսի նահանգներու մէջ»[1]:

Ռոստոմն անշուշտ հեղինակություն էր, բայց այս պարագայում նրան վերագրվող գործերը չափազանցված են: Հր. Տասնապետյանի կարծիքով «Ժամանակի զուգադիպութեան տեսակէտէն, Ռուբէնի հաստատումը տեղին ըլլալու տուեալներ ունի, բայց դժուար է անոր բառացի ստուգումը»[2]:

Նույնը կարելի է վերագրել նաև Սիմոն Վրացյանի հետևյալ հաստատմանը, որի համաձայն «Ռոստոմը նոր էր հասած Կարին, երբ սկսուեցին հայկական շրջանների ընդհանուր կոտորածները»: Շեշտելով, որ Ռոստոմը նոր էր հասել Կարին, Ս. Վրացյանը հավաստում է, որ շնորհիվ նրա ջանքերի կազմվում են մարտախմբեր, որոնք «Կարինի կոտորածի օրը, դիմադրեցին ջարդարարներին, որի շնորհիւ կոտորածը, համեմատաբար լայն ծաւալ չստացաւ»[3]:

Կարինի կոտորածը, որը հենց Էրզրումցիների որակումով ստացել է «Մեծ դեպք» անվանումը, տեղի է ունեցել 1895 թ. նոյեմբերի 18-ին: Այդ օրը թուրք ամբոխը հարձակվում է շուկայում և թուրքական թաղերում հայերին պատկանող տների վրա: Հարձակման հետևանքով սպանվում են 316 հայեր [4]:

Բացի Ս. Վրացյանից, որևէ այլ սկզբնաղբյուր չի նշում հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրության իրողությունը: Ավելին, «Դրօշակ»-ի խմբագրությանը հասցեագրած 1895 թ. հունիսի 11-ը թվագրած նամակից պարզվում է, որ Ռոստոմն այդ ժամանակ դեռևս գտնվում էր Կարսում:

Այդ, Ռուբենի, նաև Ս. Վրացյանի ու Մ. Վարանդյանի վկայությամբ Ռոստոմը 1895 թ. ամռանը գործել է Էրզրումում, բայց որևէ սկզբնաղբյուր չի նշում, թե արդյոք նրան հաջողվել է սահմանափակ ժամանակահատվածում կուսակցական ամրակուռ կառույցներ հիմնել Էրզրումում:

«Դրօշակ»-ին հասցեագրած նամակում (1895թ. հոկտեմբեր) Ս. Զավարյանը նշում է, որ այդ օրերին Էրզրումի կողմերը ուղարկել են ընդամենը 100 միավոր զենք: Իսկ դա դեռևս բոլորովին չի նշանակում, որ այդ զենքերն ամբողջովին հանձնվել է Էրզրումի գյուղերին [5]:

Հիմք ունենալով վերոհիշյալ նախադրյալները, դժվար է եզրակացնել, որ Դաշնակցությունը կարող էր այդքան կարճ ժամանակահատվածում զենք բաժանել ու կազմակերպել գյուղերի ինքնապաշտպանությունը: Իսկ Ռոստոմի վկայակոչած փաստարկը Ախլաթի ինքնապաշտպանական մարտերին կարե-

---

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 123:
[2] Տասնապետեան Հ., Պատմութիւ Հ,. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 204:
[3] «Յուշապատում...», էջ 108:
[4] Տե՛ս Ղազար Չարըգը, Յուշապատում Բարձր Հայքի, Պէյրութ, 1957, էջ 427:
[5] «Դիւան...», հ. 1, էջ 479:

լի է վերագրել մասնակիորեն: Դարձյալ որևէ սկզբնաղբյուր չի մատնանշում, որ ՀՅԴ, բացառությամբ Սերոբի մարտախմբի 27 անդամներից, կարողացել է այդ օրերին Ախլաթ ուղարկել նույնիսկ մեկ միավոր զենք:

Հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադառնալով 1894-1896թթ. հայության մղած ինքնապաշտպանական մարտերին, տակավին ինչպես հարկն է չի արժևորել Ախլաթ գավառի ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը: Համիդյան արյունոտ ժամանակաշրջանում Տարոն աշխարհի Ախլաթ գավառը Արևմտահայաստանի այն եզակի շրջաններից էր, որը զերծ մնաց կոտորածներից: Ի՞նչ կլիներ Ախլաթի հայության վիճակը, եթե ժամանակին ֆիդայիների գլուխն անցած այնտեղ չգար Սերոբը: Միանգամայն ճշմարիտ է «Դրօշակ»-ի հոդվածագիրը՝ պնդելով. «Այդ աղէտալի թուականին, Հայաստանի արիւնի ու կրակի տարին, Ախլաթի 27 գեղերը Սերոբի խումբին շնորհիւ անվնաս մնացին»[1]:

«Ախլաթի ժողովուրդը,- գրում է Ռուբենը,- իր փրկութիւնը վերագրելով Սերոբին, անսահման սիրով, հաւատքով համակուեցաւ անոր հանդէպ: Մինչեւ այսօր չկայ ոչ մէկ գործիչ եւ ոչ մէկ սրբութիւն, որ այնքան պաշտելի ըլլայ Ախլաթցիի համար, որքան Սերոբ: Վերեւն Աստուած, ներքեւ Սերոբ ...»[2]:

Ախլաթի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում նրան մեծապես օգնել և աջակցել են իր քաջավարժ մերձավոր զինակիցները՝ Մոտկանցի Սիմոնը, Ճարտարը, Բիթլիսցի Մուշեղը, Բալաբեխ Կարապետը, Առյուծ Ավագը, Զուլումաթը (Հովհաննես), Նատոն, Երկար Բարսեղը և այլոք, որոնց առաջնորդությամբ մղած ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ ախլաթահայությունը կարողացավ զերծ մնալ անխուսափելի կոտորածներից[3]:

1.3. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԽԱՐԻՄԽԸ՝ ԴԵՐԻԿԱ ՎԱՆՔԸ ԵՎ «ԽԱՐԻՄԽ» ԳՈՐԾԱՐԱՆԸ

Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում հենակետեր (խարիսխ) հիմնելը, կարելի է ասել, մասն է կազմում ՀՅԴ գործունեության առաջին շրջանի: Ազատագրական պայքարը կազմակերպելու եւ առաջնորդելու համար, ինչպես արդեն նշվել է, ՀՅԴ իր կազմակերպական կառույցներն է հիմնում նաեւ Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում, մասնավորապես Պարսկաստանի Ատրպատական նահանգի Սալմաստ գավառում: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ու հայ

[1] «Դրօշակ», 1901, թիւ 2, էջ 39:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 150:
[3] «Դրօշակ», 1901, թիւ 2, էջ 39:

բնակչության, Սալմաստը Հայաստանի երկու արեւմտյան ու արեւելյան հատվածները միմյանց շաղկապող կամուրջն էր եւ Երկիր մեկնող հեղափոխական գործիչների, մարտական ու զինատար խմբերի հուսալի հենակետը (խարիսխ):

Որպեսզի գավառը Երկիր մեկնող հեղափոխական գործիչների, մարտական խմբերի համար դառնար հուսալի խարիսխ, անհրաժեշտ էր կազմակերպել ապմաստահայությանը, նրանց համախմբել ազատագրական պայքարի գաղափարների շուրջ: Բնական է, եթե չլիներ հայ բնակչության աջակցությունը, ապա հեղափոխական կազմակերպությունները չէին կարողանա ամրակնդվել գավառում և կապեր հաստատել Երկրի հետ:

Այդ նկատառումով հայ ազգային- քաղաքական կուսակցությունները, այդ թվում՝ Հ.Յ.Դաշնակցությունը հայությանը մեծ պայքարի նախապատրաստելու անհրաժեշտության թելադրանքով՝ իր կազմակերպական կառույցներն է հաստատում նաև Օսմանյան կայսրության հարակից վայրերում, մասնավորապես Պարսկաստանի հայաբնակ շրջաններում, հիմնականում՝ Թավրիզում և Սալմաստի ու Խոյի շրջաններում:

1895 թ. Սալմաստ գավառում կային 28 հայաբնակ գյուղեր, որոնցից միայն վեցն են ունեցել զուտ հայ բնակչություն, մյուսներ խառը՝ հայ, ասորի, թուրք, քուրդ, հրեա: Զուտ հայաբնակ Հավթվան գյուղը ունեցել է 310 տուն, Փայաջուկը՝ 226, Մահլամը՝ 176, Սառնան՝ 74, Ղալասարը՝ 54, Հախվերանը՝46: Խառը բնակչություն ունեցող գյուղերից հայերն ունեցել են Սավրայում 109 տուն, Սանամերկում 81, Հին քաղաքում 62, Աթխանանում 46, Կզլճանում 41, իսկ մյուս գյուղերում ավելի պակաս: Սալմաստ գավառում կային հայաբնակ 1504 տուն և 8957 հայ բնակիչ[1]:

Սալմաստ գավառում արմենականների ու դաշնակցականների հիմնած առավել գործուն հենակետերից մեկը թուրքական սահմանի մերձակայքում, պարսից հողի վրա գտնվող Դերիկա վանքն էր:

«Այդտեղէն է, - գրում է Ռուբենը, - որ կուդարկուի Վասպուրական առաջին ուժեղ գործիչը՝ Պետոն, որպէսզի կազմակերպութիւնը հեռու լինի ժողովրդի եւ թուրք ու պարսիկ կառավարութիւններու աչքէն, անոնք կորոշեն խարիսխս դարձնել Դերիկի վանքը...»[2]:

Դերիկը (Սբ. Աստվածամոր մենաստան), որը հետագայում նվիրական անուն ձեռք բերեց հայ ազատագրական պայքարում, հին ավերակ վանք էր Դուշմանի ձորի ափին՝ թուրքական սահմանի վրա: Մինչև հայ ֆիդայիների հանդես գալը, Դերիկի շրջակայքում տեր ու տնօրինություն էին անում քրդերը, և ոչ մի հայ, անգամ պարսիկ գյուղացի չէր հանդգնում երևալ այդ վտանգավոր վայրերում[3]:

Երբ Արևմտահայաստանում արդեն ծայր էին առել համիդյան սարսափները, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ստեփանոս արք. Մխիթարյանը վանքի կառավարիչ է նշանակում արցախցի Մովսես Իշխանյանին՝ մի քաջակորով ու գործունյա երիտասարդի, որը Դերիկում հանգրվանելու հենց առաջին օրից սկսում է վերականգնել ու նորոգել վանքի ավերակները: Դժբախտաբար կարճատև է նրա գործունեության շրջանը: Քուրդ ավազակախմբերի հետ ունեցած բախումներից մեկի ժամանակ, Մովսեսն իր երկու օգնականներով ընկնում է շրջապատման մեջ և զոհվում անհավասար մարտում:

Մեկ տարի անց՝ վանահոր պաշտոնով, Դերիկ է գալիս հեղափոխական անցյալով հայտնի, ազատագրական պայքարի գաղափարների ջատագով Բագրատ վարդապետ Թավաքալյանը: Նորակազմ Հ.Յ. Դաշնակցությունը, հաշվի առնելով վանքի բացառիկ աշխարհագրական դիրքը և հավանություն տալով վանահոր պաշտոնում Բագրատ վար-

[1] Տե՛ս «Արարատ», 1895, էջ 173-174:
[2] Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Պէյրութ, 1973, հ. 2 էջ 33:
[3] Տե՛ս «Հորիզոն», 1914, սեպտեմբերի 28:

դապետի նշանակվելուն, հույս ուներ, որ Դերիկը ապագայում կարող էր հարմարավետ հենակետ դառնալ մարտական ուժերի համախմբման, զինատար խմբերի կազմակերպման և այլ ձեռնարկումների համար: Հետգհետե այստեղ են գալիս հայ ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկներ՝ դաշնակցականներ Վարդանը, Սկաբարեցի Սաքոն, Փոխիկը, Ջալլադը, Պետոն, Չաքոն ու Շերոն, ինչպես նաև արմենական անվանի գործիչներ Կարաբեկը (Արմենակ Եկարյան), Դրբեն(Մանուկ Վարդանյան) և այլոք: Սալմաստից դեպի Վան ձգվող բոլոր ուղիները անցնում էին Դերիկով, և այդ պատճառով վանքը որպես հարմարավետ խարիսխ, հավասարապես ծառայել է և դաշնակցական, և արմենական գործիչներին ու հայդուկներին:

Սկաբարեցի Սաքոյի հուշերից պարզվում է, որ այդ նույն ժամանակահատվածում եղել են զինատար խմբեր, որոնք Սալմաստից Դերիկի մոտակայքով զենք ու զինամթերք են տեղափոխել Վասպուրական: Եթե զենքերի տեղափոխությունը իրականացվեր Հ.Յ. Դաշնակցության կողմից և տեղափոխման աշխատանքներին մասնակցեին Դերիկում հանգրվանած դաշնակցական ֆիդայիները, ապա Սկաբարեցի Սաքոն իր կենսագրականում անպայմանորեն կնշեր այդ իրողությունը [1]

Վասպուրականի և Դերիկի շրջաններում դաշնակցական ֆիդայիներից ավելի վաղ հաստատվել ու գործում էին արմենականները: Արմենակ Եկարյանի հավաստմամբ Դերիկի գծով առաջինը իրենք են՝ արմենականները, Սալմաստից զենքեր տեղափոխել Վան [2]:

Հարկ է ընդգծել, որ վանքում հանգրվանած հայդուկներն անկախ կուսակցական պատկանելությունից, ճիշտ է, ունեցել են որոշակի տարաձայնություններ, բայց գործել են համերաշխ ու միասնական:

Ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը, որին բախտ է վիճակվել «վանական» հայդուկների հյուրը լինել, իր հուշերում անդրադառնալով նաև Դերիկին՝ նշում է. «Տասնեւհինգի հասնող այդ վաղվում. երիտասարդ «վանական»ներուն մեծամասնությունը ինձ ծանոթ էր: Վանի մէջ թիւրք ոստիկանութենէն հետապնդած արմենական «ֆիրար»ներն էին. հինգ- վեց դաշնակցականներ ալ կային. որոնցմէ կը յիշեմ Սաքոյի, Վարդանի, Յովսեփ Արղութեանի եւ Նիկոլի անունները:

...համերաշխ կապրէին իրարու հետ վանքին խցերուն մէջ. երբեմն բռնկող մեղմ կամ բուռն վիճաբանութիւններ շուտ կը մոռցուէին » [3]:

Հենց առաջին օրերից նրանք իրենց հանդուգն գործողություններով սարսափ են տարածում քրդերի վրա: Քրդերն այլևս անպատիժ կերպով չեն կարողանում ոտնձգություններ կատարել վանքի շրջակայքում: Դերիկում հանգրվանած ֆիդայիները վերակառուցում են վանքի պարիսպները և դարձնում անառիկ:

Ա. Դարբինյանը թեև ընդամենը 2-3 օր է հյուրընկալվում ֆիդայիներին, բայց վանքում գտնվելու երկրորդ օրն արդեն ականատես է լինում քուրդ ավազակների հետ ունեցած նրանց հերթական բախմանը: Քրդերը երեկոյան փորձել են աննկատ մոտենալ վանքին ու տանել վանքին պատկանող ոչխարները: Դերիկի մշտարթուն պահապանների ուշադրությունից դարձյալ չի վրիպում քրդերի ավարառության հերթական փորձը: Ներկայացնելով այդ պահը՝ Ա. Դարբինյանը գրում է. «...մեր ռազմիկ «վանականները» ցնծալիծ աղաղակներով և քրտական հայհոյանքներով օգնութեան վազեցին: Քիւրտերը յուսախաբ՝ իրենց տեղը վերադարձան:

[1] Տե՛ս «Դոշակ», 1929, թիւ 112,էջ 276, «Սեւ Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը»:
[2] Տե՛ս Յուշէր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 40-43:
[3] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարման օրերէն, Երևան, 2003, էջ 37-38:

Այդ իրիկուն եւ յաջորդ օրը «վանական»ներու խօսակցութեան նիւթը այդ կռիւն էր: Օգնութեան գացողները մեծ հաճոյքով եւ ինքնագոհութեամբ կը պատմէին թէ ո՞վ ինչ ըրած է «ոչխարի բալան»-ը եւ դարձնելու եւ քիւրտերը փախցնելու համար» [1]:

Պիտի ասել, որ պարսիկ իշխանությունները բարյացակամորեն էին վերաբերվում վանքի շրջակայքում հանգրվանած պարսիկ գյուղացիների նկատմամբ բարեկամաբար տրամադրված հայ ֆիդայիներին: Սակայն թուրք կառավարությունը, չհանդուրժելով կայսրության սահմանամերձ շրջանում հայ զինվորական խմբի առկայությունը, վճռականապես պահանջում է պարսիկ իշխանություններից՝ վերացնել հայ ֆիդայիների հենակետը: Թուրքերի հարկադրանքով Թեհրանից հրամայում են քանդել վանքի վերակառուցված պարիսպը: Պատմում է Սկաբարեցի Սաքոն. «...Մովսէսի սպանուելուց յետոյ (նկատի ունի վանքի կառավարիչ Մովսես Իշխանյանին, որը գոհվում է քուրդ ավազակների հետ ունեցած բախումներից մեկի ժամանակ-Հ.Գ.), պարսից ու տաճկայ սահմանագլխի քրդերը բշնամացան մեզ: Վանքում կայինք 50 կամաւորներ: Կար երկու կուսակցութիւն՝ Դաշնակցական եւ Արմենական: Ձայների մեծամասնութիւնը վճռեց պարիսպ շինել ու շինեցինք: Չքաշեց երկու ամիս, եկաւ Իսա-Խանը 500 մարդով, քանդել տուեց պարիսպը» [2]:

Պարսկական կառավարող շրջանների վերաբերմունքի կտրուկ փոփոխության հետևանքով ֆիդայիներից շատերը հեռանում են Դերիկից, բայց նրանցից մի քանիսը՝ Սկաբարեցի Սաքոն, Վարդանը, Ախլցխացի Լևոնն ու Ջալլադը մնում են վանքում և փորձում վերստին նորոգել քանդված պարիսպներն ու շարունակել հայդուկային գործողությունները:

Թուրքերի հարկադրանքով հայդուկների ձեռնարկումները սկսում են խոչընդոտել պարսիկ իշխանությունները:

«Սալմաստի դատաւորի կողմից, -շարունակում է Սեւքարեցի Սաքոն,- միշտ գալիս, պահանջում էին մեզանից անցագիր. մենք էլ ստիպած ցերեկները փախչում էինք մոտի սարը, իսկ գիշերը վերադառնում էինք վանք» [3]:

Շատ շուտով հայդուկների նկատմամբ փոխվում է պարսիկ իշխանությունների վերաբերմունքը: Դերիկից հայդուկների հեռանալու պատճառով դարձյալ հայտնվում են ավազակային հրոսակախմբեր, որոնք ավարառության նպատակով անարգել ասպատակում են ոչ միայն հայկական, այլ նաև պարսկական գյուղեր ու թալանում և բռնությունների ենթարկում պարսիկ գյուղացիներին: Չկային ավարառու ավազակներին զսպող հայ ֆիդայիները: Պարսիկ իշխանություններին այլ ելք չէր մնում: Ստեղծված կացության հարկադրանքով փոխվում է նրանց վերաբերմունքը:

«Շահ Զաղեն (Սալմաստի գավառապետ) , - շարունակում է Սեւքարեցի Սաքոն, - ինձ հրաման տուեց, որ ինչ աւազակ գայ, ներքուիւն տայ վանքին, իրաւունք ունեմ սպանելու» [4]:

Օգտվելով պարսիկ իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից, հայդուկները վերստին վերադառնում են Դերիկա վանք: Ինչպես նախկինում էր, այս անգամ ևս ոչ մի ավազակ այլևս չի հանդգնում երևալ Սալմաստի տարածքում: Հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները դարձյալ հնարավորություն են ստանում հաստատվելու ու ազատորեն գործելու Սալմաստի հայկական գյուղերում և Դերիկա վանքի շրջակայքում:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս «Դոշակ», 1929, թիւ 112,էջ 276, «Սեւ Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը»:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 278:

Դերիկա վանքում հաստատված հայդուկների գործունեությունը միտված չէր ծավալելու սոսկ հայդուկային գործողություններ: Պայքարելով թուրք հրոսակախմբերի ու ավարառու ավազակախմբերի դեմ, նրանք պաշտպանում էին հայ և պարսիկ գյուղացիությանը ու դրանով իսկ շահում պարսիկ իշխանությունների վստահությունը: Միաժամանակ, Դերիկա վանքում հանգրվանած հայդուկները սերտ կապեր ունեին ՀՅԴ Թավրիզի «Վրեժ» կենտր. կոմիտեի անդամների և Թավրիզի, Սալմաստի հայկական դպրոցներում աշխատող ուսուցիչ-հեղափոխական գործիչների հետ: Ավելին, ուսուցիչ-հեղափոխական գործիչներից ոմանք, օրինակ՝ Նիկոլ Դումանը, Իշխանը (Հովսեփ Արղության), Ֆահրադը (Սարգիս Օհանջանյան) իրենց մարտական մկրտությունը ստացել են հենց Դերիկա Վանքում հաստատված հայդուկների Սեբաստացի Սաքոյի, Վարդանի, Փոխիկի, Ջալլադի, Չաքոյի և Շերոյի ու այլոց համագործակցությամբ մղած կռիվներում:

Դերիկը, համաձայն Ռուբենի հավաստման, շրջապատված լինելով քուրդ աշիրեթներով, նրանց կողմից մշտապես ենթարկվել է հարձակումների: Դերիկում հանգրվանած ֆիդայիները, անընդմեջ ընթացող կռիվներում թրծվելով ու վարպետանալով, դառնում են քաջավարժ և խիզախ մարտիկներ ու միշտ հաղթանակներ են տոնել քրդերի դեմ մղած մարտերում: Նրանց սխրագործությունները սարսափ են տարածել և միաժամանակ հիացմունք ու հարգանք ներշնչել թշնամուն:

Հակառակորդի նկատմամբ ֆիդայիների նվաճած հաղթանակները պայմանավորված էին ոչ միայն նրանց վարպետությամբ, այլ նաև գործածած զենքի՝ ռուսական մոսին հրացանի առավելությամբ: 1893թ. հայ ֆիդայիները սկսել են գործածել նաև 2700 մետր հեռահարությամբ օժտված մոսինները ընդդեմ թուրքերի և քրդերի գործածած մարտին, դափաղի, բերդան հրացանների, որոնց առավելագույն հեռահարությունը 800-1200 մետր է: Բազում կռիվներում կոփված ֆիդայիները մոսիներով կարողանում էին 800-1200 մետր հեռավորությունից մահացու հարվածներ հասցնել: Թուրք զինվորներն ու քրդերը կարող էին մահացու հարված հասցնել 200-400 մետր հեռավորությունից: Բացի դրանից, մոսինները կրակելիս թույլ ձայն էին արձակում և ծուխ բոլորովին չէին հանում: Հակառակորդի մոտ եղած զենքերը ոչ միայն խլացնող ձայն էին արձակում, այլև ծուխ էին հանում ու դրանով իսկ մատնելով կրակողի տեղը՝ հարմար թիրախ դառնում ֆիդայիների համար [1]:

Ըստ Ռուբենի, նաև վերոհիշյալ գործոնների շնորհիվ էր, որ «... բուռ մը մարտիկներ, 25-50 հոգի, կարողացան Դերիկի վանքի մէջ բոյն դնել եւ տարիներ շարունակ իրենց ձեռքը պահել զայն: Այդ հրաշք մրն էր, որ իրագործուեցաւ Վարդանի ու Նիկոլի ծրագրով եւ իրենց մասնակցութեամբ»[2]:

Դերիկի ֆիդայիներին, Ռուբենի բնութագրմամբ, կարելի է բաժանել երեք մասի.

1. Հայաստանի արևելյան հատվածի հայեր, որոնք «Սալմաստ եկած էին Կովկասեան Հայաստանէն, անոր բոլոր անկիւններէն հատ հատ, մտաւորական եւ կուռ ուխտեալներ... Սեւբարեցի Սաքոն, իր հրացանէն անբաժան, «չոնգուր» կը զարներ Բմբառակ Յովսէփներն ու Խէչոները առակներ ու երգեր կը սէին: Վարդանը, իր բարի ժպիտով, կը խրախուսէր, իսկ մռայլ Նիկոլը իր խորունկ ընկած սեւ աչքերով, չես գիտեր, կը խնդա՞ր, թէ՞ կը բարկանար»[3]:

2. Արևմտահայեր, որոնք իրենց բնավորությամբ, վարք ու բարքով, նաև անտառանանչությամբ ճիշտ հակապատկերն էին իրենց արևելահայ ուսյալ գինակիցների:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, էջ 27:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 22:

«Անոնց մէջն էին Չաքոն ու Շերոն, Դարմոն ու Փոխիկը, Աստոն ու Ախպէրը եւ ուրիշ շատեր, որոնք գլուխները կը շարժէին եւ կըսէին. «Այս դարիպականներու (այսինքն կովկասցիների) ամէն ինչ տեղն է, մի բան միայն պակաս է՝ մեր լեզուն չէր խօսիր (նկատի ունեն արեւելահայ խոսակցական լեզուն, որն իրենց համար այնքան էլ հասկանալի չէր- Հ.Գ.)»[1]:

3. Դերիկի ֆիդայիների կազմում եղել են նաև այլազգիներ՝ ասորիներ ու քրդեր, որոնց համար առավել հարազատ ու գերադասելի էին արևմտահայ զինակիցները:

Ֆիդայիները Դերիկ էին եկել Հայաստանի տարբեր շրջաններից և բարբառային խոսակցական լեզվի որոշակի տարբերության պատճառով երբեմն դժվարությամբ են հասկացել միմյանց: Գլխավոր հարցում, այն է՝ ազգի ազատագրության պայքարին նվիրաբերվելու, միանման էին ու միասնական: Որևէ խնդիր լուծելիս, նրանք, հատկապես արևմտահայ, ասորի ու քուրդ ֆիդայիները իրենց հայացքն առաջին հերթին ուղղում էին առավել ուսյալ Նիկոլ Դումանին ու Վարդանին: Այդ երկու արևելահայ ֆիդայիները հեղինակություն էին ոչ թե այն պատճառով, որ ամենաաջն էին, ամենափորձառուներն ու ամենազգաստարարականները, այլ «Այս երկու դարաբաղցիները առանցքը կը դառնային բոլորին, եւ ամենքը իրենց կեանքը եւ միտքը այդ օտարական հայերուն կը վստահէին, որովհետեւ ամենադժուար հարցերուն համար անոնք ոչ երկբայութիւն, ոչ «եթէ» ունէին, այլ պարզ ու յստակ կամ «այո՛» եւ կամ «ո՛չ»[2]»:

Թուրքական կառավարությունը, տեղեկանալով սահմանի վրա հայ մարտիկների գործողություններին, դիմում է զանազան միջոցների՝ վանքի շրջակայքը հայերից մաքրելու, վտանգազերծ գոտի դարձնելու համար, բայց միշտ էլ մատնվում է անհաջողության: 1894 թ. Վանի կուսակալ Բահրի փաշան հայ ֆիդայիների հենարանը վերացնելու նպատակով,որոշում է, իսպառ ոչնչացնել վանքն ու այնտեղ ապաստանած հայերին: Շատ շուտով թուրք փաշային վանքի պաշտպանների վրա վերստին հարձակվելու առիթը ներկայանում է: Առիթը մի պատահական դիպված էր. «Մի խումբ Արմենականներ վանքի մօտիկ ճամբի վրայ սպանում են հինգ քրդերի, մէկին վիրավորում, սա լուր է տանում Վանի կուսակալ Բահրի փաշային, որը հրամայում է ցեղապետ Շարաֆ Աղային՝ եղածներին կոտորի եւ վանքը քանդի»[3]:

Այդ նպատակով կազմում է պատժիչ հրոսակախումբ՝ բաղկացած 500 թուրք զինվորներից և քրդերից: Թուրքերը պաշարում են վանքը, որտեղ կային ընդամենը 17 քաջարի կռվողներ : Ավելի քան 6 ժամ, ֆիդայիները հետ են մղում թուրքերի և քրդերի հարձակումները: Հայդուկների դիմադրությունը ընկճելու նպատակով հակառակորդի ձեռնարկած բոլոր փորձերը անցնում են ապարդյուն: Այդ կռվի մանրամասներից, որի մասին գրել է այդ նույն կռվի մասնակից Հովսեփ Արղությանը, պահպանվել է մի ուշագրավ դրվագ. կռվի թեժ պահին թուրքերի ուշադրությունն է գրավում վանքի 14 տարեկան տավարածը: Սկսում են հեռվից կրակել պատանու վրա: Տեսնելով այդ՝ Նիկոլը (նկատի ունի Նիկոլ Դումանին-Հ.Գ.) Սեբաստացի Սաքոյի հետ դուրս է գալիս դիրքից և, տղային փրկելու նպատակով, շարժվում մոտակա բլուրը: Տղայի մայրը, արդեն հաշտվելով իր որդու կորստյան հետ, խնդրում է նրանց չդիմել այդ քայլին, իզուր տեղ չվտանգել իրենց: Սակայն մի քանի րոպե անց Նիկոլն իր մարտական ընկերոջ հետ հասնում է մոտակա բլուրը և այնտեղից գնդակների անվրեպ տարափ է տեղում թուրքերի և քրդերի գլխին ու հնարավորություն է տալիս պատանուն անվտանգ հասնելու

[1] Նույն տեղում, էջ 23:
[2] Նույն տեղում, էջ 23-24:
[3] Ամուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում, Թեհրան, 1950, էջ 175:

վանք: Ուրախությունից խենթացած մայրը բառեր չի գտնում իր երախտագիտությունը հայտնելու խիզախ մարտիկներին»[1]:

Թուրք-քրդական պատժիչ ջոկատները, հանդիպելով համառ դիմադրության և տալով բազմաթիվ զոհեր, թողնում են վանքի պաշարումը:

Քուրդ ցեղապետ Շարաֆ աղայի առաջնորդած 500 հեծյալների դեմ ֆիդայիների մղած վերոհիշյալ կռվի և ընդհանրապես Դերիկին առնչվող դեպքերը փոքր- ինչ այլ մեկնաբանությամբ են ներկայացվում արմենականների հուշագրություններում:

Արմենական գործիչ Ա. Եկարյանը իր հուշերում նույնպես անդրադառնում է քուրդ ցեղապետի կողմից վանքի վրա հարձակում գործելու իրողությանը, բայց փոքր- ինչ այլ մեկնաբանությամբ: Քուրդ հրոսակախմբերի հետ ունեցած բախումների ժամանակ, ինչպես արդեն նշվել է, զոհվում են ֆիդայիների մոտ անառարկելի հարգանք ու հեղինակություն ունեցող Դերիկա վանքի կառավարիչ արցախցի Մովսեսը և նրա երկու օգնականները՝ Ղազարն ու Նշանը: Արմենականները, վաղորդ պարզելով կռվին մասնակցած քրդերի իսկությունը, որոշում են վրեժխնդիր լինել: Մ. Ավետիսյանի հանձնարարությամբ Ա. Եկարյանի ու Դրբեի (Մանուկ Վարդանյան) գլխավորած ութը ֆիդայիներից բաղկացած խումբը հուլիսի 4- ին Դերիկից անցնում է թուրքական սահմանը, լուսաբացին հասնում մինչև Խանիկ գյուղը ու նրա մերձակա բարձունքներում դարանակալելով՝ սպասում քրդերին[2]:

Ֆիդայիները չէին սխալվում: Կեսօրին գալիս են քրդերը և անտեղյակ հայ ֆիդայիների ներկայությունից՝ հանգիստ մտնում են ձորն ու հայտնվում վաղորդ պատրաստված ծուղակում: Քրդերի վրա տարբեր ուղղություններից տեղում են ֆիդայիների արձակած գնդակները և նրանք որևէ միջոց չեն գտնում դիմելու ինքնապաշտպանության: Ներկայացնելով այդ պահը՝ Արմենակ Եկարյանը նշում է. «Բայց իրենց այդ դրությունը օգտակար էր մեզի: Դուրս ցատկեցինք մեր դիրքերէն եւ սուրով ու հրացանով մնացեալներուն վրայ խոյացանք: Կարճատեւ պահ մը ետոյ, անոնք ամբողջութեամբ, տասը հոգի, մեր ոտքերուն առջեւն էին դիակնացած»[3]:

Այս դեպքից հետո Վանի կուսակալ Բահրի փաշան հանձնարարում է Մազրիկ ցեղի առաջնորդ Շարաֆ աղային հիմնահատակ կործանել Դերիկա վանքը:

«Լուրը,-շարունակում է Ա. Եկարյանը,-կայծակի արագութեամբ հասաւ մեզի - Տէրիկը պաշարուած: Խումբ մը ընկերներով կը փութանք կռուի վայրը: Մերինները (նկատի ունի արմենականներին- Հ.Գ.), միացած դաշնակցական զինուորներուն՝ կը պաշտպանեն ինքզինքնին եւ ետ կ մղեն բոլոր յարձակումները»[4]:

Դերիկի ֆիդայի-պաշտպանների հերոսական դիմադրությունը փլուզում է թշնամու ձեռնարկումներից ևս մեկը: Հայդուկների մղած մարտերը մեծ տպավորություն են գործել ոչ միայն այդ շրջանում բնակվող հայերի, այլև քրդերի վրա, որոնք երգեր են հյուսել ֆիդայիների և նրանց կռիվների մասին: Հայ ֆիդայիներին ձոնած երգերում քրդերն արտահայտել են իրենց վախը և սարսափն ու միաժամանակ՝ հիացմունքը:

Դերիկի ֆիդայիների կռումը սոսկ հայդուկային կռիվներ մղելն ու քուրդ ավազակախմբերի սանձահարումը չէր: Նրանք նույնպես պիտի մեկնեին Երկիր և իրենց գործում մասնակցությունը բերեին այնտեղ ծավալվող իրադարձություններին:

[1] «Հորիզոն», 1914, սեպտեմբերի 28:
[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 54:
[3] Նույն տեղում, էջ 55:
[4] Նույն տեղում, էջ 56:

Պարսկաստանի տարածքում Հ.Յ.Դաշնակցության ծավալած գործունեությունում ամենաակնառու և օգտակար գործերից մեկը , զուտ գործնական առումով, Թավրիզի «Խարիսխ» զինագործարանի հիմնումն է ու գործարկումը:

Ռուբենը, դրվատելով ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեի գործունեությունը Երկրի, Կովկասի և Արտասահմանի միջև կապ և հաղորդակցության ուղիներ հաստատելու գործում, առավելագույնս արժևորում է «Ամենագլխաւորը, սակայն, Թաւրիզի զինագործարանն էր, որ կը հիմնուէր այդտեղ 1890-ական թուականներուն»[1]:

Գաղտնիք չէ, որ ազատագրական պայքարում կարևորագույնը և դժվարինը, մարտական ուժերի կազմակերպումն է ու ժողովրդի զինումը: Այս առումով ուշագրավ է Դումանի հետևյալ դատողությունը. «Յեղափոխութիւն չկայ, երբ նրա համար պատճառ ու նպատակ չկայ: Պատճառն ու նպատակը անարժէք բաներ են, երբ նրանք իրագործելու համար ոյժ եւ կազմակերպութիւն չկայ: Ոյժն ու կազմակերպութիւնը վճռական են, եթէ նրանք հարազատ պատկերներն են յեղափոխութեան նպատակներու եւ ժողովրդի շահերու»[2]:

Ուժ և կազմակերպություն. մեկը մյուսին լրացնող կարևորագույն գործոններ, որոնց բացակայության դեպքում խոսք անգամ լինել չի կարող ակնկալելու որևէ հաջողություն ազատագրական պայքարում: ՀՅԴ իր կազմակերպական կառույցներն էր հիմնում, որոնց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ էր զենք: Հայաբնակ բոլոր բնակավայրերում, առավել ևս Արևմտահայաստանի, որտեղ հեղափոխական գործիչները կազմակերպական ու քարոզչական աշխատանքներ էին ծավալում, բնակչության առաջնահերթ պահանջը միակն էր՝ զենք[3]:

Ներկայացնելով Վանի նահանգում տիրող իրավիճակն ու հեղափոխական գործիչների գործունեությունը՝ ՀՅԴ Շամի կենտր. կոմիտեի գործիչ Ն.Պասյանը նշում է. «Արդէն զէնքի անհրաժեշտութիւնը զգալի էր դարձել: Երիտասարդութիւնը միայն խօսքով ու չոր քարոզներով չէր բաւականանար. նա ըմբռնում էր, որ առանց զէնքի ոչինչ չի լինելու. բան չէն կարող ընել»[4]:

Իհարկե, Թավրիզի զինագործարանը ի զորու չէր պատրաստելու մեծ քանակության զենքեր, բայց այնտեղից դուրս եկած զենքերով կարելի էր զինել մի քանի մարտական խմբեր և մասամբ լուծել բնակչության զինելու խնդիրը: Համաձայն ՀՅԴ նշանավոր գործիչ Սամսոնի (Ստեփան Թադևոսյան), «Խարիսխ» զինագործարանը, Ռուստոմի մասնակցությամբ, հիմնվել է 1891 թ. : Առաջին զինագործներն էին Քաբանյանը, Ռուստոմի եղբայր Կարոն (Արիստակես Զորյան) եւ Երվանդ Տեր-Ավետիքյանը: Զինագործարանը հիմնում են Թավրիզի այն թաղամասում, ուր կենտրոնացած էին քաղաքի զինագործների արհեստանոցները: Այդ թաղամասը կոչում էր «Զաբախանա»[5]:

«Զաբախանա» թաղամասում Ռուստոմն ու առաջին զինագործները վարձում են երկու կից խանութներ, որոնք միացնելով՝ վերածում են արհեստանոցի: Զինագործարանը, ավելի ստույգ արհեստանոցը Կարոն անվանակոչում է «Խարիսխ»[6]:

Ն. Պասյանը «Դրուագներ Վասպուրականի Յեղափոխական Պատմութենէն 1890-1900 թիւ» վավերագրում նշում է, որ Պարսկաստանում, իսկ դրանից առաջ Վանում,

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, էջ 29:
[2] Նույն տեղում, էջ 13:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 2, տետր 1-2: ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 5-25:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 7:
[5] «Դրօշակ», 1930, թիւ 11-12, էջ 321:
[6] Նույն տեղում:

զենքերի պատրաստման արհեստանոց հիմնել են ոչ միայն դաշնակցականները, այլ նաև արմենականները [1]:

Վան քաղաքում զենքի պատրաստման առաջին արհեստանոցը հիմնել են արմենականները: Կուսակցության հանձնարարությամբ հմուտ զինագործ Ուստա Փանոսը քաղաքի մեջ հիմնում է արհեստանոց և հաջողությամբ պատրաստում Այնալու հրացաններ: Վանի թուրք իշխանությունները իրենց բազում լրտեսների միջոցով շատ շուտով տեղեկանում են քաղաքում հրացաններ պատրաստելու իրողությանը ու սկսում ամենուրեք որոնել զինագործներին: Քաղաքում արհեստանոցի հետագա գործունեությունը դառնում է խիստ վտանգավոր: Ոստիկանությունը ցանկացած պահի կարող էր հայտնաբերել զենք պատրաստողներին և դաժան հաշվեհարդար տեսնել: Արմենականները, նկատի ունենալով այդ վտանգը, որոշում են դադարեցնել աշխատանքները և արհեստանոցը տեղափոխել քաղաքից դուրս: Գլխավոր զինագործ Ուստա Փանոսը «... շատ մտերիկ ծանոթ լինելով քիւրտ աշիրաթապետ Մուկուրցի Թամուր աղայի, որը կը բնակէր Սարայի շրջան՝ Թլորան գիւղ, կը գնայ անոր քով եւ կառաջարկէ զինագործարանը փոխադրել անոր տուն: Թամուր աղան ուրախութեամբ կընդունէ այդ առաջարկը» [2]:

Քուրդ ցեղապետի տրամադրած կացարանում զինագործները տեղադրում են գործիքներն ու շարունակում հրացաններ պատրաստել: Շուտով պարզվում է, որ քուրդ ցեղապետի տրամադրած վայրը նույնպես ապահով չէ: Քրդերի մեջ կային թուրք իշխանությունների գործակալներ ու համակիրներ, որոնք զինագործներին նկատելու դեպքում, անպայմանորեն նրանց կմատնեին ոստիկանությանը: Արմենականները փնտրում են ավելի ապահով վայր: Պետոն, որը սերտ կապերի մեջ էր արմենականների հետ, առաջարկում է արհեստանոցը տեղափոխել Պարսկաստան: Արմենականները համաձայնվում են և գործիքները տեղափոխում են Պարսկաստան և նոր արհեստանոց հիմնում Սալմաստի Հավքվան գյուղում: Արհեստանոցում պատրաստված հրացաններն ու փամփուշտները զինատար խմբերը տեղափոխում էին Վան [3]:

Այդ մասին իր հուշերում նշում է նաև Սկբարեցի Սաքոն [4]:

Ի տարբերություն արմենականների, որոնց արհեստանոցում պատրաստել են մեծամասամբ այնալու հրացաններ, «Խարիսխ» զինագործարանում պատրաստել են բերդան ու մոսին հրացաններ: Զինագործարան ասելով չպետք է այն ընկալել այն իմաստով և կարծել, որ այնտեղ արտադրել են հրացանի բոլոր մասերը: Հասկանալի է, որ հատկապես պտուտակափող հրացանի, օրինակ մոսինի, փողերը այնտեղ չէին կարող ձուլել ու պատրաստել: Ավելի ստույգ կլինի, որ «Խարիսխ»-ը կոչել ոչ թե զինագործարան, այլ զենքեր հավաքելու և նորոգելու արհեստանոց:

«Խարիսխ» զինագործարանը ըստ Սամսոնի բնորոշման, «... հետապնդում էր գլխաւորապէս երեք նպատակ, առաջին՝ որ նա դիւրութեամբ կարողանայ սահմանագլխին այդ մտերիկ վայրում ռազմամթերք գնել, երկրորդ՝ նորոգի և պատրաստի ռուսական պետական զինագործարաններից գնած ու փոխադրած կիսապատրաստ զէնքերը և երրորդ՝ պատրաստի Երկրի համար զինագործներ»[5]:

Զինագործները երբեմն իրենք էին մեկնում Ռուսաստան, այնտեղից մոսինի մասեր Թավրիզ բերելու նպատակով: Կիսապատրաստի հրացանների գնման ու տեղափոխման գործը առավել հաջողությամբ իրականացրել է Կարոն: Ի տարբերություն մոսինի, որը բերում էին Ռուսաստանից, բերդան հրացանի մասեր ու փամփուշտներ ավելի մատչելի գներով մաքսանենգներից գնել են տեղում:

Երբ արդեն հայտնվել էին մոսինները, զինագործարանը դադարեցնում է բերդան հրացանների գնումն ու պատրաստումը: «Խարիսխ»-ի պատրաստած զենքերի մեծ մասը Երկիր են տեղափոխել Պետոյի, Դումանի, Վարդանի, Ֆահրադի և Վազգենի գլխավորած մարտական և զինատար խմբերը:

1895թ. «Խարիսխ»-ը համալրվում է նոր զինագործ վարպետներով: Զինագործարանի վարպետներից Կարոյին, զենքեր տեղափոխելիս, Ջուլֆայում ձերբակալում են պարսիկ ոստիկանները: Նրան թեպետ հաջողվում է փախչել Ջուլֆայի բանտից, բայց ոստիկանության հետապնդման պատճառով, չի կարողանում ներկա գտնվել արհեստանոցում: Մյուս վարպետները նույնպես տարբեր պատճառներով հեռացել էին Թավրիզից և զինագործարանում մնացել էին միայն աշակերտները:

ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի, որը հաջողությամբ համագործակցում էր Թավրիզի «Վրեժ» կենտր. կոմիտեին, որոշմամբ երկու զինագործների՝ Բագրատ Հովհաննիսյանի և Մարգար կեղծանունով երևանցի Թադևոսի ընկերակցությամբ Թավրիզ է գալիս ՀՅԴ անվանի գործիչ, հմուտ զինագործ, ընկերների կողմից խորապես սիրված և հարգված Գալուստ Ալոյանը (Թորոս) [1]:

«Արհեստանոցը կենդանութիւն ստացաւ: Կաշխատէին եօթը վարպետ և երեք աշակերտ: Ամէնքը հաւասար էին, զիրար կը սիրէին, համայնական աշխատանք մըն էր, որ կը տանէին առանց դրամական հաշիւներու» [2]:

Գալուստ Ալոյանը ոչ միայն կարողանում է առավելագույնս կազմակերպել ու աշխուժացնել «Խարիսխ»-ի աշխատանքները, այլև սերտ կապեր հաստատել Ղարադաղ գավառի մաքսանենգների հետ, որոնցից մատչելի գներով գնում է հրացանի մասեր, փամփուշտներ, դատարկ փամփուշտներ, վառոդ և այլն:

Զինագործարանում պատրաստած զենքերը, որոնց վրա դրոշմված էին ՀՅԴ և «Խարիսխ», ուղարկում էին Սալմաստ, որտեղից պիտի տեղափոխեին Երկիր:

Զինագործարանը Թավրիզի քաղամասերում և հայկական գյուղերում ունեցել է բաժանմունքներ: Օրինակ, Թավրիզի Լիլավա հայկական քաղամասի դպրոցի ուսուցչուհիներ՝ Մարոյի և Կատարինեի ապրած բնակարանի ներքնահարկում տանտիրոջ Բալասան Եգանյանի աջակցությամբ ընդհատակյա աշխատել է Ռոստոմի եղբայր Կարո : Այդ նույն բնակարանում էին «... կենտրոնանում արհեստանոցում պատրաստած հրացանները՝ բաժան-բաժան մասերով: Այնտեղ թէ խողովակներին և թէ տուփերին սև գոյն էր տրւում, յատուկ պատրաստուած հեղուկով, ապա մասերը հաւաքւում, ամբողջացւում ու յարմարեցւում էին ոռնդաղների վրա»[3]:

Մեկ այլ բնակարանում լցրել են դատարկ փամփուշտները: Այդ աշխատանքը ղեկավարել է երևանցի Ջալալբեկյանը,որը զոհվում է արհեստանոցում վառոդի պայթյունի հետևանքով: Այդ նույն պայթյունից վիրավորվում է նաև գանձակեցի Փարսադանը, որը Գուրգենի հետ զոհվում է Ցրոնքի կռվում:

Զինագործարանի մեկ այլ բաժանմունքում պատրաստել են փամփշտակալներ ու կաշվե ուսապարկեր: Ուշագրավ է, որ «Այս բոլոր կաշէ աշխատանքները տարիներ

---

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 7:
[2] Նույն տեղում, էջ8:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս «Դրօշակ», 1929, թիւ 12, էջ 9:
[5] Նույն տեղում, էջ 321:

[1] «Յեղափոխական Ալպոմ», 1967, թիւ 1-2, էջ 9:
[2] Նույն նտեղում:
[3] «Դրօշակ», 1930, թիւ 1-2, էջ 322

շարունակ. առանց որևէ կասկած ունենալու ու ամենայն հաւատարմութեամբ պատրաստել էր թուրք կօշկակար. ուստա Սաթարը»[1]:

«Խարիսխ»-ի արհեստանոցներից մեկում պատրաստել են նաև հրացանի խզակոթեր (ղոնդաղ). որոնց տեղափոխությունը բոլորովին նպատակահարմար չէր: Խզակոթի պատրաստման արհեստանոցը. որտեղ իր որդու Եգորի հետ աշխատել է ղոնդաղ պատրաստելու հայտնի վարպետ Ուստա Հայրապետը:

Համաձայն Սամսոնի վկայության. 1896թ. «Խարիսխ» զինագործարանից Սալմաստի Ղալասար գյուղ է տեղափոխվել 400 մոսին հրացան: Ամենայն հավանականության Սամսոնի նշած 400 հրացանները Ղալասար են տեղափոխել Վանի հունիսյան հանրահայտ ողբերգական դեպքերից հետո: Եթե այդ քանակության մոսիններ Սալմաստի զինապահեստներում կենտրոնացած լինեին մինչև հունիսյան դեպքերը, ապա այնտեղ գտնվող Նիկոլ Դումանն ու մյուս հայդուկները կգինվեին և կփորձեին մեկնել Վան: Զենքերը Սալմաստ տեղափոխելու ուշացումն է պատճառ հանդիսացել Դումանի դժգոհությանը. «Ո՞ւր է փամփուշտը, ո՞ւր են զէնքերը»[236]:

Եթե այդ 400 մոսինները չհասցրեցին ծառայեցնել Վանի ինքնապաշտպանությանը ապա «Խանասորի արշավանք»-ի ժամանակ հայ մարտիկները զինված էին հիմնականում հենց այդ հրացաններով:

Խանասորի արշավանքից հետո, թեպետ զոհվել էր «Խարիսխ»-ի գլխավոր զինագործը՝ Կարոն, բայց զինագործարանը շարունակում է աշխատել, բայց ոչ նախկին եռանդով ու ծավալով: Քանի որ ՀՅԴ կարողանում է Ռուսաստանում ձեռք բերել պատրաստի զենքեր, ուստի այլևս անհրաժեշտություն չկար գնել հրացանի մասեր և այն տեղափոխել Թավրիզ: Զինագործարանի աշխատանքներն աստիճանաբար նվազում են: «Խարիսխ»-ը վերջին անգամ աշխատել է 1909 թ. : Այսուհանդերձ. համաձայն Ռուբենի վկայության «Խարիսխ» զինագործարանի գործունեության արդյունքն է. «Հազարէն անց ըլլալու է անոնց պատրաստած զէնքերու քանակը: Այս զինանոցի շնորհիւ էր, որ Դաշնակցութիւնը ի վիճակի եղաւ ռազմական խոշոր ձեռնարկներ ընել սահմանագլխուն վրայ»[3]:

[1] Նույն տեղում, էջ 321:
[2] ՀԱԱ, ֆ. 31, ց. 2, գ. 2, էջ 179:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, էջ 29:

1. 4. ՇԱՏԱԽ ԳԱՎԱՌԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1895թ. Վասպուրականում և Վան քաղաքում հայ ազգային կուսակցություններից գործում էին առավելապես արմենականներն ու Հ.Յ.Դաշնակցությունը: Իսկ հնչակյանները « ...հազիւ 5-6 խումբ կունենան քաղքին մէջ. այնուամենայնիւ կը փորձին նաեւ կազմակերպութիւն ստեղծել գաւառին մէջ. սակայն այդ աշխատանքը անյաջող կանցնի եւ իւրաքանչիւր գաւառին մէջ հազիւ մէկ կամ երկու անհատ համակիրներ կը գտնին»[1]:

Արևմտյան Հայաստանում Հ.Յ. Դաշնակցությունը իր գործունեությունն առավելապես ծավալել է Վանի և Բիթլիսի նահանգներում. ընդսմին Վան-Վասպուրականում փոքր-ինչ ավելի շուտ, քան Տարոնում ու Սասունում. որոնք մասն էին կազմում Բիթլիսի նահանգի:

1. Վանը հայ բնակչության թվաքանակով. քաղաքին բնորոշ առանձնահատկություններով և կրթամշակութային հաստատություններով նկատելի գերակշռություն ուներ Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների նկատմամբ: Բնական է. որ հայ ազգային կուսակցությունները. իրենց գործունեությունում անպայմանորեն պիտի գնահատեին այդ հանգամանքը: Իր կազմակերպական կառույցները հիմնելով Վան-Վասպուրականում. ՀՅԴ ձգտում էր քաղաքն ու նահանգը դարձնել ազատագրական պայքարի կարևորագույն կենտրոններից մեկը:

2. Վասպուրականը սահմանակից էր Պարսկաստանին. և այդ հանգամանքը ավելի մեծ հնարավորություն էր ընձեռում հայ ազգային-քաղաքական կազմակերպություններին, մասնավորապես Հ.Յ. Դաշնակցությանը, այնտեղ ուղարկել կուսակցական գործիչների. ինչպես նաև զենք ու զինամթերք:

3. ՀՅԴ թեպետ իր կազմակերպական կառույցները Վան-Վասպուրականում հիմնում է փոքր-ինչ ավելի վաղ. քան Տարոնում, բայց նրա գործունեությունն ու հիմնավորումը Վան-Վասպուրականում համեմատաբար ընթացել է փոքր-ինչ ավելի դժվարությամբ:

Հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչներից առաջինը Տարոնում գործել են հնչակյանները, որոնցից առավելապես հայտնի են Միհրան Տամատյանն ու Համբարձում Բոյաջյանը (Մեծ Մուրադ):

Կուսակցություններից ոչ մեկը մինչև 1894 թ. վերջը, Տարոնում չի ունեցել կազմակերպական կառույցներ: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռում Հ.Յ.Դաշնակցությանը, առավել դյուրին ու հաջողությամբ իր գործունեությունը ծավալելու տարոնահայության շրջանում:

Վան-Վասպուրականում Հ.Յ.Դաշնակցությունից ավելի վաղ հաստատվել ու գործում էին արմենականները. որոնք ավելի մեծ հեղինակություն և ազդեցություն ունեին քաղաքում ու հայկական գյուղերում: Այդ հանգամանքը որոշակի խոչընդոտներ է հարուցել. որպեսզի ՀՅԴ նույն հաջողությամբ, ինչպես Տարոնում, կարողանար կարճ ժամանակահատվածում իր կառույցները հիմնել ու տարածվել նաև Վան-Վասպուրականում:

Չնայած այն իրողությանը, որ Հ.Յ. Դաշնակցությունը դեռևս նոր-նոր էր հաստատվել Վասպուրականում և իր կազմակերպական կառույցներով զիջում էր արմենականներին, բայց արդեն 1895 թ. նրա ղեկավար մարմինների օրակարգում քննարկման առարկա էր դարձել Վասպուրական նահանգում ապստամբություն բարձրացնելու խնդիրը[1]:

Ռոստոմի հավաստմամբ, Տաշրյանը (Հովսեփ Արղության) ՀՅԴ բյուրոյին է ներկայացնում անգամ Վասպուրական նահանգում ապստամբություն բարձրացնելու ծրագիրը:

«Նա.-գրում է Ռոստոմը,- ցույց է տալիս բոլոր յարմարութիւնները Շ.(նկատի ունի Շատախ-Հ.Գ.) ապստամբեցնելու: Յատուկ մարդ է գնացել դիրքն ուսումնասիրելու. սա մինչեւ անգամ քարտէս է կազմել: Բայց այդ ծրագիրը իրագործելու համար հարկաւոր է սուս ու փուս գործունէութիւն տեղափոխելու համար 400 հրացան եւ 200 մարդ այստեղեցիներից: Ապստամբութիւն պէտք էր աշխատել առաջ բերել այս աշնանը»[2]:

Եթե նկատի ունենանք Դաշնակցության սահմանափակ կարողությունները ու հնարավորությունները, ապա պիտի նշել, որ այդ ժամանակահատվածում Վասպուրական նահանգում ապստամբություն բարձրացնելու հարցի քննարկումը չէր կարող փաստարկվել որևէ լուրջ և իրական նախադրյալներով: Նույն նամակում Ռոստոմը խոստովանում է, որ ո՞չ Տաշրյանը և ո՞չ էլ Վասպուրականում ՀՅԴ ներկայացուցիչ Պետոն, չեն եղել Երկրի համապատասխան շրջաններում և ներկայացրած ծրագիրը կազմել են ուրիշների ցուցմունքների հիման վրա:

Վասպուրականում ապստամբություն բարձրացնելու հնարավորությունները ու մանրամասները քննարկելու համար, ըստ Ռոստոմի հավաստման, 1895 թ. ամռանը Թիֆլիսում խորհրդակցության են հրավիրվում Վասպուրական նահանգում գործող ՀՅԴ ներկայացուցիչները: Խորհրդակցությունում կայացած քննարկումները միանշանակորեն հաստատում են, որ «Իրերի դրությունը ամենապարզ ապացոյց էր, որ անկարելի է գլուխ բերել այդ մտադրությունը եւ այն էլ այդքան կարճ ժամանակամիջոցում...»[3]:

Արմենականները, որոնք, ինչպես արդեն նշվել է, ավելի վաղ էին հաստատվել և ավելի մեծ ազդեցություն ունեին Վան-Վասպուրականում, ավելի խոհեմ գործելակերպ են որդեգրել և այդ նույն ժամանակահատվածում չեն ծրագրել ապստամբություն բարձրացնել Վանի նահանգում:

Հ.Յ.Դաշնակցությունը թեպետ դեռևս նոր-նոր էր արմատավորվել Վանում, բայց 1895 թ. արդեն հասցրել էր ոչ միայն իր կազմակերպական կառույցները հիմնել Վան քաղաքում, այլև այդ կառույցները համադրող ՀՅԴ Շամի(Շամիրամ) կենտր. կոմիտեն: Ի տարբերություն արմենականների, որոնք գործում էին

[1] Տե՛ս «Դիւան...», էջ 183:
[2] Նույն տեղում, էջ 183-184:
[3] Նույն տեղում:

նաև քաղաքի մերձակա բնակավայրերում, մասնավորապես Հայոց Ձորի շրջանում, Դաշնակցությունը գավառներում դեռևս չէր հասցրել արմատավորվել:

ՀՅԴ Շամի կենտր. կոմիտեի գործիչ Ներսես Պապյանը ներկայացնում է փաստեր, որոնք վկայում են, որ գավառներում կուսակցական կառույցներ հիմնելու ուղղությամբ ՀՅԴ, այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում արդեն հասցրել էր որոշակի քայլեր ձեռնարկել, և «1894-ի գարնան կազմակերպուած էին Արճակի, Թիմարի և Սարայի շրջանները»[1]:

Ավելին, Ն. Պապյանի հավաստմամբ՝ Վանում հաստատված ՀՅԴ գործիչները կարողացել էին նաև սերտ կապեր հաստատել նահանգում բնակվող ասորիների հետ, որոնք «... մեծ ծառայութիւն կը մատուցէին Դաշնակցութեան, տալով տուրհանդակներ եւ միանգամայն օժանդակելով կուսակցութեան փոխադրական խումբերու եւ զէնքի փոխադրութեան գործի մէջ»[2]:

ՀՅԴ առաջնորդվելով իր որդեգրած ռազմավարությամբ՝ չպետք է իր գործունեությունը սահմանափակեր սոսկ Վան քաղաքով: Կազմակերպական կառույցներն անպայմանորեն պիտի հիմներ նաև գավառներում:

Վանում գտնվող հեղափոխական գործիչները գավառները կազմակերպելու, այնտեղ կառույցներ հիմնելու հարցում միակարծիք չէին: Դրսից եկած գործիչները գտնում էին, որ անհրաժեշտ է կառույցներ հիմնել նաև գավառներում: Այս հարցում վանեցի գործիչներից նրանց հետ համակարծիք էր Վազգենը (Տիգրան Տերոյան), իսկ մյուսները պաշտպանել են հակառակ տեսակետը: ՀՅԴ Վանի կոմիտեի պարագլուխ Ոսկանը պնդում էր. «Ի՞նչ կարիք կա գավառները կազմակերպելու, անոնց ձայն տալու, անոնց զենք հայթայթելու, անոնք դեռ հեղափոխության մասին գաղափար չունին, զենքը չեն կրնար պահել. մենք հազիվ կրնանք մեզ զինել»[3]:

Համանման սկզբունք և գործելակերպ դավանել են նաև արմենականները, որոնք նույնպես անտեսում էին գավառներում գործելու կարևորությունը և ձգտում էին ողջ ուշադրությունը կենտրոնացնել Վան քաղաքի վրա:

Ներկայացնելով այս հարցում արմենականների և ՀՅԴ դիրքորոշումները՝ Ռուբենը գրում է. «Մինչեւ 1896 թիւը, գաւառներու կազմակերպութիւնը դեռ եւս անտես առնուած էր եւ ան կարեւոր կը համարուէր Արմենականներու կողմէ: Առհասարակ այն մտայնութիւնը, կար, որ Վանն է հոգին ամբողջ Վասպուրականի և եթէ Վան քաղաքը այս կամ այն դիրքը բռնէր կառավարութեան հանդէպ և յաջողութիւն ունենար, ատով կը լուծէր ամբողջ Վասպուրականի խնդիրը»[4]:

Հ.Յ. Դաշնակցության Վանի գործիչները ազատագրական պայքարի ողջ ընթացքում միշտ էլ ձգտել են կուսակցության գլխավոր ուշադրությունը բևեռել Վան քաղաքի վրա և շատ հաճախ մյուս շրջանների համար նախատես-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 28:
[2] Նույն տեղում, էջ 28-29:
[3] Խանասորա Վարդան, Երեւան, 1992, էջ 47:
[4] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 87:

ված զենքերն ու այլ միջոցները պահել են Վանում և չեն ուղարկել հասցեատերերին:

Վանի ընկերների նման պահվածքը, ինչ խոսք, չէր կարող չառաջացնել Տարոնի, Սասունի և Ռիթլիսի Հ.Յ.Դաշնակցության կառույցների դժգոհությունը: Նրանք իրավացիորեն Վանի Շամի կենտր. կոմիտեից պարբերաբար պահանջում էին իրենց տնօրինությանը հանձնել «Դուրան-Բարձրավանդակ»-ին և «Սալնո Ձոր»-ին հատկացված զենքն ու այլ միջոցները [1]:

Որքան էլ Վանի գործիչները փորձեին կուսակցության հիմնական ուժերն օգտագործել Վան քաղաքում, այնուամենայնիվ, ազատագրական պայքարի ռազմավարությունը թելադրում էր, որպեսզի ՀՅԴ կառույցներն ու մարտական խմբերը հիմնվեին և գործեին նաև գավառներում:

Այդ նպատակով որոշվում է «...մի փոքրիկ խումբ ուղարկելու մի քանի գավառներ, դաշնակցական կոմիտեներ հիմնելու եւ գավառի ձայնն էլ Կեդրոնական կոմիտեի մեջ լսելի դարձնելու համար, այլեւ զենք պետք է մտցվեր գյուղերը» [2]:

Պիտի նկատել, որ Արճակի, Թիմարի և Սարայի շրջանները Դաշնակցության կողմից կազմակերպված լինելու մասին Ն. Պասյանի վկայությունը չափազանցված է: Չէր բացառվում, որ ՀՅԴ որոշակի կապեր կարողացել էր հաստատել նահանգում բնակվող ասորիների հետ, սակայն համաձայն Վարդանի վկայության, մինչև իր խմբի մուտքը Դաշնակցությունը դեռևս չէր հասցրել կուսակցական կառույցներ հիմնել գավառներում [3]:

1895 թվականն էր, համիդյան ջարդարարության ամենաարյունալի տարին: Հայաստանի արևմտյան հատվածից բազմաթիվ գաղթականներ, թուրքական բռնություններից խուսափելով, գալիս էին նաև Սալմաստի հայկական գյուղերը, ուր հանգրվանած հայդուկներն ամեն օր Երկրում կատարվող դեպքերի մասին փախստականներից լսում էին սարսափելի լուրեր: Միաժամանակ չէր դադարում Երկիր մեկնելու և այնտեղ գործելու ցանկությամբ համակված կամավորների հոսքը: Ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկների համար այլևս որևէ դժվարություն և գաղտնիք չպետք է լինեին ըմբռնելու ու գնահատելու Օսմանյան կայսրությունում տիրող այն կացությունը, որը հստակորեն մատնանշում էր արևմտահայության գլխին ծառացած մահացու վտանգի իսկությունը:

Հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրը արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպումն էր: Այդ նպատակով, հատկապես Կարսի և Սալմաստի շրջաններում կազմավորում էին մարտական ու զինատար խմբեր, որոնք պետք է մեկնեին Արևմտահայաստանի տարբեր շրջանները:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 28:
[2] Խանասորա Վարդան, էջ 47:
[3] Տե՛ս նույն տեղում:

Սալմաստում կենտրոնացած մարտական ուժերի մի մասը պատրաստվում էր մեկնել նաև Շատախ: Որպեսզի կարողանային կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունը, առավել ևս ապստամբական ձեռնարկներ, հայ ազգային-քաղաքական կուսակցությունները, մասնավորապես Հ.Յ.Դաշնակցությունը պիտի ձգտեր իր կազմակերպական կառույցները հիմնել Երկրի զանազան գավառներում, այդ թվում նաև Շատախում, Մոկսում և Ռշտունիքում:

Խանասորա Վարդանը իր հուշագրությունում նշում է, որ այդ օրերին Սալմաստում կազմակերպվում է մի մեծ խումբ, որը պիտի մեկներ Շատախ և մասնակցեր այնտեղ կազմակերպվող ապստամբությանը:

Ըստ Վարդանի վկայության 1895 թ. մայիսին չատախցիների խմբով Սալմաստ է եկել նաև Երվանդ Արղությանը, որն իր հետ բերել է Շատախի ապագա ապստամբության ծրագիրն ու քարտեզը: Իհարկե, Վարդանը չի նշում և չէր կարող նշել, թե փոքրիկ Շատախը ինչպես և ինչ ուժերով էր պատրաստվում ապստամբել ու պատերազմել ընդդեմ Օսմանյան կայսրության [1]:

Նույն թվականի գարնան վերջերին ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ Սալմաստում կազմակերպված մարտախմբերից մեկը առաջադրանք է ստանում մեկնել Շատախ և նրա հարակից գավառները: Մարտախմբի կազմում էին ընդգրկվել ազատագրական պայքարում արդեն նշանակալի վաստակ ունեցող հայդուկներ Նիկոլ Դումանը, Մեքարեցի Սաքոն, Վարդանը, Երվանդը, Ֆահրադը (Սարգիս Օհանջանյան) և այլոք:

Մարտախմբի մեկնումը Երկիր փոքր-ինչ ձգձգվում է: Սալմաստում գտնվող հեղափոխական գործիչները Երկիր մեկնելու և այնտեղ հաստատվելու ու գործելու հարցում պաշտպանում էին տարբեր տեսակետներ: Տարակարծությունները երբեմն վերածվել են տաք վիճաբանությունների և տեղիք տվել անցանկալի միջադեպերի: Մարտախմբի անդամ Ֆարհադը, անդրադառնալով Երկիր մեկնելու նախօրեին տեղի ունեցած միջադեպերից մեկին, գրում է. «Արմ»նական կուսակցութիւնից դժգոհ՝ եկել միացել էին Դաշնակցութեան երկու վանեցիներ՝ Ոսկան Զադոն և Ծուռ Դավիթը: Երկուսը խոզ կերպով մրցում էին միմեանց հետ, եւ խոզ հակամարտութիւնը մի օր ճաշի սեղանին փոխուեց բացարձակ կռուի: Ոսկան Զադոյի չգիտեմ ո՞ր վիրաւորական խոսքի համար, Ծուռ Դաւիթը մերկացրեց խանչալը եւ յարձակուեց նրա վրայ: Ես ու Նիկօլը մէջ ընկանք բաժանելու, սակայն, խանչալի քափը Նիկօլի ոտքը ծակեց ու անցաւ Ոսկան Զադոյի ազդրը» [2]:

Այս միջադեպից նոր միայն 20 օր անց հայդուկները, մոռանալով տարաձայնություններն ու վեճերը՝ հաշտվում են եւ զինատար խմբի կազմում մեկնում Երկիր: Զինախումբը, որ բաղկացած էր 22 անդամներից, իր հետ պիտի տաներ 33 հրացան: Զինախմբի խմբապետ է ընտրվում Ոսկանը, կամ ինչպես Վանում

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 13-14:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1942, մայիս-յունիս, էջ 93:

են կոչել՝ Աքլոր Ոսկան, օգնականներ՝ Վարդանն ու Սեքարեցի Սաքոն: Զինախումբն առանց որևէ պատահարի հաղթահարում է ճանապարհի բնական խոչընդոտները, հասնում քրդական Չոխ գյուղին և դադար առնելու նպատակով փորձում բարձրանալ այդ գյուղի մերձակա լեռը:

Մարտական խմբի գործողությունների մասին իր հուշագրությունում գրի է առել Վարդան Մեհրաբյանը, որը ղեկավարել է Շատախ, Մոկս, Ռշտունիք (Գավաշ) գավառներում գործող հենց այդ մարտախումբը: Վարդանի հուշագրությունը, կարելի է ասել, այն միակ սկզբնաղբյուրն է, որը ներկայացնում է վերոհիշյալ գավառներում հայ մարտական ուժերի ծավալած գործունեությունը: Ներկա ուսումնասիրությունում համառոտակիորեն անդրադառնալով Շատախ, Մոկս, Ռշտունիք(Գավաշ) գավառներում 1895թ. տեղի ունեցած իրադարձություններին, բնականաբար, օգտագործել ենք հիմնականում Վարդանի անտիպ և տպագրված հուշագրությունները [1]:

Մարտական և զինատար խմբերը, որպես կանոն, շարժվել են գիշերով և իրենց համար որպես դադարի, հանգստյան կայաններ ընտրել ճանապարհին գտնվող լեռները, որոնց լանջերին հայդուկները ոչ միայն հանգստանում էին, այլ նաև թշնամու կողմից հարձակման ենթարկվելու դեպքում դիրքավորվում ու պաշտպանվում:

Վարդանի զինախումբը գիշերով անցնում է նաև Բարդուղիմեոս վանքի մոտակայքով: «Գարուն էր, - գրում է Վարդանը, - ջրերի առատ ժամանակը, ամեն մի ձորակով վտակներ էին վազում: Բարդուղիմէոս վանքի մոտ գտնուած բոլոր չիմանները (արօտ) ծածկուած էին ջրով: Մենք էլ հէնց այդ չիմաններով էինք գնում և գրեթէ ամբողջ գիշերը ջրերի միջով էինք անցնում...Քայլում էինք արագութեամբ, երբեմն վազեվազ, որպեսզի լուսաբացին դաշտում չմնանք»[2]:

Զինախումբը թեև շարժվում էր գիշերով և աշխատում էր աննկատ մնալ, բայց նկատվում է Չոխ գյուղի քրդերից մեկի կողմից: Քուրդն անմիջապես շտապում է գյուղ և իր տեսածը հայտնում համագյուղացիներին: Հաշված րոպեներ անց քուրդ հեծյալները, ապա նաև զինյալ ամբոխը տարբեր ուղղություններով շարժվում են դեպի լեռը, ուր գիշերային հոգնատանջ ճանապարհից հետո հանգստանում էին զինախմբի անդամները: Հայդուկներին բնավ ձեռնտու չէր կռվի բռնվել քրդերի հետ: Այդ պատճառով նրանք փորձել են հաշտության եզրեր գտնել իրենց վրա հարձակվողների հետ ու խուսափել զինված բախումից: Սակայն քրդերը ուշադրություն չեն դարձնում իրենց ներկայացված առաջարկությանը և շարունակում են առաջանալ դեպի հայդուկների դիրքերը: Այդ օրը իրենց վճռորոշ խոսքն են ասում հայդուկների մոտ եղած մի քանի մոսին հրացանները: Բարեբախտաբար այդ պահին թուրքական որևէ կանոնավոր զորամաս մոտակայքում չի եղել, իսկ քրդերը, որոնք զինված էին հնացած

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 3, տետր 1,2,3: «Հայրենիք»ամս., 1936, թիւ 12, 1937, թիւ1,2,3: Խանասորա Վարդան, Երեւան, 1992:
[2] «Հայրենիք» ամս., 1936, թիւ12, էջ73:

զենքերով, առաջին անգամ տեսնելով անձնանոթ զենքի հզորությունը, չեն համարձակվում դիմել վճռական գրոհի: Հայդուկների հեռահար մոսինների համազարկերը սարսափի են մատնել և մինչև մութն ընկնելը տեղում գամել քրդերին: Ամբողջ օրը քարերի և թփերի հետևում պատսպարվելով՝ քրդերը չեն համարձակվել փորձ անել բարձրանալ և մոտենալ հայդուկների դիրքերին: Մարտադաշտին առավել մոտ գտնվող քրդաբնակ Դուավա գյուղի բնակիչները հետաքրքրությունից դրդված հավաքվել են տների կտուրներին ու ուշադրությամբ դիտել իրենց արյունակիցների և հայ մարտիկների մենամարտը: Մարտի ականատես քրդերին վախեցնելու նպատակով «Հրացանս, - պատմում է Վարդանը, - ուղղեցի գյուղացիների վրայ եւ արձակեցի, ոչ ոք տեղից չշարժուեց: Իսկ երբ երկրորդը արձակեցի, մէկ էլ տեսնենք, ամբողջ ժողովուրդը ցիր ու ցան եղաւ: Ապացոյց էր, որ գնդակը շատ մօտ էր ընկել»[1]:

Երեկոյան, երբ մութն ընկնելու պատճառով քրդերը հեռանում են մարտադաշտից, հայդուկները իջնում են լեռնալանջից և շարունակելով երթուղին՝ հասնում Վարագա լեռը, ապա ուղևորվում Վան:

Հ.Յ. Դաշնակցությունը դեռևս նոր-նոր էր արմատավորվել Վանում, և համաձայն ապակենտրոն կառույցներով գործելու ռազմավարությանը, արդեն հասցրել էր իր կազմակերպական կառույցը հիմնել Վան քաղաքում, ուր գործում էր ՀՅԴ Շամի կենտր. կոմիտեն:

Ի տարբերություն արմենականների, որոնք գործում էին նաև քաղաքի մերձակա բնակավայրերում, մասնավորապես Հայոց Ձորի շրջանում, ՀՅԴ , համաձայն Վարդանի վկայության, գավառներում դեռևս չուներ իր կառույցները:

ՀՅԴ ԲԿԱ (Բոստոնի կենտրոնական արխիվ)-ում պահպանվող «Դրուագներ Վասպուրականի Յեղափոխական Պատմութեան 1890-1900 թիւ» անվանումը կրող վավերագրի հեղինակ Ներսես Պասյանը ներկայացնում է փաստեր, որոնք հավաստում են ճիշտ հակառակ իրողությունը: Ըստ այդ վավերագրի, պարզվում է, որ գավառներում կուսակցական կառույցներ հիմնելու ուղղությամբ ՀՅԴ, այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում արդեն հասցրել էր որոշակի քայլեր ձեռնարկել, և «1984-ի գարնան կազմակերպուած էին Արճակի, Թիմարի եւ Սարայի շրջանները»[2]:

Ավելին, Վանում հաստատված ՀՅԴ գործիչները կարողացել էին նաև սերտ կապեր հաստատել Վասպուրականի նահանգում բնակվող ասորիների հետ, որոնք «... մեծ ծառայութիւն կը մատուցէին Դաշնակցութեան, տալով տուրհանդակներ եւ միանգամայն օժանդակելով կուսակցութեան փոխադրական խումբերու եւ զէնքի փոխադրութեան գործի մէջ»[3]:

Վասպուրականում և մասնավորապես Վանում Հ.Յ. Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՅԴ գործիչներ Պետոն,

[1] Նույնն տեղում, էջ 74:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 28:
[3] Նույն տեղում, էջ 28-29:

Իշխանը (Հովսեփ Արղության), Վազգենը (Տիգրան Դերոյան), Ոսկան-Զադոն (Եղիազար Հովսեփյան) և այլոք, իրոք, զգալի աշխատանքներ էին կատարել ու կուսակցական կառույցներ էին հիմնել քաղաքում, բայց անհամեմատ սահմանափակ շրջաններում: Վարդանը հաստատվելով Վանում առավելապես զբաղվել է մարտական խմբերը մարզելու գործով:

«Կենտր. կոմիտէն, - գրում է Ներսես Պասյանը, - բոլոր կազմակերպուած շրջաններից զէնքի գործածութեան ընկերներին հերթով քաղաք կը հրաւիրէ, որոնց հետ Վարդան զինավարժութեամբ կը պարապի, որպէսզի անոնք ևս վերադառնալով իրենց շրջանները, գիւղական խումբերին զինաւարժութիւն սորուեցնէին»[1]:

Որքան էլ Վանի գործիչները փորձեին կուսակցության հիմնական ուժերն օգտագործել ի շահ Վան քաղաքի, այնուամենայնիվ, ազատագրական պայքարի ռազմավարությունը հրամայաբար թելադրում էր, որպեսզի ՀՅԴ կազմակերպական կառույցներ հիմնվեին նաև գավառներում: Այդ նպատակով որոշվում է «...մի փոքրիկ առաքելական խումբ ուղարկել մի քանի գավառներ, դաշնակցական կոմիտէներ հիմնելու եւ գաւառի ձայնն էլ Կեդրոնական կոմիտեի մէջ լսելի դարձնելու համար, այլեւ զէնք պետք է մտցվեր գիւղերը»[2]:

Օգոստոսի վերջերին 12 անդամներից բաղկացած մարտախումբը Վարդանի առաջնորդությամբ դուրս է գալիս Վանից և ուղևորվում Հայոց Ձոր: Այս խմբի Երկիր մեկնելն ի սկզբանե առավելապես կուսակցական նպատակներ էր հետապնդում:

Ներսես Պասյանի հավաստմամբ, կուսակցական կառույցներ հիմնելու, ժողովրդին կազմակերպելու նպատակով Հայոց Ձոր, Շատախ, Ռշտունիք (Գավաշ) և Մոկս գավառներում 1893 թ. ընդամենը 10 անդամներից բաղկացած անդամներով արդեն աշխատանքներ էին տարել Պետոն, Սկաբրեցի Սաքոն և Իշխանը, որոնք շրջագայելով «...իւրաքանչիւր գաւառի մէջ կը հրաւիրեն այդ շրջանի կազմակերպուած ընկերներու խմբապետական ժողովներ, հոն կը խօսին անոնց յեղափոխութեան մասին ու կը բացատրին կուսակցութեան ծրագիրը»[3]:

Գյուղերում շրջագայելիս, երբ մարտախումբը հերթական խմբապետական ժողովն է հրավիրում Գավաշի Փայխներ գյուղի մոտակայքում գտնվող «Նարեկացու աղոթատեղ» անվանումը կրող քարայրում, անսպասելիորեն հարձակման է ենթարկվում քուրդ զինյալների կողմից: Այն պահին, երբ ժողովի մասնակիցները հավաքվում էին քարայրում, պատահաբար նրանց նկատում է մի քուրդ հովիվ և անմիջապես այդ մասին հայտնում մերձակայքում գտնվող քրդերին: Քուրդ ցեղապետերն անհապաղ ոտքի են հանում իրենց ցեղախմբերին և գալիս ու փորձում են շրջապատել քարայրը: Ժողովի մասնակիցները ժամանակին նկատում են քրդերին: Նրանք արագորեն դուրս են գալիս քարայրից և անվարան կռվի բռնվելով՝ դիպուկ կրակոցներով դիմավորում քրդերին: Հայերի դիմադրությունն ու անվրեպ հարվածները կատարյալ անակնկալ էին հարձակվողների համար: Նրանք ավելի քան վստահ են եղել, որ փոքրաքանակ խումբը չէր համարձակվի դիմադրություն ցույց տալ: Քրդերը մի քանի զոհ ու վիրավոր տալով «...երկար չեն կարող դիմադրել ու նեղ մնալով կը փախչին»[1]:

Անտարակույս Պետոյի, Սկաբրեցի Սաքոյի և Իշխանի գլխավորած փոքրաքանակ մարտախումբը, անգամ կուսակցական կառույցներ հիմնելու ուղղությամբ, սահմանափակ ժամանակահատվածում արդյունավետ գործունեություն չէր կարող ծավալել ու բնականաբար չէր կարող հասնել որևէ նշանակալի հաջողությունների:

Ամիսներ անց նույն շրջաններում Պետոյին, Սկաբրեցի Սաքոյին, Իշխանին ու նրանց զինակիցներին փոխարինելու էին եկել, դարձյալ նույն նպատակով, Վարդանի գլխավորած մարտախմբի անդամները:

ՀՅԴ հավատարիմ իր ռազմավարությանը, ձգտում էր իր ապակենտրոն կառույցները հիմնել Արևմտահայաստանի գավառներում: Վարդանի գլխավորած մարտախմբի անդամները գավառներում պիտի աշխատեին ժողովրդի հետ, նրանց ներկայացնեին ՀՅԴ ծրագիրը և հնարավորության սահմաններում կուսակցական կառույցներ հիմնեին իրենց վստահված շրջաններում:

Հայոց Ձորում մարտախմբի անդամների առաքելությունը պսակվում է հաջողությամբ: Զինավառ խմբի ներկայությունը հայ գյուղացիների համար ոգևորող գործոն էր: Ի դեմս հեղափոխական գործիչների, գյուղացիները տեսնում էին կարող անհատների, որոնք ի զորու էին անհրաժեշտության դեպքում բռնություններից պաշտպանել իրենց իրավունքները: Իսկ հայ գյուղացիությունը անպաշտպան էր ու անկազմակերպ: Մարտական խմբի անդամների ներկայությունից ու նրանց քարոզչությունից ոգևորված՝ Հայոց Ձորի Քերծ, Խուսպ, Հիրիճ, Կղզի, Ղզղաշ գյուղերի բնակիչներից ոմանք ընդունվել են ՀՅԴ շարքերն ու հիմնել առաջին խմբերը:

«Այսպէս, - գրում է Վարդանը, - Հայոց Ձորի մի քանի գիւղերը կազմակերպելուց յետոյ, Արտոսեան լեռներով անցանք Շատախի կողմերը»[2]:

Հայոց Ձորից մարտախումբն անցնում է Շատախ, ապա Մոկս և Ռշտունիք: Իր հիշատակարանում Վարդանը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական վերոհիշյալ գավառների աշխարհագրական դիրքի, հայ-թուրք-քուրդ բնակչության թվային հարաբերակցության, նրանց նիստ ու կացի, տվորությունների և այլ առանձնահատկությունների վերաբերյալ[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 30:
[2] Խանասորա Վարդան, էջ 47:
[3] ՀՅԴ ԿԱ, թ. 1045, գ. 15, էջ 24:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 2, տետր 1, էջ 2:
[3] Տե՛ս նույն տեղում:

Նրա վկայությունից պարզվում է, որ քրդական ցեղախմբերից ոչ բոլորն էին թշնամաբար տրամադրված հայերի նկատմամբ: Քրդերի մեջ եղել են հեղինակավոր մարդիկ, որոնք համակրել ու օգնել էին հայերին:

Օրինակ, Շատախի հայ-քրդական խառը բնակչություն ունեցող Սակ գյուղի ազդեցիկ քրդերից մեկին՝ Սլոյին հայ դաշտաներին օգնելու, նրանց պահելու մեղադրանքով Շատախի թուրք իշխանությունը ձերբակալում է և ենթարկում խիստ հարցաքննության:

«Սլոն շատ հնարագէտ կերպով պատասխանում է, առանց վախենալու, թէ բէյ-էֆենտի մենք ապրում ենք անտառի մօտ, ուրիշ գիւղերից հեռու եւ չենք կարող հայերի հետ թշնամաբար վարուել: Գալիս հաց են ուզում, ինչպէս կարող ենք մերժել...» [1]:

Հայ-քուրդ հարաբերակցությունում առավել ուշագրավ է հայերի նկատմամբ Մոկսի Մուրթուլլա բեկի դրսևորած չափազանց ջերմ և օգտակար վերաբերմունքն ու կեցվածքը:

Հայոց 15 աշխարհներից ամենափոքրը՝ Մոկաց աշխարհը «...բռնում էր Առնոսի հարավային փեշերը: Լեռնոտ և անտառներից զուրկ մի երկիր: Ազգաբնակչությունը՝ հայեր ու քրտեր: Գավառում հայերը մեծամասնություն էին կազմում, մոտավորապես 30 հայաբնակ գյուղեր, որոնցից մի քանիսն էին միայն քրդախառը: Հողը շատ սակավ էր, եւ գյուղացիք իրենց հացը Ռշտունիքից էին ստանում» [2]:

Գավառի կենտրոնը չորս գյուղերից բաղկացած Մոկսն էր, կամ ինչպես ընդունված էր անվանել՝ Մոկաց քաղաքը, որը նաև 60 զինվորներից կազմված թիկնազոր ունեցող գայմագամի (գավառապետ) նստավայրն էր: Մոկսում էր բնակվում նաև գավառում, ինչպես նաև հարևան շրջաններում մեծ հեղինակություն և հարգանք վայելող քուրդ ցեղապետ Մուրթուլլա բեկը:

Համաձայն Վարդանի վկայության, Մուրթուլլա բեկը շատ լավ տիրապետել է հայոց լեզվին և «Ավետարանը ամբողջ կարդացել էր հայերեն եւ ուսումնասիրել, անշուշտ, ավելի լավ, քան մեր քահանաները: Ամեն անգամ, ի հարկին, տեղական հայերին մեծ օգնություն էր անում, մանավանդ շատ էր օգնել վերջին կոտորածների միջոցին: Ամբողջ գավառում ո՛չ մի հայի վնաս չհասավ շնորհիվ գլխավորապես Մուրթուլլա բեկի» [3]:

Ամիսներ շարունակ անընդմեջ շրջելով Շատախի, Մոկսի, Ռշտունիքի գյուղերը, մարտախմբի անդամները գրեթե առանց որևէ լուրջ միջադեպի մեծ աշխատանք են ծավալում ժողովրդի մեջ և կարողանում ՀՅԴ կառույցներ հիմնել վերոհիշյալ գավառների մի շարք գյուղերում: Շատախում նրանց նույնիսկ հաջողվում է հիմնել նաև կանանցից բաղկացած խմբեր: Գյուղերում կազմակերպական և քարոզչական աշխատանքներ ծավալելու ընթացքում, գործիչներ

[1] Նույն տեղում:
[2] Խանասորա Վարդան, էջ 61-62:
[3] Նույն տեղում, էջ 62:

ների համար, թերևս, ամենադժվարինը եղել է կազմակերպական կառույցներ հիմնելը, որի անհրաժեշտությունը գյուղացիները ընկալել են դժվարությամբ, բազմիցս կրկնելուց ու բացատրելուց հետո:

Գավառներում հայ գյուղացիների հետ տարվող աշխատանքները հստակորեն մատնանշում էին, որ ազատագրական պայքարի գաղափարն ու խնդիրները ժողովրդի մեջ արմատավորելու և կուսակցական կառույցներ հիմնելու գործում կարելի էր առավել մեծ հաջողություններ ակնկալել, եթե քարոզչական աշխատանքները զուգորդվեին որոշակի գործնական քայլերով: Հայկական բոլոր բնակավայրերում, առանց բացառության, գյուղացիներին առավելապես հետաքրքրում էր զենք ձեռք բերելու ու զինվելու խնդիրը: Եթե ՀՅԴ և մյուս ազգային-քաղաքական կուսակցությունները ի զորու լինեին ժողովրդին կամ գոնե իրենց կառույցներին ապահովել զենքով, ապա որևէ կասկած լինել չի կարող, որ այդ կառույցները կլինեին ավելի կազմակերպված ու հզոր: Ժամանակը միանշանակորեն ապացուցում է, որ դա ինքնապաշտպանություն, առավել ևս ազատագրական պայքար կազմակերպելու ամենակարևոր երաշխիքներից մեկն էր, եթե ոչ ամենակարևորը:

Մարտախմբի անդամները հստակ գիտակցել են այդ իրողությունը, և աշխատել են զենք ձեռք բերել ու զինել իրենց իսկ նախաձեռնությամբ կազմակերպված խմբերին: Բայց զենք ձեռք բերելը չափազանց դժվար խնդիր էր, անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ, որի բացակայությունը միշտ էլ եղել է ազատագրական պայքարի կազմակերպման ամենադժվար լուծվող հարցերից մեկը: Այն զենքերը, որոնք հնարավոր էր ձեռք բերել տեղերում՝ քրդերից ու թուրքերից, հնացած էին և ոչ գործածելի:

Մարտախմբի անդամները գավառներում պիտի շարունակեին իրենց գործունեությունը, բայց Վանից ստանում են Պետոյի նամակը, որը հայտնում է, «... թե քաղաքին վտանգ է սպառնում, կառավարությունը օրը ցերեկով զենքեր է բաժանել տաճիկ ժողովրդին, ժամ առ ժամ սպասում ենք հարձակման» [1]:

Համիդյան ջարդերի օրերն էին: Մահացու վտանգը սպառնում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բովանդակ հայությանը: Քուրդ հրոսակների և թուրքերի «մարտական» տրամադրվածությունը հստակորեն երևում էր նաև Շատախի, Ռշտունիքի և Մոկսի շրջաններում, այսինքն այն վայրերում, որտեղ գործում էին Վարդանի գլխավորած հայդուկները: Վերոհիշյալ գավառների գյուղերից շատերը դիմում էին նրանց և խնդրում, որ նրանք մեկնեին իրենց գյուղերն ու ժողովրդին պաշտպանեին քրդերից և թուրքերից:

«Բայց, - խոստովանում է Վարդանը, - Պետոյի նամակը այլևս իրավունք չէր տալիս տատանվելու, պետք էր շտապել քաղաք, որովհետեւ այնտեղ շահերը ավելի ընդհանուր էին, Հայկական հարցին սերտորեն կապված: Գյուղացիներին թողինք լքված ու հուսահատ...» [2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Թեպետ մարտախմբի անդամները թողնում են Շատախը և մեկնում Վան, սակայն հասցնում են կատարել որոշակի դրական աշխատանք: Տարիներ անց, 1904 թ. վերոհիշյալ գավառներում հիմնված կուսակցական կառույցների հենքի վրա Իշխանի գլխավորությամբ հիմնադրվում է ՀՅԴ Լեռնապարի կենտր. կոմիտեն: Այդ գավառները Արևմտյան Հայաստանի այն եզակի շրջաններից էին, որոնց հայ բնակչությունը 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ մեծամասամբ հենց Հ.Յ.Դաշնակցության կառույցների գլխավորությամբ կարողացավ կազմակերպել ինքնապաշտպանությունը և փրկվել անխուսափելի կործանումից: Եթե անաչառորեն գնահատենք, ապա կարելի է հաստատել, որ գավառներում, մասնավորապես Շատախում ժողովրդին կազմակերպելու, ՀՅԴ կառույցներ ստեղծելու գործում, ի դեմս Վարդան Մեհրաբյանի առաջնորդած հայդուկների, անկասկած զգալի է Դաշնակցության առաջին սերնդի գործիչների ներդրումը:

«Մինչև այսօր ալ, - նշում է Ռուբենը, - Շատախի այրերը կը կրեն մեծ մասամբ Վարդան անունը: Ափսոս որ Արմենականները գաւառի կազմակերպման այդ կարեւոր գործը բարձի թողի ըրած էին : Այդ աշխատանքը մնացել էր դեռեւս լայն ժողովրդականութիւն չվայելող Դաշնակցութեան վրայ» [1]:

Վանում տիրող կացությունը հետզհետե դառնում էր ավելի լարված ու շիկացած: Նախկին նահանգապետ Նազմ փաշային, որը զգույշ ու մեղմ քաղաքականություն էր վարում և վատ չէր վերաբերվում հայ բնակչությանը, փոխարինում է Սաատեդին փաշան, որը Օսմանյան կառավարության կողմից առաջադրանք է ստանում նախապատրաստել Վասպուրականի հայության կոտորածը [2]:

«Ան, - գրում է Ռուբենը, - պաշտօնի գլուխ անցնելով, կը սկսի շրջիլ գիւղերը, կը կազմակերպէ քիւրտերը եւ զանոնք կը գրգռէ հայերու դէմ: Ատոր հետեւանքով սպանութիւնները եւ ալան-թալանը կը շատանան շրջաններու մէջ» [3]:

Պիտի նկատել, որ թուրք իշխանություններն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում Վան քաղաքի վրա: Վանը իր մեծաքանակ հայ բնակչությամբ ու կազմակերպվածությամբ, մշակութային և կրթական հարուստ հաստատություններով թուրք իշխանավորների կողմից դիտվում էր որպես վտանգավոր բնակավայր, որը նաև պարսկական սահմանին մոտ լինելու պատճառով, առավել դյուրությամբ կարող էր դառնալ Օսմանյան տերության դեմ պայքարող հայ հեղափոխական կազմակերպությունների կենտրոնավայրը:

Վարդանի բնորոշմամբ.«Վանը տաճիկ կառավարութեան համար մի չարիք էր, նորա աչքի փուշն էր. ինչ միջոցների դիմում էր, վոր հեղափոխականներին ձերբակալի. բան չէր դուրս գալիս: Վանի դիրքը, նորա այգիները մեծ յարմարութիւններ էին տալիս պահուելու, թագնուելու եւ հեռանալու» [4]:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 87:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 2, տետր 1, էջ 13:

Քաղաքում և գավառներում կատարած խուզարկություններն ու ավարառությունները, իսկ երբեմն նաև սպանությունները արդարացնելու նպատակով թուրք իշխանությունները լուրեր են տարածում, որ այդ ամենը կատարվում են տերության դեմ գենք վերցրած հայ հեղափոխականներին փնտրելու նպատակով: Հայ բնակչությանն ապակողմնորոշելու, համակրանքը շահելու և նրանց հեղափոխականների դեմ տրամադրելու նպատակադրությամբ, ժողովրդի մեջ տարածում են այն մտացածին վարկածը, համաձայն որի «...դրսի մարդիկ եկան հոն եւ որ եթէ անոնք չլինէին՝ երկրի վիճակը խաղաղ պիտի մնար: Ժողովրդին կառաջարկէ վտարել իր մէջէն յեղափոխականները, հակառակ պարագային խստօրէն պիտի պատժուի...» [1]:

Վանի կուսակալի քարոզչությունը որոշակի ազդեցություն է գործում նահանգի հայ բնակչության վրա: Թեպետ Վասպուրականի բնակիչների մեծամասնությունը, հասկանալով այդ քարոզչության կեղծությունը, չի տրվում սադրանքներին, այնուամենայնիվ, եղել են մարդիկ, որոնք չդիմանալով բռնություններին և հավատ ընծայելով թուրք իշխանավորների խոսքերին, դառնում էին նրանց կամակատարները: Վանի կուսակալը հայ հեղափոխականներին որսալու նպատակով նահանգում ավելացնում է զորքի և ոստիկանական ուժերի քանակը և օգտագործելով նաև գործակալների հաղորդած տեղեկությունները՝ ավելի է ուժեղացնում բռնությունները: Չնայած սպառնացող ստույգ վտանգին, Վասպուրականի հայ բնակչությունը հեղափոխական գործիչների նկատմամբ դրսևորում է հարգալից վերաբերմունք և բազմիցս օգնում նրանց:

Վարդանը իր հուշագրությունում պատմում է մի դեպքի մասին, երբ հայ գյուղացիները հնարամտությամբ կարողացել են ապակողմնորոշել թուրքերին և փրկել իրենց գյուղում ապաստանած հայդուկներին:

Հայդուկներին ձերբակալելու նպատակով թուրք զինվորները վաղորդյան տեղեկանալով Շուշանց գյուղում նրանց գտնվելու մասին, գիշերով շրջապատում են գյուղը: Լուսաբացին գյուղացիները նոր միայն նկատում են, որ գյուղը շրջապատված է, իսկ այդ պահին գյուղում էին գտնվում մի քանի ֆիդայիներ:

Ի՞նչ պիտի անեին, որպեսզի փրկվեին և հայդուկները, և բնակչությունը: Հայդուկները, իհարկե, կարող էին կռվել, բայց նրանց ուժերը խիստ սահմանափակ էին: Եթե նրանք կռվեին և փորձեին ճեղքել պաշարման շղթան, որը ուժերի խիստ սահմանափակ լինելու պատճառով գրեթե բացառվում էր, ապա անկասկած հարվածի տակ կդնեին գյուղի բնակչությանը: Ելքը միակն էր.

«Գյուղացիք դիմում են խորամանկութեան... հայդուկներին հագցնում են հովվի զգեստները եւ ոչխարները ձգելով առաջները՝ դուրս բերում գիւղից, իսկ զենքերը պահում ապահով տեղեր: Զինուորները ընկնում են տները, մանրակրկիտ խուզարկում ամեն ծակուծուկ, բայց ոչ մի կասկածելի բան չեն գտնում. հեղափոխականները դուրսը ոչխար էին արածացնում» [2]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Թուրք ոստիկանական ու զինվորական ուժերի հետապնդումներից խուսափելու և ժողովրդին հարվածի տակ չդնելու ու բռնություններից զերծ պահելու նպատակով Վանում գտնվող մարտական ուժերը ժամանակավորապես հեռանում են քաղաքից և հեռանում Պարսկաստան:

«Վանում, - գրում է Վարդանը, - զինուորներից թեթեւացանք. շատ քիչ մարդ մնաց: Այդ գարնան Արմենականներից էլ մի լաւ խումբ գնաց Պարսկաստան, դարձեալ զէնքի: Ուրեմն Վանի կռվող ոյժը հեռացաւ»[1]:

Վարդանի գլխավորած ընդամենը 8 մարտիկներից բաղկացած մարտախումբը նույնպես թողնում է Վանը: Նրա խմբին առաջադրանք է տրվում Շատախ, Մոկս և Ռշտունիք գավառներում՝ շարունակել աշխատանքները, կուսակցական նոր կառույցներ հիմնել և ավելի ամրապնդել հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման հիմքերը: Մարտախումբը երբ հասնում է Բերդակ, որտեղից պետք է անցներ Հայոց Ձորի Կեմ գյուղը, քիչ է մնացել, որ բախվեր Շատախից դեպի Վան գնացող թուրք զինվորներին: Հայդուկների վրա Վան մեկնող թուրք զինվորների ներկայությունը խիստ ճնշող ազդեցություն է գործում: Ամենայն հավանականությամբ թուրք իշխանությունները լուրջ նախապատրաստություն էին տեսնում: Իզուր չէր նոր զորամասի մեկնումը Շատախից Վան: Հայդուկներին այդ անցանկալի բախումից ազատում է Բերդակ գյուղի պատանի հովիվներից մեկը, որը քաջատեղյակ լինելով տեղանքին, կարողանում է մարտախումբն աննկատ դուրս բերել գյուղից և ապահով հասցնել գյուղի մոտակայքում գտնվող մի հուսալի վայր[2]:

Հայոց Ձորից մարտախումբն առանց որևէ միջադեպի անցնում է Շատախ: Օսմանյան կայսրությունում իրականացվող հայկական կոտորածների արձագանքները արդեն հասել էին Շատախ, ուր տեղի հայ բնակչությունը որոշակի քայլեր էր ձեռնարկում՝ դիմագրավելու գալիք արհավիրքներին:

Շատախի շրջանը բաժանված էր երկու կարևոր կենտրոնների. «- Թաղ գիւղը . 200-ից աւելի հայ տուն բնակչութեամբ, որն ընկած է Սիվտիկ գետի եւ Տիգրիսի խառնարանում, եւ Փեսան Դաշտը, որ առաջին դիրքից վեց ժամ դէպի հիւսիս հեռաւորութեան վրայ կը գտնւի: Վերջինս բաղկացած է չորս հայ գիւղերից՝ Շիտան, Կաղավիզ, Ասեղ եւ Կահնամիրան»[3]:

Թեպետ գավառում արդեն գործում էին ՀՅԴ խմբեր, բայց Շատախի հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար, Դաշնակցությունը դեռևս չէր հասցրել զենք տրամադրել անգամ իր կառույցներին: Իսկ առանց պաշտպանվելու համապատասխան միջոցների բացակայության պայմաններում ինչ՞ կարող էին անել այդ խմբերը, երբ սկսվեին կոտորածները:

Համաձայն Ա. Նորյանի Շատախի երկու կարևոր կենտրոնները « -Թաղի բնակիչները երեք դիրք են բռնել, որոնց վրայ հսկում են տեղական կուռդ երիտասարդներ՝ 70 շէշխանաներով եւ մի քանի հատ էլ փամփուշտաւոր հրացաններով: Սիվտիկ գիւղացիներն էլ 30 շէշխանայով եւ 3-4 հրացանով իրենց գիւղի վերեւի սարի վրայ են դիրք բռնել»[1]:

Կարելի է ասել, որ միակ մարտական ուժը, որը զինված էր մոսիններով, փաստորեն՝ Վարդանի գլխավորած հայդուկներն էին, որոնք կենտրոնացել էին Փեսանդաշտում: Ավելին, որպեսզի հայերին ապակողմնորոշեր և թույլ չտար դիմելու ինքնապաշտպանության, թուրք իշխանությունները քրդերի միջոցով ձգտում էին կեղծ խոստումներով խաբել գյուղացիներին և հավաքել նրանց մոտ եղած սակավաթիվ հնաոտիպ զենքերը, հավատացնելով, թե «Ձանազան քրտեր կարող են յարձակուել եւ ձեր զէնքերը խլել, լաւ է տուէք մենք պահենք, յետոյ էլ վերադարձնենք »[2]:

Կացությունը շատ ավելի վատ է եղել մյուս շրջաններում, որտեղ ժողովուրդը որևէ լուրջ պատրաստություն չէր տեսել և անկարող էր դիմելու ինքնապաշտպանության: Բազմաթիվ բնակավայրերում հայ բնակիչները պաշտպանվելու համար չեն ունեցել անգամ գոնե մեկ հրացան:

Վերոհիշյալ գավառների հայ բնակչության ինքնապաշտպանությունը և անվտանգությունն ապահովելու համար Վարդանի փոքրաքանակ մարտախումբը, բնական է, չէր կարող լուրջ քայլեր ձեռնարկել: Բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ էր ինչ -որ քայլեր ձեռնարկել, խրախուսել ու ոգևորել ժողովրդին և թույլ չտալ, որ թշնամին հեշտությամբ, առանց դիմադրության հանդիպելու ջարդեր իրականացներ Շատախ, Մոկս և Ռշտունիք գավառներում: Այդ նպատակով Վարդանը նամակներ է գրում շրջանի գիւղացիներին, ինչպես և թաղեցիներին, որոշ հրահանգներ է տալիս ու շեշտում «թէ չխաբուիլ երբեք կառավարութեան խոստումներէն, կուել մինչեւ վերջին շունչը: Հասեր է ժամը, երբ անվեհեր կերպով պէտք է նահատակել հայրենի հողի վրա[3]:

1896 թ. հունիսի սկզբներին մարտախումբը դուրս է գալիս Շատախից, մեկնում է Արտոս, ուր պիտի հանգստանային, ապա անցնեին Ռշտունիք: Արտոսի գաղթից երեւացող համայնապատկերով զմայլված՝ Վարդանը նշում է. «Մեր ոտների տակ փռված էր պատմական Ռշտունյաց սարահարթը փռված բազմաթիվ հայ գյուղերով և արգավանդ ու բերրի դաշտերով: Քիչ այն կողմ՝ Վանա կապուտակ լիճը, որ արծաթե գույներով խաղում էր երեկոյան արեգակի ճառագայթների տակ: Ավելի հեռուն, ամեն կողմ լեռներ, պատմական վայրեր, աքանչելի հուշարձաններ հայկական անցյալ փառքի...»[4]:

Լեռան լանջից հեռադիտակով զննելով շրջակայքը՝ հայդուկները նկատում են Վան քաղաքից բարձրացող ծխի թանձր ամպերը: Նույն պահին, երբ հայդուկները մտահոգված փորձում էին հասկանալ, թե ի՞նչ է կատարվում Վանում, գալիս է սուրհանդակն ու հայտնում, որ քրդերը կոտորել են

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նորեան Ա., Դրւագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից, Բոստոն, 1917, էջ 267:

[1] Նույն տեղում:
[2] Խանասորա Վարդան, էջ 124:
[3] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 169:
[4] Խանասորա Վարդան, էջ 127-128:

Նարեկ գյուղի բնակչությանը, իսկ Տշողի և Հիրիճի բնակիչները քուրդ հրոսակախմբերի հայտնվելուց սարսափահար, լքել են բնակավայրերն ու փախել դեպի լեռները[1]:

Վան քաղաքից երևացող տեսարանն ու գյուղերից ստացած լուրերն արդեն որևէ կասկած չէին թողնում, որ կոտորածները սկսվել էին նաև Վասպուրականում, Շատախում, Մոկսում և Դշտունիքում: Նույնն էր պատկերը նաև Փեսան դաշտի չորս գյուղերում: Ոստանցի քրդերը հարձակվել էին Կաղազիզ գյուղի վրա և չհանդիպելով դիմադրության, սպանել էին 7 հայերի, թալանել էին գյուղը և հեռացել[2]:

Փեսանդաշտի գյուղերի բնակիչները նույնպես լքել էին իրենց բնակավայրերը և հեռացել լեռները: Թեև ինքնապաշտպանություն կազմակերպելու համար կացությունն անհապաստ էր, ուժերը՝ բացարձակապես անբավարար, բայց անհրաժեշտ էր ինչ-որ միջոցներ ձեռնարկել և հակահարված տալ հայկական գյուղերն ասպատակող քուրդ հրոսակախմբերի ոտնձգություններին:

Մարտախմբի անդամները խուճապի մատնված, դեպի լեռները փախչող գյուղացիներին մեծ դժվարությամբ հավաքում են Արտոսի լեռնալանջերին ու վճռում իրենց ուժերը կենտրոնացնել Փեսանդաշտում և այն վերածելով ինքնապաշտպանության կենտրոնի՝ դիմագրավել թշնամուն:

Շատախում, ինչպես նաև մյուս գավառներում, հայկական գյուղերի վրա հարձակվողները գլխավորապես ավարառու քուրդ ցեղախմբերն էին, որոնք մարտադաշտում աչքի չէին ընկնում մարտունակությամբ և կարգապահությամբ: Հայդուկներն իրենց վարած կռիվների փորձից համոզվել էին, որ թեկուզ փոքր ուժերով դիմադրելու դեպքում, կարելի էր վնասազերծել, փախուստի մատնել քրդերին և փրկել սարսափի մատնված հայ գյուղացիներին: Խուճապի մատնված հայկական գյուղերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար անհրաժեշտ էր, որ հայդուկներն իրենց անձնական օրինակով ոգեշնչեին ու մարտնչելու տրամադրություն հաղորդեին բնակչությանը:

Հայդուկները գյուղացիներին խրախուսելով ու ոգևորելով Արտոսից իջեցնում են գյուղերը, դիրքեր են գրավում Փեսանդաշտի Շիտան գյուղի մատույցներում և պատրաստում դիմագրավելու թշնամու հարձակումները:

Այդ նույն օրերին, երբ հայդուկները որպես ինքնապաշտպանության կենտրոն ամրացնում էին Փեսանդաշտը, տագնապալի լուրեր էին հասնում Շատախի մյուս, մասնավորապես, Գոմեր, Թաղ ու Սիվտկնի գյուղերից: Գոմերի և Սիվտկնի բնակիչները հեռացել էին գյուղերից և բարձրացել էին լեռները: Գոմերի գյուղացիները նույնիսկ հավատացել էին քրդերի կեղծ խոստումներին ու նրանց հանձնել գյուղում եղած սակավաթիվ զենքերը: Վերոհիշյալ գյուղերի բնակիչները իրենց դիմումներով հայդուկներին թախանձագին խնդրում էին, որ նրանք գնան և պաշտպանեն իրենց:

[1] Նույն տեղում, էջ 128:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 131:

Ներկայացնելով Շատախում տիրող կացությունը՝ Վարդանն իրավացիորեն նշում է. «Ես, ութը հայդուկներով, Փեսանդաշտն էլ պիտի պաշտպանեի, Թաղին էլ օգնության պիտի հասնեի, գոմերցոց ու սիվտկնցոց էլ պիտի փրկեի, իսկ ժողովուրդը ինքն իրեն պաշտպանելու մասին ոչ մի քայլ չէր անում - ի՜նչ դառն հեգնանք: Ես ի՞նչ կարող էի անել իմ փոքրաթիվ ուժերով...»[1]:

Հայդուկները մտադրվում են Շատախի գյուղացիներին կենտրոնացնել Թաղ գյուղում և այն դարձնելով ինքնապաշտպանության կենտրոն՝ դիմագրավել հակառակորդին: Սակայն պարզվում է, որ Թաղ գյուղում ուտելիք չկար և այնտեղ կենտրոնանալու դեպքում անհնարին կլիներ կերակրելու ժողովրդին: Այդ պատճառով հայդուկները հրաժարվում են Շատախի բնակչությանը Թաղ գյուղում կենտրոնացնելու մտադրությունից; Թաղը, ի տարբերություն մյուս գյուղերի, փոքր-ինչ լավ էր զինված: Թաղեցիները ունեցել են շեշխանա և ՀՅԴ կողմից տրված 10 փամփշտավոր հրացաններ[2]:

Թաղեցիները, դրսևորելով գովելի կազմակերպվածություն, մարտական ոգի և կամք, կարողանում են կազմակերպել գյուղի ինքնապաշտպանությունը: Հունիսի վերջերին քուրդ ցեղախմբերը, որոնց օգնում և աջակցում էին թուրք զինվորները, հարձակվում են Թաղ գյուղի վրա: Ըստ Ա.Նորյանի, կռիվների ընթացքում թաղեցիներին ղեկավարել են հեղափոխական ուժերը[3]:

Ա. Նորյանը, շեշտելով Թաղի ինքնապաշտպանության կազմակերպման գործում հեղափոխական ուժերի մասնակցության փաստը, ամենայն հավանականությամբ նկատի ունի ՀՅԴ տեղի կառույցը: Այդ օրերին, բացառությամբ Վարդանի գլխավորած մարտախմբի, Շատախում դրսից եկած այլ ուժեր չեն գործել: Թաղեցիներն, ապավինելով միմիայն իրենց ուժերին, կարողանում են դիմադրել քուրդ հրոսակախմբերին ու հետ մղել գյուղի վրա ձեռնարկած հարձակումները: Չկարողանալով ընկճել գյուղի պաշտպանների դիմադրությունը՝ քրդերը հրդեհում են գյուղը և դրանով փորձում հարկադրել «...դիրքերից դուրս հանել յեղափոխականներին՝ ստիպելով որ կրակը հանգցնեն, բայց այդ պաշտօնի համար գտնում են քաջարի հայ կանայք, որոնք հերոսաբար առաջ են նետում, մարում կրակն ու հնարաւորութիւն տալիս տղաներին՝ կռուելու»[4]: •

Քրդերի գրոհները որևէ արդյունք չեն տալիս, կռիվների ընթացքում տալով տասնյակ սպանվածներ և վիրավորներ, նրանք մութն ընկնելուն պես հեռանում են Թաղի մոտերքից և այլևս փորձ չեն անում հայտնվել մարտադաշտում: Թաղ գյուղի վրա ձեռնարկվող գրոհները անմիջականորեն ղեկավարող գայմագամը, անկարող լինելով ընկճել թաղեցիների դիմադրությունը, դիմում է Վանի կուսակալին, նրանից խնդրելով լրացուցիչ ուժեր, նաև թնդանոթներ: Շատախցիների դիմադրությունը կոտրելու նպատակով « Այդ օժանդակութիւնը չի ուշանում եւ

[1] Նույն տեղում, էջ 131:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 135:
[3] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 170:
[4] Նույն տեղում, էջ 170-171:

Սարի բինաշին շտապում է Շատախ, բայց հասնում է այն ժամանակ, երբ կուռ քիուրտերն արդեն նահանջել էին»[153]:

Թաղեցիները իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճում են անվիճելի հաղթանակ: Քանի որ քուրդ ցեղախմբերը հրաժարվում են Թաղ գյուղի վրա հարձակվելուց, թուրք իշխանության ներկայացուցիչները ձերբակալում են մի քանի թաղեցիների, գյուղացիներից առգրավում երեք տասնյակ չեչխանա և հեռանում[2]:

Ի՞նչ էր կատարվում Փեսանդաշտում, ուր հայդուկների առաջնորդությամբ հայ ինքնապաշտպանական ուժերը նույնպես մարտնչում էին ընդդեմ թուրք զինվորների ու քուրդ հրոսակների: Փեսանդաշտում հայ մարտական ուժերը կարողացել են մինչև մութն ընկնելը աննահանջ դիմադրել:

«Պետք էր, - խոստովանում է Վարդանը, - տեսնել գյուղացիներին ինչպե՜ս առյուծ կտրած կռվում էին: Առաջին անգամ էի տեսնում նրանց կողմից այդպիսի սրտոտություն...»[3]:

Կռվի առաջին օրը հայ ինքնապաշտպանական ուժերը, չնայած ենթարկվում էին անընդմեջ գրոհների, բայց կարողանում են պաշտպանել իրենց դիրքերը: Կռիվների ընթացքում թշնամու ուժերը գնալով ավելի ու ավելի էր համալրվում, իսկ հայ մարտիկների մոտ խիստ սահմանափակ էին փամփուշտները: Քրդերը սովորաբար կռվել են մինչև մութն ընկնելը, բայց այդ օրը թուրք զինվորների ներկայությունից ոգևորված, չեն հեռացել մարտադաշտից: Շատախցիները հայդուկների առաջնորդությամբ կարող էին հաջողությամբ պաշտպանվել, եթե ունենային բավարար քանակության փամփուշտներ: Բայց, դժբախտաբար, փամփուշտներն արդեն սպառվում էին: Թեև Փեսանդաշտը պաշարված էր թշնամու մեծաքանակ ուժերով, բայց անհրաժեշտ էր փրկության ելք գտնել և դուրս գալ շրջապատումից: Ելքը միակն էր, հարկավոր էր գյուղացիներին դուրս բերել գյուղից ու տեղափոխել առավել ապահով վայր: Գյուղացիների սնվելու կարիքները հոգալու նպատակով «...կարգադրեցի գիւղի բոլոր թոնիրները վառեն եւ ինչքան կարելի էր շատ հաց, մանաւանդ իւղով հաց թխեն, որ գիւղից դուրս գալուց, ժողովուրդը հետը վերցնի...»[4]:

Թուրք զինվորներն ու քուրդ զինյալները շրջափակման մեջ պահելով Փեսանդաշտը, հավանաբար չեն մտածել, որ պաշարված հայերը կհանդգնեին դուրս գալ գյուղից: Գիշերը նրանք մնացել են գյուղի մերձակայքում՝ իրենց գրված դիրքերում և սպասել են, որպեսզի լույսը բացվելուն պես վերսկսեն հարձակումը: Սակայն, նրանք իրենց հաշիվներում սխալվում են:

«Երբ,-գրում է Վարդանը,-արդէն մթնեց, կարգադրեցի որ ժողովուրդը հացը վերցնի հետները եւ գիւղից դուրս գան դէպի միւս կողմի լեռները: Ամբողջ գիւղի

[1] Նույն տեղում, էջ 172:
[2] Նույն տեղում:
[3] Խանասորա Վարդան, էջ 128:
[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 2, տետր 2, էջ 12:

ժողովուրդը աննկատելի կերպով գիւղից հեռացավ, մնացինք մենք դիրքերում, մեր դիմացն էլ քրդերը կրակ էին արել ու նստել...»[1]:

Գիշերը, շատախցիների հայդուկների պաշտպանությամբ դատարկում են Փեսանդաշտը և ամբողջ գիշերն առաջ շարժվելով, լուսաբացին հասնում են Մոկսի ու Ռշտունիքի միջնամասում գտնվող Վարա Լավեշ լեռը:

Լույսը բացվելուն պես, քրդերը՝ ձիավոր և հետևակ, լցվում են Փեսանդաշտ ու տեսնելով այն դատարկված, այրում են Շիտան գյուղը և սկսում հետապնդել հեռացող գյուղացիներին: Լեռան լանջին խմբված գյուղացիները, ականատես լինելով իրենց օջախների այրվող տեսարաններին և խորապես վրդովվելով, այդ ամենի համար մեղադրել են հայդուկներին: Գյուղացիները կշտամբելով նրանց՝ ասել են, «Ձեր մեղքն է, դուք մեր տունը ավերեցիք, եթե դուք չլինեիք,կգային՝ 20-30 մարդ կսպանեին ու կհեռանային...»[2]:

Գյուղացիների արտահայտած վրդովմունքն ու մեղադրանքը եզակիներից չէ: Շատերն են մեղադրել և մեղադրում, որ Արևմտահայության ջարդերի պատճառն էր նաև Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում հայ հեղափոխական գործիչների և ֆիդայիների ներկայությունն ու նրանց ծավալած հակապետական գործողությունները: Վարդանը, որպես պատասխան նման որակավորման ու մեղադրանքների՝ նշում է, «Մեր պաշտպանության շնորհիվ մարդկային ոչ մի զոհ չէին տվել, իրենց ունեցվածքի մեծ մասը փրկել էին, իսկ այժմ մի քանի փայտերի համար մեր գլխին այսպիսի խոսքեր էին թափում, կարծես 20-30 մարդը անարժեք բան էր. «20-30 մարդ կսպանեին ու կհեռանային»: Արդյո՞ք այդքանով էլ կբավականանային: Ավելի հավանական չէ՞ր, որ բոլորին սրի քաշեին»[3]:

Շատախի ինքնապաշտպանությունը պերճախոս ապացույցն է այն իրողության, որ փոքր-ինչ կազմակերպվածության և անգամ թույլ դիմադրության դեպքում կարելի էր դիմել ինքնապաշտպանության ու փրկվել կոտորածներից: Հանրահայտ փաստ է, հայ բնակչության կոտորածները թուրք իշխանությունները իրականացրել են քրդերի միջոցով: Իսկ կռվելու վարպետությամբ այնքան էլ աչքի չընկնող քրդերի ասպատակությունները կարելի էր վնասազերծել, ինչը մեկ անգամ ևս փաստեց Շատախի ինքնապաշտպանական մարտերը, անգամ փոքրաքանակ մարտական ուժեր ունենալու դեպքում:

Արժևորելով իր գլխավորած մարտախմբի մասնակցությամբ տեղի ունեցած Շատախի ինքնապաշտպանական մարտերի արդյունքը՝ Վարդանը խոստովանում է, «Պետք է ասել թոյլ կռիւ էր եւ մեզ համար անվտանգ: Չնայած քրդերը բաւականին մեծ թիւ էին ներկայացնում, մեզ վոչ մի վնաս չհասցրեց, վոչ մի զոհ չտուեցինք, իսկ իրենց սպանուածները շատ էին»[4]:

[1] Նույն տեղում, տետր 3, էջ 2:
[2] Խանասորա Վարդան, էջ էջ 139:
[3] Նույն տեղում, էջ 139-140:
[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 2, տետր 2, էջ 12:

Երեք օր լեռնալանջերին հանգրվանելուց հետո հայդուկները շատախցիներին առաջնորդում են և տեղավորում Մոկսի գյուղերում: Մոկաց աշխարհի հայ բնակչությանը ջարդերից ազատելու գործում դարձյալ իր ծանրակշիռ ու փրկարար խոսքն է ասում Մոկաց Մուրթուլա բեկը որը «...միշտ բարեացկամ եղած է հանդեպ հայերի եւ ամեն անգամ զերծ պահեր է հայութիւնը կողոպուտից, թալանից ու ամեն կարգի վտանգներից...»:

Մոկսից մարտախումբն անցնում է Ռշտունիք ու ականատես լինում սարսափազդու տեսարանների: Ռշտունիքի գյուղերի մի մասը, ի զորու չլինելով դիմելու ինքնապաշտպանության, քրդերի կողմից ենթարկվել էին կոտորածների: Ներկայացնելով ջարդերից հետո Ռշտունյաց գավառում տիրող սարսափազդու տեսարանները՝ Վարդանը գրում է. «... ամեն քայլափոխի հայերի նեխած դիակներ, որոնց գարշահոտութիւնը շշմեցնում էր անցորդին... 1000-ից աւելի հայ սպանուած, իսկ թշնամուց՝ ոչ մի հոգի...Հապա ինչի՞ համար էին մեր քարոզները, մեր կազմած խմբերը, ինչի՞ համար...» [1]:

Եթե Ռշտունիքի հայությանը և Վարդանի նշած «կազմած խմբերը» փոքր-ինչ զինված լինեին, ու առաջնորդվեին փոքառու մարտիկների կողմից, ապա չէր բացառվում, որ նրանք նույնպես դիմեին ինքնապաշտպանության: Զենքի և փորձառու առաջնորդների բացակայության պայմաններում ինչպե՞ս ու ի՞նչ միջոցներով գյուղացին կարող էր կազմակերպել ինքնապաշտպանությունը:

Չնայած Վարդանը իր հուշագրությունում չափազանց մռայլ գույներով է ներկայացնում Ռշտունիքում տիրող կացությունը, այդ ժամանակաշրջանի անցքերը լուսաբանող վավերագրերը մատնանշում են, որ Ռշտունիքի լեռնականները մի շարք գյուղերում օգտագործելով պաշտպանվելու փոքրագույն հնարավորությունը, նույնպես դիմել են ինքնապաշտպանության [2]:

Ուսանելի ու ինչ-որ տեղ անհավատալի է թվում Ռշտունիքի Փայխներ գյուղի ինքնապաշտպանությունը: Քուրդ հրոսակախմբերը Փայխների բնակչությանը կոտորելու և նրանց ունեցվածքը զավթելու նպատակով՝ հարձակվում են այդ գյուղի վրա: Չունենալով ոչ մի զենք, փայխեցիները համարձակորեն դիմագրավում են քրդերին և «...ինքնապաշտպանութեան ոչ մի միջոց չունենալով կստիպուին պարսեստով՝պարսիտաքարերով կռուիլ իրենց վրայ յարձակուող ամբոխին դէմ եւ այդ միջոցով էլ կը յաջողին գիւղը ազատել...» [3]:

Ինքնապաշտպանության հերոսական և ուսանելի էջեր են նաև Արճակ ու Խառակոնիս գյուղերի մարտերը: Այդ գյուղերի բնակիչները նույնպես օգտագործելով ինքնապաշտպանություն կազմակերպելու նվազագույն հնարավորությունը, կարողացել են հաջողությամբ դիմագրավել ու փախուստի մատնել իրենց գյուղի վրա հարձակվող, նահանգում իր ավարառու գործողություններով հայտնի, Արուխան բեկի առաջնորդած ցեղախմբին: Իսկ Հնդստան գյուղի

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 1045, գ. 15, էջ 140:
[2] «Խանասորա Վարդան», էջ 140:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 1045, գ. 15, էջ 56:

բնակիչները իրենց ունեցած մի քանի հնամաշ հրացաններով գնդակահարում են գյուղի վրա հարձակվող քուրդ հեծյալներից մի քանիսին ու փախուստի մատնելով նրանց՝ փրկվում կոտորածից [1]:

Հարևան գավառներում իրարամերժ տեսարաններ էին. եթե մի շարք գյուղերում հայությունը ենթարկվել է կոտորածների, ապա մի շարք վայրերում, օրինակ Շատախում, ինչպես իրավացիորեն նշում է Ա.Նորյանը «Յաղթանակը ժողովրդի կողմն է եւ այդ զգում է շատախցին...Ժողովրդի ոգևորութեան եւ հաւատքին չափ ու սահման չկար եւ նա միշտ կրկնում է, որ Շատախի կռիւները փրկեցին թէ՝ իրենց կեանքը, եւ թէ՝ մանաւանդ պատիւը» [2]:

1. 5 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը («ՎԱՆԻ ՄԵԾ ԿՌԻՎԸ»)

Վանի ինքնապաշտպանությունը կամ «Մեծ կռիվ» անվանումը ստացած հերոսամարտը 1894-1896 թթ. հայության մղած ինքնապաշտպանական մարտերի եզակի օրինակներից է:

1895թ. օգոստոսի առաջին իսկ օրից, Վանից պարբերաբար տագնապալի լուրեր էին հասնում Սալմաստ և Դերիկ: Օսմանյան կայսրությունում սուլթան Համիդի սանձազերծած կոտորածները սպառնում էին նաև Վանի հայությանը: ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեի առաջնահերթ խնդիրն էր սերտ կապեր հաստատել Վանի (Շամ) կենտր. կոմիտեի հետ և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել զինական օգնություն, զենք ու զինամթերք հասցնել Վան: Այդ նպատակով ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեն կազմակերպում է 54 հոգանոց, զենքին քաջավարժ տիրապետող մարտիկների խումբ, որը հոկտեմբերի 25-ին Նիկոլ Տեր Հովհաննիսյանի (Նիկոլ Դուման) հրամանատարությամբ դուրս է գալիս Հաֆթվան գյուղից ու ուղևորվում Վան: Դումանի զինատար խմբի կազմում եղել են նաև Գրիգոր Պեռզիկյանի (Ներսես) գլխավորած 14 արմենական մարտիկներ:

[1] Նույն տեղում:
[2] Ա. Նորեան, նշվ. աշխ., էջ 170:

Ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ մինչ այդ, սկսած Սարգիս Կուկունյանից, Երկիր մեկնած մարտական ու զինատար խմբերի մղած կռիվներից՝ իրենց հերոսականությամբ ու հակառակորդի վրա ունեցած ազդեցությամբ չեն ունեցել այնպիսի հնչեղություն ու գործնական նշանակություն, ինչպիսին ունեցել է Նիկոլ Դումանի գլխավորած ընդամենը 56 մարտիկներց բաղկացած զինատար խմբի մղած կռիվները, որոնք պատմությանը հայտնի են «Սարայ-Բողազքյասան և Դերիկի կռիվներ» անունով:

Զինախումբը ճանապարհին բազմիցս կռվի բռնվելով թուրքական զորամասերի և քրդական հրոսակախմբերի դեմ, կարողացել է ճեղքել պաշարման օղակը, կտրվել հակառակորդի հետապնդումից և հասնել Վան:

Դումանի գլխավորած զինախմբի հաղթականներն պայմանավորված էին.

1. Հայտնվելով անելանելի իրավիճակում, ֆիդայիները հանպատրաստից կիրառում են այնպիսի մարտավարություն, որը հակառակորդի համար միանգամայն անսպասելի էր ու ապակողմնորոշող, բայց իրենց փրկության համար թերևս միակ կշռադատված, և արդյունավետ քայլը:

2. Մարտի ընթացքում զինախմբի հրամանատարի և անդամների խուճապի չմատնվելու, աննահանջ մարտնչելու կարողությունը:

3. Կռիվների ժամանակ հայ մարտիկները կարողացել են հմտորեն օգտագործել հեռահար մոսինների առավելությունները:

Քրդերը դրվատելով Բողազքյասանի կռվում Նիկոլի դրսևորած քաջությունը, նրան կոչել են Դուման (մուժ-մառախուղ)[1]:

Այդ ժամանակահատվածում Վանի նահանգում հայ ազգային կուսակցությունները, հատկապես արմենականներն ու դաշնակցականները վատ չէին համագործակցում: Թուրք իշխանությունները Վասպուրականի բնակչությանը ահաբեկելու և բռնություններ գործադրելու նպատակով առավելապես օգտագործել են քուրդ աշիրեթներին: Քուրդ համիդիեական հեծյալնե ցրն ու աշիրեթները իշխանությունների քաջալերանքով և թողտվությամբ, պարբերաբար ներխուժել են հայկական գյուղերն ու հայ հեղափոխականներին փնտրելու պատրվակով, դաժան տանջանքների ենթարկել գյուղացիներին: Անհրաժեշտ էր համապատասխան քայլեր ձեռնարկել և թույլ չտալ, որ քուրդ հրոսակները հայկական բնակավայրերում շարունակեին իրենց սանձարձակություններն ու բռնությունները: Գյուղացիությանը քրդերի հարձակումներից պաշտպանելու համար դաշնակցականներն ու արմենականները կազմակերպում են մարտական-թռուցիկ խմբեր, որոնք միշտ կազմ ու պատրաստ առաջին իսկ ահազանգի դեպքում պիտի օգնության շտապեին հարձակման ենթարկված գյուղերին: Մարտական-զինական խմբերը գործում էին Նիկոլ Դումանի և արմենական գործիչ Փանոյի Ավանեսի գլխավորությամբ[2]:

[1] Մանրամասն տե՛ս Գեւորգյան Հ., Նիկոլ Դուման, Երեւան, 2002, էջ 29-53:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 15-41:

Վասպուրականի տարածքում քուրդ հրոսակների դեմ Դումանի գլխավորած մարտական- թռուցիկ խմբերի մղած կռիվների մանրամասների մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Մ. Վարանդյանը ցավով արձանագրելով այդ իրողությունը՝ գրում է.«Ո՞ր են այդ հերոսական կռիվներու նկարագրութիւնները...Չկան, տարաբախտաբար, ինչպես որ չկան բազմաթիւ այլ ռազմիկներու սխրալի գործերուն պատմութիւնները: Յան ու ցրիւ բեկորներ միայն...»[1]:

Չնայած Վասպուրականի հայկական բնակավայրերի պաշտպանության համար քուրդ աշիրեթների դեմ մղած կռիվների մանրամասները ժամանակին գրի չեն առնվել, այնուամենայնիվ, եղած վկայությունները հիմք են տալիս պնդելու, որ Դումանի և Փանոյի Ավանեսի գլխավորած մարտական խմբերի գործունեությունը Վասպուրականում եղել է արդյունավետ:

«Քաղաքի շրջակայ գիւղերը,-նշում է ՀՅԴ Շամի կենտր. կոմիտեի գործիչ Ներսես Պասյանը,- որ յաճախ ենթակայ էին քրտական աշիրաթների յարձակման, շնորհիւ այդ խումբերու պաշտպանութեան զերծ կը մնային բռնութիւններից»[2]:

Դումանի գլխավորած մարտախմբերն իրենց հերոսական գործողություններով աչքի են ընկել մի շարք հայկական բնակավայրերի, հատկապես «Կունինան, Ոսկիպակ, Նոր Գիւղ, Հնդստան, Առիջ» գյուղերի պաշտպանության համար մղվող կռիվներում: Քուրդ հրոսակախմբերի դեմ պայքարելիս արմենականներն ու դաշնակցականներն գործել են միասնաբար, իսկ հնչակները, որոնք ավելի քույլ էին, միայնակ: Հնչակներն որոշում են միայն իրենց ուժերով ահաբեկել քուրդ ցեղապետ շիտանցի Շաքիր աղային, որը հայտնի էր հայ բնակչության նկատմամբ գործադրած չարագործություններով ու բռնություններով: Շաքիր աղան տեղեկանալով այդ մասին, իր աշիրեթների գլուխն անցած, գալիս ու պաշարում է Հոգոց վանքը, ուր այդ պահին գտնվում էի հնչակները: Տեսնելով, որ միայն իրենց ուժերով չեն կարողանալու դուրս գալ պաշարումից, նրանք «... գաղտնի լուր կուղարկեն քաղաք՝ Հ.Յ.Դաշնակցութեան Կ.Կոմիտէին յայտնելով իրենց վտանգաւոր վիճակը ու կը խնդրեն իրենց օգնութիւն ուղարկել»[3]:

Դումանը թռուցիկ խմբով անհապաղ մեկնում է դեպքի վայրը և միաժամանակ հրահանգում Բերդակ գյուղի մարտիկներին, նույնպես շտապել օգնության: Դումանի թռուցիկ խմբի և Բերդակի մարտիկների աջակցությամբ հնչակներին հաջողվում է դուրս գալ պաշարման օղակից և վերադառնալ Վան:

Համաձայն «Արաքս» հանդեսում տպագրված «Վանի անցքերը» խորագիրը կրող հոդվածաշարի, օսմանյան իշխանությունների վրա նկատելի տպավորություն է գործել և մեծ զայրույթ պատճառել 1895 թ. աշնանը Սարայ-Բողազ-

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 115:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 51:
[3] Նույն տեղում:

քյասանի կոիվներում հայերի դրսևորած հանդգնությունն ու նրանց կողմից բազմաթիվ թուրք գինվորների և քուրդ ազդեցիկ ցեղապետերի գնդակահարելու իրողությունը: Վերոհիշյալ և համանման մի քանի դեպքերը, ըստ հոդվածագրի «...մեծ սարսափ էին ձգել թէ կառավարութեան եւ թէ թիւրք ու քիւրտ խուժանի վրայ, որոնք հաւատացել էին թէ արտասահմանից 5000- ից աւելի կաչախներ (փախստականներ) եկել են Վան:

Վանը սուլթանի մտատանջութեան առարկան դարձաւ» [1]:

Հայ ազգային կուսակցությունների՝ մասնավորապես ՀՅԴ Վան-Վասպուրականում ծավալած գործունեության ուսումնասիրությունը հավաստում է, որ հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը խոչընդոտելու և ժողովրդին սարսափի մեջ պահելու, ազատագրական պայքարի ոգին արմատախիլ անելու նպատակով նահանգի իշխանությունները օգտագործել են ոչ միայն քուրդ աշիրեթների ուժերը, այլ նաև հայ հոգևորականությանը:

Թուրք իշխանություններին հլու հնազանդ ծառայում էին Աղթամարի Խաչատուր կաթողիկոսն ու Վասպուրականի հոգևոր թեմի առաջնորդ Պողոս եպիսկոպոս Մելիքյանը: Դեռևս 80 -ական թվականների սկզբներին նրանք թուրք իշխանությունների հովանավորությամբ, կատաղի պայքար են ծավալել Խրիմյան Հայրիկի և նրա գաղափարակիցների դեմ: Ազատագրական պայքարի, «Երկաթե շերեփ» կարգախոսի քարոզիչ, ժողովրդի կողմից հարգված Խրիմյանի ներկայությունը խիստ անցանկալի էր հակազգային դիրքերում գտնվող հոգևորականների համար:

«Խրիմեան Հայրիկը իր եռանդուն ազգասիրական գործունէութեամբ ժողովրդի համակրանքին կարժանանար ու գնալով աւելի ու աւելի ժողովրդի սիրելին կը դառնար: Մինչդեռ իրենք միշտ ժողովրդի դժգոհանքի ու զզւանքի առարկայ կը դառնային: Այդ երկուսը, կառավարութեան քով, իրենց դաւաճանութեամբ ու ցինիկ զրպարտութիւններով կը յաջողին վերջ ի վերջոյ Խրիմեանին հեռացնել տալ Վանէն, իբրև վտանգաւոր մարդու»:

Խրիմյան Հայրիկի հեռանալուց հետո նրանք, իհարկե, դարձյալ իշխանությունների հովանավորությամբ, շարունակում են իրենց կողմնակիցներով պայքարել Խրիմյանի համակիրների դեմ:

Ներկայացնելով այդ երկու բարձրաստիճան հոգևորականների հակազգային գործունեությունն ու կեցվածքը՝ Ն.Պապյանը նշում է. «Բոլոր ինչ-որ ժողովրդի զարգացման ու յառաջադիմութեան կը ծառայեր, անհանդուրժելի էր անոնց համար: Բոլոր անոնք, որոնք զարկ կուտային ու կաշխատէին ժողովրդին մէջ, գիտութիւն, լուսաւորութիւն տարածելու և զայն հանելու իր հին ստրկական ողորմելի վիճակէն, ատելի էին Պողոս եպիսկոպոսի և Խաչատուր կաթողիկոսի պէս փտած գաղափարի տէր ու աննկարագիր մարդկանց համար, և հալածանքի կենթարկուէին անոնցմէ ամէն ուղղութեամբ [2]:

[1] «Արաքս», 1897, գիրք Բ, Ս. Պետերբուրգ, էջ 101:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 51:

Այն ժամանակահատվածում, երբ ազգային-հեղափոխական կազմակերպություններն աստիճանաբար սկսում էին արմատավորվել նաև Վասպուրականում, նահանգի վերոհիշյալ հոգևոր առաջնորդները, օգտվելով թուրք իշխանությունների աջակցությունից, իրենց կողմնակիցների և գործակալների միջոցով անհաշտ պայքար են ծավալում առավելապես հեղափոխական գործիչների դեմ: Նրանց կողմից ղեկավարվող գործակալների ու մատնիչների պահանջով և մատնությամբ, որպես հեղափոխականների ձերբակալում և բանտերն են լցնում հարյուրավոր վասպուրականցիների, հատկապես ժողովրդի մեջ նշանակալի հեղինակություն վայելող մարդկանց: Խաչատուր կաթողիկոսն ու Պողոս եպիսկոպոսը դիմում են ամենազազրելի ու նողկալի միջոցների «...սուլթան Համիտին հաւատարիմ ու վստահելի երեւալու եւ թէ միանգամայն իրենց սանձարձակ ու անպատասխանատու գործունէութիւնը շարունակելու համար» [1]:

Վանի հայությունը հեղափոխական գործիչների դրդմամբ ընդվզում է Պողոս եպիսկոպոսի դեմ և պահանջում նրա հրաժարականը, բայց նահանգի իշխանությունները զենքի ուժով սպառնալիքով պաշտպանում են իրենց կամակատար եպիսկոպոսին: Արդյունքում Պողոս եպիսկոպոսը, հակառակ ժողովրդի կամքի, շարունակում է զբաղեցնել Վասպուրականի հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնը: Նրա և իր կողմնակիցների պահանջով ու մատնությամբ ձերբակալում են 250 վասպուրականցիների, որոնք համարձակվել էին նրա դեմ ընդվզել: Նահանգապետի հովանավորությունը վայելող ազգադավ եպիսկոպոսից ազատվելու այլընտրանք գոյություն չուներ. «Հ.Յ.Դաշնակցութեան Վասպուրականի կենտր. կոմիտէն, այլեւս չհանդուրժելով Պողոս եպիսկոպոսի այդ ազգակործան արարքներուն կը որոշէ տեղորի ենթարկել զայն ու կսպասէ յարմար առիթի...» [2]:

Այս անգամ հնչակները, նախահարձակ լինելով, առաջ են ընկնում դաշնակցականներից : 1895 թ. հունվարի 6-ին փոքր զատկի առավոտյան, Սբ. Հակոբ եկեղեցի գալու ժամանակ, Պողոս եպիսկոպոսը սվինահար է լինում հնչակյան գործիչ հայկավանքցի Ծուռ Մարանի Հակոբի կողմից [3]:

Նահանգի իշխանությունների ձեռնարկած քայլերը՝ գտնելու ահաբեկչին, անցնում են ապարդյուն:Ժողովրդի պահանջով և հայ ազգային կուսակցությունների Վանի կառույցների գործուն մասնակցությամբ Վանի հոգևոր առաջնորդ է ընտրվում Սահակ եպիսկոպոսը, որն իր համոզմունքներով ու գործունեությամբ ճիշտ հակապատկերն է նախորդի՝ Պողոս եպիսկոպոսի:

Վան քաղաքը բաժանված էր երկու հիմնական մասերի: Բուն քաղաքը, որը գտնվում է Վանի հանրահայտ բերդի հարավային կողմում և պատված է հինավուրց պարիսպներով, կոչվում է Քաղաքամեջ: Քաղաքի այդ մասում էր

[1] Նույն տեղում, էջ 47:
[2] Նույն տեղում, էջ 49:
[3] Նույն տեղում, էջ 50:

գտնվում զորանոցը. վարչական ու ազգային գրասենյակները և հաստատությունները. ինչպես նաև շուկան. առևտրի այլ կենտրոններն ու խանութները: Քաղաքամեջից արևելք տարածվում է Վանի Այգեստան թաղամասը. որը պարփակված է Վարագ. Կուռաբաշ և Ծրտոտ-Քար լեռների միջնամասում գտնվող ծառազարդ հովտում: .

«Այգեստանի տուները. - ըստ Ա.Եկարյանի նկարագրության. - ցրուած են անհամար պարտէզներու մէջ. որոնք իրարմէ բաժնուած կը մնան առանձին պատերով. դիմադրութեան հիանալի յարմարութիւններ ընծայող»[1]:

Քաղաքամեջից հյուսիս. մի հսկա քարաժայռի վրա բարձրանում է հնամենի. բայց շատ ամուր պարիսպներով շրջապատված Վանի հինավուրց բերդը. որը իշխող դիրք ունի բովանդակ քաղաքի վրա: Այդ ժամանակահատվածում Վանի բերդը ծառայում էր որպես զորանոց. իսկ պարիսպների վրա տեղադրված էին թնդանոթներ. որոնք որպես մահաբեր սպառնալիք էին կախված ողջ քաղաքի վրա:

Չնայած այն թյուր կարծիքին. թե Վասպուրականին չեն սպառնալու թուրք իշխանությունների սանձազերծած կոտորածները. այնուամենայնիվ. Վան քաղաքում և գավառներում հաստատված կուսակցական կառույցները որոշակի քայլեր էին ձեռնարկում՝ զենք հայթայթելու ու մարտական խմբեր կազմելու ուղղությամբ: Թուրքական իշխանությունների վարած երկդիմի քաղաքականությունից դժվար չէր կռահել. թե օր-օրի ինչ ահավոր սպառնալիք էր ծանրանում տեղի հայության գլխին:

«1896 թ. գարնանը.- նշում է Ս. Սարուխանյանը.- Վանի երեք կուսակցութեան մարմինները շատ լաւ զգում էին վտանգի վերահաս լինելը, ուստի սկսել էին անցնել գործնականի:

Պէտք է ասել, որ Վանի ամբողջ յոյսը գործնականի վերաբերմամբ սկզբից մինչեւ վերջ եղել է Պարսկաստանի գիծը. առաջին տեղ բռնելով Սալմաստը: Երեք կուսակցութիւններն էլ ուղարկում էին փոխադրական խմբերը դէպի Պարսկաստան. տանելով նրանց ճանապարհի պաշտպանութեան համար քիչ զէնք: Նրանք հասնում էին Սալմաստ. վերցնում էին զէնքերը և՝ Կովկասից եկած նոր ուժերով մտնում էին Երկիր»[2]:

Այդ օրերին մեծ աշխատանք է կատարել հատկապես Թավրիզի զենքի արհեստանոցը. որտեղ նորոգվում էին Տուլայից բերած զենքերը:

«... Գնման եւ փոխադրման գործի մէջ մեծ աշխատանք ունեցաւ Արիստակէս Չօրեանը (Կարո-Ռոստոմի եղբայրն է- Հ.Գ.): Գործի մէջ մեծ պարտականութիւն եւ աշխատանք դրուած էին. դարաբաղցի Գրիգորը (Մածուն Խեչո). Սեւ Քարեցի Սաքօն, Պետրոս Սէրէմճեանը եւ ուրիշներ»[3]:

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 97:
[2] «Հայրենիք» ամսագիր, 1945, թիւ 1, էջ 93:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 680, գ. 3, էջ 8:

Թեպետ Ս. Սարուխանյանը և այլ սկզբնաղբյուրներ նշում են Սալմաստից «Խարիսխ» զինագործարանի պատրաստած ու Կովկասից բերած զենքերը Վան տեղափոխելու իրողությունը. սակայն Վանի հունիսյան դեպքերի մանրակրկիտ ու անաչառ ուսումնասիրությունը մատնանշում է. որ համանման պնդումները այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: 1896թ. Վանի հունիսյան ինքնապաշտպանական մարտերի նախօրեին հայ ազգային- քաղաքական կազմակերպությունները կարողացել էին Սալմաստից միայն սահմանափակ քանակության զենք տեղափոխել Վան: Հ.Յ. Դաշնակցության «Խարիսխ» զինագործարանում հավաքած զենքերի մեծագույն մասը մնացել է Թավրիզի և Սալմաստի գյուղերի զինապահեստներում և տարբեր պատճառներով չի տեղափոխվել Վան:

Իսկ այդ ժամանակահատվածում զենք ձեռք բերելը և ժողովրդի զինումը եղել ու մնում էր հայ ազգային կազմակերպությունների առջև ծառացած առաջնահերթ և կարևորագույն խնդիրը: Զենք հնարավոր էր ձեռք բերել կամ դրսից. կամ էլ գնել տեղում: Երկու դեպքում էլ անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ. որոնց բացակայությունն ու պահանջը. կարելի է ասել. միշտ էլ եղել է հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ամենախոցելի տեղերից մեկը: Այդ ժամանակ հասարակ այնպես. բերդան հրացանները արժեին 10-12 ոսկի, իսկ միակրականի ատրճանակները՝ 5-8 ոսկի[1]:

Վասպուրականում գործող հեղափոխական կազմակերպությունները ի զորու չէին զենք գնելու համար տրամադրել համապատասխան գումարներ: Ժողովրդին զինելու. զենքեր գնելու նպատակով դաշնակցականներն ու արմենականները համախոհուրդ քաղաքի և գավառների մեջ կազմակերպում են հանգանակություն: Վասպուրականի հայությունը սիրահոժարաբար արձագանքում է հեղափոխական կազմակերպությունների ձեռնարկմանը և որոշակի գումարներ է տրամադրում նրանց: Թուրք իշխանությունները. լրտեսների ու գործակալների միջոցով հետևողականորեն իրենց ուշադրության կենտրոնում պահելով նահանգում տեղի ունեցող իրադարձությունները. տեղեկանում են զենք գնելու նպատակով հայ հեղափոխականների ձեռնարկած հանգանակության մասին: Հանգանակության արդյունքում հավաքվում է զգալի քանակությամբ փող. որով կարելի էր գնել զենք ու զինամթերք: Գավառներում թուրքերից ու քրդերից հնարավոր էր զենք գնել. բայց այն կապված էր մեծ դժվարությունների հետ և. բացի դրանից. այդ զենքերը հնատիպ էին ու կռիվներ մղելու համար ոչ այնքան նպատակահարմար և արդյունավետ: Առավել կատարելագործված զենքեր. հատկապես մոսին հրացաններ. կարելի էր ձեռք բերել դրսում:

Թուրք իշխանությունները. ակնդետ հետևելով նահանգում կատարվող իրադարձություններին. ավելի ու ավելի էին ուժեղացնում խուզարկություններն ու բռնությունները: Պիտի նկատել. որ թեպետ այդ ժամանակահատվածում միայն Վասպուրականն էր դեռևս զերծ մնացել կոտորածներից. բայց կառավարու-

[1] Նույն տեղում, էջ 8:

թյունը, այնուամենայնիվ, իր ուշադրությունն էր սևեռել նաև Վասպուրականի վրա, որը հայության գլխավոր կենտրոններից մեկն էր:

Վան քաղաքում և նահանգում գտնվող հեղափոխական գործիչների հետագա ներկայությունը կարող էր տեղիք տալ անցանկալի հետևանքների և թուրք իշխանությունների համար պատրվակ ծառայել ջարդերի ալիքը տարածել նաև Վասպուրականում: Առաջնորդվելով այդ նկատառումով ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեի և Արմենականների Վանի կազմակերպության որոշմամբ՝ մարտական խմբերը ժամանակավորապես պիտի հեռանային Վասպուրականի տարածքից և մեկնեին Պարսկաստան: Վասպուրականից հեռացող մարտախմբերը առաջադրանք են ստանում հանգանական գումարներով զենք ու զինամթերք գնել և տեղափոխել Վան:

Արմենականները զենք գնելու նպատակով իրենց հանգանական գումարից 500 ոսկի Յաղջյան Գարեգինի և Փանոյի Ավանեսի գլխավորած մարտախմբի միջոցով ուղարկում են Պարսկաստան: Մարտախումբը ճանապարհին հանդիպում է պարսիկ զինվորների և հակառակ իրենց հրամանատարի՝ Փանոյի Ավանեսի հորդորներին, զինաթափվում է ու առանց որևէ դիմադրության հանձնվում: Մարտախմբից միայն հրամանատարը՝ Փանոյի Ավանեսը չի հանձնվում, նա կարողանում է կռիվ մղելով ազատվել պարսիկ զինվորների հետապնդումից, հասնել Սալմաստի շրջանի Հավթվան գյուղ և «... իր քով գտնուած 200 ոսկի փողը կը յանձէ կոմիտէի անդամ Գէորգ Օտեանն: Սակայն դժբախտաբար այդ փողով ոչ մի զէնք չեն ուղարկեր երկիր»[1]:

Մարտախմբից ձերբակալած 10 մարտիկներին պարսիկ զինվորները տանում են Խոյ և 15 օր պահելուց հետո ազատ արձակում:

Այդ օրերին արմենականների զինատար խմբերից մեկը Սեբաստացի Նազարեթի գլխավորությամբ, հանգանական փողերով գնված զենք ու զինամթերքով բեռնված, դուրս է գալիս Սալմաստից և հասնում մինչև Բողազքեասան: Այդ գյուղը Նիկոլ Դումանի գլխավորած զինախմբի նշանավոր կռիվներից հետո թուրքերի և քրդերի ուշադրության կենտրոնում էր: Սեբաստացի Նազարեթի առաջնորդած զինախումբը կռվի է բռնվում քուրդ աշիրեթների հետ: Հրամանատարն ու հինգ մարտիկներ զոհվում են , իսկ մյուսները, դուրս պրծնելով պաշարման օղակից, վերադառնում են Վան:

Ա. Դարբինյանի վկայությամբ նույն առաքելությամբ Վանից Պարսկաստան են մեկնում նաև արմենականների ամենահեղինակավոր մարտական գործիչներ Ներսես Պոզիկյանն ու Արմենակ Եկարյանը: Նրանց գլխավորած ընդամենը 7-8 մարտիկներից բաղկացած զինակիր խումբը հասնում է մինչև Խոյ, ուր պարսիկ իշխանությունները մատնությամբ ձերբակալում են նրանց ու տեղափոխում Թավրիզ: Նրանք բանտից ազատվում են այն օրերին, երբ ինքնապաշտպանական մարտերը Վանում արդեն ավարտվել էին[2]:

[1] «Հայրենիք» ամսագիր, 1945, թիւ 1, էջ 93:
[2] Տե՛ս Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 51:

ՀՅԴ մարտական ուժերից հանգանական գումարով առաջինը Պարսկաստան է մեկնում Վազգենի գլխավորած մարտախումբը: Նույն նպատակով զինակիր խմբով Վանից հեռանում է նաև Նիկոլ Դումանը:

Եթե անաչառորեն գնահատենք այդ օրերին Հ.Յ.Դաշնակցության և արմենականների ձեռնարկած քայլերը, ապա պիտի ընդգծել, որ այն ինչ-որ տեղ անհասկանալի է ու չպատճառաբանված: Այն ժամանակահատվածում, երբ ջարդերի ալիքը սպառնում էր նաև Վասպուրականի հայությանը, որքանով էր ճիշտ ու նպատակահարմար մարտական ուժերը և Նիկոլ Դումանին, Վազգենին, Փանոյի Ավանեսին ու բազում այլ փորձառու և հեղինակավոր հայդուկներ հեռացնել Վասպուրականի տարածքից: Անկասկած, հեղափոխական կազմակերպությունները ճիշտ էին՝ կազմակերպելով հանգանակությունը: Օրվա կարևորագույն ու առաջնահերթ խնդիրը ժողովրդի զինումն էր և ինքնապաշտպանության կազմակերպումը: Հանգանական գումարներով զենք գնելու և այն Պարսկաստանից Վան տեղափոխելը չպետք է պատճառ հանդիսանար, որ Վասպուրականի տարածքից հեռանային Նիկոլ Դումանն ու բազմաթիվ այլ անվանի հայդուկներ, որոնց ներկայությունը, կռիվները սկսվելու դեպքում, ավելի քան անհրաժեշտ էր: Զենքի տեղափոխության գործը, որը չափազանց կարևոր էր ու անհրաժեշտ, պիտի կատարեին կուսակցական այն գործիչները, որոնց ներկայությունը քաղաքում և գավառում այնքան էլ անհրաժեշտ չէր:

Հավանաբար մարտական ուժերի, նշանավոր հայդուկների ժամանակավորապես հեռացումը Վանի և Վասպուրականի տարածքից պայմանավորված էր այն չպատճառաբանված ու թյուր համոզմունքով, որով առաջնորդվում էին Վասպուրականում գործող հայ հեղափոխական գործիչները:

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, Վասպուրականում գործող հայ ազգային-քաղաքական կուսակցությունների կառույցներում իշխում էր այն չպատճառաբանված ու միամիտ տեսակետը, ըստ որի իբր թե թուրք իշխանությունների սանձազերծած կոտորածները չէին սպառնալու Վան քաղաքի հայությանը: Այդ ժամանակահատվածում, երբ հայկական կոտորածները արդեն իրականացվել էին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում, ավելի քան անհասկանալի է և տարօրինակ, թե ինչ նախադրյալներով էին առաջնորդվում հայ հեղափոխական կազմակերպությունները ներկայացնող գործիչները՝ հանգելու նման հիմնազուրկ և միամիտ եզրահանգումների:

Ինչպես հայտնի է, 1894 թ. Սասունի կոտորածներից հետո Համիդյան արյունալի սպանդը շարունակվում է գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում: Թեպետ օսմանյան կառավարության կողմից բոլոր նահանգների կուսակալներին տրվել էր «Կոտորել հայերին, չը խնայել տղամարդկանց, այրել նոցա տները, աւարի ու կողոպուտի ենթարկել նոցա կայքը...» հրահանգը, բայց, այնուամենայնիվ Վան քաղաքը մինչև 1896 թ. հունիսի 3-ը զերծ է մնում կոտորածներից[1]:

[1] «Արաքս», 1897, գիրք Բ, Ս. Պետերբուրգ, էջ 101:

Համանման հրահանգ տրվել է նաև Վանի կուսակալ Նազըմ փաշային, որը ի տարբերություն նախկին կուսակալի՝ հայատյաց ու արյունառուչտ Բահրի փաշայի. «... իր խոհեմ քաղաքականությամբ չի կարողացել լսել սուլթանական հրահանգին, այլ ջանաց խաղաղությունն պահպանել» [1]:

Վան քաղաքի փոխարեն մահմեդական մոլեռանդ ամբոխին իշխանությունների կողմից հնարավորություն է ընձեռվում իր արյունածարավ կրքերը հագեցնել գավառներում: Վասպուրականի գավառներում սպանվում են 600 հայեր, իսկ 200 հայկական գյուղեր վերածվում են ավերակների: Հազարավոր վասպուրականցիներ լքում են իրենց բնակավայրերը ու ապաստանում Վան քաղաքում: Վանի կուսակալ Նազըմ փաշան քաղաքում խաղաղ իրավիճակ պահպանելու և հայերի հետ հնարավոր բախումները կանխելու նպատակով Այգեստան թաղամասում գտնվող թուրքական զորանոցի զինվորներին տեղափոխում է Քաղաքամեջի զորանոց:

Վանում գործող հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց հերթին աշխատում էին հնարավորինս խուսափել ցուցական գործողություններից ու անցանկալի ընդհարումներից և թուրք իշխանություններին չընձեռել պատրվակներ՝ ջարդեր սանձազերծելու նաև Վան քաղաքում: Օսմանյան տերությունը որդեգրել էր հայաջինջ քաղաքականություն և այն պետք է անպայմանորեն կենսագործվեր: Թուրք իշխանությունները վաղ թե ուշ կգտնեին որևէ պատրվակ, առիթ ու հայկական կոտորածները կշարունակեին նաև Վան քաղաքում: Իսկ Վան քաղաքը, ըստ նրանց որակավորման ու գնահատման, հայության այն կարևորագույն կենտրոնն էր, որտեղ հաստատվել ու գործում էին օսմանյան տերության դեմ պայքարող և ազգամիջյան թշնամանք սերմանող հայ հեղափոխական կազմակերպությունները:

Ջարդերի քաղաքականությունը Վանում կենսագործելու համար թուրք իշխանությունների ձեռքին ամենահարմար առիթն ու պատրվակը կարող էր ծառայել Վասպուրականում և բուն քաղաքում գործող հայ հեղափոխական գործիչների ու ֆիդայիների առկայությունը:

Համաձայն «Արաքս» հանդեսում տպագրված «Վանի անցքերը» խորագիրը կրող հոդվածաշարի, օսմանյան իշխանությունների վրա առանձնապես նկատելի տպավորություն է գործել և բնականաբար մեծ զայրույթ պատճառել 1895 թ. աշնանը Սարայ-Բողազքեսասանի կռիվներում հայերի դրսևորած հանդգնությունն ու նրանց կողմից բազմաթիվ թուրք զինվորների և քուրդ ազդեցիկ ցեղապետերի գնդակահարելու իրողությունը: Թեև հոդվածագիրը որոշակիորեն չի նշում, թե հայերի կողմից ովքեր էին այդ դեպքերի «մեղսագործները», սակայն միանգամայն պարզ է, որ խոսքը վերաբերվում է Նիկոլ Դումանի գլխավորած զինակիր խմբի Սարայ-Բողազքեսասանի հերոսամարտերին, որոնք ժամանակին մեծ արձագանք էին գտել բովանդակ Օսմանյան կայսրությունում:

[1] Նույն տեղում:

Վերոհիշյալ և համանման մի քանի դեպքերը, ըստ հոդվածագրի «...մեծ սարսափ էին ձգել թէ կառավարութեան եւ թէ թիւրք ու քիւրտ խուժանի վրայ, որոնք հաւատացել էին թէ արտասահմանից 5000- ից աւելի կաչախներ (փախստականներ) եկել են Վան:

Վանը սուլթանի մտատանջութեան առարկան դարձաւ» [1]:

Դժգոհելով Վանի կուսակալի՝ Նազըմ փաշայի հայության նկատմամբ դրսևորած խոհեմ ու խաղաղամիտ քաղաքականությունից՝ սուլթան Համիդը Վանում կատարվող դեպքերը տեղում քննելու, պետական դավաճանության մեջ մեղադրվող հայ հեղափոխականներին որոնելու ու բացահայտելու և քաղաքն ու նահանգը նրանցից մաքրելու նպատակով Վան է ուղարկում իր թիկնապահ Սաադեդին փաշային:

«Եվ ահա,- գրում է ռամկավար կուսակցության նշանավոր գործիչ Արտակ Դարբինյանը, - 1896-ի գարնան Վան կը հասնի «Բարեկարգիչ Յանձնաժողովի Բարձր Քոմիսէրութեան» կողմէ իբր «քննիչ» ուղարկուած Սաատէտտին փաշան՝ կայսրական հրամանը գործադրութեան դնելու» [2]:

Վանում կատարվող հետագա իրադարձությունները շատ շուտով հստակորեն մատնանշում են սուլթանական հանձնաժողովի իսկական դեմքն ու նպատակը:Սուլթանի թիկնապահը՝ Սաադեդին փաշան, իր մարդկային որակներով և հայության նկատմամբ դրսևորած վերաբերմունքով եղել է Նազըմ փաշայի ճիշտ հակապատկերը: Բիթլիսի նահանգում հայ բնակչության կոտորածները կազմակերպելուց ու իրականացնելուց հետո Սաադեդին փաշան նույն առաքելությամբ գալիս է Վան: Նրա գլխավորած հանձնախմբի Վանում հանգրվանելու առաջին իսկ օրից հեղափոխականներին որոնելու պատրվակով իշխանությունները սկսում են ամենախիստ կերպով խուզարկություններ ու բռնություններ իրագործել: Միաժամանակ ավելի են գրգռում ու արյուն հեղելու մղում հայության նկատմամբ առանց այդ էլ ատելությամբ տրամադրված մահմեդական ամբոխին:

Սաադեդին փաշան իր դրսևորած չարագործություններով արդեն հայտնի դեմք էր: Վանում գործող հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները անշուշտ տեղյակ էին այդ իրողությանը և այդ պատճառով նրանց կողմից կատարվում էր հնարավոր ամեն բան՝ պատրվակներ չստեղծելու ու մահմեդական ամբոխի մոլեռանդությունը չգրգռելու նպատակով:

Այտուհանդերձ, նույն տարվա մայիսին Վանում ստեղծվում է խիստ տագնապալի իրավիճակ: Քաղաքամեջում հայերը հարկադրված փակում են իրենց արհեստանոցները, խանութները և այլևս փորձ չեն անում դուրս գալ փողոց: Կապն ու հաղորդակցությունը քաղաքի հայկական թաղամասերի, մասնավորապես Այգեստանի ու Քաղաքամեջի միջև դադարում են: Այդ օրերին, ինչպես արդեն նշվել

[1] Նույն տեղում, էջ 104:
[2] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 51:

է. քաղաքից հեռանում էին ամենանշանավոր մարտական գործիչներն ու բազմաթիվ բազմափորձ ֆիդայիներ: Հայկական կոտորածներ սանձազերծելու առաջադրանք ստացած Սաադեդին փաշան հարմար առիթ է որոնում սկսելու վանեցիների ջարդը, որը շատ շուտով ներկայանում է:

Համաձայն «Արաքս» հանդեսի, Սաադեդին փաշայի համար հարմար պատրվակ է ծառայել հայտնի քուրդ ավազակապետ Շաքիր աղայի հետ Շատախում և Նորդուզում հայ վրիժառուների բախումները: Սաադեդինը, որն այդ օրերին ներկայացնում էր Վասպուրականի փաստական իշխանությունը, անտեսելով կուսակալի՝ Նազըմ փաշայի կարծիքը, հիմք ընդունելով Շատախում և Նորդուզում տեղի ունեցած դեպքերը, հետևյալն է հեռագրում սուլթան Համիդի արքունիք. «Եթէ Վանի մէջ եղած կարևոր ոյժը չը կոտորուի, կրնայ չափազանց վնասակար դառնալ կառավարութեան համար: Իսկ միւս կողմից՝ նա ապրիլ ամսում շրջեց Վասպուրականի բոլոր քիւրտ աշիրաթների (ցեղերի) մէջ և պէտք եղած հրահանգները տուեց նոցա» [1]:

Համաձայն «Դրօշակ»-ի, Վան քաղաքում կոտորածներ սանձազերծելու համար, որպես պատրվակ ծառայել է «Յունիսի 2-ի գիշերը, գիշերապահ զօրքեր Այգեստանի մօտ դաշտի մէջ ընդհարում ունեցան խումբ մը հայերու հետ. երկու զինուոր սպանուեցան եւ մէկ սպայ վիրաւորուեցաւ...» [2]:

Հայ ազատագրական պայքարի ականավոր գործիչ, Արմենակ Եկարյանը, ավելի որոշակիացնելով կռիվների բռնկման առիթը՝ նշում է.«Յունիսի 2-3-ին, Վանի Այգեստաններուն արեւելքը գտնուող Ուրբաթ Առուի քովերը, քուրդ զօրքերը եւ ոստիկանները, որպէս թէ կռուի բռնուած էին հայերու հետ եւ իրենցմէ սպանուած էին յիսնապետ մը եւ զինուոր մը...» [3]:

Պարզվում է, որ հունիսի 2-ի գիշերը թուրքական շրջիկ գիշերապահների հետ բախվել է Վարագի գծով Այգեստան վերադարձող հնչակների մարտախումբը: Թուրքերից զոհվել են մի հիսնապետ եւ մի զինվոր, իսկ հնչակների մարտախումբը անկորուստ մտնում է Այգեստան [4]:

Քանի որ հայ բնակչությանը կոտորելու գործում իր վճռական խոսքը պիտի ասեր ամբոխը, ուստի նրա մոլեռանդությունը առավելագույնս բազմապատկելու նպատակով սպանված զինվորների դիակները մոլլաների առաջնորդությամբ պտտեցնում են քաղաքի թաղամասերում [5]:

Թուրք իշխանությունները հասել էին իրենց նպատակին և բնականաբար ոչ մի դեպքում չէին կորցնելու հայկական կոտորածներ սանձազերծելու հարմարագույն առիթն ու հնարավորությունը: Հունիսի 3-ին, ցերեկվա ժամը 4-ին թուրք ամբոխը հարձակվում է պատահած հայերի վրա և սկսում կոտորածը:

[1] «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 105:
[2] Յեղափոխական Ալպոմ, 1969, հ. 1, թիւ 10, էջ 255:
[3] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 99:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 76:
[5] Տե՛ս նույն տեղում:

Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչները թույլ էին տվել մի էական վրիպում: Քաղաքի հայ բնակչության մի մասը, ճիշտ է փոքրագույն, ապրում էր թուրքական թաղերում: Որևէ գաղտնիք չէր, որ կռիվներ սկսվելու պարագայում, նրանք անխուսափելիորեն դատապարտվելու էին կործանման: Ինքնապաշտպանության կազմակերպիչները պարտավոր էին հնարավորինս ապահովել նրանց անվտանգությունը: Մինչ ընդհարումների բռնկումը անհրաժեշտ էր սթափ գնահատել քաղաքում տիրող կացությունը ու ժամանակին համապատասխան քայլեր ձեռնարկել հայերին դուրս բերելու թուրքական թաղամասերից, որը չի կատարվել:

Վանի կռիվները ներկայացնող «Դրօշակ»-ի վերոհիշյալ հոդվածագրի հավաստմամբ, քաղաքի հայ բնակչության այն մասը, որը ապրում էր թուրքական թաղերում, անմիջապես հարձակման են ենթարկվում և մահմեդական «... անգութ գազանները Սալաւաթ կանչելով կը կոտորէին առհասարակ արու մարդիկն ու երեխաները, տուները կը քանդէին եւ կամ կայրէին» [1]:

Ա. Եկարյանի վկայությամբ թուրք ամբոխի բարբարոսության զոհն են դարձել Վան քաղաքի Հայկավանք, Թորամանի, Կլոր-Դարի, Ս.Հակոբի եւ Շանո-Դարի հայաբնակ թաղերը: «Այդ թաղերու մէջ, - գրում է Ա. Եկարյանը, - թուրքերը ոչ ոքի խնայեցին: Մարդ, կին, երեխայ ջարդեցին զանոնք կացինով, փայտով, սուրով եւ ամէն ինչով: Շատերն ալ ողջ-ողջ այրեցին...» [2]:

Հայկավանք թաղամասում կոտորածից ազատվում են ընդամենը 12 հոգի, որոնք այդ օրը տարբեր պատճառներով բացակայում էին տնից: Թաղամասի հայ բնակչության մեծագույն մասը՝ 250 տղամարդ, երկու քահանա և մի քանի կանայք ու երեխաներ զոհ են դառնում ամբոխի վայրագությանը [3]:

Հայկավանք թաղամասի հայությանը կոտորելուց հետո թուրք ամբոխը, ճանապարհին պատահած հայերին սպանելով և նրանց տները թալանելով ու այրելով, ներխուժում է Քաղաքամեջ:

Այն, ինչ կատարվում է Քաղաքամեջում, թվում է անհավանական: Քաղաքամեջի հայության ինքնապաշտպանությունը նույնպես կազմակերպված չի եղել: Անտարակույս նրան նույնպես վիճակվելու էր Հայկավանքի ողբերգական ճակատագիրը, եթե հայ բնակչությանը երջանիկ դիպվածով փրկության ձեռք չմեկներ թուրքական բանակի հազարապետ, ազգությամբ չերքեզ Էմին Բեյը: Այդ օրերին նա թուրքական զորաջոկատով գտնվել է Քաղաքամեջում և թույլ չի տվել ամբոխին քանդելու ու այրելու ոչ միայն շուկան և հայերին պատկանող խանութներն ու բնակարանները, այլև «Նոյնպէս այդ անձի շնորհիւն էր, որ Քաղաքամիջի հայ ազգաբնակչութիւնը բոլորովին անվնաս ազատուեց խուժանի յարձակումից, մինչեւ իսկ նա իւր ձեռքերով սպանեց մի քանի թիւրքերի, որոնք աշխատում էին խռովութիւն յարուցանել» [4]:

[1] Յեղափոխական Ալպոմ, 1969, հ. 1, թիւ 10, էջ 255:
[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 99:
[3] Տե՛ս «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 107:
[4] Նույն տեղում:

Չերքեզ Էմին Բեյի պաշտպանության չնորհիվ Քաղաքամեջի հայ բնակչության ջարդերից ամբողջովին փրկվելու իրողությունը հաստատում է նաև Ա. Եկարյանը[1]:

Այդ ժամանակահատվածում Վան-Վասպուրականում գործող կազմակերպություններից ամենատարածվածն ու ազդեցիկը արմենականներն էին, որոնք, ինչպես նաև հնչակներն ու դաշնակցականները, մինչև կոտորածների սկսվելը, ինչպես արդեն նշվել է, միամտաբար հույսեր են փայփայել, որ ջարդերը չեն սպառնալու Վանի հայությանը: Սակայն մահմեդական ամբոխի կողմից հայկական թաղերում հունիսի 3-ին սանձազերծած կոտորածները անհերքելի ցույց տվեցին, որ նույն ողբերգական ճակատագրին էր արժանանալու քաղաքի ողջ հայությունը, եթե վճռական քայլեր չձեռնարկվեին: Վանի փրկության միակ գենքն ու միջոցը ինքնապաշտպանության կազմակերպումն էր: Ներկայացնելով այդ օրերին Վանում ստեղծված տագնապալի իրավիճակն ու ինքնապաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտությունը՝ Ա.Նորյանը նշում է. «Համազգային այդ գվտանգի դրպէին գոյութիւն ունեցող հայ երեք քաղաքական-յեղափոխական կուսակցութիւնները, մոռացան իրենց Ես-ն ու անձնականը, մի տեղ նետած նեղ կուսակցականն ու անցեալ պայքարները, եղբայրաբար իրար ձեռք են մեկնում, կազմում գործունէութեան ընդհանուր ծրագիր...»[2]:

Վանի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելիս հայ ազգային կուսակցությունները գործել են համերաշխ ու միասնական: Այդ փաստը հաստատում է նաև ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը, որը իր գրվածքներում հաճախ հանիրավացիորեն քննադատելով Դաշնակցությանը, նշում է, որ Վանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ժամանակահատվածում երեք կուսակցությունների առաջնորդները «Մ.Ավետիսեան, Պետո եւ Մարտիկ գերագոյն ճիգերու կը դիմեն ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար»[3]:

Երեք կուսակցությունների առաջնորդների՝ արմենական Մ. Ավետիսյանի, հնչակ Մարտիկի և դաշնակցական Պետոյի մասնակցությամբ ստեղծվում է Վանի ինքնապաշտպանության ղեկավար մարմին՝ զինվորական խորհուրդ: Չնայած կռիվների բռնկման սկզբնական շրջանում հայկական կողմի անպատրաստ լինելու պատճառով թուրք ամբոխին հնարավորություն է ընձեռվում ջարդեր իրականացնել հայկական մի քանի թաղերում, բայց վերահաս վտանգին դիմագրավելու և քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ հայ հեղափոխական կազմակերպությունները, այնուամենայնիվ, որոշակի քայլեր ձեռնարկել էին: Երեք կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված ինքնապաշտպանական մարտերը ղեկավարող զինվորական խորհուրդն անմիջապես գործի է անցնում և նույն օրը նեթ. կազմում ինքնապաշտպանության կազմակերպման ծրագիրը: Վանի հայ բնակչության ինքնապաշտպանության վայրը քաղաքի Այգեստան թաղամասն էր: Ռազմական խորհրդի հանձնարարությամբ նախապես ցուցակագրված 1500 զինավառ երիտասարդներ բաժանվում են 35 մարտախմբերի և դիրքեր գրավում Այգեստանի համապատասխան հենակետերում[1]:

Հանձայն զինվորական խորհրդի մշակած ինքնապաշտպանական մարտերը մղելու ծրագրի, 500 ռազմիկներ պիտի դիրքավորվեին հայ և թուրք թաղերի սահմանների երկայնքում գտնվող հայերին պատկանող երկհարկանի տների երկրորդ հարկում: Գտնվելով բարձր դիրքում՝ զինվորը ձեռք է բերում շոշափելի առավելություն: Նրա տեսադաշտը բաց է, որն էլ առավել հնարավորություն է ընձեռում ժամանակին նկատել հարձակվողներին ու դիպուկ հարվածներ տեղալ նրանց ուղղությամբ[2]:

Ըստ Ա.Դարբինյանի տվյալների Վանի ինքնապաշտպանական ուժերի տրամադրության ներքո գտնվող զենքերի մոտավոր քանակը հետևյալն է. «Արմենականներն ունէին 350 հրացան և ատրճանակ, դաշնակցականները՝ 100, հնչակները՝ 40: Պէրտան, մարքինի և ուրիշ տիպի փամփշտաւոր հրացաններու թիւը պէտք է հաշուել մօտաւորապէս 300, ատրճանակներուն 80, մնացեալները զանազան տիպի (աղալի, չախմախլի, շաշխանէ, և այլն) վառօդով գործածուող գնդակաւոր կամ որսորդական հրացաններ էին: Միջին հաշուով իւրաքանչիւր փամփուշտաւոր հրացան կունենար 150 փամփուշտ»[3]:

Յուրաքանչյուր թաղ, որպես ինքնապաշտպանական շրջան, բաժանվում է չորս հենակետերի, որոնցից ամեն մեկը, բացի հիմնական մարտական ուժերից, իրենց հրամանատարության ներքո ունեին ավելի քան 100 զինավառ երիտասարդներ, որոնք կազմ ու պատրաստ առաջին իսկ ահազանգի դեպքում պիտի օգնության շտապեին թուլացած և վտանգված հենակետերին: Այդ արագաշարժ մարտախմբերի միջոցով ինքնապաշտպանական շրջանների միջև շատ լավ ապահովված էին կապն ու փոխօգնությունը:

«Եթէ, - նշում է «Արաքս» հանդեսը, - մի դիրք բուռն յարձակում կրէր, միւս թաղից շտապով օգնութեան էին հասնում, եթէ շրջում խմբի լրատուն կը ներկայացնէր նոյն թաղի խմբապետի կնքուած երկտողը: Շատ անգամ էլ իրար օգնութեան էին կանչում սուլիչներով»[4]:

Հայ ինքնապաշտպանական մարտախմբերի դիրքերում հաստատվում է երկաթյա կարգապահություն: Առանց խմբապետի թույլտվության որևէ մեկը իրավունք չի ունեցել և չի համարձակվել գեթ մեկ կրակոց արձակել:

Հունիսի 3-ին թուրք ամբոխը, ոգևորված նախորդ օրը հայերի անպաշտպան թաղերում նվաճած հեշտագին հաջողություններից, հարձակվում է Այգեստանի Արարուց թաղի վրա: Այդ թաղի ամենավտանգավոր տեղամասը համարվում էին Նախրի և Փաշի փողոցների դիրքերը, որոնք գտնվում

[1] Տե՛ս Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 104:
[2] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 162:
[3] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 51:

[1] Տե՛ս «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 249:
[2] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 55-56:
[3] Նույն տեղում, էջ 56-57:
[4] «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 112:

էին թուրքական թաղերի հարևանությամբ: Պաշտպանության այդ տեղամասում հայ ինքնապաշտպանական մարտիկները դիրքեր էին գրավել վեց հիմնական հենակետերում: Երկուշաբթի օրը՝ հունիսի 3-ին, մահմեդական բազմահազար ամբոխը թուրքական զորքի հրամանատարության քաջալերանքով Կլոր Դար թաղի կողմից հարձակվում է Արարուցի պաշտպանական բոլոր վեց դիրքերի վրա: Թշնամին ավելի քան վստահ է եղել, որ այս անգամ իրենց կհաջողվի արագորեն կոտորել անպաշտպան հայերին և տիրանալ նրանց «հեքիաթային» հարստությանը: Մեծագույն ոգևորությամբ «Այդ բազմահազար ամբոխը Սալաւաթ տալով հայկական թաղամասերը հասնելուն պէս, որոշուած դիրքերից իրեն կընդառաջեն հայ ֆիտայիի գնդակները: Սա իրենց տեսած, կամ իրենց հայրերից, պապերից լսած երբեմնի ծույլ ու վախկոտ հայը չէր...»[1]:

Հայ մարտիկների կողմից արժանի հակահարված ստանալով և բազմաթիվ սպանվածներ թողնելով թուրք ամբոխը սարսափահար փախչում է իրենց թաղամասերը: Հաջորդ օրը հունիսի 4-ին, հայկական թաղերի վրա հարձակումը վերսկսվում է: Սակայն կռվի արդյունքները նույնն էին: Այս անգամ իրենց հետ տանելով հայ մարտիկների գնդակներին զոհ դարձած 20-30 սպանվածների՝ թուրքերը հեռանում են Արարուց թաղից[2]:

Վանի «Մեծ կռիվ» անվանումը ստացած մարտերն առավել մանրամասնությամբ լուսաբանվում են «Արաքս» հանդեսի էջերում: Դատելով գրելաոճի ու փաստերը ներկայացնելու յուրահատկությունից, ինչպես նաև «Յուշեր Արմենակ Եկարեանի» գրքում Վանի հունիսյան դեպքերին առնչվող էջերի հետ ունեցած որոշակի ընդհանրությունից, կարելի է ասել, որ «Արաքս» հանդեսում տպագրված «Վանի անցքերը» խորագիրը կրող հոդվածաշարի հեղինակները հենց Արմենակ Եկարյանն է ու վերոհիշյալ գրքի խմբագիր Լ.Աճեմյանը:

Համաձայն «Արաքս» հանդեսի, Արարուց թաղի երկու՝ Նախրի և Փաշի փողոցների վրա ամենակատաղի ու ուժգին հարձակումը հակառակորդը ձեռնարկել է չորեքշաբթի օրը՝ հունիսի 5-ին[3]:

Նախորդ օրերին տեղի ունեցած մարտերում կրած անհաջողություններն ավելի քան բավարար էին ապացուցելու, որ անհնար էր սոսկ մահմեդական ամբոխի ուժերով ընկճել հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը:

Անհրաժեշտ էր փոխել մարտավարությունն ու նոր ուժեր ներգրավել կռիվներում: Թուրք հրամանատարությունը, ինչպես հայաբնակ բոլոր վայրերում, այնպես էլ Վանում օգտագործում է քուրդ աշիրեթներին: Շատախի շրջանից Վասպուրականի նահանգապետության հրավերով Վան է գալիս հայտնի ավազակապետ Շաքիր աղան և առաջնորդելով իր հրոսակախմբերը՝ թուրք ամբոխի համագործակցությամբ գրոհում է հայկական թաղերի

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 77:
[2] Նույն տեղում:
[3] «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 112-113:

վրա: Մինչ այդ թուրք հրամանատարությունը դեռևս ձեռնպահ է մնում քաղաքում ընթացող մարտերում օգտագործել կանոնավոր զորքերը: Հունիսի 5-ին տեղի ունեցած կռիվներում ավազակապետ Շաքիր աղայի հրոսակախմբերի հարձակմանը մասնակցում են նաև թուրք զինվորներ, որոնք քրդերից չզանազանվելու նպատակով ծպտվում են քրդական տարազով:

Հունիսի 5-ի առավոտյան, երբ արեգակը դեռ նոր-նոր սկսում է ծագել, քուրդ հրոսակախմբերը, որոնց միանում են թուրք ամբոխն ու քրդի շորերով ծպտված զինվորները, Շաքիր աղայի գլխավորությամբ Հայոց Ձորի կողմից հարձակվում են Այգեստանի Մանդակունենց և Բուլունենց թաղերի դիրքերի վրա: Միաժամանակ թուրք և քուրդ հրոսակախմբերը Այգեստանի վրա են հարձակվում նաև Նորշենի կողմից: Հայ մարտիկները գնդակահարում են հարձակվողներից մի քանիսին, և քրդերը, երկյուղելով իրենց վրա տեղացող մահաբեր հարվածներից, փախուստի դիմում: Թշնամու ձեռնարկած առաջին գրոհը անհաջող էր: Շաքիրը կենտրոնացնում է ուժերը և «... 800-1000 հոգու գլուխ անցած, ետեւից էլ կառավարչական զինուորներ, կը յարձակուի միեւնոյն կէտի վրայ: Կռուողների դիմադրութիւնը զարմանալի կը լինի...»[1]:

Այգեստանի ինքնապաշտպանական հենակետերի միջև, ինչպես արդեն նշվել է, կռիվների ողջ ընթացքում հուսալիորեն գործել է կապն ու ժամանակին միմյանց փոխօգնության հասնելու ռազմական խորհրդի որոշումը: Հակառակորդի մեծաքանակ ուժերի կողմից հարձակման ենթարկված Այգեստանի երկու դիրքերը ի զորու չէին տևական դիմադրություն ցույց տալու, եթե նրանց օգնության չհասնեին հարևան հենակետերի մարտախմբերը:

Հարձակման ենթարկված Մանդակունենց ու Բուլունենց հենակետերում ծանրագույն կացությունում հայտնված պաշտպաններին ժամանակին օգնության են շտապել Մ. Ավետիսյանի օգնական Մուշեղի առաջնորդած 200 մարտիկները: Համատեղ ուժերով հետ մղելով հակառակորդի գրոհները՝ Վանի պաշտպանները խափանում են թուրք հրամանատարության ձեռնարկումը[2]:

Անդրադառնալով այդ օրերին քուրդ հրոսակախմբերի և թուրք ամբոխի նկատմամբ տարած հաղթանակին՝ Ռուբենը նշում է. «... քյուրտերը նոր ուժերով, կհարձակին Արարուց թաղի վրա: Բայց օգնության կհասնի Մուշեղի պահեստի խումբը և ետ կմղե անոնց գրոհը՝ վնասներ հասցնելով քյուրտերուն: Ետ կմղվի նաև Հանկույսներու (նկատի ունի Այգեստանի հարձակման ենթարկված մեկ այլ թաղը - Հ.Գ.) վրա եղած հարձակումը»[3]:

Այդ օրերին ընթացող մարտերում Վանի պաշտպանների դրսևորած անկոտրում կամքն ու նվաճած հաղթանակները հերոսապատումների հիասքանչ օրինակներ են: Վանի «Մեծ կռիվ»-ների մանրամասները նկարագրող և արմենական, և դաշնակցական հեղինակները, փոքր-ինչ տարբերությամբ, հերո-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 250:

սամարտերը ներկայացնում են մեծ հիացմունքով. ճիշտ է,որոշ կողմնակալությամբ. բայց առանց միմյանց անհարկի փնովելու [1]:

Քուրդ հրոսակախմբերի, թուրք ամբոխի եւ նրանց միացած ծպտված զինվորների ձեռնարկած գրոհները շարունակվում են նաեւ հաջորդ օրերին, սակայն «...յաղթուած խուժանը ետ քաշուեցաւ բողնելով շատ դիակներ, որոնց թիւը շաբթուան ընթացքում հասաւ 150-ի» [244]:

Համանման պատկեր է տիրում Այգեստանի պաշտպանության բոլոր հենակետերում: Մարտերին, յուրաքանչյուրը իր հնարավորության սահմաններում, մասնակցել է Վանի հայ բնակչության մեծագույն մասը, անգամ ծերեր , կանայք և երեխաներ:

Արժանվույնս գնահատելով անցած հինգ օրերի ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունները՝ Ա.Նորյանը նշում է, «Հարաւային եւ հիւսիսային թաղերում կռիւը շատ սաստիկ է եւ տեւում է ամբողջ վեց օր, որի ընթացքում յեղափոխականները կարողանում են յետ մղել թշնամուն՝ մեծ կորուստ պատճառելով նրան:

Այգեստանն էլ հինգ օրւայ ընթացքում ազատ է: Թշնամին չի կարողանում մօտենալ... Տիրում է ընդհանուր ոգեւորութիւն...» [345]:

Անդրադառնալով Այգեստանում ընթացող մարտերի արդյունքի գնահատմանը՝ Ա. Եկարյանը նշում է, «Շաբաթ մը տեւող կռիւներուն մէջ, որոնք շարունակուեցան գիշեր և ցերեկ՝ չտեսնուած խստութեամբ մը, հայերը յաջողեցան պահպանել իրենց դիրքերը, թշնամիին համար մեծ կորուստներով» [446]:

Կռիվների ընթացքում թուրք ամբոխի և քուրդ հրոսակախմբերի գործողություններին աջակցելու նպատակով Սաադեդին փաշայի հրամանով թնդանոթաձիգները կրակ են տեղացել հայ մարտական ուժերի դիրքերի և Այգեստանի վրա: Ականատեսների վկայությամբ թնդանոթաձիգների գործողությունները համադրել և Այգեստանի վրա կրակ է արձակել անձամբ Անգլիայի հյուպատոս Ուիլյամսը, որը անգլիական բանակի պրոֆեսիոնալ թնդանոթաձիգ էր:

Թուրք հրամանատարությունը և անձամբ Սաադեդին փաշան համոզվելով, որ քուրդ աշիրեթների ու թուրք ամբոխի ուժերով նույնպես հնարավոր չէր խորտակել հայերի դիմադրությունը, դիմում է առավել կտրուկ և վճռական քայլերի: Նա որոշում է քրդական Համիդիեի հեծելախմբերի զինակցությամբ ու թնդանոթների կրակի աջակցությամբ հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի վրա գրոհի նետել կանոնավոր զորքը:

Շաբաթ օրը թնդանոթների կրակի աջակցությամբ թուրքական զորքը հարձակվում է Այգեստանի պաշտպանական դիրքերի վրա: Միաժամանակ քաղաքի փողոցներում հայտնվում են քուրդ հեծելախմբերը և սրարշավ փորձում ներխուժել Այգեստանի թաղերը: Հայ մարտիկները, վաղօրոք տեղեկանալով քաղաքում քրդական հեծելախմբերի հայտնվելու իրողությանը, կտրում են հարյուրավոր ուռենիներ և փակում դեպի Այգեստանի թաղերը տանող բանուկ փողոցների բոլոր ելքերն ու մուտքերը: Քրդական հեծելախմբերը մատնվում են անգործության, իսկ թուրքական զորքը, զրկվելով նրանց աջակցությունից, չի կարողանում հասնել որևէ շոշափելի արդյունքի: Հայ ինքնապաշտպանական ուժերի անխորտակ դիմադրությունը ոչ միայն մեծ անհանգստություն ու անախորժություն է պատճառում նահանգի իշխանություններին, այլ նաև անգլիական հյուպատոս Ուիլյամսին:

Ա. Եկարյանի հավաստմամբ «Անգլիական կառավարութիւնը կը վախնար թէ միգուցէ հայերու այս դիմադրութիւնը պատրուակ կը հանդիսանայ ռուս կառավարութեան Թուրքիոյ վրայ յարձակուելու, ուստի ան ջանադիր եղաւ վերջ դնելու աւելի շուտ հայերի դիմադրութեան, քան թէ ջարդին» [1]:

Հավանաբար առաջնորդվելով Ա. Եկարյանի վկայակոչած մտավախությամբ, գուցեն օսմանյան տերության նկատմամբ տածած համակրանքով՝ Անգլիայի հյուպատոսը պատրաստակամություն է հայտնում միջնորդ հանդիսանալ թուրք իշխանությունների և հայերի միջև:

Կռվի հինգերորդ օրը՝ հունիսի 7-ին, Անգլիայի հյուպատոս Ուիլյամսը Պարսկաստանի հյուպատոսի՝ Միրզա Հուսեյին խանի ընկերակցությամբ շրջում է հայկական թաղերը և հայ մարտիկներին հորդորում դադարեցնել դիմադրությունն ու հանձնվել: Նա միաժամանակ խոստանում է հայ մարտիկներին առանց որևէ պատահարի, ապահով անցկացնել Պարսկաստան [2]:

Հակառակորդի կամ որևէ մեկ այլ ուժի հետ բանակցություններ վարելն ու համաձայնություն կայացնելը միմիայն ինքնապաշտպանությունը ղեկավարող զինվորական մարմնի իրավասությունն էր: Այդ նպատակով հայ մարտիկները Անգլիայի և Պարսկաստանի հյուպատոսներին պատասխանում են, որ «...կայ զինուորական մարմին, որին միայն կենթարկուենք մենք, եւ որի հրամաններ միայն մեզի համար ընդունելի են...» [3]:

Անգլիայի հյուպատոսի նախաձեռնությամբ Վանի հայ մեծահարուստներից մեկի՝ Թութունջյանների բնակարանում տեղի է ունենում Վանի ինքնապաշտպանության զինվորական խորհրդի անդամների և նահանգի իշխանության ներկայացուցիչների հանդիպումը: Բանակցությունների ընթացքում Անգլիայի հյուպատոսը վեց պետությունների հյուպատոսների անունից երաշխավորում է վերջ տալ կռիվներին ու հայերին սպառնացող ջարդն, եթե հայկական կողմը ընդունի «1. Հայ ինքնապաշտպանութեան պարագլուխներէն տասը հոգիներ անձնատուր ըլլային, եւ 2. հայերը զինաթափ ըլլային եւ զէնքերը յանձնէին հիւպատոսներուն» [4]:

---

[1] Տե՛ս «Դրօշակ», 1896, թիւ 18, «Արաքս», 1987, գիրք Բ:
[2] Տե՛ս «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 150:
[3] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 169:
[4] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 101:

---

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 78:
[3] Նույն տեղում:
[4] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 101:

Հայերի կողմից պատասխանել է Մ. Ավետիսյանը, նշելով որ «... իրենք ապստամբներ չէին, այլ սոսկական ինքնապաշտպաններ, եւ այդ միջոցին դիմած են պարզապէս անոր համար, որ կառավարութիւնը, ջարդին սկիզբը ոչինչ ըրաւ հայ անպաշտպան թաղերը թուրքերու սրածութենէն ազատելու համար...»[1]:

Հայկական կողմը մերժում է հակառակորդի առաջարկությունը՝ երկյուղելով Ուիլյամսի ոչ ուղղամիտ և հավատ չներշնչող պահվածքից, պահանջում է, որ բանակցություններին մասնակցեին նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Պարսկաստանի հյուպատոսները: Հաջորդ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Պարսկաստանի հյուպատոսները, որոշվում է. «... երկուստեք- հայերէն եւ թուրքերէն- վաքսունական անձեր անձնատուր ըլլան: Հայերէն մաս մը արտասահման պիտի ղրկուէր, իսկ միւս մասն ալ ներումի պիտի արժանանար: Իսկ թուրքերը պիտի աքսորուէին»[2]:

Բանակցությունների ընթացքում հայերի առաջարկություններին պաշտպանում է միայն Պարսկաստանի հյուպատոսը, իսկ Ռուսաստանինը չեզոք դիրք է գրավում: Հետագայում պարզվում է, որ հայկական կողմի հետ բանակցություններ վարելը, Վանի իշխանությունների, առավելապես Սաադեդինի համար լոկ խաղեր էին: Անձամբ սուլթան Համիդից Վանի հայությանը կոտորելու առաջադրանք ստացած Սաադեդինի համար երբեք ընդունելի լինել չէր կարող Վանում կռիվները դադարեցնելու և խաղաղություն հաստատելու իրողությունը: Իր հայաջինջ ծրագիրը իրականացնելու համար նա ծրագրում է ձեռնարկել ևս մի անսպասելի ու հզոր հարված:

Նահանգի իշխանությունները, Անգլիայի հյուպատոսի միջնորդությամբ հայկական կողմի հետ բանակցություններ վարելով, ձգտում էին ժամանակ շահել: Մինչ եվրոպական տերությունների հյուպատոսների մասնակցությամբ Թութունջյանների տանը ընթանում էին բանակցությունները, Սաադեդին փաշան հայերի դիմադրությունը վերջնականապես խորտակելու նպատակով նախապատրաստում է նոր, ավելի հզոր հարված: Կենտրոնացնելով մարտական մեծաքանակ ուժեր և թնդանոթներ՝ թուրքերը հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերին ձեռնարկում են վճռական ու նախորդներից առավել ուժգին հարձակում: Ժամեր շարունակ թնդանոթներից տեղացող կրակով թուրքերը քանդում են հայերի պաշտպանական դիրքերն ու բնակարանները:

«Արաքս» հանդեսի հոդվածագիրը, ներկայացնելով այդ պահը, գրում է. «Եւ գիտէ՞ք ով էր այդ խաղի հեղինակը...

- Դա անգլիական հիւպատոսն էր. Մ. Ուլիամսը, բայց թէ ինչո՞ւ համար.

Նա ներքնապէս թրքացած լինելով, արտաքին կերպով էլ չէր ուզեցել յետ մնալ կատարեալ թիւրք լինելուց. հագել էր թիւրք ժանտարմի շորերը եւ գլխին ծածկած թրքական կարմիր ֆէսը...»[3]:

[1] Նույն տեղում, էջ 101-102:
[2] Նույն տեղում:
[3] «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 150:

Եթե հայկական դիրքերը ենթարկվեին միայն զինվորների գրոհներին, ապա հայ մարտիկները անկասկած ի զորու կլինեին երկարատեւ դիմադրություն ցույց տալ: Բայց թնդանոթների հարվածներին դիմակայելը չափազանց դժվարին, գրեթե անլուծելի խնդիր էր: Ժողովուրդը թնդանոթների հարվածներից պաշտպանվելու համար, այլ ելք չունենալով, պատսպարվում է ամերիկյան մեսիոներների մոտ և ռուսական ու պարսկական հյուպատոսարաններում: Թնդանոթների հարվածներով հայ մարտիկների դիրքերը քանդելուց հետո, թուրքական զորքերը անցնում են հարձակման: Թեև թնդանոթների հարվածները մեծ ավերածություններ էին պատճառել, այնուամենայնիվ, հայ ինքնապաշտպանական ուժերը խուճապի չեն մատնվում և սառնասրտորեն հետ մղելով գրոհները, հարձակվում ու գրավում են Սև Քռա բարձունքի վրա տեղադրված թնդանոթներն ու գնդակահարում բազմաթիվ թուրք զինվորների: Թուրք հրամանատարությունը կորցրած թնդանոթները հետ վերցնելու նպատակով նոր գրոհ է ձեռնարկում Սև Քռա բարձունքում ամրացած հայ մարտիկների դիրքերի ու հայկական թաղերի վրա: Վանի ինքնապաշտպանական ուժերն առանց որևէ զոհի դիմագրավում են այդ հարձակմանը ևս:

Ներկայացնելով Վանի պաշտպանների քաղաքում մղած այդ վերջին մարտը՝ Ռուբենը գրում է. «Աշճյան Գեւորգը, իր ընկերներով, կհարձակի հառաջացող զորքի վրա եւ կհաջողի ետ շպրտել զանոնք: Մարտիկը կկանգնեցնե ուրիշ կողմե եղած հարձակումը: Ավետիսյանը եւս հաջողութեամբ ետ կմղե թշնամիի գրոհները, ինչպես եւ Պետոն ու Վազգենը: Այսպեսով, այդ օրվան կռիվը, որ սկսած էր անհաջող ու վիատեցուցիչ՝ հայերու համար կվերջանա մերոնցներու հաղթությամբ»[1]:

«Դրօշակ»-ի հավաստմամբ Վանի հունիսյան վերջին կռվի ժամանակ հայ մարտիկները ոչ միայն կարողացել են դիմակայել հակառակորդի գրոհները և գնդակահարել բազմաթիվ զինվորների, այլև հզոր հակահարձակումով գրավել թնդանոթն ու փախուստի մատնել թշնամուն[2]:

Համաձայն Ա.Նորյանի, վերջին կռվի ժամանակ թուրքերն ունենում են 200 սպանվածներ, իսկ հայերը՝ միայն 2 զոհ և մի քանի վիրավորներ[3]:

Թուրք հրամանատարությունը Ուիլյամսին համախորհուրդ, ծրագրում է կենսագործել հայ մարտական ուժերը ոչնչացնելու ավելի դյուրին տարբերակ: Անգլիայի հյուպատոսը հայկական կռվող ուժերին առաջարկում է թողնել Վանը եւ անցնել Պարսկաստան, ընդսմին երաշխավորելով նրանց անվտանգությունն ու ապահով անցումը:

Վանի հերոսամարտերն արդեն մեծ արձագանք ու տարածում էին գտել և նման պայմաններում հայ բնակչության ջարդերի կենսագործումը, մանավանդ Վան քաղաքում, ուր դեպքերին ակնդետ հետևում էին եվրոպական տերությունները

[1] «Պատմագրութիւն...», հ. էջ 251:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 164:

ների և Պարսկաստանի հյուպատոսներն ու ամերկյան միսիոներները. օսմանյան տերության համար այնքան էլ նպատակահարմար ու օգտակար չէր: Թուրք իշխանությունների համար առավել կարևոր ու առաջնահերթ նշանակություն ուներ Օսմանյան կայսրության անվտանգությանը սպառնացող. ըստ իրենց որակավորման. հայ հեղափոխական գործիչների և մարտական ուժերի ոչնչացումը: Այդ խնդիրն առավել դյուրությամբ ու անաղմուկ լուծելու համար ավելի նպատակահարմար էր նրանց դուրս բերել քաղաքից և հյուպատոսների տեսադաշտից հեռու գտնվող որևէ վայրում ոչնչացնել:

Հայ մարտական ուժերն անընդմեջ ընթացող մարտերում արդեն սպառել էին զինամթերքը և կռիվները շարունակվելու դեպքում նրանք անպայմանորեն կհայտնվեին անելանելի իրավիճակում: Ստեղծված կացությունից դուրս գալու միակ ելքն էր. «... երեք կուսակցութեանց պէտերը. - գրում է Ա. Եկարյանը. - եւ Վանի կարեւոր անձնաւորութիւնները խորհրդակցական ժողով մը գումարելով. որոշեցին որ կռուող երիտասարդութիւնը. իր զէնքերով. դէպի Պարսկաստան մեկնի» [1]:

Գիշերը. համաձայն Ա. Եկարյանի. 1000 հոգի դուրս են գալիս Վանից և շարժվում դեպի Վարագա լեռը: Քանի որ փամփուշտներ շատ քիչ էին մնացել և պաշտպանվելու հնարավորությունը խիստ սահմանափակ էր. որոշում են անզեներին հետ ուղարկել քաղաք:

Քաղաքից հայ ինքնապաշտպանական ուժերի հեռանալը մեծագույն պարգև էր ավարառու թուրք ամբոխի և քուրդ հրոսակների համար, որոնք անարգել ներխուժում են Այգեստան և հասնում մինչև Նորշեն եկեղեցու և հյուպատոսարանների մոտերը: Հայկական թաղերն անկասկած զոհ կգնային մահմեդական հրոսակախմբերի վայրագություններին, եթե չսթափվեին ու չմիջամտեին հյուպատոսներն ու Վանի իշխանությունները:

«Այդ ատեն միայն, թէեւ շատ ուշ, Ուիլեամս սթափեցաւ, եւ գլուխը ֆէս մը դրած, իր տունին տանիքին վրայէն, քանի մը թուրք ոստիկան զինուորներու հետ. հրացանաձգութեամբ մը. սկսաւ կռուիլ եկողներուն դէմ: Կառավարութիւնը այս պարագան տեսնելով միջամտեց եւ յելուզակները ետ դարձան» [2]:

Կռիվների ընթացքում հայերի կողմից սպանվել էին 600 հոգի, որի մեծագույն մասը թուրքական թաղերում բնակվողներն էին: Հայերի տներից այրվել եւ ավերվել էին 500-ը: Թուրքերից սպանվում են 650-700 հոգի» [3]:

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 103:
[2] Նույն տեղում:
[3] «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 122:

Վարագա սարում հավաքվածներից 600-ը. որից 400 վանեցիներ. 200 գավառից եկածներ Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ Չուխի և Բաշ Կալեի ճամփով ու Ս. Բարթուղիմեոս վանքի մոտակայքով պիտի անցնեին Պարսկաստան: Դաշնակցականներն ու հնչակներն մնում են լեռան ստորոտում: Նրանք որոշում են սպասել դեպքերի հետագա զարգացմանը և նոր վճռել իրենց անելիքները:

Վանի հունիսյան դեպքերի վերջին օրվա եւ Անգլիայի հյուպատոսի միջնորդությամբ թուրք իշխանության ներկայացուցիչների ու հայ ինքնապաշտպանական ուժերի ղեկավարության միջև կայացած բանակցությունների առնչությամբ փոքր-ինչ այլ մեկնաբանություն է տալիս ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեի գործիչ. արդեն բազմիցս հիշատակված Ներսես Պասյանը:

Ըստ վավերագրության հեղինակի հավաստման. բանակցությունների առաջին օրը թուրքական կողմի ներկայացուցիչը առաջարկում է. որ հայերը զինաթափվեն և զենքերն ու ապստամբության ղեկավար զինվորական մարմնին հանձնեն կառավարությանը: Եթե հայկական կողմը ընդուներ առաջադրած պայմանները. ապա թուրքական կողմը կառավարության անունից և հյուպատոսների երաշխավորությամբ խոստանում է հայ բնակչությանը զերծ պահել կոտորածից ու վտանգից [1]:

Հայկական կողմը մերժում է այդ առաջարկությունը և բանակցությունները շարունակվելով. ի վերջո ընդունվում է հետևյալ բանաձևը.

«ա. - Վաքսուն հոգի զինուած ֆէդայիներ յանձնուին հիւպատոսներուն, որոնց երաշխաւորութեամբ ու հսկողութեամբ հեռանան Վանէն:

բ. Մնացածներու համար լինելու է սուլթանական ընդհանուր ներում:

գ.- փոխադարձաբար վաքսուն հոգի քիւրտեր եւ թիւրքեր. որոնց ցուցակը ներկայացնելու էր զինուորական մարմինը, նոյնպէս պիտի հեռանային Վասպուրականէն. երկրի խաղաղութեան համար» [2]:

Զինվորական մարմնի անդամները կրկին անգամ քննարկում են համաձայնագրի կետերն ու չեն հանգում միասնական տեսակետի: Մկրտիչ Ավետիսյանը. նկատի ունենալով զինամթերքի խիստ սակավությունը. հյուպատոսների խոստումներն ու երաշխավորությունը. ինչպես նաև բնակչության տրամադրվածությունը. այնուամենայնիվ. համաձայնվում է ընդունել հակառակորդի առաջարկությունը:

Պետոն և Մարտիկը. վկայակոչելով թուրք իշխանությունների նենգաղավությունն ու հյուպատոսների. հատկապես Ուիլյամսի. հավատ չներշնչող պահվածքը. հրաժարվում են ընդունել առաջարկությունը. թեև քաջատեղյակ էին. որ զինամթերքի սակավության պատճառով Վանի ինքնապաշտպանական ուժերը այլևս ի զորու չէին տեւական դիմադրություն ցույց տալ կանոնավոր զորքի և մահմեդական հրոսակախմբերի հարձակումներին:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 78:
[2] Նույն տեղում, էջ 79:

Վանի զինվորական խորհուրդը որոշում է մերժել թուրքական կողմի առաջարկություններն ու շարունակել կռիվը [1]:

Հաջորդ օրը հակառակորդը ձեռնարկում է նոր գրոհներ: Հայ ինքնապաշտպանական ուժերը երեք օր շարունակ դիմադրում են բազմահազար ամբոխի հարձակումները: Մարտերի երրորդ օրը, երբ արդեն սպառվելու էին զինամթերքը և այդ պատճառով անհնար է դառնում հետագա դիմադրությունը, զինվորական մարմինը նույն օրը երեկոյան հավաքում է կռվողներին և վերցնելով նաև 5000 անզեն տղամարդկանց, շարժվում է դեպի Վարագ լեռը հասնելով Վարագ, զինվորական մարմինը իրենց հետագա անելիքները քննարկելու և վերջնական վճիռ կայացնելու նպատակով գումարում է խորհրդակցություն: Զինվորական մարմնի անդամների տեսակետները կիսվում են: Մ. Ավետիսյանն առաջարկում է իրենց հետ վերցնել լեռան վրա գտնվող բոլոր մարդկանց և ուղևորվել Պարսկաստան: Պետոն և Մարտիկը հակառակվում ու չեն ընդունում նրա առաջարկությունը: Նրանք պատճառաբանում են, որ իրենք ի զորու չեն եղած ուժերով պաշտպանել ու ապահովել բազմահազար մարդկանց տեղափոխությունը: Նրանց կարծիքով հազարավոր վանեցիների և նրանց միացած գավառից եկածների բազմությունը հեշտությամբ զոհ կդառնար կամ սովամահությանը, կամ իրենց կրնկակոխ հետապնդող հրոսակախմբերին: Պետոն ու Մարտիկը, ելնելով վերոհիշյալ նախադրյալներից, առաջարկում են անզեններին հետ վերադարձնել քաղաք, իսկ զինվածներին մեկնել Պարսկաստան [2]:

«Ավետիսեանը կը յամառի իր կարծիքին մէջ ու չի համաձայնուիր Պետոյի և Մարտիկի ծրագրին ու լեռ հասածներէն մօտ 700 հոգի անզէն ժողովուրդ վերցնելով իր հետ, կուղևորուի դէպի Պարսկաստան» [3]:

Վանեցիների բազմությունը, Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ Վարագա սարից առաջ շարժվելով, հասնում է Հնդուստան գյուղը և իրենց ճանապարհի պաշարի պատրաստությունը հոգալու ու հանգստանալու նպատակով երկու օր մնում այդ գյուղում: Նահանգի իշխանությունները տեղեկանալով՝ ուղարկում են 500 ձիավորների, որոնք առաջադրանք են ստանում բռնել և կոտորել այնտեղ գտնվողներին: Մինչ թուրքական հեծելազորը կհասներ Հնդուստան, Ավետիսյանը, տեղեկանալով իրենց հետապնդողների մասին, հեռանում է գյուղից և ճանապարհին բախվելով քրդերի հետ ու մեծամեծ դժվարություններ հաղթահարելով, հասնում է Ս. Բարդուղիմեոս վանքի մոտակայքը:

«Ատեսիսեան,- գրում է Ն. Պապյանը, - նախապէս ծանօթ լինելով վանքի վանահոր հետ, իրենց գալը տեղեկացնելու համար, նամակ մը կը գրէ անոր, խնդրելով, որ տեղ եւ ուտեստ պատրաստէ իրենց համար: Սակայն թշուառական վարդապետ նամակը ստանալուն պէս, ինք անձամբ կը տանէ ու կը յանձնէ գաւառապետին» [4]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 79-80:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 81:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 83:

Նահանգի իշխանություններն անհապաղ ոտքի են հանում քուրդ աշիրեթներին և առաջնորդելով զորքին, թուրք և քուրդ հրոսակախմբերին՝ գալիս ու շրջապատում են Ավետիսյանի առաջնորդությամբ Պարսկաստան մեկնող վանեցիներին: Նրանց մի մասը, մոտավորապես 40 զինավառ երիտասարդներ, Ավետիս Չելեբիի գլխավորությամբ բաժանվում է հիմնական խմբից և ճանապարհին մի շարք խոչընդոտներ հաղթահարելով, հասնում է Վան:

Լուսաբացին Ավետիսյանն՝ առաջնորդելով բազմությանը, մոտենում է վանքին: Նա, անտեղյակ լինելով վանահոր դավաճանությանը, հույս ուներ վանքում փոքր-ինչ հանգստանալ, ապա նոր առաջ շարժվել: Թուրքական կանոնավոր զորքը և հրոսակախմբերն արդեն գտնվում էին վանքի մերձակայքում: Նրանք նախապես հարմարավետ դիրքեր են գրավում ու վանեցիների բազմության մոտենալուն պես, գնդակների կարկուտ են տեղում նրանց վրա: Հայ մարտիկները, հայտնվելով անելանելի իրավիճակում, փորձում են պաշտպանվելու որևէ միջոց գտնել: Նրանցից մի մասը՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ կարողանում է դիրքեր գրավել և դիմադրել տարբեր կողմերից իրենց վրա հարձակվող թշնամու մեծաքանակ ուժերին: Հայ մարտիկների գրաված դիրքերը հակառակորդի դիրքերի համեմատ եղել են չափազանց թույլ և անհուսալի: Ամենախիստ կերպով զգացնել է տվել զինամթերքի սակավությունը: Կռիվը շարունակվել է մինչև կեսօր: Հայ մարտիկները, որոնց թվում նաև նրանց առաջնորդ Մ. Ավետիսյանը, մինչև վերջին փամփուշտը մարտնչելով, զոհվում են:

Կորցնելով իրենց հրամանատարին, ողջ մնացած, բայց ծայրահեղորեն հուսալքված ու դեկը կորցրած վանեցիները ցրվում են տարբեր ուղղություններով, բայց «Թիւրք գազանացած զինուորները և արիւնարբու քիւրտ ամբոխը կսկսին անխնայ կերպով կոտորել անպաշտպան, անզեն, մոլորուած ու ցրիւ եկած խեղճ մարդկանց: Այդ պատմական օրը՝ 500-էն աւելի անմեղ մարդկանց արիւնով ներկուեցաւ Ս. Բարդուղիմէոս վանքի շրջակայքը» [1]:

Ավետիսյանի զինակիցներից Հմայակ Թանգարաչյանին հաջողվում է հավաքել շրջափակումից ազատված 100 հոգի և շարժվել Մազրիկ ցեղի առաջնորդ Շարաֆ բեկի Կրրըչան գյուղի ուղղությամբ: Ճանապարհին բախվելով իրենց հետապնդող քուրդ աշիրեթներին՝ նրանք հարկադրված կռվի են բռնվում և մինչև վերջին փամփուշտը մարտնչելով՝ ջարդում են իրենց հրացաններն ու զոհվում անհավասար գոտեմարտում: Ավետիսյանի խմբից ազատվում են միայն 30-40 հոգի, որոնց հաջողվում է հասնել Սալմաստ [2]:

Սաադեդին փաշան կարծելով, որ ֆիդայիների մի մասը դեռևս գտնվում է Վարագում, հունիսի 17-ին 5-6 հարյուր զինվորներով պաշարում է լեռը: Մի քանի օր հետախուզելով Վարագա լեռն ու նրա շրջակայքը և համոզվելով,

[1] Նույն տեղում, էջ 84:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 84-85:

որ այդ տարածքում ոչ մի ֆիդայի չկա. այլում է Ս. Գրիգոր վանքն ու վերադառնում Վան [1]:

Եթե հիմք ընդունենք Ն. Պապայանի ներկայացրած փաստերը, ապա պիտի ընդգծել, որ Վանի ինքնապաշտպանական ուժերի ղեկավար մարմինը հյուպատոսների միջնորդությամբ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում մերժել ու չի ընդունել իրեն առաջադրած պայմանները և թուրք իշխանությունների հետ վերջնական համաձայնություն չի կայացրել: Եթե անաչառորեն գնահատենք պատմական եղելությունը, ապա այս պարագայում ճիշտ չի լինի պնդել, որ թուրքերն են դրժել հյուպատոսի միջնորդությամբ կայացած համաձայնությունն ու ուխտադրժորեն կոտորել հայերին:

Այս հարցում Արմենական և Հ.Յ.Դաշնակցություն կուսակցությունների տեսակետները միանշանակ են. թուրքական կողմն է դրժել Անգլիայի հյուպատոս Ուիլյամսի միջնորդությամբ հայերին տված մինչև Պարսկաստան նրանց վրա չհարձակվելու ու անվտանգությունն ապահովելու խոստումը և ուխտադրժորեն կոտորել է վանեցիներին:

Վանեցիների բազմության մի մասը, Ավետիսյանի առաջնորդած խմբի մեկնելուց հետո, երկու օր մնում է Վարագա սարի վրա: Պետոն և Մարտիկը մեծ ջանքեր են գործադրում ու աշխատում մարդկանց հասկացնել Պարսկաստան մեկնելու վտանգավորությունը: Նրանք զենք չունեցողներին խորհուրդ են տալիս վերադառնալ Վան, ուր մարտերն արդեն դադարել էին և նրանց այլևս ոչ մի վտանգ չէր սպառնում: Որքան էլ նրանք փորձում են համոզել, այնուամենայնիվ վանեցիները մնում են անդրդվելի: Այդ ժամանակ Վազգենը, որը մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում վանեցիների միջավայրում, դիմում է նրանց և «...կը յայտարարէ, որ ինքն էլ չի գնայ. կը մնայ. ու կը համոզէ ժողովրդին, որ միասին վերադառնան քաղաք» [2]:

Պետոն և Մարտիկը իրենց հետ վերցնելով 80-83 զինված տղամարդկանց, Վարագա սարից անցնում են Զարանց գյուղի մոտակայքի լեռը ու այնտեղ մեկ օր մնալուց հետո գիշերով տեղափոխվում են Սարայի շրջանի Բաղիտաշեն գյուղը: Վասպուրականի իշխանություններն ու քուրդ ցեղապետերը, իրենց բազմաթիվ լրտեսների ու գործակալների միջոցով տեղեկանալով Պետոյի և Մարտիկի խմբի տեղաշարժերին, կանոնավոր զորքով և քրդական աշիրեթներով փորձում են շրջապատման մեջ վերցնել վանեցիներին: Պետոն և Մարտիկը նկատում են հակառակորդի տեղաշարժերն ու գիշերով բարձրանում այդ գյուղի մերձակա Գարահիսար լեռը: Լուսաբացին, հազարավոր թուրք զինվորներ և քուրդ զինյալներ պաշարում են լեռը: Գարահիսար լեռան լանջին մղած կռիվը Վանի «Մեծ կռիվ»-ի բաղկացուցիչ մասը կազմող վերջին հերոսամարտն է: Մի բուռ քաջակորով հայորդիներ մարտնչում են ընդդեմ թշնամու բազմահազար զինյալների: Հայ

[1] Տե՛ս Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 164:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1045, գ. 15, էջ 86:

մարտիկներն առանց որևէ քայլ նահանջելու՝ մարտնչում են մինչև մութն ընկնելը, մինչև վերջին փամփուշտ: Որպեսզի թույլ չտան, որ թշնամին տիրանա իրենց զենքերին, նրանք ջարդում են հրացաններն ու Գարահիսար լեռան լանջին կնքում իրենց մահկանացուն [1]:

Արմենականների կողմից Վանի «Մեծ կռիվ» կամ «Մեծ դեպք» անվանումը ստացած ինքնապաշտպանական մարտերը իրավամբ կարելի է դասել Համիդյան ջարդերի տարիներին հայության մղած հերոսական ինքնապաշտպանական մարտերի շարքում: Անտարակուսելի է, որ եթե Վանի հայությունը չդիմեր ինքնապաշտպանության և իր հերոսական գործողություններով չխափաներ հայկական բաղամասերի վրա թուրքական կանոնավոր զորքերի, թուրք ու քուրդ հրոսակախմբերի հարձակումները, ապա թուրք իշխանությունները որևէ արգելքի առջև կանգ չէին առնի և անպայմանորեն կիրականացնեին Վանի հայությանը կոտորելու տալքան Համիդի հրամանը:

Արժանվոյնս գնահատելով Վանի 1896 թ. «Մեծ կռիվ»-ի նշանակությունը եւ համեմատելով ու զուգահեռներ անցկացնելով 1894 թ. և 1895 թ. Սասունի և Զեյթունի ինքնապաշտպանական մարտերի միջև՝ ռամկավար անվանի գործիչ Գերսամ Ահարոնյանը նշում է. «Նոյնպիսի յատկանշական ու կարևոր իրադարձութիւն էր Վանի 1896թ-ի ինքնանապաշտպանութիւնը, որ սկսաւ Յունիսի 3-ին եւ տեւեց շաբաթ մը: Արմենական ղեկավար Մկրտիչ Աւետիսեանի առաջնորդութեամբ, վանեցի բազմահարիւր հայ մարտիկները,- մեծաւ մասամբ արմենական,- եւ ժողովուրդը ձախողութեան մատնեցին Սաատեստին փաշայի զօրաց յարձակումները, եւ ստիպեցին թրքական իշխանութիւնները, որ հաշտութեամբ եւ իրաւահաւասկացողութեամբ վերջ տային յարձակումներուն» [2]:

Վանի հունիսյան դեպքերը կրկին անգամ ապացուցում են, որ նման օրհասական ու բախտորոշ ժամանակահատվածում հայության ամենահուսալի և կենսունակ զենքը եղել ու մնում է ինքնապաշտպանության կազմակերպումը: Այս առումով ճշմարիտ է Արտակ Դարբինյանի Վանի «Մեծ Դէպք»-ին տված հետևյալ գնահատականը. «Առանց այս «96-ի Մեծ Դէպք»-ին համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին, երբ Թուրքիոյ Հայութիւնը բնաջնջման ենթարկուեցաւ. Վան պիտի չունենար իր 1915-ի «Ապրիլեան հերոսամարտը», որով փրկուեցաւ Վասպուրականի 100000 հայութիւնը...» [3]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 86-87:
[2] Ահարոնեան Գ, «Մեծ Երազի Ճամբուն վրայ», Լոս Անճելըս, 1986, էջ 43:
[3] Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 52:

1. 6. «ՎԱՆԻ ՊՍՏԻԿ ԿՌԻՎՆԵՐ»

1896թ. սեպտեմբերի (օգոստոսի 18-ի լույս 19-ի գիշերը). Վանի հունիսյան ինքնապաշտպանական մարտերից ու Ս. Բարդուղիմեոս վանքի մոտակայքում եւ Գարահիսար լեռան լանջին Վանի հարյուրավոր մարտիկների ուխտադրուժ կոտորածից հետո, դեռևս հոգեկան ծանր մղձավանջում խարխափող տեղի հայության համար անսպասելի, քաղաքում է հայտնվում ընդամենը 12 ֆիդայիներից բաղկացած մի նոր մարտախումբ:

«1896թ. սեպտեմբերին Սալմաստից Վան մեկնեց Պետրոս Սէրէմճեանի - Բուլգարացի Պետոյի գլխաւորած խումբը՝ միանալու համա Վազգենի (Տիգրան Դերոյան) և Վարդանի (Խանասորի Վարդան Մեհրաբյան) ուժերին» [1]:

Առաջին հայացքից կարելի է անհասկանալի ու տարօրինակ համարել ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) և Վանի (Շանթ) կենտր. կոմիտեների դիրքորոշումը, որոնք շատ լավ գիտենալով Վանում տիրող իրավիճակի մասին, չէին խոչընդոտել Պետրոս Սերեմջյանի գլխավորած մարտական խմբերի մուտքը Վան, ուր արդեն հանգրվանել էին Վարդան Մեհրաբյանի (Խանասորի Վարդան) և Վազգենի (Տիգրան Դերոյան)գլխավորած մարտախումբը: Ի՞նչ նշանակալի ու օգտակար գործ կարող էին անել ընդամենը մի քանի տասնյակ մարտիկներից բաղկացած մարտախմբերը, մանավանդ արդեն գաղտնիք չէր, որ թուրք իշխանությունները մտացածին պաճառներ էին որոնում արդարացնելու Արևմտահայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում և մասնավորապես Վանում սանձազերծած սպանդը և, ինչու չէ, պատրվակներ որոնում շարունակելու հայ բնակչության կոտորածը: Թվում է, թե Հայոց Ազատամարտի ղեկն ստանձնած կազմակերպությունները՝ սթափ գնահատելով Արևմտահայաստանում տիրող ծանրագույն կացությունը, այդ օրերին պիտի առաջնորդվեին միանգամայն ճիշտ հակառակ մարտավարությամբ, այն է՝ որևէ պատրվակ չընձեռել թուրք իշխանություններին նոր կոտորածներ սանձազերծելու համար և գոնե ժամանակավորապես ձեռնպահ մնալ մարտական խմբերը Երկիր, հատկապես ջարդերի սարսափներն ապրած շրջաններն ուղարկելու ձեռնարկումներից:

Փոքրաքանակ կազմ ունեցող մարտախմբեր Երկիր ուղարկելը, մանավանդ Վան, ուր դեռ նոր- նոր էին ավարտվել ինքնապաշտպանական մարտերը, որևէ պարագայում չէր կարող նշանավորել գործունեության նոր մարտավարության կենսագործում և ինչ- որ բաղձալի ակնկալիքի սպասում: Եթե եւրոպական գերհզոր տերությունների ուշադրությանը դույզն- ինչ չարժանացան 1894- 1896թթ. հայկական կոտորածներն ու մի քանի բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերը, ապա միթե՞ հնարավոր էր մի քանի փոքրաքանակ մարտախմբեր Երկիր ուղարկելով, ակնկալել այդ նույն տերությունների ուշադրությունն ու աջակցությունը:

[1] «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950, Բոստոն, 1950, էջ 411:

Հ.Յ. Դաշնակցության ղեկավար գործիչների նամակագրությունների ուսումնասիրությունը մատնանշում է ճիշտ հակառակը: 1894- 1896թթ. ողբերգական դեպքերի թելադրանքով ՀՅԴ ծրագրում է որդեգրել ճիշտ հակառակ մարտավարություն, այն է՝ կենսագործել հարձակողական բնույթի մեծածավալ մարտական գործողություններ:

«Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը.- նշում է Ս.Վրացյանը.- չէր կարող չգիտակցել տագնապի ծանրութիւնը: Եւ ահա նրա մեջ հասունանում է հարուածին հարուածով պատասխանելու միտքը» [1]:

Որպես պատասխան Հայկական հարցին և հայ ազատագրական պայքարին թուրք իշխանությունների հասցրած հարվածների, ՀՅԴ ծրագրում է իրականացնել իր հարվածն ու «...որոշում է 1896-ին, միաժամանակ, Պոլսում եւ Երկրի ներսը՝ Պարսկաստանից ու Կարսի շրջանից կատարել յեղափոխական ձեռնարկներ, որոնց բնոյթը թողնում էր որոշել կուսակցութեան տեղական մարմիններին...» [2]:

ՀՅԴ համաժողովների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման որոշում չի քննարկվել ու չի ընդունվել կուսակցության որևէ «ընդհանուր» ռայոնական և շրջանային ժողովներում: Համաձայն Ս.Վրացյանի, այդ որոշումը ընդունվել է ՀՅԴ Բյուրոյի, Երկրի և Պարսկաստանի կուսակցական մարմինների ու գործիչների համաձայնությամբ, մի շարք գրավոր և բանավոր խորհրդակցություններից հետո [3]:

Քանի դեռ ՀՅԴ կողմից հստակ չէր որոշվել հեղափոխական ձեռնարկների բնույթը, ստույգ ժամկետներն ու գործողության վայրերը, ապա կարելի է ասել, որ կուսակցության ապակենտրոն կառույցները, ինչպես նաև հեղինակավոր գործիչները, առաջնորդվելով ընդունված մարտավարությամբ, իրենք էին որոշում և ուղղորդում մարտական ուժերի գործողությունները:

Մինչև Վանի 1896թ. հունիսյան դեպքերը («Վանի Մեծ կռիվ») Հ.Յ. Դաշնակցությունը, ինչպես արդեն նշվել է ներկա աշխատասիրությունում, առաջնորդվելով իր որդեգրած նոր մարտավարությամբ, այն է՝ անցում պաշտպանական գործողություններից հարձակողականի, Պոլսում իրականացնում է Օսմանյան կայսրության գլխավոր դրամանատան («Բանկ Օտտոման») գրավման գործողությունը: «Բանկ Օտտոման»-ի ձեռնարկումը ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի համաձայնությամբ իրականացվել է ՀՅԴ Պոլսի կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ ու միջոցներով: 1896թ. դեկտեմբերի 27-ին Թիֆլիսում կայացած ՀՅԴ «ընդհանուր» ռայոնական ժողովի ընդունած «Մեծ արշավանք»-ի մասին որոշմամբ 1897թ. հուլիսի 25-ին տեղի է ունենում «Խանասորի արշավանք»-ը, որը ազատագրական պայքարում բացառապես պաշտպանական բնույթ կրող հայդուկային կռիվների մեջ

[1] «Պատմագրութիւն Հ. Յ. Դաշնացութեան, հ. 1, էջ 305:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնացութեան, հ. 1, ոսթրն, 1974, էջ 281:

նշանավորեց նոր հարձակողական գործողություններով բնութագրվող շրջանի հիմնադրումը[1]*:

Ա. Նորյանը իր «Դրագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից» աշխատությունում Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը դիտարկելիս այն բաժանում եւ դասակարգում է առանձին շրջանների ու յուրաքանչյուր շրջան անվանակոչում. բնութագրում է՝ հիմք ունենալով կուսակցության կենսագործած ռազմավարությունն ու մարտավարությունը:

Համաձայն Ա. Նորյանի դասակարգման՝ «... 90-ական թուականներից Հ.Յ. Դաշնակցութիւնը, պաշտպանական-կազմակերպական շրջանից անցաւ յարձակողական ու անընդհատ կռիւների շրջանին»[2]:

Նրա կարծիքով ՀՅԴ գործունեության այդ շրջանը, որը սկզբնավորվում է Բանկ Օտոմանով, շարունակվում է մինչեւ 1899-ի դեկտեմբերը՝ իր մեջ ներառում է Խանասորի արշավանքը, Վանի 2-րդ, Սպահան լճի, Խաբավինի և Ավերակ ջրաղացի, Ցրոնքի ու Խաստուրի կռիվները[3]:

Ա. Նորյանի տված վերոհիշյալ գնահատականին կարելի է համաձայնել մասնակիորեն: Իրոք, Բանկ Օտոմանն ու Խանասորի արշավանքը, ինչպես արդեն բազմիցս նշվել է, հարձակողական բնույթի գործողություններ էին: Իսկ նրա թվարկած մյուս կռիվներն իրենց բնույթով ու նպատակով ոչ թե հարձակողական, այլ սովորական մարտական-հայդուկային գործողություններ էին:

Այդ ժամանակ Վանում ու առավել ևս գավառներում տիրում էր սարսափելի ծանր իրավիճակ: Բիթլիսի, ապա նաև Վանի հայության ջարդերի գլխավոր կազմակերպիչ Սասդեղին փաշան չբավարարվելով ավերի ու թալանի ենթարկված հայկական թաղամասերի անմխիթար վիճակով , քաղաքի հայության կոտորածից անմիջապես հետո, Վանի հայ երևելիներին է ներկայացնում հետևյալ պահանջ- վերջնագիրը.«...հանրագիտութեամբ դիմեն սուլթանին և խոստովանելով բոլոր չարիքների պատճառ հայ ֆէտայիներին(անձնազոհներ) ներումն խնդրեն»[4]:

Վանի հայ երևելիները, նոր կոտորածների սպառնալիքը կանխելու նպատակով, ճարահատյալ կատարում են Սասդեղին փաշայի ներկայացրած պահանջը, որին հետևում է երկրորդ պահանջ- վերջնագիրը.«...հայերից- իբր ապստամբներից- պահանջեց նաև զէնքերի յանձնելը»[5]:

Հայկական կողմը պարտավորված կատարում է նաև այդ պահանջը: Հավաքում են մի քանի հրացաններ և հանձնում նահանգի իշխանությանը: Սասդեղին փաշայի ներկայացրած պահանջ- վերջնագիրն ընդունելուց հետո միայն, քաղաքի բողոքականների տանը կայացած հանդիպման ժամանակ, նահանգի թուրք իշխանության ներկայացուցիչը անգլիացի հյուպատոսի՝ Ուիլյամսի, Վանի պատրիարքարանի փոխանորդ Սահակ վարդապետի ու կուսակալի օգնական Ստեփան Մելիք Էֆենդիի ներկայությամբ ներկայացնում է սուլթանի ներման հրովարտակը: Համաձայն այդ հրովարտակի սուլթանը հայերին կոչ է անում, առանց վախենալու, վերադառնալ տներ:

Թեև այդ հրովարտակով քաղաքում խաղաղություն է հաստատվում, սակայն գավառի մի շարք գյուղերում առավել մեծ ուժգնությամբ շարունակվում է կոտորածը: Բազմաթիվ հայկական բնակավայրեր դառնում են քուրդ- թուրք հրոսակախմբերի վայրագությունների ու ավարառության գոհերը: Նահանգի հայկական գյուղերում իրենց սանձազերծած կոտորածներով և ավարառությամբ հատկապես աչքի են ընկել Աբաղայի հայդարանցի քրդերը, որոնք ուշանալու պատճառով, «բախտ» չէին ունեցել մասնակցելու քաղաքի կոտորածին ու կողոպուտին[1]:

Թեև ՀՅԴ մինչ այդ որոշակի քայլեր ձեռնարկել էր Վանի ու գավառների հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, սակայն այդ ամենը եղել է խիստ սահմանափակ, որի մասին իր նամակում ընդգծում է ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեի անդամ Վազգեն Դերոյանը. «...96-ի մեծ կռուի ժամանակ Դաշնակցութիւն ամենէն փոքր տեղ կը բռնէր գրեթէ, մինչդեռ պատրաստի ուժեր անգործութեան մատնուած էին Պարսկաստանի մէջ»[2]:

Եթե այդ օրերին հայ մարտական խմբերը մեկնեին գավառներ ու հայ գյուղացիներին պաշտպանեին թուրք և քուրդ հրոսակախմբերի հարձակումներից, ապա միանգամայն հասկանալի ու նպատակային կլիներ նրանց գործունեության իմաստը:

Վարդանը, Վանում իրենց մարտախմբերի ներկայության անհրաժեշտությունը պատճառաբանելիս, վկայակոչում է հետևյալ փաստարկը. «Գլուխ գլխի տվինք և որոշեցինք գործ ձեռնարկել՝ վերականգնելու համար մեր քանդված կազմակերպությունը: Նորից ժողովներ ու խորհրդակցություններ: Վերակազմեցինք խմբերը, տասնապետական ժողովներ ենք գումարում, Պետոյի փոխարեն Վանում ՀՅԴ ներկայացուցիչ է ընտրվում Վազգենը: Փորձում ենք մտնել ժողովրդի մեջ ու քաջալերել,սիրտ տալ նրան, բայց հուսահատությունը շատ մեծ էր, ամեն տուն մի կորուստ ուներ, յուրաքանչյուր հարկի տակ ողբ ու շիվան էր լցվում»[3]:

Ահա նման ճգնաժամային իրավիճակում Վարդանն ու ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեն որոշում են մինչև Պարսկաստանից նոր մարտախմբերի գալը, ժողովրդի տրամադրությունը բարձրացնելու նպատակով իրականացնել ահաբեկչական գործողություն:

---

[1] *.«Բանկ Օտոմանի գրավումը» և «Խանասորի արշավանքը» մանրամասնությամբ ներկայացված է տողերիս հեղինակի «Նիկոլ Դուման» և «Էջեր Հայոց Ազատամարտի» պատմագիտաքկան մենագրություններում:

[2] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 100:

[3] Նույն տեղում:

[4] «Արաքս», 1897, գիրք Ա, էջ 113:

[5] Նույն տեղում:

---

[1] Նույն տեղում:

[2] «Նիւթեր Հ. Յ. Դաշնացութեան պատմութեան համար, Հ. Բ, Պէյրութ, 1985, էջ 35:

[3] Խանասորա Վարդան, էջ 155:

«Դեռ, - նշում է Վարդանը, - Պետոյի կենդանության ժամանակ Վանի կոմիտեն վճռել էր ահաբեկել տեղական հայտնի դավաճաններից Բոգոյին, բայց ինչ-ինչ պատճառով հետաձգել և այդպես էլ մնացել էր: Նպատակահարմար գտանք իրագործել այդ վճիռը: Մահափորձը սակայն անցավ անհաջող...

Թեթև վիրավորված Բոգոն շտապում է կառավարության դուռը և հայտնում իր դեմ գնդակ արձակողի ինքնությունը»[1]:

Վանում Վարդանի ու նրա գլխավորած ֆիդայիների ներկայությունն ավելի է շիկացնում առանց այդ էլ ջարդերից հետո քաղաքում տիրող վախի ու սարսափի մթնոլորտը: Պատմական այդ ժամանակաշրջանում արևմտահայության կյանքում տեղի ունեցող իրադարձությունները հրամայաբար թելադրում էին, որպեսզի հայ ազգային կուսակցություններն ու հատկապես Հ.Յ.Դաշնակցության և նրա կազմակերպական կառույցների՝ Վանի (Շամ) և Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեներն առաջնորդվեին առավել հստակ ու կշռադատված դիրքորոշմամբ: Այսինքն, ՀՅԴ մարտավարությունը լիներ համակողմանիորեն փաստարկված, ժամանակաշրջանի յուրահատկություններին և իր հնարավորություններին ու կարողություններին համահունչ:

Տվյալ իրավիճակում ո՞րն էր այն արդյունավետ ու կշռադատված քայլը, որը պիտի կատարեր Հ.Յ.Դաշնակցությունը և նրա Շամի ու Վրեժի կենտր. կոմիտեները: Թեպետ հեղափոխական մեծածավալ գործողություն (Մեծ արշավանք) կազմակերպելու վերաբերյալ ՀՅԴ որևէ համաժողովում դեռևս համապատասխան որոշում չէր կայացվել, բայց կուսակցական կառույցներն այդ ուղղությամբ որոշակի քայլեր արդեն ձեռնարկում էին:

Բազմաթիվ հայրենանվեր հայորդիներ արշավանքին մասնակցելու նպատակով խմբերով, իսկ հաճախ նաև միայնակ գալիս էին Սալմաստ ու ներկայանում արշավանքի գլխավոր կազմակերպիչ Նիկոլ Դումանի շտաբը:

Կամավորները կենտրոնանում էին Սալմաստի շրջանում, սակայն չափազանց դժվար է եղել դրականորեն լուծել արշավանքի կազմակերպման հետ կապված բազմապիսի խնդիրները: Անհրաժեշտ էր հարյուրավոր մարտիկների տեղավորել ու հոգալ նրանց զինելու, հանդերձավորելու ու սնունդով ապահովելու հարցերը: Իսկ այդ ամենի համար նախ և առաջ հարկավոր էին ֆինանսական հսկայական միջոցներ, որոնք խիստ սահմանափակ էին:

Սահմանամերձ շրջանում թեև արդեն Մեծ արշավանքը ձեռնարկելու նախապատրաստական աշխատանքներն էին ընթանում, սակայն կապը Երկրի, նույնիսկ Վան քաղաքի հետ խափանվել էր: Այդ օրերին անգամ ՀՅԴ Թավրիզի (Վրեժ) կենտր. կոմիտեն որևէ տեղեկություն չուներ, թե ինչպիսի իրավիճակ էր տիրում Վանում: Դումանը այդ անորոշ կացությունից դուրս գալու, Վանից տեղեկություններ ստանալու նպատակով, կաշառելով, այնտեղ է ուղարկում մի պարսիկ սուրհանդակ: Նրա կատարած այդ քայլը՝ պարսիկ սուրհանդակ ուղարկելը, թեպետ հարուցում է զինակիցների զարմանքը, սակայն տվյալ իրավիճակում այլընտրանք գոյություն չուներ: Դումանի մտահղացումը պսակվում է հաջողությամբ, տասն օր անց Վանից վերադառնում է սուրհանդակը և հուրախություն Սալմաստում համախմբված մարտիկների, իր հետ բերում Վարդանի և Վազգենի նամակները[1]:

Վարդանն իր նամակում նկարագրում է Վասպուրականում տիրող ողբերգական կացությունը և հայության կոտորածի ողջ ծանրությունն ու պատասխանատվությունը բարդում Սալմաստում գտնվող մարտիկների վրա, որոնք, նրա պնդմամբ, դեռևս մայիսին պետք է լինեին գավառներում և պաշտպանեին ժողովրդին: Այնուհետև, նկարագրելով երեք կուսակցությունների գլխավորությամբ տեղի ունեցած Վանի յոթնօրյա հերոսամարտերի, կոտորածների ու բազում այլ դեպքերի մանրամասները գրում է. «Բայց կոտորածից սոսկալին այն է, որ ժողովուրդն այժմ մեզ ուրիշ աչքով է նայում, այժմ մենք նրա թշնամիներն ենք, և իրաքանչիր րոպէ շատերը պատրաստ են ինձ ու Վազգէնին կառավարութեան ձեռքը մատնելու, եթէ իմանային որտեղ լինելնիս: Կոտորածի հեղինակը մեզ են համարում եւ մեզ մեղադրում, որը մեծ մասամբ արդարացի է, մեր զէնքերն այդտեղ թափուած, զինուորները յոգնանջելիս՝ իսկ այստեղ ժողովուրդը հազարներով է մորթում...»[2]:

Համառոտակիորեն ներկայացնելով Վանում տիրող իրավիճակը և զինակիցներին հաղորդելով իր դժգոհությունը՝ Վարդանը ընկերներին, որպես ապագա գործողության ուղեցույց, խորհուրդ է տալիս. «Խմբերի անցնելն այժմ ոչ մի օգուտ չէ կարող, ուրիշ բան է, եթէ աննկատելի կերպով քարոզիչներ գան ու գաւառներում ցրուեն, ապագայի համար ժողովուրդ պատրաստելու»[3]:

Վազգենն իր նամակում զարգացնում է ճիշտ հակառակ տեսակետը: Նա նույնպես նկարագրում է կոտորածների մանրամասները, ժողովրդի ծայրահեղ հուսալքված վիճակն ու հոգեբեկությունը, բայց վճռականորեն պնդում է. «Երբէ՛ք,երբէ՛ք չը պէտք է դադարել կուելուց, երբէ՛ք չը պէտք է յուսահատել, թող մեռնի, ով ընդունակ չէ կուելու, ապրելու, իսկ մենք պէտք է կուենք, մինչեւ վերջին շնչերնիս... խմբերը տեղաւորելու համար մի մտածէք, մենք կը հոգանք, միայն շուտով մեզ ընկերներ հասցրէք...»[4]:

Նամակներն ընթերցելու պահին, ըստ Արամայիսի վկայության, ներկա են եղել 11 հոգի, որոնց թվում՝ Նիկոլ Դումանը, բժիշկ Քր. Օհանյանը, բուլղարացի Պետոն(Պետրոս Սերեմջյան), Հովսեփ Արղությանը և այլոք[5]:

Թեպետ, ինչպես արդեն նշվել է, կայացվել էր Մեծ արշավանք ձեռնարկելու մասին ՀՅԴ «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշումը, բայց Վանից ստացված Վարդանի, և հատկապես Վազգենի մեղադրական եզրահանգումներով ու

[1] Նույն տեղում:

[1] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 1, Թիֆլիս, 1909, էջ 100:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, 101:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

զինակիցներին ներկայացրած դժգոհություններով հագեցած նամակներն ալեկոծում են Սալմաստում գտնվող մարտիկներից շատերին:

Ի՞նչ պիտի անեին: Ներկա գտնվողներից Կարոն (Ռոստոմի եղբայրը՝ Արիստակես Զորյան - Հ.Գ.), որն հայտնի էր իր դյուրաբորբոք բնավորությամբ, առաջարկում է գինել 60 հայրուկների ու նրանց ուղարկել Վան: Սալմաստում գտնվող մնացած հայրուկները, համաձայն Կարոյի առաջարկությանը, Վան պետք է ուղևորվեին աստիճանաբար, փոքր խմբերով[1]:

Եթե ընդունվեր Կարոյի առաջարկությունը, ապա դա անխուսափելիորեն կհանգեցներ «Մեծ արշավանք» -ի ձեռնարկման տապալմանը: Բնական է, որ նման ծանրագույն և տագնապալի իրավիճակում, հատկապես մարտավարական խնդիրները վճռելիս, տարակարծություններն անխուսափելի էին, սակայն Արևմտահայաստանում և մասնավորապես Վասպուրականում տիրող իրավիճակը պետք է պարտադրեր, որպեսզի ՀՅԴ գործեր ավելի նպատակասլաց և իր գործունեությունում նախ և առաջ առաջնորդվեր կուսակցության վեհաժողովներում և ղեկավար մարմինների կողմից ընդունված որոշումներով: Հակառակ պարագայում ինչո՞ւ էին ընդունվում որոշումներ, որոնք համահունչ չէին ժամանակաշրջանի յուրահատկություններին ու պահանջներին և տեղի տալով բուռն, երկարատև վիճաբանությունների՝ չէին կենսագործվում:

Պիտի ընդգծել, որ մարտավարության հարցում եւ ընդհանրապես որեւէ արմատական նշանակություն ունեցող վճիռներ կայացնելիս, նկատելի էր ազգային - ազատագրական պայքարի ավագ եւ նոր սերնդի ներկայացուցիչների դիրքորոշումների տարբերությունը: Քանի որ Վան մեկնելու կապակցությամբ նրանց միջեւ տեղի ունեցող վիճաբանությունները ընթացել են բուռն և հետաքրքիր մթնոլորտում, ուստի ավելորդ չէ այն ներկայացնել փոքր-ինչ մանրամասնությամբ:

Նիկոլ Դումանը, որպես ավագ սերնդի ներկայացուցիչ, կրտսեր սերնդի ներկայացուցիչ Կարոյին պատասխանել է.« - Կարո՛, հարկատր է մի քիչ սառը դատել: Վազգէնը նոյնպէս շուտ յուզուդ է, մի բոպէում բռնկուդ բնաւորութիւն ունի, ինչպէս եւ դու. Նա, ես համոզած եմ, այդ նամակը բոպէի ազդեցութեան տակ է գրել եւ չի մտածել հետեւանքի մասին: Խնդրին արժէ լուրջ վերաբերուել: Խաղը տանուլ ենք տալ, այժմ մեզ հարկաւոր է նոր ծրագրով գործել»[2]:

Փոքր խմբերով աստիճանաբար Երկիր անցնելուն, որի ջերմեռանդ կողմնակիցներն էին նաեւ բուլղարացի Պետոն եւ Արամայիսը, եւ «Մեծ արշավանք» ձեռնարկին առնչվող վիճաբանությունները շարունակվել են բազմիցս ու միշտ էլ ավագ սերնդի ներկայացուցիչները, հատկապես Նիկոլ Դումանը և բժ. Քր. Օհանյանը կարողացել են, թեև մեծ դժվարությամբ, համոզել փոքր խմբերով Երկիր մեկնելու բուռն ցանկությամբ համակված մարտիկներին, գոնե ժամանակավորապես ձեռնպահ մնալ Երկիր մեկնելու մտադրությունից, սակայն նրանց

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 102:

համառությունը ի վերջո տալիս է իր պտուղները: Փոքր խմբերով Երկիր մեկնելու կողմնակիցները ոչ միայն համառորեն ու անդադար անհանգստացրել են Վրեժի կենտր. կոմիտեի անդամներին և «Մեծ արշավանք» ձեռնարկումի կազմակերպիչներին, այլև դիմումներ են հղել ՀՅԴ Արևելյան ու Արևմտյան Բյուրոներին: Շաբաթներ շարունակ ընթացող երկար վիճաբանություններից հետո, այդ հարցին ինչ-որ լուծում, գոհացում տալու նպատակով, Ղալասար գյուղում, նույն գյուղի ուսուցիչ Թադևոսի այգում գումարվում է ժողով, որին մասնակցել են Երկիր մեկնելու կողմնակիցները՝ Դումանը, Կարոն, Արղությանը և բժ. Քր. Օհանյանը:

Ժողովը սկսելուն պես Պետրոս Մերեմջյանը, դիմելով հավաքվածներին, կանչում է. «- Եղբա՛յր, մինչեւ ե՞րբ պէտք է մեզ տանջէք. մի՞թէ չէք թողնիլ գնալ, ու թէկուզ մեր արիւնն էլ խառնել մեր ընկերների արեան հետ:

Դումանը ժպտաց: Այդ ժպիտն ինձ աւելի վատ թւաց, քան հայհոյանքը, եւ ես էլ գոչեցի Պետրոսի պէս»[1]:

Այդ օրը Պետոն, Գուրգենը, Արամայիսը և նրանց կողմնակիցները դարձյալ չեն կարողանում համոզել իրենց ավագ գործընկերներին, որպեսզի ստանային նրանց համաձայնությունը ու խմբով մեկնեին Երկիր: «Մեծ արշավանք» ձեռնարկումի կողմնակիցների, հատկապես Դումանի ու Արղությանի վկայակոչած փաստարկներն այս անգամ ևս ավելի ծանրակշիռ էին ու համոզիչ:

Հուլիսի 7-ին, բժիշկ Քր. Օհանյանի բնակարանում, դարձյալ նույն օրակարգով, տեղի է ունենում հաջորդ ժողովը, որտեղ Երկիր մեկնելու կողմնակիցները նախկին համոզվածությամբ ու համառությամբ պահանջում են իրենց տրամադրել զենք ու թուլատրել մեկնել Երկիր: Նրանց ցանկությունը մերժելու փաստարկներից մեկն այն էր, որ չպետք է ջլատեին ու թուլացնեին ապագա Մեծ արշավանքի համար նախատեսված մարտական ուժերը: Դիմելով նրանց՝ Դումանն ասել է. «- Տէ՛ր, թողէք Վան գնալու միտքը, մի՛ ջլատէք ոյժը...

-12 հոգով ոյժ չի ջլատիլ, - ասաց Յարութիւնը:

- Կը ջլատի,Յարութիւն, կը ջլատուի,- խօսեց Դումանը,- մեր զինտրների մէջ կրթած մարդկանց պակասութիւնը զգալի է. ձեզնից իւրաքանչիւրը կարող է մի խումբ կառաւարել,իսկ խմբապետներ հարկաւոր են. եթէ դուք գնաք, պակասը լրացնելու համար, աւելի անյարմարներին պէտք է դիմեն»[2]:

Բացի բերված փաստարկից, ելնելով այն իրողությունից, որ հազարավոր զինյալ քրդեր կազմ ու պատրաստ, սահմանամերձ շրջաններում սպասում էին հայ ֆիդայիների հայտնվելուն, Դումանը զգուշացնում է ընկերներին, որ նրանք կարող են հեշտությամբ քրդերի հարվածների զոհը դառնալ:

Չհամաձայնվելով Դումանի վկայակոչած փաստարկներին՝ Պետոն ասել է. «... Մեզ մի՛ ստիպէք մնալու. ախր արշաւանքն էլ, Աստուած գիտէ՝ թէ երբ է լինելու. կամ լինելո՞ւ է արդեօք, փամփուշտները էսօր կը հասնեն, վաղը, մի

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 109:

ամսից յետոյ յայտնի չէ: Իսկ Դաշնակցութիւնը չի կարող այդքան մարդկանց ամիսներով կերակրել...»[122]:

Իհարկե. Պետրոս Սերեմջյանը՝ Պետոն. այս պարագայում փոքր-ինչ խտացնում է գույները: Ճիշտ է. Սալմաստում հավաքված մարտիկները այնտեղ էին եկել գլխավորապես Հ.Յ.Դաշնակցության կանչով ու նախաձեռնությամբ. սակայն նրանց կերակրողն ու կարիքները հոգացողը՝ Սալմաստի գյուղերի հայ բնակչությունն էր:

Պետոն խորին համոզվածությամբ հայտարարել է. որ իրենց կհաջողվի անկորուստ հասնել Վան: Իր համոզվածությունն առավելագույնս ապացուցելու ու ընդդիմադիրներին համոզելու նպատակով նա վկայակոչում է հնչակների 50 մարտիկներից բաղկացած մարտախմբին. որը հուլիսի 16-ին մեկնել էր Վան: Ի դեպ. հնչակների խումբը. սահմանը թուրք կանոնավոր զորամասերի և քրդական զինյալ խմբերի կողմից խստորեն վերահսկվելու պատճառով չի կարողանում անցնել Երկիր ու հարկադրված հետ է վերադառնում:

Դժվար է կանխատեսել. թե այդ վիճաբանությունները որքան կշարունակվեին և ինչպիսի ընթացք կունենային. եթե նրանք չստանային ՀՅԴ Արևմտյան ու Արևելյան բյուրոյի նամակները. որոնցում «...յորդորում էին Պարսկաստանի գործիչներին. չը յուսահատել պատահած դժբախտութիւնից եւ ամենայն ջանք գործ դնել. մարդիկ անցկացնել Երկիր փոքր խմբերով»[223]:

Կարելի է ասել. սահմանամերձ տարածքից Մեծ արշավանք ձեռնարկելու. թե փոքրաքանակ մարտախմբերով Երկիր մեկնելու ու այնտեղ գործելու վիճահարույց հարցը. ՀՅԴ ղեկավար մարմինների համաձայնությամբ. լուծվում է. հոգուտ հակոտնյա տեսակետներ դավանող՝ երկու կողմերի: Մեծ արշավանքը պետք է ձեռնարկվեր. իսկ փոքրաքանակ մարտական խմբերը կարող էին մեկնել Երկիր:

Ստանալով ՀՅԴ ղեկավար մարմինների երկար սպասված բաղձալի համաձայնությունը. 12 մարտիկներից բաղկացած մարտախումբը. առանց ժամանակ կորցնելու. ստանում է զենքերն ու հանդերձանքը և պատրաստվում մեկնել Վան: Խմբի անդամների հաշվարկների համաձայն իրենք ընդամենը 9 օրում պիտի հասնեին Վան. որոշում են նաև հանգստի կայանները: Մարտական խմբի յուրաքանչյուր անդամ իր հետ վերցնում է «...400-550 փամփուշտ. մի-մի ջրաման. ուր ջրի փոխարէն՝ սուրճ էինք ածել. բժշկի խորհրդով. 3-4 պատրօնդաշ. մի տեսակ կաշէ աման. որին ճզդան էինք կոչում. և մէջը լցրել էինք հրացանի անհրաժեշտ մասերով... մի-մի իւղաման. իւղոտ շշերով. մի քանիսս էլ ատրճանակ և դաշոյն ունէինք» [3]:

Մարտախմբի անդամներից 5-ը. որոնց թվում Պետոն և Գուրգենը. զինված էին մոսիններով. իսկ մյուսները՝ բերդանկա հրացաններով:

[1] Նույն տեղում, էջ 111:
[2] Նույն տեղում, էջ 116:
[3] ՀԱԱ, ֆ. 314, գ. 2, գ. 2, էջ 196:

Հուլիսի 3-ին. Ռոստոմի եղբոր՝ Կարոյի ուղեկցությամբ մարտախմբին ճանապարհելու համար Փայաջուկ է գալիս նաև Նիկոլ Դումանը: Այդ ժամանակ ընդունված է եղել. որ երբ մարտական և զինատար խմբերը մեկնում էին Երկիր. ապա հնարավորության դեպքում անպայմանորեն պիտի լուսանկարվեին: Ավանդույթը պահպանվում է նաև այս պարագայում:

«Կէսօրից մի ժամ անց. մեզ մօտ եկան Նիկոլը ու Կարօն. մտադրուած էինք նկարուել. շուտով եկաւ եւ լուսանկարիչը: Մենք հագնուեցանք. ինչպէս որ պէտք է ճանապարհուելուց հագնուէինք. Դումանին մէջ տեղ կանգնեցրինք. ու հենց դրանը նկարուեցինք» [1]:

Ընդունված կարգի համաձայն. մութն ընկնելուն պես. մարտական խումբը դուրս է գալիս Փայաջուկ գյուղից և ուղեւորվում Վան: Այն պահին. երբ մարտախմբի անդամները շարք կազմած՝ պատրաստվում էին ուղեւորվելու. «Նիկոլը կանգնեց եւ ասաց բեկբեկուն ձայնով.

- Բարի ճանապա~րհ . հիացած եմ ձեր զգացմունքներով: Ասելիք չունիմ. ձեզ ոգեւորող բառեր հարկաւոր չեն. միայն աւելորդ չի լսել մի խորհուրդ: Արամայիս. Պետրոս. Յարութիւն եւ Լեւոն. դուք մի չորրորդութիւն էք. որ միութիւն կարելի է կոչել. ձեզնից մէկն ու մէկը առանձին խմբապետ լինել չի կարող. չորսդ էլ մի ձայն էք. մի խմբապետ. բայց եւ այնպես՝ Պետրոսը. իբրեւ զինտրական (Պետրոս Սերեմջյանը ավարտել էր Սոֆիայի զինվորական ուսումնարանը եւ ստացել էր բուլղարական բանակի սպայական աստիճան և այդ պատճառով նրան անվանել են բուլղարացի Պետո - Հ.Գ.)մարդ՝ թող իր խորհուրդներով ղեկավարէ կռի ժամանակ...» [2]:

Չէր սխալվում բազմափորձ հայդուկապետը: Բուլղարացի Պետոն ստանձնում է մարտախմբի հրամանատարությունը և բոլոր կռիվներում իրեն դրսևորում է որպես քաջարի և կարող հրամանատար:

Ուղեւորության ընթացքում. բնական է. որ պետք է հաղորդակցվեին հայկական գյուղերի բնակիչների հետ. ծանոթանային նրանց նիստ ու կացին և ի հարկե իրենց՝ ազատագրական պայքարի զինվորագրված մարտիկների նկատմամբ նրանց դրսևորած վերաբերմունքին:

Հ.Յ.Դաշնակցության Կենտրոնական Արխիվում (ՀՅԴ ԿԱ) պահպանվող վավերագրերից մեկում նշված են Փայաջուկ գյուղից մինչև Վան ընկած տարածքում գտնվող այն բնակավայրերը. որտեղ դադար են առել ֆիդայիները: Այդ բնակավայրերն էին . «Սանամերիկ. Դիզա. Մէյդաւար. Կօռել. Սբ. Թադէոսի վանք. Սաղալա. Խաչեն. Կիրծօր. Վարագ...» [3]:

Համաձայն այդ նույն վավերագրի. հայ գյուղացիների վերաբերմունքը հեղափոխական գործիչների ու ֆիդայիների նկատմամբ միանշանակ չէր: Գյու-

[1] Նույն տեղում, էջ 208:
[2] Նույն տեղում, էջ 208-209:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 285, գ. 6:

դացիներից ոմանք նրանց ընդունել են ոչ այնքան ջերմորեն ու համակրանքով, իսկ ոմանք էլ ունեցել են ճիշտ հակառակ վերաբերմունքը:

Ֆիդայիների համար թերևս ամենացավալին, եղել է այն, որ հայկական գյուղերը կազմակերպված չէին ու անպաշտպան էին: Գյուղերում իսպառ բացակայում էին մարտական ուժերը. չկար գենք, որպեսզի վտանգի պահին հայ գյուղացին ի զորու լիներ կռվել ու պաշտպանել իր ֆիզիկական գոյությունն ու ունեցվածքը [1]:

Գյուղերից մեկում, գյուղի ռեսը (գյուղապետ) տեսնելով ֆիդայիների զենքերն ու չկարողանալով զսպել իր զայթակղությունը՝ ասել է . « - Ա՛խ, Տէր-Աստուած, ի՞նչ կը լինէր, որ այս հրացաններից ամեն մէկս մի հատ ունենայինք:

- Ի՞նչ կանէիք . - հարցրինք նրան:

- Ի՞նչ կանէի~նք... մէկ-մէկ կը բրդէինք այս անիրաւ քուրդ ու տաճիկ հարստահարողներին: Սակայն ո՞ւր է. մեր գիւղումը մի միայն ես ու մի ուրիշն ունինք սիրմալու (բերդանկա) հրացան» [2]:

Գյուղացիներից շատերը նույնիսկ խնդրել են, որպեսզի ֆիդայիները մնան իրենց գյուղում՝ խոստանալով լավ պահել ու անգամ պաշտել նրանց: Ֆիդայիները, իհարկե, պիտի կատարեին իրենց հանձնարարությունը և այդ պատճառով ցանկանային էլ, չէին կարող մնալ և գործել գյուղերում: Մարտախմբի խմբապետը՝ Պետոն, գյուղերից մեկի ռեսին իրենց Վան մեկնելու անհրաժեշտությունը պատճառաբանելիս ասել է. «- Սիրելի՛ ռէս,- մենք ձեզ չենք թողնի.... Վանը ամբողջ Վասպուրականի հոգին է. այդ հոգին միշտ արթուն, կենդանի պէտք է պահել... Հենց այդ պատճառով է, որ մենք առ այժմ ձեզ կը թողնենք և կը շտապենք այնտեղ» [3]:

Մարտախումբը, ճանապարհին հանգրվանելով հայկական մի շարք գյուղերում և այդ հետաքրքիր հանդիպումներից բազում իրարամերժ տպավորություններ ստացած, օգոստոսի 18-ին մուտք է գործում Վան, Այգեստան, ուր նրանց զինավառ դիմավորում են Վարդանն ու Վազգենը:

Ի՞նչ պետք է աներ Պետոյի գլխավորած մարտախումբը. պիտի մնար վանում, թե մեկներ գավառներ՝ աշխատելու ժողովրդի հետ:

Ըստ Ռուբենի հավաստման, Վարդանը պնդել է, որ Պետոյի մարտախումբը պիտի մնար գործելու ոչ թե քաղաքում, այլ պիտի մեկներ գավառներ, դրանով իսկ կխուսափեր թուրք իշխանությունների հետապնդումներից ու կռիվների բռնվելուց: Վազգենը մարտախմբի գործելու տեղի՝ քաղաք թե գավառ, վերաբերյալ, պաշտպանել է ճիշտ հակառակ տեսակետը [4]:

«Վազգէէնը,- գրում է Ռուբենը,- ճակատագրական սխալ մը կգործէ, պնդելով որ պէտք է ուժեղացնել քաղաքը: Վազգենը, կրթած և սնած Վանի մթնոլորտի

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 314, գ. 2, գ. 2, էջ 256:
[3] Նույն տեղում, էջ 258:
[4] Ռուբէն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 109:

մէջ, նախկին Արմենական էր. ան յուրացուցած էր այն համոզումը, թէ յեղափոխական գործի կեդրոնը Վանն էր, որ անոր միջոցով պիտի լուծի Վասպուրականի խնդիրը... Ըլլալով տեղացի, ուժեղ կամքի տէր ու ազդեցիկ, ան կը յաջողի անցկացնել իր տեսակէտը եւ պահել խումբը Վանի մէջ» [1]:

Վանի հայությունը այնքան էլ հոժարակամ ու ջերմությամբ չի ընդունել ֆիդայիներին: Կոտորածի հետևանքով սարսափի մատնված ժողովրդի համար զարհուրելի էր նորից ջարդերի վտանգը տեսնելու սպառնալիքը: Առաջնորդվելով հենց այդ իրողությամբ՝ վանեցիները, ըստ Արամայիսի խոստովանության, «... այնքան էլ սիրով չէին վերաբերում դէպի յեղափոխականները եւ աւելի տրամադիր էին նրանց մատնելու, քան թէ պաշտպանելու» [2]:

Ըստ Ռուբենի դասակարգման, ժողովուրդն իր տրամադրվածությամբ և հեղափոխական մարտիկների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով բաժանվում էր 3 մասի: Առաջին փոքրաքանակ մասը, խիստ հակառակ լինելով հեղափոխական մարտիկներին, պահանջում է, որպեսզի նրանք անմիջապես հեռանային քաղաքից: Երկրորդ՝ մեծաքանակ մասը, որը թեպետ նույնպես ահաբեկված էր տեղի ունեցած մահասարսուռ դեպքերից, չեզոք դիրք ուներ: Երրորդ մասը կողմնակից էր հեղափոխական մարտիկներին: Նրանք հիմնականում հարազատներին, տուն ու տեղը կորցրածներն էին և կողմնակից էին հեղափոխական գործողությունների, նույնիսկ կռիվների [3]:

Չնայած ժողովրդի ցուցաբերած սառը ընդունելությանը՝ մարտախմբի անդամներին, այնուամենայնիվ, հաջողվում է խստորեն պահպանել քողարկման կանոնները՝ թաքնվել Վանի Արարուց թաղամասում: Մերեմջյանի մարտախմբից հետո Վան է գալիս նաև Շեկոյի (Արշակ Պարսամյան) գլխավորած կրկնակի անգամ ավելի մեծ մարտախումբը:

Իր հիշատակարանում անդրադառնալով Շեկոյի գլխավորած մարտախմբի՝ Վանում հայտնվելու իրողությանը՝ Վարդանը գրում է. «Վարագայ սարից մի նոր տոմսակ բերին, թե՝ Պարսկաստանից 22 հոգի են եկեր: Գիշերը դրանց էլ քաղաք մտցրինք...Նրանց խմբապետը եկաւ մօտս և պատմեց իրենց ճամփորդութեան պարագաները: 22 հոգի համարեա բոլորն էլ մոսիններով զինված կտրիճ տղամարդիկ էին...Այսպիսով Վանում ունեցանք դրսից եկած 40 հայդուկներ, նոր ձեւի առաջնակարգ զէնքերով» [4]:

Շեկոյի մարտախմբի մարտիկները նույնպես զգուշությամբ թաքնվում են քաղաքի թաղամասերում: Ռուբենի գնահատմամբ .«Այդքան մեծ քանակութեամբ դրսեցի զինուորներ դժուար պիտի ըլլար Վանի մեջ պարտկել, պահպանել ու կերակրել, արդէն այդ պահուն նոր դժբախտութիւն կպատահի [5]:

[1] Նույն տեղում:
[2] Արանայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 61:
[3] «Պատմագրութիւն...», հ.ՁԱ, էջ 335:
[4] Խանասորա Վարդան, էջ 159:
[5] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 335:

1896թ. Վանի հունիսյան դեպքերից հետո ավերումի ենթարկված քաղաքում էին հանգրվանել գավառներից եկած տասնյակ հազարավոր գաղթականներ: Քաղաքում բռնկվում է տիֆ հիվանդությունը, որը տարածվում է նաև ֆիդայիների մեջ: Տիֆով վարակվում են նաև Վարդանն ու Վազգենը [1]:

Մի քանի մատնիչներ խմբի քաղաքում գտնվելու մասին անմիջապես հայտնում են տեղի թուրք իշխանություններին: Վանի նահանգապետ Շաքիր փաշան, նոր կոտորածներ կազմակերպելու սպառնալիքով, խստորեն պահանջում է Վանի հայոց առաջնորդարանից անհապաղ քաղաքից հեռացնել հայդուկային խմբերին և հրամայում փողոցներում, տների պատերին կպցնել հայերին ահաբեկող թռուցիկներ:

«Սարսափը տիրում է. ամենքը երեսները դարձնում են յեղափոխականներից: Ոչ ոք չէր համաձայնվում ապաստան, տեղ տալ անգամ խմբերին: Տեսնելով ժողովրդի այդ վերաբերումը, Վարդանը (հայդուկային խմբի հրամանատար - Հ.Գ.) բռնի ուժով տեղատորում է խմբերը այն հայերի տներում, որոնք կուի տեսակետից յարմար դիրքեր ունէին» [2]:

Նույն իրողությունը,Վարդանի համանման գործելակերպը իր հուշերում հաստատում է նաեւ Ռուբենը [3]:

Շաքիր փաշան որոշում է դիմել զենքի և տներում ամրացած հայ մարտիկների վրա շարժում կանոնավոր զորքը: Թուրքական 300 հոգանոց զորախումբը սեպտեմբերի 10-ին պաշարում է Արարուց քաղի տներից մեկը, ուր ապաստանել էին հայդուկները: Նույն պահին Վարդանն ու Վազգենը գտնվում էին քաղաքի մեկ այլ թաղամասում և դեռևս չէին ենթարկվել հարձակման:

«Սեպտեմբերի 1-ին, - գրում է Վարդանը, - լուր բերին, թե Արարոց թաղում գտնվող մեր տղերքը պաշարված էին զորքերի կողմից... օգնության գնալ անհնարին էր: Շարունակ մեզ տեղեկացնում էին, որ մի բուռ հայդուկները հաջող դիմադրություն էին ցույց տալիս, և զորքերը ոչինչ չէին կարողանում անել» [4]:

Թուրք զինվորների կողմից ֆիդայիների վրա հարձակում գործելը Վարդանի, Վազգենի և մյուսների համար չէր կարող անակնկալ լինել, քանի որ մինչ հարձակում ձեռնարկելը, հակառակորդը փորձել է համոզել հայ մարտիկներին, որպեսզի նրանք դուրս գային իրենց ապաստանած տներից և հանձնվեին: Ընդ որում, նահանգի իշխանությունները հայ ֆիդայիներին անձնատուր լինելու առաջարկությունը կատարում են հայերի միջոցով: Հայ մարտիկները, նախկին դեպքերից քաջատեղյակ լինելով թուրք իշխանությունների խոստումների կեղծությանը, մերժում են նրանց առաջարկությունը [5]:

Այն պահին,- համաձայն Արամայիսի պատմածի,- երբ թուրք զինուորները, պաշարելով Պետոյի և նրա զինակիցների ապաստանած բնակարանը, չորս

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 335-336:
[2] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 267:
[3] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 335:
[4] Խանասորա Վարդան, էջ 160:
[5] ՀՅԴ ԿԱ» թթ. 283, գ.6:

կողմից կրակ էին տեղում, ինքը Գուրգենի և Յարությունի հետ տարված էին թղթախաղությամբ, իսկ դեռևս չապաքինված Վարդանն ու Վազգենը անկողնում հանգստանում էին: Հանկարծ հևասպառ ներս է մտնում մի պատանի ու հայտնում, որ Արարուց թաղամասում Պետոյենց խումբը պաշարվել է [1]:

Դժվար չէր հասկանալ, որ Պետոյի գլխավորած՝ ընդամենը յոթ մարտիկներից բաղկացած մարտախումբը հայտնվել է ծանրագույն կացությունում: Ուստի հարկավոր էր ինչ-որ ելք գտնել, օգնել անելանելի իրավիճակում հայտնված ընկերներին՝ ազատվելու շրջափակումից:

«Մենք ծրագրում ենք,-գրում է Արամայիսը,- որ մութն ընկնի թէ չէ, հայդուկներից մի ուրիշ խումբ ուղարկենք, որ յարձակուեն զինուորների վրայ և տղաներին ազատեն» [2]:

Մինչ Վարդանի ու Վազգենի գլխավորած հայդուկները կսպասեին մութն ընկնելուն, որպեսզի օգնության հասնեին իրենց զինակիցներին, Արարուց թաղամասում պաշարված մարտիկները քաջաբար դիմադրում էին և կարողանում հետ մղել թուրքական զորախմբի ձեռնարկած գրոհները:

Հայ ֆիդայիների դիպուկ համազարկերից զգալի կորուստներ տալով՝ թուրքերը հրդեհում են տունը: Թվում է, թե ֆիդայիները հայտնվել էին անելանելի կացությունում, և այդ իրավիճակից դուրս գալու ելքը միակն էր.«...յեղափոխականները վճռում են մի կողմից կռուել՝ թշնամուն զբաղեցնելու համար, իսկ միւս կողմից էլ պատը ծակել խուսափելու ապագայ վտանգից» [3]:

Մինչ թշնամին հրճվանքով դիտում էր, թե ինչպես էր կրակի բոցերում այրվում ֆիդայիների ապաստարանը, հայ մարտիկներին հաջողվում է քանդել տան պատերից մեկը և անվնաս հեռանալ:

Այդ ընթացքում խմբի մի քանի անդամներ Գուրգենի առաջնորդությամբ շտապում են Արարուց թաղ և այգիներից մեկում հանդիպում պաշարման օղակից դուրս եկած Պետոյին ու նրա ընկերներին [4]:

Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցած կռվում հայ մարտիկներին հաջողվում է անկորուստ դիմակայել թուրք զինվորների ձեռնարկած բոլոր գրոհները:

Քանի որ Վանի թուրք իշխանություններին արդեն հայտնի էր ֆիդայիների գտնվելու ստույգ վայրը, ուստի միանգամայն պարզ էր ու հասկանալի, որ շուտով նրանք հարկադրված կլինեն դիմակայել հակառակորդի նոր հարձակումները: Արժանվույնս գնահատելով այդ իրողությունը՝ հայ մարտախմբերի հրամանատարները հայդուկներին նպատակատղում են ավելի ծանր գոտեմարտի և որոշում մարտական ուժերը տեղաբաշխել Այգեստանի չորս այնպիսի հարմարագույն դիրքերում, որոնք իրարից հեռու պիտի լինեին 500-1000 քայլից ոչ ավելի: Ըստ Ռուբենի հավաստման, չորս դիրքերում մարտնչող մարտախմբերի

[1] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 119-120:

հրամանատարներն էին Վարդանը, Պետոն, Միքոն(Միքայել Ազիզ Մելիքյան) և Մոկացի Ախպերը [1]:

Թուրքական զորքերը, նաև թնդանոթներով զինված, գիշերը պաշարում են հայ մարտիկների ապաստանած տները, իսկ առավոտյան Վարդանին է ներկայանում ռուսաց հյուպատոսի ներկայացուցիչը և հյուպատոսի անունից խորհուրդ տալիս դադարեցնել կռիվն ու անձնատուր լինել, ընդսմին խոստանալով պաշտպանել ֆիդայիներին և նրանց ապահով ուղարկել Ռուսաստան: Ռուս հյուպատոսը իր խոսքն ավելի համոզիչ դարձնելու նպատակով Վարդանին ներկայացրած գրությունում նշում է. « Պարոնայք, Շաքիր փաշան առաջարկում է ձեզ՝ անձնատուր լինել եւ խոստանում է կեանք պարգևել ձեզ: Նա ձեզ վրայ պիտի նայի իբրև ժողովրդի միջից խռովարարների, եւ ես, ռուսաց հզօր պետութեան հիւպատոս, երաշխաւորում եմ Շաքիր փաշայի ասածները... Երբեք մտքներիցդ չհանէք, որ ձեր այդ վարմունքը շատ անյաջող եւ վնասակար հետեւանքներ պիտի ունենայ թէ՛ ձեզ եւ թէ՛ Վասպուրականի ժողովրդի համար»[2]:

Հայ մարտիկները դարձյալ մերժում են, այս անգամ արդեն հյուպատոսի առաջարկությունը:

« Մենք, - նշում է Վարդանը, - արդեն ծանոթ էինք մի ուրիշ «հզոր պետության» հյուպատոսի տված երաշխիքներին (նկատի ունի Անգլիայի հյուպատոս Ուիլյամսին - Հ.Գ.), բնավ պատճառ չունենք հավատալու, որ այդ «հզոր պետության» ներկայացուցչի խոսքը ավելի ազդու կլինի... Մեզ մնում է ապավինել մեր ուժին... Այնուամենայնիվ, հայտնեցինք հյուպատոսին, թե Շաքիր փաշային անձնատուր չենք լինի, բայց պատրաստ ենք այս գիշերն իսկ հեռանալ քաղաքից, եթե կառավարությունը ապահովե մեր ազատ ելքը»[3]:

Հյուպատոսի միջոցով ստանալով ֆիդայիների մերժողական պատասխանն ու առաջարկությունը՝ Շաքիր փաշան չի ընդունում ֆիդայիների առաջարկությունը և հրամայում է զորքին՝ սկսել հարձակումը: Թուրք զինվորները թնդանոթներից և հարյուրավոր հրացաններից տեղացող կրակի աջակցությամբ գրոհում են այն քաղամասերի ու տների վրա, որտեղ ապաստանել էին հայ մարտիկները: Պիտի նկատել, որ հակառակորդն այս անգամ հարձակումը նախապատրաստել էր խնամքով ու պատշաճ մակարդակի: Վաղօրոք գիտենալով ֆիդայիների ապաստանած տների տեղը՝ թուրք հրամանատարությունը զինվորների հոծ շղթայով շրջափակում է ոչ միայն քաղամասերը, այլև զինվորներ է կանգնեցնում բոլոր այն տների կտուրների վրա, որտեղից կարելի էր ուղիղ նշանառությամբ համազարկեր տեղալ հայդուկների վրա: Հակառակորդն առավել ուժգին հարվածներ է տեղում Վարդանի ու խմբապետ Միքոյի մարտախմբերի վրա և թնդանոթների կրակով քանդում է այն տները, որտեղ ապաստանել էին նրանց գլխավորած մարտիկները: Վարդանն ու Վազգենը, հաղթահարելով հիվանդությունը, արագորեն զինվելով, հայտնվում են մարտաշարքերում և ղեկավարում իրենց զինակիցների գործողությունները: Նկարագրելով թնդանոթից արձակած կրակի հետևանքով բռնկված հրդեհի բոցերի մեջ մարտնչող հայդուկների չափազանց ծանր կացությունը՝ Վարդանը նշում է.«...թնդանոթի առաջին ռումբ արձակողը եղել էր անգլիական հյուպատոսը, որը թնդանոթաձիգ սպա էր: Թնդանոթների որոտ, հրացանների դղրդոց - կատարյալ դժոխք էր ստեղծել մեր շուրջը...

Կռվում էինք վերեւի հարկից, գրեթե երեսուն քայլ հեռու թշնամուց: Մեր սենյակների տակը բերին երկու թնդանոթ դրին եւ սկսեցին վարից ռմբակոծել սենյակների հատակները... ռումբերն ու գնդակները թափվում էին մեր եւ հարեւան սենյակները: Պատ, հատակ, առաստաղ ծակծկված էին մաղի պես: Ուղղակի հրաշք էր,որ մեզանից ոչ ոք չէր խփվում»[1]:

Որպեսզի խույս տային ու զոհ չգնային թնդանոթների ու հրացանների հարվածներին, հայդուկներն արագորեն մի սենյակից տեղափոխվել են մեկ այլ սենյակ: Նրանց անվտանգ տեղաշարժերին մեծապես օգնել նաև այդ թաղամասի հայ բնակիչները, որոնք, արհամարհելով վտանգը, նրանց մշտապես մատնացույց են արել մերձակայքում գտնվող անվնաս մնացած տներն ու սենյակները, որտեղ կարելի էր դիրքավորվել ու շարունակել կռիվը:

Եթե ծանրագույն կացությունում հայտնված Վարդանի և Միքոյի մարտախմբերին ցույց չտային անհրաժեշտ օգնությունը, ապա նրանք դժվար թե կարողանային հաջողությամբ պաշտպանվել մինչև մութն ընկնելը: Վարդանի դիրքերից բուլղարացի Պետոյի ուղարկած մարտիկը հետ վերադառնալով՝ հայտնում է .«... հազիւ մինչեւ մութը դիմանալ կարողանայ: Նրա վրա(նկատի ունի Վարդանի մարտախմբին - Հ.Գ.) երեք թնդանօթ է բաց անում եւ երկու բեօլուկ զինտրներ: Դիրքի մի պատն արդէն քանդուելու վրայ է» [2]:

Քանի որ իրենց վիճակը դեռևս այնքան էլ տագնապալի չէր, ուստի Պետոյի մարտախմբի հայդուկները շտապում են օգնության հասնել Վարդանին: Սակայն ճանապարհին տեղեկանալով, որ Միքոյի էարտախմբի դրությունը շատ ավելի է տագնապալի, որոշում են առաջին հերթին օգնության հասնել Միքոյի հայդուկներին: Արագորեն հասնելով այն տներին, որտեղ ամրացած կռվում էր Միքոյի մարտախումբը, Պետոյի գլխավորած մարտիկները տեսնում են, որ Միքոյի մարտախմբի ծանրագույն իրավիճակի մասին իրենց ստացած տեղեկությունը չափազանցած էր: Միքոյի մարտիկները հաջողությամբ դիմադրում էին և նրանց վիճակն այնքան էլ տագնապալի չէր: Եթե Պետոյի մարտախումբը չկարողանար արագորեն ճիշտ կողմնորոշվել և համապատասխան հուսալի դիրքեր գրավել, ապա անխուսափելիորեն ինքը կարող էր հայտնվել շրջափակման մեջ:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, էջ 111:
[2] Նորեան Ա, նշվ. աշխ., էջ 268:
[3] Խանասորա Վարդան, էջ 162-163:

[1] Նույն տեղում:
[2] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:

«Պետրոսը. - գրում է Արամայիսը. - իր ռազմագիտական հմտութեամբ ամեն ինչ չափել էր. բայց չէ՞ որ մենք եւս կռուել էինք ցանկանում. սակայն Պետրոսն ուղիղ էր ասում. պէտք է վերադառնալ...Դարձանք «մեր տունը». Մենք տխուր էինք. մեր մէջ հառաչողներ եւս գտնուեցան. մեր ընկերները կռուեն. իսկ մենք հեռուից ձայների՞ն ականջ դնենք...» [1]:

Սեպտեմբերի 12-ին ընթացող լարված կռիվների ու հայ մարտիկների հերոսական գործողությունների վկան էր նաև Վանի բնակչությունը:

«Ժողովուրդը. - նշում է Ռուբենը. - հանդիսատես է այս տեսարանին: Մաս մը. սարսափած. վախէն հաւաքուեր է դպրոցներու մեջ. իսկ ավելի հեռու գտնուողները. տանիքները ելած. կդիտեն կռիւը...[2]:

Այդ օրերին ընթացող կռիվների ժամանակ. ըստ Վարդանի. թուրք բարձրաստիճան պաշտոնյաները. որոնց թվում նաև Վանի կուսակալ Շամսետտին. նահանգի զինվորական ուժերի հրամանատար Սաատեդին փաշաներն ու Արևելյան նահանգների «բարեկորգիչ» Շաքիր փաշան հյուրընկալվել են անգլիական հյուպատոսի տանը և սպասել հայ ֆիդայիների դիմադրության վախճանին: Բայց իզուր էին նրանց սպասելիքները: Ամբողջ օրը դաժան կռիվներ մղելով՝ հայ մարտիկները աննկուն պաշտպանությամբ կարողանում են դիմագրավել թնդանոթների համազարկերի աջակցությամբ իրենց վրա գրոհող թուրք զինվորներին ու մութն ընկնելուն պես դուրս են գալիս հրդեհվող տներից ու հեռանում: Անդրադառնալով Վանի երկօրյա մարտերի գնահատմանը՝ Ա.Նորյանը պնդում է, որ այն ունեցել է իր քաղաքական և բարոյական ազդեցությունը: Եւրոպական լրագրերում հայ հեղափոխականների ձեռնարկած գործողությունների, ինչպես նաև Վանում տեղի ունեցած դեպքերի ազդեցությամբ, վերսկսում են իրենց թերթերում դարձյալ արծարծել Հայկական Հարցը և տերություններին հիշեցնել նրանց ստանձնած պարտավորություններն ու տված խոստումները [3]:

Միաժամանակ, գունազարդված ներկայացնելով Վան քաղաքում տեղի ունեցած կռիվներում հայ մարտիկների գործողությունները, նշում են՝ «Վանում մեծ խռովութիւններ են տեղի ունեցել. ահագին թուով զինուած հայեր. ըստ լուրերի 6000. յարձակուել են թրքական բերդապահ զօրքի վրայ եւ ծանր կորուստ են պատճառել նրան...» [4]:

Ներկայացնելով վերոհիշյալ հաղորդագրությունը՝ Ա. Նորյանը գտնում է,որ 52 զինված հայդուկների դիմադրությունը նույնպես կարող է որոշ ազդեցություն թողնել [5]:

Համաձայն «Դրօշակ»-ի երկու օր են տևել Վանի «Պատիկ կռիւներ» անվանումը ստացած մարտերը: Հայ մարտիկները, հայտնվելով շրջափակման մեջ կարողացել են ոչ միայն աներեր մարտնչել, այլև անհավասար գոտեմարտում դրսևորելով անընկճելի մարտական ոգի՝ հաղթել բազմիցս գերակշռող ուժերին ու անկորուստ հեռանալ վտանգված շրջանից [1]:

Հայերի հեռանալուց անմեղյակ, նահանգապետի հրամանով թնդանոթներից հարյուրավոր ռումբեր են տեղում ֆիդայիների վրա. և կրակի ավերածություններից ոգևորված զինվորները նետվում են գրոհի. ու խորտակելով «բոլոր պատնեշները», ներխուժում են տներ. «բայց ի՞նչ զարմանք, այնտեղ ոչ ոք չկայ. բոլորն էլ անյայտացել են» [2]:

Իրենց կրքերին հագուրդ տալու ցանկությունից հուսախաբ թուրքերը գլխիկոր թողնում են մարտադաշտը: Երեկոյան. Վարդանի խումբը նույնպես կարողանում է հաջողությամբ դուրս գալ քաղաքից. իսկ Վազգենը, հիվանդության պատճառով անկարող լինելով տեղաշարժվել, մնում է Վանում և թաքնվում Այգեստան թաղամասի տներից մեկում: Համաձայն վաղօրոք պայմանավորվածությանը՝ խմբերը երեկոյան պետք է դուրս գային Այգեստանից ու հեռանալով Վանից՝ միանային Հայոց Ձորի Կեմ գյուղի մերձակայքում գտնվող սարում: Վարդանի խումբը, դուրս գալով քաղաքից, արագորեն առաջ է շարժվում և առանց որևէ խոչընդոտի հանդիպելու, հասնում է Կեմա սարի մոտ ու սպասում Սերեմջյանի խմբին:

«Որոշված տեղը, - գրում է Վարդանը, - մարդ չկար: Դես ու դեն ընկանք, փնտրեցինք, պայմանական այներհանեցինք - միայն մի խումբ գտանք, մյուսները չկային ու չկային...Մտածեցինք՝ գուցե, ճանապարհին մոլորվելով, Վարագա սարն են անցել: Վարագին լավ ծանոթ հայդուկներից ուղարկում ենք այնտեղ, իսկ մենք սպասում ենք Կեմա բարձունքներում...» [3]:

Պարզվում է, որ մարտախմբի մարտիկները փոխանակ դեպի Կեմասարը գնային, ճանապարհին նկատում են ինչ-որ ոտնահետքեր և կարծելով, որ դրանք դեպի Շատախ ուղեվորվող Վարդանի խմբի ոտնահետքերն են, սխալմամբ ընթանում են նույն ուղղությամբ: Ճանապարհին հանդիպած մի անակնկալ պատահարի պատճառով նրանք չեն կարողանում հասնել պայմանավորված վայրն ու միանալ իրենց սպասող Վարդանի խմբին:

Քանի որ մարտական խումբը շարժվում էր գիշերով, ապա շտապելիս ֆիդայիները մթության մեջ հանկարծ նշմարում են ինչ-որ սև կետեր և չկարողանալով ճիշտ կողմնորոշվել ու ենթադրելով, որ դրանք թշնամիներ են, սկսում են կրակել իրենց դեմ առ դեմ դուրս եկած այդ սև կետերի ուղղությամբ: Խմբի նման գործելակերպը մարտավարական վրիպում էր: Փոխանակ աննկատ և անաղմուկ առաջ շարժվելու, նրանք կռվի են բռնվում: Պարզվում է, որ նրանց հանդիպածները ընդամենը երկու հոգի էին, որոնք կարողանում են խույս տալ ֆիդայիների գնդակներից, արագորեն հասնում

[1] Նույն տեղում:
[2] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 338:
[3] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 270:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 271:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1899, թիւ 3, էջ 38-40:
[2] «Պատմագրութիւն...», հ. Ա, էջ 403:
[3] Խանասորա Վարդան, էջ 160:

են գյուղ և իրենց տեսածի մասին հայտնում գյուղում գտնվող թուրք զինվորներին [1]:

Հասկանալով իրենց սխալը. խմբի անդամները իրենց ուղեցույցի (վալլաղ) խորհրդով որոշում են «... փոխանակ հարաւ-արեւմուտք գնալու. ծռուեցինք արեւելք. սեպտեմբերի 12-ը Նոր-Գեղի դիմացի լերան վրայ անցկացնելու...» [2]:

Այդ օրը հորդառատ անձրև էր տեղում: Խմբի թրջված. հոգնած և քաղցած մարտիկները. ճարահատյալ փոքր-ինչ հանգստանալու ու կազդուրվելու նպատակով. մտնում են Կեմ գյուղը և հանգրվանելով գյուղի մարագներից մեկում՝ փորձում քնել:

Սեպտեմբերի 14-ի լուսաբացին. երբ հայդուկները դեռևս քնած էին. հանկարծ մարագ է մտնում մի հայ կին և տեսնելով զինված տղամարդկանց՝ աղերսագին թախանձում. «Ամա՜ն. դուրս եկէք. ես ձեր բաղդ. տունս կը քանդէք» [3]:

Ֆիդայիները հանգստացնում են կնոջը և հարկադրված հայտնում նրան. որ իրենք սոված են ու խնդրում. որ նա իրենց հաշվին հաց ու պաշար բերի: Հայդուկները միաժամանակ խոստանում են անմիջապես հեռանալ. եթե կինը բերի իրենց խնդրած հացն ու պաշարը: Կինը կատարում է ֆիդայիների խնդրանքը և քիչ անց «... ներս է մտնում 9 հաց բերելով: Երկու օր սոված մնացած 22 հայդուկին 9-ը հացն ի՞նչ աներ. այն էլ միայն չոր հաց» [4]:

Հայդուկները դեռ չէին հասցրել հացը բաժանել. երբ ներս է մտնում մի գյուղացի և հայտնում. որ նրանք մատնված են և շուտով շրջապատվելու են թուրք զինվորների կողմից: Եվ իրոք, Կեմ գյուղում գտնվող զինվորները, տեղեկանալով գյուղում նրանց գտնվելու մասին, անհապաղ գալիս ու պաշարում են այն մարագը, ուր ապաստանել էին հայդուկները:

Համաձայն Վարդանի վկայության «... կինը (նկատի ունի հաց բերող կնոջը - Հ.Գ.) հայտնում է մի քանի մարդկանց. սրանք էլ քրդերի ականջն են ձգում: Հավար է ընկնում... վրա են հասնում զորքերը եւ քրդերի հետ կրակ են տալիս հարդանոցը» [5]:

Հակառակորդի հարձակումը հայ մարտիկների համար եղել է այնքան անսպասելի. որ նրանք նույնիսկ չեն հասցնում գրավել պաշտպանական փոքր-ինչ տանելի դիրքեր:

Մարագում ապաստանած հայդուկները հայտնվում են ծանրագույն և, թվում է, անելանելի կացությունում: Ելքը մեկն էր. հարկավոր էր դուրս գալ մարագից ու սրընթաց գրոհով խորտակել թուրք զինվորների դիմադրությունը և հեռանալ: Ֆիդայիները. հրացանները ձեռքներին սպասում են իրենց խմբապետի հրահանգին: Ներկայացնելով այդ դրամատիկ պահը՝ «Դրօշակ»-ի հոդվածագիրը. որը նաև կռվի մասնակից է. պատմում է. «...յանկարծ հնչեց «տղե՛ք. ելնե՛նք» աղաղակը: «Ելնե՛նք. ելնե՛նք» լսուեցան նոյնպէս մի քանի ձայներ եւ մենք դիմեցինք դէպի դուռը. հրացանները որոտացնելով: Խէչօն. մեր համարձակ Խէչօն. մի ոտքէի մէջ հրացանի փողով ցիրուցան արաւ անցքի մօտ դարսած խուրձերը. եւ ամենից առաջ երկու հոգով դուրս թռաւ: Ելա՛նք... դրան առաջ. մի քայլ միայն մեզանից հեռու. ձեռքը կրծքին դրած. պառկած էր մեր սիրելի ընկերը. դարաբաղցի Խէչօն» [1]:

Իրենց ընկերոջ՝ դարաբաղցի Խէչոյի գոհվելուց առավել զգաստացած ու բորբոքված ֆիդայիները հողմի արագությամբ դուրս են թռչում մարագից և չորս ուղղությամբ համազարկեր տեղալով՝ փորձում ճեղքել պաշարման օղակը: Առաջինը. ըստ Ռուբենի հավաստման. խմբապետ Պետրոս Սերեմջյանի և դարաբաղցի Խէչոյի հետ մարագից դուրս է եկել Դուրգենը [2]:

Ֆիդայիների սրընթաց և խիզախ գրոհը պսակվում է հաջողությամբ: Չնայած գոմից դուրս գալու պահին գոհվում են դարաբաղցի Խէչոն և վանեցի Դավիթը, բայց մյուս տասը ֆիդայիները կարողանում են անվնաս դուրս գալ մարագից ու փոքր- ինչ կտրվել հակառակորդից: Թուրք զինվորները մարագը շրջափակելիս այնպես էին քողարկվել, որ երևացել են միայն հայդուկների վրա ուղղված հրացանների փողերը: Մարագից դուրս ելնելիս. չնկատելով քողարկված զինվորներին. հայդուկները ճարահատյալ կրակել են միայն երևացող հրացանների փողերի ուղղությամբ: Իսկ թուրքերը հարմարավետ դիրքերից համազարկեր են տեղում արագորեն հեռանալու փորձ անող հայդուկների վրա: Կատարվում է հրաշք. որն առավելապես զարմանք է հարուցում հենց հայ մարտիկներին:

«Այժմ էլ. - խոստովանում է Արամայիսը, - զարմանում եմ թէ ի՞նչպէս պատահեց. որ ամենքս էլ արիւնաքաքախ չը փուեցինք կալի մէջ. կարծես մի գերբնական զօրութիւն մեզ պաշտպանում էր. մեզ կախարդական շրջանի մէջ էր դրել. որի մէջ գնդակ չը պէտք է ընկնէր...» [3]:

Ֆիդայիների գրոհն այնքան սրընթաց էր ու անակնկալ. իսկ համազարկերն այնքան դիպուկ. որ թուրք զինվորները. չնայած իրենց բազմաքանակությանը. մի պահ խուճապի են մատնվում: Ֆիդայիներն. ակնթարթորեն օգտվելով հակառակորդի շարքում առաջացած շփոթությունից. արագորեն անցնում են հակառակորդի թիկունքն ու շարժվում դեպի Անգղ (Խոշաբ) գետի կամուրջը: Թվում է. թե նրանց արդեն հաջողվել էր դուրս պրծնել շրջափակումից. բայց պարզվում է. որ նրանց մի մասը. չկարողանալով ժամանակին դուրս գալ. դեռևս մնացել էր մարագում: Իսկ թուրք զինվորները. սթափվելով խուճապից. ձգտում են գրավել կամուրջը և դարձյալ պաշարել հայ մարտիկներին: Ճիշտ գնահատելով հակառակորդի մտադրությունը՝ ֆիդայիները .կանխելով նրանց. առաջ են շարժվում. գրավում կամուրջը և հարմար դիրքավորվելով՝ շա-

[1] Տե՛ս «Դրօշակ», 1897, թիւ 1, էջ 4:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Խանասորա Վարդան, էջ 170:

[1] Դրօշակ, 1897, թիւ 1, էջ 5:
[2] «Պատմագրութիւն...», հ.Ա, էջ 277:
[3] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 147:

ռունակում կռիվը: Միաժամանակ նրանց մտահոգում էր մարագում գտնվող իրենց ընկերների ճակատագիրը և փորձում էին որևէ ելք որոնել, օգնել ազատվելու դեռևս շրջափակման մեջ գտնվող ընկերներին:

Ճիշտ այդ նույն պահին Վարդանն իր մարտիկներով գտնվում էր Կեմա սարի վրա և սպասում Սերեմջյանի մարտախմբին:

«Մինչեւ կեսօր, - գրում է Վարդանը, - նստեցինք անորոշության մեջ: Մեկ էլ Կեմից հրացանի ձայներ լսվեցին, որոնք կամաց-կամաց սաստկանում էին... Գյուղից քանձր ծուխ էր բարձրացնում: Ինչ անել: Մեր դիրքերից մինչև գյուղը կլիներ մեկուկես ժամ: Տրամաբանական էր, որ անմիջապես հարձակվեինք թշնամու վրա թիկունքից և խուճապի մատնելով ազատեինք ընկերներին, բայց իմ մեջ ոչ մի ուժ չէր մնացել...Ինձ փոխարինող հարմար մեկն էլ չկար, որ հարձակումը վարեր» [1]:

Մինչ Վարդանն իր մարտիկներով նման տատանվողական մտորումների մեջ էր, կռիվը Կեմում ավելի ու ավելի էր ծավալվում: Այդ օրն ընթացող մարտում ֆիդայիները դարձյալ փայլում են իրենց մարտավարությամբ, գործելու արագությամբ ու համարձակությամբ: Անգղ գետի կամրջի մերձակայքում գտնվում է մի բլուր, որը իշխող դիրք ունի շրջակա միջավայրում: Հակառակորդը, ճիշտ գնահատելով այդ բլուրի նշանակությունը, քուրդ հեծյալների ուժերով փորձում է տիրել այն: Եթե քուրդ հեծյալներին հաջողվեր գրավել բլուրը, ապա նրանք մարտադաշտում ձեռք կբերեին վճռական գերազանցություն, և ֆիդայիներն անխուսափելիորեն կհայտնվեին շրջափակման մեջ: Սակայն անբասիր էին ֆիդայիների գործողությունները: Նրանք կանխելով քուրդ հեծյալներին՝ գրավում են բլուրը, համապատասխան դիրքեր ընտրում և պատրաստվում դիմագրավելու հակառակորդի գրոհները:

Քանի որ Արտոս լեռը այնքան էլ հեռու չէր գտնվում, ուստի նրանք մտադրվում են, քանի դեռ ամբողջովին չէին ենթարկվել շրջափակման, հուժկու հարվածով հաղթահարել արգելապատնեշն ու գնալ Արտոս: Բայց նրանց նաև մտահոգում էր մարագում գտնվող զինակիցների ճակատագիրը և այդ պատճառով հրաժարվում են Արտոս մեկնելու մտադրությունից ու որոշում մնալ բլրի վրա՝ դիրքերում և շարունակել կռիվը:

«Արտոսը, - նշում է Արամայիսը, - ձիանափառ գագաթով մեր դիմացն էր. եթէ այնտեղ լինէինք եւ ամբողջ Տաճկաստանը մեզ վրայ քայլէր, երկիւղ չէինք ունենայ... Դարմօն առաջարկեց՝ քանի որ թշնամիները բաժան-բաժան են, իրար հետ միանալու, շղթայ կազմելու համար չեն հոգում, խփենք անցնենք Արտոս, ամէնքս ընդունեցինք նրա առաջարկութիւնը, բացի Պետրոսից, որն առարկեց, թէ գուցէ մեր ընկերները Կէմում դեռ կենդանի են եւ մեզ պիտի հասնեն» [2]:

[1] Խանասորա Վարդան, էջ 170:
[2] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:

Ֆիդայիները համաձայնելով Պետրոսի առաջարկությանը, որոշում են սպասել մինչև մութն ընկնելը: Իսկ այդ ընթացքում հակառակորդի մարտաշարքերը գնալով ավելի ու ավելի են ստվարանում:

«Մինչ այս, մինչ այն, - նշում է «Դրօշակ»-ի հոդվածագիրը, - հաւար հաւարի ետեւից թռաւ դէպի Ոստան եւ շրջակայ քրդերի գիւղերը՝ մի կամ երկու ժամւայ ընթացքում ձիաւորների եւ ոտնաւորների ահագին բազմութիւնը՝ գայլերի վոհմակների նման, եկան թափեցան մեր չորս կողմը...մենք 10-12 հոգով նստել էինք բլրի վրայ՝ շրջապատուած այդ անթիւ բազմութեամբ» [1]:

Թուրք զինվորներն ու նրանց միացած քրդերն անընդմեջ հարձակումներ են գործում բլրի վրա ամրացած հայ մարտիկների դիրքերի վրա: Թվում է, թե մի բուռ մարտիկների ուժերից վեր էր դիմագրավել հարյուրավոր զինվորների ու քուրդ զինյալների հարձակումները: Սակայն ֆիդայիները սառնասրտորեն մարտնչելով, միաժամանակ իրենց ուշադրությունն են բևեռում այն մարագի վրա, ուր տակավին գտնվում էին իրենց ընկերները:

«Ես ու Գուրգէնը, - շարունակում է Արամայիսը, - հարաւային կողմն էինք պահում: Յանկարծ Ոստանայ կողմից սրարշաւ ձիաւորների խումբ երեւաց, որ Ղզլդաղի ձորը կտրելով՝ ուզում էր արեւելեան դիրքի քրդերի հետ միանալ: Մի քանի րոպէում ես ու Գուրգէնը քառասնաչափ փամփուշտ արձակեցինք... Ձիաւորները ետ խաղալով՝ ձորը մտան...» [2]:

Ինչպես նախորդ մարտերում, այս անգամ ևս իրենց ծանրակշիռ խոսքն են ասում հեռահար մոսինները ու նրանց հմտորեն տիրապետող հայ ֆիդայիների վարպետությունը: Քուրդ հեծյալները, որոնք փորձում էին մոտենալ բլրին, գտնվելով 1500-2000 մետր հեռավորության վրա, գնդակահար ցած էին գլորվում բլրի գագաթից արձակած կրակոցներից: Քրդերը, սարսափելով հայ մարտիկների հեռահար դիպուկ հարվածներից, այլևս չէին համարձակվում մոտենալ բարձունքին: Թեպետ բարձունքում դիրքավորված ֆիդայիները արդեն գտնվում էին ավելի ապահով կացությունում, բայց նրանց գլխավոր մտահոգությունն ու անհանգստությունն պատճառողը գյուղի մարագում պատսպարված զինակիցների ճակատագիրն էր: Ուշադրությամբ հետևելով հակառակորդի շարժումներին՝ հայ մարտիկները կռվի ընթացքում միմյանց հարցնում էին .

« - Տղերքը չերեւացին,- հոգոց հանելով ասաց Գուրգէնը:

Դեռ այս խօսքի վրայ էինք, մեր ընկերներն էինք ողբում, երբ Կէմի կողմից մոսինների եւ մարտիկների խառն ձայները հասան մեր ականջին...» [3]:

Շուտով, հուրախություն բլրի վրա դիրքավորվածների, գյուղի կողմից լսվում են մոսինների համազարկերի ձայները: Մարագում պատսպարված մարտիկները, օգտվելով այն հանգամանքից, որ հակառակորդի հիմնական

[1] «Դրօշակ», 1897, թիւ 1, էջ 5:
[2] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 150:
[3] Նույն տեղում, էջ 151:

ուժերը գրոհում են բլրի վրա դիրքավորված իրենց զինակիցների վրա. ծակում են մարագի պատերը, արագորեն դուրս են գալիս և կռվելով շարժվում դեպի բլուրը ու «Քիչ յետոյ, - նշում է Ա. Նորյանը, - նրանք «ուռաներով» իրար են հանդիպում. դիրքերի վրայ այժմ 20 կուռղ կար: Թիւրք զինուորները, միացած քրդերին, աշխատում են բլուրը գրաւել, բայց 2500 ոտի վրայ ձգող մոսինների գնդակները յետ են մղում նրանց: Մութն արդէն վրայ է հասնում եւ թշնամին, ըստ սովորութեան, աշխատում է իր վերջին ճիգը թափել»[1]:

Թշնամու վերջին գրոհները նույնպես ապարդյուն էին:

Երեկոյան, երբ արդեն մութն ընկել էր, մարտախմբի հրամանատարներից Ախպերը, դիմելով մարտիկներին կանչում է.«- Տղերք, մութն ընկել է, բլրից իջնելու ժամանակն է...»[2]:

Ամբողջ օրն ընթացող կռիվներում թեև ֆիդայիները հոգնել էին, բայց տրամադրված էին մարտականորեն: Նրանք բլրից իջնում են ձորը և այնտեղով հոսող առվակի ջրով հագեցնում ծարավն ու ապա վճռում բարձրանալ Արտոս ապա անցնել Շատախ: Նրանք դեռևս չէին հասցրել քննարկել իրենց վերջնական անելիքները, երբ հանկարծ հայտնվում են թշնամու հեծյալները: Հապաղելու ժամանակ չկար: Ֆիդայիները դուրս են գալիս հակառակորդին ընդառաջ ու «...Պատրաստի հրացաններս ի նշան վերցրինք եւ երկու անգամ միմեանց ետեւից կրակեցինք բազմութեան մէջ... մթութեան միջից վիրաւորների ոռնոցն ու ընկնողների թրմփոցն էր լսւում...»[3]:

Գիշերային մթության մեջ դիմահար հարվածներով հայդուկները գնդակահարում են հեծյալներից մի քանիսին, իսկ մյուսներին փախուստի մատնելով շարժվում դեպի Արտոս լեռը՝ նպատակ ունենալով այդ սարի վրա մի փոքր հանգստանալ և որոշել իրենց հետագա անելիքները:

«Խոնջալի էր, - շարունակում է Ա. Նորյանը, - տղաների դրութիւնը: Երրորդ օրն էր, հացի երես չէին տեսել. Կէմի 9 հացն էլ (նկատի ուներ կնոջ բերած չոր հացերը-Հ.Գ.) մնացել էր մարագում: Նրանք փորձում են գարու հասկերը մաքրել եւ ուտել, բայց անյաջող է անցնում այդ փորձը եւ ստիպւած են լինում ստամոքսները լեցնել՝ սինձ եւ աւելուկի թեւեր ուտելով: Հետեւեալ գիշերը նրանք հասնում են մի հայաբնակ գիւղ, ուր մի քանի գարի հացով իրենց քաղցն են յագեցնում»[4]:

Ֆիդայիները հայկական գյուղում մնում են մի քանի օր, որտեղ նրանց վերջապես գտնում է Վարդանի ուղարկած սուրհանդակը՝ Նախոն:

Վարդանի սուրհանդակի՝ Նախոյի հայտնվելը մեծ ուրախություն է պատճառում հայդուկներին, իսկ ճանապարհին նրա ու զինյալ քրդի միջև տեղի ունեցած միջադեպի հետևյալ զվարճալի պատմությունը ավելի է ոգևորում նրանց:

[1] Նորեան Ա., նշվ. աժխ., էջ 277:
[2] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:
[3] Նույն տեղում:
[4] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 277:

Նախոն Վանի «Պստիկ կուի» ժամանակ եղել է Միքոյի մարտախմբի կազմում: Երեկոյան՝ Այգեստանից դուրս ելնելիս, նրանք հանդիպում են Վարդանի մարտախմբին: Երկու օր ընթացած մարտերի հոգից մեծագույն դժվարությամբ նոր-նոր դուրս եկած ֆիդայիներին տանջել է ոչ միայն հոգնածությունը, այլև քաղցածությունը: Վարդանը Նախոյին ուղարկում է Ղզլդաղ գյուղ՝ ուտելիք բերելու: Նախոն կատարում է հանձնարարությունը և ուտելիքի պաշարով բեռնված՝ վերադառնում, սակայն նախանշված վայրում չգտնելով Վարդանենց խմբին, շարժվում է դեպի Շատախ՝ հույս ունենալով այնտեղ հանդիպել իր զինակիցներին:

«Արտոսը, - պատմում է Նախոն, - նոր շուռ էի եկել, մի քուրդ բէկի խօլամքեար ճանապարհին ինձ բռնեց, ասելով, որ ես «ֆըդայի» եմ, ինձ պէտք է տանի Վան, հիւրընմաթին յանձնելու»[1]:

Նախոյի մոտ ոչ մի զենք չի եղել, իսկ քուրդը, որը հսկայատիպ տղամարդ էր, զինված է եղել հրացանով և զույգ դաշույններով: Նախոն շատ լավ հասկացել է, որ քուրդը ցանկացած պահի կարող էր փոխել Վան տանելու մտադրությունը ու սպանել իրեն: Քրդից ազատվելու միակ ելքը նրան սպանելն էր: Բայց ինչպե՞ս, քուրդը շատ լավ զինված էր, իսկ ինքը անզեն.

Մի առ ժամանակ, - շարունակում է Նախոն, - գնացի, գնացի եւ մտքումս «եա՛ Տէ՛ր- Աստուած» կանչելով՝ յանկարծ երեսս շուռ տուի, կայծակի արագութեամբ վրայ թռայ, ջուխտ եաթաղանները դուրս չանթեցի պատեանից, եւ շեշտակի՝ մինչեւ երախակալները նրա կողերը մղեցի...

- Կեցցէ՛ Նախս, ապրի Նախսօն,- հիացած կանչեցինք մենք,- ուրեմն ունեցած զէնքերդ ու շորերդ նրա՞նն են »[2]:

Իր հուշերում անդրադառնալով նաեւ Սերեմջյանի գլխավորած մարտախմբի գործունեությանը՝ Վարդանը նշում է.

«Շատախում տղաները մի քանի օր փնտրում են ինձ, բայց չեն գտնում: Գնում են Սիվտկին, որտեղ լավ ընդունելություն են գտնում գյուղացիներից: Ապա նորից անցնում են Հայոց Ձոր, ուր Կեմա սարում մի թեթև ընդհարում են ունենում: Այնտեղից գնում են Վարագա սար, ուր նրանց միանում են մի քանի արմենականներ, եւ բոլորը միասին շարժվում են դեպի Պարսկաստան»[3]:

Վարդանն իր հուշերում չի նշում, որ մինչև Պարսկաստան հասնելը Սերեմջյանի մարտախումբը ևս մի ընդհարում է ունեցել, որն իր դաժանությամբ ու ընդգրկումով ոչնչով չի զիջել նախորդ մարտերին:

Այս պարագայում անհասկանալի և տարօրինակ են Վարդանի դիրքորոշումն ու նրա խմբի ցուցաբերած հանգստությունը: Նրանք շատ լավ տեղյակ էին, որ Գուրգենի ու Պետոյի խմբերը հայտնվել են դժվարին իրավիճակում և փորձ չեն ձեռնարկել որևէ ձևով օգնել իրենց զինակիցներին: Վարդանն իր այդ անվճռա-

[1] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:
[2] Նույն տեղում:
[3] Խանասորա Վարան, էջ 171:

կան քայլն արդարացնում է նրանով, որ ինքը հիվանդ էր և չուներ արժանի փոխարինող: Բայց չէ՞ որ նրա մարտախումբը համալրված էր այնպիսի մարտիկներով, որոնք, իր իսկ խոստովանությամբ, իրենց քաջաբար էին դրսևորել Շատախի ինքնապաշտպանական մարտերում ու Վանի «Պստիկ կռվում» և արդեն ձեռք էին բերել մարտական նշանակալի փորձառություն [1]:

Եթե նրա փաստարկը նույնիսկ ճիշտ է, այնուամենայնիվ, նա պարտավոր էր ինչ-որ քայլեր ձեռնարկել ու օգնության հասնել իր մարտական ընկերներին:

Վարդանի պատմածում կա մի բացթողում ևս: Կեմի կռվից հետո Պետոյի մարտախմբին չի հաջողվում ապահով, առանց որևէ խոչընդոտի անցնել Պարսկաստան: Այնտեղ ուղևորվելիս, սահմանագլխին՝ Ախոռկա լեռների մոտ, մարտախմբին, որը համալրվել էր Վանից եկած մարտիկներով, սպասում էր ևս մի նոր փորձություն: Մարտախումբը դեռ նոր էր հասել Ախոռկա լեռներին, երբ նրա առաջապահները լուսաբացին հանդիպում են մի քրդի, որը նկատելով զինված մարդկանց, հետաքրքրվում է նրաց ով լինելով: Ֆիդայիներն այստեղ թույլ են տալիս մի չմտածված քայլ: Նրանք, փոխանակ գնդակահարելու քրդին, որպեսզի քողարկեին իրենց այդ վայրում գտնվելու իրողությունը, միամտաբար բաց են թողնում նրան՝ հավատացնելով, թե իբր իրենք՝ թուրք զինվորներ են (ասկեար): Իսկ քուրդը կռահելով, որ նրանք հայ ֆիդայիներ են, գնում և նրանց մասին հայտնում է Ախոռկայի քրդերին ու Մարայ գյուղաքաղաքում տեղաբաշխված թուրք զինվորներին: Մարտիկները բարձրանում են Ախոռկա լեռը, մտնում քարանձավներից մեկի մեջ և աշխատում չորացնել իրենց թրջված շորերը: Երկու ժամ քարանձավում անցկացնելուց հետո նրանք իջնում են ձորը և տաքանալու նպատակով կրակ վառում ու ապահովության նկատառումով որոշում գիշերն անցկացնել լեռան լանջին: Խմբի անդամներից մի քանիսը շրջում են լեռան լանջերը, որպեսզի գիշերելու համար հարմար քարանձավներ գտնեին, իսկ մյուսները բոլորում են կրակի շուրջն ու հանգիստ խորհում իրենց անելիքները: Հանկարծ «Հո՜յ-հո՜յ» - լերան կատարից լսեցինք խառնիխուռն աղաղակներ: Ուշադրությունդարձրինք վերեւ, ձիաւոր զինուորները սեւ մրջիւնների նման սփռուել էին մեր դիմացի սարի վրայ: Նրանց յիմարութիւնը մեզ զարմացրեց. եթէ ուզենային կարող էին առանց իրենց գոռում-գոչիւններով մեզ իմացնելու իրենց գոյութիւնը, յետ դառնալ եւ միւս կողմից թիկունքից յարձակուելով, ահագին հարուած հասցնել մեզ»[2]:

Ֆիդայիների համար հակառակորդի սխալ մարտավարությունը, բարձրացրած աղմուկ-աղաղակը փրկարար էին: Նրանք իսկույն ոտքի են կանգնում և Պետոյի հրահանգով արագորեն բարձրանում սարը, բաժանվում խմբերի ու չորս հուսալի դիրքեր գրավելով՝ պատրաստվում մարտի:

Ախոռկայի կռիվն իր դաժանությամբ և հատկապես քուրդ զինյալների դրսևորած ոչ իրենց յուրահատուկ մարտավարությամբ, զգալիորեն տարբերվել է նախորդ կռիվներից: Կռվի մասնակիցների վկայությամբ քուրդ զինյալները այդ օրը կռիվ մղելու վարպետությամբ ու համարձակությամբ նկատելիորեն գերազանցում էին նախորդ՝ Կեմի և Ղզլդղի կռիվների մասնակից քրդերին: Իսկ թուրք զինվորների ներկայությունը ավելի է ոգևորել նրանց: Ախոռկայի քրդերը, որոնք ֆիդայիների հետ ունեցած բախումների շնորհիվ զգալի փորձառություն էին ձեռք բերել, գիտեին, որ իրենց հակառակորդի գլխավոր զենքը «... լոկ յանդգնութիւնն է եւ անձնազոհութիւնը»: Հայդուկներին հաղթելու համար քրդերն այդ կռվում մարտնչել են հենց այդ նույն ոգով ու մարտավարությամբ:

Ինչպես նախորդ, Ախոռկայի կռվում նույնպես իր ծանրակշիռ խոսքն է ասել հեռահար մոսիններից անվրեպ հարվածներ արձակող ֆիդայիների վարպետությունը: Այդ օրը, չնայած ֆիդայիների գործադրած գերմարդկային ջանքերին, քուրդ զինյալներին ու նրանց աջակցող թուրք զինվորներին, այնուամենայնիվ, հաջողվում է մոտենալ նրանց պաշտպանական դիրքերին: Հայ մարտիկները, հայտնվելով դժվարագույն իրավիճակում, մարտնչել են աննահանջ և հրամանատարներից ոչ պակաս վարպետությամբ: Մարտի ընթացքում տեղի ունեցած մի դիպված թեթևացնում է հայ մարտիկների վիճակը: Հակառակորդի հերթական գրոհներից մեկի ժամանակ, Պետոն հեռու տարածությունից գնդակահարում է հեծյալներից մեկին: Որպեսզի հեծյալին դուրս բերեին մարտադաշտից «...Իսկոյն սեւ զինուորականը դուրս եկաւ եւ նրան դիրքի յետեւը քաշեց: Հազիւ թէ այդ մարդը հասարակ կուռդ լինէր. Պետրոսը հեռադիտակով նայեց, «հը~մ» արաւ, եւ կարծես ինքն իրան ասաց.

- Մելիազիմին մելիազիմը (սպան սպային) կը պատասխանէ- Պետրոսն աֆիցէր էր: Եւ Պետրոս պատասխանեց: Երբ տաճիկ մելիազիմը դուրս եկաւ, բարձրաձայն հրամաններ տալով, վերեւ էր շարժուում, Պետրոսը նշան առաւ, հրացանը բացուեց եւ մելիազիմը ձեռները տարածելով՝ ձգուեց» [1]:

Ոգևորվելով իրենց հրամանատարի վարպետությամբ՝ ֆիդայիներն, այս անգամ ևս մոռանալով քաղցն ու հոգնածությունը, դրսևորում են իրենց անկոտրում կամքն ու մարտական ոգին և ազգային երգեր երգելով ու միմյանց ոգևորելով, անվրեպ նշանառությամբ գնդակահարում են բազմաթիվ թուրք զինվորների ու քրդերի և հետ մղում նրանց ձեռնարկած գրոհները:

Ներկայացնելով այդ դրվագը՝ կռվի մասնակիցներից մեկը պատմում է. «Քրդերը թագնելով քարերի յետեւում, չէին համարձակւում իրենց գլուխները դուրս հանել, վախենալով ֆիդայիների անշեղ գնդակներից: Մոսինների սարսափ ազդող գնդակները ձիաններից վար են գլորում թիւրք զինուորներին...» [2]:

Այդ օրը շատ ցուրտ է եղել: Քրդերն ու թուրք զինվորների մի մասը հերթական ապարդյուն գրոհից հետո խարույկ են վառում և խմբվում կրակի շուրջը՝ տաքանալու ու հանգստանալու: Զուգահեռաբար քուրդ հեծյալ խմբերից մեկը սրարշավ մոտենում է Գուրգենի դիրքին: Քանի որ Գուրգենի դիրքից տեսա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] «Դրօշակ», 1897, թիւ 1, էջ 11:

[1] ՀԱԱ, ֆ. 314, ց. 2, գ. 2, էջ 441:
[2] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 279:

դաշտը փակ է եղել, և թուրդ հեծյալները չէին երևում, ուստի այդ տհաճ իրավիճակը կարելի էր շտկել միմիայն ճկուն ու խելամիտ մարտավարությամբ: Անհապաղ անհրաժեշտ էր օգնել Գուրգենենց խմբին:

«Անպիտան ձիաւորներն, - պատմում է արդեն բազմիցս նշված Արամայիսը, - ուժեղ գրոհով՝ Գուրգենին, Սամուէլին, Գրէին եւ միւս ընկերներին դիրքից հանել էին, որ բաւական պատասխանատու դիրք էր. բարեբախտաբար՝ թշնամին դեռեւս չէր կարողացել այնտեղ մտնել...» [1]:

Պետոյի գլխավորած մարտիկները շտապում են օգնության, բայց նրանց չի հաջողվում ամբողջովին վնասազերծել Գուրգենի խմբի դիրքերին սպառնացող վտանգը: Նույն պահին, երբ հայդուկները շտապում էին օգնելու Գուրգենի խմբին, թուրք զինվորներն ու քրդերը ուժեղ գրոհ են ձեռնարկում արմենականների դիրքերին: Պետոն իր մարտիկներով այս անգամ շտապում է օգնելու առավել դժվարին կացությունում հայտնված արմենականներին:

Քուրդ հեծյալներն ու թուրք զինվորներն աներկյուղ և անգամ անուշադրության մատնելով մոսիններից տեղացող դիպուկ հարվածները, շարունակում են հարձակումը և մոտենալով հայ մարտիկների դիրքերին՝ կատաղի կրակ են տեղում: Կռվի մասնակիցների վկայությամբ՝ իրենց դիրքերին հակառակորդն այնպիսի ուժգին համազարկեր է տեղացել, որ իրենք անկարող են եղել գլուխը հանել ու նշան բռնել:

Այդ անելանելի ու ճգնաժամային պահին «Յանկարծ ամէն բան փոխուեց. բոլորից վերեւի, երրորդ դիրքից՝ Ախպէրը, Դարմօն և Յովսէփը դուրս էին եկել, սողալով անցել փոքրիկ ձորակը եւ թշնամու կողքին, 300 քայլի վրայ դիրք բռնել... հրացանները որոտացին, գլորեցին երկու ձիաւոր, ընկան 5-6 ձի, միւսները թռչելով ձիանց վրայ, սրարշաւ դուրս փախան»[2]:

Երբ արևն արդեն մայր էր մտնում, քուրդ հեծյալներն ու թուրք զինվորները մեկ անգամ ևս փորձում են գրոհել հայ մարտիկների դիրքերը: Կարելի է ասել, որ մահասարսուռ վտանգն արդեն մնացել էր հետևում: Հայդուկները հանգիստ դիմավորում են գրոհողներին և գնդակահարելով թշնամու մի քանի զինվորների՝ հարկադրում հակառակորդին դադարեցնել հարձակումը:

Երեսունմեկ հայդուկներ, ամրացած պաշտպանական չորս դիրքերի վրա, անճահանջ և մեծ հաջողությամբ մարտնչում են մինչև մութն ընկնելը: Թեպետ Ախոռկա լեռան լանջին տեղի ունեցած կռիվն իր բնույթով եղել է չափազանց դաժան և ընթացել ամբողջ օրը, բայց ֆիդայիները չեն ունեցել որևէ զոհ, անգամ վիրավոր: Ամփոփելով կռվի արդյունքները՝ վավերագիրը նշում է. « Վերջապէս հեռացանք կռի տեղից, առանց մի կաթիլ արիւն գցելու մեզնից, իսկ թէ թշնամին ինչքան զոհ տուաւ, Աստուած գիտէ, հաշուելը դժուար էր...» [3]:

[1] ՀԱԱ, ֆ. 314, ց. 2, գ. 2, 441:
[2] Նույն տեղում, էջ 443:
[3] Նույն տեղում, էջ 444:

Մութն ընկնելուն պես, վերջին համազարկերն արձակելով հակառակորդի ուղղությամբ, հայդուկներն անկորուստ թողնում են դիրքերը ու կտրվելով հակառակորդի հետապնդումից, այս անգամ արդեն առանց որևէ միջադեպի, անցնում են Պարսկաստան և ուղևորվում Սալմաստի Ղալասար գյուղ: Ավելի քան երկու ամիս բազում փորձություններ հաղթահարելով՝ հայդուկները հանգրվանում են Սալմաստի հայկական գյուղերում, ուր բացի նրանցից, արդեն ամիսներ շարունակ, հավաքվել էին Հայոց Ազատամարտին զինվորագրված ավելի քան 200--250 հայորդիներ, որոնք Սալմաստ էին եկել՝ մասնակցելու վրեժխնդրությամբ ձեռնարկվող Մեծ արշավանքին:

Մոտենում էին ձմռան խստաշունչ օրերը, դրսում արդեն ցուրտ էր և որևէ գաղտնիք լինել չէր կարող, որ նախատեսված Մեծ արշավանքը եղանակի աննպաստ պայմանների ու այլ խոչընդոտող պատճառների հետևանքով չէր կայանալու: Չափազանց դժվար էր լուծել մի քանի հարյուր մարտիկների - գյուղերում պահելու ու մարգելու խնդիրները:

«Խեղճ գիւղացիները, - նշում է Արամայիսը, - արդէն ամիսներով մեզ եղբօր նման պահել պահպանել էին, շարունակ իրենց գրպանից մսխելով. այժմ, եթէ ձմեռն էլ մնայինք նրանց տներում, ապա ամենքին տնտեսապէս կը քայքայէինք» [1]:

Քանի որ Մեծ արշավանքի ձեռնարկումը ձգձգվում էր և հայտնի չէր, թե երբ էր կայանալու, իսկ Սալմաստի գյուղերում մնալը այնքան էլ գրավիչ չէր, ֆիդայիներից շատերն այլևս չցանկանալով մնալ՝ հեռանում են:

Մարտական խմբի խմբապետ Պետրոս Մերեմջյանը,մեկնում է Բուլղարիա և այնտեղ Ռուստոմի հանձնարարությամբ ստեղծում հայ-մակեդոնական մարտախումբ: Պետոյի մարտախումբը հանձնարարություն է ստանում թուրք-բուլղարական սահմանի վրա գերևարել թուրք բարձրաստիճան պաշտոնիայի ու նրան փոխանակել հայ և հույն գերիների հետ: Թուրք պաշտոնիային գերևարելու ձեռնարկումը ձախողվում է: Թուրքերը ձերբակալում են Պետոյին և նրա երեք ընկերներին ու 1901 թ-ին կախաղան բարձրացնում:

Գուրգենը (Բաղդասար Մալյան, հայ ազգային- ազատագրական պայքարի ականավոր գործիչ) Խանասորի արշավանքի նախօրեին ընգրկվելով Վազգենի խմբում՝ մեկնում է Վան, ապա անցնում է Ախլաթ, միանում Աղբյուր Սերոբի խմբին [2]*:

Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյան) նույնպես հեռանում է Սալմաստից: 1905-1906թ.թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որպես մարտական խմբի հրամանատար մասնակցում է Արցախի ինքնապաշտպանական մարտերին: Նրա հեղինակությամբ լույս է ընծայվել հայ ազգային-ազատագրական պայքարի արժանահիշատակ դեպքերի լուսաբանմանը նվիրված արժեքավոր մի

[1] Արամայիս, Գաղափարի ճանապարհին, հ. 2, էջ 117:
[2] *Գուրգենի մասին մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան, Էջեր Հայոց Ազատամարտի, Երևան, 2005, էջ 169-235:

շարք գործեր . «Դաղափարի Ճանապարհին», «Ազատության Արշալույսին», «Զարհուրելի Ոճիրը», «Կարօն եւ Մարօն» և այլն:

Մարտախմբերից մեկի հրամանատար Ախպերը (Մոկացի Հարություն) մնում է գործելու Ատրպատականում և որպես հարյուրապետ մասնակցում է Խանասորի արշավանքին:

Խմբապետ Միքոն(Միքայել Ազիզ-Մելիքյան) նույնպես մնում է գործելու Ատրպատականում և Վասպուրականում: 1898թ.-ին մատնության հետևանքով, Վազգենի հետ միասին, Կոռապալ գյուղում պաշարվում են թուրք զինվորների կողմից և մինչև վերջին փամփուշտը մարտնչելով՝ զոհվում:

Քանի որ մարտախմբերի հրամանատարներն ու նրանց հետ առնչվող ՀՅԴ-կառույցների ներկայացուցիչները համապատասխան լուրջ փաստարկներով չեն բացատրում այդ մարտախմբերի մղած կռիվների հետապնդած նպատակը, ապա կարելի է ասել, որ այդ ամենը Հ.Յ.Դաշնակցության կողմից կիրառվող մարտավարության դրսևորում էր, այն է՝ հայդուկային գործողություններ, որոնք այդ օրերին որևէ դրական նպաստ չէին կարող բերել արևմտահայությանը:

Անտարակույս, վերոհիշյալ մարտերին մասնակցած հայ մարտիկների դրսևորած նվիրվածությունը, խիզախությունը և ամենադաժան պայմաններին դիմակայելու կարողությունը վեր են որևէ գովասանքից: Թեպետ ֆիդայիները ներկայացված մարտերում նվաճում են հաղթանակներ, սակայն դժվար է միանշանակորեն արժևորել նրանց գործունեության բերած իրական նպաստը Հայոց Ազատամարտին: Այնուհանդերձ մի փաստ, անժխտելի է: Իրենց հերոսական ու անբասիր գործողություններով և կեցվածքով Հայոց Ազատամարտը զարդարող մարտական ու զինատար խմբերի գործունեությունը յուրօրինակ արտացոլումն է հայ ազգային-ազատագրական պայքարի, որի ուսումնասիրությունը, մեկնաբանությունն ու պատշաճ մակարդակով մատուցելը միտվում է առավել խորությամբ ներկայացնելու Հայոց Ազատամարտն իր ամբողջական պատկերով ու նկարագրով և իր զարգացման էտապներով ու բազմազանությամբ:

1. 7. ՎԱԶԳԵՆ ԴԵՐՈՅԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՄՈՒՏՔԸ ՎԱՆ

Վանի «Պստիկ կռիվներ»- ի ավարտից, ինչպես արդեն նշել ենք նախորդ գլխում, Վարդանի եւ Բուլղարացի Պետոյի գլխավորած մարտական խմբերը մեծ դժվարությամբ դուրս են գալիս պաշարման օղակից եւ մի շարք կռիվներ մղելով ու խոչընդոտներ հաղթահարելով՝ ուղեւորվում են Սալմաստ:

Բուլղարացի Պետոյի մարտախումբը, Սալմաստի տարածքից դուրս է եկել 1896թ. հուլիսի 31-ին, և անկարող լինելով, հաստատվել ու գործել Վանում կամ երկրի մի որև շրջանում, հարկադրված հետ է վերադառնում ու նույն թվականի հոկտեմբերի 1- ին մուտք գործում Ղալասար :

Սալմաստի տարածքից մարտախմբերի մեկնելու օրից անցել էր ավելի քան երկու ամիս, սակայն ՀՅԴ ծրագրած «...գարնանը մեծ արշաւանք սկսելու» հարձակողական բնույթի ձեռնարկումը դեռևս չէր կենսագործվել, իսկ Սալմաստում հավաքված կամավորներից՝ շատերը, անհույս սպասելուց ձանձրացած, հեռանում էին [1]:

Մի ուշագրավ փաստ. Ս. Վրացյանը նշում է, որ Դաշնակցությունը, ի պատասխան թուրք իշխանությունների կողմից սանձազերծած կոտորածների և Հայկական հարցին հասցրած հարվածների, ծրագրում է 1896թ. Կարսի և Պարսկաստանի տարածքներից ձեռնարկել մարտական գործողություններ [2]:

Ավելին, ըստ Ս. Վրացյանի Հ.Յ. Դաշնակցությունը Վասպուրական ուղարկելու նպատակով կազմակերպում է մի արշավախումբ, բայց Վանի 1896 հունիսյան ողբերգական դեպքերն ի չիք դարձրին «ծրագրուած և արդէն նախապատրաստուած արշաւանքը»: Ընդ որում, արշավանքն իրականացնելու համար Թավրիզում և Սալմաստում պահեստավորել էին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, իսկ մի քանի հարյուր մարտիկներ հավաքվել և տեղավորվել էին Սալմաստի հայկական գյուղերում [3]:

Անդրադառնալով այդ նույն հարցին՝ Վրացյանը «Դրօշակ»-ին հասցեագրած նամակում ավելի որոշակիացնելով արշավանքին մասնակցողների թիվը՝ նշում է. «... մօտ երկու հազար հայդուկ կը պատրաստուին Խնուս եւ Վասպուրական արշաւել» [4]:

Պատմական վերոհիշյալ ժամանակահատվածի ուսումնասիրությունը մատնանշում է, որ այդ նույն օրերին, երբ ՀՅԴ գործիչները համանման բովանդակությամբ հագեցած նամակներ էին հասցեագրում իրենց կուսակցության պաշտոնաթերթ «Դրօշակ»-ին, կամ միմյանց, Սալմաստում գտնվող մարտիկներն

[1] «Դիւան...», հ. 1, էջ 281:
[2] «Պատմագրութիւն...». հ. Ա, էջ 305:
[3] Տե՛ս Նույն տեղում:
[4] «Դիւան...», հ. 2, էջ 636:

ու նույնիսկ ՀՅԴ Թավրիզի կենտր. կոմիտեի անդամները դույզն- ինչ տեղեկություններ չունեին, թե ինչ է իրականում կատարվում Երկրում. անգամ Վասպուրականում, որն իրենց կենտրոնացման վայրին անհամեմատ ավելի մոտ էր գտնվում: Վանից որևէ լուր ստանալու համար Նիկոլ Դումանը, այլ ելք չունենալով, հարկադրված կաշառելով, այնտեղ է ուղարկում մի պարսիկի [1]:

Դումանքնի կատարածը միանշանակորեն փաստում է, որ կապը Երկրի հետ չատ թույլ էր, կամ ընդհանրապես գոյություն չուներ: Տվյալ ժամանակահատվածում լուրջ մեծածավալ մարտական գործողություն ձեռնարկելու համար անհրաժեշտ էին բավարար մարտական ուժեր: Սալմաստում կենտրոնացած մարտական ուժերը դեռևս թույլ էին և անկազմակերպ: Պատահական չէ Բուլդարացի Պետոյի գլխավորած մարտախումբը Վան ճանապարհելիս Դումանի ցավով արտահայտած հետևյալ խոստովանությունը.«- Ա~խ, մեր խմբերի, մեր զենքերի թիվը 100- ից չանցաւ. լինէր 1000--2000 զինուած հայրուկ եւ հաց հրաշքներ կարելի էր կատարել» [2]:

Հարց է ծագում.հնարավոր էր արդյոք համանման իրավիճակում կազմակերպել ու իրականացնել «Մեծ արշավանք»:

Բնական է, որ այդպիսի մեծածավալ արշավանք չէր կարող ձեռնարկվել, մանավանդ, որ դեռևս չկային ՀՅԴ ղեկավար որևէ մարմնի՝ Ընդհանուր, Շրջանային ժողովի, կամ Բյուրոյի հստակ դիրքորոշումն ու համապատասխան որոշումը: Արշավանքը կազմակերպելու և իրականացնելու համար բացակայում էին նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Մեծ արշավանք ձեռնարկելու որոշումը, ինչպես հայտնի է, երկարատև բանավեճերից հետո, ընդունվել է 1896թ.-ի դեկտեմբերի 27-ին Թիֆլիսում կայացած ՀՅԴ ռայոնական ժողովում, ուր ի թիվս կուսակցության մարտավարությանը (տակտիկան) վերաբերող մի շարք հարցերի, որոշվում է. «Վրէժտանում (Թավրիզ, Սալմաստ-Հ.Գ.) պարտադիր ոյժ (զէնք և մարդիկ) պահել եւ յարմար դեպքում Մեծ արշաւանք գործել սահմանից» [3]:

Ընդունելով «Մեծ արշավանք» կազմակերպելու մասին որոշումը՝ ժողովն, այնուամենայնիվ, հստակ չի սահմանում արշավանքի ձեռնարկման ու իրականացման ստույգ ժամկետը և ծանուցման կարգով ընդունում է ևս մի որոշում. «Դրանց մանրամասնութիւնը եւ իրագործելը թողնում է տեղական կոմիտէներին» հայեցողությանը, որը հետագայում ավելի է խորացնում արշավանքի նկատմամբ տարբեր դիրքորոշում ունեցող գործիչների միջև եղած տարաձայնություններն ու հակասությունները:

«...Սալմաստ գտնուող գործիչներու մէջ,-- գրում է Ռուբենը,-- այդ ատենները. երկու հակամարտ հոսանքներ կային: Կարծիքներու բախում տեղի կունենար հետեւեալ հարցին շուրջ,- պէ՞տք է, արդեօք, կազմակերպել Խանասորի արշաւանքը եւ մարտական ուժերը տրամադրել այդ նպատակի իրագործման համար, թէ մարտիկներն ու զէնքերը պիտի Երկիր ուղարկել» [1]:

Մինչև Թիֆլիսի «Ընդհանուր» ռայոնական ժողովի կողմից «Մեծ արշավանք»- ի մասին որոշում կայացնելը, տարաձայնություններն ու վիճաբանությունները արշավանքի կազմակերպման վերաբերյալ ընթանում էին հիմնականում հեղափոխական երկու՝ ավագ և կրտսեր ներկայացուցիչների միջև: Իսկ այժմ, երբ արդեն «Մեծ արշավանք» ձեռնարկելու վերաբերյալ առկա էր անհրաժեշտ համապատասխան որոշումը, տարաձայնությունները փոխանակ հարթվելու, ընդհակառակը, ավելի էին խորանում: Եթե մինչ այդ Հովսեփ Արղությանն ու օրիորդ Ծաղիկը(Սաթենիկ Մատինյան, ապագա տիկին Արղության-Հ.Գ.) արշավանքի կազմակերպման կողմնակից էին, ապա այժմ՝ ճիշտ հակառակը:

ՀՅԴ Թավրիզի կենտր. կոմիտեի անդամներից ոմանք, հատկապես Հովսեփ Արղությանն ու նրա կողմնակիցները, գտնում էին, որ մարտական ուժերն ու զենքը պետք է օգտագործվեին ոչ թե նման արշավանքներ կազմակերպելու, այլ երկրում ռազմական գործողություններ ծավալելու համար:

«Ես,- պնդում է Հ. Արղությանը,- ոչ մի խելացի նպատակ չեմ տեսնում քրդական ամենակատաղի ու խոշոր ցեղի վրայ արշաւելու մէջ: Յաջողութեան ոչ մի շանս չկայ: Ի՞նչ միտք ունի գնալ ու կոտորուել նրանց վրանների առաջ: Աւելի նպատակայարմար է անցնել ուղղակի Վան» [2]:

Հետաքրքիր և ինչ-որ տեղ անհասկանալի տեսակետ է: Հ. Արղությանն ու նրա համախոհները, ինչպես նաև արշավանքի ապագա հրամանատար Վարդանը, երկյուղելով բաց դաշտում քրդական Մազրիկ ցեղի վրա հարձակում գործելուց, առաջարկում են Սալմաստում կենտրոնացած մարտական ողջ ուժերն անցկացնել Երկիր և հաստատվել ու գործել Արևմտահայաստանի զանազան շրջաններում, իսկ այդ օրերին որևէ մեկի համար գաղտնիք չլինել չէր կարող, որ սահմանամերձ շրջաններում և Արևմտահայաստանի տարածքում ամենուրեք վխտում էին թուրքական կանոնավոր զորամասերն ու քրդական ցեղախմբերը: Ջարդերից հետո, երբ Արևմտահայաստանի բազմաթիվ բնակավայրեր վերածվել էին ավերակույտերի, իսկ ժողովուրդը դեռևս ապրում էր կոտորածների սարսափներում, որքանո՞վ էր նպատակահարմար մարտախմբերի մուտքը Երկիր: Սալմաստում գտնվող ընկերները քաջատեղյակ էին Մ. Ավետիսյանի, Պետոյի և Մարտիկի խմբերի եղերական նահատակությունից հետո, երբ Վարդանը Պետրոս Սերեմջյանի և Գուրգենի հետ միասին, Մ. Ավետիսյանի, Պետոյի և Մարտիկի խմբերի եղերական նահատակությունից հետո, որի մասին արդեն նշվել է, գնացին Վան, տեղի հայությունը, զգաստանալով թուրքերի կողմից սանձազերծվող նոր կոտորածներից, մերժեց ընդունել ֆիդայիներին: Եվ իրոք, ի՞նչ օգտակար, ազգանպաստ գործ կարող էին անել մի քանի տասնյակ ֆիդայիները, երբ

[1] ՀԱԱ, ֆ. 314, ց. 2, գ. 2, էջ 177:
[2] Նույն տեղում, էջ 207:
[3] Նույն տեղում:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, էջ 120:
[2] Նորեան Ա. նշվ. աշխ., էջ 267:

ամենուրեք տեղաբաշխված էին թուրքական կանոնավոր զորամասեր և նրանց աջակցող քրդական աշիրեթներ, որոնք պատրվակներ էին որոնում՝ շարունակելու կոտորածները:

ՀՅԴ փորձառու գործիչները պարտավոր էին նկատի ունենալ ու ճիշտ գնահատել այդ իրողությունը և իրենց գործողություններում առաջնորդվել ժամանակաշրջանի առանձնահատկությամբ: Տվյալ ժամանակահատվածում մարտական խմբերի մուտքը Երկիր, ինչը և ապացուցեց ժամանակը, ոչ միայն նպատակահարմար չէր, այլև վտանգավոր էր: Եթե մարտական խմբերի մուտքը Երկիր կարող էր տեղիք տալ անկանխատեսելի վտանգավոր հետևանքների, ապա առանձին գործիչների ներկայությունը կարող էր լինել ավելի անվտանգ ու արդյունավետ: Ազատագրական պայքարը կազմակերպելու համար Երկրին անհրաժեշտ էին կարող և նվիրյալ գործիչներ:

Ըստ Ռուբենի հավաստման, այս հարցի կապակցությամբ զինակիցների տարաձայնությունները հարթեցնելու նպատակով Սալմաստ է գալիս նաև ՀՅԴ Վանի (Շամ) կենտր. կոմիտեի անդամ Վազգենը, որը «Պստիկ կռիվներ»-ի ժամանակ հիվանդացել էր, և այդ պատճառով չէր կարողացել Վարդանի ու Բուլդարացի Պետոյի մարտախմբերի հետ դուրս գալ Վանից և ստիպված մնացել էր քաղաքում[1]:

Նա ծնվել և իր ողջ կյանքն անցկացրել էր Վան քաղաքում: Ազատագրական պայքարում Վազգենն առաջնահերթ ու կարևորագույն նշանակություն էր տալիս Երկրում և հատկապես իր հայրենի Վասպուրականում գործելու ու ամրակուռ և փոխհամագործակցող մարտական կառույցներ հիմնելուն նպատակաուղղված գործունեությանը: Ուստի միանգամայն տրամաբանական է, որ «Վազգէնն էլ Վարդանի, Իշխանի(նկատի ունի Հ. Արղությանին--Հ.Գ.), ուրիշների հետ համամիտ չէր մեծ արշաւանքին դրսից»[2]:

Վանի 1896 թ. հուլիսյան ողբերգությունից հետո, թեպետ ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեն մասամբ պահպանել էր իր կառույցը և շարունակում էր գործել, սակայն Պետոյի նահատակությունը մեծ հարված էր ՀՅԴ Վասպուրականի կազմակերպության համար: Ո՞վ պիտի փոխարիներ Պետոյին՝ ու նրա նահատակված զինակիցներին վերականգնելու ու հզորացնելու ՀՅԴ Վասպուրականի կառույցները: Ժամանակը միանշանակորեն ապացուցել էր, որ Վազգենը հայ ազատագրական պայքարին դրսևորած իր նվիրվածությամբ ու կազմակերպական տաղանդով այն եզակի գործիչներից է, որն ի զորու էր ոչ միայն լիարժեքորեն փոխարինել Պետոյին, այլ նաև վերականգնել և ավելի ընդարձակել ու ամրապնդել Վասպուրականի նահանգում հիմնադրված, բայց համիդյան ջարդերի հետևանքով զգալիորեն թուլացած Հ.Յ.Դաշնակցության կառույցները:

[1] Ռուբէն, նշվ. հ. 2, էջ 120:
[2] «Յուշապատում...», էջ 396:

Ի վերջո, ինչպես հայտնի է, ամիսներ շարունակ վիճաբանությունների առարկա դարձած հարցը, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հ. Շահրիկյանի միջնորդությամբ, լուծվում է հոգուտ միջանկյալ տարբերակի. ձեռնարկել Մեծ արշավանք ու միաժամանակ թույլատրել փոքր խմբերին՝ անցնել Երկիր[1]:

Այդ նույն օրերին, երբ Սալմաստի շրջանում «Խանասորի արշավանք»-ի վերջին պատրաստություններն էին ավարտվում, ՀՅԴ Թավրիզի կենտրենտրոնական կոմիտեն և արշավանքի կազմակերպիչները վճռում են երկու մարտական խմբեր ուղարկել Երկիր՝ Վանի ու Տարոնի շրջանները, որովհետև չէր բացառվում, որ հայ մարտիկների ձեռնարկած «Մեծ արշավանք»-ի հետեւանքով, քրդերը վրեժխնդրությունից դրդված, հարձակվեին հայկական գյուղերի վրա: Այդ երկու մարտախմբերն անհրաժեշտության դեպքում պետք է պաշտպանեին հարձակման ենթարկվող շրջանների հայ բնակչությանն ու թույլ չտային քուրդ հրոսակախմբերին սանձազերծել նոր կոտորածներ:

«Խումբը, - պատմում է այդ խմբի անդամ, Խզլդաշ գյուղի բնակիչ Սահակ Ավետիսյանը, - բաղկացած 40 հոգուց, յունիսի 18-ին, գիշերուայ ժամը 12-ից յետոյ ճանապարհ ընկաւ: Ամէն մի հայդուկ զինուած էր մոսին հրացանով, ունէր վեց հարիւր փամփուշտ, խէնչալ եւ դանակ: Իւրաքանչիւրն ունէր ջրամն եւ հացի տոպրակ, որի մէջ տեղաւորուած էին 5-6 բաղարջ, հալուա, քիշմիշ, թել, ասեղ եւ այլն: Իրենց հետ ահագին քանակութեամբ դեղորայք ունէին, որ գտնուում էր Գուրգէնի մօտ»[2]:

Իր զինակիցներին հրաժեշտ տալու ու վերջին բարեմաղթանքները հղելու նպատակով՝ նրանց ճանապարհելու էր եկել նաև «Խանասորի արշավանք»-ի նախաձեռնող ու կազմակերպիչ Նիկոլ Դումանը: Նա, իհարկե, ուզում էր, որ նրանք մնային և մասնակցեին արշավանքին, բայց խմբի անդամների, հատկապես Գուրգենի Երկիր մեկնելու համոզմունքն ու ցանկությունն այնքան անսասան էին, որ ստիպված էր համակերպվել այդ իրողությանը և գալ ու ճանապարհել մարտադաշտ մեկնող զինակիցներին:

Վերհիշելով իր համար այդ անմոռանալի և հիշարժան պահը՝ խմբի անդամ Արամայիսը նշում է. «Վերջին րոպէին նա կանգնեց մեր առաջ, նայեց մեզ մի անմեկնելի փաղաքշող հայացքով, ապա ղեկավարող խօսքեր ուղղելով՝ խորհուրդներ տուաւ, եւ երբ ձայնը մատնեց նրա հոգեկան դրութիւնը, որ այնքան վարպետօրէն միշտ ծածկել գիտէ, մօտեցաւ մեզ, ու չհամբերեց, այլ համբուրեց բոլորիս մէկ-մէկ, եւ մենք ճանապարհ ընկանք՝ տանելով մեզ հետ Նիկոլի ոգին, որ կարծես համբոյրի հետ առատօրէն մտցրեց մեր սիրտը»[3]:

Մարտական խումբը Վազգենի և Գուրգենի առաջնորդությամբ գիշերը դուրս է գալիս Սալմաստի Փայաջուկ գյուղից ու Խոյի ուղղությամբ շարժվում

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 2, գ. 2:
[2] Նորեան Ա. նշվ. աշխ., էջ 267:
[3] Արամայիս, Զարհուրելի ոճիրը, 1916, էջ 164:

դեպի Սբ. Թադեի վանքը: Նրանք երեք օր մնում են վանքում, ուր նրանց է միանում Փարամազի գլխավորած 40 մարտիկներից բաղկացած հնչակյանների մարտախումբը: Մարտախմբի առաջնորդներ Վազգենը, Գուրգենն ու Փարամազը խորհրդակցելով որոշում են իրենց գործողությունների հետագա ծրագիրը: Նկատի ունենալով, որ անհամեմատ դժվար կլիներ մեծաքանակ խմբով (80 հոգի) աննկատ ու առանց միջադեպի անցնել թուրք-պարսկական սահմանը, նպատակահարմար են գտնում «...քանի որ դաշնակցական խումբն իր հետ վալադներ ունի, ամենից առաջ սահմանն անցնի, մինչև Բերկրի գաւառի Կիւր Ձոր գիւղը, որտեղից եւ վալադները պիտի վերադառնան ու Հնչակյաններին առաջնորդէին»[1]:

Դաշնակցականների խումբն առաջինն է դուրս գալիս Սբ. Թադեի վանքից և մյուս օրը հասնում Մակուի շրջան, Խանասորի դաշտի հարևանությամբ ու հանգիստ առնում ինչ-որ աղլում (ոչխարներ պահելու տեղ-Հ.Գ.): Նույն պահին հեռվից լսվում են հրացանների կրակոցների ձայները: Վազգենը, որ տեղյակ էր այդ օրը ծավալվող իրադարձություններին, ստուգում է ժամացույցը և, հուրախություն մարտիկների, հայտնում, որ համազարկերը տեղում են իրենց մարտական ընկերները, որոնք հարձակվել են Խանասորի դաշտում գտնվող Շարաֆ բեկի «Մազրիկ» ցեղի վրա: Լսելով իրենց խմբապետի հաղորդածը «... կուի ծարաւ հայդուկները «կեցցէ՛» են գոռում»[2]:

Ցերեկը նրանք անցկացնում են աղլում, իսկ երեկոյան ճանապարհ ընկնում և երեք օր անց հասնում Աբաղայի դաշտ՝ Բերկրի գավառ, Վանա լճի արևելյան կողմում գտնվող Սպահան լճի մոտ: Արշալույսին հայ մարտիկներին նկատում է հեռվում գտնվող մի քուրդ ու այդ մասին շտապում հայտնել մերձակայքում գտնվող քուրդ աշիրեթներին: Ֆիդայիները, կանխատեսելով իրենց սպառնացող վերահաս վտանգը, բարձրանում են Սպահան լճի հարևանությամբ գտնվող սարը, դիրքեր գրավում և պատրաստվում մարտի: Նրանք նախորդ կռիվների փորձառությամբ հրաշալի գիտեին, որ թշնամին իրենց երկար սպասեցնել չէր տալու: Նրանք չէին սխալվում, շուտով սարի հետևից հայտնվում են քուրդ հեծյալները և կարծես զուտ հետախուզություն կատարելու նպատակով շրջում են սարի չորս կողմերը և դեպի սարն ի վեր կրակոցներ արձակում: Ֆիդայիներն, անկարող լինելով հանգիստ դիտել քուրդ հեծյալների համարձակ տեղաշարժերը, մոսինների հեռահար հարվածներով ձիերից վայր են գլորում քրդերից մի քանիսին: Շատ չանցած՝ մարտադաշտում են հայտնվում հարյուրավոր զինվորներ ու քուրդ հեծյալներ ու գրոհում սարի բարձունքներում դիրքավորված հայ մարտիկների վրա: Քաջավարժ 40 ֆիդայիների համար, որոնք զինված էին հեռահար մոսիններով, և յուրաքանչյուրն ուներ ավելի քան 600 փամփուշտ, սարսափելի չէին հակառակորդի հարձակումները: Նրանց հեռահար ու անվրեպ հարվածները հեշտությամբ

[1] Նորեան Ա. նշվ. աշխ., էջ 267:
[2] Նույն տեղում:

կասեցնում են թուրք զինվորների ու քրդերի՝ սարն ի վեր առաջանալու բոլոր փորձերը:

«Կռիւը,- նշում է «Դրօշակ»-ի հողվածագիրը, - տեւեց մինչեւ իրիկուան մութը: Հաւար շատ տեղերէ հասաւ, երեք կողմերէ պաշարեցանք, բայց այնքան հեռաւորութիւնով՝ որ մեզ վրայ արձակած գնդակներէն շատ քչեր մեզ կը հասնէին: Կարելի է ըսել թէ մոսինը հիապէս ցոյց տաւ այդտեղ իր շնորհքը»[1]:

«Սպահան լիճ» կռվում, համաձայն կռվի մասնակից Սահակ Ավետիսյանի, թշնամու կողմից մասնակցել են նաև կանայք, որոնք փամփուշտներ մատակարարելով՝ ոգևորում էին իրենց ամուսիններին: Ֆիդայիները, թեև համաձայն ընդունված անխախտ օրենքի, երբեք զենք չէին բարձրացնում կանանց վրա, բայց այս անգամ, չհանդուրժելով նրանց պահվածքը, համազարկեր են տեղում ու ստիպում քրդուհիներին՝ լքել մարտադաշտը[2]:

Երեկոյան, մութն ընկնելուն պես, կռիվը դադարում է: Ֆիդայիները, բազմաթիվ թուրքերի ու քրդերի գնդակահարելով, չեն ունեցել որևէ զոհ:

«Թշնամին, - շարունակում է «Դրօշակ»-ի հողվածագիրը, - հեռացաւ, իսկ մենք ինչու՞ շարունակէինք սկսած գործը, այս հարցը մեզ կը նտանջէր: Ի՞նչ ընել: Սահմանագլուխը սկսած էր արդէն գործը (նկատի ունի «Խանասորի արշավանքը»-Հ.Գ.), իսկ մենք մտադրուած էինք Վան հասնիլ, եւ եթէ սահմանագլխի մեր ընկերներու Մեծ Արշաւանքի առթիւ կառավարութիւնը իր թոյնը քաղքին վրայ թափէր, կարողանայինք պաշտպանել անտէր հայ ժողովուրդը»[3]:

Իրենց ստանձնած հանձնարարությունը կատարելու նպատակով ֆիդայիները իջնում են սարից և ուղևորվում Վան: Ճանապարհին նրանք տեղեկանում են Մեծ Արշավանքի հետևանքով քրդական «Մազրիկ» ցեղի բնաջնջման իրողության մանրամասները և աճապարում շուտով հասնել Վան՝ սպառնացող աղետից պաշտպանելու քաղաքի հայ բնակչությանը:

Վանի թուրք իշխանությունները, վաղօրոք տեղեկանալով դեպի Վան ուղևորվող ֆիդայիների մասին, նրանց մուտքը խոչընդոտելու նպատակով՝ զինվորական ու ոստիկանական ուժերով փակում են քաղաք տանող բոլոր մուտքերը: Չնայած նրանց ձեռնարկած քայլերին, հայ մարտիկներին՝ այնուամենայնիվ, հաջողվում է մուտք գործել քաղաք:

Հարց է ծագում, Եթե Վանի ողջ ելքերն ու մուտքերը խստորեն հսկում էին թուրք զինվորական ու ոստիկանական ուժերը, ապա 40 զինավառ մարտիկներ ինչպե՞ս կարողացան աննկատ թափանցել քաղաք: Միթե թուրք իշխանություններն անզոր էին խոչընդոտել, որպեսզի ֆիդայիները չհայտնվեին քաղաքում: Ամենայն հավանականությամբ, նահանգի իշխանությունների համար ֆիդայիների ներկայությունը քաղաքում, ինչ-որ իմաստով, նպատակահարմար էր: Նրանք հարմար պատրվակ էին փնտրում եվրոպական տերությունների հյուպատոսներին, ի

[1] «Դրօշակ», 1897, թիւ 12, էջ 100:
[2] Նորեան Ա. նշվ. աշխ., էջ 287:
[3] «Դրօշակ», 1897, թիւ 12, էջ 100:

դեմս ֆիդայիների, ցույց տալու օսմանյան տերության դեմ ապստամբություն կազմակերպող հայ հեղափոխականներին, որոնք, համաձայն հորինած վարկածների, իրենց հակապետական անօրինական գործողություններով ապակայունացնում էին կայսրության անդորրն ու հրահրում ազգամիջյան բախումներ: Իսկ թուրքական քարոզչությունը, ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում և Արևմտահայաստանում կենսագործած հայաջինջ քաղաքականությունն արդարացնելու համար պատճառներ հորինելիս մատնանշում է նաև քուրդ աշիրեթներին, որոնց հայության նկատմամբ թշնամանքով էին տրամադրել ազգամիջյան ընդհարումներ հրահրող հայ հեղափոխական կազմակերպությունները:

Հայ մարտիկները մուտք են գործում քաղաք, և Վանի նահանգի իշխանությունները սկսում են ուղիներ որոնել՝ բանակցելու նրանց հետ: Այս անգամ ևս, ինչպես 1896թ. Վանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ, որպես միջնորդ, դարձյալ հանդես է գալիս անգլիական հյուպատոսը: Քանի որ հայ մարտիկների առաջնորդները Վազգենն ու Գուրգենն էին, ուստի նահանգապետի և հյուպատոսության ներկայացուցիչներն աշխատում էին հանդիպել ու բանակցել հենց նրանց հետ:

«Քաղաք մտնելէն ետքը, - նշում է «Դրօշակ»-ը, - անգլ. պատկառելի հիւպատոսը Մըստըր Ալէնի միջոցով փափաք յայտնեց խմբապետին հետ տեսակցութիւն մը ունենալ: Երբ այդ տեսակցութիւնը մերժեցաւ եւ ազդու կերպով ցոյց տրեցաւ այն որոշ պատճառները՝ որով իրաւունք կունենար Դաշնակցութիւնը չվստահիլ իրենց եւ կարեւորութիւն չտալ, հիւպատոսը կակղեցաւ, փրփրեցաւ, ակռաները կրճցրուց, բայց ի՞նչ օգուտ, իր կրակը չէր ազդէր ֆէդայիներուն»[122]:

Ֆիդայիների համակրանքը շահելու և Վազգենի հետ տեսակցելու նպատակով հյուպատոսը մի գրություն է ուղարկում նրան, որտեղ իր հիացմունքն է արտահայտում թուրք-պարսկական սահմանագլխին հայ հեղափոխականների կատարած քաջագործությունների մասին (նկատի ունի «Խանասորի արշավանքը»- Հ.Գ.), որը, ըստ հյուպատոսի խոստովանության, մեծ արձագանք էր գտել և հուզում առաջացրել Եվրոպայում: Հյուպատոսը ընդգծում է, որ «Անգլիոյ եւ Ֆրանսիայի մէջ առաւելապէս համակրելի եղան, երբ ստուգեցաւ մանաւանդ թէ յեղափոխականները ամենայն ազնուութեամբ չեն ուզած սպանել ոչ կին... »[2]:

Դիտավորությամբ գովեստի խոսքեր շռայլելով հայ հեղափոխականների հասցեին ու միաժամանակ քննադատելով քրդերի իրականացրած ջարդերը՝ Անգլիայի հյուպատոսը Վազգենին և Գուրգենին է ներկայացնում իշխանություններին հանձնվելու Վանի նահանգապետի առաջարկությունը, ընդսմին խոստանալով հարթեցնել հակասությունները երկու կողմերի միջև ու

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

միաժամանակ պատրաստակամություն հայտնում գործն ավարտել խաղաղությամբ ու հաշտությամբ: Այդ ժամանակ Վանի նահանգը, հանձինս չերքեզ Շեմսեդին բեյի, թեպետ արդեն ուներ իր նորանշանակ կուսակալը, բայց փաստական իշխանության ղեկը դեռևս պատկանում էր կայսրական քննիչ, Վանի կուսակալության փոխանորդ Սաադեդին փաշային, որը սուլթան Համիդի կողմից «...հայ երեւակայական ապստամբութիւնը զսպելու, 8-10000 անմեղ անձերի կոտորածի, հարիւրաւոր կոյսերի եւ պատանիների առեւանգումի, հազարաւոր տների աւերակ դարձնելու, ամբողջ Վանի գաւառը կողոպտելու եւ վայրագ գործերի առթիւ,- բարեհաճեց ի նշան կայս. գոհունակութեան շնորհել նորան Օսմանիէի ականակուռ աւագ պատուանշանը...»[1]:

Անգլիայի հյուպատոսի խոստումներն այլևս չէին կարող որևէ մեկին հավատ ներշնչել: Այդ նույն հյուպատոսի միջամտությունն ու խոստումները դույզն- ինչ չխոչընդոտեցին Վանի իշխանություններին՝ թուրքական կանոնավոր զորքի և քուրդ աշիրեթների ուժերով կազմակերպելու դեպի Պարսկաստան գնացող Ամետիսյանի, Պետոյի ու Մարտիկի գլխավորած մարտախմբերի և 800 վանեցիների ջարդը:

«Վերջնապէս, - փաստում է «Դրօշակ»-ը, - մերժողական պատասխան տրեցաւ թէ՛ հիւպատոսին, եւ թէ՛ կառավարութեան:

Բան մը պատահած չէ դեռ»[2]:

Այս անգամ, բարեբախտաբար, քաղաքում ֆիդայիների ներկայությունը տեղիք չի տալիս նոր բախումների ու արյունահեղության: Հավանաբար, Վանի թուրք իշխանությունների համար հարմար հնարավորություն էր ընձեռնվել ի ցույց աշխարհի և Եվրոպական տերությունների հյուպատոսների, իրեն ներկայացնել որպես «Խաղաղության և օրինապահության» պահապան՝ ներողամիտ ու արդարադատ իշխանավոր, իսկ հայ հեղափոխականներին՝ որպես օրինական իշխանության դեմ ապստամբություն կազմակերպողների և ազգամիջյան թշնամանք սերմանողների: Վերոհիշյալ դեպքերից հետո Վազգենը մնում է գործելու Վանում, իսկ Գուրգենը ուղևորվում է դեպի Տարոն ու Սասուն:

Հեղափոխական գործունեություն ծավալելու նրա երազանքների վայրը Հ.Յ.Դաշնակցության կողմից հայ ժողովրդի ազատագրական պայքարի կենտրոն հռչակված Սասունն էր ու Տարոնը և այդ պատճառով 10 մարտիկների (Գուրգենի խմբի կազմում էր նաեւ Անդրանիկը - Հ.Գ.) գլուխ անցած ուղևորվում է Ախլաթ ու միանում Աղբյուր Մերոբի խմբին:

[1] «Արաքս», 1898, գիրք Ա, էջ 120:
[2] «Դրօշակ», 1897, թիւ 12, էջ 100:

ԳԼՈՒԽ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ (ՏԱՐՈՆ, ՍԱՍՈՒՆ-1897-1903 թթ.)

2. 1. Խաբավինի և Ավերակ ջրաղացի հերոսամարտերը

1896-1897թթ. Հ.Յ. Դաշնակցության «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշումները զուտ մարտավարական առումով պիտի որոշակի փոփոխություն մտցնեին ՀՅԴ և, մասնավորապես, Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի գործունեությունում: Համաձայն ժողովի որոշման ոչ միայն Խանարազի ու Բերդիկի շրջանում եղած ուժերը պիտի կենտրոնանային Բարձրավանդակում և զուգահեռաբար ավելի ընդլայնվեին ու ամրապնդվեին այնտեղ գործող ՀՅԴ-կառույցները, այլև պահպանվելու էին Երկրի այս կամ այն գավառում արդեն կազմակերպված հայդուկային խմբերը, որովհետև նրանք «...ինչպես անցեալում, այնպես էլ ապագայում կարող են որոշ պաշտպանություն ցույց տալ ժողովրդին»[1]:

Հարց է ծագում. եթե պահպանվելու էին հայդուկային խմբերը, ապա ի՞նչ-պիտի անեին նրանք. շարունակեին գործել նախկին մարտավարությամբ, թե զերծ մնային հայդուկային կռիվներ մղելուց: Քանի որ այս հարցի վերաբերյալ չկար Հ.Յ.Դաշնակցության «Ընդհանուր» ռայոնական ժողովի հստակ դիրքորոշումը, ապա տեղական կոմիտեները ելակետ ունենալով տեղի և ժամանակի յուրահատկությունն ու կառույցների հնարավորությունը, համաձայն գործունեության ապակենտրոն սկզբունքի իրենք պիտի որոշեին իրենց գործելակերպն ու անելիքները:

Թեպետ այդ ժամանակահատվածում Ախլաթում, Բիթլիսում, Տարոնում արդեն որոշակիորեն կազմավորվել և գործում էին ՀՅԴ կառույցներն ու մարտական խմբերը, բայց իրականում դրանք այնքան էլ ուժեղ չէին:

Սասունում, ի տարբերություն Ախլաթ գավառի, որը զերծ էր մնացել 1895-1896 թթ. կոտորածներից, անհամեմատ դժվար էր հեղափոխական գործունեություն ծավալելը: Ժողովուրդը դեռևս չէր սթափվել 1894 թ. ջարդերի սարսափներից և զգուշանալով հնարավոր նոր ջարդերի կրկնությունից՝ այնքան էլ համակրանքով չէր վերաբերվում հեղափոխական գործիչների և ֆիդայիների ներկայությանն ու քարոզչությանը:

Գևորգ Չավուշի խոստովանությամբ. «Ես չորս ընկերներով մնացի Սասուն, ամբողջ երկու տարի առանց ղեկի էինք, ոչ մեզ պահող ունէինք, ոչ

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 31:

պաշտպանող, ոչ մի տեղէ օգնութիւն չկար, ուր որ կերթայինք կը հրէին, կը հրդմշտէին մեզ, ինչ նեղութիւններ ու չարչարանքներ քաշեցինք, զոր չեմ կարող պատմել...»[1]:

1896 թ. դեկտեմբերին, թուրք իշխանությունները ընդհանուր ներում շնորհեցին քաղբանտարկյալներին: Բազում հայ գործիչներ, որոնց թվում նաև Հրայր Դժոխքը, ազատվում են բանտերից:

Կ. Սասունու գնահատմամբ. «Հրայրը, ժողովրդական զանգուածային ապստամբութեան կողմնակից էր եւ մշտապէս կը քարոզեր ուժերու կեդրոնացում: Ան միամիտ չէր կարծելու, որ «խաչապաշտները» պիտի գային ու ազատէին հայ ժողովուրդը. ընդհակառակը Հրայր ամէն տեղ կը մղէր ժողովուրդը, որ իր յոյսը դնէ իր սեփական ուժի վրայ»[2]:

Պիտի ասել, որ Հրայրը այն եզակի գործիչներից էր, որն ի սկզբանե հավատ չընծայելով օտար տերությունների աջակցությանը, ազատագրական պայքարում մեծապես արժևորում էր սեփական ուժերին ապավինելու կարևորությունը: Այս առումով ուշագրավ և ուսանելի է 1896թ. նրա արտահայտած հետևյալ տեսակետը. «Հայ տարրը այլեւս յոյսը կտրում է խաբեբայ դիպլոմատիայից եւ իսկապէս էլ հայ ժողովրդի համար մնացել է միայն հեռուիլ իւր բարոյական ուժերի վրայ...Հա՛յ ժողովուրդ, անգութ է Եւրոպան, աւելի արիւնարբու է քան մեր դարաւոր ոսոխը. չհաւատալ նրան երբէ՛ք... Մեր յոյսը պիտի լինի մեզ վրայ միայն»[3]:

Թեպետ Հ.Յ.Դաշնակցությունն ազատագրական պայքարը կազմակերպելու վերաբերյալ ուներ իր դիրքորոշումը՝ ամրագրված ՀՅԴ ծրագրում և հաստատված 1-ին Ընդհանուր Ժողովի կողմից, սակայն գործունեության ռազմավարության և մարտավարության վերաբերող հարցերում կուսակցության ապակենտրոն կառույցների դիրքորոշումներն ու տեսակետները ընդհանրություններով հանդերձ երբեմն միատեսակ չէին և ունեին իրենց յուրահատկությունները:

Ռուբենի գնահատմամբ. «Տակաւին Արաբոյի ժամանակներէն Դուրան Բարձրաւանդակի շրջանին մէջ երկու ուղղութիւն գոյութիւն ուներ. մեկը կարելի է որակել՝ ժողովրդական-յեղափոխական, իսկ միւսը՝ ֆետայական-զինուորական»[4]:

Ինչով էր այն պայմանավորված:

1. ՀՅԴ ապակենտրոն կառույցներով գործելու սկզբունքով: Արևմտյան Հայաստանի գավառներն իրենց աշխարհագրական դիրքով, հայ և մահմեդական բնակչության կազմով ու տնտեսական կացությամբ ունենալով որոշակի ընդհանրություններ՝ միաժամանակ ունեին նաև իրենց տարբերություններն ու առանձնահատկությունները: Այդ պատճառով ՀՅԴ ծրագրում ամրագրված

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 685, գ. 1, էջ. 7:
[2] Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պէյրութ, 1964, էջ 30:
[3] «Դրօշակ», 1896, թիւ 20, էջ 149:
[4] Ռուբէն, նշվ. աշխ.,հ. 3, էջ 198:

ռազմավարության կենսագործմանը միտված մարտավարությունը յուրովի էր ընկալվում ու իրականացվում նրա ապակենտրոն կառույցների կողմից:

2. ՀՅԴ գործիչների անհատականությամբ: Թեպետ Դաշնակցությանը անդամագրվածների, հատկապես Երկրում գործող, գերակշիռ մասը իրենց գործունեությամբ ապացուցել էին, որ իրենք ազգային - ազատագրական պայքարի նվիրյալներ են, բայց նրանցից յուրաքանչյուրը իր բարոյա-հոգեբանական կերտվածքով, մտավոր կարողությամբ ու գաղափարական համոզմունքով միևնույն խորությամբ չէին կարող ընկալել ու արժևորել ժամանակաշրջանի առանձնահատկություններն ու ազատագրական պայքարի առավել արդյունավետ ձևերն ու միջոցները:

Ընդհանուր ապստամբության կազմակերպման մարտավարությունը զարգացրել ու իրենց գործունեության մեջ դրանով առաջնորդվել են ՀՅԴ որոշ գործիչներ, որոնցից ամենահետևողականը Հրայր Դժոխքն էր՝ Տարոնում և Սասունում, Վազգենը, ապա նաև Վարդգեսը (Հովհաննես Սերենգուլյան) Վասպուրականում, Գուրգենը՝ Բիթլիսի նահանգում, իսկ մի փոքր ավելի ուշ՝ Աշոտ Երկաթը:

Երկրում գործելու տարիներին, նաև նամակագրության միջոցով, առավել սերտորեն համագործակցել են Հրայրը, Գուրգենն ու Վազգենը, որոնց տեսակետները ՀՅԴ գործունեության, ազատագրական պայքարի ռազմավարության և մարտավարության, այն է՝ ընդհանուր ապստամբության կազմակերպման ու կենսագործման վերաբերյալ, ունեին որոշակի ընդհանրություններ: Վազգենին հասցեագրած նամակում (1897 թ. հոկտեմբերի 20), ներկայացնելով ազատագրական պայքարը կազմակերպելու իր տեսակետը, Հրայրը նշում է. «...մանրմունր ուժերով, հայդուկային ուժերով գործ սկսել՝ ժողովրդին ապարդիւն կորստեան պատճառ դառնալ ըսել է, մեզ մնացել է միայն մեր ամէն ջանքերը չխնայել եւ մի քանի հարմար պունկտերում բաւականաչափ ուժ կենտրոնացնելով գործի սկսել...»[1]:

Նրա կարծիքով Երկրում ծավալած որևէ շարժում, անգամ Սասունի 1894 թ. դեպքերը, ազդեցություն չեն թողնելու «... այդ լիրբ քաղաքական աշխարհի վրայ»: Ելակետ ընդունելով այդ նախադրյալը՝ Հրայրը եզրակացնում է. «Երկրի խորքում սկսել մի այնպիսի ձեռնարկ, որ ստանար լայն ծաւալ եւ վերջնականապէս որոշում մը տար ժողովրդի ներկայ անտանելի կացութեան»[2]:

Համանման տեսակետ «Դրօշակ»-ին գրած նամակում (1897 թ. նոյեմբերի 22) զարգացնում է նաև Վազգենը. «Եթէ կուսակցութիւնը առանձին ուշադրութիւն դարձնէ շատ գեղեցիկ ծրագիր մը շատ փառաւոր կերպով կարելի է իրագործել 2-3 տարիէն՝ միաժամանակ դրօշակ պարզելով Քարէ-Ժայռէն (նկատի ունի Դերսիմը-Հ.Գ) մինչեւ Ծովասար (Սասուն-Հ. Գ.) եւ մինչեւ Վասպուրական) : Գործը շատ մեծ կլինի եւ արդյունքը փառաւոր ու եթէ մանրամասնութեանց մէջ մտնենք

[1] «Հայրենիք» ամս., 1944, թիւ 3, էջ 100:
[2] Նույն տեղում:

լուրջ կերպով իմաստատելու գործը, ապա պիտի հաւատանք, որ կարելի է, Քարէ- Ժայռեն, Ծովասար, Ծիրանակատար (Մուշ-Հ.Գ.), Յամաք-Ձոր, Նեմրութ (Ախլաթ), եւ Վասպուրական իրար կապուած են, հաղորդակցութիւն իրար հետ հնարաւոր է եւ շատ դիւրին...»[1]:

Պայքարի մարտավարության վերաբերյալ առկա տարաձայնությունները մասամբ հստակեցվեցին, երբ կայացավ ՀՅԴ 2-րդ Ընդհանուր Ժողովը (1898 թ. ապրիլին), որի ընդունած որոշումների մեջ կենտրոնականը «Տակտիկա կամ գործունէութեան եղանակ» վերաբերյալ կայացրած «Ուժերու Կեդրոնացում կամ ապստամբութեան նախապատրաստութիւն» որոշումն է:

ՀՅԴ 1896-97 թթ. «Ընդհանուր» ռայոնական ժողովում արդեն ընդունել էր ուժերը Բարձրավանդակում կենտրոնացնելու մասին որոշում, բայց մի էական տարբերությամբ: Եթե «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշմամբ պիտի պահպանվեին գավառում արդեն կազմակերպված հայդուկային խմբերը, ապա 2-րդ Ընդհանուր ժողովը մերժում է «ֆէտայական ասպատակային գործունէութիւնը» և ընդունում «մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիր»[2]:

Ճիշտ է, Ընդհանուր ժողովը թեև ընդունել է այդ որոշումը, բայց դա և կուսակցության հետագա գործունեությունը, հատկապես Տարոնում ու Սասունում (1901 թ. Առաքելոց վանքի կռիվը, Գևորգ Չավուշի հայդուկապետության շրջանը՝ 1904-1907 թթ.) հիմք չեն տալիս պնդելու, որ ՀՅԴ ընդհանուր ապստամբության կազմակերպումը հաստատապես դարձրել էր իր մարտավարությունը, բացառելով ֆիդայական, առանձնակի մարտական և ցուցական գործողությունները: Ավելի ճիշտ «Ուժերու կեդրոնացում կամ ապստամբութեան պատրաստութիւն» որոշումը նախապատրաստական փուլն է ընդհանուր ապստամբության կազմակերպմանը, ինչի մասին ամրագրված է Ընդհանուր ժողովի օրակարգի «Կեդրոնացում» կետի հետևյալ բացատրությունում. «Կեդրոնացման» գործն է, որ պիտի ամրապնդէ ժողովուրդի հոգին, պիտի սովրեցնէ անոր իր բազուկներուն վստահելու յարատեւութեան մէջ գործին պսակումն ակնկալելու... եւ, վերջապէս, պիտի պատրաստէ մեծ գործը–յեղափոխական ընդհանուր շարժումը բովանդակ Հայաստանի մէջ...»[3]:

Այստեղ հարկ է ընդգծել, որ ազատագրական պայքարի ուղիներում որևէ կուսակցության, այդ թվում նաև Հ.Յ. Դաշնակցության որդեգրած մարտավարության առանձնահատկությունն ու միջոցներն արժևորելիս չպետք է առաջնորդվել սոսկ Ընդհանուր ժողովների և ղեկավար մարմինների որոշումներով: Կուսակցությունների գործունեության գնահատման իրական արժեքներն ու չափանիշներն առավել հստակությամբ երևում են նրանց գործնական ձեռ-

[1] Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 59:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 58:

նարկումներն ու կատարած գործերը վերլուծելիս և անհրաժեշտ եզրահանգումներ կատարելիս:

Եթե նույնիսկ ընդունենք, որ «Տակտիկա կամ գործունէութեան եղանակ»-ի վերաբերյալ ընդունած «Ուժերու կեդրոնացում կամ ապստամբութեան պատրաստութիւն» որոշումը նշանակում է ընդհանուր ապստամբության կազմակերպում, ապա հարց է ծագում՝ ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով էր Հ.Յ. Դաշնակցությունը իրականացնելու իր որոշումը:

Ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար ՀՅԴ, ի թիվս մի շարք հարցերի, պետք է լուծեր կարևորագույն հետևյալ խնդիրը.

1. Արևմտահայաստանում կազմակերպել միմյանց հետ սերտորեն համագործակցող ու շաղկապված հզոր կառույցներ, որոնք անհրաժեշտ պահին պիտի ազատագրական պայքարի դրոշը պարզեին առավելագույնս կազմակերպված և միասնական: Իսկ որպեսզի Արևմտահայաստանում կազմակերպվեին համանման կառույցներ, անհրաժեշտ էին, ա. Ազգային-ազատագրական պայքարին անվերապահորեն նվիրված, ժողովրդի հետ աշխատելու, նրան կազմակերպելու ընդունակ գործիչներ, որոնք ոչ միայն պիտի օժտված լինեին մտավոր և կազմակերպական համապատասխան կարողություններով, այլև մարտական ոգով ու գործը մինչև հաղթական ավարտ հասցնելու կամքով ու պատասխանատվությամբ:

Հարց է ծագում, իսկ ՀՅԴ որտեղի՞ց և ինչպե՞ս ի զորու կլիներ պատրաստելու իր կառույցները համալրել համանման կարողություններով օժտված գործիչներով: Իսկ այդ նույն օրերին Դուրան-Բարձրավանդակի և Շամի կենտր. կոմիտեներն ի դեմս իրենց ներկայացուցիչներ Գուրգենի ու Վազգենի, ՀՅԴ Բյուրոյին հասցեագրած դիմումներով պահանջում էին Երկիր ուղարկել այնտեղ աշխատելու ընդունակ և կարող գործիչներ[1]:

2. Մարտական ուժերը գինելու համար զենք և զինամթերք: Որպեսզի մոտավոր պատկերացում կազմենք, թե ինչ քանակությամբ զենք էր անհրաժեշտ ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար, վկայակոչենք ՀՅԴ Շամ կենտր. կոմիտեի անդամ Վազգենի ընդհանուր ժողովին հասցեագրած նամակը, որը յուրօրինակ ծրագիր է ՀՅԴ ապագա գործունեության:

«Մասնակի թեթեւ շարժումները,– գրում է Վազգենը,– անպայման կերպով իրենց շրջանը լրացուցած ըլլալով՝ անհրաժեշտ է այսուհետեւ խորհել լուրջ, դրական գործունէութեան մը համար, որու ուժեղութեան շնորհիւ հնար լինի ուժգին ցնցում առաջ բերել եւ վերջնականապէս վճռել հայկական հարցը: Այդ լուրջ գործունէութեան համար՝ Վասպ. Կեդր. Կոմիտէն աչքի առաջ ունի՝ Քարաժայռ (Դերսիմ), Ծովասար (Աբրոյի-Գերեզման, Սասուն), Շամի (Վան) եւ Ասորեստան (ասորիներ): Այս չորս տեղերը իրար հետ կապուած՝ կարելի է հաղորդակցութիւնը մշակել եւ միեւնոյն ծրագրով գործ սկսել:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1942, թիւ 4, Գուրգենի նամակները, էջ 11:

Առաջին երեք տեղերու մէջ պետք է կեդրոնացնել զէնքի մեծ ուժեր - իւրաքանչիւրի մէջ գոնէ պատրաստել 500-700-ական հրացանով կազմակերպած ուժեր: Իսկ չորս տեղերու մէջ մտցնել մեծ քանակութեամբ իր (նկատի ունի պայթուցիկ նյութ - Հ.Գ.): Ասորեստանի համար 2-3 գաղափարական գործիչներ եւ 1-2 թեթեւ հայդուկային խումբեր բաւական են ոտքի հանելու Ասորոց մելիքները»[1]:

Վազգենի մատնանշած թվերը, կարելի է ասել, ավելի քան համեստ են: Օսմանյան կայսրության դեմ ընդհանուր ապստամբություն կազմակերպելու և այն հաղթական ավարտին հասցնելու համար, անկասկած, անհրաժեշտ էին ավելի մեծաքանակ զենք ու զինամթերք:

3. Մարտական ուժեր կազմակերպելու և դրանք ըստ ամենայնի զինելու ու հանդերձավորելու համար հարկավոր էին ֆինանսական հսկայական միջոցներ: Ինչպե՞ս, որտեղի՞ց կամ ու՞մ աջակցությամբ ՀՅԴ կկարողանար ձեռք բերել այդ գումարները և լուծեր ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար պահանջվող խնդիրները:

1897 թ-ից մինչև 2-րդ Ընդհանուր Ժողով (1898 թ.) Կովկասից և Պարսկաստանի տարածքներից Երկիր են մեկնել հետևյալ մարտական ու զինատար խմբերը. 1. Վազգենի 2-րդ խումբը, 1897 (Սալմաստ-Վան), 2. Ճարտարի, 1897 (Կարս-Ախլաթ), 3. Ճարտարի, 1897 (Կարս-Մանազկերտ-Ախլաթ), 4. Փոխիկի (Օհան Օհանյան, Վահրամ Հովհաննիսյան), 1898 (Սալմաստ-Վան), 5. Մեպուհի և Սեբաստացի Սաքոյի, 1898 (Կարս-Տարոն-Սասուն)[2]:

Թվարկած մարտական խմբերն ու Արևմտահայաստանի զանազան շրջաններում եղած ուժերն իրենց թվակազմով, զինվածությամբ ու կազմակերպվածությամբ ոչ միայն բավարար չէին ապահովելու Արևմտահայաստանի ինքնապաշտպանությունը, այլև առավել ևս բավարարել ընդհանուր ապստամբություն կազմակերպելու պահանջները: Անհրաժեշտ էր գործող մարտական ուժերը բազմապատկել, զինել և դարձնել առավել մարտունակ ու կազմակերպված: Այդ ամենի համար հարկավոր էին ֆինանսական միջոցներ, որոնց ձեռք բերումը չափազանց դժվար էր, գրեթե անիրագործելի:

Մ. Վարանդյանը Խանասորի արշավանքի օրինակով նշում է դրամական այն միջոցները, որոնք ծախսվել էին այդ արշավանքը կազմակերպելու համար: «Իսկ այդ ձեռնարկը խլել էր Կազմակերպութենէն ոչ պակաս քան 40000 ռուբլիի ծախքայն ժամանակուան չափով պատկառելի գումար մը»[3]:

Հարց է ծագում՝ եթե մի արշավանք իրականացնելու ժամանակ ծախսվել էր 40000 ռուբլի, Մ. Վարանդյանի գնահատմամբ «... այն ժամանակվան չափով պատկառելի գումար մը», ապա, ինչպիսի՞ ֆինանսական միջոցներ էին պահանջվում ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար:

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 48:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 681, գ. 1, էջ 1:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 186-187:

Եթե Ընդհանուր Ժողովը որոշեր, որ Լեռնավայրը (Կիլիկիա-Զեյթուն) նույնպես պիտի դառնար «Կեդրոնացման» վայրը, ապա այդ շրջանը կազմակերպելու համար կպահանջվեին նաև նույնքան ֆինանսական միջոցներ, որքան Բարձրավանդակինը, այսինքն՝ 300.000 ռուբլի: Իսկ որքա՞ն ֆինանսական միջոցներ էին հարկավոր Վասպուրականի, Բիթլիսի, Էրզրումի և մյուս գավառների մարտական ուժերն ու բնակչության թեկուզև փոքրագույն մասը զինելու և այլ կարիքներ հոգալու համար: Իսկ, ՀՅԴ չնայած իր գործադրած ջանքերին, արդյոք ի զորո՞ւ էր ձեռք բերել պահանջվող գումարները: 1895թ. Թիֆլիսում կայացած Ընդհանուր-ռայոնական ժողովը նկատի ունենալով այդ հանգամանքը՝ նշում է. «Զենքի եւ դրամական միջոցների հայթայթումը.- Կռուի միջոցներ շատացնելը եւ դրա հետ սերտ կապուած դրամական հարցը կանոնավոր հիմքերի վրայ դնելը պիտի համարուի նոյնպէս ամենագլխավոր հարցերից մէկը»[1]:

Իր գործունեության ընթացքում անհրաժեշտ գումարներ ձեռք բերելու համար Հ.Յ. Դաշնակցությունը դիմել է զանազան միջոցների, ընդհուպ մինչև բռնի հանգանակության (1901 թ. «Փոթորիկի» գործը – Հ. Գ.), բայց, այնուամենայնիվ այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերը եղել են անբավարար հայության ինքնապաշտպանությունն ու առավել ևս ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար:

Քր. Միքայելյանը «Դրօշակ»-ում տպագրած «Պատմական չարիք» հոդվածաշարում անդրադառնալով նաև ֆինանսների ձեռքբերման խնդրում առկա դժվարություններին ու այս հարցում խարազանելով հայ մեծահարուստ դրամատերերի ոչ ազգանվեր պահվածքը, գրում է. «Հազարաւոր անհատներ կարելի է գտնել հայերիս մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր մի ամբողջ նահանգ զինել Տաճկահայաստանի մէջ: ... ամենախոշոր գումարը, որ ամբողջ հայութեան մէջ մի հատիկ մարդ նուիրել է զէնքի գործին, այդ եղել է ընդամենը 25000 ֆրանկի չափ մի ծախս ...»[2]:

4. Մարտական ու զինատար խմբերի, զենք ու զինամթերքի առաքումը:

1898թ.-ից, 2-րդ Ընդհանուր Ժողովից մինչև Աղբյուր Սերոբի նահատակվելը՝ 1899թ. ՀՅԴ Երկիր է ուղարկել հետևյալ մարտախմբերը.1. Մեպուհի և Սևքարեցի Սաքոյի խումբը: Այս մարտախումբը Երկիր չի հասել, իսկ Սաքոն ձերբակալվել ու բանտարկվել է Բիթլիսի բերդում: 2. Շաշոյի (Սոսոյան), Սալմաստ-Վան, 3. Ճարտարի 2-րդ խումբը (Խաթավինի և Ավերակ ջրաղացի կռիվը), 4. Խանի (Բարսեղ Թիրաքյան), Կարս-Ալաշկերտ (Խաստուրի կռիվը), 5. Հովհաննեսի խումբը, սբ. Թադե-Բերկրի[3]:

5. Մարտական ուժերի կազմակերպումը, զենք ու զինամթերքի ձեռքբերումը մեկ խնդիր էր, իսկ դրանք Երկրի համապատասխան վայրեր առաքելը՝ մեկ

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 20:
[2] «Դրօշակ», 1900, թիւ 9, էջ 131:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 681, գ. 1, էջ 2:

այլ, ինչը և հստակորեն ապացուցեց ժամանակը, թերևս առավել դժվարին խնդիր էր: Կովկասից կամ Պարսկաստանի տարածքից մինչև Տարոն, Սասուն, Վասպուրական ձգվող հսկայական տարածքում, հատկապես սահմանամերձ շրջաններում, տեղաբաշխված էին թուրքական զինվորական միավորումներ, որոնց գործուն կերպով օգնում և աջակցում էին քրդական զինյալ հրոսակախմբերը: Այս ամենին պետք է գումարել ռուսական սահմանապահ զորամասերը, որոնք թուրքերից ու քրդերից ոչ պակաս եռանդով և հետևողականորեն ամեն կերպ խոչընդոտում էին հայկական մարտական ուժերի, զենք ու զինամթերքի առաքմանը:

Եթե Հ. Յ. Դաշնակցության մարտավարությունը լիներ ընդհանուր ապստամբության կազմակերպումը, ապա աներկբա պիտի հաշվի առներ վերը թվարկած գործոնները, այսինքն՝ հստակ արժևորեր ժամանակաշրջանի առանձնահատկությունները, ժողովրդի հոգեբանական և գաղափարական պատրաստվածությունը, իր կազմակերպական, մարտական, ֆինանսական հնարավորություններն ու գտներ կուսակցության առջև ծառացած բոլոր խոչընդոտները հաղթահարելու առավել արդյունավետ և կենսունակ ձևերն ու միջոցները: Իսկ ընդհանուր ապստամբությունը ենթադրում է ոչ թե ուժերի կենտրոնացում մեկ վայրում՝ Բարձրավանդակ (Ընդհանուր Ժողովի որոշում է – Հ.Գ.), այլ գոնե մի քանի վայրերում միաժամանակ, որի հնարավորությունն ինչպես նշում է Ընդհանուր Ժողովը «Դաշնակցութեան արդի միջոցները չեն ներեր Բարձրաւանդակի (Սասուն), Լեռնավայրի (Զեյթուն), եւ Կռուածաղիկի համահաւասար հոգ տանել այդ վայրերու (նկատի ունի Շատախն ու Դերսիմը – Հ.Գ.) կազմակերպութեան և զինման գործին ...»[1]:

Գործունեության նոր եղանակի որոշման ընդունումը, բնականաբար, թելադրում էր, որպեսզի կուսակցությունը ավելի մեծ ծավալի աշխատանքներ իրականացներ «կեդրոնացման» վայրի, այն է՝ Սասունի մարտական ուժերն ըստ ամենայնի կազմակերպելու և առավելագույնս զինելու գործում: Իսկ Ընդհանուր Ժողովի որոշումների կենսագործումը պարտադիր էր ՀՅԴ բոլոր ապակենտրոն կառույցների, և իհարկե նաև Հ.Յ.Դաշնակցության Դուրան-Բարձրավանդակի Պատասխանատու կենտր. կոմիտեի համար:

«Ուժերու կեդրոնացում»-ը նախ և առաջ ենթադրում էր Բարձրավանդակում զենք, մարտական ուժերի կենտրոնացում: Ինչպե՞ս, ի՞նչ եղանակով ու միջոցներով ՀՅԴ պիտի կարողանար անհրաժեշտ քանակությամբ մարտական ուժեր, զենք տեղափոխեր և կենտրոնացներ Բարձրավանդակում:

Ընդհանուր ժողովում այս կարևորագույն հարցի վերաբերյալ ոչ միայն նոր որոշում չի կայացվել, այլև չի արվել նույնիսկ որևէ ուշագրավ առաջարկություն: Բնականաբար, այս հարցում Դաշնակցությունը շարունակելու էր գործել նախկին մարտավարությամբ, այն է՝ 1. Կովկասից և Պարսկաստանից Երկիր զենք ու զինամթերք շարունակելու էին տեղափոխել զինատար խմբե-

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 59:

որ. 2. Արևմտյան Հայաստանում գործող ՀՅԴ կառույցները զենք ու զինամթերք տեղափոխելու համար Կովկաս և Պարսկաստան էին ուղարկում իրենց զինատար խմբերը. 3. Զենք ու զինամթերք կարելի էր գնել տեղերում. նույնիսկ քրդերից ու թուրքերից. որն այդ ժամանակ ՀՅԴ գործունեությունում դեռևս շատ քիչ էր կիրառվում:

Զինատար խմբերից առավել նշանավորներից է Աղբյուր Սերոբի հորեղբորորդու՝ Ճարտարի (Հակոբ Վարդանյան) գլխավորած ֆիդայիների՝ զենք ու զինամթերքով բեռնված խմբի բարեհաջող անցումը Կարսից Ախլաթ:

Անդրադառնալով իր արդյունավետությամբ գրեթե հավասարը չունեցող Ճարտարի զինատար խմբի այդ գործողության արժևորմանը՝ Աղբյուր Սերոբի մարտախմբի անդամ Բիթլիսցի Պողոսը գրում է. «1897 տարուայ աշնանը խմբապետ Յակոբը (նկատի ունի Ճարտարին – Հ.Դ.) 77 (եօթանասուն եւ յօթը) հոգով Նեմրութ լեռան գլուխ եկաւ Սերոբ փաշայի քովը եւ բերաւ նաեւ 77 (եօթանասունյօթը) հրացան (հրացաններն էին մոսին, պերտանկի եւ մսլուի) եւ յանձնեց Ս. Փաշային եւ քիչ ժամանակ յետոյ խմբապետ Յակօն հետ առաւ 25 (քսանհինգ) հոգի եւ դարձաւ Ռուսաստան»[1]:

Մարտական ու զինատար խմբեր կազմավորելու և Երկիր ուղարկելու խնդիրը, ինչպես նաեւ ֆիդայական-պարտիզանական կռիվների մղումը, ահաբեկչական գործողությունների իրականացումը մինչև 1898 թ., դեռևս մնում էին Հ.Յ. Դաշնակցության մարտավարության ամենագործուն շարժիչ ուժը:

1898թ. տեղի է ունենում ՀՅԴ 2-րդ Ընդհանուր Ժողովը, ուր ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում են նաև ընդհանուր ապստամբության ու հայդուկային-պարտիզանական պայքարին վերաբերող հարցեր, և ընդունվում է հետեւյալ որոշումը. «Ժողովը, երկար վիճաբանութիւններէ վերջ, ստվար մեծամասնութեամբ (2 ձայն դէմ) սկզբունքով ընդունեց ուժերու կեդրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով ֆէտայական ասպատակային գործունէութիւնը՝ ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»[2]:

Համաձայն այս որոշման, ՀՅԴ փաստորեն հրաժարվում է իր՝ ֆիդայական-պարտիզանական կռիվներ մղելու մարտավարությունից և պատրաստվում Երկրի առավել կարևորագույն վայրերում (Բարձրավանդակ, Վասպուրական) ուժերի կենտրոնացմանը՝ ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար: Գործունեության նոր եղանակի որդեգրումը, բնականաբար, թելադրում էր, որպեսզի կուսակցությունը ավելի մեծ ծավալի աշխատանքներ իրականացներ «կեդրոնացման» վայրի մարտական ուժերն ըստ ամենայնի կազմակերպելու և այն առավելագույնս զինելու գործում: Իսկ Ընդհանուր Ժողովի որոշումների կենսագործումը պարտադիր էր ՀՅԴ բոլոր ապակենտրոն կառույցների և իհարկե նաև Դուրան-Բարձրավանդակի կենտր.կոմիտեի համար: Իսկ այդ ժամանակահատվածում Դուրան-Բարձրավանդակի, ինչպես նաև Բիթլիսի շրջանում գործող հայկական մարտական խմբերի առաջնորդն Աղբյուր Սերոբն էր:

«Սերոբ (նա Ընդհանուր Ժողովի կողմից ընտրվել էր Բարձրավանդակի Պատասխանատու Կենտր. կոմիտեի անդամ – Հ.Դ.).- գրում է Կ. Սասունին,- տեղեակ էր, որ Հ. Յ. Դաշնակցութեան Բ. Ընդհանուր Ժողովը տեղի կունենայ Կովկասի մէջ: Տեղեակ էր նաեւ այն տրամադրութեան, որով Սասունը կընտրէին որպես միջնաբերդ հայ յեղափոխական շարժման»[1]:

Քանի որ Ճարտարի գլխավորած զինատար խմբի անցումը Կարսից Ախլաթ պակվել էր աննախադեպ հաջողությամբ, իսկ զենք ու զինամթերքի ձեռքբերումը, մարտական խմբերի կազմակերպումը եղել և մնում էր Հ.Յ. Դաշնակցության գործունեության կարևորագույն բաղադրամասերից մեկը, ուստի Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի և անձամբ Աղբյուր Սերոբի հանձնարարությամբ Ճարտարը 25 մարտիկներով մեկնում է Կովկաս, դարձյալ նույն՝ զենք ու զինամթերք տեղափոխելու առաքելությամբ[2]:

Ճարտարը բարեհաջող հասնում է Կարս, ՀՅԴ տեղի կենտրոնական կոմիտեից ստանում է որոշակի քանակության զենք ու զինամթերք և նոր մարտիկներով համալրելով իր զինատար խումբը՝ պատրաստվում վերադառնալ Ախլաթ: Համաձայն Կ. Սասունու և Ռուբենի տվյալների, Ճարտարի խումբը բաղկացած է եղել 66, իսկ Ա. Նորյանի, որի վկայությունն իր իսկ հավաստման, գրի է առել ականատեսի պատմածի հիման վրա, 78 մարտիկներից[3]:

Զինատար խմբի կազմում են եղել Բիթլիսցի Մուշեղը, Առաքելը, Բալաբեխ Կարապետը, Երկար Նարոն, Զուլումաթը, Առյուծ Ավագը եւ այլ փորձառու ռազմիկներ, որոնք մինչ այդ մասնակցել էին Աղբյուր Սերոբի գլխավորած Ախլաթի ինքնապաշտպանական և գրեթե բոլոր ֆիդայական մարտերին:

1898թ. սեպտեմբերի սկզբներին զինատար խումբը Ճարտարի գլխավորությամբ Կարսից տեղափոխվում է Կաղզվան, ապա անցնում ռուս-թուրքական սահմանը և փորձում Ալաշկերտ-Մանազկերտ-Բուլանուխ գծով ուղևորվել Ախլաթ: Սակայն այս անգամ նույն հաջողությունը, ինչպիսին առաջին անցման ժամանակ էր, չի ուղեկցում հայ մարտիկներին:

Մինչև Ճարտարի 2-րդ զինատար խմբի մեկնումը, Կարսից դեպի Երկիր էին ուղևորվել մոտավորապես 16 մարտական ու զինատար խմբեր[4]:

Որևէ կասկած լինել չէր կարող, որ հայ մարտական ուժերի երթուղիները կարող էին դուրս մնալ թուրք իշխանությունների տեսադաշտից: Ամենուրեք գործող գործակալների ու մատնիչների աջակցությամբ, ակնդետ հետևելով հայ հեղափոխական գործիչների գործողություններին, թուրք իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրում ջախջախել բոլոր այն խմբերը, որոնք փոր-

---

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 681, գ. 1, էջ 2:
[2] «Նիւթեր...»,, հ. Բ, էջ 59:

---

[1] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 600:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 681, գ. 1, էջ 2:
[3] Սասունի Կ., Պատմ-ն Տարօնի աշխարհի, էջ 600, Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 131-134:
[4] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 131-134:

ձեր էին ձեռնարկում անցնել ռուս-թուրքական սահմանն ու ուղևորվել Արևմտահայաստանի որևէ շրջան:

Ճարտարի 1-ին խմբի բարեհաջող անցմանն ամիսներ էին հաջորդել: Իսկ թուրք իշխանություններն այդ ընթացքում ավելի ու ավելի էին ուժեղացնում սահմանամերձ շրջանների, հատկապես Կարսից դեպի Բագրևանդ (Ալաշկերտ)-Տարոնը ձգվող ուղիների հսկողությունը: Կարսի նահանգից մինչև Էրզրում, Տարոն, Սասուն ընկած տարածքում տեղաբաշխվել էին համիդեի բազմաթիվ գնդեր, որոնց գլխավոր պարտականություններից մեկը հայ մարտական ուժերին ու հեղափոխական գործիչներին հետևելն ու ոչնչացնելն էր: Ի հարկե, Հ.Յ. Դաշնակցության ղեկավար մարմիններն իրենց դավանած ռազմավարությունը կենսագործելու նպատակով համապատասխան մարտավարություն մշակելիս, պարտավոր էին որոշակիորեն տեղյակ լինել ու սթափ արժևորել թուրք իշխանությունների կողմից իրենց գործունեությանը խոչընդոտելուն նպատակաուղղված բոլոր կարգի դժվարությունները: Բայց արևմտահայության ազատագրական պայքարը կազմակերպելու համար անհրաժեշտ էին կարող և նվիրյալ գործիչներ, մարտական ուժեր, զենք ու զինամթերք:

Ճանապարհելով հերթական զինատար խումբը՝ ճանապարհողները չէին կարող կասկածել, որ այս անգամ Ճարտարին և նրա գլխավորած մարտիկներին սպասվում էին ավելի դաժան փորձություններ: Զինատար խմբի մղած հերոսամարտերը, որոնք պատմությանը հայտնի են «Խաթավին և Ավերակ Զրաղացի կռիվներ» անվամբ, ազատագրական պայքարի այն նշանավոր դրվագներից են, որոնց մասին հյուսած երգերը ժողովուրդը երգում է մինչ օրս:

Զինատրար խմբի անվտանգությունն ու աննկատ անցումն առավելագույնս ապահովելու նպատակով խումբը բաժանվում է երկու մասի: Առաջին՝ փոքրաքանակ մասը, Երկար Նադոյի գլխավորությամբ, որպես առաջապահ, շարժվում է առջևից: Այդ խումբը հակառակորդին անակնկալ հանդիպելիս, առաջինը պիտի դիմագրավեր հարձակումը և այդ մասին անհապաղ տեղեկացներ իր հետևից շարժվող հիմնական խմբին:

Առաջապահ խումբը մտնում է Ալաշկերտի սարահարթը և հասնելով մի քրդական գյուղի՝ որոշում է փոքր-ինչ դադար առնել, հանգստանալ:

«Այդ բանի համար,- նշում է «Դրօշակ»-ի հոդվածագիրը,- քիւրդին կը վճարեն որոշ գումար մը, որպէսզի զիրենք պատսպարէ մինչեւ երեկոյ: Քիւրդը կը խաբէ տղաներին եւ կը լեցնէ տունը ու գումարն էլ առնելուց յետոյ, կը վազէ լուր կը տայ գիւղապետին»[1]:

Գյուղապետն անմիջապես հավաքում է գյուղի բնակիչներին և նրանց առաջնորդում պաշտարելու այն տունը, որտեղ իր զինակիցներով հանգրվանում էր Նադոն: Հայ մարտիկները հայտնվում են անելանելի իրավիճակում: Քրդերը, պաշարելով տունը, կրակ են տեղում հայ մարտիկների վրա: Ելքը միակն էր, հարկավոր էր դուրս գալ տնից և սրընթաց գրոհով ճեղքել պաշարման շղթան ու

[1] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:

արագորեն հեռանալ: Տնից դուրս գալու փորձ կատարելիս ֆիդայիներից մի քանիսը զոհվում են, իսկ Նադոն երեք զինակիցներով կարողանում է դուրս գալ տնից ու դրսում շարունակել մարտը[1]:

Բարեբախտաբար հիմնական խումբը, որը նույնպես անցնում էր այդ գյուղի մերձակայքով, լսում է հրացանների ձայնը և ճիշտ կողմնորոշվելով՝ շտապում օգնության ու պաշարում գյուղը:

«Մի քանի ժամուայ մէջ, - նշում է «Դրօշակը», - բնակչութիւնը պատուհասելէ յետոյ, կենդանի մնացած մեր զինուորներին կազատի... Ռազմամթերքը, որ մինչև հոս շալակով կը բերէին, բեռցնելով քիւրդ գիւղի գրաստների վրա, մայրամուտին կը շարունակեն իրենց ճանապարհը»[2]:

Արագորեն հաղթահարելով առաջին արգելքը՝ խումբը ձգտում է շուտ անցնել Ալաշկերտի տարածքը և Մանազկերտ-Բուլանուխ գծով ուղևորվել Ախլաթ:

«Սեպտեմբերի 3-ին, - գրում է Ա. Նորյանը, - խումբն հանգիստ է առնում Սիպկնցոց սահմանի մէջ՝ Քեօշկայ լերան արեւելեան (Քեօշք՝ սիպկնցոց քիւրդ բէկերի գիւղն էր, որ իր մէջ խոշոր ապարանք ունի, որի համար եւ գիւղն ու շրջակայքը Քէօշք են կոչվում)»[3]:

Ապարանքի պահապան քրդերը հեռվից նկատում են զինված խմբին և հասկանալով նրանց ոչ յուրային լինելը ու համաձայն իրենց սովորությանը, իսկույն վայնասուն (հավար) են բարձրացնում և շատ չանցած ավելի քան 2000-2500 համիդեի զինվորներ, հայտնվում են դեպքի վայրում:

Թեպետև հայ մարտիկներն ամեն կերպ ձգտում էին խուսափել ավելորդ կռիվների բռնվելուց, բայց այս պարագայում այլընտրանք այլևս չկար:

Ֆիդայիները դույզն-ինչ չերկնչելով թշնամու բազաքանակությունից՝ սառնասրտորեն ընդունում են հակառակորդի մարտահրավերը և պատրաստվում մարտի: Վստահ իրենց քանակական գերակշռությանը՝ քրդերը, համազարկեր տեղալով, նետվում են գրոհի: Հայ մարտիկներն այդ ընթացքում հասցնում են հարմար դիրքեր գրավել մերձակա սարի բարձունքներում և իրենց մոսինների հեռահար ու դիպուկ հարվածներով կասեցնում են քուրդ զինյալների անընդմեջ շարունակվող հարձակումները: Քանի որ Ալաշկերտի սարահարթում կային բազմաթիվ հայկական գյուղեր, ուստի ֆիդայիները, նկատի ունենալով հայ բնակչությանը սպառնացող վտանգը, կռվի սկզբում այնքան էլ տրամադրված չեն եղել դիպուկ հարվածներով դիմագրավել հարձակվողներին: Սակայն իրավիճակը փոխվում է, երբ քրդերը, շարունակելով հարձակումն ու ավելի սաստկացնելով կրակը, սպանում են Ախլաթցի Գևորգին:

«Մուշեղը երբ կը տեսնէ Գէորգի անշնչացած դիակը, կը հրամայէ, - «Տղե՛ք, լաւ նշան բռնեցէք դէպի թշնամին: Մեր ֆիդայիները մէկի փոխարէն 20-ի չափ դիակներ կը փռեն»»[4]:

[1] Տե՛ս Պիթլիսցի Մուշեղ, Կ. Պոլիս, 1919, էջ 24:
[2] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:
[3] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 332:
[4] Պիթլիսցի Մուշեղ, էջ 54:

Կռիվը շարունակվում է մինչև կեսօր: Քրդերը, փոքր-ինչ դադար առնելուց և իրենց մարտաշարքերը համալրելուց հետո, առավել սաստկությամբ կրակ են տեղում հայ մարտիկների դիրքերին և վերսկսում գրոհները. «Սակայն, ապարդիւն են անցնում քրդերի ձեռնարկած բոլոր յարձակումները. ֆիդայիներն անխորտակ պաշտպանութեամբ պահում են իրենց դիրքերը»:

«Քրդերը,- նշում է Ա. Նորյանը,- մի քանի անգամ գրոհ են տալիս, խտացրած շարքերով, բայց քաջարի մարտիկների մոսիններն անմիջապէս յետ են մղում նրանց: Թշնամին բազմաթիւ դիակներ է տալիս»[1]:

Ռուբենը, նույնպես անդրադառնալով այդ կռվի լուսաբանմանը, գրում է. «Կէսօրէ ետք, սկսած կռիւը կը շարունակուի անընդհատ, մինչեւ ուշ երեկոյ: Հայերը կուտան մէկ-երկու գոհեր, իսկ քիւրդերը տասէն աւելի»[2]:

Ֆիդայիները նախորդ կռիվներից քաջատեղյակ էին քրդերի կռիվներ մղելու սովորությանը: Որպես չգրված օրենք՝ քրդերը կռվում էին մինչև մութն ընկնելը: Աներեր դիմագրավելով հակառակորդի շարունակաբար կրկնվող հարձակումներին՝ հայ ֆիդայիները կռվում են մինչև մութն ընկնելը և ապա օգտվելով մթության պատճառով քրդերի դադարեցրած գրոհներից, կարողանում են անկորուստ իջնել դիրքերից և «... Դուդախի մօտէն աննկատելի կերպով կանցնին Եփրատը: Ամբողջ գիշեր ճամբայ կտրելով կը հասնին Քեօշկ գիւղը, յոգնած, բեզարած»[3]:

Ֆիդայիները թեև չափազանց հոգնած էին, բայց ձգտում էին որքան հնարավոր է կտրվել հակառակորդից և բարձրանալ գյուղի մերձակա Խաթավին սարը, փոքր-ինչ հանգստանալ, ապա նոր ուղևորվել Ամլաթ: Բայց քանի որ շատ հոգնած էին ու քաղցած, ուստի անտեսելով վտանգը, հարկադրված մոտենում են հայ-քրդական խառը բնակչություն ունեցող Քեշկ գյուղին: Նախորդ օրվա կռվի արձագանքները տարածվելով հասել էին նաև այդ գյուղին: Քրդերը, երկյուղելով հայ ֆիդայիների հայտնվելուց, յուրաքանչյուր գյուղի մոտ կարգել էին զինված պահակախմբեր: Գյուղին մոտենալիս, խումբը դարձյալ նկատվում է քրդերի կողմից, որոնք անմիջապես կրակ են տեղում հայ մարտիկների վրա, փորձելով խոչընդոտել նրանց առաջխաղացումն ու միաժամանակ ֆիդայիների հայտնվելու մասին տեղեկացնել համիդիեի գնդին և մոտակայքում գտնվող քրդական աշիրեթներին: Քանի որ քրդերն այս անգամ փոքրաքանակ էին, ուստի ֆիդայիներն անաղմուկ գործելու նպատակով, մերկացնում են դաշույները և հարձակվելով նրանց վրա՝ արագորեն ընկնում են նրանց դիմադրությունը և շարունակում իրենց ուղին: Բայց մի քանի քրդերի հաջողվում է խույս տալ հայ մարտիկների հարվածներից և նրանց մասին տեղեկացնել համիդիեի զինվորներին, որոնց կենտրոնը գտնվում էր Պոտնոսի մոտակայքում:

«Հոն, - նշում է Կ. Սասունին, - կը նստէր Քէօռ Հիւսէին փաշան, որ կանգնած էր 2000-3000 Համիտիէներուն գլուխը: Քիչ մը աւելի դէպի արեւմուտք – հարաւ

[1] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 332:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 164:
[3] Նույն տեղում:

կը տարածուէին Հասանացի Համիտիէներն ու գիւղերը, որոնց գլխաւորներու՝ Ֆաղէհի եւ Ռրգախի հրամանատարութեան տակ կը գտնուէին 800 ամենաընտիր քիւրտ հեծեալներ: Մօտ էր նաեւ Սիփկանցի աշիրէթը, որ արդէն ընդհարում ունեցեր էր խումբի հետ...»[1]:

Մինչ համիդիեի գնդերն ու քրդական աշիրեթները կհասցնեին շտապել դեպքի վայրը, հայ մարտիկները, հաղթահարելով քաղցն ու հոգնածությունը, հասնում են Խաթավին սարին և որոշում գիշերն անցկացնել սարի վրա:

Հաջորդ օրը՝ լույսը բացվելուն պես, համիդիեի գնդերն ու աշիրեթները պաշարում են Խաթավին սարը և առանց փոքր-ինչ դադար առնելու, հարյուրավոր հրացանների համազարկերի պաշտպանությամբ՝ նետվում գրոհի:

«Ղըլըճ Կէտիկէն, - նշում են Ռուբենն ու Կ. Սասունին, - մինչեւ Սիփան, մինչեւ Խաթափին եւ Մանազկերտի դաշտը՝ քրտական գիւղերը, գիւղէ-գիւղ հաւարի ազդանշան տալով, կը հաւաքուին գունդագունդ՝ պաշարելու համար ֆետայիներու փոքրիկ խումբ մը...»[2]:

Իսկ Ա. Նորյանը, ներկայացնելով քրդերի առաջին հարձակման պահը, գրում է. «Արշալույսին, երբ հայդուկները թշնամուց շրջապատելն իմանում են, չնայած յոգնածութեան եւ քաղցին, մի բոպէ կը մոռանան ամէն ինչ եւ խմբի «Մահ կամ Ազատութիւն» դրօշն են բարձրացնում»[3]:

Դիրքեր գրավելով սարի լեռնալանջերին՝ ֆիդայիները անկոտրում համառությամբ և անվրեպ հարվածներով կասեցնում են թշնամու գրոհները: Այդ օրը քրդերը նախորդ կռվի համեմատ ավելի կատաղությամբ ու համարձակությամբ են գրոհել հայ մարտիկների դիրքերը:

«... Ալիար քիւրտ գիւղի շեյխի երկու «թոսուն» (կտրիճ) տիտղոսը կրող որդիներն առաջ ընկան, եւ գնդակների տարափի տակ, կրօնական կանչերով եւ հայհոյանքներով «կուռ է խորսէ՝, ամ հաքը (հոտաներու տղաքներ, մենք եկանք) կանչելով՝ դէպի դիրքերը վազեցին»»[4]:

Ֆիդայիները, տեսնելով քրդերի նման ինքնավստահ, արհամարական կեցվածքը, որոշում են նրանց գերի վերցնել ու արժանավայել պատժել: Այդ նպատակով նրանք դադարեցնում են կրակը՝ հնարավորություն ընձեռելով քրդերին ավելի մոտենալու իրենց: Քուրդ եղբայրներն ոգեւորվելով՝ ընդհուպ մոտենում են ֆիդայիների դիրքերին:

«Այդ ժամանակ տղաները հրացանները դէպի նրանց ուղղեցին, պահանջելով «Թէսիմ, թէսիմ (անձնատուր, անձնատուր եղէք, իշու՝ ծնունդներ)...»:

Հայդուկները երկուսին էլ բռնելով, ոտն ու ձեռքը կապելով՝ մօտակայ խոտի դէզի մէջ ձգեցին ու լուցկիով կրակ տուին...»[5]:

[1] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 601:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 165, Սասունի Կ., Պատ-ն Տարօնի աշխարհի, էջ 601:
[3] Նորեան Ա, նշվ. աշխ., էջ 333:
[4] Նույն տեղում, էջ 334:
[5] Նույն տեղում:

Մինչև կեսօր հետ մղելով քրդերի՝ մեկը մյուսին հաջորդող գրոհները՝ ֆիդայիները կարողանում են ամուր պահել իրենց դիրքերը: Կեսօրին, քրդերը առավել մեծաքանակ ուժերով ուժգին գրոհ են ձեռնարկում և մի պահ արդեն մոտ էին հաջողության՝ գրավելու երկու կարևոր դիրքեր: Եթե քրդերին հաջողվեր գրավել այդ երկու դիրքերը, ապա հայ մարտիկները կհայտնվեին անելանելի կացությունում: Բայց ֆիդայիները, դժվարագույն պահին անգամ կատարում են աներևակայելին. «... յանկարծ Առիւծ Աւագը, Բալաբէխ Կարապետը, Առաքելն ու Մուշեղը իրենց տասնեակ մը ընկերներով գրոհ կուտան յարձակողներու վրայ և, մեծ զոհեր պատճառելով թշնամուն, կը փրկեն Երկար Նատոյի վտանգուած դիրքը»[1]:

Այդ խիզախ գրոհից ոգևորված՝ քրդերին իրենց դիրքերից հետ են մղում նաև մյուս ֆիդայիները: Թեպետ հայ մարտիկները տոնում են իրենց հերթական հաղթանակը, բայց նրանց շարքերն անընդմեջ կռիվների հետևանքով զգալիորեն նոսրացել էին: Դրան հակառակ, քրդերի քանակը, չնայած հարյուրավոր սպանվածների, գնալով ավելի ու ավելի էր շատանում:

Ֆիդայիները, եթե նույնիսկ օժտված լինեին գերմարդկային կարողությամբ, ապա դժվար թէ ի զորու լինեին դիմակայել հակառակորդի գրոհները: Արդեն զգացնել էր տալիս նաև զինամթերքի սակավությունը, իսկ մյուս կողմից՝ նրանց խիստ կերպով տանջել են քաղցն ու հոգնածությունը: Մութն ընկնելուն պես Ճարտարը, հաշվի առնելով զոհերի քանակն ու տիրող կացությունը, հավաքում է դիրքերում գտնվող 25 մարտիկների և իջնելով սարից, փորձում է կտրվել հակառակորդից ու շարժվել Ախլաթ: Սակայն համիդիեի զինվորները նկատում և կրակ են բացում նրանց վրա: Ֆիդայիներից մի քանիսը զոհվում են, իսկ Ճարտարը մի քանի զինվորներով կարողանում է խույս տալ հետապնդումից ու բազում դժվարություններ հաղթահարելով՝ հասնում Ախլաթ:

Զինատար խմբի մյուս մասը՝ Առաքել, Բիթլիսցի Մուշեղի և Առյուծ Ավագի գլխավորությամբ կարողանում է ճեղքել պաշարման շղթան և, կտրվելով հակառակորդից, փորձում է Մանազկերտի ուղղությամբ շարժվել Ախլաթ: Ճարտարը, որը մինչ այդ հմտորեն ու քաջաբար էր վարել կռիվները, այդ պահին թույլ է տալիս մարտավարական որոշ վրիպում: Այն պահին, երբ նա 25 մարտիկներով իջնում էր սարից, այնտեղ դեռևս մնացել էին ֆիդայիների մի մասը:

«Մինչ Ճարտարը,- նշում են Ռուբենն ու Կ. Սասունին,- կիջնէր դաշտ եւ կռիւ տալով ճամբայ կուզէր բանալ իր խումբին համար, Բալաբէխ Կարապետը իր տասնեակ մը զինուորներով Խաթաւինա բարձունքներու վրայ կը փնտռէր Ճարտարը»[2]:

Չգտնելով Ճարտարին՝ Բալաբեխ Կարապետը, իր մարտիկներով անկարող լինելով սարից իջնել, հարկադրված տեղափոխվում է սարի մեկ այլ մաս և ապաստանում չորացած խոտերի մեջ: Քրդերը նկատելով՝ վառում են չորացած

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 166, Սասունի Կ., Պատ-ն Տարօնի աշխարհի, էջ 602:
[2] Նույն տեղում:

խոտը ու կրակը տարածվելով մոտենում է այն տեղին, ուր պատսպարվել էր Կարապետի տասնյակը: Քրդերը համոզվելով, որ ֆիդայիներն այլևս չունեն փրկվելու որևէ հնարավորություն, կրակի հետևից բարձրանում են և ընդհուպ մոտենում ֆիդայիներին: Ելքը միակն էր. Բալաբեխ Կարապետի ֆիդայիներն անսպասելիորեն դուրս են թռչում բոցերի միջից և անվրեպ հարվածներ տեղալով՝ շարունակում են կռիվը մինչև երեկո:

«Նորէն,-գրում է Ռուբենը,- մութը կիյնա եւ Բալաբէխ Կարապետ իր խումբով կը բռնէ Թաքաւոլուի ճամբան: Քանի մը օր ետք կը հասնի Նէմրութ, զարմանք պատճառելով իր ընկերներուն եւ Աղբիւր Սերոբին»[1]:

Իսկ Մուշեղի, Առաքելի և Առյուծ Ավագի մարտիկներին սպասում էին նոր դժվարին փորձություններ: Այդ խումբը, Խաթավինի կռվից հետո Ախլաթ ուղևորվելիս, նույն օրը երեկոյան հասնում է Չավուշ և Բաթնոց սարերի մոտ ու փորձում մի փոքր հանգստանալ այդ սարերից մեկի վրա: Համիդիեի զինվորներն ու քուրդ զինյալները, որոնք կրնկակոխ հետապնդում էին, հասնում են նրանց, և դարձյալ ֆիդայիները հայտնվում են թշնամու օղակում: Հայ մարտիկները, մոռանալով հոգնածությունը, արագորեն դիրքեր են գրավում ու սպասում հակառակորդի հարձակմանը:

«Տղաներու,- նշում է «Դրօշակ»-ը,- ապաստանած ամբողջ լեռը պաշարուած էր թշնամիի բազմաթիւ զօրքերով: Եվ ահա սկսում են համազարկերը թշնամու յառաջապահներու կողմից դէպի մեր հայդուկներու դիրքերը»[2]:

Այդ օրը, քրդերը հակառակ իրենց սովորությանը, թեև ոչ այնքան ուժգնությամբ, գրոհներ են ձեռնարկում նաև գիշերը: Առավոտյան մարտադաշտում են հայտնվում քրդական նոր հրոսակախմբեր, և կռիվը բորբոքվում է ավելի մեծ ուժգնությամբ ու ծավալով:

Մուշեղը, որը ստանձնել էր ֆիդայիների հրամանատարությունը, «նկատի առնելով, որ թշնամին իր պաշարման օղակը ավելի պիտի թանձրացնէ, կը հրահանգէ ընկերներուն լեռն ի վեր մերթ կուել, մերթ առաջանալ դէպի Մարմարուս գետը»[3]:

Ճկուն մարտավարությամբ ֆիդայիներին հաջողվում է կտրվել հակառակորդից և անընդհատ առաջանալով, հաջորդ օրն առավոտյան հասնում են հայկական Գարագայա գյուղի մոտ ու ապաստանում Առահուտ բերդի ստորոտում գտնվող քարայրում: Քանի որ չափազանց հոգնած էին, փակում են քարայրի բոլոր մուտքերն ու քնում: Առավոտյան ֆիդայիները դուրս են գալիս

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 167:
[2] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:
[3] Նույն տեղում:

քարայրից և հանդիպում ճիշտ նույն պահին այդ տեղով անցնող թուրք ոստիկաններին: Դիպուկ հարվածներով փախուստի մատնելով ոստիկաններին հայդուկները «... կերթան Մանազկերտի Բերդի վրայով դեպի Եփրատ գետի եզերքը գտնուող աւերակ ջրաղացը. ու հոն կը մնան գիշերը: (Աւերակ ջրաղացը Մանազկերտի գիւղաքաղաքէն կէս ժամ հեռու է. Խաթուն և Եփրատ գետերի միացման տեղը)»[1]:

Մի քանի օր մղած անընդմեջ կռիվների, տեղաշարժերի ընթացքում ֆիդայիները, չունենալով սնվելու որևէ հնարավորություն, հարկադրված հավաքում են ջրաղացի պատերին, անկյուններում մնացած ալյուրը, և քանի որ թշնամին դեռևս չէր երևում, կրակ են վառում և բաղարջ թխում: Առավոտյան ջրաղացի մոտակայքով անցնող մի քուրդ, նկատելով ծխնելույզից բարձրացող ծուխը և կասկածելով, որ այնտեղ կարող են ապաստանել հայ ֆիդայիները, շտապում է Մանազկերտ ու այդ մասին հայտնում ոստիկանությանը: Տեղեկանալով ջրաղացում ֆիդայիների գտնվելու մասին՝ ոստիկանական ուժերը, համիդիեական ջոկատներն ու քրդական աշիրեթները, որոնք ամենուրեք որոնում էին նրանց, անմիջապես ուղևորվում են քրդի մատնանշած վայրն ու պաշարում ջրաղացում ապաստանած ֆիդայիներին[2]:

Պաշարելով ջրաղացը, զորքի և ոստիկանների հրամանատարությունը, նախքան վճռական գործողություններ ձեռնարկելը, իրենց տեղեկություն հայտնող քրդին ուղարկում են պարզելու հայ մարտիկների՝ այնտեղ գտնվելու իսկությունը: «Քիւրդը վարանումով կը մօտենայիր ջրաղացին, բայց դեռ չմօտեցած՝ կը նշմարուի Մուշեղին ամենատես աչքերէն: Մուշեղ խորհելով, որ իրենց դիրքի մասին կրնար տեղեկութիւն հաղորդել՝ մուսէնի գնդակով մը գետին կը տապալէ զայն»[3]:

Տեսնելով իրենց լրտեսի ձուկնը, թուրք զինվորներն ու քրդերը չորս կողմից կրակ են տեղում և փորձում առաջանալ դեպի ջրաղացը: Պատսպարվելով պատերի ետևում և խնայելով փամփուշտները, ֆիդայիները մերթ ընդ մերթ արձակած, բայց անվրեպ հարվածներով՝ խափանում են ջրաղացին առավելագույնս մոտենալ ձգտող հակառակորդի փորձերը:

Իրենց զարկերն առավել արդյունավետ ու ազդեցիկ դարձնելու և թշնամու հարձակումներն ավելի դյուրությամբ հետ մղելու նպատակով հայդուկները փոքրիկ ճեղքեր են բացում պատերի մեջ և այնտեղից սկսում են դիպուկ նշանառությամբ գնդակահարել հարձակվողներին: Հայ մարտիկների հերոսական դիմադրությունից գազազած, թուրք զինվորներն ու քրդերը, կեսօրին համալրելով իրենց մարտաշարքերը, կատաղի գրոհ են ձեռնարկում:

«Հարիւրապետ մը,- նշում է «Դրօշակ»-ը,- բանակին մէջ կը գտնուէր, կատարուած եղերական ամլութենէն կատղած՝ զօրաց խուռն բազմութեամբ մը

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Պիթլիսցի Մուշեղ, էջ 39:
[3] Նույն տեղում:

կը խուժէ դէպի կամուրջ. բայց դեռ կամուրջին կէսը չհասած, Մուշեղը իր հրաշալի նշանառութեամբ, գնդակը կը գետեղէ անոր ճակտին...»[1]:

Թուրք հարյուրապետի ճակատագրին են արժանանում հարձակվողներից շատերը, որոնք փորձում էին անցնել Եփրատ և Խաթուն գետերի կամուրջներն ու մոտենալ ջրաղացին: Տեսնելով, որ սոսկ գրոհներով հնարավոր չէ ընկճել ֆիդայիների դիմադրությունը, հակառակորդը որոշում է ցախ, չոր խոտ, փուշ և տատասկ լցնել ջրաղացի չորս կողմերն ու կրակի տալ այն: Իսկ քրդերից մի քանիսը բարձրանում են տանիքն ու փորձում երդիկից քարյուղ լցնել ջրաղացի ներսը, չորս բոլորն ու ապա այրել: Սակայն, հայդուկները լսելով քրդերի ոտնաձայները, գնդակահարում են տանիք բարձրացողներին ու խափանում թշնամու այդ ձեռնարկումները ևս[2]:

«Մութն, - գրում է Ռուբենը, - իյնալուն պէս ֆետայիները դուրս կելլեն ջրաղացքի ծորակով...»[3]:

Լուսաբացին թշնամին, անտեղյակ ֆիդայիների աննկատ հեռանալուց, վերսկսում է կրակ տեղալ ջրաղացի վրա, իսկ ֆիդայիներն արդեն հեռացել էին: Հաջորդ օրը՝ առավոտյան, նրանք հասնում են Բուլանուխի Շեխ-Ազոտ գյուղը և նրա մոտակա ձորերից մեկում մի փոքր հանգստանում ու շարունակելով իրենց ուղին՝ երեք օր անց հասնում են Ախլաթ գավառ և որոշում փոքր-ինչ դադար առնել Փրխուս և Սպրաձոր գյուղերի արանքում գտնվող Սուչխան ձորում:

Կարսից մինչև Տարոն ձգվող տարածքը, ինչպես արդեն նշվել է, ամենախիստ կերպով հսկվում էր թուրքական զորամասերի, համիդիեական գնդերի, քրդերի ու չերքեզների կողմից: Եվ պատահական չէ, որ նրանք շատ արագ տեղեկանում են Սուչխան ձորում ֆիդայիների գտնվելու մասին և անհապաղ ձեռնարկում համապատասխան միջոցներ. «... Փրխուսէն զօրքեր, թիւով 200, Ախճավերան և Խուլիկ գիւղերի չերքեզները Ալի Բէգի առաջնորդութեամբ, Ախլաթի զօրքերն ու թիւրքերը մօտ հարիւր ձիաւորներ կը գան ու կը պաշարեն Մուշեղի ապաստանած վայրը»[4]:

Ֆիդայիներն այս անգամ ևս բնավ չընկճվելով թշնամու բազմաքանակությունից՝ աննահանջ դիմադրում են: Ալաշկերտից մինչև Ախլաթ զինատար խմբի մղած զարմանահրաշ կռիվների արձագանքները տարածվելով՝ արդեն հասել էին նաև Ախլաթ: Այն պահին, երբ թշնամին շտապում էր պաշարել Սուչխանի ձորում ապաստանած հայ մարտիկներին, Աղբյուր Սերոբը, տեղեկանալով իր զինակիցներին սպառնացող վտանգի մասին, Նեմրութի բարձունքներից շտապում է օգնության: Հակառակորդի ուշադրությունը գրվելու և նրան անակնկալ մատուցելու նպատակով, նա իր զինվորներին ծպտում է քրդական համազգեստներով, աննկատ հայտնվում է մարտադաշտում ու թիկունքից սրընթաց հարձակում ձեռնարկելով, ճեղքում է թշնամու

[1] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:
[2] Նույն տեղում:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 167:
[4] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

մարտաշարքերը և մոտենում իր զինակիցների դիրքերին: Առաքելն ու Մուշեղը և մյուս ֆիդայիները, կարծելով, որ իրենց դիրքերին մոտեցողները քրդերն են, կրակ են տեղում Աղբյուր Սերոբի մարտիկների վրա:

«Յանկարծ անսպասելիօրէն կը լսի Սերոբ Աղբիւրի ձայնը, որ կը պոռայ.

- «Մուշեղ ջան, այդ ի՞նչ է քո արածը, ես ահաւոր կռիւներ մղելով հազիվ յաջողեցայ թշնամու շղթան պատռել ու անցնել եւ ձեզ օգնութեան հասնել, դուն մեր վրայ կրակ կը բանաս»: Մուշեղը դիրքն ցատկելով կը վազի դէպի կտրիճ Սերոբը, ու կը փաթաթի նրա վզով»[1]:

Մարտադաշտում Աղբյուր Սերոբի անսպասելի հայտնվելը ավելի է ոգևորում մինչ այդ էլ արիաբար մարտնչող ֆիդայիներին: Հայ մարտիկների երկու խմբերը միանալով՝ այս անգամ արդեն իրենց հայդուկապետի՝ Աղբյուր Սերոբի առաջնորդությամբ վճռական և անկասելի հարվածներով խորտակում են թշնամու արգելապատնեշներն ու բարձրանում Նեմրութ:

«Զինատար խումբի, - նշում է Ռուբենը, - այս կռիւները խոր տպաւորութիւն ձգեցին հայերուն եւ քիւրդ աշիրեթներու վրայ:Այդ բուռ մը հայ զինուորները, ռուսական սահմանէն սկսած, շատ մը կռիւներ ունենալով՝ հասած էին մինչև Նեմրութ...Իրենց երգերուն մէջ քիւրտերը անէծք եւ գովք կուղղէին ջան ֆետայիներուն: Հայերն ալ երգեր հիւսեցին Խաթաւինայի կռիւներուն համար: Այդ երգերէն ամենէն տարածուածն է. «Առաքել, Մուշեղ, լեռներից իջան, ավերակ ջաղաց իջևան եղան» երգը»[2]:

2.2. ԽԱՍՏՈՒՐԻ ԿՌԻՎԸ ԽԱՆ–ՊԵՏՐՈՍ (ԲԱՐՍԵՂ ԹԻՐԱՔՅԱՆ)

Մարտական և զինատար խմբերի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի «Շանթ» մարտական խումբը, որի մղած ընդամենը միակ՝ «Խաստուրի կռիվը» անվանումը ստացած հերոսամարտը, իր հաղթական ավարտով և հակառակորդի վրա թողած բացառիկ ազդեցիկ տպավորությամբ, մեծ արձագանք գտավ հայ ազգային-ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկների շրջանում ու արժանիորեն անհաղթ ռազմիկի փառք շնորհեց կռվի մասնակից ֆիդայիներին:

[1] Պիթլիսցի Մուշեղ, էջ 39:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 168:

Խաստուրի հերոսամարտում ցայտուն կերպով դրսևորվել են ոչ միայն հա ֆիդայու մարտնչելու անզուգականվարպետությունն ու մարտական անընկնելի ոգին, այլ նաև մարտախմբի հրամանատարության ռազմագիտական տաղանդը և մարտի ամենաբախտորոշ պահին վճռական նշանակություն ունեցող, հակառակորդի համար անսպասելի, ճկուն մարտավարություն կիրառելու կարողությունը:

Խաստուրի նշանավոր կռվում հաղթանակ տոնած «Շանթ» մարտական խմբի հրամանատարն էր Հայոց Ազատամարտի նշանավոր գործիչ Բարսեղ Թիրաքյանը, որը պատմությանն առավելապես հայտնի է Խան կամ Խան - Պետրոս անունով: Ո՞վ է Խանը և ինչպիսի մարտական ուղի է անցել:

Բարսեղ Թիրաքյանը ծնվել է Կեսարիայի Դերեվենք գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում, 1863թ.:

Բարսեղի ծննդավայրի բնակչության ճնշող մեծամասնությունը թուրքեր էին, իսկ փոքրագույն մասը՝հայեր և հույներ: Թուրքերը, օգտվելով իրենց մեծաքանակությունից ու միջոցների մեջ խտրականություն չդնելով, ամենավայրագ կերպով արգելել և խոչընդոտել են գյուղի այլազգի բնակչությանը, այդ թվում նաև հայերին, խոսել իրենց մայրենի լեզվով: Նման իրավիճակում, բնական է, բացառվում է մայրենի լեզվով դասավանդվող դպրոցի գոյությունը: Ահա դա է եղել պատճառը, որ գյուղի փոքրամասնություն կազմող հայ բնակչությունը, ճնշումների ու հալածանքների ենթարկվելով, միմյանց հետ հաղորդակցվել է թուրքերեն լեզվով: Բարսեղը նույնպես եղել է թրքախոս, անուս ու բնավ չի տիրապետել հայերենին: Բնատուր մտավոր և ֆիզիկական բազմաշնորհ կարողություններով օժտված Բարսեղը, դեռևս մանուկ հասակում ականատես լինելով ու ճաշակելով իր արյունակիցների, համագյուղացիների նկատմամբ թուրքերի դրսևորած դաժան ու անմարդկային վերաբերմունքը, հասկանում է, որ իրենց թշվառության և հարստահարության գլխավոր մեղսագործը հայության ոչ ազատ, բռնադատված վիճակն է: Թուրքերը սպանել էին նրա հորը: Բարսեղի հոր սպանության մասին Հայոց Ազատամարտի մեկ այլ ականավոր գործիչ Սեպուհը (Արշակ Ներսիսյան) պատմում է հետևյալը. «Օր մը իրենց հարեւան թուրքին ետվէի կը բռնուի: Մոլեռանդ թուրքը խաչ ու Քրիստոս կը հայհոյէ ու կը յարձակի Թիրաքյանի վրայ: Թիրաքյանը, շատ ուժեղ մէկը լինելով, բռունցքով կը տապալէ գետին մէկ քանիսը...Խանի հայրը կը վիրաւորէ ուրիշ մըն ալ, բայց չդիմանալով անդադար հարուածներուն, ի վերջոյ ուշակորուսյ կիյնայ վար: Թուրքերը այնքան կը ծեծեն, որ թշուառ հայը կաւանդէ հոգին»[1]:

Հայի գազանաբար սպանությունը չի գոհացնում մարդասպաններին: Նրանք հարձակվում են Թիրաքյանների տան վրա, այրում ու կողոպտում են նրանց ողջ կարողությունը և բռնագրաված հանձնում Բարսեղի հոր ձեռքով սպանված և վիրավոր թուրքերի ընտանիքներին: Թուրքերին չի

[1] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:

բավարարում անգամ Թիրաքյանների ողջ կայքի ու ունեցվածքի հիմնահատակ կործանումն ու բռնագավթումը. նրանք «... կուզեն սպանել նաև Թիրաքյանի կինն ու զաւակները: Բայց, բարեբախտաբար, ճարպիկ ու խելացի կինը իր երկու կոյրունների հետ կը փախչի մօտակայ հայկական գիւղ մը եւ այդ կերպով կազատէ ինքզինքն ու իր անմեղ զաւակները»[1]:

Մի քանի ամիս անց նրանք վերադառնում են իրենց գյուղը: Պարզվում է, որ թուրքերը բնավ չէին հրաժարվել Թիրաքյաններին սպանելու մտադրությունից: Գյուղ վերադառնալու հենց առաջին օրը նրանց սպանելու մտադրությամբ թուրքերը հարձակվում են Բարսեղի, նրա մոր եւ եղբոր վրա: Բարեբախտաբար թուրքերի մեջ եղել են նաեւ խղճով մարդիկ «...Գյուղի նշանաւոր թուրքերէն մէկուն խիղճը կը զարթնի: Ան կը նետուի խումբին առաջ ու կազատէ անպաշտպան հայ կինն ու իր զաւակները գազաններուն ձեռքէն»[2]:

Բարսեղն ու նրա եղբայրը՝ Միհրանը, դեռևս վաղ տարիքից են խորն ատելությամբ համակվում թուրքի նկատմամբ, շատ լավ հասկանալով, որիրենց հոր սպանության, որբության, ինչպես նաև հայության դժբախտությունների գլխավոր մեղսագործը՝ թուրքն է, որը միջոցների մեջ խտրականություն չդնելով՝ դաժանորեն արգելում է հայերին մայրենի լեզվով խոսելը:

Ամուսնու եղերական սպանությունից հետո,նրա մայրը մեծամեծ տանջանքների գնով կարողանում է մեծացնել իր զավակներին՝ Բարսեղին ու նրա կրտսեր եղբորը՝ Միհրանին:

Չգրված անխախտ օրենքի համաձայն՝ Հայոց Ազատամարտի անվանի դեմքերը, մեծամասամբ օժտված լինելով ֆիզիկական հզոր կարողությամբ, միաժամանակ աչքի են ընկել իրենց ըմբոստ, բռնության կապանքներ չհանդուրժող բնավորությամբ ու կեցվածքով: Այդպիսին էր նաև Բարսեղը: Նրա կենսագիրներից Ս. Վրացյանը, ընդգծելով այդ իրողությունը, գրում է.«Առնական յանդուգն եւ ըմբոստ՝ երիտասարդ Բարսեղը չի կարողանում հաշտուել թրքական անիրաւ կարգերի եւ հայութեան ճնշուած վիճակի հետ: Յաճախ կռուի է բռնում հայերին անարգող, հարստահարող թուրքերի հետ»[3]:

Ընտանիքի հոգսը թեթևացնելու ու ապրուստը հոգալու նպատակով նա աշակերտում է Կեսարիա նահանգում իր վարպետությամբ հայտնի ոսկեհյուսն- ատաղծագործի ու խորապես տիրապետելով այդ արհեստի նրբությունները, դառնում հմուտ վարպետ: Աշխատանքի բերումով եղբոր՝ Միհրանի հետ բազմիցս շրջում է Կեսարիայի գյուղերը և հաճախակի շփվելով ու հաղորդակցվելով հայ ու թուրք բնակչությանը, առավել մոտիկից է ճանաչում և արժևորում նահանգում տիրող կացությունը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի տարիներն էին, ազատագրական պայքարի գաղափարներն ու Արևմտահայաստանում ծավալվող

[1] Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949, էջ 151:
[2] Նույն տեղում:
[3] «Յուշապատում», էջ 144:

դեպքերի արձագանքները տարածվելով հասել էին նաև Կեսարիա: Եւ ինչպես իրավամբ նշում է Ս.Վրացյանը. «Յեղափոխական շարժումը մի հրաշագործ երեւոյթ եղաւ ազգային գիտակցութեան արթնացման եւ ազգային միութեան վերականգնման մէկ հայութիւն ստեղծելու տեսակէտից: Ի սփիւռս աշխարհի ցրուած, տարբեր լեզուներ խօսող Հայկի զաւակները յանկարծ, սկսեցին զգալ ու գիտակցիլ, որ իրենք միեւնոյն ընտանիքի անդամներ են...Յեղափոխութիւնը վառեց նրանց սրտերում ազգասիրութեան ու հայրենասիրութեան կրակը եւ համախմբեց ազատագրական պայքարի դրօշակի տակ՝ փոյթ չէ, թէ բաժան-բաժան գործելակերպով»[1]:

Բարսեղը թեև չէր տիրապետում հայերենին, բայց պտտվող լուրերից ու պատմություններից որոշակիորեն փոքր ինչ տեղյակ էր հայության կյանքում և մասնավորապես Երկրում ծավալվող հեղափոխական շարժումներին: Կեսարիա կատարած հերթական ուղևորություններից մեկի ժամանակ «... կը ծանոթանայ գաղտնի ընկերութեան մը հետ ու անոր անդամներէն շատ բաներ կիմանայ: Անոնք կըսեն, թէ իրենք Հնչակյան կուսակցութեան անդամներեն եւ զինքն ալ կարձանագրեն իրենց մարմնի մէջ Բարսեղ անունով: Երբ վրեժի ժամը հնչէ, ինքն ալ զէնքը ձեռքին պիտի նետուի դարաւոր թշնամու վրայ՝ իր հօր վրէժը լուծելու»[2]:

Հնչակների հետ ունեցած ծանոթությունն ու Հնչակյան կուսակցությանը անդամագրվելը նշանակալի ազդեցություն են գործում նրա համոզմունքների վրա և շրջադարձային նշանակություն ունենում հետագա գործունեությունում: Հայոց Ազատամարտին ընդմիշտ զինվորագրվելու տրամադրությամբ համակված՝ Բարսեղը ներկայանում է մորը և ամենայն հաստատակամությամբ հայտնում. «...ես արդէն ուխտեր եմ ամուսնանալ, բայց ոչ ընտրածդ Հռոփիկի, այլ Հայաստանի հետ»[3]:

Նույն հաստատակամությամբ ու նույն ոգով մորն է դիմում նաև կրտսեր եղբայրը՝ Միհրանը: Հրաժեշտ տալով մորն ու ստանալով նրա օրհնությունը՝ եղբայրներն ընդմիշտ թողնում են հայրենի եզերքը և օրեր շարունակ ոտքով կտրելով հսկայական ճանապարհ, 1888թ. հասնում Պոլիս: Մինչև Օսմանյան կայսրության մայրաքաղաքում հաստատվելը, Բարսեղը հասցնում է վրեժխնդիր լինել իրենց հորը սպանող թուրքից՝ նրան արժանացնելով մահվան դատաստանի:

Քանի որ անդամագրվել էր Հնչակյան կուսակցությանը, բնական է, որ համագործակցում է հնչակներին և մասնակցում նրանց նախաձեռնությամբ Պոլսում կազմակերպված Գում Գաբուի և Բաբը Ալիի ցույցերին[4]:

Պոլսում նա բազմիցս հանդիպում է ՀՅԴ գործիչների, մասնավորապես Վռամյանի (Օնիկ Դերձակյան) հետ ու նրանց միջոցով ծանոթանում

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:
[3] Նույն տեղում:
[4] «Յուշապատում...», էջ 144:

Հ.Յ.Դաշնակցությանը: Նրան չի գոհացնում Հնչակյան կուսակցության որդեգած ցույցերի և առանց զենքի ու մարտական գործողությունների պայքարելու մարտավարությունը: Պոլսում գտնվելու օրերին նա հեռանում է Հնչակյան կուսակցությունից և 1896թ.-ին անդամագրվում Հ.Յ. Դաշնակցությանը: Համաձայն Գ. Լազյանի, նա «Դրօշակ»-ի համարներ եւ զենք է տեղափոխում Պոլիս ու մասնակցում ահաբեկչական գործողությունների» [1]:

Երկրում տեղի ունեցող իրադարձությունների արձագանքները, Տարոնի, Սասունի,Վասպուրականի հայ ֆիդայիների մարտական սխրանքների պատմությունները տարածվելով, ինչ խոսք, հասել էին նաև Օսմանյան կայսրության մայրաքաղաք: Բազմաթիվ հայորդիներ, ազատագրական պայքարի գաղափարներով համակված, ձգտում էին մեկնել Երկիր՝ միանալու Օսմանյան բռնակալության դեմ պայքարի դրոշը պարզած մարտիկներին: Երկրից Պոլիս հասնող լուրերին հաղորդակից էր նաև Բարսեղ Թիրքյանը՝ ապագա Խանը, որն իր համարձակությամբ արդեն աչքի էր ընկել հատկապես Գում Գաբուի և Բաբը Ալիի ցույցերի ժամանակ:

«Պոլիսը,- գրում է Ս.Վրացյանը,- սակայն, չի գոհացնում Բարսեղի երիտասարդ եւ բուռն խառնուածքին: Շարժում ու կռիվ էր տենչում նրա ըմբոստ ոգին: Երկրից հասնող լուրերը նրան քաշում են դէպի Հայաստանի լեռներն ու ձորերը՝ հայդուկային փոթորկահոյզ կեանքի»[2]:

Երկիր մեկնելու ու ֆիդայիների ընկերակցությամբ բռնության դեմ մարտնչելու նպատակադրությամբ տոգորված՝ նա թողնում է Պոլիսը եւ « ... եղբոր հետ կը մեկնի Ռումինիա, Վռամեանի տուած յանձնարարականով. կը լսէ, որ Պանք Օթթոմանի դէպքը պատահած է. միւս կողմէն Սերոբը, Անդրանիկը, Սեպուհը Սասունի մէջ կը կռուին, իսկ ինքը դեռ մասնակից չէ այդ գոհաբերութիւններուն եւ անհամբեր է» [3] :

ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեի հանձնարարականով նա մեկնում է Սևաստոպոլ, ապա Թիֆլիս, որտեղ հանդիպում է Հայր Աբրահամին (Ավետիք Սահակյան) ու նրան հայտնում Մուշ գնալու իր դիտավորությունը [4] :

Նա հույս ուներ ընգրվել որևէ մարտական խմբի կազմում և «...Գնալ Սերոբ Փաշայի մօտ՝ Սասուն: Ան այս բոպէին Սասուն է շատ մը անձնուեր քաջերու հետ» [5]:

Քանի որ այդ ժամանակ Կովկասի և մասնավորապես Կարսի ու Ալաշկերտի տարածքից դեպի Երկիր տանող ուղիները, արգելափակված լինելու պատճառով, չէին գործում, ապա նա Հայր Աբրահամի խորհրդով նպատակադրվում է ընդգրկվել որևէ մարտական խմբի կազմում և ուղևորվել Պարսկաստան (Սալմաստի շրջան), որտեղից գործում էր Երկիր տանող միակ ճանապարհը [6]:

---

[1] Նույն տեղում:
[2] Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, էջ 151:
[3] Նույն տեղում:
[4] Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:
[5] Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:
[6] Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, էջ 151:

Նրա երազանքը իրականանում է Վանի 1896 թ. հունիսյան արյունալի դեպքերից հետո, երբ Թիֆլիսում կայացած ՀՅԴ հանրահայտ «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշմամբ պիտի ձեռնարկվեր «Մեծ արշավանք» -ը: Եղբայրները՝ Բարսեղն ու Միհրանը, «Մեծ արշավանք»- ին մասնակցելու նպատակով մեկնում են Սալմաստի շրջան, Հավթվան գյուղ և ներկայանում «Մեծ արշավանք» ձեռնարկումի գլխավոր կազմակերպիչ Նիկոլ Դումանին: Բարսեղը իր արտաքին կեցվածքով եղել է գեղեցիկ, հմայիչ ու առնական տղամարդ: Այն պահին, երբ Բարսեղը նրան է ներկայացնում իր վկայականը, Դումանը, զգաստանալով եւ հիանալով նրա արտաքին տեսքով, փոխանակ նրա վկայականը նայելու, բացականչում է. «Քիւրտ, քեզ խրախուսող թուրքի հետ, դու ի՞նչպէս հրացան պիտի բանաս այսպիսի տղամարդու վրայ: Տղամարդ է եւ ազնուականի զաւակ, խանի նման է:

Եվ այդ օրէն Բարսեղ Թիրաքեանի անունը կը մնայ Խան» [1] :

Դումանն, անտեղյակ նրա հայերեն խոսել չիմանալու իրողությանը, նրան հարցեր է տալիս, սակայն Բարսեղը չկարողանալով պատասխանել իրեն ուղղված հարցերին՝ ասում է. «Պ. Նիկոլ, ես հայերէն չգիտեմ, ես Կեսարացի եմ: Սակայն վստահ եղիր, որ լաւ եմ եւ եկեր եմ ազատութեան խորանի վրայ ողջակէզ անելու իմ կեանքը: Երդուեր եմ տուն չվերադառնալ, մինչեւ հայրենիքս ազատ չտեսնեմ»[2]:

Դումանը, գոհունակությամբ ունկնդրելով Բարսեղին, նրան ընդգրկում է մարտախմբերից մեկի կազմում: Կամավորները խմբերով, իսկ երբեմն էլ միայնակ, գալիս էին նախ Թավրիզ, ապա անցնում Փայաջուկ ու Ղալասար և նույնպես ներկայանում Դումանի շտաբը: Նրանց քանակը Սալմաստի շրջանում օր -օրե ավելի ու ավելի էր շատանում: Այդ իրողությունը արշավախմբի կազմակերպիչներին ոչ միայն ոգևորում էր ու ուրախություն պատճառում, այլև մտահոգում և հարուցում բազում հոգսեր ու դժվարություններ [3]:

«Միայն,- նշում է Արամայիսը, որն այդ օրերին «Մեծ արշավանք»-ին մասնակցելու նպատակով գտնվում էր Սալմաստի շրջանում,- Նիկոլի պէս փորձած ու հեղինակաւոր մարդը կարող է օգնութեան հասնել, եւ նա հասնում էր. բոլորին բաժանեց գիւղերում...իւրաքանչիւր գիւղում մի կամ երկու վերահսկողներ նշանակեց, որ նրանք զինուորներին չը թողնեն անկարգութիւններ անել...» [4]:

Կամավորներին տեղավորում էին Ղալասար, Փայաջուկ, Հավթվան, Մահլամ, Սառնա և Սավրա գյուղերում, որտեղ նրանց հայ գյուղացիներն ընդունում էին և վերաբերվում սիրով ո հոգատարությամբ [5]:

Խանը տեղավորվում է Փայաջուի գյուղացիներից մեկի տանը և մասնակցում զինավարժություններին, իսկ նրա մասնակցությամբ կայացած մարգում-

---

[1] Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 314, ց. 2, գ. 2, էջ 190:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

ներին, հետեվել է անձամբ Դումանը: Մինչև Խանասորի արշավանքի ձեռնարկելը, Խանը մասնակցում է զինվորական մարզումներին և կարճ ժամանակահատվածում կարողանում է ոչ միայն տիրապետել զենքերի ու մարտական որոշակի կանոնների գործածելու նրբություններին, այլև սովորել հայերեն խոսել, գրել ու կարդալ: Գնահատելով նրա վարպետությունը՝ Դումանը նրան հանձնարարում է մարզել Սարմաստում հավաքված, բայց դեռևս մարտական որևէ փորձառություն չունեցող նորեկներին:

Խանասորի արշավանքի ժամանակ Խանը ընտրվում է հիսնապետ և «...աչքի է ընկնում, որպէս անւախ և քաջ կռուող»[1]:

Արշավանքի ավարտից հետո Խանը Դումանի հանձնարարությամբ մեկնում է Բաքու: Նկատի ունենալով մարտական գործողությունների ժամանակ նրա դրսևորած անքաթիր կարողություններն ու արիական կեցվածքը՝ նրան Դումանի միջնորդությամբ ընդունում են աշխատանքի Բաքվի նավթահանքերից մեկում: Քաջարի հայդուկը պետք է պաշտպաներ նավթահանքերն ավազակների ոտնձգություններից: Բնական է, որ այդ պաշտոնը չէր կարող գոհացնել հայրենիքի ազատագրական պայքարին անվերապահորեն զինվորագրված ազատասեր հայդուկին, որի երազանքն էր «...երթալ հօն, ուր էր Սերոբը»:

Երկիր մեկնելու իր երազանքը իրականացնելու նպատակով նա բազմիցս դիմում է Նիկոլ Դումանին և ՀՅԴ Բաքվի (Ոսկեանապատի) կենտր. կոմիտեին, խնդրելով ու պահանջելով, որ իրեն թուլատրեն և օգնեն՝ մեկնելու Երկիր: Ընկերներն ամեն անգամ խոստանում են կատարել նրա ցանկությունը և առաջին իսկ հնարավորության դեպքում ուղարկել Երկիր: Իսկ ժամանակն անցնում էր ու հայտնի չէր, թե վերջապես երբ է գալու այդ բաղձալի ժամանակը: Երկար սպասելուց հոգնած ու վրդովված՝ Խանը ներկայանում է Դումանին և վճռականորեն ասում.« Դուք միշտ հանգստացուցիք զիս, որ երբ խումբ անցնի, քեզ կը դրկենք: Ահա այսօր խումբը անցեր է եւ կուուի բռնուեր ու խմբէն շատերն ալ սպանուեր են: Իսկ ես հոս այս գործարանը կը պաշտպանեմ: Եւ իր սրտի բոլոր դառնութիւնը կը թափէ Նիկոլին առջեւ ու կը խնդրէ, որ որպէ առաջ պէտք եղած կարգադրութիւնը ընէ»[2]:

Դումանի հետ կայացած երկխոսությունից հետո, նա Բաքվում այլևս երկար չի մնում: Հ.Յ. Դաշնակցության Կարսի (Ջրաբերդի) կենտր. կոմիտեի պահանջով Խանը Բաքվից մեկնում է Կարս, ուր նույն օրերին Թիֆլիսից այնտեղ է գալիս նաև նրա եղբայր Միհրանը:

Կարսում Խանը ծանոթանում է բազմաթիվ անվանի գործիչների, որոնց թվում «Սուրբ չորրորդությանը» Սեբաստացի Մուրադին, Սեպուհին, Կայծակ Առաքելին ու Ավոյին: Այդ օրերին Կարսի նահանգի տարածքում ՀՅԴ Արևելյան Բյուրոյի որոշմամբ կազմակերպվում էր մի նոր մարտախումբ, որը պետք է մեկներ Երկիր՝ միանալու Բիթլիսի նահանգում գործող Աղբյուր

[1] «Յուշապատում...», էջ 144:
[2] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 2, էջ 11:

Սերոբի գլխավորած մարտական ուժերին: Համաձայն ՀՅԴ Արևելյան Բյուրոյի ու Կարսի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի որոշմանը՝ մարտախումբը Երկիր պիտի առաջնորդեր հայ ազատագրական պայքարում արդեն նշանակալի հեղինակություն ունեցող Ռուբեն Շիշմանյանը (Դերսիմի Քեռի), իսկ Խանը լինելու էր նրա օգնականը[1]:

Մինչև ՀՅԴ «Ջրաբերդ» կենտր. կոմիտեությանն ընկերները կհասցնեին նախապատրաստել մարտախումբը, Խանը ժամանակն անտեղի չի վատնել: Նա Սեբաստացի Մուրադի հետ զբաղվում է զենքերի փոխադրությամբ, իսկ երբեմն էլ մարզում է այն մարտիկներին, որոնք պիտի մեկնեին Երկիր: Այդ ամենին զուգընթաց, հայոց լեզվի դասեր առնելով Ջրաբերդի կենտր. կոմիտեի անդամների՝ Համազասպ Նորհատյանի և Բգնունի Խաչատուրի մոտ, ավելի է հարստացնում հայերենի իմացությունը[2]:

Մարտախմբի Երկիր մեկնելու նախօրեին հայտնի է դառնում, որ Դերսիմի Քեռին, որը նախընտրում էր գործել Դերսիմի ու Երզնկայի շրջաններում, հրաժարվում է ստանձնել մարտախմբի հրամանատարությունը: Խանը նշանակվում է «Շանթ» մարտական խմբի հրամանատար:

«Շանթ» մարտախումբը նույնպես կազմավորվել է Կարսի շրջանում, 1899թ.: Նրա կազմում ընդգրկվել են այնպիսի նշանավոր ռազմիկներ, ինչպիսիք են Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Կայծակ Առաքելը, Գյումուշխանցի Ավոն ու Մեշեդի Ավետիսը, բաբերդցի խմբապետ Միհրանը և այլոք: ՀՅԴ Արևելյան Բյուրոյի որոշմամբ, «Շանթ» մարտախումբը նույն տարում պետք է ուղևորվեր Երկիր՝ Կարս, Բագրևանդ (Ալաշկերտ)-Մխլաթ գծով: Այդ նույն երթուղով Մխլաթ էին անցել 1895թ. Աղբյուր Սերոբի, իսկ 1897թ. և 1898թ. նրա հորեղբորորդու՝ Ճարտարի գլխավորած զինատար խմբերը: Արշավախմբի կազմակերպիչներն ու նրանում ընդգրկված ֆիդայիները լիահույս էին, որ իրենց ձեռնարկը նույնպես կպսակվի հաջողությամբ[3]:

1899թ. հոկտեմբերի 24-ին մարտախմբի բոլոր 83 անդամները հավաքվում են Բերնոց գյուղում, որտեղից պիտի անցնեին Բասեն: Մարտախմբին ճանապարհելու նպատակով Բերնոց գյուղ են գալիս ՀՅԴ Կարսի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի անդամներ Հ.Նորհատյանը, Արամայիս Ազնավուրյանն ու Խաչատուր Բգնունին, որոնք ոգևորիչ խոսքերով բարի ճանապարհ են մաղթում մարտախմբի հայդուկներին:

«Ամենէն վերջը,- գրում է Սեպուհը,- իր նոր տրված հայերէնով ճառ մը խօսեցաւ Խանը ու երդում ըրաւ հաւատարմօրէն ծառայելու ՀՅԴ եւ անոր դրօշին տակ առաջնորդելու իր քաջերը դէպի «Հայոց երազի աշխարհը»[4]:

Լուսադեմին ճանապարհ ընկնելով՝ մարտախումբը հասնում է Հոբուիրան գյուղ և մեկ օր հանգրվանում է այդ գյուղում, ապա շարունակելով ուղևորությու-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 712, գ. 4, էջ 1:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 3, էջ 24:

ին. հասնում Արաքսի ափին գտնվող Չորուք. իսկ հետո Այմալու գյուղերը. որտեղ Խանը Սեբաստացի Մուրադից ու Արամայիս Ագնավուրյանից ստանում է մարտախմբի անդամների համար նախատեսված զենքերը: Մարտախումբն աննկատ անցնում է ռուս-թուրքական սահմանը և ցերեկը. մերձակա սարի խորշերից մեկում ապաստանելով. գիշերը շարունակում է ճանապարհը: Մարտախմբի երթուղու անվտանգությունն ապահովելու համար. Խանը. թեև ձեռնարկում է անհրաժեշտ միջոցները. բայց ամեն ինչ չէ. որ հայ մարտիկների համար դասավորվում է նպաստավոր:

«Ամբողջ գիշերը.- շարունակում է Սեպուհը.- առանց կանգ առնելու. կերթան. բայց դժբախտաբար չեն կարողանար հասնել Ալաշկերտ. որովհետև վալատը խիստ մթութեան պատճառով կը կորսնցնէ ճանապարհը. եւ խումբը երկու երեք անգամ կը դառնայ միեւնոյն լերան շուրջը» [1]:

Մարտախումբը վալաղի շփոթության պատճառով կորցնում է թանկարժեք ժամանակը և հայտնվում տհաճ իրավիճակում: Արդեն լուսաբաց էր. առաջ շարժվելու դեպքում նրանք անպայմանորեն կնկատվեին ամենուրեք հայտնվող քրդերի կողմից և կարող էին հայտնվել անկանխատեսելի իրավիճակում:

Համաձայն ընդունված կարգի՝ մարտական և զինատար խմբերը. գյուղացիներին վնաս չպատճառելու նկատառումով. իրավունք չունեին իջնանել որևէ հայկական գյուղում: Բայց այդ օրը հանգամանքների բերումով հայդուկները հարկադրված՝ խախտել են ընդունված կարգը: Արշալույսին Խանը իրենց հետագա քայլերն ու անելիքը ճշգրտելու նպատակով իր մոտ է կանչում օգնականին. տասնապետերին և նրանց հաղորդում մարտախմբի հետ կատարվածն ու վալաղ Ղուկասի հետևյալ խորհուրդը .«...մնալ ցերեկը Խաստուր հայկական գյուղը մինչև երեկոյան և ապա շարունակել ճանապարհը: Կորոշեն շարժիլ այդ խորհուրդի համաձայն» [2]:

Մարտախումբը մտնում է Խաստուր և տեղավորվում գյուղի Խաչիկ վարժապետի գոմում: Քանի որ խմբի անդամները շատ հոգնած էին, անմիջապես իրենց գլխների տակ են դնում ուսապարկերն ու քնում և «...միայն Խանն է, որ պահապան հրեշտակի նման կը հսկէ քնացող ֆիդայիներուն» [3]:

Մատնիչների միջոցով տեղեկանալով գյուղում հանգրվանած ֆիդայինների մասին՝ թուրքական զորավաշտերն ու քրդական հեծելախմբերը արագորեն արշավում են գյուղ և չորս կողմից պաշարում գյուղն ու այնտեղ հանգրվանած ֆիդայիներին: Համաձայն Սեպուհի հավաստման՝ գյուղը պաշարվել է 400 թուրք զինվորների և հազարից ավելի քուրդ զինյալների կողմից [4]:

Ըստ Ա. Նորյանի տվյալների. «Կռուին մասնակցում էին ութ հարիւր հոգի հետևակ զօրք. երեք հարիւր հոգի հեծելազօրք և քրդական հինգ աշիրաթներիկ» [5]:

[1] Նույն տեղում, էջ 25:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նորեան Ա, նշվ. աշխ., էջ 370:

Ա.Նորյանը. նշելով թուրք հեծյալ և հետևակ զինվորների քանակը. չի նշում. թե քանի՞ զինյալներից էին բաղկացած քրդական հինգ աշիրեթները: Իր հուշերում Խաստուրի կռվի մասին անդրադառնում է նաև Արամայիս Ագնավուրյանը. որը. այդ օրերին գտնվելով Կարսում. գործուն մասնակցություն է ունեցել Խանի մարտախմբի կազմավորմանը: Համաձայն նրա վկայության՝ «Կռուին մասնակցող թշնամի ոյժերի թիւը հասնում էր մօտ 3000-ի» [1]:

Երեք վկայությունների դեպքում էլ հակառակորդի ուժերի գերազանցությունն ահռելի էր: Մինչև մարտական գործողությունների դիմելը. գյուղի աղա Դերվիշ բեկը լուր է ուղարկում ֆիդայիներին և առաջարկում հանձնել զենքերը՝ խոստանալով ապահովել նրանց անվտանգ վերադարձը ռուսական սահման: Դերվիշ բեկը միաժամանակ ասպառնում է. որ չհնազանդվելու դեպքում բոլոր ֆիդայիներին կայրեն գոմում. իսկ գյուղն ու բնակիչները նրանց պատճառով կբնաջնջվեն: Ֆիդայինների պատասխանը միանշանակ էր. «Քանի ողջ ենք. մենք զէնք չենք տար և պիտի կռուենք» [2]:

Բնավ չկասկածելով. որ իրենց մերժողական պատասխանը ստանալուն պես թուրք զինվորներն ու քուրդ զինյալներն անմիջապես հարձակման կանցնեն. Խանը բոլոր տասնյակներին տալիս է համապատասխան հրահանգներ և ֆիդայիներին արագորեն դուրս բերելով Խաչիկ վարժապետի գոմից՝ առաջնորդում է մարտի: Հակառակորդը երկար սպասեցնել չի տալիս: Թուրք զինվորներն ու քրդերը. ապավինելով իրենց քանակական գերակշռությանը. վճռականորեն նետվում են գրոհի:

Չնայած հակառակորդի ուժերի անհամեմատ գերազանցությանը՝ ֆիդայիները ընդունում են մարտահրավերը և հարմար դիրքեր են գրավում գյուղի փողոցներում ու անկոտրում դիմադրությամբ կռվում են: Բայց քանի որ հակառակորդի ուժերն անհամեմատ գերակշռող էին. որոշում են սրընթաց գրոհով ճեղքել պաշարման շղթան և հեռանալ վտանգված շրջանից:

Որպեսզի ճեղքումը ֆիդայիններն իրականացնեն առավելագույն հաջողությամբ. անհրաժեշտ էր նախ գրավել գյուղի մերձակա բարձունքները ու թույլ չտալ. որ հակառակորդը տիրի այդ դիրքերը և բարձրից տեղացող հարվածներով խափանի իրենց ձեռնարկած գրոհը: Եթե ֆիդայիներին չհաջողվեր իրականացնել իրենց մտահղացումը. ապա չորս կողմից հարձակվող թուրք զինվորներն ու քրդերը. չնայած դրսևորած համառ դիմադրությանը. ի վերջո կփակեին գյուղի բոլոր ելքերն ու մուտքերը. և նրանք. հայտնվելով շրջափակման մեջ. դժվար թե կարողանային փրկության ելք գտնել: Ահա այդ պատճառով չափազանց կարևոր էր սրընթաց գրոհով գրավել Խաստուրի մերձակա բարձունքը և այնտեղից կրակ տեղալ գյուղը շրջափակող հակառակորդի զորաշարքերի վրա:

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 4, էջ 163:
[2] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 3, էջ 25:

«Խմբի երկու տասնեակը,- գրում է Ա. Ագնավուրյանը,- ոչ միայն պիտի հարուածէր թշնամու կուրծքերի վրայ դիրք բռնած դիրքերը, այլ նաեւ պիտի պատռէր ու անցներ գօրքի պրկուած շղթան»[1]:

Մարտախմբի գինվորական խորհրդի և յորաքանչիւր մարտիկի համար միանգամայն հասկանալի էր, որ չափազանց դժվարին այդ ձեռնարկն իրականացնելու համար անհրաժեշտ էր ունենալ խելահեղ քաջություն, անկոտրում կամք և վճռականություն: Ո՞ւմ պետք է վստահեին կենսագործելու այդ կարևորագույն առաջադրանքը, որի հաջողությունից էր կախված ողջ մարտախմբի փրկությունը:

«...Խումբը,- նշում է Ա.Ագնավուրյանը,- իր վերոյիշեալ յանդուգն որոշումն հանելիս գիտէր, թէ նրա գործադրութիւնը ո՞ւմ յանձնել: Սեբաստացի անզգուշական հերոսը եւ Բայբուրդցի յեղափոխական վագրը՝ Մուրատն ու Սեպուհը, անմիջապէս անվարան ստանձնում են ծանր, պատասխանատու վճռի գործադրութիւնը եւ վայրկենապէս կազմում իրենց երկու տասնեակի հերոսական կռուի ծրագիրը»[2]:

Որպեսզի ապակողմնորոշեն և շփոթության մեջ գցեն հակառակորդին, ֆիդայիները սկսում են չորս ուղղությամբ խաչաձև կրակ տեղալ, և մինչև թշնամին կփորձեր հասկանալ, թե որ ուղղությունից են սուրում գնդակները, Մուրադն ու Սեպուհը իրենց տասնյակներով դուրս են նետվում Խաչատուր վարժապետի գոմի հարևանությամբ գրավված դիրքերից ու սրընթաց գրոհ ձեռնարկում գյուղի տների կտուրներին դիրքավորված թուրքերի և քրդերի վրա, ճեղքում են պաշարման շղթան և մեծ արագությամբ հասնում գյուղի եզերքը:

Որքան էլ սրընթաց և անակնկալ լիներ հայ մարտիկների գրոհը, այնուամենայնիվ «Քնած չէր նաև թշնամին: Բազմահազար քիւրտ ամբոխը և հազարի հասնող թուրք կանոնաւոր զօրքը իրենց համազարկերն ուղղել էին քսաներկու հերոսների վրայ, որոնք, արհամարհելով մահը, իրենց ցեղի դիւցազներգութեամբ ու արդար վրէժով գօտեպինդ, անշեղ, ընթանում էին դէպի Խաստուրի հարաւ- արեւմտեան բարձունքը»[3]:

Ավելի քան երկու ժամ է տևել այդ զարմանահրաշ մարտը: Հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը՝ Մուրադի և Սեպուհի մարտիկները ճեղքում են պաշարման շղթան, գրավում բարձունքը և դիրքավորվելով՝ սկսում բարձրից հարվածներ տեղալ թուրքերի ու քրդերի վրա:

Ա.Նորյանը, անդրադառնալով Խաստուրի կռվի՝ այդ վճռական և բախտորոշ պահի գնահատմանը, գրում է. «...տասնեակները արշաւում են դէպի մօտակայ բլուրը, յաջողութեամբ անցնում են գետը, ու երեք քառորդ ժամից նրանք կարողանում են տիրանալ այդ կարեւոր դիրքերին»[4]:

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 4, էջ 163:
[2] Նույն տեղում, էջ 161:
[3] Նույն տեղում:
[4] Նորեան Ա, նշվ. աշխ., էջ 370:

Գրավելով բարձունքը՝ նրանք անմիջապես կրակ են տեղում գյուղի մատույցներում և տների կտուրների վրա խմբված հակառակորդի գինվորների վրա: Պարապմունքներ չէին մատնվում նաև գյուղում մնացած ֆիդայիները: Անցքեր բացելով իրենց պատապարած տների պատերի մեջ՝ նրանք նույնպես դիպուկ համազարկեր են տեղում թշնամու վրա և օգնում Մուրադի ու Սեպուհի տասնյակներին՝ իրականացնելու ճեղքումը:

«Երբ,- շարունակում է Ա. Ագնավուրյանը,- Սեպուհն ու Մուրատը իրենց խմբով գրաւում են Խաստուրի բարձունքը, անմիջապէս համազարկերի տակ են առնում գիւղի հարաւ-արեւմտեան կուրծքերին եւ գիւղի ծայրերին խմբված թշնամուն, որ խուճապահար փախուստի է դիմում: Խմբի՝ Խաչատուր Վարժապետի տան մէջ եղած հատուածը նկատում է այդ եւ գալիս այն եզրակացութեան, որ Սեպուհը եւ Մուրատը գրաւել են Խաստուրի բարձունքը»[1]:

Կռիվը չթուլացող ուժգնությամբ շարունակվում է մինչև մութն ընկնելը:

Մուրադի ու Սեպուհի ֆիդայիների և մյուս տասնյակների գրոհն ու բարձունքներից, գյուղի մյուս հատվածներից տեղացող հարվածները խուճապ եւ շփոթություն են առաջ բերում թշնամու շարքերում: Մի փոքր հաղթահարելով իրենց շարքերում առաջացած խուճապային տրամադրությունները՝ թուրքերն ու քրդերը, օգտվելով իրենց քանակական ահռելի գերակշռությունից, սկսում են չորս ուղղությամբ անխնա կրակ տեղալ գյուղի վրա:

Ակնթարթորեն սթափ գնահատելով մարտադաշտում ծավալվող իրադարձությունների նրբությունները՝ Խանը կայացնում է միանգամայն կշռադատված, հակառակորդի համար միանգամայն անհասկանալի և շատ կարևոր որոշում, որը վերջնականապես վճռում է կռվի ելքը. «Յանկարծ լսում է հրամանատարի խրոխտ ձայնը՝... «պառկել», եւ բոլորն էլ իսկոյն գետին են փռուում: Այժմ երկու կողմից բարձրացող թշնամիներն իրար դէմ էին կուում եւ շատ ուշ հասկացան «պառկելու» ռազմագիտական նշանակութիւնը: Տղաներն էլ իրենց պառկած տեղերից էին կրակ տալիս եւ աջ ու ձախ թշնամին գետին էր գլորում: Ջարդը կատարեալ էր: Թշնամու սխալուելը եւ հրամանատարի խելացի հրամանը՝ «պառկելը», փրկեց շատերին»[2]:

Հակառակորդի համար կատարյալ անակնկալ էր ֆիդայիների կիրառած մարտավարությունը: Թուրքերի ու քրդերի գործողություններում կատարվում է զարմանահրաշ դեպք, ստեղծված իրավիճակում չկարողանալով ճիշտ կողմնորոշվել ու մատնվելով շփոթության՝ նրանք սկսում են կրակ տեղալ իրար վրա: Մարտադաշտում ծավալվող գործողությունների արդյունքը ֆիդայիների համար ավելի քան գոհացուցիչ էր: Հենց իր իսկ համազարկերից զգալի կորուստներ կրելով՝ թշնամին խուճապի է մատնվում և այլևս անկարող լինելով շարունակել կռիվը, լքում է մարտադաշտը և դիմում փախուստի:

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 4, էջ 162:
[2] Նորեան Ա, նշվ. աշխ., էջ 370:

Ֆիդայիների փայլուն հաղթանակ էին նվաճել. նրանք հանգիստ, առանց խոչընդոտի դուրս են գալիս գյուղից և տեղափոխվում առավել ապահով վայր:

Թշնամին շատ մեծ կորուստ էր տվել: «Հաստատ աղբիւրներից քաղած են. գրում է Ա. Ագնավուրյանը. որ 350-ի մօտ է. որոնց մէջ են Դարուիշ աղան. իր եղբայրը. երկու որդիները. երկու հատ շէյխ. Ալի փաշայի տղան. երեք հատ հազարապետ եւ շատ հարիւրապետեր ու պաշտօնեաներ»[1]:

Համաձայն Ա.Ագնավուրյանի վկայության՝ Խաստուրի կռում հակառակորդի կորուստները կազմում են. բացի վերը յիշէալներից (նկատի ունի Դարվիշ աղային. նրա եղբորն ու երկու որդիներին. որոնք փորձել են խաբեությամբ զինաթափել ֆիդայիներին- Հ.Գ.). Բալուլ փաշայի թոռը. երկու սպայ, երկու հարիւր զինուորներ եւ համիդէաններից մօտ 150 հոգի»[2]:

Կռվի ընթացքում իրենց մարտախմբի հրամանատարի կողմից կիրառած այդ հնարամիտ և փրկարար մարտավարության իրողությունը մի փոքր այլ ձեւով է հավաստում Մեպուհը. «Կէս գիշերին քիւրտերը շուարացնելու համար Խանը կը հրամայէ կրակ բանալ հանդիպակաց լեռներու վրայ. ապա հակառակ կողմը: Ու պառկելով փորի վրայ՝ կը սկսի սողոսկել դէպի լեռան ստորոտը... Թշնամին իրարու դէմ կը կռուի. մի կողմը միւսին թշնամի կը կարծէ. որովհետեւ Խանը երկու կողմի վրայ ալ հրամայած է կրակ բանալ»[3]:

Խաստուրի կռվում մարտախմբի զոհերն էին տասնհինգ ֆիդայիներ:

Չնայած անվիճելի հաղթանակին և մարտում ձեռք բերած փորձառությանը. այնուամենայնիվ. այս անգամ չի իրականանում Երկիր մեկնելու Խանի ու նրա գլխավորած մարտիկների բուռն ցանկությունը: Խաստուրի կռվում հայ մարտիկներից կրած պարտությունը թուրքերն ու քրդերը, ինչ խոսք չէին կարող հանգիստ մարսել և մոռացության մատնել: Որևէ գաղտնիք լինել չէր կարող, որ նրանք հայ ֆիդայիներից կրած պարտությունը անպայմանորեն փոխհատուցելու էին՝ կոտորելով գյուղի բնակչությանը: Խաստուրի հայ բնակչությանը կոտորածից փրկելու ելքը միակն էր. մարտախումբը հարկադրված իր հետ վերցնում է Խաստուրի բնակիչների մի մասին և հեռանում[4]:

Խաստուրի բնակիչներից շատերը, երկյուղելով թուրքերի և քրդերի վրեժխնդրությունից, լքում են գյուղը ու հեռանում տարբեր ուղղություններով: Գյուղում մնացած փոքրաթիվ խաստուրցիներին թուրքերն ու քրդերը սպանում են, իսկ Խաչատուր վարժապետին, որը հանդգնել էր իր տանն ընդունել ֆիդայիներին, տանում են Բայազետ և կախաղան բարձրացնում[5]:

Քանի որ Երկիր մեկնել արդեն հնարավոր չէր. Խանը մարտախմբով վերադառնում է Կարս և ներկայանալով ՀՅԴ կենտ. կոմիտեին, բացատրություն է տալիս Խաստուրում մղած կռվի մասին ու նրա համաձայնությամբ ցրում մարտախումբը: Թեպետ չի իրականանում «Շանթ» մարտախմբի մարտիկների երազանքը. սակայն նրանց մոտ չի մարում Երկիր մեկնելու ձգտումը: Մարտախմբի մի մասը հույս տածելով. որ իրենց ի վերջո կհաջողվի որևէ մարտական խմբի կազմում ուղևորվել Երկիր. մնում են Կարսի շրջանի սահմանամերձ հայկական գյուղերում:

Իր հուշերում «Խաստուրի» կռվից վերադարձած ֆիդայիների պահվածքի մասին ուշագրավ մանրամասներ է պատմում Վահան Փափազյանը. որն այդ օրերին կուսակցության հանձնարարությամբ գործում էր Ալեքսանդրապոլում: Որպես կանոն ֆիդայիների տրամադրությունը մեծապես պայմանավորված է եղել նրանց մղած կռվի արդյունքով: Եթե կռիվը հաղթական էր և նրա արդյունքը գոհացուցիչ, ապա ըստ Վ. Փափազյանի բնորոշման. մարտադաշտից վերադարձող հայդուկները իրենց դրսեվորում էին որպես համեստ, կարգապահ զինվորներ. «Ազգը սաղ մնայ, կուսակցութիւնը սաղ մնայ, մեր գլխից անպակաս անի»...կրսէին անոնք օրինութեամբ մը[1]»:

Եթե հայդուկը մարտադաշտից վերադառնում էր պարտված կամ ձախողվում էր առաջադրանքի կատարումը, ապա «Աստուած մի արասցէ.- գրում է Վ. Փափազյանը.- ան կը դառնար կոպիտ, դեհիկ եւ անկարգապահ ու վերին աստիճանի պահանջկոտ. յարգանք դէպի կուսակցութիւն կը չքանար. անսանձ ու կատաղի կը դառնար: Անշուշտ, իր խղճի խայթն էր կեռար իր մէջ. պատուոյ զգացումը, ստորնացած տղամարդու «թասիբը» եւ ամոթը »[2]:

Ճիշտ է, «Խաստուր»-ի կռվում հայդուկների դրսևորած քաջագործությունը վեր է որևէ գովասանքից. բայց, այնուամենայնիվ, կռվի արդյունքը չէր կարող գոհացուցիչ լինել: Ամենակարևորը. նրանց չի հաջողվում կատարել առաջադրանքն ու մեկնել Երկիր: Բնական է, որ համանման իրավիճակում հայդուկի համար. հասկանալի պատճառով, չափազանց դժվար էր խեղդել իր հոգում կուտակված ցավն ու դժգոհությունը և չարտահայտել այն:

Վ. Փափազյանը պատմում է, թե ինչպես «Խաստուր»-ի կռվից հետո հայդուկներից մի քանիսը եկել են Ալեքսանդրապոլ և խուժելով ՀՅԴ գրասենյակը՝ շրջապատել ու նրա վրա տեղացել իրենց զայրույթն ու վրդովմունքը. «Դո՞ն ես Վահանը... եւ առանց պատասխանի սպասելու, բուռն խօսքերու կարկուտ տեղացին վրաս.- Անօթի, ծարաւ տխախներու մէջ ենք մնացեր. մէկ չհարցնէ՞ք, չփնտռէ՞ք... Մեռնելու ճամբած ատեննիդ մեղր ու կարագ կուտեցնէիք, ապա ինչո՞ւ մեր սեւ տէրտին ատեն երեսնիդ կը պահէք... Չուր ե՞ր... ազգութիւնը մեռա՞ւ, ընկերութիւն չկա՞յ... յեղափոխութիւն էսպէ՞ս կեղնի...[3]»:

Կարելի է հասկանալ հայդուկի ցավն ու տառապյալ վիճակը և նրա արտահայտած վրդովմունքն ու դժգոհությունը: Վ. Փափազյանին հաջողվում է մեծ դժվարությամբ մեղմել հայդուկների վրդովմունքն ու դժգոհությունը և խաղա-

---

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 4, էջ 162:
Նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 3, էջ 24:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 712, գ. 4, էջ 3:
[5] Նույն տեղում:

---

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, 1950, Պոսթըն, էջ 41:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

դությամբ ճանապարհել նրանց: Նույն օրը՝ երեկոյան նրա գրասենյակն է ներխուժում պարբևահատակ հայդուկներից մեկը և սպառնալի ու զայրացած տոնով հարցնում. «--Մեզի դեռ չա՞տ պիտի պահէք հոս. եթե մեր երեսէն կշտացեր էք. մենք չատուց ձեր երեսէն կշտացեր ու կշտացեր ենք

...Միջոց տուէք գլուխներս առնենք կորսուենք...

--Ինչո՞ւ էք մնացեր. ինչո՞ւ չէք երթար. ճամբան բաց է...

--Ինչո՞վ երթանք. ոտքո՞վ...հրամմէ ինքդ գնայ անգամ մը... տրված էք տաք օտաներու մէջ. փափուկ աթոռներու վրայ բազմել... »[1]:

ՀՅԴ Ալեքսանդրապոլի (Քարի)կոմիտեի գրասենյակը ներխուժած հայդուկը եղել է Հայոց Ազատամարտի ականավոր գործիչ Սեպուհը: Ուշագրավ է Սեպուհի հարցադրմանը Վ. Փափազյանի տված պատասխանը.«--Բայց կուսակցութիւնը դրամ չունի. հասկացիր...[2]»:

Վ. Փափազյանի վերոհիշյալ պատասխանը ակնառու վկայությունն է այն իրողությանը. որ ուժերի կենտրոնացում և ապստամբական ձեռնարկներ կենսագործելու որոշումը ընդունելու պահին ու նրանից հետո ՀՅԴ համար ամենաղժվարինը եղել ու մնում էր ֆինանսական խնդիրների լուծումը:

Չնայած Խանի առաջնորդած մարտախմբին չհաջողվեց կատարել առաջադրանքը. այնուամենայնիվ. «Խաստուրի կռիվ»-ը ունեցավ որոշակի նշանակություն: Վերադառնալով Կարս և Ալեքսանդրապոլ Խանն ու նրա զինակիցները չեն մատնվում պարապուրդի: Խաստուրի կռվում. որի արձագանքները տարածվել էին Կարսի բովանդակ նահանգում և նրա սահմաններից դուրս. հայ մարտիկների դրսևորած հերոսականությունը զուտ քարոզչության ու հայությանը մարտական ոգի ներարկելու նպատակով. պետք էր հնարավորության սահմաններում իրագործել հանրությանը: Այդ նպատակով. «Շրջելով գաւառը. Խանը կը պատմէ Խաստուրի կռիւին մանրամասնութիւնները. գիւղացիները մեծ յափշտակութեամբ կը լսեն հայ ֆէտայիի քաջագործութիւնները»[3]:

[1] Նույն տեղում, էջ 42:
[2] Նույն տեղում:
[3] Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, էջ 15:

2. 3. ՀՅԴ գործունեությունը Դուրան -Բարձրավանդակում (1899-1903 թթ.)

Աղբյուր Սերոբի և Գուրգենի նահատակությունն անփոխարինելի կորուստ էր հատկապես Հ.Յ.Դաշնակցության Դուրան-Բարձրավանդակի ու Սալոն Ձորի կենտր. կոմիտեների. ինչպես նաև Բիթլիս նահանգի հայ բնակչության համար:

Թեպետ Վարդան վարդապետի ու Մշո Տատրակի անդամությամբ շարունակում էին գործել ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն և Սերոբի առաջնորդած ֆիդայիները. բայց պիտի նշել. որ այդ ժամանակաշրջանում Տարոն աշխարհի իրական առաջնորդը Հրայր Դժոխքն էր. որը Սերոբի ու Գուրգենի նահատակությունից հետո Դուրան-Բարձրավանդակի Պատասխանատու կենտր. կոմիտեի միակ գործող անդամն էր:

Վարդան վարդապետն ու Մշո Տատրակը իրենց զբաղեցրած պաշտոնների պատճառով շատ քիչ են այցելել գյուղական բնակավայրեր և գրեթե մշտպես հարկադրված են եղել մնալ Մուշ քաղաքում:

«Հրայրը.- գրում է Կ. Սասունին.- յեղափոխական վարիչ կը նկատուէր Տարօնի շրջանի բոլոր ուժերու կողմէ: Հրայրը պատասխանատու գործիչը կը նկատուէր Հ.Յ. Դաշնակցութեան նաեւ արտասահմանի մարմիններու կողմէ: Բացի այս հանգամանքներէն, Հրայրը լիովին կը գիտակցէր իր դէրին եւ ժողովրդական վարիչի իր կոչումին: Ան ինքզինքը կը նկատէր վարիչ եւ պատասխանատու»[1]:

Այդ նույն ժամանակաշրջանին համանման բնորոշում է տալիս նաև Ռուբենը, որի գնահատմամբ «...ան դարձաւ ժողովուրդի համար երկրորդ Քրիստոս մը»[2]:

Հիմք ունենալով Դուրան-Բարձրավանդակում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունները՝ «Հրայրյան շրջան»-ը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. 1. Ինքնապաշտպանական մարտեր. 2. Հայդուկային կռիվներ և ահաբեկչություններ. 3. Ազատագրական պայքարի մարտավարության իրարամերժ տեսակետներ պաշտպանող ուղղությունների պայքար. 4. Ընդհանուր ապստամբության նախապատրաստման:

Աղբյուր Սերոբի նահատակությունից հետո թուրքական զորքերն ու քրդական աշիրեթները. չեն դադարեցնում իրենց ոտնձգությունները Սասունում և Դաշտի գյուղերում: Իշխանություններին հայտնի էր. որ Բիթլիսի նահանգի մի շարք շրջաններում և հատկապես Սասունում դեռևս գործում էին Աղբյուր Սերոբի ֆիդայիները: Թուրք հրամանատարությունը ծրագրում է զենքի ուժով վերջնականապես Սասունն ու Դաշտը մաքրել ֆիդայի-

[1] Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, էջ 36:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 237:

ներից և այդ նկատառումով հարձակումներ է ձեռնարկում առաջին հերթին հայկական այն բնակավայրերի վրա, որոնք համարվում էին ֆիդայիների հենարանը:

1899 թ. նոյեմբերին թուրքական մի զորամաս, որին միանում են Բշարե Խալիլի գլխավորած բալակցի քրդերը, հարձակվում է Սպաղանք գյուղի վրա: Սասունի մյուս գյուղերը, զգաստանալով, որ իրենց միջամտությունը կարող է տեղիք տալ նոր կոտորածների, այս անգամ որևէ օգնություն ցույց չեն տալիս Սպաղանքին: Մնալով միայնակ՝ սպաղանցիները, այնուհանդերձ, իրենց առաջնորդի՝ Մակարի գլխավորությամբ կարողանում են հետ մղել թշնամու գրոհները և գյուղը փրկել կոտորածից[1]:

Թուրք իշխանությունները, իհարկե, չէին կարող անպատասխան թողնել Սպաղանաց Մակարից կրած պարտությունը: 1900թ. հուլիսի 3-ին, ըստ Ռուբենի տվյալների, 2000-3000 թվակազմ ունեցող զորքը, որին միանում են քրդական հրոսակախմբերը, հարձակվում է Սպաղանքի վրա:

Սպաղանցիները այս անգամ ևս դիմում են ինքնապաշտպանության, բայց ի՞նչ կարող էին անել փոքրաքանակ և այն էլ ոչ այնքան լավ զինված սպաղանցիները հակառակորդի բազմահազար ուժերի դեմ: Մակարին հաջողվում է մի քանի տասնյակ մարտիկներով կռվելով դուրս գալ թշնամու պաշարման օղակից և բարձրանալ սարը: Զորքն ու քուրդ զինյալները ներխուժում են գյուղ, սարսափելի սպանդ են իրականացնում և չբավարարվելով դրանով՝ շարունակում են հարձակումները, քանդում ու թալանում են հայկական մի քանի բնակավայրեր[2]:

Թուրք իշխանությունները հայկական բնակավայրի վրա ձեռնարկած հարձակումներն ու կոտորածներն արդարացնելիս վկայակոչում են Սասունում և Դաշտի գյուղերում ֆիդայիների ներկայությունն ու նրանց մարտական գործողությունները: Պիտի նկատել, որ այդ ժամանակահատվածում ֆիդայիների մղած կռիվները ունեին բացառապես պաշտպանական բնույթ: Մի՞թե ֆիդայիներն էին պատճառը սուլթան Համիդի գահակալության տարիներին օսմանյան կայսրությունում իրականացված հայկական կոտորածների: Ֆիդայիների ներկայությունը թուրք իշխանությունների համար պարզապես հարմար պատրվակ էր՝ իրականացնելու իրենց ծրագրերը:

Բացի ինքնապաշտպանական մարտերից, Սասունում և Դաշտի գյուղերում տեղի են ունեցել հայդուկային բազմաթիվ կռիվներ: Այդ ժամանակահատվածը ներկայացնող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հավաստում է, որ հայդուկային կռիվներում դրսևորած քաջությամբ ու կիրառած հնարամիտ մարտավարությամբ առանձնացել է Գևորգ Չավուշը: Նրա մղած կռիվներն առավել մանրամասնորեն ներկայացնում է Ռուբենը: Կարելի է ասել, որ այն հեղինակները, ովքեր անդրադարձել են Գևորգ Չավուշի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 211:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 216:

մասնակցությամբ և ընդհանրապես Դուրան-Բարձրավանդակի տարածքում տեղի ունեցած կռիվների նկարագրությանը, հիմնականում օգտագործել են Ռուբենի հուշագրությունները[1]:

Բացի հայդուկային կռիվներից, ֆիդայիները դեպքերի թելադրանքով հարկադրված են եղել ձեռնարկել ահաբեկչական գործողություններ, որոնց իրականացումը պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. Դուրան-Բարձրավանդակի տարածքում գործում էին բազմաթիվ գործակալներ ու մատնիչներ: Ֆիդայիների համար չափազանց դժվար էր գործել, նրանց տեղաշարժերին ակնդետ հետևող մատնիչները, տեղեկանալով նրանց գտնվելու վայրի մասին, անմիջապես հայտնում էին իշխանություններին:

2. Մատնիչների առկայությունը զգաստացնում էր նաև ժողովրդին: Վախենալով մատնությունից և, հետևաբար, իշխանությունների կողմից կիրառվող դաժան պատիժներից՝ ժողովուրդը խուսափում էր ֆիդայիների հետ հարաբերվելուց: «...Թէ Դաշտի եւ թէ Սասնոյ ժողովուրդը,-խոստովանել է Գևորգ Չավուշը,- վերին աստիճանի յուսահատ էր, հանգստութիւն չունէինք երբեք, մատնիչները շատացել էին, անկարելի բան՝ երկու օր շարունակ մի տան մէջ մնալ: Ժողովուրդն ալ չէր ընդունում մեզ»[2]:

3. Վրեժխնդրություն:

Դավաղրաբար սպանվել էր հայդուկապետ Աղբյուր Սերոբը: Համանման պարագայում վրեժխնդիր ֆիդային, որպես անխախտ օրենք, պիտի ձեռնարկեր պատասխան գործողություն: Ֆիդայիները զուտ վրեժխնդրության նկատառումով ահաբեկում են մի քանի մատնիչների, որոնք մեղսակից էին Աղբյուր Սերոբի սպանությանը:

«Ապրիլ ամսուն,-գրում է Ռուբենը,- Գէորգը քանի մը ընկերներով կերթայ ուղղակի թունաւորող Գեղաշէնի Աւոյի տունը եւ սպառնալիքով խոստովանութիւն կը կորզէ անկէ: Կը բացուի դաւաճաններու ամբողջ ցանցը: Ատկէ վերջն է, որ Գէորգ անխնայօրէն կը կոտորէ բոլոր անոնք, որոնք որեւէ ձեւով մասնակցեր են դաւաճանական գործի: Կը քանդէ ամբողջութեամբ Աւոյի տունը եւ բնաջինջ կընէ իր ընտանիքի հետ միասին»[3]:

Ֆիդայիների իրականացրած ամենաաղմկահարույց ահաբեչական գործողությունը Բշարե Խալիլի սպանությունն է: Բալակցի քրդերի ցեղապետ Բշարե Խալիլը Սերոբի սպանությունը կազմակերպելու համար, սուլթան Համիդի պարգևած շքանշանը կրծքին ամրացած, անպատիժ շարունակում էր Դաշտի ու Սասունի հայությանը հալածելու իշխանությունների հանձնարարությունը: Ֆիդայիները վճռում են ահաբեկել Բշարե Խալիլին, որը ոչ միայն գլխավոր մասնակիցն էր Սերոբի սպանության, այլ նաև հարյուրավոր հայերի, մասնավորապես Սպաղանք գյուղի կոտորածի:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, 4, 5:
[2] «Դրօշակ», 1914, թիւ 9-12, էջ 15:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 215:

Բշարե Խալիլի հետապնդումը հանձնարարվում է ՀՅԴ Մուշի կոմիտեի անդամ՝ Հաջի Հակոբ Կոտոյանին: Յեղապետի ծառաներից մեկի միջոցով տեղեկանալով, որ հոկտեմբերի կեսերին նա Խասգյուղի կիրճով պիտի անցնի Աղբիկ, Հաջի Հակոբն այդ մասին հայտնում է ֆիդայիներին: Անդրանիկի, Գևորգ Չավուշի և Սպարապետ Մակարի առաջնորդությամբ ֆիդայիների մարտախումբը բաժանվում է երեք մասի, գրավում կիրճի ելքերն ու դարանակալ սպասում: Բշարե Խալիլը, ֆիդայիների ձեռնարկումներին անտեղյակ, թիկնապահ 25 ձիավորներով մտնում է կիրճ: Անսպասելիորեն հետևում է հայ վրիժառուների հանդարկը, ձիավորների մեծ մասը սպանվում է: Խալիլը փորձում է փախչել, սակայն հետևում է Դալեի հարվածը և «Խալիլի.-պատմում է Գևորգը.-ձին ընկաւ, Խալիլ էլ տակը ողջ. յարձակուանք եւ բռնեցինք զԽալիլ, ...ես եւ Յարութիւն զարկինք խանջալներով եւ Անդրանիկ կտրեց գլուխ զգազանին» [1]:

Ֆիդայիների իրականացրած ահաբեկչական գործողությունները ունենում են երկակի՝ իրարամերժ նշանակություն:

1. Բշարե Խալիլի և մի շարք մատնիչների սպանությունը փոքր-ինչ ոգևորում է ժողովրդին և ավելի բարձրացնում ֆիդայիների հեղինակությունը, բայց դա կարճատև երևույթ էր:

2. Ֆիդայիների ահաբեկչություններին հետևում է պատասխան գործողությունը: Թուրք իշխանություններին հարմար պատրվակ էր հարկավոր: Հատկապես քուրդ ցեղապետի սպանությունից հետո իշխանությունները, ֆիդայիներին որոնելու և ձերբակալելու նպատակով, ավելի են սաստկացնում հայ բնակչության նկատմամբ կիրառվող բռնությունները: Այդ օրերին Դուրան-Բարձրավանդակում տիրող վերոհիշյալ կացության մասին իր հուշերում նշում է նաև Անդրանիկը [2]:

Ո՞վ պետք է պաշտպաներ հայ բնակչությանը թուրքական զորքի ու նրան միացած մահմեդական հրոսակախմբերի հարձակումներից: Ինչպիսի՞ դիրքորոշում, մարտավարություն պիտի կենսագործեին հայ ազգային-քաղաքական կուսակցությունները, մասնավորապես Հ.Յ. Դաշնակցությունը, որոնք կոչված էին կազմակերպելու ու առաջնորդելու հայության ազգային-ազատագրական պայքարը:

Կ. Սասունու գնահատմամբ «Ինչպես Գուրգէնի, այնպէս ալ Սերոբի մահը թեև անախորժութեանց եւ կուսակցութեան թուլացման պատճառ դարձաւ Սասնոյ եւ Դուրանի մէջ, բայց չունեցաւ այն աղէտաբեր հետեւանքները... Պատճառը այն էր, որ կազմակերպութիւնը շատ խոր արմատներ էր ձգած»[3]:

Եթե հիմք ընդունենք Կ. Սասունու կողմից ՀՅԴ տված «կազմակերպութիւնը շատ խոր արմատներ էր ձգած» գնահատականը, ապա պիտի նկատել, որ այ-

[1] Նույն տեղում:
[2] Լեւոն Լիլուճեան, Անդրանիկի բերանով Առաքելոց վանքի կռիւը, էջ 12:
[3] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 39:

տահանդերձ, այդ նույն ժամանակահատվածում Դուրան-Բարձրավանդակում Դաշնակցության կարողություններն ու հնարավորություններն ավելի քան սահմանափակ էին՝ պաշտպանելու Սասունի և Դաշտի հայ բնակչությանը կանոնավոր զորքի ու մահմեդական հրոսակախմբերի ոտնձգություններից: Որոշակի սկզբունքային հարցերի, հատկապես ազատագրական պայքարի մարտավարության վերաբերյալ ՀՅԴ կառույցներում բացակայում էին անհրաժեշտ փոխհամաձայնությունն ու միասնականությունը: ՀՅԴ կառույցներում առկա տարաձայնություններն ավելի են խորանում հատկապես Աղբյուր Սերոբի նահատակությունից հետո: Զգալիորեն թուլանում են ժողովրդի մեջ ունեցած ՀՅԴ կառույցների հեղինակությունը:

Անդրանիկի գնահատմամբ.«Սերոբի սպանութենէն յետոյ մենք յեղափոխականներս երեսէ ինկած էինք: Ժողովուրդը մեր եւ յեղափոխութեան սուրբ գործին վրայ արհամարհանքով կը նայէր: Ալ վարկ մնացած չէր... Տեսակ մը ցրտութիւն, անտարբերութիւն եւ յուսահատ վերաբերմունք կար մեզի եւ մեր գործի հանդէպ» [1]:

Հիմք ունենալով Դուրան- Բարձրավանդակում և տեղի ՀՅԴ կառույցներում տիրող իրավիճակը՝ պիտի ասել, որ Հրայրին և այդ ժամանակաշրջանին տված Կ. Սասունու և Ռուբենի վերոհիշյալ գնահատականներն ու բնորոշումը չպետք է ընդունել բացարձակ իմաստով: Հրայրի գործունեության ժամանակաշրջանում ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ» կոմիտեության անդամներից բոլորը չէ, որ ընդունել են նրա տեսակետները և կատարել նրա ու Կենտր. կոմիտեի որոշումներն ու հանձնարարությունները:

Հրայրը, հավատարիմ մնալով տակավին ՀՅԴ Կարսի կոմիտեին 1895թ. նոյեմբերի 28-ին հասցեագրած նամակում արտահայտած. «Վստահ եղէք, որ գիշեր ու ցերեկ անքուն կը շրջիմ. եթէ գտնեմ մի փոքր յարմարութիւն, անդադար պիտի գործեմ, մինչեւ վերջին շունչ» խոստմանը, հետևողականորեն պաշտպանում է իր դավանած սկզբունքը, այն է՝ համընդհանուր ապստամբության կազմակերպումը [2]:

Բնական է, որ նա պիտի ՀՅԴ գործունեությունը Տարոնում նպատակաուղղեր կենսագործելու հենց այդ մարտավարությունը, որը համաձայն ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովի որոշման, մերժում է «ֆէտայական ասպատակային գործունէութիւնը »:

Ազգային-ազատագրական պայքարի մարտավարության վերաբերյալ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կոմիտեության շրջանակներում ձևավորվում են գաղափարական երկու՝ հակոտնյա ուղղություններ: Երկու ուղղությունների գաղափարական պայքարն ավելի է խորանում Աղբյուր Սերոբի նահատակությունից հետո,ավելի ստույգ այն ժամանակաշրջանում, երբ ֆիդայիների շրջանում որոշակի կշիռ ու հեղինակություն է ձեռք բերում Անդրանիկը:

[1] Լեւոն Լիլուճեան, նշվ. աշխ., էջ 12:
[2] «Դիւան...», հ. 1, էջ 232:

Առաջին ուղղությունը ներկայացնում էին Հրայրը, ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի անդամներ Վարդան վարդապետն ու Մշո Տատրակը, որոնք պաշտպանելով ընդհանուր ապստամբություն կազմակերպելու գաղափարը՝ մերժում էին հայդուկային կռիվները:

«Հրայրը,-գրում է Կ. Սասունին,- հաւատարիմ իր յեղափոխական նկարագրին, այժմ նորէն կանգնած կը մնար ընդհանուր ապստամբութեան տեսակէտին վրայ ու կը հաւատար, որ նման ապստամբութիւն մը կրնար նշանակութիւն ունենալ, երբ ժողովուրդը զանգուածօրէն ոտքի կը կանգնէր»[1]:

Երկրորդ ուղղությունը ներկայացնում էին Անդրանիկը, Գևորգ Չավուշն ու ֆիդայիների մեծամասնությունը: «Դուրան-Բարձրավանդակ» կոմիտեության անդամների մեջ արմատավորված գաղափարական հակոտնյա տեսակետները, ըստ Ռուբենի պայմանավորված էին հետևյալ հանգամանքներով.

1. Դուրան-Բարձրավանդակի կոմիտեության անդամների մի մասը, չարժևորելով ընդհանուր ապստամբության կազմակերպման էությունն ու առանձնահատկությունները, նախապատվություն էին տալիս հայդուկային կռիվներ մղելու ու ահաբեկչություններ իրականացնելու մարտավարությանը:

«Մինչ Արմենակ,- գրում է Ռուբենը,- ժողովրդական լայն կազմակերպուած յեղափոխութեան կը հաւատար, Անդրանիկ ընդհակառակն, ժողովրդական կազմակերպութիւնները անկատահելի կը նկատէր եւ իր ամբողջ յոյսը կը կապէ ընտրեալ ֆետայիներու գործունէութեան հետ»[2]:

2. Ժողովրդի և ֆիդայիների փոխհարաբերությունն:

«Մինչ Արմենակ,-գրում է Ռուբենը,- կը քարոզէր թէ բոլոր յեղափոխականները՝ գործիչներն ու ֆետայիները սոսկ ծառաներն են ժողովրդին եւ ժողովրդական կազմակերպութեան, Անդրանիկ ընդհակատակն, կըսէր թէ ժողովուրդն է ֆետայիներու համար, որոնք պէտք է գործեն բոլորովին ազատ ու անկախ ժողովրդի կամքէն...»[3]:

3. Հայ ազգային-հեղափոխական կազմակերպությունների վերաբերմունքը թուրք և քուրդ հեղափոխական շարժման նկատմամբ:

Հրայրը, բավարար չհամարելով կայսրության դեմ միայն հայ հեղափոխական կազմակերպությունների ուժերով պայքարելու հնարավորությունները, աշխատում էր կապեր հաստատել քրդական ցեղախմբերի հետ և նրանց ներգրավել համատեղ պայքարի մեջ: «Անդրանիկը ընդհակառակն, ոչ մի օգուտ կը տեսնէր իսլամներու յեղափոխութեան մէջ եւ խենթութիւն կը համարէր անոնց վստահիլ ու անոնց շնորհիւ փչացնել յեղափոխական գործը»[4]:

Այս հարցում Անդրանիկը թերևս իրավացի է: Տարիներ շարունակ այս ուղղությամբ Հրայրի և հայ ազգային-քաղաքական մյուս գործիչների գործադրած ջանքերը որևէ դրական արդյունք չեն տվել:

[1] Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժմն մէջ, էջ 36:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 208:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

4. ՀՅԴ կոմիտեների և ֆիդայիների փոխհարաբերությունը:

Համաձայն Հրայրի, բոլորն անկախ իրենց հեղինակությունից, անվերապահորեն պիտի ենթարկվեին ժողովրդի կողմից ընտրված կոմիտեների կամքին: Անդրանիկի կարծիքով, «...տուներուն մէջ նստած կոմիտէները չեն կրնար ղեկավարել լեռներու մէջ թափառող ֆետայիները, անոր կարծիքով կոմիտէները պիտի ըլլան ֆետայիներու համար եւ անոնց ենթակայ, իսկ ֆետայիներու պետին ենթարկուին թէ՝ բոլոր ֆետայիները եւ թէ՝ ամբողջ ժողովուրդը»[1]:

Տարոն աշխարհում տիրող իրավիճակի և համընդհանուր ապստամբության Հրայրի դավանած գաղափարի վերլուծությունը իրենց աշխատություններում առավել փաստարկված ներկայացրել են Հր. Սիմոնյանն ու Ա. Ներսիսյանը: Ըստ արժանվույն գնահատելով Հրայրի դերը հայ ազատագրական պայքարում՝ Հր. Սիմոնյանն իրավացիորեն նշում է. «Եթե ի մի բերենք Հրայրի գաղափարական-քաղաքական հայացքները, ապա կարող ենք ասել, որ նա հայ ժողովրդի ազատագրական շարժման ամենախոհեմ և ամենահեռատես գործիչներից մեկն էր, եթէ ոչ առաջինը...»[2]:

Ա. Ներսիսյանի կարծիքով Անդրանիկի հուշերում«...Հրայրին նսեմացնելու միտում կա»: Իր տեսակետը հիմնավորելու համար Ա. Ներսիսյանը մեջբերում է Անդրանիկի հետևյալ պնդումը. «Հրայրը մեզի 3-4 նամակ էր ղրկեր և ըսեր. վերցրէք բոլոր ընկերները և դաշտ իջեք կը պահվիք հոս գիւղերը և պատճառ չէք ըլլալ զօրանոցներու շինութեան, եթե հոդ մնաք, կրնաք մատնուիլ և զորանոցներ կը շինուին»[3]:

Ֆիդայիներին ներկայացրած Հրայրի պահանջը պայմանավորված չէ միայն զորանոցների շինությամբ: Սթափ գնահատելով Դաշտում և Սասունում տիրող կացությունը՝ Հրայրը գտնում է, որ ֆիդայիների ներկայությունը իշխանությունների համար կարող է հարմար պատրվակ ծառայել ավելի ուժեղացնելու բռնություններն ու հալածանքները:

Կարելի է ասել, որ Հրայր-Անդրանիկ երկու ուղղությունների հակադրությունը պայմանավորված էր ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովում ընդունված նոր մարտավարության, այն է՝ ընդհանուր ապստամբության կազմակերպման ու հին մարտավարության, այն է՝ մասնակի, ֆիդայական կռիվներով ազատագրական պայքար մղելու մարտավարության միջև եղած հակասությամբ: Տվյալ պարագայում Անդրանիկը նախապատվություն էր տալիս նախկին մարտավարությանը: Անդրանիկն ու նրա տեսակետներին համակարծիք ֆիդայիները ոչ միայն չեն կատարում Հրայրի պահանջը, այլև պահանջում, որ նա բարձրանա Սասուն և անձամբ առաջնորդի ֆիդայական խմբերը: Ընդունել Անդրանիկի ու ֆիդայիների ներկայացրած պահանջը, նշանակում է հրաժարվել ընդհանուր ապստամբություն կազմակերպելու սկզբունքից և առաջնորդվել հայդուկային

[1] Նույն տեղում:
[2] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, Երևան, 1996, էջ 102:
[3] Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., էջ 55:

կռիվներ մղելու մարտավարությամբ: Բնական է, որ Հրայրը պիտի մերժեր նրանց պահանջը:

Ըստ Սմբատ Բորոյանի, Հրայրը մերժում է, քանի որ համոզված էր «... թէ պէտք է դադարեցնել մասնակի ամեն մի գործողութիւն... Երկար, համբերատար աշխատանք պէտք էր գինելու համար գիւղերն ու քաղաքները ոչ միայն Մշոյ շրջանին, այլ Վանի, Սիլաթի, Էրզրումի մէջ եւ պատրաստուել ընդհանուր յեղափոխութեան» [1]:

Հր. Սիմոնյանի գնահատմամբ «Հրայրի և Անդրանիկի միջև եղած հակասությունը երկու գործիչների միջև ծագած անձնական հակասություններ չէին, այլ ազատագրական շարժման մեջ ձևավորված երկու, սկզբունքորեն տարբեր, գաղափարական ուղղությունների և մարտավարական մոտեցումների միջև առաջացած հակասություններ, որոնք էլ այդ պատճառով վտանգավոր էին ու դժվար լուծելի» [2]:

Ի՞նչ պիտի ձեռնարկեր Հրայրը՝ անցանկալի ու վտանգավոր կացությունը շտկելու և իրեն հակադրվող ֆիդայիներին հաշտեցնելու համար: Այդ վտանգավոր կացությունը հարթեցնելու և անհրաժեշտ վճիռներ կայացնելու նպատակով Հրայրի նախաձեռնությամբ Շենիք գյուղում գումարվում է ժողով, որին մասնակցել են Սասունի գյուղերի ներկայացուցիչները և .բացի Գևորգ Չավուշից, Տարոնի ֆիդայիների գրեթե ողջ ընտրանին [3]:

Հրայրը կրկին պահանջում է, որ ֆիդայիները խուսափեն ցնցումներ առաջ բերող արկածախնդրական գործողություններից և «...համբերութեամբ պատրաստուիլ ժողովրդական ուժեղ շարժում մը յառաջ բերելու համար» [423]:

Ֆիդայիներն Անդրանիկի գլխավորությամբ ոչ միայն չեն ընդունում Հրայրի առաջարկությունը, այլև դարձյալ պնդում, որ նա դառնա փախստական, բարձրանա Սասուն և անձամբ առաջնորդի ֆիդայական խմբերը: Հրայրն ընդունում է ֆիդայիների պահանջը, բայց ներկայացնում է հետևյալ պայմանը. «...եթե ֆետայիներն ալ խօսք տան իրեն անպայմանօրէն ենթարկուելու իր կամքին: եւ անմիջապէս կը պահանջէ, որ Համբարձում ու Անդրանիկ հեռանան երկրէն խումբ մը գինուորներու հետ, զբաղուելու համար միայն զէնքի փոխադրութեան գործով. Գէորգը ուրիշ խմբով մը անցնի Վանայ շրջանը. եւ վերջապէս, որ գինուորներն ալ պատսպարուին իրենց գիւղերուն մէջ» [5]:

Շենիքի ժողովը մեկ անգամ ևս փաստում է, որ Հրայրը ավելի քան հաստատակամորեն էր տրամադրված հրաժարվելու ֆիդայական կռիվներ մղելու մարտավարությունից և ՀՅԴ կառույցների ուշադրությունը կենտրոնացնել ժողովրդին խաղաղ, առանց ցնցումների գինելու ու ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու վրա:

---

[1] Երիցանց Մ., Զօրվար Սմբատի յուշերը, Փարիզ, 1936, էջ 70:
[2] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, էջ 103:
[3] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1924, թիւ 3, էջ 135:
[4] Նույն տեղում:
[5] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 225:

ժողովում նրանց միջև արմատավորված հակադրությունները ոչ միայն չեն հարթվում, այլև խորանալով վերածվում են թշնամանքի: Անդրանիկն ու ֆիդայիները նույնիսկ փորձել են հրացանագարկ անել Հրայրին ու նրա համախոհ Կառնենու Մկրտիչին: «...Բայց Սասնոյ ժողովուրդը, գրում է Ռուբենը,-որ կը պաշտէր Արմենակը եւ բոլոր ֆետայիներէն բարձր կը դասէր զայն, կը յարձակի ֆետայիներու վրայ, զինաթափ կընէ զանոնք եւ քիչ կը մնայ, որ Համբարձումն ու Անդրանիկը ինքնաղատաստանի ենթարկուին...» [1]:

Հրայրին սպանելու իրենց մտադրության մասին խոստովանում է նաև Անդրանիկը. «Մենք Հալաղոր կը գտնուենք: Հոդ այդպէս որոշուեցաւ Հրայրի մասին. եթէ գայ՝ գայ, չէ նէ զարկենք ու սպանենք» [2]:

Ստեղծված իրավիճակն ավելի չխորացնելու նպատակով Հրայրը հանգստացնում է ժողովրդին, զինաթափում ֆիդայիներին ու նրանց հեռացնում Շենիքից: Սակայն դրանով հարցը չի լուծվում: Զինաթափված ֆիդայիներից շատերը մասնակցել էին բազմաթիվ կռիվների և նույնպես արժանի հարգանք ու հեղինակություն էին ձեռք բերել:

«Շատերը,-գրում է Ռուբենը,-անձամբ ճանաչելով ֆետայիները, գնահատելով անոնց անձնազոհութիւնը եւ կատարած աշխատանքները, խղճի խայթ կը զգային, որ այնքան անպատիւ կերպով վարուած էին ֆետայիներու հետ» [3]:

Դուրան-Բարձրավանդակի կառույցներում տիրող վտանգավոր կացությունը մեկ անգամ ևս քննարկելու ու տարաձայնությունները հարթեցնելու նպատակով Դերգեվանք գյուղում գումարվում է նոր ժողով: Ժողովականները որոշում են ֆիդայիներին վերադարձնել զենքերը: Հրայրը վճռում է մեկնել Սալնո Չոր և Վասպուրական՝ վերականգնելու այդ շրջանների ՀՅԴ կառույցները, իսկ Դուրան-Բարձրավանդակ պիտի գար նոր ղեկավար [4]:

Ազատագրական շարժման մեջ ձևավորված երկու, սկզբունքորեն տարբեր գաղափարական ուղղություններն արժևորելիս, հեղինակներն ավելի հաճախ նախապատվությունը տալիս են Հրայրի ու նրա համախոհների զարգացրած տեսակետին՝ որակելով այն որպես առավել իրատեսական, կշռադատված ու ժամանակաշրջանի պահանջներին համահունչ: Ընդհանուր առմամբ այդպիսի մոտեցումն ու գնահատականը գուցեև ավելի է հիմնավոր, բայց պիտի նկատել, որ Անդրանիկի ու նրա համախոհների պաշտպանած տեսակետը նույնպես որոշակիորեն հիմնավորված է՝ պայմանավորված տվյալ ժամանակահատվածում Երկրում և, մասնավորապես, Դուրան-Բարձրավանդակում տիրող կացությամբ:

Նախ, ֆիդայիները գտնում էին, որ եթե իրենք հրաժարվեին հայդուկային կռիվներ մղելուց և դուրս գային Երկրից, ապա ժողովուրդը իշխանությունների ու մահմեդական հրոսակախմբերի կողմից պարբերաբար կրկնվող բռնու-

---

[1] Նույն տեղում:
[2] Անդրանիկի յուշերը, Պէյրութ, 1935, էջ 268:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 225:
[4] Նույն տեղում:

թյունների և հարստահարումների դեմ կմնար միայնակ ու անպաշտպան և, մատնվելով հուսալքության, կկորցներ հավատն ու վստահությունը կուսակցության և հեղափոխության նկատմամբ:

1. Նրանց կարծիքով հայդուկային կռիվները ոգևորում էին ժողովրդին և կապում Հ.Յ. Դաշնակցությանը:

2. Ֆիդայիների հեռանալով իշխանությունները ոչ միայն չէին մեղմացնի, այլև ընդհակառակը, ավելի կխստացնեին հալածանքները: Բացի դրանից, «...Ֆետայիների հեռացումով ժողովրդի վիճակը աւելի պիտի վատթարանայ, որովհետեւ ամէն կարգի աւազակաբարոյ տարրեր պիտի մնային անպատիժ եւ պիտի կրկնապատկէին իրենց չարագործութիւններն ...» [1]:

Ազատագրական պայքարի մարտավարության վերաբերյալ իրարամերժ տեսակետներ պաշտպանողները ՀՅԴ անդամներ էին: Հարց է ծագում, եթե իրոք հակադրվող կողմերի ներկայացուցիչները ՀՅԴ անդամներ էին և այդ ժամանակ 2-րդ Ընդհանուր ժողովի կողմից արդեն ընդունվել էր «...ուժերու կեդրոնացումը երկրի մէջ...» որոշումը, որի կատարումը պարտադիր է կուսակցական ապակենտրոն կառույցների ու անդամների համար, ապա ինչպե՞ս բացատրել նրանց միջև արմատավորված հակադրությունները:

Անդրանիկն ու նրան համակարծիք ֆիդայիները նույնպես ՀՅԴ անդամներ էին և պարտավոր էին կատարել ոչ միայն Ընդհանուր ժողովի, այլ նաև Դուրան-Բարձրավանդակիսս կենտր. կոմիտեի որոշումները, այլապես նրանք կարող էին հրաժարվել ՀՅԴ անդամությունից և գործել ինքնուրույն, ըստ իրենց հայեցողության: Միաժամանակ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն իրավասու էր կուսակցության որոշումներին ընդդիմանալու ու չկատարելու համար նրանց հեռացնել ՀՅԴ շարքերից: Իրականում տեղի չի ունեցել ոչ մեկը և ոչ էլ մյուսը: Այս ամենը գալիս է ապացուցելու, որ ֆիդայիներն այնքան էլ չեն արժևորել ու հարգել կուսակցական կարգապահությունն ու որոշումները և շատ հաճախ, շրջանցելով այդ ամենը, գործել են ըստ իրենց կամքի ու հայեցողության:

Անդրանիկի գործունեությունը ներկայացնող աշխատությունների, ինչպես նաև հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դժվար է վկայակոչել համապատասխան փաստաթուղթ, վկայություն, որը մատնանշի մինչ Առաքելոց վանքի կռիվը որևէ մարտական գործողություն, որին մասնակցել է Անդրանիկը: Եթե դա իրոք այդպես է, ապա ինչպե՞ս բացատրել նույնիսկ հայդուկապետ դառնալու նրա հավակնությունները և Հայրի նման անառարկելի հեղինակություն ունեցող ազգային-քաղաքական գործչին ամենաբուռն կերպով հակադրվելը:

Ավելորդ չէ նշել, որ Անդրանիկը դրանից առաջ ընդվզել էր նաև հայդուկապետ Սերոբի դեմ և հրաժարվել էր կատարել նրա հանձնարարությունը: Այդ

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1957, թիւ 3, էջ 89:

մասին Սերոբը, ինչպես արդեն նշվել է, տեղեկացրել է ՀՅԴ ներկայացուցիչ Մեքարեցի Սաքոյին գրած նամակում [1]:

Այն ժամանակ, ֆիդայական կարգապահությունն ու մարտական միասնությունը պահպանելու նկատառումով, Մեքարեցի Սաքոյի խորհրդով, Սերոբը ֆիդայիներից շատերին, այդ թվում նաև Անդրանիկին, զինաթափում և որոշում է ուղարկել Կովկաս: Անդրանիկի հավակնությունները, ըստ Ռուբենի, պայմանավորված էին նրա փառատենչությամբ. «... կուզեր ըլլալ միաժամանակ ե՛ւ Գեւորգ ե՛ւ Արմենակ» [2]:

Սիմոնյանի կարծիքով. «Միշտ առաջինը լինելու Անդրանիկի ձգտումը, բնականաբար, նրան խանգարում էր ընդունել Հրայրի հեղինակությունը: Իսկ այդ հեղինակությունը Տարոնում անառարկելի էր: Հետևապես, այստեղ առաջինը լինելու համար Անդրանիկը ժողովրդի մեջ պիտի ավելի մեծ հեղինակության հասներ, քան Հրայրը... » [3]:

ՀՅԴ վերին մարմինների գործունեությունում, ինչպես Սերոբի հայդուկապետության շրջանում, այս անգամ ևս այդ կարևորագույն հարցի նկատմամբ դրսևորած վերաբերմունքում դարձյալ նկատվում են որոշակի թերացում ու դանդաղկոտություն: Նրանք պարտավոր էին ժամանակին տեղյակ լինել և հետևողականորեն ուշադրություն դարձնել Դուրան-Բարձրավանդակի ՀՅԴ կուսակցական կառույցներում տիրող կացությանն ու համապատասխան քայլեր ձեռնարկեին, որպեսզի ավելի չխորանային և առավել ևս թշնամանքի չվերածվեին կուսակցության անդամների միջև արմատավորված հակադրությունները: Այս պարագայում իրենց վճռական խոսքը պետք է ասեին ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ» կենտր. կոմիտեն և նրա ավագագույն անդամները՝ Վարդան վարդապետն ու Տատրակը:

Ինչպես արդեն նշվել է, Դուրան-Բարձրավանդակում, հատկապես Բշարե Խալիլի ահաբեկումից հետո, ավելի են սաստկանում հայ բնակչության նկատմամբ իշխանությունների գործադրած բռնությունները: Թուրք իշխանությունները, օգտվելով Կովկասից օսմանյան կայսրության տարածքը ներգաղթած մահմեդական բնակչության առկայությունից, ձգտում են տվյալ գաղթականությանը բնակեցնել հայկական բնակավայրերում: Միաժամանակ Դուրան-Բարձրավանդակի հայկական բնակավայրերն էին ներխուժում պատժիչ ջոկատներ, որոնք ֆիդայիներին որոնելու պատրվակով բռնությունների էին ենթարկում ու թալանում հայ գյուղացիներին: Ծայրահեղ հուսալքության մատնված գյուղացիներից շատերը, իրենց կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու ակնկալիքով, դիմում էին դավանափոխության:

Ըստ «Դրօշակ»-ում տեղ գտած թղթակցության, ստեղծված ծանրագույն իրավիճակից հուսալքված՝ տարոնահայությունը հավաքվում է Մշո Առաջնոր-

[1] «Դրօշակ», 1931, թիւ 6, էջ 198:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 225:
[3] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, էջ 103:

դարանի մոտ և պահանջում փրկության որևէ միջոց. ելք գտնել. այլապես սպառնում դավանափոխ լինել ու ընդունել ուղղափառություն [1]:

Ո՞րն էր ելքը. ի՞նչ պիտի ձեռնարկեին ՀՅԴ կառույցները տիրող իրավիճակից դուրս գալու. հուսալքության մատնված ժողովրդին օգնելու համար:

Անդրանիկի վկայությամբ. «1901թ. տարուան հոկտեմբեր ամիսն էր: Կելիկուզան գիւղին մէջ մեր զինուորներէն գաղտնի խորհրդակցական ժողով մը գումարեցինք: Ես. Գէորգ. Յարութիւն. Վաղարշակ եւ Հաճի Հակոբ: Մեր խորհրդակցութեան նպատակն էր միջոց մը եւ ճամփայ մը գտնել. հայ ժողովուրդին վրայ ծանրացող տառապանքը մեղմելու եւ քրքական ու քրդական հարստահարութիւններն ու հալածանքները դադրեցնելու...» [2]:

Խորհրդաժողովի մասնակիցները Հաջի Հակոբի առաջարկությամբ որոշում են ֆիդայիներով բարձրանալ սբ. Առաքելոց վանքը. ամրանալ նրա ամրակուռ պարիսպների հետևում և. որպես բողոքի արտահայտություն՝ կռիվ մղել: Ընդունելով համանման որոշում՝ խորհրդաժողովի մասնակիցները հույս ունեին. որ այս ճանապարհով կարելի է.

1. Սթափեցնել ժողովրդին. որպեսզի նա ոգեշնչվի ֆիդայիների մղած պայքարից. հրաժարվի դավանափոխ լինելու մտադրությունից:

2. Երկարատև դիմադրությունը կարող է սթափեցնել նաև կառավարությանը. որը հարկադրված՝ կմեղմացնի հայության նկատմամբ գործադրվող հալածանքները:

3. Քրիստոնյա տերությունների հյուպատոսների ուշադրությունը բևեռել իրենց պահանջների վրա [3]:

Պիտի նկատել. որ Առաքելոց վանքի կռիվը յուրօրինակ նոր ձեռնարկում էր հայդուկային պայքարի մարտավարությունում: Ֆիդայիների մղած կռիվները մինչ Առաքելոց վանքի կռիվը կրում էին պաշտպանական բնույթ: Որպես օրենք. նախահարձակ կողմը մշտապես հակառակորդն էր. իսկ այս անգամ նախահարձակը ֆիդայիներն էին:

Նոյեմբերի սկզբներին Անդրանիկի և Գևորգի գլխավորությամբ 25 ֆիդայիներ իջնում են Սասունից և ամրանում Առաքելոց վանքում: Նրանց են միանում. «Մուշէն կուգա Կոտոյի Հաճին քանի մը ընկերներով բերելով նաև ռազմամթերք: Յրոնքէն կու գայ ֆիդայիներու ուրիշ խումբ... վանքի մէջ կը հաւաքուեն բավական թով մարտիկներ՝ ուտելիքի և ռազմամթերքի շօշափելի պաշարով մը: Բացի կուռներէն ու շալակատրներէն. որոնց թիւը 60-ի կհասներ. կային վանքի միաբանները և 40-50-ի չափ որբ երեխաներ» [4]:

Անդրանիկն իր հուշերում հիշատակում է կռվին մասնակցած 22 մարտիկների անունները [5]:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1914, թիւ 1, էջ 14:
[2] Զօր. Անդրանիկ, Առաքելոց Վանքին կտիւը, Ֆրէզնօ, 1926, էջ 48:
[3] «Պատմագրութիւն», հ. Բ, էջ 48:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Լեւոն Լիւլուճեան, նշվ. աշխ., էջ 76-77:

Ինչպես որ վաղօրոք կանխատեսել էին ֆիդայիները. իշխանություններին հաջորդ օրն ևեթ՝ նոյեմբերի 4-ին. հայտնի է դառնում վանքում ֆիդայիների գտնվելու իրողությունը. և թուրքական զորքը պաշարում է վանքը: Ֆիդայիներին կրկնակի շրջափակման մեջ վերցնելու նպատակով թուրք հրամանատարությունը զորքեր է տեղաբաշխում նաև վանքին մերձակա Դերգևանք. Առաղ. Բերդակ. Մզրև. Հավատորիկ. Առինջ և Նորաշեն գյուղերում [1]:

Նոյեմբերի 7-ին. կենտրոնացնելով ավելի քան 2000 զինվորների. թուրքերը գրոհում են վանքի վրա. բայց. այնուամենայնիվ. չեն կարողացել ներխուժել վանք [1]:

Կռիվները շարունակվում են մինչև նոյեմբերի 21-ը: Այդ ընթացքում մարտադաշտում հայտնվում են թուրքական նոր զորամասեր: Ավելի քան 6000 զինվորներ շրջափակում են վանքը. բայց չեն կարողանում ներխուժել վանք: Կռիվներին հետևել են եվրոպական մի քանի տերությունների հյուպատոսներ. որոնց միջամտության շնորհիվ թուրք հրամանատարությունը համաձայնել է ու թնդանոթներից կրակ չի արձակել վանքի վրա: Հավանաբար հենց նրանց պահանջով «Կառավարությունը կուզեր շուտով վերջ տալ անախորժ կռուին. պատրաստ ըլլալով նոյնիսկ որոշ զիջումներ ընելու» [2]:

Կռիվների 11-րդ օրը. ֆիդայիների հետ բանակցելու նպատակով. վանք են մտնում Մշո ու Առաքելոց վանքի առաջնորդներ Խոսրով և Հովհաննես վարդապետները. ինչպես նաև թուրքական կողմը ներկայացնող Մահմեդ ու Մուխթար կոմիսարները [3]:

Պատվիրակության հետ բանակցությունները վարում են Անդրանիկը. Գևորգ Չավուշն (Գևորգը Չավուշ մականունը ստացել է հենց այդ կռիվների ժամանակ-Հ.Գ.) ու Հաջի Հակոբը: Նրանք պատվիրակության անդամներին բացատրում են իրեց ձեռնարկումի շարժառիթները և ներկայացնում հետևյալ պահանջները.

«1. Ազատ արձակել քաղաքական բանտարկեալները.

2. Պատժել Սպաղանքի. Հեթինքի. Շուշնամերիկի եւ միւս գիւղերու ավերողներին ու կատարողները եւ հատուցում տալ վնասուած գիւղերուն.

3. Բարւոքել միւթազիմութեան դրութիւնը. այնպես որ գիւղերը իրենց տասնորդը վճարեն առանց միւթազիմներու միջամտութեան.

4. Հատուցում վճարել Մշոյ դաշտի զոհերու ընտանիքներուն ու պատժել ոճրագործները» [4]:

Բանակցությունների ընթացքի մասին փոքր-ինչ այլ մեկնաբանություն է տալիս Անդրանիկը:

«Դրօշակ»-ին հաղորդագրած նամակում Անդրանիկը նշում է. որ երբ հենց բանակցությունների սկզբում իրենք իմանալով Անգլիայի հյուպատոսի քա-

[1] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 48:
[2] Լեւոն Լիւլուճեան, նշվ. աշխ., էջ 45-72:
[3] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 48:
[4] Նույն տեղում:

դաք վերադառնալու և օրթոդոքսության պատճառով Ռուսաստանի հյուպատոսի կողմից իրենց պահանջները մերժելու մասին, փոխում են իրենց ծրագրերը և նրանց առաջարկում.

«Ա. Քաղաքական տեսակետով ձերբակալուածները արձակել:

Բ. Սպաղանայ սրածութիւնը ու վառուելը. Շուշանմերիկի այրուիլն եւ մի քանի մարդոց սպանյունքը հատուցում ընել:

Գ. Ըստ կառավարական օրէնքի գիւղը չի պէտք է ծախուի:

Դ. Այս տարի ամռան կառավարութեան հրամանով տեղի ունեցած հարստահարութիւնք դաշտի մէջ, որ 50-60 անձեր սպանուեցան, պետք է դարմանուին»[1]:

Իրենց հաստատակամությունն առավելագույնս հաստատելու և պատվիրակության վրա ազդեցիկ տպավորություն գործելու նպատակով՝ վերջում ավելացնում են, որ «...նպատակներս է անձնազոհ լինել ազգներուս իրաւունքը պաշտպանելու համար, եւ թէ պահանջուի, պիտի կռուինք ու մեռնինք»[2]:

Վանքի պաշտպանությունը երկար չէր կարող շարունակվել. արդեն սպառվում էին փամփուշտները: Նոյեմբերի 27-ի գիշերը ֆիդայիները, քողարկված սպիտակ շապիկներով, դուրս են գալիս վանքից, մոլորեցնելով թշնամուն՝ ճեղքում են պաշարման օղակը և բարձրանում լեռները:

Հ. Յ. Դաշնակցությունը, որպես օրենք, իր նախաձեռնությամբ իրականացրած ձեռնարկումների արդյունքներն ու հետևանքները արժևորելիս դրանք ներկայացնում է ավելի ուռճացված, քան իրականում եղել են: Զորօրինակ «Բանկ Օտոմանի գրավում»-ն ու «Խանասորի արշավանք»-ը: Նույն միտումը նկատվում է «Առաքելոց վանքի կռիվ»-ը ձեռնարկի արդյունքներն ու նշանակությունը գնահատելիս:

«Իսկապէս,-գրում է Ռուբենը,- որ մեծ յաղթութիւն էր այդ՝ հեղափոխականներու համար: Ժողովուրդը նորէն սկսաւ երգել իր քաջերը. այլեւս չէր մտածեր օրթոդոքս դառնալու մասին եւ իր յոյսն ու հաւատը նորէն ուղղեց դիմադրական կորովը»[3]:

Անկասկած, ժողովուրդը իր քաջերի մասին կերգի, իրավացի է Անդրանիկը նշելով. «Հայ բազուկը գիտէ հրացան բռնիլ: Հայ սիրտը գիտէ կռուիլ եւ տէր կանգնիլ իր իրաւունքներուն...», բայց այնքան էլ հավաստի չէ այն պնդումը, որ Առաքելոց վանքի հաղթական կռիվն է պատճառը, որ ժողովուրդը վերստին ոգեշնչվեց ու «այլեւս չէր մտածեր օրթոդոքս դառնալու մասին»[4]:

Ժողովրդի մեջ արմատավորված դավանափոխ լինելու մտայնությունը, կարելի է ասել, պայմանավորված էր քրիստոնյա հզոր տերությունների աջակցությունը ստանալու ակնկալիքով: Ժամանակը ցույց տվեց, որ այս հարցում ժողովրդի և անգամ ֆիդայիների ակնկալիքներն ու հույսերը իզուր էին ու անիրականալի, իսկ դավանափոխ լինելը՝ անօգուտ:

---

[1] «Դրօշակ», թիւ 4, էջ 51:
[2] Նույն տեղում:
[3] «Պատմագրութիւն», հ. Բ, էջ 50:
[4] Զօր. Անդրանիկ, Առաքելոց Վանքին կռիւը, էջ 11:

Անդրանիկի վկայությամբ, կռիվների արդյունքում. «...Ժողովուրդին զրոյցներուն համաձայն 1800 թուրք զինուորներ մեռած և սպանուած էին քսան և մէկ օրուան մէջ, ըստ կառավարական պաշտօնական տեղեկագրին՝ 33 թուրք զինուորներ մեռած էին:

Այն հայերը, որոնք զինուորին միսը, հացը, կօշիկը և հագուստը պայմանարկած (քոնթրատ) էին, անոնց տուած տեղեկութեան համաձայն սպանուած կամ հիւանդութենէ մեռած էին 553 թուրք զինուորներ»[1]:

Քսանմեկ օր ընթացող կռիվներում թշնամին, անկասկած, կորուստներ չէր կարող չունենալ, բայց Անդրանիկի ներկայացրած տվյալները փոքր-ինչ համոզիչ չեն: Եթե զուտ մարտավարության տեսանկյունից դիտարկենք կռիվների ընթացքը, ապա պիտի նկատի ունենալ հետևյալ հանգամանքը: Հակառակորդի գրոհները դիմագրավելու համար վանքի պարիսպների ներսում ապաստանած ֆիդայիները կռիվների ընթացքում պիտի համապատասխան դիրքեր գրավեին և նրանց տեսադաշտը ինչ-որ չափով պետք է բաց լիներ, որպեսզի նրանք կարողանային տեսնել իրենց վրա հարձակվողներին:

Վանքը պարսպապատ էր, միակ դուռը ամուր փակված: Հակառակորդի գրոհները հետ մղելու համար ֆիդայիները կամ պիտի դիրքավորվեին պարիսպների վրա, կամ անցքեր բացեին պարիսպների մեջ ու այնտեղից կրակ տեղային հարձակվողների վրա: Այդ դեպքում վանքի վրա գրոհող հայրենավոր զինվորների համար առանձնակի մեծ դժվարություն չէր ներկայացնում անընդմեջ տեղացող հարվածներով գնդակահարել պարիսպների վրա և բացված անցքերի հետևում դիրքավորված ֆիդայիներին: Միաժամանակ, թուրք զինվորները, որպեսզի կարողանային հաղթահարել ֆիդայիների դիմադրությունը, պիտի փորձեին բարձրանալ պարիսպների վրա ու նոր ներխուժեին վանք: Այդ դեպքում նրանք հարմար թիրախ կարող էին դառնալ ֆիդայիներ համար:

Այսուհանդերձ, ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկների համար ազդեցությամբ ու հնչեղությամբ, կարելի է ասել, որ Առաքելոց վանքի կռիվը հայ ազատագրական պայքարի հերոսական ու ուսանելի էջերից է: ՀՅԴ գործունեությունում իր արժանի տեղն ունեցող այդ ձեռնարկը կրկին անգամ ցույց տվեց, որ մասնակի, անգամ հերոսական գործողությամբ անհնարաստ է ակնկալել որևէ լուրջ, արմատական տեղաշարժ:

Առաքելոց վանքի գործողության ժամանակ, ինչպես արդեն նշվել է, Հրայր Դժոխքը Սասունում չէր, նա զուտ կազմակերպական գործերով մեկնել էր Բիթլիսի, Ախլաթի և Խնուսի շրջանները: Բոլորովին պատահական չէ, որ Հրայրը ընտրում է հենց այդ շրջանները: Ախլաթը Տարոն աշխարհը Վասպուրականին և Բիթլիսին կապող օղակն է: Աղբյուր Սերոբի ու Գուրգենի նահատակությունից հետո տեղի ՀՅԴ կառույցները քայքայվել և շատ թույլ էին գործում: Անհրաժեշտ էր վերականգնել ու ամրապնդել ՀՅԴ Ախլաթի

---

[1] Լեւոն Լիւլուճեան, նշվ. աշխ., էջ 111:

կոմիտեության գործունեությունը, որը մասն էր կազմում ՀՅԴ Բիթլիսի (Սալոն Չորի) կենտր. կոմիտեի:

Ավելին. Հրայրը գտնում էր, որ ընդհանուր ապստամբությունը չպետք է սահմանափակել միայն վերոհիշյալ շրջաններով: Ըստ Կ. Սասունու «Անոր կարծիքով՝ Վանի նահանգի հայութիւնն ալ միեւնոյն ժամանակ պիտի պարգէր ապստամբութեան դրօշը: Այդ պատճառով անցաւ Վան»[1]:

Հրայրը արդյունավետ գործունեություն է ծավալում նաև Խնուսի և Բուլանուխի շրջանների հայությանն ու ՀՅԴ կառույցները կազմակերպելու ուղղությամբ: Խնուսի և Բուլանուխի շրջանների տարածքներով էին անցնում Տարոնն աշխարհը Կովկասին կապող ուղիները: Եթե չգործեին այդ շրջանները, ապա չափազանց կդժվարանար գենք, ինչպես նաև մարտական ու զինամատար խմբերի առաքումը Կովկասից Դուրան-Բարձրավանդակ:

Հրայրը ձգտում է առանց ավելորդ աղմուկի ու ցնցումների հետևողականորեն կազմակերպել ժողովրդին և ամրակուռ ու փոխկապակցված օղակում ընդգրկել Տարոն աշխարհի, Բիթլիս և Վասպուրական նահանգների ՀՅԴ կառույցները, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի գործեին միասնական և փոխհամաձայնեցված:

Որպեսզի նախապատրաստական աշխատանքներն առավել կազմակերպված ընթացք ունենային, անհրաժեշտ էր, որ Դուրան-Բարձրավանդակի և Սալոն-Չորի շրջաններում հաստատվեին երկրում գործելու հաստատակամությամբ օժտված, ժամանակաշրջանի յուրահատկությունները խորությամբ արժևորող գործիչներ: Ճիշտ է, Դուրան-Բարձրավանդակում, Բիթլիս և Վասպուրական նահանգներում արդեն գործում էին կուսակցական կառույցներն ու մի շարք փոքրու գործիչներ, բայց ընդհանուր ապստամբության ծրագրերը իրականացնելու համար եղած ուժերն ավելի քան սահմանափակ էին:

Հրայրը հարց է բարձրացնում ՀՅԴ ղեկավար մարմինների առաջ և պահանջում նոր գործիչներ ուղարկել ու ավելի մեծ ուշադրություն դարձնել Վասպուրականի, Դուրան-Բարձրավանդակի և Սալոն-Չորի վրա:

1901թ. ՀՅԴ Բյուրոն որպես պատասխանատու գործիչ Վասպուրական է գործուղում Վարդգեսին (Հովհաննես Սերենկուլյան), իսկ Տարոն՝ Վահան Մանվելյանին (Կարապետ Տուղրեմաճյան): Ախլաթ գավառում հաստատվում և արդյունավետ գործունեություն է ծավալում Աշոտ Երկաթը: Պիտի նշել, որ երկրում հաստատված ՀՅԴ պատասխանատու նորանշանակ գործիչները պաշտպանում էին Հրայրի սկզբունքները:

Նույն թվականի աշնանը Հրայրը անցնում է Վան և Վարդգեսի ու Վահանի մասնակցությամբ մշակում «...ընդհանուր ծրագիր մը՝ զինելու հայ յեղափոխութեան երկու կարևոր կեդրոնները, կապակցելու իրարու, լրացնելու բոլոր

[1] Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, էջ 36:

նախապատրաստական աշխատանքներն ու պարգելու ընդհանուր ապստամբութեան դրօշը Սասունէն մինչեւ Վան»[1]:

Պահպանվել է Վանում կայացած հանդիպման ժամանակ Հրայրի, Վարդգեսի և Վահանի կողմից գրված «Շամիրի և Բարձրաւանդակի գիւղական խմբերի ներքին կանոնագիրքը» խորագիրը կրող փաստաթուղթը[2]:

Կանոնագիրքը, որը բաղկացած է «Կազմակերպութիւն», «Խմբական պարտաւորութիւններ», «Դործադիր մարմնի պարտաւորութիւններ», «Չինապահներու պարտաւորութիւններ», «Դանձապահի պարտաւորութիւններ», «Պատիժներ» բաժիններից, Աշոտ Երկաթի (Արմենակ Լեոնյան) կողմից ներկայացվել է ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովին[3]:

1903թ. Սոֆիայում կայացած այդ նույն Ընդհանուր ժողովում Հրայրը, Վահանն ու Աշոտ Երկաթը ընտրվում են Դուրան-Բարձրավանդակի պատասխանատու մարմնի անդամներ: Ընդհանուր ժողովը հաստատում է նաև ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու վերաբերյալ նախորդ Ընդհանուր ժողովի ընդունած որոշումը:

Աշոտ Ներսիսյանը, վերլուծելով այդ ժամանակահատվածում Դուրան-Բարձրավանդակում տեղի ունեցած արմատական նշանակություն ունեցող դեպքերի յուրահատկությունները, նշում է մի շարք էական պատճառներ, որոնք խոչընդոտեցին կազմակերպելու ծրագրած ընդհանուր ապստամբությունը, որը պետք է տեղի ունենար 1905 թ.ամռանը[4]:

Ընդունելով Ա. Ներսիսյանի բերած փաստարկների օբյեկտիվությունը՝ հարկ է նշել, որ եթե նույնիսկ ապստամբության կազմակերպումը ընթանար բացառապես Հրայրի ծրագրած ուղիով, այսինքն Բիթլիս ու Վասպուրական նահանգները հանդես գային Դուրան-Բարձրավանդակի հետ միասնական, ապա միևնույն է, այն անխուսափելիորեն դատապարտված էր պարտության:

Կ. Սասունու հավաստմամբ «Հ.Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ, մանրակրկիտ խստութեամբ ընդունուած ուխտեալներու թիւը, միայն Տարօնի շրջանը-Սասունէն մինչեւ Ֆարդին, Մուշէն մինչեւ Ախլաթ- կը հաշուէր մօտաւորապես 5000 կտրիճներ: Օժանդակ խումբերն ու համակիրներ հաստատութիւնը չեմ հաշուեր»[5]:

Այսուհանդերձ, ընդհանուր ապստամբության համար բացակայում էր ամենակարևորը, ժողովուրդը զինված չէր, հետևաբար պատրաստ չէր մասնակցելու մարտական գործողությունների, իսկ մարտախմբերի ունեցած զենքի ու զինամթերքի պաշարներն ավելի քան սահմանափակ էին: Համաձայն Ռուբենի, ապստամբության բռնկման նախօրեին «Սասունը, որ ուշադրութեան առարկայ էր, որ կը համարուէր ֆէդայիներու կեդրոն, հազիւ 30

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1924, թիւ 3, էջ 135:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 234:
[3] Նույն տեղում:
[4] Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., էջ 55:
[5] Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, էջ 39:

զէնք ունէր կուսակցութեան տրամադրելի, իսկ 1904-ի ապստամբութեան ատեն, հազիւ ան հաշուուէր 150 զէնք, իհարկէ, բացի ժողովրդական, խմբական զէնքերէն: Այդ առաւելագոյն թիւէն 70 զէնքը Երկաթի Ախլաթէ ճամբած զէնքերն էին...»[1]:

Եթե ընդունենք Ռուբենի տվյալների իսկությունը, իսկ դրան հակադրվող այլ տվյալներ չկան, ապա հարց է ծագում. ինչպես՞, ի՞նչ միջոցներով էին Հ.Յ. Դաշնակցությունը և նրա ապակենտրոն կառույցները լուծելու անհրաժեշտ քանակության զենք ու զինամթերք Սասուն տեղափոխելու ու ժողովրդին զինելու խնդիրը: Մանավանդ որ Սասուն տանող ուղիները խստագույնս հսկվում էին թուրքական կանոնավոր զորամասերի ու նրանց աջակցող քրդական հրոսակախմբերի կողմից: Պատասխանը միանշանակ է. եթե անգամ ապստամբությունը տեղի ունենար մեկ տարի անց՝ 1905թ. ամռանը, և Դաշնակցությունը կարողանար որոշակի քանակությամբ մարտական ուժեր, զենք ու զինամթերք տեղափոխել Դուրան-Բարձրավանդակ, Բիթլիս ու Վասպուրական, ապա միևնույն է, նրանք չէին կարող ընդամենը մեկ տարվա ընթացքում այնպես նախապատրաստվել, որ հարթեին թնդանոթներով զինված թուրքական կանոնավոր զորամասերին ու նրանց սատարող քուրդ աշիրեթներին եւ ակնկալել ծանրակշիռ հաջողություն: Դիմադրությունը կարող էր ավելի երկարատև լինել ու առավել աղմկահարույց, բայց չէր բացառվում, որ պարտության պարագայում թուրք իշխանությունները կոտորածներ սանձազերծեին ոչ միայն Սասունում, այլև Տարոնում, Բիթլիսի ու Վասպուրականի նահանգներում:

2 4. Սասունի ապստամբությունը

1904 թ. Սասունի ապստամբությունը առանձնահատուկ տեղ է գրավում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ազգային - ազատագրական պայքարում: Կարելի է աներկբա պնդել, որ իր ծավալով, ընդգրկումով, հետևանքներով և մանավանդ ձեռք բերած ժողովրդականությամբ ու հնչեղությամբ Սասունի ապստամբությունը Հ. Յ. Դաշնակցության կողմից Երկրում կենսագործած ամենանշանակալի և ծավալուն մարտական գործողությունն է: Եթե գնահատենք Սասունի ապստամբությունն իր ամողջականությամբ ու հետևանքներով, ապա ի թիվս այլ հարցերի պիտի պատասխանել նաև հետևյալների.

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 212:

1. Ինչո՞ւ և ինչպիսի՞ հանգամանքներում կազմակերպվեց Սասունի ապստամբությունը:
2. Հնարավո՞ր էր խուսափել ապստամբությունը սկսելուց և այն ձեռնարկել՝ սպասելով առավել ու նպաստավոր պայմանների:
3. Ազատագրական պայքարին բերած նպաստները և հետևանքները:

1894 թ. Սասունի ինքնապաշտպանությունն ու 1904 թ. ապստամբությունը, որը նույնպես վերածվեց ինքնապաշտպանության, ունեին իրենց որակական առանձնահատկությունները և էապես տարբերվում են միմյանցից: 1894 թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ, որը բացառապես ինքնապաշտպանական բնույթ ուներ, օսմանյան տերության դեմ պայքարի դրոշ պարզած սասունցիները իրենց գործողություններում առաջնորդվել են Սասունի առաջնորդների կամքով ու որոշումներով, թեպետ այնտեղ էր հնչակյան Մեծ Մուրադը: 1904 թ. Սասունի ապստամբությունը, կազմակերպվել է Հ.Յ.Դաշնակցության գործուն մասնակցությամբ և ապստամբության հետ կապված բոլոր խնդիրները հիմնականում լուծվել են ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ» կենտր. կոմիտեի ու այնտեղ գործող ֆիդայիների որոշմամբ:

Մինչև ապստամբություն սկսելը, Հրայր Դժոխքը իր ղեկավարության տարիներին կարողացավ խոհեմ, հավասարակշռված գործելակերպով Սասունն ու Դաշտը հնարավորինս զերծ պահել թուրք և քուրդ հրոսակների ոտնձգություններից: Դուրան-Բարձրավանդակի հայ բնակչությունն այդ տարիներին ապրում էր համեմատաբար խաղաղ պայմաններում: Սասունում կազմակերպվող ապստամբությունը կարելի էր ավելի ուշ սկսել, ժամանակ շահել և առավելագույնս նախապատրաստվել, եթե ՀՅԴ կենտր. կոմիտեի ներկայացուցիչներն ու ֆիդայիները գործեին համերաշխ, փոխհամաձայնեցված և ընտրեին ժամանակի պահանջներին ու յուրահատկություններին համահունչ մարտավարություն:

Ապստամբության կազմակերպման վերաբերյալ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի անդամները պաշտպանում էին հակոտնյա տեսակետներ, որոնք պայմանավորված էին հիմնականում հետևյալ խնդիրներով.

1. Ապստամբություն սկսելու ժամկետները:
2. Ապստամբությանը մասնակցող, նրա մեջ ընդգրկվող շրջանները:

ՀՅԴ Դուրան- Բարձրավանդակի գործիչների մի մասը Անդրանիկի գլխավորությամբ կողմնակից էր ապստամբության բարձրացմանը: Համաձայն նրանց առաջարկած ծրագրի, պիտի ապստամբեին ու Սասունին արձագանքեին ոչ միայն Դուրան-Բարձրավանդակի, այլ նաև Բիթլիսի նահանգի մյուս շրջաններն ու նաև Վասպուրականը: Նրանք գտնում էին, որ եթե ընդարձակվի ապստամբություն բարձրացրած վորոհիշյալ շրջանների շրջանակները, ապա հակառակորդը հարկադրված կլինի իր ուժերը ցրել ավելի մեծ ճակատի վրա, և «Այսպիսով յոյս կար, թե դիմադրութիւնը կարելի պիտի ըլլայ ոչ միայն դիւրացնել, այլ նաեւ երկարաձգել»[1]:

[1] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 265:

Այս տեսակետը պաշտպանողների դիրքորոշման մեջ բացակայում է ամենակարևոր. Ինչպե՞ս, ի՞նչ ուժերով էին նրանք պաշտպանելու առավել մեծ. ծավալում ընդգրկում ունեցող ապստամբ շրջանների տարածքը. եթե այդ ժամանակ Դուրան- Բարձրավանդակի մարտական ուժերը ունեին սահմանափակ քանակությամբ զենք ու զինամթերք: Անդրանիկը մասնակցել է 1903 թ. Գելիեգուզանի մերձակա Ռդչկեր կոչված վայրում տեղի ունեցած ժողովին և հետևաբար տեղյակ էր, որ ժողովում որոշվում է տալվորիկցիներին հանձնել ընդամենը 30. գելիեգուզանցիներին 70. իսկ մյուս գյուղերին ավելի քիչ քանակության զենք: Այսինքն, այդ ժողովը մեկ անգամ ևս փաստում է, որ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն հայ բնակչությանը կարող էր տրամադրել խիստ սահմանափակ քանակությամբ զենք ու զինամթերք [1]:

Ամենայն հավանականությամբ այս տեսակետը պաշտպանողներն առաջնորդվել են հայրենակային-պարտիզանական կռիվներ մղելու մարտավարությամբ և այնքան էլ հաշվի չեն առել ու արժևորել ապստամբության և հայրենակային-պարտիզանական կռիվների առանձնահատկություններն ու տարբերությունը և նրանցից բխող հետևանքները: Դուրան-Բարձրավանդակի գործիչների մյուս մասը Հրայրի գլխավորությամբ պաշտպանում է ճիշտ հակառակ տեսակետը: Նրանց կարծիքով «...գործը սկիզբն իսկ արդեն վիժած պէտք է նկատել. քանի որ պայքարը կառավարութեան դէմ կմղուի չափազանց անբարեբաստ պայմաններու մեջ: Հրայրը աննպաստ կհամարեր մասնաւորապէս այն. որ յեղափոխական դրօշ բարձրացնողները միայն հայերն են եւ ոչ նաեւ միւս ցեղերը...» [2]:

Հրայրը գտնում էր, որ քանի դեռ Դուրան- Բարձրավանդակի շրջաններն կազմակերպված ու պատրաստ չէին, և տակավին լուծված չէր Վասպուրականի և Բիթլիսի հետ միասնական ճակատ ստեղծելու խնդիրը, պիտի «...ընտրել փոքրագոյն չարիքը եւ ջանալ քիչ վնասով դուրս գալ» [3]:

Սթափ գնահատելով ժամանակաշրջանի յուրահատկությունները, Երկրում և մասնավորապես Դուրան-Բարձրավանդակում գործող ՀՅԴ կառույցների, մարտական ուժերի իրական ուժն ու հնարավորությունները, ինչպես նաև ժողովրդի կազմակերպվածությունն ու տրամադրվածությունը, Հրայրը պահանջում է հանգիստ թողնել ու չվտանգել Դուրան-Բարձրավանդակի մյուս շրջանները և շարժումը սահմանափակել միմիայն Սասունով: Կարելի է պնդել, որ շնորհիվ Հրայրի հեղինակության, խոհեմ ու կշռադատված գործելակերպի Դուրան-Բարձրավանդակի մյուս շրջանները չմասնակցեցին կռիվներին և դրանով իսկ զերծ մնացին անխուսափելի կոտորածներից:

ՀՅԴ Վանի Շամի կենտր. կոմիտեի անդամ Վահան Փափազյանի հուշերից պարզվում է, որ այդ ժամանակ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն դիմել է իրենց և հետաքրքրվել «...թէ Վասպուրականը ի հարկին կրնա՞ ապրդանք տալ Սասունին, բշնամիի ուժերը բաժանելու եւ ձեռնարկին աւելի եւ օգտակար ծաւալ տալու նպատակով» [1]:

ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեն ՀՅԴ Լեռնապարի կոմիտեի ներկայացուցիչ Իշխանի բացակայությամբ, քննարկում է ՀՅԴ Դուրան- Բարձրավանդակի կենտր. կոմիտեի առաջարկությունը, և «...անհնար չգտաւ նման բայլ – կը խորհիմ Ոստանը գրաւել իր լեռներով եւ ապա յաջողութեան պարագային յարձակիլ Վանի վրայ» [2]:

Ուշագրավ է, որ համանման գործողություն ձեռնարկելու վերաբերյալ չկա որևէ Ընդհանուր ժողովի կամ գոնե ՀՅԴ բյուրոյի որոշում: Տվյալ պարագայում ՀՅԴ ապակենտրոն կառույցները պիտի իրենք կենսագործեին մի այնպիսի գործողություն, որը կարող էր արևմտահայության համար ունենալ ճակատագրական նշանակություն: Եթե իրագործվեր Շամի կենտր. կոմիտեի մտահղացած ձեռնարկը, ապա այն պիտի ղեկավարեր Իշխանը: Ազատագրական պայքարի գործիչների մեջ Իշխանը առավելապես հայտնի է իր տարբերությամբ, մարտական ձեռնարկներ կենսագործելու նկատմամբ ունեցած հակվածությամբ: Բայց այս պարագայում, Իշխանը կարողանում է սթափ գնահատել իրավիճակը, իրենց ունեցած հնարավորությունները՝ ուժերի սակավությունն ու զինամթերքի պակասը, և իրավացիորեն այդ ձեռնարկը որակում է վտանգավոր ու անիրագործելի [3]:

Վանի ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեն, առաջնորդվելով այդ առաջարկությունը քննարկելու նպատակով ստեղծված Հատուկ հանձնաժողովի տրված եզրահանգումներով, հրաժարվում է ձեռնարկել մասնակի մարտական գործողություններ, պատճառաբանելով, որ «...թիւրքերը հարաւէն եւ հիւսիսէն կրնան զօրք բերել եւ մեր վրան քշել պարսկական սահմանագլխի եւ Լեռնապարի հարաւային փեշերու քիւրդ բազմազան ցեղերը նախ անարգել կոտորել տալով Արճեշ-Բերկրի-Թիմար-Արճակ գաւառները հիւսիսէն. Հայոց Ձոր եւ լեռնային գաւառներ արեւելքէն ու հարաւէն...» [4]:

1904 թ. հունվար- փետրվար ամիսներին տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը, որն իրավասու էր վերջնականապես վճռելու ապստամբության հետ կապված խնդիրները: Հայության համար այդ կարևորագույն նշանակություն ունեցող հարցը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու համար Ընդհանուր Ժողովի պատգամավորները, բնականաբար, նախ պարտավոր էին լսել և հաշվի առնել ապստամբության կազմակերպմանը վերաբերող Բարձրավանդակի կարծիքն ու առաջարկությունները:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:

[1] «ՎԵՄ», 1934, էջ 56:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Ժողովում ապստամբությունից հրաժարվելու վերաբերյալ որևէ լուրջ առաջարկություններ չեն եղել: Այդ հարցում ժողովի մասնակիցների համար որպես գործունեության ուղենիշ մնում էին ՀՅԴ նախորդ Ընդհանուր ժողովում ընդունված որոշումները: Ժողովականները տարաձայնություններ են ունեցել կապված ապստամբությունը սկսելու ժամկետների հետ:

Ընդհանուր ժողովի մասնակիցների մի մասը պաշտպանել է Աշոտ Երկաթի ներկայացրած Բարձրավանդակի Պատասխանատու Մարմնի առաջարկությունները, համաձայն որի.

1. Թուրք իշխանությունները, տեղյակ լինելով Սասունում տիրող կացությանը, համապատասխան պատրաստություններ էին տեսել սկսելու մարտական գործողությունները:

2. Սասունում ապստամբությունը սկսելու համար քաղաքական պայմանները նպաստավոր են: Իրենց այդ տեսակետը հիմնավորելու համար Բարձրավանդակի Պատասխանատու Մարմինը այն համոզմունքն է հայտնում, որ գարնանը թուրքական տերության դեմ վերսկսվելու է մակեդոնական շարժումը, և Եվրոպական դիվանագիտությունը հարկադրված իր ուշադրությունը բևեռելու է արևելյան հարցի վրա, որով «...հայկական ո՞րեւէ ապստամբական գործ կրնայ մեր հարցը կապել մակեդոնական հարցին»[1]:

3. Եթե ապստամբությունը բռնկվի մակեդոնականի հետ միաժամանակ, ապա թուրք կառավարությունը հարկադրված կլինի մասնատել իր ռազմական ուժերը, որով հնարավորություն այլևս չի ունենա ողջ հզորությամբ հարձակվելու Սասունի վրա:

4. Ապստամբությունը ձգձգելու պարագայում Սասունում կենտրոնացած ուժերը կարող էին ցրվել և անկարելի կլիներ հաստատել կայուն կարգապահություն:

Մարտավարության հարցում Բարձրավանդակի ներկայացուցիչը անհրաժեշտ էր համարում որդեգրել հարձակողական գործելակերպ, որը հնարավորություն կընձեռեր. Ա. գրավել զինվորական առավել կարևոր և հուսալի դիրքեր, Բ. անակնկալ և արագ հարձակումներով սարսափի մատնել թուրքական զորքին եւ քրդերին, Գ. հակառակորդից գրավել զենք ու զինամթերք, Դ. «...տէր դառնալով քանի մը կարեւոր անցքերու՝ անկարելիութեան մատնել քիւրտերու հաստատուիլը Սասնոյ մօտերը... ուժ ցոյց տալով՝ մէկ քանի ցեղերու ստիպել հայ յեղափոխականներու հետ դաշնակցելու»[2]:

Հակադիր տեսակետ պաշտպանողները գտնում էին.

1. Թուրք կառավարության իրականացրած նախապատրաստական աշխատանքները դեռևս հիմք չէին տալիս պնդելու, որ առաջիկա գարնանը թուրքական զորքերն անպայմանորեն կհարձակվեն Սասունի վրա: Առաջ անցնելով նկատենք, որ այս տեսակետը պաշտպանողները սխալվում էին: Սասունի վրա հարձակումներն արդեն սկսել էին:

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 110:
[2] Նույն տեղում:

2. Մակեդոնական հարցում նրանք իրավացիորեն պնդում էին, որ չի կարելի հաստատապես համոզված լինել, որ Մակեդոնիայում գարնանը անխուսափելիորեն կբռնկվի ապստամբություն: Բնավ չէր բացառվում, որ մակեդոնացիները փոխեին իրենց մարտավարությունն ու ապստամբության ժամկետը:

3. Եթե նույնիսկ մակեդոնական շարժումը վերսկսվեր գարնանը, ապա չէր բացառվելու, որ եվրոպական դիվանագիտությունը անտեսեր Հայկական հարցը և իր ուշադրությունը բևեռեր միայն մակեդոնականի վրա: Ելնելով այդ համոզմունքից՝ Բարձրավանդակի ընդդիմադիրները գտնում էին. «...աւելի նպատակայարմար էր մեր կողմէ ապստամբական որեւէ շարժում յետաձգել այնպիսի ժամանակի մը, երբ եւրոպական դիւանագիտութիւնը Թուրքիոյ մէջ ուրիշ գործ չունենալով ստիպուէր միայն մեր հարցով զբաղուիլ»[1]:

4. Այս տեսակետը պաշտպանողները իրավացի էին նաև գտնելով, որ Օսմանյան տերության համար մեծ դժվարություն չէր ներկայացնում կռվել Մակեդոնիայում և Հայաստանում՝ միաժամանակ: Առաջնորդվելով վերոհիշյալ փաստարկումներով՝ նրանք առաջարկում են. «...եթէ Սասունը տարի մը ևս պատրաստուի, նոր ուժեր հաւաքէ եւ երկրի միւս վայրերն ալ՝ ինչպէս Կիլիկիան՝ պատրաստուին միաժամանակ ոտքի ելլելու համար, աւելի մեծ շարժում կարելի կ՚ըլլայ առաջ բերել, աւելի երկար դիմադրել եւ այդպիսով եւրոպական միջամտութիւնն ալ աւելի հաւանական կը դառնայ. մանաւանդ մեր ներկայ ուժերով չենք կրնար մեծ գործեր կատարել Սասնոյ մէջ ...»[2]:

Այս տեսակետի կենսագործումը, ինչ խոսք, ցանկալի էր, բայց ոչ համահունչ իրականությանը: Իհարկե, եթե ապստամբությունը բռնկվեր ոչ թե գարնանը, այլ ավելի ուշ, ապա անկասկած ավելի մեծ հնարավորություն կընձեռվեր առավելագույնս նախապատրաստվելու և երկարատև կռիվներ մղելու: Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով: Մի՞թե թուրք իշխանությունները, որոնք քաջատեղյակ էին Սասունի անց ու դարձին, կհանդուրժեին և թույլ կտային, որպեսզի կայսրության ներսում գոյություն ունեցող ապստամբական օջախը առավելագույնս պատրաստվեր ու հզորանար:

Ապստամբության կազմակերպիչները հաշվի չէին առել մի կարևորագույն գործոն ևս. ցարական իշխանությունների դիրքորոշումն ու վերաբերմունքը հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Ժամանակը ցույց տվեց, որ Սասուն մեկնող մարտական խմբերի ճանապարհին կանգնած ամենագլխավոր արգելապատնեշներից մեկը հենց ռուս սահմանապահ զորքերն էին, որոնց բախվելով ջախջախվում էին հայ մարտական ուժերը:

Քննարկելով ապստամբության վերաբերյալ արտահայտած տեսակետները՝ 3-րդ Ընդհանուր Ժողովը միաձայն որոշում է. «...տալ Բարձրավանդակի Պատասխանատու Մարմնի լիազօրութիւն ընտրելու այն ուղղութիւնը, որ ինք

[1] Նույն տեղում, էջ 111:
[2] Նույն տեղում:

յարմար կը տեսնէ առաջիկայ գարնան համար. դնելով անոր տրամադրութեան տակ պէտք եղած միջոցները ...»[1]:

Միաժամանակ. հաշվի առնելով «Դուրան-Բարձրավանդակ»-ի ներկայացրած պահանջները. Ընդհանուր Ժողովը որոշում է.

1. «Ձիաւոր խմբով կամ որեւէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ. ռումբ. հրացանի մասեր. բերդանի գիլզեներ. 50000 մոսինի փամփուշտ եւ բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ ...»:

2. «Որպէսզի Բարձրաւանդակի շարժումները չներկայանան արտաքին աշխարհի առջեւ իբր տեղական լեռնային բուռն ժողովրդի մը դժգոհութեան արդիւնք. այլ նկատուին հայկական բոլոր արտայայտութիւն. Ընդ. Ժողովը պարտականութիւն կը դնէ Թուրքիոյ սահմանակից մարմիններու վրայ՝ Սասնոյ շարժումները սկսելուն պէս. խորհրդակցութեամբ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի հետ. օժանդակել երկրի շարժումին՝ յարձակողական այլեւ այլ կռուի կամ տեռորի բնաւորութիւն կրող ձեռնարկներով. թէ՝ սահմանի վրայ. թէ՝ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ»[2]:

ՀՅԴ Դուրան- Բարձրավանդակի կենտր. կոմիտեն բացի ապստամբությունը սկսելու առաջարկությունը հիմնավորող փաստաթղթից. Թորգոմի և Կայծակ Վաղարշակի միջոցով ՀՅԴ Արևմտյան և Արևելյան Բյուրոներին. Կարսի (Ջրաբերդի) կենտր. կոմիտեին է ներկայացնում 15 կետերից բաղկացած պահանջագիր-առաջարկություններ[3]:

Այդ փաստաթղթում առավել ուշագրավ են հետևյալ կետերը.

1. Ժամանակաշրջանի թելադրանքով ներկայացրած պահանջների մեջ առաջնահերթը վերաբերում է Սասունին զինական ուժեր և զենք տրամադրելուն:

Ա. Սասուն ուղարկելու նպատակով անհապաղ պետք է կազմակերպել մարտական խումբ. որը մինչև գարուն պիտի մնար Բայազետի շրջանում: Նրա անձնակազմի քանակը չպետք է 500 մարտիկներից պակաս լիներ[16]:

Բ. Որպեսզի Երկրի հետ կապը գործեր անխափան. Դուրան-Բարձրավանդակի ընկերներն առաջարկում են փորձառու գործիչներից կազմել Զինվորական կոմիտե. որն իր տրամադրության տակ ունենալով անհրաժեշտ միջոցներ՝ կարողանա ժամանակին կազմակերպել ու տեղ հասցնել պահանջվող օգնությունը:

Գ. Դուրան-Բարձրավանդակի ընկերները գտնում են. որ մարտական ուժերը պետք է պահել ոչ միայն կենտրոնացման վայրում. այլ նաև Սալնո Ձոր (Բիթլիս) և Ախլաթի շրջաններում: Ըստ նրանց. այդ խմբերը պիտի «... կարողանան հարկ համարուած դէպքում փոքրիկ ցոյցեր անել»:

Դ. Վանում և Ատրպատականում պահեստավորած զենքն ու զինամթերքը տեղափոխել Սասուն. «...ոչ մի փամփուշտ ու հրացան չթողնելու պայմանով Շամիրում (նկատի ունեն Վասպուրականը- Հ.Գ.)»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 714, գ. 47, էջ 1:
[4] Նույն տեղում:

Կասկած լինել չէր կարող. որ թուրք իշխանությունները Սասունի վրա հարձակումներ ձեռնարկելու դեպքում. կօգտագործեին նաև թնդանոթներ: Նման իրավիճակում հայորդությամբ կռվելու համար հարկավոր էր հայրենակիներին գինել առավել կատարելագործված զենքերով և «...պայթուցիկ նիւթերից ձեռք բերել ամենակատարելագործուածները. նաև կանոնաւոր զէնքեր բոլորը նոր սիստեմի (որքան հնարաւոր է Բերտանի կամ Չախմախլի չլինի)»[1]:

2.Կազմակերպական Խնդիր.

Ա.Ժողովրդի հետ աշխատելու համար Սասուն գործուղել մտավորական ուժերի. որոնց ներկայությունը Դուրան-Բարձրավանդակում ավելի շատ էր անհրաժեշտ. քան Վասպուրականում կամ Երկրի մեկ այլ գավառում:

Բ. Սասուն տանող ուղիների վերահսկողության պատասխանատվությունը հանձնարարել այնպիսի անհատների. որոնք ծանոթ էին իրենց վստահված շրջաններին և ի զորու կատարել տրված հանձնարարությունները: Փաստաթղթում նույնիսկ նշված են նաև այն անհատների անունները. որոնք պիտի պատասխանատու լինեին այս կամ այն շրջանի և ուղղության համար:

Գ. Դուրան-Բարձրավանդակի ընկերներն առաջարկում են Կովկասից և Սալմաստից մինչև Սասուն ընկած որոշ շրջաններում ստեղծել թռուցիկ խմբեր:

«Թռուցիկների.-նշվում է փաստաթղթում.-գործունէութեան վայրերը հնարաւոր եղածին չափ կենտրոնացման կէտից հեռու պիտի լինեն. նրանց համար գործունէութեան վայր ընտրել Ախլաթը. Բուլանուխ. Բաղէշն ու Խնուսը: Բաղէշի. Բուլանուխի եւ Ախլաթի համար 20-30. իսկ Խնուսի եւ Դաշտի համար տասն եւ հինգական մարդ...»[2]:

3. Յուցական և քարոզչական բնույթի գործողություններ:

Քանի որ Եվրոպական տերությունների ուշադրությունը Երկրում կատարվող իրադարձությունների և Հայ Դատի վրա բևեռելու անհրաժեշտությունը ՀՅԴ գործունեությունում առանձնահատուկ տեղ էր գրավում. ուստի համաձայն փաստաթղթի 8-րդ և 9-րդ կետերի առաջարկում են «Աշխատել հնարաւորութիւններ ստեղծել Փոքր Ասիայում մէկ-մէկ թռուցիկներ պատրաստել եւ գործել ի նկատի ունենալով. որ յիշեալ տեղերի գործունէութիւնը աւելի կարող է նպաստաւոր լինել այն պատճառով. որ այդ իսկ կէտերում Եւրոպական շահերը կարող են աւելի վնասուել. եւ որ նորանց այդ շահեկան վնասումը առաջ կը բերի անպատճառ դիպլոմատական միջամտութիւններ Եւրոպայի կողմից... »[3]:

4.Դուրան-Բարձրավանդակի ընկերները կարևորում են հայ ազգային-քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը և այդ նկատառումով առաջարկում են «Համերաշխութիւն կայացնել հնչակեան գործիչների հետ եւ եթէ հնարաւոր է գործունէութիւնների դէպքում կապ հաստատել նրանց հետ»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 3:
[4] Նույն տեղում:

5. Նկատի ունենալով, որ կռիվների հետևանքով Տարոնի և Սասունի հայ բնակչությունը թուրք զինվորների ու քուրդ հրոսակների բռնությունների պատճառով հարկադրված կարող էր լքել իրենց բնակավայրերը, նրանք առաջարկում են նաև «Դաղբակսնութեանը պարսկական սահմանում հաստատելու համար աշխատել անպայման»:

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը հաստատում է Սասունում ապստամբություն կազմակերպելու մասին նախորդ Ընդհանուր ժողովում ընդունած որոշումը: Եթե ՀՅԴ հրաժարվեր և հետ կանգներ ապստամբություն կազմակերպելուց, դա անկասկած նշանակում էր հրաժարում իր մարտավարությունից և կուսակցության Ընդհանուր ժողովներում այս հարցի վերաբերյալ ընդունած որոշումներից:

Միևոլ կլինի ընդունել, որ Օսմանյան կայսրության և այդ ժամանակահատվածում նրա հետ համագործակցող ցարական իշխանության համապատասխան ծառայությունները կարող էին տեղյակ չլինել ՀՅԴ Ընդհանուր ժողովի ընդունած այդ որոշմանը: Հայ ազգային կուսակցությունների գործունեությանը հետևողականորեն հետևող թուրք իշխանություններն անշուշտ տեղյակ էին Սասունը որպես ուժերի կենտրոնացման վայր ընտրելու ՀՅԴ որոշմանը: Բնականաբար պիտի ձեռնարկվեին կանխարգելիչ քայլեր և հնարավորություն չընձեռեին հայ հեղափոխական կազմակերպություններին մարտական ուժեր կենտրոնացնել կայսրության տարածքում:

Այսուհանդերձ, հարց է ծագում. ինչո՞ւ թուրք իշխանություններն ավելի վաղ՝ 1903 թ. փորձեր չձեռնարկեցին հարձակվելու Սասունի վրա:

Վ. Բայբուրդյանը իր Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում աշխատությունում քննարկելով այդ հարցը, մեջբերում է Էրզրումում անգլիական հյուպատոսի ուշագրավ վկայությունը, որն ըստ իս, կարող է լինել այդ հարցի փաստարկված պատասխանը:

Համաձայն անգլիական հյուպատոսի վկայության «Մի նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրության վերջին ամիսների ընթացքում, դա քրդերի աշխատակցությունն է հայերի հետ: Հայտնի է, ու եթե թուրք կառավարությունը այս ամառը հրաժարվեց Սասունի վրա հարձակվելու մտքից, դրա պատճառներից մեկն էր քրդերի անսպասելի դիրքը, որոնք մերժեցին իրենց աջակցությունը առաջարկված հարձակման համար»[1]

Քուրդ ցեղախմբերի վրա զգաստացնող ազդեցություն է գործել Սասունի 1894 թ. դեպքերից հետո Եվրոպական տերությունների ներկայացուցիչների այցելությունը Սասուն, և թուրք իշխանությունների կողմից հայ բնակչության ջարդը իրենց վրա բարդելու ամբաստանությունը:

Քուրդ ցեղախմբերին հայերի դեմ տրամադրելու նպատակով թուրք իշխանությունները ոչ միայն սիրաշահում ու շռայլ խոստումներ են տալիս նրանց, այլև

[1] Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Երևան, 1989, էջ 241:

հայ ֆիդայիների հետ գաղտնի կապեր հաստատելու կեղծ մեղադրանքով ձերբակալում ու բանտերն են լցնում մի շարք ցեղապետերի:

Վերջին, թուրք իշխանությունները «...արյունարբու ու անասնած տարրերից կազմակերպեց «Ջանբազար» անունով տեռորիստական մի կազմակերպություն, որի խնդիրն էր անհնազանդ համիդիեների և առհասարակ կառավարության կամքին չենթարկվող քրդերի զինաթափումն ու ահաբեկումը»[1]:

1904 թ. հունվարի սկզբներին թուրքական կանոնավոր բանակի զորամասերն ու քրդական հրոսակախմբերը, կենտրոնանալով Դաշտում, աստիճանաբար սկսում են պաշարել լեռնաշխարհը: Թուրք իշխանությունները շատ ճիշտ են ընտրում Սասունի վրա հարձակվելու և այն հիմնահատակ կործանելու պահը: 1904թ. բռնկված ռուս-ճապոնական պատերազմը, Երկիր մեկնող հայ հեղափոխական գործիչների, մարտական ուժերի նկատմամբ ցարական իշխանությունների դրսևորած թշնամական վերաբերմունքը, ինչպես նաև Հայ Դատի հանդեպ արևմտյան տերությունների որդեգրած երկդիմի քաղաքականությունը, թուրք կառավարությանը հրաշալի հնարավորություն է ընձեռում՝ ոչնչացնելու Դաշնակցության կողմից ուժերի կենտրոնացման վայր ընտրված Սասունը:

Լեռնաշխարհի ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար բազում կարևոր հարցերի շարքում պետք է լուծվեր ևս մեկը. ո՞վ - պետք է առաջնորդեր Սասունի մարտական ուժերը: Գաղտնիք չէ, որ Սասունում գտնվողներից և ոչ մեկը իր հերոսական անցյալով և մարտական հարուստ կենսափորձով չէր կարող համեմատվել Գևորգ Չավուշի հետ, և միանգամայն բնական է, որ ժողովուրդն ու ֆիդայիների մեծ մասը հենց նրան էին ցանկանում ընտրել հրամանատար:

Լեռնականների շրջանում արդեն մեծ հեղինակություն էր ձեռք բերել նաև Մեբաստացի Մուրադը: Թեև Սասունի փաստական առաջնորդը, անտարակույս, Հրայր Դժոխքն էր, բայց մարտական ուժերի հրամանատարի գլխավոր թեկնածուներ, համարվում էին Գևորգ Չավուշը, Անդրանիկն ու Մեբաստացի Մուրադը[2]:

Անդրանիկի թեկնածությանը, որպես Սասունի մարտական ուժերի հրամանատարի, դեմ է եղել Հրայր Դժոխքը[3]:

Սմբատ Բորոյանի հավաստմամբ «Մուրատը կը խնդրէր, որ հրամանատարութիւնը կը պատկանի Անդրանիկին, իբր ծանօթ տեղին, մանաւանդ՝ զինեալ ուժերուն... Մեպուհը եւ Մուրատը, առանձին տեսակցութեան մը մէջ, կրցան համոզել Անդրանիկը, որ նշանակուեցաւ ընդհանուր հրամանատար կռուող ուժերուն»[4]:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Տարօնեան էդ, Արիւնոտ եւ Արիւնոտ էջեր, էջ 25:
[3] Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 1, Պասքը, 1951, էջ 304:
[4] Երիցանց Մ., Զօրավար Սմբատի յուշերը, հ. Ա, էջ 207:

Անդրանիկի թեկնածությունը պաշտպանում է նաև Գևորգ Չավուշը, որի «...սկզբունքն էր ղեկավարությունը թողել դուրսն եկած ոյժի մը: Այս ուղղությամբ կը համոզէ բոլոր գիմորները, որ ենթարկուեն Անդրանիկին»[1]:

Գևորգ Չավուշի և Սեբաստացի Մուրադի վճռական պաշտպանությամբ Անդրանիկը ընտրվում է Սասունի մարտական ուժերի հրամանատար:

Թուրքական իշխանություններին հարկավոր էր որևէ պատրվակ, մի փոքրիկ դիպված, որպեսզի շարժման մեջ դնեին Սասունի վրա հարձակվելու նպատակով առանձնացրած զորքերն ու ձեռնարկեին վճռական գրոհներ: Հունվարի սկզբներին հարմար պատրվակ ներկայանում է: «...դժբախտաբար, - նշվում է Մուշից Արևելյան Բյուրոյին ուղարկված նամակում (18 ապրիլ 1904 թ.)քիւրտի գիւղերի վրայ դիպուածով բախում ունեցանք եւ այդ ժամանակ 30-40 հոգի քիւրտեր սպանուեցան»[2]:

Կառավարությունն ու նրանց կամակատար քուրդ աշիրեթները անմիջապես օգտագործում են ընձեռված հնարավորությունը և «... 20 թափուրի չափ գօրք տեղս լեցուց եւ տակաւին կը շարունակեն գալ ամէն կողմերէ...

Նմանապէս քիւրտեր ամէն կողմերէ հաւաքուել սկսած են»[3]:

Մինչ կանոնավոր զորամասերի հարձակումները, հայ մարտական ուժերը կռիվներ են մղել ընդդեմ քուրդ հրոսակախմբերի: 1904 թ. հունվարի 10-ին քուրդ ցեղապետներից Մյուդիր Քոռ Սլոն իր աշիրեթով և 15 ոստիկաններով ներխուժում է Հեղին, Արտկունք, Ընկուզակ և Իշխնձոր գյուղերը:

Դուրան-Բարձրավանդակում ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Վահան Մանվելյանը Թորգոմին հասցեագրած նամակում, անդրադառնալով Լաճկանի կռվի մանրամասներին, գրում է. «Կռիւը սկսաւ: Թեեւ շատ կրկափագէինք, որ երբեք քիւրտերու հետ գործ չունենանք եւ անոնց բարեկամութիւնը շահելու համար ջանք չէինք խնայէր, բայց ինչ օգուտ... Այդ կոյր վայրենիները գործիք եղան կառավարութեան ձեռքը ու առաջին ընդհարումը տեղի ունեցաւ երէկ»[4]:

Ռազմական խորհրդի հանձնարարությամբ աշիրեթների դեմ հայ մարտական ուժերի մղած կռիվները ղեկավարել են Սեբաստացի Մուրադը, Գևորգ Չավուշը, Գոմսա Իսոն և Հաչի Հակոբը: Նրանց վարած կռիվները, առանց բացառության, ավարտվել են հայ մարտական ուժերի հաղթանակով[5]:

Կռիվների արդյունքները ցույց տվեցին, որ միայն քրդական հրոսակախմբերի ուժերով անհնարին էր հաղթահարել սասունցիների դիմադրությունը: Թուրք հրամանատարությունը գարնանը՝ մարտի վերջերին կանոնավոր զորագնդերով, որոնց միանում են նաև քրդական տասնյակ աշիրեթներ, պաշարում է Սասունը և հարձակում ձեռնարկում մի քանի ուղղություններով:

[1] Յեղափոխական Ալպոմ, 1927, թիւ 9, էջ 17:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 687, գ. 22, էջ 1:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:

Համաձայն Ռուբեն Տեր-Մինասյանի վկայության, թուրք իշխանությունները Սասունի վրա կենտրոնացնում են հետևյալ ուժերը.«...9000-10000 կանոնաւոր զօրք եւ ոստիկաններ եւ5000-7000 քիւրտ խուժան»[1]:

Լեռնաշխարհում թուրքական և քրդական վերոհիշյալ ուժերին դիմակայում էին ընդամենը 200 ֆիդայիներ եւ 700-800 տեղացի մարտիկներ:

Սասունի ինքնապաշտպանական ուժերի վերաբերյալ գրեթե համանման տվյալներ է վկայում նաև Սմբատը. «... խումբը հազիւ ընդամենը 100 մարգուած մարտիկ կը համրէին, մօտ 200 հրացանով: Անոնցմէ դուրս, եթէ օժանդակ ուժ սեպենք զինեալ գիւղացիներ, անբաղդատելի կերպով գերակշիռ թշնամիին դէմ կրնանք արձանագրել մօտ 1000 հրացան, մեծ մասամբ հին... »[2]:

Սասունի ապստամբական շրջանի մեջ ընդգրկված էին ընդամենը 21 գյուղ՝ Քոփ, Գյատման, Իրեցանք, Տափրկ, Գեղաշեն,Շուշանամերիկ, Սեմալ, Շենիք, Գելեգնդման, Գելեմսուր, Աղջի, Հեթինք, Խլիովիտ, Գելիեգուզան, Տալվորիկ, Իշխնձոր, Արտկունք, Արսրք, Սաղտուն, Հեղին: Այդ բնակավայրերից ամենամեծերը՝ Գելիեգուզանը և Տալվորիկը, համապատասխանաբար կազմված էին 18 և 12 փոքր գյուղերից կամ թաղերից[3]:

«Իսկ Բարձրաւանդակի շրջաններէն ամբողջ Խուլբը, Խիանքի մէկ մասը, Ծովասարի փէշերու գիւղերու մէկ մասը, Փսնայ ամբողջ գաւառը, Բալակցոց, Բռնաշէնի, Հազոյի Խութ եւ այլ լեռնագաւառներու հայերը ազատ էին պաշարումէ: Այսպէսով Դուրան-Բարձրաւանդակի 180.000 հայութենէն միայն Սասնոյ շրջանի 8000-8500 հայերն են որ ըմբոստութեան դրօշը կը պարզին»[4]:

Լեռնաշխարհի մարտական ուժերը տեղաբաշխվում են հինգ գլխավոր հենակետերում, հյուսիսային՝ Շենիկ ու Սեմալ, կենտրոնական՝ Գելիեգուզան և հարավային՝ Տալվորիկ և Իշխնձոր: Ըստ Սմբատի վկայության, այս ուղղություններից գլխավոր ճակատը՝ հյուսիսայինը (Շենիկ, Սեմալ), գլխավորում էր Հրայր Դժոխքը: Այս ճակատում էին նաև Մուրադը, Սեպուհը, Հաջի Հակոբը, Սպաղանաց Մակարը, Գոմսա Իսոն (Կորյուն) և այլոք: Կենտրոնում Գելիեգուզանի ուղղությունը պաշտպանող մարտախմբերը գործում են Անդրանիկի հրամանատարությամբ, որի հրամանատարական կետը գտնվում էր Տափրկ գյուղում[5]:

Մինչև ապրիլի 12-ը տարբեր ծավալի մարտեր են ընթանում լեռնաշխարհի զանազան կետերում, մասնավորապես՝ Շենիկ-Սեմալ ուղղությամբ:

Թուրք իշխանությունները, որոնք ձգտում էին հնարավորինս արագ ընկճել Սասունի պաշտպանների դիմադրությունը, փորձում են կեղծ խոստումներով սիրաշահել ու հնազանդության կոչել ֆիդայիներին և Սասունի բնակչությանը:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 264:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 226:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 226:

Ապրիլի 12-ին Բիթլիսի կուսակալի կողմից Սեմալ է գալիս մի պատգամավորություն. «...բաղկացած,- համաձայն Սմբատի վկայության,-Մուշի եւ Պիթլիսի առաջնորդներէն. Առաքել եւ Վարդան վարդապետներէն. Մուշի քաղաքական ժողովոյ անդամներէն ...Այս պատուիրակութեան պարտք դրուած էր համոզել ժողովուրդը. որ չմիանայ ըմբոստներուն եւ այս վերջինները անձնատուր ըլլան: Իրենց հետ ունէին Օրմանեանի (Պոլսի պատրիարք) մէկ կոնդակը եւ Սուլթանին Իրատէն»[1]:

Ապստամբությանը նվիրված տեղեկագրում Վահանը տեղեկացնում է, որ պատվիրակության բերած գրությունների բովանդակությունն էր. «..որ յեղափոխականներն անձնատուր ըլլան եւ ապահով դառնան տեղերնին, իսկ տեղացի ժողովուրդն ալ ամէն կերպով հպատակի կառավարութեան եւ սպասէ անոր շնորհներուն. հակառակ պարագային կառավարութիւնը խիստ միջոցներու պիտի դիմէ»[2]:

Թուրք հրամանատարությունը, հաշվի առնելով հայերի մերժողական պատասխանը, զուգահեռաբար ձեռնարկում է հետևյալ քայլը: Հաշվարկելով, որ ապստամբների հրամանատարությունն անպայմանորեն կտարվի իրեն ներկայացված առաջարկություններին պատասխանելու գործով, ճակատի Սեմալ-Շենիկ հատվածում է կենտրոնացնում ավելի քան ութ կանոնավոր վաշտեր և 3-4 հազար քուրդ զինյալներ, որոնք, չապասելով հայերի պատասխանին, հարձակում պիտի ձեռնարկեին հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի վրա[3]:

Սասունի դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ ապստամբության կազմակերպիչներն ու պատասխանատուները ի սկզբանե առանձնապես մեծ հույսեր չեն փայփայել հաղթանակի նկատմամբ: Այլ տարբերակ լինել չէր կարող: Ի՞նչ ուժերով և ինչքան կարող էին ընդամենը մի քանի հարյուր ազատամարտիկներ դիմագրավել թնդանոթներով զինված թուրքական կանոնավոր բանակին և նրանց սատարող տասնյակ հազարավոր քուրդ զինյալներին:

Հարց է ծագում. եթե իրոք Սասունը չուներ պաշտպանվելու բավարար միջոցներ, ապա ինչու՞ չէր ընդունում զենքը վայր դնելու առաջարկությունը:

Վահանի վկայությամբ հայ բանագնացների մեջ էլ եղել են մարդիկ, որոնք դեմ լինելով զինված հակամարտությանը, փորձել են համոզել Սասունի առաջնորդներին , որպեսզի նրանք ընդունեին թուրքերի վերջնագիրն ու վերջ տային զինված ելույթներին[4]:

Այս ամենով հանդերձ Սասունի առաջնորդները մերժում են իշխանությունների առաջարկությունը և որոշում շարունակել կռիվը: Համաձայն «Դրօշակ»-ի փաստարկման. «94-ի դեպքերը բաւական ապացոյցներ էին հաստատելու, որ չէ կարելի բնաւ թշնամու խոստումներուն հաւատալ եւ միւս յիշեցնելու յեղափոխականներուն, որ այդ տեսակ բոլոր պաշտօնական բանակցութիւնները լոկ «պատրանքներ» են ժամանակ շահելու եւ պատասխանատուութիւնը վրայէն նետելու: Ատոր համար մերժուեցան կոնդակն ալ, իրատէն ալ»[1]:

Թուրք հրամանատարությունը, չսպասելով Սասունի առաջնորդների պատասխանին, սկսում է իրականացնել ծրագրած մարտական գործողությունը ու մեծ ուշադրություն դարձնելով Շենիկ- Սեմալ ուղղության վրա, վճռական քայլեր է ձեռնարկում գրավել ճակատի հենց այդ հատվածը:

Ապրիլի 11-ին Բիթլիսի նահանգապետի առաջնորդությամբ թուրքական զորքերը, ոստիկանական ուժերն ու քրդական աշիրեթները կենտրոնանում են քրդաբնակ Շեն գյուղում: Նրանք ծրագրում են աննկատ մոտենալ Շենիկ գյուղին և այնտեղից անսպասելիորեն գրոհել Սեմալի վրա: Նույն օրը 700 հեծյալ թուրք զինվորներ սրարշավ ներխուժում են գյուղ[2]:

Թուրք հրամանատարությունը թեպետ փորձում էր հնարավորինս քողարկել իրենց ձեռնարկումներն ու հայերին անակնկալ մատուցել, սակայն Սեմալում վաղօրոք դիրքավորված հայ մարտական ուժերը, որոնց առաջնորդում էր Հրայր Դժոխքը, ժամանակին նկատում են հակառակորդի պատրաստությունները և «... մեր տղայք եւ ժողովուրդ Հրայրի (Դժոխք Արմենակ) հրամանատարութեան տակ կը յարձակին քիւրտերու եւ զօրաց վրայ, զանոնք կը շեն, կտանին մինչեւ մարտի 31-ին կուռյ տեղը, զօրքերը դէպի Դաշտ կը փախչին, իսկ քիւրտերը Շէն»[3]:

Բիթլիսի կուսակալը մեկ անգամ ևս փորձում է խաբեությամբ ծուղակի մեջ գցել Սասունի մարտական ուժերի հրամանատարությանը: Ապրիլի 12-ի երեկոյան կուսակալը Սասնո առաջնորդների հետ բանակցելու նպատակով նոր պատվիրակություն է ուղարկում Սեմալ: Նա հույս է ունեցել, որ դրանով կհաջողվի հայ մարտական ուժերի հրամանատարներին հեռացնել ճակատից, նրանց հավաքել մի տեղում և ապա նոր ձեռնարկել հարձակումը:

Թուրքական ութ զորավաշտեր, որոնց շարքերը պիտի համալրեին նոր զորամասեր, քուրդ զինյալների համագործակցությամբ, հարձակումը պիտի զարգացնեին երկու ուղղությամբ. «...մեծ մասը պիտի յառաջանար դէպի հարաւ, Ալիանքի վրայով անցնելու Բէրբերի հովիտով եւ մտնէր Կէլիէկուզանի հովիտը, իսկ միւս մասը պիտի յառաջանար դէպի արեւելք՝ Սեմալ, Չայն ու Չայի գլուխներն անցնելով, նորէն պիտի մտնէր Կելլի հովիտը»[4]:

Բիթլիսի կուսակալի և թուրք հրամանատարության մտահղացումն այս անգամ դարձյալ մատնվում է անհաջողության: Ճիշտ գնահատելով թուրքական զորավաշտերի , քուրդ աշիրեթների զորաշարժերի և թուրք հրամանատարության իսկական նպատակը՝ Սասունի Զինվորական խորհուրդը ըստ այդմ էլ

Նույն տեղում, էջ 235:
ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 7, էջ 1:
Տե՛ս Սասուն-Մուշ կռիւները, Պէյրութ, էջ 15:
ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 7, էջ 2:

«Դրօշակ», 1905, թիւ 2, էջ 28:
Նույն տեղում:
Նույն տեղում:
Նույն տեղում:

դասավորում է իր մարտական ուժերը: Կենտրոնում Տափրկ գյուղն է մեկնում Անդրանիկը: Ամենապատասխանատու՝ Շենիք- Սեմալ ուղղության պաշտպանությունը հանձնարարվում է Հրայր Դժոխքին, որի հրամանատարությամբ գործելու էին նաև Սեպուհի, Գոմսա Իսոյի և Ավոյի գլխավորած հայդուկային խմբերը: Գևորգ Չավուշը ստանձնում է Սասունի պաշտպանության հարավային՝ Տալվորիկից Իշխանձոր ձգվող հատվածում դիրքավորված մարտական ուժերի հրամանատարությունը: Մուրադը Մակարի ու Հաջի Հակոբի ընկերակցությամբ տեղափոխվում է Չայի հատվածը [1]:

Ապրիլի 13-ի առավոտյան, թուրքական զորամասերն ու քրդական հրոսակախմբերը անցնում են հարձակման: Իսկ նույն պահին Սասունի զինվորական խորհրդի անդամներն ու գյուղերի առաջնորդները պիտի հավաքվեին Գեղաշեն գյուղում, որպեսզի վերջնական պատասխան տային հակառակորդի առաջարկություններին:

«... ապրիլի 13-ի առաւօտը,- գրում է Վահանը,- հոն հասայ, մենակ կը սպասէի Հրայրի գալուն, յանկարծ կռուի հաւարի ձայներ հասան: Կուսակալի բանակցութեանց խնդիրը կեղծ էր եղեր, զմեզ իրարու վրա հաւաքելով եւ ապահով համարելով՝ կուզէ եղեր մեկ հարուածով ամէն ինչ վերջացնել: Առաւօտեան ժամը 1-ին զօրքերը եւ աշիրը կը յառաջանան դէպի Շէնիկ եւ անկէ ալ Սեմալ [2]»

Թուրք հրամանատարությունը Սասունի պաշտպաններին ապակողմնորոշելու նպատակով գրոհը զարգացնում է երկու ուղղությամբ, որոնցից մեկը զուտ ցուցադրական, ուշադրությունը շեղող բնույթ ուներ: Գլխավորը Շենիք-Սեմալ ուղղությունն էր, ուր կենտրոնանում է կանոնավոր զորամասերի և քրդական հրոսակախմբերի մեծ մասը:

Նկատելով թուրքական զորքերի տեղաշարժերը՝ Հրայրը, Մուրադն ու Սեպուհը հասկանում են թուրք հրամանատարության մարտավարությունը և կայացնում համարձակ վճիռ. «Անմիջապէս կրակի կուտան Սեմալը, Դաշտոկը եւ խումբ մը գիւղացիք թէ ներկայ ժողովուրդ, երկու մասի կբաժանուին, մէկ մասը Սեպուհի եւ Մուրատի հետ կբռնին Բլրրիկ եւ միւսը պ. Հրայրի առաջնորդութեամբ, կբարձրանան գիւղի վերեւի քարերը եւ կպատրաստուին դիմադրութեան» [3]:

Թուրքական զորքերը տարբեր ուղղություններով ներխուժում են Սեմալ: Կատաղի ճակատամարտ է ծավալվում թնդանոթների կրակի ուղեկցությամբ գյուղի վրա հարձակվող թուրքական կանոնավոր զորամասերի, բազմահազար քուրդ զինյալների և նրանց դիմակայող հայ մարտիկների միջև:

Սեմալի պաշտպանները դիմագրավելով թշնամու անընդմեջ գրոհները, կարողանում են կասեցնել հակառակորդի առաջխաղացումը ու պահել դիրքերը: Հետագա դիմադրությունը դառնում է գրեթե անհնարին: Գյուղի բնակչությանը դժվարությամբ հաջողվում է պարպել գյուղն ու շարժվել Գելիեգուզանի ուղղությամբ: Եթե թուրք հրամանատարությանը հաջողվեր իրականացնել ծրագրված գործողությունը, ապա, անտարակույս, Սասունի ինքնապաշտպանական ուժերը կհայտնվեին շատ ծանր իրավիճակում և, կարելի է ասել, հետագա դիմադրությունը կդառնար անհնարին: Սակայն ապրիլի 13-ին Շենիք-Սեմալ ճակատում ընթացող մարտերում Սասունի ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը ձախողում է հակառակորդի ծրագրած հարձակումը:Չնայած հայ մարտիկների դրսևորած հերոսությանը, այնուամենայնիվ, հետագա դիմադրությունը գնալով ավելի է դժվարանում և դառնում գրեթե անհնարին: Սեմալի պաշտպանները թողնում են գյուղը և նահանջելով դիրքեր գրավում գյուղի մերձակա լեռնալանջերին ու շարունակում դիմադրությունը:

«Թշնամին,- նշում է Վահանը,- բազմաթիւ քիւրտեր եւ զօրքեր (10-12000) մեր կռուողները իրարմէ կբաժնուին, սարերը ձիւն, դիրքը անյարմար, բայց մեր կտրիճները, առանց վայրկեան մը կորսնցնելու, կշարունակեն կռիւը զանազան կողմերու վրայ» [1]:

Հակառակորդի գրոհներից մեկի ժամանակ վիրավորվում է Սեպուհը: Հրայր Դժոխքը, տեսնելով դժվարին իրավիճակում հայտնված մարտական ընկերոջը, նետվում է առաջ և փորձում մարտադաշտից դուրս բերել Սեպուհին:

«Սեպուհը կը կանչէ, կաղաչէ Հրայրին թողուլ զինք, չգնալ իր ետեւէն, իրենց պաշտպանութեան համար աւելի բարձր, ամուր դիրքեր բռնել, բայց Հրայր չուզեր անոր լսել ու կը պատասխանէ. «Կա՛մ կը սպաննուիմ, կամ քեզ ալ ազատելով՝ հետս կը տանիմ» [2]:

Ինքնապաշտպանական ուժերը ունենում են թերևս ամենաթանկագին և ամենացավալի զոհը. «Գլուխն,- նշում է Վահանը,- գնդակի հարուած մը ընդունելով Կէլիէկուզանի եւ Սեմալի մեջեւ կսպանուի մեր անփոխարինելի ընկերը, յեղափոխութեան անվհատ առաքեալը՝ պ.Հրայր (Արմենակ Ղազարեան-Դժոխք, Ղըզըլաղաճ գիւղացի Մշոյի)» [3]:

Հրայրի զոհվելը և Սեպուհի վիրավորվելը, անտարակույս, կարող էր խուճապ սերմանել հայ մարտիկների շարքերում: Այդ նույն պահին Անդրանիկը գտնվում էր ճակատի կենտրոնական հատվածում և քանի որ նա նույնպես մարտնչում էր ծանրագույն իրավիճակում, չէր կարող թողնել պաշտպանական այդ հատվածն ու մեկնել Սեմալ- Շենիկ ուղղություն:

«Երբ կռիւները սկսան,- պատմում է Սմբատը,- ես կը գտնուէի Իշխանձոր, որուն ղեկավարութիւնը յանձնուած էր Գէորգին: Շատ չանցած, նամակ մը ստացանք, որով կը հրահանգուէր Գէորգին, վերադառնալ Կէլիէկիւզան, ինձի յանձնելով Տալորիկի ճակատին ղեկավարութիւնը» [4]:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 7, էջ 1:
[2] Նույն տեղում, գ. 8, էջ 5:
[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 5:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 252:

Գևորգը մարտախմբով մեկնում է Սեմալ և ստանձնելով այդ ճակատի հրամանատարությունը՝ կասեցնում է թշնամու առաջխաղացումը: Թուրք հրամանատարությունը, լեռնականների պաշտպանական ճակատը ճեղքելու և Գելիեգուզան ներխուժելու նպատակով, գրոհ է ձեռնարկում նաև Չայի ուղղությամբ, բայց հանդիպելով Մուրադի գլխավորած մարտիկների դիմադրությանը և կրելով զգալի կորուստներ, դադարեցնում է առաջխաղացումը [1]:

Սմբատի տվյալների համաձայն «Մերիններուն գնահատանքով թշնամին այդ օրը կորսնցուցեր էր 800-1000 հոգի: Կռուի զանազան կէտերէն հաւաքուած էին թրքական յիսունի չափ մառզեր, եւ բոներ էին նոյնքան մըն ալ գերի»[2]:

Ապրիլի 14-ին թուրքական ուժեղացված զորավաշտերը քրդերի աջակցությամբ գրոհում են Մերկեր գյուղի վրա: Ինչպես նախորդ, այդ օրվա կռվում նա՝ Մուրադը փայլում է իր մարտական վարպետությամբ՝ ժամանակին օգնության հասնելով դժվարին կացությունում հայտնված գյուղի պաշտպաններին.«...եւ իւր խումբին արագ օգնութիւնը կտրուկ հարուած մը տուէր էր թշնամիին, որ մէկ քանի ժամուան կռիւէ յետոյ, հեռացէր էր»[3]:

Մինչև նույն ամսվա 20-ը համեմատաբար խաղաղ է անցնում: Թուրք հրամանատարությունը Դիարբեքիրից և Մուշից Սասուն է տեղափոխում նոր զորամասեր: Կենտրոնացնելով նոր զորամասեր և քրդական հրոսակախմբեր՝ իշխանությունները նախատեսում են առավել հզոր հարձակումով պարտության մատնել լեռնաշխարհի պաշտպաններին ու գրավել Սասունը:

Դուրան-Բարձրավանդակի կենտ. կոմիտեի անդամ Գեղամ Տեր-Կարապետյանը ներկայացնելով թուրք հրամանատարության ձեռնարկած քայլերը, գրում է. «Ապրիլի 13-20 թուրք բանակը զբաղեցրած զօրքերը աւելացրեց եւ նոր յարձակումներ պատրաստեց... արդէն 10-12000 կանոնաւոր զօրք եւ 10-15000 բարբարոս քիւրտ աշիրէթներ խառնուած էին հոն»[4]:

Քանի որ մարտական ուժերի խիստ սահմանափակության պատճառով հակառակորդի լայնածավալ հարձակումների դեպքում անհնարին կլիներ պաշտպանել պաշտպանական բնագծերը, Սասունի ռազմական խորհուրդը որոշում է ուժերը կենտրոնացնել ավելի փոքր տարածքի վրա: Այդ նկատառումով այրում են գյուղերը ու մարտական ուժերը տեղափոխում Գելիեգուզան [5]:

Ապրիլի 19-ին գումարվում է ռազմական խորհրդակցություն, ուր վերջնականապես ճշտվում են պաշտպանական յուրաքանչյուր տեղամասը պաշտպանող մարտախմբի կազմն ու հրամանատարները: Յուրաքանչյուր խումբ ունեցել է «...10 կանոնաւոր հրացան, որոնցմէ 3-4 մոսին, մնացածները բերդանկա: Կանոնաւոր հրացաններուն կը միանային եւ չախմախլիով զինուածները» [6]:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 2, էջ 20:
[2] Տե՛ս Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 255:
[3] Նույն տեղում:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 7, էջ 3:
[5] Տե՛ս Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 255:
[6] Սասուն-Մուշ կռիւները, էջ 44:

Ապրիլի 20-ին, տասնյակ հրանոթներից հարյուրավոր արկեր տեղալով Գելիեգուզանի պաշտպանների դիրքերին և գյուղի վրա՝ թուրք կանոնավոր զորավաշտերն ու քրդերը անցնում են հարձակման:

Չնայած ուժերի բացահայտ գերակշռությանը, այդ օրը հակառակորդին, այնուամենայնիվ, չի հաջողվում գրավել հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերը: Բայց մարտական ուժերն ու գյուղում կուտակված բազմությունը հայտնվում են օրհասական կացությունում: Պարզվում է, որ բազմահազար բնակչությանը կերակրելու համար շատ քիչ ուտելիք էր մնացել, իսկ ամենասարսափելին այն էր, որ արդեն սպառվում էր զինամթերքը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը մեկն էր, օգտագործել մթության ընձեռած հնարավորությունն ու աննկատ թողնել գյուղը: Հազարավոր կանայք, երեխաներ և անզեն տղամարդիկ, դուրս գալով Գելիեգուզանից, մարտախմբերի պաշտպանությամբ հասնում են Սասունի Շատախի շրջան: Իսկ բնակչության ավելի մեծ մասը պատսպարվում է Սասունի լեռներում [1]:

Իրենց հետագա անելիքները որոշակիացնելու նպատակով Անդրանիկը ապրիլի 21-ին Ալուճակ գյուղում խորհրդակցություն է հրավիրում: Խորհրդակցության մասնակիցներից ոմանք առաջարկում են ամրանալ Անդոր-Քոփ լեռների դիրքերում և շարունակել կռիվը, իսկ «ոմանք ալ, մասնաւորապէս Դաշտի ու դուրսերէն եկած ֆետայիները, կըսեն թե անհնար է կռիւը շարունակել լեռներու մէջ, քանի որ ոչ պաշար կայ, ոչ ալ ռազմամթերք» [2]:

Ի դեպ, Սասունի ընդհանուր մատակարար Քեռին զինամթերքի ու սննդամթերքի պաշարների սպառման մասին զինվորական խորհրդի անդամներին հայտնել էր դեռևս խորհրդակցության նախօրեին: Հաշվի առնելով այդ իրողությունը, խորհրդակցությունում որոշվում է ժողովրդին իջեցնել Դաշտ: Պատասխանատու այդ խնդիրը հանձնարարվում է Մուրադին, իսկ կռվողների հիմնական մասը, ապավինելով Սասունի անմատչելի լեռներին, Անդրանիկի և Գևորգ Չավուշի գլխավորությամբ պիտի շարունակեր կռիվները:

«Ստոնք,- գրում է Ռուբենը,- կը մտածէին շարունակել կռիւը լեռներուն մէջ այն յոյսով, որ գուցէ Դաշտէն կամ Վասպուրականէն իրենց ռազմամթերք ու օգնութիւն հասնի...» [3]:

Մեբաստցի Մուրադը իր զինակիցներով կատարում է առաջադրանքը: Հազարավոր հայեր դժվարանցանելի լեռներով ու ձորերով տեղափոխվում են Դաշտի գյուղերը [4]:

Ժողովրդին Դաշտի գյուղերում տեղաբաշխելուց հետո Մուրադն ու Քեռին մի փոքրիկ խմբով անցնում են Վան, որտեղից զենք ու զինամթերք պիտի հասցնեին Սասունի լեռներում իրենց սպասող ֆիդայիներին:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 288-289:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 688:

«Մուրատը եւ Քեռին,- գրում է ՀՅԴ Վանի կենտր. կոմիտէի անդամ Վ. Փափազեանը,- բերած էին նամակներ Հրայրէն եւ Վահանէն: Նկարագրեցին Տարօնի ծանր եւ օրհասական կացութիւնը եւ ռազմամթերքի պակասը. խնդրելով տալ ինչ որ կրնանք եւ գիրենք վերադարձնել իսկոյն: Անմիջապէս զատեցինք ամենաընտիր մեր սակաւաթիւ հրացաններէն. կարծեմ 40 հատ. 10 մաուզէր ատրճանակ եւ 12.000 հրացանի եւ մաուզէրի փամփուշտ. ռումբեր... Այդքանը միայն կրնայինք տալ այդ ատեն»[1]:

Մինչեւ Մուրադի վերադարձը. կռիվները Սասունում շարունակվում էին: Գելիեգուզանի անկման հաջորդ օրերին ամենակատաղի կռիվներն ընթանում էին հարավային ճակատում. ուր Տալվորիկի և Խիանքի պաշտպանները դիմագրավում էին թուրք զորամասերի և քրդերի հարձակումները:

ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի ընկերներին ուղղված 1904 թ. մայիսի 2-ի նամակում նշվում է. «Նորից մեծ ուժեր հաւաքեց թշնամին. – քիչ էին եղածները. 4-5 վաշտ զօրք էլ. որ վերջերս հեռաւոր քաղաքներից եկած էին. Սասուն բարձրացան անմիջապէս: Մեծ կռիւը Տալւորիկի վրայ է հիմա եւ երկու օր է թնդանօթների գոռումները սար ու ձոր թնդացնում են: Հազարաւոր ռումբեր արձակել է դուշմանը մինչեւ հիմա: Մարդախողխող վալին (նկատի ունի Բիթլիսի նահանգապետին – Հ.Գ.) յայտարարել է. որ «ռումբերով Սասունի լեռներն էլ պիտի քանդեմ...»[2]:

Մինչեւ ապրիլի 23-ը այդ ճակատում ընթացող մարտերում կանոնավոր զորամասերի և նրանց սատարող քրդական հրոսակախմբերի կողմից ձեռնարկվող անընդմեջ հարձակումները որևէ կերպ չեն սասանում Տալվորիկի պաշտպանների մարտաշարքերն ու դիմադրությունը: Եվ միայն Գելիեգուզանի անկման հաջորդ օրը Տալվորիկի պաշտպանները հարկադրված թողնում են պաշտպանական բնագծերը և տեղափոխվում լեռները[3]:

Ապրիլի 25-ից մինչեւ մայիսի 1-ը հայ ֆիդայիները լեռնականների մարտական ուժերի համագործակցությամբ, օգտագործելով մարտնչելու վերջին հնարավորությունները. մնում են Սասունում. սակայն սովամահության սպառնալիքից հարկադրված՝ լքում են դիրքերն ու իջնում Դաշտ: Սասունը գրեթե ամայացել էր. լեռների ծերպերում մնացել էին հատ ու կենտ մարդիկ: Լեռների խորշերից մեկում պատսպարվել էր նաև ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Վահանը: Գևորգ Չավուշը մի քանի մարտիկներով հասնում է Տալվորիկ՝ Վահանի պատսպարված քարայրը. բայց արդեն ուշ էր: Թուրքերը հասցրել էին հայտնաբերել նրան և ճանաչելով՝ սպանել:

Վահանն իր վերջին նամակում մեկ անգամ ևս ներկայացնում է Դուրան-Բարձրավանդակի ծանր կացությունը և ընկերներին հայտնում. «Անգլիայի (Բիթլիս) դեսպանին պաշտօնական գրութիւն մը ղրկեցինք. որպէսզի հեռագրէ

[1] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 1, էջ 301:
[2] ՀՅԴ ԿԱ, թծ. 689, գ. 9, էջ 3:
[3] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 293:

Պոլիս իր պաշտօնակցին. Կարնոյ տեսպանին ալ սուրհանդակ ղրկեցինք: Վանայ մեր բոլոր ակցին ալ գրեցինք եղած կոտորածը: Դուք ալ ձեր կողմէ աշխատեցէք լուր տալ արտաքին աշխարհին...»[1]:

Այդ նամակը մեկ անգամ ևս վկայում է. որ ամենաօրհասական պահին նրանց մեջ դեռևս ապրում էր արտաքին աշխարհից օգնություն ստանալու հույսը:

Ի՞նչպիսին էր կացությունը Սասունում ապստամբությունից հետո: Ուշագրավ է «Դրօշակ»-ի ներկայացրած հետևյալ պատկերը. «Սասնոյ մէջ 45 հազար իր վեց թաղով. Մխիթար. Հէսէյնիկ. Ղարիպշահ. Դահոլ. Մերկէ. Կրոհսար. Ալիանք. Հրմօի գոմ. որոնց բնակիչներու թիւը 1.800-էն աւել է: Սէմալ եւ Շէնքը--2.130 բնակիչ. Աղբի. Գեղաշէն. Շուշնամերկ.--1415 բնակիչ. Քոր. Տաբրգ. Երիցոնք. Կեսարմաւ--1175 բնակիչ. Հիթենք. Խոծոծվանք. Խտան. Կէլիէմսուր--875 բնակիչ. Հեղին. Իշխնձոր. Սարթ. Ընկուզիկ. Արտկոնք. Կէլիէկէնրման--1860 բնակիչ. Տալւորիկ. Էգուտուն. Փուրխ. Հագմանք--1030 բնակիչ. Թուահիրք. Խրլիովիտ. Հոդենք. Արգուխու. Միգրէ--850 բնակիչ. Հուսնուտ. Քորոխու. Սպաղանք. Եղկարտ--650 բնակիչ. Յարգի. Չորեր. Քարաւանք եւ այլն 850 բնակիչ: Գումար 12.650 բնակիչ»[2]:

«Դրօշակ»-ի հավաստմամբ վերոհիշյալ 12.650 բնակիչներից 2500-ը սպանվել էին. 5500 կանայք. երեխաներ. ծերեր և վիրավորներ մեծ դժվարությամբ հասել էին Մուշ. իսկ մնացածները թուրքերի և քրդերի սրերից մազապուրծ ապաստանել էին տարբեր անհայտ վայրերում[3]:

Չբավարարվելով կատարվածով՝ թուրք ոստիկաններին խստագույնս հանձնարարված էր ամենուրեք որոնել ու գտնել սասունցիներին: Ոստիկանները կատարելով հանձնարարությունը՝ հավաքում էին լեռներում և այլուր ապաստանած հայերին ու քշում Մուշ: ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ»-ի կենտր. կոմիտեի վերոհիշյալ նամակում (1904 թ., մայիս 2) այդ առնչությամբ նշվում է. «Ապր. 24-էն ի վեր սկսեցին Մուշ հասնել խոժոռաբարոյ թուրք ոստիկաններու մտրակ-նեղրու ներք Սասունից ջարդուկտոր ժողովրդի մնացորդները. միայն կիներ եւ երեխաներ: Մինչեւ հիմա հասել էին հոս 7- 800-ի չափ...»[4]:

Գրեթե նույն պատկերն է տիրել նաև Դաշտի գյուղերում. ամենուրեք թուրք իշխանությունների հանձնարարությամբ ոստիկանական ուժերն ու քուրդ հրոսակները հեղեղում են հայկական գյուղերը և հեղափոխականներին գտնելու նպատակով տանջանքների ենթարկում սասունցիներին ու նրանց պատսպարող Դաշտի հայ գյուղացիներին:

Դաշտի բնակչությունը բացարձակորեն պատրաստ չէր կռիվներ մղելու, և ֆիդայիների ներկայությունը տվյալ իրավիճակում ոչ միայն պայմանավորված չէր որևէ խելամիտ ու օգտակար հանգամանքներով. այլ նաև ավելորդ էր ու վնասա-

[1] ՀՅԴ ԿԱ, թծ. 689, գ. 28, էջ 1:
[2] «Դրօշակ», 1904, թիւ 12, էջ 184:
[3] Նույն տեղում:
[4] ՀՅԴ ԿԱ, թծ. 28, էջ 2:

կար: Թուրք իշխանությունները կարող էին լավագույնս օգտագործել Տարոնում ֆիդայիների ներկայության փաստը և ջարդերի ալիքը սփռել նաև Դաշտի գյուղերում: Իսկ նման պարագայում խիստ սահմանափակ ուժեր ունեցող ֆիդայիների մարտախումբը որևէ կերպ ի զորու չէր դիմակայելու հակառակորդի ձեռնարկումները: Եթե անաչառ գնահատենք Սասունի ապստամբության պարտությունից հետո Դաշտում տիրող կացությունը, ապա պիտի նշել, որ ավելի ճիշտ կլիներ, որ ֆիդայիները հանգիստ ու անշշուկ թողնեին Տարոնի տարածքը ու անցնեին Վասպուրական:

Սասունի ինքնապաշտպանությունը ընկճելուց հետո թուրք իշխանություններն իրենց ուշադրությունը բևեռում են Դաշտի վրա: Ֆիդայիների գլխավորությամբ Դաշտի բնակչությունը Բերդակ, Գոմս, Մկրագոմ, Դերեկ, Գոմեր, Դերգևանք, Կուրավու, Ալիգլրուն գյուղերում կարողանում է դիմագրավել թշնամու հարձակումներին ու փրկվել կոտորածից: Այդ կռիվներից հետո, զինամթերքի սպառման պատճառով, հայդուկները բարձրանում են Սասուն և սպասում Վան ուղևորված Մուրադին:

Հուլիսի 10-ին վերադառնում է Մուրադը: «Անդրանիկ,- գրում է Կ. Սասունին,- եւ միւս խմբապետները զանազան վայրերէն հաւաքուեցան Բերդակ լեռը, ուր կը հասնէր Մուրատ՝ բաւական ռազմամթերք բերելով իր հետ: Ֆետայիները ուրախութեամբ կը լեցնեն իրենց դատարկուած փամփշտակալները եւ աւելի անձնավստահութեամբ կը նային ապագային»[1]:

Իրենց հետագա գործողությունները որոշելու նպատակով Սասունի առաջնորդները Մառնիկա սարի բարձունքում գումարում են իրենց վերջին խորհրդաժողովը: Համաձայն Սմբատի վկայության, խորհրդաժողովի 80 մասնակիցների մեջ տիրել է երկու տեսակետ: Առաջին տեսակետի համաձայն, որը պաշտպանել են ՀՅԴ Մուշի Կենտր. Կոմիտեն, մարտախմբերը պետք է ցրվեին, իսկ Անդրանիկը. «...ինքն ալ ապաստանի Մուշի ռուսական իւպատոսարանը, ուր իրեն թաքստոց մը պատրաստուած էր»»[2]:

Երկրորդ տեսակետը պաշտպանողները, Անդրանիկի գլխավորությամբ, նույնպես համամիտ են եղել մարտախմբերը ցրելու առաջարկությանը, բայց պահանջել են, որպեսզի կուսակցական թուրք իշխանությունների հետ վարեին անհրաժեշտ բանակցություններ: Իսկ ռուսական հյուպատոսարանում պատսպարվելու Անդրանիկին արած առաջարկությունը մերժվում է: Ավելին, Անդրանիկն առաջարկում է. «Գէորգն ու ես դաշտ իջնենք, հաւաքենք ու Մարնկայ սարը փոխադրենք որքան մարդ ու զենք որ կրնանք ու գրոհ տանք թշնամիի վրայ»[3]:

Խորհրդաժողովը, առաջնորդվելով Սասունում և Դաշտում տիրող իրական կացության թելադրանքով, դեմ է արտահայտվում այդ առաջարկությանը և ընդունում հետևյալ որոշումը. «...Դուրան-Բարձրավանդակի Կ.Կոմիտէն եւ շրջանի պատասխանատու վարիչները կը մտածեն վերջ տալ կռիւներուն եւ ֆետայիները հեռացնել Տարօնէն...»[1]:

Խորհրդակցության մասնակիցները Անդրանիկի և Գևորգ Չավուշի ստորագրությամբ պահանջագիր են ներկայացնում արևմտյան տերությունների հյուպատոսներին և որոշում անցնել Վասպուրական: Չնայած խորհրդաժողովի վերոհիշյալ որոշմանը, հետագա դեպքերը զարգանում են բոլորովին այլ ուղղվածությամբ: Կոմսին գրած նամակում Անդրանիկը նշում է, որ իրենք գումարել են ընկերական ժողով և ընդհանուր համաձայնությամբ որոշել. «... մօտաւորապէս յերեսուն հինգ (35) կուռդ ուժերով կենալ շրջանները կազմակերպութիւնը եւ յեղափոխական գործունէութիւնը վառ պահելու համար»[2]:

Այս նամակը Անդրանիկը գրել է Դաշտում գտնվելու ժամանակ և տարօրինակ է նրա հետևյալ հաղորդածը, որ համանման որոշմանը համամիտ են եղել «...նոյնիսկ տեղական ընկերներն ալ խորհուրդ կուտան ցոյցեր անելու...»[3]:

Թեպետ զոհվել էր Դուրան-Բարձրավանդակի իրական առաջնորդը՝ Հրայր Դժոխքը, բայց Դաշտում էին ՀՅԴ կենտր. կոմիտեի անդամներ Վարդան վարդապետն ու Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ): Դժվար է հավատալ, որ նրանք կարող էին հավանություն տալ համանման որոշմանը: Չի բացառվում, որ այդ որոշումը Անդրանիկը ու նրա զինակիցները կատարել են շրջանցելով ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեին և վերոհիշյալ խորհրդաժողովի որոշումը: Իսկ նույն օրերին, երբ հայ հեղափոխականներին և հայդուկներին որոնելու կեղծ պատճառաբանությամբ թուրքական զորքերն ու ոստիկանական ուժերը լցվել էին Դաշտի գյուղերը ու զանգվածային բռնությունների էին ենթարկում հայ բնակչությանը, որքանով էր նպատակահարմար ընդամենը մի քանի տասնյակ հայդուկների ներկայությունը: Համաձայն վերոհիշյալ խորհրդաժողովի որոշման, նրանք պետք է անցնեին Վասպուրական, սակայն, ինչպես նշում է Ռուբենը. «Ֆետայիները քիչ մը շունչ առին, իրենց փամփշտակալները արդէն լիքն էին, այժմ կը մտածէին սրբել արատը իրենց երեսէն»[4]:

Ինչպիսի՞ մարտական ուժերից էր բաղկացած Անդրանիկի գլխավորած մարտախումբը: Այդ մասին «Յարգելի ընկերներ մեծ քաղաքի» խորագիրը կրող 1904 յուլիս 15-ի նամակում ընկերներին հայտնում է Անդրանիկը[5]:

Նամակում, նախ տեղեկացնում է իրենց գումարած ժողովի մասին և հայտնում, որ գործը շարունակելու համար տեղերում մնալու են 35 մարդ:

«Մեր ունեցած,- գրում է Անդրանիկը,- ռազմական ուժերը այժմ մօտաւորապէս 140 ի կհասնի: ԹԷ Տարօնի մէջ եւ թէ Բարձրաւանդակի մէջ ինչ ընէնք որ ծայր չունենք (նկատի ունի փամփուշտ-Հ. Գ.): Մի քանի օր առաջ Մուրատի եւ

[1] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 687:
[2] Երիցանց Մ., նշվ. աշխ.,էջ 267:
[3] Նույն տեղում:

[1] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 687:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 689, գ. 28, էջ 1:
[3] Նույն տեղում:
[4] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 30:
[5] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 689, գ. 48, էջ 1:

Առաքելի ու Մեշետիի միջոցով Շամիրէն (նկատի ունի Վանը-Հ. Գ.) պ. Բժիշկ (նկատի ունի Վ. Փափազյանին-Հ.Գ.) ղրկեց 2000 հատ ծայր, 2000 հատ ալ բարակ ծայր: Բոլոր ունեցած ծայրերուն քանակը այժմ կրհասնի 10000 ի չափ»[1]:

Թեպետ Անդրանիկը նամակում ներկայացնում է իրենց մարտական ուժերի խիստ սահմանափակ հնարավորությունը, սակայն ֆիդայիները, այնուամենայնիվ, իջնում են Դաշտ: Նրանք ծրագրում են գուտ վրեժխնդրության նպատակով ձեռնարկել մի քանի պատժիչ գործողություններ, և նոր միայն թողնել Տարոնի սահմաններն ու անցնել Վասպուրական:

Դաշտում ֆիդայիների ձեռնարկած գործողությունների վերաբերյալ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն որևէ որոշում չի կայացրել: Կարելի է ասել, որ ֆիդայիներն իրենք են որոշել կռիվ տալ նաև Դաշտի գյուղերում, ընդսմին, անտեսելով Տարոնի տարածքը թողնելու Մառնիկա սարում տեղի ունեցած ժողովի որոշումը: Եթե նույնիսկ ֆիդայիներին հաջողվեր մի քանի հաղթական կռիվներ մղել, միևնույն է, նրանք չէին կարող գոնե փոքր-ինչ փոխել Դուրան-Բարձրավանդակում տիրող կացությունը: Ընդհակառակը, թուրք իշխանությունները կարող էին որպես պատրվակ օգտագործել Դաշտում նրանց գտնվելու փաստը և կոտորածներ սկսել նաև Դաշտի գյուղերում:

Հրայրը ժամանակին զգուշացրել ու պահանջել էր, որ չպետք է կռիվների մեջ ներգրավեին Դաշտի գյուղերը և դրանով իսկ վտանգեին այդ շրջանների հայությանը: Իրականում ի՞նչ արդյունավետ, հայանպաստ գործ կարող էին անել սահմանափակ քանակությամբ զինամթերք ունեցող, ընդամենը 120, իսկ ըստ Անդրանիկի 140 ֆիդայիներ ընդդեմ թուրքական կանոնավոր զորավաշտերի ու քրդական հրոսակախմբերի: Նրանք, անտեսելով Դուրան-Բարձրավանդակում տիրող իրական կացությունը, մնում են Դաշտի գյուղերում և մի քանի կռիվներ մղում թուրքական զորքի ու քուրդ հրոսակախմբերի դեմ[2]:

Օգոստոսի 13-ին տեղի ունեցած Շամիրամի կռվում հայ մարտիկները մարտնչում են մինչև մութն ընկնելը, ապա ճեղքում պաշարման շղթան և Աղբյուր Սերոբի զինակից Տելեմակի (Դանիել Տեր-Հովհաննիսյան) աջակցությամբ տեղափոխվում են Ախլաթ, ապա անցնում Աղթամար[3]:

Կարելի է ասել, գուտ վրեժխնդրության նպատակով Դաշտի գյուղերում ֆիդայիների մղած կռիվները, որոնք անկասկած հերոսական էին, ունենում են աղետալի հետևանքներ: Սեպուհը, որն այդ դեպքերի անմիջական մասնակիցներից է, իր նամակներում (1904թ. հուլիսի 18,25) ներկայացնելով կռիվների հետևանքով Տարոնում, Սասունում ու Ախլաթում տիրող սարսափելի իրավիճակը՝ նշում է. «Տաճկահայաստանը աւերի ու աւարի է մատնուած... Ամէն հայ փախչում է, որը դէպի գերեզման, որպէսզի դրսում փողոցում չմնայ, որովետեւ վերցնող չկայ:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Գեւորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 245-248:
[3] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 311-312:

Ամէն մարդ իրա սեւ օրն է ողբում, երանի է տալիս գերեզմաններում խորը լռութեան մէջ հանգստացողներին...Տարօնը բարուքանդ եղաւ, Սասունը բոլորովին հիմնայատակ եղաւ կրկին..»[1]:

Հուլիսի 15-ին Աղթամարի Դանիել վարդապետը ՀՅԴ Վանի Կենտր. Կոմիտեին ուղղած նամակով հայտնում է հարյուրից ավելի ֆիդայիների՝ կղզում գտնվելու մասին և միաժամանակ նրանց խնդրում շտապ գալ կղզի՝ որոշելու հետագա անելիքները: Ստանալով այդ ուղերձները՝ Աղթամար են ուղևորվում Շամի եւ Լեռնապարի Կենտր. Կոմիտեի ներկայացուցիչներ Կոմսը և Իշխանը: Աղթամարի խորհրդաժողովը պետք է վճռեր ֆիդայիների հետագա անելիքներն ու Դուրան-Բարձրավանդակի հետ կապված հարցերը: Խորհրդաժողովի մասնակիցներից ոմանք, հատկապես տարոնցիները, պահանջում են զենք ու զինամթերք և վերստին վերադառնալ Սասուն ու շարունակել կռիվները: Սակայն Շամի Կենտր. կոմիտեի ներկայացուցիչները, հիմնավոր փաստարկներով, մատնանշում են նրանց առաջարկության վտանգավորությունը:

Այդ ամենով հանդերձ, հարկավոր էր նաև չլքել ժողովրդին և նրան չթողնել հուսալքված վիճակում, միայնակ ու անօգնական: Հարցի ճիշտ և արդյունավետ լուծման համար անհրաժեշտ էր ընտրել տիրող կացությանը համահունչ տարբերակ:

«Որքան,-գրում է Ռուբենը,- աւելի որոշ կերպով կը զգային, թէ պէտք չէ երկիրը դատարկ թողուլ, առանց ղեկավարի, առանց ֆետայիի, մանաւանդ որ Իշխանն ու Կոմսն ալ այն կարծիքին էին, թէ անհրաժեշտ է գէթ փոքրիկ կազմակերպուած ուժ մը պահել Մշոյ աշխարհի մէջ»[2]:

Խորհրդաժողովի մասնակիցները որոշում են մի փոքրիկ զինավառ խումբ ուղարկել Դուրան-Բարձրավանդակ: Բայց ո՞վ պետք է վերադառնար Երկիր: Մասնակիցներից յուրաքանչյուրը հստակ գիտակցում էր, որ Երկիր վերադառնալը հավասարազոր էր անխուսափելի մահվանն ընդառաջ գնալուն: Ո՞վ պիտի մեկներ Երկիր, դեպի ստույգ մահվան գիրկը:

«Գէորգ Չաւուշը,- վկայում է Վ.Փափազյանը,- գլուխը բարձրացուց, նայեցաւ իր ընկերներուն եւ մեղմ, բայց վճռական ձայնով ըսաւ՝

- Ես կը դառնամ... Ո՞ւր պըտի էրթամ, չըխօ Դուրանն է զիմ երկիր. հոնի ծնունտ, հոն պըտ մեռնիմ...»:

Եվ լռեց սանձազերծ յուզմունքէն:

... Առաջին արձագանքը Կորիւնէն (Գոմսա Իսո) եկաւ...»[3]:

Խորհրդաժողովի ավարտից հետո, Գևորգ Չավուշն ու Կորյունը 17 ֆիդայիներով թողնում են Աղթամար կղզին և մեկնում Ախլաթ, ապա անցնում Սասուն:

Հաջորդ օրը, առավոտյան երեք առագաստանավով, մեկ շոգեմակույկով Աղթամարին են մոտենում թուրք զինվորները:Կղզին գրավելու թուրքերի ձեռ-

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 688, գ. 48, էջ 41:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ.Ց3, էջ 303:
[3] Փափազեան Վ., իմ յուշերը, հ. 1, էջ 319:

նարկած բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Ֆիդայիները կարողանում են դիպուկ հարվածներով խափանել հակառակորդի բոլոր հարձակումները: Թեև թուրքերին չի հաջողվում կոգին գրավել և հաշվեհարդար տեսնել ֆիդայիների հետ, բայց այնտեղ նրանց մնալը ոչ միայն աննպատակահարմար էր, այլև անհնար: Ֆիդայիների մի մասը, թողնելով կոգին, ուղևորվում է Լեռնապար, իսկ մյուսները՝ Վան:

Խմբի անդամների մեծ մասը, հասկանալով կռիվները վերսկսելու անմտությունն ու կործանարար նշանակությունը, աշխատում է չերևալ քաղաքում, մնալ աննկատ: Չնայած զգուշավորությանը, այնուամենայնիվ, երկու անգամ հանդիպում են թուրք գիշերապահ զինվորների: Առաջին հանդիպման ժամանակ նրանց հաջողվում է աննկատ մնալ և խուսափել բախումից, սակայն երկրորդ անգամ խումբն, այլ ելք չունենալով, հարկադրված մարտի է բռնվում: Ընդհարման ընթացքում տալով մեկ սպանված և մեկ վիրավոր՝ թուրքերը դիմում են փախուստի: Հաջորդ օրը թուրքերը հարձակվում են քաղաքի հայ բնակչության վրա: Արդյունքում, սպանվում են 60 հայ[1]:

Վանում մնալն անիմաստ էր ու նաև չափազանց վտանգավոր: Գործին միջամտում է նույնիսկ Վանի նահանգապետը՝ պահանջելով խմբին անմիջապես հեռանալ Վասպուրականի տարածքից, ընդսմին՝ խոստանալով սահմանն անցնելու անվտանգությունը: Ֆիդայիները Վանից անցնում են Պարսկաստան, հյուրընկալվում Խոյի և Սալմաստի հայությանը, ապա մի քանի օր հետո հեռանում են նաև Պարսկաստանից:

Անտարակույս Օսմանյան կայսրության դեմ պայքարի դրոշ պարզած սասունցիներն ու հայդուկները, օգնության շտապող մարտական ու զինատար խմբերը հերթական անգամ դրսևորեցին հերոսականության հիասքանչ ուսանելի օրինակներ: Բայց անժխտելի է հետևյալ իրողությունը. 1. Սասունը, Դաշտի բազմաթիվ գյուղեր ամայացան ու հարյուրավոր հայեր դարձան թուրք զինվորների և քուրդ հրոսակների զոհը: 2. Աշխարհի գերհզոր տերությունները և ոչ մեկը որևէ ուշադրության չարժանացրեց տեղի ունեցող իրադարձությունները ու իր բողոքի ձայնը չբարձրացրեց ի պաշտպանություն Հայ Դատի և Սասունում ու Տարոնում զոհաբերվող հայ բնակչության:

Կարելի է ասել, 1894 թ. ինքնապաշտպանական մարտերը, որի ժամանակ Սասունն առանց որևէ կողմնակի աջակցության Օսմանյան բռնապետության դեմ մարտնչում էր՝ ապավինելով միմիայն իր սեփական ուժերին, ամենամեծ արձագանք առաջացրեց, քան 1904 թ. Հ.Յ.Դաշնակցության գլխավորած ապստամբությունը: Այն ժամանակ Եվրոպական տերությունների ներկայացուցիչները կատարված դեպքերը գոնե ձևականորեն տեղում ուսումնասիրելու նպատակով, այնուամենայնիվ, ժամանել են Սասուն, իսկ 1904 թ. դեպքերից հետո փորձ անգամ չեն կատարել կրկնելու այդ ձևականությունները:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 467, գ. 65, էջ 1:

Վերոհիշյալ իրողությունը ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովում խոստովանում է Անդրանիկը՝ նշելով.«Սասունը 1894-ին՝ հրացանով է կռուել միայն, բայց այն ժամանակ նա աւելի արձագանք տուեց, քան 904-ին»[1]:

Սասունի ապստամբության կազմակերպիչները հույսեր են փայփայել, որ Եվրոպական տերությունների ուշադրությունը գրավելու կարևորագույն նախադրյալներից, եթե ոչ կարևորագույնը, երկարատև կռիվներ մղելն էր և ըստ այդմ մեծադրդող աղմուկ բարձրացնելը: Ընդհանուր Ժողովում անդրադառնալով նաև այդ հարցին՝ Անդրանիկը պատասխանել է. «Մենք եթէ երեք ամիս էլ կարողանանք դիմանալ, ոչ մէկ երաշխաւորութիւն չկայ թէ եւրոպացիք կը միջամտեն... »[2]:

Սասունի ապստամբության մասին ուշագրավ է 1906թ. մարտ-ապրիլ ամիսներին կայացած ՀՅԴ (Արևելյան) ռայոնական ժողովում Ս. Զավարյանի արտահայտած տեսակետը: Նախ, Ս. Զավարյանի գնահատմամբ «...վերջին մեր ձեռնարկները-Պոլսոյ (նկատի ունի 1905 թ. սուլթան Համիդի դեմ կազմակերպած մահափորձը-Հ.Գ) եւ Սասնոյ- թէեւ անյաջողութիւններ են, բայց կիսով չափ հաւասար են յաղթութեան»:

Երկրորդ. Ս. Զավարյանի համոզմամբ «եթէ Սասնոյ փամփուշտների թիւը աւել լիներ՝ 40-50.000, մենք ահագին դրական հետեւանքների հասած կը լինէինք»[3]:

Ի՞նչ նկատի ունի Ս. Զավարյանը: Իհարկե, խոսք լինել չէր կարող Սասունի ձեռնարկի հաղթանակի մասին: Պատասխանը անկասկած մեկն է. եթե Սասունի մարտիկները ունենային գոնե Ս. Զավարյանի մատնանշած 40-50.000 փամփուշտներ, ապա կարելի էր երկարատև դիմադրել ու ըստ այդմ մեծադրդող աղմուկ բարձրացնել, որը կնպաստեր գրավելու Եվրոպական տերությունների ուշադրությունը: Այս ամենով հանդերձ, անժխտելի է, որ Սասունի պաշտպանների և նրանց օգնության շտապող քաջարի հայորդիների, հատկապես նրանց առաջնորդների՝ Հրայրի, Անդրանիկի, Գևորգ Չավուշի, Սեբաստացի Մուրադի ու մյուս հերոսների սխրագործությունների պատմությունները ժողովրդի մեջ տարածվելով ոգեշնչում և ազատության ու պայքարի տրամադրություն էին հաղորդում: Այս առումով Սասունի ապստամբությունն անկասկած դրական ազդեցություն գործեց ազգային- ազատագրական պայքարին զինվորագրվող սերունդների գաղափարական ու բարոյական դաստիարակության գործում:

[1] «Նիւթեր...», հ. Գ, էջ 111:
[2] Նույն տեղում:
[3] «Սիմոն Զաւարեան (մահուան եօթանասուն ամեակին առթիւ)», հ. Ա, էջ148:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒ ԶԻՆԱՏԱՐ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1903-1904 ԹԹ.

3. 1. «Մրրիկ» զինատար հեծելախմբի անցումը Սասուն

Սասունում և Դաշտում ընթացող կռիվներին զուգընթաց, թշնամու դեմ մարտեր էին մղում զինատար ու մարտական խմբերը, որոնք շտապում էին տարբեր ուղիներով օգնության հասնել կանոնավոր զորագնդերի և քուրդ աշիրեթների դեմ մարտնչող մարտիկներին:

Թեպետ ժամանակաշրջանի ու արմատական նշանակություն ունեցող իրադարձությունների թելադրանքով ՀՅԴ հարկադրված փոխում է իր գործունեության մարտավարությունը, սակայն ազգային-ազատագրական պայքարում մարտական-հայդուկային և զինատար խմբերի տեղն ու դերը միշտ եղել է առանձնահատուկ: Եթե անաչառորեն գնահատենք, ապա աներկբա պիտի ընդգծել, որ Երկիր մեկնող մարտական և զինատար խմբերը գլխավորապես համալրել են ազատագրական պայքարին զինվորագրվածներից ամենավիրյալներն ու խիզախները:

Պետք է նկատել, որ անհամեմատ ավելի հեշտ էր կազմակերպել մարտական խմբերը, քան դրանք հասցնել նախատեսված վայրը: Կովկասից և Պարսկաստանից մինչև Սասուն ձգվող հսկայական տարածքը շատ խիստ, ուժեղացված կերպով հսկվում էր թուրքական կանոնավոր բանակի զորամասերի և քրդական բազմահազար զինյալների կողմից: Բայց, թերևս ամենասարսափելին և մեծագույն խոչընդոտը, ինչը ապացուցեց ժամանակը, միայն թուրքական զորամասերը և քուրդ զինյալները չէին: Ռուսական սահմանապահ զորքերը նույնպես, ակնդետ հետևելով հայ մարտական ուժերի գործողություններին, առաջին իսկ հնարավորության դեպքում հարձակվում էին նրանց վրա: Դաշնակցության համար, որի ապակենտրոն կառույցները գործում էին նաև Ռուսաստանում, մասնավորապես Մոսկվայում, Պետերբուրգում և Կովկասում, անկասկած գաղտնիք լինել չէր կարող հայ ազատագրական շարժման, ինչպես նաև հայ հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ ցարիզմի որդեգրած քաղաքականության հակահայ ուղղվածությունը:

Ինչո՞վ էր այն պայմանավորված:

1.«Դրօշակը»-ը, մերկացնելով 1895-1896թթ. հայկական կոտորածների գործում ցարական կառավարության մեղսագործությունը, նշում է, որ զարիզմի բացասական վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ «...հայկական խնդիրը լուրջ բնաւորութիւն է առել շնորհիւ յեղափոխական շարժումների եւ այսօր միջազգային քաղաքական խնդիր է, քանի որ 6 պետութիւնները միջամտում են այդ հարցում, եւ, եթէ այդպէս շարունակուի, նա կարող է ցարի կառավարութեան շահերը վտանգի ենթարկել. կարող է Տաճկահայաստանից բարձրանալ այնպիսի պատնէշ, ինչպիսին եղաւ բալկանեան թերակղզու վրայ»[1]

Ռուսաստանի իշխանությունները այն մտավախություններն ունեին, որ Հայաստանը կարող էր դառնալ երկրորդ Բուլղարիա և խոչընդոտեր իր հետագա ծավալմանը: Գ. Լազյանը, որպես այս հարցի պատասխան, մեջբերում է Բ. Իշխանյանի այն փաստարկը, որի համաձայն Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին հանձին Հայաստանի չէր ուզում երկրորդ Բուլկարիա ստեղծել[2]:

Այս հարցում համանման տեսակետ է արտահայտել նաև Էդ. Բեռնշտայնը. «Ռուսաստանը ոչ միայն տրամադրութիւն չունի «Հայկական Պուլկարիա» վերստեղծելու, այլեւ ամենեւին չի շտապում տաճկահայերին իր սեփական պաշտպանութեան տակ առնելու...»[3]:

Որպես ապացույց ցարիզմի դրսևորած թշնամական վերաբերմունքի, Գ. Լազյանը վկայակոչում է «Նորք» հանդեսում բոլշևիկների տպագրած «Ժանդարմական վարչութեան զեկուցումը հայերի յեղափոխական շարժումների մասին, 1903թ. 12 փետր. Թիֆլիս» վավերագրից հատվածներ, ուր նշվում է. «...Անհրաժեշտ է դադարեցնել դրամի հանգանակութիւնները ռուսահայերի մէջ, արգելել զէնքի եւ ռազմամթերքի յրումը Պարսկաստանի վրայով Թիւրքիա... ձերբակալել Թիւրքիա զէնք փոխադրող հրոսակների անդամներին՝ պատշաճ քննութիւններ սկսելով նրանց գործողութիւնների մասին»[4]:

Հայկական հարցի, Օսմանյան կայսրությունում Աբդուլ Համիդի կենսագործած հայկական կոտորածների նկատմամբ Եվրոպական տերությունների և մասնավորապես ցարիզմի դրսևորած քաղաքականության մասին, իրենց աշխատություններում անդրադարձել են նաև ռուս պատմաբանները:

Այս առումով ուշագրավ են Ամֆիտեատրովի տեսակետները:

Ըստ Ամֆիտեատրովի, սուլթան Աբդուլ Համիդը «... իրեն բնորոշ ժամանակակից Մաքիավելական տաղանդով» հասցնում է պետերբուրգյան բարձրաստիճան պաշտոնյաներին հայկական ազգային շարժումը ներկայացնել որպես միջազգային սոցիալական հեղափոխության բաղկացուցիչ մաս »[5]:

Հիմք ունենալով վերոհիշյալ նախադրյալը՝ սուլթան Աբդուլ Համիդը կարողանում է հավաստիացնել, որ Ռուսաստանը իր քաղաքական շահերից ելնելով պետք է պաշտպանի Հայկական հարցի նկատմամբ իր դրսևորած քաղաքականությունը «Նելիդովի ու Լոբանով-Ռոստովսկու տխուր և անուղղելի մոլորությունը,- գրում է Ամֆիտեատրովը,- հարկադրեց ռուսաց կառավարությանը հայերի ճակատագրում լվանալ ձեռքերը»[6]:

---

[1] «Դրօշակ», 1904, էջ 112:
[2] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը, էջ 89-90:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 113:
[5] Амфитеатров А., Армянский вапрос, С, Петербург, 1906, ст. 6.
[6] Նույն տեղում:

Նրա գնահատմամբ, ցարիզմի սխալ և անհեռատես քաղաքականության հետևանքով Ռուսաստանը կորցրեց իր հեղինակությունն ու վստահությունը Փոքր Ասիայում ու քրիստոնեական աշխարհում: Իսկ 1894 թ. Սասունի սարսափելի դեպքերը հետևանքն էին ցարիզմի «Ռուսաստանը չի ցանկանում երկրորդ Բուլղարիա ունենալ» հռչակավոր արտահայտությանը[1]:

Ըստ արժանվույն գնահատելով Ռուսաստանի նկատմամբ երեք միլիոն հայ բնակչության դրսևորած համակրանքը և ռուս-թուրքական պատերազմներում հայության մատուցած ծառայությունը՝ Ամֆիտեատրովը եզրակացնում է. «...ռուսական բյուրոկրատական դիվանագիտությունը չցանկացավ հասկանալ, որ մորթելով 300000 հայերի Սասունում և Փոքր Ասիայում, Աբդուլ Համիդը ըստ էության ոչնչացնում էր ռուսական գրեթե կես միլիոնանոց ավանգարդը...զրկելով մեր հայրենիքին երեք միլիոնանոց բնակչության սիրուց ու վստահությունից...»[2]:

2. Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների որդեգրած տարաբնույթ քաղաքականությունը: Գ. Լազյանը նաև մեջբերում է այս հարցին առնչվող Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպան Գանպոնի կածիքը, համաձայն որի եթե Հայկական հարցի նկատմամբ չլինեին եվրոպական տերությունների, մասնավորապես Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի իրարամերժ դիրքորոշումները, ապա իրենք՝ դեսպանները, կկարողանային տալբանին ստիպել իրականացնել բարենորոգումները:

3. Ռուսական կայսրությունում ՀՅԴ ծավալած գործունեությամբ:

ՀՅԴ գործունեությունը ի պաշտպանություն հայկական կրթական հաստատությունների և հատկապես հայ եկեղեցու ունեցվածքի, համագործակցությունը ռուսական ու այլ երկրների հեղափոխական կազմակերպությունների հետ, մասնակցությունը գործադուլների և բողոքի ցույցերի կազմակերպմանը, չէին կարող իրենց ազդեցությունը չգործել հայ հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ ցարիզմի դրսևորած քաղաքականության վրա:

Չնայած թուրք իշխանությունների ու ռուսական սահմանապահ զորքերի հարուցած արգելքներին, Հ.Յ. Դաշնակցությունը, մեծ ջանքեր գործադրելով, կազմակերպում և Կարսի, Սալմաստի շրջաններում է կենտրոնացնում մարտական ու զինատար խմբեր: Հարց է ծագում. եթե Հ. Յ. Դաշնակցությունը տեղյակ էր թուրք իշխանությունների ձեռնարկումների և միաժամանակ հայության ու հայ հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ ցարական կառավարության դրսևորած թշնամական վերաբերմունքի մասին, ապա ինչո՞վ էր պայմանավորված նրա այդօրինակ մարտավարությունը:

1. ՀՅԴ Ընդհանուր ժողովների որոշումները:

Մարտական խմբերի կազմավորման և նրանց Արևմտյան Հայաստանի նախատեսված շրջաններն ուղարկելու մասին ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովի որոշումը հաստատվել է 2-րդ ու նաև 3-րդ Ընդհանուր ժողովների կողմից: Համաձայն 3-րդ Ընդհանուր ժողովի որոշման «Նայելով ձեռնարկներու բնաւորութեան, խմբերը կրնան ըլլալ մեծ կամ շատ փոքր, բայց ցանկալի է որ ամէն մէկ խումբ բաղկացած ըլլայ ոչ աւելի քան 30 հոգի: Այս վերջին որոշումը Ժողովը կարեւոր համարեց այն տեսակէտով, որ կարելի կըլլայ շատ խմբեր կազմակերպել: Բոլոր այդ ձեռնարկները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ եւ տեղի չպիտի ունենան միաժամանակ»[1]:

2. Սասունի ապստամբության նկատմամբ հայության դրսևորած վերաբերմունքը: Բազմաթիվ հայորդիներ, նաև Դաշնակցության կոչով, գալիս էին Կովկաս և Երկիր մեկնելու նպատակով զինվորագրվում այնտեղ կազմավորվող մարտական խմբերին: Հ.Յ.Դաշնակցությունը պիտի ընդառաջ գնար Կարսի ու Խոյ-Սալմաստի շրջաններում համախմբված կամավորներին: Սասունի պաշտպաններն ակնկալում էին նրա օգնություն ու աջակցությունը և ՀՅԴ պարտավորված էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ազատագրական պայքարին զինվորագրված հայորդիներին ուղարկել Օսմանան կայսրության դեմ պայքարի դրոշ պարզած մարտիկներին օգնության:

3. ՀՅԴ Ընդհանուր ժողովներում ապստամբության մասին որոշում կայացնողների համար գաղտնիք լինել չէր կարող, որ միայն Սասունում գտնվող սահմանափակ ուժերը, թեկուզև գերմարդկային կարողություններով օժտված լինեին, դարձյալ դատապարտված էին պարտության: Սակայն այդ օրերին որևէ մարտախմբի ներկայությունը Սասունում կարող էր ավելի ոգևորել սասունցիներին և հնարավորություն ընձեռել ավելի երկարատև պայքար մղել: Դաշնակցության որդեգրած մարտավարությունը հավաստում է, կուսակցության ղեկավար մարմինները հույս են ունեցել, որ թուրքական զորքերի ու քուրդ աշիրեթների հետ հայ մարտախմբերի բախումները, ինչպես նաև Սասունի երկարատև դիմադրությունը կարող էր ավելի մեծ աղմուկ հանել ու արձագանք ունենալ: Այդ դեպքում ավելի մեծ հնարավորություն էր ստեղծվում եվրոպական տերությունների ուշադրությունը բևեռելու Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների և Հայկական հարցի վրա:

Պատմական այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՅԴ ղեկավար մարմինների հիմնական նպատակը հենց դա էր:

Ընդհանուր Ժողովում ամրագրված «Կառավարութեան դէմ անընդհատ եւ զօրեղ կռիւ...» մղելու նպատակով հեղափոխական խմբերի կազմակերպումը Հ.Յ. Դաշնակցությունը իր գործունեության առաջին իսկ շրջանից և հատկապես 1895 թ. սկսած, երբ ստանձնել էր ազատագրական պայքարի առաջնորդի ու կազմակերպչի դերը, իրականացնում էր հիմնականում հետևյալ ուղղվածությամբ.

Ա. Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության զանազան շրջաններում ապակենտրոն կառույցների հիմնում: Իսկ ՀՅԴ կառույցները, որպես կա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում:

[1] «Նիւթեր...», հ.Բ, էջ 111:

նոն, միաժամանակ օժտված էին մարտական կարողությամբ, այսինքն նրանք պիտի լինեին նաև ռազմականացված կառույցներ:

Բ. Քանի որ Արևմտահայաստանում կազմակերպած մարտական ուժերն իրենց սահմանափակ կարողությունների պատճառով ի զորու չէին իրականացնել առավել արդյունավետ մարտական գործողություններ, ապա ՀՅԴ մեծ կարևորություն էր տալիս մարտական և զինատար խմբերին, որոնք պիտի մեկնեին երկիր, համալրեին ՀՅԴ կառույցները և գործեին համաձայն կուսակցության որոգեգրած մարտավարության:

Քր. Միքայելյանի բնութագրմամբ մարտախմբերը «...կազմակերպում են կուռ ուժերը, ժողովրդականացնում են բողոքի ճանապարհը, կրթում են ժամանակակից սերունդը, հարուածում են թշնամու հեղինակութեանը...վնասում են կառավարչական շահերին, զբաղեցնում են եւրոպական հասարակական կարծիքը եւ կաբինէտները, այսինքն առաջ են մղում միջամտութեան գործը...»[1]:

Ի՞նչ էին իրենցից ներկայացնում մարտական և զինակիր խմբերը: Այս հարցի վերաբերյալ առավել ուշագրավ և սպառիչ պատասխան է տվել Մարգիս Մեհրաբյանը (Խանասորա Վարդան): Ըստ նրա բնութագրման մարտական և զինատար խմբերի յուրա-հատկություններն ու պարտականությունները թվարկելիս կարելի է առանձնացնել.

1) Զենքի և զինամթերքի տեղափոխություն Արևմտահայաստանի նախանշված շրջանները: Այս խնդիրը առավելապես վերաբերում է զինատար կամ զինակիր խմբերին, նրանցում ընդգրկված մարտիկներին, որոնց անվանում էին նաև շալակավորներ:

«Խմբերը կոչում էին «զինակիր», այսինքն՝ զէնք փոխադրող: Նրանք, սովորաբար, աւելորդ հրացաններ էին առնում իրենց հետ ուժերին նայած, երկու հոգում՝ 3 հրացան, իսկ աւելի ուժեղները, մի հոգին 2 հրացան...Հայդուկի բեռը միայն հրացանները չէին կազմում, յուրաքանչիւր հայդուկ ունի 150-200 փամփուշտ, ատրճանակ, սուր, հացի տոպրակ մէջքի վրայ...»[2]:

2) Հայդուկները գործում էին տարվա բոլոր եղանակներին և այդ պատճառով ցրտից ու անձրևից պաշտպանվելու համար նրանց հագուստը անհրաժեշտաբար պիտի լիներ տաք և լավ կարված:

3) Նրանք սովորաբար իրենց հետ հաց քիչ էին վերցնում և այդ պատճառով հազվադեպ է պատահել, երբ հայդուկները կուշտ են եղել:

«Շատ անգամ,- գրում է Վարդանը - պաղ աղբյուրի մոտ նստած՝ ախորժակները բորբոքվում էր և ուզում էին մեկ անգամից ամբողջ տոպրակը դատարկել, բայց ստիպված էին զսպել և բավականանալ միայն չոր կտորով...»[3]:

4) Մարտական խմբերը իրենց քողարկելու, աննկատ մնալու պատճառով միշտ տեղաշարժվել են գիշերը, իսկ ցերեկը, հարմար կայան ընտրելով, հանգստացել են: Հայդուկների ընտրած կայանները, որպես կանոն, ամրակուռ լեռներն էին, որոնք առավելագույնս պիտի ապահովեին նրանց անվտանգությունը: Հանգստակայաններ ընտրելիս նրանք ուշադրություն են դարձրել նաև հետևյալ հանգամանքի վրա, նրանք «Յուրաքանչյուր օրվան համար որոշ կայան նկատի ունեին առաջուց... Կայանները որոշվում էին այնպիսի հեռավորության վրա, որ տղերքը լուսաբացից առաջ տեղ հասնեին»[1]:

5) Խումբը առաջ շարժվելիս պիտի հետևեր երկու սրատես հայդուկների ուղեկցությամբ առջևից ընթացող վալադին: Նրանց պարտականությունն էր խմբին տանել ճիշտ ճանապարհով և թշնամու հայտնվելու դեպքում վտանգի մասին անմիջապես ահազանգել խմբապետին ու խմբին:

6) Քանի որ խումբը շարժվում էր գիշերով, ուստի խստիվ արգելվում էր ծխելը: Հակառակ դեպքում թշնամին կարող էր հեռվից նկատել կրակը և անկանխատեսելի ու գուցեն անհաղթահարելի խոչընդոտներ հարուցել նրանց ճանապարհին: Ծխելը թույլատրվում էր միայն այն ժամանակ, երբ հայդուկները «...ճանապարհից դուրս, մի կողմի վրա պառկում էին, զգուշությամբ լուցկի վառում, ծխախոտը կպցնում երկու ձեռների մեջ պահած: Ծխելու տեղից էլ վեր կենալուց հետո պետք է զգույշ լինեին, որ ոչ մի նշան կամ հետք չթողնեին, փամփուշտ կամ այլ բան գետին չձգեին»[2]:

7) Ուղևորության ընթացքում պատահում էր, որ հայդուկներից ոմանք չդիմանալով ճանապարհի դժվարություններին, հոգնում էին ու չէին կարողանում արագ շարժվել: Այդ դեպքում ընկերները պարտավոր էին օգնել նրան, թեթևացնել նրա բեռը, իսկ եթե անհրաժեշտ էր, նրանից վերցնել ամբողջ բեռը:

8) Խմբի յուրաքանչյուր անդամի մոտ պարտադիր լինում էր 1-1,5 լիտր տարողության մետաղյա ջրաման, որին սովորաբար շապիկ էին հագցնում, որպեսզի գիշերները չփայլեր, իսկ ցերեկները չտաքանար:

9) Հայդուկները պարտավոր էին դեռ լույսը չբացված հասնել վաղօրոք նախատեսված կայանը, բարձրանալ լեռը և հարմար դիրքեր գրավելով՝ նստեին հանգստանալու:

10) Մարտական և զինատար խմբերի գլխավոր պարտականություններից էր Արևմտահայաստանի շրջաններում մարտական ուժերի կազմակերպումն ու մարգումը:

11) Հայ բնակչության կյանքի ու ունեցվածքի պաշտպանությունը թուրքերի, քրդերի և բոլոր տեսակի մահմեդական հրոսակախմբերի, հարստահարիչների ոտնձգություններից[3]:

Մարտական և զինակիր խմբերի կազմավորման համար Հ.Յ.Դաշնակցությունը պետք է լուծեր մի շարք խնդիրներ, որոնց մեջ առաջնահերթ էին.

---

[1] «Դրօշակ», 19000, թիւ 2, էջ 17:
[2] Խանասորա Վարդան, էջ 37:
[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 38:

1. Խմբերի համալրումը: Որպես կանոն, խմբերը հիմնականում համալրում էին ազգային-ազատագրական պայքարին նվիրված այն անհատները, որոնք քաջ գիտակցում էին իրենց դավանած գաղափարի և գործի կարևորությունն ու պատասխանատվությունը: Աներկբայորեն կարելի է պնդել, որ հայ ազգային- ազատագրական պայքարի առավել նշանավոր գործիչների մեծ մասը իրենց մարտական մկրտությունը ստացել է մարտական ու զինատար խմբերի կազմում:

2. Խմբերի զինումը և հանդերձավորումը: Այդ խնդրի լուծումը հիմնականում կապված էր ֆինանսական անհրաժեշտ միջոցների ձեռք բերման, զենք ու զինամթերքի, հանդերձանքի գնման և դրանք համապատասխան վայրերը տեղափոխելու դժվարին աշխատանքների իրականացման հետ:

3. 19-րդ դ. 90-ական թվականներին հայ ազատագրական շարժումներն ստանում էին ավելի կազմակերպված բնույթ: Հայ ազգային- քաղաքական կուսակցությունները, և առավելապես Դաշնակցությունը, չսահմանափակեց իր գործունեությունը միայն տեղական շրջանակներում: Հայությանը մեծ պայքարի նախապատրաստելու, Երկրում գործող հեղափոխական կազմակերպություններին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու և մարտական ու զինատար խմբերը համապատասխան վայրերը ուղարկելու համար Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում պետք է հիմնվեին հուսալի հենակետեր (խարիսխներ), որտեղից հնարավոր լիներ կազմակերպել անհրաժեշտ ուժերի առաքումը: Այդ նպատակով ՀՅԴ իր կառույցները ստեղծում էր նաև Օսմանյան կայսրության սահմանամերձ վայրերում, որոնցից առավել կարևորներն էին Կարսը, իսկ Պարսկաստանում՝ Թավրիզը, Սալմաստն ու Խոյը: Ցարական իշխանության դաժան վարչակարգի պայմաններում, չափազանց դժվար էր իրականացնել կապը Կովկասից Երկրի հետ, իսկ Պարսկաստանը, իբրև չեզոք երկիր, ցարական ռեժիմի համեմատությամբ, ավելի ապահով ապաստան էր հայ ազգային-քաղաքական կուսակցությունների գործիչների, մարտական խմբերի ու զենքի առաքման համար: Ատրպատականն ամենակարևոր օղակն էր հայության երկու հատվածների միջև, մանավանդ, որ պարսկական իշխանությունները հանդուրժողականությամբ էին վերաբերվում սահմանամերձ շրջաններում տեղի ունեցող իրադարձություններին:

Միքայել Վարանդյանի գնահատմամբ. «Պարսկաստանը - դուռ Վասպուրականի: Իտալացի յեղափոխականները ունէին Ֆրանսիան, Մակեդոնացիք՝ Բուլղարիան, լեհերը՝ Գալիցիան, հայ յեղափոխականները ունեցան Պարսկաստանը...»[1]:

Չնայած Պարսկաստանում գործելու համար նույնպես առկա էին որոշակի խոչընդոտներ, Ատրպատականը, այնուամենայնիվ, ավելի ապահով ապաստան էր հայ ազգային ու քաղաքական գործիչների, մարտական ու զինատար խմբերի համար: Փաստորեն, Թավրիզն ու Խոյը, հատկապես Սալմաստը, այն յուրօրինակ հարմար խարիսխներն էին ու կամուրջները, որոնցով հայ հեղափոխական կազմակերպություններն իրականացնում էին մարտական ուժերի և զենք ու զինամթերքի առաքումը Երկիր:

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի՝ Կարսը և նրա մերձակա շրջաններն առանձնահատուկ նշանակություն ունեին ազատագրական պայքարում: Այդ շրջանը ոչ միայն Երկիր մեկնող մարտական ուժերի գլխավոր խարիսխներից էր, այլև այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց առաջին և անհրաժեշտ փորձությունն էին ձեռք բերում հեղափոխական գործիչները: Ռուբենի բնութագրմամբ՝ «Եւ իրօք, Կարսի նահանգը վայր մըն էր, որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուել եւ դուրս գալ թրծուած, կամ չդիմանալով այդ տեղի ծայրաստիճան գաղափարական եւ սպարտական կեանքին՝ լքել յեղափոխական ասպարէզը»[1]:

Համաձայն Ռուբենի, սկսած առաջին Հունոյի (Հարություն Աղա Տեր-Մարտիրոսյան) մարտախմբից, միայն Կարսի նահանգում 1890-1899 թթ., կազմավորվել և Երկիր են մեկնել մարտական ու զինատար ավելի քան 20 խմբեր[2]:

Մարտական խմբերը մինչև նախատեսված վայր հասնելը, պիտի անցնեին հսկայական ճանապարհ ու հաղթահարեին բազմաթիվ դժվարին արգելքներ: Այդ պատճառով մարտախմբերի կազմակերպիչները մեծ ուշադրություն են դարձրել զինվորների մարտական և ֆիզիկական պատրաստվածությանը: Ճիշտ է, ՀՅԴ նախաձեռնությամբ կազմավորվող մարտախմբերի մարզումները, ինչպես արդեն նշվել է, կազմակերպիչները անցկացնում էին Կարսի ու Սալմաստի շրջաններում, բայց Երկիր մեկնող մարտիկների մարզումները իրականացվել են նաև այլ վայրերում: Օրինակ, անձամբ Ս. Զավարյանի նախաձեռնությամբ, կամավորների մարզումները 1901 թ-ից սկսած, իրականացվել են նաև նրա հայրենի Լոռվա անտառապատ վայրերում: Համաձայն «Ուխտեալներ» խորագիրը կրող վավերագրի, Ս. Զավարյանը, զինվորների մարզումների վայրը ընտրելու և ուսումնասիրելու նպատակով, Յովսեփ Արղությանի ընկերակցությամբ լինում է Սանահին ու Այգեհատ գյուղերի անտառապատ վայրերում և ամառանոցներում[3]:

«Այդ օրուանից,- նշում է վավերագիրը,- ՀՅԴ-եան մարտիկները հարիւրակներով մեկնում են այդ սրբազան վայրերը, մարզանքներ սովորելու համար»[4]:

Եթե մարտական ու զինակիր խմբերի գործունեությունը դիտարկենք և բնութագրենք նպատակի ու ձեռք բերած արդյունքի տեսանկյունից, ապա նպատակահարմար է դրանք իրենց որակական առանձնահատկություններով ու ընդհանրություններով հանդերձ դասակարգել հետևյալ սկզբունքով.

1. Մարտական խմբեր, որոնք կազմավորվել են Կովկասում և Պարսկաստանում:

---

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 107:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 107:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 450, գ. 15, էջ 17:
[4] Նույն տեղում:

Երկիր մեկնելու և զենք՝ու զինամթերք տեղափոխելու ժամանակ մարտախմբերը մեծամասամբ բախվել են թուրք-քրդական ուժերին կամ ռուսական սահմանապահ զորամասերին: Որպես կանոն, համանման իրավիճակում հայտնված մարտական ու զինատար խմբերը, բազմաթիվ կռիվներ մղելով ու մեծամեծ խոչընդոտներ հաղթահարելով, ի վերջո կարողացել են կատարել առաջադրանքն ու հասնել նախանշված վայրը: Այդպիսի խմբերից առավել հիշատակելի է 1895 թ. ամռանը Կարս-Ալաշկերտ-Ախլաթ գծով Աղբյուր Սերոբի մարտախմբի անցումը Ախլաթ, Պարսկաստանի Սալմաստի շրջանից Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր Հովհաննիսյան) զինակիր (1895 թ.), Խանասորի Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) գլխավորած մարտական (1895 թ.) խմբերի անցումը Վան ու Շատախ, Ճարտարի (Հակոբ Վարդանյան) զինատար խմբերի ուղևորումը Կարսից Ախլաթ (1897-98 թ.թ.), Վազգենի և Գուրգենի գլխավորած մարտական խմբի մուտքը Վան, ապա Ախլաթ ու Սասուն (1897 թ.), 1903 թ. Թորգոմի (Թուման Թումանյան) «Մրրիկ» մարտախմբի անցումը Սասուն:

2. Մարտական խմբեր, որոնք բախվելով թուրք-քրդական ուժերին ու ռուսական սահմանապահ զորամասերին, ջախջախվել կամ կրել են մեծ կորուստներ: Այդ խմբերից առավել նշանավոր են Ս. Կուկունյանի(Կարս-Տարոն,1890 թ.), Արաբոյի (Կարս-Ալաշկերտ-Սասուն, 1893 թ.), Խանի «Կայծակ» ու Օնիկ Նկրուզի մարտախմբերը (Կարս-Բասեն-Սասուն), Աշոտ Երկաթի և Թոխմախի մարտախմբերը (Երևան-Արճեշ-Ախլաթ-Սասուն, 1904 թ.), Կայծակ Վաղարշակի «Դժոխք» մարտախումբը (Կարս-Ալաշկերտ-Սասուն, 1904 թ.), Թորգոմի «Որսկան» մարտախումբը (Օլթի-Սասուն, 1904 թ.),Փոխիկի (Օհան Օհանյան, Վահրամ Հովհաննիսյան) «Ճապոն» զինատար խումբը (Սալմաստ-Շատախ-Վան) և մարտական ու զինատար այլ խմբեր:

3. Վրեժխնդրության նպատակով կազմակերպած արշավախմբեր, որոնք թվակազմով ավելի մեծաքանակ էին, քան սովորական մարտական խմբերը:

Մ. Վարանդյանի բնութագրմամբ, երբ Հ.Յ.Դաշնակցությունը իր կառույցները հիմնեց Երկրի մեջ, հայդուկային խմբերը ուրիշ դեր ստանձնելով դարձան արշավախմբեր, «...որոնք սահմաններէն օգնութեան կը փութային ապստամբութեամբ բռնուած վայրերուն, կամ թէ կը փորձէին լաւերել ու ջարդել սահմանագլխի թուրքական զօրանոցներ: Այսպէս-Խանասորի ու Խաստուրի արշավախումբը եւ ապա - Սասնոյ մէջ դէպքերու ատեն-Բագրեւանդի (նկատի ունի Մոսուն-Զորի արշավանքը-Հ.Գ.), Օլթիի եւ այլ արշավախումբերը» [1]:

4. Մարտական խմբեր, որոնք նույնպես մեկնել են Երկիր, սակայն բախվելով հակառակորդի ուժերին, մղել են հերոսական կռիվներ, բայց չեն կարողացել անցնել նախանշված վայրն ու հարկադրված հետ են վերադարձել: Օրինակ, Կարսից դեպի Տարոն-Սասուն ուղևորվող Խանի գլխավորած «Շանթ» (Խաստուրի կռիվը, 1899 թ.), Նիկոլ Դումանի զինատար խումբը (Սալմաստ -Վան-Սասուն, Ռազիի կռիվը, 1904 թ.):

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 186:

5. Մարտական և զինակիր խմբերը, որպես կանոն, մեկնել են Երկիր կամ Արևելահայաստանի կամ Ատրպատականի Սալմաստի տարածքներից: Հայ ազատագրական պայքարում եղել են նաև այնպիսի մարտախմբեր, որոնք գործելով բուն Հայաստանի տարածքում, խնդիր են ունեցել օգնել միմյանց և առաջին հերթին զինական աջակցություն ցույց տալ ծանրագույն վիճակում հայտնված փտանգված շրջանների հայ բնակչությանը: Այս առումով արդյունավետ է մարտախմբերի գործունեությունը 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ:

6. Մարտական և զինակիր խմբերի գործունեությունը չի սահմանափակվել բուն Հայաստանի տարածքում իրականացրած մարտական գործողություններով: Անժխտելի է Եփրեմ խանի (Եփրեմ Դավթյան), Քեռու (Արշակ Գաֆաֆյան), Նիկոլ Դումանի, Սահրադի (Մկրտիչ Աղամալյան), Դաշնակցական Խեչոյի գլխավորած հայ մարտական խմբերի վճռորոշ դերակատարությունը Պարսկական հեղափոխությունում [1]:

1903 թ. Կարսի շրջանից առաջինը Սասուն է մեկնել «Մրրիկ» հեծյալ զինատար խումբը: «Մրրիկ» հեծելախումբը Թորգոմի (Թուման Թումանյան) գլխավորությամբ կազմավորվել է Կարսում, ՀՅԴ «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ: Մարտախմբի կազմում ընդգրկվում են արդեն բազում մարտական գործողությունների մասնակցած այնպիսի համբավավոր մարտիկներ, ինչպիսիք էին Սեբաստացի Մուրադը, Քեռին, Տուրբախը, Կայծակ Վաղարշակը, Սեպուհը, Կայծակ Առաքելը, գյումուշխանեցի Ավոն, Մեշետի Ավետիսը և այլոք:

«Այդ խումբը մտած մարտիկները,- նշում է Ա.Ազնավուրյանը,- առանձին-առանձին խմբերի ղեկավար կարող էին լինել: Բոլորն էլ հիանալի նշանառուներ էին, քանի- քանի անգամ չափուած թուրք, քուրդ խուժանների ու զորքերի հետ: Վճռական կամքի ու արտակարգ զոհաբերութիւնների տեր մարտիկներ էին, որոնք իրերի բերումով ահա մնացել էին Թումանի ղեկավարութեան տակ՝ Սասնայ արծիւներին օգնութեան հասնելու համար» [2]:

Այո, անժխտելի է, որ «Մրրիկ» հեծյալ մարտախմբի կազմում են ընդգրկվում այնպիսի ռազմիկներ, որոնք իրավամբ դասվում են Հայոց Ազատամարտի առավել ականավոր մարտական գործիչների շարքում, բայց մարտախմբի հրամանատարությունը ստանձնում է Թորգոմը(Թուման Թումանյան), որն իր կենսագրությամբ և հատկապես մարտական փորձառությամբ դժվար թե գերազանցեր Քեռուն, Սեբաստացի Մուրադին, Սեպուհին, Որսորդ Գևորգին և այլոց, բայց «Ընկերների ընդհանուր համաձայնությամբ Թորգոմը ընտրվում է խմբապետ, հակառակ իր ցանկութեան: Նա առարկում էր, թէ խմբապետութեան համար իրենից աւելի փորձառու և արժանաւոր ընկերներ

[1] Մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան , Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 483-568:
[2] «Յուշապատում...», էջ 460:

կային. բայց ընկերները գաղտնի քուէարկութեամբ համաձայնութեամբ ընտրում են նրան խմբապետ»[1]:

Ո՞վ է Թորգոմը և ի՞նչու են համբավավոր հայդուկներն ու ՀՅԴ Կարսի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեն հատկապես հենց նրան ընդամենը քսանհինգամյա երիտասարդին. միաձայն վստահում մարտախմբի հրամանատարությունը:

Թորգոմը ծնվել է Արցախ աշխարհի Շուշի քաղաքում. 1879թ.: Շուշին Արցախի մայրաքաղաքը. հայկական այն կենտրոններից էր. որտեղ. շնորհիվ հարուստ հաստատությունների ու ավանդույթների և թեմական դպրոցի. անհրաժեշտ նախադրյալներ կային ազգային- ազատագրական պայքարի ծիլարձակման ու տարածման համար: Այդ հանգամանքը և մանավանդ այն. որ ուսանում էր թեմական դպրոցում. մեծապես նպաստում է. որպեսզի նա դեռևս դպրոցական տարիներին հաղորդակցվեր ազատագրական պայքարի գաղափարներին: Շուշիի թեմական դպրոցում ուսանել են նաև հայ ազգային- ազատագրական պայքարի ականավոր գործիչներ Նիկոլ Դումանը. Արամ Մանուկյանը. Իշխանը (Նիկոլ Պողոսյան) և այլոք:

«Դեռ դպրոցում.- նշվում է նրա կենսագրականներից մեկում.-Թումանը աշակերտական յեղափոխական խմբակների մէջ էր եւ իր մտաւոր պատրաստութեամբ. լուրջ ու քաղցր բնաւորութեամբ. ջանասիրութեամբ ու եռանդով սիրելի դարձած էր ընկերական շրջաններում»[2]:

Թեմական դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Մոսկվա և որպես ազատ ունկնդիր մասնակցում համալսարանի բնագիտության բաժնում դասավանդվող առարկաների պարապմունքներին: Ազատագրական պայքարի գաղափարներով համակված Թորգոմը նպատակադրվում է ձեռք բերել հարուստ գիտելիքներ. ապա նոր միայն լիովին նվիրաբերվել հայության ազատագրության դատին:Բայց նրան չի վիճակվում երկար մնալ Մոսկվայում և շարունակել ուսումը: ՀՅԴ Բոստոնյան արխիվում պահպանվող Թորգոմի համառոտ կենսագրականի հեղինակ Արամ Մանուկյանը. անդրադառնալով նաև այդ հանգամանքի լուսաբանմանը. նշում է.«..Ռուսաստանի սառնամանիքները վատ են ազդում առողջութեան վրայ: Թորգոմը հիւանդանում ու ստիպուած է լինում վերադառնալ հայրենիք[3]»:

Նա վերադառնում է Շուշի և բուռն գործունեություն ծավալում երիտասարդության. հատկապես ուսանողության շրջանում: Նրա խմբագրությամբ հրատարակվում է «Կոկոն» թերթը. որը նաև ազատագրական պայքարի գաղափարներ է պրոպագանդում և տարածում: Թորգոմի հետևողական աշխատանքը տալիս է իր արգասաբեր պտուղները: Թեպետ այդ ժամանակահատվածում ռուսական կայսրությունում իշխում էր ռեակցիան և խիստ հսկողություն էր սահմանված հեղափոխականների նկատմամբ, այնուամենայնիվ

[1] Նույն տեղում, էջ 451:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 1784, գ. 1, էջ 1:
[3] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 6, էջ 137:

նրան հաջողվում է Շուշիում և Արցախի մյուս շրջաններում կազմավորել խմբեր. որոնցից մի քանիսը. համակվելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով. համալրում են ՀՅԴ շարքերը: Արցախում գործելու տարիներին Թորգոմին մեծապես օգնել է Մենակը (Եգոր Առստամյան). որի ազդեցությունը. որպես ազգային-հեղափոխական բազմափորձ և արդեն հանրահայտ գործչի. նշանակալի ազդեցություն է գործել երիտասարդության ազատագրական պայքարի գաղափարներին հաղորդակից դարձնելու ու նրանց դեպի Երկիր մեկնելու ձգտումներ ներարկելու գործում: Կազմակերպական ու քարոզչական աշխատանքներում ակնառու կերպով դրսևորվում են Թորգոմի բնատուր հարուստ ընդունակությունները. բայց տվյալ ժամանակաշրջանում Հայոց Ազատամարտին առավելագույնս անհրաժեշտ էին ուսյալ . բանիմաց. փորձառու և նվիրյալ զինվորականներ: Առաջնորդվելով այդ իրողությամբ՝ Թորգոմը կամովին ընդունվում է զինվորական ծառայության:

Արամայիս Ազնավուրյանը. իր հուշերում համառոտակիորեն ներկայացնելով նաև Թորգոմի կենսագրությունը՝ նշում է. «Հենց աշակերտական սեղանի վրայ Թումանը իրեն նուիրել էր կազմակերպական աշխատանքների եւ դարձել էր իր շրջանի աշակերտութեան եւ երիտասարդութեան սիրելի առաջնորդը: Հետագային նա ռուսական զինուրական ծառայութեան էր գնացել եւ հասել էր վառատուրի աստիճանին (պրապորշչիկ »[1]:

Քանի որ նրա վաղեմի և գլխավոր նպատակը Երկիր մեկնելն էր ու լիովին ազատագրական պայքարին նվիրաբերվելը. ենթասպայի զինվորական աստիճան ստանալուց հետո մեկնում է Կարս և ներկայանում ՀՅԴ Կարսի (Ջրաբերդ) կենտր. կոմիտեին: Կարսի գործիչներին դժվար չի եղել նկատել ու արժևորել Թորգոմի շնորհները՝ ուսյալ. կրթված կարգավիճակը. ռազմագիտական պատրաստվածությունը և ազատագրական պայքարին նվիրաբերվելու բուռն ձգտումները: Պիտի նշել. որ նա Արցախում և ռուսական բանակում ծավալած իր գործունեությամբ Հ.Յ.Դաշնակցության կառույցում արդեն նորելուկ չէր: Նկատի ունենալով նրա արժանիքները՝ ՀՅԴ Կարսի կենտր. կոմիտեն նրան հանձնարարում է կազմակերպական և քարոզչական աշխատանքներ իրականացնել Կարսի նահանգի հայկական բնակավայրերում: Միաժամանակ, Թորգոմը, որպես պրոֆեսիոնալ զինվորական պիտի մարզեր և ռազմի գործը ուսուցաներ նոր-նոր կազմավորվող մարտական խմբերին: Կարսի շրջանում. որը մարտական ուժերի. զենք ու զինամթերքի կենտրոնացման կարևորագույն վայրն էր, գործելու ընթացքում նա շփվում և համագործակցում է բազմաթիվ անվանի գործիչների ու հայդուկների՝ Քեռիի. Մեբաստացի Մուրադի. Մեպուհի. Մենակի. Իսաջանի. Արամ Մանուկյանի և այլոց հետ, որոնք նույնպես զբաղվում էին Երկրին մարտական ուժեր. զենք ու զինամթերք մատակարարելու գործով:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 1784, գ. 1, էջ 1:

Անդրադառնալով Թորգոմի գործունեության այդ շրջանին՝ Արամ Մանուկյանը նշում է. «Թորգոմը արդեն կազմակերպող էր. կենդանի գործի մարդ: Ջրաբերդի շրջանում չմնաց մի գիւղ. ուր Թորգոմը մտած չլինէ...Թորգոմի օրով էր. որ խմբական կազմակերպութիւնը դառնում է համայնական. գիւղի ամբողջ համայնքն է մասնակցում կուսակցական գործին: Գիւղերում ստեղծում են գիւղական ենթակոմիտէներ. գիւղի զգայուն տարրերը կազմում են տեղական ու շարժական զինուորական խմբեր» [1]:

Շնորհիվ իր մտավոր հարուստ ընդունակությունների. կազմակերպվածության ու զինակիցների և հայ բնակչության նկատմամբ դրսևորած ջերմ ու սիրալիր վարվեցողության. նա կարճ ժամանակահատվածում կարողանում է աչքի ընկնել և դառնալ նահանգում գործող ամենահեղինակավոր հեղափոխական գործիչներից մեկը:

«Այս,- ընդգծում է Ա. Ազնավուրյանը,- ակնբախ առաքինությունների պատճառով էր գերազանցօրէն. որ Թումանը սիրուած էր իր խմբի մարտիկներից: Կարող եմ պնդել. որ նա մեր այն բացառիկ մտաւորական յեղափոխական էր. որ գիտէր վարել ու իրեն ենթարկել այլազան բնութագրեր ունեցող մարտական ոյժերը» [2]:

Չնայած Կարսի նահանգում նա արդեն հեղինակություն էր ձեռք բերել հեղափոխական գործիչների. հայրուկների և բնակչության շրջանում. բայց թիկունքում. թեկուզև ազատագրական պայքարի համար կարևորագույն նշանակություն ունեցող Կարսի շրջանում գործելը նրա նպատակը չէր: Նա ձգտում էր օր առաջ ուղևորվել Սասուն. որի վրա կուտակված սև ամպերը. ըստ այնտեղից հասնող տեղեկությունների. գնալով ավելի ու ավելի էին խտանում և վտանգավոր ու սպառնալի կերպարանք ստանում: Թորգոմը, ՀՅԴ «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի համաձայնությամբ. կազմակերպում է մարտական խումբ. որի կազմում նպատակադրվում է մեկնել Սասուն:

«Սկսում է. - գրում է Արամ Մանուկյանը. - «Մրրիկ» խմբի պատրաստութիւնը: Ջրաբերդում միայն Թորգոմը չէր. որ ցանկանում էր Երկիր մեկնել. այնտեղ վաղուց հաւաքուել էին մեր հին. փորձառու զինուորները. որոնք անդադար դիմումներ էին անում Երկիր անցնելու: Այդ ընկերների խումբը ընդհանուր անունով կոչում էր «Սկազցիների Խումբ». Թորգոմը իր շուրջն է հաւաքում այդ ընկերներին. եւ քիչ յետոյ «Մրրիկ» ձիաւոր խումբը արդէն կազմ եւ պատրաստ էր» [3]:

Նրա գործուն մասնակցությամբ կազմակերպված «Մրրիկ» մարտական խումբը պատրաստվում է առաջին իսկ հնարավորության դեպքում կտրել-անցնել ռուս-թուրքական սահմանն ու մեկնել Սասուն: Թուրք իշխանությունները հետևելով գործակալների միջոցով ակնդետ հետևելով Կարսի շրջանում

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1784, գ. 1, էջ 3:
[2] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 6, էջ 137:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 1784, գ. 1, էջ 3:

հայերի ծավալած ձեռնարկումներին. ավելի են ուժեղացնում սահմանի հսկողությունը: Հեծյալ մարտախումբը՝ արդեն կազմակերպված. պատրաստվում է մեկնել Երկիր. երբ Մենակը (Եգոր Առաստամյան) ՀՅԴ Ջրաբերդի կենտր. կոմիտեին հասցեագրած նամակում հայտնում է սահմանամերձ շրջաններում թուրքական զորքերի կենտրոնացման մասին և խորհուրդ է տալիս չանցնել ռուս-թուրքական սահմանը» [1]:

Մենակն այդ օրերին. որպես ծպտյալ գյուղացի. ապրում էր Բասենի գյուղերից մեկում և արգասաբեր գործունեություն ծավալելով Կարս-Բասեն-Սասուն գծում՝ բազմիցս արժեքավոր տեղեկություն էր հաղորդում Ջրաբերդի կենտր. կոմիտեին թուրքական ուժերի տեղաշարժերի և մինչև Սասուն ձգվող առավել անվտանգ ուղիների մասին: Կարսի կենտր. կոմիտեն. ստանալով Մենակի նամակը. Մուրադին. Կայծակ Առաքելին և Ավոյին հրավիրում է խորհրդակցության: Ի՞նչ պետք է անեին. պետք է անցնեի՞ն սահմանը. թե՞ոչ:

Մի՞թե ազատագրական պայքարին զինվորագրված ռազմիկները. որոնք տարիներ շարունակ ապրում էին դեպի մարտադաշտ. հայոց արծվաբույնը՝ Սասուն մեկնելու բուռն տենչանքով. կարող էին տեղի տալ սահմանամերձ վայրերում թուրքական զորքերի կենտրոնացման իրողությանը և հրաժարվել Երկիր ուղևորվելու մտադրությունից: Նրանց համար ավելի քան ընդունելի և հոգեհարազատ էին իրենց մարտական ընկերոջ՝ Մեշեդի Ավետիսի «Մարդ մինչեւ Տարօնի աշխարհը չգնայ. մինչեւ Սասունի անմատչելի լեռները չբարձրանայ. հայրուկ չի լինիր: Պէտք է խաչը շալակած Սասուն բարձրանանք. որ լինենք ֆէդայի» արտահայտությունները» [2]:

Մուրադի ու նրա զինակիցների՝ Երկիր մեկնելու տրամադրվածությունն ու վճիռը ավելի քան հաստատակամ էին ու անբեկանելի:

«Ասոնք չեն համաձայնիր եւ կը խոստանան թուղթ մը տալ՝ թէ այս չորսը ինքնագլուխ կերթան եւ Կ. Կոմիտէն տեղեկութիւն չունի: Այդ արդեն պատուի խնդիր էր եղած: Կուզէին անցնիլ եւ օր առաջ Սասուն հասնիլ» [3]:

«Ջրաբերդ» կենտր. կոմիտեին. թերևս. այլընտրանք չէր մնում: Մուրադի և նրա զինակիցների հաստատակամությունն ու վճռականությունը ավելի քան համոզիչ էին, որպեսզի Կենտր. Կոմիտեն կայացներ Սասուն մեկնելու վճիռը:

Մարտական խմբի զինման համար նախատեսված զենքերը հաջողությամբ տեղափոխում և կենտրոնացնում են Բայբուրդ գյուղում: Համաձայն Արամայիս Ազնավուրյանի վկայության. մարտախմբի զենքերի տեղափոխությունը ՀՅԴ Ջրաբերդի կենտր. կոմիտեի հանձնարարությամբ ՀՅԴ Բայբուրդի մարմնի անդամների՝ Վարդանի ու գլավնի Փիլոսի ընկերակցությամբ, իրականացրել է հենց ինքը: Զենքերի տեղափոխությունից մի քանի օր անց մարտախմբի անդամները նույն-

[1] «Հայրենիք» ամս., 1944, թիւ 3, էջ 79:
[2] Նույն տեղում, 1937, թիւ 6, էջ 94:
[3] Նույն տեղում, 1944, թիւ 3, էջ 79:

պես կենտրոնանում են Բայբուրդում, ուր նրանց ընդգծված ջերմությամբ է ընդունում տեղի բնակչությունն ու հատկապես երիտասարդությունը:

Մարտախումբը մեկ շաբաթ մնում է Բայբուրդում [1]:

Մեկնելու նախօրեին Երկիր ուղևորվող մարտիկներին ճանապարհելու նպատակով Բայբուրդ են գալիս ՀՅԴ Կարսի (Ջրաբերդ) Կենտր. կոմիտեի անդամներ Նորհատյանն ու Վահան Ջալլաթյանը: Խմբին ճանապարհելու համար հավաքվում է գյուղի ողջ բնակչությունը: Դիմելով իրենց ճանապարհողներին՝ իր շնորհակալական խոսքում մարտախմբի խմբապետ Թորգոմն ասել է. «Դուք թէեւ անմիջականօրեն մասնակցութիւն չպիտի ունենաք մեր խմբի արշաւանքներին՝ կռիւներին, սակայն մենք ձեր կատարած գործը պակաս չենք համարում մէրինից: Առանց ձեր այս սրտաբաց հիւրընկալութեան ու յայտնաբերած գաղտնապահութեան, մանաւանդ վտանգներն ու կառավարական հետամտութիւններն արհամարհելուն՝ ոչ մի խումբ չպիտի կարողանար Երկիր անցնել՝ մեր թշուառ արիւնակիցներին օգնելու համար: Ձեր այս ընթացքով դուք ձեր վրայ էք վերցրել մեր ազատագրութեան դժուարին գործի մի խոշոր մասը...» [2]:

1903թ. մայիսին 27 մարտիկներից բաղկացած «Մրրիկ» հեծելախումբն անցնում է սահմանը և ուղևորվում դեպի Սասուն:

«Միրելի ընկերներ» վերնագրած նամակներից մեկում (մայիս 25, 1903) Թորգոմը ընկերներին հաղորդում է, որ մարտախումբը առաջ է շարժվել հետևյալ դասավորությամբ. «Առջեւից գնում էին ուղեցոյցները, նոցա հետ երեք ուշիմ ու քաջարի զինուորներ - Որսորդը, Քոեցի Սարգիսը եւ Խաստուրցի Յակօն: Առաջապահներին հետեւում էր խումբը, որի առջեւից գնում էի ես, աջցս դրօշակակիր Տուրբախը, ձախ կողմից՝ իմ օգնական Ֆահրադը: Ետեւից կարգ-կարգ, իւրաքանչիւր կարգում երեք հոգի, գալիս էին 12 զինուորներ: Խմբի ետեւից 20 քայլի վրայ գալիս էին ետնապահները՝ քաջարի կուռղներ Սեբաստացի Մուրատը, Սեպուհը, Առաքելն ու Աւետիսը...» [3]:

Հեծելախումբը անցնում է Բասենի, Խնուսի, ապա նաև Տարոնի տարածքներն ու ճանապարհին չհանդիպելով հակառակորդի կողմից արգելքների, հասնում Սասուն: Հեծելախումբը թեպետ թվակազմով փոքրաքանակ էր, սակայն նրանում ընդգրկված մարտիկներն արժանի հեղինակություն էին նվաճել ազատագրական պայքարի գործիչների շրջանում: Ահա այդ էր պատճառը, որ նրանց ժամանումը Սասուն մեծ ուրախություն է պատճառում տեղի բնակչությանը: Մարտախմբին դիմավորելու է գալիս Անդրանիկը:

«Լուր եկավ ինձի,- վերհիշում է Անդրանիկը,- թէ 20 հոգիէ բաղկացեալ ձիաւոր խումբ մը եկաւ Սէմալ: Եղանք գացինք Սէմալ, տեսնուեցանք Թումանի հետ: Խումբը բերինք Կիլիկուզան:Նրանց մէջ կային իմ նախկին ընկերներէն 95-էն

[1] Նույն տեղում, 1938, թիւ 7, էջ 139:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թ. 689, գ. 47, էջ 1:

Քեաւթառ Արշակ /Քեռի - Արշակ Գաֆաֆյան-Հ.Գ./, Դուրբախը, Մուրատը: Ուրախութիւնն հաս մեծ էր, ամբողջ ժողովուրդը ոգեւորուեցաւ...» [1]:

Ջրաբերդ-ի ընկերներին հասցեագրված Թորգոմի նամակներից պարզվում է, որ նրանք թեև հակառակորդի հետ զինված բախումներ չեն ունեցել, բայց հարկ է եղել հաղթահարել մի շարք խոչընդոտներ, որոնք քիչ հոգսեր չեն պատճառել: Ուղևորության ընթացքում մարտախումբը թշնամու տեսադաշտից խուսափելու և անվտանգությունն ապահովելու նկատառումով, համաձայն ընդունված կարգի, ցերեկը պատսպարվել է որևէ վայրում և միայն գիշերով է առաջ շարժվել [2]:

Այդ նամակներում խմբապետ Թորգոմը նկարագրում է ոչ միայն ճանապարհին իրենց պատահած դեպքերի մանրամասները, այլ նաև անդրադառնում է Բարձրավանդակում տիրող կացությանը, և իր տպավորությունը հայտնում տարբեր շրջաններում հայ գյուղացիների կողմից իրենց նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի մասին:

«Տաճկահայ ժողովրդի ընդունելութիւնը,- նշում է Թորգոմը,- զանազան տեղերում տարբեր էր: Բասենում ժողովուրդը երբէք չէր ուզում պատսպարել մեզ: Այստեղ երկու օր բռնի ուժով միայն կարողացանք մարագներում պատսպարուել եւ խոյս տալ վտանգներից» [3]:

Քանի որ Բասենը անմիջականորեն գտնվում էր սահմանամերձ շրջանում, ուստի չէր բացառվում, որ այնտեղի հայության տրամադրվածության վրա անդրադարձած լինեին իրենց տարածքով Երկիր անցնող հայ ֆիդայական խմբերի մղած կռիվների պատճառով իրենց նկատմամբ թուրք իշխանությունների գործադրած բռնությունները: Նրանք, ըստ երևույթին, զգուշանալով թուրք իշխանությունների հաշվեհարդարից, խուսափում էին բացահայտ սիրալիր ընդունելություն դրսևորել հայ ֆիդայիների նկատմամբ:

«Խնուսում,- շարունակում է Թորգոմը,- ժողովուրդը աւելի լաւ ընդունելութիւն ցոյց տուեց մեզ: Երկու օր համակրալիր հիւրասիրութիւն գտանք Խնուսի երկու գիւղերում, որտեղի ժողովուրդը անընդհատ զէնքի պահանջներ էր անում մեզնից» [4]:

Համաձայն նույն նամակում վկայակոչած տվյալների, ֆիդայիների նկատմամբ բոլորովին այլ է եղել տարոնահայության վերաբերմունքը:

«Դաշտի ժողովրդի ոգեւորիչ ընդունելութիւնը,- ընդգծում է Թորգոմը,- մեզ մոռացնել տուեց 8 օրուայ ընթացքում ճանապարհին կրած մեր բոլոր տանջանքները: Ըստ երեւոյթին, այդտեղի խմբական կազմակերպութիւնները (նկատի ունի ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի խմբերին -Հ.Գ.) շատ լաւ էին, գիշերը գիւղերի մօտով անցնելիս մեզ դիմաւորում եւ ուղեկցում էին բազմաթիվ զինուած երիտասարդներ»:

[1] Անդրանիկի յուշերը, էջ 313:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 689, գ. 47, էջ 1:
[3] Նույն տեղում, թ. 687, գ. 22, էջ 1:
[4] Նույն տեղում:

Մարտախմբի ընդունելությունը լեռնաշխարհի բնակիչների և այնտեղ գտնվող ֆիդայիների կողմից նույնպես եղել է ջերմ ու ոգևորիչ: Թորգոմի մարտախումբը, փաստորեն, մարտական այն եզակի ուժն է, որին հաջողվում է առանց լուրջ ջանքեր գործադրելու հաղթահարել երթուղու խոչընդոտները, հասնել Սասուն: Լեռնաշխարհում հանգրվանելու առաջին իսկ օրից մարտախմբի անդամները հաճախակի մեկնում են ինչպես Բարձրավանդակի, այնպես էլ Դուրանի հայկական գյուղերը և ձեռնամուխ լինում ժողովրդին կազմակերպելու դիմագրավելու գալիք արհավիրքներին:

ՀՅԴ Ջրաբերդի կենտր. կոմիտեի ընկերներին ուղղված 1903 թ. սեպտեմբերի 15-ին և դեկտեմբերի 21-ին թվագրած նամակներում, Թորգոմն արտահայտելով նաև Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի պահանջը, ընկերների ուշադրությունն է հրավիրում մի քանի հանգամանքների վրա: Նախ, իր բողոքն է հայտնում, որ այդ օրերին գրեթե չի գործել կապը կենտրոնի հետ, որի պատճառով իրենք շատ քիչ տեղեկություններ են ստացել դրսում կատարվող իրադարձությունների մասին: Քանի որ Սասունը պատրաստություններ էր տեսնում դիմագրավելու թուրքական կանոնավոր զորքերի ու քուրդ աշիրեթների սպասվելիք հարձակմանը, որն արդեն որևէ կասկած չէր հարուցում, ուստի չափազանց կարևոր էր մշտական գործող հաղորդակցության միջոցների առկայությունը Ջրաբերդի հետ, որտեղից Դուրան-Բարձրավանդակը պիտի ստանար մարտական ուժեր ու ֆինանսական միջոցներ:

Նամակներում Թորգոմը նկարագրում է Դուրան-Բարձրավանդակի շրջաններում, հատկապես Դաշտում թուրք իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունները և այնտեղ տիրող ծանրագույն իրավիճակը: Սեպտեմբերի 18-ի նամակում նշվում է. «... կառավարությունը իր պատերազմական ծախքերը հոգալու համար թշուառ ժողովրդին կեղեքում է աշկարայ: Բացի անասունների համար նշանակուած նոր տուրքից,15-ից մինչեւ 70 տարեկան կին ու տղամարդկանց վրայ էլ տուրք են սահմանել»[1]:

Ի՞նչպես պետք է դուրս գային այդ ծանրագույն իրավիճակից, ո՞րն է ելքը, երբ օրեցօր ավելի ու ավելի էին սաստկանում հայության նկատմամբ գործադրվող բռնությունները: Տիրապետող կացությունում, համաձայն Թորգոմի հավաստման, ժողովրդի տրամադրվածությունն ու ձգտումը միակն էր՝ դիմել զենքի ու զինված պայքարի:

«Տառապեալ ժողովուրդը, - նշվում է սեպտեմբերի 15-ի նամակում, - կառավարութեան անողորմ բռնութիւններից ազատուելու միակ միջոցը համարում է յեղափոխական զինուած պայքարը»:

Այդ նույն նամակում Թորգոմը ընկերներին տեղեկացնում է, որ ժողովուրդը, այլևս չհանդուրժելով բռնությունները, վաճառում է իր ունեցվածքի մի մասը և ցանկանում զենք ձեռք բերել, իսկ «...Դուրանի մէջ ժողովուրդը

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 687, գ. 57, էջ 1:

քրտերից ու չերքեզներից գնել է մօտ 100 զէնք (այնպէս ու բերդանկա. նաև մի քանի դաստաղիներ)»[1]:

Քանի որ բուրք իշխանությունների ձեռնարկած քայլերը պարզորոշ մատնանշում էին առաջիկայում Սասունին սպառնացող փոթանգը, ուստի Տարոնի և Սասունի շրջաններում գործող գործիչները մեծ ջանքեր են գործադրում առավելագույնս ամրապնդել «Դուրան- Բարձրավանդակ»-ի կազմակերպական կառույցները: Իսկ որպեսզի ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպվեր առավել արդյունավետությամբ, համաձայն նամակում մատնանշված պահանջների. «Ամենահեռավոր մութ ու խուլ անկիւններից ժողովուրդը մարտիկ է պահանջում մնգնից, որ գնան ցոյց տան իրեն փրկութեան ճանապարհը... Հասցրէք մեզ պրօպօգանդիստ դիտեր, զէնք ու փող...»[2]:

Թորգոմն, արտահայտելով նաև ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեում տիրող կարծիքը, հաստատապես նշում է, որ եթե իրենց ժամանակին կարողանան ցույց տալ անհրաժեշտ օգնություն և Սասուն ուղարկեն մարտական ուժեր, զենք ու զինամթերք, ապա «... ապագայում հանդիսատէսը կը լինենք ժողովրդական մի այնպիսի ապստամբութեան, որի նմանը չի ունեցել տաճկահպատակ ստրուկ ազգերից եւ ոչ մէկը...»[3]:

Սասունը պատրաստվում էր, բայց սպասվելիք օգնությունը դեռևս չկար: Քանի որ անհայտ պատճառներով չէին գալիս օգնական ուժերը և չէին գործում հաղորդակցության միջոցները, Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի որոշմամբ մարտական ուժեր, զենք ու զինամթերք բերելու նպատակով Թորգոմը Կայծակ Վաղարշակի ընկերակցությամբ մեկնում է Կովկաս: Նրանց հանձնարարվում է նաև մասնակցել ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովին, ուր նրանք ներկայացնելու էին Դուրան-Բարձրավանդակը:

Պիտի նկատել, որ Ընդհանուր ժողովին Դուրան- Բարձրավանդակը ներկայացնելու գործում հենց նրանց նախապատվություն տալը պատահական չէր: Թորգոմը, որպես պրոֆեսիոնալ զինվորական և «Շանթ» հեծելախմբի հրամանատար, կարողացել էր իր գլխավորած մարտախումբը հաջողությամբ հասցնել Սասուն: Կայծակ Վաղարշակը հանրահայտ և փոքառու հեղափոխական գործիչ էր: Նա ծնունդով Տարոն աշխարհից էր: Նրան արդեն վիճակվել էր տարբեր առաջադրանքներ կատարելիս մի քանի անգամ լինել Կովկասում ու հետ վերադառնալ: Դուրան- Բարձրավանդակի զինակիցները լիահույս էին, որ նրանց այս անգամ ևս կհաջողվի Կովկասից մարտական ուժեր , զենք ու զինամթերք հասցնել Սասուն:

[1] Նույն տեղում, էջ 2:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

3. 2. Խանի և Օնիկ Նկրուզի մարտական խմբերը Բասենի մարտերում

1903 թ. սեպտեմբերին, երբ Սասունում դեռևս չէին ծավալվել մարտական գործողությունները, «Դրօշակ»-ը հայտնում է, ««Դաշնակցութեան» զինակիր խմբերը, հետևակ եւ ձիաւոր, մօտ հարիւր հոգի, մի քանի մասերի բաժանուած, սեպտեմբերի 17-ին (հ.տ.) յաջողութեամբ անցան ռուս-տաճկական սահմանը: Հետեւեալ օրը, ճանապարհին, սահմանից 6-8 վերստ հեռու, խմբերից երկուսը նկատում են հովիւներից եւ շուտով շրջապատում են զօրքերով, թուրք խուժանով եւ քուրդ աշիրաթներով...[1]:

Պարսկաստանից ստացած հեռագրում «Դրօշակ»-ը չի նշում, թե որոշակիորեն ո՞ր զինակիր խմբերն էին, որոնք հայտնվել էին թուրքական զորքերի, խուժանի և քուրդ աշիրեթների շրջապատման օղակում:

Երկիր մեկնող մարտական ուժերից այս անգամ թշնամու մեծաքանակ ուժերի պաշարման մեջ էին հայտնվել Խանի «Կայծակ» հեծյալ ու Օնիկ Նկրուզի «Շանթ» հետևակ մարտախմբերը: Այդ նույն հեռագիրը, շեշտելով երեք օր ընթացող կռիվների իրողությունը, միաժամանակ հայտնում է, «Կանչուած են զօրքեր Կարինից, Դալի-Բաբայից եւ Ղարաքիլիսայից, բերուած են նաեւ թնդանօթներ: Մեր ընկերները կռուում են քաջաբար: Թշնամուց ընկել են հարիւրամարդիկ...Դժբախտաբար՝ անհաւասար կռուում մաս-մաս եղած խմբերը տուել են բազմաթիւ նահատակներ եւ գտնուում են ամենակրիտիքական դրութեան մէջ...»[2]:

ՀՅԴ «Զրաբերդ» կենտր. կոմիտեի հանձնարարությամբ Խանը Կարսի շրջանում կազմավորում է «Կայծակ» հեծյալ մարտախումբ, որը Օնիկ Նկրուզի «Շանթ» հետևակ մարտախմբի հետ միասին 1903 թ. գարնանը պիտի մեկներ Սասուն:

«Բասենի ընդհարումները» վերնագիրը կրող վավերագիրը, ներկայացնելով խմբերի կազմավորման դժվարությունները, նշում է.«Զրաբերտի կոմիտէն հազարումի դժուարութիւնների եւ պատահարների միջից հազիւհազ յաջողացրեց այդ պատասխանատու ձեռնարկը վերջնականապէս գլուխ բերել սեպտեմբերի սկզբներին»[3]:

«Կայծակ» և «Շանթ» մարտախմբերի գործունեության մանրամասները ներկայացնող վերոհիշյալ վավերագրում նշվում է, որ «Կազմուած է երկու խումբ. ձիաւոր 53 հոգուց «Կայծակ» անունով և «Շանթ» հետևակ խումբ 91 հոգուց բաղկացած»[4]:

Մեկ այլ վավերագիր նույնպես հաստատում է մարտախմբերի անդամների այդ թվաքանակը՝ 53 հեծյալ և 91 հետևակ[5]:

---

[1] «Դրօշակ», 1903, թիւ 8, էջ 305:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ 271, գ. 10, էջ 1:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, գ. 6, էջ 4:

Հ.Յ.Դաշնակցության կողմից ուժերի կենտրոնացման վայրը՝ Սասուն ուղարկած ամենահիզոր մարտական ուժը Խանի ու Նկրուզի գլխավորած «Կայծակ» և «Շանթ» հեծյալ ու հետևակ միացյալ զինախումբն է: Այդ մարտական խմբերը որոշակի ընդհանրությամբ ու տարբերությամբ կարելի է համեմատել «Խանասորի արշավանք»-ը կենսագործած արշավախմբի հետ: Այդ երկու մարտական խմբերը բաղկացած էին հեծյալ և հետևակ մարտիկներից, որոնք հիմնականում զինված էին մոսին հրացաններով ու մաուզեր ատրճանակներով: Այսուհանդերձ նրանց առաջադրված խնդիրները տարբեր էին:

Մինչև Սասուն հասնելը նրանք պետք է անցնեին ավելի քան 250 կմ ճանապարհ: «Մրրիկ» հեծելախմբի բարեհաջող անցումը թեև ոգևորող էր, բայց դժվար էր կանխատեսել, թե զինախմբերին ինչպիսի դժվարություններ ու խոչընդոտներ էին վիճակված հաղթահարելու մինչև նախանշված վայր հասնելը: Սահմանամերձ շրջաններում մարտական ուժերի կենտրոնացումը չէր կարող աննկատ մնալ նաև թուրքերի տեսադաշտից: Նրանց, ինչպես նաև ռուսական հատուկ ծառայությունների գործակալներն ու լրտեսները ամենուրեք էին: Բացի այդ ամենից, տվյալ ժամանակահատվածում հայ ազատագրական պայքարի և ազգային-քաղաքական կուսակցությունների նկատմամբ ռուս և թուրք իշխանությունների դրսևորած վերաբերմունքն ու գործողությունները կատարյալ ներդաշնակ էին և փոխհամաձայնեցված:

Ռուբենի գնահատմամբ «...այդ թուականներուն ռուս-թուրք բարեկամութիւնը սերտ էր... Եթէ ասոնք ենթադրութիւններ են, ենթադրութիւն չէ այն որ ռուսական ոյժերը ուժեղացուած էին սահմանին վրայ, իսկ թրքական ոյժերը էրզրումէն առաջ էին քաշուած ու համախմբուած Հասան Ղալա, Քէօփրիւ Քէօյ եւ շրջակաները, ինչ որ յետին թուով ստուգուեցաւ»[1]:

Սեպտեմբերի 10-ին տեղի է ունենում «Կայծակ» և «Շանթ» զինատար խմբերի ռազմական խորհուրդների միացյալ ժողովը, ուր վերջնականապես ճշգրտվում են Սասուն մեկնելու օրը և ուղիները: Գծագրվում են նաև զինախմբերի երթուղիները: Խանի ձիավոր խումբը պիտի անցներ «...Բայբուրդ, Քեքաջ գիւղերի մօտով, ապա Սարիղամիշի արեւմտեան փէշերով պիտի կտրէր անցնէր դէպի Ս. Խաչ լերան ստորոտները, սրա մօտերքից՝ Մժնկերտի եւ Ղարաուրգանի միջով շարժուէր դէպի Տաճկական Բասեն՝ Բոցիկները: Իսկ Նեւրուզի խումբը պիտի անցնէր Շաթեւան, Արմտլու, Բաշգիւղ,այնտեղից էլ դէպի Թուրխոջա թուրք գիւղի սահմանները »[2]:

1903 թ. սեպտեմբերի 17-ին հեծյալ և հետևակ զինախմբերը առանց որևէ միջադեպի անցնում են սահմանը: Խանի հեծելախումբը անվտանգ հասնում է հայկական Գոմաձոր գյուղ, ուր մեկ օր դադար առնելուց հետո գիշերով դուրս է գալիս գյուղից և ուղևորվում Բոցիկի լեռները, ուր պիտի միանար Նկրուզի

---

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 157:
[2] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 8, էջ 132:

զինախմբին: Հեծելախմբին նկատում են ամենուրեք հայտնվող քրդերը և տեսնելով զինված ձիավորներին ու համոզվելով, որ զինյալներ հայ ֆիդայիներ են, անհապաղ, ինչպես նշում է Սեպուհը, «Հաւար կը փրցնեն: Եւ գիշակեր թշուններու նման ամէն կողմէ քիւրտեր կը թափուին Բոցիկի լեռները եւ կը սկսի կռիւը»[1]:

Մոսիններով ու ձեռնառումբերով զինված բաջավարժ մարտիկների համար առանձնակի դժվարություն չէր ներկայացնում հաղթահարել քրդերի հարուցած արգելապատնեշն ու առաջ շարժվել: Խանի հեծյալները, չերկյուղելով հակառակորդի բազմաքանակությունից, առանց խուճապի հակագրոհ են ձեռնարկում քրդերի վրա: Հեծելախումբը հեռու տարածությունից արձակած հարվածներով ջախջախում ու փախուստի է մատնում քրդերին, որոնք լքելով մարտադաշտը, հեռանում են հայ-թուրք խառը բնակեցված Թոդիվերան գյուղը և այնտեղ տեղակայված թուրքական զորամասի հրամանատարությանը հայտնում Բոցիկ լեռան մոտակայքում հայտնված հայ ֆիդայիների մասին:

Բոցիկի առաջին կռվից հետո Խանը տեղեկանալով, որ Նևրուզի զինախումբը Բասենի Թուրխոջա գյուղի մոտերքում դժվարին մարտի է բռնվել թուրքական կանոնավոր զորքի և քրդական աշիրեթների դեմ, փոխում է շարժման ուղությունը ու շտապում օգնության[2]:

Խանի հեծյալներին չի հաջողվում օգնության հասնել Նևրուզի զինախմբին: Հեծելախումբը Թուրխոջայից 20 կմ հեռավորության վրա գտնվող Գոմաձոր գյուղի մոտակայքում հանդիպում է թուրքական զորքին և հարկադրված կռվի բռնվում: Թուրքական կանոնավոր զորքը, վաղօրոք տեղեկանալով հայ մարտական ուժերի հնարավոր ուղիների մասին, հասնում է Գոմաձոր և համապատասխան դիրքերում տեղադրելով թնդանոթները՝ սպասում է հայ մարտիկներին: Այն պահին, երբ հեծյալները մոտենում են Գոմաձորին, թուրք զինվորները թնդանոթներից կրակ են տեղում գյուղի ուղությամբ ու իջնելով դիրքերից՝ փորձում պաշարել հայդուկներին:

Ինչպես նախորդ՝ Խաստուրի, այնպես էլ այս՝ Գոմաձորի կռվի ժամանակ Խանը դարձյալ դրսևորում է մարտը վարելու վարպետությունը:

«Խանն,- գրում է Ա. Ազնավուրյանը,- ու իր հերոս մարտիկները չէին կորցրել իրենց: Անմիջապես բռնել էին գիւղի յարմար դիրքերը: Խանը հրամայել էր չկրակել թուրք զօրքերի վրայ մինչեւ իր սուլիչի ազդանշանը: Թրքական զօրքերը մօտեցել էին գիւղին: Սուլել էր Խանի սուլիչը, եւ հայ քաջերը գնդակների կարկուտ էր տեղացել թուրք զօրքի գլխին»[3]:

Խանի մարտավարությունը պսակվում է հաջողությամբ: Թուրք հրամանատարության համար անսպասելի էր հայ մարտիկների դրսևորած վարպետությունն

[1] Նույն տեղում, 1949, թիւ 3, էջ 32:
[2] Տե՛ս նույն տեղում, 1938, թիւ 8, էջ 154-155:
[3] Նույն տեղում:

ու անսովոր մարտավարությունը: Թուրք զինվորները խուճապի են մատնվում և դիմում փախուստի[1]:

Շուտով Էրզրումից, Հասանդալայից գալիս են թուրքական նոր զորքերքեր և թուրք հրամանատարությունը թնդանոթների համազարկերի աջակցությամբ նոր գրոհ է ձեռնարկում հեծելախմբի դիրքերի վրա:

«Խանը,-գրում է Սեպուհը,-նստած իր գեղեցիկ նժոյգի վրայ, այս դիրքէն այն դիրքը կանցնի, կը խրախուսէ տղաքը: Թուրքերը ամէն ժամ թարմ ուժեր կը ըստանան ու թէեւ ֆէտայիներու անվրէպ գնդակներէն կը նոսրանան անոնց շարքերը, բայց կրկին կը խտանան»:

Բազմաքանակ հակառակորդի դեմ մարտնչող զինախմբի միակ առավելությունը և հույսը, ըստ Սեպուհի, մոսին հրացաններն էին «... որոնք թշնամու հրացաններէն շատ աւելի լաւ են եւ բազմաթիւ զոհեր կը խլեն թշնամու շարքերէն»[2]:

Հակառակորդը մոտեցնում է թնդանոթները, ուժեղ ռմբակոծության է ենթարկում հայդուկների դիրքերը ու ապա անընդմեջ գրոհներ ձեռնարկում: Հայդուկներն աննահանջ դիմադրում են, բայց անընդհատ կրակելով՝ սպառում են փամփուշտները: Թշնամու գրոհները դիմակայելու համար հեծյալները իջնում են ձիերից ու շարունակում են մարտնչել հետիոտն վիճակում: Թուրք զինվորները, օգտվելով հայդուկների դիրքերից իրենց ուղղությամբ տեղացող կրակահերթերի սակավությունից, ավելի ու ավելի էին սեղմում պաշարման շղթան: Հայդուկները մինչև մութն ընկնելը կարողանում են ամուր պահել իրենց դիրքերը: Հայ մարտիկներին օգնում է նաև այն հանգամանքը, որ թուրքերի վերջին գրոհները ուղեկցվում էին թնդանոթների թույլ համազարկերով: Պարզվում է, որ հակառակորդը անընդմեջ ընթացող մարտերում նույնպես ծախսել էր մեծ քանակությամբ ռազմամթերք և ի զորու չէր կրակով աջակցել հարձակվողներին: Անհրաժեշտ էր օգտվել հակառակորդի թուլությունից և օգտագործել ընձեռված հնարավորությունը:

«Խանը,-նշում է Սեպուհը,- իր մի քանի կտրիճներով կրկին կը յարձակի թշնամու ձիաւորներուն վրայ, կը խլէ անոնց ձիերը, կը նստցնէ այդ ձիերուն վրայ իրենց ձին կորսնցուցած ընկերները եւ կուելով կառաջանա դէպի Բոցեկի լեռը»[3]:

Համաձայն «Դրօշակ»-ի, հայդուկները թշնամուց խլում են 17 ձի, բազմաթիվ մաուզեր հրացաններ և զգալի քանակության փամփուշտ[4]:

Գոմաձորի կռվում, համաձայն քրդերի պատմածների, հայդուկների հարվածներից սպանվել էին ավելի քան 200 քրդեր, 150 թուրք զինվորներ, մի հազարապետ և մի քանի հարյուրապետեր[5]:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 59:
[2] «Հայրենիք» ամս., 1949, թիւ 3, էջ 132:
[3] Նույն տեղում, էջ 33:
[4] Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 9, էջ 325:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 326:

Խանի հեծելախումբը, ազատվելով շրջափակումից, պիտի օգնության հասներ ծանրագույն կացությունում հայտնված Նևրուզի զինախմբին: Սակայն հեծյալները ուղևորվում են ոչ այն վայրը, ուր մարտի էր բռնվել Նևրուզի զինախումբը, այլ համաձայն Ա. Ագնավուրյանի վկայության «...անցնում են դեպի արևելք՝ Ողոր- Բրոր կոչուած քարաժայռերը: Մանավանդ որ արդէն լուր էին ստացել թէ Նեւրուզի խումբը կոտորուել է, իսկ դէպի Խնուս գնալն էլ կապուած էր անյաղթահարելի դժուարութիւնների հետ»[1]:

Ստեղծված կացությունը միանշանակորեն մատնանշում էր, որ Սասուն մեկնելն այլևս ոչ միայն անհնարին է, այլև կործանարար: Այդ պատճառով Խանը հարկադրված որոշում է վերադառնալ Կովկաս և հեծելախումբն առաջնորդում է դեպի ռուս- թուրքական սահմանը:

Կովկաս վերադառնալու ճանապարհին, հեծյալները Դալի Բաբայի կիրճում պաշարվում են քուրդ աշիրեթների կողմից: Հայդուկները մեծ ջանքեր են գործադրում դուրս գալու պաշարման օղակից, բայց անհնար էր հաղթահարել հակառակորդի գերազանցող ուժերի արգելապատնեշները: Զոհվում են զինախմբի հրամանատարն ու օգնականը: Խմբի 13 անդամների հաջողվում է ճեղքել պաշարման օղակը, դուրս գալ կիրճից: Նրանք նոր դիրքեր են գրավում և կռվում են մինչև վերջին հնարավորությունը[2]:

Նույնպիսի ճակատագիր է վիճակվում նաև Նևրուզի առաջնորդած զինատար խմբին: Նոյեմբերի 18-ին, գիշերվա ժամը 3-ին զինախումբը գետանցում է Արաքսը և ուղղություն վերցնում դեպի Բոցիկի լեռներ՝ հանդիպելու Խանի հեծելախմբին[3]:

Թուրք հրամանատարությունը տեղյակ լինելով հայ մարտական ուժերի երթուղիներին, այս անգամ ևս լուրջ քայլեր է ձեռնարկում խոչընդոտելու նրանց տեղաշարժերն ու թույլ չտալու երկու զինախմբերին միանալու: Հանդիպելով թուրքական զորքին ու քուրդ հրոսակախմբերին՝ Նևրուզը հայդուկներին հրամայում է դիրքեր գրավել և միասնական համազարկերով դիմագրավել հակառակորդին: Զինախմբի հանպատրաստից գրված դիրքերը տևական կռիվներ մղելու համար հարմար ու հուսալի չեն եղել: Այդ պատճառով Նևրուզը զինախումբը բաժանում է երկու մասի և 27 մարտիկներ բարձրանում և հարմարավետ դիրքեր են գրավում մերձակա բլուրի վրա: Հակառակորդը մոտեցնում է թնդանոթները և սկսում ռմբակոծել հայդուկների դիրքերը:

Այդ դեպքերի ողջ մնացած մասնակիցների պատմածների վկայությամբ, այն պահին, երբ հակառակորդը սկսում է թնդանոթներից կրակ տեղալ հայդուկների դիրքերին, զինախմբի անդամներից մեկը՝ ջավախքեցի Շեկ Համոն, որը ծառայել էր ռուսական բանակում և պրոֆեսիոնալ զինվորական էր, նկատելով հակառակորդի պատրաստությունները՝ զինակիցներին հրահանգում է. «-

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 8, էջ 155:
[2] Մանրամասը տե՛ս Գեւորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 296- 303:
[3] Տե՛ս Յեղափոխական Ալպոմ, 1969, թիւ 122, էջ 318-319:

Տղե՛րք, ձեզ հետեւյալ աշխատանքը կա: Որուն դիրքը խորունկ չէ գետնի մեջ, թող ճանկով, սվինով խորացնե: Որուն խորունկ է, թող գլուխը չհանի...Երբ սուլոց փչեմ, այն ժամանակ մեր գործը կբացվի»[1]:

Երկու ժամ շարունակ թուրքերը թնդանոթներից կրակ են տեղում հայդուկների դիրքերի վրա: Հայդուկները հուսալիորեն խրամատավորվում են և չեն պատասխանում հակառակորդի գործողություններին: Թուրքերը կարծելով, որ իրենց հաջողվել է ոչնչացնել հայ մարտիկներին, անկազմակերպ անցնում են հարձակման: Երբ նրանց արդեն բաժանում էր 200 քայլ, հնչում է Շեկ Համոյի ազդանշանը «... ու ահա թնդանոթները լռած են ու համազարկերը սկսած, եւ ցորենի արտերու պես զորքի խիտ սյունակները կհնձվին»[2]:

Բլուրի վրա դիրքավորված 27 հայդուկների համար դժվարագույնը եղել են ոչ թե թնդանոթների հարվածներն ու թուրք զինվորների գրոհները, այլ՝ ծարավը: Բլուրի վրա ոչ մի աղբյուր չի եղել: Հայդուկները, նեղվելով ծարավից, հարկադրված թողնում են դիրքերը և միանում ներքևում դիրքավորված զինակիցներին: Իջնելու ժամանակ 27 հայդուկներից 7-ը զոհվում են[3]:

Առաջին օրվա մարտի արդյունքները գոհացուցիչ էին: Թեև հայդուկները նույնպես զոհեր են ունենում, բայց թշնամու կորուստները անհամեմատ ավելին էին: Թշնամին, լքելով մարտադաշտը, հայդուկների տնօրինությանն է թողնում զգալի քանակության զենք ու զինամթերք: Այդ օրը հայդուկները աննահանջ մարտնչում են մինչև գիշերվա ժամը 12-ը:

Թուրքական զորքերն ու քուրդ զինյալները, չնայած առաջին օրվա կռվում կրած անհաջողությանն ու զոհերին, արագորեն համալրվում էին օգնության եկած զորամասերով: Իսկ միակ մարտական ուժը, որը պետք է օգնության հասներ Նևրուզի զինախմբին, Խանի հեծելախումբն էր, որը դաժան մարտեր էր մղում թշնամու դեմ: Սթափ գնահատելով ստեղծված կացությունը՝ Նևրուզն ու զինակիցները որոշում են թողնել դիրքերն ու շարժվել ռուս-թուրքական սահմանը: Զինախումբը գիշերով թողնում է դիրքերն ու շարժվում դեպի սահմանը, որն ընդամենը 20 կմ էր հեռու մարտադաշտից[4]:

Նևրուզի զինախմբի հետագա գործողությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել: Վերոհիշյալ վավերագրում նշվում է, որ զինախմբի հայդուկները դեպի ռուսական սահմանը շարժվելիս բախվել են թնդանոթներով զինված թուրքական մեծաքանակ զորքի և քրդական աշիրեթների հետ ու մինչև վերջ մարտնչելով՝ զոհվել[5]:

Նևրուզի մեկ այլ համառոտ կենսագրականում նշվում է, որ ֆիդայիները իջնում են դաշտ և դիրքեր գրավելով՝ կռվում մինչև կեսգիշեր: «Այստեղ, - նշում է կենսագիրը, - կը զարնուի Նէվրուզ եւ խումբին դրօշակակիրը եւ երբ ուրիշ ըն-

[1] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 172:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 3, էջ 325:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 271, գ. 6, էջ 4:
[5] Տե՛ս նույն տեղում:

կեր մը կերթայ դրօշակը փրկելու. ան ալ կը զարնուի... Հայ քաջեր ինկան բոլոր, անհաւասար կռիւի մէջ, խլելով մեծ թիւով գոհեր թշնամիի բանակէն»[1]:

Ուշագրաւ է, որ երբ ռուսական սահմանապահ զորքերի հրամանատարը Բասենում տեղի ունեցած դեպքերի մասին ստույգ տեղեկութիւններ ստանալու նպատակով մեկնում է թուրքական Ղարաքիլիսա, թուրք հրամանատարը տարութիւնը իր դժգոհութիւնն է հայտնում ռուսական կողմին շեշտելով «... որ ռուսները սահմանը կանոնաւոր չեն պահում, որ 600 ֆիդայիներ անցել են, ահագին կոտորած ու աւերած առաջ բերել: Իրենց ասելով 400 մարդ խուժանից ու զինուորներից է ընկել, սպանել է մի հուզարապետ, մի գայմագամ, 3 օֆիցեր, 5 դարաբաշի եւ յայտնի Ռաշիդ փաշայի որդին»[2]:

«Մրրիկ» հեծելախմբի հրամանատար Թորգոմը «Ջրաբերդ»-ի կենտր. կոմիտեին հասցեագրած նամակներից մեկում նշում է, որ իրենց տեղեկութիւններ են հասել մարտախմբերի սահմանն անցնելու մասին: Թորգոմը հայտնում է, որ Հրայր Դժոխքը, տեղեկանալով իրենց օգնության շտապող ուժերի մասին, մեկնել է Դաշտ՝ դիմավորելու մարտախմբերին: Նույն նամակում խմբերի ուշանալու պատճառով հայտնելով իր մտահոգությունը՝ Թորգոմը գրում է. «Ձեր գրածին համաձայն մինչեւ այժմ պէտք է նոր խումբը եկած լինէր մեզ մօտ. չլինի թէ իսկապես քրտերից լսած մեր երեկուայ լուրը ճիշտ է: Քրտերը խօսում են, որ իբր թէ մի հեծելախումբ Բասենում դեպքի է բռնուել տաճկական զօրքերի հետ...»[3]:

Իրոք, զինավառ 150 մարտիկների ներկայությունը կարող էր մեծապես ուժեղացնել ու ամրապնդել լեռնաշխարհի պաշտպանների մարտաշարքերը:

Եղերական վախճան են ունենում ՀՅԴ կազմակերպած Սասուն մեկնող ամենամեծ հեծյալ ու հետեւակ զինախմբերը: Զոհվում են մարտադաշտ մեկնող ազգային-ազատագրական պայքարին զինվորագրված հարյուրավոր հայորդիներ: Թեև այդ օրերին նրանց քաջագործություններն ու նահատակությունը զուտ գործնական առումով, որևէ շոշափելի նպաստ չէին բերում Սասունի ինքնապաշտպանությանը, սակայն զուտ բարոյա-հոգեբանական առումով, ըստ Ա.Ազնավուրյանի «...անչափելի էր այդ խմբերի հերոսական վախճանի հետեւանքով առաջ եկած ոգեւորութիւնն ու հայրենասիրութիւնը... Յուզիչ էր, հոտեւանքով առաջ եկած ոգեւորութիւնն ու հայրենասիրութիւնը... Յուզիչ էր, հոգեպարար այդ օրերին Կարսի երիտասարդութեան ու մանաւանդ աշակերտութեան տրամադրութիւնն ու ոգեւորութիւնը: Նրանք ապրում, սնում ու շնչում էին մեր յեղափոխական մեծ գործի մարտիրոսների յիշատակներով...»[4]:

[1] Տե՛ս Յեղափոխական Ալպոմ, 1969, թիւ 12, էջ 320:
[2] «Դրօշակ», 1903, թիւ 3, էջ 325:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 271, գ. 6, էջ 4:
[4] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 9, էջ 156:

3. 3. Աշոտ Երկաթի մարտական խումբը

Սասունին օգնության շտապող հաջորդ մարտախումբն առաջնորդում է Աշոտ Երկաթը(Արմենակ Լեոնյան): Նա նոր էր վերադարձել Սոֆիայում կայացած ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովից, որտեղ վճռական ձայնի իրավունքով ներկայացնում էր Պուրակը (Ախլաթ), Սալոն Ջորը (Բիթլիս) և Թորգոմի փոխարեն նաև Բարձրավանդակը:

Հայ ժողովրդի ազգային- ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունն ամերկբա մատնանշում է, որ բազմաթիվ են այն հայորդիները, որոնց հերոսականությամբ ու նվիրվածությամբ հագեցած կյանքն ու գործունեությունը վեր են որևէ գովասանքից: Հայրենիքի ազատագրության պայքարին զինվորագրված այդ հրաշալի փաղանգի մեջ իրենց գործունեությամբ առավել նշանակալի հետք են թողել այն անհատները, որոնք մարտական որակներից զատ, օժտված էին ժամանակաշրջանն ու ազատագրական պայքարի յուրահատկությունները ըմբռնելու, ծանրագույն իրավիճակներում անհրաժեշտ վճիռներ ընդունելու վճռականությամբ ու կազմակերպչական կարողությամբ:

Աշոտ Երկաթի գործունեության անգամ փոքր-ինչ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործ ունենք վերոհիշյալ հատկանիշներով օժտված ազգային-հեղափոխական գործչի հետ: Երկաթը իր գործունեությունն առվելապես ծավալել է Ախլաթ գավառում, որը կապող օղակ էր Տարոն, Այրարատ և Վասպուրական աշխարհներին: Ինչպես որ Գուրգենն էր կարևորում Բիթլիսի դերը որպես Տարոնին, Սասունին և Վասպուրականին շաղկապող կամուրջի, այնպես էլ Երկաթն էր կարևորում Ախլաթ գավառի դերը վերոհիշյալ շրջանները միմյանց հետ շաղկապելու և հաղորդակցության ուղիներ հաստատելու գործում: Նրա օրագրում տեղ գտած գրառումները վկայում են, որ նա արդյունավետ գործունեություն է ծավալել կազմակերպելու այդ շրջանների հայ բնակչությանը և մեծ ջանքեր գործադրել զենք ու զինամթերք տեղափոխելու Սասուն և Ախլաթ գավառները[11]:

Իր օրագրում անդրադառնալով Ախլաթ գավառում տիրող կացությանը՝ Երկաթը գրում է. «Երկար տարիներ ի վեր Սերոբեն (Աղբիւր) հետո, հեղափոխութիւնը հոս ոտք կոխած չէր: Կազմակերպութիւնը անկարգ վիճակի մեջ էր, հին ձեւերու վրա հաստատված տակավին: Եկա վերանորոգելու եւ հաստատուն հողի վրա դնելու»[22]:

Կարելի է ասել, որ Աղբյուր Սերոբի և Գուրգենի նահատակությունից հետո Բիթլիսի նահանգում հաստատված ՀՅԴ գործիչներից ոչ մեկը այնպիսի արդյունավետ գործունեություն չի ծավալել Սասուն և Ախլաթ գավառներում, ինչպես Երկաթը: Երկրում գործելու կարճատև ժամանակահատվածում, ճիշտ գնահա-

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 5, էջ147-179:
[2] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 166:

տելով Ախլաթի դերն ու նշանակությունը Երկաթը իր գործունեության գլխավոր ուղենիշը դարձնում է այդ գավառի զինումն ու կազմակերպումը:

Երկիր զենք տեղափոխելն ու ժողովրդին զինելը ամենակարևոր և դժվարին խնդիրն էր: Զենք և զինամթերք Երկիր տեղափոխելու նախկին միջոցները, ինչը միանշանակորեն ապացուցում էր ժամանակը, արդյունավետ չէին: Գործելով Ախլաթ գավառում, Երկաթը զենք տեղափոխելու համար բացում է նոր, թշնամու համար անծանոթ ուղիներ, կարողանում է կարճ ժամանակում Սասուն տեղափոխել զգալի քանակության զենք ու զինամթերք:

«Երկաթ,- գրում է Ռուբենը,- եղաւ կազմակերպողը հաղորդակցութեան: Զայն Սասունէն ճամբած էին փոխարինելու Վարդգէսը (Հովհաննես Սերենգուլյան, Հ.Յ. Դաշնակցության ներկայացուցիչն էր Վանում, 1902 թ. ամռանը ձերբակալվում է և բանտարկվում Վանում, ապա՝ Տիգրանակերտում- Հ.Գ.), բայց Վան չանցաւ, մնաց Ախլաթ: Ան գիտակ, որ առանց Ախլաթի Սասուն չի կրնար կապուիլ Վանի հետ եւ օժանդակութիւն ստանալ, նախ ապահովեց այդ շրջանը եւ ... հաղորդակցութեան ուղիներ ստեղծեց.

1. - Թադեոս Առաքեալ- Աբաղա - Լիմ - Կտուց անապատները եւ Վանայ ծովով ուղիղ Ախլաթ:

2. - Երեւան - Միրզաջան - Ախլաթ, զոր Քոլեցի Պողոս (Թոխմախ) կը կառուարեր:

3. - Ախլաթ - Մանազկերտ - Կարս գիծը հաստատեց:

4. - Վանի հետ սովորական ճամբաները պահեց» [13]:

Հաղորդակցության նոր ուղիներ բացելով՝ Երկաթն առավել արդյունավետ ու ապահով հիմքերի վրա դրեց նաև զենք և զինամթերքի առաքման միջոցները:

«Սասունը,- Վկայում է Ռուբենը,- որ ուշադրութեան առարկայ էր, որ կը համարուէր ֆետայիներու կեդրոն, հազիւ 30 զէնք ունէր կուսակցութեան տրամադրելի, իսկ 1904-ի ապստամբութեան ատեն, հազիւ ան հաշուէր 150 զէնք, իհարկէ, բացի ժողովրդական, խմբական զէնքէրէն: Այդ առաւելագոյն թիւէն 70 զէնքը Երկաթի Ախլաթէ ճամբած զէնքէրն էին... » [24]:

Փաստորեն, համաձայն այս տվյալների, ստացվում է, որ Սասուն առաքած զենքերի գրեթե կեսը այնտեղ է հասել շնորհիվ Երկաթի:

1903 թ. 12 անդամներից բաղկացած խմբով Երկաթը գործում է հիմնականում Ախլաթում և կապեր հաստատում հարևան շրջանների ՀՅԴ կառույցների ու գործիչների հետ: Հարևան գավառների հեղափոխական կառույցների գործունությունները համադրելու և միասնաբար գործելու ծրագրերը մշակելու նպատակով նա նույն տարվա ամռանը Հրայրի ընկերակցությամբ մեկնում է Վան՝ հանդիպելու Վարդգեսի և ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեի հետ [3]:

Հրայր Դժոխքն ու Վարդգեսը, ինչպես հայտնի է, ընդհանուր ապստամբության կազմակերպման արմատական տեսաբաններն էին ու կողմնակիցները:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 5, էջ147-179:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Յուշապատում...», էջ 418:

կարելի է եզրակացնել, որ նրանց հանդիպումն անտարակույս պիտի նպատակառղղված լիներ ընդհանուր ապստամբության կազմակերպման խնդիրների և ծրագրի մշակմանն ու լուծմանը: Այդ ժամանակաշրջանի նշանավոր գործիչներից միայն Հրայրը և Վարդգեսը չէին, որ խորապես ըմբռնել ու պաշտպանում էին ընդհանուր ապստամբության կազմակերպման գաղափարը: Նույն տեսակետն է դավանել նաև Աշոտ Երկաթը:

Համաձայն ՀՅԴ 2-րդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ ուժերի կենտրոնացման վայրը Սասունն էր: Թուրք իշխանությունները խստորեն վերահսկում էին Սասուն տանող ուղիները և այդ պայմաններում հնարավոր չէր մեծ քանակությամբ զենք տեղափոխել ու զինել ժողովրդին: Երկաթը իրավացիորեն գտնում է, որ ճիշտ չէ մեկ վայրում մարտական ուժերի ու զենքերի կենտրոնացումը: Նրա կարծիքով համանման իրավիճակում հակառակորդին ավելի մեծ հնարավորություն է ընձեռվում հեշտությամբ խոչընդոտել ու խափանել մարտական ուժերի և զենքի տեղափոխման ձեռնարկումները:

«Զենք կրնար ըմբռնել,- ասել է Երկաթը,- որ չկենտրոնանալով մեկ կետի վրա եւ բոլոր մնացած գավառների մեջ ալ ծավալվելով կտարածենք այնտեղ բնակվող զանգվածներու մեջ մեր գաղափարները եւ մենք այդպիսով ավելի կզորանանք, իսկ թշնամին, ընդհակառակը կտկարանա, չկրնալով որոշել թե ո՛ւր կզարնե» [16]:

Զենք ձեռք բերելու հարցում ժողովրդի մեջ արմատավորվել էր այն վնասակար մտայնությունը, որ իրենք պիտի զինվեին միայն հեղափոխական կազմակերպությունների աջակցությամբ և որևէ քայլ չէին ձեռնարկում զենք ձեռք բերելու համար: Ազատագրական պայքարը պետք է համաժողովրդական ընդգրկումներ ունենար և որևէ կազմակերպություն, ինչքան էլ հզոր լիներ, միևնույն է, չէր կարող լուծել ժողովրդին զինելու խնդիրը: Երկաթը օրագրում գրում է.«Ժողովուրդը, մարտական տեղական խումբերը, իրենց միջոցով, իրենց դրամով պիտի զինուին, կուսակցութեան օժանդակութեամբ...» [27]:

Եթե ժողովուրդը հասկանար և ճիշտ գնահատեր զինվելու նշանակությունն ու անհրաժեշտությունը, ապա անհամեմատ ավելի դյուրին կլիներ լուծել նրան զինելու խնդիրը: Իսկ ցանկության ու խելամիտ գործելու դեպքում կարելի էր զենք ձեռք բերել նաև Երկրում, հենց թուրքերի ու քրդերի միջոցով:

Մի էական հանգամանք ևս. գրեթե բոլոր գավառներում հայ գյուղացիների առաջնահերթ պահանջը մեկն էր՝ զենք: Նույնիսկ այն վայրերում, ուր հաստատվել ու գործում էին ՀՅԴ կազմակերպություններ, զենքի քանակը խիստ սահմանափակ էր: Ո՞ւմ պիտի վստահեին մեծ դժվարությամբ Երկիր հասցրած զենքերը:

«Ամէն անգամ,-գրում է Երկաթը,- որ հոս կը հանդիպին կազմակերպական զէնք կուզեն: Ես ալ միշտ նոյն պատասխանը կու տամ. «չի կարելի տալ»:

[1] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 249:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 5, էջ178:

Սկզբունքով դեմ եմ այդ հին մեթոդին, որուն տակ բոլոր կազմակերպական ապրանքները ժողովուրդին տուին եւ վտանգի մը ժամանակ բոլորն ալ կորան ծախուելով կամ փչացնելով: Համոզումս է, որ կազմակերպութեան գէնքը զինուորի ձեռք միայն պէտք է տրուի, իսկ ժողովուրդը ինքը հայթայթելու է իր ինքնապաշտպանութեան համար պէտք եղածը»[1]:

1903 թ. նա մեկնում է մասնակցելու ՀՅԴ. 3-րդ Ընդհանուր Ժողովին: Ելնելով ապստամբության նախապատրաստմանը ուղղված աշխատանքներից՝ Երկաթը, մինչ ապստամբությունը սկսելը, համոզված է եղել, որ այն դատապարտված է պարտության: Այդ պատճառով նա ձգտում է, որ մինչ ապստամբություն սկսելը Սասունում հաստատվեն այնպիսի մարտական ուժեր, որոնք կարողանան համերաշխություն հաստատել միմյանց նկատմամբ անհանդուրժողականությամբ տրամադրված գործիչների միջև և կռիվները սկսվելու դեպքում կարողանան երկարատև դիմադրություն ցույց տալ: Նրա համոզմամբ մարտական այն ուժը, որն ի զորու էր հաջողությամբ առաջնորդել Սասունի մարտական ուժերը, Նիկոլ Դումանն է: Համաձայն Ռուբենի՝ Երկրից Երկաթի դուրս գալու գլխավոր պատճառներն էին.

«1. Գտնել հեղինակաւոր լիազօրուած մարդիկ՝ Սասնոյ մէջ եղած անհարթութիւններուն վերջ տալու եւ Վանի մէջ եղած անտիրութիւնը, Վարդգէսի բռնուէլեն յետոյ, վերացնելու:

2. Սասունը պաշարուած է, դրամ հասցնելու:

3. Սասունը պաշարուած է, զենք եւ զինուորական հասցնելու:

4. Ընդհանուր ժողովին մասնակցելու եւ ընդհանուր կարգ հաստատելու»[2]:

3-րդ Ընդհանուր Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել է նաև Նիկոլ Դումանը: Մեզ ծանոթ որևէ փաստաթղթում նշված չէ, թէ արդյոք ժողովի ընթացքում Երկաթը Դումանին առաջարկե՞լ է Սասուն մեկնելու և այնտեղի մարտական ուժերի ղեկը ստանձնելու իր տեսակետը, բայց, համաձայն Ռուբենի վկայության, «Ան գտաւ լիազոր հեղինակաւոր անձը՝ Նիկոլ-Դումանը, Երկրի բոլոր գործերը կարգի բերելու համար...»[3]:

Ընդհանուր Ժողովն ավարտելուն պես Երկաթը շտապում է Կովկաս, որտեղից մարտախմբով պիտի անցներ Սասուն:

1904 թ. գարնանը Ալեքսանդրապոլում տեղի են ունենում ռազմական խորհրդաժողովներ: Հայ ազատագրական պայքարի մի շարք անվանի մարտական գործիչների՝ Գայլ Վահանի, Կայծակ Վաղարշակի, Որսորդ Գևորգի, Քղեցի Պողոսի (Թոխմախ) և այլոց մասնակցությամբ տեղի ունեցած ժողովներին մասնակցել են նաև Աշոտ Երկաթն ու Ռուբեն Տեր-Մինասյանը: Ուշագրավ է Ռուբենի ներկայացրած ազատագրական պայքարի երկու հանրահայտ գործիչների՝ Կայծակ Վաղարշակի ու Աշոտ Երկաթի երկխոսությունը, որը հստակորեն ընդգծում է ազատագրական պայքարի կազմակերպման վերաբերյալ նրանց սկզբունքները: Երկաթը, մի շարք հարցերի վերաբերյալ արտահայտելով իր տեսակետը, թեպագնահատում է միայն Սասունի և Վանի վրա ուշադրություն կենտրոնացնելու ռազմավարությունը: Նա հանդիպման մասնակիցների առջև բացում է իր ձեռքով գծագրած Ախլաթի, Նեմրութի, Գրգուռի և Բիթլիսի քարտեզը և, դիմելով ներկաներին, ասում. «Նայեցեք այս քարտեզին. առանց այդ տեղերը ամրացնելու (նկատի ունի Ախլաթը, Նեմրութը, Գրգուռը և Բիթլիսը- Հ.Գ.), առանց զանոնք տիրապետելու, ի՞նչ արժեք ունի Սասունն ու Վանը: Անոնք անջատ-անջատ մասեր են, առանձին-առանձին խեղդվելիք նահատակներ եւ ուրիշ ոչինչ»[1]:

Հանդիպմանը ներկա գտնվող Կայծակ Վաղարշակը թեպետ ընդունում է Աշոտ Երկաթի տեսության խելացիությունն ու օգտակարությունը, բայց չի պաշտպանում այն՝ պատճառաբանելով, որ «... թե Դուրան եւ թե Սասուն մահվան սպառնալիքի տակ են, անոնք դրամ չունին, պետք է դրամ հասցնել, անոնք գլուխ չունին, պիտի գլուխ հասցնել, անոնք փամփուշտ չունին, պետք է փամփուշտ հասցնել, անոնք զենք չունին, պետք է զենք հասցնել: Եթե ատոնք չհասցնենք, ամենքն ալ պիտի մեռնին...»[2]:

Կայծակ Վաղարշակը նույնպես իրավացի է: Իրոք, Սասունին կենսականորեն անհրաժեշտ էր ցույց տալ բազմապիսի օգնություն, առաջին հերթին ռազմական աջակցություն: Երկաթը բնավ դեմ չէր Սասունին օգնություն ցուցաբերելու ձեռնարկումներին: Նրա կարճատև, բայց արգասաբեր գործունեությունը վերը նշվածի լավագույն ապացույցն է: Սակայն ազատագրական պայքարն արդյունավետ կազմակերպելուն ուղղված նրա խորհրդաստ տեսակետները այդ ժամանակ շատերի համար դեռևս անըմբռնելի էին ու անհասկանալի: Ներկայացնելով Երկաթի հետ ունեցած միակ հանդիպման թողած տպավորությունը՝ Ռուբենը գրում է. «Իմ առջեւ ցցված էր մարդ մը, որուն մէջ կեռար զգացմունքը, որուն մէջ պայքար կար բանականության եւ զգացմունքի միջեւ, որոնք ի վերջո կհամաձայնեին իրարու հետ ի շահ հանրության եւ ի վնաս անձնական գոյության: Երկաթը ինձ մեծ կթվեր»[3]:

1904 թ. մայիսի կեսերին Երկաթն, առաջնորդելով ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպված 35 մարտիկներից բաղկացած զինախումբը, մեկնում է Սասուն: Զինախմբի կազմում Երկաթի ընկերակցությամբ Սասուն է մեկնում նաև Թոխմախը (Քղեցի Պողոս կամ Գեղեցիկ Պողոս): Երկաթի գլխավորած զինախումբը Սասուն պիտի մեկներ Երևան-Իգդիր-Ալաշկերտ-Արծեշ-Ախլաթ-Սասուն երթուղով: Ի դեպ, դա այն ուղին է, որտեղով Երկաթն ու Թոխմախը զենք տեղափոխել[4]:

---

[1] Նույն տեղում, էջ 56:
[2] Նույն տեղում, էջ 176:
[3] Նույն տեղում:

[1] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 249:
[2] Նույն տեղում, էջ 250:
[3] Նույն տեղում, էջ 252:
[4] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1938, թիւ 4, էջ 136:

Մայիսի կեսերին զինախումբը գետանցում է Արաքսը և առանց որևէ միջադ-
պի անցնում ռուս-թուրքական սահմանը: Ուղևորության ինն երրորդ օրը զին-
խումբը հասնում է Արճեշ գյուղաքաղաքի մերձակա հայկական Սոսկուն գյուղ-
մոտերքը և որոշում դադար առնել Խոջալու հովտի քարայրներից մեկում: Երկ-
կարատն ճանապարհից հետո զինախմբի սենդամքերքի պաշարը սպառվում է:
Հաց բերելու նպատակով Թոխմախը երկու ուղեկիցներով գնում է գյուղ, բայ-
«... գիւղ չհասած, հանդիպում են քրդերի եւ որովհետեւ անզէն են լինում, ընդ-
նում են նրանց ձեռքը. բարբարոսները անմիջապէս դանակներով մորթում են
Պօղոսին(Թոխմախ), որը յեղափոխական հին հայդուկներից էր. Ապրօյին
վիրաւորում եւ բանտարկում են, իսկ միւս Ապրօն աջողւում է փախչել ու խմբի
պաշար հասցնել»[1]:

Թոխմախը հայտնի անուն էր հայ ազատագրական պայքարում: 1902 թ. նրա
հաջողվել էր զինատար խմբով Կարս-Իգդիր-Ալաշկերտ-Մխլաք գծով զենք տե-
ղափոխել Մխլաք: Նրա գործունեության կենտրոնավայրը Ծաղկանց լեռներ-
էին, որտեղից նա կարողանում էր կապեր հաստատել շրջակա քուրդ աշիրեթնե-
րի հետ և երբեմն նրանց աջակցությամբ զինամթերք տեղափոխել Մխլաք: Հաս-
տատվելով Մխլաք գավառում Երկաթը զենքերի տեղափոխությունը իրականաց-
նում էր նաև Թոխմախի աջակցությամբ:

«Ջրաբերդի կենտրոնական կ-ին» վերնագրած Թորգոմի նամակից(Բարձրա-
վանդակ սեպ. 15-ին 903թ.) պարզվում է, որ Թոխմախը իր գոհվելուց մի քանի օր
առաջ դարձյալ կարողացել էր զենք ու զինամթերք հասցնել Սասուն[2]:

Քրդերը հայդուկների ներկայության մասին հայտնում են մերձակայքում
բնակվող քուրդ աշիրեթներին, որոնք գալիս ու պաշարում են զինախմբի ա-
պաստանած քարայրը, որը գտնվում է Արճեշից ընդամենը 10կմ. հեռավորութ-
յան վրա:

Ամբողջ օրը հայդուկների և քրդերի կռվից միմյանց վրա տեղացող կրա-
կոցները որևէ արդյունք չեն տալիս: Քրդերը մարտադաշտում հայտնվա-
թուրք զինվորների և ոստիկանների աջակցությամբ ամուր շրջափակում են
քարայրը և անընդմեջ կրակոցներով հնարավորություն չեն տալիս հայդուկնե-
րին դուրս գալու քարայրից: Այդ դժվարին իրավիճակում Երկաթը կիրառում է
կռիվը շարունակելու մի մարտավարություն, որը կարող էր հնարավորություն
տալ հայդուկներին դուրս գալու պաշարումից:

Ամբողջ օրը,-նշում է «Դրօշակ»-ը, - այդ ձեւով անցկացնելուց յետոյ, երե-
կոեան խմբապետի հրամանով՝ երկու հոգի փորձում են դուրս գալ այրից եւ մի
քիչ շփոթութիւն ձգել թշնամու մէջ...»[3]:

Երկաթի մարտավարությունը հաջողվում է: Քարայրից դուրս եկած մար-
տիկների կրակոցները շփոթություն են առաջացնում: Օգտվելով դրանից՝ զի-

[1] «Դրօշակ», 1905, թիւ 3, էջ 60:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ328:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 687, գ. 57, էջ 2-3:

նախումբը արագորեն դուրս է գալիս քարայրից և փորձում հեռանալ: Այդ
պահին տեղի է ունենում մի պատահար, որը վճռում է կռվի ելքը:

Ըստ Ռուբենի «... գնդակ մը կիյնայ այն վայրին մէջ, ուր կը գտնուէր Երկաթը
եւ կը դպնայ ձեռնառումբի մը, որ կը պայթի եւ իրեն հետ կը պայթեցնէ վառօդի
եւ ռումբի շեղջերը: Այրը իր մէջի մարդկանցով տեղէն կը ցնցուի եւ քարաժայռե-
րը ֆետայիներու արյունոտ դիակներու կըտորտուանքներ կը ժայթքեն, թողնե-
լով իրենց տակ ոստիկաններու եւ քրտերու դիակներ եւս»[1]:

Երկաթի և նրա զինակիցների գոհվելու իրողությունը փոքր-ինչ այլ կերպ է ներ-
կայացնում այդ կռվի մասին պատմող վավերագրությունը: Երկաթի խումբը
զինատար էր: Խմբի անդամներից յուրաքանչյուրը, բացի իր զենքից ու փամ-
փուշտներից, կրում էր լրացուցիչ փամփուշտներ և պայթուցիկ նյութեր: Քարայ-
րից դուրս գալու պահին զինախմբից զանազան պատճառներով բացակայել են 6
մարտիկներ: Երկաթը որոշում է բացակայողների բեռները հավաքել քարայրի
անկյունում և դուրս գալու պահին ռումբերի երկար պատրույգը վառել ու պայթեց-
նել քարայրը: Զինախումբը դուրս է գալիս ու քրդերն անմիջապես ներխուժում են
քարայրը և այդ վայրկյանին «...ռումբերի ահռելի պայթումը քարուքանդ է անում
այրը և տեղն ու տեղը գետին փռում 20-ի չափ քրդի դիակներ...»[1]:

Սարսափելի պայթյունից ահաբեկված քրդերը, խուճապի մատնվելով, դիմում
են փախուստի, իսկ ողջ մնացած 7 հայդուկները դուրս են գալիս պաշարման օ-
ղակից և հարմար դիրքեր գրավելով՝ սկսում են գնդակահարել քրդերին:Համա-
ձայն վավերագրի և «Դրօշակ»-ի հոդվածագրի՝քարայրի պայթյունից և հայդուկ-
ների գնդակներից սպանվում են 55 քուրդ զինյալներ ու թուրք ոստիկաններ, իսկ
զինախմբից ողջ են մնում ընդամենը 7 հայդուկներ:

«Ընկածների մէջ էր և Աշոտ Երկաթը...»[220]:

Զինախմբի ողջ մնացած 7 մարտիկները բարձրանում են լեռը և շարունակում
կռիվը: Կռիվներում Երկաթի զինախմբի մարտիկներից առավելապես աչքի է
ընկնում ռուսական բանակում ծառայած Քանաքեռցի Գասպարը: Հայդուկնե-
րը գիշերը մնում են լեռան վրա: Լույսը բացվելուն պես, ուղեցույց ընդունելով
Մասիս սարը՝նրանք առաջ են շարժվում և փորձում կտրվել հետապնդողներից:
Քրդերը, հայդուկներին գերի վերցնելու մտադրությամբ, շարունակում են հե-
տապնդել ու առաջարկում անձնատուր լինել: Հայդուկները թեպետ սակավա-
թիվ էին և խիստ հոգնած, այնուամենայնիվ, շարունակում են կռիվը: Անընդմեջ
ընթացող մարտերում գոհվում են խմբի ևս 5 անդամներ: Գասպարը, ողջ մնա-
ցած մեկ այլ հայդուկի զինակցությամբ, հաջորդ օրը դարձյալ կռվի է բռնվում
քրդերի հետ և փորձում առաջ շարժվել Մասիսի ուղղությամբ: Շուտով գոհվում
է նրա զինակիցը, իսկ նա վիրավոր, կիսամեռ վիճակով գերի է ընկնում:

Քրդերը, «...անոր անսահման քաջութեան ի պատիւ չեն սպաններ զայն, այլ կը
խնամեն ու կը տանին Պայազիտի փաշային նուէր: Մինչեւ Սահմանադրութիւն,

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 687, գ. 57, էջ 2-3:
[2] Նույն տեղում:

Դասպար կը մնայ բանտին մէջ, յետոյ կազատուի: Յայտնի չէ թէ ի՞նչ եղաւ այդ հերոսը: Քրտերու երգերուն մէջ մինչեւ այժմ ալ կը փառաբանուին անոր քաջագործութիւնները»[1]:

Ողբերգական վախճան ունեցաւ Սասունի պաշտպաններին օգնության չտապող ևս մի զինատար խումբ: Հայդուկներին մարտադաշտ առաջնորդող Աշոտ Երկաթն այն բազմաշնորհ ու կարող ազգային-հեղափոխական գործիչն էր, որը կարող էր Բիթլիսի և Վանի նահանգներում հաջողությամբ փոխարինել Հրայր Դժոխքին, Գուրգենին ու Վարդգեսին և անգնահատելի ծառայություն մատուցել Հայոց Ազատամարտին:

3. 4. Կայծակ Վաղարշակի «Դժոխք» զինատար հեծելախումբը

Բուլղարիայի մայրաքաղաքում կայացած ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովի ավարտից հետո Կայծակ Վաղարշակն անմիջապես գալիս է Կարս: Թեև Սասունում մարտական հիմնական գործողությունները դեռևս չէին ծավալվել, սակայն նա շատ լավ գիտեր իր հայրենի Տարոնում, ինչպես նաև Սասունում տիրող իրավիճակը և ձգտում էր օր առաջ մեկնել ու անհրաժեշտ օգնություն հասցնել զինակիցներին: Նա, ի տարբերություն մյուս գործիչների, կրկնակի պարտավորություն էր զգում հայրենակիցների նկատմամբ:

Կայծակ Վաղարշակը (Վաղարշակ Բաղդասարյան) Տարոնի առավել հայտնի ազգային գործիչներից է: Նա ծնվել է 1875 թ. Մուշ քաղաքում և ուսանել տեղի Ներսիսյան վարժարանում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ ու որպես պարգև ստացել «ոսկե խաչ» մրցանակը[2]:

Չնայած ուսումնառության ընթացքում դրսևորած փայլուն ընդունակություններին և ձեռք բերած հաջողություններին, նրան ուսումն առանձնապես այնքան էլ չի հետաքրքրել: Նկատի ունենալով այդ իրողությունը՝ «Յուշապատում»-ում նրա կենսագիրը նշում է.« Յաղթանդամ, ուժեղ եւ աշխոյժ՝ նա աւելի սիրում էր զէնքն ու որսորդութիւնը, քան գիրքն ու գիտութիւնը: Եվ արդէն պատանի հասկից, հրացանը ձեռքին, թափառում էր լեռներում ու ձորերում, յաճախ, ընդհարուելով հասակակից քրդերի հետ»[3]:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 329:
[2] Տե՛ս «Յուշապատում...», էջ 462:
[3] Նույն տեղում:

Մի օր նա հանդիպում է Արաբոյի զինակից Լեոնին, որն էլ պատանի Վաղարշակին պատմում է նշանավոր հայդուկի ու նրա քաջագործությունների մասին: Լեոնի պատմածները ազատատենչ պատանու մեջ սերմանում են ազատագրական պայքարի գաղափարներ: Նա Արաբոյի օրինակով կազմում է մի փոքրիկ հայդուկային խումբ և շնորհիվ իր համարձակ գործողությունների շատ շուտով քաջ ֆիդայու ճանաչում է ձեռք բերում տարոնահայության ու քրդերի մեջ:

Տարոնում Դաշնակցության հաստատվելու օրից նա զինվորագրվում է այդ կուսակցությանը և սերտ կապեր հաստատում ու համագործակցում Հրայր Դժոխքի, Աղբյուր Սերոբի, Գևորգ Չավուշի, ապա նաև Անդրանիկի հետ:

Աբդուլ Համիդի սանձազերծած ջարդերի տարիներին Վաղարշակը զենքը ձեռքին իր մարտական ընկերների համագործակցությամբ թուրք-քուրդ հրոսակախմբերից պաշտպանում է Տարոնի հայկական գյուղերը: Ըստ «Յուշապատում»-ի «...նրան է պատկանում Առաքելոց վանքի յանդուգն ձեռնարկի գաղափարը: Անդրանիկի հետ Վաղարշակը վարեց Առաքելոց վանքի դիւցազնական կռիւը, բանակցութիւնները թուրք իշխանութիւնների հետ...»[1]:

Առաքելոց վանքի հանրահայտ կռվից հետո Վաղարշակը ՀՅԴ «Դուրան - Բարձրավանդակ» կենտր. կոմիտեի, անձամբ Հրայր Դժոխքի հանձնարարությամբ մեկնում է Կովկաս, որտեղից պիտի կազմակերպեր մարտական ուժերի, զենք ու ռազմամթերքի տեղափոխությունը Սասուն:

1903 թ. Թորգոմի գլխավորած «Մրրիկ» մարտախմբի կազմում նա վերադառնում է Սասուն, սակայն նույն տարում ՀՅԴ «Դուրան -Բարձրավանդակ» կենտր. կոմիտեի և Սասունի Զինվորական մարմնի հանձնարարությամբ Թորգոմի հետ վերադառնում է Կովկաս: Վաղարշակը ոչ միայն պիտի կազմակերպեր մարտական ուժերի, զենքի տեղափոխությունը, այլև մասնակցեր Սոֆիայում կայանալիք ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովին: Նա որպես Դուրանի պատգամավոր «...ընդարձակ զեկուցում է ներկայացնում Երկրի եւ, ի մասնաւորի, Մուշ-Սասունի վիճակի եւ գործերի մասին»[2]:

Ավարտվում է ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը և ինչպես արդեն նշվել է, նա անհապաղ վերադառնում է Կարս, ուր Երկիր մեկնելու նպատակով շարունակ հավաքվում էին բազմաթիվ կամավորներ: Կարսի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի համաձայնությամբ Վաղարշակը կազմակերպում է հեծյալ մարտական խումբ, որը ստանում է «Դժոխք» անվանումը:

Հեծյալ մարտախմբի նախապատրաստական աշխատանքներին «Ջրաբերդ» կենտր. կոմիտեի հանձնարարությամբ մասնակցում է Արամայիս Ազնավուրյանը, որը գործի բերումով գտնվելով Կուրսկի նահանգում, իր մասնակցությունն է ունեցել գրեթե բոլոր մարտական և զինատար խմբերի կազմակերպման աշխատանքներին:

[1] Նույն տեղում, էջ 463:
[2] Նույն տեղում:

Ա.Ազնավուրյանը, մոտիկից շփվելով Կարսից Երկիր մեկնող բազում անվանի գործիչների հետ, ուշագրավ հուշերի հոդվածաշար է տպագրել «Հայրենիք» ամսագրում:

Կայծակ Վաղարշակի հետ Ա. Ազնավուրյանը ծանոթացել է հենց Կարսում և առաջին տպավորությունը եղել է շատ ջերմ:

«Ինքը, - նշում է Ա. Ազնավուրյանը, - թէեւ քաղաքացի ու մտաւորական, սակայն, լաւագէս ծանօթ էր զէնք գործածելուն. թէեւ շատ համեստ ու լռակեաց էր, սակայն, իր զարմանալի քաղցր բնաւորութեան պատճառով դարձել էր ընկերական շրջանների ամենասիրելի անձերից մեկը» [1]:

Մինչ Վաղարշակը Կարսի ընկերների համագործակցությամբ կհասցներ վերջնականապես կազմավորել հեծելախումբը, արդեն Սասուն էին մեկնել, բայց անհաջողության մատնվել Խանի, Օնիկ Ներուզի, Աշոտ Երկաթի, Նիկոլ Դումանի և Փոխիկի գլխավորած մարտախմբերը[2]*:

Մարտական խմբերի անհաջողությունները, ինչ խոսք, հստակորեն մատնանշում էին Երկիր մեկնելու հետ կապված մեծագույն դժվարությունները, բայց Վաղարշակը այլընտրանք չուներ: Հարկավոր էր հաղթահարել ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտները և հասնել Սասուն:

«Դժոխք» հեծելախումբը, ըստ Ա. Ազնավուրյանի, պետք է բաղկացած լիներ 40 մարտիկներից եւ քանի որ ձիավոր մարտախումբ էր, ուստի անհրաժեշտ էր բացի զենքերից, ձեռք բերել նաև համապատասխան քանակի ձիեր, թամբեր և խուրջիններ:

«Վաղարշակը, - շարունակում է Ա.Ազնավուրյանը, - ինքը նաեւ հիանալի ձի հեծնող էր եւ գիտէր իր գործն ու խմբի այս ձեւի կարիքները: Ուստի համարեա բոլոր գնումների ժամանակ նա ինձ հետ էր եւ իր տեղին ցուցմունքներով ու խորհուրդներով շարունակ օժանդակում էր ինձ» [3]:

«Դժոխք» ձիավոր մարտախմբի հավաքատեղին եղել է Կարսի շրջանի Բերնա եւ Դոլբանտլի գյուղերը:

Պիտի նկատել, որ այդ օրերին Կարսի շրջանի հայկական գյուղերը գործում մասնակցություն են բերել մարտախմբերի կազմակերպմանը: Նրանցից շատերը մեծ ցանկություն են հայտնել իրենց գյուղում տեղավորել ու կերակրել Երկիր մեկնող խմբերին: Ա. Ազնավուրյանը պատմում է, որ գյուղերից շատերը նույնիսկ դժգոհում էին, երբ խմբերի տեղավորումն ու ճանապարհումը իրենց չէին վստահում: Որպես օրինակ նա վկայում է Բերնա գյուղը, որտեղ գյուղացիները դժգոհություն էին հայտնել Խանի ձիավոր խմբից, «...թէ ինչո՞ւ գիւղին պատիւ չէին արել եւ խմբի զինուորներն ու ձիերը իրենց գիւղը չէին ուղարկել սպասելու՝ մինչեւ խմբի մեկնելը:

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 11, էջ 149:
[2]* Նիկոլ Դումանի և Փոխիկի գլխավորած մարտախմբերի մասին մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան, «Նիկոլ Դուման», Երևան, 2002, էջ107-140:
[3] Նույն տեղում:«Հայրենիք» ամս., 1938, թիւ 11, էջ 149:

- Մենք Օրթաղալայի եւ Բայբուրդի (Կարսի հայկական գյուղերից են- Հ.Գ.) չափ չկա՞նք, ի՞նչ է, որ այնտեղ տեղաւորեցիք ու այնտեղից ճանապարհ դրիք խանի խումբը» [1]:

Ընդառաջելով գյուղացիների ցանկությանը հեծելախումբը տեղավորվում է Բերնա և Դոլպանտլու գյուղերում: Նույնիսկ այն օրերին, երբ հեծելախմբի անդամներն արդեն տեղաբաշխվել էին վերոհիշյալ գյուղերում, կամավորների հոսքը չէր դադարում:

«Դժոխք» հեծելախմբի անդամներից Առվարինջցի Վարդանը, որի հուշերը որոշ ձևափոխություններով տպագրվել է «Դրօշակ»-ում (1904 թ., թիւ 7, էջ 453-454), գրում է . «Վրէժխնդրութեան սպասումով վառուած, երբ լսեցինք, որ մեր նախկին ընկերը «Կայծակ» Վաղարշակը հեծելախմբով պետք է Երկիր անցնի, դիմեցինք կազմակերպութեան (նկատի ունի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեին- Հ.Գ.) եւ ընդունեցանք նրա «Դժոխք» խմբի մէջ իբրեւ զինուոր... Ամբողջ խմբի միակ փափագն էր, եթէ հնարաւորութիւն կը ներկայանայ անցնել ու մեկնել Երկրի խորքը, իսկ եթէ ոչ կռուիլ հենց Բասենում...» [2]:

Հեծելախմբին զինելու համար Ալեքսանդրապոլի և Կարսի զինապահեստներից տեղափոխում և վերոհիշյալ գյուղերում են պահեստավորում զենք ու զինամթերք: Հեծելախմբի բոլոր անդամներին զինում էին մոսին հրացաններով, նաև մաուզեր ատրճանակներով և ռումբերով:

Հեծելախմբում ընդգրկվածներից շատերին առաջին անգամն էր բախտ վիճակվել զենք վերցնել, և դեռևս ծանոթ չէին նրանց գործածությանը: «Դժոխք»-ի մարտիկներից ոմանք անվարժ էին և չունեին հեծյալին յուրահատուկ հմտություն, մանավանդ ընթացքից, վարգի ժամանակ զենք գործածելու վարպետություն: Համառ աշխատանքը և ամենօրյա քրտնաջան մարզումները տալիս են իրենց արդյունքը: Մեկ ամիս անց «Դժոխք» ձիավոր մարտախումբը, լիովին կազմ ու պատրաստ, սպասում է Երկիր մեկնելու հրահանգին:

«...Պէտք է շեշտել, - նշում է Ա.Ազնավուրյանը, - որ մեր բոլոր խումբերից ամենից պատրաստուած խումբը Վաղարշակի ձիաւոր խումբն էր...» [3]:

Մայիսի 31-ին հեծելախումբը դուրս է գալիս Դոլպանտլու գյուղից և ուղեվորվում Սասուն: Երկիր ուղևորվող մարտական և զինատար խմբերը ընդունված կարգի ու սովորույթի համաձայն ամեն անգամ որևէ բնակավայրից դուրս գալիս, պիտի կատարեին որոշակի արարողություն, ապա նոր միայն մեկնեին նախանշված ուղղությամբ:

«Դ. գյուղում (նկատի ունի Դոլպանտլու գյուղը- Հ.Գ.)- պատմում է հեծելախմբի անդամ Վարդանը, - ամբողջ խումբը հաղորդուեց եւ դրօշակի, սրի ու խաչի վրայ վերջին անգամ երդուեց մինչեւ արեան վերջին կաթիլը կռուիլ թշնամու դեմ, միշտ բարձր պահելով Դաշնակցութեան դրօշի պատիւը» [4]:

[1] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 11, էջ 149:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 271, գ. 1, էջ 2: Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 7, էջ 452:
[3] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 11, էջ 150:
[4] ՀՅԴ ԿԱ, թթ. 271, գ. 1, էջ 2:

Հեծելախումբը զինատար էր. հայդուկները բացի իրենց պատկանող զենքերից Սասուն էին տանում զգալի քանակությամբ փամփուշտ, դինամիտ և ռումբեր: Հունիսի 6-ի գիշերը «Դժոխք» մարտախումբը անննկատ անցնում է ռուս սահմանապահների կողքով, սակայն թուրքական պահականոցների մոտակայքով նկատվում է ժամապահների կողմից: Թուրք զինվորները կրակում են հայ զինվորների վրա, որոնք պատասխանում են մաուզեր ատրճանակների կրակոցներով և առանց կանգ առնելու՝ շարժվում առաջ: Հայդուկները շտապում են հասնել այն լեռանը, որը նախապես որոշված էր որպես դադարի կայան: Քանի որ այդ չնախատեսված միջադեպը պատահում է կեսգիշերին, երբ լույսը բացվելուն դեռևս մնում էր 3-4 ժամ, հեծելախումբը ինչքան էլ փորձեր արագ շարժվել, միևնույն է, չէր կարող մինչև լուսաբաց հասնել նախատեսված կայանը: Նկատի ունենալով այդ իրողությունը, հեծելախմբի հրամանատարությունը հարկադրված որոշում է բարձրանալ և դիրքեր գրավել Խորում և Զիվին գյուղերի միջնամասում գտնվող ավերակ բերդի փլատակներում[1]:

Հայդուկները հույս ունեին ցերեկն անցկացնել բերդի ավերակներում, հանգստանալ և մութն ընկնելուն պես անննկատ առաջ շարժվել ու հասնել նախատեսված կայանը: «Դժոխք» հեծելախմբի մասին պատմող հուշագրության հեղինակ Վարդանը, ներկայացնելով այդ պահը, գրում է. «Ես գաղաթի դիրքում էի 12 ընկերներով, իսկ մեր ներքեւի դիրքերում տեղաւորուած էին մեր 16 ընկերները, որոնց պաշտպանութեան էր թողնուած ձիաները իրենց վրայի բոլոր ռազմամթերքով: Այդ ռազմամթերքից մեզ հետ վերեւում ունեինք միայն 6 հատ ռումբ եւ մեր վրայի փամփուշտներն ու հրացան ատրճանակներով»[2]:

Հայդուկները որքան էլ փորձում էին անննկատ մնալ, այնուամենայնիվ, լուսաբացին քուրդ հովիվները նկատում են նրանց և անմիջապես բերդում նրանց գտնվելու մասին լուրը հասցնում մերձակա քրդական գյուղերին: Կեսօրվա ժամը 12-ին 2000 թուրք զինվորներ և քուրդ զինյալներ պաշարում են հայդուկների դիրքերը, բայց չեն համարձակվում մոտենալ նրանց: Նախորդ կռիվներից արդեն ծանոթ լինելով հայդուկների վարպետությանն ու նրանց հեռահար զենքերին, թշնամու զինվորները միայն հեռվից են կրակել բերդում պատսպարվածների վրա[3]:

Թվում է, թե մեծ ուժերով ձեռնարկած հարձակումը հակառակորդին հնարավորություն կընձեռեր հեշտությամբ ընկճել հայդուկների դիմադրությունը, սակայն «Մենք, - նշում է Վարդանը,-խմբապետի կարգադրութեամբ մեր հրացանների մի քանի միահամուռ որոտով գետին տապալեցինք յարձակողների առաջին շարքերից մի քանի տասնեակ հոգի եւ մնացեալները յետ փախչելով նորից մտան քարերի ու բլուրների տակ»[4]:

[1] «Դրօշակ», 1904, թիւ 7, 252:
[2] ՀՅԴ ԿԱ, թ. 271, գ. 1, էջ 2:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 7, էջ 452:
[4] ՀՅԴ ԿԱ, թ. 271, գ. 1, էջ 2:

Հակառակորդի առաջին գրոհը հայդուկները կարողանում են հաջողությամբ և առանց զոհերի հետ մղել: Ընդամենը կես ժամ դադար առնելուց հետո, թուրքերն ու քրդերը ավելի մեծ բազմությամբ վերսկսում են գրոհը, սակայն այս անգամ նա - հանդիպելով ուժեղ դիմադրության և տասնյակ կորուստներ տալով՝ դադարեցնում են հարձակումը: Հակառակորդին մեծ կորուստներ են պատճառում հատկապես հայդուկների նետած ռումբերը, որոնց պայթյունների հզոր դղրդյունը սարսափ է առաջացրել հարձակվողների շարքերում:

Ժամը 6-ին հակառակորդը, վերստին համալրելով մարտաշարքերը, նոր գրոհ է ձեռնարկում: Հայդուկները թշնամու գրոհը կասեցնելու համար 4 ռումբ են նետում գրոհողների վրա: Թուրք զինվորները և քրդերը, ռումբերի պայթյուններից զգալի կորուստներ տալով, խուճապի են մատնվում և դիմում փախուստի: Թշնամու փախուստից ոգևորված՝ հայդուկները դուրս են գալիս դիրքերից, որը մարտավարական առումով սխալ և անզգույշ քայլ էր. «...եւ ատրճանակներով ու դաշոյններով հասանք փախչողների յետեւից: Դիակների վրայով անցնելով անխնայ գլորում էինք մեր ձեռքն անցնողներին»[1]:

Հայդուկները, տարվելով հարձակումով, չեն նկատում, որ այդ ընթացքում հակառակորդի մի քանի հարյուր զինվորներ հասցնում են բարձրանալ ու գրավել բերդի վերևի իրենց դիրքերը: Հայդուկները հայտնվում են շրջափակման մեջ: Խմբապետ Վաղարշակը ձիու վրա նստած շրջում է դիրքերը և հորդորում նրանց կռվել մինչև վերջ, սակայն ուժերը չափազանց անհավասար էին: Թուրք զինվորների՝ թիկունքից տեղացող կրակոցներից հայդուկներից մի քանիսը զոհվում են, իսկ մյուսները խմբապետ Վաղարշակի հրահանգով իջնում են ներքևի դիրքերը: Նահանջելու ընթացքում երկու ոտքից ծանր վիրավորվում և զոհվում է «Դժոխք» ձիավոր մարտական խմբի հրամանատար Կայծակ Վաղարշակը, իսկ ողջ մնացած հայդուկները կռվելով իջնում են ներքևի դիրքերը, որտեղ հայ մարտիկներից այլևս ոչ ոք չկար: Ներքևի դիրքերում գտնվող 16 հայդուկները նույնպես հայտնվում են շրջափակման մեջ, բայց կարողանում են մեծ դժվարությամբ դուրս գալ շրջապատումից ու հեռանալ[2]:

Այդ անսովոր մարտի ականատեսներն էին ռուս զինվորները, որոնք հանգիստ դիտում էին, թե ինչպես հազարավոր թուրք զինվորներ անընդմեջ գրոհներ ձեռնարկելով փորձում էին պաշարման մեջ վերցնել և ոչնչացնել ընդամենը երեք տասնյակ հայ մարտիկների[3]:

Կռվի մասնակից Վարդանը (վավերագրության հեղինակն է-Հ. Գ.) հրաշքով կարողանում է փրկվել: Այն պահին, երբ քրդերը նրան առաջարկել են հանձնվել, նա դիմել է խորամանկության և կարողացել խաբել նրանց: Նա ցույց է տվել, թե իբր հանձնվելու է, բայց ռումբերն ու դինամիտը անննկատ թաղում է թուրքերի ու քրդերի ճանապարհին, և երբ նրանք մոտենում են,

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 7, էջ 452:
[3] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 348:

վառում է պատրույգը: Ռումբերի պայթյունից տասնյակ թուրքեր ու քրդեր սպանվում ու վիրավորվում են, իսկ Վարդանը թփերի ու քարերի ետևանքներով երկու օր սողոսկելով և անասելի դժվարություններ հաղթահարելով հասնում է ռուսական սահմանը [1]:

Այդ օրերին «Դրոշակ»-ին հասցեագրված հեռագրերից մեկը, հաղորդելով Բասենում ձիավոր մարտախմբի կռվի մասին, նշում է. «Կռիւը շարունակւեց մի օր: Հաւաքւեցին 4000 -ից աւելի զօրքեր եւ քրդեր, որոնք մի քանի անգամ փորձեցին գրոհ տալ ու դիրքերը վերցնել, բայց մեծամեծ կորուստներ տալով տեղացող ռումբերից եւ մոսինի գնդակներից յետ նահանջեցին: Կռիւը յուսահատական դարձաւ իրիկնապահին.. .»[2]:

Համաձայն Վարդանի վկայության, «Մեր շուրջը եւ դիրքերի մէջ փռուած թշնամու դիակների եւ վիրաւորների թիւը բաւական մեծ էր, կարող էր մի քանի հարյուրի հասնել»[3]:

Ըստ «Դրոշակ»-ի տվյալների՝ ձիավոր մարտախմբի 29 անդամներից զոհվել էին 25-ը, իսկ թշնամու կորուստը հասնում է 4-500-ի [4]:

Գուցե վերոհիշյալ վկայություններում թշնամու սպանվածների թիվը փոքր-ինչ չափազանցված է, բայց անժխտելի է կռվում հայ մարտիկների դրսևորած արիությունն ու մինչև վերջին փամփուշտը մարտնչելու պատրաստակամությունը:

Հայդուկներից մի քանիսը մարտախմբի անդամ Գևորգի, որին շիկահեր և ռուսի նման լինելու պատճառով անվանել են Ռուս Գևորգ, առաջնորդությամբ դուրս են գալիս շրջափակումից և հասնում ռուսական սահմանը, ուր կանգնած էին ռուս սահմանապահները: Գևորգը համոզված, որ ռուսները իրենց չեն վնասի, առաջ է անցնում և մոտենում զինվորներին, բայց «...խեղճը դաժանօրեն սխալած էր. ռուս զինուորներու համազարկերը կը դիմաւորեն զինքն ու իր խումբը. եւ երկու կրակի մէջ իյնալով Գէորգն ու իր ընկերները բոլորն ալ գնդակահար կ'ըլլան» [5]:

Ցարական պաշտոնյաներին ևս մի հարմար պատրվակ էր պետք, որպեսզի ավելի ամրապնդեին սահմանն ու առավել խիստ հսկողություն սահմանեին հայ հեղափոխական գործիչների ու մարտական ուժերի նկատմամբ: Նրանք օգտագործում են «Դժոխք» մարտախմբի ընդհարման փաստը, և հեռագրում Կարսի նահանգապետին, որն էլ իր հերթին վարչապետին՝ հաղորդելով, որ կռվի մասնակից հայդուկները Անդրանիկի խմբից են, որոնք Մուշից գալով ուզում էին անցնել Ռուսաստան-Կովկաս: «Այդ,-գրում է «Դրոշակ»-ը,-«մանկական» զառանցանքի վրայ հիմնուած՝ իշխան Գօլիցին կարգադրել է կրկնապատկել խստութիւնները որպեսզի խռովությունը չանցնի դէպի Կովկաս» [6]:

---

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 271, գ. 3, էջ 2:
[2] Նույն տեղում, գ. 1, էջ 5:
[3] Նույն տեղում, գ. 3, էջ 2:
[4] Տե՛ս «Դրոշակ», 1904, թիւ 7, էջ 453-454:
[5] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 348:
[6] «Դրոշակ», 1904, թիւ 7, էջ 453-454:բ

3. 5. «Ռոսկան» մարտական խումբը Զարդանիսի կռվում

1904թ. գարնանը Թորգոմն ու Կայծակ Վաղարշակը տեղեկագրերով և Տարոնից ու Սասունից ձեռք բերած հարուստ տպավորություններով, Սասունից անցնում են Կովկաս, որտեղից նրանք պետք է մեկնեին Վիեննա, մասնակցելու ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովին [1]:

Կովկասում հանգամանքներն այնպես են դասավորվում, որ «Դուրան-Բարձրավանդակ»-ից ընտրված պատգամավորներից ՀՅԴ Ընդհանուր Ժողովին մասնակցում է միայն Կայծակ Վաղարշակը: Իսկ Թորգոմը, նկատի ունենալով նրա ռազմագիտական պատրաստվածությունն ու ինչպես նաև ազգաբնակչության և զինվորների հետ արդյունավետ աշխատելու կազմակերպչական կարողությունները, Կովկասյան նախապատրաստական ժողովը վճռում է, որպեսզի նա մնա և աշխատի Կովկասում, ավելի ստույգ՝ Կարսի նահանգում, որտեղ այդ օրերին կազմավորում էին մարտական և զինատար խմբերը [2]:

Այն օրերին, երբ Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթանում էին Ընդհանուր Ժողովի աշխատանքները, Թորգոմը դեռևս գտնվում էր Կարսի շրջանում, ուր մարզում ու նախապատրաստում էր Երկիր մեկնելու նպատակով կազմավորվող մարտական խմբերը: Թեպետ Սասուն ուղևորվող մարտական ուժերը ջախջախվում էին, բախվելով ռուս սահմանապահ զորամասերին, թուրքական կանոնավոր զորքերին ու քրդական հրոսակախմբերին, այնուամենայնիվ ՀՅԴ Արևելյան Բյուրոն և Կարսի «Զրաբերդ» կենտր. կոմիտեն, առաջնորդվելով Ընդհանուր Ժողովի որոշումներով, կազմավորում են հերթական մարտական խումբը (Ռոսկան) և, մեծ հավատ ընծայելով Թորգոմի փորձառությանն ու ռազմագիտական կարողությանը, մարտախմբի հրամանատարությունը հայ ազատագրական պայքարի բազմափորձ ու հանրահայտ ռազմիկի՝ Ռոսորդ Գևորգի զինակցությամբ, վստահում նրան:

Այդ նույն ժամանակահատվածում, երբ «Ռոսկան» հայդուկային խումբը սպասում էր Երկիր ուղևորվելու հրահանգին, ապստամբությունը Սասունում արդեն տապալվել էր: Սասունի մարտական ուժերը, սպառելով մարտնչելու վերջին հնարավորությունը, իջել էին Դաշտ ու կռիվները շարունակում էին Դաշտի գյուղերում: Բնականաբար, համանման իրավիճակը պիտի թելադրեր, որ մարտախմբերի կազմակերպիչները կրկին անգամ ճշգրտեին իրենց վերջնական անելիքները: Ի՞նչ առաջադրանք էր հանձնարարվելու «Ռոսկան» մարտախմբին. նա պիտի ուղևորվեր Սասո՞ւն, թե առաջնորդվելով իրական կացությամբ, հար-

---

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 279, գ. 18, էջ 6-7:
[2] Տե՛ս «Յուշապատում...», էջ 461:

ձակողական գործողություններ ձեռնարկեր սահմանամերձ շրջաններում: Ինչպես նախորդ, Երկաթի ու Վաղարշակի մարտախմբերի, այնպես էլ «Որսկանի» պարագայում ՀՅԴ «Զրաբերդ» կենտր. կոմիտեի և մարտախմբերի կազմակերպիչների դիրքորոշումը դարձյալ անբացատրելի է: Որոշվում է անցնել սահմանն ու մեկնել Սասուն:

Ուշագրավ է «Որսկան» մարտախմբի կազմը, որում ընդգրկված էին տոցիալական տարբեր շերտեր ներկայացնող հայորդիներ:

«Խումբին մէջ,- նշում է Ռուբենը, - կը մտնեն բաւականին մեծ թիւով մտաւորականներ՝ ուսանող, բժիշկ, քահանայ: Կային նաեւ հարուստ ընտանիքներու զաւակներ...»[1]:

Հայդուկային խմբում ընդգրկված մարտիկների կազմում էր նաև նշանավոր Պաղվալի Վաղոն, որն ընտրվում է որպես տասնապետի օգնական: «-Հերիք է,- ասպէր, ինչքան ուրիշներին զէնք տամ եւ ուղարկեմ մեռնելու: Հիմի էլ սրրէն (հերթը) ընձի է հասէ ... »[2]:

Համաձայն «Որսկան»-ի գործողությունները լուսաբանող վավերագրի, որի հեղինակը այդ նույն խմբի անդամ է, մարտախմբի անդամները զինվորական խորհրդի կարգադրությամբ հունիսի 30-ին հավաքվում են Օլթիի շրջանի գյուղերից մեկում և տեղավորվում նախապես որոշված մարագներում[3]:

«Որսկան» մարտական խումբը բաղկացած էր 61 մարտիկներից, որոնցից յոթը՝ շալակավորներն էին: Մարտախումբը բաժանվում է երկու մասի, որոնցից մեկը պիտի առաջնորդեր Թորգոմը, իսկ մյուսը՝ Որսորդ Գևորգը: Յուրաքանչյուր մարտախումբ իր հերթին բաժանվում է տասնյակների, որոնք բաղկացած էին 14 հայդուկներից ու 2 շալակավորներից[4]:

«... Իւրաքանչիւր զինուոր վերցնելու էր՝ հրացան (բերդան 250 փամփուշտով, կամ մօսին 450 փամփուշտով), երկու հատ ռումբ, դաշոյն կամ ատրճանակ, ութ ֆունտ հալւայ, վիրակապեր եւ ճանապարհորդական մանր իրեր... »[5]:

Մարտախմբի տեղաշարժերը հակառակորդի տեսադաշտից քողարկելու նպատակով զինվորներին խստիվ հրամայվում է իրենց հանգրվանած մարագներից դուրս չգալ, իսկ գյուղացիները պիտի մնային տներում և որևէ փորձ չանեին ճանապարհելու Սասուն ուղևորվող հայդուկներին: Սակայն, չնայած ձեռնարկած խստիվ միջոցներին, այն պահին, երբ մարտախումբն արդեն պատրաստվում էր դուրս գալ գյուղից, «Ամբողջ գիւղը լցուել էր հաւաքման տեղը: Սկսեցին «մնաս բարովի» ջերմ համբոյրները եւ ոգեւորիչ բարեմաղթութիւնները... Անթիւ բերաններ կրկնում էին. «Յաջողութի՜ւն ձեզ, հայ քաջեր, բարի՜ ճանապարհ ձեզ...»[6]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 348:
[3] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 11, էջ 150:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 258, էջ 1:
[5] Տե՛ս նույն տեղում, թղ. 271, գ. 9, էջ 2:
[6] Նույն տեղում:

Մարտախումբը հուլիսի 1-ին՝ գիշերով անցնում է ռուս-թուրքական սահմանը և լուսաբացին բարձրանում հայկական գյուղերից մեկի՝ Զարդանիսի մերձակա աղբյուրը: Նկատի ունենալով խմբի անդամների հոգնածությունը Թորգոմը կարգադրում է. «... աղբիւրից էլ բարձրանանք 100-150 քայլ եւ նստենք հանգստանալու, առանց զինաթափ լինելու: Մենք բարձրացանք ռուսական թիւ 68 սահմանային սյունից 1.5 վերստ հեռաւորութեան տաճիկ հողի վրայ, մի բլրի լանջի վրայ խումբը նստեց հանգստանալու... Բոլոր զինուորները նստելու պէս յոգնածութիւնից քնեցին»[1]:

Մինչ այդ ամեն ինչ ընթանում էր հանգիստ ու խաղաղ, բայց մի պատահական դիպված կտրուկ փոխում է իրավիճակը: Մարտախմբի երկու շալակավորները, որոնք իրենց շալակած բեռների պատճառով փոքր-ինչ ետ էին մնացել, նույնպես հասնում են աղբյուրին, հագեցնում են ծարավն ու մի կողմ դնելով պայուսակները՝ քնում են: Այդ պահին «... չորս հատ մագլցող ռուս սահմանապահ զինուորներ պատահմամբ, թէ փայտ կտրելու նպատակով, գալիս են աղբիւրի մօտ ջուր խմելու եւ նկատում են քնած զինուորներին»[2]:

Ռուս զինվորներից մեկը, թոցնելով քնածներից մեկի պայուսակը, շտապում է ռուս սահմանապահների պահականոց և հայդուկների ներկայության մասին հայտնում է սահմանապահների հրամանատարին, որն էլ անմիջապես ոտքի է հանում պահականոցում տեղակայված զինվորներին և շարժվում զինվորի մատնանշած ուղղությամբ:

«Եւ մինչեւ մենք,-վերհիշում է կռվի մասնակիցը,- գնացել էինք 3-4 վերստ հեռու սահմանից, երբ յանկարծ ռուսական սահմանապահ զօրաբաժինները մօտ 150 հոգի մեր յետեւից յետապնդելով գալիս էին՝ բարձր կրակելով»[3]:

Այդքան արագ իրենց ճանապարհին ռուս զինվորների հայտնվելը մարտախմբի համար անսպասելի էր: Տեսնելով, որ ռուս զինվորները հետզհետե ավելի են սաստկացնում իրենց ուղղությամբ արձակած կրակոցները, խմբապետները որոշում են զուտ մարտավարական նպատակով երկու մասի բաժանել մարտախումբը, հարմար դիրքեր գրավել ու սպասել դեպքերի զարգացմանը: Խմբերից մեկը Որսորդ Գևորգի գլխավորությամբ զատվելով հիմնական մարտախմբից «... Աւելի առաջ գնաց ու դիրք բռնեց Ղալա-Բօղազի քարում, իսկ Թորգոմը՝ իր զինուորները երեք մասի բաժանեց եւ յարմարաւոր դիրքեր բռնեց ռուսական սահմանագծից մօտ 2,5 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Լիրք բլրի գագաթներին: Ռուս զինուորները մեզ վրա կրակում էին բարձրից, բայց մենք չէինք պատասխանում, որովհետեւ խմբապետները արգելել էին, եւ շարունակ ձայն էինք տալիս նրանց, թէ «մենք ձեզ հետ գործ չունենք»...»[4]:

Ուշադրություն չդարձնելով հայ մարտիկների կոչերին՝ ռուս զինվորները, որոնց շարքերը գնալով ավելի ու ավելի էին համալրվում և ստվարանում,

[1] Նույն տեղում:
[2] «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 110:
[3] Նույն տեղում:
[4] «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 110: Յեղափոխական Ալպում, 1968, թիւ 5, էջ 106:

չարժվում են դեպի Թորգոմի դիրքը ու փորձում պաշարման մեջ վերցնել նրա գլխավորած մարտախումբը: Այն պահին, երբ ռուս սահմանապահները, շրջափակելով Թորգոմի հայդուկներին, կրակ էին տեղում նրանց վրա, հանկարծ անսպասելիորեն մարտադաշտում է հայտնվում թուրքական մի գորամաս և չարժվում դեպի Որսորդ Գևորգի դիրքը: Ռուս սահմանապահների հրամանատարը իր սև գործը կատարել էր: Նա, տեղեկանալով հայ մարտիկների ներկայության մասին և կարծես չվստահելով միայն իրենց ուժերին, «... անմիջապես մի զինուոր է ուղարկում եւ տաճիկ հրամանատարին իմաց տալիս, թէ ֆետայիներըեկել են, դուք շտապեցէք ամենաբարձր դիրքերը բռնել եւ որի համար Որսորդին չի հաջողվում աւելի յարմար դիրքեր բռնել»[1]:

Հայ մարտիկները հայտնվում են չափազանց ծանր կացությունում: Քանի որ նրանք չէին սպասում, որ ռուս և թուրք սահմանապահ ուժերն այդքան շուտ կարող էին հայտնվել, ուստի այդ պատճառով չեն հասցնում հարմարավետ դիրքեր գրավել: Մարտիկների ազատ գործողություններին կաշկանդել է ռուս զինվորների ներկայությունը: Եթե մարտադաշտում լինեին միայն թուրքական զորքը, ապա հայդուկները կարող էին համարձակորեն անվարան մարտի բռնվել և մոսինների, ինչպես նաև իրենց մոտ եղած ռումբերի հարվածներով հաջողությամբ հետ մղել նրանց գրոհները: Բայց չգրված անխախտ օրենքի համաձայն հայ մարտիկները զենք չէին գործածում ու չէին մարտնչում ընդդեմ ռուս զինվորների, հակառակ նրանց կողմից իրենց նկատմամբ բազմիցս գործադրած դաժան միջոցների:

Առավոտյան ժամը 7-ին, թուրք զինվորները գրոհում են Որսորդ Գևորգի գլխավորած հայդուկների վրա: Հայդուկներն անվարան ընդունում են մարտահրավերը, պարզում են մարտախմբի «ԱՂԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԱՀ» կարգախոսով զարդարված դրոշը՝ միահամուռ համազարկերով գնդակահարում են տասնյակ թուրք զինվորների: Իսկ այդ նույն ժամանակ, երբ Որսորդ Գևորգի առաջնորդած հայդուկները հաջողությամբ կռվում էին ընդդեմ թուրքերի, իրավիճակը ծանրանում է Թորգոմի դիրքում:

Ռուս սահմանապահները, իրենց շարքերը համալրելով մարտադաշտում հայտնված կազակական ջոկատներով և օգտվելով այն հանգամանքից, որ հայ մարտիկներն իրենց վրա չեն կրակում, առանց որևէ խոչընդոտի մոտենում են Թորգոմի մարտախմբի դիրքերին և կրակ բացում:

«...Թորգոմը նկատելով, որ ռուս կօզակների ահագին խումբ է եկել եւ իրենց շրջապատել, ուղարկում է երկրորդ տասնեակի տասնապետ Անուշաւանին զօրքի հրամանատարի մօտ ասելու, որ՝ մենք ձեզ հետ գործ չունինք, ձեր սահմանից դուրս ենք եւ գնալու ենք տաճիկի հողը, եւ կուելու ենք նրանց հետ, ուստի խնդրում ենք ետ քաշէք ձէր զօրքը եւ չխանգարէք մեզ...»[2]:

[1] Նույն տեղում:
[2] «Դրօշակ», 1904, թիւ8, էջ 110:

Պատասխան չստանալով՝ Թորգոմը ռուսների մոտ ուղարկում է երկրորդ զինվորին: Ռուս սպաները փոխանակ պատասխան տալու, ձերբակալում են նրանց և ուղարկում պահականոց: Հայ զինվորներին ձերբակալելու պահից հաշված րոպեներ անց ռուս զինվորները հնչեցնում են պատերազմական փողերն ու առավել մեծ ուժերով հարձակվում Թորգոմի մարտախմբի վրա: Հետո պարզվում է, որ այդ նույն պահին նոր զորամասի գլուխն անցած՝ Օլթիից մարտադաշտ էր եկել ռուս սահմանապահ զորքի հրամանատար, գնդապետ Բիկովը, որի հրամանով ռուսական զորքը ձեռնարկում է հարձակումը[1]:

Թուրք զինվորները հետևում են իրենց դաշնակիցներին և չորրորդ ուղղությունից նույնպես փորձում գրոհ ձեռնարկել: Ներկայացնելով այդ պահը՝ կռվի մասնակիցը նշում է. «...լուսինն ու խոզը (նկատի ունի թուրքերին և ռուսներին- Հ.Գ.) ձեռք ձեռքի տուած՝ «ասդ բաբամ» և «ուռա» խառնուեցին իրար հայ քաջերին ոչնչացնելու համար[2]:

Եթե կռվի ընթացքում հայդուկները ռուս զինվորներին խնայում ու նրանց վրա չէին կրակում, ապա թուրքերի նկատմամբ իրենց դրսևորում էին ճիշտ հակառակը: Նրանց համազարկերից և ռումբերի պայթյուններից թուրքերը զգալի կորուստներ են ունենում ու դարձյալ նահանջում, բայց մի փոքր անց, ոգևորվելով ռուս կազակների ներկայությունից, առավել մեծ թափով վերսկսում են հարձակումը: Համաձայն այս կռիվը ներկայացնող վկայությունների, հայ մարտիկների դիրքն այնքան էլ անհուսալի չի եղել, բայց քանի որ ռուսների վրա չէին կրակում, ուստի նման մարտավարությունը ռուս զինվորներին դյուրին հնարավորություն է ընձեռել առանց խոչընդոտների ընդհուպ մոտենալ հայդուկների դիրքերին և թուրքերի համագործակցությամբ կատաղի կրակ տեղալով՝ գրեթե իսպառ սահմանափակել նրանց տեղաշարժվելու ու մարտնչելու հնարավորությունը: Մարտախմբի տասնյակները հայտնվելով շրջափակման մեջ, կտրվում են միմյանցից և կորցնում պաշտպանվելու վերջին հնարավորությունները: Համանման իրավիճակում, երբ վտանգվում են մարտախմբի տասնյակների դիրքերը, «Խելառ տասնապետ Հայրիկը (նկատի ունի առաջին տասնյակի տասնապետ հայդուկ քահանային, որին զինակիցները զուտ հարգանքի նկատառումով կոչել են Խելառ Հայրիկ- Հ.Գ.) կարգադրեց, որ դուրս գանք դիրքերից եւ մոտենանք խմբապետի դիրքին, որն աւելի ամուր էր: Դիրքից դուրս գալիս տէրտէրը խաչը ձեռքին գնդակահարուելով ընկաւ, նրա հետ ընկան եւս մի քանի զինուորներ...»[3]:

Հայդուկ քահանայի գլխավորած տասնյակի տասնապետի օգնական Պադվալի Վարոն կարողանում է մի քանի զինակիցներով դուրս գալ շրջափակումից, հուսալի դիրք է գրավում և մինչև վերջին հնարավորությունն անհանջ մարտնչելով՝ զոհվում[4]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 689, գ. 25, էջ 6:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:

Նույն ժամին Թորգոմը ևս իր խմբի ողջ մնացած մարտիկների հետ շարունակում է կռվել մինչև վերջին հնարավորությունը: «Որսկան» մարտախմբի մղած Զարդանիսի կռիվը լուսաբանող վավերագրում բացակայում է նրա գոհվելու պահը ներկայացնող հատվածը. բայց այս նույն վավերագրի փոքրինչ ձևափոխված ու կրճատված տարբերակում, որը տպագրվել է «Դրօշակ»-ում և «Յեղափոխական Ալպոմ»-ում, նշվում են նաև Թորգոմի նահատակության մանրամասները: Թորգոմը համոզվելով, որ պաշտպանվելու որևէ հնարավորություն այլևս չկա, հրամայում է հնչեցնել անձնատուր լինելու փողը և հանձնվել: Սակայն ռուս և թուրք զորքերը, կատարելով իրենց հրամանատարության կարգադրությունը, բնավ ուշադրության չեն արժանացնում հայ մարտիկների առաջարկությունը և շարունակում գնդակներ տեղալ նրանց վրա [1]:

Թորգոմը ժամը 5-ի (17-ին) մոտերքում փորձում է իրականացնել վերջին հնարավորությունը. «Խմբապետը դրօշակը առնելով 10-12 ընկերներով, գնդակների տարափի տակ գնաց դէպի ռուսաց զօրքերը՝ անձնատուր լինելու նպատակով. ռուսները՝ բաւական մօտ թողնելով, միանգամից կրակեցին եւ 10 հոգի գետին գլորեցին, որոնց մէջ եւ թանկագին Թորգոմին, Դաշնակցութեան դրօշը ձեռին...» [2]:

Զարդանիսի կռվի մասնակից և այդ կռիվը լուսաբանող վավերագրի հեղինակը, որի անունը որևէ տեղ չի նշվում, գրում է, որ այն պահին, երբ ռուսները գնդակահարում են իր տասը զինակիցներին, իրեն հաջողվում է մտնել մի քարի տակ ու վրան տերևներ լցնելով՝ թողարկվել ու փրկվել [3]:

Թորգոմի ու նրա գլխավորած հայդուկների նահատակությունից հետո «Որսկան» մարտախմբից մնում են միայն Որսորդ Գևորգի առաջնորդած մարտիկները: Քանի որ նրանց պաշտպանական դիրքերի վրա մինչ Թորգոմի և նրա խմբի գոհվելը, առանց ռուս զինվորների մասնակցության, հարձակվում էին միայն թուրք զինվորները, հայդուկները կարողանում էին դիմագրավել գրոհները և շոշափելի կորուստներ պատճառել նրանց: Բայց Թորգոմի և նրա զինակիցների նահատակությունից հետո իրավիճակը կտրուկ փոխվում է նաև Որսորդ Գևորգի պաշտպանական դիրքերում:

Ռուս սահմանապահները, իրենց դաշնակից թուրքերին աջակցելու վճռականությամբ գրոհում են դեռևս աննահանջ մարտնչող հայդուկների դիրքերը: Թուրք զինվորները, որոնք բազմիցս ապարդյուն հարձակումներ գործելով ու գոհեր տալով, արդեն հարկադրված դադարեցրել էին գրոհները, դարձյալ հարձակվում են հայդուկների պաշտպանական դիրքի վրա: Որսորդ Գևորգի մարտախումբը հայտնվում է ռուս և թուրք զինվորների հարվածների արանքում, կրկնակի շրջափակված օղակում: Որսորդ Գևորգն այլևս փրկության որևէ ելք չտեսնելով և նկատելով, որ «...անհնարին է շարունակել դիմադրութիւնը, կը հրամայէ դուրս գալ դիրքերէ եւ փախչելով ազատուիլ կամ գոնէ իյնալ ռուսներու ձեռքը, կարծելով թէ անոնք կը խնայեն իրենց: Այդ միջոցին ընկերներէն շատերը կը գոհուին, իսկ ինքը՝ Որսորդը երկու վէրք ստացած էր՝ դեռ կը շարունակէ կռիւը...» [1]:

Որսորդ Գևորգը, վիրավոր վիճակում անկարող լինելով պաշտպանվել, դժվարությամբ շարունակում է մոտենալ ռուսներին, և նրանց մեջ նկատելով մի ծանոթ զինվորի՝ ուզում է անձնատուր լինել նրան: Ռուս զինվորը հրացանագարկ է անում նրան, և «...կուրծքէն կը վիրաւորէ ու կը գլորէ քաջ ֆէդայիին...» [2]:

Կռիվը հայդուկների և ռուս ու թուրք զինվորների միջև սկսվել է լուսաբացին և շարունակվել մինչև երեկոյան ժամը 7-ը: Հաջորդ օրը «... թէ ռուս եւ թէ թուրք զօրքը աղմուկով մտնելով անտառը, կողոպտում է վիրաւոր ու սպանուած զինուորների շորերը եւ գլուխները քարերով ջախջախում- այլանդակում, իսկ կիսամեռներին սուիններով ծակծկելով տանջանքներով սպանում» [3]:

Զարդանիսի կռվում «Որսկան» մարտախմբի 61 անդամներից գոհվում են 27, վիրավորվում 6, գերի են ընկնում 14, իսկ ողջ մնացած հայդուկներին հաջողվում է փախչել ու ազատվել [4]:

Եթե հայդուկները ռուս զինվորի նկատմամբ չդրսևորեին ծայրահեղ գթասրտություն ու հարգալից վերաբերմունք և համարժեք պատասխան տային նրանց գործողություններին ապա, անտարակույս գոհերն անհամեմատ քիչ կլինեին և չէր բացառվում, որ ռուս զինվորը նույնպես, երկյուղելով հայ ֆիդայու հարվածից ու վրեժխնդրությունից, փոխեր իր վերաբերմունքը:

Զարդանիսի կռվի մասնակից սպաներից մեկը, անկեղծորեն դրվատելով իրենց նկատմամբ հայդուկների դրսևորած մարդկային վերաբերմունքը, խոստովանում է, որ եթե հայ զինվորները ցանկանային, ապա կարող էին իրենցից շատ-շատերին գնդակահարել [5]:

Իրենց զինվորների արարքներն ու կռվի մանրամասները քննելու ու պարզելու նպատակով դեպքի վայր է գալիս մի քննիչ հանձնախումբ: Ռուս զինվորների գործողություններն արդարացնելու նպատակով«.. Բիկովը սկզբում միայն երեք դիակ է առանձնացնել տուել, ցոյց տալու քննիչներին: Բայց երբ նկատել է, որ աչքի կը զարնէ, հիմա աշխատում է պատրաստել ապացոյցներ, որ ռուսական հողումն են սպանուել, այնինչ բոլորը սպանուած էին միմիայն ռուսների գնդակներից տաճկահայ հողի վրայ...» [6]:

Այդ նույն գնդապետ Բիկովը, իր գլխավորությամբ կատարված եղեռնագործության արդյունքը մեկ անգամ ևս տեսնելու նպատակով, կռվի հաջորդ օրը

[1] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 110: Յեղափոխական Ալպոմ, 1968, թիւ 5, էջ 106:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԺ. 689, գ. 25, էջ 9:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 110: Յեղափոխական Ալպոմ, 1968, թիւ 5, էջ 106:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թԺ. 689, գ. 25, էջ 12:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 111:
[6] ՀՅԴ ԿԱ, թԺ. 689, գ. 25, էջ 12:

դարձյալ գալիս է դեպքի վայրը, և «...հաւաքելով նրանց դիակները, իր զինուորներով կը նկատուի, իբրեւ պարծանք ու կարժանանայ թէ՛ ռուս եւ թէ՛ տաճիկ կառաւարութեանց շնորհակալութիւններուն»[1]:

Թորգոմի և Որսորդ Գևորգի գլխավորած «Որսկան» հայդուկային խումբը Կարսի տարածքից Սասունի ապստամբներին օգնելու նպատակով այնտեղ ուղևորվող Դաշնակցության կազմակերպած վերջին մարտական ձեռնարկումն էր, որը նույնպես ողբերգական ավարտ ունեցավ: Բազմաթիվ են դեպքերը, և ոչ միայն «Որսկան»- ի հետ պատահած, որոնք միանշանակորեն մատնանշում են ռուս-թուրքական չգրված դաշինքի ու նրանց թշնամական վերաբերմունքի մասին հայ հեղափոխական գործիչների, առավել ևս մարտական ուժերի նկատմամբ:

Ռուբենը, ելակետ ունենալով նաև «Որսկան» մարտախմբի հետ տեղի ունեցած միջադեպը, կատարում է հետևյալ ուշագրավ ընդհանրացումը. «Այս դեպքը նշանակալից է այնքանով, որ ռուս եւ թուրք զօրքերը միասին կռուեցին հայ ֆետայիներու դէմ, ցոյց տալով թէ երկու կառաւարութիւններն ալ թշնամաբար կը վերաբերուէին հայ ազատագրական շարժման»[2]:

Անդրանիկը, իր «Մարտական հրահանգներ» գրքույկում քննադատելով հայ մարտական ուժերի կիրառած նման մարտավարությունը՝ նշում է. «Եթէ պատահին սահմանապահ զօրքեր ոչ թիւրք, որոնց հետ մենք գործ չունինք եւ որոնց թշնամին չենք-պետք չէ կրակել: Երեք անգամ յայտարարելու, թէ՛ բարեկամներ ենք եւ ճամբորդ: եթէ լսեցին՝ լա՛ւ, եթէ չի լսեցին ու զարկին ձեզի, խմբապետը հրամայածին պէս՝ զարկեք անխնայ իբրեւ թշնամու՝ սրտներուն եւ ճակատներուն: Յիշեցէ՛ք Թորգոմի եւ Որսորդ Գեորգի խումբը»[3]:

Հ.Յ.Դաշնակցության որոշմամբ պիտի ահաբեկվեին Զարդանիսի ողբերգության գլխավոր մեղսագործները: 1904 թ. հոկտեմբերին ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտր. կոմիտեն ի լուր աշխարհի հայտնում է. «...Օլթի քաղաքում, օգոստոսի 8-ին տէռորի ենթարկուեց, ռուսաց սահմանապահ զօրքի գնդապետ ԲԷԿՈՎԸ, Օլթիի-եղեռնագործութեան յայտնի հերոսը: Երեք գնդակներն ալ մահացու էին եւ մահը վայրկենական: Տէռորիստը (Համո Ջանփոլադյան- Հ.Գ.) ազատ է...»[4]:

[1] Նույն տեղում:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 351:
[3] Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժնեւ, 1906, էջ 7:
[4] «Դրօշակ», 1904, թիւ 8, էջ 159:

4. 6. ՄՈՍՈՒՆ- ՁՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Սասունի մարտական ուժերը համալրելու նպատակով 1898 թ. 2-րդ Ընդհանուր ժողովից հետո մինչև 1904թ. հոկտեմբերը, Հ.Յ. Դաշնակցության կողմից երկիր ուղարկած մարտական ու զինատար խմբերը, բացառությամբ Թորգոմի «Մրրիկ» զինատար հեծելախմբի, բախվելով թուրքական զորամասերի ու քրդական հրոսակախմբերի, ինչպես նաև ռուսական սահմանապահ ուժերի դիմադրությանը՝ ջախջախվել կամ մատնվելով անհաջողության՝ վերադարձել են Կարսի ու Սալմաստի շրջաններ:

Անդրանիկի գնահատմամբ նման մարտավարությունը ճիշտ չէր ու կորստաբեր էր ՀՅԴ կազմակերպության համար: Նրա կարծիքով «Պէտք էր մեծ ուժեր կենտրոնացնել մի վայրում և ոչ թէ այդքան փոքրիկ խմբակներ(Խան.Վաղարշակ, Գայլ Վահան, Միհրան եւն.) կորստեան մատնել»[1]:

Հայդուկային խմբերի անհաջողությունները թելադրում էին, որ անհրաժեշտ է փոխել Երկրին զինական օգնություն ցույց տալու մարտավարությունը և մարտական ուժերը ուղարկել ոչ թե ստույգ կործանման, այլ ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք, ի վերջո, կունենային շոշափելի արդյունք և դրական ազդեցություն կգործեին ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա: Առաջնորդվելով այդ նկատառումներով՝ ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կենտրոնական կոմիտեն հրաժարվում է մարտական և զինատար խմբեր Երկիր ուղարկելու նախկին մարտավարությունից և որոշում է իր իսկ միջոցներով կազմակերպած մարտական ուժերով ձեռնարկել բնույթով պատժիչ հարձակողական արշավանք և հարձակվել ու ոչնչացնել սահմանամերձ շրջաններում կառուցված Մոսուն-Զորի թուրքական զորանոցներն ու այնտեղ գտնվող զինվորներին:

Արշավանքը կենսագործելու նպատակով ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպվում են մարտական երկու խմբեր՝ բաբերդցի խմբապետ Միհրանի ու Գայլ Վահանի գլխավորությամբ:

Ի՞նչ նպատակներ էր հետապնդում Հ.Յ. Դաշնակցությունը՝ ձեռնարկելով հետագայում «Մոսուն- Զորի արշավանք» անվանումը ստացած հարձակողական բնույթի մարտական գործողությունը:

Վահան Փափազյանը (Կոմս) արշավանքի ձեռնարկման պատճառները բնութագրելիս՝ նշում է. «...Երեւանի կենտր. կոմիտէն կազմակերպել էր երկու մարտական խումբ՝ «Մասիս» եւ « Արտավազդ», Սասունին օգնութեան հասնելու համար, բայց վերջին պահին ստիպուած փոխում է ծրագիրը եւ խմբերը ուղարկել Ալաշկերտ՝ պաշտպանելու համար Ալաշկերտի հայութիւնը քրտական յարձակումներից, այլեւ բնաջնջելու սահմանամերձ թրքական զորակայանները, որոնք վտանգել էին հաղորդակցութիւնը Երկրի հետ»[2]:

[1] Տե՛ս Անդրանիկ, Մարտական հրահանգներ, էջ 7-8:
[2] Փափազեան Վ., Իմ յուշերը, էջ 449:

Հիմնավորելով «Մոսուն-Զորի արշավանք»-ի անհրաժեշտությունը՝ «Դրոշակ»-ը նշում է. «Հայ Յեղափոխականը չէր կարող մոռանալ սուլթան Համիդի ննկգատոր քաղաքականությունը. Անդրանիկի հետ ունեցած բանակցությունների ժամանակ - Սասունի անպաշտպան մնացած գիւղերի կոտորածը. կանանց ու երեխաների արի քաշելը: Նրա առաջ ծգուած էին Իշքիլիսէ. Ղումլիպուչաղ. Ղարաբազար. Սեյդոեւ. Ջուջան աւերուած հայկական գիւղերը: Հազարաւոր ձայներ «վրեժ» էին գոչում...»[1]:

Եթե ավելի որոշակիացնենք. ապա կարելի է նշել. որ «Մոսուն-Զորի արշավանք» անվանումը ստացած մարտական գործողությունը հետապնդում էր հետևյալ նպատակները.

1. Արշավանքի կազմակերպումը պայմանավորված է ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովի որոշմամբ: Որպեսզի Բարձրավանդակի շարժումները արտաքին աշխարհի առջև ներկայանային ոչ թե լեռնային ժողովրդի դժգոհության արդյունք. այլ ընդհանուր հայկական բողոքի արտահայտություն. Ընդհանուր Ժողովը որոշում է. «... Սասնոյ շարժումները սկսելուն պէս. Խորհրդակցութեամբ Բարձրաւանդակի Պատ. Մարմնի հետ եւ բիւրեղեի սահմաններում մէջ. ձայնակցել եւ օժանդակել երկրի շարժումին՝ յարձակողական այլեւայլ կռուի կամ տեռորի բնաւորութիւն կրող ձեռնարկներով. թէ՝ սահմանի վրայ. թէ՝ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ»[2]:

Միաժամանակ նախատեսվում էր 30 մարտիկներից ոչ ավելի թվակազմ ունեցող խմբերով հարձակումներ ձեռնարկել թուրքական կառավարական հիմնարկների. գորանոցների. պահականոցների. փոստերի վրա և կատարել պետական պաշտոնյաների սպանություն ու առևանգում[3]:

Որևէ գաղտնիք լինել չէր կարող. որ համանման ձեռնարկումների կենսագործումը. նույնպես չէին կարող կանխել Սասունի վրա ծառացած մահացու սպառնալիքը: Ապստամբության կազմակերպման շարժառիթների ու մանրամասների ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու.

Ա. Ընդհանուր Ժողովում Սասունի վերաբերյալ համանման որոշումներ կայացնողները հույսեր են փայփայել. որ եթե ինքնապաշտպանական ուժերը համալրվեին և զուգահեռաբար հայդուկային խմբերի ուժերով ձեռնակվեին հարձակողական գործողությունները. թեկուզև կայսրության սահմանամերձ տարածքներում. ապա կարելի էր երկարատև դիմադրել թշնամու հարձակումներին ու ժամանակ շահել:

Բ. 1904 թ. մայիսին Թիֆլիսում կայացած «Արևելյան շրջանի Ռայոնական ժողով»-ի որոշումները հստակորեն մատնանշում են. որ արշավանքի ձեռնարկման կողմնակիցները համանման որոշում կայացնելիս հետապնդել են հետևյալ խնդիրը՝ այն է՝ աղմկահարույց գործողությունների արձագանքներով գրավել եվրոպական տերությունների ուշադրությունը և այն բևեռելով Հայկական հարցի ու Արևմտահայաստանում կատարվող դեպքերի վրա. հասնել հայանպաստ դրական արդյունքի: Ռայոնական ժողովի մեկ անգամ ևս փաստում է. որ անգամ Սասունի ապստամբության որբերգական ավարտից հետո հայդուկային առանձնակի գործողությունների միջոցով երրորդ ուժին՝ այն է Եվրոպական տերությունների միջամտությանն ապավինելը եղել ու մնում էր ՀՅԴ գործունեության գլխավոր ուղենիշներից մեկը:

2. Արշավախմբի կազմակերպիչները հույսեր էին փայփայում. որ կարելի է սահմանամերձ շրջաններում իրականացվող գործողություններով թուրք իշխանությունների ուշադրությունը շեղել Երկրի ներսում տեղի ունեցող իրադարձություններից և դրանով իսկ ինչ-որ չափով օգնություն ցուցաբերել ու թեթևացնել Սասունի դրությունը:

Այս տեսակետն ավելի քան վիճարկելի է և ինչ-որ տեղ՝ անիմաստ: Եթե արշավանքը ձեռնարկվեր Սասունի դեպքերի սկզբնական շրջանում. ապա այն գուցե ինչ-որ ազդեցություն ունենար: Չէր բացառվում. որ հայ մարտական ուժերի գործողությունները փոքր-ինչ շեղեին թուրք իշխանությունների ուշադրությունը և հարկադրեին նրանց հայդուկային խմբերի գործողությունները սանձահարելու նպատակով Տարոնում ու Սասունում կենտրոնացած ռազմական ուժերի մի մասը տեղափոխել սահմանամերձ շրջաններ: Սասունում կռիվներն արդեն ավարտվել էին. և անիմաստ էր այդ նպատակով նման ձեռնարկում իրականացնելը:

3. Համաձայն «Դրոշակ»-ի. ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կենտրոնական կոմիտեն այդ արշավանքը ձեռնարկել է. որպեսզի Ալաշկերտի Ուչքիլիսե. Ղումլիպուճախ և Ղարաբազար գյուղերի բնակիչներին պաշտպանի քրդերի և թուրք գինվորների հարձակումներից[1]:

Այս տեսակետը վիճահարույց է և ոչ այնքան համոզիչ: Եթե. իրոք. Մոսուն և Զորի արշավանքի ձեռնարկման նպատակը Ալաշկերտի հայկական գյուղերի հայությանը թուրք և քուրդ հրոսակախմբերի հարձակումներից ու ոտնձգություններից պաշտպանելն էր. ապա հարց է ծագում. թե ի՞նչու էին մարտական ուժերը նախահարձակ լինում. փոխանակ կազմակերպելու վերոհիշյալ գյուղերի ինքնապաշտպանությունը: Արշավանքի կազմակերպիչները չէին կարող չիմանալ. որ իրենց ձեռնարկած մարտական գործողություններին թուրք իշխանությունները անպայմանորեն կպատասխանեին առավելագույն բռնությամբ. և վտանգված վերոհիշյալ գյուղերը անխուսափելիորեն կհայտնվեին ավելի դաժան ու վտանգավոր կացությունում:

Արշավանքի ձեռնարկման պատճառներն ու ընթացքի ուսումնասիրությունը փաստում են. որ այն կարող էր հետապնդել նաև վրեժխնդիր լինելու և մեկ անգամ ևս թշնամուն հայ ֆիդայու ուժը ցույց տալու ու նրան հենց իր որջում ջախջախելու նպատակ: Այս առումով. կարելի է ասել. որ Մոսուն-Զորի արշավանքը

[1] «Դրոշակ», 1904, թիւ 9, էջ 483: Նաև ՀՅԴ ԿԱ թղ 309, գ. 31:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 111:
[3] Տե՛ս նույն տեղում:

[1] Տե՛ս «Դրոշակ», 1904, թիւ 9, էջ 484:

համահունչ է Խանասորի արշավանքին ու ամենայն հավանականությամբ հանդիսանում է նրա տրամաբանական շարունակությունը:

1904 թ. մայիսին Թիֆլիսում կայացած ՀՅԴ Արևելյան շրջանի ուսյունական ժողովում Բարձրավանդակի վերաբերյալ ժողովականները պաշտպանել են երկու հակոտնյա տեսակետ.

1. Ժողովականների մի մասը իրավացիորեն պնդել է, որ եթե Բարձրավանդակում դեպքերն արդեն ավարտվել են, ապա ավելորդ ու անօգտակար է այլևս մարտական ուժերի առաքումը Սասուն, քանի որ նրանց գլխավոր նպատակը «...պիտի լինէր, շփոթեցնելով տաճիկ կառավարութիւնը, ջլատել նրա ուժերը եւ թուլացնել Բարձրաւանդակի դէմ ուղղած հարուածը...»[1]:

2. Հակառակ տեսակետ պաշտպանողները գտնում էին, որ եթե նույնիսկ ընկճված լիներ Բարձրավանդակի դիմադրությունը, ապա, այնուամենայնիվ, պետք չէ դադարեցնել մարտական ուժերի տեղաշարժերն ու նրանց առաքումը Երկիր «... որպէսզի կռիւը ավելի երկարատեւ լինի, մինչեւ որ դորա ձայնը, հարկատոր չափով, զարկի Եւրոպայի ականջին եւ Եւրոպական մամուլը հեղեղուի մեր կռուի լուրերով, մեր կռուի համառութեամբ, մենք ավելի շանս կը ստանանք պետութիւնների ուշադրութիւնը գրաւելու»[2]:

Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին նաև, որ եթե դադարեցվեն մարտական ուժերի գործողությունները, ապա դա կարող է խոր հիասթափություն ու հուսալքություն պատճառել ժողովրդին և սառը ջուր լցնել նրա հեղափոխական տրամադրության վրա: Իսկ եթե շարունակվեն մարտական ձեռնարկները, ապա «...հաւատ կը ներշնչենք ժողովրդին, որ յեղափոխութիւնը արդէն իր զարգացման հաստատուն ճանապարհի վրայ կանգնած եւ քանի գնում, ավելի ու ավելի ուժգին են լինում նրա արտահայտութիւնները: Ժողովի մեծամասնութիւնը յանգեց երկրորդ կարծիքին եւ որոշեց շարունակել իրագործել Ընդհանուր Ժողովի վճիռները...»[3]:

Թիֆլիսի Ռայոնական ժողովի համանման դիրքորոշումը փաստում է, որ հայդուկային առանձնակի գործողություններով ժողովրդին ոգեշնչելն ու նրան ազատագրական պայքարի մղելը մնում էր ՀՅԴ գործունեության հենասյուներից մեկը: Ռայոնական ժողովը որոշում է հավանություն տալ արշավանք կազմակերպելու ՀՅԴ Երևանի «Մրգաստան», Ալեքսանդրապոլի «Քար» և Կարսի «Ջրաբերդ» կենտր. կոմիտեների որոշմանը, միաժամանակ շեշտում այդ ձեռնարկումը հնարավորինս արագ ժամկետում իրականացնելու անհրաժեշտությունը[4]:

Արշավախումբը պետք է հարձակվեր Բագրևանդ գավառի երեք գյուղերի՝ Սբ. Հովհաննու վանքի մերձակայքում գտնվող Ուչքիլիսեի և Ղումլիպուճախի՝ համապատասխանաբար 50 և 30 զինվոր ունեցող զորանոցների և Մոսունի 150 զինվոր ունեցող զորանոցի վրա[1]:

Այդ ժամանակ թուրք իշխանությունները ավելի են շատացնում սահմանապահ զորքերի քանակը, այլև մեկ անգամ ևս ներխուժում «... հայկական մի գծի վրայ կողք կողքի ընկած հինգ գիւղեր - Ղումլուպուճաղ՝ 40 տուն, Ուչքիլիսէ՝ 30, Մայրոց 15 եւ Զուղան՝ 40, ենթարկուեցին թալանի եւ աւերման»[2]:

Ռուս սահմանապահներն իրենց հերթին նույնպես ավելի են ուժեղացնում սահմանների հսկողությունը, և Երկիր անցնելը դառնում է ավելի դժվար ու վտանգավոր: Նման իրավիճակում մարտական նոր ձեռնարկումների իրականացումը, բնականաբար, դառնում է շատ ավելի բարդ, որն էլ անհրաժեշտաբար թելադրում է փոխել մարտական խմբերի գործողությունների մարտավարությունը: Եթե ՀՅԴ «Մրգաստան» կենտր.կոմիտեի նախկին որոշման համաձայն «Արտավազդ» և «Մասիս» մարտախմբերը պետք է գործեին Ուչքիլիսե, Ղումլուպուճաղ գյուղերի շրջակայքում, ապա այս անգամ արդեն ծրագրվում էր «Մսուրի զօրանոցը իր ուժեղացած պահագնդերով մնաց արշաւանքի առաջին կէտը, իսկ յարձակման երկրորդ կէտը ընտրուեց Զօռի պահականոցը, ուր նմանապէս կրկնապատկուած էր զօրքի թիւը: Ծրագրի մէջ առնուեցաւ նաեւ զիլանցի քրդերի մի մեծ օբա, որ իր 60-ի չափ վրանները դրել էր Զօռի մօտակայ ձորակի լանջերի վրայ»[3]:

Արշավախումբը բաղկացած էր 102 մարտիկներից, որոնցից «Բերդան» և «Մոսին» տիպի հրացաններով զինված են եղել միայն 85-ը, իսկ մնացած 17-ը, որոնք մարտախմբերի բեռնակիր-շալակավորներ էին, զինված են եղել ատրճանակներով ու դաշույններով[4]:

Արշավախմբի կազմավորման, զինման, հանդերձավորման նպատակով ծախսվել են ֆինանսական հետևյալ միջոցները.

« 60 բերդան հրացան, հատը 30 ռուբլի 1,800,00
25 մսին », 15000 փամփուշտ բ. » 5 կոպեկ 750,00
8750 » մ.» 10 » 875,00
Ուրիշ ռազմամթերք 1043,85
Զէնքի փոխադրութիւն 177,50
Փամփուշտներ 703,62
Զինուորների տեղափոխութիւն 260,84
» ապրուստը 1005,08
Արշաւախմբի հագուստ 302,82 . ուտեստ 456,00
» մօտ պատրաստ դրամ ռուբլի 9,033,27»[515]:

---

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 111:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:

[1] Տե՛ս Օնիկի, Մսուն եւ Զոռի արշաւանքները, 1905, էջ 7:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ թ.ծ 301, գ. 19:
[4] Նույն տեղում:
[5] Օնիկի, նշվ. աշխ., էջ 13:

Արշավախմբի մասնակիցները զինված են եղել նաև 80 ձեռնառումբերով, այսինքն յուրաքանչյուր մարտիկ ունեցել է մեկական ձեռնառումբ:

Մի էական պարզաբանում. «Հայրենիք» շաբաթաթերթում «Մոսուն- Զորի» արշավանքը լուսաբանող ակնարկում նշվում է, որ «Արտավազդ» մարտախմբի խմբապետը Գայլ Վահանն է, իսկ «Մասիս» մարտախմբինը՝ բաբերդցի Միհրանը: Նույնը տեղ է գտել նաև Մ. Վարանդյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի գործերում[1]:

ՀՅԴ կենտրոնական արխիվում պահպանվող, այդ արշավանքի մասին պատմող վավերագրում, ուր գրված է արշավախմբի բոլոր մասնակիցների անուն ազգանունները, նշվում է ճիշտ հակառակը՝ Գայլ Վահանը եղել է «Մասիսի» խմբապետը, իսկ Միհրանը՝ «Արտավազդ» մարտախմբինը[2]:

Համաձայն այդ արշավանքի մասին պատմող այդ վավերագրի, Գայլ Վահանի գլխավորած «Մասիս» խմբի կազմում եղել են 37 մարտիկներ, որոնցից 9 շալակավոր, 1 բժիշկ: «Արտավազդ» խումբը, որի հրամանատարն էր բաբերդցի խմբապետ Միհրանը, բաղկացած էր 65 մարտիկներից, 16 շալակավորներ և 1 բժիշկ[3]:

Հետաքրքիր վիճակագրական տվյալներ են պահպանվել արշավախմբի մասնակիցների տարիքի, գրաճանաչության, սոցիալական վիճակի վերաբերյալ: Արշավախմբի 102 անդամներից .

«78 զինուոր 20-ից մինչեւ 30 տարեկան

18 » 30-ից վեր

4 » 40-ից վեր, 2 » 50 տարեկան

... ամենամեծ տոկոսը՝ 37%-ը, այն է 38 հոգի 20-25 տարեկան էին, որոնցից 12 ճիշտ 20 տարեկան, իսկ 13-ը 21 տարեկան...

... 102 հոգուց 18-ը ամուսնացած էին, իսկ 84-ը ամուրի...»[4]:

Այս նույն հոդվածից պարզվում է, որ «Կարդալ գրել իմացողների թիւը խմբի մէջ հաշուված էր 43, որ կազմում է 42%...

...102 զինուորներից 44-ը պատկանում են երկրագործ դասակարգին, 16-ը պարապում էին զանազան արհեստներով, 10-ը խոհարար, ծառայ եւ նման աշխատաւորներեն իսկ 3-ը անյայտ պարապմունքի տէր մարդիկ... 102 զինուորներից 71-ը ռուսահպատակ հայեր էին եւ 31-ը տաճկահպատակ: 102 զինուորներից 20-ը նախկին կռիւների մէջ եղած, իսկ 32-ը նոր մարդիկ էին...»[5]:

Նկատի ունենալով արշավանքի ընթացքում զինվորներին սպասվող դժվարությունները ու անակնկալները՝ լուծվել է նաև սննդով ապահովելու հարցը:

«Խմբի պաշարը պատրաստած էր շատ թեթեւ, միեւնոյն ժամանակ սննդարար կերպով, իրաքանչիւր զինուորի համար 7-8 օրուայ պաշարի համար տրուած

[1] Տե՛ս «Հայրենիք» շաբաթաթերթ, 1905,
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ թծ 301, գ. 19:
[3] Տե՛ս Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

էր 6-8 հատ լաւաշ հաց, որ կանի մօտ 6-8 ֆունտ (409 գրամ, գրվանքա), գաթայ 2 ֆունտի չափ, հարեւ 5-6 ֆունտի չափ, 2-3 ֆունտ խաշած միս, նաեւ լի ջրով...»[1]:

Հուլիսի 6-ի երեկոյան արշավախումբը դուրս է եկել Կոտայքի շրջանի Բաշգյուղ գյուղից և հաջորդ օրը ժամը 11-ին արդեն մոտենում է Արաքս գետին ու կանգ առնում նախատեսված առաջին կայանում: Իսկ այդ ընթացքում դեպքերը զարգանում են այնպես, որ հարկադրում են արշավախմբին ժամանակավորապես հրաժարվել Արաքսը գետանցելուց և նախատեսվածից մի փոքր ավելի մնալ առաջին կայանում:

Պարզվում է, որ Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին, տեղեկանալով հայ հեղափոխական կազմակերպությունների կողմից ձեռնարկվող գործողությունների մասին, անձամբ է առաջնորդում գավառի ոստիկանական ուժերը և մեկնում սահման՝ խափանելու հայ մարտական ուժերի ձեռնարկումներն ու հնարավորության դեպքում ձերբակալելու հայ հեղափոխականներին: ՀՅԴ Իգդիրի կոմիտեն, տեղեկանալով Բոգուսլավսկու մտադրության մասին, հասցնում է ժամանակին զգուշացնել արշավախմբի հրամանատարությանը: Մի քանի օր սահմանամերձ վայրերում ապարդյուն որոնումներից և հսկողություն սահմանելուց հետո գավառապետ Բոգուսլավսկին վերադառնում է Իգդիր[2]:

Հաջորդ օրը, ստանալով առաջ շարժվելու թույլտվությունը, արշավախումբը գետանցում է Արաքսը և հուլիսի 9-ին, համաձայն Ղազար Քոչարյանի, հասնում «Գիւն-Կէօրմէզի խոր ձորը, ուր եւ կը գտնուէր խումբին երկրորդ կայանքարանձաւը»[3]:

Մի փոքր դադար առնելով երկրորդ կայանում՝ արշավախմբի Զինվորական խորհուրդը գումարում է հերթական խորհրդակցությունը և կայացնում է նոր որոշումներ, որոնց մասին Գայլ Վահանը հուլիսի 9-ին թվագրված նամակում հայտնում է հետևյալը. «... 1. Գիշերել առաջին գիշերն աղլեներում, որը գտնվում է այստեղից 6 ժամվա ճանապարհի վրա ռուսաց սահմանում...

2. Գիշերը մնալ Գյուն-Գեորմազում (Ղ. Քոչարյանի հիշատակած Գիւն-Գէօրմէզի խոր ձորն է - Հ. Գ.), որտեղից պետք է 50 հոգի, Վահանի հետ զինված, թեթեւ պաշարով գնան Մոսունի վրա, իսկ մնացած մասը՝ Միհրանի ղեկավարությամբ բռնեն Զորի դիրքերը:

3. Ուշքիլիսե գնալու ծրագիրը փոխեցինք. 1) Վալատ չլինելու պատճառով եւ 2) ճանապարհի վրա հարմար դիրքեր չունենալու պատճառով:

4. Իրարե նախքան բաժանվելը որոշվեցավ կռվել միասին, ունենալով ղեկավար Միհրանին ու Վահանին,- կռվելու տակտիկան Միհրանին, իսկ դիրքեր գրավելունը, իբրեւ տեղին քաջ ծանոթի՝ Վահանին»[4]:

[1] Նույն տեղում, էջ 21:
[2] Նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս.,1934, թիւ 6, էջ 82-83:
[4] ՀՅԴ ԿԱ, թծ. 309, գ. 25, էջ 18:

Արշավախումբը հուլիսի 11-ի վաղ լուսաբացին հասնում է հաջորդ՝ երրորդ կայանը, որը գտնվում է Մասիսի փեշերը եզրափակող Չնգլներ կոչվող բարձունքների վրա: Զինվորական խորհուրդը որոշում է, Գայլ Վահանի մարտախումբը պիտի հարձակվեր Մոսունի թուրքական զորանոցի, իսկ Միհրանի մարտախումբը՝ Զորի պահականոցի և ցեղապետ Ուսուբ բեկի քրդական ջելալցիների աշիրեթի 60 վրանների վրա:

Ըստ արշավանքի մասին պատմող վավերագրերի՝ «Մսունի մի ծայրում, Քորոն տանող ճանապարհի վրայ, նստած էր անշուք զորանոցը իր ցածլիկ պարսպապատ բակով, որտեղ Իշքիլիսէի դէպքերի պատճառով աւելացրած զօրքերը, սենեակների փոքրութեան պատճառով, գիշերում էին բացօդեայ: Այստեղ եղող զօրքի թիւը ճիշտ հաշուով 160 էր, որոնցից 50-ը նորակոչիկներ: Զօրանոցից մի փոքր հեռու, գիւղական ջրաղացի մօտ, ցցուած էին երկու սպիտակ վրաններ օֆիցերների համար»[1]:

Գյուղացիների պատմածներից հայտնի է դառնում, որ նույն պահին Մոսունում գտնվող զինվորների թիվը գրեթե կրկնապատկվել էր, և զորանոցը պաշտպանող անձնակազմի թվաքանակը հասել էր 300-ի: Գյուղացիների պատմածներից պարզվում է նաև, որ «...այստեղ էր գտնւում այն օրը Բայազէտից Ուշքիլիսա գնացած օգնութիւնը դէպքերի առթիւ 200 ձիաւոր, որոնք միւս օրը պէտք է գնային: Մոսունի դէպքի առթիւ մնացին»[2]:

Բացի զորանոցում ու պահականոցում տեղաբաշխվածներից, այդ պահին զինվորներ են եղել նաև մերձակա հայկական գյուղերում:

«Ղումլուբուջաղ-- 40 տուն հայ բնակիչ, 25 զինւոր
Իշքիլիսէ-- 30 տուն հայ բնակիչ, 50 զինւոր
Ղարաբազար-- 15 տուն հայ բնակիչ, 10 զինվոր
Ջուջան-- 40 տուն հայ բնակիչ
Մեյդո-- 5
Մսունն-- 100
Քոռուն-- 30
Արծափ--100
Զօր(տաճկ.)-40 զինւոր, պահականոց սահմանի վրայ»[3]:

Կռվի ժամանակ զորանոցում գտնվող հակառակորդի մարտաշարքերը կարող էին համալրել վերոհիշյալ գյուղերում գտնվող թուրք զինվորներն ու քուրդ զինյալները, որոնք կռվի որոտը լսելուն պես կարող էին ցանկացած պահի հարվածել հայ մարտիկների թիկունքին: Ահա նաև այս վտանգի իրողությունը հաշվի առնելով, կարելի է պնդել, որ Մոսունի զորանոցի վրա գրոհող Գայլ Վահանի մարտախումբն արդեն հարկադրված էր կատարել առավել դժվարին առաջադրանք և գործել կրկնապատկված ծանրաբեռնվածությամբ:

[1] Նույն տեղում, գ. 32Ա, էջ 1:
[2] Նույն տեղում, 30, էջ 6:
[3] Օնիկի, նշվ. աշխ., էջ 44:

Զորի պահականոցում եղած զինվորների քանակը Մոսունի զորանոցի անձնակազմի համեմատ ավելի սահմանափակ էր: Բայց այդ ուղղությամբ հարձակվող Միհրանի մարտախումբը գործելու էր երկու ճակատով պահականոցի զինվորների և Ուսուբ բեկի աշիրեթի դեմ:

«Չնգլներ կոչւող բարձունքների ստորոտում,- նշում է «Դրօշակ»-ի հոդվածագիրը, - արեւելքից դէպի հիւսիս-արեւմուտք ընկած է մի ձորակ, որ ձգւելով եւ սեղմւելով Ռէսի-Գօմէրի մօտ վերջանում է մի կիրճով... Ահա այդ ձորակի մէջ ընկած է Զօրի պահականոցը, որտեղ լինում են 40-50-ի չափ զօրքեր: Բացի այդ՝ ձորակի երեք ճիւղերի միացման արձակ տեղում փռուած է քրդական փոքրիկ աշիրէթի՝ ջելալցիների մի օրան 60-ի չափ վրաններով»[1]:

Հարձակումը Մոսունի զորանոցի վրա պետք է սկսեր Գայլ Վահանի գլխավորած մարտախումբը, որը պետք է գիշերով իջներ սարից և առավոտյան, լույսը բացվելուն պես, գրոհեր զորանոցի վրա: Հարձակման սկզբում նրանք, նախ, պետք է ռումբեր նետեին զորանոցի ներսը, որը միաժամանակ դառնալու էր ընդհանուր գրոհը սկսելու ազդանշանը: Խմբապետ Միհրանը, լսելով ռումբերի պայթյունները, մարտախմբով անհապաղ պետք է հարձակվեր Զորի պահականոցի և Ուսուբ բեկի վրանների վրա:

Թուրքական զորանոցի վրա ձեռնարկած հարձակումը հայ մարտիկները կարողանում են իրականացնել համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, հակառակորդի համար անսպասելի, մեծ ուժգնությամբ ու սրընթաց: Շրջապատման մեջ հայտնված թուրքերին այլ ելք չէր մնում, նրանք պետք է կամ անձնատուր լինեին, որը հավասարազոր էր ստույգ մահվան, որովհետև շատ լավ գիտակցում էին, որ հայ վրիժառուները գերի չէին վերցնելու, կամ փորձեին դուրս գալ զորանոցից: Հակառակ պարագայում, եթե նրանք փորձեին պատսպարվել զորանոցի պատերի հետևում, ապա հայ մարտիկները կարող էին հրդեհել զորանոցը:

Թուրքերը փորձում են դուրս գալ զորանոցից, սակայն հետևում են հայ մարտիկների համազարկերը, և գնդակահար «...աջ ու ձախ թափթփուեցին գալարուող դիակները»[2]:

Պաշարվածների մի մասը, այնուամենայնիվ, կարողանում է դուրս գալ զորանոցից և փորձում ճեղքել պաշարման շղթան: Դուրս են գալիս նաև վրանների մեջ գտնվող թուրք զինվորները և շրջանցելով պարիսպները՝ կրակ են տեղում հայ մարտիկների վրա: Բայց դա չի փրկում նրանց: Շրջապատելով թուրքերին՝ հայ մարտիկներն ահավոր ջարդ են տալիս թուրք զինվորներին: «Երկու ժամ գրեթէ շարունակ անընդհատ տեղող հրացանների եւ ռումբերի կրակից յետոյ տիրեց մի գերեզմանային լռութիւն, զօրանոցում այլեւս կենդանի մարդ չէր մնացել, թուրքերից շատ քչերը միայն յաջողել էին զօրանոցի ետեւի մի փոքրիկ դռնակից դուրս պրծնել եւ գիւղի մէջ պատսպարանք գտնել»[3]:

[1] «Դրօշակ», 1904, թիւ 9, էջ 123:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 309, գ. 32Ա, էջ 1:
[3] «Հայրենիք» օրաթերթ, 1905, մարտի 4:

Մոսունում ընթացող կռիվները դրանով չեն ավարտվում: Թուրք իշխանությունները դեռևս այս դեպքերի նախօրեին, պատրվակ ծառայեցնելով հայ հեղափոխական կազմակերպությունների հարձակումների ապառնալիքը, գյուղում յուրաքանչյուր հայ բնակիչում տեղավորել էին 2-3 թուրք զինվորների: Նույն օրը, երբ հայ մարտիկները պայթեցնում են գորանոցն ու ոչնչացնում այնտեղ գտնվող թուրքերին, հայ գյուղացիները գալիս և հայ մարտիկներին հայտնում են, «...որ իրենց տների մէջ կան գիշերող զինուորներ, որոնք, ըստ սովորութեան, անարգել են հայի ընտանեկան սրբութիւնը...»[1]:

Գայլ Վահանը մարտախումբն առաջնորդում է Մոսուն և գյուղացիների աջակցությամբ կարողանում են գտնել ու ոչնչացնել տներում թաքնված թուրք զինվորների մեծ մասին:

«Գիւղը,- վկայում է այդ դեպքերի մասնակիցը,- միանգամայն մաքրուեց տասնիկ զինուորներից: ...հայ ֆիդայու գնդակներին զոհ գնացին 120-130 տասնիկ զինուորներ, իսկ հայ զինուորներից ընկաւ մէկը եւ վիրաւորուեց երկուսը»[2]:

Խմբապետ Միհրանի մարտախումբը հարձակվելու էր Զորի թուրքական պահականոցի և Ուսուբ բեկի վրանների վրա: Որպեսզի հարձակումն առավելագույն արդյունավետությամբ ընթանար, մարտախմբի հրամանատարությունը հաշվի է առնում Զոր գյուղի պահականոցի ու քուրդ աշիրեթի վրանների տեղաբաշխման կառուցվածքն ու յուրահատկությունները և ըստ այդմ մշակում հարձակման պլանը: Քանի որ պահականոցը գտնվում էր ձորակի մեջ, իսկ վրանները՝ սարալանջերի վրա, մարտախմբի հրամանատարությունը որոշում է կտրել դրանք կապող միակ ուղին՝ ձորի ճանապարհը, և նրանց ջախջախել առանձին-առանձին:

Նման մարտավարությամբ հնարավորություն կտար հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքն ու նախատեսված ժամանակին՝ ցերեկվա ժամը 12-ին, պայմանավորված վայրում՝ Չնգլների բարձունքներում միանալ Գայլ Վահանի խմբին:

Միհրանի մարտախմբի տասնյակները պիտի գրավեին նախանշված դիրքերը և սպասեին Մոսունի ուղղությունից տրվող ազդանշանին: Լսելով գորանոցում պայթող ռումբերի որոտը՝ Միհրանի մարտախմբի տասնյակները սկսում են գրոհը: Ինչպես Խանասորի արշավանքի, այնպես էլ Մոսունի և Զորի կռիվների ժամանակ, հայ մարտիկները խստորեն պահպանելով արդեն որդեգրած ավանդույթը, խնայել են թշնամու կանանց ու երեխաներին:

Ընդամենը երկու ժամ է տևել ձորակում ընթացող կռիվը: Թուրքական գորանոցը, պահակակետն ու քուրդ աշիրեթապետ Ուսուբ բեկի ցեղախումբը իսպառ ոչնչացված էին: Որքան էլ հայ մարտիկները գործեին զգուշությամբ ու արագորեն, այնուամենայնիվ, հնարավոր չէր թուրքական սահմանապահ զորամասերի և քրդերի ուշադրությունից կծկել Մոսունում և Զորում ընթացող գործողությունները: Նույն օրը, առավոտյան, քրդական մի քանի ցեղախմբեր հայտնվում են մարտադաշտում և հարձակվում հայ մարտիկների վրա: Մի փոքր անց մարտադաշտ են հասնում նաև կանոնավոր զորքը[1]:

Մարտադաշտում հայտնված թուրքական զորավաշտերն ու քրդական աշիրեթներն իրենց առաջին հարվածը ուղղում են Մոսունում գտնվող Գայլ Վահանի մարտախմբի վրա: Նախօրեի հաղթանակից հետո ֆիդայիների համար առանձնապես որևէ դժվարություն չէր անմիջապես հեռանալ մարտադաշտից, խույս տալ հակառակորդի հետ ընդհարվելուց և բարձրանալ լեռան բարձունքները:

Կասկած լինել չէր կարող, որ թուրքերն ու քրդերը, տեսնելով իրենց արյունակիցների կոտորածը, անպայման կդիմեն փոխվրեժի և կկոտորեին Մոսունի և նրա մերձակայքում գտնվող Քորունի հայ բնակչությանը: Այդ իրավիճակում հայ մարտիկների գլխավոր խնդիրը դառնում է հայ բնակչության անվտանգության ապահովումը: Մոսունի և Քորունի հայ գյուղացիները նույնպես, հասկանալով թշնամու կողմից իրենց սպառնացող կործանարար վտանգի անխուսափելիությունը, արագորեն լքում են իրենց բնակավայրերը և սկսում բարձրանալ Չնգլ լեռան բարձունքները՝ հույս ունենալով այնտեղից ապահով հասնել ռուսական սահմանը[2]:

Գաղթականությանը թուրք զինվորներից և քուրդ հրոսակախմբերից պաշտպանելու համար Գայլ Վահանը առանձնացնում է երկու տասնյակ:

« Թուրքերը,-վկայում է Մարտիրոսը,-աշխատում են կտրել դուրս եկող ազգաբնակչութեան ճանապարհը, երբ Վահանն ու Կոլիան երկու մասի են բաժանւում և լաւ ջարդ տալիս օգնութեան հասնող քրդերին ու այդպիսով ազատում են ժողովուրդը: Իսկ իրենք կամաց - կամաց աշխատում են մօտենալ ու բարձրանալ Չինգիլ սարը, բայց շրջապատւում են 400-500 քայլի վրայ»[3]:

Նույն օրը՝ ժամը 12-ին, համաձայն նախնական պայմանավորվածության, երկու մարտախմբերը պետք է հանդիպեին Չնգլների բարձունքներում: Բայց Գայլ Վահանի մարտիկները, համառ կռիվներ մղելով և գաղթականությանը պաշտպանելով, մի փոքր ավելի ուշ են հասնում նախանշված վայրը: Միհրանի մարտախումբը նույն օրն առավոտյան գրոհի է ենթարկվում թուրքերի ու քրդերի կողմից: Այդ խմբի վիճակը, քանի որ չկային գաղթող հայ գյուղացիներ, անհամեմատ ավելի գերադասելի էր: Միհրանի մարտախումբը, դիմագրավելով հակառակորդի հոծախումբ գրոհները, աստիճանաբար ելնում է բարձունքները[4]:

Նկատելով գաղթականությանը հետապնդող հակառակորդին՝ լեռնալանջերին դիրքավորված Միհրանի տասնյակները կրակն ուղղում են թուրք զինվորների վրա ու օգնում Գայլ Վահանի մարտիկներին և հայ գյուղացիներին՝ ապահով բարձրանալու լեռնալանջերը: Անընդմեջ շարունակվող մարտերում ֆիդայիներն

---

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 309, գ. 31, էջ 1:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 4, գ. 3, թ. 1:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 1, էջ 99:
[4] ՀՅԴ ԿԱ, թթ. 309, գ.25:

ունենում են անփոխարինելի կորուստներ: Մինչև վերջին հնարավորությունը մարտնչելով ընդդեմ բազմապատիկ գերակշռություն ունեցող թշնամու դեմ՝ զոհվում են Դայլ Վահանը և նրա զինակիցներ Բաբկենը, Համոն ու Դարեգինը: «Չորս հերոսների նահատակման տեղում, շատերի ասելով, թշնամին թողեց աւելի քան հարիւր յիսուն դիակներ...» [1]:

Նույն պահին ոչ պակաս համառությամբ կռիվներ էին ընթանում նաև մյուս դիրքերում: Թուրքերը մոտեցնում են թնդանոթները և կրակ տեղալով լեռնալանջերի զանազան հատվածներում պատսպարված գաղթող ժողովրդի և նրանց նահանջը պաշտպանող զինվորների վրա՝ վերսկսում են գրոհները:

Կռիվը շարունակվում է մինչև արևամուտ: Կորցնելով ավելի քան 250 զինվոր՝ թշնամին դադարեցնում է հարձակումները և նահանջում [2]:

Լարված և դաժան կռիվներից հետո, իրենց հետագա անելիքները որոշելու նպատակով, մարտիկները հավաքվում են խորհրդակցության: Տվյալ իրավիճակում ո՞րն էր նրանց համար ամենամտահոգիչը, անկասկած. « Նրանց հոգսը գաղթող ժողովուրդն էր... Յոգնածութիւնը, քաղցն ու ծարաւը ուժասպառ էին արել այդ թշուառ մասսային: Իսկ քերծուած, արիւնալաւայ եղած մանկական սրտերի կսկիծը աշխարհ էր լացացնում» [3]:

Այն պահին, երբ հայ մարտիկները տարված էին դժվարին իրավիճակից ելք փնտրելու խնդիրների քննարկմամբ, անսպասելիորեն ռուսական սահմանի կողմից նրանց վրա է տեղում հրացաններից արձակած կրակը, և մի քանի մարտիկներ գնդակահար գետին են տապալվում: Ի՞նչ էր տեղի ունենում: «Սահմանի վրայ կանգնած էր ռուսահպատակ քիւրդ Համիդ բէկը իր երկու հարիւրից աւելի հրացանաւորներով, իսկ նրանցից աւելի էլ բարձր դիրքեր բռնած երեք հարիւրից աւելի պլաստուն կօզակներ եւ սահմանապահ զօրքեր կրակ էին տեղում...» [4]:

Ծանր գոտեմարտերում թուրքական կանոնավոր զորավաշտերի և քրդական հրոսակախմբերի դեմ հաղթանակ նվաճած հայ մարտիկները այս անգամ արդեն հայտնվում են անելանելի իրավիճակում: Նրանց կաշկանդողը գաղթականության խնդիրն էր: Արշավախմբի հրամանատարությունը որոշում է խաղաղության սպիտակ դրոշ բարձրացնել, բայց «...իզուր: Քրդի հետ միասին նրա դաշնակից ռուս զինուորը արհամարհեց զէնքը վայր դնելու նշանը եւ շարունակեց կրակ տեղալ» [5]:

Ստեղծված իրավիճակը թելադրում էր կամ մինչև վերջ կռվել ռուս սահմանապահների և քրդերի դեմ, կամ հանձնվել: Եթե փորձեին կռվի բռնվել ռուս սահմանապահների հետ, որը նրանց ծրագրերից դուրս էր, ապա դա նշանակում էր վերջնականապես անկարելի դարձնել գաղթականությանը ռուսական սահման անցկացնելն ու այնտեղ ապաստան գտնելը: Արշավախմբի հրամանատարությունը որոշում է խուսս տալ ռուսների հետ բախվելուց, իսկ ծայրահեղ դեպքում՝ հանձնվել:

«Տե՛ր.- հրամայում է խմբապետ Միհրանը,- զատուեցէք գաղթականներից եւ զէնքերդ ուղղեք միմիայն քրդին, իսկ ռուսին մի դիպեք... Այս խօսքերի հետ խմբապետը առաջ անցաւ ինքը, նորից տեղաց հայդուկների կրակը» [1]:

Երկու օր ու գիշեր բարձունքներում և ձորերում պատսպարված գաղթականներին պաշտպանելով՝ հայդուկները հետ են մղել թշնամու գրոհները: Մարտերի ընթացքում հայդուկների գործողությունները կաշկանդել են ոչ միայն ռուս սահմանապահների արձակած կրակն ու գաղթական բազմության ներկայությունը, այլև քաղցն ու ծարավը:

Շատ ծանր է եղել մանուկների և վիրավորների վիճակը: Գաղթականությանը փրկելու հարկադրանքով հայ մարտիկների մի մասը՝ 34 հոգի, անձնատուր է լինում, իսկ մյուսները կարողանում են մթության քողի տակ անհետանալ: Մարտից հետո ռուս զինվորները դրսևորում են զինվորին ոչ հատուկ այնպիսի նողկալի ու անբարո պահվածք, որով փաստում են, որ բնավ պատահական չէր նրանց դաշնակցությունը քուրք զինվորներին ու քուրդ հրոսակներին:

Կռվի մասնակից-վավերագիրը, որպես տեղի ունեցածի ավարտական խոսք, ներկայացնելով ռուս զինվորների պահվածքը, նշում է. «Հորիզոնի յետեւից մեղմիկ կերպով իր շրջանն սկսող արծաթափայլ լուսինը, Չնգլի բարձունքների եւ ձորակների մէջ երեւան հանեց շարժուող ստուերները-դրանք ռուս կօզակներն էին, որոնք կողոպտում էին հայդուկների դիակները...» [2]:

Մուսուն- Զորի արշավանքի կազմակերպիչները կարծում էին, որ թուրք իշխանություններն ի պատասխան հայ ֆիդայիների կողմից իրենց զորանոցների ու քուրդ ցեղախմբի վրա ձեռնարկած հարձակմանը, կկոտորեին հայ բնակչությանը:

Հ.Յ.Դաշնակցության Արևմտյան Բյուրոյին հասցեագրած զեկուցագրում Թավրիզի «Վրեժ» կենտր. կոմիտեն նախ Արևմտյան Բյուրոյին տեղեկացնում են թուրքական զորանոցների վրա հայ մարտախմբերի հարձակման իրողությունը՝ նշելով. «Յուլիսի 12-ին Վահանի արշավախումբը յարձակուեց Զորի վրայ լուսաբացին. մի քանի ռումբեր պահականոցի մէջ աւերում գործեցին, պահակախմբի մեծ մասը ընկաւ. պահականոցը ընկաւ ապստամբների ձեռքը» [3]:

Այնուհետև Բյուրոյի ընկերներին ներկայացնում են հայ գյուղացիների վիճակը. «...Մօսունի եւ Քոռունի հայ գիւղերի բնակիչները դատարկեցին գիւղերը ու փախան, սպասում է հայերի կոտորած» [4]:

---

[1] Նույն տեղում, գ. 31, էջ 1:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 25, էջ 6:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, գ. 39, էջ 1:
[5] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 1, էջ 99:

---

[1] Օնիկի,նշվ. աշխ., էջ 29-30:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 466, գ. 237, էջ 1:
[4] Նույն տեղում:

Զեկուցագրի հեղինակների նպատակը միայն այն չէ, որպեսզի ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին ներկայացնեն կատարված դեպքերի մանրամասները: ՀՅԴ Բյուրոն, հիմք ունենալով Երկրից ստացած տեղեկությունը, պիտի ձեռնարկեր որոշակի քայլեր, դիմեր տարբեր լուսավամիջոցների ու կազմակերպությունների, որպեսզի նրանց աջակցությամբ հնարավորինս կանխվեին հայ բնակչության սպառնացող ջարդն ու տեղահանությունը [illegible]:

Զեկուցագրի բովանդակությունը մատնանշում է, որ արշավանքի կազմակերպիչները դարձյալ առաջնորդվել են հայ բնակչության գլխին ծառացած մահաբեր սպառնալիքը օտար ուժերի միջամտությամբ կանխելու մարտավարությամբ: Իսկ ժամանակը արդեն ապացուցել էր, որ նման մարտավարությամբ առաջնորդվելն ազատագրական պայքարին դրական որևէ օգուտ չէր տվել ու չի կարող տալ: Միամտություն կլինի կարծել, որ ՀՅԴ ղեկավար մարմինները չէին հասկանում այդ իրողությունը: Եթե ընդհանրացնենք Դաշնակցության գործունեությունը Սասունի ապստամբության, մարտական և զինատար խմբերի ու կազմակերպման գործում, ապա որպես ելակետ պիտի ընդունել նաև հայկական շարժման նպատակի վերաբերյալ Քր. Միքայելյանի հետևյալ բացատրությունը . «Ինչ էր ուրեմն մեր շարժման նպատակը: Ուրիշ ոչինչ, եթե ոչ կազմակերպած, բռնի ուժերով կռուել, բողոքել Տաճկստանում տիրող կարգերի դէմ մինչ վեց պետութիւնների երաշխաւորած միջամտութեամբ կը փոխեն այդ կարգերը դէպի լաւը»[1]:

«Մոսուն- Զորի» արշավանքի, ինչպես նաև մարտական և զինատար խմբերի ջախջախման ու ձախողումների իրողությունը միանշանակ ապացուցեց, որ համանման ճանապարհով Երկիր զինական ուժեր ուղարկելը գրեթե անհնարին էր և անարդյունավետ: Վերոհիշյալ մարտախմբերի ջախջախումից հետո միայն Հ.Յ.Դաշնակցությունը հարկադրված ձերբազատվում է այդ մարտավարությունից և դադարեցնում խմբերի առաքումը Երկիր: Եվ ինչպես իրավացիորեն նշել է Ամերիկայում լույս ընծայվող «Հայրենիք» շաբաթաթերթը, «Երկու նկատառումներ միայն հարկադրեցին յեղափոխական կազմակերպութիւնը դադարեցնելու խմբերի առաքումը. Մսուսնի արշաւանքէն ետք (յուլիս).

Առաջին՝ Սասունի դիմադրութիւնը վերջացած էր, եւ նոր խմբեր կայուն հաջողութիւն չպիտի կրնային ունենալ, եթէ մինչեւ իսկ հասնէին Մշու դաշտ:

Երկրորդ՝ ռուսները ծայրահեղ աստիճան խստութիւններ սկսան գործադրել սահմանագլխին վրայ, որոնք յանգեցան Որսկան խմբի ծանր կորուստներուն, Օլթի մօտ, յուլիս 14, եւ Մսուսն եւ Զօրի արշաւանքէն վերադարձող խմբերուն տուած զոհերուն՝ յուլիսի 25-էն»[2]:

[1] «Դրօշակ», 1900, թիւ 2, էջ 17:
[2] «Հայրենիք» շաբաթաթերթ, 1905, թիւ 287, էջ 7:

ԳԼՈՒԽ 4

ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Աղթամար կղզում տեղի ունեցած խորհրդաժողովից հետո Գևորգ Չավուշն ու Կորյունը զինակիցներով վերադառնում են Սասուն:

Կարելի՞ է Գևորգի ու Կորյունի և նրանց գլխավորած 17 ֆիդայիների վերադարձը ընդունել որպես Հ.Յ.Դաշնակցության որոշում, որը սկզբնավորելու էր պայքարի նոր մարտավարություն:

ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովում, ինչպես արդեն նշվել է, ընդունվել էր «...ուժերու կեդրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով ֆէտայական ասպատական գործունէութիւնը...» որոշում, որը հաստատվել էր նաև հաջորդ 3-րդ Ընդհանուր ժողովի կողմից: Իսկ դա նշանակում է, որ ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցում ՀՅԴ դիրքորոշումն անփոփոխ էր[1]:

Ազատագրական պայքարի փորձը մատնանշում էր, որ հայդուկային-պարտիզանական կռիվների մարտավարությունը չէր կարող հուսալի և արդյունավետ միջոց լինել ընդհանուր ապստամբության կազմակերպման գործում: Իսկ որևէ կասկած լինել չէր կարող, որ Գևորգ Չավուշի վերադարձը, հավասարազոր էր հայդուկային-պարտիզանական կռիվների վերսկսմանը: Հարց է ծագում, եթե Գևորգ Չավուշը պիտի մարտական-հայդուկային գործողություններ ձեռնարկեր, ապա որքանով էր նպատակահարմար նրա ներկայությունը Տարոնում ու Սասունում, որ այդ ժամանակ հեղեղված էին թուրք զինվորներով ու ոստիկաններով:

Գևորգը հանրահայտ դեմք էր, թուրք իշխանությունները վաղ թե ուշ կբացահայտեին նրա ներկայությունը և անկասկած համապատասխան քայլեր կձեռնարկեին նրան որոնելու ու ձերբակալելու: Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, կարելի է ասել, եթե ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցում ՀՅԴ դիրքորոշումն անփոփոխ էր, ապա քիչ հավանական է, որ ՀՅԴ խորհուրդը և Բյուրոն կհամաձայնվեին թույլատրել Գևորգի վերադարձը, ինչը միանշանակորեն հավասարազոր է հրաժարվել 2-րդ և 3-րդ Ընդհանուր ժողովներում ընդունած որոշումից և շարունակել նախկին՝ մասնակի հայդուկային-պարտիզանական բնույթի կռիվներ մղելու մարտավարությունը: 3-րդ Ընդհանուր ժողովը տեղի էր ունեցել նույն տարվա փետրվար-մարտ ամիսներին, որից հետո ՀՅԴ ղեկավար՝մարմինները՝ Խորհուրդ և Բյուրոն, նման որոշում չեն ընդունել և չէին կարող ընդունել:

Աղթամար կղզում տեղի ունեցած խորհրդաժողովին, չեն մասնակցել Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի անդամները: Հրայր Դժոխքը զոհվել էր, իսկ Վարդան վարդապետն ու Տատրակը այդ ժամանակ գտնվում էին

[1] Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 58:

Մուշ քաղաքում: Կարելի է ասել, որ Գևորգ Չավուշի և ֆիդայիների Սասուն վերադառնալու վճիռը պայմանավորված է Սասունի մարտական ուժերի ռազմական խորհրդի անդամների ու ՀՅԴ Վանի (Շամի) կենտր. կոմիտեի գիտությամբ: Ավելին, եթե չլինեին Երկիր վերադառնալու Գևորգ Չավուշի հաստատակամությունն ու ցանկությունը, ապա չէր բացառվում, որ չընդունվեր նման որոշում և հետագա իրադարձությունները Տարոնում ու Սասունում զարգանային բոլորովին այլ ուղղվածությամբ:

Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել ՀՅԴ Վանի (Շամի) կենտր. կոմիտեի անդամ Կոմսին (Վահան Փափազյան) հասցեագրած Գևորգ Չավուշի հոկտեմբերի 14-ին և 27-ին թվագրված նամակներում [1]:

Պարզվում է, որ Գևորգը ոչ միայն տրամադրված էր վերադառնալու իր հայրենի բնակավայրը, այլև բնավ դեմ չէր, որ Սասունի կռիվներում իր ընկերակցությամբ մարտնչած զինակիցները չլքեին Երկիրն ու հեռանային: Նրան մեծ վիշտ էր պատճառել Սալմաստից Անդրանիկի գլխավորած խմբի հեռանալու լուրը: Նա ներքուստ հույսեր է փայփայել, որ իր զինակիցները կվերադառնան և իրենք դարձյալ միասին կպաշտպանեին ժողովրդին [2]:

Սալմաստի տարածքից զինախմբի հեռանալու կապակցությամբ հայտնելով իր դժգոհությունը՝ Գևորգ Չավուշը գրում է. «... Շահեէնի (նկատի ունի Անդրանիկին - Հ.Գ.), Մուրատի եւ իրենց հետ եղողներ ովքեր են ապահով անցած են թէ ոչ: Երբ լսուայ որ բազմութիւնով անցել են, շատ եւ շատ ցաւեցայ, որ այսքան ընկեր եւ զինուոր ինչու համար թողին ու հեռացան: Թէ զերկիր ազատեցին ու գնացին, կը զարմանամ ինչ երեսով կամ ինչ պատասխաններով գլուխ բարձրացրին, ափսոս հազար ափսոս... որ զմեր հարկ չենք գիտէր, չենք գիտէր նաեւ յեղափոխութեան յարգ ու պատիւ» [3]:

Այդ նույն նամակում ֆիդայիների հեռանալու կապակցությամբ հայտնելով ոչ միայն անձնական, այլ նաև Տարոնի ու Սասունի ժողովրդի դժգոհությունը, Գևորգ Չավուշը արտահայտում է իր նկատառումները և միաժամանակ իրավացիորեն հարց տալիս. «Հայրենիք մարդ է ուզում, հայրենիք զինուորի է կարոտ, բայց նրանք որ փորձառու, զէնքի վարժ խոյս կուտան հայրենիքէն. իսկ նրանք որ Երկրին անծանօթ, զէնքի ու կռուի անվարժ, փափագում են գալ ու մնալ հայրենիք մնալու համար: Բայց փորձառուներ փախչում են. այս կողմերի թէ լեռան եւ թէ Տարօնի ժողովուրդ, որ լսած է ըտոնց գնալը, տեսակ մը յուսահատութիւն է տիրել իրենց վրայ» [4]:

Գևորգին հետաքրքրում է, թե Սալմաստից զինակիցների հեռանալը եղել է ինչ-որ մեկի խորհրդով ու որոշումով, թե՞ նրանց կամքով ու ցանկությամբ և այդ պատճառով, գուցեն զուտ իր հետաքրքրությունը բավարարելու նպատակով՝ Կոմսին ուղղում է նաև հետևյալ հարցը. «... եղբայր, եթէ մեր յեղափոխութիւնը այդպէս է, ինչո՞ւ կը ճամփենք ժողովուրդ եւ հայրենիք» [1]:

Եթե Դուրան-Բարձրավանդակում ծավալվող դեպքերը պայմանավորված լինեին ՀՅԴ ծրագրած հստակ մարտավարությամբ, ապա, բնականաբար, Գևորգ Չավուշի մոտ նման դժգոհություններ և հարցադրումներ չէին առաջանա: 1904 թ. Սասունի ապստամբությունը ճնշելուց հետո թուրք կառավարությունը մահվան սպառնալիքով հայերի ձեռքերով Սասունի կարևորագույն վայրերում կառուցում է գորանոցներ, ուր պիտի տեղաբախշվեին թուրքական զորագնդերը: Ժողովուրդը դաժանորեն կեղեքվում էր թուրքական հարկահավաքներից, իսկ քուրդ աշիրեթները շարունակում էին հայկական բնակավայրերի բռնազավթումները, ավերն ու կանանց առևանգումը: Համանման իրավիճակ էր նաև Դաշտի գյուղերում: Ահա այդ օրերին մարտական զինակիցներով Տարոն են հասնում Գևորգ Չավուշն ու Կորյունը (Գոմսա Իսոն): Իր խմբով նրանց է միանում նաև Սպաղանաց Մակարը:

Ինչպիսի՞ մարտավարություն պիտի ընտրեին Գևորգ Չավուշի ու Կորյունի գլխավորած մարտախմբերը, վերստին հաստատվելով Սասունում և Դաշտում, երբ քայքայված էին ՀՅԴ Դուրան Բարձրավանդակի կազմակերպական կառույցները, իսկ կապը արտաքին աշխարհի հետ կտրված էր:

Մառնիկա սարի վրա հավաքվում են ֆիդայիները՝ որոշելու իրենց անելիքները: Նրանք որոշում են խուսափել ընդհարումներից, հանգստացնել, սփոփել ժողովրդին և հասնել խաղաղության հաստատման:

«Գէորգի համար կորոշուի հետեւեալը, քանի որ ան կառավարութեան աչքի փուշն է դարձած, ուստի կռուէ խուսափելու համար պէտք է մնայ լեռներու մէջ ֆէտայիներու մեծ մասին հետ եւ պիտի ձեռք առնէ միջոցներ զսպելու քրդերը եւ դաբիլաքները, առանց սակայն գործը արիւնահեղութեան հասցնելու» [2]:

Թեպետ Գևորգն ու ֆիդայիները գործում էին զգուշությամբ և առանց ավելորդ աղմուկի, այնուամենայնիվ, թուրք իշխանությունները չեն դադարեցնում նրանց որոնումները: Պատժիչ ջոկատների գլուխն անցած Ալայ բեյը շրջում է Դաշտի գյուղերն ու խոշտանգելով գյուղացիներին՝ պահանջում նրանցից հայտնել ֆիդայիների տեղը և հանձնել թաքցրած զենքերը: Ալայ բեյի գործադրած ջանքերը որևէ արդյունք չեն տալիս: Թուրք իշխանությունները նույնիսկ սկսում են հավատալ Դաշտում ֆիդայիներ չլինելու իրողությանը: Կոմսին գրած նամակներում ներկայացնելով Դուրան-Բարձրավանդակում տիրող կացությունը՝ Գևորգ Չավուշը բազմիցս ցավով ներկայացնում հայ բնակչության անօգնական վիճակը [3]:

Թեպետ չէր գործում կապը Դուրան-Բարձրավանդակի և Վասպուրականի միջև, Գևորգը, այնուամենայնիվ, ՀՅԴ Շամի ընկերներին գրում է նամակներ,

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 87, գ. 91, էջ 1:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 2:

[1] Նույն տեղում:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 321:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 688, գ. 91, էջ 1-2:

որոնցով ոչ միայն հայտնում է Դաշտում և Սասունում տիրող իրավիճակը, այլ նաև խնդրում է օգնության ձեռք մեկնել տվամսահության մատնված ու բշնամու կողմից բռնությունների ենթարկվող հայ բնակչությանը:

«...բայց,-գրում է Գևորգը,-երբ կը տեսնեմ ժողովուրդ այդ վիճակի մէջ... սիրտ պէտք է որ դիմանայ, խիղճ պէտք է որ տանէ այդ տեսարանները»[1]:

Համանման կացությունում Գևորգ Չավուշն ու նրա առաջնորդած ֆիդայիները կամ պիտի անտարբերությամբ և հանգիստ դիտեին հայ բնակչության նկատմամբ թշնամու սանձազերծած բռնությունները, կամ ձեռնարկեին սանձող գործողություններ:

«Գէորգ Չաւուշ,- գրում է Կ. Սասունին,- մէկ քանի ամիս թաքնուած մնաղէն ետք, երբ նշմարեց թէ այդ վարմունքը յուսալքում կառաջացնէ, մանաւանդ երբ լսեց, որ կառավարութիւնն ալ սկսած է ժողովրդին քարոզել, թէ ֆէտայիները ձեր տունը քանդեցին, լքեցին ու գացին, կը վճռէ հրապարակ գալ եւ անցնիլ հարուածողական գործողութեան»[2]:

Ժողովրդին ոգևորելու ու քրդերի սանձարձակությունները զսպելու դիտավորությամբ Գևորգը 50 ֆիդայիների գլուխն անցած իջնում է Դաշտ: Որևէ սկզբնաղբյուր չի հաստատում, ու Գևորգ Չավուշի գործունեությունը պայմանավորված է ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի համաձայնությամբ: Գևորգը ծրագրում է կենսագործել պայքարի նոր մարտավարություն: Քուրդ աշիրեթներին սարսափեցնելու ու նրանց որոշ մասի բարեկամությունը շահելու դիտավորությամբ գիշերով, ֆիդայիների հեծյալ խմբով անսպասելիորեն հայտնվում էր աշիրեթապետի դռանն ու համարձակորեն ձայն տալիս. «Մեռածի պէս քնած էք, աղա Գէորգ Չաւուշին այս մութ գիշերին հերիք չէ՞ սպասեցնէք, դուռը շուտ բացէ, դոնաղ (հիւր) եմ եկել[3]:

Գիշերային անսպասելի այցելությունները դիտավորյալ առաջին հերթին արժանացնում էր հայ գյուղացիների նկատմամբ իրենց վայրագություններով առավելապես աչքի ընկած աշիրեթապետերին և «հյուրընկալվելուց» կարճ ժամանակ անց արագորեն անհետանալով՝ հաջորդ օրը հայտնվում մեկ այլ աշիրեթապետի դռանը[4]:

Կարելի է հաստատապես պնդել, որ հայդուկային կռիվներ մղելու իր յուրահատուկ մարտավարությամբ Գևորգ Չավուշը մի նոր, հերոսական էջ գրեց Հայոց ազատամարտում:

Ի տարբերություն Գևորգի, Կորյունը, հարազատ մնալով Հրայր Դժոխքի դավանանքին, շրջում էր գյուղերը և համբերություն ու տոկալ էր քարոզում ժողովրդին: Կորյունի գործելակերպով առաջնորդվելը Գևորգին չէր բավարարում, ժողովրդի ծանր կացությունը թեթևացնելու համար նա առաջարկում է.

1. Տարոնի և Սասունի գյուղերում կազմել մարտական ուժեղ խմբեր:

[1] Նույն տեղում:
[2] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 694:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 324:
[4] Տե՛ս նույն տեղում:

2. Բարեկամություն հաստատել թուրք-քուրդ այն պաշտոնյաների, բեկերի հետ, որոնք համեմատաբար բարյացակամորեն էին տրամադրված հայերի նկատմամբ և բշնամի էին թուրք կառավարությանը:

3. Ուժեղ պայքար մղել հայ գյուղացիներին հարստահարողների դեմ:

4. Առանց դիմելու ապստամբության, բայց դրա սպառնալիքով անմիջական ճնշումներ գործադրել կառավարության վրա[1]:

Առաջին հայացքից հանդուգն, գուցե աղետաբեր հետևանքներով հղի Գևորգի պնդումներն իրենց մեջ անշուշտ պարունակում են որոշակի հիմք ու ճշմարտություն: Սկսած 1894 թ. Սասունի ինքնապաշտպանությունից, թուրքական կառավարությունը համոզվեց, որ հայության ջարդեր կազմակերպելն ավելի դյուրին էր իրականացնել հատկապես այն շրջաններում, ուր ազգաբնակչության գերիշխող մասը մահմեդականներ էին: Ելնելով վերոհիշյալ ճշմարտությունից՝ թուրք իշխանությունները որդեգրեցին հայաբնակ շրջանները, մասնավորապես Տարոնն ու Սասունը մահմեդականներով բնակեցնելու քաղաքականությունը: Նպատակադրվելով «խաղաղ» միջոցներով հայությանը դուրս մղել իր բնօրրանից, «Սրով ու կրակով դատարկող Սասունի քանդուած գիւղերը, - ասում է երկրից եկած նամակը, - կուգեն տալ քուրդ ցեղերուն որպէսզի բարձր եւ ամուր լեռներում այլեւս չքուրէ ազատութեան շունչը...»[2]:

Դաշտի գյուղերում հայտնվել էին պորտաբույծ քրդական ցեղախմբեր, ինքնակոչ աղաներ ու բեկեր, որոնք զինված ծառաների ու թուրք ոստիկանների օգնությամբ լիիրավ տիրոջ իրավունքով բռնագրավում էին հայի սեփականությունը, մտրակի ու սվինների հարվածների սպառնալիքով գյուղացիների ձեռքերով հայոց գյուղերում կառուցում էին տներ: Հայերի կողմից փոքրիկ ընդվզումն անգամ ուղեկցվում էր դաժան խոշտանգումներով ու բանտարկություններով: Գյուղացիներից շատերը չդիմանալով բռնություններին՝ հարկադրված հեռանում էին իրենց բնակավայրերից:

«Հայ գիւղերը, - նշում էր «Դրօշակ»-ը, կամաց-կամաց կը դատարկուին հայերէ ու ասոնց տեղը իսլամներ կը բռնեն... Մշոյ դաշտին մէջ շատ գիւղեր ենթարկուած են թալանի ու կոտորածի: Քիւրդեր եւ թիւրքեր մտեր են Դաշտ, դուրս մղեր հայերը եւ տէր դարձեր անոնց հողերուն ու կալուածներուն: Դաշտի բնիկ մեծագոյն մասը փախեր, գաղթեր է...»[3]:

Կոմսին գրած հոկտեմբերի 14-ի նամակում, անդրադառնալով Դաշտի գյուղերում տիրող կացությանը, Գևորգը նշում է, որ գյուղացիները «...մեծամասնօրեն գաղթած էն...»[4]:

Գևորգի կարծիքով հայրենի բնակավայրերը լքելու հիմնական պատճառը ոչ միայն թշնամու գործադրած բռնություններն են, այլև գյուղացիության սովյալ վիճակը:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 330-331:
[2] «Նիւթեր...», հ. Գ, էջ 113:
[3] «Դրօշակ», 1904, թիւ 6, էջ 73:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 688, գ. 87, էջ 2:

«Ես այսօր.- գրում է Չավուշը. - շատ խնդրեցի. թէ օր յառաջ մի նպաստ հասցրէք խեղճերուն... Աշխատեցէք մասնաւոր օգնութիւն հասցնել Բարձրաւանդակի ժողովրդին. որ գոնէ չը գաղթեն ու չը հեռանան իրենց տեղերէն: Բայց կրկին անլսելի մնաց. ինչ ընէ խեղճ ժողովուրդ որ չը գաղթէ ու չը հեռանայ. որովհետեւ չկայ ազգութիւն. չկայ հայրենասէրներ. որ իրենց ցաւերուն դարման մը ընեն» [1]:

Հայկական բնակավարերից քուրդ աշիրեթների միջոցով հայերին դուրս մղելով և այնտեղ քրդերին բնակեցնելով. թուրք իշխանությունները ձգտում էին. ի վնաս հայերի. արմատապես փոխել բնակչության քանակական հարաբերակցությունը: Ամֆիտեատրովի դիպուկ բնութագրմամբ «Ուր անյայտանում է հայը՝ այնտեղ բոյն է դնում քիւրդը. թուրքը. թաթարը» [2]:

Ի՞նչ կարող էին հակադրել հայությունը և նրան առաջնորդող ազգային- քաղաքական կուսակցությունները թուրք իշխանությունների գործադրած քաղաքականությանը. հայկական գյուղերը զավթող քուրդ ցեղախմբերին. միայն համբերություն ու պասիվություն: Ժամանակը միանշանակորեն ապացուցել և ապացուցում է. որ ավարառու քրդին սանձող միակ միջոցը զենքն է. հարվածին հարվածով պատասխանելը: Գևորգը վճռում է դիմել համարձակ գործողությունների՝ սպառնալիքով ու սպանություններով սանձել ժողովրդին հարստահարողներին և թույլ չտալ քուրդ ցեղախմբերին անարգել տարածվել հայկական բնակավայրերում:

Անժխտելի փաստ է. հայերի կողմից իրականացվող թուրք պաշտոնյայի կամ քուրդ ցեղապետի յուրաքանչյուր սպանության հետևում էր թուրքական ոստիկանական պատժիչ ջոկատների. զորքի մուտքը հայկական գյուղեր. որն էլ անպայմանորեն ուղեկցվում էր հայ գյուղացիների խոշտանգումներով ու թալանով: Հարց է ծագում. գուցե անիմա՞ստ էր ֆիդայիների մղած պայքարը.որը հայությանը. բացի տառապանքներից. ուրիշ ոչինչ չէր տալիս: Բայց կա և մեկ այլ ճշմարտություն. չէ՞ որ հայությունը հարստահարվում և դաժան ճնշումների էր ենթարկվում անկախ այն բանից. թե տվյալ շրջաններում գործո՞ւմ էին ֆիդայիներ. թե ոչ: Եվ կամ մի՞թե հայության ազատագրության ձգտման. ստրկության կապանքները խորտակող պայքարի ոգին իսպառ մեռել էր: Մի՞թե չկար գեթ մեկը. որը չհամակերպվելով ոտնահարված ազգային արժանապատվության նվաստացուցիչ իրավիճակին. համակված վրեժխնդրության ձգտումներով՝ ընդվզեր բռնակալության դեմ:

Ֆիդայական շարժումը հենց այդ ոգու արտահայտությունն էր. դարերով ազատությունը կորցրած հայության ազգային արժանապատվությունը բարձր պահելու. ապրելու ու հարատևելու ձգտումները: Տվյալ պարագայում. երբ թուրք կառավարությունը հետևողականորեն «խաղաղ» ճանապարհով ձգտում էր հայոց հազարամյա բնակավայրերը դատարկել ժողովրդից, ֆիդային չէր կարող հայակործան քաղաքականությանը հակադրող զենքը դարձնել համբերությունն ու հնազանդությունը:

Անկասկած. Գևորգ Չավուշին ու նրա առաջնորդած ֆիդայիներին շատ հաճախ առաջնորդել է ֆիդայական-մարտական ոգին. քան ՀՅԴ Դուրան Բարձրավանդակի կենտր. կոմիտեի որոշումները: Համախմբելով ֆիդայիների փոքրիկ խմբերը՝ Գևորգը վերսկսում է քուրդ բեկերին ու աղաներին անսպասելիորեն «հյուրընկալվելու» համարձակ ձեռնարկումները: Ամենուր նրա այցելությունները տևում էին հաշված րոպեներ. որի ընթացքում «հյուրընկալողին» թվարկում էր նրա չարագործությունները. ապա արձակում դատավճիռը և արագորեն անհետանում: Իսկ Գևորգի արձակած դատավճիռները երբեք անհիրագործելի չէին մնում [1]:

Ֆիդայիների գործողություններից ահաբեկված՝ քրդերի մեծ մասը հեռանում է Դաշտի շրջաններից. իսկ նրանց կառուցած առանձնատները հիմնահատակ կործանվում են:

Կ. Սասունու գնահատմամբ քուրդ ցեղապետերից շատերը. որոնք նախկինում թշնամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ. սկսում են հաճոյանալ ու փնտրել նրա բարեկամությունը [2]:

Մարտական խմբի գլուխն անցած՝ Գևորգը սպառնալիքի միջոցներով կարողացավ Տարոնի ու Սասունի շրջաններում խոչընդոտել թուրք կառավարության հակահայ ծրագրերը:

«Պայքարը,- նշում է Ռուբենը,- դժուար էր եւ յամառ, բայց Գէորգը հասեր էր մասամբ իր նպատակին. քանի որ ժողովուրդը գոհ էր գոնէ մէկ բեռէ- դաբիլաթներու ճնշումէն՝ չափով մը ազատուած ըլլալուն համար. հոգ չէր թէ ատոր համար հարիւրաւոր բանտարկեալներ կը տառապէին. որոնց օգնելու գործի մէջ չէր թերանար երախտագէտ ժողովուրդը» [3]:

Գևորգի գործունեության ոլորտը չէր սահմանափակվում միայն ահաբեկումներով: Նա մեծ ջանքեր էր գործադրում բարեկամական կապեր հաստատել հայերի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված աշիրեթների հետ: Նա երբեմն նվերներով ու ջերմ խոսքերով աշխատում էր սիրաշահել աշիրեթապետերին, նրանց գրգռել կառավարության դեմ: Երբեք չկասկածելով քրդերի հետ ուխտած դաշինքի անհուսալիությանը՝ Գևորգին հաջողվում է բարեկամական կապեր հաստատել մի քանի աշիրեթապետերի հետ: Ռուբենի գնահատմամբ «Այս յաջողութիւն մըն էր. թէեւ վաղուան մասին Գէորգն ալ չէր երաշխաւորեր. որովհետեւ չէր գիտեր. թէ որքան հաստատուն էին այդ բարեկամութիւնները: Բայց, Գէորգին միտքն էր առժամապէս չէզոքացնել քիւրտերը իրարու թշնամի դարձնելով...» [4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Ամֆիտեատրով Ա., Եւրոպա եւ Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 39-40:

[1] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 338:
[2] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 695:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 338:
[4] Նույն տեղում, էջ 340:

Իրենց լրտեսներից ու գործակալներից տեղեկանալով Գևորգի մարտախմբի գործունեության մասին՝ կառավարությունը զինվորական ու ոստիկանական ջոկատներով հետապնդելով՝ ձգտում էր վերացնել ֆիդայիներին: Գևորգը մեծ դժվարությամբ կարողանում էր խուսափել բախումներից, սակայն հնարավոր չէր շարունակ ազատվել ամենուրեք հայտնվող թուրքական ջոկատների հետապնդումներից: Բախումներն անխուսափելի էին:

Թուրքական զորքի դեմ մղած մի քանի կռիվներում Գևորգը տոնում է տպավորիչ հաղթանակներ, որոնցից ամենանշանավորը՝ Ղարսի կռիվն է [1]:

Ղարսի հաղթական կռիվը մեծ արձագանք է գտնում Բիթլիսի նահանգում, և «... մինչեւ երկինք բարձրացուց ֆէտայիներու քաջութեան համբաւը, իսկ Գէորգ Չաւուշը դարձաւ մի շէյթան, մի չտեսնուած հերոս: ...Բոլոր քրդերն ու հայերը անխոցելի կը համարէին ֆէտայիները եւ անոնց երկիւղէն բոլոր բէկերն ու աղաները լաւ կը վարուէին հայերուն հետ: Նոյնիսկ զօրքը կը երգէր ֆէտայիի երգեր եւ անոնց քաջագործութիւնները կը պատմէր առասպելներու նման» [2]:

Կռվի ավարտից հետո նոր ընդհարումների տեղիք չտալու նպատակով Գևորգը ֆիդայիներին բաժանում է փոքր խմբերի և հրամայում տարբեր ուղղություններով աննկատ հավաքվել Մառնիկա սարի վրա: Խմբերից մեկը բալակցի քրդերի մասնակցությամբ Արգավանք գյուղում շրջապատվում է թուրք-քուրդ մեծաքանակ ուժերի կողմից, և մինչև վերջին փամփուշտը մարտնչելուց հետո խմբի հինգ անդամներ զոհվում են:

Այս դեպքից հետո Գևորգը շարունակում է պահպանել իր հարաբերությունները քուրդ ցեղապետերի հետ, որը հարուցում է ֆիդայիների մի մասի, հատկապես նրանցից ավագագույնի՝ Սպաղանաց Մակարի դժգոհությունը: Մակարը չէր հավատում աշիրեթների բարեկամությանը և բազմիցս խորհուրդ է տվել Գևորգին խզել նրանց հետ ունեցած կապերը: Սակայն Գևորգը, ամեն կերպ ձգտելով շահել քուրդ ցեղապետերի համակրանքը, վճռում է հերթական այցելության արժանացնել Ղասմ բեկին:

Նրա գործունեության այդ ժամանակահատվածը, անշուշտ, հագեցած էր ռոմանտիկական գործողություններով, և այս դեպքում օգտակարությունն ու վնասակարությունը այն չափանիշները չեն, որոնցով պետք է արժեքավորել Գևորգի գործունեությունը: Նույնիսկ Հրայրն իր խորագիտությամբ ու ժամանակաշրջանի խորը ըմբռնողությամբ Դուրան-Բարձրավանդակի շրջաններում չհասավ հայ-քրդական բաղձալի բարեկամության հաստատմանը, չնայած այդ ուղղությամբ ձեռնարկած հսկայական աշխատանքներին: Ճշմարտությունն այն էր, որ քրդերը, առավելապես նախապատվություն տալով հայի ունեցվածքը տիրելուն, վճռական պահին մոռանալով բարեկամությունը՝ միանում էին թուրքերին:

[1] Տե՛ս Գեւորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 409-449:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 338:

Անկասկած ընդամենը մի քանի տասնյակ ֆիդայիներ, թեկուզև առասպելական հերոսի, Գևորգ Չավուշի գլխավորությամբ, ի զորու չէին հայությանը պաշտպանել կառավարության հովանավորությունը վայելող քուրդ ցեղախմբերից ու իշխանավորների բռնություններից: Հայ գյուղացիների վիճակը մի փոքր բարելավելու նպատակով նա ձգտում էր աշիրեթների գոնե մի մասին չեզոքացնել ու սեպ խրել քուրդ ցեղախմբերի ու կառավարության միջև: Սա այս նկատառումով, անտեսելով Մակարի և մյուս ընկերների զգուշացումները՝ Գևորգը վճռում է մեկ անգամ ևս այցելել Ղասմ բեկին և 10 ֆիդայիների ուղեկցությամբ իջնում է Դաշտ: Հոկտեմբերի 1-ին, երբ Գևորգը գտնվում էր Առվարինջ գյուղում, 3000-ից ավելի թուրք-քուրդ կանոնավոր և անկանոն զորքեր արշավում են Մառնիկա սար: Մակարը, զոհ չտալու նպատակով խուսափում է ընդհարումից և ֆիդայիներին տեղափոխում է թշնամուն բոլորովին անծանոթ վայր [1]:

Չգտնելով ֆիդայիներին՝ զորքը լրտեսների առաջնորդությամբ իջնում է Առվարինջ և շրջապատում գյուղը: Երկար խուզարկություններից հետո հայտնաբերելով խոտի դեզերում թաքնված ֆիդայիներին, հրկիզում են դեզերը, փորձում կրակե բոցերի մեջ այրել հայդուկներին: Դաշույններն ու ատրճանակները ձեռքներին՝ հայդուկները նետվում են գոտեմարտի և փորձում դուրս պրծնել թշնամու օղակից: Անհավասար գոտեմարտում զոհվում են հայդուկները, հրաշքով փրկվում է միայն Գևորգը:

Թեև Առվարինջի կռվում նրան հաջողվում է հրաշքով փրկվել, բայց «Հայ գիւղէն,- նշում է Կ. Սասունին,- կոտորուեցան 134 հոգի: Այս անյաջող կռիւը ծանր հարուած մը եղաւ ֆետայիներու վարկին» [2]:

Պիտի ընդգծել, որ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն այնքան էլ շոշափելի օգնություն չի ստացել: Զենք ու զինամթերքի, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակասը գրեթե մշտապես եղել է Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի գործունեության ամենաթույլ տեղը:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին գրած նամակներից մեկում(1905 թ.) Լեռնապարի Իշխանը նշում է, որ իրեն հասցեագրած նամակում Գևորգ Չավուշը «...սարսափելի կերպով բողոքում էր դրամ չստանալու համար եւ մեզնից դրամ էր խնդրում...» [3]:

Գևորգ Չավուշը Շամ-ից ոչ միայն դրամ է խնդրել, այլ նաև փամփուշտ: Նույն նամակում Իշխանը հայտնում է, որ ինքը նրան «ծայր (փամփուշտ-Հ.Գ.) ճամփեցի 1500 հատ», և ընկերաբար խորհուրդ տվել «մի կերպ խոյս տալ ընդհարումներից» [4]:

Ավելին, Իշխանը Գևորգ Չավուշին խորհուրդ է տալիս չկատարել նաև «լեռնազօրանոցներից մէկը օդը թռցնելու» Կոմսի հրահանգը, պատճառա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 349:
[2] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 697:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 663, գ. 32, էջ 7:
[4] Նույն տեղում:

բանելով, որ Կոմսի հրահանգի կատարումը բացի վնասից որևէ օգուտ չի կարող տալ [1]:

Նույն նամակում ՀՅԴ Արևելյան բյուրոյին տեղեկացնելով Բարձրավանդակում տիրող կացության ու այնտեղից Կորյունի հեռանալու իրողությունը, Իշխանը շեշտում է, որ «Սարհատը(նկատի ունի Գևորգ Չավուշին- Հ.Գ.) անկարող է միանգամայն ժողովրդական գործերի ղեկավարման համար: Այնպես որ ոչ մի օգուտ չի կարելի սպասել նրանց սկսած գործերից» [2]:

Իշխանի նպատակը, իհարկե, հռչակավոր հայդուկապետի կատարած գործի նսեմացնելը չէ: Նկատի ունենալով Դուրան-Բարձրավանդակում տիրող ծանր կացությունը, նա առաջարկում է կարող գործիչներով և այլ անհրաժեշտ միջոցներով օգնել Դուրան-Բարձրավանդակին ու անձամբ Գևորգ Չավուշին [3]:

Առվարինջի անհաջողությունը հարկադրում է ֆիդայիներին ժամանակավորապես ձեռնպահ մնալ հարձակողական գործողություններ ձեռնարկելու մարտավարությունից: Մինչև 1906 թ. գարունը համեմատաբար խաղաղ շրջան էր:

Դուրան-Բարձրավանդակի մարտական կազմակերպությունների աշխատանքները միավորելու ու ղեկավարելու համար Գևորգը մեծապես կարիք էր զգում կարող, ձեռներեց ընկերոջ օգնության: Ահա այդ նպատակով նա դիմում է ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեի ընկերներին. «Իմ հոգս չէ, այսօր կամ վաղը ես պիտի սպանուիմ: Պարզ է ինձ համար, որ իմ վերջը եկած է, թէեւ, եթէ ուզեմ ամենուն պէս լքել ժողովուրդը եւ հեռանալ, ես ալ իբր հերոս երկար, շատ երկար տարիներ կրնամ ապրել: Ես յուսահատ եմ ամենքէն, բացի ձեզմէ: Իմ խնդրանքն է, որ անպայման մէկը մեզմէ ուղարկէք այս երկիրը: Այդ ընկերը կամ կը հասնի իմ ողջութեանը կամ չի հասնի, այդ միեւնոյնն է: Ճամբեցէք մէկը, որ այս ժողովուրդին գլուխն անցնի» [4]:

Դաշնակցությունը, համաձայն Ընդհանուր ժողովների որոշումների, պիտի Դուրան-Բարձրավանդակի կառույցները համալրեր փորձառու և կարող գործիչներով, որոնք ինչպես նշում է Գևորգ Չավուշը, ընդունակ լինեին «ժողովդի գլուխ անցնել»: Բայց այդ ժամանակահատվածում, հատկապես «Կովկասյան նախագծի» ընդունումից հետո, ՀՅԴ գործունեությունը բևեռված էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի վրա: Դաշնակցությունը, ինչպես արդեն նշվել է, մեծ տեղ էր հատկացնում նաև Կովկասյան խնդրին և այդ կապակցությամբ կուսակցության 4-րդ Ընդհանուր ժողովում ընդունում է հետևյալ որոշումը.

«1. Տապալել ռուսաց միապետութեան ռեժիմը.

2. Տալ ազգերին ինքնորոշման իրավունք...» [5]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Աւօ, Գէորգ Չաւուշ, էջ 306:
[5] «Նիւթեր...», հ. 2, էջ 210:

Եթե ՀՅԴ ընդունել էր նման որոշում, որը կարելի է ասել, բնավ որևէ դրական նպաստ չէր կարող բերել հայության ազգային-ազատագրական պայքարին, ապա համաձայն Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների հետ կայացրած որոշման, պիտի իր ուժերն ու կարողությունները նպատակաուղղեր պայքարելու ընդդեմ ցարական միապետության: Կարելի է եզրակացնել, քանի որ ՀՅԴ ղեկավար մարմինները համապատասխան գործիչներ չեն ուղարկել ուժեղացնելու Դուրան-Բարձրավանդակի կուսակցական կառույցները, ուստի այդ պատճառով Գևորգ Չավուշը դիմել է ՀՅԴ - Վանի (Շամի) կենտր. կոմիտեին, որը ընդառաջելով նրա պահանջին, Տարոն կամ ինչպես այդ ժամանակներում էին անվանում «Կետան-Կեալմազ» (գնացողը հետ չի վերադառնա) են ուղարկում Ռուբենին:

Մինչ նրա Տարոն գալը, ֆիդայիների մեջ որոշակի սառնություն ու տարաձայնություններ էին առաջացել: Մարտավարությանն առնչվող հարցերում տարաձայնություններ կային նաև Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեության ղեկավար գործիչների, մասնավորապես Գևորգ Չավուշի և Կորյունի միջև:

«Գէորգի եւ Կորիւնի աշխատանքները,- գրում է Ա. Աստվածատրյանը,- թէեւ գնում էին տարբեր ուղղութեամբ, բայց ծառայում էին միեւնոյն նպատակին, այն է՝ մի կողմից կազմակերպել Տարօնի հայութիւնը, միակամութիւն առաջ բերել ընդհանուր հայութեան վերաբերող հարցերի մէջ, ուժեղացնել այն ներքնապէս եւ բարոյապէս (Կորիւնի գործը) եւ միւս կողմից՝ պաշտպանել այդ հայութեան կենսական շահերը՝ սահման դնելով նրա թշնամիների հարստահարութիւններին ու բռնութիւններին (Գէորգի գործը)» [1]:

Տարաձայնությունները, ինչպես նախկինում էր, հիմնականում պայմանավորված էին հետևյալ հանգամանքով. թշնամու դեմ պայքարելու համար նախընտրել ցուցական ելույթների, մարտական-հայդուկային գործողությունների մարտավարությունը, թե՞ խուսափել ադմկահարույց գործողություններից և ուշադրությունը գլխավորապես բևեռել ժողովրդին նախապատրաստելու ու կազմակերպելու վրա: Կորյունն ու կենտր. կոմիտեի ներկայացուցիչներ Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ), Վարդան վարդապետը և այլոք պահանջում էին դադարեցնել ֆիդայական խմբերի գործունեությունը և ՀՅԴ կառույցների ջանքերը գլխավորապես օգտագործել ժողովրդական լայն կազմակերպությունների ստեղծման ուղղությամբ: Գևորգի հանդուգն գործողությունները դժգոհությամբ էին ընդունվում նրանց կողմից, իսկ Առվարինջի կռվի անհաջողությունը էլ ավելի խորացրեց տարաձայնությունները:Կորյունը, դժգոհելով և այլևս անկարող լինելով համակերպվել Գևորգ Չավուշի ադմկահարույց գործողություններին, որոշում է հեռանալ Դուրան-Բարձրավանդակից և այդ մասին երկտողով հայտնում է. «Սիրելի Սարհատ, ես գնացի. համբոյրներով՝ Կորիւն» [2]:

[1] «Հայրենիք» ամս., 1957, թիւ 4, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ թիւ 6, էջ 80:

Ֆիդայիներից ոմանք, հատկապես ավանդապաշտ ու ֆիդայական օրենքներն անվերապահորեն սրբացնող Մակարը, դժգոհելով Գևորգի գործելակերպից, պահանջում էր նրանից առանձնորդվել ընկերների և իր խորհուրդներով, կապերը խզել բարեկամությունը ցանկացած պահին դավաճանելու ընդունակ քուրդ ցեղապետերից: Մակարը, ժամանակին ընդվզելով Աղբյուր Սերոբի դեմ Սոսեի պատճառով, այժմ էլ դժգոհ էր Գևորգից՝ ֆիդայական ավանդույթները խախտելու ու ամուսնության հետևանքով: Տարաձայնությունները կարող էին վատթարագույն հետևանքներ ունենալ, մանավանդ որ Մակարին պաշտպանում էին նաև Գևորգի մարտական ընկերներից շատերը:

Ռուբենը Տարոն է գալիս 1906 թ. հուլիսին: Ի՞նչ դրական նպաստ կարող էր բերել - հեղափոխական անցյալով դեռևս ոչնչով աչքի չընկած Ռուբենը, որպես ՀՅԴ ներկայացուցիչ, հաստատվելով Դուրան Բարձրավանդակում կամ ինչպիսի՞ էական տեղաշարժեր ու փոփոխություններ էին իրականացվելու ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կառույցներում: Նա պիտի փոխարիներ Կորյունին, և նրա գործունեության ոլորտում ընդգրկվելու էին այն գործերը, որոնք կատարում էր Կորյունը:

Հաստատվելով Տարոնում՝ Ռուբենի առաջնահերթ խնդիրը պիտի լիներ, կուսակցական կառույցների հիմնումը և ըստ այդմ ՀՅԴ գործունեության շրջանակների ընդլայնումը: Մարտական ուժերի գործողությունները ղեկավարելու և նոր մարտավարություն որդեգրելու հարցում նրա ներկայությունը չէր կարող որևէ էական փոփոխություն առաջացնել: Դուրան-Բարձրավանդակում հայդուկապետ Գևորգ Չավուշն էր որոշում և ղեկավարում ՀՅԴ մարտական ուժերի մարտավարությունն ու գործողությունները:

Ազատագրական պայքարի այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երկրում, ժողովրդի, ինչպես նաև ֆիդայիների կողմից ավելի ընդունված էին դրսից եկած գործիչները: Ռուբենի համար ավելի դյուրին է եղել մեղմել ֆիդայիների մեջ ծայր առած տարաձայնություններն ու դժգոհությունները, որոնք խորացել էին հատկապես Առվարինջի կռվից հետո:

Ֆիդայիների տարաձայնությունները պարզելու և նրանց հաշտեցնելու նպատակով Գևորգի և Ռուբենի նախաձեռնությամբ Ղրզլաղաջի անտառում գումարվում է զինվորական ժողով, ուր ժողավականների համաձայնությամբ սահմանվում է 8 կետից բաղկացած որոշում, որը առավելապես վերաբերում է ֆիդայիների հետագա գործունեությանը:

Այդ որոշումները, հատկապես 6-րդ՝ «Քանի որ Դուրան-Բարձրաւանդակի բազմաթիվ վայրերում մէջ զօրքեր են դրուած եւ շարունակ խուզարկութեանց պատճառով անհնար է դարձած մօտ 200 փախստական պատսպարելը. կորոշուի ֆետայիներու թիւը կրճատել... Նախ կը հեռացնէին ծպտեալները, յետոյ նոր եւ անփորձ զինուորները: Երկիրի մէջ կը մնան հին ֆետայիները, որոնք կարող են դառնալ ժողովրդական ղեկավարներ ու խմբապետներ» կետը, դժգոհությունների տեղիք է տալիս [1]:

[1] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 4, էջ 9:

Զինվորական ժողովի որոշումը գործադրելու նպատակով «...Նոյն օրն իսկ Ղրզլաղաջի անտառի մէջ,- գրում է Ռուբենը,- զինաթափ եղան 60-ի չափ ծպտեալներ ու զինուորներ»:

Ռուբենի ներկայությունը, հատկապես կազմակերպական առումով, օգտակար էր: Բայց նա, այնուամենայնիվ, Գևորգ Չավուշի և Դուրան-Բարձրավանդակի համար այն ուժն ու հեղինակությունը չէր, որպիսին էր Հրայրը, իսկ Աղբյուր Սերոբի և Բիրլիսի ու Դուրան-Բարձրավանդակի համար՝ Գուրգենը:

1906 թ. ամռանը հուլիս-օգոստոս ամիսներին, Ռուբենի համագործակցությամբ Գևորգը հրավիրում է ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեության ներկայացուցիչների Շրջանային ժողով, որի աշխատանքներին մասնակցում էին ավելի քան 200 պատգամավորներ, յուրաքանչյուր գյուղից 1-2 հոգի [1]:

Շրջանային ժողովում՝ որոշվում են բազմաթիվ հարցեր՝ կապված կուսակցական նոր կառույցների ձևավորման, մարտական խմբերի, պատասխանատու մարմինների, կենտրոնական ու շրջանային կոմիտեների ընտրությունների ու կազմակերպական բնույթի այլ խնդիրների հետ [2]:

Ընտրվում է Պատասխանատու Մարմին, որին ենթարկվելու էին Դուրան-Բարձրավանդակի ՀՅԴ բոլոր կառույցները, ֆիդայիներից մինչև կենտրոնական կոմիտեներ: Մինչ այդ Շրջանային ժողովը, Տարոնն ու Սասունը միասին կազմում էին միայն մեկ՝ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտե: Շրջանային ժողովի որոշմամբ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն բաժանվում է երկու՝ Բարձրավանդակի և Դուրանի կենտր. կոմիտեների: Բարձրավանդակի կենտր. կոմիտեության շրջանակները ձգվելու էին Տավրոսյան լեռնաշղթայից հարավ: Նրա կազմում ընդգրկվում են 10 կոմիտեներ: Դուրանի կենտր. կոմիտեն գործելու էր Տավրոսյան լեռնաշղթայից հյուսիս ընկած շրջաններում: Նրա կազմում ընդգրկվում են 13 կոմիտեներ [3]:

Շրջանային ժողովում սահմանվում են նաև ՀՅԴ գործունեության նպատակները, որոնց մեջ պետք է առանձնացնել հետևյալ կետերը. «...բ. Տարածել յեղափոխութեան գաղափարները եւ առաջ բերել լայն ժողովրդային կազմակերպութիւն.

գ. Ժողովրդական մարտական ուժ ստեղծել եւ ասով փոխարինել ֆետայիները.

դ. Ֆետայիները մէկ անգամէն չվերացնել, այլ աստիճանաբար, այնպէս որ ժողովրդական մարտական ուժերը փոխարինեն զանոնք» [4]:

Կարելի է եզրակացնել, որ ՀՅԴ պետք է աստիճանաբար հրաժարվեր Դուրան-Բարձրավանդակում հայդուկային կռիվներ մղելու մարտավարությունից և իր գործունեության առանցքը դարձներ ժողովրդական մարտական ուժեր ստեղծելու, այն է՝ ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու մար-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 10:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 18-24:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:
[4] Նույն տեղում, էջ 35:

տավարությունը: Ժողովականները որոշում են կրճատել ֆիդայիների խմբերի քանակը, նրանց ուղարկել տարբեր շրջաններ կազմակերպական կառույցներ ստեղծելու և ժողովրդին նախապատրաստելու նպատակով:

Համաձայն ժողովի վճռի Գևորգը պետք է մեկներ Խնուս, որը Կովկասը Երկրին կապող կարևոր հանգույցներից մեկն էր: Այդ որոշումը, կարելի է ասել, հարմար պատրվակ էր Գևորգին հեռացնելու Դուրան-Բարձրավանդակի տարածքից: Խնուսի հեղափոխական կազմակերպությունները Կորյունի Կովկաս մեկնելուց հետո փաստորեն քայքայվել էին, և այդ պատճառով կապը արևելահայության, Էրզրումի ու Տարոնի միջև շատ թույլ էր: Գևորգը պետք է Խնուսում վերստին հիմներ ՀՅԴ կառույցներ և վերականգներ հաղորդակցության ուղիները: Քանի որ Խնուսի շրջաններում հաստատվել էին քրդական բազմաթիվ ցեղախմբեր, ուստի Գևորգը, համաձայն Շրջանային ժողովի որոշման, պիտի աշխատեր բարեկամական կապեր հաստատել այդ ցեղախմբերի հետ:

1906 թ. Դաշտի շրջաններում անբերրի տարի էր, և բերքը սակավ լինելու պատճառով Տարոնի ու Սասունի բնակչությանը սպառում էր սովամահություն: Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի որոշմամբ Գևորգը պիտի աշխատեր Դաշտի բնակչության մի մասին ժամանակավորապես տեղավորել Խնուսի գյուղերում: Նա 25 ֆիդայիներով ճանապարհվում է Խնուս և օգտվելով գավառում թուրք կանոնավոր զորքերի բացակայությունից՝ ձեռնամուխ լինում մարտական խմբերի կազմակերպման, հայ-քուրդ հարաբերությունների մերձեցման, ինչպես նաև Սասունի և Դաշտի հարյուրավոր գյուղացիներին Խնուսի գյուղերում տեղաբաշխելու գործին: Երկու ամսվա բեղմնավոր գործունեությունից հետո Գևորգը վերադառնում է Տարոն:

Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի Շրջանային ժողովից ընդամենը մեկ ամիս անց տեղի է ունենում Դուրանի Շրջանային ժողովը, որի աշխատանքներին Գևորգ Չավուշը Խնուսում գտնվելու պատճառով չի մասնակցել: Ժողովում քննարկվում են Դուրանում տիրող կացությունն ու կազմակերպական մի շարք հարցեր: Ի թիվս կազմակերպական բնույթի որոշումների, ժողովն ընդունում է «Զինուորների եւ նրանց յարաբերութիւնները ժողովրդեան ու կոմիտէների հետ» և «Կանանց Խումբերը» որոշումները [1]:

Համաձայն Շրջանային ժողովի ընդունած որոշման «...Զինուորները ժողովրդի մէջ բացի իրանց վրայ դրուած պահանջներից, ոչնչի խառնուելու իրաւունք չունին: Կոմիտէն, միւս մարմինները եւ ժողովուրդը պարտաւոր են զինուորներին պահել եւ պաշտպանել, հակառակ պարագային նրանք պատասխանատու են վտանգի եւ չպահելու դէպքերում»[2]:

Դուրանի Շրջանային ժողովն իր այս որոշմամբ փաստորեն կարևորում է ժողովրդի մեջ զինվորների ներկայությունը, և ի տարբերություն Դուրան-Բարձրավանդակի Շրջանային ժողովի որոշման, որևէ ակնարկ չկա զինվորների քանակը կրճատելու մասին: Ավելին, Դուրանի Շրջանային ժողովն ընդունում է նաև «Կանանց Խումբերը» որոշումը, համաձայն որի «...նկատի ունենալով սուրհանդակութեան եւ ուրիշ պարագաներում կանանց խմբերի տուած օգուտները, չպէտք է խմբերը եւ կոմիտէները արգելեն կանանց խմբերի կազմակերպելուն... Բայց պէտք է կազմակերպուի այն պայմանով, որ ոչ մի յարաբերութիւն ու կախում չունենան տղամարդկանց խմբերից, նրանց թէ նիւթական եւ թէ միւս գործերը պէտք է գործադրուին իրենց խմբապետուհու, շրջանի կոմիտէի եւ Կ.Կոմիտէի ձեռքով» [1]:

Պիտի նկատել, որ Արևմտյան Հայաստանում կանանց խմբերի կազմավորման և նրանց («Կանանց խումբերը») գործունեության մասին որոշում մինչ այդ ընդունել էր ՀՅԴ Վանի (Շամի) կենտր կոմիտեն:

1907 թ. ձմռանը Գևորգը, ցրելով ֆիդայիներին Տարոնի տարբեր շրջաններ, իր հետ վերցնում է միայն Դալեին ու Մանուկին և հավատարիմ մնալով Դուրան-Բարձրավանդակի Շրջանային ժողովի որոշմանը՝ ֆիդայիներին պատվիրում է ամեն կերպ խուսափել ընդհարումներից: Սակայն կառավարությունը անտեսելով ձմռան սառնամանիքները, զորքերը լցնում է Դաշտ և փորձում ձեռք գցել Գևորգին ու ֆիդայիներին:

Տարոնում գործող Դաշնակցության պաշտոնական ներկայացուցիչներ Ռուբենն ու Դերենիկը (Վարդան Իսկանդերյան), առաջնորդվելով ՀՅԴ Բյուրոյի անդամներ Ռոստոմի, Զավարյանի և Հ. Օհանջանյանի հրահանգներով, աշխատում էին Գևորգին համոզել գոնե ժամանակավորապես թողնել Երկիրն ու անցնել Կովկաս: Նրանց կարծիքով ֆիդայիների, հատկապես Գևորգի առժամանակ բացակայությունը հնարավորություն կտար հայկական բնակավայրերը մասամբ զերծ պահել թուրքական պատժիչ ջոկատների խուզարկություններից[2]:

Եթե Հ.Յ. Դաշնակցության վերին մարմինները՝ ՀՅԴ Խորհուրդը և Բյուրոն, որոշում կայացնեին, որպեսզի Գևորգ Չավուշը ժամանակավորապես թողներ Տարոնն ու Սասունը, ապա նա լինելով կուսակցության, առավել ևս Դուրան- Բարձրավանդակ կենտր. կոմիտեի անդամ, պիտի կատարեր այդ որոշումը: Հակառակ պարագայում պիտի շրջանցեր ՀՅԴ ղեկավար մարմինների որոշումը, որը հավասարազոր է հրաժարվել կուսակցության անդամությունից: Իսկ իրականում տեղի չի ունեցել ոչ մեկը և ոչ էլ մյուսը:

Կարելի է եզրակացնել, որ նրա՝ Երկրից հեռանալը եղել է ոչ թե ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ, այլ ղեկավար ընկերների առաջարկությամբ: Ավելի ստույգ, նկատի ունենալով նշանավոր հայդուկապետի անառարկելի հեղինակությունը, ՀՅԴ Բյուրոն զգուշացել է նրան Երկրից հեռացնելու որոշում կայացնել և այդ իրավունքը վերապահել է Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեին:

[1] ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 254, թ. 7:
[2] Տե՛ս նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամս., հոկտեմբեր, էջ 108:

Գևորգ. իհարկե. կարող էր հեռանալ Երկրից: Այս առումով կարծես միանման ճակատագիր է վիճակվել Արևմտահայաստանի ամենաականավոր հայրենակցեներին՝ Աղբյուր Սերոբին ու Գևորգ Չավուշին: Որևէ կասկած լինել չի կարող, որ Աղբյուր Սերոբն ու Գևորգ Չավուշը, որոնք հռչակավոր հերոսի անուն էին վաստակել ու մեծ հեղինակություն էին վայելում, եթե ցանկանային, կարող էին հետևել շատ-շատերի օրինակին, օրինակ՝ Անդրանիկի, հեռանալ հայրենիքից և հաջողությամբ բնակություն հաստատել մեկ այլ երկրում: Բայց նրանք նախընտրում են մնալ և գործել Երկրում:

Երկրից հեռանալը, թեկուզ ժամանակավորապես, Գևորգի կարծիքով հավասարազոր էր ժողովրդին միայնակ ու անօգնական թողնելուն:

Կ. Սասունու մեկնաբանությամբ, իրականում նրա գործունեությունից դժգոհ էին Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտի մի քանի անդամներ, հատկապես Տատրակը, իսկ «... շրջաններու մեծամասնութեան տրամադրութիւնը Գէորգի եւ անոր գործելակերպին հետն էր»[1]:

Գևորգի կարծիքով Դաշտում և Սասունում ֆիդայու ներկայությունը պարտադիր էր, քանի որ թուրքերն ու հատկապես քրդերը հայ գյուղացիների նկատմամբ ավելի սանձարձակ էին դառնում հենց ֆիդայիների բացակայության դեպքում: Բացի դրանից, Կովկասից առաքվող զենքը հնարավոր էր ապահով անցկացնել Երկիր, եթե հաջողվեր շահել Էրզրումից մինչև Տարոն ընկած շրջաններում ապրող քրդերի բարեկամությունն ու օգտվել նրանց աջակցությունից: Գևորգ Չավուշի Տարոնում և Սասունում մնալը հետապնդում էր նաև այդ նպատակը և նա իր անձնական հեղինակությամբ, իսկ երբեմն էլ ահաբեկման ուժով ձգտում էր բեկում մտցնել հայ-քուրդ հարաբերությունների մեջ:

«Գէորգ Չաւուշի տեսակէտն էր-գրում է Կ. Սասունին,-քիւրտ ու թիւրք ժողովուրդը պարզապէս հօտ է, իսկ հովիւ են կրօնապետը, աշիրէթապետը, աղան ու բէկը...Եթէ երբեմն սարսափի, հմայքի ու դրամի միջոցով բարեկամ կը ձեւանան աշիրէթապետներ ու աղաներ, այդ գլխաւորապէս յանդուգն քայլերի շնորհիւ էր, մասնաւորապէս Գէորգ Չաւուշի անձին շնորհիւ է: ...Այսպէս 1906-1907 թթ. թուրք պաշտօնեաներու եւ մանաւանդ զինուորականներու մէջ նկատելի էր բեկում մը հանդէպ ֆէտայիներուն»[2]:

Շատ շուտով ներկայանալու է Գևորգին Երկրից հեռացնելու հարմարագույն հնարավորությունն: Վիենայում գումարվելու էր ՀՅԴ հերթական՝ 4-րդ Ընդհանուր ժողովը: ՀՅԴ Բյուրոն, մեծ կարևորություն տալով Դուրան-Բարձրավանդակի կազմակերպությանը, տեղեկացնում է, որ նրա ներկայացուցիչները անպայման մասնակցեն Ընդհանուր ժողովին, ուր պետք է ընդունեին ծրագրային նշանակություն ունեցող հարցեր, որոնց թվում նաև «Կովկասյան նախագիծ»-ը:

[1] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 697:
[2] Նույն տեղում:

1905 թ. Հ.Յ. Դաշնակցության Խորհուրդը ընդունել էր «Կովկասյան նախագիծ»-ը, որը որպես ծրագրային դրույթ պիտի հաստատվեր 4-րդ Ընդհանուր ժողովի կողմից: Այս «Նախագիծը», ի տարբերություն 3-րդ Ընդհանուր Ժողովի ընդունած որոշման, որը կուսակցության գործունեությունը Կովկասում սահմանափակում էր բացառապես ինքնապաշտպանության շրջանակներում, այժմ արդեն ազդարարում է ՀՅԴ հեղափոխական գործունեությունը նաև ռուսական կայսրությունում:

ՀՅԴ Խորհրդի կողմից հրատարակված այդ որոշման դեմ առաջին հերթին ընդվզում են արևմտահայ գործիչները, հատկապես ֆիդայիները, որոնք կարծում են, որ Դաշնակցությունը, ընդունելով «Կովկասյան Նախագիծը», դավաճանում է Արևմտահայաստանի ազատագրության նպատակով օսմանյան բռնապետության դեմ ծավալած ազգային-ազատագրական պայքարին:

«Կովկասյան նախագծի» ընդունման կապակցությամբ Դաշնակցության մեջ ծայր էին առել բախումներ աջ և ձախ հոսանքների միջև: Համո Օհանջանյանի ստորագրությամբ ՀՅԴ Բյուրոյի կողմից Գևորգին ու Ռուբենին հասցեագրված նամակներից պարզվում է, որ կուսակցության մեջ առաջացած խմբավորումների հակասությունները սպառնում էին նրա միասնականությանն ու խարխլում կարգապահությունը: Հատկապես լուրջ վտանգ էր ներկայացնում խմբապետ Միհրանը, որը կարողացել էր իր շուրջը համախմբել «Կովկասյան նախագծի» ընդունման կապակցությամբ կուսակցության դիրքորոշումից դժգոհ դաշնակցականների[1]:

Ռուբենը նշում է, որ իրենց նամակներ է ուղարկել նաև խմբապետ Միհրանը, որն իր գրություններում շեշտում էր, որ ՀՅԴ Ռուսական կայսրության դեմ պայքարելու ծրագիր ընդունելով, դավաճանում է Հայկական հարցի լուծմանը: Քանի որ չկան Գևորգի տեսակետը վկայակոչող փաստաթղթեր, դժվար է բնութագրել նրա դիրքորոշումը «Կովկասյան նախագծի» վերաբերյալ: Միայն Ռուբենի հուշերից պարզվում է, որ Միհրանին գրված պատասխանում Գևորգն ու ինքը պնդել են, թե «Տաճկահայ դատը բնաւ չի վնասուիր նախագծէն եւ վերջապէս Էջմիածինը նոյնքան Հայաստան է, որքան ս. Կարապետը»[2]:

Պահպանվել է Գևորգ Չավուշի 1906 թ. հոկտեմբերի 17-ին թվագրված «Սարուստանի (նկատի ունի Ռուսաստանի-Հ.Գ.) զինվոր ընկերներին» խորագիրը կրող նամակը: Նամակում «Կովկասյան նախագծի» վերաբերյալ արտահայտելով Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի դիրքորոշումը՝ Գևորգը նշում է. «Յաւում ենք, արեան մէջ մկրտուած ընկերներ, որ դուք մոռացաք Տաճկաստանի ու Կովկասի այս տագնապալի դրութիւնը, մոռացաք ձեր ընկեր նահատակների վրէժը, ընկած էք այնպիսի ցնորքների յետեւ, որ կորստաբեր է երկար ու ձիգ տարիների ընթացքում ստեղծուած այն կազմակերպութեան, որի

[1] Տե՛ս Գեւորգյան Հ. Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատը, Երեւան, 2010, էջ 464-504:
[2] Ռուբէն, նշվ. աշխ., հ. էջ 148:

անունն է Դաշնակցութիւն...ձեր ճակատին պիտի դրոշմեն դաւաճանի սեւ անունը. եթէ դուք այնքան նեղ. այնքան կուսակցական լինեք. որ մոռանաք. կլանուիք միմիայն Կովկասեան կամ Տաճկահայ հարցով: Չեզանից կոյր են նրանք.որ չեն ընդունում Տաճկաստանի գործի կարեւորութիւնը եւ Կովկասեան հարցի անհրաժեշտութիւնը...»[1]:

Դատելով նամակի շարադրվածքից ու հարցադրումներից. դժվար է հավատալ. որ այն գրված լինի անձամբ Գևորգ Չավուշի կողմից. մանավանդ. որ այն ձեռագիր չէ: Չի բացառվում. որ Միհրանի դեմ նշանավոր հայդուկապետի հեղինակությունը օգտագործելու նպատակով այդ նամակը գրված լինի մեկ այլ անձի. նույնիսկ Ռուբենի կողմից:

Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի որոշման համաձայն Գևորգը պիտի մասնակցեր ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովին: Պահպանվել է Վարդան Վարդապետի. Տատրակի և Ռուբեն Տեր-Մինասյանի ստորագրությամբ Գևորգ Չավուշին. որպես Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի ընտրված պատգամավորի լիազորությունը հաստատող լիազորագիր-նամակը. որում նշվում է. «Բարձրաւանդակի եւ Դուրանի Կ. Կոմիտէն կը ներկայանայ Ընդհանուր Ժողովիդ յարգելի համախմբման իր ամենասիրելի ու քաջարի ընկերին՝ Պ. Սարհատի միջոցով:

Արդէն Պ. Սարհատը կամ ռազմիկ հերոս Գէորգ Չաւուշն իր հռչակով. քաջութեամբ եւ ճարպիկ գործունէութեամբ. որով սարսափ է ազդել ոչ միայն տեղային իսլամ ցեղերի. այլ նոյնիսկ թուրք կառավարութեան վրայ. ծանօթ պիտի ըլլայ ամենանց...»[2]:

Տարոն-Սասունը ներկայացնող ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն Ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցելու համար. համաձայն կուսակցության կանոնադրության. իրավունք ուներ գործուղելու ընտրված պատգամավորի: Որևէ փաստաթղթում և նամակներում չի նշվում. թե Գևորգ Չավուշից զատ. ով է ընտրված 2-րդ պատգամավորը: Ըստ Ռուբենի հավաստման Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեությունից Ընդհանուր ժողովին պիտի մասնակցեր նաև ինքը:

«Եթէ,- նշում է Ռուբենը,- Տատրակը. Վարդան Վարդապետը ղրկենք. այլեւս պիտի չկարողանային վերադառնալ եւ կամ վերադառնալով պիտի ըլլային փախստական. որ բնաւ ցանկալի չէր: Պէտք էր որ քիչով բաւականայինք եւ այդ ժողովին երթայինք Գէորգը եւ ես...»[3]:

Գևորգ Չավուշի. որպես պատգամավորի. Տարոնն ու Սասունը ներկայացնելու իրողությունը Մուրադին հայտնում է Տատրակը. «Սարհատը ինքնին յօժարացաւ գալ ձեր մօտ. համաձայն մեր ընկերական ցանկութեան. նա Ընդհանուր ժողովին պիտի ներկայանայ՝ իբր պատգամաւոր մեր կողմից: Խնդրում ենք իրա

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 43, թ. 1:
[2] «Նիւթեր...», հ. Դ, էջ 122:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 4, էջ 149:

անվնաս ժամանումը շուտ հաղորդէք մեզ: Մենք աւելորդ ենք համարում յանձնարարել Ձեզ Ձեր սիրելի ընկերը: Գիտէք թէ որքան սրտագին փարում ունիք դէպի նա: Նա ինչպես կարծեմ մէկ երկու օրից մեկնում է Բիւրակնէն եւ Աստուծով նամակս հասնելէ առաջ Ձեզ մօտ կլինի»[1]:

Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովին. Տատրակի և Վարդան վարդապետի ստորագրությամբ. ներկայացրել է տեղեկագիր-պահանջագիր. որը Տարոնում և Սասունում տիրող կացության. կուսակցական կառույցների և մարտական ուժերի ստույգ իրավիճակի նկարագիրն է: Համաձայն տեղեկագրի. այդ ժամանակ Հ. Յ. Դաշնակցության կողմից ընդհանուր ապստամբության նախապատրաստման համար ուժերի կենտրոնացման վայր ընտրված Դուրան-Բարձրավանդակը գտնվում էր աղետալի վիճակում: Եթե մինչև 1904թ. յուրաքանչյուր գյուղում գործում էին կուսակցական կառույցներ և ինքնապաշտպանական խմբեր. որոնք ըստ կենտր .կոմիտեի ներկայացրած տեղեկագրի «... շատ ուժեղ էին 903- 904.. երբ նրանց տրամադրութեան տակ կար մեծաքանակ ռազմամթերք և զէնք. բայց 904-ին. երբ Սասուն ընկաւ սկսուեց նրանց հզօրութեան անկումը»[2]:

Տեղեկագրում ուշագրավ տեղեկություններ կան Տարոնի և Սասունի զինվածության մասին: Համաձայն տեղեկագրի ժողովուրդը. Ալայ բեյի անվերջ խուզարկություններից ու բռնություններից հոգնած. սկսում է ծախել կամ ոչնչացնել զենքերը: Եթե հիմք ընդունենք տեղեկագրի հետևյալ տվյալները. «... երկու ամսուայ հետախուզութիւնից յետոյ հազիւ 65 զէնքի կանոնաւոր հաշիւ կարողացել են առնել... մեր ունեցած ծայրերը (նկատի ունի փամփուշտները- Հ.Գ.) շատ չնչին են (8000-9000). ապա միանգամայն պարզ է դառնում. որ Դուրան-Բարձրավանդակում. բացի Գևորգ Չավուշի մարտական խմբից. այլ ուժեր չկային: Իսկ ինչի՞ կարող էր ընդունակ լինել այդ սահմանափակ ուժը:

Տեղեկագիրը մատնանշում է. որ 1904 թ. դեպքերից հետո Դուրան-Բարձրավանդակ-ը դրսից ֆինանսական և ռազմական որևէ աջակցություն չի ստացել: Տեղի ՀՅԴ կենտր. կոմիտեն փախստականների. զինվորների և բանտարկյալների հոգսերը բավարարելու համար այլ միջոցներ չունենալու պատճառով դիմում է հանգանակության: Թեպետ բնակչության մեծամասնությունը աղքատ էր և դժվարությամբ էր դիմում նյութական զոհաբերությունների. այնուամենայնիվ. «... միայն Դուրանից հանգանակուել է 35000-50000 դահեկան. իրենց ներկայացրած մուտքով եւ ելքով. որից Կ.Կ.-ի ձեռքը Պ. Սարհատին հասել է.

1904 - ին	ոչինչ
1905 - ին	7392 դահ.
1906 - ին	8304 դահ.

[1] ՀՅԴ ԿԱ, թծ. 863, գ. 3:
[2] Տե՛ս «Նիւթեր...», հ. Դ, էջ 54:

...ահագին գումար հանգանակել են կոմիտէների եւ ծախսել զինուորների վրայ: Բացի կոմիտէներից հանգանակել են ե՛ զինուորներ. մօտաւորապէս 15000-20000 դահեկան...»[1]:

Տեղեկագրից նաև պարզվում է, որ Գեորգ Չավուշը, որպես Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի անդամ, մարտական-հայդուկային գործողություններից զատ կատարել է կազմակերպական այլ բնույթի գործեր:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին Դուրան-Բարձրավանդակի ներկայացրած տեղեկագրում կենտր. կոմիտեի 1904-1905 թթ. ֆինանսական հաշիվները ներկայացրել են Գեորգ Չավուշն ու Տատրակը[2]:

Ընդհանուր ժողովում Գեորգ Չավուշը Դուրան-Բարձրավանդակի կողմից պիտի ներկայացներ հետևյալ պահանջները.

1. Քանի որ սպառնալի դեպքերը միշտ սպասելի էին, ուստի անհրաժեշտ է Դուրան-Բարձրավանդակում ունենալ զինված խմբեր, որոնց ներկայությունն ապահովելու համար պահանջում են «...առնուազն 25 հազար (17 հազար մոսին եւ 8 հազար բերդանի) ծայր ունենալ»:

2. «Կազմակերպութիւնը որպէսզի իր ձեռնարկները հիմնէ ժողովրդի վրայ, անհրաժեշտ է որ նա այժմուանից մտածէ նրա ինքնապաշտպանութեան գօրեղանալուն»: Ժողովրդին զինելու համար կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 400 հրացան և 300000 փամփուշտ:

Այս. կարելի է ասել, համեստ պահանջների վերաբերում են միայն սահմանափակ ծավալի ձեռնարկներ իրականացնելու համար:

Դուրան-Բարձրավանդակում նախատեսված հիմնական ձեռնարկի իրականացման համար միայն 1907 թ. համար պահանջում են.

« ա. Ինքնապաշտպանութեան համար 20 հազար հին ծայր, բ. մեր գոյութեան կայունութեան՝ 30 հազար հին ու նոր ծայր, գ. ապագայ ձեռնարկի համար 30 հազար նոր ծայր, ուրեմն՝ 80 հազար հին ու նոր ծայր երաշխաւորում ենք 907-ին ստանալ եւ պահել պէտքերի համար: Բացի դրանից հարիւր նոր ձեւի հրացան եւ դրանց փոխադրման ու պահպանման՝ 700-1000 ոսկի»[3]:

ՀՅԴ ծրագրած ձեռնարկները իրականացնելու համար Դուրան-Բարձրավանդակ կենտր. կոմիտեն, բացի վերոհիշյալից, ներկայացնում է դրամական հետևյալ պահանջները. «...յեղափոխական տեսակետից անհրաժեշտ է գոնէ Բարձրաւանդակի ժողովուրդը պահել երկրի մէջ... Դրա համար անհրաժեշտ գտանք տաճկական 6000-ից մինչեւ 7000 ոսկի իբր նպաստ: Զինուորական պետքերի համար 1500-ից 2000 տաճկական ոսկի, նախապատրաստական ձեռնարկների 1500-2000, բանտ՝ 500-800, ռազմական գնման՝ 1500, սուրհանդակի՝700-1000»[4]:

[1] Նույն տեղում, էջ 63:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 62-63:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

Տեղեկագրում Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն իր տեսակետն է ներկայացնում ՀՅԴ 2-րդ և 3-րդ Ընդհանուր ժողովների ընդունած «Ուժերու կեդրոնացում կամ ապստամբութեան պատրաստութիւն» որոշման կապակցությամբ: Ընդամին կենտր. կոմիտեն իր տեսակետը ձևակերպել է հիմք ունենալով Գեորգ Չավուշի և Ռուբենի որոշումները[1]:

1. Նկատի ունենալով Դուրանի աշխարհագրական դիրքը, Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեն գտնում է, ու իրենց նպատակը պիտի լինի ոչ թե Դուրանը ընդունել որպես ապստամբավայր, այլ «Մեր նպատակը այդ վայրում պէտք է լինի ժողովրդին ինքնապաշտպանութեան պատրաստելը...»[259]:

2. Քանի որ Բարձրավանդակը մշտապես գտնվում էր թուրք իշխանությունների ուշադրության կենտրոնում, հետևաբար Բարձրավանդակը նոնպես չպետք է լինի ուժերի կենտրոնացման վայր: Ըստ տեղեկագրի հեղինակների Բարձրավանդակում «...գործունէութիւնը պէտք է ասիմանափակուի ժողովուրդին պահել երկրի մէջ, նպաստներով օգնել նրանց եւ մտցնել ուժեղ ներքին կազմակերպութիւն առանց մշտական ներկայութեան, ինչպէս առաջ»[3]:

3. Կենտր. կոմիտեն առաջարկում է. «... մեր նպատակին հասնել անհրաժեշտ է ունենալ մի յարմար լեռնային գաւառ, որտեղ հնարաւոր լինէր հաւաքել ռազմական ուժեր: Այդ չի կարող լինել ոչ Դուրանը, ոչ էլ Բարձրաւանդակը, այլ...»[4]:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը հաստատում է նախկին Ընդհանուր ժողովների կողմից ընդունած «Ուժերու կեդրոնացում կամ ապստամբութեան պատրաստութիւն» որոշումը»: Այս հարցում ՀՅԴ մարտավարությունը մնում է անփոփոխ. Սասունը դարձյալ համարվում է ուժերի կենտրոնացման վայրը:

Եթե ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը նույնպես որոշում է, որ Սասունը ընդհանուր ապստամբություն նախապատրաստելու համար ուժերի կենտրոնացման ամենահարմար վայրն է, ապա կարելի է ասել, որ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի ներկայացրած պահանջները չափազանց համեստ էին: Նրանց պահանջած և տեղում գտնվող ուժերով կարելի էր ձեռնարկել միմիայն մասնակի հայդուկային, բայց ոչ լուրջ, մեծածավալ, առավել ևս ապստամբական գործողություններ:

Գեորգ Չավուշին և Ռուբենին այդպես էլ չի հաջողվում Երկրից անցնել Կովկաս և այնտեղից մեկնել Վիեննա:

ՀՅԴ Արևելյան Բյուրոյին հասցեագրած 1906 թ. նոյեմբերի 25-ի նամակում Գեորգ Չավուշը հայտնում է, որ Կովկաս ուղևորվելիս ինքը կարողացել է հասնել մինչև Բյուրակն և տեղացող առատ ձյան ու ճանապարհների անանցանելիության պատճառով չի կարողացել դուրս գալ Երկրից ու հարկադրված նորից հետ է վերադարձել: Նույն նամակում ցավ և ափսոսանք հայտնելով, որ բախտ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 60:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

չի ունենում գնալ ու մասնակցել համաժողովին՝ Գևորգ Չավուշը նշում է. «Գալով ժողովի առթիւ երբ ես չկարողացայ գալ. ես այստեղէն տալիս եմ ձայն Պարոյրին եւ Մուրատին. որ նրանք լաւ ծանօթ են Երկրի դիրք եւ դրութեան. եւ արդէն մենք պարգած ենք գամէն մի հարցը Երկրի գործունէութեան մասին:

Իմ վկայականն էլ ղրկեցի եւ իմ որոշուած անձերը որ որոշած եմ եւ ձայնս նրանց տուած եմ. լի յուսով եմ՝ պիտի ընդունէք. եւ զմեզ ալ պիտի ճանչնաք իբրեւ ընկեր. եւ ապստամբավայրը՝ տեղը»:

Գևորգ Չավուշի առաջարկությամբ և Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի որոշման համաձայն, Տարոնն ու Սասունը Վիեննայի համաժողովում ներկայացնելու էին Անդրանիկն ու Սեբաստացի Մուրադը [1]:

Իր ձայնը Անդրանիկին և Մուրադին տալու որոշման մասին Գևորգ Չավուշը ընկերներին է հայտնում «Սիրելի Պարոյր և Մուրադ» վերնագիրը կրող նամակում: Իր մարտական զինակիցներին հասցեագրած նամակի սկզբնամասում Գևորգ Չավուշը ներկայացնում է ժողովին չմասնակցելու պատճառները և ապա շարունակում. «...ես բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ այն ազնիւ Ժողովին. բայց ձայնս տուի ձեզի որ ներկայանաք Ժողովին եւ մեր կողմանէն խօսիք եւ ծանուցումներ տաք Երկրի մասին. ինչպէս ալ գրած եմ Արեւելեան Բիւրոյին. որ դուք պէտք է ներկայանաք Ժողովին եւ խօսիք մեր ու Երկրի մասին. թէ Երկիր ինչ է պահանջում. բայց չուրանաք զձեր Աստուած եւ ձեր Երկիրը ինչպէս ուրացել էք մինչեւ ցարդ...» [2]:

Նույն նամակում Գևորգ Չավուշը իր մտահոգությունը հայտնելով Տարոնում և Սասունում տիրող ծանր վիճակի մասին՝ նշում է. «Բարձրաւանդակ ու Տարօն. որ ամենէն աշխատող ու գործ տեսնող եւ շատ մը զոհեր տուող շրջանն է. նրա տրամադրութեան ներքոյ ոչ մի դրամ չկայ. իսկ Շամի (Վասպուրական) տրամադրութեան ներքոյ կա 80000 ոսկի. նաեւ կայ 100000 աւելի ծայրեր (նկատի ունի փամփուշտներ-Հ. Գ.), իսկ մերը՝ ոչինչ. ու՞մ երեսէն, ձեզի պէս ընկերների երեսէն որ թողեցիք զմեզ եւ Երկիր Աստծու կրակի մէջ ու գնացիք ոչ դրամ, ոչ էլ ռազմամթերք ղրկեցիք. զմեզ եւ ձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող:

...Եղբայրք ճան. խնդրեմ լաւ աշխատէք որ օգուտ մը հասցնէք այստեղի ժողովրդեան եւ գործին. որ ազատուէք Նրա մեղքէն» [3]:

Այս նամակը կրկին անգամ փաստում է, որ Գևորգ Չավուշը երբեք մտադրություն չի ունեցել հեռանալ Երկրից. այլապես նա այդքան ծանր մեղադրանք չէր ներկայացնի իր մարտական ընկերներին՝ Անդրանիկին ու Մուրադին:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում Երկրից նրան դուրս բերելու առաջարկությունն այնուամենայնիվ, եղել է:

Ապրիլի 30-ին կայացած նիստում, երբ Արամ Մանուկյանի առաջարկությամբ, որպես Մուշ-Սասունի և Վասպուրականի Պատասխանատու Մարմնի անդամ

[1] ՀՅԴ ԿԱ, թթ 714, գ. 6:
[2] Նույն տեղում, գ. 7:
[3] Նույն տեղում:

առաջադրվել է Գևորգ Չավուշի թեկնածությունը. Վռամյանը պնդել է, որ «...սխալ է Չաւուշին Պատասխանատու Մարմնի անդամ ընտրելը. քանի որ նա ապստամբ է. թուրք կառավարութիւնը ճանաչում է եւ հետամուտ է լինում: Հերիք է, որ նա Վանում երեւաց. իսկոյն աղմուկ կը բարձրանայ: Իմ կարծիքով կարելի է նրան կարճ ժամանակով Երկրից դուրս բերել» [1]:

Եթե Գևորգ Չավուշի ներկայությունը խանգարում էր կուսակցության գործունեությանը, ինչպես գտնում էին Դուրան-Բարձրավանդակում ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներ Ռուբենն ու Դերենիկը, ապա ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը պարտավոր էր առաջնորդվել ազատագրական պայքարի շահերով և կայացներ ժամանակի ոգուն ու պահանջներին համահունչ որոշում և նրան դուրս բերեր Երկրից: Իրականում Ընդհանուր ժողովում տեղի է ունեցել ճիշտ հակառակը: Նրա թեկնածությունը Արամից բացի պաշտպանել է նաև Ռոստոմը՝ պատճառաբանելով. «Չաւուշին հեռացնելով, ոչինչ չենք շահի: Նրա տեղ նոր փախստականներ կը յառաջանան: Քանի որ նա հեղինակաւոր անձ է, ծանօթ է շրջանին, մի շարք կապեր ունի եւ վառ է պահում գործը, հետեւապէս մինչեւ իսկ անհրաժեշտ է նրա ներկայութիւնը» [2]:

Ավելին, ընտրության ժամանակ նա միաձայն ընտրվում է ՀՅԴ Տարոն-Վասպուրականի Պատասխանատու կենտր. կոմիտեի անդամ [3]:

Այսուհանդերձ, Դուրան-Բարձրավանդակում ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներ Ռուբենը, Փիլոսը (Փիլոս Սարգսյան, Մարալ) և Դերենիկը որոշակի քայլեր են ձեռնարկել ու պատրվակներ ստեղծել, Գևորգին Երկրից հեռացնելու նպատակով: Ինչո՞ւ և ինչպե՞ս բացատրել ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների համանման դիրքորոշումը, երբ Գևորգ Չավուշը ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում արդեն ընտրվել էր Տարոն-Վասպուրականի Պատասխանատու կենտր. կոմիտեի անդամ: Կարելի է ենթադրել. 1. Հ. Յ. Դաշնակցությունը որոշել էր վերջնականապես հրաժարվել հայդուկային գործողություններից, որն այլևս դրական որևէ նպաստ չէր կարող բերել ազգային-ազատագան պայքարին և առաջնորդվել համընդհանուր ապստամբության կազմակերպման մարտավարությամբ: Իսկ որևէ գաղտնիք չէր, որ Երկրում Գևորգ Չավուշի ներկայությունը հավասարազոր էր հայդուկային կռիվների ու ահաբեկչական գործողությունների շարունակմանը:

2. ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների, հատկապես Ռուբենի անձնական դիրքորոշմամբ: Դուրան-Բարձրավանդակում Գևորգ Չավուշը մեծ հեղինակություն էր և նրա ներկայությունը ստվերում էր ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների դիրքերի ամրապնդմանը: Հեռացնելով Գևորգն՝ Ռուբենը մեծ հնարավորություն էր ձեռք բերում իր միահեծան իշխանությունը հաստատել ՀՅԴ Տարոն-Վասպուրականի Պատասխանատու կենտր. կոմիտեում:

[1] «Նիւթեր...», հ. Գ, էջ 277:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 286:

1907 թ. աշնանը սբ. Կարապետի սբ. Սարգիս մատուռում Գևորգի, ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներ Ռուբենի, Փիլոսի, Դերենիկի և մի քանի ֆիդայիների մասնակցությամբ գումարվում է ժողով, ուր ի թիվս կազմակերպական բնույթի մի քանի խնդիրների, քննարկվում է հայ-քրդական փոխհարաբերության, ինչպես նաև Գևորգ Չավուշին Կովկաս ուղարկելու, այն է՝ Երկրից հեռացնելու հարցերը: Ժողովը որոշում է, որ Գևորգը կարևոր հանձնարարություն կատարելու նպատակով պիտի մեկնի Կովկաս: ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Դերենիկի հավաստմամբ, նման որոշում ժողովը ընդունել է այն պատճառաբանությամբ և հույսով, որ «...Գէորգը Կովկաս գնալով Դուրան Բարձրաւանդակի համար պիտի կարենար կլորիկ մի գումար ապահովել, ռազմամթերքի պարբերական փոխադրութեան զարկ տալ, մի բան, որ ամբողջապէս կլանում է Վանը»[1]:

Անկասկած, ռազմամթերքի փոխադրությունը և «կլորիկ գումար ապահովել»-ը չափազանց կարևոր էին, բայց ինչպես իրավացիորեն նշում է պատմաբան Ա. Ներսիսյանը.«...այստեղ կարևորը ոչ այնքան «կլորիկ գումարի» և «ռազմամթերքի պարբերական փոխադրության» հարցն էր, որքան դրանց պատրվակով Գևորգի հեռացումը: Հակառակ դեպքում այդ հարցերով կարող էր Խնուսից Կովկաս անցնել Փիլոսը, մանավանդ, որ նա ընտրել էր զենքերի տեղափոխության նոր ուղի»[2]:

Ապրիլի վեջերին Գևորգը 30 ընկերներով իջնում է Դաշտ և որոշում մեկ անգամ ևս ստուգել ու հրահանգներ տալ շրջանների մարտական կազմակերպություններին: Մուշից Տատրակը նամակով շտապում է հայտնել, որ թուրք իշխանությունները Գևորգին ձեռք գցելու նպատակով մեծ թվով զորք էին կենտրոնացրել Դաշտի շրջաններում: Տատրակի տագնապներն անհիմն չէին: Արածանիի ափին, Տավրոսի լեռնալանջերի մոտակայքում, ֆիդայիների խումբը անսպասելիորեն հանդիպում է թուրքական զորքի առաջապահ հեծյալ հարյուրյակին: Առաջապահ ջոկատը հիմնական ուժերից կտրելու ու ջախջախելու նպատակով Գևորգը հրամայում է 25 հեծյալ ֆիդայիների իջնել բաց դաշտ և դիմավորել թշնամուն: Կատարելով հայդուկապետի հրամանը՝ խմբին հաջողվում է գրավել թուրքերի ուշադրությունը և կեղծ փախուստի դիմելով՝ հեծելաջոկատը կտրել գետի մյուս ափին գտնվող հետևազորից: Թուրքերը նետվում են հետապնդելու սրարշավ հեռացող ֆիդայիներին, իսկ Գևորգը խմբի մնացած զինակիցներով թիկունքից վճռական հարված ձեռնարկելով՝ ջախջախում է թուրքական հեծելավաշտին[3]:

Թուրք իշխանությունները, մեծ թվով զինավաշտեր կենտրոնացնելով սբ. Կարապետ վանքից մինչև Արածանի ընկած շրջաններում, սկսում են խուզարկությունները: Մայիսի 27-ին Գևորգը 17 ընկերներով Սուլուխ գյուղում էր, որտեղ հանդիպելով երկու ծանոթ և մինչ այդ վստահելի համարում ունեցող

[1] «Հայրենիք» ամս., 1940, հոկտեմբեր, էջ 149:
[2] Ներսիսյան Ա.,Ազգայի-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ. , էջ 109:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 16, գ. 91, էջ 2-3:

թուրքերի՝ միամտորեն ազատ է թողնում: Թուրքերի գյուղից մեկնումից երկու ժամ անց սուլուխցիներից մեկը Գևորգին հայտնում է գյուղի պաշարման մասին: 5000 զինվորներ առաջանալով բռնել էին գյուղի բոլոր անցքերը: Պաշտպանվելու հնարավորությունները սահմանափակ էին, գյուղի չորս կողմը տարածված ընդարձակ դաշտերում չկային հուսալի դիրքեր: Գևորգը որոշում է նստեցնել մարտիկներին ձիերին՝ ու անկասելի գրոհով ճեղքել պաշարման շղթան: Սակայն պարզվում է, որ գյուղում ընդամենը 12 ձիեր կային: Գևորգը, կովողներին բաժանելով խմբերի, հրամայում է դիրքեր գրավել և սպասել թշնամու մոտենալուն: Թուրք զինվորների ստվար խմբերը շարժվում են գյուղի վրա և արշավում ուղիղ պաշտպանության այն հատվածը, ուր Սպաղանաց Գալեի ու մի քանի ֆիդայիների հետ դիրք էր գրավել Գևորգը: Առաջին գրոհը ֆիդայիները հաջողությամբ հետ են մղում, բայց մի փոքր անց թուրքերն ու քուրդ հրոսակախմբերն առավել մեծ ուժերով՝ վերսկսում են գրոհը, և յուրաքանչյուր անգամ հարձակվելիս տալիս է բազմաթիվ զոհեր ու նահանջում[1]:

Թուրքերի հերթական գրոհի ժամանակ, համաձայն Ռուբենի պատմածի «...թշնամիի տեղատարափ փամփուշտներից մէկը կը վիրաւորէ Գալէն՝ աչքէն: Այդ տեսնելով, Գէորգ ընկերներուն կըսէ. «Դուք Գալէն վարը իջեցուցէք ես իր տեղ կը կռուիմ» կռուի ամենատաք ժամանակ Գէորգի հրացանը կը խանգարուի եւ երբ կը ուզէր նայիլ իր հրացանին, գնդակ մը իր ձախ ծունկի տակէն անցնելով աջ թիկունքի տակ կը մխրճուի»[2]:

Կռիվը շարունակվում է մինչև երեկո: Թուրքերին թնդանոթներով օգնության են հասնում 300 ձիավորներ և սկսում ռմբակոծել գյուղը, բայց արդեն մութն ընկել էր: Հայ մարտիկները, վերցնելով վիրավոր Գևորգին ու զոհված Գալեին, ճեղքում են պաշարման շղթան և ողջ բնակչությանը դուրս բերելով գյուղի տարածքից՝ շարժվում դեպի Ղաշղալթա գյուղի կողմը:

Գևորգ Չավուշի կյանքի վերջին պահերի մասին որևէ վկայություն, բացի Ռուբենի պատմածից, գոյություն չունի: Համաձայն Ռուբենի, ֆիդայիները որոշում են վիրավոր Գևորգին երեք պահապանների հսկողությամբ թողնել Արածանիի ափի եղեգնուտներում, իսկ իրենք գետն անցնելու հարմարանքներ բերելու նպատակով գնում են Ղաշղալթա գյուղը: Վիրավոր հայդուկապետի պահապանները նկատելով, որ թուրքական զորքը շարժվում է իրենց ուղղությամբ, փոխում են նրա քաքստոցը, իսկ իրենք թաքնվում եղեգնուտի մեջ: Վերադարձած խումբը այլևս չի կարողանում գտնել հայդուկապետին: Ձերբակալված մի հայ կնոջ տեղեկություններով թուրքերը գտնում՝ են Գևորգին և նրա դիակը առանց անարգելու հանձնում Մուշի Հայոց առաջնորդարանին[3]:

Սուլուխի կռվից մեկ օր անց Մուշ քաղաքում Բիթլիսի նահանգապետության ներկայացուցիչները զինվորական մեծ պատիվներով և 50 երա-

[1] Մանրամասն տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 4, էջ 162-168:
[2] Նույն տեղում:
[3] Յեղափոխական Ալպոմ, 1974, թիւ 9, էջ 23:

ժիշտներից բաղկացած նվագախմբով հողին են հանձնում այդ նույն կռվում սպանված Քոսա Բինբաշուն: Մեծանուն հերոսներին հարգում են նույնիսկ թշնամիները: Քոսա Բինբաշու թաղումից երկու օր անց, Գևորգ Չավուշի աճյունը տանում են Մուշ քաղաքի Կողաբաղ թաղամասը և Վանի նահանգապետի տրամադրած 50 երաժիշտներից բաղկացած նույն նվագախմբի մասնակցությամբ, հանդիսավորությամբ ամփոփում հայոց գերեզմանատանը [1]:

Գևորգ Չավուշը, որը միաժամանակ Տարոն-Վասպուրական Պատասխանատու կենտր. կոմիտեի անդամ էր, կենտրոնական դեմք էր Դուրան-Բարձրավանդակում: Գաղտնիք չէր, որ ՀՅԴ գործունեությունը Տարոնում և Սասունում գլխավորապես պայմանավորված էր հենց նրա ընդունած վճիռներով ու կենսագործած գործողություններով: Անկասկած, նրա կորուստը չափազանց ծանր հարված էր Դուրան-Բարձրավանդակի ՀՅԴ կառույցների համար:

Թուրք իշխանությունները, ինչպես որ սպասվում էր, Սուլուխի կռվից հետո ավելի են խստացնում բռնություններն ու խուզարկությունները: Կառավարության որոշմամբ Մակեդոնիայից Տարոն են փոխադրում զինվորական ու ոստիկանական հատուկ ուժեր, իսկ ոստիկանապետ նշանակում են մի այնպիսի ծառայողի, որը փորձառություն էր ձեռք բերել սերբ, բուլղար, հույն հեղափոխականների դեմ պայքարելու ընթացքում [2]:

Տարոն-Վասպուրականի Պատասխանատու կենտր. կոմիտեի անդամ Գարմենը Դուրանից Շամի ընկերներին գրած նամակում (1907թ. դեկտեմբերի 10) գրում է զինվորների, ոստիկանների և քրդերի կողմից կանանց բռնաբարության բազմաթիվ դեպքերի, տղամարդկանց սարսափելի տանջանքների ենթարկելու մասին [3]:

«Բռնաբարուածները,-գրում է Գարմենը,-առաջնորդարանի դռանը կուլային եւ բարձր ձայնով կը կանչէին. Ա~խ, Գէորգ Չաուշ, ու~ր էս, ուր էս, խեղճերի, անտէրի, կրօնի, ազգութեան պաշտպան, նայիր ու՞ր էք, միւս ազգութիւն, միւս յեղափոխութիւն» [4]:

Հարց է ծագում, Տարոնում և Սասունում գտնվող ՀՅԴ գործիչներից ո՞վ կարող էր փոխարինել Գևորգ Չավուշին ու պաշտպան կանգներ առաջնորդարանի դռանը ողբացող հայերին: Գևորգ Չավուշն ու նրա գլխավորած հայդուկային խմբերը գոնե ինչ-որ չափով կարողանում էին զսպել հայ գյուղացիների նկարտմամբ քուրդ հրոսակախմբերի իրականացրած բռնություններ: Գևորգի զոհվելուց հետո հայ գյուղացին մնացել էր բացարձակապես անպաշտպան: Եվ պատահական չէ, որ այդ իրողությունը խոստովանում է նույնիսկ ՀՅԴ Դուրան-բարձրավանդակի կենտր. կոմիտեի անդամ Գարմենը:

Հայ բնակչության նկատմամբ բռնություններն ավելի սաստկացնելու նպատակով, թուրք իշխանությունները հայերի դեմ թշնամանքով են տրամադրում նաև

[1] Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւ Տարօնի աշխարհի, էջ 701:
[2] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 4, էջ 189:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 251:
[4] Տե՛ս նույն տեղում:

քրդական այն ցեղապետերին, որոնց հետ, Գևորգ Չավուշի կենդանության օրոք, ֆիդայիները բարեկամական հարաբերություններ էին հաստատել:

Հայ ֆիդայիները, հատկապես Գևորգ Չավուշը գործնական կապեր էր հաստատել քուրդ ցեղապետերից Տարոնի Մուսա բեկի եղբայր Ղասմ բեկի հետ, որը ՀՅԴ Մշո (Օագիսի) կոմիտեի անդամ էր Մելիք անունով [1]:

Ֆիդայիների վստահությունը վայելող Ղասմ բեկը քուրդ ցեղապետերից առաջիններից էր, որ թուրք իշխանությունների թելադրանքով փոխում է իր վերաբերմունքը հայ ֆիդայիների նկատմամբ և Արտոնք գյուղում սպանել տալիս իրեն հյուրընկալված Տարոնի անվանի ֆիդայի Սեյդո Պողոսին [2]:

Ավելին, 54 հեծյալներից բաղկացած զինավառ խմբով Ղասմ բեկը շրջում է Դաշտի գյուղերը և բռնություններ գործադրելով, մարդկանց ստիպում է հանձնել զենքերն ու հայտնել ֆիդայիների տեղը [3]:

Դժվար է ասել, թե այդ օրերին ինչպիսի՞ գործնական քայլեր կարող էին ձեռնարկել ՀՅԴ Դուրանի և Բարձրավանդակի կենտր. կոմիտեները: ՀՅԴ ղեկավար մարմինների այդ ժամանակահատվածում կայացրած որոշումներում, բացառությամբ Արևելյան բյուրոյի հերթական Ռայոնական ժողովի (31 դեկ. 1907 թ.-8 յուն. 1908 թ.), դժվար է գտնել մի որևէ կշռադատված կետ, որը վերաբերվեր Դուրան-Բարձրավանդակի ՀՅԴ կառույցների գործունեությանը:

Ռայոնական ժողովի օրակարգի «Դաշնակցութեան տակտիկան Թիւրքիայում» հարցը քննարկելիս, ժողովականները լսելով Երկրից եկած ընկերների զեկուցումները Երկրի դրության և մարտավարության մասին՝ որոշում են. «... առաջարկել Դաշնակցութեան Խորհրդին կոչ անել բոլոր դաշնակցական գործօն ընկերներին մտնելու Երկիր, այժ տալու սկսուած եռանդուն գործունէութեան թէ քաղաքական, թէ ազգերի համերաշխութեան եւ թէ տնտեսական ասպարէզներում» [4]:

Հարկ է նկատել, չկա որևէ սկզբնաղբյուր, փաստաթուղթ, որը մատնանշի մինչև հուլիսյան սահմանադրության հռչակումը, Երկիր մեկնած գոնե մեկ ընկերոջ անունը: Եթե հիմք ընդունենք Ռուբենի հուշագրությունները, ապա պարզվում է, որ Գևորգ Չավուշի նահատակությունից հետո Դուրան-Բարձրավանդակում նա է եղել կենտրոնական դեմքը և ՀՅԴ կառույցներն առավելապես առաջնորդվել են նրա հրահանգներով [5]:

Բայց այնպիսի ժամանակաշրջանում, երբ Դաշտն ու Սասունը գտնվում էին զորքի ու ոստիկանական ուժերի խիստ հսկողության տակ, ի՞նչ կարող էին անել Ռուբենն ու ՀՅԴ կառույցները: Այդ նույն օրերին Ռուբենը, համաձայն իր իսկ խոստովանության, զինակիցների ընկերակցությամբ անընդհատ տեղա-

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1953, թիւ 5, էջ 235:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 251:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. 4, էջ 189-202:

փոխվելով մի վայրից մյուսը, դժվարությամբ է կարողացել խուսափել թուրք զինվորների և ոստիկանների հետապնդումներից[1]:

Թուրք կառավարությունը նույնիսկ հրաման էր ածակել «...անպատճառ ձեռք ձգել Գէորգի կնկան՝ Եղսոյին եւ նրա ծծկեր մանուկին՝ Վարդգեսին»[2]:

Հայդուկապետի կնոջն ու զավակին փրկելը ֆիդայիների համար սուրբ գործ էր, պատվի խնդիր: Սասունի ավագագույն ֆիդայի Սպաղանաց Մակարը Սասունի մեկ այլ նշանավոր ֆիդայի Փեթարա Մանուկի համագործակցությամբ փորձում է փրկել Եղսոյին ու Վարդգեսին, բայց ապարդյուն: Հունիսի 20-ին, երբ Մակարը գտնվում էր Փեթարա գյուղում և պատրաստվում էր հաջորդ օրը ևեթ բարձրանալ Սասուն, գիշերը ժամը 3-ին հանկարծակի պաշարվում է թուրք զինվորների ու քուրդ զինյալների կողմից: Գյուղում գտնվող 23 ֆիդայիներ Մակարի հրամանով բաժանվում են երեք խմբերի և փորձում դուրս գալ գյուղի տարածքից: Այդ կռվի մանրամասներն իր հուշագրությունում հաղորդում է Ռուբենը: Համաձայն նրա պատմածի՝ Փեթարա կռվում, բացի Սպաղանաց Մակարից, Շենիքցի Մանուկից ու Փեթարացի Պետիկից, մյուս ֆիդայիները, այնուամենայնիվ, կարողանում են դուրս գալ շրջափակումից ու սարը բարձրանալ[3]:

Փեթարա կռվում զոհվում է լեգենդար ֆիդայի Սպաղանաց Մակարը, որը Սասունում մեծ հեղինակություն էր վայելում դեռևս Արաբոյի, ապա նաև Աղբյուր Սերոբի հայդուկապետության շրջանում: Կռվից հետո գորքը վերցնում է զոհված երեք ֆիդայիների դիակները և հաղթականորեն վերադառնում Մուշ:

«Պարզ էր ամեն ինչ,-գրում է Ռուբենը,- Մակարը չկար, Մանուկը չկար, Եղսոն ու Վարգեսը չկային: Ի զուր անցած էր այնքան զոհողութիւն թասիպի, նամուսի մը համար: Զօրքը կը տանի մեր հերոս ընկերներու դիակները Մուշ քաղաք, կը ցուցադրէ ժողովրդին...եւ դիակները կը յանձնուին Առաջնորդին»[4]:

Գևորգ Չավուշի հայդուկապետության շրջանն իր առանձնահատկությամբ, կենսագործած աննախադեպ մարտավարությամբ, Հայոց Ազատամարտի առավել ուշագրավ, հերոսական կռիվներով ու պայքարի դրամատիզմով հագեցած էջերից է: Կարելի է ասել, որ նրա, ապա նաև Սպաղանաց Մակարի նահատակությամբ վերջակետ դրվեց ոչ միայն հայդուկային-պարտիզանական գործողություններին, այլ նաև որևէ կարգի մարտական ձեռնարկներին, թեպետ Արևմտահայաստանի մի շարք շրջաններում, գլխավորապես Տարոնում և Վասպուրականում մինչև 1908թ. հուլիսյան սահմանադրության հռչակումը դեռևս շարունակում էին գործել խիստ սահմանափակ թվակազմ ունեցող փոքրաթիվ ֆիդայական խմբեր:

Հուլիսյան սահմանադրության հռչակմամբ Դաշնակցությունը թևակոխում է գործունեության նոր շրջան նաև Դուրան-Բարձրավանդակում:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 203:
[3] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 206-215:
[4] Նույն տեղում, էջ 211:

Արաբո

Աղբյուր Սերոբ

Գուրգեն

Նիկոլ Դուման

Հրայր Դժոխք

Վահան Մանվելյան

Անդրանիկ

Գևորգ Չավուշ

Նստած՝ Գուրգեն Վարգեն (7), Բուլղարացի Պետո 2-րդ շարք՝ ձախ 2-րդ Սեղմոնյան Սնդրանիկ

Հանցնած եմ, ձախից՝ Սեյդը Պողոս, Սմբատ, Մոկացի Գրիգոր, Հովհաննես, Սարգիս, Տիգրան, Սարգիս Սուրմաս, Դավիթ Սարգսյան, Դանիել Սեյդ, Ներսես Սեյդ, Սեյդ Սեյդ, Սեյդ Սեյդ, Սեյդ

Քեռի, Համազասսպ, Վարդան

Սեյդո Պողոս

Արմենակ Եկարյան

Օնկոն հայ Դրոշակը Ներսեսյանների

Ժամանակ «Յոհիոմ» վրաբանոց

Փոխիկի խումբը

Գայլ Վահանը (նստած) իր թիկնապահներով

Խմբապետ Միհրանի մարտախումբը

Կայծակ Վաղարշակ



Աշոտ Երկաթ

Խան (Բարսեղ Թիրաքյան)

Բուլղարացի Պետո

Դրո, Մարտիրոս Չարուխչյան

Կոմս (Վահան Փափազյան)

Սեդրակ Ջալալյան

Վարժապետ Մարտիրոս

Արամայիս Ազնավուրյան

Սարհատ (Մկրտիչ Աղամալյան)

Մռավ (Մարգար Ժամհարյան)



Իշխան (Նիկոլ Պողոսյան)

Արամ Մանուկյան

Արմեն Գարո

Բաբկեն Սյունի

Տուրբախ
(Հարություն Կիրակոսյան)

Սեպուհ
(Արշակ Ներսիսյան)

Ստեփան Ստեփանյան

Մեշետի Ավետիս



Մարտական և զինատար խմբերի երթուղիները

ԳԻՐՔ 2

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

ԳԼՈՒԽ 1
ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՈՒՄԸ

Հ.Յ. Դաշնակցության (ՀՅԴ) պատմության ուսումնասիրությունը հավաստում է, որ մինչև 1903 թվականը նրա գործունեության ոլորտը սահմանափակված էր գլխավորապես Արևմտյան Հայաստանով: Հ. Յ. Դաշնակցությունը ձևավորվել էր արևմտահայ խնդրի շուրջը, և կուսակցության ծրագրում տեղ գտած հիմնադրույթներն ու ՀՅԴ Ընդհանուր ժողովների ընդունած որոշումները վերաբերում էին Օսմանյան բռնապետության լծից Արևմտյան Հայաստանի ազատագրմանը [1]:

Այուհանդերձ, 1903 թ-ից Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, որոնք գլխավորապես պայմանավորված էին Հայկական հարցի և կովկասահայության նկատմամբ ցարական Ռուսաստանի դրսևորած քաղաքականությամբ: Այդ թվականից սկսած ՀՅԴ իր գործունեությունում բացում է պայքարի երկրորդ՝ Կովկասյան ճակատը:

Եթե սահմանենք Կովկասյան ճակատի բուն էությունն ու ուղղվածությունը, ապա ամփոփ պիտի ասել, որ կայսր Նիկոլայ 2-րդի կողմից հաստատված հայ եկեղեցու կալվածքների ու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի հրապարակումից հետո Հ. Յ. Դաշնակցությունը որդեգրում է ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմավարությունը և պարզում հեղափոխական պայքարի դրոշն ընդդեմ հզոր կայսրության:

Դրանից առաջ 1896-97թթ. «Ընդհանուր» ռայոնական ժողովում ՀՅԴ ընդունել էր ուժերը Բարձրավանդակում (Սասուն) կենտրոնացնելու մասին որոշումը, բայց մի էական տարբերությամբ: Եթե «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշմամբ պիտի պահպանվեին գավառում արդեն կազմակերպված հայդուկային խմբերը, ապա ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովը մերժում է «ֆէտայական ասպատական գործունէութիւնը» և ընդունում «մարտական-զինամարզական խումբեր» կազմակերպելու ծրագիր [2]:

Առաջնորդվելով 2-րդ Ընդհանուր ժողովի որոշմաբ՝ ՀՅԴ իր ուշադրությունը գլխավորապես պիտի բևեռեր Բարձրավանդակի (Սասուն) վրա: Սասունը պիտի դառնար ազատագրական պայքարի միջնաբերդն ու դրոշակակիրը: Այդ պատճառով Արևելյան Հայաստանը, իսկ ավելի լայն առումով կովկասահայությունը, դուրս էր մնացել նրա ուշադրությունից: Սակայն, իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ Նիկոլայ 2-րդը ստորագրում է հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Հայ եկեղեցու ունեցվածքը միաժամանակ համազգային սեփականություն էր, հետև-

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 7-104:
[2] Նույն տեղում, էջ 59:

աբար հունիսի 12-ի օրենքը ուղղված էր ոչ միայն եկեղեցու, այլև հայ ժողովրդի դեմ:

Հայ եկեղեցու կալվածքների վերաղարձնելու կապակցությամբ Նիկոլայ 2-րդին հասցեագրած զեկուցագրում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը, ներկայացնելով եկեղեցու հետ հայ ժողովրդի ունեցած սերտ կապը, ընդգծում է. «...եկեղեցական գոյքերի գրաւումը վիրաւորել է ժողովրդի բարոյական զգացումը եւ նրան համարեա գլխովին առանց դասակարգի ու կացութեան խտրութեան, նետել յեղափոխական շարժման մէջ»[1]:

Պատմական այն ժամանակահատվածում, երբ սուլթան Աբդուլ Համիդը իրականացնում էր արևմտահայությանը ֆիզիկապես բնաջնջելու քաղաքականություն, ցարական կառավարությունը Հայաստանի արևելյան հատվածում (Արևելահայաստան) կյանքի կոչեց հոգևոր ու բարոյական բռնությունների հակահայ ծրագիրը: Հայոց դպրոցների փակումը ցարական բյուրոկրատիայի հայատյաց քաղաքականության առաջին դրսևորումն էր: Փոքր ժամանակ անց հետևեցին հայ բարեգործական ընկերությունների հիմնած դպրոցների, գրադարանների, հրատարակչական ընկերությունների, թերթերի ու պարբերականների արգելման վերաբերյալ որոշումները:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «Ցարական ծանր ռեժիմը հաւասարապէս կը ճնշէր բոլոր քաղաքացիները, սակայն ան աւելի ծանր էր հայերու համար: Իշխան Գոլիցինը կը կարծէր, որ պէտք է հայերը աւելի ուժեղ ճնշել, որովհետեւ անոնք աւելի կազմակերպուած եւ աւելի ուժեղ կերեւային իր աչքին: Յատուկ օրէնքներ հրատարակուեցան հայերու համար: Փակուեցան հայկական դպրոցները, հայ բարեգործական հիմնարկութիւնները...»[2]:

1898թ. հունվարին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Թիֆլիսում գտնվելիս այցելում է Կովկասի փոխարքա Գոլիցինին, փոխարքան որպես փաստարկ հայկական դպրոցների փակման, ասել է. «Կովկասի Հայոց դպրոցները յեղափոխական պրոպագանդի բոյներ են»[3]:

Հանրահայտ իրողություն է, որ այդ ժամանակահատվածում հայոց դպրոցները գործում էին գլխավորապես հայ եկեղեցու հովանու ներքո: Իսկ եկեղեցին ի զորու չէր ընդվզել ընդդեմ ցարական իշխանությունների և, իհարկե, անզոր էր միայնակ որևէ ծանրակշիռ ու վճռական քայլեր ձեռնարկել՝ պաշտպանելու կրթական ու մշակութային օջախների գոյությունը:

Համանման իրավիճակում իրենց ծանրակշիռ խոսքը պիտի ասեին հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները:

Արմենական կուսակցության մասին խոսք լինել չի կարող: Այդ կուսակցությունը Կովկասում գրեթե չի գործել, իսկ Վանի 1896 թ. ողբերգական դեպքերից հետո, երբ թուրք իշխանությունների դրդմամբ քրդական Մազրիկ ցեղը

[1] Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը, էջ 130:
[2] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 69:
[3] Հայկ Աճեմեան, Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1927, էջ 707:

ուխտադրժորեն կոտորեց Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ դեպի Պարսկաստան ուղևորվող հարյուրավոր վանեցիների, արմենականները շատ մեծ կորուստ կրեցին և գրեթե դադարեցին գործելուց:

Կովկասում հաստատվել ու գործում էին Ս. Դ. Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները: Որևէ գաղտնիք չէ, որ այդ կուսակցություններից առավել հզորն ու ազդեցիկը Հ.Յ.Դաշնակցությունն էր, որն արդեն հասցրել էր իր կազմակերպական ապակենտրոն կառույցները հիմնել նաև Կովկասի բազմաթիվ քաղաքներում և գյուղական բնակավայրերում:

Թեպետ Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը գլխավորապես բևեռված էր Արևմտյան Հայաստանի վրա, բայց դա բոլորովին չի նշանակում, որ կուսակցության ուշադրությունից դուրս էին կովկասահայությունը և նրա կյանքում կատարվող կենսական նշանակություն ունեցող իրադարձությունները:

Որպես հակազդեցություն դպրոցների և կրթական հաստատությունների փակման՝ Դաշնակցությունը Կովկասի տարբեր բնակավայրերում հաստատված կուսակցական կառույցների միջոցով իր գործունեության ոլորտում ընդգրկում է կովկասահայության կրթության ու դաստիարակության գործը: ՀՅԴ նախաձեռնությամբ քաղաքներում և գյուղական բնակավայրերում հիմնվում են գաղտնի դպրոցներ, գրադարաններ[1]:

Այս հարցում Դաշնակցությունը և հայ եկեղեցին գործել են միասնական ու փոխհամաձայնեցված: «Օխրանա»-ի տեղեկագրի հեղինակների բնութագրմամբ Դաշնակցությունը կովկասահայության դպրոցների ու մշակութային հաստատությունների գործունեությունը հովանավորել է զուտ կուսակցական նպատակներով: «Իր ազդեցութիւնը ուժեղացնելու համար, «Դաշնակցութիւն»-ը,- նշում է տեղեկագիրը,- իր ձեռքն առաւ ժողովրդական կրթութեան գործը եւ այդ նպատակով քաղաքներում եւ գաւառներում հիմնեց գաղտնի դպրոցներ, ուր ուսուցչութիւն էին անում հայոց լեզուով, որի ծախքերը պիտի հոգար համայնքը»[2]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեությունում դպրոցների վրա առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացնելն ու ուսուցչություն անելն արդեն ընդունված ու փորձված գործելակերպ էր: Հեղափոխական գործունեություն ծավալելու համար ուսուցչությունը ընդունված, հուսալի ու լավագույն միջոցներից մեկն էր: Ուսուցիչները, որպես ուսյալ և զարգացած մարդիկ, հարգալից համարում ու կշիռ ունեին ժողովրդի մեջ: Բացի դրանից, ուսուցչությունը լավ հնարավորություն էր ընձեռում սերտորեն առնչվելու բնակչության տարբեր խավերին և նրանց հաղորդակից դարձնելու իրենց ծրագրերին: Այսինքն՝ ուսուցչությունը լավ հնարավորություն էր տալիս գործիչներին ժողովրդին հաղորդակից դարձնելու ազատագրական պայքարի գաղափարներին:

Պիտի ընդունել , որ այս հարցում ինչպիսին էլ լինի Դաշնակցությանը տված ցարական հատուկ ծառայությունների բնութագիրն ու գնահատականը, այ-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 353, գ. 2, էջ 1:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 327:

նուամենայնիվ, գաղտնի պայմաններում դպրոցների գործունեության խթանումը, անկասկած, ազգապահպանմանը նպատակաուղղված հայրենանվեր ու կարևորագույն գործ է, որը դժվար է գերագնահատել:

Ավելին, 1902թ.-ից սկսած Հ.Յ.Դաշնակցությունը կովկասահայության ներքին կյանքում տեղի ունեցող իրադարձությունները կարգավորելու ու վերահսկողություն սահմանելու նպատակով, գավառներում հաստատում է դատարաններ, և «...տարիներով գերագույն իրաւարարի պաշտօնը կատարեց, գիւղացիներուն մէջ ծագած ամէն տեսակ վէճեր ինք կը դատէր եւ կը վճռէր, դատաւորները.. որ յաճախ ընտրուած էին համայքներէն, կուսակցութեան հսկողութեան տակ կը գործէին» [1]:

Կարելի է ասել, որ Հ.Յ. Դաշնակցությունը իր կառույցների միջոցով քայլեր էր ձեռնարկում՝ Կովկասում իրականացնելու պետությանը բնորոշ գործառույթներ, որը, կարելի է ասել, շատ դեպքերում, հատկապես 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, նրան հաջողվել է :

Այսուհանդերձ, կարելի է փաստել, որ մինչև Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդի կողմից 1903թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի ընդունումը հայ ազգային կուսակցությունների գործողություններում, համաժողովների ու ղեկավար մարմինների որոշումներում դժվար է գտնել որևէ արարք, փաստաթուղթ, որոնք պարունակեին խիստ ընդգծված հակառուսական բովանդակություն:

Հ. Տասնապետյանը, անդրադառնալով ցարիզմի և ռուս հեղափոխական կազմակերպությունների (սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-հեղափոխական) նկատմամբ Հ.Յ.Դաշնակցության դրսևորած վերաբերմունքին, նշում է, որ 1903թ. տեղի ունեցած ՀՅԴ Ռայոնական ժողովը թեև Ռուսաստանի բանվորական շարժումը գնահատում է «կենսունակ եւ խոշոր երեւոյթ», բայց միաժամանակ գտնում է, որ «Հ.Դ. Դաշնակցութիւնը չի կրնար ակտիւ մասնակցութիւն ունենալ, համակրելով հանդերձ, քանի ազգային դատը աւելի տագնապալի է եւ մեր ուժերը՝ երկու գործի համար անբաւարար» [2]:

Քանի որ ՀՅԴ-ն իր կազմակերպական կառույցներն էր հիմնել Կովկասի բազմաթիվ բնակավայրերում, և ժողովրդի մեջ արդեն ձեռք էր բերել նկատելի կշիռ ու հեղինակություն, բնականաբար նրա համար կարևորագույն և առաջնահերթ նշանակություն էր ձեռք բերում այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում հայությանը պիտի ղեկավարեր ու առաջնորդեր հենց ինքը՝ Հ.Յ. Դաշնակցությունը, այլ ոչ թե քաղաքական մեկ այլ կազմակերպություն:

Ի՞նչ հանգամանքներով էր պայմանավորված ցարիզմի քաղաքականության հակահայ դիրքորոշումը:

1. Մինչև հունիսի 12-ի օրենքի ընդունումը ցարական իշխանություններն Արևելահայաստանում հետևողականորեն, բայց նուրբ վարպետությամբ կիրառելով հայատյաց քաղաքականություն, միաժամանակ աշխատում էին հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների ուշադրությունը բևեռել գլխավորապես Արևմտահայաստանի վրա՝ ստեղծելով այն պատրանքը, թե իբր հայությունը ճնշվում է միայն թուրքական կայսրությունում, և այդ խաբկանքը հաջողությամբ իրականացվեց մինչև 1903թ. հանրահայտ օրենքի ընդունումը: Այդ ամենին զուգահեռ բացասաբար արձագանքելով Արևմտահայաստանի ազատագրական պայքարին՝ ցարիզմը ամեն կերպ խոչընդոտում էր հայ զինատար ու մարտական խմբերի, հեղափոխական գործիչների մուտքը Կովկասից Երկիր:

Անդրադառնալով հայության նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությանը՝ Ալ. Խատիսյանը տալիս է հետևյալ ուշագրավ բնորոշումը. «Ռուս կառավարութիւնը Տաճկաստանի հետ վարած պատերազմներու ընթացքին (1877, 1914-17), կը գրգռէր հայերու թշնամութիւնը դէպի թուրքերը, իսկ խաղաղութեան օրերերուն կը հալածէր հայերու թրքատեաց քաղաքականութիւնը: Ու կը ստացուէր բարդ կացութիւն մը՝ բարեկամի եւ թշնամու: Մէկ օր բարեկամ, միւս օրը՝ թշնամի» [1]:

Արևմտյան Հայաստանի ազատագրումը ցարիզմը դիտում էր արևելահայության ինքնորոշման իրավունքի իրագործման ձգտումների ամենահզոր ազդակներից մեկը և այդ պատճառով գործադրում էր ընձեռված հնարավորությունները՝ խոչընդոտելու հայության ազատագրական պայքարը, ինչպես նաև Հայաստանի երկու՝ Արևմտյան և Արևելյան հատվածների հավանական միասնությանը:

Ըստ Հայկ Աճեմյանի՝ Կովկասի փոխարքա Գոլիցինի գաղտնի զեկուցագրերը և բանավոր հավաստիացումները հիմք ընդունելով՝ նախարարների խորհուրդը հանգել էր այն եզրակացության, որ «...իսկապէս Հայ եկեղեցին՝ կեդրոն ունենալով Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը, կը հանդիսանայ բարոյական եւ նիւթական այն միակ եւ գերագոյն յենարանը, որ զարկ կուտայ Հայ յեղափոխական շարժումներուն...մէկ խօսքով կը ջանայ պատրաստել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ծրագիրը» [2]:

2. Ցարիզմի հակահայ քաղաքականությունը ուղղված էր հայ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող կուսակցությունների ու հատկապես ընկերավարական գաղափարախոսություն դավանող Հ.Յ. Դաշնակցության դեմ, որն այդ ժամանակ, որպես քաղաքական կազմակերպություն, շնորհիվ իր կազմակերպական կառույցների որոշակի կշիռ և հեղինակություն ուներ ոչ միայն Կովկասում, այլև կայսրության մի շարք շրջաններում:

«...եթէ նկատի ունենանք,-գրում է Ալ. Խատիսեանը,- եւ այն պարագան, որ հայ յեղափոխական կազմակերպութիւններու գործունէութիւնը կը տարածուէր նաև ռուսական սահմաններուն մէջ, պարզ կը լինի, թէ ի՞նչ առիթներէ օգտուե-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 353, գ. 2, էջ 1:
[2] Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով, Աթէնք, 1988, էջ 64:

[1] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 82-83:
[2] Հայկ Աճեմեան, Հայոց Հայրիկ, Թաւրիզ, 1927, էջ 757:

լով՝ ռուսական կառավարութիւնը կը դիմէր պայքարի երրորդ միջոցին. այն է՝ ընդհանուր դատական հալածանքը Հ.Յ.Դաշնակցութեան դէմ»[1]:

3. Բռնագրաւելով եկեղեցու հարստութիւնը՝ ցարական իշխանութիւնները թուլացնում էին հայոց եկեղեցու կշիռն ու հեղինակութիւնը: Պետութեան բացակայութեան պայմաններում հայոց եկեղեցին հայութեանը միավորող. հայապահպանութեան կարևորագոյն կառույցն էր:

Հայութեան նկատմամբ դրսևորած քաղաքականութիւնը նախևառաջ ուղղված էր հայկական դպրոցների և մշակութային օջախների դեմ: Գաղտնիք չէր, որ հայկական դպրոցներն ու մշակութային օջախները գոյատևում էին հիմնականում եկեղեցական կալվածքներից ստացված եկամուտների հաշվին: Հունիսի 12-ի օրենքը փաստորեն զրկում էր եկեղեցուն և բնականաբար. կրթական ու մշակութային հաստատություններին նյութական միջոցներից, իսկ դա միանշանակորեն հավասարազոր էր հայկական դպրոցների և մշակութային հաստատությունների փակմանը:

Հայ ժողովրդին ուղղված «Թռուցիկ թերթ» խորագիրը կրող ուղերձում. ՀՅԴ անդրադառնալով ցարիզմի կողմից հունիսի 12-ի օրենքի ընդունման իրողությանը. միանգամայն իրավացիորեն նշում է. «Բռնակալութիւնը ուզում է մութ պահել իր հպատակներին: Խեղդել նրանց տգիտութեան խաւարում. որպէսզի աւելի հլու-հնազանդ լինին նրանք:

Չէ՞ որ կրթութիւնը և լուսաւորութիւնը ծնեցնում են ազատութեան ծարաւ: Ցարն ու Գոլիցինը այդ նպատակով փակեցին մեր դպրոցները: Նրանք մեր մայրենի լեզուի տեղ ջանացին կերակրել օտարի կաթով-ռուս լեզուվ...»[2]:

4. Կայսրության մի շարք քաղաքներում տեղի ունեցող գործադուլներն ու քաղաքական կուսակցությունների գործողությունները մատնանշում էին, որ չէր բացառվում. որ Ռուսաստանում բռնկվեր հեղափոխական շարժում: Ցարիզմը. հանուն իր քաղաքական շահերի. ձգտում էր լարվածություն. թշնամանք սերմանել կովկասյան ազգերի միջև ու նրանց հեռու պահել քաղաքական պայքարից և բացառել իր դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու վտանգից: Հետևանքը երկու տարի անց հենց իշխանությունների թողտվությամբ ու սադրանքով Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներն էին:

Այդ օրերին հայաբնակ տարբեր բնակավայրերից Մկրտիչ Խրիմյան Ա. կաթողիկոսի դիվանը ստանում էր բազմաթիվ հեռագրեր ու նամակներ. որոնց հեղինակները իրենց բողոքը. ցասումն ու առաջարկություններն էին արտահայտում ի պաշտպանություն հարազատ եկեղեցու[3]:

Հայ եկեղեցու իրավունքների պաշտպանության բողոքի ձայն են բարձրացնում նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունն ու պարսկա-հնդկական թեմի առաջնորդարանը: Պահպանվել է Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արքեպիս-

[1] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 83:
[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27 էթ. 1:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 299, թ. 25-29:

կոպոս Օրմանյանի նամակը (9 սպտեմբերի 1903թ.) Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովկին: Նամակում նա պարզաբանում է հայ եկեղեցիների իրավունքների հանդեպ Ռուսաստանի ունեցած ավանդական քաղաքականությունը և ակնկալում կայսեր մոտ դեսպանի միջնորդությունն ու հովանավորությունը՝ ի պաշտպանություն հայ եկեղեցու իրավունքների[1]:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին 1903 թ. հոկտեմբերի 3-ին հասցեագրած նամակում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը հայտնում է. «Մեր կայս. կառավարութիւնն ալ շատ զգուշաւոր է Ռուսական կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ. եւ մեզ ալ նոյն զգուշաւորութիւնը կկրկնուի շարունակ. եւ մենք ալ պարտաւոր ենք հնարաւորութեան սահմանին մէջ շարժուիլ եւ աւելորդ միջադէպեր չստեղծել»[2]:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին հասցեագրած դիմումում (1903թ. հոկտեմբերի 20) պարսկա-հնդկական թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոսը. առաջնորդարանի և բնակչության անունից արտահայտելով իրենց դիրքորոշումը հայ եկեղեցու դարավոր գործունեության և նրա իրավունքները պաշտպանելու վերաբերյալ. նշում է. «Վեհափառ Հոգեւոր Տէր... աղերսում ենք Ձեզ. որպէս Հայոց եկեղեցւոյ Ընդհանրական ծայրագոյն Պետի՝ դիմել ուր հարկն է. դիմել թագաւոր կայսեր բարեգթութեան. դիմել ռուս մարդասէր գործիչների միջամտութեան՝ վերահաստատելու Հայ ազգի եկեղեցիական-կալուածական իրաւունքները»[3,7]:

Միաժամանակ դիմելով Ռուսաստանի արտաքին գործոց նախարարին՝ Սահակ արքեպիսկոպոսը գրում է. «Պարսկաստանի. Հնդկաստանի. Բրմանի եւ Ջաւաեան կղզիների հայ հասարակութիւնները դիմում են ինձ՝ որպէս Թեմական Առաջնորդի՝ եւ խնդրում են դիմել ամենախոնարհ խնդրանքով Նորին Մեծութեան Կայսեր Ռուսիոյ՝ վերահաստատելու Հայոց բազմաչարչար անկախ եկեղեցւոյ բազմադարեան իրաւունքները՝ ամբողջ Հայ ազգին պատկանող եկեղեցիական կալուածքների վերաբերմամբ...»[4]:

Ինչպիսի՞ն էր Մկրտիչ Ա. կաթողիկոս Խրիմյանի վերաբերմունքը ցարական կառավարության նկատմամբ:«Կաթողիկոս Ամենայն Հայոց Հայրիկը.- գրում է Հայկ Աճեմյանը.-երբ լսեց ազգային-եկեղեցիական կալուածներու գրաւման հրովարտակի գոյժը. պահ մը հոգեպէս խորտակուեցաւ եւ ծանր յուսահատութեան մատնուեցաւ»[5]:

Իրոք. ի՞նչ ազդու միջոցներ կարող էր ձեռնարկել 84-ամյա կաթողիկոսն ընդդեմ հզոր կայսրության: Կովկասի փոխարքա Գոլիցինը և նրա հաղորդած տեղեկություններով առաջնորդվող կայսր Նիկոլայ 2-րդը և ներքին գործոց

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 124-129:
[2] Նույն տեղում, թ. 123:
[3] Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, հ. Գ, Երևան, 1997, էջ 81:
[4] Նույն տեղում:
[5] Հայկ Աճեմեան, Հայոց Հայրիկ, էջ 761:

նախարար Պլեվեն հավատացած էին, որ «...ժողովուրդն ու կաթողիկոսը հազիւ թէ հրապարակ գան»[1]:

Խրիմյան Ա. կաթողիկոսի դիրքորոշումն ու նրան հասցեագրած ուղերձները վկայում են, որ նրա, ինչպես նաև Կ. Պոլսի պատրիարքարանի և պարսկահնդկական առաջնորդարանի գործողություններում չկար ցարական իշխանությունների դեմ ընդվզումի, առավել ևս զենքի դիմելու նպատակ:

Ցարի հրովարտակը արագորեն կենսագործելու նպատակով Կովկասի փոխարքա Գոլիցինի կարգադրությամբ փոխարքայության զինվորական ու ոստիկանական ծառայությունները հայաբնակ բոլոր վայրերում արագորեն անցնում են գործի և կտրուկ կերպով պահանջում առանց դիմադրության հանձնել եկեղեցական կալվածքներն ու ունեցվածքը: Համաձայն իշխանությունների հրահանգի՝ «...եթէ հայերը կը դիմադրէին՝ զօրք բերել, դրամատուները հրամանատացան արգելքի տակ առնել ազգապատկան գումարները, Էջմիածինի Սինոդին կարգադրեցին յանձնել դրամներն ու հաշիւները...»[2]:

Ժամանակը ցույց տվեց, որ ցարական իշխանությունները սխալվում էին, կարծելով, որ «...ժողովուրդն ու կաթողիկոսը հազիւ թէ հրապարակ գան»:

Ցարիզմը հայ ժողովրդի նկատմամբ դրսևորած քաղաքականությամբ հայության շրջանում հող նախապատրաստեց հակապետական տրամադրությունների: 20-րդ դարի սկզբներին ցարական լծի տակ հեծող ազգերի մեջ առաջիններից մեկը կովկասահայությունն էր, որն իր ազգային իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու վճռականությամբ ընդվզեց ընդդեմ հզոր կայսրության:

Հ.Յ.Դաշնակցության նշանավոր գործիչ Սարգիս Օհանջանյանը (Ֆարհադ), որն այդ ժամանակ ՀՅԴ Մրգաստանի (Երևան) կենտրոնական կոմիտեի անդամ էր, անդրադառնալով հունիսի 12-ի օրենքի հետևանքով կովկասահայության գրեթե բոլոր շերտերում հակացարական տրամադրությունների արմատավորման իրողությանը՝ նշում է. «Անդրկովկասի հայութիւնը մի չտեսնուած ըմբոստութեամբ յուզուեց, ալեկոծուեց, ծառացաւ, բողոքեց ռուսական ցարիզմի ոտնձգութիւնների դէմ: Իր ազգային արժանապատուութիւնը եւ բոնութեամբ խլուած իր իրաւունքները կրծքով պաշտպանելու անխախտ որոշումով՝ նա մղուեց մի գերազանց անհաւասար ու վտանգաւոր մենամարտի մէջ...»[3]:

Կովկասահայությունը, ի պաշտպանություն իր ազգային արժանապատվության և հարազատ եկեղեցու իրավունքների, լի էր վճռականությամբ պայքարի դրոշ պարզել անգամ ընդդեմ հզոր կայսրության: Անհրաժեշտ էր կազմակերպել ու առաջնորդել ժողովրդական շարժումը և թույլ չտալ, որպեսզի իշխանությունները բռնագրավեին հայ եկեղեցու ունեցվածքը:

[1] Նույն տեղում, էջ 762:
[2] Նույն տեղում, էջ 763:
[3] «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 74:

Միակ ուժերը, որոնք կոչված էին առաջնորդելու հայության պայքարը, հայ ազգային-քաղաքական կուսակցություններն էին: Այդ ժամանակ Հ.Յ.Դաշնակցությունը, չնորհիվ Կովկասում հաստատած իր կազմակերպական կառույցների, անհամեմատ ավելի ուժեղ էր ու հեղինակավոր, քան մյուս ազգային-քաղաքական կուսակցությունները: Բնական է, որ հայ եկեղեցու իրավունքների պաշտպանության նշանաբանով հզոր կայսրության դեմ ընդվզած ժողովրդին պիտի առաջնորդեր Հ. Յ. Դաշնակցությունը:

«Դաշնակցութիւնը,-վկայում է Ս. Օհանջանյանը,-հայկական ճգնաժամերի ժամանակ միշտ իր կոչման բարձրութեան վրայ եղաւ, հուժկու ձեռքով եւ պատուաւոր կերպով ղեկավարեց ժողովրդական այդ մեծաժաւալ ապստամբութիւնը»[1]:

Իրոք, հայկական բնակավայրերում եկեղեցիների ունեցվածքը բռնագրավող կայսերական ուժերի դեմ համազգային պայքար մղելու կոչով, անհրաժեշտության դեպքում նաև զենքով առաջինը հանդես է գալիս Դաշնակցությունը:

Անժխտելի է, որ ցարիզմի կողմից հայության նկատմամբ կիրառվող քաղաքականությունն ու հատկապես հունիսի 12-ի օրենքի հռչակումը այն վճռորոշ գործոններն էին, որոնց հարկադրանքով Դաշնակցությունը իր գործունեությունում որդեգրեց երկրորդ, այն է՝ ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ճակատը, որը կարելի է բնութագրել որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի Կովկասյան ճակատ:

Խրիմյան Հայրիկի գործունեությանը նվիրված աշխատությունում է. Կոստանդյանը, արժևորելով հայ եկեղեցու իրավունքների և ունեցվածքի պաշտպանության գործում հնչակյանների, սոցիալ-դեմոկրատների ու Հ.Յ.Դաշնակցության գործունեությունը, նշում է. «Առանձնապես պետք է շեշտել ՀՅԴ-ի կատարած մեծ գործը: Այդ կուսակցությունը իր ձեռքը վերցրեց ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու գործը»[2]:

Խրիմյան Հայրիկի կենսագիրներից ՀՅԴ գործունեությունը ըստ արժանվույն է գնահատում նաև Հ. Աճեմյանը. «... Դաշնակցութիւնը թե ու թիկունք հանդիսացաւ Հայոց Հայրիկին, խրախուսանքի խօսքեր ուղղեցին, բողոքելու, դիմադրելու ոգի ներշնչեցին եւ ամէն կերպով վստահացուցին, որ ժողովուրդն ու յեղափոխական կուսակցությունները իւր կողքին կանգնած են»[3]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է, որ բացի վերոհիշյալից, ցարիզմի դեմ նրա մղած պայքարը պայմանավորված էր նաև այլ գործոններով: Առաջնորդվելով իր որդեգրած ծրագրով (ընկերվարություն-սոցիալիզմ), ՀՅԴ օգտագործում է հունիսի 12-ի օրենքի ընձեռած հնարավորությունը՝ Ռուսաստանի մյուս հեղափոխական կուսակցությունների համագործակցությամբ բացահայտ, հեղափոխական պաքարի դուրս գալու ընդդեմ ցարական իշխանությունների:

[1] Նույն տեղում:
[2] Կոստանյան է, Մկրտիչ Խրիմյան, Երևան, 2000, էջ 414:
[3] Հայկ Աճեմյան, էջ 761:

Ներկայացնելով Ռուսական կայսրության դեմ Հ.Յ. Դաշնակցության որդեգրած պայքարի դրդապատճառները՝ «Օխրանա»-ի վերոհիշյալ տեղեկագիրը նշում է. «1903 թուին հայկական եկեղեցական ստացուածքների գրաւումը կառավարական վարչութեան կողմից, օգտագործուեց Դաշնակցութեան կողմից որպէս յարմար պահ, բացայայտ կերպով դուրս գալու ռուս կառավարութեան դէմ եւ իր յեղափոխական գաղափարների քարոզչութիւնը վարելու Կովկասի հայերի մէջ...»:

Համաձայն «Օխրանա»-ի տեղեկագրի, հայ եկեղեցու իրավունքների ու հարստության պաշտպանության նշանաբանով ցարիզմի դեմ ծավալած պայքարն ու քարոզչությունը Դաշնակցությանը լայն հնարավորություն էր ընձեռում՝ առավելագույնս տարածվելու ու ամրապնդվելու ժողովրդի մեջ և իր կազմակերպական կառույցները հիմնելու ոչ միայն Կովկասի հայաբնակ վայրերում, այլև Ռուսաստանի մի շարք քաղաքներում:

Ավելին, ընդունելով կուսակցության համանման գործունեության հետևանքով «հայ զանգուածը խուժեց Դաշնակցութեան մէջ» կատարված փաստի իրողությունը, «Օխրանա»-ի տեղեկագիրը նշում է. «...եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ ստացաւ(նկատի ունի Դաշնակցութեանը-Հ.Գ.) բարենպաստ հող իր ազատագրական գաղափարների պրոպագանդի համար նաեւ ռուս կառավարութեան դէմ: Ինքնօրէն Հայաստան ստեղծելու գաղափարը, նրա կազմի մէջ մտցնելով ընդհանրապէս բոլոր հայերին, միանգամից նշանակալից տարածում ունեցաւ Կովկասում: Ըստ վարչութեան ունեցած տեղեկութիւնների, հայ բնակչութեամբ որեւէ տեղ չկար որ չունենար «դաշնակցական» կոմիտէ»[1]:

Ժողովրդական շարժումը կազմակերպելու և առաջնորդելու համար Հ.Յ.Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվում է «Դաշնակցական անկախ կոմիտե» անունը կրող մարմին: Բացի «Դաշնակցական անկախ կոմիտե»-ից, ստեղծվում է նաև ևս մի մարմին, որ կոչվում էր «Հայկական ինքնապաշտպանության Կեդրոնական կոմիտե», որը Կովկասի հայաբնակ քաղաքներում ու գավառական կենտրոններում հիմնում է իր մասնաճյուղերը: Քանի որ ցարիզմի քաղաքականության դեմ մղվող պայքարը համազգային խնդիր էր, ուստի այդ կոմիտեին կարող էին անդամագրվել բոլոր ցանկացողները, անկախ կուսակցական պատկանելությունից: Թեև այդ կոմիտեները կազմավորվում էին ոչ կուսակցական հիմունքներով, այնուամենայնիվ, դրանց կազմում գերակշռել են ՀՅԴ անդամները:

ՀՅԴ նախաձեռնությամբ հիմնված Կոմիտեները կազմակերպում են զինական, թռուցիկ և ահաբեկիչ խմբեր, տարածում են թռուցիկներ և ամենուրեք ժողովրդին կոչում հեղափոխական պայքարի ու անգամ բացահայտ կռվի: «Դաշնակցության անկախ կոմիտե»-ի թռուցիկներից մեկը որպես պայքարի կոչ նշում է. «Չը հասա՞ր արդեօք անվեհեր բողոքի ձայնը...

[1] «Նիւթեր...», հ. Բ., էջ 328:

Թող Ամենայն Հայոց հայրապետը հրաժարական տայ եւ խզէ ամէն յարաբերութիւն հայ եկեղեցու եւ ռուս կառավարութեան միջեւ:

Թող հայոց բոլոր եկեղեցիները փակեն իրենց դռները, իբրեւ սուգի նշան...

Թող ժողովուրդը կազմակերպուած ցոյցերով ու հանրագրերով հասցնէ բողոքի ձայնը կենտրոնական կառավարութեան...Յոյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգայ ստրուկներ չենք, որ մենք եւս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարում են մեր անկապտելի իրաւունքները»[1]:

Դաշնակցության կողմից «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե» հիմնելու, զինված պայքարի մարտավարություն որդեգրելու գործում նշանակալի է եղել հատկապես Ռոստոմի ծառայությունը:

«1902-ին .-գրում է Ս. Վրացյանը,-Ռոստոմը վերադարձաւ Կովկաս, եւ երբ 1903ին, ցարական կառաւարութիւնը ձեռք դրեց հայ ազգային-եկեղեցական կալուածքներու վրայ, եւ ՀՅԴ ոտքի հանեց հայութիւնը ի պաշտպանութիւն ազգային իրաւունքների, Ռոստոմը դարձաւ այդ շարժման ոգին»[2]:

Ինչքան էլ ժողովուրդը տրամադրված լիներ պայքարելու, իսկ ՀՅԴ և մյուս ազգային-քաղաքական կազմակերպությունները պատրաստակամ՝ կազմակերպելու ու առաջնորդելու ցարական իշխանությունների դեմ ժողովրդի ծավալած պայքարը, այնուամենայնիվ, իր ծանրակշիռ ու վճռական խոսքը պիտի ասեր Խրիմյան Հայրիկը:

«Հայկական ինքնապաշտպանական կոմիտեի» կողմից Խրիմյան Հայրիկի հետ հանդիպելու նպատակով էջմիածին է մեկնում Ռոստոմը: Նա «Հայկական ինքնապաշտպանական կոմիտեի» անունից պիտի համոզեր կաթողիկոսին, որ «... հրատարակէ իր հանդիսաւոր մերժման կոնդակը՝ ի պատասխան ցարի ուկազին: Մեր ընկերը կը խոստանար Դաշնակցութեան կողմէ ամէն աջակցութիւն...»[3]:

Հ.Յ.Դաշնակցության կողմից կաթողիկոսին Ռոստոմի այցելության իրողությունը նշում է նաև Ս. Վրացյանը: Հանդիպման ժամանակ Ռոստոմը Խրիմյան Հայրիկին հայտնում է ցարի հրամանը մերժելու կուսակցության կամքը: Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Խրիմեան Հայրիկի համար, անշուշտ, մեծ նշանակութիւն ունեցաւ Դաշնակցութեան աջակցութիւնը ազգային իրաւունքների պաշտպանութեան գործում»[4]:

Խրիմյան Հայրիկը և հոգևորականները, որոնք, համաձայն Մ. Վարանդյանի պնդման, «...չէին համարձակուեր իրենց խորունկ վրդովմունքը արտայայտել բարձրաձայն-այնքան զարհուրելի կը թուէր անոնց՝ ցարիզմի վրիժառու բռունցքը...», համաձայնվում է հրապարակել հունիսի 12-ի օրենքի մերժման կոնդակը[5]:

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 275:
[2] Ռոստոմ (Մահուան վաթսունամեակին առթիւ), 1979, էջ 14:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 276:
[4] Ռոստոմ (Մահուան վաթսունամեակին առթիւ), 1979, էջ 14:
[5] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 276:

Կաթողիկոսի կոնդակի հրատարակմանը անմիջապես հետևում է «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ի հետևյալ «Ազդ»-ը.

«Այս խորհրդաւոր րոպէին, երբ վեհափառ Հայրիկը կտրուկ կերպով մերժել է մեր եկեղեցական ազգային սեփականութիւն նպաստող կալուածները ռուս կառավարութեան յանձնելը, երբ Սրբ. Սինոդի բոլոր անդամները, թեմական բոլոր առաջնորդները իբրև իրենց բողոքի արտայայտութիւն հրաժարուել են պաշտօններից, երբ ժողովուրդը ոտքի է կանգնել և բողոքում է այդ կարգադրութեան դէմ, իւրաքանչիւր հայ պարտաւոր է միանալ այդ բողոքի հոսանքին... Ահա հէնց այդ պատճառով բոլոր կոնսիստորիաներին, քահանաներին, երեսփոխաններին, կալուածների կառավարիչներին սրանով նախազգուշացնում ենք, որ իրանք ոչ մի դէպքում չյանձնեն իրանց հսկողութեան տակ գտնուող կալուածները, ոչ մի թուղթ չստորագրեն, ոչ մի կալված կամ գումար ցոյց չտան... Հակառակ դէպքում այդպիսիքները իբրեւ ազգային դավաճաններ կը ստանան իրենց արժանի վարձատրութիւնները...» [1]:

Կարելի է ասել, որ «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ի «Ազդ»-ը համարձակ պատասխան ու մարտահրաւեր էր ցարական քաղաքականութեանը: «Ազդ»-ը ունեցաւ վճռական նշանակութիւն: Մի շարք բնակավայրերում տեղի են ունենում ժողովրդական բողոքի ցոյցեր:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ ժողովրդական մեծածավալ ապստամբությունն առաջնորդելու գործում բացառիկ դեր էր վերապահված ՀՅԴ Մրգաստանի (Երևան) կենտր. կոմիտեին:

Նախ, ըստ նրա փաստարկման, Երևանի նահանգում էին գտնվում հայության հոգևոր կենտրոնը՝ Էջմիածինը, Լուսավորչական սինոդն ու ամբողջ միաբանությունը: Բնական է, որ ցարական կառավարությունը նախևառաջ հենց այնտեղ պիտի հասցներ ճակատագրական հարվածը:

2. Անհրաժեշտ էր պայքարելու, ցարի հրովարտակին չենթարկվելու տրամադրվածություն ու վճռականություն հաղորդել հոգևոր առաջնորդներին:

«Այդ նպատակով,-գրում է Ս. Օհանջանյան,-Երեւանի Կ. Կոմիտէն մի հսկայական ցոյց կազմակերպեց ու օգոստոսի 3-ին, կաթողիկոսական թեմակալ-առաջնորդ Պարգեւն եպիսկոպոսի հետ ճանապարհեց Էջմիածին...»:

Ս. Օհանջանյանի պնդմամբ, դա ժողովրդական ընդոստության և բողոքի առաջին հզոր ցույցն էր, որով ժողովուրդը Հայոց Հայրապետից պահանջում էր չհնազանդվել ցարի հոչակած հրովարտակին ու որևէ պարագայում ցարական կառավարությանը չհանձնել եկեղեցու կալվածքները: Նրանց համար ավելի գերադասելի էր զիջել բռնությանը, քան կամովին կառավարությանը հանձնել եկեղեցու ունեցվածքը:

Թեպետ Ս. Օհանջանյանը պնդում է, որ Երևանի կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ օգոստոսի 3-ին կազմակերպած ցույցը առաջինն էր, սակայն «Դրօշակ»-ի հավաստմամբ իշխանությունների վարած քաղաքականության դեմ ուղղված բողոքի ցույցերից առաջինը տեղի է ունեցել Ալեքսանդրապոլում:

Հուլիսի 28-ին Խրիմյան Հայրիկը Սևան կատարած ճամփորդությունից վերադառնալիս՝ կանգ է առնում Ալեքսանդրապոլի Առաջնորդարանում: Քաղաքի բնակիչները, տեղեկանալով Առաջնորդարանում կաթողիկոսի գտնվելու մասին, հաջորդ օրը առավոտյան ժամը 10-ին մոտ 5.000 հոգի հավաքվում են Առաջնորդարանի դռանը, որպեսզի կաթողիկոսին հայտնեն իրենց բողոքը:

Կաթողիկոսը, համաձայն «Դրօշակ»-ի, ունկնդրելով հավաքվածներին, խոստանում է «...ոչ մի թուղթ չստորագրել: Ոչինչ չյանձնել եւ բողոքել կառավարական կարգադրութեան դէմ: Ապա քիչ յետոյ՝ շրջապատուած իր շքախմբով՝ դուրս եկաւ առաջնորդարանից եւ դիմեց դէպի կայարան: Այդ րոպէին անտվոր իրարանցում ընկավ ժողովրդի մէջ, բոլորը միաբերան գոչեցին. «Վեհափառ մի՛ յանձնիր, մերժի՛ր, մենք քեզ հետ ենք...» [1]:

Օգոստոսի 3-ին Երևանում տեղի է ունենում բողոքի ցույց, որի մասին նշում է Ս. Օհանջանյանը: Այդ օրը քաղաքի Ս. Լուսավորիչ եկեղեցում հոգեհանգիստ էր տեղի ունենում՝ ի հիշատակ Զմյուռնիայի առաջնորդ Մելիքսեթբեկ Մուրադյանի: Հոգեհանգստի արարողությանը ներկա է եղել Երևանի հոգևոր թեմի առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոս Պարգյանը: Պատարագից հետո, երբ Սուքիաս արքեպիսկոպոսը փորձում է հեռանալ, ժողովուրդը կանգնեցնում է նրան և պահանջում՝ անմիջապես գնալ Էջմիածին ու կաթողիկոսին հայտնել եկեղեցու ունեցվածքը կառավարությանը չհանձնելու ժողովրդի պահանջը: Սուքիաս արքեպիսկոպոսը փորձում է հրաժարվել, բայց հարկադրված նստում է կառքը և ավելի քան 5000 ցուցարարների ուղեկցությամբ, չնայած ոստիկանական պրիստավի խնդրանքին, շարժվում է դեպի Էջմիածին:

Նահանգի ոստիկանապետը մեկ պահակախմբով և երկու վաշտ զինվորներով շտապում է դեպի Էջմիածին: Էջմիածնի մերձակայքում ցուցարարների մուտքը քաղաք փորձում են խոչընդոտել զինվորներն ու ոստիկանները, որոնց միանում է Վաղարշապատից եկած զորքը: Չնայած զինվորների ու ոստիկանության հարուցած արգելքներին, այնուամենայնիվ, բազմությունը մտնում է Վաղարշապատ, ապա ճեմարանի մուտքով լցվում վանքի բակը: Երևանի հոգևոր թեմի առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսի գլխավորությամբ տասը հոգուց բաղկացած պատգամավորությունը մտնում է Վեհարան: Նրանց պահանջը կաթողիկոսին ի սկզբանե հայտնի էր՝ չկատարել ցարի հրամանը:

«Ծերունի կաթողիկոսի դիմաւորումը ազդու էր, մտքերը խաղաղացնող,-նշում է «Դրօշակ»-ը,-Ժամը 7-ին ցուցարարները վերադառնում էին նոյն յաղթական կոչերով» [2]:

Այդ նույն օրերին եկեղեցու իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպված բողոքի ցույցերը առավել ուժգնությամբ շարունակվել են հա-

[1] Նույն տեղում, էջ 277:

[1] «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 293:
[2] Նույն տեղում, էջ 294:

յաքնակ բազմաթիվ վայրերում: Բողոքի ցույցերի կազմակերպման գործում ղեկավար մասնակցություն է ունեցել «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ն, հատկապես Ռոստոմը:

«Ռոստոմը,-գրում է Ս.Վրացյանը,-անընդհատ շրջում էր գաւառից գաւառ՝ տեղական ուժերի հետ կազմակերպելով և ղեկավարելով համազգային դիմադրութիւնը՝ ընդդէմ ռուս բռնապետութեան ոտնձգութիւնների: Նա ամէն տեղ էր, ոգեւորում ու պայքարի էր մղում ժողովրդական զանգուածները»[1]:

Ներկայացնելով այդ օրերին Անդրկովկասի բազմաթիվ հայաբնակ վայրերում տեղի ունեցող իրադարձությունների մանրամասները՝ «Դրօշակ»-ը նշում է. «Շարունակ նորանոր պատգամաւորներ եւ խնդրագրեր են թափւում էջմիածին, միեւնոյն պահանջով-չյանձնել կամովին...

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերը-գիւղերն ու քաղաքները-սաստիկ գրգռած են եւ կատաղի կերպով բողոքում են կատարուած աւազակութեան դէմ»[2]:

Մի շարք բնակավայրերում, օրինակ, Սուրմալու գավառում, Աշտարակում, Օշականում և այլուր, բախումներ են տեղի ունեցել փայտերով, քարերով զինված ժողովրդի և զինվորների ու ոստիկանական ուժերի միջև:

Շնորհիվ ժողովրդական զանգվածային բողոքի ցույցերի, ինչպես նաև «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի» գործունեության, կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, կարելի է ասել, մարտականորեն է տրամադրվում և իր դժգոհությունն է հայտնում կառավարությանը:

Ըստ «Դրոշակ»-ի՝ «Հայրիկը երկու կոնդակ է ուղղել Սինոդին, որով արգելում է կալուածները յանձնել: Մի կոնդակ էլ ուղղել է բոլոր կօնսիստորիաներին, գործակալներին եւ երեսփոխաններին, որով արգելում է առանց իր գիտութեան յանձնել որեւէ կալուածք կամ եկեղեցական գոյք, դրամ եւ այլն[3]»:

Կովկասահայության ծավալած պայքարը, և իհարկե, կաթողիկոսի վճռական կեցվածքն ու մերժողական դիրքորոշումը իշխանությունների համար անսպասելի էին ու անցանկալի: Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Պլեհվեն 1903թ օգոստոսի 5-ին կաթողիկոսին է ուղարկում հետևյալ գրությունը. «Տեղեկանալով, որ եկեղեցական կալուածների վերաբերմամբ յունիսի 12-ի բարձրագոյն հրամանի գործադրութիւնը հանդիպում է յապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբութեան՝ հոգալ անյապաղ կարգադրութիւն անել այս մասին: Ամէն մի յետաձգում, իբրեւ անհնազանդութիւն թագաւորական կամքին, առաջ կը բերի ծանր հետեւանքներ»[4]:

Հայության ծավալած պայքարն ու «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի գործունեությունը կտրուկ փոխում են իրավիճակը: Բնական է, որ Խրիմյան Հայրիկն այլևս չէր կարող կատարել իշխանությունների ներկայացրած պահանջը: Նա մերժում է կատարել մինիստրի պահանջը և նրան ուղղված 1903թ. օգոստոսի 6-ի գրության մեջ, արտահայտելով ժողովրդի կամքը, գրում է. «... խնդրում եմ Ձերդ բարձր գերազանցութեան, ժամանակաւորապէս յետաձգել կառավարութեան վերոյիշեալ կարգադրութեան գործադրութիւնը և կարելիութիւն տալ ինձ ամենահպատակութեամբ զեկուցանել Նորին Մեծութեան իմ բացատրութիւնները եւ այն հանգամանքները, որոնք ինձ թուում են անհրաժեշտ՝ խնդրի կանոնաւոր լուծման համար...»[1]:

Պատասխան չստանալով մինիստրից՝ Խրիմյան Հայրիկը դիմում է Նիկոլայ 2-րդին եւ խնդրում նրանից «...թոյլատրել ինձ անձամբ Ձեր Մեծության ոտաց արկանել ամբողջ հայ հոգեւոր հոտի աղերսը եւ ներկայացնել իմ կարեւոր բացատրութիւններն ու նկատառումները՝ մինիստրական կոմիտէի որոշումը կանգնեցնելու մասին, որոնց թելադրում է իմ պարտականութեան զգացումը Ձերդ մեծութեան եւ ինձ յանձնուած հոտի առջեւ[2]:

Այս անգամ կաթողիկոսի դիմումին պատասխանում է ներքին գործերի մինիստր Պլեվեն և 1903թ. օգոստոսի 14-ի գրությամբ կաթողիկոսին տեղեկացնում, որ «Թագաւոր-կայսրը բարեհաճեց բարձրագոյն հրամայել՝ մերժել Ձեր խնդիրքը՝ մինիստրական կոմիտէի բարձրագոյն հաստատուած յունիսի 12-ի որոշման գործադրութիւնը յետաձգելու մասին»[3]:

Ի տարբերություն օգոստոսի 14-ի գրության, որը սպառնալիք չէր պարունակում, ընդամենը մեկ օր առաջ՝ օգոստոսի 13-ի գրությամբ ներքին գործոց մինիստր Պլեվեն կայսեր անունից կաթողիկոսին հաղորդում է. «Նորին Մեծութիւնը բարեհաճեց իր կայսերական ուշադրութիւնը դարձնել այն բանի վրա, որ ներկայ դէպքը վերջին ժամանակներում առաջին շեղումը չէ հայ եկեղեցու գերագոյն ներկայացուցիչների կողմից առաջուայ ամենահնազանդ ընթացքից եւ այդ պատճառով հրամայեց ինձ՝ եթէ հայ հոգեւորականութիւնը շարունակի իր անհնազանդութիւնը պետական իշխանութեան նկատմամբ, ձեռնարկեմ այն հարցի քննության՝ թե որքան է շարունակում ռուս միապետների հայ եկեղեցուն պարգեւած վարչական կազմը Ռուսաստանում՝ համապատասխանել պետական շահերին»[4]:

Սակայն կաթողիկոսն արդեն անդրդվելի էր: Ժողովրդի միասնական պայքարը և հայաբնակ բազմաթիվ բնակավայրերում ՀՅԴ առաջնորդությամբ գործող «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի կազմակերպած բողոքի ցույցերն ու ոստիկանական ուժերի հետ տեղի ունեցած բախումները իրենց կնիքն էին դրել ծերունազարդ կաթողիկոսի դիրքորոշման վրա:

---

[1] Ռոստոմ (Մահուան վաթսունամեակին առթիւ), 1979, էջ 14:
[2] Նույն տեղում:
[3] «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 294:
[4] Նույն տեղում, էջ 295:

---

[1] Նույն տեղում, էջ 300:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 302:

Խրիմյան Հայրիկի վճռականությունը ոչ միայն ավելի է ամրապնդում ժողովրդի մարտական ոգին ու տրամադրվածությունը, այլև ոգեշնչում է նաև հոգևորականներին, որոնցից շատերը սկսում են մասնակցել «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի կազմակերպած բողոքի ցույցերին և այլ միջոցառումներին:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին հասցեագրած նոյեմբերի 5-ի նամակում Կ. Պոլսի պատրիարք արքեպիսկոպոս Օրմանյանը իր երախտագիտությունն ու խրախուսանքն է հայտնում կաթողիկոսին՝ ռուսական կառավարության որոշման դեմ դրսևորած դիրքորոշման կապակցությամբ [1]:

Միաժամանակ, կաթողիկոսի միջոցով պատրիարք Օրմանյանը եպիսկոպոսների անունից դիմում է հղում Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդին [2]:

Ճիշտ չէ կարծել, որ ՀՅԴ և նրա նախաձեռնությամբ ստեղծված Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեն ի սկզբանե որդեգրել էին զինված պայքարի մարտավարություն: ՀՅԴ և Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի թելադրանքով բողոքի ցույցերը բացառապես պիտի ընթանային խաղաղ պայմաններում, առանց բախումների ու զենքի գործածության: Սակայն հայկական բնակավայրերում եկեղեցիների ունեցվածքի բռնագրավման ժամանակ տեղի ունեցած անցանկալի դեպքերը, ոստիկանության և զորքի միջամտությունն ու բռնությունները երբեմն պատճառ էին դառնում զինված բախումների ու զոհերի:

Օրինակ, ժողովրդական բողոքները բախումների են վերածվում ու արյունալի ավարտ են ունենում Գանձակում, Թիֆլիսում Բաքվում, Շուշիում, Նոր-Նախիջևանում: Համաձայն «Կուսակցական կեանք» խորագիրը կրող վավերագրի, 1903թ. օգոստոսի 29-ին Գանձակի ՀՅԴ «Մարշիմոն» խմբի առաջնորդությամբ ավելի քան 10.000 հայեր հավաքվում են քաղաքի եկեղեցու մոտ, որպեսզի թեմի հոգևոր առաջնորդ Բենիկ վարդապետին հայտնեն եկեղեցական կալվածքները կառավարությանը չհանձնելու ժողովրդի պահանջը:

Ժողովրդի շարժումը դեպի առաջնորդարան արգելելու և հավաքված բազմությանը ցրելու նպատակով պահնորդական խմբով դեպքի վայրն է գալիս ոստիկանապետը: Զինված ընդհարում տեղիք չտալու ու Ժողովրդին հանգստացնելու նպատակով Բենիկ վարդապետը հայտնում է, որ ինքը համապատասխան հրահանգ ստացել է կաթողիկոսից և ոչինչ հոժարակամ չի հանձնի [3]:

Այդ նույն պահին եկեղեցու մերձակայքում հայտնվում է ոստիկանական վաշտը: Ի պատիվ ոստիկանապետի, պիտի ասել, որ նա նկատի ունենալով ստեղծված, պայթյունավտանգ իրավիճակը, հնարավոր բախում թույլ չտալու նպատակով հեռացնում է վաշտը, բայց մի փոքր անց դեպքի վայրն է գալիս

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 189:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 342:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 394, գ. 2, էջ 1:

փոխնահանգապետ Անդրեևը և խիստ տոնով ու սպառնալիքներ տեղալով հրամայում է բազմությանը՝ ցրվել: Հավաքվածները ոչ միայն հրաժարվում են կատարել փոխնահանգապետի հրամանը, այլև հայտնում նրան, որ չեն հանձնի եկեղեցու գույքը: Փոխնահանգապետի հրամանով զինվորներն ու ոստիկանները կրակ են բացում ժողովրդի վրա [1]:

Ըստ վերոհիշյալ վավերագրի, «Խաղաղ ցուցարարների վրայ Գանձակի փոխնահանգապետ Անդրեևի հրամանով զօրքն ու ոստիկանութիւնը համազարկեր տալով, տուին 16 սպանուած եւ 70-չափ վիրաւոր: Յետոյ տեղի ունեցած բազմաթիւ ձերբակալուածների մէջ էին մեր յայտնի ընկերներց Արշակ Ջամալեանը, Յարութիւն Պետրոսեանը, Արշակ Միսկարեանը, Ավետիս Թաւաքալեանը եւ մի շարք ուրիշ ընկերներ» [2]:

Զորքի և ցուցարարների ընդհարման ժամանակ ՀՅԴ տեղի մարտական խմբի անդամների զինված դիմադրության հետևանքով սպանվում և վիրավորվում են մի քանի զինվորներ [3]:

Գանձակի հայության նկատմամբ գործած ոճրագործության համար փոխնահանգապետ Անդրեը պիտի պատասխան տար: ՀՅԴ Գանձակի կոմիտեի որոշմամբ փոխնահանգապետ Անդրեը դատապարտվում է մահվան:

«Ահաբեկութիւններ» խորագիրը կրող վավերագրի հավաստմամբ «Փոխ-նահանգապետ Անդրեեւի ահաբեկումը կատարուեց Գանձակից 25 կիլոմետր հեռավորութեան վրայ գտնուող Հաջիքենտ անտառախիտ ամառանոցում, օրը ցերեկով, Բարսումցի Գրիգորի ձեռքով...» [4]:

Փոխնահանգապետի ահաբեկիչ Բարսումցի Գրիգորը ձերբակալվում ու դատապարտվում է գնդակահարության, բայց դատարանը վերանայում է դատավճիռը և այն փոխարինում 20 տարվա տաժանակիր աշխատանքի [5]:

Նույն վավերագրի հավաստմամբ Գանձակի նահանգում ՀՅԴ կոմիտեի որոշմամբ ահաբեկվել են ևս մի քանի հայեր, որոնք եկեղեցիների ունեցվածքը բռնագրավելու ժամանակ օգնել էին իշխանության ներկայացուցիչներին:

Օգոստոսի 29-ին Գանձակում տեղի ունեցած արյունալի դեպքերի լուրը արագորեն տարածվում է: Հաջորդ օրը նեթ այդ մասին գրում է Թիֆլիսի պաշտոնական թերթը:

Գանձակում ռուս զինվորների կատարած բարբարոսության և արյունալի դեպքի լուրը մեծ հուզում ու լարվածություն էր առաջացրել թիֆլիսահայության մեջ: Ի հիշատակ Գանձակ քաղաքում նահատակված հայերի, կիրակի օրը՝ օգոստոսի 31-ին, Թիֆլիսի Մայր-եկեղեցում պիտի կատարվեր հոգեհանգիստ: Պատարագը դեռ չսկսված՝ եկեղեցին արդեն լցվել էր հոծ բազմությամբ: Եկեղեցու բակում և նրանից փոքր-ինչ հեռու գտնվող Ներսիսյան

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 2:
[5] Տե՛ս նույն տեղում:

դպրոցի մերձակայքում հավաքվել էին ոստիկաններ և ավելի քան 100 հեծյալ զինվորներ[1]:

Հոգեհանգստի ավարտին քահանան՝ Տեր-Արարատյանը «...նգովք արտասանեց կառավարությանն հասցէին. անմիջապէս օդը նետեցին պրոկլամացիաներ և լուսցան մի շարք «կեցցէներ»: Ոստիկանները միջամտում են և պահանջում լեկ. նրանք ուզում են մի երկուսին քարշ տալով դուրս տանել. բայց ժողովուրդը գրոհ է տալիս. և սկսում է ծեծը»[2]:

Ոստիկաններն ու հեծյալները. որոնց միանում են կոզակները. հարձակվում են բազմության վրա և սկսում անխնա ծեծել հանդիպողներին: Հավաքվածները անընդհատ քարեր են շպրտում և նույնիսկ ատրճանակներից կրակոցներ արձակում ոստիկանների ու զինվորների վրա: Ընդհարման հետևանքով շատերը վիրավորվում են: Հերթակալվում են Տեր-Արարատյան քահանան և երեք հայեր:

Այս դեպքից հետո Թիֆլիսի փողոցներում մշտապես պարեկություն են անում կոզակ հեծելախմբերն ու բազմաթիվ ոստիկաններ[3]:

Թիֆլիսը Կովկասի կառավարչապետության կենտրոնն էր. այնտեղ մշտապես եղել են զինվորական և ոստիկանական ուժեր: Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտեի համար չափազանց դժվար է եղել քաղաքում մշտապես հերթապահող զորքի և ոստիկանության ներկայությամբ կազմակերպել մարտական խմբեր ու զինված դիմադրություն ցույց տալ եկեղեցու հարստությունը բռնագրավող զինվորական և ոստիկանական ուժերին:

Այնուամենայնիվ. օգոստոսի 31-ին Թիֆլիսում տեղի ունեցած դեպքի կապակցությամբ. հայությանը ոգեշնչելու ու պայքարելու կոչելու նպատակով. Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտեն հրատարակում է թռուցիկ. որտեղ արտահայտելով իր բողոքն ու դժգոհությունը՝ նշում է. «...Թիֆլիսի դէպքը ոչ առաջինն էր եւ ոչ էլ վերջինն է լինելու: Գազան Գոլիցինը նորանոր դաւեր է սարքելու...Խոնարհութիւնն այլեւս արժէք չունի. որքան խոնարհւենք. այնքան մեծ է լինելու զոհերի թիւը: Հարկաւոր է դիմադրութիւն. ուժեղ դիմադրութիւն:

Սթափեցէք. հայեր. բաւական է ստրկի նման միշտ երկիւղով շարժել: Թափած արիւնը. ընկած զոհերը թո՛ղ վառեն ձեր արիութիւնը եւ մինչեւ վերջ պաշտպան կանգնեցնեն ձեր ազգային պատի ու սեփականութեան»[4]:

Հայաբնակ մի շարք վայրերում ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների տեղի ունեցած ժողովրդական ընդվզումների և բողոքի ցույցերի մանրամասների ուսումնասիրությունը մատնանշում է. որ այդ ընթացքում թեպետ եղել են նաև սահմանափակ ընդգրկումով թեթև զինված բախումներ. այնուամենայնիվ. հակաժողովրդական շարժումը առաջնորդող Հ. Յ. Դաշնակցության և Հայկական

[1] Տե՛ս «Դրօշակ», 1903. թիւ 7, էջ 296:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ էջ 326:

ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի գործունեության մեջ զինված դիմադրությունը չի եղել պայքարի հիմնական միջոցը. թեև ինչպես արդեն նշվել է. 1904թ. կայացած 3-րդ Ընդհանուր ժողովի ընդունում է «... տեղորի (ահաբեկչութիւն). ժողովրդական ցոյցերի եւ զինուած դիմադրութեան տակտիկը. մնալով ինքնապաշտպանութեան հողի վրայ»[1]:

Պատմական այդ ժամանակահատվածում Դաշնակցությունը կշռադատված և արդյունավետ մարտավարություն կենսագործելիս պիտի հաշվի առներ հետևյալ հանգամանքները.

1. Նախ. ՀՅԴ-ն Ընդհանուր ժողովի կամ Բյուրոյի մակարդակով դեռևս չէր որոշեցրել ցարական իշխանության դեմ հեղափոխական պայքար մղելու գործունեությունը:

2. Դաշնակցության նախաձեռնությամբ կազմավորվող մարտական ուժերը. զենքն ու զինամթերքը. համաձայն 2-րդ Ընդհանուր ժողովի որոշման. պիտի ուղարկվեին «Կեդրոնացման վայր»-ը՝ Սասուն. ուր կենտրոնանալու էին կուսակցության գլխավոր ուժերը: Պիտի ասել. որ ցանկության դեպքում անգամ Դաշնակցության ուժերն ու հնարավորությունները չէին կարող բավարարել՝ միաժամանակ կազմակերպելու և Երկիր ուղարկելու մարտական ուժեր. զենք ու զինամթերք և լուրջ զինված պայքար մղելու ընդդեմ հզոր կայսրության:

Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավող ցարական ոստիկանական ուժերի դեմ զինված դիմադրությունը գաղտնի կերպով ղեկավարել են ՀՅԴ հայտնի գործիչները: Օրինակ. Հովակ Ստեփանյանի հավաստմամբ «1903 թուին էլ. երբ Բաքու քաղաքում. հայոց եկեղեցում. հարիւրաչափ խիզախ մարտիկներ հերոսաբար կռւում էին ռուսական ոստիկանութեան և զինուորական ուժերի դէմ. Դումանն էր. որ հրահանգներ էր տալիս. բայց ո՞չ ի ցոյց մարդկանց...»[2]:

Մի քանի բնակավայրերում ոստիկանական ուժերի և զինվորների դեմ Դաշնակցության մարտական ուժերի ցույց տված դիմադրությունից կարելի է առանձնացնել 1903թ. սեպտեմբերի 2-ին Բաքվում տեղի ունեցած դեպքը:

Այդ օրը. առավոտյան ժամը 10-ին. քաղաքում լուր է տարածվում. որ տեղի է ունենալու եկեղեցու ունեցվածքի գրավում: Այդ լուրը հայ բնակչության համար անսպասելի էր. «Ոչ ոք չէր կարծում. թէ այդքան շուտ պիտի կատարուէր-...էջմիածինից նամակ կար. թէ ամսի երկուսին այնտեղ էր լինելու գրաւումը եւ ապա. հետզհետէ ուրիշ տեղերում»[3]:

Լուրը տարածվում է մեծ արագությամբ: Ժողովուրդը. որի մեջ եղել են նաև զինված մարդիկ. Բալախանից մտնում է քաղաք. լցվում եկեղեցու գավիթն ու շրջակա փողոցները: Հայտնվում են նաև կոզակներն ու ոստիկանները. որոնք ժողովրդին հրահանգում են ցրվել. բայց հավաքվածները հրաժարվում են կատարել նրանց պահանջը: Բազմությանը ցրելու նպատակով կո-

[1] Տե՛ս «Նիւթեր...», հ. Գ, էջ 145-146:
[2] Ստեփանեան Յ., Նիկոլ Դուման, Պէյրութ, էջ 72:
[3] Նույն տեղում, էջ 307:

զակներն ու ոստիկանները երկու անգամ հարձակում են գործում բազմության վրա: Այդ օրը ընդդեմ կոզակների ու ոստիկանների ձեռնարկած հարձակումների ժողովրդին պաշտպանում է ՀՅԴ մարտական խումբը: Հավաքված ցուցարարների անջակցությամբ մարտախումբը կարողանում է հետ մղել կոզակների ու ոստիկանների գրոհը: Մի փոքր անց գալիս է զորքը, և միացյալ ուժերը պաշարում են եկեղեցին [1]:

Երկու կողմից տեղի է ունենում հրացանաձգություն, որը տևում է մի քանի ժամ: Ըստ Յապոնի (Հովհաննես Պարոնյան)՝ «Չնայած կոզակների քանիցս կրկնած յարձակումին, հայերը դիմադրել էին եւ թոյլ չէին տուել, որ պաշտօնեաները մտնեն հայ եկեղեցի: Հայ տղամարդիկ, ատրճանակը թաշած, ամբողջ հասակով կանգնել էին կոզակների համազարկի առաջ... » [2]:

Յապոնը նշում է, որ նմանօրինակ դեպք տեղի է ունեցել ոչ միայն Բաքվում, այլև ուրիշ վայրերում, ուր «...երիտասարդ հայերը կամաւոր էին գրուել դիմադրելու համար...եւ ամէն տեղ էլ հայերը ցոյց են տուած ընդդիմութիւն» [3]:

Համաձայն «Դրօշակ»-ի՝ մինչև կես գիշեր զորքին ու ոստիկանությանը չի հաջողվում ներխուժել եկեղեցի: Կեսգիշերից հետո, երբ ժողովուրդն արդեն դատարկել էր փողոցները, «...տուիները սկսում են մօտենալ եկեղեցուն, ավելի նեղացնել շրջանը: Պաշարուածների փամփուշտները սպառում են, նրանց մի մասը՝ պատուհաններից մի կերպ դուրս գալով, ազատվում է: Մնացածներին - մօտ 100 հոգի-թոկերով կապոտում են իրար ձեռքից եւ զինուորների մի ստվար խմբի հսկողութեան տակ ուղարկում են բանտ...» [4]:

«Դրօշակ»-ը չի նշում զորքի եւ ոստիկանության դեմ կռվողների քանակն ու նրանց առաջնորդների անունները:

Մ. Վարանդյանի հավաստմամբ՝ ավելի քան զինված 300 երիտասարդների առաջնորդները եղել են Դաշնակցական Խեչո և Ջալլադը (Երվանդ Բաբերյան): Ի տարբերություն «Դրոշակ»-ի, Մ. Վարանդյանը այլ կերպ է ներկայացնում եկեղեցուց հայերի դուրս գալու իրողությունը: Եկեղեցում գտնվող զինված հայերի հետ բանակցելու ու նրանց այնտեղից առանց կռվի դուրս բերելու նպատակով նահանգապետ Օդինցևը ժողով է գումարում և որոշում դիմել ազդեցիկ հայերի միջնորդությանը: Ընտրում են նույն եկեղեցու երեց Համբարձում Մելիքյանին: Նա մի քանի կարևոր պաշտոնյաների ընկերակցությամբ մոտենում է եկեղեցուն և բանակցելով այնտեղ գտնվողների հետ՝ հորդորում է նրանց անձնատուր լինել, միաժամանակ իշխանությունների անունից հավատացնում, որ անձնատուր լինելու դեպքում բոլորն էլ ազատ կարձակվեն: Միջնորդությունը պսակվում է հաջողությամբ:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամս., 1941, թիւ 4, էջ154:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

«Մերիններն ալ արդէն ուրիշ ելք չէին նշմարեր.-գրում է Մ. Վարանդյանը.- Երկար դիմադրելու այժ չկար...Բագուի իշխանութիւնները ազատ չարձակեցին մեր ցուցարար ռազմիկները, որոնց կր սպասէր երկարատեւ բանտարկութիւն: Բայց իրենց կեանքը խնայեցան» [1]:

Սեպտեմբերի 2-ին Բաքվում տեղի ունեցած զինված ընդհարման ժամանակ սպանված զինվորների ու ոստիկանների թիվը հայտնի չէ, իսկ հայերից զոհվում են 11 հոգի, 45 հոգի վիրավորվում են ծանր, իսկ 40 հոգի՝ թեթև [2]:

Զինվորական ուժերի և հայ բնակչության միջև տեղի ունեցած բախումներից արժանահիշատակ է նաև Շուշիում տեղի ունեցած ընդհարումը: Շուշիում կալվածքների բռնագրավումը, նախատեսված էր իրականացնել սեպտեմբերի 10-ին: Քանի որ հանրահայտ իրողություն էր բռնության դեմ պայքարելու արցախահայության մարտական կարողությունը, «Հափշտակող Հանձնաժողովի» գործողությունները ղեկավարելու և արցախահայությանը ահաբեկելու նպատակով, օգոստոսի 8-ին զորքով Շուշի է ժամանում Գանձակի նահանգապետը [3]:

Քաղաքը լցնելով իր հետ բերած զորքով, նահանգապետը հրավիրում է քաղաքի ականավոր հայերին և հայտարարում, «Յունիսի 12-ի կարգադրութիւնը իրագործելու համար պետական Հանձնաժողովը վաղը պիտի սկսէ իր գործը: Լսել եմ սակայն, որ հայերը ուզում են հակառակել կալուածների գրաւմանը: Այդ առթիւ յայտնում եմ, որ հրահանգ ունեմ բոլոր հայերին կոտորելու, եթէ անհնազանդութեան որեւէ նշոյլ ցոյց տրւի» [4]:

Հաջորդ օրը նահանգապետն ու «Հափշտակող Հանձնաժողովի» անդամները թիկնազորի և կոզակների ուղեկցությամբ ուղևորվում են հայոց կոնսիստորյան: Նահանգապետը այն աստիճան վախեցած է եղել հայերի հնարավոր ըմբոստությունից, որ մինչև կոնսիստորյա մտնելը, հրամայում է փորել շենքի չորս բոլորը, քանի որ «տեղեկություն էր ստացել», որ հայերը ուժանակներ են տեղադրել և մտադրվել պայթեցնել իրեն ու հանձնաժողովի անդամներին: Սակայն պարզվում է, որ իզուր էր նրա մտավախությունը: Թեպետ նահանգապետի կարգադրությամբ փորում են շենքի պատերի մերձակա տարածքը, բայց ոչ մի տեղ ուժանակ ու պայթուցիկ որևէ այլ սարք չեն գտնում:

«Հափշտակող Հանձնաժողովը» մտնում է կոնսիստորիայի շենքը ու պահանջում՝ հանձնել քաղաքի եկեղեցիների ունեցվածքը: Կոնսիստորիայի անդամները առաջնորդվելով կաթողիկոս Խրիմյանի կարգադրությամբ հրաժարվում են կամովին նրանց հանձնել եկեղեցու ունեցվածքը:

Չկարողանալով կոտրել կոնսիստորիայի անդամների դիմադրությունը, նահանգապետը բռնությամբ ցուցակագրում է եկեղեցու ողջ ունեցվածքը, կողոպտում գանձարանը և կեղծ արձանագրություն կազմելով՝ «հաղթականո-

[1] Վարանդեան, նշվ. աշխ., էջ 286:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 9, էջ 326:
[4] Նույն տեղում:

ռեն» դուրս է գալիս: Իսկ այդ ընթացքում Շուշիի հայերը տեղեկանալով իրենց քաղաքում նահանգապետի և հանձնաժողովի գտնվելու եւ նրանց մտադրությունների մասին, հոծ բազմությամբ շրջապատում են կոնսիստորիայի մերձակա փողոցներն ու բարձրաձայն բացականչություններով, սուլոցներով, ծապր ու ծանակով եւ անգամ նահանգապետի ու մյուս բարձրաստիճան պաշտոնյաների հասցեին ուղղված հայհոյանքներով դիմավորում են նահանգապետին եւ հանձնաժողովի անդամներին[1]:

Անկարող լինելով առաջ շարժվել՝ նահանգապետը հրամայում է թիկնազորին եւ կոզակներին ցրել հավաքվածներին ու մաքրել փողոցները:

«Սկսում է.-գրում է Դրոշակը.-ընդհարումը: Կոզակների հրացանաձգությանը պատասխանում է ժողովուրդը նույն ձեով: Պատշգամբներից և փողոցներից տեղում է կոզակների վրայ կրակ եւ մի րոպեում ընկնում են սպանված՝ 4 կոզակ, ռեալական դպրոցի 12 տարեկան մի հայ աշակերտ եւ բազմաթիվ վիրավորներ երկու կողմից»[2]:

Չնայած գորքի միջոցով ձեռնարկած բռնություններին, Շուշիի հայ բնակչությունը չերկյուղելով անգամ ոստիկանական ուժերի և կոզակների ներկայությունից, գենքով պաշտպանում է իր եկեղեցու ունեցվածքը: Նահանգապետի հրամանով քաղաքում կատարվում են խուզարկություններ և ձերբակալում են 120 մարդու, որոնց թվում էին քաղաքագլուխն ու թեմական ռեալական դպրոցների 37 աշակերտներ: Շուշիում տիրում է չափազանց լարված իրավիճակ[3]:

Եկեղեցական կալվածքները բռնագրավող Հափշտակող հանձնաժողովին արժանի դիմադրություն են ցույց տվել նաև Նոր-Նախիջևանի հայերը: Հափշտակող հանձնաժողովը Նոր-Նախիջևան պիտի ժամաներ սեպտեմբերի 20-ին: Տեղեկանալով հանձնաժողովի գալու մասին՝ ժողովուրդն հավաքվում է քաղաքի մայր եկեղեցում, խլում է երեցփոխից եկեղեցու բանալիները, ապա խմբերի բաժանվելով գնում են մյուս եկեղեցիները, որպեսզի վերցնեն նաև նրանց բանալիները: Եկեղեցու ունեցվածքը կամովին չպետք է հանձնվեր իշխանություններին, ահա այս էր ժողովրդի պահանջը: Հանձնաժողովը միայն բռնությամբ կարող էր վերցնել եկեղեցու ունեցվածքը:

Սեպտեմբերի 20-ին ժողովուրդը հավաքվում է մայր եկեղեցու շուրջը և դարձյալ աղմուկով ու սուլոցներով դիմավորում այնտեղ հայտնված գավառապետին և հանձնաժողովի անդամներին: Գավառապետը դիմելով հավաքվածներին՝ հնազանդության է կոչում նրանց և փորձում համոզել ենթարկվել կարգադրությանը, բայց ապարդյուն: Չկարողանալով համոզել ժողովրդին՝ գաւառապետի կարգադրությամբ հրդեհաշեջները փորձում են ջրով ցրել ամբոխին, բայց դարձյալ մատնվում են անհաջողության:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 326-327:

«Այն ժամանակ.-նշում է Դրոշակը.-, ինչպես միշտ, հանդես են գալիս կոզակները եւ մտրակներով ու ատրճանակներով մաքրում են հրապարակը: Շատերն են ծեծել, մի քանի օրիորդներ ուշաթափել են եւ բուսական բուժ երիտասարդներ ձերբակալել»[1]:

Թեպետ ձեռնարկած բռնություններին, կոզակներն ու ոստիկանությունը, այնուամենայնիվ, չեն կարողանում եկեղեցիների բանալիները խլել ժողովրդից: Եւ միայն մեկ շաբաթ անց Հափշտակող հանձնաժողովը գալիս է քաղաքային վարչություն և հրավիրելով այնտեղ եկեղեցիների երեցփոխներին՝ հարկադրում է նրանց ստորագրել անհրաժեշտ արձանագրությունները:

Հափշտակող հանձնաժողովը համեմատաբար ավելի քիչ հաջողություններ է ունենում գյուղերում: «Դրոշակ»ի- հավաստմամբ «Գիւղերի արիասիրտ երէցփոխները ոչինչ չեն յանձնել: Նրանք ամէնուրեք դիմաւորել են Յանձնաժողովին «չգիտենք», «չենք յիշում» եւ այլ այդպիսի խօսքերով»[2]:

Ամիսներ շարունակ ցարական պաշտոնյաներն ու հանձնաժողովի անդամները շրջել են հայկական բնակավայրերը և փորձել բռնագրավել եկեղեցու ունեցվածքը: Բազմաթիվ բնակավայրերում ժողովրդի կողմից հանդիպելով կազմակերպված դիմադրության՝ Հափշտակող հանձնաժողովը մատնվել է անհաջողության:

Էջմիածինի գյուղերում հերթական անգամ մատնվելով անհաջողության՝ Հափշտակող հանձնաժողովի անդամները Երևանի փոխնահանգապետ գեներալ Նակաշիձեի գլխավորությամբ, որը միաժամանակ նաև հանձնաժողովի նախագահն էր, թիկնազորի ուղեկցությամբ սեպտեմբերի 23-ին դարձյալ գալիս են էջմիածին և ներկայանալով կաթողիկոս Խրիմյան Հայրիկին՝ պահանջում եկեղեցիների գանձարանի բանալիները:

«Վեհափառը.-նշում է «Դրոշակ»-ը.-այս անգամ արդէն զայրացած, պատասխանում է.-«Քանի՞ անգամ ձեզի արդէն ասած եմ, որ ոչինչ տալիք չունիմ: Վերջին անգամ կրսեմ, գնացէք, ինչ կուզէք՝ ինքներդ ընէք»[3]:

Հանձնաժողովի նախագահ գեներալ Նակաշիձեն կաթողիկոսի մերժողական պատասխանը ստանալուց հետո որոշում է արշավանք ձեռնարկել վեհարանի և վանքի վրա: Նրա հրամանով զինվորները ներխուժել են վանքի, վեհարանի, ճեմարանի ու թանգարանի բակերը, ապա փորձում կոտրել գանձարանի երկաթյա պահարանները և վերցրել այնտեղ պահվող դրամներն ու էջմիածնի վանքին պատկանող արժեքավոր թղթերը:

Զինվորների աջակցությամբ կատարելով փոխնահանգապետ գեներալ Նակաշիձեի հրամանը՝ Հափշտակող հանձնաժողովը էջմիածնի գանձարանից բռնագրավում է «...կանխիկ դրամ 14 հազար ռուբլի, կտակներով ու նուէրներով էջմիածնի վանքին թողած արժէքաւոր թղթեր՝ մօտաւորապէս 400 հազար ռուբլու, մի շարք վաւերաթղթեր, 6 ֆունտ հին արծաթ դրամներ,

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

1 ֆունտ տաճկական ոսկի լիրաներ եւ ռուսաց ոսկի դրամներ: Բացի այդ, ցուցակագրել են թանգարանի իրեղէնները եւ առհասարակ վանքի շարժական եւ անշարժ կայքերն ու գոյքերը»[1]:

Մինչեւ 1905թ. օգոստոսի 1-ը, երբ կայսր Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը, կարելի է ասել, պայքարը՝ ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների տարբեր ուժգնությամբ ու ծավալով շարունակվել է գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, որոնց մասին բազմաթիվ դրվագներ կան ներկայացված «Դրօշակի» էջերում[2]:

Հայաբնակ վայրերում նշանակալի աշխատանք են ծավալել Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի մասնաճյուղերն ու նրան աջակցող առանձին անհատները: Շատերը, ովքեր փորձել էին կամովին հանձնել եկեղեցու ունեցվածքը, Ինքնապաշտպանության կենտր. Կոմիտեի որոշմամբ ենթարկվել են ահաբեկման: Ավելին, «Զգտան մեր թշնամիները, - գրում է Մ. Վարանդյանը, - կէսին կէսը այն վիթխարի հարստութեան, զոր մինչ այդ երեւակայեր էր Գալիցինի հիւանդոտ ուղեղը... Տվին իրենք եւս - բազմաթիւ զոհեր, նոյնիսկ խոշոր բարձրաստիճան իշխանաւորներէն: Իսկ ստորադաս պաշտօնեաներու կոտորածին հաշիւ չկար: Շատուր են պրիստաւները, ոստիկանները, ժանդարմ ժողովուրդները, զոր պատուհասած է Դաշնակցութեան ահաբեկչի գնդակը»[3]:

Միաժամանակ, Հ.Յ. Դաշնակցությունը համաձայն 2-րդ Ընդհանուր ժողովի որոշման, որդեգրել էր ընդհանուր ապստամբության նախապատրաստման ռազմավարությունը և բնականաբար նրա ուշադրության կենտրոնում Դուրան-Բարձրավանդակն էր, ավելի ստույգ Սասունը, որտեղ պիտի կենտրոնանային կուսակցության մարտական ուժերը:

1904 թ. հունվար- փետրվար ամիսներին տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը, որն իրավասու էր վերջնականապես ճշտելու և վճռելու ապստամբության հետ կապված խնդիրները:

Շատ կարևոր էր, թե ինչպիսի վճիռներ պիտի ընդուներ Ընդհանուր ժողովը այն ժամանակահատվածում, երբ նրա առջև ծառացած էին լուծելու չափազանց դժվարագույն և հույժ կարևոր հետևյալ խնդիրները. 1. Ընդհանուր ապստամբության կազմակերպում, մարտական ուժերի, զենք ու զինամթերքի առաքում Դուրան-Բարձրավանդակ:

2. Պայքար ի պաշտպանություն հայոց եկեղեցու ունեցվածքի և իրավունքների: Ամիսներ անց այս ամենին գումարվելու է Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայության ինքնապաշտպանության կազմակերպումը: Միաժամանակ Ընդհանուր ժողովը պիտի վերջնական որոշում կայացներ ապստամբության վերաբերյալ: Ուշագրավ է, թե ինչպիսի՞ որոշում պիտի կայացներ ցարական հզոր կայսրության դեմ պայքարի դրոշ պարզած Դաշնակցությունը Սասունում նախապատրաստվող ապստամբության վերաբերյալ:

Հայության համար այդ կարևորագույն նշանակություն ունեցող հարցը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու համար Ընդհանուր ժողովի պատգամավորները, բնականաբար, նախ պարտավոր էին լսել ու հաշվի առնել ապստամբության կազմակերպմանը վերաբերող Բարձրավանդակի կարծիքն ու առաջարկությունները, որոնք համաժողովին գրավոր ներկայացնում է Աշոտ Երկաթը(Աշոտ Լևոնյան):

Պիտի նկատել, որ Ընդհանուր ժողովում ապստամբությունից հրաժարվելու վերաբերյալ ժողովականների կողմից որևէ լուրջ փաստարկ և առաջարկություններ չեն եղել: Այդ հարցում ժողովի մասնակիցների համար որպես գործունեության ուղեցույց եղել և մնում էին ՀՅԴ նախորդ Ընդհանուր ժողովում ընդունած որոշումները: Ժողովականները տարաձայնություններ են ունեցել ու հակադիր տեսակետներ զարգացրել՝ կապված ապստամբությունը սկսելու ժամկետները որոշելու հետ:

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը հաստատում է Սասունում ապստամբություն կազմակերպելու մասին նախորդ համաժողովներում ընդունած որոշումը: Եթե ՀՅԴ-ն հրաժարվեր և հետ կանգներ ապստամբություն կազմակերպելուց, դա անկասկած նշանակում էր հրաժարում իր մարտավարությունից և կուսակցության համաժողովներում այս հարցի վերաբերյալ ընդունած որոշումներից:

1904թ. բռնկված ռուս-ճապոնական պատերազմը, Երկիր մեկնող հայ հեղափոխական գործիչների, մարտական ուժերի նկատմամբ ցարական իշխանությունների դրսևորած թշնամական վերաբերմունքը, ինչպես նաև Հայ Դատի հանդեպ արևմտյան տերությունների որդեգրած երկդիմի քաղաքականությունը թուրք կառավարությանը հրաշալի հնարավորություն են ընձեռում՝ ոչնչացնելու Հ.Յ. Դաշնակցության կողմից հեղափոխական-մարտական ուժերի կենտրոնացման վայր ընտրված Սասունը:

Ժամանակը ցույց տվեց, որ Սասուն մեկնող մարտական խմբերի ճանապարհին կանգնած ամենազլխավոր արգելապատնեշներից մեկը հենց ռուս սահմանապահ զորքերն էին, որոնց բախվելով ջախջախվում էին հայ մարտական ուժերը: Իրավիճակը շատ բարդ էր, ի՞նչ պիտի ձեռնարկեր Հ.Յ. Դաշնակցությունը, շարունակեր ապստամբության նախապատրաստությունը, թե հրաժարվեր մարտական և զինատար խմբեր Սասուն ուղարկելու մարտավարությունից:

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր _ժողովը քննարկելով ապստամբության վերաբերյալ արտահայտած տեսակետները՝ միաձայն հաստատում է նախորդ՝ 2-րդ Ընդհանուր ժողովի որոշումը, սակայն հետեւյալ վերապահումով. «...տալ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնին լիազօրութիւն ընտրելու այն ուղղութիւնը, որ ինք յարմար կը տեսնէ առաջիկայ գարնան համար, դնելով անոր տրա-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 101-102:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 287:

մարդութեան տակ պէտք եղած միջոցները և կռուի տեխնիկական մասի պատասխանատուութիւնը ձգել այս Մարմնին վրայ»[1]:

Միաժամանակ, հաշվի առնելով «Դուրան-Բարձրավանդակ»-ի ներկայացրած պահանջները, Ընդհանուր Ժողովը որպես գոհացում որոշում է.

1. «Ձիաւոր խմբով կամ որևէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ռումբ, հրացանի մասեր, 50000 մսինի փամփուշտ և բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ և այս ամբողջը ոչ ուշ քան Մայիսի կեսը:

2. Որպեսզի Բարձրաւանդակի շարժումները չներկայանան արտաքին աշխարհի առջև իբր տեղական լեռնային բուռն ժողովրդի մը դժգոհութեան արդիւնք, այլ նկատուին հայկական բողոքի արտայայտութիւն, Ընդ. Ժողովը պարտականութիւն կը դնէ Թուրքիոյ սահմանակից մարմիններու վրայ՝ Սասնոյ շարժումները սկսելուն պէս, խորհրդակցութեամբ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի հետ և բիւրեղի սահմաններուն մէջ, ձայնակցիլ և օժանդակել երկրի շարժումին՝ յարձակողական այլև այլ կռուի կամ տեռորի բնաւորութիւն կրող ձեռնարկներով, թէ՝ սահմանի վրայ, թէ՝ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ»[2]:

Իհարկէ, այդ ժամանակահատվածում ՀՅԴ ուշադրության կիզակետում նախևառաջ պիտի լիներ Սասունը: Բայց հայ եկեղեցու իրավունքների ու ունեցվածքի պաշտպանությունը նույնպես համազգային խնդիր էր:

Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, Դաշնակցությունը պաշտոնապես ստանձնում է կովկասահայության ինքնապաշտպանության գործը, որի կենսագործումը հանձնարարվում է «Կովկասի Պատ. Մարմնին, որ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդր. կոմիտէ» անունը, պիտի շարունակէ գործել «Դաշնակցութեան» պաշտօնական անուան տակ»[3]:

Կովկասյան գործունեությունում Դաշնակցությունը պիտի առաջնորդվեր գրավոր եւ բանավոր պրոպագանդայի, ահաբեկչության (տեռորի), ժողովրդական ցույցերի, զինված դիմադրության մարտավարությամբ՝ մնալով պաշտպանողական հողի վրա: Այսինքն, Ընդհանուր ժողովը հաստատում է ՀՅԴ գործունեության ոչ թե հարձակողական-հեղափոխական, այլ պաշտպանողական բնույթի մարտավարությունը:

Ընդհանուր ժողովի որոշմամբ Կովկասի Պատասխանատու մարմնին, այն է՝ Ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտեին և կովկասյան գավառական կոմիտեներին հանձնարարվում էր Կովկասի մեջ համերաշխություն հաստատել այն քաղաքական կազմակերպությունների, հատկապես «Սոցիալիստ-Ռեւոլիւցիոնէրներու » ու Վրաստանի «Մակարտվէլօ» կուսակցությունների հետ, որոնք կռիվ էին մղում ցարական կառավարության դեմ[4]:

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 111:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 119:
[4] Նույն տեղում, էջ 118:

1905 թ. Կովկասի հայ. վրացի ու մահմեդական բնակչությունը պաշտոնական թույլտվության իրավունք է ստանում՝ հատուկ ուղերձների և պատգամավորության միջոցով իրենց պահանջներն ու քաղաքական ցանկությունները ներկայացնել բարձրագույն իշխանություններին:

Համանման պահանջներ ու առաջարկություններ բարձրագույն իշխանություններին ներկայացնելու նպատակով Թիֆլիսում գումարվում է կովկասահայության ժողով, որին մասնակցում են հայկական 24 բնակավայրերի ներկայացուցիչներ:

Ժողովում կովկասահայությանը ներկայացնող պատվիրակները մշակում և իշխանություններին են ներկայացնում 20 կետերից բաղկացած քաղաքական ծրագիր: Պիտի նկատել, որ ծրագրի 20 կետերը վերաբերում են ոչ միայն կովկասահայության կյանքի բոլոր՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, այլև կրոնական, կրթական ու մշակութային բնագավառներին:

Այս հարցում ժողովականները պահանջում են «7. Ընդհանուր, պարտադիր ձրի տարեական ուսում: Լիակատար ազատութիւն տալ մասնաւոր նախաձեռնութեանը՝ բանալու յայտարարական ճանապարհով ամէն կարգի ուսումնարաններ և դպրոցական հաստատութիւններ...

Բանալ համալսարան Թիֆլիսում՝ երկու սեռի անձանց համար...նաև բանալ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ Անդրկովկասում:

8. Պարտադիր անել, որ տարրական դպրոցներում դասաւանդութիւնը հայ ծագում ունեցող երեխաների համար լինի հայերէն: Լուրջ հիմունքների վրայ դնել հայոց կրօնի, հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան ուսուցումը պետական դպրոցներում...

10. Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները...

11. Վերադարձնել Հայկական եկեղեցուն նրա դպրոցները եւ կալուածքները, վերացնելով 1884 թ.-ից մինչեւ 1903 թ. բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ դպրոցներին եւ թէ այդ դպրոցների եւ հայոց վանքերի, եկեղեցիների եւ հոգեւոր դպրոցների կալուածքներին...»[1]:

Կարելի է փաստել, որ եթե Կովկասի բնակչությունը, այդ թվում նաև հայերը պաշտոնական թույլտվություն էին ստացել ազատ կերպով արտահայտելու իրենց պահանջներն ու քաղաքական ծրագրեր ներկայացնել, ապա դա անտարակույս մատնանշում էր, որ ցարական իշխանությունները կարող էին գնալ որոշակի զիջումների: Իսկ այդ նույն ժամանակահատվածում չթուլացող ուժգնությամբ դեռևս շարունակվում էին հայոց եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների պաշտպանությանը նպատակաուղղված կովկասահայության պայքարն ու ինքնապաշտպանական մարտերը:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Հ.Յ. Դաշնակցության որոշմամբ արդեն ահաբեկվել էին հայկական ջարդերի կազմակերպման, ինչպես նաև եկե-

[1] «Դրօշակ», 1905, թիւ 6, էջ 89-90:

ղեցու ունեցվածքի բռնագրավման գործում մեղսագործ ցարական բազմաթիվ պաշտոնյաներ ու աստիճանավորներ:

Ի պաշտպանություն կովկասահայության և հայ եկեղեցու իրավունքների, ՀՅԴ ցարական պաշտոնյաներին կրկնակի անգամ զգաստացնելու նպատակով հրատարակում է հետևյալ հայտարարությունը. «Հ.Յ.Դ. սրանով յայտարարում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետերին, գլխավոր ապետերին, ժանդարմներին, որ այսուհետև նրանցից յուրաքանչիւրը անխնայ կերպով կոչնչացուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից խլել զէնք, խուզարկութիւն կատարել կամ բանտարկել այդ նպատակով:

...Փոխարքայի կողմից 25 ռուբլի ընծայ կամ յեղափոխական գնդակ-ահա ինչ պէտք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ձեւով վնասուածների ընտանիքին ապահովել, նա թեթեւացնում է մեր գործը, որովհետեւ միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող է դողացնել յեղափոխականի ձեռքը, այժմ վերցրած է այդ արգելքն էլ» [1]:

Ինչո՞ւ է ՀՅԴ հայտարարության մեջ չեշտվում «25 ռուբլի»:

Այդ նույն հայտարարության մեջ, որպես պարզաբանում նշվում է. «Ծանօթութիւն.-Մօտ օրերս Թիֆլիսում մի ոստիկան մի հայ զինաթափ անելիս վիրաւորուում է. փոխարքան այդ բանը լսելով 25 ռուբլի ընծայ է տալիս» [2]:

Համաժողովրդական պայքարը ի վերջո ցարական իշխանություններին ապացուցեց, որ դյուրին չէ հայությանը պարտադրել նրա ազգային շահերը ոտնահարող որոշում:

Հ. Տասնապետյանի գնահատմամբ «1903ին հայ եկեղեցական կալուածներու գրաւման ցարական որոշման դէմ ծառացումը, Դաշնակցութեան առաջնորդութեամբ ցուցական առանձնացած արարք մը չկազմեց իր կարգին, այլ վերածուեցաւ համաժողովրդական ըմբոստացումի...» [3]:

Հ.Յ.Դաշնակցության և նրա նախաձեռնությամբ ստեղծված Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի գործուն մասնակցությամբ Կովկասահայության միասնական և անզիջում պայքարը ունեցավ իր դրական արդյունքը: 1905թ. օգոստոսի 1-ին ցար Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը: Եկեղեցուն վերադարձվում են նրանից բռնագրավված կալվածքները, և վերաբացվում դպրոցները:

Ուշագրավ է, որ ցարի հրամանը հրապարակվեց այն օրերին, երբ կայսրությունը հայտնվել էր չափազանց դժվարին իրավիճակում: Մի կողմից ռազմաճակատում կրած պարտությունները, իսկ մյուս կողմից Ռուսաստանի ներքին կյանքում տեղի ունեցող իրադարձությունը: Կայսրությունում բազմաթիվ քաղաքներում տեղի էին ունենում գործադուլներ ու բողոքի ցույցեր: Ցարական իշխանությունները ժողովրդական հուզումները մեղմելու համար հարկադրված գնում էին

[1] Նույն տեղում, թիւ 7, էջ 68:
[2] Նույն տեղում:
[3] Տասնապետեան Հ., Ինսսունամեա հաշուեկշիռ, Պէյրութ, 1985, էջ 26:

որոշակի զիջումների: Կարելի՞ է ասել, որ զիջումներից մեկը Նիկոլայ 2-րդի հրամանով հրապարակված օգոստոսի 1-ի օրենքն է:

Պիտի նկատել, որ համաձայն այդ օրենքի, հայ ժողովրդի նկատմամբ այդ զիջումը կատարվել էր շնորհիվ «...հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը»:

Ինչպիսի՞ն էր Հ.Յ. Դաշնակցության վերաբերմունքը օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ: ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն ի պատասխան այդ օրենքի, հրապարակում է հայ ժողովրդին ուղղված «Հայ ժողովուրդ» խորագիրը կրող ուղերձը, որով իր գնահատականն ու վերաբերմունքն է արտահայտում հայ եկեղեցուց հափշտակված հարստության վերադարձի ու դպրոցների վերաբացման նկատմամբ:

Ուղերձում նշելով, որ «...բարձրագոյն հրամանով վերադարձուում են հայ եկեղեցուց յափշտակուած կալուածները. նոյն բարձրագոյն հրամանով վերաբացուում են եւ հայ-ծխական ուսումնարանները 1874 թիւն հաստատուած ծրագրով», ՀՅԴ հարց է տալիս. թե ի՞նչ պատահեց, որ «Թագաւոր-կայսրը բարեհաճեց զիջանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը» [1]:

Իհարկե, Դաշնակցությունը, որն առաջնորդել էր համաժողովրդական շարժումը, երբեք չէր կարող համաձայնվել ու ընդունել այն տեսակետը, համաձայն որի ցար Նիկոլայ 2-րդը վերանայել և չեղյալ է հայտարարել իր իսկ կողմից ընդունած հունիսի 12-ի որոշումը՝ հիմք ընդունելով հայոց կաթողիկոսի աղերսանքներն ու փոխարքայի միջնորդությունը:

Որպես փաստարկ ու ապացույց իր ժխտողական դիրքորոշմանը՝ Դաշնակցությունը վկայակոչում է երկու դեպք.

1. Հայոց ուսումնարանները թագավոր-կայսրի հրամանով փակվել էին տասնհինգ տարի առաջ: Քանի որ բազմաթիվ ուսումնարաններում երեխաները խմբված դասարանների մեջ, չեն ցանկացել դուրս գալ ու հեռանալ դպրոցներից, կայսրի հրամանով կազակները զենքի սպառնալիքով պոկել են երեխաներին նստարաններից ու վռնդել ուսումնարաններից [2]:

2. «Երկու տարի առաջ,-նշվում է ուղերձում,- թագաւոր-կայսրը բարեհաճեց գրաւել հայ եկեղեցու դարաւոր սեփականութիւնը. եւ որովհետեւ հայ մարդիկ փակեցին կայսերական պաշտօնեաների առաջ եկեղեցու դռները, թագաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իւր կազակներին գնդակահարել այդ մարդկանց» [3]:

Հիմք ընդունելով վերոհիշյալ նախադրյալները և իր անհամաձայնությունը հայտնելով հայության նկատմամբ ցար Նիկոլայ 2-րդի դրսևորած «քարեհաճ» վերաբերմունքի վերաբերյալ, Դաշնակցությունը, որպես եզրակացություն՝ հարց

[1] ՀՅԴ ԿԱ, թղ 324, գ. 77:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:

է տալիս. «Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում սրանից տասն և հինգ տարի առաջ...Հրա՞ւք կատարեց: Արդեօք բագաւոր-կայսեր բարձրագոյն սիրտը յանկարծ գթով եւ սիրո՞վ վառեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիւթական ո՞յժ ստացան, որ առաջ չունէին, թէ կայսերական ծառայութեան մէջ ներացած Կոմ. Վորոնցով-Դաշկովը յանկարծ իրաւունքի եւ արդարութեան ասպետի՞ վերափոխուեց»[1]:

Դժվար չէ հասկանալ ու գնահատել Դաշնակցության համանման դիրքորոշումը: Այո, անժխտելի է ի պաշտպանություն հայոց եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների պաշտպանության գործում Հ.Յ. Դաշնակցության նշանակալի ծառայությունը: Եթե ՀՅԴ ընդուներ օգոստոսի 1-ի օրենքի ընդունման գործում հայոց կաթողիկոսի և Կովկասի փոխարքայի միջնորդությունների վճռորոշ նշանակության իրողությունը, ապա դա հավասարազոր է իր դերակատարության և համաժողովրդական պայքարի թերագնահատմանը:

Այս հարցում ՀՅԴ գնահատականը միանշանակ է. կայսրության դեմ համաժողովրդական պայքարի շնորհիվ ձեռք բերած հաղթանակում պարտական ենք «Քեզ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ... Դու էիր, որ պաշտպան կանգնեցար Քո նիւրական իրաւունքներին: Դու քաջութիւն ունեցար չը հնազանդել դահիճ կայսեր բարձրագոյն «քարեհաճման» եւ տարար յաղթութիւնը»[2]:

Անժխտելի է, որ ցարական կայսրության տիրապետության տակ գտնվող ազգերից առաջինը հայերը համարձակվեցին ընդվզել ու պայքարի դրոշ պարզել ընդդեմ հզոր կայսրության:

Ռոստոմի գնահատմամբ «...վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում, լեհական վերջին ապստամբութիւնից (1863) յետոյ, ոչ մի հպատակ ժողովուրդ այնպէս ուժեղ կերպով չէ ըմբոստացել ռուս կառավարութեան դէմ, ինչպէս հայերը 1903-ին...»[3]:

1905 թ. օգոստոսի 1-ի օրենքով ցարիզմը տեղիք տալով հայության համաժողովրդական շարժմանը և առաջնորդվելով նաև իր պետական ու քաղաքական որոշակի շահերով, զիջողություններ է անում մի ազգի, որը համարձակվել էր չհնազանդվել և պայքարել իր ընդունած օրենքի դեմ:

ՀՅԴ Ալեքսանդրապոլի կոմիտեն իր հրապարակած «Եկեղ. կալուածքների վերադարձման եւ դպրոցների բացման լուրը Կովկասում» խորագիրը կրող վերլուծականում (1905 օգոստոսի 19, Ալեքսանդրապոլ) արժանվոյնս գնահատելով կայսր Նիկոլայ 2-րդի հրամանով 1905 թ. օրենքի ընդունման գործում հայության մղած համազգային պայքարի նշանակությունը՝ նշում է. «Թէ ինչ էին այս օրէնքի ընդունման իսկական պատճառները, դեռեւս վաղ է որոշ եզրակացութեան յանգել, բայց մի բան շատ պարզ է, որ հայ ժողովուրդի միահամուռ բողոքը, բազմաթիւ ակտիւ եւ պասիւ դիմադրութիւնները, բազմաթիվ տեռորական գործողութիւնները այն արեցին, որ Կովկասի բարձրագոյն պաշտօնեաները միաբերան սկսեցին իրենց զեկուցումների մէջ Պետերբուրգի ականջին շարունակ բզզացնել, որ Կովկասը խաղաղացնելու համար ամենագիտավոր պայմանը հայոց եկեղեցու կալուածները վերադարձնելն է...»[1]:

1905 օգոստոսի 1-ի օրենքի հրապարակումից հետո ցարական հատուկ ծառայություններն ու ինչպես նաև Կովկասի փոխարքայության պաշտոնյաները ժողովրդի մեջ խիստ քարոզչություն են ծավալում, ամենուրեք լուրեր տարածելով, որ հայոց եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու ու դպրոցների բացման համար հայ ժողովուրդը պարտական է կովկասահայության նկատմամբ գթասրտությամբ տրամադրված ցարի՝ Նիկոլայ 2-րդի քարեհաճությանը:

Ժխտելով համանման երևույթի իսկությունը՝ վերոհիշյալ վերլուծականը շեշտում է. «Մի հանգամանք, որ ոչ ոքի աչքից չը խուսափեց, դա այն էր, որ սա ոչ թէ մի շնորհ էր, որ բագաւոր կայսրը «քարեհաճեց» անել հայ ժողովրդին, այլ մի անխուսափելի հետեւանք հայ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան եւ տէրութեան ընդհանուր տագնապի»[2]:

Բնական է, որ կայսր Նիկոլայ 2-րդի ընդունած օգոստոսի 1-ի օրենքը մեծագույն ոգևորությամբ պիտի ընդունվեր բովանդակ հայության և, իհարկե, հայոց եկեղեցու, ինչպես նաև Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներում մասնակցող հայ ինքնապաշտպանական ուժերի ու նրանց առաջնորդող հայ ազգային կուսակցությունների կողմից: Հայոց եկեղեցուն վերադարձվում էր նրանից խլված հարստությունն ու ցարական իշխանություններն այլևս բռնությամբ չէին յուրացնելու նրա ունեցվածք և ոտնահարելու իրավունքները: Սկսելու էին ազատորեն գործել կրթական օջախները և հայ երեխաներն այլևս հարկադրված չէին լինելու մշտապես գտնվելով ցարական հատուկ ծառայությունների հսկողության տակ, ուստիր շարունակել գաղտնի պայմաններում:

Ինչպե՞ս, ինչպիսի՞ միջոցառումներով օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտեցին հայության համընդհանուր շարժումն առաջնորդող Հ.Յ. Դաշնակցությունն ու հայ հոգևորականությունը:

Հայ հոգևորականությունը կաթողիկոս Խրիմյանի գլխավորությամբ օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարում է գոհաբանական մաղթանք, որին ՀՅԴ գնահատմամբ միանում են «Հայ աղաները՝ մտքի շարչիները եւ գրպանի բուրժուազիան...»[3]:

Հ.Յ. Դաշնակցությունը իր վերաբերմունքը օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ արտահայտելու նպատակով օգոստոսի 8-ին հրատարակում է «Թռուցիկ թերթ», որտեղ նախ իր գոհունակությունն ու վերաբերմունքն է արտահայտում եկեղեցական կալվածքների ու հայ դպրոցների բացման կապակցությամբ՝ ընդգծելով. «Բնական ու պարզ մի հարց է. կողոպտել էին ինձանից մի բան,-վե-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Նիւթեր...», հ. Գ, էջ 95:

[1] Նույն տեղում:
[2] «Դրոշակ», 1903, թիւ 9, էջ 328:
[3] «Դրոշակ», 1903, թիւ 9, էջ 328:

ռաղարձնում են. խլել էին մի իրաւունք-յետ են տալիս...Բռնակալութիւնը, որ երբէք օրէնք ու արդարութիւն չէ ճանաչում. ստիպուած եղաւ գիջել մի թոյլ ժողովրդի...ճիշտ է Եւրոպնեան էլ մեծ դեր խաղաց. բայց առանց մեր պահանջի առանց մեր դիմադրութեան ու արիւնի ոչինչ չէր լինի» [1]:

Ցարիզմի կողմից իր իսկ հռչակած օրենքից հրաժարումը որակելով որպես հայ ժողովրդի հաղթանակ՝ Դաշնակցությունը միաժամանակ դատապարտում է օգոստոսի 7-ի օրենքի հեղինակների, այն է՝ ցարական իշխանությունների նկատմամբ դրսևորած քծնողական վերաբերմունքը: Այս առնչությամբ ՀՅԴ դատապարտում ու քննադատում է հայ հոգևորականությանը, նշելով, որ «Նա իր էութեամբ երբէք չի կարող յեղափոխական լինել: Նա սովոր է միշտ աղօթել. երէկ աղոթում էր Եհովային ու Նազովրեցուն, այսօր հեշտութեամբ կաղօթէ Ցարի, գուցէ եւ Սուլթանի կեանքի համար» [2]:

«Թռուցիկ թերթ»-ում ՀՅԴ իր անհանդուրժողականությունն է արտահայտում Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգևորականության կատարված գոհաբանական մաղթանքի նկատմամբ: Ըստ «Թռուցիկ թերթ»-ի վկայության, այդ օրերին եղել են առանձին անհատներ, որոնք հիմք ընդունելով օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգևորականության կատարած գոհաբանական մաղթանքի արարողությունը, այն որակել են հետևյալ անմիտ արտահայտությամբ. «Դաւաճան է հայոց կաթողիկոսը, դաւաճան են այս մաղթանքը սարքողները...» [3]:

Դաշնակցությունը արտահայտելով իր անհամաձայնությունը հայոց կաթողիկոսին ու հայ հոգևորականությանը տրված վերոհիշյալ գնահատականին, տալիս է իր գնահատականը. «Ինչ դաւաճանութեան մասին է խօսքը, ողորմելիներ: Ուր էք փիրաւորում ամենքին: Ասացէք ստրկութիւն, ասացէք քծնութիւն, ստորացուցիչ մարդկային արժանապատուութեան համար...» [4]:

Ինչու՞ էր Դաշնակցությունը, առաջնորդվելով օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգևորականության կատարված գոհաբանական մաղթանքի արարողությամբ, մեղմ ասած, նման անհարգելի արտահայտություններով բնութագրել բովանդակ հայության կողմից մեծագույն ու անառարկելի հեղինակություն վայելող Խրիմյան Հայրիկին: Իսկ մինչ այդ հիացմունքով դրվատելով ի պաշտպանություն եկեղեցու ունեցվածքի եւ իրավունքների ցարիզմի դեմ Խրիմյան Հայրիկի դրսեւորած անզիջում պայքարը՝ ՀՅԴ իր պաշտոնաթերթ «Դրօշակ»-ում նշում է. «...Ծերունի կաթողիկոսը գործի սկզբից մինչեւ այսօր, մի գովելի յամառութեամբ ու խորին հաստատակամութեամբ, պահպանում է իր բռնած դիրքը շարունակ պնդելով իր առաջի օրւայ ասածի վրայ-«Չեմ կրնար տալ, կը բողոքեմ»...Ծերունի հայրապետի այդ արժանաւոր դիրքը վերակենդանացնում է բոլորիս մէջ այն փառաւոր պատկերը, որ ստեղծել է հայ ժողովուրդը Խրիմեանի անուան շուրջը» [1]:

Ճիշտ է, երբ ցար Նիկոլայ 2-րդի կողմից 1903 թ. օգոստոսի 12-ին հռչակվեց հանրահայտ օրենքը, ծերունազարդ հայրապետի կողմից սկզբում նկատվում է որոշակի անվճռականություն, սակայն փոքր-ինչ անց, հատկապես հարավային Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, Խրիմյան Հայրիկը բողոքի բազմաթիվ հեռագրեր է հղել Կովկասի փոխարքային, Ռուսաստանի ներքին գործոց նախարարին ու նաև անձամբ Նիկոլայ 2-րդին, որոնցում ամենայն շիտակությամբ ու համարձակությամբ ներկայացրել է հայության նկատմամբ ցարական պաշտոնյաների դրսևորած կողմնակալ ու անօրինական վերաբերմունքը, ինչպես նաև հայկական բնակավայրերում թուրք հրոսակախմբերի կատարած կոտորածներն ու ավարառությունները:

Պիտի նկատել, որ կաթողիկոսի գլխավորությամբ հոգևորականությունն այդ տարիներին ՀՅԴ և նրա ղեկավարությամբ գործող «Հայկական ինքնապաշտպանության Կեդրոնական կոմիտե»-ի ու կովկասահայության ինքնապաշտպանական ուժերն առաջնորդող Զինվորական մարմինների հետ գործել է միասնական ու համաձայնեցված: Ավելին, բազմաթիվ են այն հոգևորականները, որոնք գործում մասնակցություն են ունեցել հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել Խրիմյան Հայրիկին ու հայ հոգևորականությանը տված Դաշնակցության վերոհիշյալ գնահատականը: Պատճառն անկասկած կուսակցության որդեգրած ռազմավարությունն էր:

1904 թ. ՀՅԴ Խորհուրդը, չսպասելով հերթական՝ 4-րդ Ընդհանուր ժողովի գումարմանը ընդունում է «Կովկասեան Նախագիծ»-ը և իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը՝ որոշում. «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան...» [2]:

Ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարը Դաշնակցությունը որդեգրել էր դեռևս ՀՅԴ Խորհրդի «Կովկասեան նախագծի» ընդունումից առաջ, 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում, որին բացի Դաշնակցությունից մասնակցել են նաև ռուս, լեհ, ֆինն, վրաց և լատիշ սոցիալիստական գաղափարներ դավանող հեղափոխական կուսակցությունները: Համաձայն «Կովկասյան Նախագիծ»-ի և խորհրդաժողովում ընդունած որոշման, ցարիզմի դեմ մղվող պայքարը ՀՅԴ համար դառնալու էր ծրագրային դրույթ և նրա գործունեությունում ձեռք էր բերում ռազմավարական նշանակություն:

Առաջնորդվելով հենց այդ ռազմավարությամբ, ՀՅԴ խրախուսում էր այն ամենը, ինչն ուղղված էր ընդդեմ ցարական ինքնակալության և հակառակը՝ դատապարտում բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղված չէին ընդդեմ ցարիզ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

---

[1] «Դրօշակ», 1905, թիւ 6, էջ 90:
[2] «Նախագիծ Կովկասեան գործունէութեան, Ժնեւ, 1906, էջ 2:

մի ու նրա վարած քաղաքականության: Դաշնակցության համոզմամբ, հայոց հայրապետն ու հոգևորականությունը ոչ թե պիտի կատարեին գոհաբանական մաղթանքի արարողություն, որը նրա գնահատմամբ հավասարազոր է քծնանքի, այլ պիտի ընդվզեին ցարիզմի դեմ և իրենց բողոքն արտահայտեին նրա վարած քաղաքականության նկատմամբ:

Իր որդեգրած ռազմավարությունն էր թելադրում, որպեսզի ՀՅԴ իր հրատարակած «Թռուցիկ թերթ»-ում դատապարտողի իրավունքով գնահատի «Հասարակությունը վերածեց քծնողության, ստրկական ցոյցերի» և դրա համար մեղադրի հայոց կաթողիկոսին ու հոգևորականությանը [1]:

Պիտի նկատել, որ ավելի քան տարօրինակ է ՀՅԴ գնահատականը: Չէ որ հայոց կաթողիկոսն ու հայ հոգևորականությունը չէին կարող և որևէ տեսանկյունից պարտավոր չէին առաջնորդվել ինչ-որ քաղաքական կուսակցությունների ընդունած որոշումներով, մանավանդ, որ այն բնավ համահունչ չէր հայության շահերին: Իսկ ժամանակը միանշանակորեն ապացուցեց, հատկապես 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, որ ՀՅԴ որդեգրած «Կովկասյան նախագիծը» այն է՝ «Կովկասյան շարժման հարցում ինքնապաշտպանության շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեության...» ռազմավարությունը ոչ միայն չէր բխում հայության շահերից, այլև ինչ-որ առումով վնասակար էր:

Բոլորովին այլ էր Կովկասում գործող հեղափոխական կուսակցությունների վերաբերմունքը կովկասահայության ուրախության, հայ հոգևորականության կողմից օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարած գոհաբանական մաղթանքի և ՀՅԴ նկատմամբ: Հեղափոխական կուսակցությունները բացասաբար գնահատելով հայ հոգևորականության կողմից օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարած գոհաբանական մաղթանքը, այդ գործում մեղադրում էին Դաշնակցությանը՝ գտնելով, որ այդ ամենը կազմակերպվել է հենց նրա նախաձեռնությամբ: Նրանց գնահատմամբ ՀՅԴ որպես հեղափոխական կուսակցություն, ոչ թե պիտի հայ հոգևորականության հետ միասին եկեղեցիներում կատարեր գոհաբանական մաղթանք ու փառաբաներ ցարի բարեհաճ վերաբերմունքը, այլև պետք է պայքարել ցարի և նրա վարած քաղաքականության դեմ[2100]:

Դաշնակցության կողմից օգոստոսի 1-ի օրենքի ընդունման կապակցությամբ հրապարակած կոչերն ու ուղերձներն աներկբա ցույց են տալիս, որ այս առնչությամբ նրա հասցեին հեղափոխական կուսակցությունների հնչեցրած մեղադրանքները միանգամայն անհիմն են: Կարելի է ասել, որ այդ կուսակցությունները ձգտել են Դաշնակցության պայքարը գլխավորապես ուղղել ընդդեմ ցարական իշխանությունների: Իսկ ՀՅԴ թեպետ ընդունել էր «Կովկսյան նախագիծը», այնուամենայնիվ, եղել ու մնում է նախևառաջ ազգային խնդիրներով առաջնորդվող կուսակցություն:

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 356, գ. 20, էջ 8:

Մերժելով հեղափոխական կուսակցությունների կողմից Դաշնակցության հասցեին հնչեցրած մեղադրանքը՝ ՀՅԴ Ալեքսանդրապոլի կոմիտեն վերոհիշյալ վերլուծականում նշում է, որ դաշնակցականները «...ինչպես միշտ այս անգամ էլ շարունակ համոզել են ժողովրդին կռել բուրժուազիայի անօրինական ձգտումների դեմ, տարածելով այն միտքը, որ քանի դեռ միապետական ռեժիմը Ռուսաստանում գոյություն ունի, ոչ մի լուսավոր երեւույթ տեւական լինել չի կարող: Այսօրվայ տրուածը վաղը կարող է յետ առնվել» [1]:

Որպես ընդհարացնող խոսք պետք է նշել, որ ինչպիսին էլ լինի հեղափոխական կուսակցությունների կողմից պատմական այդ ժամանակահատվածում Հ. Յ. Դաշնակցության գործունեությանը տրված գնահատականը, մի իրողություն անժխտելի է, հայոց եկեղեցու իրավունքների վերականգնման ու ունեցվածքի պաշտպանության համար ցարիզմի դեմ հայ ժողովրդի ծավալած պայքարն ավարտվել է հաղթանակով եւ այդ գործում անվիճելի ու անգնահատելի է Հ.Յ. Դաշնակցության ծառայությունը:

[1] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ 2

1905-1906 ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԹԱԹԱՐԱԿԱՆ) ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

1905 թվականը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող այնպիսի իրադարձություններով, որոնք անակնկալ էին ոչ միայն բոլոր դակ հայության, այլև ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-հեղափոխական կուսակցությունների համար: Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական ընդհարումները, և այս անգամ արդեն արեւելահայության վրա է ծառանում ջարդերի սպառնալիքը:

Պատմական նույն ժամանակահատվածում քաղաքական կարևորագույն իրադարձություններ էին տեղի ունենում ցարական Ռուսաստանում, որոնք իրենց վճռորոշ ազդեցությունն էին գործում և խորը հետք թողնում կայսրության տիրապետության տակ գտնվող կովկասյան ժողովուրդների կյանքում:

19-րդ դարի վերջերին ռուսական հսկայածավալ կայսրությունում բռնկվում են ժողովրդական ցույցեր ու գործադուլներ, որոնք վերածվում են զինված բախումների: Կայսրության ներքին կյանքում տեղի ունեցող երևույթներին զուգորդվում է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը: Պատերազմում մի շարք ճակատամարտերում ցարական զորաբանակների կրած պարտությունները ավելի են խորացնում հեղափոխական շարժումները, որոնք սպառնում էին տարածվել նաև Անդրկովկաս:

Ցարական Ռուսաստանը հայտնվում է ծանրագույն կացությունում:

Կայսրության մասն կազմող Անդրկովկասի բնակչության մեծամասնությունը, ինչպես հայտնի է, հայերն էին, վրացիներն ու կովկասյան թուրքերը, կամ ինչպես ընդունված է ասել՝ թաթարները, որոնք զուտ տնտեսական ու մշակութային առումով գտնվում էին տարբեր մակարդակներում:

Այդ նույն ժամանակահատվածում, երբ կայսրությունում ծավալվում էր հեղափոխական շարժումը և դեռևս շարունակվում էր ռուս-ճապոնական պատերազմը, Անդրկովկասում բռնկվում է հայ-թուրքական ընդհարումը:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերաբերյալ, հատկապես «Դրօշակի» էջերում, կան բազմաթիվ վերլուծություններ ու տեսակետներ:

Այն հեղինակները, որոնք անդրադարձել են ընդհարումների պատճառների վերլուծությանն ու բնութագրմանը, որպես կանոն, առավելապես ընդգծում են տնտեսական և ազգային, ինչպես նաև կրթական ու մշակութային գործոններով պայմանավորված երկու ազգերի հակադրություններն ու թշնամանքը:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառները վերլուծելիս Վահան Մինախորյանն ընդգծում է երկու հիմնական գործոններ. «Տնտեսապէս նրանք արդիւնք էին թուրք նորաբոյս բուրժուազիայի և աւատապետութեան պայքարի՝ ուղղուած հայ բուրժուազիայի եւ տնատիրութեան դէմ, որոնք դրութեան տէրն էին Բագում: Քաղաքականապէս, այդ ընդհարումները արգասիք էին ռուս միապետութեան սադրանքների եւ նպատակ ունէին հեռու պահել յեղափոխութիւնից Անդրկովկասը, տեղական ազգամիջեան պատերազմների միջոցով, ինչպէս նաեւ հայ ըմբոստ ժողովրդի ողնաշարը կոտրել» [1]:

Հայ-թաթարական ընդհարումների պատճառներին իր «Միացյալ անկախ Թուրանյա» աշխատությունում անդրադարձել է նաև Զարևանդը: Նրա գնահատմամբ ընդհարումների բռնկման հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, Օսմանյան Թուրքիայի հետապնդած հեռահար նպատակներն էին, նրա որդեգրած պանթուրանական ծրագրերը: Իր որդեգրած պանթուրանական ծրագրերը իրականացնելու համար Թուրքիային նպաստավոր, հարմար պահ էր հարկավոր: Իսկ այդ նպաստավոր պահը նրան ընձեռում է ռուս-ճապոնական պատերազմը, առավել ևս ռազմաճակատում ռուսական զորքերի կրած պարտություններն ու կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումը:

«Մոնդոլ հորեղբորորդին, Ճապոնի հաջողությունները, գրում է Զարևանդը,- թե տվեր էին իրենց հույսերուն: Մեծ գործին հառաջաբանն էր, որ անոնք կրնային շարժումը վերածել Ռուսիոյ դեմ ապստամբութեան. հակառակ պարագային «թուրք հողը» կմաքրեին անոր վրա իրավունք ունենալ հավակնող եւ իրենց համատարրությունը խանգարող հայեն: Անշուշտ կարգը վրացիներուն ալ պիտի գար: Բայց կարեւորը նախ հայերը մաքրելն էր» [2]:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ, իրոք, պանթուրանականության մասին Զարեվանդի պնդումներն ավելի քան ճիշտ են: Եթե հիմք ընդունենք այդ տեսակետը, ապա պիտի նշել, որ Անդրկովկասում ծավալված ընդհարումները գործնականում պանթուրանականության առաջին դրսևորումներն էին, որոնց առաջին զոհը պիտի դառնար կովկասահայությունը:

Մինչև ընդհարումների սանձազերծումը, Պոլսից եկած հատուկ գործակալների ջանքերով Բաքվում կազմակերպվում է համաիսլամական գաղափարներ քարոզող մի կազմակերպություն, որի նպատակն էր միավորել մահմեդականության շիա և սյունի ճյուղերն ու առաջին իսկ հնարավորության դեպքում Կովկասը մաքրել քրիստոնյաներից: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Կովկասը նվաճելու ծրագիր: Ռուս հայտնի պատմաբան, հրապարակախոս Ալ. Ամֆիտատրովի պնդմամբ Անդրկովկասում համաիսլամական գաղափարների տարածումը իրականացվել է սուլթան Աբդուլ Համիդի գիտությամբ և հրահանգով: «Աբդուլ Համիդը,-գրում է Ալ. Ամֆիտատրովը,- հեռանկատ մարդ է: Նա նախատեսեց համասլաւոնականութիւնից առաջանալիք վտանգը և ժամանակին, որպէս ուղղահաւատների խալիֆ, հակադրեց նրանց համաիսլամական գաղափարը» [3]:

---

[1] «Հայրենիք» ամս., 1948, թիւ 7, էջ 16:
[2] Տե՛ս Զարեւանդ, Միացեալ անկախ Թուրանիա, Երեւան, 1993, էջ 19-26:
[3] Ալեքսանդր Ամֆիտէտրով, Եւրոպա եւ Հայաստան, էջ 19:

Համաիսլամիզմի քարոզիչներր հաստատվելով Բաքվում. աստիճանաբար եռանդում գործունեություն են ծավալում Կովկասի գրեթե բոլոր մահմեդականական վայրերում և իրենց նպատակն իրականացնելու համար ապատում քաղաքական նպաստավոր պայմանների: Նրանք իրենց քարոզչությունը ծավալելու նպատակով Բաքվում հրատարակում են «Կասպի» լրագիրը:

«Նորին կայսերական մեծության փոխարքա. կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին» ներկայացրած զեկուցագրում Կովկասում համաիսլամության գաղափարների տարածման մասին ընդգծում է նաև Երևանի նահանգի հոգևոր բեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը [1]:

Համաձայն այդ զեկուցագրի. Կովկասում բռնկված արյունահեղ դեպքերի պատճառը նախևառաջ կիսագրագետ և մասամբ էլ գրագետ թաթարներն են: Նրանց հետ համագործակցում ու նրանց են պաշտպանում իշխանության տարբեր օղակներում աշխատող թաթար պաշտոնյաները. որոնց միացել են նաև Թուրքիայից Կովկաս ժամանած սեիդներն ու սոֆտերը: Նրանք մեծ գործունեություն են ծավալում Կովկասի մոլեռանդ մահմեդական բնակչության մեջ քարոզելու ու տարածելու համաիսլամության գաղափարներն ու ծրագրերը:

«...համաիսլամիզմը.-նշում է Կարապետ վարդապետը.-մահմեդականության համար ոչ միայն կրոնական. այլեւ քաղաքական իդեալ է. այն է՝ միավորել բոլոր ուղղահավատ մահմեդականներին մեկ խալիֆի՝ թուրքական սուլթանի իշխանության տակ» [2]

Ռուս-Ճապոնական պատերազմը. Ռուսաստանում ծայր առած հեղափոխական շարժումները քաղաքական այն նպաստավոր պայմաններն էին. որոնք հնարավորություն ընձեռեցին պանիսլամիզմի ջատագովներին՝ իրականացնելու Կովկասը հայերից ազատելու և այն նվաճելու ծրագիրը:

«...կովկասեան իշխանութիւնը.-նշում է Ամֆիտեատրովը.-փապէս օգնութիւն եւ խրախոյս գտնելով Պետերբուրգի աւելի եւս կոյր ու մոլորուած կենտրոնի կողմից. անսպասելի կերպով դաշնակից դարձաւ իր ամենախորամանկ եւ ամենակատաղի արտաքին թշնամիներից մէկին՝ ծայրագաւառային ազգաբնակութեան մի ազգային խմբի դէմ. որ դեռ քիչ ժամանակ առաջ ամենից աւելի խաղաղ. ամենից աւելի օգտակարն ու, թերեւս, ամենից ավելի պահպանողականն էր»[3]:

Ընդհարումների պատճառները վերլուծելիս հեղինակները շրջանցում և չեն անդրադառնում մի կարևոր իրողության. այն է՝ Հ.Յ. Դաշնակցության որդեգրած ռազմավարությանը՝ Կովկասյան նախագծին, որի մասին որոշումը ինչպես արդեն նշվել է. ընդունվել էր ՀՅԴ Խորհրդի կողմից. իսկ դրանից առաջ 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում: Խորհրդաժողովում ընդունված վերոհիշյալ որոշումը և խորհրդաժողովին ՀՅԴ մասնակցությունը չէին կարող

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 298, գ. 32, էջ 2:
[3] Ալեքսանդր Ամֆիտեատրով, Եւրոպա եւ Հայաստան, էջ 19:

դուրս մնալ ցարական համապատասխան ծառայությունների տեսադաշտից: Հետևաբար. ցարական իշխանությունների վերաբերմունքը Հ.Յ.Դաշնակցության նկատմամբ. որպես կայսրության դեմ պայքարող ռազմավարություն որդեգրած հեղափոխական կուսակցության. պիտի որ բացասական լիներ:

«Իշխան Գոլիցինը.-գրում է Ալ. Խատիսյանը.-կը կարծէր. որ պէտք է հայերը աւելի ճնշել. որովհետեւ անոնք աւելի կազմակերպած եւ աւելի ուժեղ կեռեւային իր աչքին» [1]:

Կայսր Նիկոլայ 2-րդին ներկայացրած զեկուցագրում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը. նշելով Հ.Յ. Դաշնակցության ձևավորման նախադրյալներն ու պայքարի նպատակն ու ուղղվածությունը. խոստովանում է. «Հայ յեղափոխական «Դաշնակցութիւն» ընկերակցութիւնը. որ իր ժամանակին ստեղծուել է թուրքահպատակ հայերին ազատագրելու Թուրքիայի իշխանութիւնից եւ Ռուսաստանում իրան արտահայտել է միայն դրամ ժողովելով. զէնք առնելով եւ կամաւորներ կազմակերպելով Թուրքիա ուղարկելու համար...» [2]:

Այսուհանդերձ. ՀՅԴ Կովկասյան գործունեության ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է. որ հունիսի 12-ի օրենքի հրապարակումից հետո. կուսակցության պայքարը Կովկասում չէր սահմանափակվում սոսկ եկեղեցու ունեցվածքի և իրավունքների պաշտպանությամբ: Հայոց եկեղեցու պաշտպանության համար մղվող պայքարը. անտարակույս կազմում է ազգային-ազատագրական պայքարի անքակտելի մասը:

Պատմական այդ ժամանակահատվածում 12-ի օրենքի հրապարակումից հետո. ՀՅԴ ցարիզմի դեմ մղվող պայքարում առաջնորդվում է ոչ միայն ազգային խնդիրների լուծմամբ. այլև հանդես գալով որպես քաղաքական կազմակերպություն. հետապնդում է նաև զուտ քաղաքական նպատակներ:

Ընթանում էր ռուս-ճապոնական պատերազմը: Մի շարք ճակատամարտերում ռուսական զորքերի պարտությունը գոհունակությամբ էին ընդունվում ռուս հեղափոխական կուսակցությունների կողմից: Հայ ազգային կուսակցությունները՝ Հնչակյաններն ու Հ.Յ.Դաշնակցությունը. կարծես չուզենալով իրենց որդեգրած հակացարական գործունեությամբ դույզն-ինչ զիջել ռուս հեղափոխական կուսակցություններին. նույնպես հանդես էին գալիս հօգուտ Ռուսաստանի պարտության:

Պատերազմը շարունակելու և բանակը համալրելու նպատակով ցարական իշխանությունների կողմից հայտարարված զորակոչի դեմ. այդ օրերին պայքար էին մղում ոչ միայն ռուս հեղափոխական կուսակցությունները. այլև Հ.Յ.Դաշնակցությունն ու Հնչակյանները: ՀՅԴ ինքնապաշտպանության կենտր. կոմիտեն իր պաշտօնաթերթի՝ «Դրօշակ»-ի մեջ տպագրում է հայությանը ուղղված «Կովկասում սպասուող պահեստի զօրակոչի առթիւ» (Ռուս-ճապոնական պատերազմի համար)» խորագիրը կրող ուղերձը [3]:

[1] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 73:
[2] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, թ. 18:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 11, էջ 525-526:

Սասունի դեպքերից ընդամենը ամիսներ էին անցել. կովկասահայության առաջ ծառացել էր հայոց եկեղեցու ունեցվածքը իշխանությունների բռնազավթումից պաշտպանելու դժվարագույն և հույժ կարևոր խնդիրը: Թվում է, որ ցարական իշխանությունների նկատմամբ ՀՅԴ պիտի դրսևորեր զուսպ և հավասարակշռված վերաբերմունք: Այստեղերծ, Հ.Յ.Դաշնակցությունը ուղերձ է հղում հայությանը, որտեղ ներկայացնելով կայսրության տարածքում բռնադատված ժողովուրդների նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության, պատերազմի հակաժողովրդական, կործանարար նշանակությունը, կոչ է անում ընդամին վկայակոչելով Լեհաստանի օրինակը, խափանել զորակոչը եւ որևէ արձագանք չտալ կառավարության հայտարարած զորակոչին:

Ուղերձում շեշտելով, որ պատերազմի և իր գործած ոճիրների հետևանքով կառավարությունը հայտնվել է հոգևարքի մեջ, Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեն նշում է. «...Համաշխարհային խաղաղութեան համար անհրաժեշտ է ռուսական բռնապետութեան պարտութիւնը...Իր երկաթէ ծանրութեամբ նա ճնշում է բովանդակ աշխարհի բոլոր ժողովրդական շարժումները. Պէտք է ազատել տառապող մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը ռուսական վտանգից...Այս սեւ օրերին ոչ մի հայ իրաւունք չունի ռուսական բռնապետութեան համար կռուելու: Մենք ինքներս չուժեղացնենք այն բունոտ ձեռքը, որպէսզի յետոյ աւելի չտանջուենք...

Դիմադրե՛նք, կռուե՛նք քանի կարող ենք, քանի ապրում ենք» [1]:

1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ցարիզմի կրած պարտություններն ավելի են խորացնում ժողովրդական շարժումները: Կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումները տարածվում էին նաև Անդրկովկասում:

ՀՅԴ կովկասյան գործունեության ուսումնասիրությունը հավաստում է, որ Դաշնակցությունն առավել գործուն կերպով, քան մյուս քաղաքական կուսակցությունները, մասնակցել է իշխանությունների դեմ կազմակերպված բողոքի զանգվածային միջոցառումներին և գործադուլներին:

Դեռևս 1903թ. հուլիսի 13-ին և 14-ին Բաքվում տեղի ունեցած երկօրյա գործադուլներին, որի կազմակերպմանը գործուն կերպով իր նպաստն է բերել նաև Դաշնակցությունը, մասնակցել են 40.000 բանվորներ:

Հարկավոր էր խեղդել կովկասյան ժողովուրդների հեղափոխական տրամադրությունները, թույլ չտալ հայերին, վրացիներին ու թուրքերին միավորվելու՝ ընդդեմ ցարական իշխանության:

Հայության և հայ ազգային կուսակցությունների նկատմամբ ցարական իշխանությունների դրսևորած բացասական վերաբերմունքի, հայ-թուրքական ընդհարումների բռնկման պատճառների մասին ուշագրավ դատողություններ են պարունակում վերոհիշյալ Խ. Ակնունուն հասցեագրած հայ ազգային-հասարակական անվանի գործիչ Վահան Արծրունու(նա ՀՅԴ անդամ չէր և այդ ժամանակ թղթակցում էր «Մշակ» թերթին-Հ.Գ.) նամակում:

[1] Նույն տեղում:

Ըստ Վ. Արծրունու, իշխանությունները հայությանը դիտում էին որպես անվստահելի, հակակառավարական տարր: Կովկասյան բարձր իշխանությունները և հատկապես զինվորականությունը այն կարծիքի էին, որ եթե հայերը չլինեին, ապա Կովկասը հանգիստ կմնար: Նրանց համոզմամբ վրաց բնակչության հակացարական տրամադրությունները նույնպես հետևանք էին հայերի սադրանքների [1]:

Ինչու՞ էին իշխանություններն ավելի վստահում ու պաշտպանում մահմեդականությանը և ոչ հայությանը: Վ. Արծրունու համոզմամբ դա պայմանավորված էր թուրք տարրի խավարամտությամբ ու վայրենությամբ: Եթե թուրք տարրը այդքան խավարամիտ ու վայրենի չլիներ, ապա իշխանություններին չէր հաջողվի Կովկասի հայ և թուրք բնակչության մեջ խորացնել զինված բախումները [2]:

Կովկասի ազգաբնակչության նկատմամբ ցարիզմը վարում էր ոչ միանշանակ, տարաբնույթ քաղաքականություն: Քանի որ խավարամիտ մահմեդականությունը հեռու էր հեղափոխական տրամադրությունից և կայսրության համար վտանգ չէր ներկայացնում, ուստի իշխանությունների վերաբերմունքը նրա նկատմամբ ավելի մեղմ էր: Դրան հակառակ Վրաստանում, հատկապես Գուրիայի շրջանում, հեղափոխական տրամադրությունները խեղդելու նպատակով իշխանությունները զորքի ու ոստիկանական ուժերի միջոցով դիմել են ծայրահեղ միջոցների՝ սպանությունների և դաժան բռնությունների:

Հայ բնակչությանը ներքաշելով ազգամիջյան պատերազմի մեջ, իշխանությունները հաշվարկել էին, որ հայությունն ու հայ հեղափոխական կազմակերպությունները դեպքերի թելադրանքով անկասկած կգբաղվեն ինքնապաշտպանության կազմակերպմամբ և ժամանակ ու հնարավորություն չէին ունենա ներքաշվելու հեղափոխական շարժման մեջ [3]:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծությանն ու գնահատմանը Դաշնակցությունը պաշտոնապես անդրադարձել է 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում կայացած ՀՅԴ Ռայոնական ժողովում: Այդ ժամանակ ընդհարումներն արդեն մի քանի ամիս է, ինչ շարունակվում էին: Դաշնակցությունը պիտի անհրաժեշտաբար քննարկեր ու արժևորեր բոլոր այն էական գործոնները, որոնք պատճառ հանդիսացան հայ-թուրքական ընդհարումների բռնկմանը ու ըստ այդմ կայացներ կշռադատված որոշումներ: Ռայոնական ժողովում այս հարցի քննարկման ժամանակ ժողովականները ներկայացրել են մի շարք կարծիքներ և որպես ընդհանրացնող, պաշտոնական տեսակետ արձանագրվել է հետևյալ ձևակերպումը. «1. Կառավարութեան պրովակացիան յանուն ընդհանուր պետական շահերի, հայերին որպէս յեղափոխական ժողովուրդ ընդունելով՝ նրանց թափը կոտրելու համար ռուս կառաւարութիւնը աշխատում է առաջ հանել թուրք խուժանին: Այսպիսի կրիտիկական մոմենտում,

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 261, գ. 8, էջ 3-4:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Ռուսաստանի ընդհանուր յեղափոխութեան. մանաւանդ կովկասեան յեղափոխութեան ոյժը թուլացնելու համար թուրք-հայկական խռովութիւնները միայն միջոց են:

2. Համիսլամիզմը. որ ծնունդ է առել Եըլդըզից եւ Կովկասում ղեկավարում է մի քանի ազդեցիկ մարդկանցով:

3. Թուրք խուժանի թալանի ախորժակը:

4. ...թուրքերի քաղաքականութիւնը-որտեղ ուժեղ են՝ յարձակուել. իսկ որտեղ իրենք թոյլ են՝ համերաշխութեան մասին խօսել»[1]:

Ընդհանրացնելով. կարելի է հաստատապես պնդել. որ հայ-թուրքական ընդհարումների պատճառա-հետեւանքային էական նշանակութիւն ունեցող կապերի ու նախադրյալների ուսումնասիրութիւնն ապացուցում է. որ Անդրկովկասում ծավալված ազգամիջյան պատերազմը նախնառաջ հետեւանք է ցարիզմի քաղաքականության:

Կովկասում ցարական իշխանությունները օգտագործեցին ազգային. տնտեսական ու կրոնական հակասությունները և դրանք հասցրին ազգամիջյան ջարդերի: Իշխանությունների հովանավորությունից գոտեպնդված. մահմեդական զինյալ հրոսակախմբերը հայկական կոտորածներ են սանձազերծում Անդրկովկասում պանիսլամիզմի կենտրոն Բաքվում: Կոտորածներն արագորեն տարածվում են Երևանի նահանգ. Զանգեզուր. Արցախ. և հայաբնակ բոլոր շրջանների ու ընդհուպ մինչև Թիֆլիս:

Ինչպիսի՞ քննություն էր բռնելու ծանրագույն իրավիճակում հայտնված ցարական իշխանության տիրապետության տակ գտնվող կովկասահայությունը: Այդ օրհասական պահին ո՞վ պետք է օգնության ձեռք մեկներ կովկասահայությանը և կազմակերպեր ինքնապաշտպանությունը:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ (նա այդ ժամանակ զբաղեցնում էր Թիֆլիսի քաղաքապետի պաշտոնը-Հ.Գ.) «Երկու տարբեր ուժեր զբաղած էին հայ ժողովրդի պաշտպանութեամբ: Մէկը գիւղացիութիւնն էր. ղեկավարութեամբ Դաշնակցութեան մարտիկներու. որոնք կռուի դաշտին մէջ դիմաց կանգնած էին թշնամի բանակին. իսկ միւսը՝ հոգեւորականութիւնը եւ քաղաքային գործիչները. որոնք իշխանութեան միջամտութիւնը կապահովէին հայերու պաշտպանութեան համար»[2]:

Հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունն աներկբա վկայում է. որ իրականում ընդհարումների ողջ ընթացքում գրեթե անհնարին է մատնանշել որևէ նշանակալի դեպք. երբ իշխանությունները. ոստիկանական ուժերն ու զորքը գործեին ի շահ կովկասահայության: Դրան հակառակ. բազմաթիվ են դեպքերը. երբ շնորհիվ ոստիկանության ու զորքի միջամտության. վերջնական ջախջախումից փրկվել են հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերը:

Կարելի է պնդել. որ Ալ. Խատիսյանի «...քաղաքային գործիչներ. որոնք իշխանութեան միջամտութիւնը կապահովէին հայերու պաշտպանութեան համար» արտահայտությունը. մեկ ու կես տարի տեղությամբ ընթացող հայ-թուրքական ընդհարումների ժամանակ գրեթե չի գործել:

Այդ նույն Ալ. Խատիսյանի խոստովանությամբ «...ցարական իշխանութիւնը թուրքերի կողմն է անցած: Թուրքերը կրցած էին կաշառել շարք մը պաշտօնեաներ: Մանր ոստիկանութեան մէջ կաշխատէին մեծ թիւով թուրքեր: Ռուս կառավարութեան աչքին. թուրքերը յեղափոխական տարր չէին. զոր պէտք է ոչնչացնել: Ընդհակառակը. անոնք կը համարուէին օժանդակիչ ուժ մը կառավարութեան կողքին՝ յեղափոխութիւնը զսպելու համար»[1]:

Հայ-թուրքական ընդհարումների մանրակրկիտ ուսումնասիրությունը հաստատում է. որ ի տարբերություն թուրք առաջնորդների ու մեծահարուստների. ցարական իշխանության տարբեր կառույցներում ծառայող հայ աստիճանավորներն ու պաշտոնյաները. ինչպես նաև դրամատերերը այնքան էլ ջանք ու եռանդ չեն գործադրել շահելու իշխանությունների համակրանքը և համապատասխան միջոցներ տրամադրել կազմակերպելու կովկասահայության ինքնապաշտպանությունը:

Ժողովրդի ինքնապաշտպանությունը պարտավոր էին կազմակերպել ու առաջնորդել միմիայն ազգային այն ուժերը, որոնք ունեին կազմակերպված կառույցներ. պայքարի փորձառություն: Իսկ բացի հայ ազգային-քաղաքական կուսակցություններից. օտարի գերիշխանության տակ գտնվող հայությունն այլ իրական առաջնորդող ուժեր չուներ և չէր կարող ունենալ:

Արմենականները. որոնք հիմնականում գործում էին Վասպուրականում. անդառնալի կորուստներ էին կրել 1896 թ. Վանի կոտորածների ժամանակ: Նրանք Անդրկովկասում գրեթե չեն գործել և չեն ունեցել իրենց կառույցները: Այդ պատճառով արմենականները կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում որևէ ղեկավարություն ունենալ չէին կարող: Մնում էին Հնչակյան կուսակցությունը և Դաշնակցությունը:

Պիտի նկատել. որ այդ ժամանակ հայ ազգային-հեղափոխական այդ երկու՝ Հնչակյան կուսակցությունը եւ հատկապես Հ.Յ. Դաշնակցությունը բավական ծանրակշիռ ու ազդեցիկ դիրք ունեին Անդրկովկասում:

Հնչակյան և Դաշնակցություն կուսակցություններին վերաբերող Կովկասի փոխարքայության ոստիկանական ծառայության կազմած փաստաթղթերից մեկի տվյալների համաձայն, այդ ժամանակ Կովկասում գործող քաղաքական կազմակերպությունների մեջ. իրենց դավանած ազգայնական որոշակի նպատակներով ու բացառիկ կազմով. առաջին տեղում էին «Հայ հեղափոխական Դաշ-

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 238:
[2] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 73:

[1] Նույն տեղում:

նակցություն» կամ «Հայ հեղափոխական միություն», տեղացիների լեզվով «Դաշնակցություն» եւ «Հնչակ» կուսակցությունները...»[1]:

Այդ նույն փաստաթղթում նշելով, որ նրանց նպատակը Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Թուրքիայի «բռնապետական լծից» հայության ազատագրումն է, ապա հայկական անկախ պետականության կազմավորումը, ոստիկանությունը տեղեկացնում է, որ հայ քաղաքական կազմակերպություններից առավել հզոր «Հայ հեղափոխական դաշնակցությունն է, որը գործում է ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, ինչպես նաև Թուրքիայի ու Պարսկաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում»[2]:

Իրոք, ՀՅԴ, որն այդ ժամանակահատվածում իր կառույցներով, շարքերում ընդգրկված անդամների թվաքանակով ու պայքարի փորձառությամբ առավել մարտունակն էր ու ազդեցիկը, բնականաբար, պիտի ստանձներ կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու դերը:

Հայ ազգային-քաղաքական կազմակերպությունները մինչ Կովկասում ծնունդ առած ազգամիջյան բախումները, գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով Արեւմտահայաստանի խնդիրների վրա, ընդհարումների առաջին օրերին հայտնվելով աննպաստ կացությունում, անպատրաստ գտնվեցին արժանի հակահարված տալու թշնամու գործողություններին:

Այդ իրողությունը 1907 թ. Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովում ունեցած իրենց զեկուցագրում խոստովանում են Սեքարեցի Սաքոն և Խանասորի Վարդանը. «...Դաշնակցութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել Կովկասահայ ազգաբնակչութեան զինման գործի վրայ, որովհետեւ նախ՝ մենք զբաղուած էինք եղել բացառապէս Թիւրքիայ-Հայաստանի գործերով եւ երկրորդ, չէինք կարող երեւակայել, թէ ռուս կառավարութիւնը կարող կլինէր այդքան յաջողութեամբ հայ-թրքական ընդհարում առաջ բերել...»[3]:

Եթե մինչ այդ ՀՅԴ կռվում էր մի ճակատում, ապա այժմ հարկադրված էր կռիվ մղելու երկու ճակատի վրա: Կովկասում ծավալվող դեպքերը միանշանակորեն մատնանշում էին, որ կռիվները բռնկվել էին ոչ թե պատահական ինչ-որ դիպվածների, այլ ազգային և հիմնարար այլ բնույթի հանգամանքների թելադրանքով: Իսկ ջարդերի սանձազերծողները եղել են շիա մահմեդականները, իսկ սյունիները չեզոք դիրք են գրավել:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում անդրադառնալով այդ հարցին՝ Ռոստոմը առանձնացնում է հետևյալ գործոնները. «1. Սիւնիները կը շարժուէին միայն այն ժամանակ, երբ քաղաքական մեջ բարդութիւն կը ծագէր, ինչպէս պատերազմը Տաճկաստանի հետ, եւ նրա շարժումը ուղղուած կը լինէր քրիստոնեաների դէմ, որոնց մէջ աւելի նուազ կը տուժէին հայերը քան ռուսները եւ վրացիները:

[1] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 261, գ. 8, էջ 1:

2. Սիւնիներն աւելի խորն են ատում ռուս կառավարութեան եւ այդ պատճառով դիրքութեամբ չեն ենթարկուի նրա պրովակացիային(գրգռութիւններին):

3. Սիւնիների մէջ չի նկատուում բուրժուազիայի զարգացումը, նրանք չեն կարող մրցակից հանդիսանալ հայ վաճառականներին, արհեստաւորներին...»[1]:

Հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ՀՅԴ վտանգված շրջաններ է ուղարկում բազմաթիվ գործիչների, առաջին հերթին բազմափորձ ֆիդայիների, որոնց առաջնորդությամբ հայաբնակ բոլոր շրջաններում կազմակերպվում են ինքնապաշտպանական մարտախմբեր:

Հայ-թուրքական բախումները առաջինը՝ փետրվարի 6-ին բռնկվում են Բաքվում, ապա տարածվում գրեթե բովանդակ հարավային Կովկասում:

«Բաքուն էր,-նշում է Զարեվանդը,- գործին նախաձեռնողը, ղեկավարն ու մատակարարը: Հուսեինզադե Ալի բեյ (որ Պոլսո առաքելութենեն Կովկաս վերադարձել էր), Ահմեդ Աղաեւ եւ Թոփչիբաշեւ իրենց սպայակույտը հաստատած Բաքվի մեջ, թուրք նավթատերերու աջակցութեամբ կազմակերպում էին թուրք եւ շիա ազգաբնակչությունը, դուրս ձգելով, ոչ թուրք սուննիները: Եվ տրված ազդանշանի վրա սկսավ ջարդը Բաքվից...»[2]:

Հայերի դիմումը Բաքվի նահանգապետ Նակաշիձեին՝ զենք տրամադրելու կամ կոտորածը կանխելու նպատակով, մերժվում է, պատճառաբանելով՝ իբր, «քաղաքում զինուորական բաւարար ուժեր չկան»[3]:

Իրականում, ոայդ ժամանակ քաղաքում կային 6000 զինվորներ:

Բաքվի հայության կոտորածները, ըստ Բաքվի հայկական եկեղեցիներից մեկի ավագ քահանա Եղիշե Գեղամյանցի հավաստման, վաղօրոք ծրագրված էր անձամբ Կովկասի կառավարչապետի՝ Գոլիցինի կողմից:

«Գոլիցին,-գրում է Ե. Գեղամյանցը,-անմիջապէս Պետերբուրգ հրաւիրեց գեներալ Նակաշիձէին, որին նոր էր նշանակել Բագուի նահանգապետ եւ յատկապէս հայ-թուրքական կոտորած յառաջացնելու համար, հրահանգներ տուեց եւ վերադարձրեց Բագու արեան բաղնիսներն կազմակերպելու»[4]:

Գեներալ Նակաշիձեն ստանձնելով Բաքվի նահանգապետի պաշտոնը և ինչպես ցույց են տալիս Բաքու քաղաքում ու նահանգում տեղի ունեցած իրադարձությունները, մեծ եռանդով կատարում է Գոլիցինի հրամանը:

Ալ. Խատիսյանի հավաստմամբ «...նահանգապետ Նակաշիձէն իր քով կը կանչէ Բագուի ազդեցիկ թուրքերը եւ կը խնդրէ անոնցմէ օգնել իշխանութեան եւ քաղաւորին՝ պայքարելու երկրի թշնամի հայերու դէմ: Թուրքերը հասկացած էին ակնարկը եւ յարձակած հայերու վրա...»[5]:

Երկու օր մահմեդական զինված ամբոխը քաղաքի տարբեր մասերում անարգել ու անպատիժ սպանում էր անպաշտպան հայերին ու ավերում հայկական

[1] «Նիւթեր...», հ. Գ, էջ 95:
[2] Զարեւանդ, Միացեալ անկախ Թուրանիա, էջ 20:
[3] «Դրօշակ», 1905, թիւ 4, էջ 37:
[4] Գեղամեանց Ե., Մտորումներ, Թիֆլիս, 1907, էջ 80:
[5] Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 73:

բաղամասերը: Բաքվի հայության փրկության միակ միջոցը ինքնապաշտպանության կազմակերպումն էր:

Այդ ժամանակ Նիկոլ Դումանը գտնվում էր Բաքվի շրջաններից մեկում. Աբ. շակ Ղուկասյանի նավթահանքերի կառավարիչն էր: Փետրվարի 5-ին, ՀՅԴ Բաքվի ՀՅԴ (Ռևկանապատ) կենտր. կոմիտեի անդամ Աբ. Գյուլխանդանյանից ստանալով թուրքերի կողմից հայերին կոտորելու լուրը, Դումանը գալիս է Բաքու և ստանձնում քաղաքի հայության ինքնապաշտպանության ղեկը:

Թվում է, թե անհնարին է եղել Բաքվի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը: Քաղաքում հայերը որևէ մարտական ուժ չեն ունեցել: Բաքվում Դումանի տրամադրության տակ առաջին օրը կային ընդամենը վեց կռվողներ՝ Մկրտիչ Աղամալյանը (Սարհադ), Մարտիրոս Չարուխչյանը, Հմայակ Ջանփոլադյանը, Համբարձում Բալայանը (Համբի), Փոքրիկ Ղազարը (Ղազո), և Շամխեցի Իվանը:

Ընդամենը վեց մարտիկներից բաղկացած խմբով Դումանը կազմակերպում է Բաքվի հայության ինքնապաշտպանությունը ու փրկում նրան անխուսափելի կոտորածից [1]:

Տվյալ ժամանակաշրջանում Բաքվի հայության փրկության նշանակությունը չպետք է սահմանափակել միմիայն Բաքվի շրջանակներով: Եթե Բաքվում թուրքերին հաջողվեր իրականացնել հայերին ոչնչացնելու ծրագրերը, ապա անկասկած, զուտ բարոյահոգեբանական, հետևաբար նաև ռազմական առումով, ծանր կացության մեջ կհայտնվեր հարձակումների ենթարկվող մյուս շրջանների ողջ հայությունը: Անտարակույս ընդհարումների առաջին օրերին բոլորովին աննպաստ պայմաններում հայ մարտիկների նվաճած հաղթանակը, անկասկած, համազգային նշանակություն ունի:

Պիտի նկատել, որ Բաքվի հայության ինքնապաշտպանական մարտիկների դիմադրությունն ու զինված և վաղորդ կազմակերպված թուրք ամբոխի անհաջողությունը անակնկալ էր նաև իշխանությունների համար: Իշխանությունների համար դժվար էր ենթադրել, որ ՀՅԴ ի զորու կլիներ սահմանափակ ժամանակահատվածում մարտական ուժեր կենտրոնացնել վտանգված որևէ շրջանում և հաջողությամբ կազմակերպել ինքնապաշտպանությունը:

Վահան Արծրունու պնդմամբ «...կառավարությունն էլ սթափուեց հէնց Բաքուի փետրուարի կոտորածի միջոցին եւ տեսաւ, որ մի ինչ-որ կազմակերպութիւն կայ, որը կարող է ուժեղանալ եւ մի օր նոյնիսկ սպառնալիք դառնալ կառավարութեան համար» [2]:

Փետրվարյան արյունալի դեպքերն ավարտվեցին, սակայն հայությանը սպառնացող վտանգը իրականում ծավալվելու էր ավելի մեծ ուժգնությամբ: Անհրաժեշտ էր լրջորեն նախապատրաստվել՝ դիմագրավելու դժվարագույն փորձություններին: Բաքվում տեղի ունեցած փետրվարյան դեպքերն անշուշտ ուսանելի

[1] Մանրամասն տե՛ս Գեւորգյան Հ., Նիկոլ Դուման, Երեւան, 2002, էջ 140-188:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 261, գ. 8, էջ 2:

դաս էին, որից անհրաժեշտ հետևություններ պիտի անեին հայության ազատագրական պայքարի դեկն ստանձնած կուսակցությունները:

ՀՅԴ Բաքվի (Ռևկանապատ) կենտր. կոմիտեի համար այլևս գաղտնիք չէին կարող, որ գալիք մարտահրավերներին ու փորձություններին դիմագրավելու համար անհրաժեշտ էր զինել հայությանը, ձեռնամուխ լինել կազմակերպելու նրա ինքնապաշտպանությունը: Այդ մտահոգությամբ ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեն դիմում է կուսակցական վերադաս մարմնին՝ ՀՅԴ Արևելյան բյուրոյին, որը ըստ Աբ. Գյուլխանդանյանի «...միանգամայն համամիտ էր Բագուի Կ. Կոմիտէի հետ եւ հրամայական անհրաժեշտութիւն էր նկատում Անդրկովկասի հայութեան ինքնապաշտպանութիւնը» [1]:

Առաջին ընդհարումներից հետո Բաքու են գալիս Սիմոն Զավարյանն ու Արմեն Գարոն և տեղի կենտր. կոմիտեի անդամներ Աբ. Գյուլխանդանյանի, Հարություն Շահրիկյանի, Գրիգոր Աղաջանյանի, Լևոն Թադևոսյանի (Պապաշա) մասնակցությամբ գումարում շրջանային պատասխանատու ժողով [2]:

Խորհրդաժողովում որոշվում է Կենտրոնական կոմիտեներին կից ստեղծել Զինվորական մարմին, որը պետք է զբաղվեր միմիայն ինքնապաշտպանության կազմակերպման և մարտերը վարելու հետ կապված խնդիրներով:

Աբ. Գյուլխանդանյանի խոստովանությամբ, «Մասամբ Նիկոլի առաջարկով եւ գլխաւորապէս նրա պաշտպանութեամբ էր, որ առաջին անգամ լինելով Անդրկովկասում՝ Բագուում Կ. Կոմիտէին կից կազմուեց «Զինուորական Մարմին» իր յատուկ իրաւունքներով եւ պարտականութիւններով» [3]:

Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ պետք է ունենար նորաստեղծ Զինվորական մարմինը:

1. Համաձայն խորհրդաժողովում կայացած որոշման, Զինվորական մարմինը մինչև կռիվների սկսվելը պարտավոր էր հետևել հակառակորդի գործողություններին և զբաղվեր զենք ու զինամթերքի հայթայթման, մարտական խմբերի կազմավորման աշխատանքներով: Այդ ընթացքում Զինվորական մարմինը հաշվետու էր այդ տարածաշրջանի ՀՅԴ կենտր.կոմիտեին:

2. Կռիվների ժամանակ Զինվորական մարմինը օժտվելու էր առավելագույն ինքնուրույնությամբ և պատասխանատվությամբ: «Այդ ժամանակ Կ. Կոմիտէն դառնում էր Զինուորական Մարմնի աջակից՝ դնելով Զինուորական Մարմնի տրամադրութեան տակ իր բովանդակ ուժերը: Զինուորական Մարմինն էր, որ դառնում էր պատասխանատու կռիւների ամբողջ ընթացքին: Նա իրաւունք ունէր ընտրել հրամանատար, վարել բոլոր կռիւները մինչեւ հաշտութիւն: Հաշտութիւնը կայանալուց յետոյ, Զինուորական Մարմինը դառնում էր հաշուետու Կ. Կոմիտէի առաջ» [4]:

[1] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 11, էջ 155:
[2] Նույն տեղում, էջ 157:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 159:

Զինվորական մարմնի անդամ կարող էին դառնալ նաև այնպիսի անհատներ, որոնց անդամակցությունը ՀՅԴ պարտադիր չէր: Այդ ամենով հանդերձ, կուսակցության ղեկավար դերը, այնուամենայնիվ, Զինվորական մարմինների կազմում պահպանվելու էր, որովհետև.«... հայութեան գոյութիւնը պահանջում էր, որ ինքնապաշտպանութիւնը կրելով հանդերձ համազգային բնոյթ, գտնուէր ամբողջապէս ՀՅԴ ղեկավարութեան տակ»[1]:

Բաքվի Զինվորական մարմինը ունենալու էր բազմաթիվ պարտականություններ, որոնցից կարևորագույներն էին.

«Ա. Բագու քաղաքի, ինչպէս եւ Սեւ քաղաքի (նկատի ունի նավթահանքերի-Հ.Գ.) ու արուարձանների ինքնապաշտպանութեան խնդիրը:

Բ. Նաֆթաշրջանի ինքնապաշտպանութեան խնդիրը:

Գ. Ոսկանապատի Կ. Կոմիտէութեան շրջանի ինքնապաշտպանութեան խնդիրը (Քանի որ ՀՅԴ Բաքվի (Ոսկանապատ) Կ. Կոմիտեության շրջանակի մեջ մտնում էր ոչ միայն Բաքու քաղաքը, այլև նրա հարակից շրջանները, այդ պատճառով Զինվորական խորհրդի վրա է դրվում նաև գյուղական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը-Հ.Գ.):

Դ. Զէնքերի հայթայթում Բագուի եւ իր շրջանների համար:

Ե. Մարտական ուժերի և զենքերի փոխադրութիւն վտանգատոր վայրերի համար»[2]:

Նույն տարվա փետրվարի վերջերին ընտրվում են Զինվորական մարմնի առաջին անդամները, որոնք էին Դումանը, Աբ. Գյուլխանդանյանը և Հովհաննես Քաջազնունին, որն այդ ժամանակ դեռևս ՀՅԴ անդամ չէր: Հովհ. Քաջազնունուն Զինվորական մարմնի կազմում ընդգրկելը բոլորովին պատահական չէր:

«...կարեւոր դրպէներին,-վկայում է Աբ. Գյուլխանդանյանը,- Քաջազնունին, իբրեւ Զինուորական Մարմնի անդամ, պիտի կարողանար ազդել թէ՛ թաթարների եւ թէ՛ հայ բուրժուազիայի վրայ՝ ինքնապաշտպանութեան համար նիւթական հաստոյթները աւելացնելու համար...»[3]:

Քանի որ Զինվորական Մարմնի պարտականությունների մեջ էր մտնում նաև զենք ու զինամթերքի գնման և հայթայթման հույժ կարևոր գործը, ուստի նրա աշխատանքները թեթևացնելու ու ավելի կազմակերպված բնույթ հաղորդելու նպատակով Բաքվում կազմվում է հատուկ մարմին՝ Զինական Ֆոնդ (Զիֆոն), որի պարտականությունն էր «...արագացնել զինման գործը, հեշտացնել կուսակցական գնումները, նպաստել զանազան վայրերի համար զէնքի գնման գործին եւ թոյլ չտալ զանազան բախտախնդիր մարդոց կամ կասկածելի միջնորդների հրապարակ գալուն եւ անտեղյակ հասարակութիւնը շահագործելուն»[4]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 159:
[3] Նույն տեղում:
[4] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 11, էջ 158:

Զինական Ֆոնդը ունեցել է երկու գլխավոր կենտրոն՝ Թիֆլիս և Բաքու, որոնք զենք ու զինամթերք են մատակարարել ինքնապաշտպանական շրջաններին: Աբ. Գյուլխանդանյանի տեղեկացմամբ «Թիֆլիսը եւ Բագուն, նկատի ունենալով իրենց հաղորդակցութեան պայմանները եւ յարաբերութիւնները, որոշ աշխատանքի բաժանում առաջ բերեցին: Երեւանի նահանգը ամբողջապէս եւ Գանձակի նահանգի մի մասը, ինչպէս եւ Թիֆլիսի նահանգը ամբողջապէս ծանրանում էր Թիֆլիսի վրայ, իսկ Բագուի նահանգը ամբողջապէս եւ Գանձակի նահանգի մեծ մասը՝ Բագուի վրայ»[1]:

Ժողովում որոշվում է հայաբնակ բոլոր գավառները բաժանել առանձին ինքնապաշտպանական շրջանների, իսկ Նիկոլ Դումանին հանձնարարվում է ամենաընդարձակ ու պատասխանատու Երևանի նահանգի, ինչպես նաև Զանգեզուրի, Ղազախ-Շամշադին-Իջևանի շրջանների ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատարությունը:

[1] Նույն տեղում:

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. 1. Ինքնապաշտպանական մարտերը Երևան քաղաքում

Երեւանի նահանգի, Զանգեզուրի և Ղազախ-Շամշադին-Իջեւանի շրջանների ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատարությունը Նիկոլ Դումանին վստահելը, ինչն ապացուցեց ժամանակը, ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի կենտրոնական Զիվորական Մարմնի կողմից համակողմանիորեն կշռադատված էր ու հիմնավորված:

Նախ, Երևանի նահանգում ի տարբերություն կովկասյան փոխարքայության կազմում գտնվող մյուս խառը բնակչություն ունեցող նահանգների, հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը: Այսինքն, Երևանի նահանգը կովկասահայության կենտրոնն էր, առավել կարևորագույն նշանակություն ունեցող բնակավայրը:

Այդ ժամանակ, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, Կովկասում բնակվում էին 1.130.000 հայեր, որից 434.000-ը ապրում էր Երևանի, 294.000-ը՝ Գանձակի, 219.000-ը՝ Թիֆլիսի, 73.000-ը՝ Կարսի, 50.000-ը՝ Բաքվի նահանգներում, 14.000-ը՝ Բաթումիի շրջանում, իսկ 46-ը՝ մնացյալ նահանգներում:

Երևանի նահանգում կար 1301 գյուղ, որից հայաբնակ էր 342-ը: Ի տարբերություն թուրքերով ու այլազգիներով բնակեցած գյուղերի, հայկական գյուղերը ավելի բազմամարդ էին և զուտ տնտեսական առումով ավելի հարուստ [1]:

Ըստ «Մշակ» օրաթերթի տվյալների, Երևանի նահանգում, համաձայն 1902 թ. պաշտոնական վիճակագրության, բնակվում էր 916.496 մարդ, որից՝ 508.358-ը՝ հայ (55.5%), 341.310-ը՝ թուրք (37%), իսկ 66.828-ը՝ ուրիշ ազգի (7.3%) [2]:

Իսկ ըստ «Кавказкий календарь на 1905 год»-ի տվյալների, համաձայն 1897 թ. մարդահամարի, Երևանի նահանգը ուներ 829.000 բնակիչ, որից 434.000-ը հայեր էին, 352.000-ը թուրքեր [3]:

Բոլոր տվյալները վկայում են, որ, իրոք, 23.000 քառակուսի վերստ (մեկ վերստը հավասար է 1066, 8 մ.) տարածություն ունեցող Երևանի նահանգում հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը:

Երևանի նահանգը բաղկացած էր 7 գավառներից:

Համաձայն «Кавказкий календарь...»-ի, Երևանի նահանգի մասը կազմող գավառների բնակչությունը կազմում էր [4]:

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 43:
[2] Տե՛ս «Մշակ», 1905, 15 լուլիս:
[3] Տե՛ս Кавказкий календарь на 1905 год, 3 отд. стр. 48-49:
[4] Տե՛ս նույն տեղում:

գավառներ	բնակչության ընդհանուր թիվը	հայեր	թուրքեր	այլազգի
Ալեքսանդրապոլ	165.000	137000	7.000	21.000
Նոր Բայազետ	122.000	81.000	38.00	3.000
Էջմիածին	124.000	76.000	45.00	3.000
Սուրմալու	89.00	27.000	55.000	7.000
Երևան	152.000	58.000	87.000	7.000
Շարուր-Դարալագյազ	76.000	21.000	55.000	----
Նախիջևան	101.000	34.000	65.000	2.000
Ընդամենը	829.000	434.000	352.000	43.000

Այդպիսի ընդարձակ շրջանի ու դրան գումարած նաև Զանգեզուր գավառի հարյուր հազարավոր հայությանը կարող էր հաջողությամբ առաջնորդել ու նրա ինքնապաշտպանությունը արդյունավետ կազմակերպել միայն այն գործիչը, որն օժտված էր կազմակերպական ու ռազմագիտական տաղանդով, կռիվներում ձեռք բերած փորձառությամբ և, իհարկե, անբասիր վարքով, ժողովրդի ու մարտական ուժերի շրջանում ունեցած հեղինակությամբ:

«... Երեւանի նահանգի,- գրում է Ղազար Քոչարյանը (Մեծ Ղազար կամ Քաչալ Ղազո),- զինուորական հրամանատարն էր Նիկոլ Դումանը... Դաշնակցութեան մէջ որպէս զինուորական տաղանդ, Նիկոլ Դումանը գրեթէ առաջին տեղը կը գրաւէր այդ ժամանակ: Եւ ճիշտ այդ պատճառով էր որ Հ.Յ.Դ. Բիւրօն անոր էր վստահած Երեւանի պաշտպանութիւնը» [1]:

2. Եթե թուրքական կողմը կարողանար հաղթանակ տանել Երևանի նահանգում ու կոտորեր հայ բնակչությանը, ապա նրա համար առավել դյուրին կլիներ իր հայաջինջ ծրագրերը իրականացնել նաև Կովկասի փոխարքայության այն նահանգներում, որտեղ հայությունը չէր կազմում բնակչության մեծամասնությունը::

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքական կողմը հեշտ հաղթանակ տանելու նպատակադրությամբ կիրառել է միևնույն մարտավարությունը գրեթե բոլոր նահանգներում և գավառներում: Թուրք առաջնորդները մեծապես կարևորել են նահանգների և գավառների կենտրոնը հանդիսացող բնակավայրերի նշանակությունը ու իրենց մարտական գլխավոր ուժերը նախևառաջ կենտրոնացրել են գրավելու հենց այդ բնակավայրերը:

[1] «Հայրենիք» ամս, 1934, թիւ 6, էջ 87:

Այս առումով. քանի ու Երևան քաղաքը նահանգի կենտրոնն էր. յուրօրինակ մայրաքաղաքը. այդ պատճառով ընդհարումների հենց առաջին օրերին թուրքական կողմը. նախահարձակ լինելով. ձգտել է վճռական գերակշռություն ձեռք բերել առաջին հերթին հենց Երևան քաղաքում:

Երևանն Ստաֆյան փոդոցով բաժանված էր երկու՝ հայկական ու թուրքական մասերի և այդ ժամանակ. ըստ «Кавказкий календарь на 1905 год»-ի տվյալների ուներ 29.000 բնակիչ. որից 13500-ը հայեր էին. 13.000 թուրքեր. իսկ 2500-ը այլազգիներ [1]:

Ընդհարումները Երևանում սկսվում են փետրվարի 19-ին և շարունակվում նաև հաջորդ օրը՝ 20-ին: Կովկասի փոխարքային ներկայացրած վերոհիշյալ գրությունում Կարապետ վարդապետը տեղեկացնում է. որ ինչպես ամենուրեք. այստեղ ևս թաթարներն են նախահարձակ եղել: Այդ օրը Երևանի շուկայում մի հարբած թաթար գնդակահարել է հայի: Թուրքի կրակոցը կարծես ազդանշան է ծառայել: Կրակոցից անմիջապես հետո հարյուրավոր զինված թուրքեր միաժամանակ. բոլոր կողմերից հարձակվել են հայերի վրա [2]:

Թուրքերը օգտվելով հայության անպատրաստ վիճակից. նախահարձակ են լինում և գնդակահարում մի քանի հայերի: Ինչպես վտանգված մյուս շրջաններում. Երևանում նույնպես հայությունը մատնվում է սարսափի ու խուճապի: Առաջին օրերին դրության լիիրավ տերը ամենուրեք թուրքերն էին: Զորքի և ոստիկանության միջամտությունը՝ ընդհարումները կանխելու և կարգ ու կանոն հաստատելու գործում. կրում էր սոսկ ձևական բնույթ:

«Սակաւաթիւ զօրքերի թափթփուկ մնացորդները.- վկայում է Ֆարհադը.- կառավարութիւնը բարեհաճում է ուղարկել սարսափի վայրը այն ժամանակ. երբ արդէն թիրք խուժանի բարբարոսութիւնը յագեցած է լինում եւ այլեւս ոչ կոտորելի մարդ է մնում. եւ ոչ էլ թալանելու ապրանք...» [3]:

Ըստ Վարդան վարդապետի տվյալների. հարձակման առաջին օրը տուժել են 20 հայեր. որոնցից սպանվել են վեցը. իսկ թուրքական կողմը ունեցել է մեկ սպանված և մեկ վիրավոր [4]:

Երևանում տեղի ունեցած փետրվարյան դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է. որ բուն քաղաքում հայկական կողմը թեև թուրքերի համեմատ ավելի շատ է տուժել. բայց ունեցել է որոշակի մարտական ուժեր. որոնք փորձել են դիմագրավել թուրք հրոսակախմբերի հարձակումները:

Ընդհարումների հենց առաջին իսկ օրերին Երևանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է ՀՅԴ ավագագույն անդամներից Սարգիս Օհանջանյանը (Ֆարհադ): Նա որպես ուսուցիչ Նիկոլ Դումանի. Հ. Արդությանի. Հովսեփ Դավթյանի ընկերակցությամբ աշխատել էր Թավրիզի Լիլավա քաղամասի հայկական դպրոցում և այդ տարիներին մասնակցել էր Դերիկի կռիվներին. Խանասորի արշավանքին և ուներ կռիվներ վարելու պատկառելի փորձ:

Նրա խոստովանությամբ ինքը դժկամությամբ է ստանձնել Երևանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը. քանի որ իր անհաշտ. ըմբոստ բնավորության պատճառով իր երկարամյա գործունեության ընթացքում միշտ խուսափել է պատասխանատու պաշտոններից: Նրա գնահատմամբ վերոհիշյալ հանգամանքների բերումով պատասխանատու պաշտոնները վեր էին իր կարողություններից. բայց նրա դիրքորոշումը կտրուկ փոխվում է. երբ հայտնի է դառնում. որ Երևանի նահանգում էին գործելու«...այնպիսի կորովի ընկերներ. ինչպիսիք էին Դաշնակցական Խեչօն. Նիգեցի Մաբէոսը (Մաբեոս Հովհաննիսյան-Ապարանի շրջանի Քուչակ գյուղի բնակիչ-Հ.Գ.). Մկրտիչ Աղամալյանը . Դրօն ու Մարտիկը եւ մի շարք Սասունցի հերոսներ» [1]:

Ս. Օհանջանյանին հատկապես ոգևորում է Երևանում զինվորական անվանի գործիչ. Դումանի մերձավորագույն զինակից Դաշնակցական Խեչոյի ներկայությունը: Ուշագրավ է Խեչոյին տրված նրա հետևյալ բնութագիրը. «Նա իր յեղափոխական կորովին փայլուն կերպով միացրել էր զարմանալի ընդունակութիւն իրեն հետ կապելու ամենայանդուգն ահաբեկիչներին: Նա գիտէր սանձել ամէն մի անտեղի ըմբոստութիւն ու մեծամտութիւն. որոնք անխուսափելի արատներ են տգէտ. բայց փայլուն գործերով յայտնի տեռորիստների: Միեւնոյն ժամանակ նա գիտէր ներշնչել զինուորական կարգապահութեան յատուկ յարգանքը դէպի մեծ-ընկերի հեղինակութիւնը...» [2]:

Երևանում հայկական կողմը ունեցել է աննշան մարտական ուժեր. չափազանց սակավաթիվ զենք ու զինամթերք: Իսկ դա նշանակում էր. որ հայերը ինչպես Բաքվում. այստեղ ևս գրեթե անպատրաստ էին հաջողությամբ դիմագրավելու թուրքերի հարձակումներին:

Ինչո՞ւ քաղաքում հայերը չունեին անհրաժեշտ քանակությամբ մարտական ուժեր. զենք ու զինամթերք: Ըստ Ս. Օհանջանյանի պարզաբանման՝ պատճառը նույն է. «Յայտնի է. որ մեր կազմակերպութիւնը. իր ռազմական - պատրաստութիւնները (հրացան. ատրճանակ. փամփուշտ. ռումբ. սրեր. եւ այլն) մթերում էր՝ յատկապես Տաճկա-Հայաստան ուղարկելու համար: Այդպիսի մի բացարձակ անսպասելի անակնկալի ո՞չ ոք չէր սպասում...» [3]:

Ս. Օհանջանյանի հավաստմամբ բախումների բռնկման պահին ՀՅԴ Երևանի (Մրգաստան) կենտր. կոմիտեն իր տրամադրության տակ ունեցել է ընդամենը քառասուն երեք հրացան. որոնց մեծ մասը եղել է անորակ: Պարզ է. որ այդ քանակությամբ. այն էլ անվորակ զենքերով հնարավոր չէր հուսալիորեն կազմակերպել ինքնապաշտպանությունը ու հակառակորդի հարձակման պարագայում ապահովել հայ բնակչության անվտանգությունը:

---

[1] Տե՛ս Кавказкий календарь на 1905 год, 3 отд. ст. 48-49:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, թ. 17:
[3] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, թ. 9:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, թ. 17:

[1] «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 77:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 78:

Այսուհանդերձ, ինչպե՞ս, ի՞նչ ուժերով պիտի կազմակերպվեին Երևանի ինքնապաշտպանությունը և թուրքերի հարձակման պարագայում ապահովվեին քաղաքի հայ բնակչության անվտանգությունը:

Համաձայն Ս. Օհանջանյանի վկայության, քաղաքի ինքնապաշտպանությունը ուժեղացնելու առավել հուսալի միջոց չգտնելով՝ նրանք կայացնում են տվյալ իրավիճակում բերևս միակ հնարավոր, բայց փոքր-ինչ տարօրինակ թվացող հետևյալ որոշումը. «Ամենից առաջ ի մի գումարեցինք քաղաքի բոլոր երիտասարդներին, որոնց մեջ պակաս չէին լոթիներ, գրպանահատներ, գողեր, միկիբանչիներ, զուռնաչիներ, մարդասպաններ: Այդ բոլորը անխտրապես վրիպումներ էին, որովհետև ապառնալի վտանգը մեր գլխի վրայ կանգնած՝ ընտրություն անելու հնարաորությունից զրկում էր, մանաւանդ, եթէ նկատի ունենանք այդ տականքների աննման ճարպկությունն ու յանդգնությունը»[1]:

Հարց է ծագում, իսկ այդ դեպքում ո՞ւր էին և ի՞նչ էին անում քաղաքի հայ բնակչության առավել ուսյալ և պարկեշտ տարրը, երբ նման ճակատագրական պահին, ի պաշտպանություն հայության Ս. Օհանջանյանի բնութագրմամբ, հանդես են գալիս տականքները: Այսուհանդերձ, Երևանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Ս. Օհանջանյանի թվարկած մարդկանցից կազմավորում է մարտական խմբեր և տեղաբաշխում քաղաքի տարբեր թաղերում: Բացի քաղաքի ռազմական կարևորագույն դիրքերում հերթապահող մարտախմբերից, կազմակերպվում են ատրճանակներով ու ռումբերով զինված բուսցիկ, շարժուն խմբեր, որոնք պիտի հսկեին խանութներն ու թուրքաբնակ թաղամասերին հարող փողոցները: Քանի որ վտանգն անխտրապես էր սպառնում նաև գյուղական բնակավայրերին, կազմակերպված մարտական խմբերի մի մասը ուղարկում են գյուղերը:

Այդ ժամանակ Երևանում եղել են նաև Հնչակյան մարտիկներ: Բարեբախտաբար, այս անգամ դաշնակցական և հնչակ մարտիկները գործել են միասնական ու համերաշխ: Երևանում Խնչոյի գլխավորած մարտախումբն ու հնչակ մարտիկները դիրքեր են գրավում քաղաքի գլխավոր փողոցներում, միմյանց հարևանությամբ և հետևում թուրքերի տեղաշարժերին[2]:

Հայ ինքնապաշտպանական ուժերը Երևանում թեև սակավաթիվ էին, բայց այնուամենայնիվ, կարողացել են պատասխան հակահարվածներ հասցնել թուրքերի ոտնձգություններին: Ավելին, համաձայն փոխարքային հասցեագրած գրության, Վարդան վարդապետը ներկայացնելով Երևանում թուրքերի հարձակման հետևանքով հայկական ու թուրքական կողմերի կորուստները՝ հայտնում է «Հաջորդ օրը թաթարները դարձյալ սկսում են հարձակում եւ առաջին կրակոցից նրանք արձակում են ոստիկանության տեղամասից: Առաջին ահազանգից հետո

[1] Նույն տեղում, էջ 92:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 47, գ. 3:

հայերը պաշտպանական դիրքից անցնում են հարձակման եւ փոնում թաթարներին հայկական բաղերից...»[1]:

Այդ հարձակման հետևանքով թուրքերն ավելի շատ կորուստներ են ունեցել, քան հայերը: Թշնամուն ապտակի մատնելու նպատակով, հայերը թուրքերի բաղերի վրա նաև ռումբեր են նետում: Նույն օրը հայտնվում է գորքը և քաղաքում հայտարարվում է ռազմական դրություն: Երևանում բռնկված զինված ընդհարումները նահանգապետի, պետական պաշտոնյաների ու հոգևորականների միջամտությամբ դադարեցվում են: Նահանգապետի հրամանով Երևանում խաղաղ իրավիճակը պահպանելու նպատակով գորքն ու ոստիկանությունը պարեկություն են սահմանում քաղաքի փողոցներում:

2. 2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ԳԱՎԱՌՈՒՄ

Երեւանի նահանգի գավառներում կռիվներն առաջին հերթին բռնկվում են Նախիջեւանում և Շարուրում, որտեղ ապրում էին մեծ թվով թուրքեր, իսկ իշխանությունը գտնվում էր տեղական թուրք խաների ու բեկերի ձեռքում:

Նախիջեւանի գավառի բնակչությունը, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, կազմում էր 101.000 մարդ, որից 64.000-ը՝ թուրքեր, 34.000 (35%)-ը՝ հայեր, իսկ 2000՝ այլազգիներ: Գավառում կային 170 գյուղեր: Հայաբնակ 60 գյուղերից 40-ը գտնվում էր Նախիջեւանի, իսկ 20-ը՝ Գողթան գավառամասում[2]:

Նախիջեւան քաղաքում հայ բնակչությունը կազմում էր ընդհանուր բնակչության 27.7%-ը, 2500 մարդ (500 ծուխ), որից 300-ը բնակվում էր Սուրբ Գևորգի, 100-ը Ամբար, իսկ մնացածները՝ Երեք Խորանի և Թազաբեգ թաղերում[3]:

Մինչև 1905թ. Մայիսի 12-ը Նախիջևան գավառում և քաղաքում հայ ու թուրք բնակչությունը պահպանել են խաղաղ իրավիճակը: Համաձայն «Մշակ»-ում տեղ գտած բոթակցությունների, խաղաղության պահպանման գործում նշանակալի ավանդ է ունեցել հոգևորականությունը, որի ներկայացուցիչները Բաքվի փետրվարյան զոհերի հիշատակին նվիրված եկեղեցիներում ու մզկիթներում կատարած հոգեհանգստի ժամանակ խաղաղության ու եղբայրության են կոչել հայ և թուրք բնակչությանը[4]:

[1] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, թ. 17:
[2] Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 43:
[3] Նույն տեղում:
[4] «Մշակ», 1905, մարտի 5:

Հայ և թուրք հոգևորականները խաղաղություն ու եղբայրություն քարոզելու նպատակով շրջել են նաև գյուղեր. այդ մասին հեռագրում են Թիֆլիս, Բաքուում, Երևան, Դանձակ, Շուշի և այլ քաղաքներ[1]:

Չնայած այն հանգամանքին, որ թուրք պարագլուխներն ու հոգևորականությունը նույնպես որոշակի ջանքեր են գործադրել բախումներ թույլ չտալու համար, այնուհանդերձ հնարավոր չէր քաղաքում և գավառում տեսականորեն պահպանել խաղաղ իրավիճակը:

Համաձայն թուրք պարագլուխների ծրագրերի, Նախիջևանի տարածքը ամբողջովին պետք է մաքրվեր հայ բնակչությունից և այն հայտարարվեր անկախ: Մինչև ընդհարումների սանձազերծումը Պոլսից եկած հատուկ գործակալների ջանքերով, Բաքվում հաստատվում է պանիսլամիստների կազմակերպություն, որը «...դրդում է Մսքուի եւ Նախիջեւանի խաներին միանալ իր հետ, պարգեւով նրանց առաջ յոյսը՝ վերստին գրաւելու Նախիջեւանի խանութիւնը եւ անկախութիւն ձեռք բերելու»:

Այդ կազմակերպությունը տարիների ընթացքում ոչ միայն հաջողությամբ զբաղվում էր մահմեդականության շրջանում պանիսլամիզմի գաղափարների քարոզչությամբ, այլև զենքի կուտակման եւ տեղափոխման գործով:

Իսկ ի՞նչ էր անում հայկական կողմը: Բաքվի փետրվարյան դեպքերը թելադրում էին, որ հայկական կողմը և հատկապես տեղի ՀՅԴ կառույցները պետք է անհրաժեշտ հետևություններ կատարեին ու լրջորեն պատրաստվեին ինքնապաշտպանության: Նախիջևան գավառում և քաղաքում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է, որ հայկական կողմն ու ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի կառուցները իրականում թեև որոշակի քայլեր ձեռնարկել են ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, բայց դրանք բացարձակապես անբավարար են եղել ժողովրդին զինելու ու նրա անվտանգությունը ապահովելու համար:

Ի՞նչն էր պատճառը հայկական կողմի, առաջին հերթին ՀՅԴ տեղի կառույցների, թույլ պատրաստվածության:

Համաձայն 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում տեղի ունեցած ՀՅԴ Ռայոնական ժողովի տվյալների «Նախիջեւանում կոտորածներից առաջ կազմակերպութիւն համարեա չկար, միայն քաղաքում կար: Ամբողջ գաւառում հազիւ 50 կտոր զէնք լինէր: Հայերը, որ բնակչութեան 35-40% էին, խմբուած չէին եւ կարող էին միայն պաշտպանուել, բայց ոչ յարձակուել»[2]:

Պահպանվել են Նախիջևանում տեղի ունեցած ընդհարումների մանրամասները պատմող ՀՅԴ Արևելյան բյուրոյին ներկայացրած ՀՅԴ Նախիջևանի (Քարաբերդ) կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջևանի գաւառի աղէտների» և «Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը» խորագրերը կրող տեղեկագրերը, որոնցում նշվում են նաև ինքնապաշտպանության թույլ կազմակերպվածության պատճառները: Համաձայն այդ տեղեկագրի, Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն Բաքվի փետրվարյան դեպքերից հետո կանխատեսելով նախիջեւանահայությանը սպառնացող վերահաս վտանգը, ժողովրդին զինելու նպատակով կազմակերպել է դրամահավաք[1]:

«Ժողովուրդը,- նշվում է տեղեկագրում,-լիառատ տալիս էր որքան կարողանում էր: Նա բոլորովին հաւատացած էր, որ յեղափոխութիւնն ամենակարող է, մի խօսքով կարող է փոքորիկը խաղաղացնել...»[2]:

Ըստ նույն տեղեկագրի, հեղինակների խոստովանության, թեպետ իրենք կարողացել էին դրամահավաքի շնորհիվ զգալի գումար հանգանակել, բայց չէին հասցրել զենք ու զինամթերք գնել ու զինել ժողովրդին: ՀՅԴ Քարաբերդի կոմիտեն, բնականաբար, չի հասցրել կազմավորել նաև անհրաժեշտ ինքնապաշտպանական մարտական խմբեր, որոնք վտանգի պահին ի զորու լինեին դիմագրավել թշնամու հարձակումները[3]:

ՀՅԴ Խորհուրդն արդեն ընդունել էր «Կովկասեան նախագիծ»-ը և ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի զեկուցագրի խոստովանությամբ իրենք առավելապես նախանձախնդիր էին «զարգացնելու մեր յեղափոխական գործունէութիւնը », որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պայքար ցարական իշխանության դեմ: ՀՅԴ կառույցները իրենց ուշադրությունը բևեռել են ոչ թե ինքնապաշտպանության կազմակերպման, այլ քաղաքական պայքարի խնդիրների վրա «...միանգամայն անպատրաստ գտնուեցին այդ նոր կռուի մէջ, որը հայութեան լինելու եւ չլինելու հարցն էր դրել...»[4]:

Նախիջևանում, ինչպես արդեն նշվել է, իշխանությունը պատկանում էր ավատատեր խաներին, որոնք միավորվելով ստեղծել էին իրենց շահերն արտահայտող յուրօրինակ կուսակցություն(խաների կուսակցություն)[5]:

Այդ կուսակցությանը զուգահեռ, Նախիջևանում գործում էր Եվրոպայում ուսանած, մասնագիտությամբ իրավաբան, Նախիջևանի թուրք բնակչության մեջ մեծ հեղինակություն վայելող Ասար-Աղա Կինգիրլինսկու հիմնած կուսակցությունը: Ըստ ՀՅԴ Նախիջևանի (Քարաբերդ) կոմիտեի տեղեկագրի, Կինգիրլինսկին ու նրա հիմնած կուսակցության անդամները մեծ աշխատանք են ծավալել թուրք բնակչության մեջ տարածելու համախալամական գաղափարներ:

«Պրոպագանդը,-նշում է տեղեկագիրը,-առաջ է տարում մեծ յաջողութեամբ, կազմակերպում է քաղաքը, ինչպէս եւ գիւղեր: Ծրագրի էական կէտերից մէկն էլ լինում է, միացած Կովկասի բոլոր ազգութիւնների հետ, կուել

[1] Տե՛ս նույն տեղում, ապրիլի 12:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 295, գ. 3, էջ 6:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, գ 3, էջ 1:

Ռուսաց կառավարութեան դէմ եւ յաջողութեան դէպքում Կովկասում ունենալ Կովկասեան Պարսկաստան»[1]:

«Նորին կայսերական մեծութեան փոխարքա. կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին» ներկայացրած զեկուցագրում Երեւանի նահանգի հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը փոխարքային տեղեկացնում է. որ բաթարները միավորվելով համապատասխանի դրոշի ներքո. նպատակադրված են օգտագործել ընձեռված նպաստաւոր հնարավորությունը և դնչացնել երկրամասի. այն է՝ Կովկասի քրիստոնյա բնակչությանը[2]:

«Այդ շարժման գլուխը.- հայտնում է Կարապետ վարդապետը.-Երեւանի նահանգում կանգնած է Նախիջեւանի բնակիչ. պահեստի սպա Մահմեդ-Ղուլի-բեկ Կինգիրլինսկին: Նրա եղբայրն է հիշատակուած Ասադ-աղան. որը գլխավորում էր Նախիջեւանի կոտորածը եւ անկասկած իր կարեւոր դերակատարութիւնն է ունեցել երկու ազգերի միջեւ երկպառագութեան ու թշնամանքի սերմանման եւ արմատաւորման գործում»[3]:

Կինգիրլինսկու կուսակցության քարոզչության դեմ գործում է տեղական աչքի ընկնող խաների կուսակցությունը. որի նպատակը ըստ էության նույնն էր. բայց հետևյալ ուղղվածությամբ.«Հայ տարրը հարավային Կովկասում տիրապետող ոյժ է հանդիսանում կուլտուրապէս եւ նյութապէս. հարկաւոր է ամենից առաջ գցել հայերին եւ ապա ունենալով ընդհանուր Երեւանեան խանութիւն. ամեն միջոցներով կուել Ռուսաստանի դէմ»[4]:

Խաների կուսակցությունը. ավելի մոտ գտնվելով ժողովրդին և տիրապետելով մեծ հարստության. ավելի գերիշխող դիրք է ունեցել: Հայկական կոտորածներ սանձազերծելու պահանջով խաների կուսակցությունը բազմիցս դիմել է Կինգիրլինսկուն. բայց յուրաքանչյուր անգամ նա մերժել է՝ պատճառաբանելով. « Հայկական ջարդը վաղաժամ է...»[5]:

Հակառակորդի համաձայնությունը ստանալու նպատակով խաների կուսակցությունը կազմակերպում է Կինգիրլինկու ազգականների սպանությունը եւ մեղքը բարդում հայերի վրա: Հաշվարկը շատ ճիշտ էր: Այդ սպանությունների թելադրանքով երկու կուսակցությունները միավորվում են: Կինգիրլինսկու ազգականների սպանությունից հետո իրավիճակը քաղաքում խիստ կերպով լարվում է: Հայ վաճառականները զգուշանալով թուրքերի վրեժխնդրությունից. փակում են խանութները. իսկ թուրքերը սկսում են եռանդուն կերպով պատրաստություններ տեսնել: Թուրքական կողմի պատրաստություններն ու քաղաքում և գավառում տիրող լարված կացությունը արդեն մատնանշում էին. որ թուրքերը շատ շուտով նախահարձակ կլինեն. ու կսկսվի հայերի ջարդը: Ի՞նչ պետք է արվեր: Ժողովուրդը

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, թ. 18:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 2:

պատրաստ չէր ինքնապաշտպանության. իսկ ՀՅԴ Նախիջևանի կոմիտեն չուներ անհրաժեշտ ուժեր դիմագրավելու թուրք հրոսակների հարձակումներին:

ՀՅԴ Նախիջևանի (Քարաբերդ) կոմիտեն հաշվի առնելով թուրքերի կողմից մոտալուտ հարձակման անխուսափելիությունը. դիմում է ՀՅԴ Երևանի (Մրգաստան) կենտր. կոմիտեին. հույս ունենալով. որ նրանից կստանա ռազմական անհրաժեշտ օգնություն:

Պարզվում է. որ Երևանում նույնպես չկային բավար քանակությամբ մարտական ուժեր: Քաղաքում գտնվում էր Դաշնակցական Խեչոյի գլխավորած փոքրաքանակ մարտական խումբը՝ փաստորեն միակ մարտական ուժն էր. որը պիտի ապահովեր Երևանի ինքնապաշտպանությունը: Քաղաքում. բացի Դաշնակցական Խեչոյի մարտախմբից գործում էր նաև Երևանի ռուսական գիմնազիայի աշակերտների նախաձեռնությամբ կազմավորված «Բորեաս» մարտական խումբը: ՀՅԴ Երևանի (Մրգաստան) կենտր. կոմիտեի համար այլ- ընտրանք չկար: Կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Գալուստ Ալոյանը ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի դիմումը բավարարելու համար դիմում է հենց «Բորեաս» մարտախմբի անդամներին:

«Մեր խումբը.-գրում է «Բորեաս» մարտախմբի անդամ Սեդրակ Ջալալյանը (Սեթո. Ապարանի շրջանի Քասախ գյուղից-Հ. Գ.).-որ սեփական զէնքերով ու ռազմամթերքով յագեցած էր ու միշտ պատրաստ կը սպասէր Երկիր անցնելու արտօնութեան. այդ օրերում միակ խումբն էր. որ կրնար անմիջապէս հասնել Նախիջեւանի օգնութեան: Ու մենք Ալոյեանին յայտնեցինք մեկնելու մեր պատրաստակամութիւնը»[1]:

«Բորեաս» մարտական խումբը Նախիջևան պիտի առաջնորդեր Դաշնակցական Խեչոն. բայց քանի որ ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ Ս. Օհանջանյանի զինակցությամբ նրան էր հանձնարարվում Երևանի ինքնապաշտպանության ղեկը. ուստի «Բորեաս» մարտախումբը մեկնում է առանց Խեչոյի և մայիսի 11-ի երեկոյան հասնում է Նախիջևան[2]:

Ինչպիսի՞ կացություն էր տիրում Նախիջևանում:

ՀՅԴ Քարաբերդի կոմիտեության և «Բորեաս» մարտախմբի անդամ Ս. Ջալալյանի վկայությունները հավաստում են. որ այդ պահին նրանց հրամանատարության տակ գտնվող սահմանափակ մարտական ուժերով չափազանց դժվար էր. գրեթե անհնարին կազմակերպել նախիջևանահայության ինքնապաշտպանությունն ու ապահովել նրա անվտանգությունը: Բայց այլ ընտրանք գոյություն չուներ: Անհրաժեշտ էր ընտրել ճիշտ. կշռադատված մարտավարություն և եղած մարտական ուժերը համապատասխան դիրքերում տեղաբաշխելով՝ թույլ չտալ. խոչընդոտել թուրք հրոսակախմբերին ներխուժելու քաղաքի հայկական թաղամասերը[3]:

[1] Կարո Գեւորգեան, Ամէնուն տարեգիրքը, 1956, էջ 149:
[2] Նույն տեղում, էջ 150:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 295, գ. 2: Կարո Գեւորգեան, Ամէնուն տարեգիրքը, 1956, էջ 148-150:

Ինքնապաշտպանության կազմակերպման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով տեղի է ունեցել ՀՅԴ Քարաբերդի կոմիտեության ժողովը:

Քանի որ մարտական ուժերը ավելի քան սահմանափակ էին, ուստի ժողովականները որոշում են. «Միանգամայն վստահ լինելով, որ խանութները ոչ մի յարձակման չեն ենթարկուելու, կռիւ տեղի է ունենալու թաղերում, որոշեցինք մեր ունեցած առանց այն էլ սակաւ ուժերը կենտրոնացնել թաղերում» [1]:

Համաձայն ժողովի որոշման, նախատեսվում էր թաղերում ունենալ 11 դիրք, իսկ յուրաքանչյուր դիրքում երկուական հրացանավորներ ու ատրճանակավորներ: Այդ ժողովը կայացել է առանց «Բորեաս» մարտական խմբի անդամների մասնակցության: Նույն նպատակով մայիսի 11-ի երեկոյան տեղի է ունենում ՀՅԴ Քարաբերդի կոմիտեության հերթական ժողովը, այս անգամ արդեն «Բորեաս» մարտական խմբի անդամների մասնակցությամբ, որոնք թեև նոր էին հանգրվանել քաղաքում, բայց արդեն որոշակի պատկերացում ունեին այնտեղ տիրող իրավիճակի, հայկական կողմի մարտական ուժերի քանակի ու հնարավորությունների վերաբերյալ:

«Մենք,-գրում է Ս. Ջալալյանը,-Կոմիտէէն պահանջեցինք քաղաքին յատկագիծը, ճշտելու համար հայերու եւ թուրքերու բնակավայրերը...Ուզեցինք նաև ցուցակը իրենց ունեցած զէնքերուն և մարտունակ երիտասարդներուն: Ասնոք ըսին, թէ հայկական խանութներու մեծագոյն մասը կը գտնուի թուրքաց թաղում եւ այդ խանութներու պաշտպանութեան մասին մտածելն իսկ աւելորդ է» [2]:

Ժողովում կրկին ճշտվում են մարտական խմբերի պաշտպանական դիրքերը և թուրքերի հարձակման դեպքում սակավաթիվ ուժերով հայ բնակչության անվտանգությունն ապահովելու հնարավոր տարբերակները: Հավատ ընծայելով իշխանության ներկայացուցիչների ու թուրք պարագլուխների խոստումներին ժողովականները վերջնականապես որոշում են բոլորովին անպաշտպան թողնել քաղաքային շուկան և այնտեղ գտնվող հայերի վաճառատները: Ավելին, հայ վաճառականները իրենց բնակարաններում գտնվող թանկարժեք ապրանքները, ինչպես նաև դրամն ու ոսկյա զարդերը տեղափոխում և թաքցնում են խանութների պահեստներում ու դրամարկղներում [3]:

Իսկ այդ ամենին չէին կարող տեղյակ չլինել հայերի, հատկապես վաճառականների յուրաքանչյուր քայլին ակնդետ հետևող թուրքերն ու, իհարկե, իշխանության ներկայացուցիչները:

Ընդամենը մի քանի ժամ անց Նախիջևան քաղաքում ծավալվող դեպքերը ցույց են տալիս, որ հայկական կողմի հաշվարկներն ու մշակած մարտավարությունն այնքան էլ կշռադատված չէին:

Քաղաքում դեպքերը զարգանում են սրընթաց ու հայ բնակչության համար վատթարագույն ուղղվածությամբ: Մինչ հարձակում սկսելը, մայիսի 11-ի առավոտյան, Երևանի փոխնախահանգապետն ու Նախիջևանի քաղաքագլուխ Ջաֆար-Կուլի Խանը մի խումբ պետական պաշտոնյաների ու խանների ուղեկցությամբ շրջում են քաղաքում, այցելում են հայ վաճառականներին և «...օձի լեզուով համոզեցին հայ վաճառականներին, որ փոթորիկը անցել է, ու անպատուաբեր է մեզ համար քաղաքիս այս դրութիւնը, խնդրում ենք վաղուանից բաց անել խանութները, մենք մեր գլխով պատասխանատու ենք...» [1]:

Հաջորդ օրը՝ մայիսի 12-ի առավոտյան պետական պաշտոնյաների նույն կազմը դարձյալ այցելում է հայ վաճառականներին և նրանց ուղարկում է խանութները բաց անելու: Հավատ ընծայելով Ջաֆար-Կուլի Խանի և պետական պաշտոնյաների երդմնիներին հայ վաճառականները բացում են խանութները: Թուրք ամբոխը կարծես հենց դրան էր սպասում: Խանութները բաց անելուց 25 րոպե անց, ժամը 9-ին, թուրք ամբոխը «Եա Ալի գոռգոռալով, հրացաններ, ռէվոլվերներ արձակելով չորս կողմից յարձակուեց շուկայի վրայ և սպանեց բոլոր այնտեղ գտնուող հայերին, շատ քչերին յաջողուեց մի կերպ ազատուիլ» սկսում է բռնություններն ու թալանը [2]:

Ըստ կռիվների մանրամասները պատմող վավերագրի, հարձակումից մի քանի ակնթարթ առաջ «Մինարէթի վրայ երեւաց սպիտակ շորեր հագած մոլլան, դա ազդանշանն էր: Այնուհետեւ մէջիտի եւ այլ տների վրայ թուրքերը դիրքերը թողնելով սկսեցին հրացանաձգութիւն հայերի վրայ, որոնք միանգամայն անպատրաստ ինքնապաշտպանութեան մէջ փակվում էին իրենց տներում» [3]:

Չհանդիպելով որևէ դիմադրության, թուրք զինված հրոսակախմբերը սպանում են իրենց ճանապարհին հանդիպած հայերին և ներխուժելով շուկա, անխնա կոտորում են վաճառատներում ու փողոցներում գտնվող հայ վաճառականներին և անցորդներերին: Այդ օրը քաղաքային շուկայում տեղի ունեցած սպանդից միայն մի քանի հոգու է հաջողվում փախչել ու ապաստանել հայկական թաղամասում:

Հայերի ու նրանց խանութների ու կրպակների վրա թուրք զինված ամբոխի հարձակման ժամանակ շուկայում և փողոցներում պարեկություն անող ոստիկանական ուժերը լուռ անտարբերությամբ դիտել են տեղի ունեցող իրադարձություններն ու որևէ քայլ չեն ձեռնարկել կանխելու կոտորածը:

Երեք օր շարունակ թուրք ամբոխը թալանել ու այրել է հայերի խանութներն ու շինությունները: Ընդամենը, թալանին մասնակցել են ոչ միայն Նախիջևան քաղաքի և գավառի, այլև տարբեր շրջաններից քաղաք ներխուժած թուրքերը, որոնք հայերից բռնազավթած ապրանքները տեղափոխելու նպատակով, իրենց հետ բերել էին սայլեր, գրաստներ և ուղտեր: Հարձակումներին մասնակցել են նաև դարբիններ, որոնք հատուկ գործիքներով կտրատում ու բացում էին երկաթյա դրամարկղները [4]:

---

[1] ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 2:
[2] Կարօ Գեւորգեան, Ամէնուն տարեգիրքը, 1956, էջ 149:
[3] ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 2:

[1] Նույն տեղում, գ. 3, էջ2-3:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ. 18:
[4] ՀՅԴ ԿԱ, թծ. 295, 11:

Ըստ տեղեկագրի, թուրքերը հայերի խանութներից թալանված «ապրանքը տանում էին երեք ճանապարհով. մեկը դեպի շրջակա գիւղերը, միւսը դեպի երկու պահեստները քաղաքի մէջ, այդ պահեստներից մեկն էլ բանից դուրս է գալիս, եղել է Ռահիմ խանի պալատը»[1]:

Եթե քաղաքի փողոցներում գտնվող ոստիկանական ուժերը լուռ անտարբերությամբ դիտել են թուրք զինված ամբոխի կողմից իրականացվող կոտորածը, ապա նույն պահին զորքը, որը կոչված էր նման պահերին կանխել ու թույլ չտալ հակաօրինական գործողություններ, առավել ևս զանգվածային սպանություններ, բռնություններ ու թալան, քաղաքի մերձակայքում զբաղված է եղել զորավարժությամբ: Երբ զորքի հրամանատարին տեղեկացնում են քաղաքում կատարվող սարսափելի դեպքերի, հայերի կոտորածի, զանգվածային թալանի մասին, նա հանգիստ պատասխանում է, որ «երբ զորավարժությունները վերջանայ, կվերադառնամ քաղաք»[2]:

Թեպետ զորքը, այնուամենայնիվ, վերադառնում է քաղաք, բայց միայն երեք ժամ անց է ներկայանում չուկա և հանգիստ դիտում, թե ինչպես են թուրք զինվոր խմբերը սպանում հայերին, թալանում ու հրդեհում հայերին պատկանող խանութներն ու այլ շինություններ: Ուշագրավն այն է, որ զորքը միջամտում և սկսում է քայլեր ձեռնարկել միայն այն ժամանակ, երբ չուկայում բռնկված հրդեհը տարածվելով հասնում է նաև թուրքերին պատկանող խանութներին: Շնորհիվ զինվորների ու ոստիկանների ցուցաբերած օգնության, թուրքերին պատկանող խանութներն ու կրպակները գրեթե ամբողջովին փրկվում և ոչ մի վնաս չեն կրում[3]:

Ռուս զինվորների և ոստիկանության այդօրինակ պահվածքն ամենևին պատահական չէր: Կոտորածի օրը, ճաշի ժամանակ Երևանի քաղաքագլուխ Մելիք-Աղամալովի ուղեկցությամբ Ռահիմ խանի ապարանքն է գալիս Երևանի նահանգի հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը: Մի քանի օր անցկացնելով քաղաքում և գյուղերում՝ Կարապետ վարդապետը զեկուցագիր է ներկայացնում «Նորին կայսերական մեծության փոխարքա, կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին», որտեղ մանրամասնորեն ներկայացնում է Նախիջևան քաղաքում և մի շարք գյուղերում տեղի ունեցած իրադարձությունները[4]:

Զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային հայտնում է, որ հայության նկատմամբ Նախիջևանի թաթարների որդեգրած վտանգավոր վերաբերմունքի մասին լուրերը իրեն են հասել Բաքվի փետրվարյան սարսափներից անմիջապես հետո: Լուրերը տեղում ճշտելու նպատակով Կարապետ վարդապետի խնդրանքով Աբաս-Ղուլի խանը Գարեգին վարդապետի ուղեկցությամբ Նախիջևան է ուղարկում իր որդիներից մեկին: «Նրանք գրում է Կարապետ վարդապետը,- մեծ հաջողությամբ կատարել են հանձնարարությունը: Բարեկամության մասին հայ և թաթար բնակչության կողմից արտահայտած հանդիսավոր խոստումները հիմք էին տալիս կարծելու, որ խաղաղ կարգավիճակը Նախիջևանում հաստատվել էր ընդմիշտ»[1]:

Այդ պատճառով Կարապետ վարդապետին մեծ զարմանք է պատճառել իրենց հասած Նախիջևանում մայիս ամսին կատարված դեպքերի լուրը: Ընդ որում, համաձայն մահմեդականների կողմից տարածվող լուրերի, քաղաքում անկարգությունները բռնկվել են հայի կողմից մայիսի 7-ին խորհրդավոր հանգամանքներում ինչ-որ մի թաթարի սպանության հետևանքով: Ի պատասխան իրենց արյունակցի սպանության, թաթարները օրը ցերեկով սպանում են մի հայի, որը որևէ առնչություն չի ունեցել նախորդ օրը կատարված սպանության հետ:

Հաջորդ օրը, երբ Նախիջևանից ստանում են թաթարների կողմից հայերի սպանությունը գուժող ևս մի նոր տեղեկություններ, նահանգապետը որոշում է Ջաֆար-Ղուլի խանի ուղեկցությամբ այնտեղ գործուղել փոխնահանգապետին՝ փոխգնդապետ Տարանովսկուն:

«Ես,-հայտնում է Կարապետ վարդապետը,-հասկանալով վտանգի մեծությունը, որոշեցի անձամբ մեկնել եւ խնդրեցի, որ ինձ հետ մեկնի նաեւ Երեւանի քաղաքագլուխ Մելիք-Աղամալովը»[2]:

Ականատես լինելով քաղաքում կատարվող սարսափազդու դեպքերին, նրանք շտապում են հանդիպել փոխնահանգապետի՝ Տարանովսկու հետ ու խնդրում են նրան որևէ միջոց ձեռնարկել դադարեցնելու կոտորածը: Ավելի քան տարօրինակ է եղել փոխնահանգապետի պատասխանը, որը տվյալ պահին իր ենթակայության տակ ունեցել է ոչ միայն ոստիկանական ուժեր, այլև զորք: Ի պատասխան Երևանի քաղաքագլխի խնդրանքի, փոխնահանգապետ Տարանովսկին պատասխանում է, որ «...ոչ մի ուժ չունի այդ անելու, հօ՞ չի կարող իր գլուխը դնել խփողների առաջ: Այդ ասելիս փոխ-նահանգապետը երգում էր մի ինչ-որ զվարդ երգ եւ մատները խաղացնում սեղանի վրայ, իբրեւ դաշնամուր խփելիս լինի...Կոտորածից ու թալանից յետոյ արդէն փոխ-նահանգապետը հեռագրում է. «...ձեռնարկել եմ բոլոր անհրաժեշտ միջոցները»: Փոխ-նահանգապետը ամենուրեք ասում էր, որ առաջինը սկսել են հայերը կրակ արձակել»[3]:

Բայց իրականում փոխնահանգապետ Տարանովսկին և ընդհանրապես որևէ պետական պաշտոնյա ոչ մի անհրաժեշտ քայլ չէր ձեռնարկել դադարեցնելու կոտորածն ու թալանը: Որպես վարձահատույց փոխնահանգապետի դրսեւորած թուրքամետ վերաբերմունքի, Նախիջեւանի խաները նրան են «նվիրել» հայերից բռնազավթած թանկարժեք ապրանքների մի մասը:

[1] Նույն տեղում, էջ 150:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92:

[1] Նույն տեղում, էջ 1:
[2] Նույն տեղում, էջ 2:
[3] Նույն տեղում, էջ 12:

Վերոհիշյալ տեղեկագիրը արձանագրելով այդ իրողությունը, նշում է. «...և փոխ-նահանգապետը հրաժեշտ տուեց խաներին ու հեռացաւ դէպի Երեւան նրայ յետեւից գնաց նաեւ մի ֆուրգոն ապրանքներով լի, իբրեւ ընծայ խանի կողմից: Հասկանալի է, թէ ինչ ընծաներ էին եւ ինչու համար» [1]:

Համաձայն տեղեկագրում տեղ գտած տվյալների, մայիսի 12-ից մինչև մայիսի 14-ը Նախիջևան քաղաքում տեղի ունեցած դեպքերի ժամանակ հայերի ունեցած նյութական կորուստները ունեցել են հետևյալ պատկերը. «Հայերի 195 խանութներից թալանուած էին 180 խանութ, կոտրատուած են եւ կողոպտուած 20 եկաբեայ դրամարկղ-պահարաններ: Այդ թալանից առաջացած վնասը հայ վաճառականներին հասցրած, հաւասար է 1.285.866 ռուբ. 12 կոպ., որ հաշուէլ է վաճառականներից կազմուած մի առանձին յանձնաժողով: Այդ կողոպտուած ապրանքներից մի մասը, մոտաւորապէս 10.000ռ. արժողութեամբ կառաւարութեան ձեռք առած միջոցների շնորհիւ գտնուել է թուրք խանութպանների մօտ: Մինչ օրս թալանող, կողոպտող և սպանող թիւրքերից ոչ ոք չի ձերբակալուել» [2]:

Թուրք ամբոխը, ինչպես արդեն նշվել է, առավելապես համակված է եղել ավարառության, հայի «հեքիաթային» հարստությանը տիրելու ձգտումներով: Այդ պատճառով հարձակման ժամանակ նրա ուշադրության կենտրոնում եղել են քաղաքային շուկան ու այնտեղ գտնվող հայերի վաճառատները, քանի որ «...համոզուած էին, որ հայերի հարստութիւնը այնտեղ էր գտնուում»:

Թալանի, ավարառության նկատմամբ թուրք ամբոխի դրսևորած անհագուրդ ծարավն ու ձգտումը ինչ-որ չափով նպաստել է, որպեսզի քաղաքի հայ փոքրաքանակ ինքնապաշտպանական ուժերն այդ օրը կարողանային հաջողությամբ դիմագրավել թշնամու հարձակումներին ու թույլ չտային թուրք հրոսակներին ներխուժելու հայկական թաղամասեր:

Նախիջևան քաղաքում մայիսի 12-ին տեղի ունեցած դեպքերի մանրամասները ներկայացնելիս հեղինակներն առավել մեծ ուշադրություն են դարձրել նկարագրելու հայկական ջարդերը, հայերի անպաշտպան և թշվառ վիճակն ու ինչպես նաև թուրք ամբոխի կատարած թալանը և դրա հետևանքով հայ բնակչության կրած նյութական կորուստները: Ճիշտ է, այդ օրը Նախիջևանում տեղի ունեցած դեպքերի հետևանքով մեծապես տուժել է հայկական կողմը, բայց, այնուամենայնիվ, հայ փոքրաքանակ մարտական ուժերը կարողացել են հերոսական դիմադրություն ցույց տալ և թույլ չեն տվել թուրք զինված ամբոխին ներխուժելու հայկական թաղեր:

Մայիսի 12-ին Նախիջևանում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքի հայկական թաղերը թուրքերի հարձակումներից պաշտպանելիս, առավելապես աչքի են ընկել «Բորեաս» մարտական խմբի անդամները, որոնք կռիվների ժամանակ դրսևորած իրենց վարպետությամբ ու քաջությամբ ոգեշնչել ու մարտի են առաջնորդել քաղաքի սակավաթիվ ինքնապաշտպանական ուժերին:

Նախիջևանի ինքնապաշտպանական ուժերի մղած կռիվները որոշակի մանրամասնությամբ ներկայացնում է «Բորեաս» մարտախմբի անդամ Սեդրակ Ջալալյանը: Եթե հիմք ընդունենք Նախիջևանի ինքնապաշտպանական ուժերի մղած կռիվների մասին պատմող Ս. Ջալալյանի հուշագրության իսկությունը, իսկ այլ վկայություններ չկան, ապա կարելի է աներկբա պնդել, որ այն, ինչ Նախիջևանում տեղի ունեցած մայիսյան կռիվների ժամանակ, կատարել է «Բորեաս» մարտական խումբը, վեր է որևէ գովասանքից:

ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի ներկայացրած տեղեկագրում հեղինակները նշում են, որ թեև թուրքերն առավել մեծ բազմությամբ հարձակվել են շուկայի ու հայերի վաճառատների վրա, այնուամենայիվ, մի քանի հրոսակախմբեր փորձել են ներխուժել հայկական թաղեր, բայց հանդիպելով հայ մարտիկների դիմադրությանը, դադարեցրել են հարձակումը:

Այդ նույն տեղեկագիրը թեև չի ներկայացնում կռիվների մանրամասները, այնուամենայնիվ, շեշտում է քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպման գործում և հատկապես կռիվներում «Բորեաս» մարտախմբի քաջարի մարտիկների ներդրած անգնահատելի ծառայությունը [1]:

Թուրք ամբոխը, որին գլխավորապես հետաքրքրում էր ավարառությունն ու թալանը, մարտադաշտում երբեք չէր կարող աչքի ընկնել իր կազմակերպվածությամբ ու մարտունակությամբ: Նրա մղած, Նիկոլ Դումանի դիպուկ արտահայտությամբ «Ամբոխային կռիվը», ինչպես ցույց էին տվել նախորդ մարտերը, կարելի էր վնասազերծել անգամ փոքրաքանակ ուժերով: «Բորեաս» մարտախմբի անդամները, որոնք Դումանի սաներն էին, քաջավարժ ու հրաշալի նշանառու մարտիկներ, տեղյակ էին թուրք ամբոխի մղած «Ամբոխային կռվի» էությանն ու յուրահատկությանը:

Նախիջևանում հանգրվանելու հենց առաջին իսկ օրը, տեսնելով քաղաքում տիրող ողբալի կացությունն ու հայ բնակչության խուճապային տրամադրությունը, նրանք աշխատել են ոգեշնչել տեղացիներին, բացատրելով թուրք ամբոխի մղած «Ամբոխային կռվի» թույլ կողմերը, ընդսմին շեշտելով, որ «...շատ լաւ պատրաստուած ռազմիկներ ենք, եկած ենք տեղական ուժերը ղեկավարելու եւ յուսահատելու ոչ մի պատճառ կայ... » [2]:

Թեպետ հայ ինքնապաշտպանական ուժերը ավելի քան սահմանափակ էին, բայց այլ ընտրանք չկար: Հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը, բորեասցիները որոշում են մարտախմբի վեց անդամների դիրքավորվել իրենց հանգրվանած շենքի դիմացում գտնվող երկու շենքերում եւ թիկունքից ու դիմահար տեղացող խաչաձև հարվածներով դիմագրավել թշնամու հարձակումները: Նրաք հույս են ունեցել նման մարտավարությամբ խուճապի

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 8-9:

[1] Նույն տեղում:
[2] Կարօ Գեւորգեան, Ամէնուն Տարեգիրքը, 1956, էջ 151:

մատնել ավարառության տենչով համակված թուրք ամբոխին ու թույլ չտալ նրան ներխուժելու հայկական թաղեր:

«...Մենք,-գրում է Ս. Ջալալյանը,-չգիտեինք, թէ տասը հոգով ինչպէ՞ս պիտի պաշտպանեինք քաղաքի մը բազմահազար կրաւորական բազմութիւնը: Կը պատկերացնեինք մեր վրայ թափելիք անվերջանալի շարքը վոհմակներուն, ու կը պատրաստուէինք միայն սուր ծախել մեր կեանքը, ըլլալ պաղարիւն, փամփուշտները պարապ չվատնել եւ մեռնիլ հայրենիքներու մահով» [1]:

Մայիսի 12-ի ժամը 11-ին հարյուրավոր թուրքեր զինված հիմնականում բերդան ու մարտին հրացաններով, կենտրոնանալով բորեասցիների դիրքավորված շենքի մերձակա քաղաքային այգում, կատաղի կրակ տեղալով, փորձում են ներխուժել հայկական թաղամաս: Սակայն հարձակումը զարգացնելու նրանց ձեռնարկած բոլոր փորձերն ապարդյուն են անցնում:

Ավելի մեծ թվով թուրքերի գնդակահարելու ու նրանց ահ ու սարսափի մատնելու նպատակադրությամբ հայ մարտիկները որոշում են կիրառել հակառակորդի համար անսպասելի մարտավարություն: Քանի որ թուրքերը երկյուղելով դիպուկ հարվածներից, խմբվել էին քաղաքային այգում ու փորձ չէին անում այնտեղից դուրս գալ, հայ մարտիկները որոշում են դադարեցնել կրակոցները և թույլ տալ նրանց դուրս գալ փողոց ու թիկունքից և դիմացից տեղացող հարվածներով՝ վճռական պարտության մատնել նրանց:

Հայ մարտիկների կիրառած այդ մարտավարությունը պսակվում է հաղթանակով: Թուրքերը դուրս են գալիս քաղաքային այգուց և փորձում շարժվել դեպի հայկական թաղեր: ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի կազմած վերոհիշյալ «Ընդհանուր Տեղեկագիր...»-ը ներկայացնելով այդ պահը նշում է, որ թուրքերը օգտվելով կրակի դադարեցումից և կարծելով, որ հայկական կողմը դադարեցրել է դիմադրությունը, վերսկսում է հարձակումը, բայց «...մի քանի դիրքերից խիստ դիմադրութեան հանդիպելով, ստիպուած եղան յետ դառնալ...» [2]:

Իր հուշերում իրենց կողմից կիրառած մարտավարության ու նրա արդյունավետության մասին ավելի մանրամասնորեն է անդրադառնում Ս. Ջալալյանը:

«Որոշեցինք,-գրում է Ս. Ջալալյանը,- մեր կրակը դադարեցնել, որպէսզի քաջալերուած թշնամին փողոց լեցուի եւ իր դասը առնէ: Արդարեւ, խուժանը «եա Ալի» գոչելով մացառներէն թափուեց փողոց: Ապա սկսեց մեր չորս մաուզերներու ճարճատոցը: Երբ կէս վայրկեանի մէջ տասնեակ մը դիակներ փռուեցին, խուճապը տիրեց թշնամուն եւ սարսափահար ամբոխը իր շունչը առաւ՝ Սարուանլար թաղը հասնելէն վերջ միայն: Տարած էինք առաջին յաղթանակը» [3]:

Ըստ ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի կազմած տեղեկագրի, այդ օրը տեղի ունեցած կռիվների ժամանակ հայ մարտիկները չեն ունեցել ոչ միայն զոհեր, այլև

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ» թղ. 295, գ. 3, էջ 4:
[3] Կարո Գեւորգեան, Ամէնուն Տարեգիրքը, 1956, էջ 153:

նույնիսկ վիրավորներ: Զոհվել են միայն պատահական հինգ անցորդներ: Թուրքերը ունեցել են մի քանի տասնյակ սպանվածներ, և ավելի շատ վիրավորներ, որոնց թիվը հնարավոր չի եղել ճշտել [1]:

Քաղաքի ինքնապաշտպանական ուժերի առաջին հաղթանակը ոգեշնչում է Նախիջևանի երիտասարդությանը: Նույն օրն ևեթ տասնյակ երիտասարդներ ցանկություն են հայտնում համալրել ինքնապաշտպանական խմբերի շարքերը: Մարտնչելու տրամադրվածությամբ տոգորված երիտասարդների քանակը թեև արդեն զգալի էր, բայց պակասում էր անհրաժեշտ զենքն ու զինամթերքը:

Թեպետ խիստ սահմանափակ է եղել զենք ու զինամթերքի քանակը, այնուամենայնիվ, ՀՅԴ Քարաբերդի կոմիտեն կարողանում է զինել ու կազմավորել մի նոր մարտական խումբ:

«...մեր յաջողութիւնը,-վկայում է Ս. Ջալալյանը,-յուսադրեց երիտասարդները եւ մինչեւ երեկոյ յաջողեցանք զէնքի տակ առնել 17 մարտիկներ եւ մեր դիրքերու թիւը հասցնել 8-ի: Ամէն դիրքի մէջ մէկ Բորեասականի ղեկավարութիւնը անհրաժեշտ համարելով, մեր ընկերները բաժնուեցին զանազան դիրքերու վրայ» [2]:

Իշխանությունների աջակցությունը վայելող թուրք պարագլուխները չէին կարող ձեռքից բաց թողնել հայերին կոտորելու եւ նրանց «հեքիաթային հարստությունը» բռնազավթելու հնարավորությունը:

Հարյուրավոր զինված թուրքեր կենտրոնանում են Սարվանլար թաղում: Հաշվի առնելով նախորդ օրը տեղի ունեցած կռվում կրած պարտությունը, թուրք պարագլուխները փոխում են հայ մարտիկների պաշտպանական դիրքերի վրա ձեռնարկվող հարձակումների մարտավարությունը: Այս անգամ թուրքերը ոչ թե պիտի գործեին անկազմակերպ, այլ հարձակվելու էին մարտաշարքերով, առանձին խմբերով, որոնցից յուրաքանչյուրին տրվել էին սահմանված հանձնարարություններ: Հարձակվող խմբերին հաջորդում էին թուրք պարագլուխների թիկնապահներից բաղկացած խմբեր, որոնց պարտականությունն էր գնդակահարել բոլոր նրանց, ովքեր կփորձեին լքել մարտադաշտն ու փախուստի դիմել:

Մայիսի 13-ի առավոտյան թուրքերն առավել մեծ բազմությամբ վերսկսում են հարձակումը: Թուրք պարագլուխները որքան էլ ջանային կազմակերպված բնույթ հաղորդել ամբոխի գործողություններին, ոչ մի դրական արդյունքի չեն հասնում: Հարձակվելիս խմբերը խառնվել են իրար և կորցրել կազմակերպվածությունն ու մարտաշաքերը: Հրամանատարները թեպետ ջանքեր են գործադրել, բայց անզոր են եղել շտկել իրավիճակն ու կազմակերպված բնույթ հաղորդել հարձակմանը: Հարյուրավոր հրացաններից կրակ արձակելով, թուրքերը մոտեցել են հայ մարտիկների դիրքերին:

Ներկայացնելով այդ պահը՝ Ս. Ջալալյանը նշում է. «...Փողոց նետեցինք ռումբ մը եւ գործի դրինք արագահարուածները: Սարսափահար՝ խուժանը

[1] ՀՅԴ ԿԱ» թղ. 295, գ. 3, էջ 9:
[2] Կարո Գեւորգեան, Ամէնուն Տարեգիրքը, 1956, էջ 154:

փախուստի դիմեց. իսկ մենք սկսանք գնդակոծել պարտէզին մացառները, ուրկէ վա՛յ ու վայով դուրս փախան թշնամին: Մենք անարգել շարունակեցինք կրակը խառնիճաղանճին վրայ, մինչեւ որ բոլորը փախան ու թաքնուեցին իրենց քաղի առաջաւոր շէնքին ետեւը» [1]:

Թուրքերը կրում են հերթական պարտությունը: Քաղաքում հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը անակնկալ էր ոչ միայն թուրք պարագլուխների, այլև իշխանությունների համար: Դժվար էր հավատալ, որ խիստ սահմանափակ թվով մարտիկներ կարող էին դիմագրավել, առավել ևս պարտության մատնել քանակապես հարյուրապատիկ անգամ իրենց գերազանցող զինված թուրքերին:

Մայիսի 12-13-ին Նախիջևանում ծավալված մարտերի ժամանակ հայ մարտիկների դրսևորած կամքն ու մարտնչելու վարպետությունը իշխանություններին հարկադրում են միջամտել քաղաքում կատարվող իրադարձություններին: Նախիջևան է ժամանում Երևանի փոխնահանգապետն ու նույն օրն ևեթ ժողովի հրավիրում հայ և թուրք ազդեցիկ դեմքերին: Շատերը հավատացած էին, որ նահանգապետը խաղաղություն հաստատելու առաքելությամբ է ժամանել Նախիջևան և իր նախաձեռնությամբ հրավիրված ժողովում ջանքեր կգործադրի հաշտեցնելու հակամարտող կողմերին:

Իրականում փոխնահանգապետի նպատակը բոլորովին էլ խաղաղություն հաստատելը չէր: Ժողովում դիմելով մասնակիցներին, փոխնահանգապետը նախ սպառնալի ու դատապարտող տոնով հայտնում է երեք օր առաջ Բաքվում ռումբի հարվածով նահանգապետ Նակաշիձեի սպանության մասին, ապա ավելացրել, որ «...ռուս պետությունը չի կրնար Հայերու ձգտումներուն հանդուրժել, այդ պատճառով ալ հայերը արժանի են խստագոյն պատիժներու: Դառնալով թուրք բէկերուն՝ կոչ ըրած է այնպէս դաս տալ հայերուն, որ յաւիտեանս չմոռնան: Ի վերջոյ, հայհոյելով, հայերը վռնտած է ժողովէն» [2]:

Նահանգապետի դիրքորոշումը ավելի է մարտականորեն տրամադրում թուրք երևելիներին: Հայկական կողմի համար այլևս որևէ կասկած լինել չէր կարող, որ շատ շուտով նահանգապետի «այնպէս դաս տալ Հայերուն, որ յաւիտեանս չմոռնան» կոչին հետևելու են թուրքերի նոր հարձակումները:

Բաքվի նահանգապետ Նակաշիձեի սպանության լուրը մեծ ոգևորությամբ է ընդունվում Նախիջևանի ինքնապաշտպանական ուժերի կողմից: Նրանք վճռում են գնդակահարել Երևանի նահանգի փոխնահանգապետին, եթե նա հանդգնի մոտենալ իրենց դիրքերին: Բայց նահանգապետը խուսափելով հայ մարտիկների վրեժխնդրությունից, հաջորդ օրը մեկնում է Երևան:

Թուքերին վերջնականապես պարտության մատնելու նպատակով հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը փոխում է կռիվներ մղելու մարտավարությունը: Մայիսի 12-13-ին տեղի ունեցած մարտերը աներկբայ հուշում էին, որ կարելի է դիմել վճռական գործողությունների և թշնամուն ջախջախել հենց իր որջում: Առաջնորդվելով իրեց առաջնորդի՝ Դումանի մարտավարությամբ, նրանք որոշում են չսահմանափակվել սոսկ ինքնապաշտպանությամբ ու ձեռնարկել հարձակողական գործողություններ: Թշնամին թեև քանակական առումով գերազանցում էր հայ մարտիկներին, բայց բացարձակապես մարտունակ չէր, անկազմակերպ էր ու խուճապահար:

Հայկական կողմը հակառակորդի նկատմամբ ուներ ևս մի շատ կարևոր առավելություն: Ի տարբերություն թուրքերի, որոնք զինված էին հնատիպ զենքերով, հայ մարտիկները զինված էին հեռահար մոսին հրացաններով, մաուզեր ատրճանակներով ու ձեռնառումբերով: Վերոհիշյալ գործոնները հաշվի առնելով՝ հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը վստահ է եղել, որ կարելի էր փոքրաքանակ ուժերով գրոհ ձեռնարկել թուրքերի վրա և դիպուկ հարվածներ տեղալով՝ խուճապի մատնել նրանց ու տոնել հաղթանակ:

Ծրագրելով իրականացնել հարձակողական գործողություն, հայ մարտիկները որոշում են առաջին հերթին խորտակել իրենց դիրքերի առջև գտնվող շենքը, որը յուրօրինակ պաշտպանական հենակետ էր ծառայում թուրքերի համար: Որպեսզի գրոհը հակառակորդի համար լիներ անակնկալ ու առավել սարսափազդու, հայ մարտիկները որոշում են շենքի վրա հարձակվել գիշերը:

Վերհիշելով այդ հիրավի ճակատագրական նշանակություն ունեցող պահը՝ Ս. Ջալալյանը գրում է. «Օգտուելով գիշերուան մթութենէն, յարձակեցանք այդ դիրքին վրայ. կոտորեցինք պահակները, իրենցմէ գրաւած նաւթով այրեցինք շենքը...»:

Զուտ մարտավարական առումով շենքի գրավումը շատ կարևոր էր, հայ մարտիկները հաղթահարում են առաջին արգելքը և բացում դեպի թուրքական ամենամեծ՝ Սարվանլար քաղը տանող ուղին: Թուրքերը, չկարողանալով դիմակայել հայ մարտիկների հարձակմանը, դիմում են փախուստի ու պատսպարվելով Սարվանլար քաղի տներում, սկսում են լուսամուտներից առանց նշանառության անկանոն կրակ արձակել իրենց հնամաշ հրացաններից:

Մայիսի 15-ին հայ մարտիկները ընդհուպ մոտենում են Սարվանլար քաղին: Եթե նրանք փորձեին ճակատային գրոհ ձեռնարկել, ապա անտարակույս կարող էին հայտնվել դժվարին իրավիճակում և անտեղի զոհեր տալ: Թուրքերը ինչքան էլ լինեին անմարտունակ ու անվարժ, այնուամենայնիվ, կարող էին տների լուսամուտներից տեղացող կրակով խոչընդոտել հարձակումը: Անհրաժեշտ էր կիրառել հարձակումը զարգացնելու ավելի արդյունավետ մարտավարություն: Նրանք որոշում են կիրառել թշնամու նկատմամբ իրենց ունեցած գերազանցությունը, այն է՝ մոսինների ու մաուզերների հեռահարության հնարավորությունն ու հեռու տարածությունից դիպուկ հարվածներ տեղալու վարպետությունը: Հայ մարտիկների ծրագրած այդ մարտավարությունը նույնպես արդյունավետ էր [1]:

---

[1] Նույն տեղում, էջ 155:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 10, էջ 1:

[1] Կարօ Գեւորգեան, Ամէնուն Տարեգիրքը, 1956, էջ 157:

Հեռահար ու դիպուկ հարվածներով թուրքերին գամելով տներում, հայ մարտիկները չտապում են օգնության 200 թուրք զինյալների կողմից քաղաքից դուրս գտնվող կաշվե գործարանում պաշարված հայերին: Ընդամենը 16 գյուղացիներ մի քանի բերդաձև հրացանով և ատիմանափակ քանակությամբ փամփուշտներով դիմադրել են թուրքերին, որոնք գործարանը թալանելու նպատակով հարձակվել էին այնտեղ գտնվող հայերի վրա:

Պարզվում է, որ հայ մարտիկների օգնությունը ճիշտ ժամանակին էր: Գործարանի պաշտպաններն արդեն սպառել էին փափուշտները և ևս մի քանի ակնթարթ ու թուրք բազմահազար ավարառուները կներխուժեին գործարան:

«...Մոսինների երկու համազարկերը,-շարունակում է Ս. Ջալալյանը,- բաւեցին, որ թշնամին խուճապահար փախուստի դիմէր: Չիներ չունէինք թշնամուն արագօրէն մօտենալու համար: Այնպէս որ փախչողներու ետեւէն կրակելով ու վազելով հազիւ հասանք երկու սայլապան թուրքերու... Կոտորեցինք զանոնք եւ սպանուած ուրիշ թուրքերու զէնքերը հաւաքելով, բաժանեցինք գործարանի բանւորներուն...»[1]:

Չկարողանալով հաղթահարել հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը ու կռվներում տալով տասնյակ սպանվածներ, թուրքերը դադարեցնում են հայկական թաղերի վրա ձեռնարկվող հարձակումները:

Եզրափակելով Նախիջևանի ինքնապաշտպանական մարտերի նկարագրությունը՝ Ս. Ջալալյանը նշում է. «Ատկէ վերջ թուրքերու գործողութիւնները ծերուած շան հաջոցի կը նմանէին: Օրերով լուռ կը մնային եւ անսպասելի կերպով յարձակումներ կը գործէին գիշերները, յուսալով մեզ անակնկալի բերել: Սակայն մեր աչալուրջ հսկողութիւնը պատճառ կը դառնար, որ ձեռնթափ թշնամին ամէն անգամ դիմէր փախուստի»[2]:

Եթե անաչառորեն գնահատենք 1905-1906 թթ. տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ 1905թ. մայիսին Նախիջևան քաղաքում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների արդյունքները, ապա աներկբա պիտի նշել, որ անգնահատելի է այդ կռիվներում «Բորեաս» մարտական խմբի ազատամարտիկների ծառայությունը: Նախիջևանահայության ֆիզիկական գոյությանը սպառնացող ամենաբախտորոշ պահին հայտնվելով դեպքերի կիզակետում, «Բորեաս» մարտական խմբի անդամները գրեթե անելանելի իրավիճակում կարողացան քաղաքի մարտական ուժերի աջակցությամբ կազմակերպել Նախիջևանի հայության ինքնապաշտպանությունը ու նրան փրկել անխուսափելի կոտորածից: Որևէ կասկած լինել չի կարող, որ մահմեդական հրոսակախմբերի կողմից հայկական բնակավայրերի վրա իրականացրած հարձակումների, սպանությունների և թալանի մասին լուրերին անհաղորդակից էին Կովկասի փոխարքայի պալատն ու անձամբ փոխարքան: Անկասկած, փոխարքայի պալատը տեղեկացված էր նաև Նախիջևանում տեղի ունեցած դեպքերին: Ցարական իշխանությունները գուտ ձեռականորեն փորձել են իրավիճակը կարգավորող քայլեր կատարել: Մայիսյան դեպքերից հետո, մայիսի 18-ին Կովկասի փոխարքայության առաջադրանքով Նախիջևան է գալիս գեներալ Ալիխանով-Ավարսկին, որը հայտնի էր Վրաստանի Դուրիայի շրջանի գյուղացիության նկատմամբ կատարած ոճրագործությամբ:

Ըստ Նորին մեծության կայսերական գրասենյակի տնօրեն Վ. Օ. Կրաֆիմոնվին հասցեագրած նրա կազմած «Համառոտ տեղեկագիր Նախիջևան, Շարուր, Դարալագյազ և Զանգեզուր գավառներում տեղի ունեցած դեպքերի մասին» խորագիրը կրող զեկուցագրի, նա գավառապետի իրավունքով նշանակվել էր այդ շրջաններում գտնվող զորքերի հրամանատար և պիտի գործեր տեղի գավառապետ կոմս Թիֆենգաուզենի համաձայնությամբ[1]:

Տեղեկագրում գեներալ Ալիխանով-Ավարսկին ընդգծում է, որ «Կովկասի փոխարքա նորին մեծութիւն գեներալ աղյուտանտ, կոմս Վորոնցով-Դաշկովը, նկատի ունենալով հայ եւ թաթար բնակչութեան միջեւ տեղի ունեցող բախումները, րեն յանձնարարել էր միջոցներ ձեռնարկել վերականգնելու խաղաղութիւնն ու հաստատելու օրինական կարգը»[2]:

Գեներալ Ալիխանով-Ավարսկին փաստորեն փոխարքայի ներկայացուցիչն էր Երևանի նահանգում, օժտված լայն լիազորություններով: Նա, որպես փոխարքայի ներկայացուցիչ, փոխանակ կատարեր իր պարտականությունը և գավառում հաստատեր խաղաղություն, կատարում է ճիշտ հակառակը: Ազգությամբ թուրք գեներալն անմիջապես անցնում է իր արյունակիցների կողմը:

Մայիսի 12-ին Նախիջևան քաղաքում տեղի ունեցած դեպքերից ընդամենը մեկ շաբաթ անց, թուրք զինված հրոսակախմբերը Նախիջևանի, Մակուի խաների ու բեկերի առաջնորդությամբ հարձակվում են գավառի հայկական գյուղերի վրա և կոտորածներ ու թալան սկսում հայկական բնակավայրերում:

Գեներալ Ալիխանով-Ավարսկին, որպես պետական պաշտոնյա, ոչ միայն չի կատարում իր պարտականությունները, այլև իր կազմած զեկուցագրում Նախիջևանի խաներին բնութագրում է որպես պետությանը հավատարմորեն ծառայող նվիրյալներ, որոնք տրամադրված էին խաղաղության պահպանմամբ և որևէ մեղք չունեին ընդհարումների բռնկման գործում:

Ավելին, խաներին լավագույնս ներկայացնելու նկատառումով ընդգծում է, որ նրանց պապը, որը Նախիջևանի շրջանի նախկին տեր էր, պարսիկների նկատմամբ ունեցած թշնամանքից դրդված, իր կալվածքները հոժարակամ հանձնել է գեներալ Պասկևիչին, որի համար միանգամից արժանացել է գեներալ լեյտենանտի զինվորական աստիճանի: Իսկ նրա որդին ծառայել է գվարդիայում և ռուս-թուրքական պատերազմի ժամանակ եղել է բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար ու պարգևատրվել է Սբ. Գևորգի շքանշանով: Նա ունի երեք որդիներ, որոնցից մեկը ծառայում է Հեռավոր Արևելքի Դաղստանյան գնդում, իսկ

[1] Նույն տեղում, էջ 157-158:
[2] Նույն տեղում, էջ 158:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 97, թ. 1:
[2] Նույն տեղում:

մյուս երկուսը ռուսական բանակի կազմում իրենց հոր զինակցությամբ փայլուն կերպով մասնակցել են ռուս-թուրքական պատերազմին: Թվարկելով խանների կողմից Ռուսաստանին մատուցած «արժեքավոր ծառայությունները» Ալիխանով-Ավարսկին ընդգծում է. «Այժմ, անկարգությունների ժամանակ խանները նյութապես ավելի շատ են տուժել, քան տեղացի բոլոր հայերը... Ես գիտեմ այդ մարդկանց, նրանց համոզմունքները և կարող եմ ասել. «Տա աստված, որ ռուսական ցարը ունենա ավելի շատ այնպիսի հպատակներ, ինչպիսիք են Նախիջևանի խաները»[1]:

Իրականում չկա որև սկզբնաղբյուր, որը հաստատի գեներալի «խաները նյութապես ավելի շատ են տուժել, քան տեղացի բոլոր հայերը» արտահայտությունը:

Այդ նույն օրերին Նախիջևանի գավառ է այցելել նաև Երևանի գեներալ-նահանգապետ իշխան Նապոլեոնը: Գավառում տեղի ունեցած դեպքերը ուսումնասիրելուց ու համապատասխան եզրահանգումներ կատարելուց հետո նա վերադառնում է Թիֆլիս և 19 կետից բաղկացած զեկուցագիր է ներկայացնում Կովկասի Փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Այդ զեկուցագրով իշխան Նապոլեոնը նախ հայտնում է, որ գեներալ Ալիխանով-Ավարսկին բացահայտ կերպող խրախուսել է թուրքերի ասպատակությունները ու ավարառությունը և առաջարկում նրան հետ կանչել Նախիջևանից:

Համաձայն այդ զեկուցագրի «1. Նախայարձակ են եղել թիւքերը եւ ոչ թէ հայերը, ինչպէս ամէն կերպ աշխատել է ցոյց տալ Ալիխանովը. 2. եղել է եւ դրսի դրդումն, այսինք յարձակումները հայերի վրայ եղել են թիւրքաց կառաւարութեան դրդմամբ եւ Նախիջեւանի խաները բաւականին ոգեւորուած են եղել այս մտքով, թէ կարող են նորից ետ ստանալ իրենց խանութիւնը»[2]:

Հաշվի առնելով իշխան Նապոլեոնի զեկուցագրում տեղ գտած փաստերը փոխարքա Վորոնցով-Դաշկովի կարգադրությամբ գեներալ Ալիխանով-Ավարսկուն հետ են կանչում Նախիջևանից:

Զուտ ինքնապաշտպանության կազմակերպման առումով թուրք հրոսակախմբերի հարձակումների ժամանակ առավել վատթար ու ողբալի կացությունում է հայտնվել գավառի հայկական բնակավայրերի բնակչությունը:

Համաձայն ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի ներկայացրած «Տեղեկագիր Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թիւրքական ընդհարման մասին մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը» խորագիրը կրող զեկուցագրի, հարձակումների ենթարկված հայկական գյուղերը, ըստ կրած վնասների, բաժանվում են երեք խմբի.

«Ա. գիւղեր որոնք միանգամայն աւերուած են եւ ժողովուրդը փախած:

Բ. Աւերուած են մասամբ, բայց թալանուած:

Գ. Ենթարկուել են յարձակման եւ կրել մասնակի վնասներ»[3]:

[1] Նույն տեղում, էջ 9:
[2] «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 51:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 295, գ. 3, էջ 5:

Երեւանի զինվորական նահանգապետ գեներալ Լուի Նապալիոնին Նախիջեւանի հոգեւոր թեմի առաջնորդ Մեսրոբ վարդապետի ներկայացրած «Նախիջեւանի գաւառի աւերածների պատկերը» տեղեկագրի հավաստմամբ, «Նախիջեւան գաւառի կրած գոյքային վնասների քանակը, համաձայն կողոպտած գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 2.729.173 ռուբլու, իսկ յանձնաժողովի ցուցակով՝ 1.340.893 ռուբլու»:

Ըստ նույն տեղեկագրի հավաստմամբ, Նախիջեւանի գավառում ավերված են միմիայն թուրքական երկու գյուղեր՝ Իթրանը հայերի ձեռքով, Ջահրին՝ կոզակների[1]:

2. 3. ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՄԿՍՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ճիշտ է, Երեւանում փետրվարի տեղի ունեցած զինված բախումները իշխանությունների միջամտությամբ դադարեցվում են, բայց խաղաղ կարգավիճակը շատ երերուն ու խաբուսիկ էր, և ինչպես իր զեկուցագրում ներկայացնում է Կարապետ վարդապետը, «...հայերի ու թաթարների միջեւ եղած չափազանց լարուած ու վտանգաւոր հարաբերութիւնները պահպանվում են եւ այն չի կարելի անվանել ավարտված...»[2]:

Վերոհիշյալ զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային է ներկայացնում Երևանի և նրա հարակից գյուղերի թուրք բնակչության հետագա գործողությունների մասին համառոտ, բայց ուշագրավ տեղեկություններ:

Երեւանի թուրքերը բնավ չհամակերպվելով քաղաքում հաստատված խաղաղ կարգավիճակին, քաղաքի մերձակա թուրքական գյուղերի բնակիչների հետ հարձակվում են հայկական գյուղերի վրա: Թուրքերի կողմից հարձակման ենթարկված առաջին հայկական բնակավայրը Երևանին մերձակա Դուրբալի գյուղն էր: Բայց այս անգամ թուրքերը չեն կարողանում ներխուժել գյուղ ու թալանել հայ գյուղացու ունեցվածքը: Ճիշտ ժամանակին վտանգված գյուղին օգնության են հասնում հարևան գյուղերի բնակիչները և համատեղ

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 1262, գ. 3, գ. 92, թ. 18:

հարվածներով փախուստի մատնելով հարձակվողներին. ներխուժում են մ-
տակայքում գտնվող թուրքական գյուղը [1]:

Այդ անհաջողությունից հետո թուրքերը ձեռնարկում են նոր հարձակում
Արաքսի մյուս կողմից նրանց օգնության են գալիս քուրդ զինյալները: Համալրե-
լով իրենց շարքերը՝ թուրքերը գրոհում են Նովրալու գյուղի վրա: Այս անգամ
դարձյալ հարձակման ենթարկված գյուղին օգնության են շտապում հարևա-
գյուղերի բնակիչները և համատեղ ուժերով գրոհում հարձակվողների վրա: Թուրք-
քերը չդիմանալով հարձակմանը՝ փախուստի են դիմում ու ապաստանում Քա-
մարլու գյուղում, ուր այդ ժամանակ տեղաբաշխվել էր զորքը:

Հայկական մարտական ուժերը կարող էին ներխուժել գյուղ և ջախջախել
այնտեղ ապաստանած թուրքերին, բայց միջամտում է այնտեղ գտնվող զորքը:
Չհամակերպվելով կրած պարտությանը՝ թուրքերը որոշում են վրեժխնդիր լինել
Քամարլուի հայերից: Գյուղի շուկայում թուրքերից մեկը ատրճանակի կրակ-
ցով վիրավորում է մի հայի: Ամբոխի համար դա ազդանշանն էր. թուրքերը միա-
համուռ հարձակվում են հայերի վրա, բայց ապարդյուն: Հայերը ոչ միայն կա-
րողանում են հաջողությամբ պաշտպանվել, այլև իրենք են դիմում հարձակ-
ման: Պարտված թուրքերը փախչում են ու պատսպարվում տներում [2]:

Փոխարքային համառոտակիորեն ներկայացնելով հայկական գյուղերի վրա
թուրքերի ձեռնարկած հարձակումների շարժառիթներն ու հետևանքները, Կա-
րապետ վարդապետը որպես ընդհանրացնող խոսք, ընգծում է. «Չնայած այ-
հանգամանքին, որ հայերը կարող էին ահավոր կոտորածի ենթարկել նրանց,
բայց չեն արել: Նրանք ձեռնպահ են մնացել համարժեք պատասխան տալ թա-
թարների գործողություններին նույնիսկ այն դեպքում, երբ թաթարները գիշերա-
գաղտագողի թալանել են հայերի խանութները ու տարել անասունները» [3]:

Ուշագրավն այն է, որ փոխարքային ու ցարական բարձրաստիճան պաշտո-
նյաներին Կովկասում բռնկված ընդհարումների մանրամասները ներկայացնող
զեկուցագրերում, հայկական կողմը որպես կանոն նշում է, որ հայերը կարող էին
կոտորել իրենց վրա հարձակվող թուրքերին, բայց ձեռնպահ են մնացել համար-
ժեք պատասխան տալ թուրքերի ոտնձգություններին: Հայազգի պաշտոնյանե-
րի, ինչպես նաև հոգևորականության կողմից համանման բովանդակությամբ զե-
կուցագրեր ներկայացնելն անկասկած պայմանավորված էր ցարական իշխա-
նությունների անաչառության նկատմամբ դրսևորած հավատով ու նրանց գոյ-
ու պաշտպանությունը հայցելու ակնկալիքով:

Այսուհանդերձ, փետրվարյան դեպքերից հետո հայկական կողմի համար ա-
դեն գաղտնիք լինել չէր կարող իր անվտանգությանը սպառնացող կործանարա-
վտանգի լրջությունը: Տվյալ իրավիճակում հայ ազգային կուսակցություններ-
համար այլ ընտրանք այլևս չէր կարող գոյություն ունենալ:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում:

«...Դաշնակցությունը,-գրում է,-Ս. Օհանջանյանը,- ակամայ ստիպված եղա-
միջամտելու այդ եղբայրասպան կռվին, լոկ իր ցեղի ֆիզիկականը փրկելու
նպատակով...» [1]:

Սարգիս Օհանջանյանի բացատրությունում ուշագրավ է «Ասում ենք
ակամայ, հակառակ իր սկզբունքների նրա համար, որովհետև մի շարք
փորձեր եղան-յատուկ պատիրակների, խաղարար կոմիսարների, կոչերի ու
բուցիկների միջոցով կանգնեցնել այդ անմիտ կոտորածը, հասկացնել մեր
հարևաններին, որ այդ կռիվը ռուս միապետության դիրքած որագայթն է,
նրա քաղաքականության հետևանքը: Սակայն իզուր անցան այդ կոչերն ու
դիմումները» [2]:

Անհրաժեշտ էր կազմակերպել նահանգի և նրա վարչական կենտրոնը համար-
վող Երևան քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը: Ամենացա-
վոտն ու ամենահրատապը զենք ու զինամթերքի ձեռք բերումն էր, ժողովրդի զի-
նումն ու մարտական խմբերի կազմավորումը:

Զենք ձեռք բերելու նպատակով հայկական կողմը դիմել է տարբեր միջոց-
ների: Երևանի նահանգապետի զեկուցագրերից պարզվում է, որ փետրվա-
րյան դեպքերից հետո հայերը զենք ու զինամթերք են փախցրել անգամ պե-
տական հիմնարկներից:

Զեկուցագրերից մեկում Երևանի նահանգապետը հայտնում է, որ 1905 թ. ապ-
ril 12-ին անհայտ անձինք Երևան գավառի զինվորական վարչության պետի
գրասենյակից գողացել են հրացաններ ու փամփուշտներ, որոնք գտնվել էին
վարչության գրասենյակի տարբեր սենյակներում:

Մեկ այլ հեռագրում նահանգապետը հայտնում է, որ հաջորդ օրը՝ ապրիլի
13-ին, դարձյալ անհայտ անձինք նահանգի պետական ունեցվածքի ու հողա-
գործության վարչության արխիվից տարել են «բերդան» 3 նոր հրացաններ և
5330 մարտական փամփուշտ [3]:

Այդ օրերին Ռուսաստանի ներքին գործոց նախարարությանը համանման
բովանդակությամբ զեկուցագրեր է ուղարկել նաև Կարսի նահանգապետը [4]:

Հայկական կողմը թեպետ որոշակի քայլեր ձեռնարկել է զենք ձեռք բերելու,
սակայն դեռևս չէր հասցրել լուծել ինքնապաշտպանության կազմակերպման
հետ կապված խնդիրները: Բացի դրանից, ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի և
Զինվորական մարմնի ուշադրության կենտրոնում առավելապես Նախիջևանում
տեղի ունեցող սարսափազդու դեպքերն էին, որոնց մասին պարբերաբար տա-
րաբնույթ տեղեկություններ էին հասնում Երևան:

Թուրքերի նախաձեռնությամբ մայիսի23-ին(12) Երևանում վերսկսվում են ընդ-
հարումները և ինչպես ցույց են տալիս տեղի ունեցած դեպքերը, հայկական կող-
մը այս անգամ դարձյալ ինչպես հարկն է նախապատրաստված չէր:

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, թ. 2:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ. 64, թ. 1-2:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 6-7:

Թուրքերը, օգտվելով հայկական կողմի անպատրաստ վիճակից, Երևանում վերսկսում են հարձակումները ու հայերը ընդհարումների առաջին օրերին դարձյալ հայտնվում են ծանրագույն իրավիճակում:

«Դրօշակ»-ի հավաստմամբ կոտորածից մի քանի օր առաջ Երևանում երևացել են անծանոթ թուրքեր, որոնք շրջելով քաղաքի փողոցներով, ուշադրությամբ դիտել են հյուրանոցները և նրանց մերձակայքում գտնվող տները: Քաղաքում խաղաղ իրավիճակ է տիրել և դժվար էր կանխագուշակել, որ դեպքերը մեկ օր անց բռնկվելու էին նոր ընդհարումներ:

Ավելին, հայկական կողմի զգոնությունը բթացնելու և ապակողմնորոշելու նպատակով «Անանի մահեղականները հաւատացնում էին ազդեցիկ հայերին կոտորածի նախորդ օրն իսկ, որ թիւրքերի կողմից կոտորածներեւ առիթ չի տրւի. նրանք երդւում էին դուրանով եւ իրենց բոլոր սրբութիւններով եւ խնդրում հայերին, որպէսզի սրանք եւս միջոցներ ձեռք առնեն հայերին խաղաղացնելու»[1]:

Թուրքերի հավաստիացումներն ու երդումները ինչպես միշտ, այս անգամ ևս նույնպես կեղծ էին: Մայիսի 23-ին(12), ցերեկվա ժամը 2-ին, թուրք հրոսակախմբերը նախահարձակ են լինում և միահամուռ կրակ տեղում քաղաքային շուկայի տարբեր մասերում գտնվող հայերի վրա: Շուկայում սանձազերծած կոտորածից հետո, որին զոհ են դառնում 20 հայեր, թուրք զինված խմբերն ամբոխը վերադառնում և իրենց հետագա գործողությունները որոշելու նպատակով՝ հավաքվում են իրենց թաղերում:

Հայկական կողմի համար թեև թուրքերի ձեռնարկած հարձակումը անսպասելի էր, բայց կարող էին համարժեք պատասխան տալ ու գնդակահարել բազմաթիվ թուրքերի: Նույնիսկ համանման իրավիճակում հայկական կողմը առաջնորդվել է պաշտպանողական մարտավարությամբ և «Դրօշակ»-ի վկայությամբ «...իրենց զսպում էին, սպասելով տեսնել թէ կառավարական պաշտօնեաները ի՞նչպէս կ վերաբերեն կոտորածի հեղինակներին»[2]:

Գործին միջամտում է նահանգապետը, որը զինվորների ուղեկցությամբ հայտնվում է հայկական թաղերում և համոզում հայերին՝ կրակ չբացել: Հայերը իրենց հերթին շրջապատում են նահանգապետին և նրանից պահանջում իրենց հանձնել կռիվներ հրահրող գլխավոր կազմակերպիչներին:

Ուշագրավ է թուրքական կողմը ներկայացնող խաների դիրքորոշումն ու բացատրությունը: Նրանք հայտարարում են, որ կոտորածի հեղինակները, փրկիչ թուրքերն են և նահանգապետին ներկայացնելով գործի հետ բոլորովին առնչություն չունեցող երեք թուրքերի, պահանջում են պատժել նրանց:

«Դրօշակ»-ի գնահատմամբ թուրքերն այդ քայլով փորձում էին «...հայերին հանգստացնել աշխատեցին, բայց այստեղ եւս թիւրքերն իրենց սովորութեան

[1] «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 103:
[2] Նույն տեղում:

հաւատարիմ մնացին, փոխանակ գլխաւոր ոճրագործներին՝ նրանք ներկայացրին, իբրեւ յանցաւորներ, ինչ որ խեղճ ու կրակ համալներ»[1]:

Նահանգապետին և հայկական կողմին թուրք խաների տված խոստումները կեղծ էին ու հաշվարկված: Հաջորդ օրերին թուրքերը դարձյալ նախահարձակ են լինում և քաղաքի զանազան մասերում կրակ բացում հայերի վրա:

Թուրքերի հարձակման ճիշտ հաջորդ օրը Բաքվից Երևան է գալիս Դրոն ու անմիջապես ներկայանում Դաշնակցական Խեչոյին: Քանի որ ցարական ոստիկանությունը փնտրում էր Բաքվի նահանգապետ Գեներալ Նակաշիձեի սահաբեկչին, այդ պատճառով ՀՅԴ Բաքվի (Ոսկանապատ) կենտր. կոմիտեի որոշմամբ, նա պետք է հեռանար Բաքվից:

«Ես,-գրում է Դրոն,-Խէչոին երբեք այդքան ընկճած ու մտազբաղ չէի տեսել: Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան էլ դժուար պայմանների մէջ էլ գտնուէր, միշտ կը պահեր հոգեկան արիութիւնը եւ իր կատակներով կուրախացնէր ամենքին: Այժմ ընկել էր խորունկ տխրութեան մէջ...»:

Դրոյի այն հարցին, թե ի՞նչ է տեղի ունեցել, Խեչոն պատասխանել է. «-Էլ ի՞նչ պիտի լինի...-հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ»[2]:

Դաշնակցական Խեչոյի օգնական Փառակեցի Մկրտչի պատմածից պարզվում է, որ քաղաքի թուրքերն անսպասելիորեն հարձակվել ու սպանել են 20-25 հայերի: Թուրքերի հարձակումը ոչ միայն սարսափի ու խուճապի էր մատնել քաղաքի հայ բնակչությանը, այլև ծանրագույն խնդիրների առջև կանգնեցրել ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեին[3]:

«Երեւանցիք,-գրում է Դրոն,-որ գուցէ ամենից լաւ ծանոթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջագործութիւններին, որ ա՜յնքան մեծ յոյսեր էին դրել Դաշնակցութեան վրա, ա՞յժմ շշմել ու շւարել էին: Չէին հասկանում, թէ ի՞նչպես պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուռ եւ անգործ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարւածին չպատասխանեց հակահարւածով»[4]:

Քանի որ այդ ժամանակ քաղաքի ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար Երևանի ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի տրամադրության տակ չկար բավարար քանակությամբ զենք ու զինամթերք, ըստ Փառակեցի Մկրտիչի վկայության, այդ պատճառով կենտր. Կոմիտեն նույնպես սարսափի մատնված՝ գլուխը կորցրել ու հրահանգել էր առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների[5]:

Զուտ մարտավարական ու մանավանդ բարոյահոգեբանական առումով ձեռք բերած առաջին հաջողությունը թուրքական կողմին, անկասկած, մեծ ոգևորություն էր պատճառել ու հայերի նկատմամբ նկատելի առավելություններ ընձեռել: Որևէ կասկած լինել չէր կարող, որ թուրքերն անպայմանորեն կօգտագործեին

[1] Նույն տեղում:
[2] «Դրո», Երեւան, 1991, էջ 179:12
[3] Տե՛ս նույն տեղում: 13
[4] Նույն տեղում, էջ 182: 14
[5] Նույն տեղում, էջ 180:

հայ բնակչության մեջ տիրող խուճապային տրամադրությունն ու անկազմակերպ իրավիճակը և շատ շուտով կվերակսեն հարձակումը:

Եթե թուրքերին հաջողվեր կրկնել հարվածը, ապա ծանրագույն իրավիճակում կհայտնվեին ոչ միայն Երևանի, այլև ողջ Նահանգի հայ բնակչությունը: Քաղաքում ձեռք բերած հաղթանակն առավելագույն հնարավորություն էր ընձեռում թուրքերին ավելի հեշտությամբ կոտորածներ սանձազերծել ողջ Նահանգում, որտեղ հայ բնակչության իրավիճակն արդեն չափազանց ծանր էր:

Համաձայն Դաշնակցական Խեչոյի վկայության, Երևանի Նահանգում մայիսյան առաջին դեպքերից հետո տիրել է հետևյալ իրավիճակը. «Նախիջևանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնված, կարող են ջարդել. Դարալագեազը ենթակա է Թարաքեամայի (թուրքական քոչվոր ցեղեր) անմիջական հարձակումներին: Սուրմալուի մի բուռ հայությունն էլ բնաջնջման վտանգի տակ: Երէկւայ ջարդը սիրտ պիտի տայ Երեւանի բրքութեան, իսկ հայերի ոգին պիտի ընկնի: Կռիւը շատ ա մեծ, իմ խելքի բանը չէ էս գործը: Ընդհանուր Կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափ զինուորական գործ ըմբռնի ու վարէ: Փամփուշտի ու զէնքի տեսակէտից էլ մենք շատ խեղճ ենք, մինչ թրքութիւնը զինուած ու զինում է կառավարութեան օժանդակութեամբ: Ասում են՝ Դումանը պիտի գայ, ախ՝ ուր ա մի գար...»[1]:

Ի՞նչ պետք է արվեր: Ո՞րն էր ելքը:

Անհրաժեշտ էր օգտագործել եղած հնարավորությունը եւ հակառակորդի համար անսպասելի մարտավարությամբ ձեռնարկել այնպիսի պատասխան կանխարգելիչ գործողություն, որը կարող էր արմատական բեկում մտցնել ստեղծված կացությունում:

ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեն, ճիշտ է հրահանգել էր, որ առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների, բայց Երևանում էին մարտական բովով և Նիկոլ Դումանի դպրոցով անցած Ս. Օհանջանյանը, Դաշնակցական Խեչոն, Փառակեցի Մկրտիչը: Իրականում հենց նրանք էին ղեկավարում քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները:

Տվյալ ճակատագրական ու բախտորոշ պահին Երևանի մարտական ուժերի հրամանատարությունը (Ս. Օհանջանյան, Դաշնակցական Խեչո, Փառակեցի Մկրտիչ, որոնց հետ էր նաև Դրոն-Հ.Գ.) կայացնում է միակ արդյունավետ ու կշռադատված ճիշտ որոշումը, այն է՝ ոչ թե սահմանափակվել սոսկ կրավորական ինքնապաշտպանությամբ, այլև նախահարձակ լինել, այսինքն գործել հարձակողական բնույթի մարտավարությամբ:

Անդրադառնալով, հիրավի, ճակատագրական նշանակություն ունեցող այդ մարտավարության կիրառման անհրաժեշտության արժևորմանը՝ Դրոն նշում է. «Կռվի մէջ յաղթութիւնը մեծ չափով ապահովուած է նրան, ով իր ձեռքը կառնէ նախաձեռնութիւնը: Բոլոր երևոյթները ցոյց էին տալիս, թէ սպասելու անմիտ քաղաքականութիւնը կարող էր լինել լիովին կորստաբեր հայերի համար: Ընդհակառակը, հակահարուածը մեր կողմից յաջողութեան դէպքում հիմնովին պիտի փոխէր դրութիւնը և հայերին պիտի դնէր աւելի նպաստաւոր վիճակում: Լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն էր[1]»:

Այդ ժամանակ Երևանի մարտական ուժերը, համաձայն Դրոյի վկայության, ունեցել են ընդամենը 100 մոտիկ հրացան և 50 ատրճանակ, որոնց մեծ մասը եղել է մաուզեր: Նույն օրը Աղեքսանդրապոլից ստանում են 15 մոտիկ և 4000 փամփուշտ: Համաձայն վաղորդը մշակված ծրագրի՝ հայ մարտախմբերի մի մասը դիրքեր է գրավում մարտավարական առումով քաղաքի առավել կարևոր նշանակություն ունեցող մասերում և փակում հայկական թաղերը տանող ուղիները, իսկ մյուս մասը պիտի բարձրանար Նորքի բարձունքներն ու այնտեղից կրակ տեղար հայկական թաղերի վրա հարձակվող թուրքերի վրա:

Մինչ մարտական գործողություններ սկսելը, Դրոն Խեչոյին խնդրում է, որ նա իրեն վստահի թուրքերին թիկունքից հարվածող մարտախմբի հրամանատարությունը: Իր հուշագրությունում նկարագրելով կռվի մանրամասները՝ Դրոն նշում է. «Խէչոն համաձայնեց եւ իմ տրամադրութեան տակ դրեց Թիֆլիսից նոր եկած տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի Կնեազին, Էրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին եւ այլն...Խէչոյի հրահանգի համաձայն գնացի ուղիղ մեր պահեստապետի մօտ եւ տղաների համար ստացայ հրացաններ հարիւրական փամփուշտներով: Զինուած մարտիկներին միացան եւ Նորքի ուժերը...»:

Մարտախումբը պիտի Նորքից անընկատ տեղափոխվեր Կոնդի բարձունքները և թիկունքից հարվածեր հայկական թաղերի վրա հարձակվող թուրքերին: Քանի որ Դրոյի գլխավորած թռուցիկ մարտախմբին տրված հանձնարարությունը չափազանց կարևոր էր, Նորք է գալիս նաև Խեչոն:

«Մեր շարժուելու վայրկեանին,-վերհիշում է Դրոն,- հասաւ նաեւ Խէչօն եւ մեր շուրջը գտնուած անգէն գիւղացիներին տեսնելով սրախօսեց.

-Հը՞, ինչա՞, պոլկ (գունդ) էք կազմել:

Եւ հրամայեց, որ լոյսը չբացւած վերադառնանք Նորք»[2]:

Ի դեպ, թեպետ մինչ այդ Դրոն մասնակցել էր Բաքվի փետրվարյան դեպքերին, բայց որպես մարտական խմբի հրամանատար Երևանում տեղի ունեցած կռիվը նրա մարտական գործունեությունում առաջին մարտական գործողությունն էր բուն Հայաստանի տարածքում:

Նորքեցիների առաջնորդությամբ Դրոյի մարտախումբը գիշերով անընկատ հասնում է Կոնդ: Նախորդ օրը քաղաքում ընթացող թեժ կռիվներում Խեչոյի ընդհանուր հրամանատարությամբ գործող հայ մարտիկները կարողացել են ոչ միայն անառիկ պահել իրենց դիրքերը, այլև դիմել են հարձակման և թուրքերի ձեռքից խլել մի քանի կարևոր հենակետեր: Հաջորդ օրը

[1] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 183:
[2] Նույն տեղում, էջ 186:

հայ ինքնապաշտպանական ուժերը պիտի անսպասելի ու սրընթաց գրոհ ձեռնարկեին և երկու կողմից տեղացող հարվածներով վճռական պարտության մատնեին հակառակորդին:

Դրոյի գլխավորած մարտական խումբը հարմար դիրքեր է գրավում թուրքական թաղամասին իշխող բարձունքի վրա. ապա որսալով հարմար պահը և միահամուռ հանգարկեր տեղալով՝ գիշերով հարձակվում է թուրքական հրոսակախմբերի վրա. որոնք կրակ էին արձակում հայկական թաղի ուղղությամբ:

Նկարագրելով այդ հիրավի վճռորոշ պահը՝ Դրոն գրում է. «Մեզ հետ եկած անգլեն գիդացիներն էլ «ռուա՞»-ներով սրտապնդում էին մեզ: Այդ աղմուկը գիշերային խորհրդաւորութեան մէջ ահաւոր տպաւորութիւն էր թողնում. եւ զարմանալի չէ. Դամբրբուլաղի թուրք թաղի բոլոր ճրագները անմիջապէս մարեցին. երեւեւկութիւնը փողոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ գտան...»[1]:

Դրության լիիրավ տերն արդեն հայ մարտիկներն էին. որոնք հարձակվում ու հեռահար մոսինեներից թուրքերի վրա կրակ էին տեղում հանդիպակաց ուղղություններից: Թուրքերի շարքում խուճապն ու սարսափը ավելի է ուժեղանում. երբ հայ մարտիկները ռումբերի հարվածներով պայթեցնում են հայկական դիրքերի մերձակայքում գտնվող թուրքերին պատկանող մի քանի տներ:

Եզրափակելով կռվի մանրամասների նկարագրությունը՝ Դրոն նշում է. «...մեր թիկունքային հարուածը վճռական էր եւ շշմեցրեց թուրքերին... Դիշերային այդ գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը. ոգեպնդեց ու բարձրացրեց նաեւ նահանգի հայութեան տրամադրութիւնը: Միւս օրը առաւօտեան գնացի տեսնելու Խէչոյին: Նրա դէմքը փայլում էր ուրախությունից: Նա պինդ գրկեց ինձ. տաք-տաք համբուրեց ու ասաց.-Խաթաքեա՞ր(սխալվող). դու որ մի շաբաթ կռիւ անես Քանաքեռի ջաբախանան (զենքի պետական արհեստանոց. պահեստ-Հ.Գ.) քեզ չի հերիքի»[2]:

Թուրք հրոսակախմբերը մայիսի 23. 24-ին և առավել ուժգնությամբ 25-ին զանգվածային գրոհներ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա: Հայ մարտական խմբերը հակահարվածով կանգնեցնում են թուրք հրոսակախմբերի գրոհները և խափանում հայկական թաղամասեր թափանցելու փորձերը[3]:

«Մայիսի 24-ին եւ 25-ին,- նշում է «Դրօշակը»,- Երեւանում ընդհարումները շարունակւում են: Հայերը համբերութիւնից դուրս եկան. վճռեցին բուռն դիմադրութիւն անել եւ թիւրքերին մի դաս տալ: Սպանուած են մեծ թիւով թիւրքեր: Վիրաւորները շատ աւելի են: Կառավարութիւնը. տեսնելով հայերի տուած զգալի հարուածը՝ միջամտեց...»[4]:

Ըստ արժանվույն գնահատելով այդ կռվում Երևանի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակը՝ Ս. Վրացյանը գրում է. «Երեւանի թուրքերը. խրախուսուելով առաջին յաջողութիւնից. պատրաստում են նոր յարձակման. բայց այս անգամ անակնկալի են հանդիպում: Խէչոն դասաւորել էր իր ոյժերը այնպէս. որ թշնամին ընկնում է երկու կրակի միջեւ եւ շշմեցուցիչ հարուած է ստանում: Այս կռուում աչքի ընկնող դեր է կատարում Դրոն իր բռուցիկ խմբով եւ զինուած մարդկանցով ու կամաւորներով...»[1]:

Մայիսի 25-ի հաղթանակը Երևանի նահանգում հայերի կողմից թուրքերին հասցրած առաջին լուրջ և ծանրակշիռ հարվածն էր: Շնորհիվ կազմակերպված հակահարվածի. կանխվեց Երևանի հայության գլխին ծառացած մահացու վտանգը:

Մ. Վարանդյանի գնահատմամբ «Այդ կորովի հակահարուածը. Նիկոլի կտրուկ ու խիստ մեթոդով. փրկեց Երեւանը: Թաթար հրոսակները. եթէ անզօր էին կոտորած սարքելու. դիւրութեամբ սակայն կրնային վառել քաղաքը եւ հրոյ ճարակ դարձնել հայոց թաղերը: Քանի մը անգամ փորձեցին վառել հայ խանութները. զոր նածօրոք կաւիճով նշանակեր էին: Չկրցան...»[2]:

Պատահական չէ Մ. Վարանդյանի «Այդ կորովի հակահարվածը. Նիկոլի կտրուկ ու խիստ մեթոդով. փրկեց Երեւանը» արտահայտությունը:

Հարձակողական բնույթի մարտավարությամբ կռիվներ վարելը Դրոնի դավանանքն էր. իսկ Երևանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարները՝ Ս. Օհանջանյանն ու Խեչոն ոչ միայն նրա մերձավորագույն զինակիցներն էին. այլև նրա դավանած մարտավարության ջերմ կողմնակիցներն ու հետևորդները: Ս. Օհանջանյանի հավաստմամբ. Երևանում տեղի ունեցած մայիսյան կռիվներում հայ մարտիկների դրսևորած քաջագործությունները հիացրել են ոչ միայն ռուս սպաներին ու. զինվորներին. այլև նույնիսկ նահանգի և քաղաքի իշխանություններին. որոնք որևէ փորձ չեն ձեռնարկել զինաթափելու հայ մարտիկներին[3]:

1905 թ. դեկտեմբերին Երևանում գումարված ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի ռայոնական ժողովում ներկայացված հաշվետու զեկուցագրում. պատշաճորեն արժևորելով այդ դեպքերի նշանակությունը, զեկուցողը նշել է. «... հայ ժողովուրդը իրաւունք չունի մոռացութեան տալու մայիսեան այն փայլուն օրերը: Հայ ազատագրական պատմութեան մէջ ոսկէ տառերով պէտք է արձանագրել այդ օրը եւ կռիւների ժամանակ կուռող զինուորների անունները»[4]:

Երևանի մարտական ուժերի հաղթանակը չափազանց կարևոր էր: Որևէ կասկած լինել չէր կարող. որ եթե թուրքերին հաջողվեր թափանցել քաղաքի հայկական թաղերն ու կոտորել հայերին. ապա անկասկած կշարունակեին նույն սպանդն առավել հեշտությամբ իրականացնել նաև նահանգի հայկական բնակավայրերում: Երևանի ինքնապաշտպանական ուժերի հաղթական մարտերը կտրուկ փոխում են իրավիճակը և կոտրում թուրք հրոսակախմբերի հարձակողա-

---

Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Նույն տեղում, էջ 186-187:
[4] «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 104:

[1] Վրացեան Ս., Սրրկածին Դրոն, էջ 37:
[2] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 37:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 11, էջ 3:
[4] Նույն տեղում:

կան տրամադրությունը: Նույն Ռայոնական ժողովում. մասնակիցներն անդրադառնալով ընդհանուր ինքնապաշտպանության կազմակերպման գործում Երևանի մայրական հաղթանակի նշանակության գնահատմանը՝ շեշտում են. «Դուրեանի մայրական ծայներ էին գալիս առաւել հեռու վայրերում բնակող հայ եղբայրներից: Դուռ էին բոլորը երեւանցիներից. կարծես երեւանցին էր եւ Երեւանը իրենց փրկողը .... Դուռ էին Երեւանի շրջապատող գիւղացիք. որովհետեւ նրանք շատ լաւ հասկացել էին. որ Երեւանի ընկնելով ընկնելու էին եւ Երեւանի նահանգի բոլոր հայ գիւղերը...»[1]:

Պարտություն կրելով Երևանում ընթացող կռիվներում. թուրքերին հարկավոր էր ժամանակ շահել եւ ավելի լրջորեն պատրաստվել:

Քաղաքում տիրող քոչային իրավիճակի պատճառով ավելի դժվարին իրավիճակում են հայտնվել քաղաքի թուրք բնակչությունը: Քանի որ գավառներում նույնպես պայթյունավտանգ կացություն էր տիրում. կապը քաղաքի և գյուղերի միջև ընդհատվել էր: Քաղաքում չեն գործել շուկաներն ու խանութները:

«Այսօր.-նշում է Դրօշակ»-ը.-երկուշաբթի 8-րդ օրն է. որ շուկան փակ է: Թիւրք ազգաբնակչութիւնը խիստ նեղւում է այդ բանից. եւ այդ պատճառով նրանց մէջ սկսել է խռովութիւն: Մանրավաճառները հայհոյում են այն խմբին. որ իրենց այդպիսի կրիթիկական վիճակի հասցրեց: Եթէ խանութները շուտ չը բացուին. թիւրքերը շատ կը նեղուեն իրենց մօտ ալիւր չը գտնելու պատճառով»[2]:

Եթե համանման կացությունը պահպանվեր երկար ժամանակով և չվերանկանգնվեր կապը գյուղերի ու քաղաքի միջև. ապա թուրք բնակչությունը կմատնվեր սովամահության: Այս առումով շատ ավելի լավ է եղել հայերի վիճակը. որոնք իրենց տներում ունեցել են բավարար քանակությամբ մթերք:

Թուրքերին այլ ընտրանք այլևս չէր մնում: Նրանք պագում են սպիտակ դրոշը ու իշխանության ներկայացուցիչների միջնորդությամբ դիմում հայերին: Գործին միջամտում է նաև նահանգապետը. որի միջնորդությամբ կնքվում է հաշտություն. բայց այն խիստ երերուն էր: Հաշտություն կայացնելու համար նահանգապետի մոտ են հավաքվում քաղաքի հայ և թուրք բնակչության ներկայացուցիչները:

Խաղաղություն հաստատելու համար հայկական կողմը նահանգապետին ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

1. «...ցանկալի եւ անհրաժեշտ է. որ մահմեդական ազգաբնակչութիւնը իրեն հանգիստ պահէ. հակառակ դէպքում. մենք ստիպած կլինենք նրանց դիմագրել ծայրայեղ միջոցներով»:

2. «...խորհուրդ ենք տալիս մահմեդականներին իրենց միջից քշել անկարգութիւններ կազմակերպողներին եւ հեղինակներին Կովկասի սահմաններից դուրս»:

3. «...անհրաժեշտ է դադարեցնել Երեւանի նահանգում տիրող հայերին զինաթափելու միջոցները. մանաւանդ որ հայերը իրենց զէնքերը ի չարը գործ չեն

[1] Նույն տեղում:
[2] «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 104:

դնում. այլ աշխատում են գործ դնել միայն ինքնապաշտպանութեան սահմաններում»[1]:

Այս առաջարկությունը խիստ պատճառաբանված էր: Նախորդ օրերին իշխանությունների հրահանգով ոստիկանությունը և զինվորները զենք ու զինամթերք հայտնաբերելու և հայերին զինաթափելու նպատակով խուզարկումներ ու բռնություններ էին կատարել միայն հայկական բնակավայրերում:

4. «...ցանկալի է նոյնպէս. որ պաշտօնական լինեն Երեւանի ոստիկանապետը եւ պրիստաւի օգնական Մէհմէտ բէկ Վէզիրովը»[2]:

Ըստ «Դրօշակ»-ի. հայկական կողմի առաջարկությունները լավ տպավորություն են թողնում նահանգապետի վրա: Նա խոստանում է չզինաթափել ազգաբնակչությանը և խուզարկություններ կատարել միայն այն տներում. որտեղից կսկսվեն հրացանաձգություն: Թուրքական կողմը հանձն է առնում. որ ջարդերի ու անկարգությունների նախաձեռնողները մահմեդականներն են և խոստանում պահպանել խաղաղությունն ու սպանությունների կրկնության դեպքում չարագործներին հանձնել կառավարությանը[3]:

Հարկ է նշել. որ թեպետ Երևանում թուրքերին չհաջողվեց իրականացնել իրենց ծրագրերը. այստեղ. կռիվներն արդեն տարածվել էին գավառները և չնայած նահանգապետի ու թուրքական կողմի տված խոստումներին. ինչպես ցույց տվեց ժամանակը. ծավալվելու էին առավել մեծ ընդգրկումներով ու ուժգնությամբ: Ճիշտ է. նախորդ կռիվներում Ս. Օհանջանյանն ու Խեչոն ու նրանց զինակիցները իրենց դրսևորել էին արժանապատվորեն. սակայն ընդհարումները խորանալու պարագայում. նրանց իսկ խոստովանությամբ. իրենց ուժերից վեր էր կազմակերպել ու ղեկավարել հայկական ամենամեծ տարածքն ու ամենաբազմաքանակ բնակչությունը ունեցող նահանգի ինքնապաշտպանությունը:

ՀՅԴ Արևելյան Բյուրոյի և Զինվորական Մարմնի որոշմամբ Երևան է գալիս Երևանի նահանգի ու Զանգեզուրի ընդհանուր զորահրամանատար նշանակված Նիկոլ Դումանը և անմիջապես ձեռնամուխ լինում քաղաքի ու ողջ նահանգի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Ս. Օհանջանյանի պնդմամբ Դումանին Երևանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար նշանակել են իր առաջարկությամբ. քանի որ «...երբ ընդհարումները պարբերական բնոյթ ստացան եւ սպառնում էին երբեք վերջ չունենալ. երբ գաւառներում նրանք ահռելի չափերի հասան. ես առաջարկեցի Կենտր. Կոմիտէին հրաւիրել Դումանին. որ այդ ժամանակ Բագուի հերոսական կռիւներին ակտիւ մասնակցութիւն էր ունեցել և չափազանց աչքի էր ընկել...»[4]:

«Իմ յիշատակարանը» խորագիրը կրող հուշագրությունում Ս. Օհանջանյանը կրկին անգամ անդրադառնալով նույն հարցին. խոստովանում է. որ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, թ. 15:

երբ ընդհարումները ավելի խորացան և տարածվեցին ամբողջ նահանգում «...ես ինձ անձեռնահաս համարելով դիմադրության գործը ղեկավարելու, առաջարկեցի Միգասանի կենտր. կոմիտեին, որ այդ գործի ղեկավար հրաւիրէին Դումանին-Նիկոլ Տէր-Յովհաննիսեանին եւ Դումանը հեռագրով հրաւիրեց Երեւան եւ ստանձնեց նահանգի ընդհանուր հրամանատարութիւնը»[1]:

Ս. Օհանջանյանի առաջարկությունը գուցե ինչ-որ նշանակություն ունեցել է, բայց, ինչպես արդեն նշվել է, Նիկոլ Դումանը Երևանի նահանգի ու Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր զորահրամանատար է նշանակվել ՀՅԴ Արևելյան Բյուրոյի և Զինվորական Մարմնի որոշմամբ:

Երևանի նահանգը, ի տարբերություն Բաքվի, ուներ իր որակական առանձնահատկություններն ու դժվարությունները: Բաքվում նրա գործունեությունը սահմանափակված էր միմիայն քաղաքի շրջանակներով, իսկ այստեղ նրա հրամատարության իրավասության մեջ էին մտնում Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի ու վարչականորեն Գանձակի նահանգի կազմում գտնվող Զանգեզուրի գավառները, ինչպես նաև Իջևան-Շամշադին-Ղազախ շրջանները:

Նրա հրամանատարության տակ գտնվող շրջաններում ընդհարումներ տեղի չեն ունեցել միայն Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառներում, որտեղ հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը:

Երևանի նահանգում Դումանը պետք է կազմակերպեր ու ղեկավարեր մեծածավալ մարտական գործողություններ, իր բնորոշմամբ, «կազմակերպված ինքնապաշտպանական կռիվ»*[2]:

Հարց է առաջանում, ինչպիսի՞ իրավիճակում կհայտնվեր արևմտահայությունը, եթե թուրքերին հաջողվեր իրականացնել Կովկասը հայ բնակչությունից մաքրելու պանիսլամական ծրագրերը: Անտարակույս, այդ դեպքում ոչ թե «սոսկում պիտի համակեր թուրքահայերին», այլ ավելին, զուտ բարոյահոգեբանական առումով սարսափելի իրավիճակում կհայտնվեր արևմտահայությունը:

Պիտի նկատել, որ կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպումը, ըստ էության, այլևս չպետք է դիտել որպես սոսկ կովկասահայության խնդիր: Անտարակույս, այն իր ընդգրկումներով արդեն դուրս էր եկել կովկասահայության շրջանակներից և ձեռք բերել համազգային նշանակություն:

Կովկասում ծավալվող դեպքերը թելադրում էին, որ ինքնապաշտպանության ղեկն ստանձնած Հ.Յ. Դաշնակցությունը ժամանակավորապես, գոնե մասամբ հանգիստ թողներ Արևմտյան Հայաստանը և իր ուշադրությունը բեռներ կազմակերպելու կովկասահայության ինքնապաշտպանությունը:

[1] Նույն տեղում, ֆ. 1457, ց. 2, գ. 16, թ. 2-3:
*[2] Երևանի նահանգում Նիկոլ Դումանի ծավալած գործունեությունը մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան, «Նիկոլ Դուման», Երեւան, 2001, 2002:

Ազգային-ազատագրական պայքարը հայողությամբ կազմակերպելու կարևորագույն նախադրյալներից մեկը եղել ու մնում էր զենքի ու զինամթերքի ձեռք բերումը: Ընդհարումների ողջ ժամանակաշրջանում դժվարինն ու առաջնայինը դարձյալ մարտական խմբերի զինմանն առնչվող խնդիրներն էին:

Զենք ձեռք բերելու առաջին անհրաժեշտ պայմանը ֆինանսական միջոցների հայթայթումն էր, բայց առավել դժվարինը Ռուսաստանի տարբեր շրջաններից, հատկապես Տուլայից, Անդրկովկասի հայկական վտանգված շրջանները զենքերի ապահով տեղափոխության իրականացումն էր:

Զենքերի գնման և փոխադրության հիմնական պատասխանատուն ՀՅԴ բյուրոյի կողմից ստեղծված Զիֆոնը (Զինական ֆոնդ) այդ գործն իրականացրել է մի քանի ուղիներով:

1. Կազմակերպվում է խիզախ հայուհիներից բաղկացած մի խումբ, որի անդամները, վտանգելով իրենց կյանքը և բազում խոչընդոտներ հաղթահարելով, կարողացել են Հյուսիսային Կովկասից, իրենց պայուսակներով զենք ու զինամթերք տեղափոխել և հանձնել Զիֆոնի տնօրինությանը:

Ռուբեն Դարբինյանը, որն այդ օրերին կուսակցության առաջադրանքով գտնվում էր Հյուսիսային Կովկասում, գրում է. «Ինչ որ ամէնէն զարմանալին էր, գրեթէ միշտ ալ անոնք կը յաջողէին զէնքերը անվնաս տեղ հասցնել: Ոչ ցարական ոստիկանութիւնը, եւ ոչ ալ թուրքերը, ըստ երեւոյթին, կերեւակայէին, թէ լաւ ընտանիքներու պատկանող հայ օրիորդներ ու տիկիններ կրնային զբաղուել վտանգաւոր գործով: Այդ պատճառով ալ անոնց հետապնդումը շատ թեթեւ ու մակերեսային էր»[1]:

2. Զենքերի տեղափոխման համար պատրաստել են հատուկ կառքեր, որոնք ունեցել են գաղտնի պահեստներ: Այդ կառքերը շարժվել են Թիֆլիսից և Ռուսաստանի համապատասխան քաղաքներն են հասցրել զանազան ապրանքներ ու վերադառնալիս, «... իրենց գաղտնի պահեստներուն մէջ կը լցնէին հրացաններու մասեր ու փամփուշտներ, իսկ ֆուրգոններու վրայ կը դարսէին խոտ կամ նման թեթեւ ապրանքներ եւ առտու կանուխ կը մեկնէին նոյն Ռազմավարական ճանապարհով դեպի Թիֆլիս ու այստեղէն ալ՝ Անդրկովկասի այն վայրերը, ուր զէնքերու պէտք կար»[2]:

Զենքի տեղափոխության այս եղանակն առավել արդյունավետ էր, բայց ավելի դժվարին, իսկ բռնվելու պարագայում՝ չափազանց վտանգավոր: Իհարկե, եղել են դեպքեր, երբ ցարական ոստիկանությունը հայտնաբերել ու բռնագրավել է Ռուսաստանից Անդրկովկաս առաքվող զենքերը:

Ռուբեն Դարբինյանը իր հուշերում ներկայացնում է ցարական ոստիկանության կողմից զենքի բռնագրավման մի ուշագրավ դեպք, որը, կարելի է ասել, պերճախոս բնութագիր է Հ.Յ. Դաշնակցության ու նրա կիրառած մարտավարության անքակտելի մասը կազմող ահաբեկչական գործողությունների:

[1] Դարբինեան Ռ., Երկեր, հ. Ա, էջ 52:
[2] Նույն տեղում:

Հյուսիսային Կովկասում կատարած շրջագայությունից Լևոն Քալանթարյանի (ՀՅԴ Հ. Կովկասի (Ժյուռ) կենտր. կոմիտեի անդամ-Հ.Գ.) ընկերակցությամբ Վլադիկավկազ վերադառնալիս նրանք տեղի ՀՅԴ կոմիտեին հանձնարարած ծածկագիր- հեռագրից տեղեկանում են, որ ոստիկանությունը քաղաքի բոլորների ծածկագիր- հեռագրից տեղեկանում են, որ ոստիկանությունը քաղաքի բոլորների մասնավորապես հայտնաբերել է իրենց գենքի պահեստները և այնտեղ եղած գենքերը՝ տարել ոստիկանատուն[1]:

Ի՞նչ պիտի անեին: Իհարկե, դժվար էր համակերպվել մեծ դժվարությամբ ձեռք բերած գենքերի կորստի հետ: Նրանք, ՀՅԴ Վլադիկավկազի կառույցի անդամ Նիկոլայ Բաբաբեխվյանի(Կոլյա) թելադրանքով որոշում են դիմել համարձակ քայլի ու հետ վերցնել բռնագրաված գենքերը: Այդ նպատակով գիշերով այցելում են քաղաքի ոստիկանության պետին՝ գնդապետ Լուպակովին:

«...պատուհանին մոտ, գրում է Ռուբեն Դարբինյանը,- երևցա ինքը՝ գնդ. Լուպակովը: Երբ տեսավ մեզ, ադաչական ձայնով խնդրեց.

-Ի սեր Աստծոյ, հեռացեք այժմ: Գիշերուան այս ժամուն մի անհանգստացնեք մեզ: Պատուոյ խօսք կու տամ, որ առաւօտեան ժամը 9-ին կընդունիմ ձեզ եւ կաշխատեմ կատարել ձեր խնդիրքը»[2]:

Լուսը բացվելու պես Կոլյան առանց ընկերների տեղյակ պահելու գնում է ոստիկանություն, ներկայանում գնդապետ Լուպակովին և ապառնալի տոնով հարցնում. «-Գնդապետ Լուպակով, դուք գիտե՞ք, թե ում զենքերն էք բռնագրաել:

«- Ոչ չգիտեմ: Ի՞նչ կայ, ինչո՞ւ էք հարցնում,-պատասխանեց անհանգստացած...«-Ձեր բռնագրաված զենքերը պատկանում են Հ.Յ. Դաշնակցութեան: Այժմ, որ դուք գիտէք, անմիջապէս հրամայեցէք, որ զենքերը մեզ վերադարձնեն: Հակառակ պարագային մենք պատասխանատու չենք լինի ծանր հետեւանքների համար: Փառք Աստծոյ, դուք լաւ էք ճանաչում Հ.Յ. Դաշնակցութիւնը եւ գիտէք, թէ երբէք նա չպիտի ներէ ձեզ այդպիսի մի թշնամութիւն»:

Պարզվում է, որ գնդապետ Լուպակովը լավատեղյակ է եղել Դաշնակցության գործունեությանը ու նրա իրականացրած ահաբեկչություններին:

Կոլյայի ապառնալի խոսքերը լսելուց հետո «Գնդապետը, բոլորովին այլայլված, զանգահարեց: Ներս մտան երկու ժանդարմներ, որոնց հրամայեց ներսի սենյակի մէջ դրուած զենքերը արկղներով յանձնել ինձ ու իմ մարդկանց»[3]:

Զենք ու զինամթերքի ձեռք բերման գործին մասնակից են դարձել նաև Ռուսաստանի տարբեր ուսումնական հաստատություններում, մասնավորապես Պետերբուրգի համալսարանում սովորող հայ ուսանողությունը[4]:

Եղել են դեպքեր, երբ ցարական ոստիկանությունը զենք ու զինամթերքի ձեռք բերելու պատճառով ձերբակալել և դատի է տվել հայ ուսանողներին:

Նիկոլայ 2-ին ներկայացրած զեկուցագրերից մեկում ցարական ոստիկանությունը կայսրի գիտության է ներկայացնում Պետերբուրգի մի քանի հայ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, թ. 15:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 395, թ. 134:

ուսանողների, որոնք ձերբակալվել են զենք ձեռք բերելու պատճառով: Ընդորում, իրենց ձեռք բերած զենքը ուսանողները թեև թաքցրած են եղել տարբեր տեղերում, նույնիսկ բարեկամների ու ծանոթների բնակարաններում, այնուամենայնիվ, ոստիկանությունը իր ուշադրության կենտրոնում պահելով հայ ուսանողությանը, կարողանում է հայտնաբերել թաքստոցներն ու բռնագրավել այնտեղ գտնվող զենք ու զինամթերքը[1]:

Այդ նույն զեկուցագրում ոստիկանությունը ցարին տեղեկացնում է, որ «... համաձայն իրենց ունեցած տեղեկությունների, թվարկված բոլոր անձինք պատկանում են հայ հեղափոխական կազմակերպություններին և կապված են սոցիալիստ-հեղափոխական կուսակցության տեղի կազմակերպության հետ»[2]:

3. Ծովային ուղին. Զիֆոնը ընդհարումների ընթացքում վարձել է «Աննա» բեռնանավը, որի միջոցով զենք է տեղափոխվել Աստրախանից Բաքու:

Ռուսաստանից զենքերը փոխադրել են երկաթուղով, խճուղիներով, ձորերով ու սարերի վրայով, գաղտնի գրեթե բոլոր միջոցներով:

Այդ ընթացքում Զիֆոնը մշտապես կապեր է պահպանել Ռուսաստանի զանազան քաղաքների հետ և տարբեր վայրերից ստացել բազմաթիվ հեռագրեր:

Երբեմն պատահել է, որ զենքի ձեռք բերման գործով զբաղվող անձինք անփորձության պատճառով միամտորեն այնպիսի հեռագրեր են ուղարկել, որով փտանգել են իրենց ընկերներին ու զենքերի տեղափոխման գործը:

Համաձայն Աբ. Գյուլխանդանյանի տեղեկացման, զենքի գնման ու տեղափոխման գործով զբաղվող անփորձ ընկերները «...ցանկանալով հրացան կամ փամփուշտ հասկացնել, իրենց նամակներում կամ հաշիւների մէջ գրում էին օրինակ՝ «Ստացանք 100 գրչակոթ՝ գինը 100 ռուբլու, հաւասար է 10.000 ռուբլու», կամ ցանկանալով հասկացնել փամփուշտ՝ գրում էին «5.000 գրիչ, հատը հինգ կոպէկով, 25.000 կոպէկ»[3]:

Եթե այդ կարգի հաղորդագրություն հայտնվեր նրանց գործողություններին ակնդետ հետևող գաղտնի ոստիկանության ձեռքը, ապա նրա համար բոլորովին դժվար չէր հասկանալ, որ նշված 10.000 և 25.000 ռուբլու արժողությամբ գրչակոթն ու գրիչը իրականում վերաբերում էին ոչ թե նշված, այլ բոլորովին ուրիշ առարկաների: Երբեմն պատահել է, որ հեռագիր ուղարկողները հայերեն բառերը գրել են ռուսերեն տառերով՝ համոզված լինելով, որ ռուս ոստիկանները չեն կարողանա հասկանալ իրենց գրածները: Չնայած գաղտնի ոստիկանության իրականացրած խստագույն հետապնդումներին, զենք ու զինամթերքի ձեռք բերման գործով զբաղվողները, շրջանցելով բոլոր դժվարությունները, մինչև իսկ բռնվելու դեպքում անգամ Սիբիր աքսորվելու վտանգը, համառորեն շարունակել են աշխատանքը:

«Այդ բոլորի առաջն առնելու համար,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը,-Զինական Ֆոնդը մշակել էր ծածկանուններ եւ յայտարարել է գործին մօտիկ ընկեր-

[1] Նույն տեղում, թ. 135:
[2] Նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 139:

ներին: Շնորհիվ դրան անվտանգ կերպով կարելի էր լինում կանոնաւոր կերպով ե՛ւ հաշիւները պահել, ե՛ւ հեռագրերը կամ նամակները գրել»[1]:

Ռուսաստանի տարբեր քաղաքներից զենք ու զինամթերք են տեղափոխել նաև թուրքերը: «Մշակ» թերթին հասցեագրած թղթակցություններում կան այդ իրողությունը հավաստող բազմաթիվ վկայություններ[2]:

Թղթակցություններից մեկում նշվում է. «...տասնեակ թուրքեր թէ Մոսկվայում եւ թէ Ռուսաստանի մի քանի քաղաքներում զէնքեր են առնում եւ ճանապարհում Կովկասի զանազան քաղաքներ: Այս թուրքերը մեծամասամբ դարաբաղցի թուրքերն են, եւ քիչ չեն նաեւ Երեւանցի, Շամախեցի, Գանձակեցի, Նուխեցի, Ղազախի թուրքերը»[3]:

Այդ նույն փաստաթղթերից պարզվում է, որ զենք ու զինամթերքի գնման և տեղափոխման գործով հիմնականում զբաղվել են թուրք ազդեցիկ դեմքերն ու ցեղախմբերի առաջնորդները (բեկեր)[4]:

Այս հարցում դարձյալ դրսևորվել է ցարական իշխանությունների կողմնակալ վերաբերմունքը: Թուրքերը գրեթե առանց խոչընդոտի «Վոլգա գետի վրայով մեծ քանակութեան զէնք են հասցրել Հաշտարխան, իսկ Հաշտարխանից իրանց սեպհական նաւերով եւ պարախոտներով Բաքու... հային խուզարկում են իսկ թուրքին առանց խուզարկելու բաց թողնում...»[5]:

Երբ հայտնի է դառնում, որ կովկասահայությանը ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ՀՅԴ նախաձեռնությամբ Թիֆլիսում և Բաքվում հիմնվել են Զինվորական ֆոնդեր, կուսակցական կառույցներից ու գյուղական բնակավայրերից բազմաթիվ դիմումներ են ստացվել, որով պահանջել են զենք և զինամթերք:

Քանի որ Զիֆոնի հնարավորությունները սահմանափակ էին, բնական է, որ հնարավոր չէր բավարարել ինքնապաշտպանական շրջանների ներկայացրած բոլոր պահանջները: Իսկ դա հարուցում էր դիմողների դժգոհությունն ու հուսալքությունը: Ի՞նչ պետք է արվեր: Ստեղծված իրավիճակից դուրս գալու և գործը հաջողությամբ կարգադրելու համար Զինական Ֆոնդը կազմում է իր կանոնադրությունը և ուղարկում շրջանները, որպեսզի նրանք իրենց գործունեությունը չսահմանափակեն միայն դիմումներ հղելով ու Թիֆլիսից և Բաքվից զենք ու զինամթերք պահանջելով:

Աբ. Գյուլխանդանյանի գնահատմամբ «Այդ կանոնադրութիւնը մի փոքր սթափեցրեց մեր մարմինները եւ առհասարակ հեռաւոր գաւառներում ապրող հայերը, որոնք միմիայն պահանջներ էին անում, եւ զարմանում էին որ այդ պահանջները անմիջապէս չեն կատարւում»[6]:

[1] Նույն տեղում, էջ 142-143:
[2] ՅԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 395, թ. 134:
Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] «Հայրենիք» ամս., 1934, հ. 7, էջ 139:

Ճիշտ է, այդ կանոնադրությունը որոշակի դերակատարություն ունեցել է, բայց շրջաններից չարունակվել է ՀՅԴ Արևելյան բյուրոյին և Զինվորական մարմնին հասցեագրված հեռագրերի հոսքը, որի պահանջն ու խնդրանքը միակն էր, զինական աջակցություն, զենք և զինամթերք:

Շրջանների պահանջները բավարարելու, այն է՝ զենք ու զինամթերք հատկացնելու համար անհրաժեշտ էին հսկայական ֆինանսական միջոցներ, որոնց ձեռք բերումը չափազանց դժվարին խնդիր էր: Այդ դեպքում ի՞նչ պիտի արվեր, ինչպիսի՞ քայլեր պիտի ձեռնարկվեին:

Բաքվի ՀՅԴ կենտր. կոմիտեն և Զինվորական մարմինը ստեղծված կացությունից դուրս գալու համար ծրագրում են ձեռնարկել բռնի հանգանակություն այն հայերի մեջ, որոնց համար խորթ էր ընդհարումների հետևանքով դժվարագույն իրավիճակում հայտնված հայության աղետալի վիճակը:

Իր ծրագրած ձեռնարկը իրականացնելու նպատակով ՀՅԴ Բաքվի ենտ. կոմիտեն Արցախի (Ապառաժ) կոմիտեությանն է ուղարկում հետևյալ գրությունը. «Ուրիշ շրջանների, մանաւանդ ձեր շրջանի պահանջները բաւարարելու համար, մեզ մնում է դիմել կայանալիք Դաշնակցական Ռայոնական Ժողովին՝ ձեռնարկելու համար բռնի հանգանակութիւն: Ուղարկեցէք դուք եւս ձեր պատգամաւորները նոյնպիսի առաջարկով»[1]:

1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում տեղի է ունենում ՀՅԴ Կովկասյան Ռայոնական ժողովը, որի օրակարգում, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում է նաև բռնի հանգանակություն կատարելու խնդիրը[2]:

1. Ներկայ պատերազմական ժամանակամիջոցում բացառիկ միջոցներով հանգանակութիւն անելու համար ժամանակաւորապէս վերականգնուում է «Փոքորիկ»-ը:

2. «Փոքորիկ»-ը վերակազմելը յանձնուում է նախկին «Փոքորիկ»-ին:

3. «Փոքորիկից դուրս Հ.Յ. Դաշնակցութեան բոլոր Մարմիններին խստիւ արգելւում է որեւէ ձեւով եւ անունով՝ հանգանակութեան համար բռնի միջոցների դիմել, բայց «Փոքորիկ»-ն իր դիմումների մասին վաղօրօք յայտնում է, ի գիտութիւն, տեղական Մարմիններին:

6. «Փոքորիկ»-ի դիմումներն ուղղուած պէտք է լինեն որոշ դասակարգի չափազանց սահմանափակ շրջանի և ամեն միջոց պէտք է գործի դրուի ծայրայեղ միջոցներից խուսափելու համար:

7. «Փոքորիկ»-ի ձեռք բերած գումարները յանձնուելու են «Ֆոնդի» Մարմնին(նկատի ունի Զինական Ֆոնդը-Զիֆոն-Հ.Գ), միմիայն ընդհանուր զինման եւ ինքնապաշտպանութեան գործին յատկացնելու համար...»[3]:

Կովկասյան Ռայոնական ժողովը, որի աշխատանքներին, բացի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներից (Նիկոլ Դուման, Վարդան,

[1] Նույն տեղում, էջ 142-143:
[2] Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:
[3] Նույն տեղում:

Սեբաստացի Սաքո. Սեբաստացի Մուրադ. Քեռի), մասնակցել են Դաշնակցության նշանավոր գործիչների մեծ մասի (Ավ. Միհարոնյան. Ավ. Իսահակյան. Ավ. Սահակյան(Հայր Աբրահամ). Աբ. Գյուլխանդանյան. Արմեն Գարո. Դարեգին Խաժակ. Եղիշե Թոփչյան. Համո Օհանջանյան. Համազասպ. Հարություն Շահրիկյան. Հովսեփ Արտաշյան. Հովհաննես Քաջազնունի. Սիմոն Վրացյան և այլոք). փաստորեն վերականգնում է բռնի հանգանակություն ունեցող մարմնի՝ Փոքորիկի գործունեությունը [1]:

Համաձայն Ռայոնական ժողովի որոշման. սահմանափակ էր քանակը այն քաղաքների ու բնակավայրերի. որտեղ «Փոքորիկ»-ը պիտի կատարեր բռնի հանգանակություն: ՀՅԴ հանձնարարությամբ Ռուսաստանի և Կովկասի նախանշված թույլատրելի շրջաններն են մեկնում կուսակցական բազմաթիվ գործիչներ:

«...այդ առաքելութեամբ.- գրում է Աբ. Գյուլխանդանյանը.-Հիս. Կովկաս անցան մեր ընկերներից Յ. Շահրիկեանը. Ս. Մ. և ուրիշները. որոնք աշխատելով գլխաւորապէս Եկատերինոդարի եւ Ռոստովի շրջաններում՝ կարողացան զգալի գումարներ ստանալ հայ հարուստներից. որով հնարաւորութիւն ստեղծուեց ինքնապաշտպանութեան գործը դնել աւելի լայն եւ արդիւնաւոր հողի վրայ» [2]:

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 236-240:
[2] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 143:

2. 4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Ընդհարումների ընթացքում Զինվորական մարմինները շրջանների ինքնապաշտպանական ուժերը գինել են ոչ միայն Զինական ֆոնդից ստացած զենքերով. որոնց քանակությունը սահմանափակ էր և միայն մասամբ էր բավարարում շրջանների մարտական խմբերը գինելու պահանջները: Զուգահեռաբար Զինվորական մարմինները ՀՅԴ կառույցների աջակցությամբ կարողացել են տարբեր միջոցներով որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել նաև իրենց վստահված շրջաններում:

Այս առումով հատկապես աչքի է ընկել Նիկոլ Դումանի գլխավորած Երևանի նահանգի Զինվորական մարմինը:

Ժամանակի մեծ մասն անցկացնելով իր հրամանատարական կենտրոնավայրում՝ Երեւանում. Դումանը գրեթե մշտապես անխափան գործող կապի միջոցով պարբերաբար անհրաժեշտ տեղեկություններ է ստացել գավառներում կատարվող դեպքերի մասին և կարողացել պատշաճ մակարդակով համադրել ու ղեկավարել նրանց գործողությունները:

Գավառների ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար հարկավոր էր ի սկզբանե դնել առաջին կարևոր հիմնաքարը. այն է՝ ճիշտ կատարել վտանգված շրջանների մարտական ուժերի հրամանատարության ընտրությունը: Ու՞մ պիտի վստահվեր հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը:

Մեծ հավատ ընծայելով Արևմտահայաստանից եկած ֆիդայիներին՝ Նիկոլ Դումանը նրանց ուղարկում է առավել վտանգված շրջաններ. որպեսզի նրանք տարիների կուտակած իրենց մարտական փորձն ու հմտությունը օգտագործեին կազմակերպելու տեղի հայության ինքնապաշտպանությունը:

Այսպես. Զանգեզուրի ու Ագուլիսի շրջաններն է ուղարկում Սեբաստացի Մուրադին ու նրա անբաժան զինակիցներ Կայծակ Առաքելին. Ավոյին և Մեշեդի Ավետիսին: Դարալագեազի շրջանի պաշտպանությունը հանձնում է Տարոնի ֆիդայիներ Հաջի Հակոբին. Առյուծ Ավագին: Մշեցի Սմբատ Բորոյանը (Մախլուտո) ստանձնում է Ղամարլուի (Արտաշատ) շրջանի պաշտպանության հրամանատարությունը. Շարուրի շրջանինը՝ Սեյդո Պողոսը:

Այս ամենը գործի կազմակերպման միայն սկիզբն էր: Ընդհարումների ընթացքում նահանգի Զինվորական մարմինը պարբերաբար գավառների ինքնապաշտպանական ուժերը համալրել է պատմությանը դեռևս անհայտ երիտասարդ հրամանատարների առաջնորդությամբ գործող մի շարք մարտական խմբերով. որոնք մարտադաշտում հրաշալի քննություն բռնելով. իրենց նշանակալի ավանդն են ներդրել շարունակվող կռիվներում:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ «...Իրեն (նկատի ունի Դումանին-Հ. Գ.) յատուկ հմտութեամբ նա ամբողջ նահանգում կազմակերպեց դիմադրութիւնը. կազմակերպեց զէնքի եւ ռազմամթերքի ներմուծումը. գինեց եւ անհրաժեշտ վայրե-

ռում դասատրեց աւելի քան 3000 դաշնակցական կամաւորներ եւ միանգամայն ապահովեց նահանգի ֆիզիկական գոյութիւնը մինչեւ վերջ» [1]:

Բաքվի փետրվարյան և Երևանի մայիսյան դեպքերը հստակորեն ցույց տվեցին, որ թեև թուրքական կողմը գրեթե ամենուրեք հայերից անհամեմատ ավելի լավ էր զինված ու նախապատրաստված և վայելում էր իշխանությունների հովանավորությունը, այնուամենայնիվ, իրավիճակն այնքան էլ ասրսապելի չէր: Համարձակ ու խելամիտ գործողություններ ձեռնարկելու պարագայում կարելի էր արժանի հակահարված տալ թուրք հրոսակախմբերի հարձակումներին, մանավանդ որ դրանք ավելի շատ հախուռն ու ամբոխային բնույթ էին կրում և այնքան էլ կազմակերպված չէին: Բայց այնպիսի պայմաններում, երբ թուրքերն ամենուրեք նախահարձակ էին, չափազանց դժվար էր ակնկալել սոսկ կրավորական ինքնապաշտպանական մարտեր մղելով նվաճել հաղթանակներ և կանխել հայության գլխին ծառացած վտանգը:

Հակառակորդի հարձակողական տրամադրվածությունը կոտրելու, նրա նկատմամբ վճռական գերակշռություն ձեռք բերելու համար հարկավոր էր նախահարձակ լինել, խլել նրանից նախաձեռնությունը և հնարավորության դեպքում ձեռնարկել նաև հարձակողական գործողություններ:

Երևանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունն ընդունելու առաջին իսկ օրից Դումանը ծրագրում է իրականացնել մի շարք հարձակողական գործողություններ, հատկապես այն շրջաններում, ուր մահմեդական տարրը մեծամասնություն չէր կազմում: Համանման մի գործողություն պետք է իրականացվեր Բարձր-Տեղի և Նիգի (ներկայիս Աշտարակի և Ապարանի շրջաններ - Հ.Գ.) տարածքում: Այդ շրջանների թուրք բնակչությունը, չնայած մեծամասնություն չէր կազմում, թևավորված իրենց արյունակիցների գործողություններով, զինյալ խմբերով հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա:

Բարձր-Տեղի և Նիգի շրջանը վարչատարածքային առումով մտնում էր Էջմիածին գավառի մեջ: Խառը բնակչություն ունեցող Էջմիածինի գավառում հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Էջմիածինի գավառը բաղկացած էր 219 գյուղերից, որից 88-ը հայկական էին: Գավառի ընդհանուր ազգաբնակչությունը կազմում էր 124.000 մարդ, որից հայերը՝ 76.000, թուրքերը՝ 45.000 և այլ ազգեր՝ 3.000 [2]:

Էջմիածին գավառում զանգվածային կռիվները տեղի են ունեցել միայն Աշտարակի շրջանում, որտեղ կային զուտ հայաբնակ, զուտ թուրքաբնակ և խառը՝ հայ ու թուրք բնակչություն ունեցող գյուղեր:Հայաբնակ գյուղերը ընկած էին Արագածի փեշերին, Քասախ գետի և նրա մեջ թափվող առվակների հովիտներում: Այդ գյուղերն էին, Աշտարակը՝ 401 տուն, Մուղնին՝ 35, Կարբին՝ 132, Օհանավանքը՝ 69, Իլանչալանը (Արտաշավան)՝ 44 և Ղալաչին՝ 45: Զուտ թուքաբնակ գյուղերն

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, թ. 3:
[2] Տե՛ս Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 130:

էին. Փաթրինջը՝ 61 տուն, Ագարակը 69, Քիչիկքենդը՝ 36, Թաքիան՝ 85, Նազրվանը՝ 58, Ուշին՝ 142, Պերսին՝ 34, Անգրսակը՝ 20, Քյուրդալուն 11 և Համամլուն՝ 61: Հայ և թուրք խառը բնակչություն ունեցող գյուղերն էին. Փարբին՝ 21 տուն թուրք և 86 տուն հայ, Սաղմոսավանքը՝ 14 տուն թուրք ու 10 տուն հայ, Ղոթուրը՝ 11 տուն թուրք և 17 տուն հայ [1]:

Ըստ Բարձր-Տեղ և Նիգի շրջաններում տեղի ունեցած ընդհարումները ներկայացնող վավերագրի, ընդհարումներն այդ շրջանում բռնկվում են մայիսի 24-ին: Այդ օրը, Չոբանքյարի թուրքերը, ոգևորվելով նախորդ օրը Երևանում տեղի ունեցած դեպքերի արձագանքով, հարձակվում են Աշտարակի հանդերում վարանող գյուղացիների վրա: Լսելով թուրքերի հարձակման մասին, Աշտարակից մի խումբ զինված երիտասարդներ շտապում են օգնության, իսկ թուրքերը լքում են մարտադաշտն ու հեռանում [2]:

Հավատարիմ մնալով իրենց որդեգրած քաղաքականությանը, գավառի իշխանությունները պիտի ստեղծեին պատրվակներ, որպեսզի խորացնեին ու ընդարձակեին հայ- թուրքական ընդհարումները: Ահա հենց իշխանությունների սադրանքով բացի վերոհիշյալ միջադեպից, Աշտարակի շրջանում պատահում է ևս մի դիպված, պատրվակ:

ՀՅԴ Ալեքսպոլի «Քար» կոմիտեի անդամ Կարպովիչը ընկերներին հասցեագրած գրություններից մեկում (1905թ. հուլիսի 8-ին) անդրադառնալով այդ դիպվածին՝ հայտնում է, որ Ղոթուրցի հայ բնակիչներից մեկը հրացան գնելու նպատակով փոխարինաբար փող է վերցնում համագյուղացի ինչ-որ մի թուրքից և հետո մերժում նրան վերադարձնել թե փողը, և թե հրացանը: Խաբված թուրքը մեկ այլ թուրքի ընկերակցությամբ հարձակվում է հայի վրա, և փորձում սպանել նրան: Սակայն տեղի է ունենում ճիշտ հակառակը, հարձակման ենթարկված հայն է սպանում թուրքերին: Ղոթուրի կատաղած թուրք բնակիչները իրենց արյունակիցների թափած արյան վրեժը լուծելու թույնով համակված, հարձակվում են Ղոթուր գյուղի հայերի վրա եւ տանում նրանց պատկանող տավարը: Ղոթուրը խառը բնակչություն ունեցող գյուղ էր, հայերն իրենց հերթին հարձակվում են թուրքերի վրա եւ «...8-12 հոգի սպանում, տները թալանում, վառում եւ փչացնում:

Կանայք և երեխայք ու փախստական թուրքերը ապաստանում են թրքական Օշի գիւղը, որը շատ մօտ է Կարբի գիւղին: Այս լուրը լսելով գրգռում է շրջակայքի թուրքերին և մեծ թով թուրքեր դուրս են գալիս ու փորձում են յարձակուել Կարբի, Ղոթուր, Հաւավանք, Իլանչալան և ուրիշ հայ գիւղերի վրայ» [3]:

Կռիվը բռնկվում է, հակամարտող կողմերին խաղաղեցնելու նպատակով գործին միջամտում է ազգությամբ թուրք Աշտարակի պրիստավը և առաջարկում, դադարեցնել վերջ տալ թշնամանքին ու հաշտվել: Հայերը համաձայնվում

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 356, գ. 15, էջ 1:
[3] Նույն տեղում:

են հաշտվել մի պայմանով. եթե թուրքերը վերադարձնեն իրենց նախկիրը. իսկ թուրքերը. քանի որ հաստատապես ծրագրել էին Ուշի և մյուս գյուղերի թուրք գինյալների համագործակցությամբ հարձակվել հայկական բնակավայրերի վրա և կոտորելով բռնագրավել նրանց ունեցվածքը. կտրականապես հրաժարվում են կատարել պրիստավի առաջարկությունը: Վերոհիշյալ հայկական գյուղերի բնակչությանը հայտնի է դառնում թուրքերի մտադրությունը: Պարզվում է նաև. որ իր արյունակիցներին պաշտպանող Աշտարակի պրիստավի խոստումները կեղծ էին: Նրա կողմից հակամարտող կողմերին առաջարկած կեղծ խոստումները նպատակ էին հետապնդում ապակողմնորոշել. խաբել հայերին ու հնարավորինս օգնել թուրքերին:

«...մերոնք. - նշում է Կարպովիչը. - լսած լինելով. որ Իսկանդար աղան (նկատի ունի Աշտարակի պրիստավին- Հ.Գ.) պատրիել է թուրքերին ապիտակ շորեր հագնել. կեղծել իրենց տարազը. հայերին մոլորեցնելու համար. մեր տղերքը մի զալալ բաց են անում պրիստաւի վրայ: Նա փախչում է. յետոյ թեթև կռիւ են ունենում թուրք ամբոխի հետ. որոնցից 5-6 հոգի ապանում է...» [1]:

Թեթևակի ընդհարումներից հետո թուրքերը կենտրոնանում են Ուշի գյուղում: Թուրքական գյուղերից հայ բնակչության համար առավել վտանգավորը հենց այդ. գուտ թուրքաբնակ Ուշի գյուղն էր. որն այդ օրերին վերածվել էր թուրք գինված հրոսակախմբերի յուրօրինակ հավաքատեղի:

Մայիսի 31-ին Ուշեցիները կտրում են ոչ միայն Օհանավան. Կարբի և Մուղնի գյուղերի ջրերը. այլև փակում դեպի Ապարան տանող մայրուղին: Միաժամանակ Ուշիում կենտրոնացած թուրքերը. որոնց միանում են նաև Համամլուի և Չորանքյարայի գինյալները մի քանի անգամ կրակ են տեղում հայկական գյուղերի և հատկապես Սաղմոսավանքի վրա [2]:

Քանի որ կապը կենտրոնի՝ Երևանի և շրջանների միջև արդեն հաստատվել ու գործում էր. Բարձր-Տեղի ու Նիգի տարածքում կատարվող դեպքերին վերաբերվող տեղեկությունները հասնում էին Նիկոլ Դումանին: Շատ լավ առիթ և հնարավորություն է ընձեռվում հայ մարտական ուժերին վերջնականապես լուծելու Ուշիի ու այդ տարածաշրջանի թուրքաբնակ գյուղերի հարցը:

Բարձր-Տեղի և Նիգի հայկական գյուղերը կարողացել էին կազմավորել ու արդեն ունեին իրենց պատրաստի մարտական ուժերը: Դումանը որոշում է այդ տարածքում նախահարձակ լինել և խիստ պատժի ենթարկել ու քարուքանդ անել նրանց բնակավայրերը. ինչը հրաշալի. զգաստացնող դաս կլիներ այդ շրջանի և ընդհանրապես. թուրքերի համար:

Բարձր-Տեղ և Նիգի գյուղերի մարտական ուժերը կազմակերպելու ու թուրքական բնակավայրերի վրա ծրագրած հարձակումն իրականացնելու նպատակով Երևանի նահանգի զինվորական մարմնի. անձամբ Դումանի հանձնարարությամբ. մարտախմբով վերոհիշյալ շրջանն է գալիս Արսեն

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Տեր Պողոսյանը (Բաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի (Սամսոն Տեր-Պողոսյան որդին) : Բարձր-Տեղի և Նիգի տարածքում ձեռնարկած մարտական գործողությունների մասին հուշեր է գրել այդ գործողության մասնակից. Ռուբինայի (Քր. Միքայելյանի հոգեզավակն է. ՀՀ 3-րդ վարչապետ Համո Օհանջանյանի տիկինը-Հ. Գ.) եղբայրը խմբապետ Բարսեղը [1]:

Երևանի նահանգի մարտական ուժերի կողմից Բարձր-Տեղի և Նիգի տարածքում ձեռնարկված առաջին հարձակողական գործողությունները ավարտվում են հաջողությամբ: Արդյունքը Ուշի և թուրքաբնակ մի քանի այլ գյուղերի կործանումն էր [2]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի առաջին հարձակողական գործողությունները շատ կարևոր էին: Զինվորական Մարմինը վճռում է առանց ժամանակ վատնելու անհապաղ լուծել նաև Արարատյան դաշտի թուրքաբնակ գյուղերի հարցը: Զուգահեռաբար հայկական ինքնապաշտպանական ուժերը հարձակողական հաջող գործողություններ են ձեռնարկում նաև Արամուս և Բաշգառնի գյուղերի մերձակայքում գտնվող թուրքաբնակ գյուղերի տարածքում: Հարձակման հետևանքով. «... մասամբ թալանված և մասամբ էլ այրված են թրքաբնակ գիւղերը՝ Քիւզաջի 20 տ., Քիւլուջա 50 տ., Մանգուզ 50 տ., Քեամալ 60 տ. և Թուքիան 60տ....» [3]:

Բացի վերոհիշյալ դեպքերից՝ Դումանի հանձնարարությամբ տարբեր շրջանների հրամանատարությունը ստանձնած փորձառու մարտիկները տեղացի ուժերի համագործակցությամբ արդյունավետ կռիվներ են մղում նաև Երևանի նահանգի մի շարք այլ վայրերում: Օրինակ, Դարալագյազի շրջանում հայ մարտական ուժերը Տարոնի անվանի ֆիդայիներ Հակոբ Կոտոյանի (Հաջի Հակոբ) և Առյուծ Ավագի գլխավորությամբ, մեծ վարպետությամբ են կազմակերպում հայկական գյուղերի, մասնավորապես՝ Մարտիրոս, Ալմալու (Խնձորուտ) ու Փաշալու (Զառիթափ), պաշտպանությունը և արժանի ջարդ տալիս հայկական բնակավայրերն ասպատակող թուրք գինյալ խմբերին:

Մեծ հաջողությամբ են գործում նաև Սմբատ Բորոյանի գլխավորած մարտախմբերը Ազատ-Դաշտի շրջանում (Արտաշատ, Վեղի, Մասիս – Հ.) [4]:

Ջրաբաշխի (Սևանի ավազան) հայկական մարտական ուժերը՝ Կայծակ Առաքելի, Ջալլադի (Երվանդ Բաբերյան), Սլաքի (Արմենակ Օխիկյան) հրամանատարությամբ, դրսևորելով արժանի կազմակերպվածություն, մի շարք հարձակումներ են գործում թուրքական գյուղերի վրա ու խափանում հայկական բնակավայրերի վրա հարձակում գործելու ձեռնարկումները [5]:

Երեւանի նահանգում իրավիճակը շատ ծանր է եղել նաև Շարուր-Դարալագյազ գավառում: Շարուր-Դարալագյազը Երևանի նահանգի գա-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 356, գ. 15, էջ 2:
[2] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Նիկոլ Դուման, Երեւան, 2002, էջ 210-215:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 294, գ. 33:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 294, գ. 34, էջ 5:
[5] Տե՛ս նույն տեղում:

վառներից ամենափոքրն էր: Նրա մասն էին կազմում երկու շրջանները կամ գավառամասերը՝ Շարուրն ու Դարալագյազը: Այդ գավառը նահանգի մյուս գավառների համեմատությամբ ուներ մի առանձնահատկություն: Շարուր-Դարալագյազը նահանգի միակ գավառն էր, ուր հայությունը կազմում էր ընդհանուր բնակչության փոքրամասնությունը: Իսկ դա նշանակում էր, որ թշնամու հարձակման դեպքում այնտեղ անհամեմատ դժվարին կլիներ կազմակերպելու հայ բնակչության ինքնապաշտպանությունը:

Ըստ «Մուրճ»-ի տվյալների, Շարուր-Դարալագյազ գավառը բաղկացած էր 163 գյուղերից, որոնցից հայաբնակ էին 33-ը: Գավառի ընդհանուր բնակչությունը կազմում էր 81408 մարդ, որից 22650 հայեր էին, իսկ 55790-ը թուրքեր [1]:

Համաձայն Ա-ԴՕ-ի տվյալների «Գաւառի ազգաբնակչութեան ընդհանուր թիւն է 76 հազար, որից թուրքերը՝ 55 հազար, իսկ հայերը՝21 հազար: Հայերն այս գաւառում ամբողջ նահանգի մէջ կազմում են 21%-ը»:

Շարուր գավառամասը բաղկացած էր 54 գյուղերից, որոնցից վեցը՝ Ուլյանորաշենը, Դաշարխը, Ալաքլուն, Վարմզիարը, Խանլուխլարը, Թազաքենդը զուտ հայաբնակ, իսկ երկուսը՝ Քեշտազն ու Փարչին հայ և թուրք խառը բնակչություն ունեցող գյուղեր էին: Քեշտազ և Փարչին գյուղերում համապատասխանաբար բնակվում էին 30 ու 50 թուրք ընտանիքներ [2]:

Այդ օրերին նահանգի Զինվորական մարմնի ղեկավար Նիկոլ Դումանի շտաբը տագնապալի տեղեկություններ էր ստանում Շարուրի շրջանից, ուր հայկական վեց գյուղերի բնակչությունը հարձակման էր ենթարկվել թուրք ամբոխի ու նրան միացած քուրդ հրոսակախմբերի կողմից:

Երևանի հոգևոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը փոխարքային՝ կոմս Վորոնցով-Դաշկովին ներկայացրած զեկուցագրում հայտնում է, որ Շարուրի գավառակում, որի ողջ բնակչությունը, բացի 6-7 հայկական գյուղերից, թաթար են, կեղծ լուրեր են տարածել, ըստ որի իբրև հայերը հարձակվել են Քամարլու գյուղի վրա և կոտորել տեղի թաթար բնակչությանը: Իրականության հետ որևէ կապ չունեցող այդ կեղծ լուրն այնպիսի խիստ վրդովմունք է առաջացնում թաթարների մոտ, որ նրանք մտադրվում են վրեժխնդիր լինել հայերից: Շարուրի հայկական գյուղերի բնակչությունը հայտնվում է ծանրագույն կացությունում:

Կարապետ վարդապետի հավաստմամբ, ինքը Շեյխ-ուլ-իսլամի ընկերակցությամբ մեկնել է Շարուրի գավառակ և հանգստացրել են բորբոքված բնակչությանը: Միաժամանակ հեռագիր են ստանում, որը ժխտում է հայերի կողմից Քամարլու գյուղի թաթարներին կոտորելու մասին տարածված տեղեկությունները: Հեռագիրը նաև հաղորդում է, որ հայերի ու թաթարների միջև հաստատվել է խաղաղ իրավիճակ [3]:

[1] «Մուրճ», 1905, թիւ 7, էջ 146:
[2] Տե՛ս Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 107:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, թ. 17-18:

«Շեյխ-ուլ-իսլամը,-հայտնում է Կարապետ վարդապետը,-երդման խոսք վերցրեց թաթարներից, որ նրանք իրենց կպահեն խաղաղ ու հանգիստ...

Բայց և այնպէս հաջորդ օրը թաթարները հարձակվում են Շարուրի գաւառակի հայկական գիւղերի վրա» [1]:

Զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային հայտնում է, որ համաձայն Շեյխ-ուլ-իսլամի պատմածի, տեղի թաթարների հետ միասին հայկական գյուղերի վրա հարձակվել են նաև 500 քուրդ զինյալներ, որոնք Շարուրի գավառակ էին ներխուժել՝ գետանցելով Արաքսը [2]:

Այդ նույն իրողությունը հաստատում է նաև «Մշակ»-ը, որի ներկայացմամբ Շարուրի հայկական բնակավայրերի վրա թուրքերի ձեռնարկած հարձակումից ընդամենը մեկ օր առաջ՝ մայիսի 29-ին «Նախիջեւանից ժամանած Շեյխ ուլ-իսլամը եւ Կարապետ վարդապետը Բաշնորաշէնում(այդ գյուղը Շարուր գավառամասի վարչական կենտրոնն էր-Հ.Գ.), յորդորում են խաղաղութիւն եւ համերաշխութիւն: Բայց նրանց հեռանալուց յետոյ պատահեց հակառակը» [3]:

Մայիսի 30-ին, գավառակի թուրքական գյուղերի բնակիչները հարձակվում են հայկական Ուլյանորաշեն գյուղի վրա, որը շրջանի ութ գյուղերի մեջ ամենահարուստն էր ու ամենամեծը: Գյուղը ունեցել է 220 տուն [4]:

Համաձայն ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի կազմած «Համոստ տեղեկագիր Շարուր-Դարալագեազի հայաբնակ մի քանի գիւղերի աւերման» փաստաթղթի տվյալների, Ուլյանորաշեն գյուղը ունեցել է 177 տուն [5]:

Տեղեկագիրը հաղորդում է, որ մայիսի 29-ին լուր էր տարածվել, որ հաջորդ օրը թուրքերը հարձակվելու էին Ուլյանորաշեն գյուղի վրա: Այդ օրը գավառապետը Շարուրում չէր, նա գնացել էր Դարալագյազ ժողովրդին հանգստացնելու: Ուլյանորաշենի գյուղացիները հարկադրված դիմում են պրիստավին(գավառի դատավոր-Հ.Գ.), և նրան հաղորդում իրենց լսածի մասին: Պրիստավը նրանց պատասխանել է «...թէ այդպիսի բան չի կարող պատահել, ուստի գիւղացիք թող միամիտ լինեն» [6]:

Երեկոյան գալիս է նաև գավառապետը և հանդիպելով հայ բնակչությանը՝ դարձյալ հերքում է տարածված լուրը: Նույն օրը երեկոյան ժամը 10-ին գալիս են գավառում ազդեցիկ դիրք ունեցող Իսմայիլ խանի որդին՝ Ուլիա Նորաշէն Հաստ խանը և պրիստավը ու դարձյալ հավատացնում «...ժողովեցին հայ հասարակութիւնը հանգստացրին ու միամտացրին որ ոչինչ չի պատահի, թող անհոգ լինեն հայերը եւ միւս օրը թող ապահով ու հանգիստ սրտով սկսեն իրենց դաշտային գործերը» [7]:

[1] Նույն տեղում
[2] Նույն տեղում, էջ 18:
[3] «Մշակ», 1905, 4 յունիսի:
[4] Տե՛ս Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 108:
[5] ՀՅԴ ԿԱ» թԺ. 295, գ. 1, էջ 2:
[6] Նույն տեղում, էջ 5:
[7] Նույն տեղում, էջ 6:

Հակառակ իշխանության ներկայացուցիչների ու թուրք առաջնորդի կողմից հայ բնակչությանը տված խոստումներին, թուրքերը հոծ բազմությամբ հաջորդ օրը հարձակվում և պաշարում են Ուլյանորաշեն գյուղը:

Տեղեկագրի վկայությամբ այդ օրը գավառապետն ու պրիստավը թեպետ աղաչել-պաղատել, համոզել են թուրքերին հրաժարվել իրենց մտադրությունից, չհարձակվել հայկական բնակավայրերի վրա, բայց ամեն ինչ անցնել է ապարդյուն: Թուրքերը մնացել են անդրդվելի: «Թուրքերի ահագին խուժանը,-նշում է տեղեկագիրը,-գոռում-գոչումով բռնեցին գիւղի արեւմտեան կողմը եւ անտառների մէջ դարան մտնելով սկսեցին հրացանաձգութիւն» [1]:

Չնայած թուրքերին հաջողվել է գրավել գյուղը, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ Ուլյանորաշենի բնակիչները մղել են հերոսական մարտեր: Երկու օր շարունակ Ուլյանորաշենի բնակիչները կարողացել են իրենց սահմանափակ հնարավորությամբ, դիմադրել ու հետ մղել թուրքերի գրոհները:

Հունիսի 1-ին հարձակման ենթարկվելով Շարուրի գրեթե ամբողջ թուրք բնակչության և զանազան վայրերից եկած ու նրանց միացած թուրք զինյալների կողմից, ուլյանորաշենցիները հարկադրված կռիվ մղելով հեռացել են գյուղից և դիրքեր գրավել գյուղի մերձակա Օղլան-դալա լեռան վրա:

Ուլյանորաշենի բնակչությունը ունենալով ընդամենը մի քանի հրացան, պաշտպանվել է բացառապես ապավինելով միմիայն իրենց ունեցած սուղ միջոցներին: Նույնիսկ Երևանի Զինվորական մարմինը չի հասցրել որեւէ միջոցով օգնել պաշարման մեջ հայտնված ուլյանորաշենցիներին:

«Մի քանի հրացանատրներ,-գրում է Ա-Դ-Օ-ն,- հերոսաբար դիմադրելով խուժանին եւ նրա շարքերից գետին գլորելով բաւական մարդիկ, հնարաւորութիւն տուին ժողովրդին քաշուել բլրի գագաթը...Սակայն նրանցից մէկը, Մաքեւոս Մովսէսեանը, այդ քաջ տղամարդը, իր տանիքի վրա մինչեւ վերջը կռուելով, գնդակահար եղաւ եւ մեռաւ» [2]:

Այդ օրը թուրք ամբոխին հատկապես մեծ ոգևորություն է պատճառել պրիստավի և զորքի վերաբերմունքը: Հարձակման երրորդ օրը՝ հունիսի 1-ին պրիստավը կես վաշտ զորքի գլուխն անցած գալիս է պաշարված գյուղին օգնության, բայց գյուղին չհասած, տեսնելով հարձակվողների հսկա բազմությունը, առանց որևէ հրացան արձակելու, հետ է դառնում և դիմում փախուստի: Թուրքերը տեսնելով պրիստավի ու զորքի այդ խայտառակ փախուստը, ավելի են ոգևորվում և ավելի համարձակ՝ շարունակում հարձակումը:

«Թիւրքերը,-վկայում է տեղեկագիրը,- մի քանի անգամ գրոհ տուին այս դիրքի վրայ, որպէսզի գրաւեին բլուրն ու կոտորեն հայերին. իւրաքանչիւր անգամ անյաջող էին եւ զոհեր տալով նահանջում: Հայերից սպանուել էր եւ այրուել 5 հոգի, իսկ թիւրքերից սպանուած էին 100-ից աւելի...» [3]:

[1] Նույն տեղում, էջ 2:
[2] Ա-Դ-Օ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 108:
[3] ՀՅԴ ԿԱ, թ. 295, գ. 1, էջ 2:

Չկարողանալով կոտրել Օղլան-դալա լեռան վրա դիրքավորված ուլյանորաշենցիների դիմադրությունը, թուրք ամբոխը հինգ օր շարունակ Ուլյանորաշենում տրվել է թալանի և ավարառության, ապա հրդեհել ու մոխրակույտի է վերածել գյուղը: Իսկ իրենց հարազատ բնակավայրի կործանման անխոս վկաները Ուլյանորաշենի բնակիչներն էին, որոնք պատսպարված Օղլան-դալա լեռան վրա, նրա բարձունքներից անխոս դիտել են իրենց բնակավայրի հրդեհը:

«Ուլիանորաշէնը,-եզրափակում է տեղեկագիրը,-ամբողջապէս թալանած, հրդեհած եւ քարուքանդ է արած, ամէն ինչ սրբել, տարել են:...Ուլիանորշէնց հացի բոլոր ցանքերը փչացան, մի կողմից ոտնահար լինելով, միւս կողմից անջուր մնալով: Նոյն վիճակի են մատնուած եւ բամբակի ցանքերը» [1]:

Ուլյանորաշենի բնակիչները ավելի քան երկու ամիս մնում են պատսպարված լեռան բարձունքներում և կրելով անասելի զրկանքներ, կարողացել են հետ մղել թշնամու բազմիցս կրկնվող հարձակումները՝ պաշտպանվել ու չեն հանձնել իրենց դիրքերը: Ուլյանորաշենցիները կռիվների ժամանակ ունեցել են ընդամենը չորս զոհ թշնամու 30-ի դիմաց, բայց երկու ամիս շարունակ մնալով Օղան-Դալայի բարձունքներում ցրտի, քաղցի ու հիվանդությունների հետևանքով ունեցել է բազմաթիվ զոհեր: Բացի դրանից թուրք ամբոխի իրականացրած թալանի հետևանքով Ուլյանորաշեն գյուղի նյութական վնասը կազմում է 600.000 ռուբլի, իսկ դաշտերի անխնամ ու անջուր մնալու պատճառով ևս 30.000-ից ավելի դաշտային կորուստ [2]:

Մայիսի 30-ին թուրք ամբոխի հարձակման թիրախն է դառնում նաև ընդամենը 54 տուն, խառը բնակչություն ունեցող Քեշտազ գյուղը: Շնորհիվ այն հանգամանքի, որ այդ գյուղի հայ և թուրք բնակիչները լավ հարաբերություններ ունեին միմյանց նկատմամբ, գյուղն այնքան էլ վնասներ չի կրել: Հայերի մի մասը ստիպված իր ունեցվածքի մի մասը պահ է տվել իր հարևան թուրքերին, իսկ մի մասն էլ թուրքերի կողմից թալանվել է: Գյուղի բնակիչները գիշերով փախել և ապաստանել են Խանլուխլար գյուղում:

Տեղեկագրի հաղորդմամբ սպանվել է միայն մի հայ՝ 70 տարեկան մի ծերուկ: Բայց գյուղը կրել էր նյութական մեծ կորուստներ: Անջուր մնալով չորացել էին գյուղացիներին պատկանող բոլոր հացաբույսերը, բամբակն ու բաղերը: Ոչ ոք վախից ու երկյուղից չէր համարձակվում դաշտ դուրս գալ և հնձել ցորենի հասունացած արտերը [3]:

Մայիսի 31-ին գավառամասի թուրքերը, որոնց միանում են քուրդ 500 զինյալները, միասնական ուժերով հարձակվում են գավառամասի հայկական մյուս Դաշարխ, Թազագյուղ, Ալաքլու և Վարմազիար գյուղերի վրա: Ի՞նչ կարող էին հակադրել ինքնապաշտպանական չնչին միջոցներից զուրկ, անզեն գյուղացիներն ընդդեմ մահմեդական հազարավոր զինյալների:

[1] Նույն տեղում, էջ 2:
[2] Ա-Դ-Օ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 108:
[3] ՀՅԴ ԿԱ, թ. 295, գ. 1, էջ 3:

Դաշարխ գյուղը, ըստ տեղեկագրի, ունեցել է 54 տուն:

Մայիսի 30-ին տեղեկանալով թուրքերի ձեռնարկումների մասին, գյուղացիները չունենալով ինքնապաշտպանություն կազմակերպելու հնարավորություն, փախչում են Խանլուխլար գյուղ: Ընդ որում գյուղացիները կարողանում են հնարավորության սահմաններում իրենց հետ տանել ունեցվածքի մի մասը, իսկ մեծ մասը բռնագրավում են գյուղ ներխուժած թուրքերը, որոնք չբավարարվելով թալանով, հրդեհում են նաև հայերի տները:

Նույն ճակատագրին են արժանանում Թազագյուղի բնակիչները, որոնք նույնպես լքելով իրենց գյուղը՝ ապաստանում են դարձյալ Խանլուխլարում:

Թազագյուղը պատկանել է մեծահարուստ ազնվական կալվածատեր Շանգիրեյին: «Թուրքերը,- ներկայացնում է տեղեկագիրը,-թալանել են սրան և տասնեակ հազարների վնաս հասցրել-5 հազար խալվար ցորեն, 100 մեշոկ ալիր, 150 փութ բրինձ, 5500 խալուար չալթուկ, թալանել են պահեստները, գրասենեակը, 45.000 արեքանոց արտերի ջուրը կտրել են: Ընդհանուր վնասը հասնում է 150.000-ի: Դաշարխցիներից սպանված են երկու հոգի» [1]:

Թուրք հրոսակախմբերի կողմից հարձակման ենթարկված հաջորդ հայկական գյուղերն են Ալիքլուն և Վարմազիարը, որոնք համապատասխանաբար ունեցել են 88 և 136 տուն:

Այս երկու գյուղերը թուրքերի կողմից հարձակման են ենթարկվել մայիսի 31-ին: Այդ օրը կատարվում է ուշագրավ հետևյալ դեպքը: Թուրքերի հարձակումը կանխելու և բնակչությանը պաշտպանելու նպատակով գավառի իշխանությունները վերջապես որոշում են միջամտել տեղի ունեցող դեպքերին և փորձում զորքի միջոցով ձեռնարկել որոշակի վճռական քայլեր:

Մայիսի 31-ին, գավառապետի օգնականը մի խումբ զինվորների գլխին անցած գալիս է Ալաքլու և գյուղի մերձակայքում հանդիպում թուրք ամբոխին, որը Յա՜ Ալի գոռալով հարձակվում էր Ալաքլու գյուղի վրա: Կատարվում է այն, ինչ նախորդ օրը կատարվել էր Ուլյանորաշեն գյուղում: Տեսնելով թուրքերի հոծ բազմությունը, գավառապետի օգնականը առանց որևէ քայլ ձեռնարկելու ու կրակոց արձակելու հեռանում է դեպի Վարմազիարի կողմը: Թուրքերն ավելի ոգևորվելով գավառապետի ու զորքի այդօրինակ պահվածքից, առանց դիմադրության ներխուժում են Ալաքլու գյուղ ու թալանում և այրում ամեն ինչ: Գյուղի բնակիչները մի կերպ, մեծ դժվարությամբ ազատվելով՝ փախչում են Խանլուխլար:

Գրեթե նույն իրավիճակն է կրկնվել նաև Վարմազիար գյուղում: Հեռանալով Ալաքլուից, գավառապետի օգնականը զինվորների հետ հասնում է Վարմազիար, բայց հանդիպելով գյուղի վրա հարձակվող ամբոխին, հեռանում և դիրքեր է գրավում գյուղի ու երկաթուղու մեջտեղը և կոզակների հետ միասին սկսում անկանոն կրակ տեղալ թուրքերի ուղղությամբ:

[1] Նույն տեղում, էջ 5:

Օգտվելով այդ հանգամանքից «Վարմազիարի գիւղացիները փախան, ապաւինեցին Խանլուխլար, իսկ իրենց գիւղը ալան-թալան եղաւ թիւրքերի կողմից: Վարմազիարից սպանուած են 4 հոգի» [1]:

Հարձակման ենթարկված վերոհիշյալ գյուղերի թվով 4000 բնակիչներ, բացառությամբ Փարչիի, հարկադրված հեռանում են իրենց բնակավայրերից ու ապաստանում Խանլուխլար գյուղում [2]:

Թուրք հրոսակախմբերը հետապնդելով հայերին՝ պաշարում են Խանլուխլար գյուղը: Խանլուխլարը 220 տուն ունեցող ամենամեծ հայաբնակ գյուղն էր Շարուրի գավառակում, որը նաև կենտրոնական դիրք ուներ հայկական մյուս գյուղերի նկատմամբ:

Ի տարբերություն հայկական մյուս գյուղերի, որտեղ Երևանի նահանգի Զինվորական մարմինը և ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեն, կարելի է ասել, ժամանակին ոչ մի քայլ չէին ձեռնարկել կազմակերպելու այդ գյուղերի ինքնապաշտպանությունը, Խանլուխլար գյուղի նկատմամբ, այնուամենայնիվ, որոշակի քայլեր իրականացրել են: Շարուր գավառակում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է, որ թուրքերի կողմից հարձակման ենթարկված գյուղերի բնակչության տեղափոխությունը Խանլուխլար պայմանավորված չէր սոսկ այն հանգամանքով, որ այդ գյուղը ամենամեծն էր և հայաբնակ մյուս գյուղերի նկատմամբ ուներ կենտրոնական դիրք:

Հայտնի է, որ փետրվարյան, իսկ առավելապես մայիսյան դեպքերից հետո կովկասահայության ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմինը վտանգված շրջաններ էր ուղարկում փորձառու զինվորական գործիչների, հատկապես Տարոնի ու Վասպուրականի ֆիդայիներին, որոնց նկատմամբ մեծ հարգանք ու սարսուռ էին տածում ոչ միայն հայությունը, այլև հակառակորդը:

Երևանի նահանգի Զինվորական մարմինը չէր կարող հանգիստ դիտել և որևէ միջոց չձեռնարկել օգնելու ծանրագույն իրավիճակում հայտնված Շարուրի գավառակի հայությանը, մանավանդ, որ այդ ժամանակ նահանգի ինքնապաշտպանական ուժերի ղեկն արդեն ստանձնել էր Նիկոլ Դումանը:

Ավելին, եթե այդ ժամանակ Երևանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը անհապաղ անհրաժեշտ քայլեր չձեռնարկեր օգնության հասնելու Շարուրի հայկական գյուղերին, ապա հայ բնակչությունն անխուսափելիորեն կհայտնվեր անելանելի իրավիճակում:

Սարգիս Օհանջանյանի վկայությամբ, որը մինչև Դումանի գալը Դաշնակցական Խեչոյի զինակցությամբ ղեկավարում էր Երևանի նահանգի մարտական ուժերը, Զինվորական մարմինը հաշվի առնելով Շարուրում ստեղծված տագնապալի կացությունը, չորս մարտիկների հետ միասին այնտեղ է գործուղում Տարոնի անվանի ֆիդայի Մեյդո Պողոսին, որը մինչ այդ հրաշալիորեն էր ղեկավել

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] Տե՛ս «Մշակ», 1905 5 յունիսի:

Դավալուի(Արարատի) շրջանի հայ ինքնապաշտպանական ուժերի մարտական գործողությունները: «Շարուրի Խանըղլար գիւղն ուղարկեցինք.-գրում է Ս. Օհանջանյանը.- Սէյդո-Պողոսին չորս հոգով՝ տեղացիներին ղեկավարելու եւ կազմակերպելու համար» [1]:

ՀՅԴ Վանի կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Վ. Փափազյանի(Կոմս). որն այդ օրերին գտնվում էր Երևանում. վկայությունից պարզվում է. որ Սեյդո-Պողոսը արևմտահայ այն ֆիդայիներից էր. որ Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումների մասին լուրը լսելուն պես բուռն ցանկություն է հայտնել անմիջապես մեկնել Կովկաս և սատար կանգնել արևելահայ արյունակիցներին:

«Սէյտոն.-գրում է Վ. Փափազյանը.-անհանգիստ. կարծես փուշերու վրայ նստած ըլլար... «Հա՛յտա. ճամբեք ընձի տղեքներու խետ. ինոնք խայ քրիստոնեայ ուղուրին կը կռուին. արին թափեն. էս լե խանգիստ նստիմ...Աստուած կապուլ կենէ՞... Եկաւ շատ պնդեց. հարկադրուած ճամբեցինք Կովկաս» [2]:

Նահանգի Զինվորական մարմնի և անձամբ Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Սեյդո Պողոսը մի քանի զինակիցներով գալիս է Շարուր ու ստանձնում հայության ինքնապաշտպանության կազմակերպման ղեկը:

Վ. Փափազյանը իր հուշերում նշում է. որ Սեյդո Պողոսը Երևանից Շարուր է մեկնել 1905 թ. հունիսին: Այդ օրը Վ. Փափազյանը Դումանի հանձնարարությամբ կառքով մեկնում էր Հին-Նախիջևան. Վանա Սարգսի զինակցությամբ ստանձնելու տեղի հայության ինքնապաշտպանության ղեկը: Նույն օրը. միևնույն կառքով նրա հետ են մեկնել Դաշնակցական Խեչո՝ Հին-Նախիջևան. Մեբաստացի Մուրադը՝ Ագուլիս և Սեյդո Պողոսը՝ Շարուր [3]:

Մի փոքրիկ ճշտում. Խանլուխլար գյուղի վրա թուրքերը հարձակվել են մայիսի 31-ին: Թուրքական բազմահազար ամբոխը պաշարել և փորձել է գրավել գյուղը. բայց ապարդյուն: Խանլուխլարի պաշտպանները կարողացել են խոչընդոտել. թույլ չտալ թուրք ամբոխին ներխուժելու գյուղ: Խանլուխլարի ինքնապաշտպանությունը ղեկավարել է հենց Սեյդո Պողոսը: Հետևաբար. նա առաջին անգամ Շարուր է մեկնել ոչ թե հունիս. այլ մայիս ամսին:

Ի դեպ «Մշակ» լրագիրը Շարուր գավառակում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների մասին պատմող նյութերը տպագրել է հունիսի սկզբներին (1905. յունիսի4. 5) լույս տեսած համարներում:

Քանի որ Խանլուխլարում էր կենտրոնացել վերոհիշյալ գավառակի հայկական գյուղերի բնակչությունը. բնականաբար Սեյդո Պողոսը պիտի լիներ հենց այդ գյուղում և ղեկավարեր այնտեղ պատսպարված հազարավոր գյուղացիների ինքնապաշտպանությունը:

Հաջորդ օրը՝ հունիսի 1-ին. զորքի գլուխ անցած Խանլուխլար գյուղ է գալիս գեներալ Ալիխանով-Ավարսկին. որի պարտականությունն էր խոչընդոտել

[1] «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 78:
[2] Կոմս, Խոնարը ըերոսներ, գիրք Դ, Պէյրութ, 1966, էջ 63:
[3] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. 1, Բոսթըն, 1950, էջ 433:

կանխել զինված բախումները և գավառակում հաստատել խաղաղ ու կայուն իրավիճակ: Իր կազմած տեղեկագրում. Ալիխանով-Ավարսկին գավառում տիրող իրավիճակի և այդ օրերին այդտեղ կատարված դեպքերի մասին այնպիսի կեղծ. մտացածին տեղեկություններ է հաղորդում. որոնք որևէ կապ ու առնչություն չունեին իրականության ու կատարված դեպքերի հետ:

«Ծանոթանալով գավառում տիրող կացությանը. -գրում է գեներալ Ալիխանով- Ավարսկին.- ես համոզվեցի. որ հայերը ղեկավարվելով իրենց կոմիտեների ու իհարկե նաև հոգևորականության կողմից. հետապնդում են զուտ քաղաքական նպատակ» [1]:

Ալիխանով-Ավարսկին հայտնում է. որ հայերը իրենցից եկեղեցու ունեցվածքը վերցնելուց հետո(նկատի ունի Նիկոլայ 2-րդի հրապարակած 1903 թ. հունիսի 13-ի օրենքը). ձեռք են բերել մեծ քանակությամբ նոր տեսակի զենքեր. որոնք իշխանություններից խիստ գաղտնի. տեղափոխել են Պարսկաստանի ու Թուրքիայի տարածքով և խնամքով թաքցրել գյուղերում:

«Այդ գործը.-նշում է գեներալը.-շարունակվում է այնպիսի հաջողությամբ. որ համաձայն մեր գաղտնի գործակալների տեղեկությունների. գավառներում այժմ չկա այնպիսի հայկական գյուղ. որը չունենա տասնյակ նորագույն տեսակի զենքեր եւ մեծ քանակությամբ փամփուշտներ...» [2]:

Ավելին. Ալիխանով-Ավարսկին հավատացնում է. որ իրեն վստահված գավառներում այժմ չկա որևէ այնպիսի հայկական գյուղ. որտեղ չգտնվեն ռումբեր. տասնյակ թռուցիկներ ու հրատարակված այլ նյութեր: Գեներալը պնդում է. որ ոչ միայն քաղաքում. այլ նաև նույնիսկ գյուղերում չկա մի այնպիսի հայ. որը չունենա ատրճանակ և բավարար քանակությամբ փամփուշտներ [3]:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ նույն գավառներում. ըստ գեներալի. մահմեդական բնակչության տրամադրվածությունը. զինվածությունը և ունեցած միջոցներն ու հնարավորությունները:

«Բնակչության մահմեդական մասը.- հաղորդում է Ալիխանով-Ավարսկին.-տեղյակ է հայերի պատրաստության մասին եւ խորապես անհանգստացած է. որովետեւ թեպետ իրենք էլ զենքեր ունեն. բայց բոլորը հնատիպ են ու անպետք» [4]:

Նրա գնահատմամբ. մահմեդականները լինելով կառավարության հավատարիմ կողմնակիցներ. ավելի պահպանողական են ու վստահելի. իսկ հայերը ունեն ճիշտ հակառակ ուղղվածությունը և ձգտում են նյութապես ու բարոյապես ճնշել թաթարներին: Իսկ մահմեդականներն այլ ելք չունենալով հարկադրված պաշտպանում են իրենց իրավունքներն ու ունեցվածքը:

Հայերը. ըստ Ալիխանով-Ավարսկու, հաստատապես երկու սկզբունք են հետապնդում՝ «նպատակը արդարացնում է միջոցները» եւ «ով մեզ հետ չէ. նա

[1] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 97, թ. 3:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:

մեր դեմ է»: Նրա կարծիքով, այդ սկզբունքները կենսագործելու համար հայերն ընտրել են ահաբեկչության(տեռորի) մարտավարությունը:

«Նրանք,-հայտնում է գեներալը,-տեռորը իրականացնում են բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն համակրում իրենց եւ այն երբեմն կատարում են հաջողությամբ: Օրինակ, հայերը նամակներ են հղել գավառի բոլոր պաշտոնյաներին, սպառնալով տեռորի ենթարկել բոլոր նրանց, ովքեր իրենց թույլ կտան փոքր-ինչ վատ վերաբերվել հայերին: Այդ ճանապարհով նրանց հաջողվել է իրենց կողմը գրավել մի քանի պաշտոնյաների...»[1]:

Չնայած այն իրողությանը, որ գեներալը ձգտում էր կեղծ փաստերով ներկայացնել իր գործունեությունը, այնուամենայնիվ, Նախիջեւանում, ապա նաև Շարուր-Դարալագյազում նրա կատարած հակահայ գործողություններն այնքան ակնառու էին, որ ոչ միայն հայկական կողմը, այլ նաև նույնիսկ պետական պաշտոնյաներն են, որոնց թվում նաև Երեւանի նահանգապետ իշխան Նապոլեոնը, նրա ոչ անկողմնակալ, հակաօրինական արարքների կապակցությամբ բողոքներ ու դիմումներ ներկայացրել փոխարքայի պալատը:

Բնական է, որ իր կազմած զեկուցագրում նա պիտի աշխատեր մտացածին փաստերով արդարացներ իր գործողությունները և իրեն ներկայացներ որպես անկողմնակալ, օրինականությունը հարգող պաշտոնյա:

Տեղեկագրում նշելով, որ ինքն ավելի շատ պաշտպանել է հայերին, Ալիխանով-Ավարսկին միաժամանակ դժգոհում է ժողովրդի մեջ մեծ կշիռ ու հեղինակություն ունեցող հայերի արարքներից: Նա, հատկապես դժգոհում է Կարապետ վարդապետի գործողություններից, որը ոչ միայն խիստ կերպով վախեցնում էր թաթարներին՝ խոստանալով շատ-շուտով կոտորել բոլորին, այլև իրեն թույլ էր տվել մահմեդական բազմության ու անգամ զինվորների ներկայությամբ բարձրաձայն հայտարարել. «...որ իր սուրբ պարտականությունն է կիսալուսնի նկատմամբ հաստատել սուրբ խաչի գերապատվությունը»[2]:

Իր կազմած տեղեկագրում գեներալ Ալիխանով-Ավարսկին միայն մեկ նպատակ էր հետապնդում, արդարացնել իր գործողությունները և գավառներում տեղի ունեցած դեպքերը Կովկասի փոխարքային գլխի վայր ներկայացնելով, կատարվածի հիմնական պատասխանատվությունը բարդել հայ բնակչության վրա, որն ըստ նրա հավաստման, ավելի լավ էր զինված:

Իրականում, «Շարուրի-Դարալագեազի հայաբնակ մի քանի գյուղերի ավերման» խորագիրը կրող վերոհիշյալ տեղեկագիրը, որը պատկերում է թուրք հրոսակախմբերի հարձակումների հետևանքով այդ գյուղերում ստեղծված իրավիճակը, որևէ կերպ չի չի հաստատում այն ամենը, ինչը իր կազմած տեղեկագրում ներկայացնում է գեներալ Ալիխանով-Ավարսկին:

Թեպետ իր զեկուցագրում գեներալը հավատացնում է, որ իր ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Շարուրում դադարեցվել են անկարգություններն ու

[1] Նույն տեղում, էջ 4:
[2] Նույն տեղում:

հաստատվել է խաղաղ իրավիճակ, բայց իրականում գավառակում տիրող կացությունը եղել է ճիշտ հակառակը՝ խիստ լարված և պայթյունավտանգ:

Վստահ լինելով, որ իրենց արյունակից գեներալը չի խոչընդոտելու հայկական բնակավայրերը ոչնչացնելուն և թալանելուն նպատակաուղղված իրենց գործողությունները, թուրք առաջնորդները, կենտրոնացնելով մեծաքանակ մարտական ուժեր, ծրագրում են տարբեր ուղղությամբ ձեռնարկվող հարձակումներով ամուր շրջափակել ու ոչնչացնել Խանլուխլար գյուղը, որտեղ, ինչպես արդեն նշվել է, պատսպարվել էին հայկական մյուս գյուղերի բնակիչները:

Չնայած այն հանգամանքին, որ ինքնապաշտպանության դեկը ստանձնած Սեյդո Պողոսն ու նրա չորսը զինակիցները փորձառու և քաջավարժ մարտիկներ էին, այնուամենայնիվ, չափազանց դժվար է եղել կազմակերպել Խանլուխլար գյուղի և այնտեղ պատսպարված հազարավոր հայերի ինքնապաշտպանությունն ու ապահովել նրանց անվտանգությունը:

Ներկայացնելով Խանլուխլար գյուղում տիրող իրավիճակը՝ տեղեկագրի կազմողները նշում են. «...գիւղը լցուած է շրջակայ այրուած ու թալանուած գիւղերի փախստականներով, ազատած անասուններով: Այդ հազարաւոր ժողովրդի համար ուտեստեղէնի ու պաշարի մէջ սղութիւն է զգացւում, առանց օթևանի, բաց երկնքի տակ կուտակուած անց են կացնում իրենց օրերը.... Միւս կողմից էլ խանլուխլարցիների հացահատիկների ցանքսերը, բաղերը չորանում են, որովհետեւ վերին թուրքերի Դաշարխից չեն թողնում ջուրը գայ ցանքսերը ջրելու»[1]:

Այս ամենին գումարվում էին թուրքերի անընդմեջ շարունակվող գրոհներն ու գավառի իշխանությունների և զորքի անհասկանալի պահվածքն ու վերաբերմունքը: Թեպետ պաշտպանվելու հնարավորությունը եղել է խիստ սահմանափակ, այնուամենայնիվ, գյուղի պաշտպանները, որոնց միանում են նաև այնտեղ ապաստանած գյուղերի բնակիչներից զենք ունեցող երիտասարդները, քաջաբար դիմակայում են թշնամու հարձակումներին: Սեյդո Պողոսը, որը Երեւանից իր հետ բերել էր որոշ քանակությամբ զենք ու զինամթերք, զինակիցների համագործակցությամբ հասցնում է կարճ ժամանակահատվածում կազմակերպել գյուղի մարտական ուժերը:

Գյուղում այդ ժամանակ եղել են նաև 100 կոզակ զինվորներ, որոնք սկզբում հայ բնակիչների հետ փոքր-ինչ դիմադրում են թուրքերի հարձակումներին, սակայն փանփուշտը սպառելու պատճառով թողնում են մարտադաշտն ու տեղափոխվում թիկունք[2]:

Նույն օրը երեկոյան կոզակ զինվորներից կազմված հարյուրակի գլուխն անցած Խանուխլար է գալիս գավառապետի օգնականը և միանալով հայ մարտիկներին՝ երեք ուղղությամբ կրակ են տեղում թուրքերի վրա: Այդ իրավիճակը շարունակվում է մինչև գիշերը: Մութն ընկնելուն պես գավառա-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ 295, գ. 1, էջ 8:
[2] «Մշակ», 1905, 5 յունիսի:

պետի օգնականը առաջնորդվելով միայն իրեն հայտնի մարտավարությամբ, պատճառաբանելով թե իբրև թուրքերը մտել են գյուղը. հրամայում է գյուղացիներին դուրս գալ գյուղից: Գյուղացիների մի մասը մնում է գյուղում, իսկ մյուս մասը միամտաբար հավատը ընծայելով գավառապետի օգնականի տված հրամանին, դուրս է գալիս գյուղից եւ շարժվելով դեպի դաշտերը հայտնվում անորոշ ու անօգնական իրավիճակում:

«Այդ ոսպէին:-նշում է տեղեկագիրը.-երբ հայերի բազմութիւնը գնում էր դէպի Դաշարխի կողմը, մի սոսկալի կրակ տեղաց, բոլորը փախան, դարձան դէպի գիւղը: Հայ երիտասարդները տեսնելով այդ կրակը, ամրացան իրենց դիրքերում եւ ոչ մի կերպով թոյլ տուին թշնամուն ներս խուժել գիւղը» [1]:

Գավառապետի օգնականը այդ ճակատագրական պահին դարձյալ ժողովրդին թողնում է միայնակ ու իր առաջնորդած կոզակների հետ հեռանում մարտադաշտից: Հայ մարտիկները հուսալի դիրքեր ընտրելով՝ քաջությամբ մարտնչում են մինչև լույս: Առավոտյան դեմ արշալույսին թուրք մեծաքանակ հրոսակախմբերը կազմակերպված և հոծ մարտաշարքերով, չորս ուղղությամբ հարձակվում են գյուղի վրա:

Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը դարձյալ անընկճելի էր: Այդ օրը հայ մարտիկներին օգնել է նաև զորքը: Կարելի է ասել, որ դա միակ դեպքն էր, երբ զորքն առանց ավելորդ, անհասկանալի գործողությունների, օգնել է հայկական կողմին: Թուրքերը կռվել են մինչև ժամը 4-ը, որից հետո նահանջել են ու ընդմիշտ հեռացել մարտադաշտից [2]:

«Սէյտոն,-գրում է Վ. Փափազյանը,-մինչ այդ Սասունի մէջ հազիւ փոքր մը կառավարելու կոչուած էր, բայց Խանլուխլարի կռիւներուն երեւան հանեց իր քաջութիւնը եւ ղեկավարելու մեծ շնորհքը: Ան փրկեց Խանլուխլարի ամբողջ շրջանը անխուսափելի ջարդէ: Մեր ժողովուրդը լքուած էր եւ պարտուողական ոգիով ներշնչուած՝ թաթար բէկերու շնորհին ապաւինելու տրամադրութիւն ունէր, երբ Սէյդոն հոն չէր դեռ: Ան կրցաւ, իր սակաւաթիւ ուժերով, պաշտպանել գիւղը» [3]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած զեկուցագրում Նիկոլ Դումանը արժանվույնս գնահատելով իր հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերի մի շարք շրջաններում ձեռք բերած հաղթանակները, առանձնահատուկ ջերմությամբ առանձնացնում է Սեյդո-Պողոսի հրամանատարությամբ գործող Շարուր գավառակի մարտական խումբը, որը «...թէեւ թիւով քիչ, բայց այնպէս ջարդ տուեցին թիւրքերին, այնպէս մի դաս տուեցին հազարաւոր թիւրք յարձակողներին, որ պատմութեան մէջ միշտ յիշելի կլինի մերոնց հերոսութիւնը:

... Սէյդոն իւր հինգ ընկերներով ազատեց Շարուրի վեց հայ գիւղերի հայ եղբայրների կեանքը: Նրան չսարսափեցրեց թիւրքի անհուն շատութիւնը: Թէեւ

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 295, գ. 1, էջ 7:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 8:
[3] Փափազեան, Իմ յուշերը, հ. 1, էջ 433:

հայ գիւղերը թալանուեցին եւ այրուեցին, բայց մերոնք՝ դրա փոխարէն, բազմաթիւ զոհեր առան թիւրքերից, մինչեւ 200-250 թիւրք է ընկել այդ կռուում... Շարուրցիք օրհնում են եւ կօրհնեն Սեյդոների կեանքը...» [1]:

Խանլուխլար գյուղի կռվում հայկական կողմը շնորհիվ կազմակերպված դիմադրության, ունեցել է ընդամենը 2 սպանված, իսկ թուրքերը բազմիցս ավելի: Ականատեսների վկայությամբ թուրքերը իրենց սպանվածների դիակները, հասկանալի պատճառով, անմիջապես վերցրել են ու տարել: Համաձայն այդ կռվի մանրամասների մասին տարածված լուրերի, թուրքերն ունեցել են հազարից ավելի սպանվածներ իսկ հայերը ընդամենը մի քանի [2]:

Փաստերը վկայում են, որ փրկվում են նաև այն հայերը, որոնք գավառապետի օգնականի բյուրիմացության շնորհիվ գյուղից դուրս էին եկել ու անհայտացել: Պարզվում է, որ նրանք, թվով 88 հոգի, մեծամասամբ կին եւ երեխա ապաստանել էին Դարալագյազի Խաչիկ գյուղում: Շուտով նրանց մի մասը վերադառնում է իրենց բնակավայրը, իսկ մյուս մասը մնում է Խաչիկում [3]:

Ամիսներ անց Վ. Փափազյանը Նախիջևանից Երեւան վերադառնալիս, Սեյդո Պողոսին տեսնելու նպատակով կանգ է առնում Խանլուխլար գյուղում:

«Սէյտոն Պողոսը,- նշում է Վ. Փափազյանը,-դարձած էր պաշտամունքի առարկայ, բայց մնացած էր նոյն պարզ ու համեստ մարդը: Գիւղացի տղաները երբ կը պատմէին անոր հերոսութիւնները, Սէյտոն ծուռ-ծուռ կը նայէր անոնց ու ակռաներու մէջէն կը մռլտար.

-Լիէ՛, ըյէ՛, ժղլէ՛(շատախօսել) աղա...յօրի՞ կը խօսաս, կամչըցնուս, մալէ խրապ(աւերտուն): Եւ իրաւի, այդ շատ մեծ գիւղը եւ շրջանի գիւղերը անսահման ոգեւորութեան մէջ էին: Թաթարները մեծ ջարդ էին կերեր եւ հանգիստ էին թողուցեր: Լքուած, ընկճուած ժողովրդի ոգին Սէյտոն բարձրացուցած եւ ուժերը ղեկավարած» [4]:

Շարուրի ինքնապաշտպանական մարտերը կրկին հավաստում են, որ կարելի է անգամ փոքրաքանակ մարտական ուժերով, բայց խելամիտ ու նպատակասլաց կազմակերպվածության դեպքում հաղթանակներ նվաճել ու փրկվել անխուսափելի թվացող կոտորածից:

Ընդհարումների սկզբնական շրջանում իրավիճակը գրեթե նույնն են եղել բոլոր այն բնակավայրերում, որտեղ բռնկվել են զինված բախումներ: Մահմեդական հրոսակախմբերը ամենուրեք դիմում էին հարձակումների, իսկ հայերը՝ հայտնվում սոսկ մեծ դժվարությամբ պաշտպանվողի կարգավիճակում: Համանման կացություն է տիրել նաև Դարալագյազ գավառակում:

Դարալագյազը մասն է կազմում Շարուր-Դարալագյազ գավառի և այդ ժամանակ բաղկացած էր 25 հայկական գյուղերից: Դարալագյազի հայկական

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 294, գ. 1, էջ 5:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 295, գ. 1, էջ 8:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Փափազեան, Իմ յուշերը, հ. 1, էջ 433:

գյուղերը ընկած էին Արփա գետի աջ ու ձախ մասերում. նրա մեջ թափվում Մալիշկա. Հերհեր. Ալագյոզ. Երփին. Մարտիրոս. Ազաղեք ու Կնիշիկ գետակների մերձակայքում: Դարալագյազը հյուսիսային և հյուսիսարևելյան կողմից սահմանակից է Սիսիան. հարավային՝ Շարուրի գավառակներին. իսկ հարավ-արևելքից ու արևմուտքից՝ Նախիջևանի. Նոր-Բայազետի և մասամբ նաև Երևանի գավառներին:

Արշալույս Աստվածատրյանի վկայությամբ (ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչն էր Շարուր-Դարալագյազի գավառում-Հ.Գ.). այդ ժամանակ Դարալագյազի հայերը առավելապես կապված են եղել Նախիջևանի հետ. որտեղ վաճառել են իրենց արտադրած մթերքների ավելցուկը ու կատարել անհրաժեշտ գնումները: Չափազանց անմխիթար վիճակում են եղել գավառակի հաղորդակցության ուղիները. կապը հարևան շրջանների հետ:

«Ռուսական իշխանությունն իր գրեթե հարյուր տարվա տիրապետության շրջանում մատը մատին չէր խփել այդ լեռնային ճանապարհները փոքր ի շատ կարգի բերելու... Դարալագյազի ժողովուրդը Երեւանի հետ կապ էր պահում Նախիջեւանի եւ Շարուրի միջոցով, հազվագյուտ դեպքում՝ Զնջուլու-Դավալու գծով» [1]:

Դարալագյազի վարչական կենտրոնը եղել է Քեշիշքենդ գյուղը(Եղեգնաձոր). որը միաժամանակ պրիստավի(գավառակի ոստիկանության պետ) ու հաշտարար-դատավորի նստելավայրն էր: Դարալագյազը տնտեսական ու մշակութային տեսակետից եղել է Երևանի նահանգի ամենահետամնաց շրջաններից մեկը: Գավառակին բնորոշ էր նույն բացասական երևույթը. ինչը տիրում էր հայկական գրեթե բոլոր գավառներում: Գյուղի բնակչության գլխավոր մտահոգությունն ու խնդիրը ընտանիքի կարիքները և հոգսերը հոգալն էր ու բավարարելը: Այդ նպատակով. հատկապես երիտասարդությունը թողնում էր հայրենի եզերքը, ընտանիքը և պանդխտության ցույց ձեռքին մեկնում տարբեր երկրներ՝ աշխատանք որոնելու ու հաց վաստակելու:

Գավառակում անմխիթար վիճակում է եղել կրթության գործը:

Ա. Աստվածատրյանի հավաստմամբ «...ամբողջ շրջանը(մոտ քառասուն գյուղ) ուներ հինգ տարրական դպրոց. որոնցից մեկը երկդասյան(հնգամյա). իսկ մնացածը՝ մեկդասյան(երեքամյա): Դպրոցներից չորսը հայկական գյուղում էին. իսկ մեկը՝ թուրքական: Բոլոր դպրոցներն էլ պետական էին» [2]:

Մի ուշագրավ իրողություն. նահանգի. գավառների ու գավառակների բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներից և ոչ մեկը ազգությամբ հայ չի եղել: Դրան հակառակ պետական պաշտոնյաների մեջ զգալի թիւ են կազմել մահմեդականները:

«Գոնե ես,-գրում է Ա. Աստվածատրյանը,-Երեւանի շրջանում որեւէ հայ պրիստավ չտեսա: Ռուս. վատ վրացիներ. վատ թուրքեր, գերմանացիներ՝ մի

[1] Աստվածատրյան Ա., Սարդարաբատի պատմաշինությունը եւ այլ երկեր, Երևան, 2007, էջ 271:
[2] Նույն տեղում, էջ 271:

տեսակ տականքներ. որ արժանանում էին կառավարության ուշադրության՝ պրիստավի պաշտոնի համար: Մեծ մասամբ տգետ ու կյանքում վրիպած մարդիկ. որոնք պաշտոնի ու դրամի համար պատրաստ էին խիղճերն ուրանալու ու հավատարմությամբ ծառայելու ժողովրդին հալածող իշխանության մութ նպատակներին» [1]:

Իշխանության վերին օղակներում հայերը տեղ չունեին. իսկ հակառակ դրան մի շարք գավառների. այդ թվում նաև Դարալագյազի գյուղական բնակավայրերում. հայերը փոքր-ինչ ավելի ծանրակշիռ դիրք են ունեցել. քան թուրքերը: Ի տարբերություն նահանգի ու գավառի բարձրաստիճան պաշտոնյաների. որոնք այլազգիներ էին. գյուղերի տանուտերերը (գալավա). դատավորներն ու գրագիրները մեծամասամբ հայեր էին: Ընտրությունների ժամանակ թուրքերը իրենց ձայնը տվել են հայ թեկնածուին:

Մինչև հայ-թուրքական ընդհարումները գավառակի հայ և թուրք բնակչությունը շատ լավ. տանելի հարաբերություն է ունեցել. ապրել են հաշտ ու խաղաղ և միմյանց վերաբերվել են հավատով ու վստահությամբ: Այդ պատճառով նրանց համար դժվար է եղել հավատալ. անգամ Բաքվի ու Երևանի փետրվարյան ադյունալի դեպքերից հետո. որ տարիներ շարունակ հարևանությամբ ապրող թուրքերն ու հայերը կարող են կոտորել միմյանց: Այսուհանդերձ. Նախիջևանում և Շարուրի գավառակում տեղի ունեցած մայիսյան դեպքերը կտրուկ փոխում են իրավիճակը նաև Դարալագյազում:

Հայկական գյուղերը գավառակում տեղաբաշխված էին միմյանցից բավական հեռու եւ շրջապատված էին բազմաթիվ թուրքական գյուղերով: Բացի թուրքական գյուղերի բնակիչներից. ամռանը ոչխարի հոտերով Դարալագյազի լեռներն էին բարձրանում Արաքսի ափերից՝ քրդերը, Շարուրի. Սադարակի ու Ջեբրայիլի հարթություններից՝ թուրքերն ու այլ ցեղեր: Որպես կանոն. ամռանը սարեր բարձրացող. այդ թվում նաև Դարալագյազի, թուրքերը, քրդերն ու մահմեդական այլ ցեղերը մշտապես զինված էին և հայերի հանդեպ մարտականորեն տրամադրված:

Դժվար չէր հասկանալ, որ գավառակի այդօրինակ կառուցվածքը, հայկական գյուղերի դասավորվածությունն ու միմյանցից կտրված լինելու հանգամանքը, զինված բախումների բռնկման պարագայում, զուտ ինքնապաշտպանության կազմակերպման նկատառումով կարող էր վտանգավոր կացության մեջ դնել հայկական գյուղերի բնակչությանը:

Ի տարբերություն Շարուրի, Հ.Յ.Դաշնակցությունը ընդհարումների նախօրեին արդեն իր կուսակցական կառույցներն ուներ Դարալագյազի գրեթե բոլոր գյուղերում: Գործում էր նաև կուսակցական կառույցների աշխատանքները համադրող ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեն:

Բաքվում, ապա նաև Երևանում, առավել ևս Նախիջևանում ու Շարուրի Ուլյանորաշեն և Խանլուխլար գյուղերում տեղի ունեցած զինված բախումները թելա-

[1] Նույն տեղում:

դրում էին, որ շատ շուտով այդ նույն դեպքերը կրկնվելու էին նաև Դարալագյազում: Ի՞նչ պետք է արվեր: Իհարկե, նախևառաջ անհրաժեշտ էր ձեռք բերել զենք ու զինամթերք և կազմակերպել մարտական խմբեր:

ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Ա. Աստվածատրյանի խոստովանությունից պարզվում է, որ չնայած այն իրողությանը, որ գավառակի հայությունը թուրքերի համեմատ ավելի հարուստ էր և հայ ու թուրք բնակչության կողմից առավելագույնս հարգված, այնուամենայնիվ, զինվածության առումով զգալիորեն զիջում էր հակառակորդին: Ամբողջ շրջանում եղել է ընդամենը 5-6 կանոնավոր զենք:

Իսկ այդ ուղղությամբ ինչ քայլեր էր կատարել ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն, չէ՞ որ Բաքվի ու Երևանի փետրվարյան դեպքերից հետո անցել էին ամիսներ: Հ.Յ.Դաշնակցության տեղի կազմակերպությունն անհրաժեշտաբար հիմք ընդունելով կատարված դեպքերը, պարտավոր էր կատարել համապատասխան եզրահանգումներ և ժամանակին, գոնե մասնակիորեն, լուծել ժողովրդի զինման հարցը:Ժողովրդին զինելու համար հարկավոր էր զենք ու զինամթերք, որը նախևառաջ կարելի էր ձեռք բերել անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Իսկ ՀՅԴ տեղի կոմիտեն զենք գնելու համար չուներ պահանջվող գումարներ: Միակ միջոցը հանգանակության (դրամամահավաք) կազմակերպումն էր: Այդ նպատակով ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն դիմում է բնակչության օգնությանը: Բայց հանգանակություն կազմակերպելու նպատակով ժողովրդին ուղղված Դաշնակցության դիմումները արձագանք չեն գտնում գավառակի հայ բնակչության կողմից:

Մինչև Նախիջևանի ու Շարուրի գավառներում տեղի ունեցած դեպքերը հայության կողմից ՀՅԴ հրապարակած դիմումների մերժման հիմնական պատճառը եղել է իշխանությունների ու հարևանների նկատմամբ ունեցած միամիտ ու կույր հավատը: Նրանց համոզմամբ «Ո՞նց կարող է ռուս իշխանությունը թույլ տալ, որ Շարուրի և Նախիջևանի ավազակները գան հասնեն Դարալագյազ ու անմեղ մարդկանց կոտորեն, թալանեն: Տեսնվա՞ծ բան է այդ: Ուր մնաց, որ ոչ Նախիջեւանում եւ ոչ էլ Շարուրում որեւէ դեպք տեղի չի ունեցել: Չէ՞, Բաքուն մեզ օրինակ լինել չի կարող» [1]:

Ճիշտ է, տեղի հայերը զուտ տնտեսական առումով ավելի բարվոք վիճակում են գտնվել, քան թուրքեր բայց պատրաստի դրամ չեն ունեցել: Իսկ զենք ու զինամթերք գնելու համար հարկավոր էր տասնյակ ռուբլիներ, որոնք այդ պահին գյուղացու համար չափազանց մեծ գումար էին: Շրջանում պատրաստի դրամ ունեցողների թիվը խիստ սահմանափակ էր: Նրանց տված գումարներով հնարավոր չէր զինել բնակչության փոքրագույն մասն անգամ: Այդ դեպքում ի՞նչ պետք է արվեր, ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն ինչպե՞ս պիտի լուծեր դրամ ձեռք բերելու և զենք ու զինամթերք գնելու խնդիրը:

[1] Ա-ԴՕ, Հայ-թուրքականը ընդհարումը Կովկասում, էջ 110:

«Կոմիտեի անդամներից ոմանք առաջարկում էին դիմել բռնի միջոցի՝ գյուղացու համաձայնությունը կորզելու նպատակով: Առաջարկվում էր գյուղական կոմիտեների միջոցով ցուցակագրել թե ո՞ր գյուղացին որքա՞ն դրամ, նվազագույն չափով, կարող է տրամադրել զենքի հանար ու հանձնայն այդ ցուցակների, կոմիտեի անունից պահանջ ներկայացնել գյուղացիներին: Չենթարկվողներին պատժի ենթարկել» [1]:

ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի անդամները համոզված են եղել, որ մի քանի գյուղացիներ պատժելով, կարելի էր իրականացնել դրամահավաքը: Բայց այս դեպքում կարող է իրեն զգացնել տալ հետևյալ անցանկալի իրավիճակը: Բոլորովին չէր բացառվում, որ Դաշնակցության հանանման վարքագիծը բացասաբար անդրադառնար ՀՅԴ կառույցների ու ժողովուրդի փոխհարաբերության վրա:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն որոշում է դիմել Երևանի նահանգի Զինվորական մարմնին ու ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեին՝ խնդրելու զենք և զինամթերք: Այդ նպատակով ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի երկու անդամների ուղեկցությամբ Երևան է մեկնում վերոհիշյալ հուշագրության հեղինակ Արշալույս Աստվածատրյանը:

Մինչև Երևան մեկնելը, քանի որ արդեն գավառում իրավիճակը գնալով շիկանում էր, թուրքերի հնարավոր հարձակումները կանխելու ու հայկական գյուղերի անվտանգությունն ապահովելու նպատակով տեղի Դաշնակցության կոմիտեն ձեռնարկում է մի քանի կանխարգելիչ քայլեր: Դարալագյազի գյուղերից առավել վտանգված էին գավառակի հարևանությամբ գտնվող Նախիջևանի Ազմալու, Սուլթանաբեկ և Սերս գյուղերը:

Եթե թուրքերը հարձակվեին այդ գյուղերի վրա, ապա Դարալագյազի կոմիտեն պարտավոր էր օգնության շտապել, ընդսմին տվյալ իրավիճակում կարող էր օգտագործել միմիայն իր ունեցած ընդամենը 5-6 հրացանները, այն էլ սահմանափակ քանակությամբ փամփուշտներով:

Գավառակում ամենավտանգավորը թուրքական Ջուլ գյուղն էր: Մինչև Երևանի զինվորական մարմնի աջակցությամբ ինքնապաշտպանական մարտախմբերի կազմավորումը անհրաժեշտ էր կիրառել Ջուլն ու թուրքական մյուս գյուղերը գսպելու մարտավարությունն, ամենակարևորը՝ ժամանակ շահել:

Այս պայմաններում ՀՅԴ կոմիտեն որոշում է կիրառել հակառակորդի համար անսպասելի ու նրան վախեցնող մարտավարություն, որը պիտի կենսագործվեր հետևյալ ուղղությամբ. ՀՅԴ կոմիտեն որոշում է. «...ֆիդայական խմբեր «ցուցադրել» թուրքական որոշ գյուղերի սահմաններում»:

Ըստ Ա. Աստվածատրյանի «Այդ շրջանի գյուղերից ընտրեցինք մի քանի քաջ երիտասարդներ, կեսին զինեցինք մեր տրամադրության տակ եղած զենքերով, ճարեցինք յատկնջիներ ու մեծ փափախներ: Խումբը պատրաստ էր: Երբ մութը քիչ վրա էր գալիս եւ երբ թուրքերը հանդերից սկսում էին տուն քաշվել, ձիավոր

[1] Աստվածատրյան, նշվ. աշխ., էջ 274:

«խումբը» իմ (Ա. Աստվածատրյան-Հ.Գ.) գլխավորությամբ շրջաններ էր անում այս կամ այն թրքական գյուղի սահմաններում այնպես, որ գյուղից թուրքերը նշմարեին «Ֆիդայիներին»[1]:

Այդ մարտավարությունը ինչ-որ չափով օգտակար էր: Թուրք գյուղացիները տեսնելով յափնջիներով ու մեծ փափախներով «զարդարված» տարբեր վայրերում անսպասելիորեն սրարշավ հայտնված զինված ձիավորներին, լուր էին տարածում իրենց շրջանում գտնվող ֆիդայիների մասին:

Նման մարտավարությունն, բայց ավելի մեծածավալ, համարձակ ու սարսափազդու գործողություններ Դուրան-Բարձրավանդակում արդեն կիրառել էր Գևորգ Չավուշը: Նշանավոր հայդուկապետի կողմից կյանքի կոչված աննախադեպ մարտավարությունը հարկադրած պատասխան քայլ էր ընդդեմ քուրդ ցեղախմբերի (աշիրեթների) միջոցով արևմտահայության նկատմամբ կիրառվող քաղաքականության:

Թուրք իշխանությունների խրախուսանքով քրդական ցեղախմբերը ներխուժում էին հայկական բնակավայրերն ու մահվան սպառնալիքով հայ բնակչությանը դուրս մղում նրանց հայրենի բնակավայրերից:

Ի՞նչ պետք է արվեր, որպեսի խոչընդոտեին, թույլ չտային թուրք ցեղախմբերին չտարածվելու հայկական բնակավայրերում:

Քուրդ աշիրեթներին սարսափեցնելու ու նրանց ձեռնարկումները խոչընդոտելու, ինչպես նաև ցեղախմբերի որոշ մասի բարեկամությունը շահելու դիտավորությամբ Գևորգ Չավուշը գիշերով, ֆիդայիների հեծյալ խմբով անսպասելիորեն հայտնվում էր աշիրեթապետի(ցեղապետ) դռանն ու համարձակորեն ձայն տալիս. «Մեռածի պես քնած էք, աղա Գէորգ Չաւուշին այս մութ գիշերին հերիք չէ՞ սպասեցնէք, դուռը շուտ բացէ, դոնաղ (օթևանելու) եմ եկել»[2]:

Գիշերային անսպասելի այցելությունները դիտավորյալ առաջին հերթին արժանացնում էր հայ գյուղացիների նկատմամբ իրենց սանձարձակություններով առավելապես աչքի ընկած աշիրեթապետերին և «հյուրընկալվելուց» կարճ ժամանակ անց արագորեն անհետանալով՝ հաջորդ օրը հայտնվում մեկ այլ աշիրեթապետի դռանը[3]:

Նման մարտավարությամբ Գևորգ Չավուշը կարողացավ, գոնե ժամանակավորապես, խոչընդոտել քուրդ ցեղախմբերի մուտքը, տարածումը հայկական բնակավայրեր:

Դժվար է պնդել, որ ՀՅԴ Դարալագյազի կառույցը տեղյակ էր Դուրան-Բարձրավանդակում Գևորգ Չավուշի կիրառած մարտավարությանը ու կրկնում էր այն: Իհարկե, Դարալագյազի շրջանում Դաշնակցության կիրառած վերոհիշյալ գործողությունները թշնամու վրա չէր կարող ունենալ նույն սարսափազդու ներգործությունը, ինչը քուրդ աշիրեթների վրա ունեին Գևորգ

[1] Նույն տեղում, էջ 275:
[2] Նույն տեղում, էջ 276-277:
[3] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 3, էջ 324:

Չավուշի ձեռնարկումները, բայց մի հանգամանք անժխտելի է, մինչև Երևանի Զինվորական մասնից օգնություն ստանալը, ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն, այնուամենայնիվ, կարողացավ փոքր-ինչ ժամանակ շահել: Իսկ դա անտարակույս նշանակալի արժեք է:

Երևանում ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի անդամները Մրգաստանի կենտր. կոմիտեին ու Զինվորական մասնին ներկայացնում են Դարալագյազում տիրող կացությունը և խնդրում զենք ու զինամթերք: ՀՅԴ կենտր. կոմիտեն ու Զինվորական մասինը բավարարում են նրանց խնդրանքը՝ խոստանալով գավառակի ինքնապաշտպանության համար տրամադրել զենք ու զինամթերք:

Դարալագյազին օգնելու համար Զինվորական մարմինը չի սահմանափակվում միայն զենք ու զինամթերք տրամադրելով:

Հարց է ծագում, ինչպիսի՞ ադյունավետությամբ կօգտագործեր ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն իրեն հանձնած զենքն ու զինամթերքը Դարալագյազի ինքնապաշտպանությունը կազմակերպելիս: Գաղտնիք չէր, որ գավառակի մարտական ուժերը խելամիտ ու արդյունավետ մարտավարությամբ առաջնորդելու համար առավելապես նպատակահարմար ու օգտակար կլիներ, եթե այնտեղ գործուղվեին փորձառու և քաջավարժ ռազմիկներ:

Իսկ այդ օրերին ի թիվս արևմտահայ բազմաթիվ ֆիդայիների Երևանում էր գտնվում Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագը: Նա հանրահայտ դեմք էր հայ ազատագրական պայքարում և նշանավոր ֆիդայիներից առաջիններից էր, որը ընդհարումների առաջին իսկ օրից մարտադաշտում էր ու մասնակցել էր Բաքվի հայության ինքնապաշտպանական մարտերին:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունն աներկբա ապացուցում է, որ Աղբյուր Սերոբին ու նրա առաջնորդած ֆիդայիներին, իրենց քաջությամբ ու հայության ազատագրական պայքարին ունեցած նվիրվածությամբ, թերևս կարելի է համեմատել միմիայն Գևորգ Չավուշին ու նրա առաջնորդած ֆիդայիներին: Իրոք լեգենդատիպ են Հայոց ազատամարտը զարդարող այդ երկու անզուգական հայդուկապետերի առաջնորդությամբ տեղի ունեցած հերոսամարտերը:

Առյուծ Ավագը մեկն էր այն ֆիդայիներից, որը մասնակցել էր Աղբյուր Սերոբի գլխավորությամբ տեղի ունեցած գրեթե բոլոր մարտերին: Իսկ թշնամու բազմապատիկ անգամ մեծաքանակ ուժերի դեմ նրա մասնակցությամբ տեղի ունեցած մարտերն առանց բացառության հաղթական էին:

Ֆիդայիների ներկայությունը Կովկասում ավելի քան անհրաժեշտ էր, իսկ նրանց ազդեցությունը կովկասահայության, ինչպես նաև հակառակորդի վրա՝ աննկարագրելի:

Ուշագրավ է Առյուծ Ավագին տված Ա. Աստվածատրյանի բնութագիրը:

Ա. Աստվածատրյանը Առյուծ Ավագին առաջին անգամ հանդիպել է Երևանում, երբ գնացել էր Երևանի նահանգի Զինվորական մարմնից օգնություն խնդրելու առաջադրանքով:

«Խմբապետեր.-գրում է Ա. Աստվածատրյանը.-շատ էի տեսել: Առյուծ Ավագի պարագան տարբեր էր. թվում էր. թե նա դաշնակցական բացառիկ խմբապետերից էր: Նախ արտաքինով: Գլխին ուներ աներևակայելի մեծությամբ մի ապիտակ փափախ. որի ծոցերն այնքան երկար էին. որ աչքերը չէին երևում: Երբեմն. գայրացած պահերին. բարկացկոտ շարժումներով փափախը բարձրացնում էր ճակատն ի վեր ու ցուցահանում կրակոտ աչքերը: Այդ պահերը բոնողը չէր կարող չմտածել՝ «իրոք որ՝ առյուծ»: Իր կազմվածքով ժայռի կտոր էր. նրանից ճառագում էին առողջութիւն. ուժ և հանդգնութիւն...Իր կյանքում մի պաշտամունք ուներ՝ Սերոբ Փաշան: Նրա մասին խոսելիս. հիշեցնում էր տաճարում աղոթող հավատացյալին...Թուրքերի հետ ունեցած ընդհարումներն ոչինչ բան էր համարում՝ խաղ ու պար» [1]:

Երևանի նահանգի և Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունն ու անձամբ ընդհանուր զորահրամանատար Նիկոլ Դումանը արժանվույնս գնահատելով նրա մարտական կարողությունները և ֆիդայիների շրջանում ունեցած հեղինակությունը. Առյուծ Ավագին է հանձնարարում Դարալագյազի մարտական ուժերի հրամանատարությունը:

Այս նշանակման մասին հետևյալն է նշում է Ս. Օհանջանյանը. որն այդ ժամանակ Դումանի օգնականն էր. «Դարալագյազի շրջանն ուղարկեցինք Առիւծ-Աւագին ու Օշին-Սարգաւագին. տասնութ կամաւորներով» [2]:

ՀՅԴ Դարալագյազի կոմիտեի ներկայացուցիչ Սարկավագի Երևանի «Մրգաստան» կենտր. կոմիտեին ներկայացրած զեկուցագրից (15. յուլիս 1905 թ.) պարզվում է. որ նրան առաջադրանք է տրվում ոչ միայն օգնել Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերին . այլև առաջին իսկ հնարավորության դեպքում ձեռնարկել հարձակողական գործողություններ և կործանել թուրք հրոսակախմբերի որեէ մեկի որջը [3]:

Այսինքն. նրանք իրենց գործողություններում պիտի առաջնորդվեին Դումանի դավանած ակն ընդ ական. այն է՝ հարձակողական բնույթի մարտավարությամբ գործելու սկզբունքով:

Նույն դեպքերին է անդրադառնում նաև արդեն բազմիցս հիշատակած Ա. Աստվածատրյանը. որն այդ օրերին ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի հանձնարարությամբ Երևանից վերադարձել ու դարձյալ գտնվում էր Դարալագյազի շրջանում:

Ըստ Սարկավագի և Ա. Աստվածատրյանի պնդումների. հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը վստահ էր. որ հարձակողական գործողությունների կենսագործումը. անպայմանորեն նշանակալի ազդեցություն կունենար թշնամուն զգաստացնելու. նրա կրքերը սանձելու ու վախեցնելու գործում [4]:

[1] Աստվածատրյան, նշվ. աշխ., էջ 291:
[2] «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 78:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 390, գ. 8, էջ 1:
[4] Նույն տեղում և «Հայրենիք» ամս., 1938, թիւ 10, էջ 132:

Մինչև հայ մարտական ուժերի կողմից հարձակողական գործողություններ ծավալելը. Դարալագյազում սկսվում են բախումներ. և այս անգամ դաձյալ նախահարձակը թուրքերն էին:

Մայիսի 12-ից մինչև 20-ը գավառակի թուրք ամբոխը. որոնց միանում են թափառական զինյալ հրոսակախմբերը. զանգվածաբար հարձակում են գործում գուտ հայաբնակ Մարտիրոս. Փաշալու. Դայլախլու. Թառաթումբ. Էրդապիհ. Քարագլուխ. Ղոյթուլ և խառը բնակչություն ունեցող Հերհեր ու Գնդեազ գյուղերի վրա [1]:

Ի տարբերություն Նախիջևանի գավառի ու Շարուր գավառակի Դարալագյազի հայկական բնակավայրերը. բացառությամբ թերևս Դայլախլու փոքրիկ գյուղի. թշնամու հարձակումների հետևանքով թեև ունեցել էին նյութական զգալի կորուստներ. սակայն կարողացել էին դիմել ինքնապաշտպանության և թույլ չէին տվել թուրք հրոսակախմբերին ներխուժել իրենց բնակավայրերը:

Առաջինը հարձակման են ենթարկվել Նախիջեւանի շրջանին սահմանամերձ Մարտիրոս և Փաշալու գյուղերը: Գյուղերի ինքնապաշտպանական ուժերը չնայած իրենց թույլ զինվածությանը. այնուամենայնիվ. կարողանում են հետ մղել հարձակումները: Թուրքերը չկարողանալով ներխուժել Մարտիրոս և Փաշալու. «քավարարվում են» այդ գյուղերի ոչխարի հոտերի մի մասի հափշտակմամբ:

Փոքր-ինչ ավելի ծանր իրավիճակում են հայտնվում Դայլախլու. Թառաթումբ. Էրդապիհ. Քարագլուխ. Ղոյթուլ գյուղերը. հատկապես Դայլախլու գյուղը: Այդ գյուղի բնակչությունը առանց որևէ դիմադրություն ցույց տալու իրենցից բազմիցս գերազանցող հրոսակախմբերին. փախչում է գյուղից ու ապաստանում Փոռ գյուղում: Թուրքերը ներխուժում և ամբողջովին թալանում ու այրում են Դայլախլու գյուղը:

Կործանելով հայկական փոքրիկ գյուղը. թուրքական Հորս գյուղերի բնակիչները. որոնց միանում են նաև մերձակա գյուղերի բնակիչներն ու Այրիջանի թափառական հրոսակախմբերը. օրեր շարունակ պաշարում են Դայլախլու. Թառաթումբ. Էրդապիհ. Քարագլուխ. Ղոյթուլ գյուղերը: Արժանվույնս պիտի գնահատել այդ գյուղերի բնակչության ցուցաբերած հերոսականությունը: Պաշտպանվելով իրենց ունեցած խիստ սահմանափակ միջոցներով գյուղի փոքրաքանակ պաշտպանները կարողանում են հետ մղել թշնամու պարբերաբար կրկնվող հարձակումներն ու անառիկ պահել գյուղերի պաշտպանական դիրքերը [2]:

Խառը բնակչություն ունեցող Գնդեվազ գյուղում. որտեղ մինչ այդ հայերն ու թուրքերը վատ հարաբերություններ չունեին. տեղի է ունենում հետևյալ ուշագրավ դեպքը: Հայերի համագյուղացի թուրքերը իրենց «բարեկամ» հայերին ու նրանց ունեցվածքը պաշտպանելու նպատակով դիմադրում և թույլ չեն տալիս այլ վայրերից եկած ավարառու հրոսակախմբերին ներխուժելու Գնդեվազ:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 298, գ. 1, էջ 1:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 1-3:

Սակայն շատ շուտով պարզվում է նրանց իրական նպատակադրությունը: Թույլ տալով իրենց հավատակիցներին ներխուժելու գյուղ. Գնդեվազի թուրքերը իրենք են թալանում ու կողոպտում իրենց համագյուղացի հայերին: Հաշվարկը միանգամայն պարզ է ու հասկանալի. Իսկ ինչո՞ւ թույլ տալ. որ հայի հարստությանը տիրեին նաև դրսից եկածները. երբ կարելի էր ու հնարավոր. որ այդ հարստությունը թալանեն ու ամբողջովին տնօրինեն միմիայն իրենք:

Ըստ այդ նույն վավերագրի. փոքր-ինչ այլ կացությունում է հայտնվել մեկ այլ խառը բնակչություն ունեցող Հերիեր գյուղը: Տեղի թուրքերը հարմար առիթի են սպասել. որպեսզի սկսեին թալանը. սակայն «...Դարալագեազում կազմակերպուեց ինքնապաշտպանութեան խումբ. որից յետոյ Հերիերի թուրքերը ստիպուած էին մեղայականներով շահել բաւական անախորժութիւններ ճաշակած համագիւղացի հայերի սիրտը» [1]:

Իրավիճակը Դարալագյազում ավելի է շիկանում մայիսի վերջերին. տեղաբնակ թուրքերը ու մահմեդական թափառական հրոսակախմբերի կողմից Շարուրի հայկական գյուղերի թալանման ու ավերման ժամանակ: Հայկական գյուղերի. մասնավորապես Մարտիրոս և Նախիջևանի Ալմալու(ներկայիս Խնձորուտ) գյուղերի համար մեծ սպառնալիք էին Նախիջևան գավառի լեռնային շրջանի թուրքական գյուղերը և հատկապես Իթդոռան գյուղը:

Նախիջևանում տեղի ունեցած դեպքերի ժամանակ Իթդոռանում կենտրոնացած թուրք ամբոխը բազմիցս հարձակում էր գործել հայկական մի շարք բնակավայրերի. այդ թվում նաև Դարալագյազի Մարտիրոս և Նախիջևանի Ալմալու գյուղերի վրա: Այդ գյուղերը կարողացել էին երկար ժամանակ քաջաբար պաշտպանվել: Մատնվելով անհաջողության. թուրքերը ծրագրում են մարտական լրացուցիչ ուժեր կենտրոնացնել Իթդոռանում ու վճռական հարձակում ձեռնարկել հայկական գյուղերի վրա:

Թեպետ այդ գյուղերի բնակիչներն արդեն ունեին ինքնապաշտպանություն կազմակերպելու որոշակի փորձառություն. բայց ավելի ուժգին հարձակումների ենթարկվելու պարագայում. անկասկած. կհայտնվեին ծանրագույն իրավիճակում:

Ահա՛ այդպսի բախտորոշ ժամանակ մարտախմբով Լեռնային Նախիջևանի Ալմալու գյուղ է գալիս Առյուծ Ավագը:

Հայ մարտական խմբի ներկայությունը մեծ ոգևորություն է առաջացնում:

« Գիւղացիք. - նշում է Արշալույս Աստվածատրյանը,- սրտառուչ գուրգուրանք էին ցոյց տալիս դէպի զինուորները: Իսկ այդ զինուորնե՞ր... Հեռո՞ւ աշխարհից եկած նոյնպէս գիւղացի... Ու այդ մարդիք եկել հասել էին սարերի արանքում կորած Ալմալու՝ նրա բնակիչներին պաշտպանելու. փրկելու» [2]:

Ալմալու գյուղում կայանում է զինվորական խորհրդաժողով, որի մասնակիցները որոշում են թուրքերի կողմից հայկական գյուղերի նկատմամբ ձեռնարկած

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 297:

հարձակումները սանձելու և նրանց վախեցնելու նպատակով հարձակվել և հիմնահատակ կործանել թուրքական Իթդոռան գյուղը: Այդ գյուղը գտնվում է Դարալագյազին սահմանամերձ Նախիջևանի տարածքում: Իթդոռանը. որպես հարձակման թիրախ ընտրվել էր ոչ պատահականորեն: Բանն այն է. որ թուրք հրոսակախմբերը իրենց կենտրոնավայրը դարձրել էին հենց այդ գյուղը և. չբավարարվելով Նախիջևանի հայկական գյուղերի վրա հարձակումներ գործելուց. պարբերաբար ասպատակում էին նաև իրենց հարևան շրջանների եւ մասնավորապես Դարալագյազի հայկական գյուղերը:

Հատկապես վտանգված էին Նախիջևանի Ալմալու. Սուլթանաբեկ և Սերս գյուղերը: Իսկ այդ գործողությունները ղեկավարում էին գլխավորապես Նախիջևանի խաները. որոնցից մի քանիսը այդ օրերին գտնվում էին Իթդոռան գյուղում: Իզուր չէ. որ թուրքերի գործողությունները որակելիս Դարալագյազի հայերն ասել են.

«- Բոլորը Նախիջեւանի Խաների գործն է:

- Ամէնը մէկ են՝ Խան թէ հասարակ ժողովուրդ. թուրք են: Մինչև չվախենան. հանգիստ չեն նստիլ: Հիմա որ ուտեն. այնուհետեւ արածները կը հասկանան» [1]:

Զինվորական խորհրդաժողովում քննարկվել են Իթդոռանի վրա հարձակվելուն առնչվող հարցերը: Հարձակումից առաջ. հենց նույն ժողովում. հարկ է եղել լուծել մի կնճռոտ հարց: Հայ ֆիդայիները. ընդունված սովորույթի համաձայն. կռիվների ընթացքում երբեք զենք չէին բարձրացնում թշնամու կնոջ և երեխայի վրա. բայց քանի որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ. թուրք հրոսակախմբերը հայերին սպանելիս հաշվի չէին առնում հայի տարիքն ու սեռը և անխնա կոտորում էին իրենց ձեռքն ընկածներին. ուստի վրեժխնդրությամբ համակված ֆիդայիները որոշում են թուրքին պատասխանել հենց նրանց օրինակով. կոտորել բոլորին՝ հաշվի չառնելով նրանց տարիքն ու սեռը :

Միթե՞ հայ ֆիդային կարող էր դիմել նման քայլի:

Հետագայում նրանց մասնակցությամբ տեղի ունեցած բոլոր մարտերը վկայում են. որ հայ ֆիդային թշնամու նկատմամբ ինչքան էլ վրեժխնդրությամբ համակված լիներ. այնուամենայնիվ չէր դավաճանում իր կոչմանն ու դավանանքին՝ այն է .

Կանանց երբե՛ք ձեռք տալու չէ

Վրէժխնդիր հա՛յ ֆիտան...

Իթդոռան գյուղի վրա ձեռնարկած հարձակումը հայ մարտական խմբերը կենսագործում են ըստ վաղօրոք մշակած ծրագրի և մեծ հաջողությամբ: Վերոհիշյալ զեկուցագրի հավաստմամբ. թուրք խաները. ինչպես նաև Դարալագյազի թրքության առաջնորդները որևէ տեղեկություն չեն ունեցել հայ մարտական ուժերի տեղաշարժերի ու մտադրությունների մասին: Նրանց համար կատարյալ անակնկալ էր մինչ այդ միայն սոսկ պաշտպանվողի կարգավիճակում գտնվող հայերի կողմից ձեռնարկած հարձակումը: Զեկու-

[1] Նույն տեղում, էջ 299:

ցագրում ընդգծվում է, որ հայ մարտիկներին հաջողվել է լիովին կործանել թուրքական գյուղը, որի բնակիչներից շատ քչերն են կարողացել փրկվել հարձակումների գնդակներից: Այդ հաղթական կռվում հայ մարտիկների տնօրինությանն է անցել գյուղի ողջ հարստությունը[1]:

Ա. Աստվածատրյանը հայ-թուրքական ընդհարումներին նվիրված «Հայրենիք» ամսագրում տպագրված հոդվածում անդրադառնալով ՀՅԴ Երևանի կենտր. կոմիտեին ներկայացված վերոհիշյալ զեկուցագրին նշում է, որ զեկուցագրում ներկայացրած փաստերը ուռճացված են: Սարկավագը գրում է, որ հայ մարտիկները կռվել են մեծ հերոսությամբ, իսկ թուրքերը թեև ցույց են տվել համառ դիմադրություն, բայց ունեցել են մարդկային հսկայական կորուստներ[2]:

Ա. Աստվածատրյանի պնդմամբ, հայ մարտական ուժերը Իթդռանը գրավել են ոչ թե դաժան կռվով ու քաջությամբ, այլ թուրքերը հայ մարտիկների գրոհից սարսափահար եղած, գրեթե առանց դիմադրության փախել են գյուղից:

Ակզիին, ըստ Ա. Աստվածատրյանի վկայության «...Իթդռանի ձորի ուղղությամբ ընկած թուրք գյուղերը, իմանալով հարձակման մասին, ոչ թե չէին շտապել օգնության, այլ իրենք էլ, լքելով գյուղերը, փախել էին դեպի դաշտը...»[3]:

Եթե նույնիսկ ընդունենք, որ թուրքական գյուղի վրա ձեռնարկած հարձակման արդյունքներն իրոք չափազանցված են ու ուռճացված, այնուամենայնիվ անժխտելի է Իթդռանի վրա ձեռնարկած հայ մարտական ուժերի հարձակողական գործողության ձեռք բերած հաջողությունը: Ընդ որում, այդ հարձակողական գործողությունը հայ-թուրքական ընդհարումներում առաջիններից է: Հայ մարտիկներն կարողանում են ոչնչացնել թուրքական ուժերի հենակետերից մեկը, և դա մեծ ոգևորությամբ է ընդունվում Դարալագյազի և Նախիջևանի հայության կողմից:

Իթդռանի թուրքական գյուղի կործանումը թեև չոչափելի ծանր հարված էր և նկատելի զգաստացնող ազդեցություն է գործել Դարալագյազի թրքության ու նրա առաջնորդների վրա, բայց «... Նախիջևանի եւ եայլաների թիւրքերը անտարբեր չեն մնալու ու վրէժխնդրութեան փորձեր են անելու: Ուրեմն շրջանը պէտք էր նախապատրաստել հաւանական նոր դէպքերի համար...»[4]:

Իրոք, հետագա դեպքերը գալիս են հաստատելու, որ թուրքերը հեշտությամբ չէին մարսելու Իթդռան գյուղի կործանման խայտառակությունը: Շուտով հայտնի է դառնում այդ կապակցությամբ նրանց մտահղացած իրական նպատակը: Պարզվում է, որ թուրքերը ձեռնամուխ են լինում կուտակելու նոր մարտական ուժեր և պատրաստվում հարձակվելու Դարալագյազի Փաշալուի շրջանի ամենամեծ գյուղի՝ Մարտիրոսի վրա: Այդ գյուղը իշխող դիրք ունի հայկական մյուս գյուղերի նկատմամբ: Եթե թուրքերին հաջողվեր ընկճել

[1] Նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 10, էջ 132:
[3] Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 305-306:
[4] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 10, էջ 139-140:

Մարտիրոսի պաշտպանների դիմադրությունն ու գրավել գյուղը, ապա նրանց մեծ հնարավորություն կընձեռվեր առավել դյուրությամբ ոչնչացնել նաև հայկական մյուս գյուղերը[1]:

Այդ պատճառով Դարալագյազի հայության, ինչպես նաև ամենամերձ Նախիջևանի հայության համար Մարտիրոս գյուղի ինքնապաշտպանության կազմակերպումը ձեռք է բերում հույժ կարևորագույն նշանակություն: Իրենց ծրագրերը կենսագործելու նպատակով, թուրք պարագլուխները քոչվորների հոտերը վաղորդ բարձրացնում և գրավում են Մարտիրոս գյուղին պատկանող արոտատեղերը, որով ստեղծում յուրօրինակ հարմարավետ հենակետեր, որոնք շնորհիվ իրենց իշխող դիրքերի, մեծ առավելություններ են շնորհում թուրքերին՝ առավել հեշտությամբ իրականացնել Մարտիրոս գյուղի վրա նախատեսված հարձակումը: Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ճիշտ գնահատելով ստեղծված կացությունը, իր հերթին ձեռնարկում է համապատասխան քայլեր և հանձնարարում Դարալագյազի հայկական գյուղերի բնակիչներին ակնդետ հետևել թուրքերի տեղաշարժերին ու իրենց տեսածների մասին ժամանակին տեղյակ պահել շրջանի մարտական ուժերի հրամանատարությանը և անձամբ Առյուծ Ավագին[2]:

Հայ գյուղացիների տեղեկություններից հայտնի է դառնում, որ թուրք առաջնորդները շտապ կարգով կենտրոնացնում են նոր ուժեր և պատրաստվում ձեռնարկելու ծավալուն գործողություններ:

«Առիւծ Աւագը, - գրում է Ա.Աստվածատրյանը, - իր եւ տեղական բոլոր զինուորներին հաւաքեց Մարտիրոս՝ մի խումբ թողնելով Փաշալու...

Զինուորներին տեղաւորելով Մարտիրոսում, Աւագը կարգադրեց, որ նրանք ցերեկը բնաւ չերեւան իրենց ծածկուած տեղերից անգամ հայ գիւղացւոց: Նոյն արեց նաեւ ինքը: Դրսի հետ կապ էր պահում երկու-երեք տեղացի վստահելի տղաների միջոցով»[3]:

Առյուծ Ավագի առաջնորդած մարտական ուժերը թուրք հրոսակախմբերի գրոհները հաջողությամբ դիմագրավելու ու նրանց պարտության մատնելու նպատակով մշակում են կռիվները կենսագործել հակառակորդի համար բոլորովին անհասկանալի, ճկուն և համակողմանիորեն կշռադատված մարտավարությամբ:

Ըստ Դարալագյազի դեպքերը ներկայացնող վավերագրի, հայ մարտական ուժերի հարձակումը հակառակորդի համար պիտի լիներ միանգամայն անսպասելի ու սրընթաց: Համաձայն մշակված մարտավարության, հայ մարտական ուժերը և Մարտիրոս գյուղի բնակչությունը պիտի բնավ ցույց չտային, որ տեղյակ են թշնամու մտադրություններին և շարունակելով իրենց ամենօրյա խաղաղ աշխատանքը և դրանով կարողանային թուրք պարագլուխներին

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 298, գ. 1, էջ 4:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 10, էջ 139-140:

վստահեցնել, որ իրենք որևէ քայլ չեն ձեռնարկում գյուղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար [1]:

Ավելին, հակառակորդի զգոնությունը բթացնելու, նրանց ապակողմնորոշելու նպատակով լուրեր են տարածում, թե իբր հայդուկները հեռացել են իրենց շրջանից: Հիրավի, հիացմունքի է արժանի գյուղի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Մեծ հայդուկապետ Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագի դրսևորած ռազմագիտական ունակությունն ու կիրառած խելամիտ մարտավարությունը [2]:

Տեսնելով գյուղի պաշտպանությունը կազմակերպելու համար ձեռնարկած քայլերը, Մարտիրոսի բնակիչները ավելի են ոգեշնչվում և մարտականորեն տրամադրվում: Նրանք արդեն դույզն ինչ չէին կասկածում, որ իրենք անպայմանորեն կկարողանան դիմագրավել հակառակորդին և Իթդոռանից հետո տոնել երկրորդ հաղթանակը:

Թուրքերը երկար սպասեցնել չեն տալիս, միավորելով զգալի քանակությամբ մարտական ուժեր, նրանք մոտենում են Մարտիրոսին: Ա.Աստվածատրյանը իր վերոհիշյալ հոդվածում չի նշում Մարտիրոս գյուղի կռվի ստույգ օրը, սակայն համաձայն Դարալագյազի դեպքերը ներկայացնող վերոհիշյալ վավերագրի, ուր բացակայում է հայ մարտական ուժերի հրամանատարի՝ Առյուծ Ավագի անունը, նշվում է, որ այն տեղի է ունեցել «... յունիսի կէսերին եւ հայերը մեծ յաղթութիւն են տարել...» [3]:

Թուրքերի տեղաշարժերին ակնդետ հետևող հետախույզները Առյուծ Ավագին հայտնում են Մարտիրոսի վրա շարժվող թուրք զանգվածի հայտնվելու մասին: Ընդսմին գյուղի վրա հարձակվող բազմության առջևից ընթանում էին զինված հեծյալ ու հետևակ տղամարդիկ, իսկ նրանց հետևից անգեններն և անգամ կանայք, որոնք իրենց հետ բերում էին էշեր ու ջորիներ, որպեսզի նրանց վրա բարձեին հայ գյուղացիներից բռնազավթած ունեցվածքը: Առյուծ Ավագը որոշում է թողնել թուրքերին, որպեսզի նրանք հանգիստ մոտենան իրենց դիրքերին և անակնկալ ու հզոր հակագրոհ ձեռնարկելով՝ նրանց քշել ձորերը և Փաշալուի մարտական խմբի աջակցությամբ երկու կողմից տեղացող հարվածներով՝ գլխովին ջախջախել թուրք հրոսակախմբերը [4]:

Հակառակորդն անտեղյակ հայերի պատրաստվածությունից, անկանոն, խառնիխուռն դասավորվածությամբ, անհոգ ու չափազանց ինքնավստահությամբ համարձակորեն լուսաբացին մոտենում է գյուղի պաշտպանների դիրքերին: Նրանց հետևից գյուղին են մոտենում նաև ավարառու բազմությունը, թուրք խուժանը:

Իսկ այդ ընթացքում Առյուծ Ավագը հանգիստ դիտում է թուրք բազմության այդ «հաղթական երթը» և հարմար դիտակետ ընտրելով՝ ղեկավարում է գյուղի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները: Նրա կարգադրությամբ «...գիւղի տղամարդիկ անհանգստութեան նշաններ են ցոյց տալիս, ներս ու դուրս են անում, այս ու այն կողմ վազում, գիւղի վտանգուած թաղից դէպի հեռաւորն ու ապահովը քաշուելու ցոյց էր անում.... Այդ ամէնը թուրքերի վրայ այն տպաւորութիւնը պիտի թողնեն, որ գիւղն անակնկալի է եկել» [1]:

Իրոք, հարձակվողները տեսնելով, որ իրենց ձեռնարկումներին անտեղյակ հայերը որևէ կերպ չեն պատրաստվում զենքի դիմելու, ավելի են ոգևորվում և գյուղին հասնելուն պես համազարկեր են տեղում ու վայրի աղաղակներ արձակելով՝ նետվում գրոհի: Հակառակորդի տեղաշարժերին ուշադրությամբ հետևող Առյուծ Ավագը «... թոյլ տուեց, որ թուրքերը բոլորովին մօտենան գիւղին, որպէսզի նրանց նահանջ-փախուստը դժուարացնի ու ապա՝ որպէսզի տղաների գնդակները չվրիպեն: Երբ ժամանակը եկաւ, նրա տուած նշանից յետոյ հայ զինուորները գիւղից ու նրա մօտերից կարկտի պէս գնդակներ թափեցին թուրքերի գլխին» [2]:

Մարտը վարելու Առյուծ Ավագի կիրառած մարտավարությունը պսակվում է լիակատար հաջողությամբ: Հայ մարտիկների անակնկալ ու կազմակերպված հարվածներից խուճապի և ահ ու սարսափի մատնված թուրքերը դիմում են փախուստի և թափվում Մարտիրոս գյուղի մերձակա ձորերը:

Փաշալուի մարտական խումբը, համաձայն վաղօրոք մշակած մարտավարությանը, նախանշված ժամանակին հայտնվում է մարտադաշտում և հարձակվում խուճապի մատնված թշնամու վրա: Երկու կողմից կրակների հարվածների տակ հայտնված թուրք զինյալներին ու նրանց հետևող ավարառուներին այլևս ոչինչ չէր մնում անելու: Նրանք «Առնուած երկու կրակի մէջ, թուրքերը իրենց բոլորովին կորցրին ու «Ալլահ, Ալլահ» գոչելով, նետեցին իրենց քարերից ու թուփերից» [3]:

Հայ ինքնապաշտպանական ուժերը Իթդոռանի կռվից հետո տոնում են երկրորդ նշանակալի հաղթանակը: Եզրափակելով Մարտիրոս գյուղի համար տեղի ունեցած կռվի մանրամասները ներկայացվող պատմությունը՝ Ա. Աստվածատրյանը նշում է. «Թուրքերի կորուստը մեծ էր. նրանք մեծ թուով սպանուածներ ու վիրաւորուածներ տուին:

Իսկ այդ պարտութիւնը թուրքերի մէջքը կոտրեց ու այլեւս անընդունակ դարձրեց նրանց որեւէ նախայարձակման» [4]:

Իթդոռանի և Մարտիրոսի մարտերում հայ մարտական ուժերի ձեռք բերած անվիճելի հաղթանակի և կռվում հայ մարտիկների դրսևորած խիզախության ու հրամանատարության կիրառած մարտավարության մասին, թեև չի նշում հրա-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 298, գ. 1, էջ 2:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 298, գ. 1, էջ 5:
[4] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 10, էջ 139:

[1] Նույն տեղում, էջ 140:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

մանատարների անունները. բան արժանավոր է գնահատում Դարալագյազի դեպքերի որոշ մանրամասները ներկայացնող վավերագրությունը[1]:

Հանձնայն այդ վավերագրի. Իրդռանի և Մարտիրոսի կռիվներում հայ մարտական ուժերը ոչ միայն փառահեղ հաղթանակ էին նվաճել, այլև այնպիսի սարսափ էին տարածել, որով կտրուկ կերպով փոխել էին թուրքերի նախկին մարտական տրամադրվածությունն ու հայերի նկատմամբ տածած արհամարհական վերաբերմունքը:

Վավերագրի գնահատմամբ՝ այդ հաղթական կռիվներից հետո, դրության տերն արդեն հայն էր[2]:

Իրդռանի կռվում հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակը, իր կազմած վերոհիշյալ տեղեկագրում մռայլ գույներով է ներկայացնում գեներալ Ալիխանով-Ավարսկին: Դուլգն-ին չանդրադառնալով հայկական գյուղերում թուրք հրոսակախմբերի սանձազերծած կոտորածների ու ավարառության մանրամասներին՝ գեներալը հայ մարտական ուժերի գործողությունների, մասնավորապես Իրդռանի դեպքի մասին գրում է հետևյալը. «Այժմ որեւէ կասկած լինել չի կարող, որ հայկական շարժման ղեկավարներն են կազմակերպել անսպասելի հարձակումները Երեւանի, Ղամառլուի եւ Իրդռանի թաթարների վրա...

Հայերի կատարած գազանային արարքները այդ փոքրիկ թաթարական գյուղում, գերազանցեց այն ամենը, ինչը կարել է երեւակայել: Սպանված են ավելի քան 50 տղամարդ, կին եւ երեխա...Բացի դրանից, թաթարներին հատկապես զայրացրել է այն հանգամանքը, որ հայերը իրենց հետ տարել են մի քանի կանանց»[3]:

Իրդռանի ու Մարտիրոսի կռիվներից հետո որոշակի տարաձայնություններ են արմատավորվում ՀՅԴ Դարալագյազի շրջանային կոմիտեի անդամների, մասնավորապես ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Ա.Ղշալույս Աստվածատրյանի և Առյուծ Ավագի ու Սարգավակի միջև: Նրանց հարաբերությունն այնպիսի լարվածության է հասնում, որ Ա. Աստվածատրյանը հարկադրված հեռանում է Դարալագյազից.

Դարալագյազի դեպքերը ներկայացնող վերոհիշյալ վավերագրության հավաստմամբ Առյուծ Ավագը իր կրքերին հագուրդ տալու համար, երբեմն բռնությամբ տիրացել է հայ կանանց և շատ հաճախ բոլորովին անտեղի ծեծի է ենթարկել բազմաթիվ գյուղացիների:

Թշնամու սարսափն ու ժողովրդի կողմից սիրված ու հարգված առասպելական հերոս Առյուծ Ավագը իր անբարոյական ու սանձարձակ վարքի պատճառով հայ գյուղացու համար դառնում է անհանդուրժելի ու չարիք[4]:

---

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 298, գ. 1, էջ 5:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1022, գ. 2, գ. 97, թ. 5:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 298, գ. 1, էջ 5:

Ա. Աստվածատրյանը մեկնում է Երեւան, տեղի կենտր. կոմիտեին ու Զինվորական մարմնին ներկայացնելու Առյուծ Ավագի վարքագիծն ու արարքները: Բացի դրանից, նա նաև ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կեմիտեի հանձնարարությամբ Զինվորական մարմնից պիտի պահանջեր Առյուծ Ավագի փոխարեն մեկ այլ խմբապետ ուժարկել Դարալագյազի շրջան[1]:

Քանի որ այդ ժամանակ Նիկոլ Դումանը բացակայում էր Երեւանից, նա ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեի պահանջները և Առյուծ Ավագի արարքների մասին ներկայացրել է Դումանի օգնական Ս. Օհանջանյանին, որը ուշադրությամբ լսել է նրա հաղորդածը, ապա խիստ բարկացկոտ տոնով պատասխանել.«-Ի՞նչ սարսաղ մարդիկ եք: Առյուծ Ավագը ձեր շրջանը փրկել է ահագին վտանգից, եւ դուք պահանջում եք հեռացնել նրան: Դուք էն ասեք՝ կարող եք առանց Առյուծների յոլա գնալ: Ո՞չ չեք կարող: Իսկ եթե նա մարդկանց թակում է եւ էլ չգիտեմ ի՞նչ է անում, ջհա՛ննամը...»:

Ս. Օհանջանյանը մերժում է Դարալագյազի շրջանը նոր խմբապետ ուղարկելու ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեի պահանջը՝ պատճառաբանելով. «Դուք կարծում եք, որ մի ուրիշն ուղարկենք. Ավագից լա՞վ կլինի.-լրջացած շարունակեց նա.-ուր մնաց, որ չունենք էլ: Մեր անվանի խմբապետերը բոլորը գործի վրա են: Երկրորդական խմբապետը Ավագի տեղը չի կարող բռնել, նրա գործը չի կարող անել: Փառք տվեք աստծուն, որ Առյուծի պես խմբապետ է եկել ձեր շրջանը»[2]:

Եթե Սարգիս Օհանջանյանի համար զինվորի բարձրագույն արժեքը մարտադաշտում ցույց տված նրա քաջագործություններն էին և նա կարող էր հաշվի չառնել զինվորի ու առավել ևս հրամանատարի բարոյական նկարագիրն ու ժողովրդի նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքը, ապա Նիկոլ Դումանը այս հարցում եղել է ավելի քան սկզբունքային ու խիստ: Նա չի հանդուրժել որևէ մեկին, թեկուզ նա լիներ չափազանց քաջ, եթե թույլ էր տալիս ընկերների, առավել ևս հայ մարդու, հայ գյուղացու նկատմամբ անբարոյական ու անհանդուրժելի արարքներ: Հայրենիքի նվիրյալ զինվորը, Նիկոլ Դումանի գնահատմամբ, ոչ միայն պիտի աչքի ընկներ մարտադաշտում ցուցաբերած քաջությամբ, այլև օրինակ պիտի ծառայեր իր բարոյական նկարագրով, համեստությամբ ու ժողովրդին ծառայելու անշահախնդիր նվիրվածությամբ ու պատրաստակամությամբ:

Տեղեկանալով Դարալագյազում Առյուծ Ավագի թույլ տված անբարո արարքների մասին, նա այդ գավառակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը հանձնարարում է Տարոնի անվանի հայրուկ Հաճի Հակոբ Կոտոյանին, իսկ Առյուծ Ավագին ու Չոփուռ Արսենին նշանակում նրա օգնականներ: Միաժամանակ, զգուշացնում է Առյուծ Ավագին, որ խիստ կերպով կպատժի, եթե նա փորձի կրկնել նախկին անբարո արարքները:

---

[1] Աստվածատրյան Ա., նշվ. աշխ., էջ 311:
[2] Նույն տեղում, էջ 312:

Առյուծ Ավագը թեև դժկամությամբ, բայց լռությամբ ընդունում է խստաբարո հրամանատարի որոշումը և Դարալագյազի շրջանում տեղի ունեցած բոլոր մարտերում դարձյալ աչքի է ընկնում իր քաջագործություններով:

Նրա մասնակցությամբ Դարալագյազում տեղի ունեցած կռիվների մասին նկատելի ջերմությամբ «ՎԵՄ» հանդեսում տպագրված հուշերում պատմում է նաև Դրոն, որին Նիկոլ Դումանը մի փոքրիկ մարտախումբ վստահելով՝ 1905 թ. օգոստոսին ուղարկում է Լեռնային Նախիջևան: Մինչև Լեռնային Նախիջևան անցնելը, Դրոն մի քանի օր անցկացնում է Դարալագյազում, ուր ինքնապաշտպանության ղեկն ստանձնել էին Հաճի Հակոբ Կոտոյանը և նրա օգնականներ Առյուծ Ավագն ու Չոփուռ Արսենը:

Անդրանիկի և Գևորգ Չավուշի զինակից Հաջի Հակոբ Կոտոյանը թեև իր ֆիդայական փորձառությամբ և քաջությամբ գուցեն փոքր-ինչ զիջում էր Առյուծ Ավագին, բայց նույնպես քաջ ֆիդայի էր և իր կազմակերպական ընդունակություններով ու մանավանդ բարոյական նկարագրով և գյուղացիների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով գերազանցում էր Առյուծ Ավագին: Պատահական չէր, որ Նիկոլ Դումանը հենց նրան էր վստահել Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը:

Վահան Փափազյանը (Կոմս) իր «Խոնարհ հերոսներ» գրքում համառոտակիորեն ներկայացնելով Հաճի Հակոբի կյանքն ու գործունեությունը, ընդգծում է նաև այն պահը, երբ նա դիմելով արևմտահայ զինվորներին, որոնք բարձրից էին նայում արևելահայ զինվորներին՝ ասում է. «Դո՛ւք, Տարօնէն կամ Վասպուրականէն եկած մարտիկներդ, երևի կը կարծէք թէ դուք էք որ կաք...դո՛ւք միայն գիտէք կռուիլ, գիտցէ՛ք որ կովկասցիները, ահա ասոնք, որ խոնարհ, կարգապահ կանգնած են կողքիս, ձեզի պէս եւ շատերը ձեզմէ ա՛լ աւելի փորձառու, խելացի եւ յանդուգն կռուողներ են: Դուք ամէնքդ միեւնոյն սուրբ գործին եկած էք ծառայելու, այսուհետեւ եթէ ամենափոքր հակաեղբայրական արարք մը նկատեմ, զինուորական դատարանին կը յանձնուիք...իսկ հիմա, ով որ պիտի չհնազանդի, թող զէնքերը թափէ հոս, եւ այժմէն կորսուի աչքէս...» [1]:

Հաջի Հակոբը կարողանում է ամուր կարգապահություն հաստատել մարտիկների շարքերում և ավելի ամրապնդել ու կայուն հիմքերի վրա դնել գավառակի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանությունը:

Չնայած կռիվներում նվաճած հաղթանակներին, որոշակի սառնություն եւ լարվածություն էր արմատավորվել Տարոնի այդ երկու անվանի հայդուկների միջև: Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագը չէր կարողանում հաշտվել այն իրողությանը, որ «Քաչալ Անդրանիկի» (այդպես են Անդրանիկին անվանել Աղբյուր Սերոբի զինվորները - Հ.Գ.) զինվորը՝ Հաճի Հակոբը, կարող է լինել Սերոբ Փաշի զինվորի հրամանատարը, իսկ նրա խորին համոզմամբ Սերոբից մեծ և քաջ մարդ աշխարհում գոյություն չուներ:

[1] Կոմս, Խոնարհ հերոսներ, գիրք Բ, Պէյրութ, 1950, էջ 80:

«- Հէյ-Հէ՛յ աշխարհ, քեզ հիմ դնողին ի՞նչ ըսեմ, - գանգատվում էր նա, - Սերոբ Փաշի մահէն ետ Քաչալ Անդրանիկ ընոր փոխնորդ ի դառի, էնօր ֆոլտաղչի (խաբեբա) զինուորն էլ, հրամանատար ի դարձի իմ գլխին, վայ լրմրն բաւդ, էդ յուր հասանք... Քո տունն աւրի, աշխարհ...» [1]:

Դարալագյազի մարտերի ժամանակ, երբ հրամանատարն արդեն Հաճի Հակոբն էր, Առյուծ Ավագը դարձյալ կռվում էր քաջաբար, բայց վիրավորանքն իրեն զգացնել է տալիս և նա հաճախակի խախտում էր մարտական կարգապահությունը: Դումանը, լսելով նրա անկարգապահ վարքի մասին, հրաման է ուղարկում նրան՝ հանձնել զենքերն ու գալ Երեւան: Զենքի հանձնումը հայդուկի համար ամենամեծ պատիժն ու անարգանքն էր: Բայց ի՞նչ կարող էր անել. «Ախր ի՞նչ անեմ, որ Դաշնակցութեան կարմիր կնիքը կայ հրամանի տակ, ու Նիկօլի հրամանը» [2]:

Երևանում Դումանը խիստ հանդիմանում է Ավագին և ցույց է տալիս Հաջի Հակոբի նամականը, որտեղ նա արժանիորեն գնահատել էր նրա քաջագործությունները [3]:

Հաճի Հակոբը փայլուն կերպով է կազմակերպում Դարալագյազի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանությունը: Նրա հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերը ոչ միայն կարողանում են հաջողությամբ պաշտպանել հայկական բնակավայրերի անվտանգությունը, այլև նախահարձակ լինելով՝ տոնում մի շարք հաղթանակներ և ի պատասխան հայկական գյուղերում թուրք հրոսակախմբերի կատարած վայրագությունների, ավերակույտերի են վերածում մի շարք թուրքաբնակ գյուղեր:

Արժանիորեն գնահատելով Դարալագյազի գավառակի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Հաճի Հակոբի ծառայությունն ու ներդրումը՝ Վ. Փափազյանը նշում է. «1905-ի հայ-թաթարական կռիւներու ատեն, Կօտօի Հաճին Կովկաս էր: Նիկօլ Դումանի կարգադրութեամբ Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը անոր յանձնուեցաւ: Վրէժխնդիր Նէմէզիսն էր կարծես նստած հոն...Անխնայօրէն ջնջեց շրջանի թաթարական գիւղերը, չնայեց ոչ ոքի...Անոնց արիւնով կուզէր մեղմել բոցերը Տարօնի ավերման, Ռազմական եւ վարչական ղեկաւար մեծ ոյժ դարձած էր սիրելի լեռնային այդ շրջանի հայութեան: Իր հրամանին տակ էին Կովկասեան եւ Հայաստանէն եկած փայլուն ուժերէ շատեր...» [4]:

Մի փոքրիկ ճշտում: Վ. Փափազյանը շփոթում է՝ նշելով, որ «Նիկօլ Դումանի կարգադրութեամբ Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը անոր յանձնուեցաւ»: Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Դումանը հանձնարարել է ոչ թե Հաջի Հակոբին, այլ Սեբաստացի Մուրադին:

[1] Տե՛ս ՎԵՄ, 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 7:
[2] Նիկոլ Դուման, ՀՅԴ երիտարդական «Կայծեր» մատենաշար, թիւ 5, էջ 14:
[3] Նույն տեղում:
[4] Կոմս, Խոնարհ հերոսներ, էջ գիրք Բ, էջ 90:

Նիկոլ Դումանը, ինչպես արդեն նշվել է, մեծ ուշադրություն էր դարձնում զինվորների բարոյական մաքրության և զինվորական կարգապահության հարցերին: Եվ մարտական կարգապահությունը խախտելու դեպքում չէր զլանում ամենախիստ պատժի ենթարկել նույնիսկ, նախկինում քաջ ռազմիկի անուն վաստակած հայ զինվորներին:

Հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ կովկասահայության ինքնապաշտպանության գործում ներդրած մեծագույն ծառայությանը, իրենց անկարգապահ առավելապես աչքի են ընկել արևմտահայ ֆիդայիները:

Այս կապակցությամբ Վ. Փափազյանը նշում է.«Յիշէր եմ արդէն, որ Տարօն-Սասունէն եկած բազմաթիւ զինուորներն ու խմբապետները գործօն մասնակցութիւն ունէին կռիւներու ղեկավարութեան մէջ: Ամէնէն դժուարը զանոնք կառավարելն էր. կարգապահական կանոններու ենթարկուելու վարժութիւններ չունէին: Նոյնիսկ Դումանի նման մեծ ղեկավարի բոլոր ջանքերը «կարգ մտցնելու» այդ ըմբոստ մարդոց մէջ, ապարդիւն անցան...» [1]:

Պիտի նկատել, որ թշնամու դեմ քաջաբար մարտնչող և մինչև անգամ իր կյանքը հանուն հայրենիքի ազատագրության զոհաբերելու պատրաստակամություն դրսևորած ֆիդային երբեմն իր անբարո պահվածքով և տգեղ վարքագծով տեղիք է տվել հայ բնակչության վրդովմունքի ու բողոքների:

Հայ ֆիդայիների միջավայրում արմատավորված անբարո և տգեղ վարքագծի մասին Դումանը ՀՅԴ բյուրոյին հասցեագրած նամակներից մեկում ակնարկել ու զգուշացրել էր դեռևս Խանասորի արշավանքի նախօրեին, Խոյ-Սալմաստի շրջանում գտնվելու ժամանակ:

«Ամբողջ հինգ տարի շարունակ ու անվերջ,-գրում է Դումանը,-համարձակ ու անպատիժ, մինը միւսից աւելի խայտառակ, Մինարէթում(նկատի ունի Սալմաստի շրջանը-Հ.Գ.) յաջորդում են իրար գարշելի դէպքեր: Բռնութիւններն ու բռնաբարումները, լկումներն ու առևանգումները, սպանութիւններն ու այլ գազանական գործողութիւնները ստեղծեցին զզուանքի մի հեղեղ, որ ողողեց ամբողջ աշխարհը եւ, իբրեւ արատ ու նախատինք, «Ենիչերի» անունը դրոշմեց հայդուկի ճակատին ժողովրդի բերանից: Հայդուկների այդ զազրելի արարքներից ժողովուրդը սեւ քող հիւսեց եւ ձգեց նրան «ֆիդայիի» փառատոր անուան վրայ...» [2]:

Ի՞նչ պիտի արվեր այդ խայտառակ իրավիճակը շտկելու և հայդուկի պատիվն ու կշիռը վերստին բարձրացնելու համար: Դումանն այս հարցում մեղադրելով ընկերներին, առաջարկում է դիմել ամենա ծայրահեղ միջոցի, այն է՝ «...սպասում ենք, որ դուք եւս կորցնէք համբերութեան սահմանը եւ սրբէք զէնքով այդ ամօթն ու արատը:

[1] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. 1, էջ 442:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 290, գ. 3:

Գիտենք, ծանր բաժին է վիճակում Ձեզ-դժուար է զէնքը թշնամուց դարձնել դէպի նախկին ընկերը-բայց, ցաւելով պիտի ասենք, որ այդ է մնացել միակ ելք, որ մաքրելով աւսպարէզը թէկուզ այդ ձեւով՝ կը լինի մեծագոյն գործերից մէկը ներկայ պարագաներում» [1]:

Հայ-թուրքական ընդհարումների ավարտից հետո նախկինում իրենց սանձարձակ վարքով հայտնի ֆիդայիները, որոնք դեռևս մնացել էին տարբեր շրջաններում, իրենց վարքագծով ու պահվածքով ավելի են խորացրել բնակչության դժգոհությունը:

«Գանգատներ,-շարունակում է Վ. Փափազյանը,- կուգային շրջաններէն, թէ «շատ պահանջկոտ են», «կոպիտ են», բռնութիւններ գործ կը դնեն, շրջանի մարմիններուն չեն ենթարկուիր...ու նման բազմաթիւ բողոքներ ժողովրդի և կազմակերպական տեղական մարմիններու կողմէ...» [2]:

Վ. Փափազյանի վկայությամբ, ժողովրդի կողմից հնչած բողոքներն առավելապես վերաբերում էին արևմտահայ հանրահայտ ֆիդայիներ Առյուծ Ավագին և Սմբատ Բորոյանին(Մախլուտո) [3]:

Առյուծ Ավագի անբարո վարքագծի մասին կան բազմաթիվ վկայություններ: Մշեցի նշանավոր ֆիդայի Սմբատ Բորոյանը, որը Հայոց ազատամարտին զինվորագրվել էր դեռևս պատանի հասակում, եղել էր Արաբոյի, Աղբյուր Սերոբի զինվորը, ապա նաև Սասունի կռիվների ժամանակ մարտնչել էր Հրայր Դժոխքի, Գևորգ Չավուշի, Անդրանիկի, Մեբաստացի Մուրադի զինակցությամբ, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մեծ վարպետությամբ է ղեկավարել Դավալուի (Արարատի) և Ղամարլուի (Արտաշատ) շրջանների հայ ինքնապաշտպանական ուժերի մարտական գործողությունները: Այսուհանդերձ, գյուղացիների նկատմամբ երբեմն վերաբերվել է անհարկի կոպտությամբ ու արհարամանքով, որով հարուցել է նրանց զայրույթն ու բողոքը:

Սեղրակ Ջալալյանը(Մեթո) իր հուշերում ներկայացնում է իր և Սմբատի հանդիպումներից մի դեպք, որը տեղի է ունեցել Ապարանի շրջանի Սաշլու գյուղում: Այդ օրը Մեթոն մարտախմբով ավազակներին հետապնդելիս, հանդիպել է ռուս զինվորների և խուսափելով անցանկալի հանդիպումից, կանգ է առել Սաշլու գյուղում: Այդ նույն օրը Էջմիածինից ձիավորներով գյուղ էր եկել նաև Սմբատը, որը ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեի և Երևանի Զինվորական մարմնի հանձնարարությամբ եկել էր Ապարանի շրջան, որպեսզի Մեթոյի գլխավորած մարտական խմբի համագործակցությամբ մաքրելու այդ եւ հարակից շրջաններն այնտեղ գործող ավազակախմբերից:

«Սմբատը,-գրում է Մեթոն,- կը ճանչնայի շատ մօտէն: Ուրախութեամբ քշեցի ձիս եւ մօտեցայ որ բարեւեմ, բայց տեսայ, որ նա ժամանակ չունի նայելու մեր կողմը: Մտրակը բռնած ռէսի գլխուն վերեւ կը պտռար ու կը սպառնար.

[1] Նույն տեղում:
[2] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. 1, էջ 442:
[3] Նույն տեղում:

-Այս բոպէիս մէկ ջրալ գարի կուզեմ ձիերուս համար. ապա թէ ոչ կաշիղ կը բերթեմ...»[1]:

Սեթոն գյուղի ռեսին Սմբատի հարվածներից փրկելու համար նրան համոզում է ձիուց իջնել եւ ապա հրավիրելով ռեսի սենյակը՝ ասում. «-Սմբա՛տ ջան. եթէ ես հիմա քեզմէ շոքոյա ուզեմ եւ դուն ըսես որ չունիմ. կռապա՞ շտեղած կըլլաս...Ասոնք շատ հիւրասէր մարդիկ են. առուոյտ որքան ուզէիր. կը բերէին. բայց գարի. տարուան այս եղանակին. չունին որ տան: Յետոյ մի մոռանար. որ Սաշլու գիւղը ընտրեալ դաշնակցականներ են եւ անոնց հետ կարելի չէ մտրակով խօսիլ»[2]:

Թեպետ Վ. Փափազյանի գնահատմամբ «նոյնիսկ Դումանի նման մեծ դեկավարի բոլոր ջանքերը «կարգ մտցնելու» այդ ըմբոստ մարդոց մէջ. ապարդիւն անցան...», այնուամենայնիվ. հարկ է նշել. որ Դումանի ուշադրությունից ու պատժից չի վրիպել ոչ մի կարգազանց զինվոր. անկախ նրա տարիքից. կոչումից ու վաստակից: Նրա համոզմունքով զինվորին արժեքավորող բավարար չափանիշը միայն քաջությունը չէր. «Նա.- նկատում է Դրոն.- շատ մեծ կարևորություն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեանը եւ գաղափարական անձնազոհութեանը: Նա պահանջում էր, որ դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովուրդին»[3]:

Առյուծ Ավագը մարտական կարգապահությունը պարբերաբար խախտելու, անբարոյական արարքներ կատարելու և ֆիդայու անունը պախարակելու համար, Դումանի հրամանով գնդակահարվում է: Սմբատի գլխավորած մարտախումբը ցրվում է, իսկ խմբապետը հեռանում է Կովկասից:

Այսուհանդերձ, բերված օրինակները բոլորովին չեն նշանակում, որ արևմտահայ բոլոր մարտիկները. թեև քաջ, բայց ունեին վերոհիշյալ ֆիդայիների բարոյական նկարագիրը: Բազմաթիվ են հայ-թուրքական ընդհարումներում իրենց քաջագործություններով և անբասիր վարքով փառաբանված բազում արևմտահայ ֆիդայիներ, որոնք իրավամբ ու արժանիորեն վաստակեցին կովկասահայության խորին հարգանքն ու սերը:

Ուշագրավ է ու միանգամայն իրավացի հայ-թուրքական կռիվներին մասնակցած արևմտահայ ֆիդայիներին տրված ՀՅԴ անվանի գործիչ Վալադ Վալադյանի բնութագիրը:

Ովքե՞ր էին արևմտահայ ֆիդայիները, որոնք կովկասահայությանը սպառնացող մահացու վտանգի պահին եկել էին Կովկաս՝ զորավիգ կանգնելու իրենց արյունակիցներին: Վ. Վալադյանի բնութագրմամբ նրանք սասունցի կամ Սասուն գնացած այն մարտիկներն էին(Սասնո սերունդ). որոնք շուրջ երկու տարի կուրծք էին տվել թշնամու ռումբերին ու գնդակներին: Ազատագրական

[1] Գեւորգեան Կ., Ամենուն Տարեգիրք, 1960, էջ 206:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 193:

պայքարի այդ երկու տարիները նրանց համար եղել են որպես ռազմական դաստիարակության միջոց. դպրոց ու մարզարան:

«...Տեւական գործակցութեան շնորհիւ.-գրում է Վ. Վալադյանը.- տեւականացաւ ու զօրացաւ յեղափոխական պայքարի ոգին: Սիա այդ ոգիով տոգորուած սերնդին պատկանող հայդուկներն էին. որ Սասնոյ լեռներից նահանջելուց յետոյ. Վասպուրական-Սալմաստ գծով ու մաս-մաս անցնում են Կովկաս՝ ճիշտ հայ-թաթար բախումների նախօրէին»[1]:

2. Հայ-թուրքական բախումների գրեթե բոլոր ճակատներում մարտնչող արևմտահայ հայդուկների զգալի մասը ազատագրական պայքարի այն սերունդն է. որը ըստ Վ. Վալադյանի. պատմության մեջ մնացել է «Խանասորի սերունդ» անունով: Արժանվույնս գնահատելով ազատագրական պայքարում «Խանասորի սերունդ»-ի վաստակը՝ Վ. Վալադյանը նշում է. որ այդ արշավանքը ծնեց գաղափարական ու մարտական կոփվածք ունեցող բազմաթիվ մարտիկների. որոնք հիշյալ թվականից սկսած մասնակցել են գրեթե բոլոր հեղափոխական ձեռնարկներին. հայդուկային կռիվներին ու ահաբեկչական գործողություններին:

«Այդ սերնդին պատկանողներից իւրաքանչիւրն իր հետ Կովկաս բերեց. անհատական քաջութիւնից ու փորձառութիւնից բացի. մի շքեղ նկարագիր: Այդ սերնդի էութիւնը ներկայացնելու համար. բաւական է անուններ միայն թուարկել.-Սեբաստացի Մուրադ. Քեռի. Կայծակ Առաքել. Գիւմուշխանեցի Աւետիս. Գոմսայ Իսօ. Սեպուհ. Կոփեցի Մուշեղ. Սէյդօ Պօղոս. Առիւծ Աւագ. Կոտոյի Հաճի. Մեշեղի Աւետիս եւ ուրիշներ...»[2]:

Ընդհարումների առաջին օրերին արևմտահայ փորձառու հայդուկներից շատ քչերն էին գտնվում Կովկասում: Թուրք առաջնորդները իրենց հայակործան ծրագրերը մշակելիս անշուշտ հաշվի էին առել նաև այդ հանգամանքը: Բոլոր այն վտանգված շրջաններում. ուր եղել են տեղացի զինված մարտիկներ և գործել են փորձառու մարտական ուժեր, հաջողություններն ավելի քան ակնառու էին:

Ընդհարումների ժամանակ, հատկապես սկզբնական շրջանում. մի քանի վայրերում թուրքերի անակնկալ հարձակումների հետևանքով հայերը հայտնվել են դժվարին իրավիճակում:

Օրինակ. այդ օրերին դարձյալ ամենատագնապալի լուրերը Երևան էին հասնում Նախիջևանից, ուր. ինչպես արդեն նշվել է. բնակվում էին մեծ թվով թուրքական խաներ և բեկեր. որոնք մահմեդական բնակչության շրջանում ունեին անառարկելի հեղինակություն: Ընդհարումների նախապատրաստական շրջանում և դրանից հետո գլխավորապես հենց նրանք էին զինում մահմեդական բնակչությանն ու նրան թշնամաբար տրամադրում հայերի նկատմամբ: Թուրք առաջնորդները կարողացել էին կաշառել ու շատ լավ գործնա-

[1] «Հայրենիք» ամս., 1960, թիւ 2, էջ 51:
[2] Նույն տեղում, էջ 51-52:

կան հարաբերություններ հաստատել ռուս աստիճանավորների հետ: Նախիջևանի մայիսյան արյունալի դեպքերը միանշանակորեն ապացուցեցին, որ այդ օրերին իշխանության ներկայացուցիչները և թուրք խաներն ու բեկերը գործում էին կատարյալ ներդաշնակությամբ և համաձայնեցված:

Զանգեզուրի հոգևոր առաջնորդ, Տաթևի վանքի վանահայր արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը, անդրադառնալով հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Նախիջևանում տեղի ունեցած արյունալի դեպքերի բնութագրմանը, ընդգծում է. «Ռուս իշխանատերները հեգնական ժպիտով կը դիտէին արիւնալի դէպքերը և փոխանակ դադարեցնելու, կընէին անարժէք կարգադրութիւններ, որոնց հետևանքը յաճախ այն կը լինէր, որ աւելի կը բորբոքէր թուրք խուժանի վայրագ հակումները հայոց դէմ» [1]:

Երևան ժամանելու առաջին իսկ օրից Դումանը վճռական քայլեր է ձեռնարկում նաև Նախիջևանի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Քանի որ մարտական ուժերը դեռևս խիստ սահմանափակ էին, ուստի անհրաժեշտ էր գործել թուրքական կողմի համար անսպասելի և սարսափազդու մարտավարությամբ: Հավատարիմ իր դավանած մարտավարությանը, Դումանը որոշում է հարձակողական գործողություններ ձեռնարկել նաև Նախիջևանի գավառում և թշնամուն ջախջախել հենց իր որջում:

Նախիջևանում իրավիճակն, իրոք, եղել է չափազանց տագնապալի: 1905 թ. մայիսի 12-ին տեղի ունեցած արյունալի դեպքերից հետո Նախիջևան քաղաքում ու գավառում գործող Հ.Յ. Դաշնակցության կառույցները դեռևս չէին հասցրել ինչպես հարկն է լուծել նախիջևանահայությանը զինելու, հետևաբար ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրները: Եթե անհապաղ չձեռնարկվեին համապատասխան քայլեր, ապա դեպքերի հետագա զարգացումը կարող էր հանգեցնել կործանարար հետևանքների:

ՀՅԴ Երևանի կենտր. կոմիտեի խոստովանությամբ, նույն տարվա դեկտեմբերին Երևանում կայացած ռայոնական ժողովում. «... Նախիջեւանի դէպքերը՝ մինչեւ մեր ընկեր Դումանի գալը՝ վհատեցուցիչ էին ու յուզիչ եւ կազմակերպութեան համար: Հայ ազգը շատ քիչ ուշադրութիւն էր դարձրել իւր զինման եւ ինքնապաշտպանութեան վրայ...» [2]:

Չնայած ռայոնական ժողովում ՀՅԴ կենտր. կոմիտեի հաշվետվությունում Նախիջևանի գավառում և բուն քաղաքում կատարված ողբերգական դեպքերը ներկայացվում են հիմնականում տեղի «ազգաբնակչութեան չափազանց վախկոտութեան և այնտեղ բաւարար չափով զինտրական ուժ չունենալու» պատճառաբանությամբ, սակայն 1905 թ. հունիսի 30-ին Հ.Յ.Դաշնակցության Արևելյան բյուրոյին հասցեագրված նամակից պարզվում է, որ ժողովում կենտր. կոմիտեի ներկայացրած զեկուցագիրը արտահայտում է ճշմարտության միայն մի մասը: Նախիջևանի ողբերգության գլխավոր մեղավորներն էին նաև տեղի՝ ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն ու այնտեղ գտնվող մարտական ուժերը:

«Ես,- գրում է Դումանը,- կարմրում եմ մեր զէնքերը Նախիջեւանում թողնելու համար: Կարո՞ղ էք երեւակայել, որ քաղաքը դէպքերի ժամանակ ունեցել է 38 հրացան, հարիւրաւոր ատրճանակներ եւ բաւականաչափ խնձորներ (ձեռնառումբ), բոլորն էլ «Դիրքերում» անգործադիր» [1]:

Ինչ խոսք, Դումանի նշած զենքերի այդ քանակությունը («38 հրացան, հարիւրաւոր ատրճանակներ և բաւականաչափ խնձորներ (ձեռնառումբ)»), զուտ ռազմական առումով այնքան էլ մեծ միավոր չէ, բայց Դումանը իրավունք ուներ զարմանալ ու իր դժգոհությունը հայտնել, չէ՞ որ Բաքվի նման մեծ քաղաքի հայության ինքնապաշտպանությունը նա կարողացել էր կազմակերպել հանպատրաստից, իր հրամանատարության տակ ունենալով ընդամենը վեց մարտիկներ:

Ընդհարումների փորձը միանշանակորեն մատնանշում էր, որ Նախիջևանում իրավիճակը կարելի էր շտկել, եթե հայկական ինքնապաշտպանական ուժերը ձեռնարկեին հարձակողական գործողություն ու թշնամուն ջախջախեին հենց իր որջում: Նախիջևանի հայության կոտորածներին համարժեք պատասխան տալու նպատակով Դումանը հրամայում է ոչնչացնել 1500 տուն ունեցող Ջահուկ (Ջահրի) ու նրա սահմանամերձ թուրքաբնակ գյուղերը [2]:

Ջահուկը (Ջահրի) հայ և թուրք խառն բնակչություն ունեցող գյուղ էր: Ջահուկը, ուր հայերն ունեին 176 տուն, համարվում էր գավառի ամենահարուստ գյուղը: Նախիջևանի կոտորածից մի քանի ժամ հետոյ հայերի տների վրա իրենց գյուղապետ Աբասի գլխավորությամբ հարձակվում են նախ այդ գյուղի թուրքերը: Այնուհետև, հարուստ թալանին մասնակցելու նպատակով գյուղ են ներխուժում ու հայերի վրա հարձակվում նաև մոտակա թուրքական գյուղերի բնակիչները [3]:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ներկայացրած զեկուցագրում Կարապետ վարդապետը նկարագրելով թուրք ամբոխի կատարած հարձակումների հետևանքով Նախիջևան քաղաքում և հայկական բնակավայրերում ստեղծված սարսափելի իրավիճակը, հատկապես շեշտում է Ջահուկի գյուղապետի անմարդկային, հասարակ մահկանացուին անհարիր արարքները: Չբավարարվելով իր համագյուղացի հայերի սպանությամբ ու նրանց ունեցվածքի բռնագավթմամբ, Ջահուկի գյուղապետը զինված հրոսակախմբերի գլուխն անցած հարձակվել, այրել ու թալանել է ևս մի քանի հայկական գյուղեր [4]:

«...այդ գազան գյուղապետը,-գրում է Կարապետ վարդապետը,-սպանում է Մարգիս Գասպարյանցին եւ չհագեցելով դրանով, խմում է նրա արյունը եւ դժբախտ զոհի մարմինը կտոր-կտոր անելով՝ շպրտում է գյուղի շներին» [5]:

---

[1] Վարանդեան Վ., Մուրադ, 1931, էջ 108:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 293, գ. 23ա, էջ 2:

[1] Նույն տեղում, թթ. 294, գ. 26, էջ 2-3:
[2] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 8, էջ 116-117:
[3] Տե՛ս Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. 1, էջ 436:
[4] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, թ. 14:
[5] Նույն տեղում:

ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի կազմած տեղեկագրի հավաստմամբ, հարձակման ժամանակ Ջահուկի հայերի մի մասը, ովքեր կարողացել են, փախել են գյուղից դուրս, իսկ մի մասն էլ ապաստանել է Շխմամուտ և Ալիաբատ գյուղերում [1]:

«Այս փախստականներից մի փոքրիկ մասը,- նշում է տեղեկագիրը,-հետ էր վերադարձել գիւղ մայիսի 22-ին: Բոլոր տներն, խանութներն, եկեղեցին և ուսումնարանը թալանուած, կողոպտուած են: Թալանուած են 25 մանուֆակտուրա եւ այլ մեծ խանութներ իրենց ամբարներով ու 30 մանր խանութներ: Այրուած եւ հրդեհուած են 8 խանութ ու 4 տուն: Թալանուած գոյքի եւ ապրանքի արժողութիւնն հաւասար է 395,000 ռուբլու:

Սպանուած են 51 հոգի, վիրաւոր 15 հոգի:

Փչացել է մոտաւորապէս 70 դէսիատին ցորեն ու գարի: Արտերէն 60 դէսիատին բամբակի ցանքսեր առանց ջրի մնալով չորացել, կորել են: Ոտնահարուած է ու փչացած մոտ 80 դէսիատին Եօնջա» [2]:

ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջևանի գաւառի աղէտները» խորագիրը կրող զեկուցագրում հեղինակները իրենց անհաջողությունները պատճառաբանելիս ներկայացնում են մի ուշագրավ իրողություն: Ինչպես արդեն նշվել է, Բաքվի փետրվարյան դեպքերից հետո ՀՅԴ Նախիջևանի կոմիտեն ժողովրդին զինելու նպատակով կազմակերպում է դրամահավաք: Արդյունքում հանգանակում է զգալի քանակությամբ գումար, բայց չի հասցնում գնել զենք ու զինամթերք: Փաստորեն, ընդհարումների բռնկման պահին չունենալով պաշտպանվելու համապատասխան միջոցներ, անզեն ժողովուրդը չի կարողանում արժանի դիմադրություն ցույց տալ թուրք հրոսակախմբերին:

Նախիջևանի հայության վրա թուրքերի ձեռնարկած զանգվածային հարձակումների հետևանքով, ինչպես արդեն նշվել է, միայն Նախիջևան քաղաքում մայիսի 12-ին սպանվում են ավելի քան 100 հայեր, քանդվում և հրդեհվում են հայերին պատկանող բազմաթիվ շինություններ: Նույն ողբալի իրավիճակն է տիրել նաև գյուղական բնակավայրերում: Ժողովուրդն այլևս չհավատալով հեղափոխական ուժերին՝ մատնվել էր խաբկանքի ու հուսալքության:

Վերոհիշյալ զեկուցագրում ներկայացնելով այդ իրողությունը, ՀՅԴ Քարաբերդի կոմիտեի անդամները նշում են. «...մենք յոյս էինք տալիս, որ նա չի ջարդուի, չի տուժիլ եւ այդ բոլորից յետոյ տեղի ունեցաւ ե՛ւ ջարդը ե՛ւ կողոպուտը: Եւ ամբոխը տրամաբանեց, որ մենք խաբել ենք իրան, որ մենք պատճառ եղանք այս բոլոր քստմնելի իրողութեան, եւ յեղափոխութիւնը-ժողովրդին մի քանի օր առաջ սրանից շատ սիրելի, նոյնիսկ պաշտելի գործը ընկաւ...Մենք տարուեցանք. խրտնում է մեզանից գիւղացին, քաղաքացին, երկրագործը, արհեստաւորը...մի խօսքով բոլորն էլ խրտնում են..» [3]:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 295, գ. 2, էջ 16:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 3, էջ 7:

Այդ նույն զեկուցագրում նշվում է, որ գավառի հայկական բնակավայրերում քիչ էին զենք բռնելու ընդունակ երիտասարդները: Պարզվում է, գավառի երիտասարդության մեծ մասը աշխատանք որոնելու, ապրուստի միջոց վաստակելու նպատակով լքել էին իրենց ծննդավայրն ու բնակություն հաստատել օտար վայրերերում:

«Աղէտը,-նշում է զեկուցագիրը,-շատ հասանելի է, որ այսքան մեծ ծաւալ չստանար եւ հայ բնակչութիւնը այսքան չտուժէր քաղաքում, առաւելապէս գիւղերում, եթէ տեղացիների մեծամասնութիւնը պանդխտութեան մէջ չլինէր...» [1]:

Զեկուցագիրը հատկապես շեշտում է Ջահուկ(Ջահրի) գյուղի աղետալի վիճակը, եւ հարց տալիս.«...ո՞վքեր կարող էին կռուել թուրքերի հետ: Անթիւ անհամար հարսներն ու աղջիկները, թէ գերեզմանի շէմքին հասած ծերերը: Երիտասարդ ուժերը բոլորն էլ դեգերում են պանդխտութեան մէջ» [2]:

Քարաբերդի կոմիտեն նույն գրությամբ դիմում և խնդրում է ՀՅԴ Արևելյան Բյուրոյին, որ նա իր բոլոր հնարավորություններն ու միջոցները օգտագործի, նույնիսկ բռնությամբ պահանջի, որ օտարության մեջ գտնվող երիտասարդները զենք ձեռք բերեն ու զինված վերադառնան իրենց հայրենի բնակավայրերը:

Իրենց պահանջը հիմնավորելու համար զեկուցագրի հեղինակները նշում են. «Մենք համոզուած ենք, որ բոլորն էլ կարող են իրենց ապրուստը հայթայթել հայրենիքում եւ մեծ ոյժ կըլինեն այսպիսի օրերում դիմադրել եւ հալածել իրենց վտանգ սպառնացող բոլոր չարիքներին» [3]:

Որպես հարձակման թիրախ Ջահուկ (Ջահրի) գյուղի ընտրությունը պատահական չէր: Այդ գյուղը ոչ միայն գավառի ամենամեծ գյուղն էր, այլև Վահան Փափազյանի (Կոմս)փաստարկմամբ «Ջահրիի հայոց ջարդը մոռցած չէինք: Պէտք էր վրէժը հանել: Այդ գիւղը, իր դիրքով (կը տիրեր Նախիջեւանի դաշտին վրայ) մեծ յոյս էր եւ խարիսխ թաթար ազգաբնակչութեան համար: Պէտք էր շշմեցուցիչ հարուածով անդամալուծել թաթարներու ոգին եւ յարձակողական տրամադրութիւնները» [4]:

Այդ գործողության հաջողությունը անտարակույս կարող էր ոչ միայն ներգործող ազդեցություն ունենալ և կաշկանդեր հայկական գյուղերի վրա թուրքերի կողմից ձեռնարկվող հետագա ասպատակությունները, այլև ոգեշնչեր ու մարտնչելու տրամադրություն հաղորդեր նախիջևանահայությանը:

Ընդհարումների ընթացքում, հատկապես սկզբնական շրջանում, նկատվել է մի էական հանգամանք: Հայ գյուղացու մեջ կարծես մեռել էր սեփական անձն ու տարիների ընթացքում քրտնաջան աշխատանքով վաստակած ունեցվածքն անձամբ պաշտպանելու գիտակցումն ու ոգին: Գյուղացիների մեջ արմատավորվել էր այն արատավոր մտայնությունը, որ իրենց կոչումը սոսկ աշխատանքն է,

[1] Նույն տեղում, էջ 5:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 6:
[4] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հ. 1, էջ 436:

թշնամու ոտնձգությունների դեմ մարտնչելու համար պետք է լինեն բոլորովին այլ մարդիկ, օրինակ ֆիդայիները, որոնց կոչումը կռվելն է:

Իր հուշերում ներկայացնելով նախիջևանահայության իրական կացությունն ու տրամադրվածությունը՝ Վ.Փափազյանը գրում է. «Մեր ժողովուրդը զինված չէր եւ ոչ ալ ծանօթ կռիւներուն: Խիստ միջոցներ ձեռք առնուեցան օր առաջ զինման գործը գլուխ բերելու: Երեւանէն հնարաւոր էր զէնք ձեռք բերել: Բայց մեր գիւղացիութիւնը մեծ դժուարութեամբ իր քսակը կը բանար սեփական զէնք ունենալու համար...» [1]:

Նույնիսկ այն օրերին, երբ ջարդերի սպառնալիքն արդեն ակնհայտ էր, հայ գյուղացին մեծ դժվարությամբ էր կարողանում ձերբազատվել վտանգավոր նման համոզմունքից եւ մտայնությունից: Բայց այլ ընտրանք գոյություն չուներ: Հարկավոր էր զինվել և կազմակերպել մարտական խմբեր: Ինքնապաշտպանության կազմակերպիչները գյուղացիներին զինելու և մարտական խմբեր կազմակերպելու համար հարկադրված դիմել են տարբեր միջոցների՝ համոզելուց ու բացատրելուց մինչև բռնություն:

«Մեծ դժուարութիւն քաշեցինք,- գրում է Վ.Փափազյանը,- քիչ-շատ զէնք ներմուծելու գիւղերու մէջ: Գիւղացիները կը խոստանային, երբ գիւղ կերթայինք, ժամերով ճառեր կը խօսէինք եւ կը համոզէինք, իսկ երբ գիւղէն ոտքերնիս դուրս կը դնէինք, կը մոռանային... Պէտք եղաւ Խեչոյի պերճախօս մտրակը, որ անտարբերները եւ մեզ խաղցնողները փութային կատարել մեր պահանջը» [2]:

1905 թ. հունիսի 12-ի գիշերը խմբապետ Ասլանի, Արտաշես Մելքումյանի և Ղազար Քոչարյանի գլխավորած հայկական մարտական ուժերը, Վանա Սարգսի և Դաշնակցական Խեչոյի ընդհանուր հրամանատարությամբ հարձակվում են Ջահուկ գյուղի վրա: Գյուղի գրոհը կազմակերպվել է կշռադատված մարտավարությամբ: Հայկական մարտական ուժերը նախ, անշշուկ, գրավել են գյուղի մոտակա բարձունքներն ու գյուղի հարևանությամբ գտնվող հին բերդի ավերակները, ապա նոր միայն՝ արշալույսը չբացված, գրոհել գյուղի վրա: Թուրքերը, անակնկալի գալով, չեն հասցրել պաշտպանվել: Հայ մարտիկները գրավում են մի քանի հազար բնակչություն ունեցող գյուղը [3]:

Համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, հայ մարտական ուժերի մի մասը՝ հեծյալ մարտախմբերը, շրջել են գյուղերի շուրջը և կազմ ու պատրաստ սպասել, անհրաժեշտության դեպքում հարևան գյուղերի ինքնապաշտպանական ուժերի հետ միասին օգնության հասնել Ջահուկ գյուղի վրա գրոհող մարտախմբին: Ջահուկ գյուղը գրավելուց հետո հայ մարտական ուժերը պիտի հարձակվեին Կարաքենդ կամ Ղարաբուլախ գյուղի վրա: Ջահուկի մերձակա լեռնային հովտի մեջ գտնվող այդ գյուղը թեև այնքան մեծ չի եղել, բայց

[1] Նույն տեղում, էջ 434:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Նիկոլ Դուման, էջ 218-225:

գուտ մարտավարական առումով կարևոր դիրք է ունեցել: Այդ գյուղի բնակիչները գավառում հայտնի են եղել որպես քաջավարժ ավազակներ: Նրանք մի քանի այլ ավազակային խմբերի համագործակցությամբ հարձակվում էին հայկական բնակավայրերի, իսկ առավել հաճախ Զնաբերդ և Բատամալու գյուղերի վրա:

Թուրքական գյուղի վրա ընդամենը 50 մարտիկներից բաղկացած պատժիչ արշավախումբը, Վ. Փափազյանի հավաստմամբ, առաջնորդել է ինքը:

Կարաքենդ գյուղի վրա հարձակվելու նախօրեին Վ. Փափազյանի գլխավորած մարտախումբը գիշերով տեղափոխվում է Զնաբերդ: Այդ գյուղի բնակիչները քաջածանոթ էին տեղանքին և այն ամենին ինչ վերաբերվում էր Կարաքենդ գյուղին: Գրոհի հաջողությունը ապահովելու համար անհրաժեշտ էր ճշգրիտ տեղեկություններ ստանալ գյուղի կառուցվածքի, դիրքի և նրա մարտական կարողությունների մասին:

Գյուղը գտնվում էր անդնդախոր ձորերի մեջ և մյուս թուրքական գյուղերի հետ կապված էր նեղ արահետով: Եթե հայկական մարտական ուժերը հարձակվեին Կարաքենդ գյուղի վրա, ապա թուրքական մյուս գյուղերի զինյալները միայն այդ արահետով կարող էին օգնության շտապել հարձակման ենթարկված գյուղին:

Զնաբերդի գյուղացիներից անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց և տեղանքը ուսումնասիրելուց հետո մարտախմբի հրամանատարությունը որոշում է գյուղի վրա հարձակումը իրականացնել հետևյալ մարտավարությամբ:

Մարտական խումբը բաժանում են երեք մասի: Առաջին տասնյակը պիտի հսկեր Կարաքենդը թուրքական գյուղերի հետ կապող արահետը և փակեր օգնություն եկող թուրք զինյալների ճանապարհը: Եթե հարձակումը ձախողվեր եւ մարտախումբը հարկադրված լիներ նահանջել, ապա երկրորդ տասնյակը պիտի ապահովեր նահանջողների անվտանգությունը [1]:

Նախապատրաստական աշխատանքները կատարելուց հետո միայն երրորդ խումբը պիտի հարձակվեր Կարաքենդ գյուղի վրա: Արշալույսին մարտախումբը մոտենում է գյուղին և երեք ուղղությամբ հարձակվում գյուղի վրա:

Ներկայացնելով այդ պահը՝ Վ. փափազյանը գրում է. «Միաբեկուած թաթարները, իրենց ընտանիքներով, սուր ճիչերով դուրս ընկան տուներէն եւ գլուխնին կորսնցուցած՝ ձորերով կը փախչէին դէպի Ջահրի: Մեր գնդակները կը հնձէին խուժանը: Գիւղը դատարկուեցաւ, դիակները լեցուցած էին գիւղի փողոցները...Խոտի դէզերը քանդուեցան եւ վայրկեանի մը մէջ հրդեհի բոցերը գրկեցին գիւղի տուները» [2]:

Հայ մարտիկների համազարկերը, հրդեհված գյուղից բարձրացող կրակն ու ծուխը չէին կարող աննկատ մնալ: Կարաքենդ գյուղի մերձակա թուրքական գյուղերի բնակիչները տեսնելով բարձրացող կրակն ու ծուխը և լսելով

[1] Փափազեան Վ., նշվ. աշխ., հ. էջ 436:
[2] Նույն տեղում:

կրակոցների ձայնը՝ շտապում են հարձակման ենթարկված գյուղին օգնության: Կարաբենդը թուրքական գյուղերի հետ կապող արահետը հսկող տասնյակը, նկատելով դեպի Կարաբենդ շարժվող մեծաքանակ թուրք ամբոխին, այդ մասին տեղեկացնում է գյուղում գտնվող մարտիկներին: Մարտախումբը պիտի նահանջեր Ջնաբերդ:

«...Սիագին զինուած ամբոխը,-շարունակում է Վ. Փափազյանը,-մեր վրայ կուգար: Վարի ձորերէն եւս կատաղած թաթարները գոռում-գոչումով դէպի մեզ եկան...Բարձրութունէն գնդակներ տեղացինք գիւղի մէջ եւ միւս կողմէն իջնող ամբոխին վրայ ու օգտուելով անոնց շփոթութենէն՝ շրջուեցանք բլուրէն այն կողմ եւ անվնաս հասանք հայ գիւղ» [1]:

Եզրափակելով թուրքական գյուղերի վրա հայ մարտական ուժերի ձեռնարկած հարձակումների պատմությունը, Վ. Փափազյանը, որպես ընդհանրացնող խոսք՝ նշում է. «Այսպէս վերջացաւ մեր արշաւանքը՝ լաւ դաս մը շրջանի հայ գիւղերու գլխուն պատուհաս դարձած աւազակային որջին:

Ջահրիի և այս գիւղի դէմ մեր հարուածները բարձրացուցին հայերու տրմադրութիւնը եւ ինքնաւստահութիւնը» [2]:

Հայ մարտական ուժերի կողմից Ջահուկ գյուղի հիմնահատակ կործանման մասին ՀՅԴ Թավրիզի «Վրեժ» կենտր կեմիտեի ընկերներին 1905 թ. դեկտեմբերի 11-ին գրած նամակում նշում է նաև Սեպուհը, որն այդ օրերին գնվելով Նախիջևանի գավառում՝ մոտիկից ծանոթացել էր գավառի գյուղերում տիրող իրավիճակին:

Ըստ նրա վկայության «...մենք Ջայրիում ունեցել ենք ընդամենը երեք զոհ, իսկ թշնամուց 220 սպանուած եւ վիրաւոր 100-ից աւելի» [3]:

Ջահուկ և մյուս թուրքական գյուղերի կոտորածը մեծ ոգևորություն է առաջացնում Նախիջևանի հայության շրջանում: Այդ հաղթանակից հետո կամավորների թիվը մարտական խմբերի կազմում ոչ միայն ավելի է շատանում, այլև ժողովուրդը նախկինի համեմատ սկսում է հոժարակամ և արագ զինվել ու շատ անգամ դիմում հարձակողական գործողությունների:

Այս գործողություններին զուգընթաց, Նախիջևանի թուրքաբնակ գյուղերի վրա, հարմար պահեր օգտագործելով, հարձակվել են նաև Երևանի մարտական ուժերը: Եթե չլիներ զորքի ու ոստիկանության միջամտությունը, ապա Դումանի գլխավորած Երևանի ինքնապաշտպանական ուժերն անկասկած հիմնահատակ կկործանեին թուրքական ավելի մեծ թվով բնակավայրեր:

«... Եթէ Հ.Յ. Դաշնակցութեան Երեւանի Կենտր. Կոմիտէն կամ աւելի ճիշտ, Նիկոլ Դումանը չկարողանար կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- կարելի էր ասել, որ այդ շրջանի հայութիւնը հիմնովին պիտի բնաջնջուէր:

[1] Նույն տեղում, 437-438:
[2] Նույն տեղում, 438:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 21, էջ 2:

Դումանը ոչ միայն կարողացաւ այդ շրջանի հայութեան ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել, այլեւ հակահարուածներով յաջորդաբար ոչնչացրեց թաթարական բազմաթիւ գիւղեր» [1]:

Միանգամայն արդարացի ու հիմնավորված է Դումանին տրված Ա. Գյուլխանդանյանի գնահատականը: Կռիվներում հարձակողական բնույթի մարտավարությամբ առաջնորդվելը իր հրաշալի արդյունքն է տվել նաև Նախիջևանի գավառում:

«Մօտ 8 ամիս, նշում է Կոմսը,-մնացինք Հին Նախիջեւանի շրջանը: Ինքնապաշտպանութիւնը ապահովուած էր: Թաթարները ընկճուած էին եւ մերձեցման ու «եղբայրութեան» ձիթենիներով կ՚մօտենային հայերուն» [2]:

Բացի Ջահրի գյուղի կործանումից, հայ ինքնապաշտպանական ուժերը Նախիջևան քաղաքում իրականացրել են ևս մի արժանահիշատակ գործողություն:

Մայիսյան դեպքերի ժամանակ, ինչպես արդեն նշվել է, թուրքերը հիմնովին այրել ու թալանել էին Նախիջևանի քաղաքային շուկայում գտնվող հայերին պատկանող վաճառատներն ու այլ շինությունները, իսկ թուրքական մասը մնացել էր անվնաս: Միթե՞ ակն ընդ ական մարտավարությունը գործունեության ուղենիշ դարձրած Դումանը կարող էր հանդուրժել նման իրավիճակ:

ՀՅԴ Մրգաստանի Ռայոնական ժողովին ներկայացրած Դումանի զեկուցումից պարզվում է, որ ի պատասխան հայերին պատկանող վաճառատների ու այլ շինությունների հրկիզման, նրա հրամանով հայ ինքնապաշտպանական ուժերը նույն ճակատագրին են արժանացրել շուկայում գտնվող թուրքերին պատկանող խանութներն ու այլ կառույցները [3]:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին հասցեագրված 1905 թ. հունիսի 30-ի զեկուցագրում Դումանը նշում է. «Այժմ Մրգաստանի (Երևանի նահանգ) ընդհանուր պատկերը. մարդկային զոհերի թիւը, երևի չի անցնի 300-ից, իսկ թուրքերինն անհամեմատ շատ... Նախիջեւանի 47 գիւղերից 20-ը հիմնահատակ, 10-ը կիսաւեր: Մնացած շրջաններում հատ ու կտոր թեթեւ նիւթական վնասներ եւ մի քանի անհատական սպանութիւններ:

Թուրքերի կողմից մատնուած են հրի ու սրի 18 գիւղ, որոնցից 2-3 գոհացուցիչ (իմ տեսակէտից): Ընդհանուր դրութիւնը այժմ խաղաղ է...» [4]:

Երևանի նահանգի Զինվորական մարմնի ձեռնարկած համապատասխան քայլերի շնորհիվ իրավիճակը կարգավորվում է նաև Լեռնային Նախիջևանում: Զինվորական մարմնի և անձամբ Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Լեռնային Նախիջևանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է քսանմեկամյա Դրոն, որն արդեն իրեն հրաշալիորեն էր դրսևորել Բաքվում, Կոտայքի շրջանում, Երևան քաղաքում և

[1] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 6, էջ 144:
[2] Փափազեան Իմ Յուշերը, հ. Ա, էջ 439:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 294, գ. 24, էջ 6:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 320, գ. 10, էջ 10:

Դարալագյազի գավառակում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Նիկոլ Դումանի հրամանով Զանգեզուրի Սիսիանի շրջանի և Լեռնային Նախիջևանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար է նշանակվում Քեռին, իսկ Դրոն դառնում է նրա օգնականը: Դումանը ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներ ընտրելիս եղել է ավելի քան հետևողական և նախապատվություն է տվել ավելի փորձառու ու հեղինակավոր ռազմիկների:

Երիտասարդ Դրոն ինչքան էլ քաջ լիներ ու խստումնալից, այնուամենայնիվ, Քեռին անտարակույս անհամեմատ ավելի փորձառու էր և հեղինակավոր: Քեռու կենսագիրներից Վ. Վալադեանի վկայությամբ «Քեռին ուղարկում է Զանգեզուր 1905 ի նոյեմբերին: Նոր էին տեղի ունեցել թաթարական յարձակումները Շուշի քաղաքի ու շրջակայ գիւղերի վրայ: Կռիւները փոխանցուել էին սահմանակից Զանգեզուր գաւառին: Գաւառը իր հոծ բազմութեամբ ու լեռներով մեծ կարևորութիւն էր ներկայացնում և ի զուր չէր, որ Քեռու հետ միաժամանակ այդ շրջանն ուղարկուեցին նաև Սեբաստացի Մուրադն ու Գոմսայ Իսոն(Կորիւն)» [1]:

Վ. Վալադյանի վկայությունում կա որոշակի անճշտություն: Սեբաստացի Մուրադը իր մարտական զինակիցների Կայծակ Առաքելի, Գյումուշխանցի Ավոյի և Մեշեղի Ավետիսի հետ Զանգեզուր է մեկնել ոչ թե 1905 թ. նոյեմբերին, այլ ըստ Դումանի կողմից ՀՅԴ Արևելյան բյուրոյին հասցեագրած նամակի տեղեկացման՝ 1905 թ. հունիսին [2,30]:

Դրոյի համագործակցությամբ փորձառու ռազմիկ Քեռին իր հրամանատարական կենտրոնավայրը ընտրելով Սիսիան գավառամասի Անգեղակոթ գյուղը, մեծ նվիրվածությամբ ու արդյունավետությամբ է կազմակերպում շրջանի ինքնապաշտպանությունը: Թուրքերը, բազմիցս համախմբված ու միացյալ ուժերով արշավում են հայկական բնակավայրերի վրա, բայց միշտ պարտվում և լքում են մարտադաշտը շնորհիվ Քեռու և Դրոյի ղեկավարած ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունների:

Թուրք հրոսակախմբերի դեմ Քեռու և Դրոյի ղեկավարած մարտական խմբերի տոնած հաղթանակներից առավելապես կարևոր է Սիսիան գյուղի թուրքերի նկատմամբ ձեռք բերած հաղթանակը [3]:

Արժանվույն գնահատելով Քեռու գլխավորած մարտական ուժերի գործողությունները՝ Սեպուհը նշում է. «Քեռին մի խմբով Սիսիանի գավառի մի տաճիկ գիւղ բոլորովին սրբել անցել եւ հրդեհի է մատնել: Ամէն տեղ սարսափի է մատնուած տաճիկ ժողովուրդը» [4]:

[1] «Հայրենիք» ամս., 1960, թիւ 2, էջ 51:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 23ա, էջ 1:
[3] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Դրո, Երեւան, 2007, էջ 41-45:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 21, էջ 2:

Արժանահիշատակ է և շատ կարևոր նաև Անգեղակոթ գյուղի ինքնապաշտպանական մարտերում Քեռու հրամանատարությամբ հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակը: Անգեղակոթ գյուղը, որը Քեռու գլխավորած մարտական ուժերի հիմնական հենակետն էր, դարձել էր թուրք հրոսակախմբերի հարվածների թիրախը: Եթե թուրքական կողմին հաջողվեր գրավել Անգեղակոթ գյուղը, ապա կարող էր բեկում մտցնել ընթացող մարտերում ու զուտ մարտավարական և բարոյահոգեբանական առումով հայ մարտական ուժերի նկատմամբ ձեռք բերել վճռական գերակշռություն: Այդ պատճառով թուրք առաջնորդները կենտրոնացնում են մարտական մեծաքանակ ուժեր և հարձակվում Անգեղակոթի վրա:

«Յարձակումը, գրում է Վ. Վալադյանը,-տեղի ունեցաւ 1906 ի սկզբին, ճիշտ Ջրօրհնէքի օրը, երբ գիւղի բնակչութիւնն ու մարտիկները եկեղեցում ժողոված՝ Ծննդեան պատարագն էին ունկնդրում»:

Շատ լավ գինված թուրք հրոսակախմբերը վստահ իրենց բազմաքանակությանը, ներխուժում են գյուղ և սկսում թալանել ու կրակի տալ գյուղացիների տները: Քեռին իր մարտիկների հետ այդ պահին գտնվել է եկեղեցում: Տեղեկանալով թշնամու գյուղ ներխուժելու մասին, նա մարտիկների հետ միասին անմիջապես դուրս է գալիս եկեղեցուց ու ամենևին խուճապի չմատնվելով՝ սրընթաց գրոհ է ձեռնարկում թուրք հրոսակախմբերի վրա: Անգեղակոթի կռվում Քեռու կիրառած մարտավարությունը միանգամայն կշռադատված էր ու արդյունավետ: Հակառակորդի մեծաքանակ ուժերի վրա Քեռու գլխավորած մարտախմբերի սրընթաց գրոհը կատարյալ անակնկալ էր:

«Թշնամին,-նշում է Վ. Վալադյանը,-խոշոր կորուստներ տալուց յետոյ, հարկադրուած է լինում նահանջել, ընդմիշտ հրաժարուելով Անգեղակոթը գրաւելու ծրագրից» [1]:

Կարելի է ասել, որ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ Երևանի նահանգում և Զանգեզուրում գործող հայ ինքնապաշտպանական ուժերը շնորհիվ կռիվներում կենսագործած կշռադատված, ճկուն և համարձակ մարտավարության, ինչպես նաև փտանգված շրջաններում պատշաճ մակարդակի հաստատված կարգ ու կանոնի, ձեռք էին բերել անվիճելի նվաճումներ:

Մայիսյան, ապա նրան հաջորդած դեպքերից հետո, երբ ընդհարումների շրջանակներն ավելի էին խորացել ու ընդարձակվել, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, կարծես թե արդեն մտահոգված իր փոխարքայության տիրույթում կատարվող արյունալի իրադարձությունների հետևանքներով ու արդյունքներով, վերջապես որոշում է հանդիպել հակառակորդ կողմերի ներկայացուցիչների հետ:

Անկասկած, եթե չլինեին Բաքվի փետրվարյան դեպքերի ժամանակ հայ մարտիկների դիմադրությունը, ինչպես նաև Երևանի նահանգում կազմակերպած հարձակողական գործողությունները, կարելի է ասել, որ դժվար թե կոմս

[1] «Հայրենիք» ամս., 1960, թիւ 2, էջ 51:

Վորոնցով-Դաշկովը համաձայնվեր հանդիպել հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ:

Փոխարքային հետաքրքրող հայ-թուրքական բախումների պատճառների մասին արտահայտվելիս հայ պատգամավորությունը առավելապես շեշտը դրել է կոտորածների և թալանի նկատմամբ մահմեդականության մեջ պատմականորեն արմատավորված եւ ձեւավորված վայրենի հակվածության եւ դրանք ամենաբիրտ միջոցներով իրականացնելու գործելակերպի վրա:

«Այդ բոլորը, - գրում է Դումանը, - լսելուց յետոյ փոխարքան պատասխանում է թէ. «Այնուամենայնիւ ինձ թւում է թէ, այդ պատճառները չեն կարող լինել պատճառ այդպիսի արյունահեղ ընդհարումների: Մեղաւորը յեղափոխական կազմակերպութիւններն են, իսկ հայերը աւելի լաւ են զինուած, քան թուրքերը...»[1]:

Հայ պատգամավորությանն ուղղված պատասխանում փոխարքան փաստորեն պաշտպանում է մահմեդականության ներկայացուցիչների տեսակետը: Ավելին, Վորոնցով-Դաշկովի հետ կայացած հանդիպման ժամանակ թուրք պարագլուխներ Աղաևը, Թաղիևը, Թալիշ Բեկը և այլոք պնդել են, որ հայ հեղափոխական կուսակցությունները ոչ միայն հրահրել են ընդհարումները, այլև դրդել և դրդում են հայերին ու նույնիսկ թուրքերին՝ զինված պայքարի դուրս գալ ընդդեմ օրինական կառավարության:

Հանդիպմանը ներկա գտնվող ցարական պաշտոնյաներից մեկը, որը նախկինում աշխատել էր Պոլսի ռուսական հյուպատոսարանում, առաջ է քաշում հայ-թուրքական ընդհարումների սանձազերծման մի վարկած ևս: Ըստ նրա պնդման, քանի որ հայերը, ենթարկվելով անգլիացիների թելադրանքին, ապստամբել են և այդ պատճառով կոտորվել, ուստի այժմ՝ սանձազերծելով նոր կռիվներ, ձգտում են վրեժ լուծել Կովկասի թուրքերից[2]:

Զրույցների ընթացքում ունկնդրելով հայ և թուրք պատգամավորության, ինչպես նաև իր պաշտոնյաների տեսակետները ու կարծիքները, փոխարքա Վորոնցով-Դաշկովը, առանց որևէ որոշակի վճիռ կայացնելու, ավարտում է հանդիպումները:

Դումանը, վերլուծելով այդ հանդիպման արդյունքները, նշում է «...Միայն մի բան պարզ է երեւում, որ փոխարքան, գիտենալով հանդերձ, թէ յարձակողները թուրքերն են, տուժողները հայերն են, բայց պաշտպանում է թուրքերին՝ իբրեւ հավատարիմ հպատակների, որովհետեւ հայերը որպէս թէ փորձել են նրանց զինակից անել պետութեան դէմ»[3]:

Եթե ընդհանրացնենք առաջին ամիսներին Երևանի նահանգում ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության կենսագործված ձեռնարկումները, ապա կարելի է ասել, որ դրանք ավելի քան արգասաբեր էին: Նիկոլ Դումանի գլխավորած Զինվորական մարմինը ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի համագործակցությամբ կարողանում է դնել ինքնապաշտպանության կայուն և հուսալի հիմքերը:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում հայության մղած ինքնապաշտպանական մարտերի էությունն ու ուղղվածությունը բնութագրելու և գնահատելու համար պիտի ընդունել, որ այն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի մի փուլ է, որը նախորդ շրջանների համեմատ ուներ իր որակական առանձնահատկություններն ու տարբերությունները:

Մինչ հայ-թուրքական ընդհարումները հայության ազատագրական պայքարում գերիշխողը հայդուկային փոքր կռիվներն էին, ցուցադրական ելույթներն ու ահաբեկչության դեպքերը: Այս անգամ մարտական գործողությունները ծավալվում էին Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում և նույնիսկ այնպիսի բնակավայրերում, ուր մահմեդական տարրը փոքրամասնություն էր կազմում: Արևելահայության ինքնապաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու համար, այս առանձնահատկությունը հաշվի առնելուց զատ, հայ ազգային-քաղաքական այն կազմակերպություններն ու գործիչները, որոնք առաջնորդում էին հայության գոյապայքարը, պիտի ուշադրություն դարձնեին նաև հետևյալ հանգամանքները ու գնահատեին դրանք.

1. Ի՞նչ հիմունքներով ու միջոցներով պետք է կազմակերպվեին մարտական ուժերը կամ՝ Դումանի բնորոշմամբ՝ ինքնապաշտպանական բանակը, և ովքե՞ր ու ինչպիսի՞ կարգ ու կանոնով պիտի համալրեին նրա մարտաշարքերը:

2. Ինչպիսի՞ կառուցվածք պետք է ունենար ինքնապաշտպանական բանակը:

3. Ընդհարումների ընթացքում հայկական մարտական ուժերի որդեգրած և ձեռնարկած գործողությունների մարտավարությունը:

Ի՞նչ էր անհրաժեշտ անել այդ հարցերը կենսագործելու համար:

Քանի որ մարտական գործողությունները ծավալվում էին ցարական կայսրության տարածքում, և պարտադիր զինվորական ծառայության մասին խոսք լինել չէր կարող, ուստի, հայկական ինքնապաշտպանական բանակը պիտի կազմավորվեր բացառապես կամավորական հիմունքներով, բայց որոշակի սկզբունքներով ու վերապահումներով:

Բանակի շարքերն առաջին հերթին, անխախտ և չգրված օրենքի համաձայն, համալրում էին ազգի առավել հայրենանվեր զավակները, իսկ՝ Դումանի բնութագրմամբ. «Հայրենիքի ինքնապաշտպանութեան գործին անկեղծօրէն նուիրուած մարդիկ իրանք են երևան գալիս ինքնաբերաբար և իրենց ուսերի վրայ են առնում լծի ծանրութեան մի մասը բոլորովին կամաւոր»[1]:

Բայց ընդհարումների ծավալները շատ ընդարձակ էին, կռիվները՝ բազմաթիվ, իսկ «ինքնապաշտպանութեան գործին անկեղծօրէն նուիրուած» զավակ-

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 324, գ. 21, էջ 2:
[2] Նույն տեղում, գ. 25, էջ 1-5:
[3] Նույն տեղում, էջ 4-5:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 324, գ. 24, էջ 3:

ների քանակը՝ սահմանափակ: Զինվորական մարմինը Մրգաստանի կենտր. կոմիտեի հետ համատեղ. հատուկ կարգ է սահմանում կամավորների հավաքագրման. նրանց քանակի սահմանման վերաբերյալ. որի կատարումը յուրաքանչյուր շրջանի և գյուղի համար պարտադիր էր: Փաստորեն մարտական խմբեր կազմավորելու գործում հետևողականորեն կիրառվում է կամավոր-պարտադիր սկզբունքը:

Ընդհարումները դեռևս շարունակվում էին. և ինքնապաշտպանական բանակ ձևավորելու այլընտրանք տվյալ իրավիճակում չկար և չէր կարող լինել:

Ինքնապաշտպանական բանակ ստեղծելու համար պիտի կենսագործվեր երկու կարևոր պահանջ.

ա. Քանի որ չկային բավարար զինական ուժեր. ուստի հարկավոր էր. որ յուրաքանչյուր գյուղ. շրջան կամ հայաբնակ վայր ինքը ստեղծեր ինքնապաշտպանական խումբ և ինքն էլ պարտավոր էր լուծել զինվածության հարցը:

բ. Նպատակահարմար էր. որ տեղերում խմբապետներ ընտրվեն դրսից եկած. կռվի բովով անցած քաջավարժ մարտիկներից. քանի որ նրանք. որպես օրենք. ավելի մեծ ազդեցություն ունեին տեղի ազգաբնակչության վրա:

Շրջանների ինքնապաշտպանական խմբերին ուղղված հրահանգում. որը բաղկացած էր 36 կետից. Զինվորական մարմինը սահմանում է տեղերում կամավորներին հավաքագրելու հետևյալ կարգը. «Ամէն մի գիւղ կամ համայնք պարտաւոր է դնել կազմակերպութեան տրամադրութեան տակ որոշ թիւով զինուած կամաւորներ: Կամաւորների թիւը պակաս չը պէտքէ լինի համայնքի մէջ գտնուած զէնքի քանակութեան կէսից: Օրինակ. եթէ գիւղում կայ 50 հրացան՝ նա պարտաւոր է 25 զինուոր տալ իրենց զէնքերով» [1]:

2. Քանի որ Դումանի մտահղացմամբ պիտի ստեղծվեր հայկական իրականության ու նոր ստեղծված պայմաններին համահունչ ինքնապաշտպանական բանակ. ապա. բնականաբար այն պիտի ունենար համապատասխան կառուցվածք. հստակ սահմանվեին հրամանատարների և զինվորների պարտականություններն ու զինվորական ստորաբաժանումների անվանումները և հրամանատարների ընտրության կամ նշանակման կարգը: Այդ նպատակով ինքնապաշտպանական խմբերին է առաքվում չորս մասերից և 33 կետերից բաղկացած «Հրահանգ» շրջաբերականը:

Առաջին բաժնում տրվում է մարտական միավորների կառուցվածքի. հրամանատարների նշանակման և ընտրության. ինչպես նաև տեղերում զինվորական խորհրդի կազմավորման վերաբերյալ մշակված կարգը [2]:

Երկրորդ բաժնում սահմանվում են զինվորների և հրամանատարների պարտականությունները. որոնք կազմելիս Զինվորական մարմինը դարձյալ առաջնորդվել է. նրանք ունենալով կանոնավոր բանակում գործող չափանիշները. ընդամենը. հաշվի առնելով տեղի և ժամանակի յուրահատկություններ:

Ծանոթանալով ինքնապաշտպանության կազմակերպմանը նպատակաուղղված ձեռնարկումներին ու որոշումներին. կարելի է վստահաբար պնդել. որ այդ օրերին. հայրենի պետության բացակայության պայմաններում. Զինվորական մարմինները ՀՅԴ տեղական կոմիտեների հետ միասին փաստորեն իրականացրել են պետությանը բնորոշ յուրահատուկ վճիռներ ու պարտականություններ:

Պետություն պետության ներսում. ահա այդպես կարելի է բնութագրել այդ ժամանակահատվածում ինքնապաշտպանությունը ղեկավարող զինվորական մարմինների գործունեությունն ու իրական վիճակը:

3. Հայ-թուրքական ընդհարումներում Նիկոլ Դումանի ներդրած կարևոր ծառայություններից է նաև մարտավարության այն նոր. արդյունաբեր եղանակը. որի կիրառումը մեծապես նպաստեց հայության ընդհանուր հաղթանակին:

Հայ ազատագրական պայքարի զինվորական գործիչներից առաջինը Դումանը հայ զինական ուժերը կազմակերպեց ու ղեկավարեց՝ համաձայն կանոնավոր բանակներում գործածվող մարտավարության ու ռազմագիտական կանոնների ու ավանդույթների. իհարկե. հաշվի առնելով նաև տեղի և ժամանակի յուրահատկությունները: Մարտավարության հարցում Դումանն իրավացիորեն գտնում էր. որ նախկին հայդուկային կռիվներն արդեն իրենց սպառել էին. և ներկա պայմաններում. երբ ընդհարումները ծավալվում էին ավելի լայն ընդգրկումներով և ավելի մեծաքանակ մարտական ուժերի մասնակցությամբ. հակառակորդի նկատմամբ վճռական առավելություն ձեռք բերելու համար հարկավոր է կիրառել մարտեր վարելու նոր ձևեր ու եղանակներ:

Դումանը հետևողականորեն հայոց մարտական ուժերը կազմակերպում է կանոնավոր զորաբանակում արմատավորված ռազմական՝ առավել կենսունակ օրենքների համաձայն և շրջանների ինքնապաշտպանության հրամանատարներին խստագույնս հրամայում՝ կենսագործել իր պահանջները: Մինչ այդ. միայն հայդուկային կռիվներին վարժված բազմաթիվ հայ մարտիկների համար ռազմագիտական կանոններով կռվելը անսովոր երեւույթ էր եւ նրանցից շատերը սկզբնական շրջանում. չհամակերպվելով մարտավարության նման ձեւերին. դժգոհում էին Նիկոլ Դումանի «նորարարություններից» [1]:

Սակայն շատ շուտով Դումանի կիրառած մարտավարությամբ կռվելը. որը անակնկալ էր նախնառաջ թուրքերի համար. տվեց իր լավագույն արդյունքները: Իսկ հայ զինվորները. տեսնելով մարտավարության այդ ձևի առավելությունները. արդեն գովեստով էին արտահայտվում Դումանի մասին [2]:

Դումանի համոզմամբ. ժողովրդի ինքնապաշտպանությունը ապահովելու համար անհրաժեշտ էր դիմել նաև հարձակողական գործողությունների (հարձակում ինքնապաշտպանության նպատակով): «Եւ ով որ կարծում է.- գրում է

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 25, էջ 1-5:
[2] Նույն տեղում:

[1] Տե՛ս Դրո, Երևան, 1991, էջ 211:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 220:

Դումանը.- թէ այդ ապահովումը կարելի է ձեռք բերել միշտ մնալով պաշտպանողական սահմաններում. նա չարաչար սխալւում է»[1]:

Հակառակորդի նկատմամբ վճռական գերակշռություն ձեռք բերելու նպատակով նա առաջարկում է կիրառել մարտի առավել նպատակահարմար գործելակերպ: Ըստ նրա, անհրաժեշտ ու նպատակահարմար էր, որպեսզի հայ զինական ուժերն ընդհարումների բոլոր տեղամասերում կարողանային անակնկալ ու հուժկու հարձակումների սպառնալիքով թշնամու ուժերը մշտապես պահել երկյուղի մեջ ու գամել միևնույն տեղում: Նիկոլ Դումանի կարծիքով նման գործելակերպը հակառակորդին անխուսափելիորեն կզրկեր ուժերը համախմբելու, կենտրոնացնելու և հայկական այս կամ այն շրջանին հարվածելու հնարավորություններից[2]:

Իր ուշադրության տեսադաշտում մշտապես պահելով շրջանների ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները՝ Դումանը մեծ ուշադրություն է դարձնում Երևան քաղաքի մարտական ուժերի ամրապնդմանը: Քաղաքի յուրաքանչյուր թաղում կամ ինքնապաշտպանական գոտում փորձառու խմբապետերի գլխավորությամբ դիրքեր էին գրավել զինված մարտական խմբեր[3]*:

Փոքր ծավալի ընդհարումներ սանձազերծելուց զատ, մահմեդական վերնախավը, լրջորեն նախապատրաստվելով, վճռում է նոր հարձակումներ ձեռնարկել Երևանի հայկական թաղամասերի վրա ու բեկում մտցնել արդեն ամիսներ շարունակվող ընդհարումներում: Զանազան ուղիներով Երևանում կենտրոնացնելով զգալի քանակությամբ մարտունակ ուժեր՝ թուրքերը սեպտեմբերի կեսերին զանգվածային հարձակումներ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա:

Դումանի գլխավորած Զինվորական շտաբը իր հերթին համապատասխան քայլեր է կատարում հակառակորդի գրոհները դիմագրավելու և ջախջախիչ հարված հասցնելու ուղղությամբ: Թուրքերի սեպտեմբերյան հարձակումը Երևանի ինքնապաշտպանական ուժերի համար արդեն անակնկալ չէր: Զուտ մարտավարական նկատառումներով Դումանը խստիվ հրամայում է հայ զինվորներին՝ նախահարձակ չլինել և առաջինը չսկսել կռիվը: Նրա մտահղացմամբ, թուրք հրոսակախմբերին հարկավոր էր թույլ տալ առաջինը սկսել հարձակումը, հրապուրել նրանց գրոհելու հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի վրա և հզոր հակահարվածներով վերջնականապես պարտության մատնել:

«Թուրքերը,-պատմում է այդ դեպքերի մասնակից Տիգրան Դևոյանը,- երես առած, ամէն տեղից սկսեցին կրակել հայերի վրայ: Վերջապէս, խօսեց Դումանը՝ հրամայելով. «Կրակ բոլոր դիրքերից»:

[1] Նիկոլ Դուման, Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան, Թիֆլիս, 1907, էջ 36:
[2] Նույն տեղում:
[3]* Նիկոլ Դումանի գործունեությունը Երևանի նահանգում մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան, Նիկոլ Դուման, Երևան, 2002, էջ 188-343:

Նորքի տակի լեռներից, թուրքերին սահմանակից թաղերից մի այնպիսի ուժեղ համազարկի կապուեցաւ թուրք թաղամասը, որ 3-4 օր թուրքերը հնարաւորութիւն չունեցան իրենց քիթը դուրս հանելու»[1]:

Ինչպես նախորդ՝ մայիսյան, այնպես էլ այդ օրը տեղի ունեցած մարտերում դաշնակցական մարտախմբերի հետ միասնական թշնամու դեմ մարտնչել են հնչակյան մարտիկները: Այդ իրողությունը իր հուշերում վկայում է Ս. Օհանջանյանը՝ նշելով. «Երկու կազմակերպութիւնների- Դաշնակցութեան եւ հնչակեանների-դիրքերից, շարունակ լսում էին անընդհատ, կատաղի հրացանաձգութիւն, փողոցներում ոչ մի թուրք չէր երեւում... »:

Հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են հերթական հաղթանակը և ինչպես նախորդ մարտերում, այս անգամ ևս հայ մարտիկները հաղթում են ոչ թե քանակական գերակշռությամբ, այլ մարտում դրսևորած հարձակողական բնույթի մարտավարությամբ ու կռվելու վարպետությամբ:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ «Կռուող հայերի յամառ եւ կատաղի դիմադրութիւնը խորին հաւատ էր ներշնչում ժողովրդին, որ հայը այլեւս առաջւանը չէ, թիւրքի սրի առաջ մորթւող ոչխարը, որ հայն էլ վերջապէս եկաւ այն խորին գիտակցութեան, որ մեր ինքնապաշտպանութեան ամենալաւ միջոցը-Մոսկէսական անողոք օրէնքն է՝ աչքի տեղ աչքը, ատամի տեղ ատամը...»[2]:

Ինչպես նախորդ, այնպես էլ սեպտեմբերյան կռիվներում հայկական մարտական ուժերի հարվածը վճռական և զգաստացնող նշանակություն է ունենում: Երևանի նահանգապետը մահմեդական բնակչության վերնախավի խնդրանքով հարկադրված միջոցներ է որոնում հայ ինքնապաշտպանական ուժերի հարձակումը կանգնեցնելու ու հաշտություն կայացնելու համար:

«Նահանգապետ Տիգէնհաուզէն եւ զօրքերի ընդհանուր հրամանատար Շվէտով,- նշում է Ս. Օհանջանյանը,- առաջարկեցին հաշտուել...»[3]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, քննարկելով առաջարկությունը, նահանգապետին դարձյալ առաջադրում է գրեթե նույն պահանջները, ինչը ներկայացրել էր մայիսյան կռիվների ավարտին[4]:

Քանի որ իշխանությունները զորքի աջակցությամբ շարունակում էին իրականացնել հայերին զինաթափելու քաղաքականությունը, այդ պատճառով հայկական կողմը չի սահմանափակվում միայն այս պայմանների առաջադրմամբ: Կռիվները դադարեցնելու և խաղաղություն հաստատելու համար նահանգապետին և թուրքական կողմին առաջադրվում են նաև հետևյալ պահանջը. «...նկատի առնելով ազգաբնակչութեան անապահով վիճակը՝ ներկայ պայմաններում անհրաժեշտ է դադարեցնել Երեւանի նահանգում տիրող հայերին զինաթափ անելու միջոցները...»[5]:

[1] ՀՅԴ ԿԱ. թղ. 292, գ. 25, էջ 3:
[2] ՀՅԴ ԿԱ. թղ. 293, գ. 11, էջ 3:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 3, էջ 38:
[5] Նույն տեղում:

Հայկական կողմից նահանգապետին ներկայացված հայերին զինաթափելու պայմանը պատահական չէր: Մինչ սեպտեմբերյան կռիվները Երևանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի Զինվորական մարմինը երբեմն հարկադրված էր միջոցներ ձեռնարկել ոչ միայն ինքնապաշտպանություն կազմակերպելու ուղղությամբ:

Երևանի նահանգում հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակներն ու մահմեդական բնակչության պարտությունը ցարական իշխանություններին թելադրում են հայերի նկատմամբ ձեռնարկել նոր, ավելի խիստ միջոց՝ զինաթափում: Անդրադառնալով զինաթափման պատճառներին՝ «Դրոշակ»-ը առանձնացնում է նրանցից երկուսը. «Յանցաւոր է յայտարարւում հայը, որ թոյլ չը տուեց իրեն խողխողել ոչխարի պէս: Այս բոլորը արդիւնք է այն բանի, որ թուրքերն ամէն տեղ ընկճուել են ու քիթերը կախել: Քանի մեզ էին կոտորում, կառավարութիւնը հետևում էր laisser faire-ի քաղաքականութեան, հենց որ մենք սկսեցինք պատասխանել, սկսուեց զինաթափումը:

Հայերին զինաթափ անելու երկրորդ նպատակն էր՝ հնար տալ թուրքերին գարնանը սար՝ եայլաղ բարձրանալ...Կառավարութեան վերաբերմունքը չափազանց նենգաւոր էր ու կասկածելի: Հայ գիւղեր են ոմբակոծում, իսկ ոչ մի թուրք գիւղ չի պատժվում»[1]:

Զորքի միջոցով ինքնապաշտպանական ուժերին զինաթափելու և պատժիչ միջոցներ կիրառելու ժամանակ իշխանությունները հետապնդել են հետևյալ նպատակը. 1. Ժողովրդին ցույց էր տալիս իր զինվորական ուժը: Ժողովուրդը, տեսնելով զինվորական ուժը, կարող էր սարսափի մատնվել ու հեռու մնալ հեղափոխական շարժումներից, 2. Հեղափոխական կազմակերպություններին տրամադրում էր զորքի դեմ, և դրանով հող նախապատրաստում զորքի ու հեղափոխական կազմակերպությունների թշնամացմանն և ընդհարմանը: Այսինքն, ցարական իշխանությունների կողմից դա մշակված քաղաքականություն էր, զորքի միջոցով ոչնչացնել հայ մարտական ուժերը[2]:

Կատարելով իշխանությունների հրամանը, զորքը բազմիցս փորձեր է ձեռնարկել զինաթափել ու պատժել հայ բնակչությանը և ինքնապաշտպանական ուժերին, բայց շատ անգամ մատնվել է անհաջողության: Հայերը, նախապես տեղեկանալով ցարական իշխանությունների կողմից ձեռնարկվող զինաթափման մասին, խնամքով թաքցնում են զենքերը:

Հայ-թուրքական ընդհարումները տարածվելով ու խորանալով, 1905 թ. աշնանը ընթանում էին Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: Թեպետ հայ ինքնապաշտպանական ուժերը մի շարք շրջաններում արդեն կարողանում էին կազմակերպված հակահարվածներով պատասխանել հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերի ոտնձգություններին, սակայն կռիվները չթուլացող ուժգնությամբ շարունակվում էին և դեռևս որևէ երաշխիք չկար, որ դրանք շուտով կարող էին ավարտվել:

Կովկասահայության ինքնապաշտպանության դեկն ստանձնած Հ. Յ. Դաշնակցությունն անհրաժեշտաբար պիտի վերլուծեր անցած ամիսներին կովկասահայության կյանքում, մասնավորապես ինքնապաշտպանական մարտերում տեղի ունեցած իրադարձությունները, կատարեր համապատասխան եզրահանգումներ և ըստ այդմ ընդուներ ստեղծված կացությանը համահունչ որոշումներ:

Քանի որ հնարավոր չէր գումարել Ընդհանուր ժողով, ՀՅԴ Արևելյան բյուրոն 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում գումարում է Կովկասյան Ռայոնական ժողով: Ցարական կայսրությունում և կովկասահայության կյանքում ծավալվող դեպքերի թելադրանքով Ռայոնական ժողովի օրակարգն է դառնում. «Փետրվարեն ի վեր ծայր տուած հայ-թաթարական կռիւները, ինչպէս նաև, անշուշտ, Դաշնակցութեան գործունեությունը համառուսական ծիրին մէջ»[1]:

Նախորդ ամիսներին տեղի ունեցած դեպքերն ու հատկապես ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները միանշանակորեն ապացուցում էին, որ ինքնապաշտպանության կազմակերպման գործում կարևորագույներից մեկն ու առաջնահերթը ֆինանսական միջոցներն էին: Այդ պատճառով նկատի ունենալով ինքնապաշտպանության հույժ կարևորությունը, Ռայոնական ժողովում ժողովականներն առաջին հերթին քննարկում են դրամի հետ կապված խնդիրը[2]:

Ինչպես միշտ բարվոք չի եղել կուսակցության տրամադրության տակ գտնվող ֆինանսների վիճակը:

Ըստ Ռայոնական ժողովի արձանագրություններում տեղ գտած տվյալների. «Շրջաններից տրուած տեղեկութիւններից երեւաց, որ 1905 թ. Հ.Յ.Դաշնակցութիւնը մուտք է ունեցել 500.000-600.000 ռ., որից զէնք է գնուել 200.000 ռ., առանց հաշուելու ճանապարհածախսն ու կորուստը: Կուսակցութիւնը Կովկասում ունի մօտաւորապէս 1.800 մսին եւ բերդան, 640 մաուզէր ատրճանակ, մօտ 100.000 ծայր,-ինչ որ չափազանց անբաւարար է»[3]:

Ինչ խոսք, արձանագրությունում նշված դրամի քանակը, իրոք, չափազանց սահմանափակ է: Կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու, զենք ու զինամթերք գնելու համար Դաշնակցությունն անհրաժեշտ գումարներ ձեռք բերելու համար, ինչպես արդեն նշվել է, քաղաքներում և շրջաններում կազմակերպել է դրամահավաք: Այսինքն, դրամը տրամադրում էին ոչ թե հայ մեծահարուստները, որոնք Կովկասում պատկառելի թիվ էին կազմում, այլ ժողովուրդն ինքն էր հոգում՝ գնելու զենքն ու զինամթերքը:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 261, գ. 8, էջ 6:

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 236:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 237:
[3] Նույն տեղում:

Հարկ է ընդգծել, որ փաստաթղթերում զենք ու զինամթերքի, ինչպես նաև ծախսված դրամի քանակությունը ներկայացնող թվերը հիմնականում տարբեր են և այնքան էլ հավաստի ու համոզիչ չեն:

Օրինակ, Աբ. Գյուլխանդանյանի տվյալներով հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանական շրջաններից յուրաքանչյուրը ունեցել է.

«Բագուն մոտ 300 հրացան և 400 ատրճանակ.

Շամախի՝ Գլաչայ և Նուխի, մոտ 200 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Գանձակ քաղաք և գաւառ, մոտ 500 հրացան և 200 մեծ ատրճանակ

Շուշի քաղաք և գաւառ, մոտ 600 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Զանգեզուրի շրջան, մոտ 300 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Ղազախի շրջան, մոտ 500 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Երևանի գաւառ, մոտ 400 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Էջմիածնի գաւառ, մոտ 200 հրացան և 100 մեծ ատրճանակ.

Նախիջևանի գաւառ, մոտ 400 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Թիֆլիսի գաւառ, մոտ 300 հրացան և 200 մեծ ատրճանակ.

Ուրեմն ընդամենը՝ 4.000 հրացան և 2,000 -2,500 մեծ ատրճանակներ»[1]:

Զենքերի նշված քանակությանը, ըստ Աբ. Գյուլխանդանյանի, պիտի գումարել նույն քանակությամբ հրացաններ ու ատրճանակներ, որոնք ընդհարումների ժամանակ ձեռք էին բերել հայ բնակչությունը և ՀՅԴ կառույցները: Բոլորը միասին կստանանք « 8.000 հրացան եւ մոտ 4.000 մեծ ատրճանակ: Եթէ ամէն մի ատրճանակին հաշուենք մոտ 300 փամփուշտ եւ ամէն մի հրացանին մոտ 1.000 փամփուշտ, կը ստանանք մոտ 7-8 միլիոն փամփուշտ»[2]:

Կարելի է ասել, որ Ռայոնական ժողովում և Աբ. Գյուլխանդանյանի վկայած տվյալները բավարար չեն լիովին ներկայացնելու հայ ինքնապաշտպանական ուժերի տրամադրության տակ գտնվող զենք ու զինամթերքի, ինչպես նաև ծախսված դրամի իրական քանակը:

Օրինակ, հանրահայտ իրողություն է, որ դեռևս ընդհարումներից առաջ՝ 1904 թ. շնորհիվ Պաղվալի Վաղոյի և Բիձայի (Սվազցի Հարություն) նախաձեռնության, Ուսուլ Գրիգորը, Արամայիսը, Ուսուլ Խեչոն և Վռամը կարողացել էին Ալեքսանդրապոլի զինվորական պահեստից փախցնել հարյուրավոր հրացաններ և տասնյակ հազարավոր փամփուշտներ և տեղափոխել ՀՅԴ գաղտնի պահեստները:

Մեկ այլ օրինակ, 1910 թ. Կոպենհագենում տեղի ունեցած ընկերավարական (սոցիալիստական) կուսակցությունների միջազգային համագումարում ունեցած իր ելույթում Նիկոլ Դումանը ժողովի մասնակիցների ուշադրությանը ներկայացնելով զինված ապստամբության և ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրները՝ նշել է. «...Դաշնակցությունը Կովկասում այժմ ունի ոչ թէ գեներալներ առանց բանակի, այլ հակառակը, բանակ՝ առանց գեներալների: Բայց ինչպիսի՞

[1] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 145:
[2] Նույն տեղում, էջ 145-146:

բանակ է դա: Միայն մի նահանգում, որտեղ ես ինքս էի գլխավորում բանակը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, զենք էին կրում (հրացան, եւ ոչ թէ ատրճանակ), մի ողջ դիվիզիա, գրեթե 16000 թվակազմով...»[1]:

Սեղրակ Ջալալյանի հավաստմամբ իր և Արտաշես Մելքոնյանի մարտական խումբը, որին Դումանը ուղարկել է Ղազախ-Շամշադինի շրջան Սելբարեցի Սաքոյին օգնության, բաղկացած էր 300 մարտիկներից[2]:

Այդ նույն Աբ. Գյուլխանդանյանի վկայությամբ Գանձակում իրենց կառուցած փամփուշտի պատրաստման մեծ արհեստանոցում օրական պատրաստում և պահեստավորում կամ դիրքերն էին ուղարկում Բերդան հրացանի 10.000 փամփուշտ[3]:

Կարելի է վկայակոչել ևս բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են, որ զենք ու զինամթերքի քանակության վերաբերյալ Աբ. Գյուլխանդանյանի ներկայացրած տվյալները ավելի քան համեստ են: Չի բացառվում, որ դրանք վերաբերում են Բաքվի Զինվորական մարմնի կողմից, որի անդամն էր նաև ինքը, ինքնապաշտպանական շրջաններին հատկացրած զենքերին:

Զենք ու զինամթերքի գնման հարցում թուրքական կողմը ընդհարումներից առաջ և ընդհարումների ընթացքում ունեցել է զգալի առավելություններ: Ի տարբերություն հայերի, թուրքական կողմը դրամահավաքի կարիք չի ունցել: Զենք ու զինամթերք գնելու ծախսերը հիմնականում հոգում էին թուրք առաջնորդներն ու մեծահարուստները: Քանի որ զենք ու զինամթերք ձեռք բերելու հիմնական միջոցը եղել եւ մնում էր դրամը, բնական է, որ թուրքական կողմը տիրապետում էր զենք ու զինամթերքի անհամեմատ մեծ միջոցների:

Օրինակ, Կովկասում Դաշնակցության ունեցած մոտավորապես 1.800 մոսին և բերդան հրացանների (Ռայոնական ժողովի պաշտոնական տվյալն է-Հ.Գ.) փոխարեն թուրքերի կողմից Գանձակի գավառում գործող Դալի Ալիի հրոսակախումբը ունեցել է 200, իսկ Նազիի հրոսակախումբը՝ 70 մոսին հրացան և մեծ քանակությամբ փամփուշտ: Ընդ որում, ոչ միայն վերոհիշյալ, այլև գրեթե բոլոր թուրք հրոսակախմբերը զինված են եղել մեծամասամբ մոսիններով[4]:

Որքա՞ն ֆինանսական միջոցներ էին պետք, որպեսզի Դաշնակցությունը կարողանար գնել անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք և լուծեր ժողովրդին զինելու, մարտական խմբեր կազմավորելու խնդիրը: Այդ հարցի վերաբերյալ Ռայոնական ժողովում եղել են տարբեր առաջարկություններ:

Օրինակ, Ոսկանապատի (Բաքու)ներկայացուցիչը պնդում է, որ «.Դաշնակցութեան համար հարկաւոր է ճարել առնուազն 2 միլիոն ռ., թէ չէ կը խայտառակուենք»[5]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1265, գ.20:
[2] Տե՛ս Գեւորգեան Կ., Ամենուն Տարեգիրք, 1957, էջ 173-174:
[3] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1934, թիւ 6, էջ 163:
[4] «Նիւթեր...», հ. Բ, էջ 236:
[5] Նույն տեղում, էջ 262:

Ռազմաապատի պահանջած 2 միլիոնը վերաբերում է միայն Բաքվին, իսկ որքան էր անհրաժեշտ վտանգված մնացած բոլոր ինքնապաշտպանական շրջաններն ըստ ամենայնի զինելու և այլ կարիքների հոգալու համար:

Այստեղից, թեև այս հարցը չափազանց կարևոր էր, բայց դրա վերաբերյալ վերջնական որոշում Հ.Յ.Դաշնակցության Ռայոնական ժողովում չի ընդունվել:

Ռայոնական ժողովում բուռն վիճաբանություններ է ծավալվել մարտավարության(տակտիկա)խնդրի քննարկման ժամանակ: Ինչպիսի՞ դիրքորոշում պիտի որդեգրեր Դաշնակցությունը ընթացող կռիվներում թուրքերի վերաբերմամբ: Ժողովականներից ոմանք, օրինակ Ավետիք Իսահակյանը, Համազասպը, Արմեն Գարոն, Շահրիկյանը և այլոք, ելակետ ունենալով այն իրողությունը, որ թուրքերը պատրաստություններ տեսնելուց հետո անպայմանորեն հարձակվելու էին հայերի վրա, առաջարկում են նախահարձակ լինել ու թույլ չտալ նրանց՝ քոչը բարձրացնելու սարերը: Ժողովականների մյուս մասը, որոնց թվում Իշխանը (Հովսեփ Արղության), Համո Օհանջանյանն առաջարկում են դիմել հաշտության, խաղաղություն կնքել և թույլ տալ թուրքերին՝ քոչը բարձրացնելու սարերը [1]:

Բուռն վիճաբանություններից հետո Իշխանի ու Հով. Քաջազնունու կողմից ներկայացվում են երկու հակոտնյա բանաձևեր, որոնք ժողովականների կողմից մշակվելուց հետո, ընդունվում են հետևյալ ձևակերպմամբ.

«Ա) Ընդունում ենք, որ մեր իրոք հաշտութիւնն է եւ ոչ կռիւ թուրքերի հետ...ընդունում ենք, որ իսկական հաշտութիւն չի կարող կայանալ, մինչեւ թուրքերը չհամոզուեն, թէ իրենց դէմ մի ոյժ ունեն, որն ընդունակ է ինքնապաշտպանութեան եւ որ յարձակման դեպքում՝ պատրաստ է խստիւ պատժել յարձակողին...պատրաստ լինելով ընդդիմութեան՝ մենք երբեք նախայարձակ չպէտք է լինենք այն տեղերում, ուր թուրք տարրը թոյլ է կամ իր բռնած դիրքով մեզ վնաս է սպառնում: Միանգամայն մերժելով նախայարձակման տակտիկան՝ ընդունում ենք, որ այն տեղերում, ուր մեզ պարզէ ի պարզ վտանգ է սպառնում թուրքերի բռնած դիրքից, դիրք՝ որ այսօր-վաղը կարող է բացարձակ յարձակման վերածուել, այդ տեղերում եւ այդ դէպքերում ոչ միայն ընդունում ենք նախայարձակման ինիցիատիւը, այլեւ պարտաւորական ենք համարում» [2]:

- Իսկ ո՞վ պիտի որոշեր նախահարձակ լինելու պահն ու անհրաժեշտությունը: Համաձայն Ռայոնական ժողովի որոշման, այդ իրավունքը վերապահվում էր ՀՅԴ կենտր. կոմիտեներին եւ կենտրոնականի իրավասություններ ունեցող կոմիտեներին, որոնք նախահարձակման մասին որոշում կայացնելու համար պիտի գումարեին իրենց շրջանի Ռայոնական ժողով: Այնուհետեւ, «Նախայարձակ լինելու մոմենտի որոշումը իրաւասու մարմինները վճռում են գաղտնի քուէարկութեամբ՝ ժողովականների ձայների 2/3 ի մեծամասնութեամբ» [1]:

Բ) Ամենախիստ պրոպագանդ անել աշխատաւոր թուրք դասակարգի մէջ, բարձրացնելու նրա գիտութիւնը, հասկացնելով՝ որ երկու ազգերի շահերը կատարելապէս համապատասխան են իրար» [2]:

Քանի որ Հ.Յ.Դաշնակցությունը ընկերվարական(սոցիալիստական) կուսակցություն է, ապա պիտի նկատել, որ մարտավարության վերաբերյալ ընդունած որոշման Բ. կետը պայմանավորված էր նրա որդեգրած ընկերվարության(սոցիալիզմ) ծրագրային դրույթով ու գաղափարաբանությամբ: Իսկ այն դժնդակ ժամանակահատվածում, երբ թուրքական հրոսակախմբերը հարձակումներ էին գործում հայաբնակ գրեթե բոլոր բնակավայրերի վրա, միամգամայն անիմաստ էր և բոլորովին հիմնազուրկ ու անտեղի հույսեր ունենալ, որ կարելի էր թեկուզև ամենախիստ քարոզչությամբ(պրոպագանդա) բարձրացնել թուրք աշխատավոր դասակարգի գիտակցությունը:

Կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպմանը վերաբերող կարևորագույն խնդիրներից մեկը Կովկասում զինվորական ուժերի կազմակերպման ու պահպանման հարցն էր, որը նույնպես քննարկվել է Ռայոնական ժողովում: Ինչպիսի՞ զինվորական ուժեր պիտի ունենար Դաշնակցությունը՝ զո՞րք թէ միլիցիա(տեղական ոստիկանություն): Համաձայն ժողովի արձանագրության տվյալների, ՀՅԴ Կովկասում ունեցել էերեք տեսակի զինվորական ուժեր.

1. Զորք... Հ. Յ. Դաշնակցության ձեռքի տակ գտնվող ամենամեծ զինվորական ուժը զորքն էր, որը կազմված էր զինվորական գործին նվիրված անհատներից: Զորքի անդամները ապրել են կուսակցության հաշվին, նրանից յուրաքանչյուր ամսական ստացել է 10-12 ռուբլի, հագուստ, զենք, ձի և այլ անհրաժեշտ պիտույքներ:

Զորքը կազմված է եղել հետևակ և հեծյալ զինվորներից: Հետեւակը կռվող ուժն էր, նրա պարտականությունն էր պահպանել իրենց բնակավայրերը, կատարել հետախուզություն, իսկ հեծյալները՝ «սահմանապահ, աւազակներ բռնող, թալանը յետ խլող, յարձակումների դիմադրող, յարձակուող, տուրհանդակ, նաեւ հետախոյզ եւ այլն» [3]:

2. Միլիցիա...

Զինվորական ուժի այս տեսակը կազմված էր տեղացի երիտասարդներից, որոնք նախկինում ծառայել էին ռուսական բանակում: Միլիցիայում ընդգրկվածները ապրում էին իրենց գյուղերում և ժողովրդի ու կուսակցության կողմից չեն վարձատրվել: Նրանք գործել են իրենց ընտրած խմբապետի ու տասնապետի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 237:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 238:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

հրամանատարությամբ եւ յուրաքանչյուրը ունեցել է իր սեփական զենքը: Եթե միլիցիայի անդամը ունեւոր չէր, ապա զենքը ստանում էր կազմակերպությունից:

Համաձայն ժողովի բնութագրման «Միլիցիան ծանրաբեռն չէ ժողովրդի համար, ինչպես զորքը. միլիցիան բարոյապես աւելի բարձր է, քան զորքը, բայց եւ այնքան շարժուն եւ ռազմունակ չէ ինչպես զորքը, որ շարունակ զենքի տակ է: Միլիցիան կատարում է նոյն գործը, բայց իր գիւղի սահմաններում»[1]:

Բացի վերոհիշյալներից, Դաշնակցության տրամադրության տակ կային կամավորներից կազմված խմբեր, որոնք ոչ զինվոր էին համարվում և ոչ էլ միլիցիա, բայց պատրաստ էին անհրաժեշտության դեպքում մասնակցել կռիվներն: Զինվորական ուժի որ տեսակին պիտի նախապատվություն տրվեր՝ զորքին, թե միլիցիային: Զորքը թեև ավելի շարժուն էր և ռազմունակ, բայց դրա փոխարեն նրան պահելու համար հարկավոր էին ֆինանսական հսկայական միջոցներ, որոնք կուսակցությունը ձեռք էր բերում մեծ դժվարությամբ:

Այս հարցի վերաբերյալ կարճ վիճաբանությունից հետո ժողովականները միաձայն ընդունել են հետևյալ որոշումը.

«1. Իբրեւ սիստեմ ընդունել միլիցիան, որի կազմակերպութեանը դիմել անմիջապէս պարտաւորեցուցիչ կերպով ամէն տեղ:

2. Պատրաստի ազատ զինուորներ ունենալ, կարիք զգացուողի դեպքում՝ պահանջի minimum-ի(նվազագույն)չափով»[2]:

Եթե ելակետ ունենանք պատմական այդ ժամանակահատվածում հայության, մասնավորապես կովկասահայության կյանքում տեղի ունեցող դեպքերի ու իրադարձությունների յուրահատկություններն և փորձենք անաչառորեն գնահատել Ռայոնական ժողովի ընդունած որոշումները, ապա պիտի ընդգծել, որ այդ որոշումները, հատկապես միլիցիայի և զորքի վերաբերյալ, այնքան էլ հասկանալի, փաստարկված և համահունչ չեն ժամանակաշրջանի պահանջներին ու առանձահատկություններին:

Ինքնապաշտպանությանը առնչվող թերևս միակ հստակ բանաձևը, որն ընդունել է Ռայոնական ժողովը, վերաբերում է Ահաբեկչությանը(տեռոր):

Նախորդ տարիների փորձը, հատկապես 1903 թ. հունիսի 13-ի ցարի տխրահռչակ օրենքի հրապարակումից հետո ցարական աստիճանավորների ու նրանց գործակալների նկատմամբ կատարած ահաբեկչության դեպքերը հավաստում էին, որ այդ գործողությունները ինչ-որ տեղ ունենում էին զգաստացնող ազդեցություն: Իսկ իր գործունեության ընթացքում ՀՅԴ, կարելի է ասել, արդեն ձեռք էր բերել շոշափելի փորձառություն: Բնական է, որ տեռորը հետայսու դարձյալ պիտի մնար նրա ուշադրության կենտրոնում:

Համաձայն «Ահաբեկչության» (տեռոր)-ի մասին ընդունած բանաձևի.

«1. Ընդունում է տեռորը՝ պաշտոնական եւ ոչ պաշտոնական անհատների դէմ, որոնք մեզ համար անմպատ դեր են կատարում ընդհարումների խնդրում:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

2. Տեռորի կարող են ենթարկուել բոլոր պաշտօնեաները՝ առանց պաշտօնների եւ աստիճանների խտրութեան:

3. Տեռորը կատարում է «Հայկական Ահաբեկիչ Մարմնի» անուան տակ:

4. Պրիստաւին եւ նրանից ցածր պաշտօնեային տեռորի կարող է ենթարկել միմիայն տեղական Կենտրոնական կոմիտէն»[1]:

Ընդհարումների ընթացքում գավառներում ու շրջաններում տեղի ՀՅԴ կառույցներին կից, ինչպես արդեն նշվել է, կազմավորվել ու գործում էին Զինվորական մարմիններ, որոնց իրավասության մեջ էին մտնում ինքնապաշտպանական մարտական ուժերի ղեկավարումը: Ռայոնական ժողովում քննարկվել և համապատասխան բանաձև է ընդունվել նաև այս հարցի, այն է՝ ինքնապաշտպանությունը ղեկավարող մարմինների վերաբերյալ:

Ըստ ժողովի ընդունած բանաձևի, Պատերազմական իրավիճակում ՀՅԴ յուրաքանչյուր մարմնին կից կազմվում է համանուն Զինվորական մարմին: Օրինակ, ՀՅԴ բյուրոյին կից՝ Զինվորական բյուրո, կենտրոնական կոմիտեին՝ Կենտրոնական Զինվորական մարմին և այլն: Ընդսմին, Զինվորական բյուրոյին էին ենթարկվելու Զինվորական մարմինները:

Զինվորական մարմնի իրավասության մեջ էր մտնում զենք ու զինամթերքի և մարտական ուժերի բաշխումը: Նրան էր վերապահվում Ռայոնական ժողովի որոշումների սահմաններում որոշելու մարտավարության ուղղվածությունը, բայց հետևյալ վերապահումով՝ այդ դեպքում նա իր ընդունած որոշումները պիտի համաձայնացներ ՀՅԴ տեղի մարմնի հետ[2]:

Արդեն մի քանի ամիս շարունակվող կռիվները միանշանակ ցույց էին տալիս, որ զորքն ու ոստիկանությունը ոչ միայն պաշտպանում և հովանավորում էին թուրք հրոսակախմբերին, այլև շատ հաճախ նրանց հետ միացած, ներխուժում էին հայկական բնակավայրերն ու սպանում հայերին և բռնագրավում նրանց ունեցվածքը: Ռայոնական ժողովն անշուշտ պիտի անդրադառնար նաև այդ հարցին և համապատասխան որոշում կայացներ: Համանման իրավիճակում ի՞նչ պիտի անեին ու ինչպե՞ս պիտի իրենց դրսևորեին հայ մարտական ուժերը, լուռ համբերությամբ պիտի դառնային տեղի ունեցող դեպքերի սոսկ ականատե՞սը, թե պատասխան համարժեք հակահարված տային նրանց ոտնձգություններին:

Համաձայն Ռայոնական ժողովի որոշման «...այդպիսի դէպքերում սկզբունքով ընդունել նաև կռիւը զօրքերի դէմ, եթէ տեղական մարմինները կը գտնեն նպատակայարմար ու կարեւոր»[3]:

Ռայոնական ժողովի աշխատանքներին չեն մասնակցել ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներից շատերը, օրինակ Նիկոլ Դումանը, Վարդանը, Մեբաստացի Մուրադը, Սկքարեցի Սաքոն, Սմբատ Բորոյանը, որոնք կա-

[1] Նույն տեղում, էջ 240:
[2] Նույն տեղում, էջ 239:
[3] Նույն տեղում:

ռելի է ասել. Հայոց Ազատամարտի ամենանշանավոր դեմքերն էին: Ինչպես կրնդունեին նրանք Ռայոնական ժողովի որոշումները. մասնավորապես մարտավարության վերաբերող նախահարձակման մասին որոշումը: Պիտի նշել, որ կռիվների սկզբնական շրջանում, բացառությամբ Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Վարդանի, հարձակողական բնույթի մարտավարության կողմնակից էին վտանգված շրջանների ինքնապաշտպանական ուժերի ղեկն ստանձնած անվանի ռազմիկներ Սեբաստացի Մուրադը, Քեռին, Սեքարեցի Սաքոն, Սմբատը, Առյուծ Ավագը և այլոք:

Օրինակ, մինչ վերոհիշյալ Ռայոնական ժողովի գումարվելը, Դումանի հրամանով հայ մարտական ուժերն արդեն մի շարք հարձակողական գործողություններ էին ձեռնարկել նրա հրամանատարության տակ գտնվող Երևանի նահանգի, ինչպես նաև Զանգեզուրի և Ղազախ-Իջևան-Շամշադինի շրջաններում: Իսկ վերոհիշյալ ռազմիկները գործել են հենց Երևանի նահանգում և Զանգեզուրի ու Ղազախ-Իջևան-Շամշադինի շրջաններում[1]:*

Քանի որ Երևանում վիճակն ավել կայուն էր, Չինվորական մարմինը հիմնական ուշադրությունը բևեռում է շրջանների վրա: Երևան քաղաքում հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելուն զուգընթաց, շատ կարևոր էր, որպեսզի հայ ինքնապաշտպանական ուժերը հուժկու հարված հասցնեին նաև շրջաններում: Եթե հայ մարտական ուժերին հաջողվեր Երևանում նվաճած հաղթանակը ամրապնդել նաև շրջաններում, ապա դա, անկասկած, վճռորոշ նշանակություն կունենար թուրքերի մարտական ոգին, դիմադրությունը կոտրելու և նրանց վերջնականապես պարտության մատնելու գործում: Այդ պատճառով Չինվորական մարմինը քաղաքում թողնելով նվազագույն քանակի մարտիկներ, մարտական ուժերը գլխավորապես ուղարկում էր առավել վտանգված շրջանները:

Հայերի յուրաքանչյուր քայլերին մանրակրկիտ հետող թուրքերը տեղեկանալով, որ մարտական ուժերի հիմնական մասը քաղաքից մեկնել է շրջանները, օգտագործում են հարմար պահը և մայիսի 27-ին հարձակվում հայկական թաղերի վրա: Մայրաքաղաքի հայությունը դարձյալ հայտնվում է դժվարին իրավիճակում: Թուրքերի հարձակումները կասեցնելու և հերթական անգամ նրանց ջախջախիչ հարվածներ հասցնելու նպատակով Դումանն անհապաղ կազմակերպում է նոր մարտական խմբեր և նրանց զինելու համար, առանց տատանվելու, օգտագործում է Երկիր առաքման համար նախատեսված՝ Երևանում պահեստավորված զենքերը[2]:

Չինվորական Մարմնի ձեռնարկած համապատասխան միջոցառումների շնորհիվ, մայրաքաղաքի փոքրաքանակ ինքնապաշտպանական ուժերը դիմագրավում են թուրք հրոսակախմբերի գրոհները և խափանում հայկական [illegible] թաղամասերը թափանցելու նրանց հերթական ձեռնարկումները: Եթե մարտադաշտում հայ ինքնապաշտպանական ուժերը հաղթանակներ էին նվաճում, ներկուսակցական կյանքում Չինվորական Մարմինն ու անձամբ Դումանը բախվում էին նոր խոչընդոտների:

1905 թ. Ռուսական կայսրությունում ծավալվող հեղափոխական շարժումների ու գաղափարների ներգործությամբ լիցքավորված երիտասարդների նոր սերունդ էր հասցրել մինչ այդ ազգային խնդիրների լուծմանը զինվորագրված Հ.Յ. Դաշնակցության շարքերը: Երիտասարդներից շատերը ապրել ու կրթություն էին ստացել Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Նրանց հոգևոր և գաղափարական ձևավորման և հասունացման վրա խոր դրոշմ էին դրել ռուս հեղափոխականների որդեգրած ծրագրերը, պայքարի սկզբունքներն ու եղանակները: Հայ գյուղի և հայ գյուղացու սոցիալական վիճակի բարելավման, նրա իրավունքների համար մղվող պայքարը դարձել էր ռուս հեղափոխականացած դպրոցի ավանդույթներով և դավանած գաղափարներով դաստիարակված երիտասարդ դաշնակցականների գործունեության գլխավոր նպատակն ու շարժիչ ուժը: Առաջնորդվելով «Դեպի գյուղ» կարգախոսով՝ նրանք մեկնում էին գյուղերը և հեղափոխական ավագ սերնդի ներկայացուցիչների օրինակով, որպես ուսուցիչներ, աշխատանքի էին ընդունվում գյուղական դպրոցներում: Բոլոր նրանք, ովքեր հասարակության մեջ ունեին որոշակի դիրք, հարստություն և պաշտոններ, դիտվում էին որպես հայ գյուղացու հարստահարիչներ ու իրավունքների բռնաստողներ: Երիտասարդ հեղափոխականների գերխնդիրն էր ընկերվարական գաղափարների քարոզչությունը:

Ցարական լրտեսական սպասարկության «Օխրանա»-յի տեղեկագրում հեղինակները, ներկայացնելով Դաշնակցության շարքերը համալրած ընկերվարական գաղափարներ դավանող դաշնակցականների ծավալած գործունեության հետևանքով կուսակցությունում տիրող իրավիճակը՝ նշում են. «Կովկասում սոցիալիստական բանտարական շարժման ազդեցութեան տակ եւ հայ մտաւորականութեան մէջ սոցիալիստական գաղափարների տարածման հետեւանքով, այս հզօր կազմակերպութիւնը վերջին տարիները արագ հոլովոյթով գնաց սոցիալիստ-յեղափոխականների աշխահայացքի կողմը եւ աւելի ու աւելի, տեսականօրէն ու գործնականօրէն, սկսեց մօտենալ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան»[1]:

Ըստ «Օխրանա»-յի տեղեկագրի պարզաբանման, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ՀՅԴ ստանձնել էր կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ղեկն ու պատասխանատվությունը: Քանի դեռ ընթանում էին կռիվները, Դաշնակցության ուշադրությունը գլխավորապես բևեռված էր զենք ձեռք բերելու և կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու վրա: Այդ իրավիճակում, բնական է, որ ընկերվարական գաղափարներ դավանող դաշնակցականները չէին կարող ազդեցիկ դերակատա-

---

[1]* Մանրամասն տե՛ս Համլետ Գեւորգյան, Նիկոլ Դուման, էջ 188-343, Սեբաստացի Մուրադ, Երևան, 2005, էջ 96-162:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 20, էջ 5-6:

---

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 239:

թություն ունենալ կուսակցության ներսում և ընկերվարությունը այն ուժը չէր, որ կարող էր միավորել և իր հետևից տանել հայությանը[1]:

Թշնամու նկատմամբ մարտադաշտում Դաշնակցության առաջնորդությամբ հայ ինքնապաշտպանական ուժերի նվաճած հաղթանակները մեծապես նպաստել են հայության շրջանում կուսակցության հեղինակության բարձրացմանը: Հազարավոր հայորդիներ, հրապուրվելով Դաշնակցության հմայքով և ձեռք բերած նվաճումներով, համալրել են կուսակցության շարքերը: Իսկ ՀՅԴ շարքերը համալրող անհատներից ոչ բոլորն էին աչքի ընկնում իրենց բարոյական անաղարտ նկարագրով ու կարգապահությամբ:

Սարգիս Օհանջանյանի գնահատմամբ՝ կուսակցության կարգապահությունը թեև օրինակելի էր, իսկ կամավոր-ընկերների վարքն ու կյանքը՝ միանգամայն վայելուչ ու կուսակցության հեղինակությանը համահունչ, սակայն «Հայ-թրքական ընդհարումների խառնակ տարիներին Դաշնակցության շարքերի մէջ մտան շատ մութ ու անմաքուր տարրեր, որոնք իրենց անվայել վարքով (շանտաժ, գողութիւն, անմեղ սպանութիւն, կազմակերպութեան անուանը չարաշահում և այլն), սկսեցին վարկաբեկել Դաշնակցութեան անբիծ անունը: Բայց դա մի անցողական շրջան էր, մի ժամանակաւոր եւ անխուսափելի աղէտ, որ կարճատեւ փոթորիկի նման եկաւ ու անցաւ»[2]:

Որպեսզի ընդգծի, համոզիչ դարձնի ժողովրդի մեջ Հ.Յ.Դաշնակցության անանախադեպ ծավալման իրողությունը՝ Ս. Օհանջանյանը նշում է. «Մենակ Երեւանի Կենտր. Կոմիտէի տրամադրութեան տակ 13.000-14.000 խմբեր կային, ամէն խումբը 10-15 հոգի, 60.000-70.000 տարեկան բիւջէով: Եւ այդ գումարը հաւաքւում էր հինգ կոպէկից սկսած մինչեւ յիսուն կոպէկ ամսաւճարից: Իսկ Երեւանի «Զինուորական Շտապը» հայ-թրքական ընդհարումների ժամանակ, իր տրամադրութեան տակ ունէր մօտաւորապէս երեք հազարանոց սպառազէն, կազմակերպած մի զօրամաս»[3]:

Եթե հիմք ընդունենք Ս. Օհանջանյանի վկայած տվյալների իսկությունը, ապա պիտի ընդունել, որ համաձայն պարզ թվաբանական հաշվարկի, «Մրգաստան» կենտր. կոմիտեի ղեկավարությամբ գործող կառույցներում, այն է՝ միայն Երևանի նահանգում հայ-թրքական ընդհարումների ավարտական փուլում ՀՅԴ մոտավոր հաշվով ունեցել է 140.000-210.000 անդամ:

Կուսակցության ներսում տիրող կացությունը փոխվում է ընդհարումների ավարտական փուլում, երբ ընկերվարական գաղափարները թափանցեցին կուսակցության շարքերը: Հայ-թուրքական ընդհարումներից հետո նկատվում է ճիշտ հակառակ երևույթը, ՀՅԴ անդամների քանակն աստիճանաբար սկսում է նվազել: Դաշնակցության շարքերից հեռանում են այն հայորդիները, ովքեր կուսակցության շարքերն էին համալրել թշնամու դեմ մարտնչելու նպատակով:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 202:
[3] Նույն տեղում, էջ 76:

Նրանց համոզմունքով ՀՅԴ պիտի լիներ հայությանը միավորող և նրա ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ուժ: Նրանց համար ընկերվարությունը խորթ էր և անընդունելի:

Համաձայն «Օխրանա»-ի տեղեկագրի գնահատման՝ «Սոցիալիստական տենդենցիաների կուսակցութեան մէջ թափանցելը ստեղծեց ներքին բաժանում եւ վերջացաւ «Երիտասարդ դաշնակցականներ»-ի խմբի ստեղծումով, որն այդ ժամանակ ամբողջովին ընկած էր սոցիալիս-յեղափոխականների ազդեցութեան տակ, մինչդեռ առաջ կուսակցութեան մէջ էին»[1]:

Հեղափոխականի պայքարի նպատակը համարելով գլխավորապես դասակարգային պայքարը և արհամարհելով ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրները, ընկերվարական գաղափարախոսությամբ առաջնորդվող երիտասարդ դաշնակցականները քննադատում և մերժում էին Նիկոլ Դումանի ու նրա զինակիցների գործելակերպը՝ համարելով այն միապետական, բռնակալական և ոչ հեղափոխական ու ընկերվարական:

«Երիտասարդ դաշնակցականները»,-նշում է «Օխրանա»-ի տեղեկագիրը,- ժխտում էին մէկ կուսակցութեան մէջ միացնելու հնարաւորութիւնը թրքահայերի ազգային ազատագրութեան պայքարի ու սոցիալիզմի, աշխատաւոր ժողովրդի ազատագրութեան խնդրի»[2]:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ «1906թի վերջերում ընդհարումները սկսեցին թուլանալ: Դրա փոխարեն կուսակցութեան շարքերում սկսեցին անմիտ վէճեր: Ամեն անգամ, երբ հայութեան գլխին կախած վտանգը կորցրել է իր սուր, սպառնալից բնաւորութիւնը, երբ այս վտանգը կանխող անձնազոհ ընկերները այլեւս «անհրաժեշտ» չեն համարուել, դրանց շուրջը տեղի են ունեցել անմիտ քննադատութիւններ ու նրանց տապալելու ապերախտ ձգտումներ»[3]:

Թեպետ 1906 թ. կեսերին Երևանում ընդհարումները հիմնականում ավարտվել էին, բայց լարվածությունը դեռ պահպանվում էր, իսկ Երևանի նահանգի մի շարք շրջաններում կռիվները դեռևս շարունակվում էին: Բնավ չէր բացառվում, որ կռիվները դարձյալ կարող էին վերստին բռնկվել: Անհրաժեշտ էր չտարվել այն հույսով, որ կռվկասահայությունը արդեն ձերբազատվել է բոլոր տեսակի վտանգներից: Այն ժամանակ, երբ հայության գլխին դեռևս ծառացած էր ջարդարար սուրը, որքա՞ն էր արդարացված տարվել գլխավորապես ընկերվարական խնդիրների լուծմամբ և անտեսել ամենակարևորը: Դումանի համոզմամբ հայության ինքնապաշտպանության կազմակերպմանը նպատակաուղղված աշխատանքները եղել և պետք է մնային հայ ազգային կուսակցությունների և գործիչների գործունեության գլխավոր առանցքը:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների և հետևանքների վերլուծությանը նվիրված «Դրօշակի» 1905-1906 թթ-ի համարներում տպագրված ընդար-

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 329:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2:

ձակ հոդվածաշարում հեղինակը, արժանի քննադատության ենթարկելով բոլոր այն մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ տեսաբաններին և քաղաքական գործիչներին, որոնք իրենց պայքարի նշանաբան դարձնելով «անդադար կռել նացիոնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում» սկզբունքի կենսագործումը, մեղադրանքի սյունին են գամում ՀՅԴ գտնելով, որ. «Դաշնակցութիւնը չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիւրոկրատիայի ու թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ. նա չը պէտք է առաջ մղէր քաղաքների և գիւղերի հայ ժողովուրդը՝ նոյն վտանգուած հաւաքական գոյութիւնը զէնքը ձեռքին պաշտպանելու համար... Այդ բոլորը «նացիոնալիզմ է»...»[1]:

Այս տեսակետը պաշտպանող գործիչների դիրքորոշումն ավելի քան տարօրինակ է և անհասկանալի, իսկ ո՞վ պետք է պաշտպաներ հայերին կոտորածներից, չէ՞ որ հայերը չունեին առավել կազմակերպված և միաձույլ այլ քաղաքական կազմակերպություն, քան Դաշնակցությունն էր:

Հերքելով այդ կարգի մեղադրանքները՝ «Դրօշակ»-ը իրավացիորեն շեշտում է. «Մենք տեսանք սակայն, թէ տիեզերական պրոլետարիատի անունով խօսող ինտերնացիոնալիստները, Դաշնակցութեան շովինիզմի առթիւ գլուխ ծեծողները ինչ օգնութիւն արին մորթող հայութեան «պօգրոմների» օրերին...»[2]:

Համամիտ լինելով «Դրօշակի» հոդվածաշարի հեղինակի՝տեսակետին՝ կարելի է հարց տալ, ի՞նչն էր խանգարում ընկերվար դաշնակցականներին, որ ընդհարումների ընթացքում գոնե ժամանակավորապես հանգիստ թողնեին իրենց ընկերվարական համոզմունքները և առաջնորդվելով հայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը կանխելու անհրաժեշտությամբ՝ նախապատվություն տային ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը նպատակաուղղված խնդիրների լուծմանը:

1906 թ հունիսի 9-ին և 10-ին ընդհարումները Երևանում, ոչ այնքան մեծ ծավալով, վերսկսվում են: Թեպետ այս անգամ ևս նախահարձակը դարձյալ թուրքերն էին, բայց քաղաքի մարտական ուժերը կարողանում են առանց մեծ ջանքերի չեզոքացնել սպառնալիքը[3]:

Եթե մարտադաշտում իր գլխավորած ինքնապաշտպանական մարտախմբերով Նիկոլ Դումանն արդեն Երևանի նահանգում տիրող կացության լիիրավ տնօրենն էր, ապա դրությունը բոլորովին այլ էր ներկուսակցական կյանքում, մանավանդ այն ժամանակ, երբ ընդհարումներն արդեն թուլացել և հայ բնակչության համար այլևս սարսափելի ու վտանգավոր չէին:

«Վտանգի ժամանակ ծակերը մտած,- գրում է Ս. Օհանջանյանը,-Դումանին երկինք բարձրացնող եւ նրա հմայքը գովաբանող դաշնակցական «ձախ» թեւը, վտանգն անցնելուց յետոյ սկսեցին կեղտոտ բերանով քննադատել նրան...»[4]:

[1] «Դրօշակ», 1906, թիւ 6, էջ 104:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 6, էջ 104:
[4] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2:

1906 թ. ամռանը Երևանում կայացած ՀՅԴ Մրգաստանի կենտ. կոմիտեի ընտրություններում հաղթանակ են տանում երիտասարդ ընկերվարները և այնպիսի վաստակաշատ գործիչներ, ինչպիսիք են Գալուստ Ալոյանն ու Սարգիս Օհանջանյանը դուրս են մնում կենտրոնական կոմիտեի կազմից: Գնահատելով իր համար ստեղծված ոչ այնքան հաճելի իրավիճակը, և քանի որ ընդհարումներն արդեն ավարտվել էին, Դումանը որոշում է հրաժարվել Երևանի նահանգի ընդհանուր հրամանատարի պաշտոնից ու այդ մասին 1906 թ. հունիսի 11-ին գրած նամակում հայտնում ՀՅԴ բյուրոյին[1]:

Դումանի հետ Երևանից հեռանում են նաև Դաշնակցական Խեչոն, Գալուստ Ալոյանը, Սարգիս Օհանջանյանը, Մկրտիչ Աղամալյանն և բազում այլ վաստակաշատ գործիչներ, որոնք ընդհարումների ողջ ընթացքում իրենց ուսերին էին տարել Երևանի նահանգի հայության ինքնապաշտպանության կազմակերպումն ու ղեկավարումը:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 299, գ. 15:

ԳԼՈՒԽ 3

3. 1. ԳԱՆՁԱԿԻ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ) ՆԱՀԱՆԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանի նահանգի համեմատ Գանձակի (Ելիզավետպոլ) նահանգն ուներ իր յուրահատկությունը, որը բնականաբար իր դրոշմն էր թողնում ինքնապաշտպանության կազմակերպման ողջ գործընթացի վրա: Եթե Երեւանի նահանգի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայեր, ապա այդ հարաբերակցությունը նույնը չէր Գանձակի նահանգում:

Համաձայն ՀՅԴ Արեւելյան բյուրոյին Գանձակի նահանգի Հ.Յ.Դաշնակցության «Ապառաժ» կենտրոնական կոմիտեի կազմած տեղեկագրի՝ Ապառաժի շրջանը կազմում էին Գանձակի նահանգի չորս գավառները՝«Զանգեզուրի(6742.92 քառակուսի վերստ(ք.վ.) տարածութեամբ, Շուշուայ (4423.28ք.վ.), Ջիվանշիրի (4654.06ք.վ.), Ջիբրայիլի(3276.31ք.վ.): Ընդհանուր տարածութիւն մօտ 18-19000 քառ. վ.» [11]:

Այդ գավառներում, բացի հայերից, որոնք կազմում էին բնակչության մեծամասնությունը, ապրում էին նաև թուրքեր և քրդեր: 1905թ. տվյալներով Գանձակի նահանգի գավառներում կային 235 գյուղ, մեկ քաղաք՝ Շուշին, որտեղ բնակվում էին մոտավորապես 190000 հայեր:

Եթէ,-նշում է տեղեկագիրը,-վերցնենք միայն լեռնային մասերը եւ բաց թողնենք դաշտայինը, որտեղ գլխաւորապես տեղաւորւում է թուրք տարրը, հայ տարրը ամբողջ տարածութեան վրա կը կազմի 70-80%» [2]:

«Ապառաժ» կկ-ի վիճակագրական տվյալները համապատասխանում են «Кавказкий календарь на 1907год »-ում տեղ գտած տվյալներին [3]:

Ըստ այդ տեղեկագրի՝ գավառների բնակչությունն ուներ հետևյալ կազմը.[4]:

գավառներ	գիւղեր	հայեր	թուրք.	քիւրդ	ընդամենը
Դիզակ	30	17500	52000	----	80000
Ջիվանշիր	33	23663	44000	8902	76239
Վարանդա Խաչեն	22 68	64000	58000	------	122000
Զանգեզուր	82	66200	77500	6600	151140
Քաղաք		17982	14548	------	33000
Ընդամենը	235	189345	246048	15502	452379

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 404, գ. 10, էջ 3:
[2] Նույն տեղում:
[3] Кавказкий календарь на 1907 год, ст.
[4] ՀՅԴ ԿԱ, թթ. 404, գ. 10, էջ 3:

Ի տարբերություն վերոհիշյալ գավառների, Գանձակի նահանգում բնակչության մեծամասնությունը կազմում էր մահմեդականությունը: Նահանգի ազգաբնակչությունը հասնում էր 878 հազարի, որից 554 հազարը թուրքեր էին, իսկ 294 հազարը՝ հայեր [1]:

Քանի որ Գանձակի նահանգում մահմեդականությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը, այդ պատճառով ընդհարումներն այդ նահանգում ընթացել են ավելի մեծ ծավալով ու տնողությամբ:

Նահանգի բազմաթիվ պաշտոնյաներ ազգությամբ թուրք էին: Նահանգապետը Նակաշիձեի քրոջորդին էր՝ ազգությամբ վրացի գեներալ Տակայաշվիլին, որը Մ. Վարանդյանի բնութագրմամբ «Իր քեռիի պէս հայատեաց եւ անոր վրէժխնդրութեամբ վառուած...Նա արդէն շարունակ կը մեղադրէր հայերը, որպէս բոլոր խռովութիւններու պատճառ» [2]:

Հայ-թուրքական ընդհարումները Գանձակի նահանգում, ի տարբերություն Բաքվի ու Երևանի նահանգների, ավելի ուշ են բռնկվում: Նահանգում, հատկապես նրա վարչական մասը կազմող Զանգեզուր, Արցախ և Գանձակ գավառներում, կռիվները եղել են ավելի արյունահեղ ու շարունակվել նույնիսկ այն ամիսներին, երբ արդեն դադարել էին մարտերը Երևանի նահանգում և հայաբնակ մյուս շրջաններում: Թեպետ Գանձակի նահանգում խաղաղ իրավիճակը պահպանվում էր, բայց այդ խաղաղությունը խաբուսիկ էր, անկայուն և բնականաբար չէր կարող երկար շարունակվել:

ՀՅԴ բյուրոյին ներկայացրած զեկուցագրերում «Ապառաժ» կենտր. կոմիտեն տեղեկացնում է, որ մինչ ընդհարումները ոչ միայն հայությունն էր ձգտում պահպանել խաղաղ իրավիճակը, այլ նաև՝ մահմեդական բնակչությունը: Սակայն, ի տարբերություն հայության, թուրք բնակչությունն ավելի դյուրին ու շուտ էր տրվում սադրանքների և առաջնորդվելով թուրք ազդեցիկ, հեղինակավոր դեմքերի քարոզչությամբ ու խոստումներով՝ թշնամաբար էր տրամադրվում իր դարավոր հարևանի՝ հայերի նկատմամբ [3]:

Քանի որ արդեն կար Կովկասում ազգամիջյան բախումներ սանձազերծելու ցարական կառավարության որոշումը, ուստի նահանգի իշխանություններն ու հայի հարստությանը տիրելու նպատակներ հետապնդող թուրք առաջնորդները համապատասխան քայլեր էին ձեռնարկում խաղաղությունը թշնամանքի վերածելու, ապա նաև զինված բախումներ առաջացնելու համար: Մինչև հայ-թուրքական ընդհարումների բռնկումը, նահանգում պաշտոնյաների մեծ մասը հայեր էին: Սակայն այդ իրավիճակը կտրուկ փոխվել է, երբ ծրագրված սցենարով հայ պաշտոնյաներին փոխարինել են թուրքերն ու վրացիները: Եթե հայ էին պրիստավն ու մյուս պաշտոնյաները, ոչ մի խտրականություն չի եղել, իսկ երբ ցարական կառավարության որոշմամբ հայերի փոխարեն նահանգի իշ-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 4:
[2] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 321:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 404, գ. 10, էջ 4:

խանության ղեկին հայտնվում են թուրքերը. «...աւագակների եւ մարդասպանների թիւր ավելցաւ: Օրինակ. թիւրք աւագակը քրիստոնեաներին սպանում է, թալանում է, նա իւր հաւատակից մուսուլման պրիստաւի շնորհիւ ազատ է...»[1]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներից մեկի՝ Արամայիսի գնահատմամբ«...թիւրքերը. դժբախտաբար. չկարողացան խեղդել իրանց մէջ արիւն թափելու տենչն ու տարուելով զանազան էմիսարների ու գրգռիչների քարոզներով. մղձաւանջն աւելի ու աւելի խեղդիչ դարձրին»[2]:

Այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը աներկբա ցույց է տալիս, որ հայ ազգային-քաղաքական կուսակցություններից թերևս միակը Հ.Յ. Դաշնակցությունն էր, որը կարողացել է ընդհարումների նախօրեին իր կազմակերպական կառույցները հիմնել Գանձակի նահանգում: Հետևաբար նահանգի ինքնապաշտպանության կազմակերպման ղեկը պիտի ստանձնեին Հ.Յ. Դաշնակցության կառույցներն ու ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից նշանակված Զինվորական մարմինը:

Դաշնակցությունը իր կառույցները Գանձակի նահանգում հիմնել է սկսած 1901թ-ից, իսկ ավելի մեծ ծավալով 1903թ-ից: Համաձայն Գանձակի նահանգում ՀՅԴ գործունեությունը ներկայացնող վավերագրի, «Գանձակում դաշնակցական խմբերի կազմակերպիչները եղել են անհատ ընկերներ. տեղացի եւ եկուոր: Եկուորների մէջ են եղել նաեւ օր. Սաթենիկ Մատինեանը. հետագայում իշխ. Յովսեփ Արղութեանի կեանքի ընկերուհին եւ ՀՅԴ հիմնադիր ընկերներից Նիկոլ Մատինեանի քույրը, Լեւոն Թադեւոսեանը (Պապաշան), Քր. Միքայելեանի քրոջորդին, Երեւանցի ընկ. Մարը (Թադեւոս)... »[3]:

Ըստ վավերագրի, ՀՅԴ անդրանիկ խումբը՝ «Մարշիմոն» անունով, հիմնվել է 90-ական թվականներին և մինչև 1903թ. ունեցել է ընդամենը երեք տասնյակ անդամներ: Դաշնակցությունն իր գործունեությունը Գանձակի նահանգում առավել ակտիվորեն ծավալում է 1903թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի հրապարակումից հետո: Ի պաշտպանություն հայ եկեղեցու, ՀՅԴ ձգտում էր իր կառույցների միջոցով ցարական կառավարության հռչակած օրենքի դեմ բողոքի ցույցեր ու ելույթներ կազմակերպել նաև Գանձակի նահանգի հայաբնակ շրջաններում[4]:

1904թ. Դաշնակցության կառույցներ հիմնվում են նահանգի հայկական գրեթե բոլոր շրջաններում: Նույն տարում ընտրվում են ՀՅԴ «Ապառաժ» և Գանձակի «Այգեստան» կոմիտեները, որոնք համաձայն ՀՅԴ Կովկասյան Ռայոնական ժողովի 1905 թ. նոյեմբերի 13-ին կայացած որոշման, ժամանակավորապես տրվում է կենտրոնական կոմիտեի իրավունք[5]:

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 395, թ. 136:
[2] Նույն տեղում, ֆ. 150, ց. 1, գ. 4, էջ 6:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 10, էջ 6:
[4] Նույն տեղում:
[5] «Նիւթեր...», հ. Բ, էջ 23:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն ոչ միայն համադրել է նահանգի կուսակցական կառույցների գործունեությունը. այլև Զանգեզուրի և Արցախի Զինվորական մարմինների համագործակցությամբ կազմակերպել և առաջնորդել է այդ գավառների, ինչպես նաև Գանձակ քաղաքի ու շրջանի ինքնապաշտպանական ուժերը:

Գանձակի գավառում թուրքերի մեծ մասը բնակվել է դաշտային մասերում, իսկ հայ բնակչությունը «... միայն քաղաքն ու մօտակայ Ղարադաղլու եւ Խոյլար գիւղերն են գտնւում դաշտային մասում, իսկ 38-ի չափ հայաբնակ գիւղերը լեռնոտ վայրերում, զուրկ բաւարար չափով վարելահողերից եւ ընդհանրապես հաստատաբար աղբիւրներից»[1]:

Գանձակ քաղաքում հայերը բնակվում էին քաղաքը երկու մասի բաժանող Գանձակ գետի ձախ ափին: Քաղաքը ունեցել է 37.000 բնակիչ, որից 17.000 թուրքեր էին, 15.000 հայեր, իսկ 5000-ը այլազգիներ[2]:

Պետական հիմնարկների մեծ մասը գտնվել է քաղաքի թուրքական թաղամասում, իսկ հայկական քաղաքամասի մեջ վարչական մարմիններ անհամեմատ քիչ են եղել, նույնիսկ քաղաքամասային «...ոստիկանութիւնն էլ բաղկացած էր մէկ ոստիկանապետից, օգնականից եւ մի քանի ոստիկաններից»[3]:

Ճիշտ է, ընդհարումների նախօրեին Դաշնակցությունը կարողացել էր իր կազմակերպական կառույցները հիմնել նահանգի հայկական բազմաթիվ բնակավայրերում, ինչպես նաև Գանձակ քաղաքում, բայց այստեղ ևս հայությունը, ի տարբերություն թուրքերի, շատ թույլ էր զինված:

Հայ-թուրքական ընդհարումների ուսումնասիրությունը աներկբա հավաստում է, որ թուրքական բոլոր բնակավայրերի բնակիչներն առանց բացառության միշտ էլ շատ լավ զինված են եղել:

Հարց է ծագում, ինչու՞ էին թուրքերը մշտապես զինված, իսկ հայերը՝ ոչ: Գանձակի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած տեղեկագրերի հեղինակների կարծիքով, այդ իրողությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. Նահանգի հայ բնակչությունը մշտապես զբաղված է եղել խաղաղ աշխատանքով և նրա նախասիրությունների ու հետաքրքրասիրության ոլորտից դուրս էր զենքն ու բռնի ճանապարհով ապրուստի միջոցներ ձեռք բերելը: Ի տարբերություն խաղաղ աշխատանքը գերադասող հայության, թուրքերը, անընդհատ տարված լինելով գողություններով ու ավարառությամբ, մշտապես կարիք ունեին զենքի ու բռնի միջոցներ կիրառելու : Այդ պատճառով զենք ձեռք բերելու համար նրանք տալիս էին անգամ իրենց վերջին ունեցվածքը:

2. Տարբեր ցեղախմբերի ու բնակավայրերի միջև հաճախակի կրկնվող «ներքին թայֆայական կռիւներ...»-ի :

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 1, էջ 6:
[2] Տե՛ս Ա-ԴՕ, Նշվ. աշխ., էջ 308:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 1, էջ 7:

3. «...ռուս կառավարության խրախուսանքը ավարտեն թաթար ամբոխին հայերին կոտորելու ու թալանելու հրապուրիչ առիթը»[1]:

Գանձակի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի համար չէր կարող գաղտնիք լինել, որ կռիվներ բռնկվելու պարագայում քաղաքի ու հայկական գյուղերի բնակչությունը թույլ զինվածության պատճառով չէր կարող լուրջ դիմադրություն ցույց տալ թշնամու հարձակումներին: Գավառում և քաղաքում տիրող իրավիճակի մասին ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի ներկայացրած զեկուցագրերից ՀՅԴ Արևելյան բյուրոն տեղյակ էր այնտեղ տիրող տագնապալի կացությանը[2]:

Անդրկովկասում ծավալվող դեպքերը միանշանակ ցույց էին տալիս, որ ընդհարումները վաղ թե ուշ կբռնկվեն նաև Գանձակ գավառում և քաղաքում: Ելակետ ունենալով այդ իրողությունը՝ Հ.Յ.Դաշնակցության Արևելյան բյուրոյի հանձնարարությամբ «Այգեստան» կոմիտեն հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ու անվտանգությունը ապահովելու նպատակով իր գործունեությունը կենտրոնացնում է հետևյալ խնդիրների վրա:

1. Քանի որ քաղաքի, առավել ևս գավառի հայ բնակչությունը դեռևս - դույզն-ինչ պատրաստ չէր ինքնապաշտպանության, ուստի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեն աշխատում էր հնարավորինս թուրք բնակչության հետ պահպանել բարի դրացիական հարաբերություններ ու ժամանակ շահել:

Գանձակում զինված բախումներ և անկարգություններ թույլ չտալու նպատակով քաղաքի հայ ու թուրք բնակիչների համաձայնությամբ ընտրվում է 80 քաղաքացիներից բաղկացած հանձնախումբ: Քաղաքի բնակչության ձեռնարկած այդ խաղաղ նախաձեռնությունը հավանության է արժանանում նահանգապետի կողմից: Նրա հանձնարարությամբ հանձնախմբի անդամներից ընտրվում է 12 պատգամավորներից բաղկացած խաղաղարար կոմիտե, որը պետք է հսկողություն սահմաներ ոչ միայն քաղաքում, այլև գավառում[3]:

Գավառում և քաղաքում խաղաղություն պահպանելու ու ընդհարումները կանխելու նպատակով նկատելի աշխատանքներ է ծավալել նաև Գանձակի հոգևոր առաջնորդ Կորյուն վարդապետը, որը, մահմեդականների հոգևոր առաջնորդի ընկերակցությամբ բազմիցս շրջելով քաղաքի թաղերում ու սրբավայրերում, անիծել է ազգամիջյան կռիվներ հրահրողներին ու խաղաղության է կոչել հայ և թուրք բնակչությանը:

Համաձայն «Արշալույս»-ում տեղ գտած թղթակցության, նահանգում տիրող կացությանը տեղում ծանոթանալու և համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով սեպտեմբերի 9-ին Գանձակ է ժամանում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը: Փոխարքան շքախմբով այցելում է քաղաքի սրբավայրերը՝ հայկական եկեղեցի և մահմեդականների մզկիթ: Եկեղեցում կայացած հանդիպման ժամանակ փոխարքան հայերին հավատացնում է, որ նրանք կարող են հանգիստ ու ապահով լինել, քանի որ «...հարկավոր միջոցները ձեռք են առնված...»[1]:

Ի տարբերություն հայերի, որոնց խաղաղություն պահպանելու խոստումներ է տալիս, մզկիթում կայացած հանդիպման ժամանակ նահանգապետը մահմեդականներին կոչ է անում պահպանել օրենքն ու կարգը և գերծ մնալ բռնություններ ու անկարգություններ հրահրելուց[2]:

Չնայած ձեռնարկած միջոցառումներին, նահանգում ու մասնավորապես Գանձակ գավառում և քաղաքում տիրող կացությունը ավելի ու ավելի է լարվում: Գանձակ գավառում և քաղաքում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է, որ այնտեղ տիրող կացության շիկացմանն ու հայ և թուրք բնակչության միջև թշնամանքի խորացմանը իր սադրիչ ու հակահայ գործողություններով մեծապես նպաստել է նահանգապետը՝ գեներալ Տակայաշվիլին, որն այդ օրերին Կովկասի փոխարքայի հրամանով ստանձնել էր նահանգում տեղաբաշխված զորքերի հրամանատարությունը:

Նա թեև փորձեր է ձեռնարկել բարի դրացիական հարաբերություններ հաստատել երկու ժողովուրդների միջև, բայց իրականում քաջալերել ու հովանավորել է թուրք հրոսակախմբերին ու նրանց թշնամաբար տրամադրել ընդդեմ հայերի: Գեներալ Տակայաշվիլին թշնամանքով վերաբերվել ու հալածել է հայերին, իսկ բազմաթիվ թուրք հանցագործների ազատ է արձակել կալանքից: Նահանգապետի գործողությունները հարուցում են հայ բնակչության զայրույթն ու վրդովմունքը: Գանձակի հոգևոր թեմի առաջնորդ Կորյուն վարդապետը, խիստ դժգոհելով նահանգապետի վերաբերմունքից, մեկնում է Թիֆլիս, հանդիպում Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովին և ներկայացնելով նրան Գանձակ քաղաքում և գավառում տիրող իրավիճակն ու գեներալ Տակայաշվիլիի չարագործությունները՝ խնդրում է պաշտոնանկ անել նահանգապետին: Փոխարքան, ունկնդրելով Կորյուն վարդապետին, ընդառաջում է նրա խնդրանքին և Գանձակում տիրող իրավիճակն ու իշխանությունների գործողությունները քննելու նպատակով Գանձակ է ուղարկում փոխարքայության հատուկ գործերի հանձնակատար Օսոցկուն[3]:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին ներկայացրած զեկուցագրերում Գանձակի «Այգեստան» կոմիտեն նշում է, ու կոմիտեության շրջանակներում գործող կուսակցական կառույցները մշտապես շփվել են թուրք ազդեցիկ դեմքերի հետ և աշխատել հնարավորինս կանխել ընդհարումները[4]:

2. Այսուհանդերձ, Գանձակ քաղաքում և գավառում տիրող իրավիճակը թելադրում էր, որ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու միակ կայուն երաշխիքը, այնուամենայնիվ, բնակչության զինումն ու ինքնապաշտպանության կազմակերպումն էր:

---

[1] Նույն տեղում, էջ 10:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 393, գ. 6, 7, 8:
[3] Տե՛ս նույն տեղում, թթ 396, գ. 3, էջ 2:

[1] «Արշալույս», 1905, սեպտեմբերի 11:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, նոյեմբերի 11:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 393, գ. 6, 7, 8:

Բաքվի փետրվարյան դեպքերից հետո ՀՅԴ Արևելյան բյուրոն Գանձակ գավառի ու քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով այնտեղ է գործուղում ֆիդայական կռիվների բովով անցած բազմաթիվ փորձառու գործիչների: Իր անբաժան զինակիցների՝ Կայծակ Առաքելի և Ավոյի ընկերակցությամբ Գանձակ է գալիս Սեբաստացի Մուրադը:

«Եկան,-նշում է վավերագիրը,- տեսան Գանձակի հայ ժողովրդի անզէն ողբալի վիճակը: Անշուշտ այդ մասին հաղորդեցին մեր վերին Մարմնին...» [1]:

Մուրադը թեև երկար չի մնում Գանձակում, բայց հասցնում է զինակիցների ու ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի ընկերների աջակցությամբ կազմակերպել մարտական խմբեր և «...ինչպես նաեւ կարեւոր դիրքերը որոշել եւ կռուի ընդունակ մեր ընկերներին բաժանել դիրքերի վրայ» [2]:

Զանգեզուրում իրավիճակի կտրուկ վատթարացման հետևանքով Մուրադը Կայծակ Առաքելի և Ավոյի ընկերակցությամբ մեկնում է Զանգեզուր և ստանձնում այդ գավառի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը: ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ Գանձակի ինքնապաշտպանական շրջանի հրամանատար է նշանակվում Հին-Նախիջևանցի Ռաշիդը: Գանձակի դեպքերը լուսաբանող վավերագրերի բնութագրմամբ՝ Ռաշիդը թեև փորձառու և քաջ զինվորական էր, օժտված նաև կազմակերպական տաղանդով, բայց չի կարողացել արժանանալ Հ.Յ.Դաշնակցության տեղի կառույցների և ժողովրդի հարգանքին ու վստահությանը [3]:

Հարկ է նշել, որ Գանձակի շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում որոշակի տարաձայնություններ ու հակասություններ են ծագել ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից այդ շրջանը գործուղված լիազորների միջև: Ռաշիդին հավասար իրավունքով ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից Գանձակի շրջանի լիազոր է նշանակվել նաև Արամայիս Ազնավուրյանը:

1905թ. ամռանը նա Արմեն Գարոյի ընկերակցությամբ յոթ մարտիկներից բաղկացած թռուցիկ հեծելախմբով գալիս է Գանձակ, և քանի որ այդ ժամանակ Ռաշիդը գտնվում էր Թիֆլիսում, ստանձնում է քաղաքի և շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը: Մի քանի օր անց Թիֆլիսից վերադառնում է Ռաշիդը և «Այգեստան» կոմիտեին է ներկայացնում ՀՅԴ Արևելյան բյուրոյի հանձնարարականը, «...որով ինքը նշանակում էր միակ լիազորը Գանձակի և շրջանի ինքնապաշտպանութեան» [4]:

Այդ որոշումը թեպետ խիստ դժգոհություն է առաջացնում, բայց ինքնապաշտպանության գործը չվնասելու նկատառումով Ա. Ազնավուրյանը ընդունում է ՀՅԴ կոմիտեի առաջարկությունը և մեկնում գավառի գյուղերը՝ կազմակերպելու հայկական բնակավայրերի մարտական ուժերը:

[1] Նույն տեղում, թթ. 294, գ. 1, էջ 10:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:
[4] «Հայրենիք» ամս., 1938, թիւ 2, էջ 121:

Ա. Ազնավուրյանի հավաստմամբ, ինքը իր գլխավորած թռուցիկ խմբով արդյունավետ աշխատանքներ է ծավալել Բանանց և Գետաբեկ շրջանների բոլոր գյուղերում: Գյուղերում բնակիչները ջերմությամբ են ընդունել նրանց ու անմիջապես համաձայնել են անհրաժեշտ գումարներ տրամադրել զենք ու զինամթերք գնելու համար: Գյուղերում կազմակերպվել է հանգանակություն: Արդյունքում հավաքվել է զգալի քանակությամբ գումար: Միայն Բանանց գյուղում ընդամենը մեկ օրում հանգանակել են 3000 ռուբլի [1]:

Հանգանակած գումարները ուղարկել են Գանձակի ՀՅԴ կոմիտեին ու Զինվորական մարմնին, որպեսզի նրանք հրացաններ ու փամփուշտներ գնեին ու ուղարկեին գյուղերը: Սակայն, ըստ Ա. Ազնավուրյանի, «...ամիսների իմ ու ժողովրդի դիմումները մնացին անհետևանք: Անգամ նամակներիս պատասխան չտուեցին:

Ինձ ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ յայտնել Կենտրոնական Կոմիտէին եւ Ռաշիդին իմ խիստ դժգոհութիւնները եւ այդ շրջանից հեռանալու վճիռը [228]:

Ա. Ազնավուրյանի բացատրությունը ավելի քան անհասկանալի է: Նա փաստորեն, կարելի է ասել, Գանձակի Կ. Կոմիտեին և Ռաշիդին մեղադրում է, որ նրանք յուրացրել են գյուղացիների հանգանակած գումարները և չեն ուղարկել համապատասխան քանակության հրացաններ ու փամփուշտներ: Եթե դա իրոք այդպես էր, ապա իր վճռական խոսքը պիտի ասեր ՀՅԴ Արևելյան բյուրոն:

Արամայիս Ազնավուրյանը, առանց ՀՅԴ Արևելյան բյուրոյին և գավառի կուսակցական կառույցի պատասխանատուներին տեղյակ պահելու, թողնում է Գանձակի շրջանը և, իր թռուցիկ խմբով մեկնում է Ղազախ-Շամշադինի շրջան՝ Սևքարեցի Սաքոյի մոտ, ապա այնտեղից անցնում է Ալեքսանդրապոլ ու Կարս:

Ա. Ազնավուրյանի կողմից Գանձակի տարածքը թողնելու իրողությունը նշվում է ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած «Գանձակի պագրոմը» խորագիրը կրող տեղեկագրում: Համաձայն տեղեկագրի՝ Ա. Ազնավուրյանը ձիավոր թռուցիկ խմբով հեռացել է Գանձակի տարածքից ինքնակամ, առանց որևէ մեկին տեղյակ պահելու [3]:

Ա. Ազնավուրյանի հեռանալուց հետո Գանձակից հեռանում է նաև Ռաշիդը: Ռոստոմի առաջարկությամբ նրա փոխարեն Գանձակի շրջանի լիազոր է նշանակվում Աբրահամ Գյուլխանդանյանը [4]:

Ռոստոմն այդ ժամանակ գտնվում էր Շուշիում և տեղում ծանոթանալով քաղաքի ու գավառի իրական կացությանը՝ մշակում է ՀՅԴ կառույցների գործունեության և հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման «Գաւառի ինքնապաշտպանութիւնը» խորագիրը կրող նախագիծը, որը

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 122:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 1, էջ 11:
[4] Նույն տեղում, գ. 2, էջ 18:

մեծ նշանակություն է ունեցել ոչ միայն Արցախի, այլ նաև Գանձակի նահանգի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման գործում [1]:

Մինչև Գանձակի հայ-թուրքական ընդհարումները, որոնք սկսվել են նոյեմբերի 18-ին, կռիվներ արդեն տեղի էին ունեցել Բաքվում, Նախիջևանում, Երևանում, Շարուր- Դարալագեազում, Զանգեզուրում և Արցախում: Կարելի է ասել, որ հայ մարտական ուժերը, ճիշտ է, սկզբնական շրջանում թեև կրել էին զգալի կորուստներ ու ունեցել էին անհաջողություններ, բայց ի վերջո կարողացել են գրեթե բոլոր ինքնապաշտպանական մարտերում նվաճել անվիճելի հաղթանակներ: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռում ՀՅԴ Արևելյան բյուրոյին այդ շրջաններից բազմաթիվ փորձառու ռազմիկների, զենք ու զինամթերք և անգամ մարտախմբեր տեղափոխել Գանձակ [2]:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի հրահանգով Գանձակ գավառի հյուսիս-արևմտյան հայաբնակ ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնում է Բուլանուխցի վարժապետ Մարտիրոսը: Նա իր թռուցիկ խմբով փոխարինում է Արամայիս Ազնավուրյանին: Գանձակից Արցախ տանող ուղիների և Գյուլիստանի շրջանի հսկողությունը հանձնարարվում է գանձակեցի Լևոն Արամյանի գլխավորած թռուցիկ խմբին [3]:

Նահանգի ինքնապաշտպանության կազմակերպիչները կարողացել են մասամբ լուծել զենք ու զինամթերքի տեղափոխման խնդիրը: Ըստ ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած տեղեկագրի, դարադաղլուեցի Սերգեյի ղեկավարությամբ «Սուրհանդակ» տասնեակ ձիաորները գիշերները շաբաթը մի քանի անգամ գաղտնի ճամբով գնում էին երկաթուղիի կայարանը և այնտեղ զենք և մարդկանց տեղափոխում քաղաք [4]:

Նահանգի ինքնապաշտպանության կազմակերպիչներին հաջողվել էր հուսալի կապ հաստատել Գանձակ, Արցախ, Զանգեզուր և Ջիվանշիր գավառների միջև: Վերոհիշյալ տեղեկագրի վկայությամբ դարադաղլուեցի Սերգեի գլխավորած «Սուրհանդակի» հեծելախումբը գավառները զենք փոխադրողների ապահովության համար նրանց «...ուղեկցում էր քաղաքից 30 կիլոմետր հեռավորությամբ վրայ գտնվող հայկ. Գետաշէն գիւղը, որտեղից լեռնային ճամբով ապահով էր ճանապարհությունը մինչև Զանգեզուր» [5]:

Գանձակի նահանգում հայ-թուրքական հարաբերությունները քննարկելու և համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով ՀՅԴ «Այգեստան» կենտր. կոմտեն որոշում է հրավիրել Շրջանային ժողով և այդ կապակցությամբ 1905 թ. նոյեմբերի 11-ին հրապարակում է նահանգի կուսակցական կառույցներին ուղղված «Հրաւեր» խորագիրը կրող հետևյալ շրջաբերականը.

[1] Տե՛ս Ռոստոմ, Պէյրութ, 1999, էջ 398:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 394, գ. 2, էջ 11:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 10-11:
[5] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 392, գ. 20, էջ 3:

«Այգեստանի Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ սույն 1905 թ. նոյեմբերի 20-ին, առավոտեան ժամի 10-ին, նշանակուած է Գանձակում Շրջանային ժողով, որին մասնակցելու են հրաւիրվում շրջանի ամեն մի գիւղից մի ներկայացուցիչ ու մի-մի ներկայացուցիչ էլ քաղաքի ենթակոմիտէներից, աշակերտական ու կարմիր խաչի կազմից: Ժողովի քննադատութեան պէտք է առաջարկվեն՝ ա. միջոցներ, որոնք անհրաժեշտ են կազմակերպութիւնը ամուր հողի վրա դնելու համար համաձայն կանոնադրութեան Հ.Յ. Դաշնակցութեան, բ. պրոպագանդայի հարցը ու հայ-թուրքական յարաբերութիւնների հարցը...» [1]:

Ինչպես հայտնի է, նախատեսված Շրջանային ժողովը չի կայանում քաղաքի հայկական քաղաքամասի և հատկապես շուկայում գտնվող հայերին պատկանող վաճառատների վրա նոյեմբերի 18-ին թուրքերի ձեռնարկած հարձակման հետևանքով:

Այսուհանդերձ, բերված փաստերը վկայում են, որ ՀՅԴ տեղի կազմակերպությունը, ի դեմս «Այգեստան» կենտր. կոմիտեի, աշխատում էր որոշակի քայլեր ձեռնարկել նահանգի հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ:

Չնայած ձեռնարկած քայլերին, Գանձակի գավառում և քաղաքում հայկական կողմը, այնուամենայնիվ, մասամբ անպատրաստ գտնվեց պատշաճ մակարդակով դիմագրավելու թուրք հրոսակների հարձակումներին:

1905թ. նոյեմբերի 18-ին՝ ուրբաթ օրը, առավոտյան ժամը 101/2-ին, թուրք հրոսակները հանկարծակի ներխուժում են քաղաքային շուկա և հարձակվելով հայերին պատկանող խանութների ու կրպակների վրա՝ սկսում են սպանդն ու կողոպուտը [2]:

Այդ օրերին Թիֆլիսում ընթանում էր Հ.Յ.Դաշնակցության «Կովկասեան ռայոնական» ժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին Գանձակի զինվորական շտաբի անդամները, որոնց թվում նաև գավառի Զինվորական մարմնի լիազոր Աբրահամ Գյուլխանդանյանը: Նրա և շտաբի անդամների բացակայության պայմաններում քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպման ու ղեկավարման ղեկը ստանձնել է ՀՅԴ տեղի կոմիտեն, որի կազմում չի եղել ռազմական գործին ծանոթ գեթ մեկ մարտական գործիչ: Բարեբախտաբար այդ ժամանակ Գանձակում էր գտնվում Ղարաբաղի ինքնապաշտպանական մարտերում դրսևորած իր քաջագործություններով հայտնի Ալեքսան Բալասյանը, որը իր տրամադրության տակ ունեցել է արցախցի քաջավարժ մարտիկներից բաղկացած մարտական խումբ, որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք:

ՀՅԴ Գանձակի կոմիտեն նկատի ունենալով Ալեքսան Բալասյանի մարտական փորձառությունը, բնակչության և զինվորների շրջանում ունեցած մեծ հեղինակությունը, նրան է վստահում Գանձակի զինվորական ուժերի հրամանատարությունն ու կռիվները ղեկավարելու պատասխանատվությունը:

[1] Նույն տեղում, գ. 9:
[2] Նույն տեղում, գ. 20, էջ 3:

Ալեքսան Բալասյանի գլխավորությամբ կազմվում է մարտական գործողություններ ղեկավարող ռազմական շտաբ (Զինվորական մարմին), որի հանձնարարությամբ Գանձակում գտնվող մարտական ուժերը տեղաբաշխվում են երեք հիմնական հենակետերում, այսինքն այն ուղղություններում, որտեղից սպասվում էին թուրքերի հարձակումները:

Օրինակ, «Զայլում գործում էին շրջանապետ Սիմոնի (տաճկաստանցի) ղեկավարությամբ, Մոլլա-Ջալլում շրջանապետ Ջիանի (տեղացի), միս շրջանի զինորները շրջանապետ Մեժում Ժամհարեանի ղեկավարությամբ պահում էին հայոց քաղաքամասի այն կէտերը, որտեղից թուրքերը կարող էին ներխուժել, անցնելով գետը Բաղմանլարից, թրքական մասից կամ գալով Ելիզավետ գիւղի կողմից »[1]:

Գանձակի վրա թուրքերի հարձակումը սկսվել է ուրբաթ օրը՝ նոյեմբերի 18-ին: Ուրբաթը թուրքերի համար տոն օր էր(բայրամ) և այդ պատճառով նրանց խանութները փակ էին, իսկ հայերը, հավատալով փոխարքայի ու նահանգապետի խոստումներին և բնավ չկասկածելով, որ այդ օրը թուրքերը կարող էին նախահարձակ լինել, գտնվում էին արհեստանոցներում ու խանութներում և հանգիստ զբաղված էին իրենց սովորական աշխատանքով:

Քաղաքի վրա ձեռնարկվող հարձակումն ու հայ բնակչության կոտորածը թուրքական կողմը սկսել է ըստ վաղօրոք մշակած սցենարի: Քաղաքում պատսպարվել են հատուկ նշանակության սուրհանդակներ, որոնք կոտորածը սկսվելուն պես պիտի անհապաղ մեկնեին քաղաքի մերձակա գյուղերը և այնտեղ կատարվող դեպքերի մասին հայտնեին բնակչությանը: Գանձակի գրավմանը, կոտորածին անպայմանորեն պիտի մասնակցեր նաև գյուղական բնակավայրերի մոլեռանդ ամբոխը, որը կազմ ու պատրաստ սպասում էր ազդանշանի, որպեսզի անհապաղ ներխուժեր քաղաք և ավերի ու ավարի վերածեր քաղաքը և նրա հայ բնակչությանը:

Ներկայացնելով այդ իրողությունը՝ Գանձակի դեպքերը լուսաբանող վավերագրությունը նշում է. «Գանձակից հիւսիս դէպի Կուր գետը ձգվող տափարակի վրա գնում էին բազմաթիւ թրքաբնակ գիւղեր: Հայկական գիւղեր վրա չը կան: Բացառապես թուրքերից բաղկացած թրքական գիւղերի խիտ ցանցը սկսվում է քաղաքից հազիւ վեց-յոթ վերստ հեռու: Սուրհանդակներն այդ պատճառով շատ շուտ տեղ են հասնում: Լուրը կայծակի արագութեամբ գիւղից գիւղ է անցնում ու թուրք վայրագ խուժանը «Եա Ալի» բղավելով ոտքի է կանգնում, հոծ խառնիճաղանջ բազմութեամբ վազում դէպի քաղաք...»[2]:

Ոչ պակաս ուշագրավ է իշխանությունների ու ոստիկանության վերաբերմունքը: Ոստիկանությունը ոչ միայն քայլեր չի ձեռնարկել կանխելու թուրք հրոսակների հարձակումներն ու պաշտպանել հայերին, այլև «...ինքն էլ մեծ եռանդով ու խուժանից ոչ պակաս վայրագութեամբ յանձինս բազմաթիվ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թթ. 395, գ. 1, էջ 1:

թուրք պրիստաների, ոստիկանապետ Թեմուր Բէկ Հասանբեկովի ու պրիստաւի օգնական Իսրաֆիլբէկովի ղեկաւարութեամբ մասնակցում է կոտորածին ու կողոպուտին...»[1]:

Գանձակի դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների հավաստմամբ նոյեմբերի 18-ին քաղաքում հայ բնակչության կոտորածները իրականացվել են նահանգապետի՝ գեներալ Տակայշվիլիի գործուն մասնակցությամբ: Օրինակ, ինչպե՞ս բացատրել, որ նրա թույլտվությամբ կոտորածների օրերին իր 300 հոգանոց հրոսակախմբով քաղաք է ներխուժել հռչակավոր ավազակապետ Դալի Ալին[2]:

Այդ նույն սկզբնաղբյուրների վկայությամբ, իշխանությունների կողմից իր գործած բազմաթիվ ոճիրների համար հետապնդվող հայտնի ավազակապետ Դալի Ալին իր գլխավորած հրոսակախմբով քաղաքում է հայտնվել նոյեմբերի 19-ին, այսինքն այն ժամանակ, երբ քաղաք ներխուժած թուրք ամբոխը տեղի թուրքերի հետ հիմնավորապես թալանել ու այրել էր հայերի խանութներն ու վաճառատները: Հռչակավոր ավազակապետին խիստ զայրացրե է ցեղակիցների արարքները: Փաստորեն նրան և իր հրոսակախմբին ոչինչ չեր մնացելել թալանելու ու քանդելու:

Զայրացած ավազակապետը «...հայհոյում է կողոպտողներին ու սպառնում է թույլերին նրանց անպաշտպան թողնել ու հեռանալ քաղաքից: Թուրք ղեկաւարները վախենում են Դալի Ալիի սպառնալիքից ու նրա տարամադրութեան տակ դնում քսան հազարի չափ մի գումար: Աւազակապետը մնում է քաղաքում»[3]:

Մի քանի անհաջող փորձերից հետո թուրք ազդեցիկ դեմքերին վերջապես հաջողվում է նրան համոզել, որ «...գեներալ գուբերնատոր Տակայաշվիլին ու առհասարակ այժմեան թուրքասեր ռուսաց իշխանութիւնները նրան ոչ միայն չեն բռնիլ, այլև ճակատը կը պաչեն, յարգանք ու մեծարանք ցոյց կը տան...»[4]:

Այդ բացատրությունից հետո նոր միայն Դալի Ալին իր հրոսակախմբով հայտնվում է Գանձակում և համոզվում, որ «...ինքը ցանկալի հիւր է ոչ միայն թուրքերի, այլեւ Տակայաշվիլու ու նրա դժոխային ուղղութեան հետեւող բոլոր պաշտոնեաների համար...»[5]:

Թուրք հրոսակապետի ներկայությունը Գանձակում թեեւ փոքր-ինչ ուշացած էր, բայց նահանգապետի համար ցանկալի:

Ավելի քան գազանաբարո եւ հակամարդկային է եղել քաղաքում Դալի Ալիի առաջնորդած հրոսակների պահվածքը: Թալանից անմաս մնալու պառճառով գազազած ու կատաղությամբ համակված հրոսակները շրջել են քաղաքում եւ հոշետել ու այլանդակել են իրենց ձեռքն ընկած հայերի դիակ-

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 392, գ. 20, էջ 4:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 393, գ. 6, 7, 8:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 395, գ. 1, էջ 1:
[4] Նույն տեղում, էջ 2:
[5] Նույն տեղում:

ները: Նրանց գազանաբարո արարքները զարմանք է պատճառել նույնիսկ այդ տեսարանների ականատես ռուս սպաներին ու զինվորներին: Զինվորականների այն հարցին թե ինչու՞ են այդպես վարվում, նրանք պատասխանել են. «Ինչ անենք բա, գիտից նոր ենք եկել: Կենդանի հայեր չենք գտնում բազարում, որ սպանենք ու նրանց արիունը տաք-տաք խմենք: Սրանով գոնե պետք է մեր սիրտը հովացնենք» [1]:

Այդ սարսափազդու տեսարանների ականատես, օրեր առաջ հայ-թուրքական բարեկամություն քարոզող, հայերի անվտանգությունը երաշխավորող նահանգապետը՝ գեներալ Տակայշվիլին կոտորածները սկսվելուց երկու ժամ անց դուրս է գալիս շուկայի մերձակայքում գտնվող իր բնակարանից և հանգիստ ու ժպտադեմ դիտում, թե ինչպես էին թուրք ավարառուները սայլերով ու ֆուրգոններով կրում հայերին պատկանող խանութներից թալանված ապրանքները: Իսկ երեկոյան, երբ թուրքերը մութն ընկնելուն պես սկսում են հրդեհել հայերի բնակարանները, խանութներն ու արհեստանոցները, «...գեներալ Տակայշվիլին դիտում է հրդեհը իր բնակարանի լուսամուտից ու լսում երգիչ կազակներին, այդ ոուպէին նրա մոտ ուրախ ճաշկերույթ է լինում մի քանի մտերիմների մասնակցութեամբ...» [2]:

Գեներալ Տակայշվիլիի ու ոստիկանության համանման պահվածքը գրեթե նույնությամբ շեշտում են նաև Գանձակի դեպքերը պատմող ևս երկու այլ վավերագրեր [3]:

Նոյեմբերի 18-ի դեպքերը ներկայացնող վավերագրերի հավաստմամբ, թուրքերի հարձակման հետևանքով քաղաքի շուկայում և նրա հարակից տարածքում զոհվել են 100 և վիրավորվել երկու տասնյակից ավելի հայեր [4]:

Այդ օրը շուկայում և մեծ հրապարակին կից գտնվող «Բուծաղչի խան» անունը կրող իջևանատանը տեղի ունեցած դեպքերի ժամանակ թուրքերը բացառապես գործ են ունեցել պաշտպանվելու որևէ հնարավորություն չունեցող անզեն հայերի հետ: Այստեղ, շուկայի մի կետում երեք զինված հայեր, պատսպարվելով «Ազգօգ-տօնեան» բանկի կտուրի տակ, այնուամենայնիվ, կարողացել են արժանի դիմադրություն ցույց տալ և գնդակահարել ավելի քան 60 թուրքի [5]:

Համաձայն նույն վավերագրի, «Նոյեմբերի 20-ին նրանց տեղը իմացել են ռուս կազակները, զինաթափ են արել հայ քաջերին ու ձերբակալել: Մի քանի օրից յետոյ նրանցից երկուսին հաջողվում է փախուստով ազատվել» [6]:

Եթե նոյեմբերի 18-ի առաջին հարձակման ժամանակ թուրք հրոսակներին հաջողվել է գրեթե առանց դիմադրության շուկայում կոտորել բազմաթիվ հայերի ու բռնագրավել նրանց ունեցվածքը, ապա քաղաքի մյուս մասերում դեպքերը զարգացել են բոլորովին այլ ուղղվածությամբ:

Նույն օրը, նույն ժամին թուրք հրոսակախմբերը քաղաքի արևելյան՝ Չոլագ արվարձանի և հյուսիսային՝ Չայլու թաղամասի կողմից հարձակվել են հայկական քաղաքամասի վրա: Համաձայն թուրք առաջնորդների վաղօրոք մշակած ծրագրի, հարձակումը իրականացվել է միաժամանակ, մեծաքանակ ուժերով ու հայկական կողմի համար անսպասելի: Քանի որ ըստ նրանց հաշվարկի հայկական կողմը չուներ մեծաքանակ մարտական ուժեր և հետևաբար միաժամանակ պաշտպանվելու հնարավորություն, ուստի թուրք առաջնորդները վստահ են եղել, որ հարձակումը նման մարտավարությամբ իրականացնելու պարագայում իրենց կհաջողվեր արագորեն հաղթահարել հայերի դիմադրությունն ու ներխուժել նրանց քաղաքամասը:

Թուրքական կողմը վաղօրոք շատ լավ նախապատրաստվել էր: Հարձակման նախօրեին թուրք պարագլուխները իրենց մարտական ուժերը կենտրոնացրել են հայոց քաղաքամասի հարևանությամբ գտնվող 2500 բնակիչ կամ 250 տուն ունեցող թուրքական Չայլու ու Չօլագ թաղերում, որտեղից նոյեմբերի 18-ին սկսել են հարձակումը [1]:

Այդ թաղերի բնակիչները, մինչև Գանձակի հայկական քաղաքամասի վրա հարձակում սկսելը, օրեր շարունակ իրենց բնակարաններում պատսպարել են բազմաթիվ թուրք զինյալների, որոնք պիտի մասնակցեին ծրագրած հարձակմանը:

Վերոհիշյալ վավերագրերի հեղինակների հավաստմամբ, թուրքական կողմի մարտավարությունը ի սկզբանե պարզ էր ու հասկանալի:

«...եթէ,-նշում է վավերագիրը,-Չայլուից եւ Մօլլա-Ջալլուից հաջողվեր նրանց ներս խուժել միաժամանակ բազարի կոտորածի հետ ու այդպիսով իրարանցում առաջ բերել հայոց քաղաքամասում, նրանք ներս կը խուժեին նաեւ այդ քաղաքամասի հարաւային ու հարաւ-արեւմտեան կողմից, Բաղմանլար արուարձանից...» [2]:

Անհրաժեշտ էր ճիշտ ու արդյունավետ օգտագործել մարտական ուժերի հնարավորությունները և թույլ չտալ հակառակորդին ներխուժել հայկական քաղաքամաս: Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ժամանակին գնահատելով թուրքական կողմի ծրագրերը, հակառակորդից գաղտնի մարտական ուժերը դիրքավորում է այն ուղղություններում, որտեղից սպասվում էր հարձակումը:

Նոյեմբերի 18-ին՝ առավոտյան ժամը 10/2-ին, թուրք հրոսակները հարձակվում են հայկական քաղաքամասի վրա: Նրանք, անտեղյակ հայկական կողմի ձեռնարկած քայլերին և ապավինելով իրենց պատրաստվածությանն ու քանակական գերակշռությանը, ավելի քան վստահ են եղել իրենց հաղթանակին: Միաժամանակ, թուրք հրոսակներին ոգեշնչելու նպատակով, նրանց առաջ-

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 392, գ. 20, էջ 6:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 8:
[2] Նույն տեղում, էջ 9:

նորդները այնպիսի հավատ ու վստահություն են ներշնչել հարձակվողներին, որ նրանք ընդամենը մի երկու ժամում կարող էին հեշտությամբ բնաջնջել թույլ զինված հայերին [1]:

Բայց իրականում հակառակորդի համար կատարվում է անսպասելին: Ալեքսան Բալասյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող շրջանապետեր Մեժրումի, Ջհանի և Սիմոնի գլխավորած մարտական խմբերը գործել են ավելի քան կազմակերպված ու փոխհամաձայնեցված: Շրջանապետ Մեժրումի առաջնորդած մարտախումբը անկոտրում պաշտպանությամբ դիմագրավելով Բաղմանլարի թուրքերի հարձակումներին, հնարավորություն է ընձեռում Ջհանի և Սիմոնի գլխավորած մարտական խմբերին, առանց իրենց թիկունքի մասին մտածելու, ամբողջ ուժերը տրամադրել դիմակայելու Չայլուից և Մոլլա-Ջալլուից սպասվելիք հարձակումները: Կարելի է ասել, որ այդ ժամանակ քաղաքի հայության ճակատագիրը գլխավորապես վճռվում էր հենց այդ ուղղությունում ծավալվող դեպքերի ելքով: Հայ մարտական ուժերը ոչ միայն կարողանում են հաջողությամբ դիմագրավել թուրքերի հարձակումը, այլև դիմելով հակահարձակման՝ փախուստի են մատնում հրոսակներին: Ավելին, չնայած այն իրողությանը, որ թուրքերը Չայլում և Մոլլա-Ջալլում ունեցել են շատ լավ զինված զգալի քանակությամբ մարտական ուժեր, այնուամենայնիվ, հայ մարտիկները կարողացել են ներխուժել այդ հենակետերը և փախուստի մատնել այնտեղ դիրքավորված թուրք մարտիկներին [2]:

Ի պատասխան Չայլուում և Մոլլա-Ջալլուում կրած պարտության, թուրքական կողմը որոշում է Գանձակի հայկական թաղի վրա հարձակում ձեռնարկել նոր ուղղությամբ: Ըստ նրանց մտահղացման թուք հրոսակախմբերը պիտի Չայլուի մերձակայքով անցնեին գետը և ներխուժեին հայկական թաղը: Թուրքերը մի քանի անգամ նախանշված ուղղությամբ փորձում են անցնել գետն ու ներխուժել հայկական թաղ, բայց ապաղչում: Հայ ինքնապաշտպանական ուժերը յուրաքանչյուր անգամ կարողանում են հաջողությամբ հետ մղել թուք հրոսակախմբերի ձեռնարկած գրոհները [3]:

Այդ օրը տեղի ունեցած կռիվներում հայ մարտիկները կիրառել են ուշագրավ և արդյունավետ մարտավարություն: Քաղաքի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը հրահանգում է, որ մարտիկները իրենց նշանառության տակ վերցնեն գլխավորապես թշնամու առաջնորդներին ու մարտի ժամանակ առավել աչքի ընկնող կռվողներին: Հայկական կողմի համոզմամբ, նման մարտավարության կիրառումը կարող էր խուճապ ու սարսափ առաջացնել հարձակվողների շարքերում:

Այդ մարտավարության շնորհիվ «Յարձակման առաջին բոպենէրին» թուրքերից աչքի ընկնողները գետին տապալեցին սպանված ու վիրավորված: Չայլուում սպանվեց կոտորածի գլխավոր կազմակերպիչներից մին. Գանձակի թուրքերի մէջ շատ ազդեցիկ յայտնի խուլիգան Ղարաբաբ-օղլին ...» [1]:

Ղարաբաբ-օղլին Չայլուի և Մոլլա-Ջալլուի թուրքերի առաջնորդներ էր: Նա հավատացրել էր այդ գյուղերի բնակչությանը, որ կռիվներ սկսվելու դեպքում հայերը մի երկու ժամ հագիվ կկարողանան դիմադրել: Նրա սպանությունը նկատելի հուսալքություն է առաջացրել այդ գյուղերի բնակիչների և այնտեղ ապաստանած թուրք զինյալների մեջ: Կռիվները սկսվեցին և թուրքերը համոզվեցին, որ իրենց առաջնորդ Ղարաբաբ-օղլու հավաստիացումները բացարձակապես կեղծ ու անհիմն են:

Թուրք հրոսակախմբերը, կորցնելով իրենց առաջնորդներին, խուճապի են մատնվում և անկարող լինելով դիմակայել հայ մարտախմբերի գրոհներին՝ հեռանում են իրենց քաղաքամասը: Հայ ինքնապաշտպանական ուժերը կարող էին հետապնդել փախուստի դիմած թուրքերին ու ներխուժել նրանց թաղերը, բայց հրամանատարության որոշմամբ դադարեցնում են հարձակումը և վերադառնում իրենց դիրքերը:

Հայ ինքնապաշտպանական ուժերի քաջագործությունները, մարտում կիրառած մարտավարությունը հիացրել են նույնիսկ ռուս սպաներին, որոնք «համեմատում էին մեր տղաներին իսպանցիների հետ ու ասում, որ եթէ մի հարիւր հոգի լինէին նրանցից, Գանձակն ամբողջովին կարող է հայոց տիրապետութեան տակ անցնել մեկ-երկու օրում» [2]:

Ընդհանրացնելով կռիվների առաջին օրվա արդյունքները՝ կարելի է ասել, որ հայ մարտական ուժերն իրենց հերոսական դիմադրությամբ տապալեցին քաղաքը հայերից մաքրելու թուրքերի ծրագրած ձեռնարկումները: Քաղաքի հայ բնակչությունը փրկվեց անխուսափելի ջարդերից: Հայ մարտիկները թշնամուն պարտության են մատնում շնորհիվ իրենց կազմակերվածության, քաջագործության և իհարկե, հրամանատարների վարպետությամբ ու կռիվներում կիրառած կշռադատված մարտավարությամբ:

Այսուհանդերձ, պիտի նշել, որ հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության գործողություններում կային լուրջ վրիպումներ: Անկասկած, Գանձակի հայ բնակչության կոտորածը չէր կարող տեղի ունենալ, եթե իրենց բարձրության վրա գտնվեին Զինվորական մարմինը և ՀՅԴ «Այգեստան» կոմիտեն, մանավանդ, որ քաղաքում ու շրջանում արդեն կային կազմակերպված մարտական ուժեր և այլևս գաղտնիք չէին թուրքական կողմի նկրտումներն ու իշխանությունների վերաբերմունքը: Գանձակի Զինվորական մարմինը պարտավոր էր սթափ գնահատել քաղաքում տիրող կացությունը և շուկայում ու նրա հարակից տարածքում գտնվող հայերի անվտանգությունն ապահովելու նպատակով իր ուշադրության մշտարքում տեսադաշտում պահեր նաև քաղաքի այդ մասը:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 2:
[2] Նույն տեղում, գ. 2, էջ 4:

Գանձակի հայ առտրական հաստատությունների, ինչպես նաև արհեստանոցների մեծագույն մասը գտնվել են թուրքական քաղաքամասում: Նկատի ունենալով վերահաս վտանգը՝ Գանձակի Զինվորական մարմինը խորհուրդ է տվել հայ վաճառականներին ու արհեստավորներին, որ իրենց ունեցվածքը տեղափոխեն հայկական քաղաքամաս: Հայ վաճառականներն ու արհեստավորները, սթափ գնահատելով քաղաքում տիրող տագնապալի իրավիճակը և հաշվի առնելով Զինվորական մարմնի կգուշացումը, փորձում են խանութների ու արհեստանոցներում գտնվող ապրանքները թուրքականից տեղափոխել հայկական քաղաքամաս: Բայց, «...յաջորդ օրը, երբ սայլերով ու կառքերով ապրանքների տեղափոխութիւնը ծայր տուաւ, բաւականին հապճեպ կերպով, Գանձակի գլխաւոր ոստիկանապետ Հասանբեգովը (թաթար) արգելեց, պատճառաբանելով, թէ այդպիսով հայերդ խուճապ կը ստեղծէք և ընդհարման պատճառ կը դառնաք: Եւ բարձած ապրանքները նորից տեղափոխեցին իրենց խանութները»[1]:

Քանի որ քաղաքի իշխանությունները արգելել են, որ հայ վաճառականներն ու արհեստավորները իրենց ապրանքները տեղափոխեն հայկական քաղաքամաս, Գանձակի Զինվորական մարմինը առանձնացնում է մաուզերներով ու ձեռնառումբերով զինված 50 փորձառու ռազմիկների, որոնք պիտի աննկատ պտտվեին թուրքական քաղաքամասի հայաշատ վայրերում և ընդհարումներ սկսվելու պարագայում ապահովեին հայերի անվտանգ տեղափոխությունը հայկական քաղաքամաս[2]:

Բայց անհասկանալի է, թե նոյեմբերի 18-ի առավոտյան որտե՞ղ էին վերոհիշյալ 50 սպառազինված մարտիկները, երբ թուրք հրոսակները կոտորում էին թուրքական քաղաքամասում գտնվող հայերին: Գանձակահայությունն անկասկած կարող էր ունենալ անհամեմատ ավելի մեծ կորուստներ, եթե թուրք հրոսակները տիրապետեին մարտարվեստի հմտությանը և մղեին, Նիկոլ Դումանի բնութագրմամբ, ոչ թէ ամբոխային, այլ կազմակերպված կռիվ:

Մ. Վարանդյանի պատճառաբանությամբ հայ ինքնապաշտպանական ուժերի թույլ տված վրիպումները հետևանք էին այն իրողության, որ «...տեղւոյն զինւորական մարմնի երկու ղեկաւար անդամներ գացեր էին Թիֆլիզ՝ Կուսակցութեան շրջանային ժողովին մասնակցելու»[3]:

Բայց այս ամենը բորոտվին չի վերաբերում Ալեքսան Բալասյանի և մյուս փերձառու հրամանատարներին, որոնք կարողացան անհամեմատ փոքրագույն ուժերով փրկել Գանձակ քաղաքի հայությանն անխուսափելի կոտորածից:

Նոյեմբերի 20-ին Թիֆլիսից վերադառնում է ՀՅԴ Գանձակի տեղական կազմակերպության ներկայացուցիչ Աբրահամ Գյուլխանդանյանը, որը միաժամանակ ղեկավարելու էր գավառի զինվորական շտաբը: Գանձակում տեղի ունեցած դեպքերի մասին նա տեղեկացել է Թիֆլիսում՝ ժողովի ժամանակ: Ժողովականները, տեղեկանալով Գանձակում սկսված զինված բախումների մասին, դադարեցնում են քննարկումներն ու որոշում, «...որ ժամանակաւորապէս շրջանը կառաւարի եւ զինուորական ոյժը կազմակերպի Ա-ն (նկատի ունեն Ա. Գյուլխանդանյանին-Հ. Գ.)»[1]:

Աբրահամ Գյուլխանդանյանը անմիջապես մեկնում է Գանձակ:

Գանձակ քաղաքում տեղի ունեցած զինված բախումները մեծ արձագանք են գտնում ոչ միայն նահանգում և Կովկասյան փոխարքայությունում: Այդ օրերին կայսրության տարբեր քաղաքներից Կովկասի փոխարքայի անունով բազմաթիվ հեռագրեր են հասնում Թիֆլիս, որոնցում հեղինակները դատապարտում են Գանձակի ջարդերը և պահանջում կանխել բախումները: Գանձակում նոր կոտորածները կանխելու ու խաղաղություն հաստատելու խնդրանքով Թիֆլիսի հոգևոր թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի միջոցով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին է դիմում Խրիմյան Հայրիկը: Փոխարքան խոստանում է կատարել կաթողիկոսի խնդրանքը[2]:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, Գանձակ են մեկնում Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ Ալ. Խատիսյանն ու Համազասպը, որն այդ օրերին գտնվելով Թիֆլիսում, մասնակցում էր ՀՅԴ «Կովկասեան ռայոնական» ժողովին[3]:

Քաղաքում տիրող իրավիճակը քննարկելու և համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով Գանձակում գումարվում է ժողով, որին մասնակցում են հայ և թուրք պատգամավորները, քաղաքային վարչության անդամները, Կորյուն վարդապետը, քաղաքագլուխը, նահանգապետարանի պաշտոնեաները, և նահանգապետ գեներալ Տակայշվիլին[4]:

Ժողովում ելույթ ունենալով՝ Խատիսյանը դիմել է երկու կողմերին՝ առաջարկելով թույլ չտալ վերսկսել կռիվներն ու դադարեցնել արյունահեղությունը: Ինչու՞ բռնկվեցին զինված բախումները, ո՞վ էր մեղավոր:

Ժողովում, գրում է Ալ. Խատիսյանը, «...երկու կողմերն ալ կը ճառէին դարատոր բարեկամութեան մասին, որ իրար կը կապէ երկու ժողովուրդները, որ «Շէյթանի» գործ է երկու ժողովուրդները իրար վրայ նետելը: Որոշուեցաւ զինադադար կնքել՝ կամուրջը նկատելով որպէս գօտի: Ինձ խնդրեցին պտտիլ քաղաքը եւ ամէնուրեք յայտարարել խաղաղութեան մասին»[5]:

Գանձակում զինադադար է հայտարարվում: Ալ. Խատիսյանը հակամարտող կողմերին խաղաղության կոչելու նպատակով իշխանության և հայ ու թուրք բնակչության ներկայացուցիչների ուղեկցությամբ լինում է քաղաքի մի քանի

---

[1] Նույն տեղում, էջ 10:
[2] Նույն տեղում, էջ 13:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 348:

---

[1] «Մշակ», 1905, նոյեմբերի 30:
[2] Տե՛ս Նոր Դար, օրաթերթ, 1905, Թիֆլիս, նոյեմբերի 30:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 2, էջ 15:
[4] Տե՛ս Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակարանը, էջ 79:
[5] Նույն տեղում, էջ 80:

մասերում: Գումարվում են միտինգներ և ժողովներ, որտեղ կույթ ունեցողները փորձել են խաղաղության կոչել ու գսպել հակամարտող կողմերին:

Թեպետ Գանձակի առաջին ընդհարման ժամանակ հայ ինքնապաշտպանական ուժերը կարողացան փլուզել թուրքերի ծրագրած գործողությունները, բայց միանգամայն պարզ էր, որ հայ բնակչությանը սպասում էին ավելի դաժան փորձություններ: Անհրաժեշտ էր ավելի ուժեղացնել քաղաքի ու գավառի հայկական բնակավայրերի մարտական ուժերը և պատրաստ լինել հաջողությամբ դիմագրավելու հակառակորդի հարձակումներին:

Նոյեմբերի 22-ին Ղարաբաղից Գանձակ է գալիս Ռոստոմը: Նրա ներկայությունը շատ կարևոր էր: Ռոստոմը ոչ միայն հմուտ կազմակերպիչ էր ու հեղինակավոր առաջնորդ, այլ նաև զենքերի պատրաստման ու վերանորոգման արհեստանոցներ հիմնադրող վարպետ-կազմակերպիչ:

Գանձակի ինքնապաշտպանությունը ավելի ամրապնդելու նպատակով ՀՅԴ Արևելյան բյուրոյի հրահանգով «Նոյեմբ. 21-ին Համազասպի հետ միասին Գանձակ մտան ընտիր, փորձված զինուորներ՝ Թիֆլիսից 20 հոգի, Բաթումից 18, Բագուից 19: Նրանց մէջ էր գտնվում Խաչէնի հռչակաւոր հրոսակապետը, Բագուի և Արցախի կռիւներում իր անօրինակ քաջութեամբ հերոսացած Բաղշին...Թալիշի շրջանից եկաւ Դաւիթ Բեկ Մելիք Բէկլարեանի խումբը, թուով մօտ 25 ձիաւոր, Գէտաշէնի շրջանից Առուստամ Իւզբաշու, Երևանդ ու Ալեքսանդր Մելիք Մնացականեանի խումբը, թուով 50 ձիաւոր: Բանանցի շրջանից Մարտիրոս վարժապետի (տաճկաստանցի) ու Գանձակի գաւառում յայտնի հրոսակապետ-դաշաղ Համբոյի խումբը, թուով 30 ձիաւոր...»[1]:

Գանձակում կենտրոնացած մարտախմբերի հրամանատարների համաձայնությամբ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է Համազասպը, թեպետ ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ Գանձակի Զինական մարմնի լիազոր էր նշանակված Աբ. Գյուլխանդանյանը[2]:

Համազասպին ինքնապաշտպանական ուժերի հրամանատար ընտրելու վճիռը, ինչը աներկբա ապացուցեց ժամանակը, շատ ճիշտ էր: Աբրահամ Գյուլխանդանյանը չուներ հրամանատարին անհրաժեշտ մարտական փորձառություն, իսկ դրան հակառակ Համազասպը «...նահանգում ժողովրդական հերոսի հռչակ վայելող յայտնի զինվորական գործիչ էր, որին զինուորները եւ ժողովուրդը վերաբերվում էին կատարեալ հաւատով ու անկեղծ սիրով...»[3]:

Թուրքական կողմը նույնպես անընդհատ գտնվել է շարժման վիճակում: Համաձայն Գանձակի ընդհարումները ներկայացնող վավերագրերի, թուրք զինյալները քանակական առումով գրեթե տասն անգամ գերազանցում էին հայ մարտիկներին: Բացի հետեւակ զինյալներից, թուրքերն ունեցել են հեծյալ

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 393, գ. 2, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 7:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

խմբեր, որոնք «...գիշեր-ցերեկ կապ էին պահպանում թէ այդ թաղերի մէջ եւ թէ այդ թաղերի ու թրքական քաղաքամասի մէջ, որտեղից բերում էին կռի վայրը ռազմամթերք ու հրահանգներ իրանց խուլիգան ղեկաւարներից»[1]:

Թուրք հրոսակներին առաջնորդելու էր հայտնի ավազակապետ Դալի-Ային, որը Գանձակի առաջին դեպքերի ժամանակ անմասն էր մնացել թալանից ու կոտորածից: Թուրք պարագլուխները համոզված են եղել, որ հանրահայտ ավազակապետն այս անգամ կկարողանա կոտորել Գանձակի հայությանը:

Նոյեմբերի 21-ին և 22-ին, չնայած առանձին կրակոցներին, համեմատաբար խաղաղ է անցնում: Հայկական կողմը հասցնում է ժամանակը շատ արդյունավետ օգտագործել:

Գանձակի մարտական ուժերի հրամանատարությունը Համազասպի գլխավորությամբ մշակում է ինքնապաշտպանական կռիվներ մղելու ծրագիրը: Քաղաքի հայկական թաղամասի չորս կողմերում կառուցվում են պաշտպանական ամրություններ, որտեղ դիրքավորվում են մարտական ուժերը: Յուրաքանչյուր մարտախմբի տրվում են հստակ հանձնարարականներ: Ոչ մի պարագայում չպետք է հնարավորություն ընձեռվեր թուրք հրոսակախմբերին ներխուժելու հայկական քաղաքամասը: Ավելին, Գանձակի Զինվորական մարմնի որոշմամբ քաղաքի մարտական ուժերը ոչ թե պիտի բավարարվեին սոսկ ինքնապաշտպանությամբ, այլ պիտի ձեռնարկեին հարձակողական գործողություններ և քաղաքը ամբողջովին մաքրեին թուրք հրոսակներից:

Զինվորական մարմնի համար շատ կարևոր էր ստույգ ճշտել հակառակորդի հարձակման հիմնական ուղղություններն ու պարզել, թե որ կետերից են թուրք հրոսակախմբերը փորձելու ներխուժել հայկական քաղաքամաս: Քանի որ թուրքական կողմի նախապատրաստական աշխատանքները մատնանշում էին, որ հակառակորդը հայկական քաղաքամասի վրա հարձակումը ձեռնարկելու է երեք ուղղությամբ՝ Չայլու թաղի և Դիք-քյուչա ու Պատի փողոցների կողմից, ուստի հայ մարտական ուժերը կենտրոնանում են դիմակայելու հենց այդ երեք ուղղությամբ սպասվող հարձակումները[2]:

Նոյեմբերի 22-ի երեկոյան ժամը 9-ին Բաղմանլարի դիրքերից թուրք զինյալները սկսում են կրակ տեղալ հայկական քաղաքամասի ուղղությամբ: Պարզվում է, որ թուրք հրամանատարությունը հայկական քաղաքամաս ներխուժելու համար հիմնական ուժերը կենտրոնացրել էր հենց Բաղմանլարում: Հարձակումը սկսելու պես այդ ուժերը պիտի արագորեն տեղափոխվեին Դիք-քյուչա ու Պատի փողոցների դիրքերում ու այնտեղից ներխուժեին հայկական քաղաքամաս: Գանձակի Զինվորական մարմինը կարողանում է ճիշտ ժամանակին նկատել թուրքական մարտական ուժերի կենտրոնացման վայրն ու հարձակման գլխավոր ուղղությունները և մշակում հակառակորդին ջախջախելու կշռադատված մարտավարություն: Դիք-քյուչա ու Պատի փողոցների ուղղությունից

[1] Նույն տեղում, էջ 7:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

ապասվելիք հարձակմանը դիմագրավելու նպատակով Զինվորական մարմինը կենտրոնացնում է մարտախմբերի մի մասը: Միաժամանակ հայ ինքնապաշտպանական ուժերը պիտի դիմեին հարձակման, գրավեին Բաղմանլարի դիրքերն ու շրջափակման մեջ վերցնեին Դիք-քյուչա ու Պատի փողոցների ուղղություններից իրենց դիրքերի վրա հարձակվող հրոսակախմբերին [1]:

Նոյեմբերի 22-ին երկոյան ժամը 10-ին թուրքերը Դիք-քյուչա փողոցից սկսում են հարձակումը և փորձում ներխուժել հայկական քաղաքամաս: Հայ ինքնապաշտպանական ուժերը կազմ ու պատրաստ ոչ միայն հաջողությամբ դիմագրավում ու հետ են մղում հակառակորդի գրոհները, այլև դիմում են հարձակման: Թուրք հրոսակները չդիմանալով հայ մարտիկների գրոհին, դիմում են փախուստի և պատսպարվում շրջակա այգիներում: Հայ մարտիկները հետապնդում են փախչողներին եւ ներխուժելով այգիներ «...դուրս քշեցին նրանց այգիներում գրաված դիրքերից եւ աջ ու ձախ հարուածելով, այս ու այնտեղ տապալելով հասցրին նրանց Գանձակ գետը, որտեղից նրանք չյանդգնեցին այլեւս առաջ շարժվել...» [2]:

Այսպիսով ձախողվում է Դիք-քյուչա փողոցի ուղղությունից հայկական քաղաքամաս ներխուժելու թուրք առաջնորդների ձեռնարկած հարձակումը: Հայ մարտական ուժերը կարողանում են հաջողությամբ կատարել Զինվորական մարմնի մշակած ծրագրի մի մասը: Այն պահին, երբ թուրքերը Դիք-քյուչա փողոցի ուղղությունից փորձում էին ներխուժել հայկական քաղաքամաս, Համբոյի և Մարտիրոս վարժապետի գլխավորած մարտախմբերը, համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, շարժվում են դեպի Բաղմանլար: Հարձակումը ավարտվում է լիակատար հաջողությամբ: Թուրքերը հայտնվելով հանդիպակաց ուղղություններից տեղացող հարվածների արանքում՝ շպրտում են սրբազան պատերազմի խորհրդանիշը հանդիսացող կանաչ դրոշակը և սարսափահար դիմում փախուստի [3]:

Այդ օրն ընթացող կռիվներում հայ մարտիկները հակառակորդին գերազանցել են թե քաջությամբ և թե մարտեր մղելու վարպետությամբ: Իր քաջագործությամբ աչավելապես աչքի է ընկել Համբոն: Գանձակի ընդհարումները պատմող վավերագրերը հիացմունքով են նկարագրում նրա կատարած սխրանքները, որոնք վճռական նշանակություն են ունեցել հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակի գործում [4]:

Թուրք հրամանատարությունը իր հերթին նույնպես փորձել է կիրառել հայ մարտական ուժերին խուճապի մատնելու մարտավարություն: Թուրքերը վառել են հայկական քաղաքամասի երկու ծայրամասերում գտնվող մի քանի տներ, մի քանի խոտի դեզեր և ծրագրել Բաղմանլարում կենտրոնացած մարտական ուժերով գրոհ ձեռնարկել հայկական քաղաքամասի վրա: Նրանք վստահ են ե-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 8:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 9:
[4] Նույն տեղում, գ. 2, էջ 10:

ղել, որ այս անգամ իրենց կհաջողվի հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել հայկական քաղաքամաս: Սակայն Համբոյի ու Մարտիրոս վարժապետի գլխավորած մարտական խմբերի մուտքը Բաղմանլար, թուրքական ուժերի դասավորման կենտրոնին նրանց հասցրած ջախջախիչ հարվածը կտրուկ կերպով խառնում են նրանց ծրագրերը:

Հայկական քաղաքամասի վրա հարձակվելու կազմ ու պատրաստ Բաղմանլարի թուրքական մարտական ուժերի համար կատարյալ անակնկալ էր իրենց հենակետերում հայտնված հայ մարտիկների ներկայությունը, որոնց դիպուկ հարվածների զոհն էին դարձել տասնյակ թուրքեր [1]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը շատ ճիշտ ու արդյունավետ է օգտագործում ընձեռված հնարավորությունը և անհապաղ գրոհ է ձեռնարկում հակառակորդի դիրքերի վրա: Թուրք հրոսակախմբերը անկարող լինելով դիմակայել հայկական մարտական ուժերի հարձակմանը, թողնում են իրենց դիրքերը, որտեղից ծրագրել էին ներխուժել հայկական թաղեր և զգալի զոհեր տալով՝ հեռանում մարտադաշտից:

Պիտի նշել, որ կռիվները վարպետությամբ է ղեկավարել Համազասպը: Պատշաճ բարձրության վրա են գտնվել առանց բացառության բոլոր հրամանատարները: Ռոստոմն ու Գյուլխանդանյանը, մշտապես գտնվելով կռվողների մարտաշարքերում, ոգևորել ու սխրանքների են կոչել մարտիկներին [2]:

Թուրք պարագլուխները Գանձակի գավառում դարձյալ փորձել են կիրառել նույն մարտավարությունը, ինչը կիրառել էին Ղարաբաղում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ: Նրանք համոզված էին, որ գավառի հայ բնակչությանը ավելի դյուրին ու արագ կոտորելու համար անհրաժեշտ էր նախ եւ առաջ գրավել քաղաքի հայկական քաղաքամասը: Այդ պատճառով նրանք իրենց մարտական ուժերը առավելապես կենտրոնացրել են հենց Գանձակ քաղաքում: Բայց այս անգամ ևս թուրք պարագլուխների ծրագրերը տապալվում ու չեն իրականանում:

Նոյեմբերի 22-ին և 23-ին Գանձակում տեղի ունեցած հաղթական կռիվները մեկ անգամ ևս հաստատեցին հարձակողական բնույթի, կազմակերպված, ոչ ամբոխային կռիվներ մղելու մարտավարության առավելությունն ու արդյունավետությունը: Թեպետ ընդհարումների գլխավոր ճակատը Գանձակ քաղաքն էր, այնուամենայնիվ, կռիվները ոչ պակաս ուժգնությամբ, իսկ մի քանի դեպքերում նույնիսկ առավել դաժանությամբ, ընթացել են նաև գավառի մի շարք բնակավայրերում:

Մ. Վարանդյանի գնահատմամբ «Կատարեալ էր հայերու յաղթանակը նաեւ Գանձակի գաւառին մէջ, ուր ամենուրեք հայ ժողովուրդը ենթակայ էր նոյն հրոսակներու յարձակումներուն» [3]:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 392, գ. 2, էջ 15:
[2] Նույն տեղում, էջ 15-16:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 348:

Գանձակի գավառում տեղի ունեցած ընդհարումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մ. Վարանդյանի գնահատականը կարելի է ընդունել որոշակի վերապահումով: Գավառի Զինվորական մարմնին չի հաջողվել հայկական մի քանի գյուղերի բնակչությանը տրամադրել զենք ու զինամթերք, փորձառու մարտական ուժեր և կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն: Ըստ Գանձակի գավառում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող տեղեկագրի՝ «Գանձակի չորսանը ընդհարումների ժամանակ ունէր մօտաւորապէս 400 կռուողներ, ընտիր զենքերով զինուած: Ինչ իսաք զէնքերի և փամփուշտների մեծ մասը կարելի եղաւ ձեռք բերել ՀՅԴ Զինֆոնի (Զինական ֆոնդ) միջոցով: Կռուողների մեկ երրորդ մասն էլ Վերին Մարմնի կողմից ուղարկուած փորձուած հին ռազմիկներ էին: Թրքահայաստանից եւ Կովկասի ու արտասահմանի զանազան կողմերից եկած»[1]:

Տեղեկագրում նշված 400 զինվորների մեջ ամենայն հավանականությամբ չեն մտնում հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերը, որոնց զգալի մասը զինված է եղել հնատիպ զենքերով:

Ինչքան էլ փորձառու լինեին վերոհիշյալ 400 զինվորներն ու շատ լավ զինված, այնուամենայնիվ, այդ քանակության ուժերով չափազանց դժվար էր ապահովել գավառի գյուղերի անվտանգությունը:

Թուրքական ուժերը դեռևս նոյեմբերի 18-ին են պաշարել Չարդախլու, Բաղա գյուղեր, Գետաբեկի գործարանն ու նրա մերձակա Ղազախ գյուղը: Այս անգամ թուրքական կողմը ծրագրել է վերոհիշյալ գյուղերի վրա հարձակում ձեռնարկել միաժամանակ: Թուրք առաջնորդներն ավելի քան վստահ են եղել, որ համանման մարտավարությամբ իրենց կհաջողվի հայկական մարտական ուժերին գամել իրենց բնակավայրերում և նրանց զրկել միմյանց օգնության հասնելու հնարավորությունից: Մինչև հարձակում ձեռնարկելը, թուրքերը խուզարկու խմբերի միջոցով հետևողականորեն հետախուզել և ուսումնասիրել են վերոհիշյալ գյուղերի տեղանքը, մարտական ուժերի քանակն ու հնարավորությունները: Քանի որ վերոհիշյալ գյուղերից ամենաուժեղը, հետևաբար ամենավտանգավորը Չարդախլուն էր, ուստի թուրք առաջնորդները որոշում են հիմնական ուժերով, չորս կողմից հարձակվել հենց այդ գյուղի վրա և այն իսպառ ոչնչացնելուց ու թալանելուց հետո, նոր միայն հարվածել Գետաբեկի գործարանին ու Ղազախ գյուղերին:

Նոյեմբերի 18-ին կենտրոնացնելով մեծաքանակ մարտական ուժեր, թուրքական կողմը համաձայն մարտ վարելու իրենց սովորությանը, հեռվից համազարկեր տեղալով և «Յա՜ Ալի՛» վանկարկելով հարձակվում է Չարդախլու գյուղի վրա: Գյուղի պաշտպանները ընդունում են հակառակորդի մարտահրավերը և նրանց մարտավարությանը պատասխանում է հետևյալ մարտավարությամբ:

Ներկայացնելով այդ պահը՝ այդ կռիվների մանրամասները լուսաբանող վավերագրությունը նշում է. «Մեր տղէքը չեն պատասխանում: Թուրքերը սիրտ են առնում ու մոտենում, հայերի վախկոտութեան վերագրելով նրանց լռութիւնը: Երբ տարածութիւնը մերոնց ու թուրքերի մէջ բաւականին կրճատվում է, մեր կտրիճները մի քանի վճռական գալով են տալիս դէպի թուրքերը, որոնք մի քանի գոհեր տալով ու յաւ բուռակ ուտելով՝ յետ են - քաշվում, փախչում են»[1]:

Հաջորդ օրը թուրք հրոսակախմբերը համալրելով իրենց մարտաշարքերը, վերսկսում է հարձակումը: Թեպետ թուրքերն այդ օրը Չարդախլուի վրա հարձակվել են մեծաքանակ ուժերով, այնուամենայնիվ, գյուղի ինքնապաշտպանական ուժերը կարողանում են հաջողությամբ հետ մղել հակառակորդի հարձակումները: Թուրքերը, հանդիպելով լուրջ դիմադրության և կրելով զգալի կորուստներ, դադարեցնում են գրոհները: Պարտություն կրելով Չարդախլու գյուղի համար մղվող կռիվներում, թուրքերը բաժանում են իրենց ուժերը երկու մասի և հարձակվում Գետաբեկի գործարանի ու նրա մերձակա Ղազախ և Բաղա կամ Բաղաբենդ գյուղերի վրա:

Գետաբեկի պղնձի գործարանը և նրան կից Ղազախ գյուղը գտնվում են Գանձակ գավառի արևմտյան մասում, լեռնային սարահարթի վրա՝ շրջապատված լեռնաշղթաներով: Լեռնավայրում ամռանը թուրքերի թիվը կրկնապատկվում և եռապատկվում էր ի հաշիվ Կուր գետի սարահարթից ամռանը լեռները բարձրացող խաչնարած բազմահազար թուրքերի:

Հայկական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումներին, որպես օրենք, մշտապես մասնակցել են նաև սարահարթի թուրքերը, որոնք վերոհիշյալ վավերագրության հավաստմամբ «...աւելի մեծ թով էին մասնակցում այդ արշաւանքներին, աւելի լաւ էին զինված, հետեւաբար ավելի մեծ դեր էին խաղում տեղի ունեցող դէպքերում...»[2]:

Նոյեմբերի 19-ին թուրքական ուժերը կենտրոնանում են Գետաբեկի մերձակայքում և պատրաստվում գրոհելու գյուղի ու գործարանի վրա: Համաձայն վավերագրության վկայության, Գետաբեկում կային բազմատեսակ ու մեծաքանակ ապրանքներով հարուստ խանութներ, որոնք մեծամասամբ պատկանում էր հայերին: Գետաբեկը թուրք ամբոխին գրավում էր իր հարստությամբ: Նրանց վաղեմի երազանքը էր՝ տիրել Գետաբեկին ու տեր դառնալ հայերի անբավ հարստությանը: Ավելի ու ավելի համալրելով իրենց ուժերը, թուրքերը գրոհում են Գետաբեկի ու Ղազախ գյուղի վրա, ընդամին առավել ուժգին հարվածներ են հասցնում Գետաբեկին:

Ինչպիսի՞ ուժերով էին դիմակայելու թուրք հրոսակախմբերի հարձակումներին Գետաբեկի պաշտպանները: Ըստ վավերագրության, Գետաբեկի ինքնապաշտպանական ուժերը հակառակորդի հետ համեմատած ավելի քան սահմանափակ էին: Հարձակման ժամանակ Գետաբեկը ունեցել է ընդամենը 30 տեղացի մարտիկներից բաղկացած խմբապետ Բեգլկար Ավագյանի առաջ-

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 394, գ. 2, էջ 15:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 395, գ. 1, էջ 8:
[2] Նույն տեղում:

նորությամբ գործող մարտական խումբը, որը կազմավորվել էր ՀՅԴ տեղական կազմակերպության նախաձեռնությամբ: Կարելի է ասել, որ խմբապետ Բեգլար Ավագյանի գլխավորած Գետաբեկի ու Ղազախի ինքնապաշտպանական մարտերը Դանձակի նահանգում հայ ինքնապաշտպանական ուժերի մղած ամենահերոսական ու հիշարժան կռիվներից են:

Դիրքեր գրավելով Գետաբեկի ու Ղազախի հայկական գերեզմանատանը, հայ մարտիկները հեռահար հարվածներով կարողացել են զգալի կորուստներ պատճառել հարձակվողներին ու հետ մղել նրանց գրոհները: Ընդ որում թուրքերի շարքերն անընդհատ համալրել են մարտադաշտում հայտնված հրոսակախմբերը, իսկ «...մերոնց ոչ մի տեղից ոչ մի օգնություն չէ հասնում: Հայ գիտերը կտրված լինելով Գետաբեկից ոժտարանցնելի սարերով, նեղ կիրճերով ու խոր ձորերով, շտապույթ օգնություն չէին կարողանում հասնել» [181]:

Թուրքերը օգտվելով իրենց քանակական գերակշռությունից, Գետաբեկի վրա հարձակում են ձեռնարկում նաև Ղազախի կողմից: Հայ ինքնապաշտպանական փոքրաքանակ ուժերի համար չափազանց դժվար է եղել միաժամանակ պաշտպանել շուկան, խանութները և գյուղի բնակչությանը: Ստեղծված իրավիճակում հայ մարտիկները իրենց ուշադրությունն առավելապես կենտրոնացնում են գյուղի պաշտպանության վրա, որտեղ համեմատաբար ավելի մեծ թվով հայեր էին գտնվում, քան շուկայում և գործարանում:

Մի քանի անհաջող հարձակումներից հետո թուրքերին հաջողվում է գիշերը ներխուժել շուկա և կողոպտել ու քանդել հայերին պատկանող խանութները: Թուրքերի կողմից իրականացրած հարձակմանը մասնակցել են Ղազախ գյուղի շրջակա թուրքական բնակավայրերի բնակիչները: Թվում է, որ թուրքական հրոսակախմբերի մեծաքանակ ուժերին այլևս հնարավոր չէր դիմակայել և փրկության որևէ հույս ակնկալել: Այդ անելանելի թվացող իրավիճակում հայ մարտիկները իրենց հրամանատարի՝ Բեգլար Ավագյանի առաջնորդությամբ ձեռնարկում են հակառակորդի համար անսպասելի մի այնպիսի գործողություն, որը շրջադարձային նշանակություն է ունենում և կտրուկ կերպով փոխում մարտադաշտում տիրող կացությունը:

«...անգուգական կտրիճ Բեգլար Աւագեանը,-նշում է վավերագիրը,- Ագրունց տղայ անունով մի ուրիշ քաջի հետ վերցնում է մի քանի ռումբեր, վճռաբար, առանց յետ ու առաջ նայելու, վազում դէպի բազար ու ռումբերը նետում թրքական ժխորի մէջ...» [2]:

Պայթում են Բեգլար Ավագյանի ու նրա մարտական ընկերոջ նետած ռումբերը ու իրենց անսովոր ահավոր դղրդյունով սարսափի են մատնում խանութների թալանով տարված թուրքերին: Ռումբերի պայթյուններից կորցնելով տասնյակ զոհեր ու վիրավորներ՝ թուրքերը լքում են մարտադաշտն ու դիմում փախուստի: Հրավարարվելով ձեռք բերածով՝ Բեգլար Ավագյանն ու նրա զինակիցը հետապնդում են փախչողներին և հասնելով նրանց «...կրկին նրանց մէջ նետում ռումբեր, որոնք փայթում են նոյն ոյժով ու նոյնչափ զգալի հարուած հասցնում մեր արիւնարբու թշնամիներին: Բազարը մաքրվում է թուրքերից ու անցնում մեր կտրիճների տիրապետութեան տակ» [1]:

Ճիշտ է, այդ օրը ընթացող կռվում հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են անվիճելի հաղթանակ, բայց Գետաբեկ ու Ղազախ գյուղերի համար մղվող մարտերը դրանով չեն ավարտվում:

Հաջորդ օրն նեթ՝ նոյեմբերի 20-ին թուրք հրոսակախմբերն առավել դարձյալ վերսկսում են հարձակումը և այս անգամ ավելի մեծաքանակ ուժերով գրոհում են Ղազախ գյուղի վրա: Հայ մարտիկների գերխնդիրը Ղազախ գյուղի պաշտպանությունն էր, բնակչության անվտանգության ապահովումը: Ինչքան էլ հերոսաբար կռվեին, այնուամենայնիվ, անհնար էր ընդամենը 30 մարտիկներով դիմագրավել հազարավոր թուրք զինյալների հարձակումներին, մանավանդ արդեն սպառվել էին ռումբերը և քիչ էր նաև զինամթերքը: Այդ իրավիճակում Բեգլար Ավագյանի առաջնորդած մարտիկները բնակչությանը սպառնացող անխուսափելի կոտորածից փրկելու համար, կատարում են միակ հնարավոր ու խելամիտ քայլը: Նրանք կռվում են մինչև մութն ընկնելը ու դրանով հնարավորություն են տալիս Ղազախ գյուղի ավելի քան 500 բնակչիներին՝ տեղափոխվել Չարդախլու:

Պիտի նշել, որ Ղազախ գյուղի բնակչիները Չարդախլու են հասել գրեթե անկորուստ, շնորհիվ այն հանգամանքի, որ «Քաջ երիտասարդները Բեգլար Աւագեանի հրամանատարութեամբ ուղեկցում են գաղթող ժողովրդին դէպի Չարդախլու ու այդպիսով, շարունակ կռուելով ճանապարհի այս ու այն կողմում երեւացող թրքական խմբերի դէմ՝ խեղճ, տնանկ ժողովրդին մի կերպ հասցնում են Չարդախլու» [2]:

Թուրք ամբոխը ներխուժում է Ղազախ և տներում մնացած հայերի վերջին ունեցվածքը կողոպտելուց ու թալանելուց հետո, սարսափելի կերպով քանդում և մոխրակույտերի են վերածում գյուղը: Այսուհանդերձ, Ղազախ գյուղի բնակիչները փրկվում են, բայց դաժան ճագատագրի են արժանանում անպաշտպան մնացած Գետաբեկի գործարանում և շուկայում գտնվող ավելի քան 80 հայերը:

Բեգլար Ավագյանի առաջնորդած մարտիկների անգնահատելի ծառայությունը ոչ միայն այն էր, որ նրանք իրենց հերոսական գործողություններով անխուսափելի կոտորածից փրկել են Ղազախ գյուղի ավելի քան 500 բնակչիների, այլև հանգրվանելով Չարդախլուում, նույն հերոսականությամբ մասնակցել են այդ գյուղի ինքնապաշտպանական մարտերին:

Ըստ վավերագրի՝ «Գետաբեկի կտրիճներից իր անձնուրաց քաջութեամբ աչքի է ընկել բացի Բեգլար Ավագյանից նաև Աղաբէկ Մահտեսի Խաչիկեանը, որը

[1] Նույն տեղում, էջ 9:
[2] Նույն տեղում:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 10:

առաջինի հետ միասին մեծապես նպաստել է Ղազախ գիւղի բնակիչների ազատման սակալի կոտորածից: Իրենց գիւղի ազգաբնակչութեան հետ միասին հասնելով Չարդախլու, այդ հազարագիտ քաջերը իրենց կտրիճ ընկերներով միացել են տեղի հայ զինուորներին ու այդպիսով մեծ գարկ տուել այդ բազմամարդ նշանաւոր հայ գիւղի ինքնապաշտպանութեան գործին»[1]:

Մի քանի օր ընթացող կռիվների ժամանակ մոտակա հայկական բնակավայրերից այդ գյուղերին օգնության են գնացել ընդամենը 29 ձիավորներ, այն էլ ուշացած: Նոյեմբերի 29-ին ձիավորները հասնում են Ղազախ այն պահին, երբ բնակիչներն արդեն լքել էին գյուղը, իսկ Գետաբեկի ամբողջ սարահարթը ծածկված է եղել թուրք ամբոխով, որի մի մասը եղել է անգեն: Ի՞նչ կարող էին անել ընդամենը 29 մարտիկները ընդդեմ բազմահազար ամբոխի: Այդ իրավիճակում նրաք կայացնում են մի հանդուգն ու անհավանական որոշում, որը, կարելի է ասել, հավասարազոր է ինքնազոհողության:

Չնայած հակառակորդի ունեցած քանակական ահռելի գերակշռությանը, հայ մարտիկները համազարկեր տեղալով, գրոհում են Գետաբեկի սարահարթում գտնվող ամբոխի վրա: Նրանց սրընթաց հարձակումը, անվրեպ հարվածները կատարյալ անսպասելի ու անակնկալ էր հայերի «հեքիաթային» հարստության տիրելու ցանկությամբ խանդավառված ամբոխի համար:

Համաձայն Գետաբեկի ու Ղազախ գյուղի դեպքերը պատմող վավերագրի՝ սկզբում թուրքերը սարսափահար եղած մերոնց հարվածներից, հետ են նահանջել, իսկ անգեն ու ավարառու խուժանը փախել է շատ հեռու: Սակայն կռիվը դրանով չի ավարտվել: Տեսնելով հայ մարտիկների սակավաթիվ լինելը, թուրքերը նորից առաջ են շարժվել և փորձել շարունակել իրենց ավերածությունն ու ավարառությունը: Թվում է, որ հայ մարտիկներն այդ իրավիճակում սթափ կգնահատեն կացությունն ու կհեռանան մարտադաշտից, բայց կատարվում է ճիշտ հակառակը:

«Մեր ռազմիկներից մի քանիսը,-նշում է վավերագիրը,-զայրացած թուրք խուժանի յանդգնութեան վրայ, առաջ են վազել ու մտել նրա բազմության մէջ, կրակելով աջ ու ձախ: Թուրքերը փախել են նրանց առաջից ու բաժանվելով երկու մասի, շարժվել են այնպէս, որ կարողանան շրջապատել մեր սակաւաթիւ քաջերին»[2]:

Թուրքերը, շնորհիվ իրենց քանակական գերակշռության, անշուշտ, կարող էին շրջապատել հայ մարտիկներին, որոնք կհայտնվեին անելանելի իրավիճակում: Ճիշտ գնահատելով հակառակորդի ձեռնարկումը, հայ մարտիկներն անվարան գրոհ են ձեռնարկում, ճեղքում են թուրք հրոսակախմբերի մարտաշարքերն ու անկորուստ հեռանում մարտադաշտից:

Ինչպես արդեն նշվել է, թուրք հրոսակախմբերը նոյեմբերի 18-ին կենտրոնացել էին ոչ միայն Չարդախլու, Ղազախ գյուղերի և Գետաբեկի գործարանի,

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 12:

այլև Բաղա գյուղի մերձակայքում: Գյուղի ոչ այնքան լավ զինված և ընդամենը 200 մարտիկներից բաղկացած մարտական խմբերն անմիջապես համապատասխան դիրքեր են գրավում և սպասում դեպքերի զարգացմանը:

«Բաղա-Բաղաբենդ կամ Բաղասոր հայ գիւղը գտնվում է Դանձակի գաւառի արեւմտեան սահմանագլխում, երկաթուղու Զաղամ կայարանից 15-17 վերստ հարաւ... Գիւղի հողը պետական է, բաւականին ընդարձակ ու պտղաբեր եւ անչափ հարուստ է ծաղկավէտ արօտավայրերով ու խոտհարքներով... Նա էր, որ կարողանում էր դէմ կենալ իր շրջակայ բազմաթիւ թուրք ամբոխի ու անթիվ ընչաքաղց, գիշատիչ թուրք բէկերի քայքայիչ հարեւանութեան...»[1]:

Բաղան գավառում հայտնի էր ոչ միայն իր հարստությամբ, այլև հյուրասիրությամբ, նվիրական աղ ու հացով: Ըստ Բաղայի մասին պատմող փաստաթղթի «Համարեա օր չէր անցնում, որ Բաղան իր հիւրասէր հարկի տակ չընդունէր 20-30 թուրք, չընդունէր այս կամ այն բէգին իր ծառաներով...

Ղեկավարվելով այն առածով, որն ասում է «հայի կտրածը թուրքը չի կտրել», նահապետական Բաղան տարիներ շարունակ հացով սրտաբուխ հիւրասիրութեամբ գրավել է իր գազանաբարոյ հարեւաններին...Բայց հացն էլ անգօր գտնվեց զսպել արիւնարբու գազանին...»[2]:

Նոյեմբերի 21-ին թուրք ամբոխը «Յա Ալի՛» վանկարկելով ու վայրենի աղաղակներով հարձակվում է Բաղա գյուղի վրա: Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պիտի Բաղայի ընդամենը 200 մարտիկները դիմակայեին բազմահազար թուրք զինյալների գրոհներին:

Մի ուշագրավ հանգամանք, թուրքերը զինված են եղել ավելի կատարելագործված զենքերով՝ մոսին հրացաններով ու մաուզեր ատրճանակներով և ունեցել են անսպառ զինամթերք: Բաղայի ինքնապաշտպանական ուժերը ճիշտ հակառակը՝ ունեցել են հնատիպ զենքեր և սահմանափակ քանակությամբ զինամթերք: Հարց է ծագում, եթե բաղացիները թուրքերից անհամեմատ ավելի հարուստ էին, ինչու՞ չէին տիրապետում կատարելագործված զենքերի ու անհրաժեշտ քանակության զինամթերքի:

Ըստ Ա-ԴՕ-ի տվյալների «Գիւղի հարստութիւնը անասելի էր, 40-50-ով եզ, կով, ձի, գոմէշ ունենալը սովորական էր բաղեցու համար, միմիայն եզների թիւը գիւղում հասնում էր 2500-ի, նրա ամբարները լիքն էին, մառանները նոյնպէս, տները ամուր ու գեղեցիկ»[3]:

Բաղան 400 ծուխ եւ 2713 բնակիչ ունեցող մեծ գյուղ էր՝ շրջապատված թուրքական 24 մեծ գյուղերով[4]:

Թվում է, որ Բաղայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունն ու հարստությունը պիտի առավելապես թելադրեին գյուղի բնակչությանը իր

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 343:
[4] Տե՛ս նույն տեղում:

հարստության գոնե փոքրագույն մասն տրամադրելու զենք ու զինամթերքի ձեռք բերմանն ու դրանով իսկ ապահովելու իր անվտանգությունը: Բայց բաղացիները պատշաճ ուշադրություն չեն դարձրել զինման ու մարտական խմբերի կազմակերպմանը: Ինչու՞ պատասխանը միանշանակ է: Այդ գյուղում դարձյալ տիրել է նույն հիվանդությունը, ինչ մյուս գավառներում: Ի տարբերություն թուրքի և քրդի, հայը ավելի շատ կարևորելով աշխատանքն ու նյութական բարիքների արտադրությունը, շատ քիչ է մտահոգվել զենք գնելու և ըստ այդմ իր անվտանգությունն ապահովելու խնդիրներով:

Պիտի ընդգծել, որ գավառի ինքնապաշտպանության կազմակերպման գործում անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվել գավառի Զինվորական մարմինը: Գավառի հայ բնակչությունը, ինչպես արդեն նշվել է, թուրքերից անհամեմատ հարուստ էր: Կարելի էր ժամանակին կազմակերպել դրամահավաք և մասամբ լուծել զինման խնդիրը: Անհրաժեշտության դեպքում կարելի էր հետևել Երևանի նահանգում Նիկոլ Դումանի կիրառած միջոցներին և հարուստներից դրամ վերցնել բռնությամբ: Գանձակի գավառում Զինվորական մարմինը կռիվների նախօրեին ու անգամ դրանից հետո չի կատարել ոչ մեկը և ոչ էլ մյուսը:

Ողբերգական ավարտ է ունեցել 2500 բնակիչ ունեցող Բաղա գյուղի ինքնապաշտպանությունը: Գյուղի ինքնապաշտպանական ուժերը նոյեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 23-ը կարողացել են դիմագրավել հազարավոր թուրք զինյալների հարձակումներին: Բաղան միայնակ մարտնչելով՝ ոչ մի օգնություն չի ստացել:

Հայկական մարտական ուժերը մինչև նոյեմբերի 24-ը կենտրոնացել էին Գանձակ քաղաքում, իսկ մերձակա հայկական գյուղերի մարտական ուժերը նույնպես չեն կարողացել հասնել օգնության: Քանի որ Բաղան մեկուսացված էր և շրջապատված բազմամարդ թուրքական գյուղերով, հայկական գյուղերի մարտական ուժերը ի զորու չէին ճեղքելու թուրքերի խիստ օղակն ու օգնության հասնելու վտանգված գյուղին: Պաշարման շղթան ճեղքելու համար անհրաժեշտ էին ամենաընտիր զենքերով զինված հայդուկային խմբեր:

Բաղայի ինքնապաշտպանական ուժերը թեև մի քանի օր կարողացել են դիմադրել թուրք հրոսակախմբերի հարձակումները, բայց մարտական ուժերի ու հատկապես զինամթերքի սակավության պատճառով անկարող են եղել երկարատև դիմադրություն ցույց տալ ու անառիկ պահել իրենց դիրքերը:

«Թուրքերը վայրենի աղաղակներով ներս են խուժում գիւղ: Սկսվում է մի սոսկալի կոտորած ու կռիւ գիւղի փողոցներում: Գիւղացիները կռւում են դաշույններով, կացիներով, փայտերով...Ժողովուրդը թափվում է շրջակայ ձորերն ու անտառները, փախչում է դէս ու դէն, փախչում է Չարդախլու գլխավորապես»[1]:

Որևէ կասկած լինել չի կարող, որ բոլորովին այլ ճակատագրի կարժանանային Բաղայի բնակիչները, եթե իրենց հարստության մի մասը ժամանակին տրամադրեին ձեռք բերելու զենք ու զինամթերք և կազմավորեին մարտական խմբեր:

Բաղա գյուղի 2500 բնակիչներից փրկվել են 1200 հոգի, մեծամասամբ կանայք ու երեխաներ, որոնց, համաձայն այդ դեպքերը ներկայացնող վավերագրության, «...Ալլահեար բէկն անձամբ իր եղբայրներով հաւաքում է շրջակայ անտառներից ու տանում իր մօտ գերի, յետոյ մաս-մաս բաժանում է նրանց Չարդախլուի ու Շամշադինի միալի հայ գիւղերի մէջ...»[1]:

Նոյեմբերի 25-ին բազմահազար թուրք հրոսակները պաշարում են Չարդախլու գյուղը: Բաղա և Ղազախ գյուղերի գրավումն ու թալանը ոգևորել են թուրք աղաջորդներին: Նրանք ավելի քան վստահ են եղել, որ իրենց կհաջողվի այդ գյուղերի ճակատագրին արժանացնել նաև Չարդախլուին, որը Գանձակ գավառի արևմտյան մասի ամենամեծ, շեն ու հարուստ գյուղն էր:

Գյուղի վրա ձեռնարկած առաջին իսկ գրոհը աներկբա ցույց է տալիս, որ Չարդախլուն ոչ Բաղա է, և ոչ էլ Ղազախ: Թուրքական կողմը հասկանում է, որ այս անգամ իրենք գործ ունեն առավել կազմակերպված մարտական ուժերի հետ: Մի քանի անհաջող գրոհներից հետո, թուրքերը դադարեցնում են հարձակումները և սահմանափակվում միայն հեռու տարածությունից գյուղի ուղղությամբ համազարկեր արձակելով: Նույն մարտավարությամբ հակառակորդին պատասխանում են նաև հայ ինքնապաշտպանական ուժերը:

Նոյեբերի 29-ին Գանձակից Չարդախլու է հասնում Մարտիրոս վարժապետի գլխավորած քաջավարժ ռազմիկներից բաղկացած հայդուկային խումբը, որը աչքի էր ընկել հատկապես Գանձակի թուրքական Բաղմանլար թաղամասում նոյեմբերի 22-ի գիշերը տեղի ունեցած կռվում: Այդ օրհասական պահին Չարդախլու գյուղում հայդուկային խմբի հայտնվելը պատահական չէր:

Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ինչպես արդեն նշվել է, իր ուշադրությունը գլխավորորապես բևեռելով Գանձակ քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպմանը, մարտական ուժերը հիմնականում կենտրոնացրել էր քաղաքում: Կարելի է ասել, որ բավարար քանակության մարտական ուժեր, զենք ու զինամթերք չունենալու պատճառով գավառը դուրս էր մնացել Զինվորական մարմնի ուշադրությունից: Հարձակման ենթարկվելու դեպքում գյուղական բնակավայրերը պիտի ապավինեին իրենց սեփական ուժերին, որոնք, կարելի է ասել, այնքան էլ զինված ու կազմակերպված չէին:

Այսուհանդերձ, Զինվորական մարմինը նկատի ունենալով գյուղերի ինքնապաշտպանական ուժերի սահմանափակ հնարավորությունները, առանձնացրել է հատուկ նշանակության մարտական խումբ, որն անհրաժեշտության դեպքում պիտի օգնության շտապեր օրհասական կացությունում հայտնված գյուղերին: Այդ չափազանց պատասխանատու գործը Զինվորական մարմինը հանձնարարել է Մարտիրոս վարժապետի գլխավորած հայդուկների քաջավարժ մարտախմբին:

[1] ՀՅԴ ԿԱ, թթ. 395, գ. 1, էջ 17-18:

[1] Նույն տեղում:

Չարդախլուի համար վճռական կռիվ տեղի է ունենում նոյեմբերի 23-ին: Անտարակույս, եթե այդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը չկարողանային հաղթել հակառակորդին, ապա կոչնչանար ոչ միայն Չարդախլուն, այլև ծանրագույն կացություն կիայտնվեին նաև գավառի հայկական մյուս գյուղերը:

Ինչպես նախորդ մարտերում, այս անգամ դարձյալ նախահարձակ են լինում թուրքերը, որոնք անկանոն և անկարգ մարտաշարքերով ու կրակոցներով շարժվում են դեպի գյուղ: Հայ ինքնապաշտպանական ուժերը համաձայն վաղօրոք ծրագրած մարտավարության, սառնասրտորեն թողնում են, որ թուրքերը մոտենան իրենց դիրքերին, ապա միահամուռ կրակ են տեղում հարձակվողների վրա: Այդ օրվա կռվում թուրքերը տրամադրված են եղել մարտականորեն ու կռվել են համառորեն: Յուրաքանչյուր հարձակման հետևանքով թեպետ զգալի զոհեր են տվել, բայց համալրել ու կարգավորել են իրենց մարտաշարքերն ու շարունակել գրոհները:

Այդ օրը տեղի ունեցած բախտորոշ կռիվներում Չարդախլուի ինքնապաշտպանական ուժերի դրսևորած խիզախությունն ու մարտնչելու վարպետությունը վեր է որևէ գովասանքից ու գնահատականից:

«Մերոնք,-նշում է վավերագիրը,- խմբապետ Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարությամբ կռվում են այնպես, որ նրանց նախանձել կարող էին եւրոպական զորքերի շարքերում կրթված զինվորները...թուրքերը երկրորդ անգամ են յարձակում, դարձեալ ջարդվում են ու բոլորովին յետ նահանջում, թողնելով կռվի դաշտում շատ դիակներ...» [1]:

Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարությամբ հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են անվիճելի, փայլուն հաղթանակ: Թշնամին մարտադաշտում թողել է տասնյակ ապանվածներ, իսկ վիրավորներն անհամեմատ ավելի շատ են եղել: Հայկական կողմը ունեցել է ընդամենը միայն մեկ զոհ...[2]:

Պարտություն կրելով Չարդախլուի համար մղվող մարտերում, թուրք պարագլուխները ծրագրում են կռիվները շարունակել այլ մարտավարությամբ: Դյուրին հաղթանակներ և հաջողություններ ձեռք բերելու նպատակադրությամբ ու ակնկալիքով, նրանք որոշում են հարձակվել թույլ պաշտպանված, սակավամարդ բնակչություն ունեցող գյուղերի վրա:

Թուրքերը իրենց հարվածի առաջին նշանակետը ընտրում են Բարսում գյուղը, որը գտնվում է Շամխոր գետի հովտում, Չարդախլուից դեպի հարավ արևելք: Ճիշտ է, այդ գյուղը բնակչության, բնականաբար նաև կռվողների թվով զգալիորեն զիջել է Չարդախլուին, բայց շնորհիվ գերազանց բնական ամրությունների ունեցել է իր առավելությունները: Բարսումը գտնվում է անդնդախոր ձորի մեջ և շրջապատված՝ բարձրաբերձ ժայռերով ու լեռներով:

Դեկտեմբերի 3-ին Թուրք հրոսակախմբերը մոտենում են Բարսումին, բայց զգուշանալով ամրակուռ պաշտպանական հենակետերում դիրքավորված բարտամցիների հարվածներից, հարձակվում են գյուղից բավականի հեռու գտնվող նախիրի վրա: Սակավաթիվ նախրապահները չեն կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ և թուրքերը օգտվելով այդ հանգամանքից, շրջապատում ու տանում են նախիրը: Նախրապահները շտապել են հասնել գյուղ և գուժել տեղի ունեցածը:

Երբեմն ճակատագիրը օգնել է նաև հայերին: Մինչև բարսումցիների զինավառ մարտական խումբը կհասներ դեպքի վայրը, նախիրը քշող ավարառու հրոսակախմբերին հանդիպում է Չարդախլուից Բարսում վերադարձող Մարտիրոս վարժապետի գլխավորած հայդուկների խումբը: Արագորեն կողմնորոշվելով, հայդուկները հարձակվում են թուրքերի վրա, որոնք չնայած իրենց թվական գերակշռությանը, թողնում են նախիրը և դիմում են փախուստի: Հայ մարտիկները հետապնդելով փախչողներին՝ անվարան ներխուժում են մերձակայքում գտնվող թուրքական գյուղը և վերցնում զգալի քանակությամբ ռազմավար:

Եզրափակելով այդ կռվի մանրամասները ներկայացնող պատմությունը՝ վավերագրությունը նշում է. «Բեկլարի, դասաբ Գրիգորի, Ախալքալակցի Պետրոսի, Կարոյի, հրամանատար Մարտիրոս վարժապետի ու նրանց միւս քաջ ընկերների համար այդ կռիւը, այսպէս ասած, լինում է կատարեալ խաղ ու պար» [1]:

Բարսումում կրած պարտությունից հետո թուրքերը ոչ միայն այլևս չեն համարձակվում ոտնձգություններ կատարել հայ գյուղացիների նկատմամբ, այլև հայդուկների ներկայությունից ահաբեկված լքում են իրենց օջախն ու գաղթում առավել հեռու գտնվող թուրքաբնակ այլ բնակավայրեր:

Չարդախլու և Բարսում գյուղերի կռիվներում պարտություն կրելուց հետո, թուրքական կողմը փոխում է իր մարտավարությունը: Թեպետ Գանձակ քաղաքում նոյեմբերի 22-23-ին տեղի ունեցած մարտերում թուրքերը կրել էին պարտություն, այնուամենայնիվ, նրանք ծրագրում են մարտական ուժերը դարձյալ կենտրոնացնել քաղաքում և վճռական հարձակում ձեռնարկելով՝ պարտության մատնել ու կոտորել հայ բնակչությանը: Այդ նպատակով թուրք պարագլուխները փորձում են իրենց մարտական ուժերը գյուղերից տեղափոխել ու կենտրոնացնել քաղաքում: Միաժամանակ տարբեր բնակավայրերից դեպի Գանձակ են ուղևորվում թուրքական զինյալ խմբերն ու ավարառու ամբոխը:

Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության համար գաղտնիք չէր թուրքական կողմի պատրաստվածությունն ու նպատակը: Գավառի Զինվորական մարմինը թուրքերի ծրագրերը խափանելու նպատակով դեկտեմբերի սկզբներին որոշում է նրանց պատասխանել հարձակողական գործողություններով: Հայ մարտական ուժերը պիտի մի շարք հարձակումներ ձեռնարկեին թուրքական բնակավայրերի, հատկապես այն գյուղերի վրա, որոնք գտնվում էին Գանձակ գավառի լեռնային մասում և մշտական սպառնալիք էին հայկական գյուղերի համար: Թուրքական այդ գյուղերի բնակիչները

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 15:

[1] Նույն տեղում:

մասնակցել էին Բաղա և Ղազախ գյուղերի ու Գետաբեկի գործարանի հայերի կոտորածին և անպայմանորեն պիտի պատժվեին [1]:

Պիտի նկատել, որ հայկական կողմի ծրագրած համանման մարտավարությունը համակողմանիորեն կշռադատված էր ու հաշվարկված: Գավառի տարբեր հատվածներում գտնվող հակառակորդի ուժերին պարբերաբար հարվածներ հասցնելու միջոցով կարելի էր խոչընդոտել Գանձակում թուրքական ուժերի կենտրոնացմանը: Դրանով հնարավոր էր հրոսակախմբերին ստիպել ցրված մնալ գավառի զանազան կետերում ու այդպիսով թե Գանձակի հայկական քաղաքամասը ապահով պահել թուրքերի ներխուժումից և թե կանխել հայկական գյուղերի վրա ուղղած հարձակումները:

Փոքրի-ինչ առաջ անցնելով կարելի է նշել, որ Գանձակի գավառում տեղի ունեցած կռիվների ժամանակ հայկական մարտական ուժերի հրամանատարության ձեռնարկած հարձակողական գործողությունները ոչ միայն միշտ հաղթական ավարտ են ունեցել, այլև, այդ կռիվներից մի քանիսը իրենց հերոսականությամբ, կարելի է ասել, որ վեր են որևէ գովասանքից: Դրանցից իրենց նշանակությամբ պիտի առանձնացնել գանձակ գավառի հյուսիս արևմտյան մասում, հայկական Նուզգար և Չովգաս բնակավայրերի հարևանությամբ գտնվող թուրքական Բալչլու շրջանի Աղիոխուշ, Ախրջա, Մարաքենդ և հատկապես Թոփալ-Հասանլու ու Մեգյութլու գյուղերի գրավումը: Վերոհիշյալ գյուղերից Թոփալ-Հասանլուն և Մեգյութլուն թուրք հրոսակախմբերի գլխավոր հենակետերն էին, կենտրոնավայրը: Ամիսներ շարունակ այդ հենակետերում կենտրոնացած թուրք հրոսակախմբերը պարբերաբար հարձակումներ են գործել Գանձակ քաղաքի և հայկական բնակավայրերի, առավել հաճախ Բարաջրի, Մուրուտ, Ոսկանապատ, Միրզիկ ու Բանանց գյուղերի վրա [2]:

Իրենց ավազակային գործողություններով նախկինում աչքի ընկած Աղիոխուշ, Ախրջա, Մարաքենդ գյուղերը ավելի մոտ էին գտնվում Գանձակի թուրքական քաղաքամասին: Քաղաքից մինչև այդ գյուղերը կարելի էր հասնել ընդամենը 2-3 ժամում: Վերոհիշյալ գյուղերի հրոսակախմբերը կարող էին ցանկացած պահի զինական օգնություն ստանալ Գանձակից և հարձակվել հայկական բնակավայրերի, մասնավորապես Նուզգար ու Չովգաս գյուղերի վրա: Հարկավոր էր օր առաջ հարվածել ու վնասազերծել այդ գյուղերը, քանի դեռ նրանք Գանձակից որպես համալրում չէին ստացել անհրաժեշտ մարտական ուժեր:

Գանձակի Զինվորական մարմնի հանձնարարությամբ թուրքական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումը հանձնարարվում է իրականացնել Մարտիրոս վարժապետի գլխավորած 80 մարտիկներից բաղկացած մարտախմբին, որը համալրվում է Նուզգար և Չովգաս գյուղերի մարտիկներով: Դկտեմբերի 10-ի առավոտյան հայկական մարտական ուժերը հարձակվում

[1] Նույն տեղում, էջ 16:

[2] Նույն տեղում, էջ 17:

են թուրքական Աղիոխուշ գյուղի վրա, որտեղ այդ պահին կենտրոնացել էին Բալչլուի շրջանի մի քանի գյուղերի բնակիչները:

Ներկայացնելով այդ պահը՝ Աղիոխուշ գյուղի կռիվը պատմող վավերագրությունը նշում է. «Թուրքերը լաւ զինուած, նոյն իսկ մօսիններով, սպասելիս են լինում նրանց դիրքերում: Սկսում է կատաղի կռիւը. մերոնցից անվեհերութեամբ առաջ են շարժում առիւծների պէս. Մարտիրոսի հետ միասին վանեցի Մելքոնեան Կարօն, Գետաբեկցի Բեգլար Աւագեանը, Բաբանցեցի Մակիչ Անաստասեանը ու փիբեցի Համբարձում Բալասեանը...»:

Հայ մարտիկները առանց որևէ զոհի ու նույնիսկ առանց վիրավորի գրավում են Աղիոխուշ գյուղը և որպես ռազմավար վերցնում 600 ոչխար, 150 գլուխ տավար, 35 ձի ու բազմապիսի կենցաղային ու տնային իրեր [1]:

Զարգացնելով հաղթանակը՝ հայ ինքնապաշտպանական ուժերը շարունակում են հարձակումը և նույն ճակատագրին արժանացնում Ախրջան ու մի քանի այլ թուրքաբնակ մանր գյուղեր: Հայ մարտիկների գործողություններն ու թուրքական գյուղերի կործանումը ահ ու սարսափ է տարածում: Բալչլուի շրջանի թուրքական գյուղերի բնակիչներն ահաբեկված տեղի ունեցող սարսափազդու դեպքերից, այրում են իրենց տները և հեռանալով իրենց բնակավայրերից՝ ապաստանում Գանձակի թուրքական քաղաքամասի մերձակայքում գտնվող թուրքական գյուղում:

Հայկական մարտական ուժերի հաջորդ նշանակետերն արդեն թուրք հրոսակախմբերի գլխավոր հենակետերն էին՝ Թոփալ-Հասանլու և Մեգյութլու գյուղերը:

Թոփալ-Հասանլու գյուղը գտնվում է Գանձակից դեպի հարավ արևմուտք ձգվող ճանապարհի վրա, որը Բանանցի շրջանի հայկական գյուղերը քաղաքին կապող միակ հաղորդակցության ուղին էր: Փաստորեն Թոփալ-Հասանլուն վերածվելով թուրք հրոսակախմբերի կենտրոնատեղի, անջրպետում էր հայկական գյուղերը Գանձակից: Զուտ մարտավարական առումով չափազանց կարևոր էր վերացնել թուրք հրոսակախմբերի որջը և բացել քաղաքը հայկական գյուղերից անջրպետող արգելապատնեշը:

Թոփալ-Հասանլուում կենտրոնացած ուժերը Բաքվի, ապա նաև Նախիջևանի դեպքերից, ինչպես նաև իշխանությունների հովանավորությունից առավելագույնս ոգևորված ու քաջալերված, բաժանվում են մի քանի հրոսակախմբերի և ավելի մեծ հաճախականությամբ շարունակում են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկվող հարձակումները: Այդ իրավիճակում Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը թուրքերի ոտնձգությունները կանխելու և արժանի հակահարված հասցնելու, նրանց ոգևորությունն ու ինքնավստահությունը կոտրելու նպատակով վճռում է ջախջախել ամենաուժեղ և հեղինակավոր հրոսակախմբին:

[1] Նույն տեղում:

Այդ անչափ կարևոր և պատասխանատու հանձնարարությունը փայլուն կերպով կատարում են նշանավոր խմբապետ բաղմանլարցի Համբոյի գլխավորած մարտիկները: Համբոյի գլխավորած փոքրաքանակ մարտախումբը ղեկտեմբերին գլխովին ջախջախում է թուրքական հրոսակախմբին, որի անդամներից ազատվում է միայն մեկ հոգի:

Գանձակի դեպքերից հետո Թոփալ-Հասանլուի հրոսակախմբերը հարուստ ավարով վերադառնում են գյուղ և դիրքեր գրավելով հայկական գյուղերը տանող ճանապարհի վրա՝ կտրում են Գանձակը Բանանցի շրջանի և Չարդախլու գյուղերին կապող հաղորդակցության ուղին: Այդ գյուղերը, կտրվելով քաղաքից, դարձյալ հայտնվում են կրգիացած, մեկուսացված վիճակում: Թոփալ-Հասանլուի ոչնչացումը խիստ անհրաժեշտ էր և կենսական նշանակություն ուներ հայկական բնակավայրերի համար:

Նոյեմբերի 21-ին Մարտիրոս վարժապետի, բաղմանլարցի Համբոյի և Ալեքսան Բալասանյանի գլխավորած մարտախմբերը Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Համազասպի առաջադրանքով կենտրոնանում են Թոփալ-Հասանլուի մերձակայքում և հաջորդ օրը՝ նոյեմբերի 22-ի առավոտյան հանգիստ, անաղմուկ, հակառակորդի համար հանկարծակի, ներխուժում են գյուղը:

Հարձակմանը զուգընթաց Թոփալ-Հասանլուին թուրքական մյուս բնակավայրերից սպասվելիք զինական օգնությունից զրկելու նպատակով, հայկական մարտախմբերը նաև հսկողություն են սահմանում և կտրում գյուղ տանող ուղիները: Այդպիսով Մարտիրոս վարժապետի առաջնորդած մարտախմբերի գործողությունները Թոփալ-Հասանլուի մեջ հուսալիորեն ապահոված էին թիկունքից, այն է՝ թուրքական հրոսակախմբերի հարձակումներից: Այդ մարտական խմբերի գործողությունները ղեկավարել է անձամբ Համազասպը:

Հակառակորդի համար հայկական ուժերի հարձակումը կատարյալ անակնկալ էր: Ներկայացնելով այդ պահը՝ վավերագիրը նշում է. «... մեր զինուորները կռում են գիւղի ծուռ ու մուռ փողոցներում, բաղերում: Կռում են անվեհեր քաջութեամբ ինքը հրամանատար Մարտիրոս վարժապետը, գետաբեկցի Բէկլար Աւագեանը, Կարապետ Մելքոնեանը, դասաբ Գրիգորը, բանանցեցի Մակիչ Անաստասեանը, Սարգիս Գաբրիելեանը: Վերջինս Համբոյի հետ մտնում է գիւղի ամենախուլ անկիւններից մինը, վառում են խոտի մի դէզ ու մի տուն: Սկսում է հրդեհը, որով շուտով բռնկվում է ամբողջ գիւղը...»[1]:

Թուրք հրոսակախմբերը, որոնք ամիսներ շարունակ պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա, այս անկարող լինելով դույզն-ինչ դիմադրել հայ մարտիկների գրոհին, խուճապի են մատնվում և դիմում փախուստի: Ընդամենը 160 մարտիկներից բաղկացած Մարտիրոս վարժապետի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:

հրամանատարությամբ գործող մարտախումբն առանց որևէ զոհի և վիրավորի գրավում է թուրքական կարևոր հենակետերից մեկը:

Թոփալ-Հասանլուի գրավման հետևանքով հայ մարտիկները որպես ռազմավար վերցնում են 1000 ոչխար, 160 տավար, 30 ձի ու ջորի և բազմաթիվ այլ կենցաղային առարկաներ[1]:

Թոփալ-Հասանլուի գրաման լուրը շուտով հասնում է Գանձակ: Քաղաքում գտնվող թուրքական հրոսակախմբերը, ավերված գյուղի, սպանված ու վիրավորված արյունակիցների վրեժը լուծելու վճռականությամբ շտապում են մարտադաշտ: Բայց նրաց չի հաջողվում վրեժխնդիր լինել հայ մարտիկներից: Գանձակ գետի հոսանքի երկարությամբ, Աղ-Քեօրփի ձորում դիրքեր գրաված Համազասպի գլխավորած հայ մարտական խմբերը իրենց շեշտակի հարվածներով գլխապատառ փախուստի են մատնում թուրք հրոսակխմբերին:

«Մեր զինուորներից,-նշում է վավերագիրը,-առանձնապես աչքի է ընկնում իր անվեհեր քաջութեամբ կուսապատցի Սարգիս Առուստամեանը, որը առաւել յայտնի է «Չոփուռ» անունով: Նա անցնում է Գանձակ գետը, դիրք գրաւում Բաղմանլարից բաւականին մոտիկ ու կռում առիւծի պէս: Չոփուռը լուրջ վիրաւորվում է ոտից, բայց բնաւ ուշադրութիւն չի դարձնում նրա վրա, կռում է մինչև թուրք հրոսակախմբերի անհետանալը կռի վայրից...Չոփուռը Ղարաբաղի ժողովրդական հերոս հռչակաւոր հրոսակապետ Բախշիի ընկերն է, նրա խմբի խիզախ, յանդուգն անդամներց մինը...»[2]:

Նույն օրը՝ նոյեմբերի 22-ին հայ ինքնապաշտպանական ուժերը սրընթաց հարձակումներով գրավում ու ոչնչացնում են Դարաբեկլու և Քարա-Եաթաղ թուրքական ավելի փոքր գյուղերը:

Հայկական մարտական ուժերի կողմից Գանձակ գավառի թուրքական ամենավտանգավոր ավազակաբունի՝ Թոփալ-Հասանլուի և նրա սահմանամերձ Դարաբեկլու և Քարա-Եաթաղ գյուղերի գրավումը մեծ ոգևորություն է պատճառել գավառի ու քաղաքի հայ բնակչությանը ու բարձրացրել նրա մարտնչելու տրամադրվածությունը: Այդ հաղթական կռիվներն ակնառու կերպով ցույց տվեցին, որ խիզախ ու կարող հրամանատարի առաջնորդությամբ կշռադատված մարտավարությամբ առաջնորդվելու, հարձակողական գործողություններ ձեռնարկելու պարագայում կարելի էր նույնիսկ փոքրաքանակ մարտական ուժերով հաղթանակներ նվաճել և սանձել թուրք հրոսակախմբերի ոտնձգությունները:

Թոփալ-Հասանլուի գրավումից հետո հայկական կողմը ծրագրում է շարունակել հարձակողական գործողությունները և վրեժխնդրության նպատակով հարձակվել այն գյուղերի վրա, որոնց բնակիչները մասնակցել էին հայկական գյուղերի ոչնչացմանն ու կողոպուտին: Այդ նպատակով Մարտիրոս վարժապետի գլխավորությամբ Չարդախլու գյուղում կազմավորվում է 200 հեծյալ ու հե-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 395, գ. 5, էջ 23:
[2] Նույն տեղում:

տնակ մարտիկներից բաղկացած հատուկ նշանակության մարտախումբ: Դեկ-տեմբերի 31-ի երեկոյան մարտախումբը դուս է գալիս Չարդախլուից և մեկնում կատարելու իրեն հանձնարարված առաջադրանքը: Ճանապարհին Մարտի-րոս վարժապետի մարտախմբին են միանում նաև հայկական մի շարք գյուղ-երի մեծ ու փոքր մարտախմբեր[1]:

Թուրքական գյուղերի բնակիչները տեղեկանալով հայկական կողմի ծե-նարկումների, իրենց գյուղերի վրա ծառացած սպառնալիքի մասին, լքում են ի-րենց բնակավայրերը և կենտրոնանում Սեգյուլու գյուղում: Այդ գյուղում կենտրոնացել էին ավելի քան 1000 թուրք զինյալներ, որոնց օգնության են գալիս Գետաբեկի թուրքերը[2]:

«Այդ գիւղում ժողովուած է լինում մօտ 180 տուն կամ 1000 հոգի: Կուողները լաւ զինված... Սիօգիւտլուն գտնում է Գէտաբէկի գործարանի մօտիկ, որտեղ կան բաւականաչափ թուրքեր: Վերջիներս մի ժամուայ ընթացքում կարող էին օգնութեան հասնել Սիօգիւտլուին...»[3]:

Հայկական մարտական ուժերը դեկտեմբերի 31-ին մոտենում և շրջապատում են Սեգյուլուն և 1906թ. հունվարի 1-ի լուսաբացին իրենց հրամանատարի Մարտիրոս վարժապետի հրամանով շեփորից հնչեցրած առաջին իսկ ազդա-շանով՝ հարձակվում են գյուղի վրա: Ներկայացնելով Սեգյուլուի կռվի մանրամասները՝ վերոհիշյալ վավերագրությունը նշում է. «Խմբապետ Մարտիրոսը թռչում է դիրքից դիրք, խրախուսում, քաջալերում տղերանց: Իր անձնական օրինակով, քաջությամբ ու ռիսկով ոգևորում, իր ետևից տանում իր ռազմիկներին: Բէգլար Աւագեանը Ղազախ գիւղացի, վրեժի ծարավով բռնված, Պետրոս Ախալքալաքեցի, Ղասաբ Գրիգորը(վանեցի), Կարապետ Մելքոնեանը (վանեցի), Մակիչ Անաստասեանը (բանանցեցի) ու փիբեցի Համբարձում Թաւաքալեանը առանց յետ ու առաջ նայելու նետում են իրանց գիտի մէջ, դուրս են քշում թուրքերին իրենց դիրքերից»[4]:

Որպեսզի հարձակումը ընթանար առավել դյուրին և ավատվեր հնարավորինս քիչ կորուստներով, հայկական կողմը ծրագրել էր գյուղի վրա հարձակումը իրականացնել տարբեր ուղղություններից՝ միաժամանակ տեղացող հարվածներով: Այն պահին, երբ Մարտիրոս վարժապետի առաջնորդած մարտախմբերը ներխուժում են Սեգյուլու, գյուղի վրա գրոհում է խմբապետ Վարդան Մշեցու գլխավորած շատ լավ զինված և քաջավարժ մարտախումբը: Հայկական մարտական ուժերն առանց մեծ ջանքեր գործադրելու ներխուժում են գյուղ: Կռիվը երկար չի շարունակվում: Թուրքերը ընդամենը մեկ ժամ դիմադրելուց հետո՝ լքում են իրենց բնակավայրն ու դիմում փախուստի:

Հայկական մարտախմբերը ամբողջովին գրավում են գյուղը և «...ընդամենը երեք ժամուայ ընթացքում Սիօգիւտլուն ոչնչանում է: Գիւղից դուրս են տանում

[1] Նույն տեղում:
[2] Վարանդեան Մ., նույն աշխ., էջ 352:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 395, գ. 5, էջ 26:
[4] Նույն տեղում:

ահագին աւար՝ մօտ 3000 ոչխար, 500 գլուխ տաւար, ձի ու ջորի ...Թուրքերից ընկնում են մօտ 100 հոգի, մնացածները փախչում են Գետաբէկ...Մինչ այդ մերոնք ոչ մի գոհ չեն տալիս»[1]:

Բնությունն այդ օրը օգնել է թուրքերին: Եղանակը խիստ մառախլապատ է եղել և մառախուղը ինչ-որ չափով փակելով հայ մարտիկների տեսադաշտը՝ հնարավորություն է ընձեռել թուրքերին խուսափել իրենց վրա տեղացող գնդակներից ու առավել քիչ կորուստներով հեռանալ գյուղից:

Սեգյուլուի հաղթական մարտից հետո հակառակորդին վերջնականապես պարտության մատնելու վճռականությամբ Գանձակի Զինվորական մարմինը որոշում է կարգացնել հարձակումը և գրոհել Գետաբեկի գործարանի և թուրքական մյուս հենակետերի վրա: Բայց այս անգամ ռուս հրամանատարության կողմից նրանց սպասվում էր տհաճ անակնկալ[2]:

Սեգյուլուից Գետաբեկ փախած թուրք հրոսակներն էին Ղազախ, Բաղա և Բարսում գյուղերի կոտորածների գլխավոր մեղսագործները: Հայ մարտիկները պիտի վրեժխնդիր լինեին և հիմնահատակ կործանեին Գետաբեկն ու այնտեղ պատսպարված հրոսակներին: Հայ մարտախմբերն անկասկած կնվաճեին հերթական հաղթանակը, եթե մարտադաշտում անսպասելիորեն չհայտնվեր ռուսական զորքը: Այն պահին, երբ հայ մարտական խմբերը մոտենում էին Գետաբեկին ու պատրաստվել գրոհելու, հանկարծ նկատում են հեծյալների , որոնք մեծ արագությամբ գալիս էին գյուղի ուղղությամբ: Հայ մարտիկները սկզբում կարծելով, որ դրանք Գետաբեկին օգնության շտապող թուրքական հեծելախմբեր էին, պատրաստվում են դիմագրավել հարձակվողներին: Սակայն մի փոքր անց պարզվում է, որ դրանք «...մեծ մասամբ ռուս դրագուներն են, թիվ մօտ 150 հոգի կամ մի էսկադրոն: Նրանց հետ լինում են նաեւ թուրքեր Գետաբեկի գործարանից, նրայ շրջակայ թուրքաբնակ վայրերից»[3]:

Ռուս զինվորները, որոնց աջակցում են նաև թուրք զինյալները, համազարկեր տեղալով մոտենում են: Այս կռվում դարձյալ հայ մարտիկները չգրված օրենքի համաձայն չպատասխանելով ռուս զինվորների հարվածներին, կրակում են միայն թուրք զինյալների վրա: Օգտվելով իրենց նկատմամբ դրևորած «սիրալիր» վերաբերմունքից, ռուս զինվորներն աջակցում են թուրք զինյալներին և աշխատում պաշարման օղակի մեջ վերցնել հայ մարտիկներին: Եթե հակառակորդը կարողանար իրականացնել իր մտադրությունը, ապա հայ մարտիկները կհայտնվեին շրջապատման մեջ, անելանելի իրավիճակում: Հայ մարտախմբերի հրամանատար բազմափորձ Մարտիրոս վարժապետը իսկույն ըմբռնում է հակառակորդի, այս պարագայում ռուս հրամանատարության կիրառած մարտավարությունն ու կայացնում է միակ խելամիտ և փրկարար որոշումը:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 353:

Մարտիրոս վարժապետը հրամայում է «իր զինորներին կուելով յետ նահանջել: Նահանջը կատարվում է մեծ վարպետութեամբ: Առիւծի պէս կուելով մերոնք դուրս են գալիս մարտադաշտից, ոչ մի զինուոր գերի չի ընկնում: Հետամուտ լինող ռուս դրագուններն ու նրանց բարեկամ թուրքերը ձեռնունայն են մնում»[1]:

Եթե նախորդ կռիվներում հայ մարտիկները նկատել էին ծանրակշիռ հաղթանակներ առանց զոհերի և նույնիսկ առանց վիրավորների, ապա այս անգամ ունենում են շատ ցավալի ու անփոխարինելի կորուստներ: Նահանջի ընթացքում հայ մարտիկներին կրնկակոխ հետապնդող ռուս զինվորների գնդակներից զոհվում են նախորդ կռիվներում իրենց քաջագործություններով աչքի ընկած Բեգլար Ավագյանն ու Պետրոս Ախալքալակցին, ծանր վիրավորվում են Մարտիրոս վարժապետը, բանանցեցի Մակիչ Անաստասյանը և բազմաթիվ այլ մարտիկներ:

Ներկայացնելով այդ կռվում ռուս զինվորների դրսևորած քստմնելի, կարելի է ասել, հակահայ վերաբերմունքը՝ վավերագրությունը տալիս է հետևյալ գնահատականը. «Երբ Բաղա ու Ղազախ գիւղերը թուրք բէկերն ու հրոսակները ոչնչացնում էին, երբ սրախողող էին անում Գետաբեկի հայերին, այն ժամանակ հայերին պաշտպանելու համար ռուս կառավարութիւնը զորք չունի... Երբ հայերը գնացին առնելու թուրքերից աւերված հայ գիւղերի ու յոշոտված հայ մանուկների վրէժը, այն ժամանակ կարծես կախարդական ուժով գետնի տակից դրագունների ահարկու էսկադրոններ դուրս եկան թուրքերին պաշտպանելու համար: Եթէ զօրքը չգար ու չխանգարեր մեր տղերանց՝ Գետաբէկի գործարանում ու նրա շրջակայ լեռնավայրերում այլևս թուրք ազգաբնակչութիւն չէր մնալ...»[2]:

Որպես վերոհիշյալ դեպքերի լուսաբանման եզրափակիչ և ընդհանրացնող խոսք ու գնահատական՝ վերոհիշյալ վավերագրությունը ընդգծում է. «Այդ նշանավոր գործը (նկատի ունի Թոփալ-Հասանլուի և Մեգյուլուի հաղթանակները- Հ.Գ.) իր աջողութեամբ պարտական է Դաշնակցութեան, նրա քաջ հայդուկներին, տեղացի կամավոր զինորներին ու նրանց հրամանատար Մարտիրոս վարժապետին, որը գիտէ, իր աչք դրած նպատակին հասնել, գիտէ իր զինորներին հաւատ ներշնչել դէպի գործը»[3]:

Խայտառակ պարտություն կրելով մի շարք կռիվներում, թուրք առաջնորդները որոշում են հարձակվել Գանձակ գավառի արևմուտքում գտնվող թուրքական գյուղերով շրջապատված Նուզգար գյուղի վրա և այն հիմնահատակ կործանել: Այդ գյուղը գրավելու նպատակով մարտադաշտում են հայտնվում նաև Մեյֆալլու և Շամխոր գետերի հովիտներում գտնվող թուրքական գյուղերի ավարառու ամբոխը:

1906 թ. հունվարի 6-ի առավոտյան ժամը 10-ին թուրք հրոսակախմբերը հարձակվում են Նուղդար գյուղի վրա: Բարեբախտաբար Գանձակի Զինվորական

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 395, գ. 5, էջ 26:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 27:

մարմնի հանձնարարությամբ այդ ժամանակ արդեն գյուղում էին գտնվում սակավաթիվ հայդուկներ, որոնք տեղի զինվորների հետ միասին կարողանում են հետ մղել հակառակորդի գրոհները և գյուղը գերծ պահել թուրքերի ներխուժումից: Սակայն Նուղդար գյուղի համար մղվող կռիվը դրանով չի ավարտվում: Թուրք առաջնորդները համալրում են իրենց մարտական ուժերի շարքերը, և Գանձակ նահանգում հայտնի ավազակապետ Դալի-Ալիի գլխավորությամբ 3000 հոգուց բաղկացած հրոսակախմբերը հունվարի 10-ին դարձյալ հարձակվում են Նուղդար գյուղի վրա: Բացի Դալի-Ալիից՝ թուրք պարագլուխներից հրոսակախմբերին առաջնորդել են նաև Սուլեյման Շամխորսկին ու Գետաբեկի պրիստավ Մուսեիբը: Թեպետ այս անգամ թուրքերի մարտական ուժերը ավել բազմամարդ էին ու կազմակերպված, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում ընկնել Նուզգարի պաշտպանների դիմադրությունն ու ներխուժել գյուղ:

Անհաջողությունից կատաղած Սուլեյման Շամխորսկին կռվի ժամանակ անընդհատ գոռացել է. «Նուզգարը իր տոհմին է եղել պատկանելիս ու այսուհետև պէտք է ինձ պատկանի: Ես պէտք է սրբեմ գետնի երեսից Նուզգարը և կարտօֆիլ սերմեմ: Վայրագ բէկը, ի հարկէ, չի հասնում: Թուրքերը փառաւոր ջարդ են ուտում ու յետ նահանջում ամենախայտառակ կերպով: Աւարի համար բերած ֆուրգոնները լցնում են իրենց սպանվածներով ու վիրաւորներով և գլխիկոր յետ դառնում»[1]:

Մ. Վարանդյանի գնահատմամբ տեղի է ունեցել մի ճակատամարտ, որը տևել է առավոտյան ժամը 5-ից մինչև 11-ը: Թեպետ թուրք հրոսակախմբերը Դալի Ալիի գլխավորությամբ համառորեն մի քանի գրոհներ ձեռնարկելով փորձել են կոտրել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել գյուղ, սակայն Նուղդարի պաշտպանները կարողացել են անկոտրում պաշտպանությամբ ամրակուռ պաշտպանել իրենց դիրքերը[2]:

Գանձակի Զինվորական մարմնի որոշմամբ հայ մարտական ուժերը թուրքերին մեկ այլ հարված են հասցնում նաև Գանձակի գավառի արևմտյան մասում, Արցախ աշխարհի պատմական Գյուլիստան գավառում: Մինչ այդ Գյուլիստանի տարածքում հայ և մահմեդական բնակչության միջև թեժ բախումներ են տեղի ունեցել հատկապես Մռավ և Քեափազ լեռների ստորոտներից սկիզբ առնող Ղարա-Չայ (Սև-Գետ) և Քյուրակ-Չայ գետերի հովիտներում ու ինչպես միշտ, նախահարձակը դարձյալ թուրքերն են եղել:

Գյուլիստանի Ղարա-Չայ հովտում գտնվող հայկական Վերին Ներքին-ջեն, Խարխապտտ, Պարիս, Մանասբեկ, Ղաբրիքենդ և Աղջաղալա գյուղերի վրա թուրքերը փոքր ծավալի մասնակի հարձակումներ են գործել դեռևս ամռան վերջերին, քոչը սարից իջեցնելու ժամանակ: Թուրք հրոսակները հնարավորության դեպքում առիթը բաց չեն թողել սպանելու ու թալանելու իրենց ձեռքն ընկած այդ գյուղերի բնակիչներին:

[1] Նույն տեղում:
[2] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 353:

Նույն ժամանակահատվածում հայ և մահմեդական բնակչության միջև ավելի ուժգին բախումներ են տեղի ունեցել Քյուրակ-Չայ գետի հովտում: Քյուրակ-Չայ գետի մեջ թափվող Էրքեջ գետակի վրա գտնվում են Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը: Ընդհարումների ժամանակ հատկապես ծանրագույն իրավիճակում են հայտնվել Քյուրակ-Չայ գետի ստորին հովտում գտնվող հայկական Ղարադաղլու, Խոյլար և Սարով գյուղերը, որոնք կտրված լինելով հայկական գյուղերից ու շրջապատված լինելով թուրքական բնակավայրերով, փաստորեն հայտնվել էին շրջապատման մեջ:

Վերոհիշյալ գյուղերի բնակիչները շատ թույլ էին զինված ու բացարձակապես պատրաստ չէին ինքնապաշտպանության: Տեղիք տալով հարևան թուրքական գյուղերի բնակիչների կողմից իրենց նկատմամբ պարբերաբար կրկնվող բռնություններին ու սպանություններին, նրանք թողնում են իրենց բնակավայրերն ու տեղափոխվում այդ շրջանի ամենամեծ՝ 6-700 տնտեսություն ունեցող Գետաշեն գյուղը: Սակայն, դեռևս Գետաշեն չհասած, Չայլար գյուղի մերձակայքում հարձակման ենթարկվում թուրքերի կողմից: Բարեբախտաբար հարձակման ենթարկվածներին ժամանակին օգնության են հասնում Գետաշենի մարտական ուժերը, որոնց պաշտպանությամբ գյուղացիների բազմությունը կարողանում է անկորուստ հասնել Գետաշեն:

Թուրքեր կողոպտում են գյուղի մինչև վերջին ունեցվածքը, ապա հրդեհում հայերի տները:երի կորուստը՝ հաշված ընդամենը 150 տուն, իւրաքանչիւրը տան վնասը շէնքերի եւ մթերքների համար միասին վերցրած 5-6000 ր., կը լինէր ոչ պակաս 70-80.000 ռուբ., դեռ չը հաշուած այն կորուստները, որ նրանք կրել էին եւ մինչեւ այժմ էլ կրում են դաշտերի անմշակ մնալուց »[1]:

Բացի վերոհիշյալ գյուղերից, թուրքերի հարձակման ու ավարառության թիրախն են դարձել եւս մի քանի հայկական գյուղեր, որոնց կորուստը կազմում է «1. Ֆրիդոնովի շքեղ ջրաղացն իր շինութիւններով, որի վնասը հասնում էր 40-50.000 ռուբլու, 2. Առաքելեանի կալուածքը-20դեսեատին այգին իր շինութիւններով եւ 600 դեսեատին վարելահողը-կրելով 70-80.000 ռուբլու վնաս եւ 3. Ղորղանեանի կալուածքը-50 դեսեատին այգին, շքեղ տունն իր շքեղ կահաւորութեամբ, պահեստ»[2]:

Ըստ Ա-Դ-ի «Այդ երեք գիւղերը 12.000 վեղրօ հին եւ նոր տեսակի գինիներով եւ 250 դեսեատին վարելահողը-ունենալով 150.000 ռուբլու կորուստ»[3]:

Բերված տվյալները վկայում են, որ հայ գյուղացիները ընդհարումների սկզբնական շրջանում կրել են նյութական հսկայական կորուստներ: Բայց այդ կորուստները կարող էին չլինել, եթե հայ բնակչությունը իր կարողությունների գեթ փոքրագույն մասը տրամադրեր զենք ու զինամթերք գնելուն, զինվեր և կազմակերպեր իր բնակավայրի ինքնապաշտպանությունը:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 395, 5, էջ 28:
[2] Նույն տեղում, էջ 28:
[3] Տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 327-328:

Գանձակ քաղաքի կոտորածից հետո թուրքերն ավելի են ուժեղացնում իրենց գործողությունները և Գետաշենն ու հայկական մյուս գյուղերը մեկուսանալով, զրկվում են միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորությունից: Ապրիլի.. դեկտեմբերի 10-12-ին Չայլարի թուրքերը երկու անգամ հարձակվում են հայկական Աբլահ գյուղի սահմանների վրա և չհանդիպելով դիմադրության՝ առաջին անգամ տանում են 85, երկրորդ անգամ՝ 100 գլուխ տավար:

Այդ դեպքերից հետո թուրքական կողմը հայերի բնակավայրերը, մասնավորապես Գետաշեն, Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը իսպառ կործանելու ու նրանց հարստությունը բռնագրավելու նպատակադրությամբ պատրաստվում է ավելի լայնածավալ հարձակումների, բայց այդ տարածաշրջանում իրադարձությունները զարգանում են բոլորովին այլ ուղղվածությամբ:

Քանի որ մինչ այդ հայկական կողմը շատ թույլ էր իրեն դրսևորել, ուստի թուրքերն ավելի քան վստահ են եղել, որ այդ շրջանում հայերը ոչ մի հնարավորություն չունեն դիմելու հարձակողական գործողությունների: Անհրաժեշտ էր օգտագործել թուրքերի համանման վերաբերմունքը, այն է չափից դուրս ունեցած ինքնավստահությունը և անսպասելի ու վճռական հարված հասցնել Գյուլիստանի շրջանի թուրքական բնակավայրերին:

Գանձակի նահանգում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Գյուլիստանի տարածքում արդյունավետ հարձակողական գործողություններ կենսագործելու համար Գանձակի Զինվորական մարմինը, իր տրամադրության տակ դեռևս չուներ անհրաժեշտ քանակությամբ պատրաստի մարտական ուժեր: Բայց չափազանց կարևոր էր արմատական բեկում մտցնել նաև այդ տարաշրջանում ընթացող ընդհարումներում և վճռական հարված հասցնելով թշնամուն՝ ապահովել հայ բնակչության անվտանգությունն ու ունեցվածքը:

Նախորդ կռիվների փորձը միանշանակ ապացուցել էր, որ կարելի էր ակնկալել հաջողություն, եթե վտանգված շրջանը ուղարկեին թեկուզև փոքրաքանակ, բայց փորձառու և ժողովրդի ու զինվորների շրջանում արժանի հեղինակություն վայելող մարտական ուժեր:

Գանձակի Զինվորական մարմնի և անձամբ ընդհանուր հրամանատար Համազասպի որոշմամբ այդ չափազանց կարևոր առաջադրանքը հանձնարարվում է նախորդ կռիվներում իրենց հրաշալիորեն դրսևորած, Ղարաբաղի հերոս զավակ Ալեքսան Բալասյանին, որի գլխավորած ընդամենը 20 բաջավարժ մարտիկներից բաղկացած մարտական խումբը դեկտեմբերի սկզբներին Գանձակից մեկնում է Գետաշեն: Մարտախմբի կազմում Գետաշեն է մեկնել նշանավոր Բաղշին, վավերագրության բնութագրմամբ «...անուեներ հրոսակապետ Բաղշին, մեր զինուորների ու մեր նահանգի հայ ժողովրդի սակաւաթիւ պարծանքներից մինը...»:

Քանի որ թուրքերը յուրաքանչյուր պահի կարող էին հարձակվել Գանձակի վրա, այդ պատճառով Համազասպը մնում է քաղաքում:

Գետաշենում նրանց են միանում տեղացի և շրջակա գյուղերի զինավարժ երտասարդներ և Ալեքսան Բալասյանի ու Բաղշիի գլխավորած մարտական խումբը ունենում է 240 մարտիկներ: Հակառակորդին պարտության մատնելու համար նախևառաջ հարկավոր էր ճիշտ ընտրել հարձակման հարմար կետը և անսպասելի ու արագաց հարված հասցնել:

Հայկական գյուղերի վրա ձեռնարկած հարձակումներով մինչ այդ առավելապես աչքի էին ընկել հատկապես Չայլար, Սարիտու, Թոդան, Դարդարան և Դոզիլար գյուղերը: Հայ մարտական ուժերի հրամանատարությունը, որպես հարվածի առավել հարմար կետ ընտրում է Գետաշենի հյուսիսում գտնվող 60 տնից բաղկացած ամենաավազակաբարո՝ Չայլար գյուղը:

Այդ գյուղի ընտրությունը պատահական չէր, այն «...հարուստ գիղ է, ունի պտղաբեր հողեր, ընդարձակ, խոտավետ արոտավայրեր, պարապում է երկրագործությամբ ու անասնապահությամբ: Նոյեմբերի 19-ից յետոյ Չայլար է ժողովվում շրջակա մի քանի թուրք գիւղերի ազգաբնակչութիւնը: Դեկտեմբեր սկզբներին Չայլարում լինում է ադեն մօտ 200 տուն ժողովուրդ, թով մօտ 1200 հոգի, որոնց մէջ կուտղներ լինում են մօտ 300-350 հոգի»[1]:

Հայ մարտական ուժերը թեև զուտ քանակական ու նաև զինվածության առումով զգալիորեն զիջել են հակառակորդին, բայց դա բոլորովին չի խոչընդոտել նրանց գերազանց կատարելու առաջադրանքը:

Դեկտեմբերի 15-ի լուսաբացին հայ մարտական ուժերը Ալեքսան Բալասյանի ու Բախշիի առաջնորդությամբ հարձակվում են Չայլարի վրա: Հարձակման սկզբում հայկական կողմը թույլ է տվել մարտավարական որոշ վրիպումներ: Հակառորդին վճռական պարտության մատնելու և հնարավորինս շատ զոհեր պատճառելու համար պիտի Չայլարը շրջապատվեր բոլոր կողմերից, ամբողջովին: Բայց գյուղի աննպաստ աշխարհագրական դիրքի և տեղացի վալաղների անբավարար փորձառության և թույլ տված սխալների պատճառով դեպի Կուր գետը ձգվող տարածքում մի երկու տեղ բաց է մնում, որից հետագայում, գյուղից փախչելու ժամանակ օգտվում են թուրքերը: Մինչ հայ մարտիկների մի մասը աշխատում էր գտնել ու փակել դեպի գյուղ տանող ուղիները, քաջավարժ հայդուկների ու տեղացի զինվորների մարտախումբն Ալեքսան Բալասյանի ու Բախշիի առաջնորդությամբ սրընթաց ներխուժում է գյուղ և անկասելի հարվածներով արագորեն գրավում թուրքերի պաշտպանական դիրքերի մեծ մասը:

Թուրքերը կարողանում են ընդամենը 40 բոպե դիմադրել և անկարող լինելով հայ մարտիկների գրոհներին, սարսափահար փախչում են գյուղից: Չայլարի գյուղացիներին հաջողվում է փախչել շնորհիվ այն հանգամանքի, որ բաց էին մնացել գյուղից դեպի տափարկը տանող ուղիները:

Հայ մարտիկները գրավում են գյուղը և բռնագրաված տավարը տանում են Գետաշեն: Գյուղի գրավմամբ հայ մարտիկները սխալմամբ կարծել են, որ դրանով ամեն ինչ վերջացած է և իրենց այլևս ոչ մի վտանգ չի սպառնում: Հանկարծ մարտադաշտում հայտնվում են Չայլարին օգնություն շտապող մի քանի հարյուր զինյալներից բաղկացած ու շատ լավ զինված թուրքական հրոսակախմբերը: Հայ մարտիկները հայտնվում են ծանրագույն իրավիճակում, քանի որ նրանք ցրված էին մի քանի կետերում, այսինքն կենտրոնացված չէին, իսկ մի մասն էլ զբաղված էր բռնագրաված տավարը և այլ իրերը Գետաշեն տեղափոխելու գործով:

Չնայած լուրջ դժվարություններին, այնուամենայնիվ, Ալեքսան Բալասյանն ու Բախշին և նրանց առաջնորդած մարտիկները դույզն-ինչ խուճապի չեն մատնվում և սառնասրտորեն ընդունում են մարտադաշտում հայտնված թուրք հրոսակախբերի մարտահրավերը:

Թուրք զինյալների գրոհները որևէ արդյունք չեն տալիս: Հայ մարտիկները իրենց քաջագուն հրամանատարների առաջնորդությամբ ոչ միայն կարողանում են դիմակայել հակառակորդի գրոհներին, այլև մարտից դուրս են գալիս հաղթական: Բայց այդ օրը հայկական կողմը հաղթանակը նվաճում է ուժերի գերագույն լարումով եւ շատ մեծ զոհողության գնով: Զոհվում է «Խաչէնի մեծահռչակ հրոսակապետ, Խաչէնի առիւծ Բաղշին...Բաղշին կուում է առիւծի պէս, կուում էր առանց մի քայլ յետ նահանջելու...Կեանքի վերջի րոպէում հրացանը նետում է իր ընկերներին, կարողանում է արտասանել միայն՝ «ազատիր հրացանս»[1]:

Չայլարի կռվում, բացի Բաղշիից, զոհվում են նախորդ մարտերում իրենց քաջաբար դրսևորած ևս մի քանի մարտիկներ: Այնուհանդերձ, չնայած այն իրողությանը, որ այդ կռվում հայկական կողմը թեև ունեցել է շատ ցավալի ու շոշոփելի կորուստներ, բայց Չայլարի գործողությունը կարելի է գնահատել հաջողված, քանի որ վերացվեց հայ գյուղերի համար չարիք համարվող, թուրք հրոսակախմբերի հավաքատեղիի վերածված գյուղը:

Չայլարի դժվարագույն, բայց հաղթական կռվից հետո հայ մարտական ուժերը Ալեքսան Բալասյանի գլխավորությամբ շարունակում են թուրքական բնակավայրերի վրա ծրագրած հարձակումները և տանում են մի շարք հաղթանակներ: Մարտերում Ալեքսան Բալասյանի, զոհված Բաղշիի ու մյուսների հերոսական կերպարը մեծ ոգևորություն է առաջացրել: Գյուլիստանի մի շարք հայկական գյուղերում կազմակերպվել են մարտական խմբեր: Հայ-թուրքական ընդհարումներում տեղի է ունեցել արմատական բեկում:

Հայ ինքնապաշտպանական ուժերի գործողությունների հետևանքով «Գետաշէնի ու շրջակայ հայ գիւղերի դաշնակցական կամաւոր զինուորների ձեռքով ոչնչացած են հետեւեալ թուրքական գիւղերը՝ Մօլլա-Ջալու, Դօզիլար, Սարու, Թեօղան ու Հաջի- Միամեատլու: Բուզլուխ հայ գիւղի՝ նրա շրջակայ միւս հայաբնակ գիւղերի զինուորները ոչնչացրել են՝ Բալուղաղ, Ալկի-Ուշաղի, Բայրամլու ու Ենգջա թուրքական գիւղերը: Էրքեջ հայ գիւղի զինուորները ոչնչացրել են Գիւրզարլար գիւղը: Ամեն տեղ, որտեղ կառավարութիւնը զօրքերը չեն խանգարել մեր

[1] ՀՅԴ ԿԱ» թղ. 395, գ. 5, էջ 18:

[1] Նույն տեղում, էջ 20:

զինորներին ու վերջիններս հնարատրութիւն են ունեցել թուրքերի դէմ ազատ գործելու՝ չնայած մեր հակառակորդների գերազանց թիւին. մեր տղերքը միշտ յաղթող են հանդիսացել ու միշտ էլ անվնաս թով զոհեր են տուել իրանցից»[1]:

Թոփալ-Հասանլուի ու նրա սահմանամերձ Դարաբեկլու. Քարա-Եաթաղ գյուղերի և հատկապես Սեգյոյրուի. ինչպես նաև Նուզգարի և Գյուլիստանի շրջանում նկատուած հաղթական մարտերը մեծ նշանակություն ունեցան ոչ միայն այն պատճառով, որ ոգեշնչեցին. մարտական ոգի ներարկեցին գավառի ու քաղաքի հայ բնակչությանն և բարձրացրեցին նրա մարտնչելու տրամադրվածությունը. այլև զգալի տպավորություն գործեցին թուրքերի վրա: Նրանք տեսան ու համոզվեցին, որ այսուհետև այլևս հնարավոր չէ անպատիժ կերպով ոտնձգություններ կատարել հայ բնակչության նկատմամբ: Վերոհիշյալ հաղթական մարտերից հետո թուրք հրոսակախմբերը. երկյուղելով հայ մարտական ուժերի պատասխան հակահարվածներից. դադարեցնում են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկվող հարձակումները:

Գանձակի գավառում տեղի ունեցած կռիվների ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ թուրքերը կարողացել են խուսափել ջախջախումից շնորհիվ ռուսական զորքի միջամտության: Արդեն որևէ գաղտնիք լինել չէր կարող, որ կռիվների հետագա շարունակման դեպքում թուրքական հրոսակախմբերն անկասկած կջախջախվեին, և հայ մարտախմբերը կարող էին գավառն ամբողջովին մաքրել թուրք բնակչությունից: Դեպքերի նման զարգացումը ցարիզմի ծրագրերից բացարձակապես դուրս էր: Այդ պատճառով ամենաճակատագրական պահին ռուսական զորամասերը հայտնվել են մարտադաշտում և օգնել թուրքերին՝ փրկվելու վերջնական ջախջախումից:

Ավելին, իշխանությունների հրահանգով նահանգում հայտնվում են պատժիչ զորամասեր, որոնք փորձում են, անգամ թնդանոթների կրակի սպառնալիքով, զինաթափել Գանձակ քաղաքի ու գավառի հայ ինքնապաշտպանական մարտախմբերին: Զուգահեռաբար, համանման գործողություններ նրանք իրականացրել են նաև նահանգի մյուս գավառներում, իհարկե, առաջին հերթին Զանգեզուրում և Արցախում:

Ընդհարումների ընթացքում Գանձակի նահանգի ինքնապաշտպանական ուժերը հիմնականում ՀՅԴ ջանքերով ստացել էին զգալի քանակությամբ զենք ու զինամթերք: Կարելի է ասել, որ ինչ-որ չափով լուծվել էր նահանգի հայ բնակչությանը զինելու խնդիրը: Քանի որ նահանգի իշխանությունները պատժիչ զորամասերի միջոցով ձգտում էին զինաթափել հայ բնակչությանը, ուստի ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի ու Զինվորական մարմնի առաջնահերթ խնդիրն էր թույլ չտալ, որպեսզի իշխանությունները բռնագրավեին մեծ դժվարությամբ ձեռք բերած զենքն ու զինամթերքը:

Ի՞նչ պիտի արվեր:

[1] Նույն տեղում, էջ 28:

Գանձակի ՀՅԴ կոմիտեի կազմած տեղեկագրի «Զենքի պահեստները» բաժնում տեղ գտած տեղեկություններից պարզվում է, որ Գանձակում ՀՅԴ Արևելյան բյուրոյի ներկայացուցիչ Աբր. Գյուլխանդանյանը այդ խնդիրը լուծելու համար, 1906 թ. աշնանը տեղական մի քանի ընկերների գործակցությամբ վստահելի անհատների տներում գաղտնի պահեստներ է շինել տալիս և զենքն ու զինամթերքը տեղափոխում ու թաքցնում է այդ նույն պահեստներում[1]:

Նույն տեղեկագրի վկայությամբ «Դիւրին գործ չէր մի քանի հարիւրի հասնող հրացաններն ու ատրճանակները, ինչպէս նաեւ տասնեակ հազարաւոր փամփուշտներ տեղափոխելը, այն էլ հալածանքի մղձաւանջի տակ ապրող ժողովրդի մօտ»[2]:

Չկարողանալով հայտնաբերել հայերի զենքի պահեստները, նահանգի ոստիկանությունը հետևողականորեն շարունակում է որոնումները: Զենքի պահեստների անվտանգության ապահովումը հանձնարարված էր ՀՅԴ տեղական կոմիտեի անդամ Մանվել Ենգիբարյանին, որը մի քանի ընկերների համագործակցությամբ, թեև մեծագույն դժվարությամբ, այնուամենայնիվ, կարողացել է կատարել կուսակցության պատասխանատու հանձնարարությունը:

«...ցարական ոստիկանութիւնը,-նշում է «Տեղեկագիրը»,- չկարողացաւ մեր պահեստների տեղը գտնել: Անտանգ անցաւ նաեւ յաճախակի զէնքի տեղափոխութիւնները, որ ստիպուած էինք կատարել տան տէրերի պահանջմամբ եւ կամ մենք գտնելով աւելի յարմար պահեստներ եւ զենքերը տեղափոխելով, տեղատրում էինք նոր պահեստներում»[3]:

Ի՞նչ եղան պահեստավորած զենքերը: Այդ նույն «Տեղեկագիր»-ի հավաստմամբ պահեստավորած զենքերի մի մասը, համապատասխան քանակության փափուշտներով 1908 թ. տեղափոխվել է Երեւան, իսկ 1912 թ. աշնանը՝ Վան: Գանձակի ՀՅԴ կոմիտեն իր տրամադրության տակ թողել է ընդամենը «...հարիւր ընտիր հրացաններ և ատրճանակներ ու որոշ քանակութեամբ փամփուշտներ: Այս զէնքերը շատ լաւ վիճակի մէջ կարելի եղաւ անտանգ պահել մինչև 1917թ. աշնանը և առանձին դաշնակցական խմբով մասնակցել 1917-18թթ. Գանձակի հայ-թաթարական կռիւներին: 1918 թ. յունիսին տաճկական զօրքը Գանձակը գրաւելուց յետոյ մեր այդ զէնքերը, ինչպէս և ժողովրդի սեփական զէնքերը չքացան բոլշեւիկների տիրապետութեան հետեւանքով»[4]:

Ընդհանրացնելով Գանձակ քաղաքում ու գավառում 1905-1906 թթ. տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների արդյունքները, կարելի է վստահաբար ասել, որ հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունների հարկադրանքով թուրքական կողմը պարզում է սպիտակ դրոշը և իշխանությունների աջակցությամբ դիմում հաշտության:

[1] ՀՅԴ ԿԱ, թծ. 394, գ. 2, էջ 15:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 16:
[4] Նույն տեղում:

3. 2. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Զանգեզուրը, թեպետ մասն էր կազմում Գանձակի նահանգի, բայց կազմակերպական առումով ընդգրկվում է Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ գործող Երևանի նահանգի ինքնապաշտպանական շրջանի կազմում: Զանգեզուրը Դումանի գլխավորած ինքնապաշտպանական շրջանի մաս կազմող մյուս բնակավայրերի համեմատ ամենաարնդարձակն էր: Գավառում մեծ թիվ էր կազմում մահմեդական բնակչությունը, որը մարտական առումով թուրք բեկերի գլխավորությամբ վաղորոք շատ լավ կազմակերպված էր ու զինված: Այդ պատճառով Զանգեզուրի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու և առաջնորդելու համար անհրաժեշտ էին առավել կարող, ազատագրական պայքարում նշանակալի կշիռ ու հեղինակություն ունեցող անվանի գործիչներ:

Այդ օրերին նոր-նոր կազմակերպվող մարտական խմբերի հրամանատարների կազմում էր նաև Սեբաստացի Մուրադը և նրա անբաժան զինակիցներ Կայծակ Առաքելի, Գյումուշխանի Ավոն և Մեշեդի Ավետիսը: Նկատի ունենալով ազատագրական պայքարի գործիչների շրջանում Սեբաստացի Մուրադի ունեցած հեղինակությունն ու բազմաթիվ կռիվներում ձեռք բերած փորձառությունը՝ Նիկոլ Դումանը նրան է հանձնարարում Զանգեզուրի ինքնապաշտպանության հրամանատարությունը, որի մասին ՀՅԴ Արևելյան Բյուրոյին հայտնում է 1905 թ. հունիսի 30-ին թվագրած նամակում. «...Ռաշիտին» յետ կանչեցի: Հրահանգ տուի, որ Մուրատը իր խմբով միանայ Ռաշիտի խմբին եւ ընդհանուր հրամանատարութիւնը վերցնի իր վրայ...»[1]:

Նիկոլ Դումանն անշուշտ տեղյակ էր Գանձակի շրջանում ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից Գանձակի նահանգում լիազոր նշանակված Ռաշիդի և Արամայիս Ազնավուրյանի հետ կապված անցանկալի, իսկ տվյալ իրավիճակում վնասակար միջադեպին և այդ անկառավարելի կացությունը կարգավորելու նպատակով, ինչը մինչանակ ապացուցեց ժամանակը, կատարում է վերոհիշյալ խիստ օգտակար և շատ ճիշտ որոշումը:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրի հայության համար հիրավի կարևորագույն նշանակություն ունեցող, պատմական այդ պահի հիշատակմանը՝ Մելիք-Թանգյանը նշում է. «Մի օր, Գորիսում սենեակումս նստած, աչքերս յառած պատուհանին նայում եմ փողոցը, տեսնում եմ մի ձիաւոր, յետեւին կապած խուրջին, կամացուկ իջաւ քարանասարայ: Ապա երեւաց երկրորդ ձիաւորը նրա ետեւից, յետոյ մի երրորդը: Այդ րոպէին հասաւ նաեւ Տաքեի վանքի մեր սուրհանդակը եւ ասաց, որ անմիջապէս ճանապարհեմ դեպի վանքը, որտեղ մարդիկ են եկել եւ կամենում են ինձ տեսնել: Իսկոյն նստեցի ձին եւ գնացի Տաքեւ: Մի օր յետոյ Սիսիանից վանք է մտնում Սեբաստացի Մուրադը ձիաւոր 50 հայդուկներով»[1]:

Մուրադը Կայծակ Առաքելի, Ավոյի և Մեշեդի Ավետիսի ուղեկցությամբ Զանգեզուր է գալիս՝ ունենալով ընդամենը 50 մարտիկներ: Հաշված օրերի ընթացքում նրա գլխավորած ջոկատի անձնակազմը համալրվում է տեղի կամավորներով և բազմապատկվելով հասնում է 200-ի: Այս գործում նրան զգալի աջակցություն է ցույց տվել Զանգեզուրի հոգևոր առաջնորդ վարդապետ Մելիք-Թանգյանը:

Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպմանը խոչընդոտում էր մի ցավալի իրողություն, որն այդ ժամանակահատվածում բնորոշ էր հայկական գրեթե բոլոր գավառներին:

Զանգեզուրի երիտասարդության զգալի մասը աշխատանք որոնելու նպատակով ձգտում էր մեկնել տարբեր քաղաքներ: Հարց է ծագում, իսկ այդ դեպքում ովքե՞ր պիտի ընդգրկվեին նոր-նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերի կազմում ու պաշտպանեին իրենց հարազատ օջախը, եթե գենք կրելու ընդունակ երտասարդությունն ազգի համար բախտորոշ ժամանակահատվածում թողնում էր իր հայրենի գյուղն ու մեկնում օտար երկրներ:

Գավառի երիտասարդությանը իրենց ծննդավայրում պահելն ու նրան մարտախմբերում ընդգրկելը դառնում է Զինվորական մարմնի առջև ծառացած կարևորագույն ու հրատապ խնդիրներից մեկը: Իսկ նման իրավիճակում այլ ընտրանք չկար և չէր կարող լինել: Գավառում ստեղծված տագնապալի իրավիճակը ՀՅԴ «Միութիւն» Զինվորական մարմնին թելադրում էր դիմել վճռական քայլերի և թույլ չտալ ու խստագույնս արգելել գենքի ընդունակ երտասարդությանը հեռանալու իրենց բնակավայրերից:

Այդ նպատակով Զինվորական մարմինը գավառի բոլոր գյուղերում տարածում է հետևյալ հրահանգը.

« 1. Ոչ ոքու չհեռանալ իրենց բնակավայրերից.

Տանուտէրները վկայական չտան անցագրերի համար.

Իւրաքանչիւր ոք, ով կցանկանայ գնալ օտարութեան(եթէ նոյն իսկ ամենակարճ ժամանակով) պիտի գայ մեզ յայտնէ և ստանայ թոյլտուութիւն, ով եթէ հեռանայ, նորա հորը, եղբօրը եւ ազգականներին կենթարկենք տուգանքի եւ կբանտարկէնք, մինչեւ որ օտարութեան գնացածը չվերադառնայ:

Իր ժամանակին պիտի անենք կարգադրութիւն, որ միւս քաղաքներում Միութեցիներին արձակեն պաշտօնից եւ յետ դարձնեն հայրենիք:

«Միութիւն» Հ. Յ. Դ Զինուորական մարմին»[2]:

Զինվորական մարմնի ընդունած այդ որոշումը միանգամայն հիմնավորված էր: Մուրադը զինակիցների համագործակցությամբ կարողանում է Զանգեզուրի մի շարք գյուղերում կազմավորել ինքնապաշտպանական մարտախմբեր, որոնց

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 23ա, էջ 1:

[1] Վարանդեան Մ., Մուրատ, 1931, էջ 113:
[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց 1, գ. 34:

շարքերում առաջին հերթին ընդգրկում էր ռուսական բանակում ծառայած, զենքին և մարտական կյանքին բաց ծանոթ երիտասարդների:

Զանգեզուրում և մասնավորապես Ղափանի շրջանում հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելիս Մուրադն ու նրա զինակիցները ի սկզբանե կարողանում են ճիշտ արժևորել մի կարևոր հանգամանք ևս. Զանգեզուրի մահմեդականությանը առաջնորդում էին հիմնականում մի քանի թուրք ցեղապետեր՝ բեկեր, որոնք իրենց արյունակիցների միջավայրում ունեցած իրական իշխանությամբ և հեղինակությամբ շատ մեծ վտանգ էին ներկայացնում: Հայկական բնակավայրերի վրա թուրքերի ձեռնարկած հարձակումները ժամանակին չեզոքացնելու համար նախ և առաջ հարկավոր էր ուշադրության կենտրոնում պահել հենց նրանց գործողությունները: Որպես կանոն, բոլոր թուրք ցեղապետերն ունեին իրենց զինյալ հրոսակախմբերը և, անհրաժեշտության դեպքում համագործակցում ու աջակցում էին միմյանց:

Սեբաստացի Մուրադը իր զինակիցների՝ Կայծակ Առաքելի, Ավոյի և Մեշեդի Ավետիսի զինակցությամբ կազմակերպում և ղեկավարում է Զանգեզուրի հայության ինքնապաշտպանությունը: Գրեթե մեկու կես տարի ընթացող կռիվներում Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերը նրանց հրամանատարությամբ ջախջախիչ պարտության են մատնում հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերին [1]:

Զանգեզուրում և հատկապես Ղափանի շրջանում Սեբաստացի նշանավոր ռազմիկի գլխավորած ինքնապաշտպանական ուժերի ծանրակշիռ հաղթանակները ոչ միայն փոխում են հայերի աննպաստ կացությունը, այլև վճռական ազդեցություն գործում մահմեդական վերնախավի դիրքորոշման և տրամադրվածության վրա: Ամենուրեք հայ ինքնապաշտպանական ուժերի վճռական հարվածներից ջախջախված մահմեդական ցեղախմբերից շատերը ճարահատյալ դիմում են հաշտության:

Համաձայն Ներսես Մելիք-Թանգյանի հավաստման.«Այնուհետև թուրքական խմբեր էին, որ գալիս էին Տաթևի վանքը, հաշտութիւն էին խնդրում, իմ միջնորդութեան էին դիմում, անիծում էին իրենց խաներին, որոնք կոտորածներին պատճառ էին եղած, անիծում էին, որ զուր տեղը կռուեցրին երկու հարեւան ժողովուրդներուն» [2]:

Զանգեզուրում ընդհարումները, շնորհիվ հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակների, ավարտվում են: Իշխանությունները հակամարտող կողմերի միջև կռիվները մարելու, վտանգված շրջաններում կարգ ու կանոն հաստատելու պատրվակով գավառի տարածքում են կենտրոնացնում պատժիչ զորամասեր, հիմնականում կոզակական հեծյալ ջոկատներ և անգամ հրանոթներով զինված զորավաշտեր: Հաշտության կոչելով հակամարտող կողմերին՝ նրանք գավառի հայ և մահմեդական ազգաբնակչությանը, կռիվներ սանձազերծելու, պետական օրենքները խախտելու մեղադրանքներ ներկայացնելով՝ սկսում են տուգանքներ սահմանել ու անգամ ոմբակոծության ենթարկել ու այրել գյուղերը: Պատժիչ զորամասերի հարվածների հիմնական թիրախը հայկական բնակավայրերն էին:

Զարեվանդի գնահատմամբ «Ռուս կառավարությունը, երկու թշուն մեկ քարով զարնելու, թե՛ հայ և թե թուրք ազգայնականությունը մեկ հարվածով եւ իրարու ձեռքով ոչնչացնելու, անոնց անկախության ձգտումները խեղդելու այս առիթեն չափազանց գոհ՝ կատարեց ո՛չ միայն հանդիսատեսի, այլեւ հրահրողի դեր եւ ի վերջո թուրքերու սարքած ոճիրը պսակեց իր «պատժող արշավախմբերով» [1]:

ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի կազմած «Գանձակի պագրոմը» խորագիրը կրող զեկուցագրում, հեղինակները հայկական բնակավայրերի նկատմամբ իշխանությունների ու ըստ այդմ էլ պատժիչ զորամասերի դրսևորած այդօրինակ վերաբերմունքը պարզաբանում և հիմնավորում են հետևյալ փաստարկներով.

1. Հայ-թուրքական ընդհարումներում հայկական ինքնապաշտպանական ուժերի օր-օրի հզորացումն ու նվաճած անվիճելի հաղթանակների իրողությունը: Ցարական կառավարությունը համոզվեց, որ գնալով ավելի վտանգաւոր չափերի էր հասնում հայ ազգային-հեղափոխական կազմակերպությունների ու նրանց առաջնորդած մարտական ուժերի գործունեությունը:

2. 1906 թ. կեսերից սկսած ցարական իշխանությունները խիստ միջոցներ են ձեռնարկում խաղաղեցնելու նաև Անդրկովկասը: Քանի որ իշխանությունների գնահատմամբ Անդրկովկասում որպես առավել հեղափոխական ու վտանգավոր տարր դիտվում էր հայությունը, ուստի պատժիչ զորամասերը ուղարկում է հայկական գավառներ, հայերին զինաթափ անելու ու նրանց հեղափոխական տրամադրությունները արմատախիլ անելու նպատակով: Պատժիչ զորամասերը մի շարք հայկական գյուղերի վրա կրակ են տեղում նույնիսկ թնդանոթներից:

3. Թուրքերին չի զինաթափում, թողնում է զինված, որպես նեղ օրերի համար կույր գործիք [2]

Օրինակ, հայկական կողմին պատժելու նպատակով իշխանությունները իրականացնում են. «...Ղաթար եւ Քեարխանա թուրք գիւղերը աւերելու պատճառով իւրաքանչիւր գիւղացի ենթարկուեց 10 ր. տուգանքի: Իսկ երբ գեներալ Բաուերը եկաւ, տուգանքները դարձրեց 25-ական ռուբլի, իւրաքանչիւր ծխից: Եւ շնորհիւ այդ կարգադրութեան տուգանքներ առան՝ Վաչագանից-10-75 ր., Բաղաբուրջից-925 ր., Կուտկումից-1200 ր., Բեխից-425 ր., Կավարտից-1200 ր. եւ Բարաբաթումից-1025 ռուբլի: Ռմբակոծեցին այդ բոլոր

[1] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Սեբաստացի Մուրադ, Երեւան, 2003, էջ 92-162:
[2] Վարանդեան Մ., Մուրատ, 1931, էջ 113:

[1] Զարեւանդ, Միացեալ անկախ Թուրքնիա, Երեւան, 1993, էջ 21:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 23ա, էջ 1:

գիւղերը ... Հագարակից-1200, Եղարդից-1100ռ., Միրքաթասից-480 ռ. եւ Ուժանիսից-570 ռուբլի»[1]:

Հակամարտությունը դադարեցնելու պատրվակով նման միջոցների գործադրումը հիանալի հնարավորություն է ընձեռում ցարական պաշտոնյաներին, սպաներին, կռիվները դադարեցնելու և խաղաղություն հաստատելու անվան տակ, բպանել գավառի հայ ու մահմեդական ազգաբնակչությանը, իհարկե առավելագույնս հայ բնակչությանը:

Նահանգի իշխանությունները տուգանք են սահմանում նաև Գենվազի շրջանի գյուղերի վրա. «Մեղրեցիներից առան 800 ռ., Վահրաւարցիներից-1800 ռ., Որդուբաթցիների ոչխարները քշելու համար. Կալերից-500 ռ., Վանքից 700 ռ., Լիշկից-800 ռ., Տաշտունից-700 ռուբլի»[2]:

Գավառում հաստատած իրավիճակի ու գյուղացիների նկատմամբ սպաների և զինվորների դրսևորած սանձարձակությունների հետ այլևս հնարավոր չէր համակերպվել, այլապես, առանց այդ էլ ծայրահեղորեն քայքայված գյուղերը կարող էին վերջնականապես սովամահության մատնվել: Անհրաժեշտ էր ինչոր ազդու, կանխարգելիչ քայլեր ձեռնարկել և սանձել գյուղերում սանձարձակությունների տրված ռուս զինվորներին:

«Այդ ժամանակ Փուխրուտում (Վերին Ղափանի հայկական գյուղերից-Հ.Գ.) է լինում մեր հերոս Մուրատը, լսելով գաւառապետի մտադրությունը, պրիստաւ Շահգալդիեւի միջոցով սպառնում է եւ առաջարկում զօրքը դուրս բերել, հակառակ դէպքում գաւառապետին եւ օֆիցէրներին տէռորի պէտք է տայ...»[3]:

Իշխանության ներկայացուցիչներին և Զանգեզուրի գավառապետին, անշուշտ, շատ լավ հայտնի էր հայ վրիժառուի սպառնալիքի արժեքը: Պրիստավ Շահգալդիից տեղեկանալով իրենց ահաբեկելու սպառնալիքի մասին՝ գավառապետը դադարեցնում է հալածանքներն ու գյուղերի ոմբակոծությունը և բավարարվում միայն թեթև տուգանքներ սահմանելով:

«Ամբողջ Ղափանի եւ Գենուազի հայ ժողովուրդը,- գրում է Մ. Վարանդյանը,- իր բուռն շնորհակալութիւնն է արտահայտում Դաշնակցութեան մարտիկներին՝ Մուրադին, Կայծակ Առաքելին, Աւետիսին, Խէչոին, Հայրիկին, Եռնօքին եւ բոլոր տեղական խմբապետերին ու քաջարի կռուողներին... Եթէ չը լինեին այդ մարտիկները եւ պատրաստած ոյժերը, վաղուց ամբողջ Ղափանի գիւղերը անդառնալի կորած կը լինեին...»[4]:

[1] «Դրօշակ», 1907, թիւ 3, էջ 41:
[2] Նույն տեղում, էջ 42:
[3] «Դրօշակ», 1907, թիւ 3, էջ 42:
[4] Վարանդեան Մ., Մուրատ, 1931, էջ 115:

3. 3. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախում Հ.Յ.Դաշնակցության կառույցները շնորհիվ Մարգար Ժամհարյանի (Մռավ), 1904թ. միավորվելով կազմել են ՀՅԴ առաջին «Ապառաժ» կոմիտեն: Համաձայն այդ կոմիտեի կազմած տեղեկագրի, Արցախում «... 1905-ին բոլոր գիւղերը, բացի 4-5 գիւղից կազմակերպուած էին Դաշնակցութեան դրօշի տակ... զանազան տեղեր եղել են ենթակոմիտեներ, զինուորական ներկայացուցիչներ, դատաւորներ: Այդ շրջանում կազմակերպութիւնը հանդիսացել էր իբրեւ մի կառաւարութիւն իր բոլոր ֆունկցիաներով»[1]:

Արցախի հայությունն ու ՀՅԴ կոմիտեն կարողանում են սկզբնական շրջանում խուսափել զինված բախումներից և պահպանել խաղաղ իրավիճակը: Բայց այդ խաղաղությունը խաբուսիկ էր և անկայուն: Ղարաբաղում տիրող խաղաղ իրավիճակը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ թուրքերի մի մասը՝ քոչվորները իրենց ոչխարի հոտերի հետ տարվա այդ ամիսներին գտնվում էին սարերում: Քոչվոր թուրքերը, որոնք իրենց կեցության թելադրանքով սերտ կապերի մեջ էին քրդերի հետ, որպես կանոն, համարվում էին մահմեդական բնակչության ամենաարկածախնդիր ու մարտունակ, իսկ հայության համար ամենավտանգավոր տարրը: Իրավիճակը կարող էր կտրուկ փոխվել աշնանը, այսինքն այն ժամանակ, երբ քոչվորները սարերից կիջնեին:

«Բոլոր նշանները,- նշում է Արամայիսը,-պարզ ցոյց էին տալիս, որ հայ-թրքական ընդհարումները Ղարաբաղում ևս հնարաւոր են դառնալու, քանի որ շահագրգռուած կողմերի մէջ անվստահութիւնը գնալով աւելի ու աւելի զարգանում է, իսկ տեղական իշխանութիւնը մատների արանքով է նայում բոլոր երեւոյթներին...Ուստի Դաշնակցութիւնը իր գործիչների ցանցով պատեց գաւառները-...ինքնապաշտպանութիւն կազմակերպելու համար»[2]:

Այդ իրավիճակում Հ.Յ. Դաշնակցության գործունեության ուղղվածությունը պիտի լիներ ժողովրդի զինումն ու ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը: Ինչպիսի՞ և ինչքան զենք ու զինամթերք ունեին Արցախի մարտական ուժերը: Համաձայն «Ապառաժ» ԿԿ-ի տվյալների, 1904թ. Խաչենի 22 գյուղերը(2000 ծուխ) ունեցել են ընդամենը 280 բերդան հրացան, յուրաքանչյուրը 15 փամփուշտով[3]:

Կռիվներ սկսվելու պարագայում այդ միջոցներով հնարավոր չէր կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն, իսկ թուրքական կողմը լրջորեն պատրաստվում էր հայկական կոտորածներ սանձազերծել նաև Արցախում: Այդ

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 77:
[2] ՀԱԱ, Ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, «Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, Թիլիս, 1907, էջ 6:»
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 10:

օրերին հայկական լրագրերին. մասնավորապես «Մշակ»-ին հասցեագրած թղթակցություններում հեղինակները. բազմիցս անդրադառնալով Ռուսաստանի տարբեր քաղաքներում թուրքերի կողմից զենք գնելու իրողությանը. առավելապես նշում են Արցախի թուրքերի անունները [1]:

Այդ նույն թղթակցություններից պարզվում է. որ ի տարբերություն հայերի. թուրքական կողմից զենք գնելու գործով զբաղվել են ոչ թե քաղաքական կազմակերպությունները. այլ առավել ազդեցիկ. մեծահարուստ դեմքերը [2]:

Այս առումով թուրքական կողմը. հայկականի համեմատ ուներ իր առավելությունն ու դրական հաշվեկշիռը:

Թղթակցություններում հեղինակները. դատապարտելով հայ մեծահարուստների անտարբեր վերաբերմունքը. գովեստով են արտահայտվում Ռուսաստանի տարբեր շրջաններում հանգրվանած արցախցի ու գանձակեցի գյուղացիների մասին. որոնք «...չընայած իրենց շատ աննպաստ պայմաններին եւ չքաւոր դրութեան. այնուամենայնիվ. չմոռացան իրենց լման ձգել ընդհանուր օգնութեան գործին մէջ՝ հայ աղէտեալ եղբայրների համար» [3]:

Չնայած մի շարք դժվարությունների. ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն. այնուամենայնիվ. կարողանում է մասամբ լուծել ժողովրդին զինելու խնդիրը: 1905թ. Խաչենի ինքնապաշտպանական ուժերը ունեցել են «...800 բերտան հրացան-150-ական փամփուշտներով. իսկ մոսին ու մաուզեր-120 հատ. յուրաքանչյուրը 200-ական փամփուշտներով» [4]:

Ջիվանշիրի շրջանի 33 գյուղեր 1904թ. ունեցել են 2 մոսին. 1100 բերդան. իսկ մեկ տարի անց 465 մոսին՝ յուրաքանչյուրը 150 փամփուշտով և 2000 բերդան՝ 50 փամփուշտով: Վարանդայում(5000 ծուխ) 1904թ. եղել է 250-300 բերդան. իսկ 1905թ.՝ 3500 բերդան 50-60 փամփուշտով և 300 մոսին 100-ական փամփուշտով: Շուշի քաղաքի մարտական ուժերը ունեցել են ընդամենը 300 հրացան: Բացի այդ ամենից. ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն կարողացել է պահեստավորել 250000 փամփուշտ և 200 հրացան [5]:

Տեղեկագրում բացակայում են Զանգեզուրի գավառի և Դիզակի շրջանի մարտական ուժերի տվյալները: Տևական և մեծածավալ կռիվների դեպքում զենքի ու զինամթերքի այդ քանակությամբ նույնպես հնարավոր չէր կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն և ապահովել հայ բնակչության անվտանգությունը:

«Չափազանց ծանր էր գնում.- նշում է Վարդանը.- զինման գործը: Մեր ժողովուրդը սովոր չէր զենքի. այդ զենքին սովոր էին թուրքերը: Յեւ մեր զինման գործը անցնում էր ճնշման. բռնութեան տակ: Ժողովրդի մէջ վորոշ

[1] ՀԱԱ, Ֆ. 227, ց. 1, գ. 395:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 10:
[5] Տե՛ս նույն տեղում:

քանակութեան զենք կար. կարելի էր եւ ձեռք բերել ի հարկէ փողով. բայց չէին ուզում փող ծախսել զենք ձեռք բերել. մանաւանդ ունեվոր դասակարգը...» [1]:

Զենք ու զինամթերքի խնդիրը հնարավոր էր լուծել. եթե ինքնապաշտպանության կազմակերպիչները. այն է՝ հայ ազգային կուսակցությունները ունենային անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Զենք գնելու նպատակով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն Արցախի գյուղերում կազմակերպում է դրամահավաք: Համաձայն «Ապառաժ» ԿԿ կազմած տեղեկագրի. դրամահավաքի արդյունքում ամենամեծ գումարը Խաչենի. Վարանդայի ու Ջիվանշիրի շրջաններում հանգանակել է Համազասպը: Հավաքված գումարներով գնել են զենք և զինամթերք ու տրամադրել ինքնապաշտպանական ուժերին [2]:

ՀՅԴ բյուրոյի կողմից Արցախի ինքնապաշտպանական ուժերի(Զինվորական մարմին) հրամանատար է նշանակվում Խանասորի Վարդանը: Ուշագրավ է. որ Վարդանի թեկնածությունը որպես Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարի. Ս. Զավարյանի մասնակցությամբ Բաքվում կայացած խորհրդաժողովում առաջարկել է Նիկոլ Դումանը [3]:

Ինչպիսի՞ մարտավարություն էր ընտրելու ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը. եթե կռիվները բռնկվեին ու ծավալվեին Արցախի շրջաններում: Մարտավարության հարցում Դաշնակցության մեջ կար երկու հակոտնյա տեսակետներ: Սկզբնական շրջանում ավելի տիրապետող էր այն տեսակետը. համաձայն որի պիտի խաղաղություն պահպանել և թուրքերի հարձակման դեպքում միայն պաշտպանվել: Երկրորդ տեսակետի կողմնակիցները առաջարկում էին նախահարձակ լինել. ճնշել թուրքերին ու թույլ չտալ նրանց հարձակվելու հայերի վրա:

Այդ տեսակետը պաշտպանող Բաքվի Զինվորական մարմինը. որի ղեկավարն այդ ժամանակ Նիկոլ Դումանն էր. ապրիլ-մայիս ամիսներին դիմել է ՀՅԴ Արևելյան բյուրոյին և առաջարկել. որ կռիվների բռնկման պարագայում բոլոր ինքնապաշտպանական շրջաններն առաջնորդվեն այդ՝ հարձակողական բնույթի մարտավարությամբ:

Բաքվի զինվորական մարմնի առաջարկությունը քննարկելու նպատակով 1905 թ. հունիսի 21-ին գումարվում է ՀՅԴ «Քարի» (Ալեքսանդրապոլի) կոմիտեի ժողովը. որի աշխատանքներին մասնակցել են ՀՅԴ Արևելյան բյուրոյի. Մեծ-Քաղաքի(Թիֆլիս). Ապառաժի (Արցախ). Քարի (Ալեքսանդրապոլ) և Ջրաբերդի (Կարս) ՀՅԴ կառույցների ներկայացուցիչները: Ելույթ ունեցողները մերժել են Բաքվի Զինվորական մարմնի առաջարկությունը և պաշտպանել են նախահարձակ չլինելու ու միայն պաշտպանվելու մարտավարությունը:

[1] ՀԱԱ, Ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 37-38:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 10:
[3] Տե՛ս նույն տեղում, ծ. 403, գ. 4, էջ 3:

Առավել ուշագրավ է և անհասկանալի հատկապես ՀՅԴ Արևելյան բյուրոյի ներկայացուցչի տեսակետը. «Նախահարձակ լինելը կարող է մեծ կոտորած առաջացնել Թուրքիայի և Պարսկաստանի փոքրաթիվ հայերի մեջ: Մեր կոմունիստական կեանքը տարիներով յետ կը մնայ: Մեր նպատակը պէտք է լինի հանգցնել կրակը և ոչ թէ կոտորած առաջացնել:

...Յարձակուելով, մենք երեք բշնամու հետ պիտի գործ ունենանք՝ ռուսը, բաթարը եւ մասամբ վրաց ազգուականութիւնը: Ես հակառակն եմ Բագուի առաջարկին: Դա մեր կողմից անխոհեմութիւն կլինի»:

Պիտի ընդունել, որ դա ՀՅԴ Արևելյան բյուրոյի պաշտոնական տեսակետն էր, որը ինչպես աներկբայ ցույց տվեց ժամանակ, ոչ միայն կենսունակ չէր, այլև վտանգավոր և անարդյունավետ:

1905թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում կայացած ռայոնական ժողովում թեպետ շեշտվում է, որ պասիվ ինքնապաշտպանությունը նպատակահարմար և արդյունավետ մարտավարություն չէ, բայց, այնուամենայնիվ, այդ հարցի վերաբերյալ չի կայացվում միանշանակ որոշում, որը պարտադիր լիներ ինքնապաշտպանական շրջանների հրամանատարության համար: Ավելին, ռայոնական ժողովը ելակետ ունենալով ապակենտրոն սկզբունքով գործելու ավանդույթը՝ որոշում է.«...ակտիվ յարձակողական տակտիկը վերապահել տեղական մարմիններին եւ զինվորական լիազորներին» [1]:

Փաստորեն այդ որոշմամբ մարտավարության ընտրությունը վերապահվում է ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությանը: Վարդանի գլխավորած Զինվորական մարմինը սկզբնական շրջանում ընտրում է պաշտպանողական բնույթի մարտավարություն և աշխատում տեղիք չտալ ու խուսափել կռիվներից [2]:

Թուրքական կողմի նախապատրաստությունները ցույց էին տալիս, որ նրանց հարձակման գլխավոր նշանակետերը լինելու էին Շուշին և Գանձակը: Շուշին, կարելի է ասել, որպես Արցախի մայրաքաղաք, իր մշակութային և կրթական հաստատություններով ու գերիշխող դիրքով ռազմավարական կարևորագույն նշանակություն ուներ արցախահայության համար: Թուրքական կողմը համոզված էր, որ գրավելով Շուշին, կարելի էր սարսափի մատնել արցախահայությանն ու արագորեն հայաթափել Արցախը:

Շուշիի բնակչության մեծամասնությունը հայեր էին: Թուրքական կողմը, նկատի ունենալով, որ միայն Շուշիում ունեցած ուժերով անհնարին կլիներ ընկճել հայ մարտիկների դիմադրությունը, ծրագրում է քաղաքի վրա հարձակում ձեռնարկել նաև երկրորդ՝ Աղդամի ուղղությունից:

Կանխատեսելով անխուսափելի վտանգը՝ հայկական կողմը նույնպես պատրաստվում էր: Ճիշտ գնահատելով հակառակորդի մտադրությունը՝ Վարդանի գլխավորած Զինվորական մարմինը իր ուշադրությունը նախ և առաջ կենտրոնացնում է Շուշիի պաշտպանության վրա: Նկատի ունենալով քաղաքի բացառիկ նշանակությունը՝ Վարդանը իր հրամանատարական կենտրոնական մարմնի շտաբը ընտրում է Շուշին:

Ինչպես Երևանի նահանգում, Արցախում ևս Զինվորական մարմինն ու ՀՅԴ կենտրոնական կոմիտեն փորձում են կազմավորել ժողովրդական բանակ, որը պիտի դառնար կավարվեր կանոնավոր բանակում ընդունված կարգ ու կանոնների:

Թուրք հրոսակախմբերին դիմագրավելու նպատակով Զինվորական մարմինը քաղաքը բաժանում է թաղերի: Յուրաքանչյուր թաղ, որպես պաշտպանական առանձին հենակետ, ուներ իր թաղապետն ու թաղապետի օգնականը: Թաղերի՝ ռազմական տեսակետից կարևոր կետերը վերածվել էին մարտական դիրքերի: Յուրաքանչյուր դիրքում մշտապես հսկում էին 4 կամ 10 զինվորներից բաղկացած մնայուն մարտախմբեր: Կազմավորվում են նաև բուսցիկ մարտախմբեր, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի օգնության շտապեին վտանգված շրջաններին [1]:

Եվլախ- Շուշի ճանապարհը փակ լինելու պատճառով անհամեմատ դժվար է եղել զենք ու զինամթերքի տեղափոխությունը: Դաշնակցությունը իր կառույցների միջոցով և բնակչության աջակցությամբ կարողանում է յուրաքանչյուրների, ձորերի վրայով ու հայաբնակ վայրերով մեծ դժվարությամբ Թիֆլիսից և Գանձակից զենք ու զինամթերք տեղափոխել Շուշի:

Զենք ու զինամթերքի տեղափոխությունը ավելի դժվարին է եղել, երբ այն տեղափոխել են մեծ ծավալ ու կշիռ ունեցող արկղներով:

«Ընկերներ»-ին գրած նամակներից մեկում (1905թ. օգոստոսի 10), նկատի ունենալով այդ իրողությունը, Վարդանը առաջարկում է, որ այն ապրանքները, որոնց արկղերով ուղարկում են իրենց «...մի փութից աւել չլինի, բացի այդ արկղը ինքը ահագին ծանրութիւն ունէր: Աշխատեցէք ուղարկելուց որ արկղերը թեթեւ լինեն իսկ ամբողջ ծանրութիւնը մի փութից աւել չլինի, այդ ձեւով շատ յարմար է եւ շատ ապահով կստանանք»:

Եթե զենք ու զինամթերքի տեղափոխությունը Շուշի կատարվել է հայտնությամբ, ապա իրավիճակը բոլորովին այլ է եղել, ավելի դժվարին գյուղական բնակավայրերում: Վարդանը այդ նույն նամակում (1905թ. օգոստոսի 10), կանխատեսելով կռիվների բռնկման դեպքում Շուշիում հայերին հասանելիք կանությունը, միաժամանակ իր մտահոգությունն է հայտնում գավառի մի շարք գյուղերի անբավարար, թույլ պատրաստվածության վերաբերյալ և դարձյալ պահանջում զենք ու զինամթերք [2]:

Նկատի ունենալով այդ իրողությունը, Զինվորական մարմինը ուշադրությունը կենտրոնացնում է նաև շրջանների, հատկապես թուրքական բնակավայրերին սահմանակից հայկական գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպման վրա: Քանի որ սահմանափակ է եղել մոտիկ հրացանների քանակը, ուստի Զին-

[1] Նույն տեղում, թղ. 404, գ. 10, էջ 9:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, գ. 2, գ. 1, թ. 37-38:

[1] ՀՅԴ ԱԱ, ֆ. 404, գ. 9
[2] Նույն տեղում, գ. 8, էջ 1

վորական մարմինը մոտին հրացաններով առաջին հերթին զինել է առավել վտանգված սահմանամերձ բնակավայրերի ինքնապաշտպանական մարտախմբերին: Կռիվների ողջ ընթացքում շրջանների միջև անխափան գործել են կապն ու հաղորդակցության միջոցները [1]:

Զինվորական մարմնի կողմից ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրների մեջ էին մտնում քաղաքում և գյուղական բնակավայրերում ներքին կարգ ու կանոնի հաստատումն և վերահսկողությունը. հատկապես պայքարը գողության ու առանձին անբարո անհատների կողմից կատարվող տարբեր կարգի հանցագործությունների և չարաշահումներ դեմ:

Թեպետ իրավիճակը գավառում և քաղաքում խիստ լարված էր ու տագնապալի. բայց Զինվորական մարմնի ու ՀՅԴ «Ապառաժ» կոմիտեի ուշադրության կենտրոնում եղել է նաև դպրոցների խնդիրը: Դպրոցներն այդ օրերին անխափան կերպով շարունակել են գործել. բայց խիստ կերպով զգացնել է տվել ուսուցիչների պակասը:

«Ընկերներ»-ին հասցեագրած վերոհիշյալ նամակում նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Վարդանը գրում է. «Մտածեք եւ այստեղի դպրոցների համար ուսուցիչներ գտնել. որպեսզի կարողանանք դպրոցները մեր ձեռքում պահել» [2]:

Մինչև խմբային մեծածավալ կռիվների սկսվելը՝ օգոստոսի սկզբներին տեղի են ունենում փոքր ընդգրկումներ ունեցող զինված բախումներ Խաչեն գավառակի հայ գյուղացիների և քոչվոր թուրքերի միջև:

«Խաչէն գավառում.- հայտնում է Վարդանը.-սպանուած են երեք հայ, որի փոխարենը սպանուած են երկու յայտնի աւազակներ, որոնք հայերի սպանութեան մէջ մասնակից են եղել: Այստեղ քաղաքումն էլ մի թուրք է սպանուած թուրքերի ձեռքով, որին վերագրում են հայերին...» [3]:

Թուրքերի ձեռնարկած մասնակի գործողությունները. ճանապարհներին ու այլ վայրերում հայտնված հայերի, ինչպես նաև թուրքերի կողմից կանխամտացված դիտավորությամբ թուրքերի սպանություններն ու մեղքը հայերին վերագրելը, գավառում իրավիճակն առավելագույնս շիկացնելու և արցախահայությանը սարսափի ու խուճապի մատնելու նպատակ էին հետապնդում: Սակայն ընդհարումներում հաջողությունը մշտապես ուղեկցել է հայկական կողմին: Հատկապես նշանակալի էր Առաջածոր գյուղի մոտակայքում աղդամցիների 300 զինյալներից բաղկացած հրոսակախմբի ջախջախումը [4]:

Օգոստոսի 16-ին կռիվները սկսվում են նաև Շուշիում: Ինչպես միշտ նախահարձակը դարձյալ թուրքական կողմն էր: Նախորդ օրը թուրքերը վիրավորում են երկու հայերի ու սպանում նախկին հաշտարար դատավոր Լունաեակինին: Մի քանի հայեր մեկնում են թուրքական թաղամաս՝ պարզելու, թէ ի՞նչ է կատարվել

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 39-40:
[2] ՀՅԴ ԿԱ, թԺ. 402, գ. 6, էջ 2:
[3] Նույն տեղում, էջ 1:
[4] Նույն տեղում, գ. 9, էջ 3:

իրականում: Թուրքերը հարձակվում են իրենց թաղամասում հայտնված հայերի վրա և գնդակահարում նրանցից մի քանիսին: Հայերի սպանության լուրն անմիջապես հասնում է հայկական թաղամաս:

Օգոստոսի 17-ին քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով 200 զինվորներով Շուշի է գալիս Դանձակի նահանգի փոխնահանգապետ Բարանովսկին: Հայերը, հարգելով նրա պահանջը, դադարեցնում են կրակոցները, իսկ թուրքերը, ուշադրություն չդարձնելով նրա ներկայությանը, շարունակում են կրակ տեղալ հայկական թաղամասի վրա:

Հաջորդ օրը կռիվը վերսկսվում է ավելի մեծ ուժգնությամբ: Աղդամից քաղաք էին թափանցել հարյուրավոր թուրք զինյալներ, որոնք օգտվելով այն հանգամանքից, որ հայերը հարգելով փոխնահանգապետի պահանջը՝ դադարեցրել էին կրակոցները, փորձում էին ներխուժել հայկական թաղամաս:

Քաղաքը բաժանված էր երկու մասի: Վերևի մասում հայերն էին, իսկ ներքևում՝ թուրքերը: Շուշիի առաջին կռիվը շարունակվել է հինգ օր: Քաղաքի ինքնապաշտպանական ուժերը կռվել են ոգևորությամբ, առանց որևէ խուճապի: «Հայ քաղաքացիների տրամադրութիւնը,- նշում է Շուշիի կռիվները պատմող վավերագիրը,- վերին աստիճանի բարձր էր: Քաղաքի բոլոր անկիւններում վխտում էին զինուած ու անզեն երիտասարդները և խրախուսում էին իրար: Ամենն էլ հաւատացած էին, որ վերջնական յաղթութիւնը հայինը պիտի լինի» [1]:

Զինվորական մարմինը թեև անհրաժեշտ քայլեր ձեռնարկել էր կազմակերպելու Շուշիի ինքնապաշտպանությունը, բայց, այնուամենայնիվ, քաղաքի բնակչության զգալի մասը անզեն էր: Կռիվները սկսվելուն պես հարյուրավոր շուշեցիներ ներկայացել են ՀՅԴ գրասենյակ և ենք են պահանջել:

Զինվորական մարմինը թեպետ մեծ դժվարությամբ, բայց կարողացել է հաջողությամբ ղեկավարել քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները: Թուրքերի ձեռնարկած բոլոր փորձերը՝ ընկճելու հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժելու հայկական թաղերը, անցնում են ապարդյուն: Կռիվների ընթացքում, համաձայն Վարդանի վկայության, իրենց քաջությամբ հատկապես աչքի են ընկել գավառներից եկած մարտիկները [2]:

Շուշիի պաշտպանների դրսևորած վարպետությունն ու քաջությունը համակրանք են ներշնչել անգամ այդ կռիվներին ականատես կոզակներին:

«...Կոզակների համակրանքը,- վկայում է վավերագիրը,-մեր կողմն է: Կռի ընթացքում նրանք ապացուցեցին այդ՝ հայ տղաների հետ քով-քով կռուելով թուրքերի դեմ: Նրանցից շատերը փախչում էին մինչեւ անգամ զօրանոցից եւ գալիս միանում տղաներին» [3]:

Կռիվների ընթացքում հայ մարտական ուժերի գլխավոր մտահոգությունն այն էր, որ չեն ունեցել բավարար քանակության զենք ու զինամթերք: Եթե

[1] ՀՅԴ ԿԱ. թԺ. 402, գ. 9, էջ 7:
[2] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 40:
[3] ՀՅԴ ԿԱ. թԺ. 402, գ. 9, էջ 7:

թուրքերը կարողանային Շուշիի վրա կենտրոնացնել լրացուցիչ ուժեր ու շարունակեին գրոհները, ապա քաղաքի պաշտպանները զինամթերքի պակասի պատճառով կհայտնվեին ծանրագույն կացությունում:

Օգոստոսի 20-ին՝ կռիվների վերջին օրը, հայ մարտիկների համար ստեղծվում է տագնապալի իրավիճակ: Թուրքերը ստանում են նոր համալրում: Քաղաքում հայտնվում են 580 զինյալներ, որոնց հաջորդ օրը եթ միանում է ևս 300-ը: Զգացնել է տալիս զինամթերքի պակասը: Թուրքերի անընդմեջ կրկնվող գրոհները դիմագրավելու համար հայ մարտիկները օգտագործել են ձեռնառումբեր և քաղաքում պահպանված հնատիպ հրանոթները: Շուշեցի զինագործներին հաջողվել էր մարտական վիճակի բերել հրանոթներից մեկը և այն պահին, երբ արդեն զգացնել էր տալիս զինամթերքի պակասությունը, լիցքավորում են հրանոթն ու երեք անգամ կրակ արձակում հարձակվողների վրա: Հրանոթի արձակած ահռելի ձայնն ու դղրդյունը սարսափելի ազդեցություն են գործում: Թուրքերը, սարսափի մատնվելով, դիմում են փախուստի:

«Մեր թնդանոթների կրակոցները,-գրում է Վարդանը,- նոցա թողած տպատրությունը շատ մեծ եղաւ: Թուրքերը հաշտություն առաջարկեցին» [1]:

Շուշիում հինգ օր ընթացող կռիվներն ավարտվում են հայ ինքնապաշտպանական ուժերի անվիճելի հաղթանակով: Ըստ «Մշակ» թերթի հրապարակման՝ հայերը ունենում են 40 սպանված եւ 68 վիրավոր, թուրքերից՝ 93 սպանված, 50 վիրավոր,իսկ գորքից՝ 12 սպանված ու վիրավոր [2]:

Հանձայն ՀՅԴ «Ապառաժ» ԿԿ տեղեկագրի, հայկական կողմը ունենում է 40 սպանված և 68 զոհ, իսկ թուրքական կողմը՝ ավելի քան 500 սպանված [3]:

Շուշիի առաջին կռվի մասին ՀՅԴ Արևելյան բյուրոյին հասցեագրած նամակում համառոտ տեղեկություններ է հաղորդում Ռոստոմը, որն այդ կռվից մի քանի օր անց գտնվում էր Շուշիում և անշուշտ քաջատեղյակ էր քաղաքում տեղի ունեցած դեպքերի մանրամասներին:

Ռոստոմի հավաստմամբ մինչ այդ տեղի ունեցած կռիվներում երբեք թշնամին այնքան բազմաքանակ զինվորներ չի ունեցել, որքան ունեցել էր Շուշիի կռվի ժամանակ: Ընդ որում թուրքերը զինված են եղել ամենաընտիր զենքերով և կռվել են հմուտ հրամանատարների առաջնորդությամբ: Թեև թուրքերի դիրքերը հայկական կողմի պաշտպանական դիրքերի համեմատ անհաջող են եղել, բայց նրանք, այնուամենայնիվ, կարողացել են գրավել մարտավարական առումով երկու կարևոր հենակետեր և այնտեղից հարձակումներ ձեռնարկելով՝ զգալի նեղություններ պատճառել հայերին [4]:

Ռոստոմի գնահատմամբ, այդ ամենը հետևանք էր այն իրողության, որ հայ ինքնապաշտպանական ուժերի մեջ բացակայել է զինվորական կարգապահությունը: Կռիվների ամենավճռորոշ պահին երիտասարդների մի մասը զբաղված է եղել ամենախայտառակ թալանով: Շուշիում մեծ խուճապ է առաջացրել քաղաքում բռնկված հրդեհը: Կռիվների ընթացքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ քաղաքի հասարակությունը սկսել է հուսալքվել և նույնիսկ պահանջել թուրքերի հետ հաշտություն կնքել:

Նրա հավաստմամբ «Դրութիւնը փրկել է թնդանօթը, որը թէև ոչ մի նիւթական զգալի վնաս չի հասցրել, բայց շատ վախեցրեց: Երբ թնդանօթի որոտների հետ միասին սկսում են միահամուռ զարկերը դիրքերից, թիւրքերը բարձրացնում են սպիտակ դրօշակներ և խնդրում հաշտութիւն» [1]:

Շուշիի առաջին կռվում հայկական կողմը թեպետ տոնում է հաղթանակ, բայց ունենում է անփոխարինելի կորուստ: Զոհվում է Մարգար Ժամհարյանը (Մռավ), որը կռիվների ընթացքում, մշտապես գտնվելով ամենաթժվարին տեղամասերում, մեծապես օգնել է Վարդանին՝ ղեկավարելու քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները [2]:

Ծանոթանալով գավառում և Շուշիում տիրող իրավիճակին՝ Ռոստոմը ՀՅԴ Արևելյան բյուրոյին ներկայացնում է հետևյալ պահանջները. «Պետք է այստեղ լուրջ պատրաստուել: Աչքի առաջ ունեցէք, որ գաւառներում թիւրքերը ահագին ուժ ունեն: Այստեղ էլ մարդ է հարկաւոր Մարգարին փոխարինող: Ուղարկէք փամփուշտներ 1. Մաուզէր ատրճանակի մինչեւ 2000 հատ 2. Մաուզէր հրացանի 7 միլիմ. 1000 հատ 3. Պարեբոլում 500 հատ 4. Մոսին՝ որքան կարող էք: Ուղարկէք նաեւ, եթե ունէք, վառօդ եւ պայթուցիկ: Անհրաժեշտ է այս շրջանի համար մի զինագործ...» [3]:

Շուշիի համար մղվող պայքարը չէր սահմանափակվում միայն քաղաքում ընթացող կռիվներով: Ինչպես արդեն նշվել է, թուրքական կողմը նկատի ունենալով, որ միայն Շուշիում ունեցած ուժերով անհնարին կլիներ ընկճել հայ մարտիկների դիմադրությունը, ծրագրում է քաղաքի վրա հարձակում ձեռնարկել նաև երկրորդ՝ Աղդամի ուղղությունից: Զինվորական մարմինը, կանխատեսելով թուրքերի ծրագրած գործողությունները, ձեռնարկում է համապատասխան քայլեր՝ դիմագրավելու նաև Աղդամի ուղղությունից սպասվելիք հարձակմանը:

Շուշիի կռիվների առաջին օրը՝ օգոստոսի 16-ին, Զինվորական մարմնի հրամանով Արամայիսի (Արամայիս Տեր-Դանիելյան) և Մածուն Խեչոյի (Գրիգոր Միրզաբեկյան) գլխավորած 30 մարտիկներից բաղկացած մարտական խումբը փակում է Ասկերանից դեպի Շուշի տանող ճանապարհը: Եթե թուրքերը Ասկերանի ուղղությամբ փորձեին շարժվել դեպի Շուշի, ապա անխուսափելիորեն կհայտնվեին հանդիպակաց մարտկոցներում դիրքավորված հայ մարտիկների կրակի տակ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 42:
[2] Տե՛ս «Մշակ», 1905, 30 օգոստոսի:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԺ. 404, գ. 10, էջ 14:
[4] Ռոստոմ (Նամականի), էջ 397:

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 40:
[3] Ռոստոմ (Նամականի), էջ 397:

սպանվել էին բազմաթիվ բեկեր ու ցեղապետեր: Շնորհիվ կիրառած ճկուն մարտավարության՝ հայ մարտիկները չեն տվել ոչ մի գոհ. անգամ վիրավոր [1]:

Շուշիի և Ասկերանի դեպքերին զուգընթաց կռիվներ էին ընթանում նաև Արցախի մի շարք բնակավայրերում:

Արցախում տեղի ունեցած մարտերը ներկայացնող վավերագրերի ու հուշագրությունների ուսումնասիրությունը մատնանշում է, որ հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակներում, հատկապես Ասկերանի շրջանում տեղի ունեցած կռիվներում, իր հրամանատարական վարպետությամբ ու քաջությամբ աչքի է ընկել Խաչենի ինքնապաշտպանական մարտախմբերի հրամանատար Համազասպ Սրվանձտյանը:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Առանձնապէս նշանաւոր են նրա վարած կռիւները Խաչէնի և Ասկերանի շրջաններում: Ժողովուրդը կոչեց նրան Ասկերանի հերոս, իսկ աշուղները երգում—

Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ Համազասպը պանծալի» [2]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակների հարկադրանքով նահանգի իշխանությունները, ի ցույց հակամարտող կողմերի, փորձում են միջամտել ծավալվող իրադարձություններին:

Օգոստոսի 22-ի կռիվներում թուրք հրոսակախմբերի ջախջախիչ պարտությունից հետո ռուս զինվորները վերջապես փակում են Ասկերանից դեպի Շուշի ձգվող ճանապարհը՝ դրանով խոչընդոտում Շուշիում գտնվող թուրքական ուժերին միանալու Ադդամի հրոսակախմբերին: Հակամարտող կողմերին հաշտեցնելու ու խաղաղություն հաստատելու նպատակով Օգոստոսի 25-ին Արցախ է գալիս Գանձակի նահանգապետ գեներալ Տակայաշվիլին և հանդիպել հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ:

Հայկական կողմը բացատրել է նահանգապետին, որ հայերի ձգտումն ու ցանկությունը միշտ եղել ու մնում է միմիայն խաղաղության պահպանումը: Նախահարձակը բոլոր դեպքերում եղել են թուրքերը, որոնք օգոստոսի 17-ից սկսած 10-12 անգամ հարձակումներ են գործել հայկական բնակավայրերի վրա: Կողմերից յուրաքանչյուրը փորձել է նահանգապետին հավատացնել, որ կռիվները սանձազերծել է ոչ թէ ինքը, այլ հակառակորդը: Նահանգապետը ուշադրությամբ լսել է կողմերի բացատրությունը և ի զարմանս հայ և թուրք ներկայացուցիչների՝ նշել.«...հայերն իբրեւ աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, արեան հետ գործ չպետք է ունենան. ես հաստատում եմ, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել...այսուհետեւ Ասկերանում զինուած մարդ չլինի, հակառակ դէպքում՝ կը պատժեմ խիստ կերպով» [3]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության համար արդեն գաղտնիք չէր, որ թեպետ թուրքերը պարտություն էին կրել գրեթե բոլոր

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:
[2] «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», Բոստոն, 1950, էջ 493:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 402, գ. 10, էջ 10:

կռիվներում, բայց դա բոլորովին չէր նշանակում, որ նրանք հարկադրված պիտի հրաժարվեին հայկական բնակավայրերի վրա հարձակումներ ձեռնարկելու մտադրությունից ու խաղաղ դաշն կնքեին հայերի հետ: Անհրաժեշտ էր ոգեշնչել ու զինել բնակչությանը և ավելի կայուն ու ամուր հիմքերի վրա դնել արցախահայության ինքնապաշտպանությունը:

Սեպտեմբերի 19-ին Դաշնակցության «Ապառաժ»-ի կոմիտեն «Ղարաբաղի հայ ժողովրդին» խորագիրը կրող կոչով դիմում է արցախահայությանը:

«Կատարուեց այն,-նշում է կոչը,- ինչ պիտի կատարուէր անխուսափելիորեն:Ղարաբաղի մահմեդականութիւնը յարեց համախլամական շարժման եւ մեր հայրենիքը սուզուեց նորից խաւար միջնադարի մէջ: Մի շարժում, որի մղիչ գաղափարը ոչնչացումն է ամէն մի քաղաքակրթության, որի ղեկաւարները բարոյազուրկ եւ գիշատիչ կալւածատերերն են...Հայրենիքի մի ծայրից մինչեւ միւս ծայրը հրդեհում, թալանում եւ սպանում է թուրքը...» [1]:

ՀՅԴ «Ապառաժ»-ի կենտր. կոմիտեն այդ կոչով արցախահայությանն է ներկայացնում համախլամական գաղափարախոսության էությունն ու թուրքերի կողմից կռիվների սանձազերծման իրական պատճառները: Միաժամանակ, ըստ արժանվույն գնահատելով Շուշիի հինգ օր ընթացող կռիվներում հայ մարտիկների դրսևորած հերոսականությունը, ՀՅԴ կոմիտեն միանգամայն իրավացիորեն նշում է սեփական ուժերին ապավինելու, միասնական ուժերով մարտնչելու կարևորությունը՝ որպես հաղթանակ ձեռք բերելու անհրաժեշտ պայման:

Արցախում ընթացող դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արցախահայությունը, ինչպես նաև Զինվորական մարմինը եւ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն իրականում փորձել են խաղաղություն հաստատել գավառում ու որոշակի քայլեր են ձեռնարկել՝ դադարեցնելու կռիվները: Բայց հայկական կողմի խաղաղ նախաձեռնությանը թուրք առաջնորդները յուրաքանչյուր անգամ պատասխանել են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկած հարձակումներով ու բռնի այլ գործողություններով:

Նահանգապետի այցելությունը, խոստումներն ու սպառնալիքը ոչ մի ազդեցություն չեն գործում: Իհարկե, եթե նահանգապետը՝ գեներալ Տակայաշվիլին, իրականում ցանկանար վերջ տալ բախումներին և հաշտեցներ հակամարտող կողմերին, ապա կարող էր դիմել առավել ազդեցիկ գործնական քայլերի ու նահանգում հաստատեր խաղաղություն: Մանավանդ, որ նրա տրամադրության տակ կային բավարար քանակությամբ մարտական ուժեր: Բայց նահանգում և մասնավորապես Արցախում խաղաղություն հաստատելը դեռևս ցարիզմի օրակարգում չէր ու բնականաբար դուրս էր նահանգապետի ծրագրերից:

Գեներալ Տակայաշվիլիի հեռանալու հաջորդ օրը նեթ կռիվները փոքր ընդմիջումներով շարունակվում են: Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ ևս - նախահարձակն ու պարտվողը դարձյալ թուրքական կողմն է: Այդ կռիվնե-

[1] Նույն տեղում, գ. 15:

սպանվել էին բազմաթիվ բեկեր ու ցեղապետեր: Շնորհիվ կիրառած ճկուն մարտավարության՝ հայ մարտիկները չեն տվել ոչ մի զոհ. անգամ վիրավոր[1]:

Շուշիի և Ասկերանի դեպքերին զուգընթաց կռիվներ էին ընթանում նաև Արցախի մի շարք բնակավայրերում:

Արցախում տեղի ունեցած մարտերը ներկայացնող վավերագրերի ու հուշագրությունների ուսումնասիրությունը մատնանշում է, որ հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակներում, հատկապես Ասկերանի շրջանում տեղի ունեցած կռիվներում, իր հրամանատարական վարպետությամբ ու քաջությամբ աչքի է ընկել Խաչենի ինքնապաշտպանական մարտախմբերի հրամանատար Համազասպ Սրվանձտյանը:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Առանձնապէս նշանաւոր են նրա վարած կռիւները Խաչէնի և Ասկերանի շրջաններում: Ժողովուրդը կոչեց նրան Ասկերանի հերոս, իսկ աշուղները երգում—

Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ Համազասպը պանծալի»[2]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակների հարկադրանքով նահանգի իշխանությունները, ի ցույց հակամարտող կողմերի, փորձում են միջամտել ծավալվող իրադարձություններին:

Օգոստոսի 22-ի կռիվներում թուրք հրոսակախմբերի ջախջախիչ պարտությունից հետո ռուս զինվորները վերջապես փակում են Ասկերանից դեպի Շուշի ձգվող ճանապարհը՝ դրանով խոչընդոտում Շուշիում գտնվող թուրքական ուժերին միանալու Աղդամի հրոսակախմբերին: Հակամարտող կողմերին հաշտեցնելու ու խաղաղություն հաստատելու նպատակով Օգոստոսի 25-ին Արցախ է գալիս Գանձակի նահանգապետ գեներալ Տակայաշվիլին և հանդիպել հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ:

Հայկական կողմը բացատրել է նահանգապետին, որ հայերի ձգտումն ու ցանկությունը միշտ եղել ու մնում է միմիայն խաղաղության պահպանումը: Նախահարձակը բոլոր դեպքերում եղել են թուրքերը, որոնք օգոստոսի 17-ից սկսած 10-12 անգամ հարձակումներ են գործել հայկական բնակավայրերի վրա: Կողմերից յուրաքանչյուրը փորձել է նահանգապետին հավատացնել, որ կռիվները սանձազերծել է ոչ թէ ինքը, այլ հակառակորդը: Նահանգապետը ուշադրությամբ լսել է կողմերի բացատրությունը և ի զարմանս հայ և թուրք ներկայացուցիչների՝ նշել.«...հայերն իբրեւ աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, արեան հետ գործ չպետք է ունենան. ես հաստատում եմ, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել...այսուհետեւ Ասկերանում զինուած մարդ չլինի, հակառակ դէպքում՝ կը պատժեմ խիստ կերպով»[3]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության համար արդեն գաղտնիք չէր, որ թեպետ թուրքերը պարտություն էին կրել գրեթե բոլոր

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:
[2] «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», Բոստոն, 1950, էջ 493:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 402, գ. 10, էջ 10:

կռիվներում, բայց դա բոլորովին չէր նշանակում, որ նրանք հարկադրված պիտի հրաժարվեին հայկական բնակավայրերի վրա հարձակումներ ձեռնարկելու մտադրությունից ու խաղաղ դաշն կնքեին հայերի հետ: Անհրաժեշտ էր ոգեշնչել ու զինել բնակչությանը և ավելի կայուն ու ամուր հիմքերի վրա դնել արցախահայության ինքնապաշտպանությունը:

Սեպտեմբերի 19-ին Դաշնակցության «Ապառաժ»-ի կոմիտեն «Ղարաբաղի հայ ժողովրդին» խորագիրը կրող կոչով դիմում է արցախահայությանը:

«Կատարուեց այն,-նշում է կոչը,- ինչ պիտի կատարուէր անխուսափելիորեն: Ղարաբաղի մահմեդականութիւնը յարեց համախլամական շարժման եւ մեր հայրենիքը սուզուեց նորից խաւար միջնադարի մէջ: Մի շարժում, որի մղիչ գաղափարը ոչնչացումն է ամէն մի քաղաքակրթության, որի ղեկաւարները բարոյազուրկ եւ գիշատիչ կալուածատերերն են...Հայրենիքի մի ծայրից մինչեւ միւս ծայրը հրդեհում, թալանում եւ սպանում է թուրքը...»[1]:

ՀՅԴ «Ապառաժ»-ի կենտր. կոմիտեն այդ կոչով արցախահայությանն է ներկայացնում համախլամական գաղափարախոսության էությունն ու թուրքերի կողմից կռիվների սանձազերծման իրական պատճառները: Միաժամանակ, ըստ արժանվույն գնահատելով Շուշիի հինգ օր ընթացող կռիվներում հայ մարտիկների դրսևորած հերոսականությունը, ՀՅԴ կոմիտեն միանգամայն իրավացիորեն նշում է սեփական ուժերին ապավինելու, միասնական ուժերով մարտնչելու կարևորությունը՝ որպես հաղթանակ ձեռք բերելու անհրաժեշտ պայման:

Արցախում ընթացող դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արցախահայությունը, ինչպես նաև Զինվորական մարմինը եւ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն իրականում փորձել են խաղաղություն հաստատել գավառում ու որոշակի քայլեր են ձեռնարկել՝ դադարեցնելու կռիվները: Բայց հայկական կողմի խաղաղ նախաձեռնությանը թուրք առաջնորդները յուրաքանչյուր անգամ պատասխանել են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկած հարձակումներով ու բռնի այլ գործողություններով:

Նահանգապետի այցելությունը, խոստումներն ու սպառնալիքը ոչ մի ազդեցություն չեն գործում: Իհարկե, եթե նահանգապետը՝ գեներալ Տակայաշվիլին, իրականում ցանկանար վերջ տալ բախումներին և հաշտեցներ հակամարտող կողմերին, ապա կարող էր դիմել առավել ազդեցիկ գործնական քայլերի ու նահանգում հաստատեր խաղաղություն: Մանավանդ, որ նրա տրամադրության տակ կային բավարար քանակությամբ մարտական ուժեր: Բայց նահանգում և մասնավորապես Արցախում խաղաղություն հաստատելը դեռևս ցարիզմի օրակարգում չէր ու բնականաբար դուրս էր նահանգապետի ծրագրերից:

Գեներալ Տակայաշվիլիի հեռանալու հաջորդ օրը նեթ կռիվները փոքր ընդմիջումներով շարունակվում են: Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ ևս - նախահարձակն ու պարտվողը դարձյալ թուրքական կողմն է: Այդ կռիվնե-

[1] Նույն տեղում, գ. 15:

րում հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակներից առավել արժանահիշատակը Ավդալ-Գյուլափլուի և Խրամորթի կռիվներն են:

Այդ հենակետերից էին Ասկերանին ու Վարանդային սահմանակից 800 ծուխ ունեցող թուրքաբնակ Ավդալ և Գյուլափլի գյուղերը, որտեղ պահեստավորել էին մեծ քանակության զենք ու զինամթերք: Կենտրոնանալով վերոհիշյալ հենակետերում և հատկապես Աղդամի շրջանում, թուրք հրոսակախմբերը պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա [1]:

Ավդալ և Գյուլափլի հենակետերից պարբերաբար ձեռնարկած հարձակումների հարկադրանքով Արցախի Զինվորական մարմինը և ՀՅԴ պաշտոնական մարտավարությունը հետևողականորեն կենսագործող Վարդանը որոշում են դիմել հարձակողական գործողությունների և ոչնչացնել այդ հենակետերը [2]:

1905թ. սեպտեմբերի 10-ին Ավդալ և Գյուլափլի հենակետերից թուրք հրոսակախմբերը հարձակվում են հայկական Միրաջալու գյուղի վրա: Գյուղի ինքնապաշտպանական ուժերը իրենց օգնության եկած Վարանդայի և Խաչենի մարտախմբերի համագործակցությամբ հետ են մղում թշնամու հարձակումները և որոշում են համատեղ ուժերով հարձակվել Ավդալ և Գյուլափլու գյուղերի վրա: Այդ օրերին տեղի ունեցած կռիվներին հետևող կոզակների գործողություններում դրսևորվել է երկակի մոտեցում: Սկզբում, համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի կազմած տեղեկագրի.«...Կոզակների վերաբերմունքը դէպի հայէրը այնչափ էլ վատ չէր» [3]:

Այն պահին, երբ հայկական մարտական ուժերը, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, ներխուժում էին Ավդալ և Գյուլափլիի տարածքը, Աղդամի թուրք հրոսակախմբերը կոզակական հարյուրակի աջակցությամբ հարձակվում են Վարազաբույն գյուղի վրա: Եթե հարևան շրջանների մարտախմբերը չհասցնեին ժամանակին օգնություն ցուցաբերել Վարազաբույնի պաշտպաններին, ապա թուրքական գերակշիռ ուժերը ի վերջո կհաղթահարեին գյուղի պաշտպանների դիմադրությունը և կոչնչացնեին ողջ բնակչությանը: Հայ մարտախմբերը հարկադրված դադարեցնում են հարձակումն ու շտապում օգնության հասնել Վարազաբույնի պաշտպաններին:

Համաձայն վերոհիշյալ տեղեկագրի, մարտադաշտում հայտնված «...հայերը այնքան ուժեղ ու թիւրքերի համար անսպասելի գրոհով մտան գիւղը, որ թիւրքերը ոչինչ չկարողացան հակադրել եւ դիմեցին փախուստի...» [4]:

Այդ հաղթական կռվից հետո հայ մարտական ուժերը փորձում են զարգացնել հարձակումը և գրավել Ավդալ-Գյուլափլու գյուղերը: Բայց այդ գյուղերին օգնության են հասնում Աղդամում կենտրոնացած թուրք հրոսակախմբերը և կոզակնե-

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 17:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 18:
[4] Նույն տեղում, էջ 19:

ի աջակցությամբ կասեցնում հայ մարտական ուժերի հարձակումը: Ավելին, թուրք հրոսակախմբերը, չբավարվելով այդ գյուղերի պաշտպանությամբ, շարունակում են հարձակումներ գործել հայկական բնակավայրերի վրա: Ավդալ և Գյուլափլի հենակետերը լուրջ վտանգ էին ներկայացնում արցախահայության համար: Անհրաժեշտ էր ավելի լուրջ նախապատրաստվել ու վերացնել թշնամու հենակետերը:

Զինվորական մարմնի կարգադրությամբ Վարանդայի և Խաչենի մարտական ուժերը սեպտեմբերի 6-ին սկսում են այդ հենակետերը գրավելու գործողությունը: Այդ գյուղերի վրա Վարանդայի ու Խաչենի մարտական ուժերի ձեռնարկած գրոհը իրավամբ կարելի է համարել հարձակողական բնույթի մարտական գործողության լավագույն օրինակներից մեկը:

Թուրքական կողմը Ավդալ և Գյուլափլի հենակետերը ավելի ուժեղացնելու նպատակով սեպտեմբերի սկզբներին այնտեղ է կենտրոնացնում ավելի քան 2000-2500 զինյալների: Գրոհի նախօրեին գյուղերի վրա հարձակվող հայ մարտական ուժերը բաղկացած էին ընդամենը 375 մարտիկներից [1]:

Վստահ իրենց ուժերի գերակշռությանը, թուրքերը վաղօրոք գրավելով Միրջալու գյուղի մերձակա բարձունքները, հարձակվում են գյուղի վրա: Հայկական մարտական ուժերը կարողանում են հաջողությամբ հետ մղել հակառակորդի գրոհները: Զարգացնելով հաջողությունը՝ հայ մարտական ուժերը կարողանում են ոչ միայն փախուստի մատնել հարձակվողներին, այլև դիմելով հակահարձակման՝ ներխուժում են Ավդալ, ապա նաև թուրքերի առավել ամրացված հենակետը՝ Գյուլափլու գյուղը: Թուրք հրոսակախմբերը, զուտ քանակական առումով, թեև բազմիցս գերազանցել են հայկական մարտական ուժերին, բայց անկարող են եղել դիմակայել նրանց սրընթաց հարձակմանը [2]:

Հայկական մարտական ուժերը վերջնականապես հիմնովին ավերում են ոչ միայն Ավդալ և Գյուլափլու գյուղերը, այլ նաև թուրքական Ղարադաղլու՝ 150 տուն, Դիվանլար՝ 120 տուն և Հազրաֆլու՝ 35 տուն գյուղեր [3]:

Թուրքերը, չհաշտվելով վերոհիշյալ գյուղերի կործանման ու դրանից առաջ՝ օգոստոսի 19-ին Խրամորթի պաշտպաններից կրած պարտության հետ, զուտ վրեժխնդրության նպատակով երեք անգամ հարձակվում են Խրամորթի վրա, բայց դարձյալ ապարդյուն:

Անհաջողության մատնվելով նաև հայկական գյուղական մի քանի բնակավայրերի վրա կատարած հարձակումների ժամանակ, թուրք առաջնորդները ժամանակավորապես դադարեցնում են գրոհները:

Օգտվելով ժամանակավոր դադարից, Համազասպը մեկնում է Թիֆլիս, մասնակցելու նոյեմբերի 13-ին այնտեղ գումարվող ՀՅԴ Ռայոնական ժողովին, որտեղ ի թիվս մի շարք հարցերի, ժողովականները պիտի քննարկեին և ընդունեին

[1] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, նշվ. աշխ., էջ 19:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 13, էջ 207:

որոշումներ ինքնապաշտպանական ուժերի կազմակերման ու մարտավարության վերաբերյալ:

Ներկայացնելով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն(Շուշի, Ղարաբաղ). Համազասպը, բնականաբար, Ռայոնական ժողովում պիտի հայտներ իրենց պահանջը, այն է՝ զենք ու զինամթերք և դրամ: Ի դեպ, Ռայոնական ժողովում համանման պահանջ ներկայացրել են շրջաններից եկած գրեթե բոլոր մասնակիցները:

Ըստ ժողովի մանրամասները ներկայացնող արձանագրությունում տեղ գտած տվյալների, ««Ապառաժ» կենտր. կոմիտեն(Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.- կարիք կայ 600.000 ծայրի, 5000 հրացանի եւ 50.000 ռ. դրամի՝ ծախսերի համար»[1]:

Քանի որ ստույգ տվյալներ չկան, ապա դժվար է ասել, թե Զինվորական բյուրոն որքան զենք և զինամթերք ու դրամ է հատկացրել Ղարաբաղի ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի տնօրինությանը:

Իսկ այդ ընթացքում թուրքական կողմը ուժեր էր կուտակում և պատրաստվում վճռական գոտեմարտերի: Նոյեմբերի 28-ին ավելի քան 1500 զինյալներից բաղկացած հրոսակախմբեր, վերսկսում են հարձակումը: Այդ նույն պահին կոզակները, նստած Ասկերանի պահականոցում, որևէ փորձ չեն ձեռնարկել կանխելու կռիվները: Ինչպես նախորդ՝ օգոստոսի 19-ին տեղի ունեցած կռվում, այս անգամ դարձյալ Խրամորթի պաշտպաններին օգնության են գալիս Համազասպի, Մածուն Խեչոյի և Արամայիսի գլխավորած Խաչենի ու Վարանդայի թուրքիկ մարտախմբերը և սրընթաց հարձակվում արդեն գյուղ թափանցած թուրքերի վրա:

«...օգնութիւն հասած խմբերը,- գրում է Արամայիսը,- խրուեցին թուրքերի մէջ, իսկ երկու տեղ արդէն ձեռնամերձ կռուի էին մտել: Վերջապէս թուրքերը յետ մղուեցին, 13 դիակ թողնելով տների առաջ, իսկ հետները տարածը յայտնի չեղաւ: Հայերից սպանուել էին մի կին և մի ծերունի...»[2]:

Շուշիի հնգօրյա և գավառներում տեղի ունեցած կռիվները ցույց տվեցին.

1. Թուրքական կողմը, հավատարիմ իր մարտավարությանը, Արցախի ընթացող կռիվներում վարում էր հարձակողական բնույթի գործողություններ:

2. Ի տարբերություն թուրքերի՝ հայկական կողմը բացառությամբ Ավդալ-Գյուլափլիի կռիվների, առաջնորդվում էր պաշտպանական մարտավարությամբ, այսինքն՝ առայժմ մղում էր միմիայն ինքնապաշտպանական բնույթի կռիվներ:

3. Թուրքական կողմը ուներ քանակական գերակշռություն: Կռիվներին մասնակցել են ոչ միայն տեղաբնակ թուրքերը, այլ նաև հարակից շրջաններից, հատկապես Աղդամից Ղարաբաղի տարածքը ներխուժած թուրք և քուրդ հրոսակախմբերը:

[1] «Նիւթեր...», հ. էջ 237:
[2] Արամայիս, Վնասակարը, Թիֆլիս, 1907, էջ 28:

4. Թուրքական կողմը վաղօրոք կազմակերպված էր և ամենակարևորը՝ շատ լավ զինված:

5. Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը ինչպես հարկն է նախապատրաստված չէին և զուտ քանակական առումով զգալիորեն զիջում էին հակառակորդին ու ունեին սահմանափակ քանակության զենք ու զինամթերք:

Ախմբերի, հայկական մարտական ուժերը ավելի կազմակերպված էին և հակառակորդի առավելություններին հակադրում էին իրենց քաջությունն ու վարպետությունը: Հայ մարտախմբերի հրամանատարների զգալի մասը (Վարդան, Մռավ, Համազասպ, Արամայիս, Մածուն Խեչո և այլոք) կռիվների բովով անցած քաջավարժ մարտիկներ էին, որոնք իրենց փորձառությամբ ու մարտ վարելու կարողությամբ գերազանցում էին թուրք հրոսակախմբերի առաջնորդներին:

Կռիվների հետևանքով հայերի ու թուրքերի կրած մարդկային և նյութական կորուստները եղել են հակոտնյա: Ըստ ՀՅԴ բյուրոյին հասցեագրած զեկուցագրերի «Ընդհանուր առմամբ գաւառում մեր կրած վնասները նիւթական տեսանկյունից զգալի են, մարդկային կորուստները շատ չեն: Թուրքական կորուստները մարդկային-անհամեմատ շատ են»[1]:

Նահանգում տեղի ունեցած դեպքերը ակնառու կերպով հավաստում էին, որ ցարական իշխանությունները առավելապես նախապատվություն տալով թուրքերին, գործնականում ոչ մի կանխարգելիչ քայլ չէին ձեռնարկում խոչընդոտելու հայկական բնակավայրերի վրա շարունակաբար կրկնվող հարձակումները: Շրջաններում տիրող համանման կացությունը ինքնապաշտպանության հրամանատարությանը թելադրում էր դիմել ավելի կտրուկ և վճռական գործողությունների:

Թուրքերի հարձակողական նկրտումներին հակահարված տալու նկատառումով Արցախի Զինվորական մարմինը որոշում է շրջափակել Շուշիի թուրքական թաղամասը և սովամահ անելու սպառնալիքով հարկադրել թուրք պարագլուխներին դադարեցնել հայկական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումները: Հայկական մարտական ուժերը ամուր շրջափակում են թուրքական թաղամասը և այն ամբողջովին կտրում արտաքին աշխարհի հետ ունեցած կապերից[2]:

Թուրքերն անխուսափելիորեն կմատնվեին սովամահության, եթե չլիներ իշխանությունների միջամտությունը: Շուշիի թուրք բնակչությանը սովամահությունից փրկելու նպատակով նահանգի իշխանությունների կարգադրությամբ կոզակական ջոկատները գրավում են Ասկերանի մարտկոցներն ու բացում Ասկերան-Շուշի մայրուղին: Նույնիսկ այս պարագայում, թուրքերը զգուշանալով հայ մարտիկների հարվածներից, չեն համարձակվում շարժվել Ասկերան-Շուշի ճանապարհով և սննդամթերք հասցնել քաղաքի թուրք բնակչությանը:

[1] ՀՅԴ ԿԱ, թ. 403, գ. 6, էջ 2:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թ. 404, գ. 12, էջ 5:

Նահանգի իշխանությունների աջակցությամբ թուրքերը, այնուամենայնիվ, տասնյակ ֆուրգոններով փորձում են բեռներ փոխադրել Շուշի և փրկել իրենց արյունակիցներին: Պիտի ասել, որ հայ մարտական ուժերը, խիստ հսկողություն սահմանելով դեպի Շուշի ձգվող ուղիների վրա, բռնագրավել են այդ բեռների մեծ մասը [1]:

Արամայիսի հավաստմամբ միայն դեկտեմբերի 26-ին իրենք թուրքերից կարողացել են վերցնել 116 ձի, 54 ֆուրգոն, 6000 փութ տարբեր տեսակի ապրանքներ [2]:

Ուշագրավ է ֆուրգոններին ուղեկցող ռուս աստիճանավորների և զինվորների վերաբերմունքը: Նրանք ոչ միայն որևէ փորձ չեն ձեռնարկել խոչընդոտելու հայ մարտիկների գործողությունները, այլև ըստ Արամայիսի, «Ստրաժնիկներն ու Ասկերանի «պահապան» կոզակները ևս իրենց համար մի բաւական բաժին վերցրին՝ հետեւյալ օրը հայերի վրա ծախելու համար: Իսկ ֆուրգոններին ուղեկցող 150 կոզակները մի զարմանալի անտարբերությամբ հեռացան դէպքի վայրից» [3]:

Շուշիի թուրք բնակչությունը հայտնվում է անելանելի իրավիճակում: Այդ օրերին Կովկասի փոխարքայի անունով բազմաթիվ հեռագրեր են հասնում Թիֆլիս: Հեռագրերի հեղինակները, դատապարտելով հայ մարտիկների գործողությունները, խնդրում են փոխարքային փրկել սովամահության սպառնալիքում հայտնված Շուշիի թուրք բնակչությանը [4]:

Նահանգի իշխանությունները կատարում են թուրքական կողմի պահանջները և թնդանոթներից ռմբակոծում են Շուշիի մերձակա հայկական գյուղերն ու զենքի ուժով բացում քաղաք տանող ճանապարհները:

«Ընկերներ» վերնագրած նամակում Համազասպը, ներկայացնելով իշխանությունների ձեռնարկած վերոհիշյալ միջոցառումները, նշում է. «Գնաց կռիւը: Ռմբակոծեցին գիւղեր, ոչ թէ մէկ, այլ մի քանի: Տիրեցին մեր դիրքերը և լաւ իմացեք, պարոններ, այն տակտիկայով, որ կուում էր թուրքը, այժմ մեծ տարբերութիւն կայ» [5]:

Ճանապարհները բացելուց հետո զինվորների ուղեկցությամբ հայերն ու թուրքերը ֆուրգոններով ապրանքները հասցնում էին Շուշի, ընդսմին «...հայերի ապրանքները,-գրում է Արամայիսը,-բերում էին Շուշի փութին ստանալով 60 կոպէկ, իսկ թուրքերից 30. ամեն տեսակ կենսական մթերքներ տարան թուրքերի համար, իսկ հայկական մասը շատ քիչ բան էր գնում, այդ պատճառով շատ անհրաժեշտ մթերքներ այդ օրուանից թուրքերի մօտ աւելի էժան էր լինում, քան թէ հայերի» [6]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 5-7:
[2] Տե՛ս Արամայիս, Վնասակարը, էջ33-34:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 12, էջ 5:
[5] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 24, էջ 1:
[6] Արամայիս, Վնասակարը, էջ 36:

Արցախում, կարելի է ասել, հարաբերական խաղաղությունը պահպանվում է մինչև 1906թ. հուլիսի կեսերը: Այդ ընթացքում մեծածավալ կռիվներ թեպետ տեղի չեն ունեցել, բայց թուրքական կողմը շարունակել է ավազակային գործողությունները և արցախահայության դեմ պայքարելու համար կիրառել է այլ մարտավարություն: Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը թուրքերը, ինչպես Երևանի նահանգում, Արցախում նույնպես փորձում են գաղտնի սպանությունների, առևանգումների միջոցով ահաբեկել արցախահայությանն ու ապակայունացնել տիրող կացությունը: Թուրքերի ավազակային գործողություններին նպաստում էր նաև Արցախի Զինվորական մարմնի և հատկապես Վարդանի կիրառած մարտավարությունը:

Երևանի նահանգում թուրքերի սանձարձակություններին վերջ տալու համար, Դումանը բոլոր խմբապետներից խստորեն պահանջում էր, որ յուրաքանչյուր սպանված կամ անհետացած հայի փոխարեն անպայմանորեն սպանել կամ անհետացնել հինգ թուրք: Դումանի պատվիրանի չկատարումը կարող էր ավարտվել ամենախիստ պատժով:

Ի տարբերություն հարձակողական մարտավարությամբ առաջնորդվող Դումանի, Վարդանի համար ավելի նախապատվելի էր պաշտպանողական բնույթի մարտավարությունը: Այսինքն, նա հետևողականորեն կիրառում էր ՀՅԴ պաշտոնական, այն է՝ նախահարձակ չլինելու մարտավարությունը:

Հայ-թուրքական ընդհարումները տարածվել էին բովանդակ Արևելահայաստանում և Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: Կովկասահայության ինքնապաշտպանության ղեկն ստանձնած ՀՅԴ պիտի որդեգրեր ժամանակի պահանջներին ու յուրահատկություններին համահունչ կենսունակ մարտավարություն:

1905թ. նոյեմբերին Թիֆլիսում տեղի է ունենում ՀՅԴ Ռայոնական ժողովը, որն ի թիվս բազմաթիվ հրատապ խնդիրների քննարկում է նաև մարտավարության և ինքնապաշտպանական շրջաններին ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցերը: Համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի տեղեկագրի «Ապառաժ» (Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.- Կարիք կայ 600.000 ծայրի, 5000 հրացանի եւ 50.000 ռ. դրամի՝ ընթացիկ ծախսերի համար» [1]:

Ժողովում բուռն բանավեճ է ծավալվել հատկապես մարտավարության ու քոչին վերաբերվող հարցերը քննարկելիս: Ժողովականների մի մասը, որոնց թվում Ավ. Իսահակյանը, Համազասպը, Հովհաննես Քաջազնունին, Արմեն Գարոն, Շահրիկյանն ու այլոք նկատի ունենալով, որ թուրքերը հետայսու դարձյալ շարունակելու էին հարձակվել հայկական բնակավայրերի վրա, առաջարկում են հրաժարվել պաշտպանական բնույթի մարտավարությունից և ձեռնարկել հարձակողական գործողություններ: Նրանց կարծիքով պիտի արգելել նաև քոչը: Այսինքն թույլ չտալ, որպեսզի ամռան ամիսներին քոչվոր

[1] «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:

թուրքերը իրենց հոտերը բարձրացնելիս հայկական բնակավայրերում գտնվող սարերն ու արոտավայրերը:

Ըստ Դավիթ Անանունի տվյալների՝ Արցախի ամառային արոտավայրերը կազմում էին մոտավորապես 307 հազար դեսյատին: Յուրաքանչյուր ամառ իրենց անասունների հոտերով այդ արոտավայրերն էին բարձրանում 26000 ընտանիքներ, որոնց միայն 10% էին կազմում հայերը, իսկ թուրքերը՝ 75%, մնացած 15%-ը՝ քրդերն ու թաթարները [1]:

Կռիվների փորձը ցույց էր տալիս, որ քոչվորները լուրջ վտանգ էին ներկայացնում: Նրանք, սարեր բարձրանալիս, գրավում էին հաղորդակցության կարևոր ուղիները և կտրելով մեկը մյուսից հայկական բնակավայրերը՝ հարձակումներ էին գործում գյուղերի և ճամփորդների վրա:

Ժողովականների մյուս մասը պաշտպանել է հակառակ տեսակետը: Նրանց կարծիքով պետք է նախահարձակ չլինել, դիմել հաշտության և թույլ տալ քոչը: Ժողովականները ընդունում են հետևյալ որոշումը.

«1.- Նախայարձակ չլինել և պատրաստուել հակահարուած տալու ու յարձակուելու, եթէ թուրքերն են սկսում:

2.- Նախայարձակ լինենք, երբ նկատենք, որ նրանք են յարձակում.

3.- Հայերին համախմբել եւ կոմպակտ մասսա կազմել» [2]:

Այս վերջին՝ 3-րդ կետը առաջարկել է Ավ. Իսահակյանը:

Ժողովականներից հարձակողական մարտավարության ամենաընդգծված հակառակորդը եղել է Հովսեփ Արղությանը(Իշխան), որը նույնիսկ պահանջել է արձանագրության մեջ մտցնել իր բողոքը, որ «...Հ.Յ. Դաշնակցութիւնը իր ծրագրի մէջ մտցնում է յարձակողական տակտիկան»:

Հարձակողական մարտավարության ամենաջերմեռանդ կողմնակիցների մեջ են եղել Ավ. Իսահակյանը, Համազասպը, Արմեն Գարոն, Քաջազնունին և Շահրիկյանը:

Ռայոնական ժողովում մարտավարության վերաբերյալ ընդունած որոշումը գրեթե ոչնչով չի տարբերվում նախորդ որոշումից: Ինչպես նախկինում, հետայսու դարձյալ ՀՅԴ ապակենտրոն կառույցների իրավասության մեջ էր մտնում որոշելու իրենց մարտավարությունը, այն էլ «Նախայարձակ լինելու մոմենտի որոշումը իրաւասու մարմինները վճռում են գաղտնի քուէրկութեամբ՝ ժողովականների ձայների 2/3-ի մեծամասնութեամբ» [3]:

Արցախի մարտական ուժերի հրամանատար Վարդանը, առաջնորդվելով Ռայոնական ժողովի որոշմամբ, մարտախմբերի հրամանատարներին հրահանգում է գործել առավելագույն զգուշությամբ և չպատասխանել հակառակորդի ավազակային գործողություններին: Բնական է, որ նման մարտավարությունը չէր կարող գոհացնել մարտական հրամանատարներից շատերին, որոնք որոշակիորեն

[1] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1890-1900), հ. 2, էջ 33:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 251:
[3] Նույն տեղում, էջ 239:

տեղյակ էին Երևանի նահանգում Դումանի ձեռնարկած հարձակողական գործողությունների արգասաբեր արդյունքներին: Վարդանը մշտապես գտնվել է Շուշիում և գրեթե չի այցելել շրջանները:

Թուրքերը, լավագույնս օգտվելով հայ մարտական ուժերի պասիվությունից, շարունակում էին իրենց ավազակային գործողությունները: Խաչենի մարտական ուժերի հրամանատար Համազասպը, չհամակերպվելով Արցախում տիրող կացությանը, նամակներից մեկում իր բողոքն է հայտնում Զինվորական մարմնի և Վարդանի կիրառած մարտավարությունից: Նա պահանջում է նախահարձակ լինել, ձեռնարկել պատասխան գործողություններ և դրանով գգաստացնել ու սարսափի մատնել թուրք հրոսակներին [1]:

Հայկական մարտական ուժերի գործողությունները որոշակիացնելու և ժամանակաշրջանի պահանջներին համահունչ մարտավարություն որդեգրելու նպատակով 1906թ. փետրվարին Թիֆլիսում տեղի է ունենում Զինվորական խորհրդակցություն, որին պիտի մասնակցեին ինքնապաշտպանական շրջանների հրամանատարները՝ Երևանի նահանգից Նիկոլ Դումանը, Արցախից՝ Վարդանը, Արևելյան բյուրոյի և Թիֆլիսի կողմից՝ Արմեն Գարոն, իսկ Բաքվի և Դանձակի կողմից Աբրահամ Գյուլխանդանյանը: Խորհրդակցությանը չի մասնակցել Վարդանը:Խորհրդակցությունում միաձայն որոշվում է. «...պաշտպանողական տաքտիկայից անցնել յարձակողականի...նախայարձակ լինել եւ ջնջել բոլոր այն որջերը, որոնք աւազակային կենտրոններ էին» [2]:

Զինվորական խորհրդակցությունում որոշվում է խստագույնս արգելել քոչը և թույլ չտալ, որպեսզի մահմեդական վաչկատուն ցեղերը բարձրանան հայկական տարածքներում գտնվող արոտավայրերը [3]:

Ռայոնական ժողովը, համաձայն ՀՅԴ կանոնադրության, իր կարգավիճակով ավելի բարձր է, քան՝ Զինվորական Խորհրդակցությունը: Նրա որոշումները իրավասու է բեկանել Ընդհանուր ժողովը: Պատերազմական իրավիճակում Զինվորական մարմինները թեև օժտված էին մեծ լիազորություններով, բայց Զինվորական խորհրդակցության որոշումները ՀՅԴ ապակենտրոն կառույցների համար ավելի շուտ բարոյական նշանակություն ունեին, քան օրենքի: Այս առումով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն իրավասու էր յուրովի, ըստ իր հայեցողության վերաբերվել Զինվորական Խորհրդակցության որոշմանը, իսկ Վարդանը որպես Արցախի Զինվորական մարմնի լիազոր, այն է ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, պարտավոր էր կատարել Զինվորական խորհրդակցության որոշումները:

Արցախում ծավալվող դեպքերը հարկադրում են, որպեսզի Զինվորական մարմինը ակտիվացներ իր գործունեությունը, մանավանդ, որ արդեն կար հարձակողական գործողություններ ձեռնարկելու մասին Զինվորական խորհրդակ-

[1] Տե՛ս ՀՅԴ կա. թղ. 403, գ. 44, էջ 3:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 251:
[3] Տե՛ս նույն տեղում:

գության որոշումը: Արցախահայությանը մեծ վնասներ էր պատճառում ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին թշնամին:

Հայտնի փաստ է, ներքին թշնամին ավելի դավադիր է ու ավելի վտանգավոր: Գավառում ինքնապաշտպանությունն ավելի ուժեղ հիմքերի վրա դնելու համար Զինվորական մարմինն ու ՀՅԴ կենտր. կոմիտեն անհրաժեշտաբար պիտի անխնա պայքար ծավալեին նաև ներքին թշնամու դեմ:

Ներքին թշնամիներից առավել վտանգավորն են եղել Վարանդայի Քյաթուկ գյուղի բնակիչներ Հաթամ բեկն ու նրա եղբայր Շամիրը: Հաթամ բեկի կատարած ավազակային գործողությունների ու սխրագործությունների մասին արցախահայությունը առասպելական պատմություններ էր հյուսել [180]:

Հաթամ բեկի ու նրա եղբոր ներկայությունն ու նրանց ազգադավ գործունեությունը լուրջ վտանգ էին ներկայացնում Վարանդայի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Հարկավոր էր ձերբազատվել դավաճաններից: Նրանց զգաստացնելու, դարձի բերելու նպատակով Վարդանը վերջապես դուրս է գալիս Շուշիից, մեկնում է Վարանդայի Քյաթուկ գյուղ և պատվիրում իր մոտ բերել Հաթամ բեկին: Վարդանի խրատներն ու քարոզները, անգամ սպառնալիքը ապարդյուն են անցնում: Վարդանի հրամանով Հաթամ բեկն ու նրա եղբայրը գնդակահարվում են հենց Քյաթուկ գյուղի մեջ:

Ըստ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի հաշվետվության՝ Արցախում 1905-1906թթ Զինվորական մարմնի և կենտր. կոմիտեի վճռով ահաբեկչության են ենթարկվել ավելի քան 20 մատնիչներ ու դավաճաններ [2]:

Կռիվների ու թուրք հրոսակախմբերի ավազակային գործողությունների հետևանքով հայկական բնակավայրերը մեծ դժվարությամբ են կարողացել հաղորդակցվել միմյանց հետ: Այդ իրավիճակում ՀՅԴ կառույցների առջև ծառացած կարևորագույն և դժվար լուծելի խնդիրներից էր բնակչությանը հացով ու կենսական այլ մթերքներով ապահովելը:

ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն հայ համայնքների համար սահմանում է հացի վաճառքի հաստատուն գներ և զգուշացնում. «Նրանք որոնք թույլ կտան այս սակագնից թանգ ծախել իրենց ցորենը, կենթարկուեն ամենախիստ պատժի Դաշնակցութեան կողմից: Պատժի կենթարկվեն և կապալառուները, որոնք շահադիտական նպատակով կը կամենան մեծ քանակությամբ ցորեն գնել եւ ամբարել» [3]:

Զինվորական մարմնի մարտավարության փոփոխությունն ու հայկական մարտական ուժերի վճռական գործողությունները նկատելիորեն փոխում են Արցախում տիրող իրավիճակը: Թուրք հրոսակախմբերի յուրաքանչյուր ոտնձգությանը հայկական կողմը պատասխանում է առավել ազդեցիկ գործողությամբ: Թուրքերը, զգաստանալով հայերի պատասխան հարվածներից, զգալիորեն սահմանափակում են իրենց ավազակային գործողությունները: Չնայած առանձին փոքր ընդգրկում ունեցող բախումներին, Արցախի շրջաններում մինչև 1906թ. գարունը տիրում է համեմատաբար ավելի կայուն և հանգիստ իրավիճակ: Բայց դա բոլորովին չէր նշանակում, որ թուրքերը հրաժարվել էին Արցախը հայաթափելու ծրագրից:

Ընդհարումներն արդեն երկրորդ տարին էր, ինչ շարունակվում էին: Հայության համար գաղտնիք չէր իշխանությունների հակահայ և թուրքամետ բացահայտ դիրքորոշումը, բայց այն, ինչ նրանց կողմից իրականացվել է 1906թ. ապրիլին Վարանդայի 15 գյուղերում, Խաչենի ու Դիզակի շրջաններում, անսպասելի էր ոչ միայն հայկական, այլ նաև թուրքական կողմի համար:

Նահանգի իշխանությունները հայ հեղափոխականներին ձերբակալելու և հայկական բնակավայրերի զինված մարտախմբերը զինաթափելու պատրվակով մարտի վերջերին զինվորական պատժիչ զորախմբեր և ոստիկանական ուժեր են ուղարկում հայկական բնակավայրերը: Զորախմբերից մեկը մուտք է գործում Վարանդայի շրջան ու թնդանոթներից կրակ տեղում հայկական գյուղերի վրա: Ավելին, զորախմբի ավելի քան 400 զինվորներ գնդապետ Վիվերնիի, գավառապետ Ֆրեյլիխի, պրիստավ Ֆիտի առաջնորդությամբ ներխուժում են գյուղեր՝ և առանց որևէ պատճառաբանության սկսում են զանգվածային թալանն ու դաժանաբար ծեծի և տանջանքների ենթարկել գյուղացիներին: Պատժիչ մեկ այլ զորախումբ ներխուժում է Խաչենի շրջան եւ դարձյալ թնդանոթներից ռմբակոծում հայկական գյուղերը: Մի շարք բնակավայրերում կատարվել են նաեւ սպանություններ [1]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին գրած նամակում(1906թ. մարտի 27) Վարդանը, ներկայացնելով Արցախի շրջաններում պատժիչ արշավախմբի գտնվելու իրողությունը, նշում է.«Մօտ 400 կոզակներ օֆիցերներով, գաւառապետով, թնդանօթներով շրջանի գիւղերում ամէն տեսակ լրբութիւններ են կատարում: Մի քանի գիւղերում, ինչպիսիք են այժմ Թաղլար, Տող(Դիզակի շրջան-Հ. Գ.), այդ բաշիբոզուկների բանակը մնացել են 2-3 օրով սանձարձակ, իրենց կամայականութիւններին անասնական կրքերին հագուրտ տալու: Գիւղացիների մեծ մասը կանանց երեխաների հետ փախուստի են դիմել ձիւնապատ լեռներն ու անտառները... [2]:

Կոզակները հայկական բնակավայրերում ոչ միայն բռնություններ ու թալան են կատարել, այլեւ բռնաբարել են բազմաթիվ կանանց ու աղջիկների: Այդ օրերին ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ն ու «Յառաջ»-ը իրենց էջերում հրապարակում են բազմաթիվ փաստեր, որոնցով ներկայացնում ու դատապարտում են ռուս զինվորների կողմից հայկական բնակավայրերում կատարված բռնություններն ու բռնաբարությունները [3]:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 403, գ. 44, էջ 3:
[2] Տե՛ս Վարանդեան Մ., Նշվ. աշխ., էջ 336:
[3] ՀՅԴ ԿԱ, թթ. 403. գ. 44:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 5, էջ 71: ՀՅԴ ԿԱ, թթ. 403, գ. 17, էջ 1:
[2] ՀՅԴ ԿԱ, թթ. 403, գ. 5, էջ 1:
[3] Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 4, էջ 50: «Յառաջ», 1906, թիւ 66, էջ 70:

Գյուղացիների ունեցվածքը բռնագավթելու նպատակով զինվորները բռնությունների գործադրմամբ նրանցից պահանջել են տուգանք մուծել: Թեպետ գյուղացիները պատրաստակամություն են հայտնել մուծել պահանջված գումարը, բայց ապանությունները, բռնությունները և թալանը, այնուամենայնիվ, շարունակվել են: Վարանդայի և Խաչենի մի քանի գյուղերի բնակիչներ, չդիմանալով զինվորների ու կոզակների գործադրած բռնություններին, լքում են գյուղերը և ապաստանում անտառներում ու սարերում [1]:

Ինչու՞ էին նահանգի իշխանությունների հանձնարարությամբ պատժիչ զորախմբերը ներխուժել Վարանդայի և Խաչենի տարածք, ոմբակոծել այդ շրջանների, առավելապես Վարանդայի գյուղերն ու դաժան բռնությունների ու ծեծի ենթարկել բնակչությանը: Վարանդայի ինքնապաշտպանական շրջանի հրամանատարներից Արամայիսը, անդրադառնալով այդ հարցի պարզաբանմանը, տալիս է հետևյալ պատասխանը.«...միթե՞ ժողովուրդն ապստամբել էր. հարկ չէ՞ տալիս, զինուորութեան չէ՞ր գնում, ռուսներին հալածու՞մ էին-...Ո՛չ, դրանցից ո՛չ մէկն էլ չկար.եւ եթե կար մի որեւէ «յանցանք», ապա այդ այն էր, որ հայերը կարողացել էին պաշտպանուել, եւ Վարանդայի ու Խաչենի ոչ մի գիւղն աւարի չէր մատնուել. ի՞նչպէս կարելի էր, որ ներկայ պագրոմների տարում Խաչէնն ու Վարանդան բացառութիւն կազմեն...» [2]:

Բացի Արամայիսի բերած փաստարկներից, կարելի է ասել, որ նահանգի իշխանություններն իրենց հարվածի հիմնական նշանակետը դարձրել էին Վարանդան նաև հետևյալ նկատառումով: Հայտնի է, որ Վարանդան Արցախի առավել հացառատ շրջանն է: Աղքատության մատնելով Վարանդայի հայությանը՝ նշանակում էր աղքատության մատնել գրեթե ողջ արցախահայությանը:

Չնայած դեռևս ուժի մեջ էր Զինվորական խորհրդակցությունում հարձակողական մարտավարության վերաբերյալ որոշումը, սակայն Արցախի, նույնիսկ Վարանդայի ու Խաչենի մարտական ուժերը, որոնք նախորդ կռիվներում աչքի էին ընկել քաջությամբ, որևէ կանխարգելիչ քայլ չեն ձեռնարկել՝ պատասխանելու ռուս զինվորների գործողություններին: Եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեին՝ դադարեցնելու հայկական բնակավայրերում ռուս զինվորների բռնություններն ու ավերները, ապա կարճ ժամանակահատվածում կարող էր իրականություն դառնալ Արցախը հայաթափելու թուրքերի համախլամական ծրագիրը:

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Վարդանը, որը մինչ այդ առավելապես նախապատվություն էր տալիս պաշտպանողական բնույթի մարտավարությանը, հրահանգում է ինքնապաշտպանական շրջանների պատասխանատուներին հարձակվել կոզակների վրա, եթե նրանք շարունակեն բռնություններ գործադրել ու տեղահանել գյուղացիներին [3]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, «Մի քանի գլուխ հայ-թուրք...», էջ 85-86:
[2] Նույն տեղում, էջ 85-86:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 6, էջ 2:

«...մենք, գրում է Համազասպը,-ոչ մի կերպ չենք կարող լռել. եթէ նոյն իսկ քաւան գիւղ ռմբակոծեն: Խփելու ենք, որովհետև կյանքի ու մահու խնդիր է ու Վարդանի հրամանը»:

Ընկերներին գրած մեկ այլ նամակում (1906թ. ապրիլի 26) Համազասպը հայտնում է. «Ես արդեն մօտ 120 զինվորներ դասատրեցի որոշ վտանգաւոր պունկտերում, առաջուց Ձեզ յայտնում եմ, յայտնում եմ նաեւ Վարդանին, եթէ որեւէ տեղ կոզակները մի փոքր լրբութիւն ցոյց տուին, յարձակուելու ենք կոզակների վրանների վրա ու այնպիսի ջարդ տանք, որի հետեւանքը անմոռանալի դաս դառնա» [1]:

Ինչպե՞ս պիտի զարգանային իրադարձությունները Արցախում, եթե նահանգի իշխանությունները շարունակեին իրենց հակահայ գործողությունները և կոզակական ջոկատները դուրս չբերեին գավառի տարածքից: Արցախի շրջաններում ռուս զինվորների կատարած գազանությունները լայն արձագանք են գտնում ոչ միայն Կովկասում, այլ նաև Ռուսական կայսրության մի շարք քաղաքներում: Արցախում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ մերկացնող ու դատապարտող հոդվածներ են տպագրում ոչ միայն հայկական, այլ նաև ռուսական թերթերը [2]:

Արցախի դեպքերի կապակցությամբ բարձրացված աղմուկի ու ինչպես նաև բազմաթիվ բողոքների հարկադրանքով, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հրամանով Վայոցձորի նախագահությամբ կազմվում է քննիչ հանձնաժողով, որը պիտի մեկներ Վարանդայի շրջան՝ ստուգելու գյուղերում տեղի ունեցած դեպքերի մանրամասները [3]:

Իշխանությունների կողմից այդ հանձնաժողովի ստեղծումը հանրությանը խաբելու և իրենց արարքները կոծկելու նպատակ էր հետապնդում: Իրականում, հանձնաժողովի կատարած ուսումնասիրության արդյունքները ցարական իշխանությունների կողմից որևէ ուշադրության չեն արժանանում:

Ավելին, նույն առաքելությամբ, դարձյալ փոխարքայի հանձնարարությամբ, Շուշի է գալիս Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Մալաման: «Դրօշակ»-ի տեղեկացմամբ գեներալն իր համաձայնությունն է հայտնել կատարված ցավալի դեպքերի կապակցությամբ և հույս հայտնելով, որ հանցավորներն անպայման կպատժվեն, առանց որևէ շոշափելի գործ կատարելու, մեկնել է Թիֆլիս [4]:

Օգտվելով դեպքերի՝ իր համար շահեկան զարգացումից ժամանակն անտեղի չէր վատնում թուրքական կողմը:

Համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտր.կոմիտեի պատրաստած տեղեկագրերի, թուրք առաջնորդներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են հետևյալ խնդիրների վրա.

[1] Նույն տեղում, էջ 3:
[2] Տե՛ս «Ալիք», 1906, թիւ 15, 16:
[3] Տե՛ս «Յառաջ», 1906, թիւ 9:
[4] Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 6, էջ 87:

1. Զենք ու զինամթերքի գնում ու տեղափոխություն: Ի տարբերություն հայկական կողմի, թուրք ամբոխը գլխավորապես զինվել է ի հաշիվ իրենց առաջնորդների ու դրամատերերի: Այդ նպատակով նրանք ներդրել են հսկայական գումարներ: Իրենց գնած զենքերով թուրք առաջնորդները զինել են ինչպես Արցախի, այնպես էլ սահմանամերձ գավառների թուրք բնակչությանը:

2. Թուրք բնակչության շրջանում ծավալած քարոզչական աշխատանքներ: Նպատակը պարզ էր. շնորհիվ քարոզչական աշխատանքների թուրք առաջնորդները ձգտում էին ավելի խորացնել թուրք բնակչության ատելությունը հայության նկատմամբ և նրա մեջ ներարկել ու բորբոքել հային սպանելու և նրա ունեցվածքը բռնագավթելու պահանջն ու ցանկությունը:

3. Քանի որ հայ մարտական ուժերը թուրք հրոսակների յուրաքանչյուր ոտնձգությանը պատասխանում էին ավելի ուժեղ հակահարվածով, իսկ այժմ արդեն անհրաժեշտության դեպքում ձեռնարկում էին նաև հարձակողական գործողություններ, թուրք առաջնորդները, հատկապես Բաքվի, բազմաթիվ հեռագրեր ու դիմումներ են հղում իշխանություններին և անձամբ Կովկասի փոխարքային: Իրենց հեռագրերում ու դիմումներում խեղաթյուրելով և միակողմանիորեն ներկայացնելով տեղի ունեցած դեպքերի մանրամասները՝ նրանք բողոքում ու դատապարտում էին հայ ֆիդայիների ու նրանց առաջնորդող Դաշնակցության գործողությունները և պահանջում պատժել ազգամիջյան թշնամանք ու զինված բախումներ հրահրող հայ հեղափոխականներին [1]:

Իրականում Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է ճիշտ հակառակը: ՀՅԴ առաջնորդները կռիվները դադարացնելու ու երկխոսություն սկսելու առաջարկով բազմիցս դիմել են թուրք պարագլուխներին, բայց յուրաքանչյուր անգամ չեն ստացել համարժեք պատասխան:

Հ.Յ.Դաշնակցության խաղաղասիրական տրամադրվածության ապացույցներից են 1906թ. մարտ-ապրիլ ամիսներին Թիֆլիսում կայացած ՀՅԴ արևելյան մարմինների Ռայոնական ժողովի որոշումները: Այդ ժողովին, բացի Նիկոլ Դումանից և Վարդանից, մասնակցել է Դաշնակցության ղեկավար գործիչներն ու ինքնապաշտպանական շրջանների հրամանատարների մեծ մասը:

Ռայոնական ժողովում, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում է նաև «Հայ-թաթարական ընդհարումների վերջնական դադարեցման անհրաժեշտությունը, կը ճշդուին ոճրագործներու պատուհասման պայմաններն ու չափը, մանրամասն քննութեան կենթարկուի թուրք քոչուորներու շարժումներն արտօնելու կամ արգիլելու հարցը...Կովկասի մէջ հայ-թրքական յետագա յարաբերություններու խնդիրները» [2]:

Քանի որ ընդհարումները շարունակվում էին, ուստի ժողովականներին առավելագույնս պիտի մտահոգեին ինքնապաշտպանության կազմակերպման ու մասնավորապես մարտավարության և քոչին վերաբերող խնդիրները:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 404, գ. 15, 16, 17:
[2] «Նիւթեր...», հ. Բ, էջ 258:

Ժողովականների ճնշող մեծամասնությունը առաջարկում է չխոչընդոտել, թույլ տալ քոչը և վերադառնալ նախկին մարտավարությանը: Նրանց համոզմամբ, եթե հայ մարտական ուժերը չձեռնարկեն հարձակողական գործողություններ, չպատասխանեն թուրքերի ավազակային գործողություններին և հետայսու արտոնեն ու չխանգարեն քոչը, ապա կարելի կլինի իշխանության ներկայացուցիչների միջնորդությամբ դադարեցնել կռիվներն ու խաղաղություն հաստատել: Ժամանակը միանշանակորեն ապացուցեց, որ դա հիմնազուրկ ու չփաստարկված տեսակետ էր:

Սիմոն Զավարյանը, ընդհանրացնելով ժողովականների մեծամասնության տեսակետները, որպես որոշման նախագիծ առաջարկում է «...մենք եկանք այն որոշման, որ ոչ մի դեպքում քոչը արգելել չենք կարող, բայց պէտք է որոշենք այնպիսի միջոցներ, որով այդ ընդհարումները սահմանափակենք, եւ աշխատենք ոչ մի ընդհարման առիթ չտալ» [1]:

Հայ-թուրքական հետագա հարաբերությունների ու մարտավարության վերաբերյալ Ռայոնական ժողովը դարձյալ Ս. Զավարյանի ձևակերպմամբ, ընդունում է հետևյալ որոշումը. «...Դիմադրելով թուրքերի բոլոր յարձակումները, անհատական սպանութիւնների դէպքում թուրքերի կողմից՝ չպատասխանել եւ սպասել կառաւարութեան ու թուրք բանիմաց դասի բռնած դիրքին: Փոխադարձաբար անցնել նախկին տակտիկային...» [2]:

Իշխանությունների կողմից Գանձակի նահանգում և մասնավորապես Արցախի շրջաններում զինվորական արշավախմբի միջոցով իրականացրած գործողությունները իրենց ազդեցությունը, անկասկած, ունեցել էին: Կարելի է ասել, որ մարտավարության ու քոչի վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումները Զինվորական խորհրդաժողովի որոշումների համեմատ ոչ միայն նահանջ էին, այլև չկշռադատված ու վտանգավոր: Հայ-թուրքական ընդհարումներն արդեն մեկ տարուց ավելի շարունակվում էին: Կռիվների ընթացքն ու փորձը միանշանակորեն մատնանշում էին, որ անիմաստ էր և վտանգավոր ապավինել կառավարության ու թուրք բանիմաց դասի բռնած դիրքին, որը երբեք հայանպաստ չէր:

Գարնանը և հատկապես ամռան սկզբներին թուրքերը Գանձակի նահանգում նկատելիորեն ակտիվացնում են իրենց ավազակային գործողությունները: Գավառում ստեղծվում է քաոսային ու անկառավարելի իրավիճակ: Պիտի ասել, որ այդ ամենին որոշակիորեն նպաստել են մարտավարության եւ քոչի վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումները, ինչպես նաև հայկական բնակավայրերում իշխանությունների դրսևորած բացահայտ հակահայ գործողությունները:

Որքան էլ Զինվորական մարմնի և անձամբ Վարդանի հրահանգով հայ մարտիկները խուսափում էին ընդհարումներից ու չէին դիմում հարձակո-

[1] Նույն տեղում, էջ 265:
[2] Նույն տեղում, 267:

դական գործողությունների. այնուամենայնիվ. թուրք հրոսակախմբերը շարունակում և աստիճանաբար ուժեղացնում էին բռնությունները. առևանգումներն ու ավարառությունը:

Քոչը սկսվելուն պես հազարավոր զինված թուրքեր իրենց հոտերով բարձրանում էին արոտավայրերը և հսկողության տակ վերցնում հայկական բնակավայրերի մերձակայքերում գտնվող իշխող բարձունքներն ու հաղորդակցության ուղիները: Ամենից. թուրք քոչվորները զինավառ խմբերով պարբերաբար փորձում էին հարձակվել հայկական բնակավայրերի վրա ու սպանում էին իրենց ձեռքն ընկած հայերին: Այդ օրերին առանց զինված պահակախմբի ուղեկցության հնարավոր չէր որևէ տեղ գնալ:

Վարդանը Համազասպին հասցեագրած նամակներից մեկում (1906թ. օգոստոսի 26). նկատի ունենալով թուրք հրոսակների ու քոչվոր զինյալների գործողությունների հետևանքով գավառում ստեղծված վտանգավոր կացությունը. գրում է.«...լեռ բարձրացած թուրքերը չափազանց լրբացել են... Նկատում է մի ընդհանուր ծրագիր թուրքերի կողմից. կառաւարութեան պարզ աջակցութիւնն ու խրախուսանքը... Դրութիւնը մեր շրջանում առհասարակ լարուած է. միշտ սպանութիւններ եւ թալաններ են տեղի ունենում» [1]:

Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերը տեղում ուսումնասիրելու և կանխելու նպատակով մայիսի վերջերին Շուշիում էր գտնվում Գանձակի նահանգապետ գեներալ Գալաշչապովը: Բայց նրա ներկայությունը սոսկ ցուցադրական ու ձևական բնույթ է կրել և ոչնչով չի ազդել Արցախում տիրող լարված ու պայթյունավտանգ իրավիճակի բարելավմանը:

ՀՅԴ Արևելյան բյուրոյին գրած նամակում(1906թ. հուլիս) Համազասպը իր դժոհությունն է հայտնում քոչի եւ մարտավարության վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումից՝ նշելով. « Ռայոնական ժողովի առաջ. երբ կայացաւ զինուորական ժողով եւ միաձայն վճռուեց քոչին չթողնել բարձրանալ... Ռայոնական ժողովի վարժապետները քանդեցին այդ վճիռը, կարծելով, որ թուրքը իրենց հետ եղբայրացել է: Ոչինչ, այդպիսի անհեռատես վճիռների մէջ շատ է տապակուել հայ ժողովուրդը» [2]:

Նույն նամակում ընկերներին ներկայացնելով իրեն վստահված շրջանում (Խաչեն) տիրող ծանր կացությունը՝ նա պահանջում է. «Բաւ է խնամիութիւն անել. այս ռայոնի համար խոստացած 8000 ծայր(նկատի ունի փամփուշտ-Հ.Գ.) 50 մաուզեր ատրճանակ. 90 հրացանի փոխարեն գոնէ մի քառորդ ուղարկեք, ինչպես և որոշուած գումար» [3]:

Անտարակույս. Զինվորական մարմնի ու Վարդանի համար չափազանց դժվար էր ճիշտ կողմնորոշվել ու կիրառել գավառում տիրող կացությանը համահունչ մարտավարություն: Այսուհանդերձ. Արցախում տիրող իրավիճակի և

[1] ՀՅԴ ԿԱ, թթ 403, գ. 21:
[2] Նույն տեղում, գ. 24, էջ 1:
[3] Նույն տեղում, էջ 2:

թուրք հրոսակների կատարած սպանությունների ու առևանգումների հարկադրանքով Վարդանը փոխում է թշնամու նկատմամբ մինչ այդ կիրառած մարտավարությունը և շրջանների մարտական ուժերի հրամանատարներին հրահանգում է իրականացնել վրեժխնդրական գործողություններ:

Համազասպին գրած նամակներում (1906թ. 20. 26 հունիս). հաստատելով գավառում տիրող լարվածության և կառավարության աջակցությամբ ու խրախուսանքով թուրքերի կողմից շարունակաբար կատարվող սպանությունների ու կանանց առևանգումների իրողությունը Վարդանը թեև հրահանգում է վրեժխնդիր լինել և գերի վերցնել նաև կանանց. այնուամենայնիվ. դրսևորելով իր խաղաղասիրական էությունը՝ պատվիրում է.«1) Որ այդ կատարուի անպայման թուրքական գիւղում կամ նրանց հողում. 2) Որ կատարուի այնպիսի ձևով. որպեսզի ոչ մի ընդհարման տեղիք չտայ...3) Քոչին ձեռք չպիտի տաք ոչ մի դեպքում. քոչի մարդկանց նոյնպէս. 4) Գերուհիներին պէտք է պահպանեք առանձնացրած եւ ամենապատուաւոր կերպով» [1]:

Արցախում տեղի ունեցող դեպքերին կարող էր միջամտել և անհրաժեշտ հրահանգներ տալ Բաքվի Զինվորական մարմինը. որը իրավասու էր վերահսկել ու մարտավարական արդյունավետ խնդիրներ առաջադրել ոչ միայն Բաքվի. այլև Գանձակի նահանգի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությանը:

«Բաքվի մէջ.-նշում է Աբ. Գյուլխանդանյանը.- մեզ ամենից զբաղեցնում էր Գանձակի նահանգի Արցախի շրջանը եւ նրա յարակից միւս վայրերը. որոնք մտնում էին ՀՅԴ Ապառաժի կոմիտէութեան մէջ» [2]:

Գանձակի նահանգի գավառներից Բաքուն առավելապես կապված է եղել հենց Արցախի հետ. որովհետև քաղաքի ու նավթահանքերի աշխատավորության զգալի մասը դարաբաղցիներ էին: Բացի դրանից. Զինվորական մարմնի կողմից Արցախ գործուղված ընկերները իրենց հեռագրերով ու նամակներով անընդհատ ֆինանսական. զինական օգնություն. զենք ու զինամթերք են պահանջել ՀՅԴ Արևելյան բյուրոյից ու Բաքվի Զինվորական մարմնից:

Այս հարցում առավելապես աչքի է ընկել Վարդանը. որը «...մոռանալով իր հարեւան շրջանները (նկատի ունի Գանձակի ու Զանգեզուրի գավառները-Հ.Գ.). որոնք նոյնպէս պատերազմական գործողութիւնների մէջ էին. անդադար պահանջներ էր դնում» [3]:

Իսկ այդ օրերին ոչ պակաս ուժգնությամբ կռիվներ են ընթացել Գանձակի նահանգի գրեթե բոլոր շրջաններում:

Թուրք հրոսակախմբերի շարունակաբար կրկնվող գործողությունների հետևանքով գավառում ստեղծված անկառավարելի իրավիճակը հարկադրում է Արցախի Զինվորական մարմնին փոխել իր մարտավարությունն ու դիրքո-

[1] Նույն տեղում, թթ. 403, գ. 20, էջ 21:
[2] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 142:
[3] Նույն տեղում:

որոշումը: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 4-ին, ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներին գրած նամակում Վարդանը հրահանգում է. «Դուք պէտք է քոչի վերաբերմամբ բռնէք այլ տաքտիկայ հակառակ Ռայոնական ժողովի որոշման: Պէտք է բաց թողնել քոչը, ընտրել ամենայարմար կիրճերը, հայկական ռայոններից, եթէ հնարաւոր է, դուրս գտնուած շրջաններում ամեն կողմից շրջապատել եւ կատարեալ ջարդի ենթարկել. պէտք է գործել հմտութեամբ, արագ...»[1]:

Արցախում ստեղծված իրավիճակն ու թուրքական կողմի նախապատրաստությունները աներկբա մատնանշում էին, որ նրանց կողմից ձեռնարկվող մեծածավալ մարտական գործողությունները շատ շուտով սկսվելու էին: Ինչպես նախորդ՝ մեկ տարի առաջ տեղի ունեցած կռիվների ժամանակ, այս անգամ ևս թուրք առաջնորդները մեծաքանակ մարտական ուժեր են կենտրոնացնում Աղդամում:

Համաձայն «Ապառաժ» ԿԿ-ի պատրաստած տեղեկագրի, Շուշիի վրա հարձակվելու համար թուրք առաջնորդները Աղդամում կենտրոնացրել են նաև «...Պարսկաստանի Շահսիւարներից 700-800 հոգի, որոնք հռչակած էին իրենց քաջութեամբ, օգնութեան էին գալիս Արէշի եւ ուրիշ գաւառներից»[2]:

Եթե թուրքերը հայկական բնակավայրերի ու Շուշիի վրա հարձակումները ձեռնարկեին վերոհիշյալ մարտավարությամբ, ապա դարձյալ առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերելու Աղդամ-Ասկերան-Շուշի մայրուղին, որը տեղի ինքնապաշտպանական ուժերի զինակցությամբ պիտի պաշտպանեին Խաչենի ու Վարանդայի մարտախմբերը: Արցախը վերածվել էր թշնամու ուժերով շրջափակված յուրօրինակ կղզի-ամրոցի:

Չնայած իշխանությունների ու թուրքական զինյալ խմբերի հարուցած խոչընդոտների, Զիֆոնը թեև մեծ դժվարությամբ, այնուամենայնիվ, կարողանում է իշխանությունների հսկողությունից դուրս մնացած ուղիներով զենք ու ռազմամթերք տեղափոխել Արցախ եւ յուրաքանչյուր գյուղի պաշտպանության համար տրամադրել 20-30 հրացան: Ընդ որում հրացանները առաջին հերթին հանձնել են չքավոր գյուղացիներին: Իսկ ռուսներին, համաձայն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին Վարդանի եւ Սեւքարեցի Սաքոյի ներկայացրած տեղեկագրի, «ստիպել ենք մեկից աւելի զէնք գնելու զինուորների(քաջ) տրամադրութեան տակ դնելու համար»[3]:

Զենքի առք ու վաճառքով զբաղվող հայ և թուրք առևտրականները մեծ գումարներ ձեռք բերելու նպատակով գյուղացիներին բազմիցս վաճառել են ոչ միայն հին զենքեր, այլև անընդհատ բարձրացրել են զենք ու զինամթերքի գները: Կռիվների ժամանակ մոսին հրացանը վաճառել են 300 ռուբլով, բերդանը՝ 150, իսկ փամփուշտը 20-30 կոպեկով[4]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ 403, գ. 13, էջ 3-4:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 21:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 405, գ. 7:
[4] Նույն տեղում, թղ. 403, գ. 17, էջ 1:

Ճանապարհների շրջափակման պատճառով չափազանց դժվարացել էր Վարանդայից շրջաններ հաց տեղափոխելը: ՀՅԴ Արևելյան բյուրոյին հասցեագրած զեկուցագրերում «Ապառաժ» կենտր. կոմիտեն ընդգծում է հատկապես Խաչենի հայ բնակչության ծանր կացությունը: Վարդանի հավաստմամբ «...Խաչենի գաւառում կատարեալ աղքատութիւն է. մարդիկ հաց չունեն ուտելու»[1]:

Ինքնապաշտպանության ամրապնդման համար Զինվորական մարմինն ու ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեն անհրաժեշտաբար պիտի լուծեին բնակչությանը հացով ու կենսական այլ մթերքներով ապահովելու չափազանց կարևոր խնդիրը: ՀՅԴ Արևելյան բյուրոյին ներկայացրած տեղեկագրերում Ապառաժ-ի ընկերները, բացի զենք և ֆինանսներից, Արցախի կուսակցական կառույցներում աշխատելու համար բազմիցս պահանջել են նաև գործիչներ: 1906թ. գարնանը Շուշի է գալիս Ռոստոմը: Նրա ներկայությունը Արցախում, ինչպես ցույց են տալիս հետագայում այնտեղ ծավալված դեպքերը, ավելի քան անհրաժեշտ էր:

Ռոստոմը երկու ամիս մնում է Արցախում և արգասաբեր գործունեություն է ծավալում ոչ միայն ՀՅԴ կառույցներն ամրապնդելու ուղղությամբ, այլև մեծապես օգնում Զինվորական մարմնին՝ լուծելու ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված հույժ կարևոր մի շարք խնդիրներ: Նա Շուշիում գտնվող վարպետների, նրանց թվում նաև Կոստի Համբարձումի, աջակցությամբ պատրաստում և փորձարկում է ռումբեր ու հրթիռներ:

Ըստ Եղիշե Իշխանյանի(1917-1920թթ. Արցախի Ազգային Խորհրդի անդամ, ապա նաև նախագահ-Հ. Գ.), հրթիռները գմբեթաձև, սուր ծայրով, 8-10սմ տրամագծով և 40-45սմ երկարությամբ հաստ թիթեղից պատրաստված զենքեր էին: Հրթիռները 1000 քայլ տարածությունից հարվածում էին նշանակետին, առաջացնում հրդեհներ ու ամենակարևորը՝ ռումբի պես խլացուցիչ ձայն էին արձակում ու դրանով ահ ու սարսափի մատնում հակառակորդին[2]:

Շուշիի ինքնապաշտպանության ամրապնդմանը մեծապես նպաստել են քաղաքի զինագործ-արհեստավորները: Նրանք վերանորոգել ու Զինվորական մարմնի տնօրինությանն են հանձնել ոչ միայն բազմաթիվ հրացաններ, այլ նաև քաղաքում գտնվող թնդանոթները:

Ըստ Վարդանի վկայության՝ «Ունենք մեր վարպետի պատրաստած 2 դիւյմանոց 3 թնդանոթ. 2 հատ 3 դիւյմանոց-կրկին մեր վարպետի շինածը եւ 2 հատ էլ տաճկական էին. 5 դիւյմանոց հսկայական թնդանոթները»[3]:

Զինվորական մարմնի գործունեության ուսումնասիրությունը աներկբա հավաստում է, որ թեպետ քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ էին իրականացվել, բայց քաղաքի բնակիչների մի մասը, այնուամենայնիվ, մնացել էր անզեն: Այս հանգամանքը խիստ մտահոգել է քաղաքի մարտական ուժերի հրամանատարությանը:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1962, թիւ 9-10, էջ 43:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 22, էջ 1-2:
[3] Նույն տեղում, գ. 19, էջ 4:

Համաձայն Զինվորական մարմնի ու «Ապառաժ»-ի զեկուցագրերի, իրավիճակն ավելի տագնապալի է եղել շրջաններում, որտեղ բնակչության մեծամասնությունը անզեն էր ու առավել կտանգված: Արցախում համեմատաբար բարվոք վիճակում է եղել Խաչենի շրջանը, ուր Համազասպը կարողացել էր կազմավորել մարտունակ մարտախմբեր: Կռիվների նախօրեին թուրքական զինուժը քանակական առումով բազմիցս գերակշռել է հայկական մարտական ուժերին: Բայց Արցախի ինքնապաշտպանական բանակը եղել է ավելի կազմակերպված ու մարտունակ:

Հուլիսի 12-ին սկսվում է Շուշիի երկրորդ կռիվը: Ի տարբերություն նախորդ կռիվների, հայկական մարտական ուժերը հրաժարվում են պաշտպանական մարտավարությունից և գրոհներ ձեռնարկելով՝ ընդամենը երկու ժամվա ընթացքում գրավում են թուրքերի առավել կարևոր նշանակություն ունեցող դիրքերը: Եթե այդ բախտորոշ պահին թուրքերը չստանային անհրաժեշտ օգնություն, ապա շատ արագ կարող էին ջախջախվել:

Ըստ Շուշիի կռիվները պատմող վավերագրի՝ «Կառաարութիւնը մեր յառաջխաղացման լուրն առնելով, իսկոյն զօրք ուղարկեց վրացի Մազավարիանի օֆիցերի ղեկաւարութեամբ: Մի քանի գալպերից յետոյ օֆիցերը մերոնց յետ դարձրեց գրաւած դիրքերից» [1]:

Առաջին օրը ընթացող կռիվների ժամանակ զորքը մի պատահական դիպվածի պատճառով օգնում է հայ մարտիկներին: Հրացանաձգության ժամանակ թուրքերի արձակած կրակոցներից վրացի Մազավարիանիի անխոհեմության պատճառով սպանվում են երկու ռուս զինվորներ: Նահանգապետ Գոլոշչապովը հեռացնում է սպային և հրամայում է թնդանոթներից կրակ տեղալ թուրքերի դիրքերի ուղղությամբ: Պիտի ասել, որ նահանգապետի ծրագրերի մեջ երբեք չէր կարող լինել թուրքերին հարվածելու ու հայերին պաշտպանելու խնդիրը: Կովկասի փոխարքայից Գոլոշչապովն ու ցարական մյուս պաշտոնյաները ստացել էին միայն մեկ հանձնարարություն, այն է՝ խորացնել ազգամիջյան բախումներ: Այն պահին, երբ ռուս զինվորները թնդանոթներից հարվածում էին թուրքերի դիրքերին, «...զօրքերը մի այլանդակ, մի սպայի-Չերնեաեւի-ղեկաւարութեամբ Խանին-Աղջկայ տներից հարուածում էր հայերին» [2]:

Այսուհանդերձ հայ մարտական ուժերը օգտվելով զորքի կողմից թուրքերի վրա տեղացող կրակից, նորից դիմում են հարձակման ու վերստին գրավում ու հրդեհում են թուրքերի այն բնակարանները, որոնք իշխող դիրք ունեին [3]:

Հուլիսի 13-ին շրջաններից Շուշի է հասնում 120 մարտիկներից բաղկացած մարտախումբը: Քաղաքի մարտական ուժերը համալրելով մարտաշարքերը՝ շարունակում են հարձակումը եւ գրավում հակառակորդի գլխավոր հենակետը՝

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 15, էջ 1:
[2] Նույն տեղում, էջ 2:
[3] Տե՛ս նույն տեղում:

Շեյթան Բազարը: Թուրքերը պարտություն են կրում եւ հարկադրված հուլիսի 14-ի առավոտյան նահանգապետ Գոլոշչապովի միջոնորդությամբ դիմում են հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու խնդրանքով: Հայկական կողմը, ըստ Վարդանի հավաստման «8 կետից բաղկացած մի պայմանագիր ենք ներկայացնում: Գլխաւոր կետերն են՝ քանդել Դիքտան-Ղուռուն եւ Գեօվհար աղայի տան դիրքերը.վերացնել բոյկոտը...» [1]:

Թուրքերը ձգձգում և խուսափում են պատասխանել: Պարզվում է, որ նրանք, հաշտություն խնդրելով, իրականում նպատակ ունեին ժամանակ շահել, դրսից օգնություն ստանալ և շարունակել կռիվները: Սակայն Շուշիի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, հասկանալով թուրքական կողմի խնդրանքով հաստատված զինադադարի իրական նպատակը, վերսկսում է հարձակումը և պայթեցնում թուրքերի գլխավոր հենակետը՝ Դիքտան-Ղուռունը: Թուրքերը, կրելով հերթական պարտությունը, դարձյալ դիմում են հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու խնդրանքով, բայց գիշերը քաղաք են հասնում 200 և 500 զինյալներից բաղկացած երկու մարտախմբեր ու թուրքական կողմը ոգեշնչվելով նրանց ներկայությունից, դարձյալ ձգձգում են բանակցությունները: Այսուհանդերձ, հայ մարտական ուժերը կարող էին զարգացնել հարձակումն ու վերջնականապես ջախջախել հակառակորդին, եթե չլիներ նահանգապետի միջամտությունը:

«Գոլոշչապովը,-գրում է Վարդանը,- նորից մեր առաջ է դնում ուլտիմատումը՝ կամ առաջ չգնալ, կամ թնդանոթներ՝...» [2]:

Ընդհանրացնելով քաղաքում տեղի ունեցած կռիվների արդյունքները՝ կարելի է ասել, որ հայ մարտական ուժերն ու հրամանատարությունը հակառակորդին գերազանցել են ճկուն մարտավարությամբ, խիզախությամբ: ու նաև իրենց կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ: Թուրք հրոսակախմբերի համար կործանարար է եղել թալանին ու ավարառությանը տրվելու սովորությունը: Եղել են դեպքեր, երբ թուրք զինյալները, անհաջողության մատնվելով հայկական բնակավայրերում, թալանել են թուրք գյուղացիներին:

Եթե օգոստոսյան կռիվների ժամանակ բռնկված հրդեհից առավելապես վնասվել էր քաղաքի հայկական մասը, ապա երկրորդ կռվի ժամանակ կատարվել է ճիշտ հակառակը: Կռիվների ողջ ընթացքում քաղաքի բոլոր թաղամասերում մեծ արդյունավետությամբ են գործել հրդեհաձիգների խմբերը:

«Այդպիսի խմբեր, -գրում է Վարդանը,-ունէինք բոլոր շրջաններում: Դրանք կազմված էին 14 տարեկանից սկսած անվախ, համարձակ տղաներից, կատարյալ փոքրիկ «սատանաներ», որոնք գնդակների տարափի տակ թռչկոտելով դէպի թշնամու դիրքերն էին վազում կրակելու համար թուրքերի տները...» [3]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 19, էջ 3:
[2] Նույն տեղում, էջ 5:
[3] Նույն տեղում:

Միայն հուլիսի 12-13-ին տեղի ունեցած կռիվներում պատանի հրդեհաձիգներ հրդեհել են ավելի քան 200 տներ: Այդ օրը եղանակը նպաստավոր էր թուրքերի համար: Չնայած քամի բացարձակապես չի փչել, բայց նրանք, այնուամենայնիվ, կատարել են Զինվորական մարմնի հանձնարարությունը և կարողացել հատ առ հատ այրել թուրքերի առավել կարևոր դիրք ունեցող և մեծահարուստ ընտանիքներին պատկանող բնակարանները:

Բացի հրդեհաձիգների խմբերից, քաղաքում գործում էին հրդեհները հանգցնող խմբեր (հրաշեջներ), որոնք ունեցել են երկու հրաշեջ մեքենա, տակառներով ջուր, դույլեր, քանդելու գործիքներ: Համաձայն սահմանված կարգի, հրաշեջներները պիտի անհապաղ հայտնվեին վտանգված վայրերում և հանգցնեին հրդեհվող տներն ու այլ շինությունները:

Վիրավորներին ու հիվանդներին ժամանակին օգնություն ցույց տալու և խնամելու նպատակով քաղաքի թաղերում աշխատել են սանիտարական խմբեր: Կռիվների ընթացքում, այդ խմբերում ընդգրկվածներից շատերը գտնվել են հենց մարտադաշտում, զինվորների կողքին ու բազմիցս օգնություն ցույց տվել վիրավորներին:

Քաղաքի թաղապետերի նախաձեռնությամբ հիմնվել են զինվորների համար թաղային ճաշարաններ, որտեղից, հիմնականում կանայք, ուտելիք և ջուր են հասցրել մարտադաշտի առաջավոր բնագծերում մարտնչող մարտիկներին: Զինվորական մարմնի հրահանգով կազմավորվել են հատուկ նշանակության թուցիկ մարտախմբեր, որոնք դիրքավորվելով քաղաքի մերձակա անդնդախոր ձորերի մեջ, հսկում էին թշնամու տեղաշարժերը և առաջնորդում էին գավառներից Շուշի գնացող օգնական ուժերին՝ անվտանգ մուտք գործելու քաղաք [1]:

Կռիվների ընթացքում թուրքերին սարսափի են մատնել Ռոստոմի նախաձեռնությամբ պատրաստած հրթիռներն ու ձեռնառումները: Մեծ արդյունավետությամբ են գործել Շուշիի զինագործների վերանորոգած թնդանոթները: Համաձայն կռիվների մանրամասները պատմող վավերագրի, թուրքերը նույնպես ունեցել են թնդանոթներ, որոնցից մի քանի անգամ կրակել են հայ մարտիկների դիրքերի վրա: Վավերագրի գնահատմամբ հայ վարպետների պատրաստած թնդանոթների կրակը, հատկապես հինգ դյույմանոց, եղել է ավելի արդյունավետ ու սարսափազդու [2]:

Շուշիի կռիվները որոշակի ընդհատումներով հուլիսի 12-ից շարունակվել են մինչև նույն ամսվա 22-ը: Մի քանի անգամ վերջնական ջախջախումից խուսափելու նպատակով թուրքական կողմը նահանգապետի միջոցով դիմել է հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու առաջարկով, բայց յուրաքանչյուր անգամ, ինչպես արդեն նշվել է, ստանալով օգնական ուժեր՝ դրժել է խոստումն ու առաջադրված պայմանները:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 10, էջ 1:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 2-3:

Հունիսի 21-ին թուրքերը, գգալի ուժեր կենտրոնացնելով քաղաքի ավերակների վերածված թաղամասերից մեկում, կրկին փորձել են գրոհել հայ մարտիկների դիրքերը: Նրանք նախօրեին գործարքի մեջ մտնելով զորքի հրամանատարների հետ՝ ակնկալել են ստանալ նրանց աջակցությունը:

Առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումներով, նահանգապետը չի կատարել թուրքական կողմի խնդրանքը: Նահանգապետի հրամանով զորքը պահպանել է չեզոքություն և այդ օրը հանդես է եկել դիտորդի կարգավիճակով: Զրկվելով ռուս հրամանատարի՝ Չերնեւևսկու խոստացած աջակցությունից, թուրքերը չեն համարձակվում հարձակվել հայ մարտիկների դիրքերին: Այդ ճակատագրական պահին իր վճռական խոսքն է ասում հայ մարտական ուժերի հրամանատարությունը: Օգտվելով զորքի չեզոքությունից և հակառակորդի մարտաշարքերում առաջացած խուճապային տրամադրությունից՝ հայ մարտիկները հուժկու գրոհ են ձեռնարկում և խորտակելով թուրքերի դիմադրությունը՝ ներխուժում են նրանց պաշտպանական դիրքերը:

Անդրադառնալով մարտական ուժերի վերջին գործողություններին՝ Վարդանը նշում է. «Փառաւոր մի ջարդ տալուց յետոյ դուրս քշեցինք թուրքերին ...22-ի առաւօտը լուսացաւ միանգամայն դադարած հրացանաձգութեամբ, այդպիսով վեջացաւ կռիւը, որը ընդմիջումներով տեւեց ամբողջ 9 օր եւ որը կատարեալ պատերազմատեղի էր վերածել ամբողջ քաղաքը» [1]:

Ավարտվում է Շուշիի երկրորդ կռիվը: Համաձայն «Դրօշակ»-ի տվյալների, միայն հուլիսի 22-ի կռվում թուրքերն ունեցել են 190-ից ավելի սպանվածներ [2]:

Շուշիում տեղի ունեցող կռիվներին զուգընթաց մարտեր են ընթացել Արցախի շրջաններում: Հայկական մարտական ուժերը Շուշին պաշտպանելու նպատակով փակել էին դեպի քաղաք ձգվող, հատկապես Աղդամ-Ասկերան-Շուշի, ուղիները: Զրկվելով այդ ուղությամբ Շուշիի վրա հարձակվելու հնարավորությունից՝ թուրք առաջնորդները կռիվներում բեկում մտցնելու և քաղաքի վրա ձեռնարկվող գրոհը ավելի դյուրին իրականացնելու նկատառումով, կիրառում են հայ մարտական ուժերին ապակողմնորոշող մարտավարություն:

Հուլիսի 15-ին թուրք հրոսակախմբերը պաշարում են քաղաքի մերձակա՝ Վարազաբոյնի, Միրուջամալի, Ղարաղլաղ, Շուշիքենդ և այլ գյուղերը: Թուրք առաջնորդների հաշվարկով Շուշիի մարտական ուժերի մի մասը ստիպված էր գնալու պաշարված գյուղերին օգնության: Եթե Շուշիի պաշտպանների մի մասը հեռանար պաշտպանական հենակետերից, ապա գգալիորեն կթուլանար քաղաքի պաշտպանությունը և թուրքերին հնարավորություն կընձեռվեր հեշտությամբ ներխուժելու քաղաք:

Շուշիի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ճիշտ գնահատելով հակառակորդի հետապնդած նպատակը, նրա ռազմախաղին պա-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 403, գ. 19, էջ 8:
[2] Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 8, էջ 115:

տասխանում է համապատասխան մարտավարությամբ: Հայ մարտախմբերը ոչ միայն շտապում են փտանգված գյուղերին օգնության, այլև հարձակվում են թուրքական Շելլոի գյուղի վրա: Ընդ որում, Զինվորական մարմնի հանձնարարությամբ այդ կռիվներին մասնակցում են ոչ թե Շուշիի ինքնապաշտպանական ուժերը, այլ Վարանդայի ու Խաչենի մարտախմբերը: Հայ մարտական ուժերը շրջապատում են թուրք հրոսակախմբերին: Զինվորական մարմնի հաշվարկը ճիշտ էր. թուրքական ուժերը շրջափակումից խուսափելու նպատակով հարկադրված դադարեցնում են հարձակումը և շտապում կենտրոնանալ Շելլու գյուղում: Կռիվը տևել է 9 ժամ: Հայ մարտիկները կարող էին հիմնահատակ կործանել Շելլին ու ոչնչացնել բնակիչներին, բայց համաձայն այդ կռիվների մասնակից Արամայիսի «Այս երկրորդ անգամն էր, որ Շէլլուն ազատում էր աւերումից, մի անգամ յունուարի 6-ին, եւ մէկ անգամ էլ՝ այսօր շնորհիւ Դաշնակցութեան ներկայացուցիչների...» [1]:

Նույն օրերին կռիվները մեծ ուժգնությամբ ընթացել են Խրամորթի մերձակայքում: Գյուղի պաշտպաններին օգնության են շտապել Համազասպի գլխավորած Խաչենի և Վարանդայի խմբերը: Թուրք ջախջախված հեծելախմբերը, կրելով հերթական պարտությունը, լքել են մարտադաշտը: Հարձակման ենթարկված հայկական գյուղերի բնակիչները, օգտվելով հայ մարտախմբերի ձեռք բերած հաղթանակից, դուրս են գալիս պաշարման օղակից եւ տեղափոխվում Շուշի [2]:

Արցախի ինքնապաշտպանական ուժերը նկատելի հաջողության են հասնում Խաչենի գավառում: ՀՅԴ Արեւելյան բյուրոն «Դաշնացական մարմիններին» հասցեագրած շրջաբերականում ներկայացնելով 1905 թ. դեկտեմբերի 27-ից հետո մի քանի գավառներում հայ ինքնապաշտպանական ուժերի ձեռք բերած նվաճումները՝ հայտնում է. «Խաչէնի գաւառում աւերեցինք 5 թրքական գիւղ: Այստեղ սպանուած են մօտ 300 թուրք: Գիւղերն են՝ Ումուղլու, Գեօռավանդ, Ալի-Մահմուդլու եւ այլն» [3]:

Որպեսզի ավելի ամրապնդեին Շուշի քաղաքի անվտանգությունը, Արցախի մարտական ուժերի հարձակման հերթական թիրախը դառնում է խառը բնակչություն ունեցող Խանքենդ գյուղը, որը կռիվներ ժամանակ թուրքական հրոսակախմբերի համար վերածվել էր յուրօրինակ կենտրոնատեղի:

ՀՅԴ Արեւելյան բյուրոն վերոհիշյալ շրջաբերականում անդրադառնալով այդ գործողությանը՝ նշում է. «Շուշու մօտ գտնուող Խանքենդի խառն բնակչութիւն ունեցող գիւղի թրքական մասը աւերուած է ու ոչնչացուած» [4]:

Հայկական ինքնապաշտպանական ուժերն արժանի հաղթանակ են տանում նաև Արցախ աշխարհի Գյուլիստանի գավառում տեղի ունեցող մարտերում: Պարտություն կրելով Ղարաբաղի գրեթե բոլոր բնակավայրերում

[1] Արամայիս, «Միքանի գլուխ հայ-թուրքական...» , 2-րդ մաս, էջ 11:
[2] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 404, գ. 10, էջ 22-23:
[3] Նույն տեղում, թղ. 15, գ. 38, էջ 2:
[4] Նույն տեղում:

ընթացող կռիվներում, թուրք առաջնորդներն այլևս այլընտրանք չէին կարող ու նենգով՝ Նրանք պարզում են ապիտակ դրոշը և իշխանության ներկայացուցիչների միջնորդությամբ դիմում հաշտության:

Չնայած այն իրողությանը, որ Արցախի ինքնապաշտպանական ուժերը նկատմամբ տոնել էին անվիճելի հաղթանակ, բայց գավառում և հատկապես Շուշիում դեռևս տիրում էր լարված իրավիճակ: Դեռևս ընդհարումների ժամանակ, ինչպես արդեն նշվել է, թուրքական կողմ օգտվելով իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից ու Արցախի մարտական ուժերի հրամանատարության մարտավարությունից, շրջափակման մեջ էին վերցրել Շուշին: Քաղաքը արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիները գտնվում էին թուրք հրոսակախմբերի հսկողության տակ: Նույն իրավիճակը, ի դժբախտություն Շուշիի հայության, պահպանվել է նաև կռիվների ավարտից հետո: Շուշին գավառի բուսական վայրերի հետ կապող հաղորդակցության ուղիների վերահսկման ու նոր ճանապարհներ կառուցելու նպատակով արցախահայությունը բնորոշում է գործադիր մարմին՝ «Շուշի-Գանձակ ճանապարհաշինության վարչություն»:

Ինչ՞ պետք է արվեր: Իրենց իսկ արտայայտությամբ «դժոխային ճանապարհով» երթևեկելը արցախահայության համար անհնարին էր, թուրք ավազակախմբերը մշտապես հարձակվում էին հայ ճամբորդների վրա և անխտիր սպանում բոլորին: Ստեղծված իրավիճակից դուրս գալու եղանակ էր հարկավոր էր բացել նոր ուղիներ, կառուցել նոր ճանապարհներ: Ճանապարհի շինարարության համար, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ էր ֆինանսական միջոցներ: Այդ նպատակով «Շուշի-Գանձակ ճանապարհաշինության վարչության» նախագահը վերոհիշյալ դիմումում գրում է. «Օգնեցէ՛ք, եղբ. ուզում էր, որ Շուշին անհետ չը կորչի...մեր դռանը մեզ սով է սպասում, մեր յարկի տակէ կորուստ Օգնեցէ՛ք, ոչ թէ ռուբլիով, այլ առատ նուէրներով, որ կարող լինենք այդ նուէրներով կազմել հսկայ գումարը՝ 70 հազար ռուբլի եւ գործ շինել, թէ չէ կը մնանք կէս ճանապարհին» [1]:

Թեպետ մեծագույն դժվարությամբ, այնուամենայնիվ, արցախահայությունը կարողանում է հաղթանակով դուրս գալ նաև այդ կացությունից: Բացվում են նոր ուղիներ, որոնց զգալի մասը անցել է դժվարանցելի սարերով ու անդնդախոր ձորերով: Սկսում է գործել Շուշին արտաքին աշխարհի հետ կապող, քաղաքի հայության համար կենսական նշանակություն ունեցող դժվարանցելի, բայց բանուկ ճանապարհները:

Ընդհանրացնելով Արցախում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների արդյունքները կարելի է ասել, որ արցախահայությունը, շնորհիվ իր կազմակերպվածության ու կռիվներում դրսևորած քաջության, տարել է լիակատար հաղթանակ:

[1] ՀԱԱ 5 252 3 3 4 159 6

ԳԼՈՒԽ 4

ԲԱՔՎԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Բաքուն, ինչպես հայտնի է, Կովկասի արդյունաբերական այն նշանավոր կենտրոնն էր, որտեղ կովկասյան թուրքերը 1905 թ. փետրվարին սանձազերծեցին հայկական առաջին կոտորածը: Ինչպես արդեն նշվել է, այդ ժամանակ շնորհիվ Նիկոլ-Դումանի կազմակերպած ինքնապաշտպանության և հայ փոքրաքանակ մարտիկների հերոսական դիմադրության, տապալվեցին թուրք առաջնորդների հայակործան ծրագրերը, եւ Բաքվի հայությունը փրկվեց անխուսափելի կոտորածից:

Հայ մարտիկների պատասխան հուժկու հարվածները, իրենց ծրագրերի փլուզումը, գոնե ժամանակավորապես ու առերես, փոխում են թուրք վերնախավի վերաբերմունքն ու տրամադրությունը:

Մ. Վարանդյանի բնութագրմամբ «...Մեր անուղղելի դրացիները գոհ չմնացին իրենց նիւթած սարսափներու արդիւնքէն: Զոհումի թափորներ սարքեցին, բանքէտներու, խնճոյքներու մէջ եղբայրացան, հաշտեցին հայերուն հետ, հանդիսաւոր խոստումներ ըրին չենթարկիլ այլ ևս «Շէյթանի» ազդեցութեան ու ներշնչումներուն և չվերսկսիլ եղբայրասպան կռիւները[1]:

Հավատ ընծայելով թուրք առաջնորդների ու հատկապես հոգևորականության կեղծ խոստումներին ու երդումներին՝ քաղաքի հայության մեջ ու անգամ ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեում այն տրամադրությունն է իշխել, որ փետրվարյան դեպքերը լոկ պատահականություն էր, իսկ խաղաղությունը կարելի է համարել լիովին վերականգնված[2]:

Սակայն կարճ ժամանակ անց դեպքերը Բաքվում և շրջաններում այնպես են դասավորվում, որ հստակ կերպով ցույց են տալիս, որ ձեռք բերած խաղաղությունն ավելի քան երերուն էր ու խաբուսիկ:

Կովկասում, ինչպես նաև Բաքվում ծավալվող հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ քանի դեռ կայսրության տարածքում չէր մարել հեղափոխական շարժումը և շարունակվում էր ռուս-ճապոնական պատերազմը, ազգամիջյան բախումները հրահրող ուժերի, այն է՝ ցարական իշխանությունների համար դեռևս բնավ շահեկան չէր դադարեցնել ազգամիջյան ընդհարումներն ու Կովկասում հաստատել խաղաղություն: Օրինակ, քաղաքի թուրքական թաղամասերում տարածում էին տեղեկություններ, որոնց հավաստմամբ հայ զինական ուժերն արևմտահայ ֆիդայիների գլխավորությամբ պատրաստվում են հարձակվել ու կոտորել ոչ միայն Բաքվի մահմեդական բնակչությանը, այլև զինվորներին և պետական աստիճանավորներին: Միաժամանակ նույն սցենարով հայերի մեջ նույնպես տարածում էին լուրեր, համաձայն որոնց «...թուրքերը մտադիր են յարձակելու հայերի վրայ, եւ այդ լուրը հաստատելու նպատակով մէջ են բերում այն, որ իբրեւ թէ վերջին ժամանակներս գիւղերից մեծ բազմութեամբ եկած թուրքեր են երեւում քաղաքում»:

Ցարական իշխանությունների վարած այդօրինակ երկդիմի քաղաքականությունը շատ վտանգավոր էր և հղի անկանխատեսելի բացասական հետևանքներով: Բաքվի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին տարբեր ազգությունների տասնյակ հազարավոր բանվորներ, որոնք հեղափոխական շարժումների խորացման պարագայում կարող էին լուրջ վտանգ ներկայացնել իշխանությունների համար: Այդ պատճառով իշխանությունները Բաքվում և նավթահանքերում կենտրոնացրել էին հազարավոր զինվորների, որոնց պարտականությունն էր խեղդել հեղափոխական յուրաքանչյուր շարժում: Հաճախակի փոխվել են զինվորական նահանգապետերը:

1905 թ. աշնանը Բաքվի զինվորական նահանգապետ է նշանակվում իշխան Ամիրախվարին, որը ստանձնելով պաշտոնը՝ քաղաքի ազգաբնակչությանը պաշտոնապես հայտարարում է, որ ինքը եկել է Բաքու վերջ տալու հակամարտություններին ու կռիվներին և սպառնում, «...թէ բոլոր նրանք, որոնք կը փորձեն խանգարել քաղաքի խաղաղութիւնը, պիտի պատժուեն ամենախիստ կերպով, համաձայն պատերազմական օրէնքների»[1]:

Բայց շատ շուտով նորանշանակ նահանգապետի կեցվածքը աներկբայ ցույց է տալիս, որ նրա սպառնալիքներն ու զգուշացումը վերաբերում են միմիայն հայ բնակչությանը: Քաղաքում գտնվող զինվորները շրջել և խիստ հսկողություն են սահմանել ու խուզարկություններ կատարել միայն հայկական քաղաքամասում:

Զորքի ներկայությունը սարսափելի կացություն է ստեղծում քաղաքի հայության համար: Բազմաթիվ բողոքներից հետո ի վերջո իշխանությունները համաձայնում են քաղաքից հեռացնել զինվորներին, բայց խուզարկությունները, ի դժբախտություն հայերի, շարունակվում են: Նահանգապետությունը ընդունում է օրենք, որով զենք կրելու ազատ իրավունք է տրվում բոլոր «վստահելի» քաղաքացիներին: Պարզվում է, որ նահանգապետության որակավորմամբ «վստահելի» քաղաքացիները թուրքերն էին, որոնք կարող էին զենք կրել և ազատորեն շրջել քաղաքի բոլոր մասերում: Դրան հակառակ զանազան պատրվակներով արգելել են հայերին զենք կրել և զինված փողոց դուրս գալ:

Ժամանելով Բաքու իշխան Ամիլախվարին ընդհարումների բռնկման պատճառները պարզելու նպատակով հրավիրում է խորհրդաժողով, որին բացի պետական պաշտոնյաներից, մասնակցել են նաև հայ և թուրք ազգաբնակչության ներկայացուցիչները: Հայկական կողը միամտաբար կարծել է, որ իշխան Ամիլախվարին Բաքու է ժամանել արդարությունը բացահայտելու, խաղաղություն հաստատելու ու կռիվների սանձազերծման մեղսագործներին պատժելու առաքելությամբ: Սակայն հայ պատգամավորների համար միանգամայն անսպասելի է եղել այն, որ նահան-

[1] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 307:
[2] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1933, թիւ 9, էջ 127:

[1] Նույն տեղում, թիւ 4, էջ 126-127:

գապետոր փոխանակ խոսի ընդհատումների բռնկման պատճառների ու ոճրագործների մասին, ասել է. «Դուք՝ հայերդ պարտականութիւն ունէք զսպելու ձեր կոմիտէներին(նկատի ունի ՀՅԴ կոմիտեներին-Հ.Գ):

Մեր գիւղերում ինչ-որ ես հրամայում եմ մեր գիւղացիներին, լսում են և հնազանդում: Մի՞թէ դուք՝ հայերդ չէք կարող զսպել ձեր կոմիտէները»[1]:

Իհարկէ, ժողովի մասնակիցներին, այդ թվում իշխան Ամիլախվարիին քաջ հայտնի էր, որ եթէ իր մատնանշած կոմիտեները չկազմակերպեին քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը, ապա թուրք հրոսակախմբերը սպանդի կենթարկեին հայությանը: Հայ հեղափոխական կազմակերպությունները, իհարկէ՝ գլխավորապես ՀՅԴ, ցարիզմի դեմ որդեգրած իր հեղափոխական պայքարի ռազմավարությամբ ու «Կովկասյան նախագծով» անցանկալի և վտանգավոր տարր էր իշխանությունների համար:

Նորանշանակ նահանգապետի և պետական պաշտոնյաների հետագա գործունեությունը միանշանակորեն ցույց էր տալիս, որ նրանք ամեն կերպ աշխատում էին կոծկել ու մոռացության տալ փետրվարյան դեպքերը: Բաքվի հայության համար այլևս գաղտնիք լինել չէր կարող, որ ոչինչ չէր փոխվել, և անիմաստ էր ակնկալել արդարություն ու դրական տեղաշարժեր:

Տիրող կացությունը թելադրում էր որոշակի քայլեր ձեռնարկել մերկացնելու և հակահարված տալու նման քաղաքականությանը: Սթափ գնահատելով ցարական իշխանությունների հետապնդած նպատակների իրական բովանդակությունը՝ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն հրապարակում է հայերեն և ռուսերեն լեզուներով տպագրված «Բագուահայ ազգաբնակչութեան» խորագրով մի հայտարարություն, որում մերկացնում է «Черная сотня»-ի և ոստիկանության գործակալների կողմից ծավալված նենգադավ գործունեությունը:

Նույն հայտարարությունում ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն ոչ միայն նախազգուշացնում է Բաքվի հայ և թուրք բնակչությանը չհավատալ իշխանությունների կողմից տարածվող սուտ լուրերին ու չտրվել նրանց կողմից ձեռնարկվող սադրանքներին, այլ նաև զգուշացնում. «...Կազմակերպութիւնս ձեռնարկելով թուրքերի դէմ ոչ մի ակտիւ գործի, նա սակայն չի կարող տանել եւ անպատիժ թողնել նոյնանման գործեր, որ թուրքերի կողմից ուղղուած կը լինեն դէպի հայերը»[2]:

Համանման հայտարարություններով բնակչությանը դիմելն ու զգաստացնելը, թերևս, նույնպես կարևոր էր, բայց այդ ամենը դեռևս շատ բան չէր նշանակում:

Փետրվարյան դեպքերը, որոնք առաջադրեցին նոր խնդիրներ, ուսուցողական ու զգաստացնող դասեր էին ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեի եւ հայության համար: Որպեսզի չկրկնվեին անցյալի սխալներն ու բացթողումները, ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեն և Զինվորական մարմինը պիտի լուծեին հետևյալ կարևորագույն խնդիրները.

[1] Նույն տեղում, թիւ 4, էջ 128:
[2] Նույն տեղում, թիւ 12, էջ 160:

«Ա. Ոճրագործներին պատժելու խնդիրը.

Բ. Ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը Բագում և գաւառներում.

Գ. Զենքերի հայթայթում եւ գինում»[1]:

ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեում այն համոզմունքն էր տիրում, որ փետրվարյան դեպքերի պատասխանատուն և մեղսագործը ոչ թե թուրք հրոսակախմբերն ու նրաց առաջնորդներն էին, այլ իշխանությունների կայացուցիչները, առաջին հերթին Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեն, որոնց քաջալերանքով և թողտվությամբ թուրք զանգվածը սանձաստրեց հայկական կոտորածներ:

Փերվարյան դեպքերին հաջորդած ամիսներին քննելով Բաքվում տեղի ունեցած հայկական ջարդերի մանրամասները, ՀՅԴ կենտ. կոմիտեն որոշում է պատասխանատվության ենթարկել գլխավոր մեղսագործներին՝ նահանգապետ Նակաշիձեին, նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկուն, և քաղաքի ուսիկանապետ Դիմինսկուն:

Ինչպես հայտնի է, Դաշնակցության ահաբեկիչ մարմնի հանձնարարությամբ գեներալ Նակաշիձեի ահաբեկումը իրականացնում է Դրոն[2]:

Պիտի նկատել, որ ինքնապաշտպանության կազմակերպման գործը համեմատաբար ավելի դյուրին էր դարձել: Նախ, փետրվարյան դեպքերից հետո թուրքական թաղամասերում բնակվող հայերը լքել էին իրենց նախկին բնակարանները և կենտրոնացել էին հայկական թաղերում: Բաքվի Զինվորական խորհրդի ու անձամբ Նիկոլ Դումանի որոշմամբ քաղաքի հայկական մասը բաժանվում է ինքնապաշտպանական շրջանների և յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է մի պատասխանատու ղեկավար, որին անվանել են շրջանապետ:

Բաքվի թուրք բնակչության վրա իր նշանակալի ազդեցությունն էին գործել ոչ միայն փետրվարյան դեպքերի ժամանակ հայ մարտիկների անբասիր գործողությունները, այլև Գանձակի նահանգից, հատկապես Արցախի շրջաններից ու Շուշիից քաղաք հասնող լուրերը: Արցախում ընթացող կռիվներում հայ մարտական ուժերի հաղթանակները, հատկապես Շուշիում իրենց արյունակիցների կրած պարտությունը երկակի տրամադրվածություն էին առաջացրել թուրք բնակչության շրջանում:

Նախ, այդ հաղթանակները ավելի էին խորացրել թուրքերի մեջ ստրոսկած վախն ու սարսափը: Թուրք վերնախավը շատ լավ հասկանում էր, որ Գանձակի նահանգում և այլ վայրերում հայկական մարտական ուժերի նվաճած հաղթանակները կարող էին արմատապես փոխել ուժերի հարաբերակցությունը հօգուտ հայերի նաև Բաքվում ու գավառում: Շատ կարևոր էր կաշկանդել հայ մարտական ուժերի հաղթական գործողությունները և ինչ-որ միջոցներով աջակցել Արցախում և այլ գավառներում դժվարին իրավիճակում հայտնված հայրենա-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս Համլետ Գեւորգյան, Դրո, Երեւան, 2007, էջ 20-21:

կիցներին: Այդ նպատակով թուրք վերնախավը աշխատում էր միջոցներ գործադրել Չիկացնելու քաղաքում տիրող անկարգությունը և թուրք ամբոխի գրգռելով հայերի դեմ՝ նրանց անհաբեկելու միջոցով մեղմացնել Շուշիում և մյուս շրջաններում հայ մարտական ուժերի ծավալած հարձակումները:

Շուշիում հայ մարտական ուժերի ձեռնարկած հարձակումները կասեցնելու և դժվարին կացությունում հայտնված իրենց արյունակիցներին օգնելու համար, թուրք պարագլուխների կողմից օգոստոսի 19-ին մի պատգամավորություն է ներկայանում նորանշանակ զինվորական նահանգապետ Ֆաղելին և նրան տեղեկացնում, որ Շուշվա դեպքերի պատճառով քաղաքի երիտասարդությունը չափազանց գրգռված է: Ավելին, պատվիրակները նահանգապետին նաև վերջնագրի կարգով հայտնում են, որ իրենք այլևս անզոր են զսպելու երիտասարդությունը, և եթե հարձակումներ լինեն հայերի վրա, ապա իրենք պատասխանատու չեն[1]:

Թուրք վերնախավի համար դա փորձված ու ընդունելի մարտավարություն էր: Նման մարտավարությամբ նրանք փորձել են կասեցնել հայ ինքնապաշտպանական ուժերի հարձակումները նաև Երևանի նահանգում, բայց նման խորամանկ գործելակերպով, իհարկե, հնարավոր չէր կաշկանդել Նիկոլ Դումանին:

Քանի որ ցանկացած պահի հայությանը սպառնում էր թուրք ամբոխի հարձակման վտանգը, ուստի Զինվորական մարմինը մինչև օգոստոսյան երկրորդ ընդհարումների բռնկումը ինքնապաշտպանական շրջաններում կազմավորել է մարտական խմբեր, իսկ համապատասխան կետերում պահեստավորել զենք ու զինամթերք: Բայց այդ ամենը, այսինքն՝ ինքնապաշտպանության կազմակերպման գործը ընթացել է խիստ դժվարին պայմաններում: Դարձյալ գլխավոր խոչընդոտը իշխանությունների վարած քաղաքականությունն էր, նրա հարուցած արգելքները:

«Ամեն օր նահանգապետ Ամիլախվարին,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը,- կամ զորքի ընդհանուր հրամանատարը մի- մի ազգեր էին հրապարակում, որոնց բոլորի իմաստ այն էր, թե ում մոտ զենք գտնուի կամ եթե փողոցներում զինուած մարդիկ երևան՝ ամենախիստ պատասխանատուութեան կենթակուեն»[2]:

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի պնդման, այդ սպառնալիքները ուղղված էին միմիայն հայերին, իսկ թուքերը ազատ էին այդ կարգի սպառնալիքներից[14]:

Այսուհանդերձ, փետրվարյան դեպքերից հետո Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն, Կովկասահայության ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմինը և նրա անմիջական ղեկավարությամբ գործող Զինֆոնը զգալի աշխատանքներ են ծավալում ինքնապաշտպանական ուժերը կազմակերպելու և քաղաքի հայ բնակչությանը զինելու ուղղությամբ:

Բաքվի նահանգի բնակչությունը ունեցել է հետևյալ կազմը.[3]

[1] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 4, էջ 128:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, թիւ 9, էջ 129-130:

	հայեր	ռուսներ	շիաներ	սիունիներ	լեզգիներ
Բաքուի քաղաք	73.000	103.000	143.000	21.000	14.000
Բաքուի գավառ	----	1.000	27.000		
Գեոքչայի	7.000	2.000	48.000	61.000	2.000
Ջաւադի	---	17.000	88.000	5.000	
Ղուբայի	2.000	6.000	34.000	88.000	61.000
Լենկորանի	2.000	20.000	111.000	30.000	1.000
Շամախի	21.000	18.000	40.000	75.000	
Ընդամենը	105.000	167.000	491.000	280.000	78.000

Նահանգում հայ բնակչության տեղաբաշխումը հատուկ ուսումնասիրություն է պահանջում, քանի որ ան համեմատաբար շատ ավելի դժվարին է եղել ինքնապաշտպանությունը կազմակերպել կայուն հիմքերի վրա դեռևս շրջաններում, որտեղ թուրքերը հատկապես փոքրաքանակ մեծամասնություն էին կազմում:

Համաձայն Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի տվյալների, 1905 թ. փետրվարից մինչև օգոստոս այսինքն՝ առաջին հայ-թուրքական ընդհարումներից մինչև երկրորդ ընդհարումը, ՀՅԴ Արևելյան բյուրոյի հասցեատիրոջ Կենտրոնական Զինֆոնը կազմակերպել էր գենք և զինամթերք տասնապատիկ տարբեր տեսակի. 2054 հրացան, 3842 ատրճանակ ու հասցեատիրոջ 1.374.955 և 518.727 փամփուշտ: Միաժամանակ Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. տրամադրել ու տվել Զինֆոնի ղեկավարությանը այդ նույն ժամանակահատվածում՝ 21 բերդան և Բաքու տեղափոխվել 1430 հրացան, 316 ատրճանակ ու համապատասխանաբար 545.335 և 120.429 փամփուշտ:

Փաստորեն, ինքնապաշտպանական ուժերի հակահարվածը ստանալով հայ սատրապներից, թուրքերը, ծանանակագրությունները դադարեցնում են հայկական թաղամասերը ոչնչացնելու գործունեությունների վրա ձեռնարկվող գազակատարությունները, բայց կոխարենը շարունակում են հայ բնակչության նկատմամբ առաջին հերթին ինքնապաշտպանության դեպքում պարզապես կիրառել բռնություններ, անպատիվ նաև սպանություններ:

Թուրք հրոսակների կողմից Բաքվում իրականացվող այդպիսի գործունեությունները կասեցնելու համար, նախաձեռնությունը գնում է ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն և քաղաքի հայկական Զինկոմիտեն:

Շատերը պատմում են, որ Բաքվի երկրորդ ընդհարումներից հետո, մոտ մի տարի հետո, թուրք ոստիկանությունը ներգրավվեցին

[1] Տես՝ ՀՅԴ Ա., թ. 324 և 13.09.23

որ նահանգապետի ու հաշտարար խմբի ուղեկցությամբ շրջել են քաղաքում և հանդիպելով հայ ու թուրք բնակչությանը՝ կրկին անգամ խաղաղության են կոչել նրանց: Բայց դա ամենևին չի խանգարել, որ թուրք զինյալները կրակ արձակեին նույնիսկ նահանգապետի վրա [1]:

Նույն սկզբնաղբյուրների վկայությամբ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն և հայ բնակչությունը, հիմք ունենալով փետրվարյան արյունալի դեպքերը, թեպետ արել էին անհրաժեշտ հետևություններ, բայց շարունակում էին հարգատ մնալ նախկին՝ խաղաղություն պահպանելու, առավել ևս նախահարձակ չլինելու մարտավարությանը:

Բնական է, որ ի սկզբանե հայակործան ծրագրերով առաջնորդվող թուրքերը պիտի լավագույնս օգտագործեին ոչ միայն քաղաքային իշխանությունների անտարբերությունն ու թողտվությունը, այլև ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի ու հայկական Զինվորական խորհրդի կրավորական դիրքորոշումը և դարձյալ հանդես գային նախահարձակի դերում: Համաձայն Նուխիի ՀՅԴ «Ծաղկաձոր» կոմիտեի կազմած զեկուցագրի, թուրքերի հարձակման մասին կոմիտեն տեղյակ է եղել դեռևս դեպքերի նախօրեին [2]:

Ըստ այդ նույն սկզբնաղբյուրների, այդ թվում՝ նաև Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամ վերոհիշյալ Հարություն Շահրիկյանի՝ Բաքվի դեպքերը ներկայացնող հուշագրության վկայությունների, պարզվում է, որ այդ օրերին հայության ինքնապաշտպանության կազմակերպումն այն միակ խնդիր չէր, որը մտահոգել է հայ ազգային-քաղաքական կուսակցություններին, այդ թվում նաև՝ Դաշնակցությանը:

Նույնիսկ այն օրերին, երբ բովանդակ Կովկասում ծավալվում էին հայ-թուրքական ընդհարումները, և բնականաբար հայության ու նրա ազատագրական պայքարն առաջնորդող կազմակերպությունների գլխավոր խնդիրը և մտահոգությունը պիտի լիներին կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպումը, Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները, որդեգրելով ցարիզմի դեմ հեղափոխական պայքար մղելու ռազմավարությունը, այլ քաղաքական կուսակցությունների, հատկապես սոցիալ-դեմոկրատների համագործակցությամբ ինչ-որ չափով մասնակցել են գործադուլներ և իշխանությունների դեմ բողոքի զանգվածային ցույցեր կազմակերպելու աշխատանքներին:

Օգոստոսյան բախումների նախօրեին Բաքվում գործող քաղաքական կուսակցությունների, իսկ Հ. Շահրիկյանի հավաստմամբ Հնչակյան և Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունների նախաձեռնությամբ, ընդհանուր գործադուլի պիտի դուրս գային Բաքվի նավթահանքերի բանվորները, իսկ բանվորության զգալի մասը կազմում էին հայերը [3]:

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 344, գ. 9, էջ 13:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 1:

«Կովկասյան նախագիծ»-ը ընդունած ՀՅԴ, որպես ընկերվարական կուսակցություն թեպետ մասնակից է այդ գործադուլներին, սակայն «Դրոշակ»-ի խոստովանությամբ «Հայկական ֆիրմաներում հայ բանվորության կողմից, իհարկէ միացած օտար տարրերի հետ, կատարած գործադուլները վերջ ի վերջոյ, անշնչան բացառութեամբ, բանվորութեան նպաստաւոր կերպով վերջացան՝ դաշնակցական մարմնի միջամտութեամբ» [1]:

Ի տարբերություն հայ ձեռնարկատերերի, օտար ֆիրմաները չեն բախարարել իրենց ներկայացված, այն է՝ օրավարձը բարձրացնելու պահանջը, որն էլ պատճառ է դարձել երկարատև գործադուլների:

Գործադուլ կազմակերպելու նպատակով մի քանի քաղաքական կազմակերպությունների, որոնց թվում Սոցիալ-Դեմոկրատական, Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունների մասնակցությամբ Բաքվում մի քանի անգամ գումարվում է միջկուսակցական ժողով, որին չեն մասնակցել թուրքական կողմի ներկայացուցիչները: Ժողովի մասնակիցների համար գաղտնիք չէր, որ եթե բանվորները, որոնց մեծամասնությունը հայեր էին, սկսեին գործադուլը և դուրս գային փողոց, ապա չէր բացառվում, որ թուրք զինյալները հարձակվեին նրանց վրա ու սանձազերծեին նոր կոտորածներ: Չէր բացառվում, որ թուրքերը կարող էին օգտագործել պատեհ հնարավորությունն ու անկառավարելի իրավիճակը և կոորոածները վերսկսել նաև քաղաքում: Այդ պատճառով ժողովի մասնակիցների գլխավոր մտահոգությունը հենց այդ էր: Հարց է ծագում, եթե իրոք թուրք զինյալները հարձակվեին բանվորների վրա, ապա ժողովի մասնակից քաղաքական կազմակերպությունները ուժ կունենային, ի զորու կլինեին պաշտպանել բանվորությանը:

Ըստ Հ. Շահրիկյանի, ժողովում ծավալված քննարկումներից պարզվում է, որ հանդիպման մասնակիցները «...ոչ մի ուժ չունեն, յայտնեցին որ ընդամենը 3 ատրճանակ ունեն...»: Ավելին, նրանք Դաշնակցությունից պահանջել են «...փոխառու թիւն անել իրենց 10000 ռուբլի գէնք հայթայթելու համար ու 500 ռուբլի տալ իրենց թուրք բանվորների մէջ թուրքերէն թռուցիկներ գրելու համար, կամ առհասարակ թուրքերէն թռուցիկների տպագրութեան համար, որովհետեւ իրենք նիւթական միջոց եւ այդ բանին հասնող սամոյ չունեն» [2]:

Իհարկե, Դաշնակցությունը մերժում է իրեն ներկայացված նման անօգուտ ու անլուրջ պահանջը և հաշվ առնելով ժամանակի յուրահատկություններն ու քաղաքում տիրող կացությունը՝ հրաժարվում է մասնակցել գործադուլին: Հանդիպման մասնակիցները, բացի հնչակյաններից, հաշվի առնելով իրենց անզորությունն ու պաշտպանվելու անհրաժեշտ միջոցներ չունենալը, համաձայնվում են, որ նման իրավիճակում անմտություն ու վտանգավոր էր գործադուլ կազմակերպելը: Այսուհանդերձ, ցարիզմի դեմ հեղափոխական պայքարի ռազմավարությամբ առաջնորդվող կուսակցությունները, հաշվի առնելով այն իրո-

[1] «Դրոշակ», 1906, թիւ, էջ 139:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ 324, գ. 13, էջ 2:

դությունը, որ ՀՅԴ քաղաքում ուներ զինված մարտական ուժեր եւ բավական ուժեղ էր եւ ինչքան էլ դեմ լիներ գործադուլին, այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում «...եթէ յարձակում տեղի ունենա ամբոխի կողմից, ստիպուած կը լինի զինուած դուրս գալու պաշտպանուելու համար, որով եւ առաջ գալիք չփոթութիւնը, խառնակութիւնը կը ծառայէ իրենց նպատակին, այն է՝ գործադուլը գործադուլի համար, խառնակութեան, անիշխանութեան» [1]:

Ժողովի մասնակիցների որոշմամբ նախատեսվում է քաղաքում գործադուլը սկսել օգոստոսի 16-ին, բայց ինչ-ինչ պատճառներով այն տեղ չի ունենում և մի քանի օր անց՝ օգոստոսի 19-ին, գործադուլ են անում միայն ձիաքարշի աշխատողները: Հաջորդ օրը՝ օգոստեսի 20-ին, քաղաքի իշխանությունների կարգադրությամբ զորքը բռնագրավում է ձիաքարշը և վերականգնում երթևեկությունը: Սակայն շուտով հայտնվում են ձիաքարշի աշխատողները և փորձում կանգնեցնել երթևեկությունը: Այդ հողի վրա ընդհարում է սկսվում զինվորների ու ձիաքարշի ծառայողների միջև: Ընդհարման հետևանքով եղել են նաև զոհեր, իսկ ձիաքարշի հայ ու թուրք աշխատողներն առանց միմյանց վնասելու, տեղի տալով զինվորների բռնություններին՝ դիմում են փախուստի: Իր ընդգրկումով խիստ սահմանափակ այդ միջադեպից մի փոքր անց քաղաքում գործողությունները ծավալվում են բոլորովին այլ ուղղվածությամբ: Թուրք վերնախավը կարծես հենց այդ պահին էր սպասում իրագործելու իր ծրագրերը: Թուրքերն անմիջապես օգտագործում են ընձեռված առիթն ու հնարավորությունը և սկսում քաղաքի տարբեր ուղղություններից կրակ տեղալ հայկական քաղաքամասի ու փողոցներում գտնվող հայերի վրա, որին անմիջապես հաջորդում է հայկական կողմի համարժեք պատասխանը [2]:

Գործադուլի մասին այլևս խոսք լինել չէր կարող:

Օգոստոսի 20-ին սկսվում է Բաքվի երկրորդ ընդհարումը, որն արագորեն տարածվում է քաղաքի զանազան մասերում և ապա նաև հանքավայրերում ու քաղաքի հարակից բնակավայրերում:

Երկրորդ ընդհարման նախօրեին Զինվորական մարմինը, հիմք ունենալով քաղաքում տեղի ունեցող տեղաշարժերը, ինչպես նաև հայ մարտական ուժերի որակական և քանակական աճը, քաղաքաքը բաժանում է վեց ինքնապաշտպանական շրջանների, որոնք ունեցել են 38 մարտական դիրք: Բացի դրանից, Զինվորական մարմնի տրամադրության տակ եղել են նաև երկու թուրքական խմբեր, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի օգնության շտապեին վտանգված շրջաններին:

Քաղաքի վեց ինքնապաշտպանական շրջանները ունեցել են հետևյալ մարտական կազմը.

«Առաջին շրջան	29
Երկրորդ շրջան	16

[1] Նույն տեղում, էջ 3:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

Երրորդ շրջան	27
Չորրորդ շրջան	31
Հինգերորդ շրջան	38
Վեցերորդ շրջան	23
Երկու թուրքական խմբեր	19
Ընդամենը՝	175
Հայոց գիւղը՝ հինգ դիրք, ընդամենը՝	31
Թուրքական խումբ	50
Ընդամենը՝	81»:

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի «Մեր եւ Սպիտակ Քաղաքները եւ Հայոց Քիշլի գիւղ 84 հոգի, բացի այդ՝ նոյն շրջանի գործարանատէրերը իրենց հաշուով պահում էին 36 հոգի, որոնք կռիւ ժամանակ պիտի ենթարկուէին մերոնց, ուրեմն ընդամէնը՝ 120 հոգի: Բիբէյբաթի շրջանում կար 30 հոգի: Այդպիսով քաղաքի եւ իր արուարձանների մէջ մենք ունէինք պատրաստի եւ անմիջապէս մեր տրամադրութեան տակ ընդամէնը՝ 406 հոգի» [1]:

Հայ մարտիկների 13 տոկոսը զինված է եղել մաուզերներով, 40 տոկոսը սովորական ատրճանակներով, իսկ մնացածները հրացաններով, որոնց մեծ մասը եղել է Բերդան: Ընդհարումների բռնկման նախօրեին, Զինվորական մարմնի կենտրոնավայրը Իսահակ Մելիքյանի լուսանկարչատնից(Բաքվի հանրահայտ «Ռեմբրանտ» լուսանկարչատունն է, որը փետրվարյան առաջին ընդհարումների ժամանակ եղել է Նիկոլ Դումանի ռազմական շտաբը-Հ.Գ.) տեղափոխվում է Մալականի այգու դիմացը գտնվող անհրաժեշտ հարմարություններ ունեցող Գեանջեցյանի մեծ շենքը [2]:

Թուրքերի հարձակումները այս անգամ արդեն չէին կարող անակնկալ լինել: Ի պատասխան թուրքերի ձեռնարկած գրոհների ու հրացանաձգության, հայ մարտիկները զուտ մարտավարական նկատառումով քողել են հարձակվողներին մոտենալ իրենց դիրքերին, ապա միահամուռ համազարկեր տեղացել նրանց վրա:

Ի տարբերություն Երևանի, Գանձակի նահանգներում և Թիֆլիսում տեղի ունեցած կռիվները, ինչպես նաև Բաքվի փետրվարյան ջարդերը պատմող սկզբնաղբյուրների, որոնք պատկերում են տեղի ունեցած դեպքերի մանրամասները, մարտական խմբերի հրամանատարներին և ինքնապաշտպանական մարտերում հայ մարտիկների կիրառած մարտավարությունը, Բաքվի երկրորդ ընդհարումներին վերաբերող վավերագրերն ու հուշագրությունները կատարված դեպքերը ներկայացնում են առավել ընդհանուր գծերով [3]:

[1] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 1, էջ 144:
[2] Տե՛ս նույն տեղում, 1934, թիւ 9, էջ 109:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թթ. 344, գ. 6, 7, 8, 9, 15:

Նույն պատկերն է Բաքվի երկրորդ ընդհարումներին նվիրված, այդ դեպքերի մասնակից Աբ. Գյուլխանդանյանի հուշագրություններում: Իսկ նա այդ ժամանակ Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամն էր և Զինվորական մարմնի ղեկավարը(լահգոր):

Օրինակ, ըստ արժանվույն գնահատելով օգոստոսի 20-ին տեղի ունեցած կռիվներում հայ մարտիկների դրսևորած հերոսական գործողությունները՝ նա գրում է. «Այդ օրը մեր թուցիկ խմբերը, կարելի է ասել, հրաշքներ էին գործում: Հրամանատարութեան կարգադրութեամբ անդադար անցնելով մի դիրքից միւսը՝ իրենց ճանապարհին նրանք մաքրում էին բոլոր թաթարական անհատական կամ խմբական զինուած ուժերը»:

Միաժամանակ նշելով, որ «Շնորհիւ մերոնց այս բաց դիմադրութեան, թաթարները իրենց բազմաթիւ յարձակումներով հանդերձ, անկարող եղան թափանցել հայկական քաղաքամասը, և այդպիսով միանգամայն վիժեցին թաթարների բոլոր ծրագիրները», նա չի նշում մարտական խմբերի կազմը, զինվածությունը, հրամանատարների և կռիվներում աչքի ընկած մարտիկների անունները, ինչպես նաև կիրառած մարտավարությունը [1]:

Ուշագրավ է, որ մինչ այդ փողոցներում պարեկություն անող զորքը կռիվների ժամանակ ընդհանրապես չի երևացել փողոցներում: Եւ միայն երեկոյան հայտնվել է քաղաքի փողոցներում, նաև թուրքական քաղաքամասում, որպեսզի ստիպի հակամարտող կողմերին դադարեցնելու կռիվը:

Աբ. Գյուլխանդանյանի վկայությամբ «Ոստիկանութիւնը զօրքի հետ նոյնպէս դուրս եկաւ փողոց՝ «կարգը պաշտպանելու» և դիակները հաւաքելու համար: Մենք զոհեր չունէինք: Թաթարների կորուստները զգալի էր. մի քանի տասնեակ զոհեր էին տուել նրանք այդ օրը մինչեւ զօրքի երեւալը:

...Զօրքը մնաց փողոցներում մինչեւ կէս գիշեր, որից յետոյ բոլոր փողոցները դատարկուեցին» [2]:

Վերոհիշյալ վավերագիրը, արժանվույնս գնահատելով օգոստոսի 20-ին տեղի ունեցած մարտերում հայ մարտիկների դրսևորած հերոսականությունը, նույնպես նշում է, որ թուրքերը ունեցել են տասնյակ զոհեր, իսկ հայկական կողմը չի ունեցել ոչ միայն զոհեր, այլև նույնիսկ վիրավորներ [3,4]:

Զորքի հեռանալուց հետո, թուրքերը վերսկսում են հարձակումը և այս անգամ փորձում են պաշարել հայ մարտիկների այն դիրքերը, որոնք գտնվել են թուրքական քաղամասերի մերձակայքում: Նրանք հույս են ունեցել, որ նման մարտավարությամբ իրենք կկարողանան խորտակել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել հայկական քաղաքամաս:

Համաձայն այդ կռվի մասին պատմող վավերագրի, հայ մարտիկները ոչ միայն կարողացել են հետ մղել թուրքերի գրոհները, այլև իրենք են դիմել հարձակման: Թուրքերը չդիմանալով հայ մարտիկների հարձակմանը, դիմում են փախուստի [1]:

Թուրքերին առավելագույն սարսափի ու խուճապի մատնելու նպատակով Զինվորական մարմնի հրահանգով հայ մարտիկները իրենց գրաղեցրած բոլոր դիրքերից կրակ են տեղում թուրքական թաղերի վրա: Հայ ինքնապաշտպանական ուժերի հակահարվածն այնպիսի ազդեցություն են գործել թուրքերի վրա, որոնք դարձյալ մի քանի տասնյակ զոհեր տալով, այսուհետ չեն համարձակվել քաղաքում հարձակվել հայերի վրա [2,3]:

Օգոստոսի 21-ին հրացանաձգությունը քաղաքում դարձյալ վերսկսվում է: Այդ օրը Բաքվի մերձակա գյուղերից քաղաք են ներխուժում հազարավոր թուրքեր, որոնք միանալով տեղի թուրք ամբոխին՝ շարունակում են հարձակումը հայկական քաղաքամասի վրա, միաժամանակ կրակ տեղում նաև զինվորների վրա: Գազազած ամբոխի զոհն անկասկած կարող էին դառնալ նաև զինվորները, եթե հարկադրված չլինեին դիմելու պատասխան գործողությունների:

Այդ դեպքերը ներկայացնող վավերագրերից մեկի վկայությամբ զինվորները միահամուռ համազարկեր են տեղում ամբոխի վրա և կրակ արձակում նույնիսկ թնդանոթներից [3]:

Այդ ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, համապատասխան դիրքեր գրավելով, քաջաբար դիմադրել և խափանել են թուրք ամբոխի՝ հայկական քաղաքամաս ներխուժելու բոլոր փորձերը: Այդ ժամանակ քաղաքում գտնվել է 4500 զինվոր: Բաքու ներխուժած բազմահազար թուրք ամբոխի առկայությունն ու նրա կողմից զորքի և հայկական քաղաքամասի վրա շարունակաբար կրկնվող հարձակումները հարկադրում են իշխանություններին Թիֆլիսից Բաքու բերել ևս 2000 զինվոր [4]:

Զինվորների միջամտությամբ թեև կռիվը դադարում է, բայց փողոցներից, տներից, անկյուններից երկուստեք շարունակվում են կրակոցները: Զորքի հրամանատարությունը քաղաքը խաղաղեցնելու նպատակով պատերին փակցնում է հետևյալ հայտարարությունը.

«Ա. այն անձը, որ կը համարձակուի զէնք կրել, կը յանձնուի զինուորական դատարանին եւ կը պատժուի պատերազմական օրէնքի համաձայն(մահուան պատիժ կախաղանի միջոցով):

Բ. Այն տունը, ուր զէնքեր կը գտնուին կամ որտեղից զէնք կը պարպուի,անմիջապէս կը ռմբակոծուի» [5]:

Ընդհարումների երրորդ օրը նահանգապետը առաջարկում է դադարեցնել կռիվներն ու հաշտություն կայացնել: Հայկական կողմը ընդունում է նահանգա-

[1] «Հայրենիք» ամս., 1934, թիւ9, էջ 110:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 2:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 3-4:
[2] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 9, էջ 110:
[3] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 344, գ. 5, էջ 2:
[4] «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 149:
[5] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 9, էջ 111:

պետի առաջարկը. բայց հիմք ունենալով նախորդ բազմաթիվ փորձերն ու հատկապես թուրքական կողմի խաբեությունն ու վստահություն չներշնչող կեցվածքը, հաշտություն կայացնելու համար ներկայացնում է որոշակի պայմաններ. որոնք պիտի երաշխավորեին հաշտության կայունությունը: Թուրքական կողմը մերժում է առաջադրած պայմանները. իսկ նահանգապետը փոխարքային զեկուցում է. թե հայերն են մերժում հաշտությունը [1]:

Հիմք ընդունելով այդ զեկուցումը՝ «փոխարքան հեռագրով դիմում է կաթողիկոսին. որպեսզի իր հեղինակությունը գործ դնի հայերի վրայ հաշտելու համար: Կաթողիկոսը ստուգելով. պատասխանում է եւ յայտնում է ստութիւնը» [2]:

Կաթողիկոսի պատասխանից և հայերի կողմից բազմաթիվ բողոք-դիմումներ տանելուց հետո միայն. զորքի միջամտությամբ կռիվները քաղաքում դադարում են: Համաձայն Մ. Վարանդյանի տվյալների. Բաքվի երկրորդ ընդհարման ժամանակ «1905 թ. օգոստոսի ամսուն-որու ընթացքին սպանեցան շուրջ 400 հոգի. 270- ը թուրք. 130–ը հայ ու այլ ազգի» [3]:

Բաքվի երկրորդ ընդհարման ժամանակ Մ. Վարանդյանի ներկայացրած զոհերի քանակը միանգամայն համապատասխանում են Ա-ԴՕ-ի հրապարակած թվերին: Ավելի ստույգ. քանի որ Ա-ԴՕ-ն վերոհիշյալ տվյալները հրապարակել է ավելի վաղ՝ 1907 թ., ապա ճիշտ կլինի ասել. որ Մ. Վարանդյանը պարզապես կրկնում է Ա-ԴՕ-ի հրապարակած տվյալները. առանց սկզբնաղբյուրը նշելու [4]:

Զորքի միջոցով հակամարտությունը քաղաքում դադարեցնելուց ու խաղաղություն հաստատելուց հետո իշխանությունները դիմում են բռնությունների ու անօրինական գործողությունների:

Իրենց լրտեսների մատնությամբ ու տեղեկատվությամբ ոստիկանները սկսում են խուզարկությունները. իհարկե. նրանց խուզարկության հիմնական թիրախը հայերին պատկանող տներն էին ու գրասենյակները:

«Օրինակ. երբ զինուած հայ են տեսնում.- գրում է Հ. Շահրիկյանը.- նրան ձերբակալում կամ գնդակահարում են. բայց երբ թուրքերին են տեսնում. լռելեայն անցնում են. երբ մի հայ տնից գնդակ է կրակում. անմիջապէս շրջապատում. խուզարկում են. բայց երբ թուրքի տնից կամ դիրքից են ոչինչ չեն անում» [5]:

Ըստ այդ նույն վավերագրերի. եղել են նաև դեպքեր. երբ զորքը հայերին պատկանող տների. կենտրոնների ու ձեռնարկությունների վրա կրակ է արձակել ոչ միայն հրացաններից. այլև նույնիսկ թնդանոթներից [6]:

Այս հարցում բոլորովին հասկանալի չէ պետական պաշտոնյաների նկատմամբ հայերի. հատկապես մեծահարուստ հայերի դրսևորած վերաբերմունքը:

[1] Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 11, գ. 166:
[2] Նույն տեղում:
[3] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 308:
[4] Տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 33:
[5] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 5:
[6] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 344, գ. 5, էջ 6:

Փոխանակ թուրքերի կողմից կաշառված պաշտոնյաներին մեղադրելու. նրանք նույնպես պիտի աշխատեին կաշառել պետական պաշտոնյաներին. զինվորականներին ու շահեին նրանց համակրանքն ու աջակցությունը. մանավանդ որ զուտ ֆինանսական առումով բնավ չէին զիջում իրենց հակառակորդին:

Հայերի. առավել ևս զինված հայերի նկատմամբ պետական պաշտոնյաների ու զորքի դրսևորած նման վերաբերմունքը Զինվորական մարմնի. Բաքվի ՀՅԴ «Ռևկանապատ» կենտր. կոմիտեի և նրա անդամ Հ. Շահրիկյանի համար բոլորովին անակնկալ չպետք է լիներ: Հայ բնակչության նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությանը խոչընդոտելու նպատակով ՀՅԴ Արևելյան բյուրոն հարկադրված հրապարակում է հայտարարություն. որով զգուշացնում ու սպառնում է իշխանության ներկայացուցիչներին. որ «...այսուհետեւ նրանցից յուրաքանչիւրը անխնայ կերպով ոչնչացուի. եթէ համարձակուի հայերի ձեռքից զենք խլել. խուզարկութիւն կատարել կամ բանտարկել...»:

Այդ հայտարարությանը հաջորդում է Բաքվի ոստիկանության պետի՝ Մահմեդբեկովի և մի քանի ոստիկանների ահաբեկումը [1]:

Մահմեդբեկովը իր թշնամական վերաբերմունքը հայության նկատմամբ հստակ դրսևորել էր փետրվարյան դեպքերի ժամանակ և շարունակում էր նույն գործելակերպը նույնիսկ այն օրերին. երբ քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով հայ և թուրք բնակչության ներկայացուցիչներից կազմվել ու գործում էր խաղաղարար հանձնաժողովը: Թուրք ոստիկանապետը գլխավոր մեղսագործն էր գնդապետ Բիկովի ահաբեկիչ. Բաքվի փետրվարյան ինքնապաշտպանական կռիվների հերոս Համո Ջանփոլադյանի սպանության գործում: Նրա հրամանով էին մարտի 22-ին ոստիկանները քաղաքային պարտեզում առանց որևէ բացատրության ոստիկանատուն են տարել Մկրտիչ Աղամալյանին. Մարտիրոս Չարուխչյանին. Ախալցխացի Մկոյին և Համո Ջանփոլադյանին(Բաքվի փետրվարյան դեպքերի ժամանակ նրանք եղել են Դումանի մարտախմբում-Հ.Գ): Իսկ այդ օրերին իրավիճակը քաղաքում համեմատաբար խաղաղ է եղել: Ճանապարհին նրանց վրա հարձակվել են թուրք զինյալները, որոնց միացել են նաև ոստիկանները: Համոն փորձել է պաշտպանվել. բայց զոհվել է ոստիկանների գնդակներից:

Երրորդ ընդհարումից հետո Մահմեդբեկովի հանձնարարությամբ ոստիկանության լրտեսները քաղաքի թուրք բնակչության աջակցությամբ ակնդետ հետևել են հայերի յուրաքանչյուր քայլին:

Համոյի զոհվելու և կատարած չարագործությունների համար թուրք ոստիկանապետը պիտի կյանքով հատուցեր: Զինվորական մարմնի որոշմամբ հայ վրիժառուները օրեր շարունակ հետապնդում և հարմար պահը որսալով. ինչպես արդեն նշվել է. ահաբեկում են ոստիկանապետ Մահմեդբեկովին ու հայերին թշնամաբար տրամադրված մի քանի ոստիկանների [2]:

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

Գեներալ Նակաշիձեի և ոստիկանների ահաբեկումը. այնուամենայնիվ, այդ օրերին իր ներգործությունն ունեցել է: Փոքր-ինչ փոխվել է հայության նկատմամբ զինվորականների և ոստիկանության վերաբերմունքը:

Բաքվում իշխանությունների կողմից հաստատված խիստ ռեժիմի հարկադրանքով փոխվում է նաև հայ-թուրքական հակամարտության մարտավարությունը: Քանի որ հրազենի կրակոցները իրենց վրա էին բևեռում զինվորների ու ոստիկանության ուշադրությունը և գենք ունեցողներին, առավել ևս գործածողներին սպառնում էր խիստ պատիժ. Աբ. Դյուլխանդանյանի բնորոշմամբ «Այդ պատճառով նպատակայարմար համարուեց սառը զէնք գործածել» [1]:

Ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այս անգամ ևս « սառը զէնք գործածել»-ու նախաձեռնողները դարձյալ թուրքերն էին, որոնք խուսափելով հրազեն գործածելուց՝ հնարավորության դեպքում դաշունահարելով սպանում էին պատահած հայերին: Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը թուրքական կողմին կրկին անգամ ապացուցեց, որ նման մարտավարությամբ հնարավոր չէր քաղաքն ազատել հայ բնակչությունից: Այդ պատճառով հաջորդ օրերին թուրքական կողմը շարունակում է գործել մասնավոր սպանություններ կատարելու մարտավարությամբ: Դեռևս Շուշիի դեպքերից առաջ թուրք ազդեցիկ առաջնորդներ Աղաևի, Թոփչիբաշևի, Թաղիևի, Սաֆար Ալիևի, Բախշի բեկի և այլոց գլխավորությամբ Բաքվում կազմակերպվում է թուրք պանիսլամիստական մի գաղտնի կոմիտե, որը ի թիվս այլ գործողությունների, կազմակերպել է անհատական սպանություններ:

Հ. Յ. Դաշնակցության ահաբեկիչ մարմինը բացահայտելով վերոհիշյալ կազմակերպության նախաձեռնությամբ իրականացրած սպանությունները, նամակով դիմում է հայ-թուրքական միջազգային խաղաղարար կոմիտեին՝ աղդարարելով, որ «...եթէ քաղաքակրթական-յառաջադիմական նպատակով կազմուած լինէր թրքական գաղտնի կոմիտէն, ՀՅԴ ծափահարելով առաջինը կը լինէր ձեռք մեկնելու, բայց քանի որ փաստերը հակառակն են ցոյց տալիս, եւ քանի որ նա կազմել է հայ ժողովրդին ահաբեկելու, կոտորելու, այդ պարագայում՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին նուիրուած Դաշնակցութիւնը չէ կարող ձեռնպահ մնալ ու անխնայ կը լինի դէպի այդ գաղտնի կազմակերպութեան ղեկավարներն ու ներշնչողները...» [2]:

Այդ նույն նամակով ՀՅԴ ահաբեկիչ մարմինը հայ-թուրքական միջազգային խաղաղարար կոմիտեին ներկայացնում է ոչ միայն սպառնալիքներ, այլև առաջարկում է միջոցներ ձեռնարկել դադարեցնել եղբայրասպան ընդհարումներն ու թուրքերի կողմից կատարվող սպանությունները:

Ըստ «Դրօշակ»-ի տվյալների միայն մեկ շաբաթվա ընթացքում մասնակի սպանությունների հետևանքով սպանվել էին 40 հայեր [3]:

[1] «Հայրենիք» ամս., 1934, թիւ 9, էջ 9:
[2] «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 165:
[3] Տե՛ս նույն տեղում:

Թուրքերի ոտնձգությունները սանձահարելու համար հայկական կողմը պիտի անպայմանորեն ասեր իր վճռորոշ խոսքը: Զինվորական մարմնի հանձնարարությամբ մարտական խմբերի մի մասը մնալու էր դիրքերում, իսկ մյուս մասը, դաշույններով զինված, պիտի իջներ փողոց և թուրքերին ահաբեկելու, ահ ու սարսափի մատնելու նպատակով դաշունահարեր բոլոր նրանց, ովքեր անցնելու էին հայկական թաղամասով կամ այդ թաղամասերի մերձակայքով: Ի պատիվ Զինվորական մարմնի, պիտի ասել, որ այդ որոշումը, ինչը միանշանակորեն ապացուցեց ժամանակը, շատ արդյունավետ էր և ճիշտ ժամանակին: Շնորհիվ հակառակորդին ահաբեկելու և ահ ու սարսափի մատնելու այդ մարտավարության՝ «...հայկական թաղամասով անցնող թաթարների չնչին մասը միայն կարողացաւ ազատուել: Մեծամասնութիւնը անխուսափելիօրէն ենթարկուեց դաշունահարութեան հայ մարտիկների կողմից» [1]:

Բաքվի ինքնապաշտպանական գոտու մեջ մտնում էին քաղաքի արվարձանները և նավթահանքերի շրջանը, որտեղ աշխատում էին հազարավոր հայ բանվորներ: ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի և Զինվորական մարմնի պարտականությունների մեջ էին մտնում ընդհարումների բռնկման պարագայում նաև արվարձանների և նավթահանքերի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպումը: Զինվորական մարմնի որոշմամբ քաղաքի արվարձանները բաժանել էին երեք զինվորական շրջանների:

Ինքնապաշտպանական յոթերորդ շրջանի մեջ մտնում էին քաղաքից ընդամենը երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հայոց գյուղը և թուրքական Շամախինկա թաղի՝ հայերով բնակեցված մասը: Բաքվի Զինվորական մարմնի որոշմամբ այդ շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար կազմվել էր Հայոց գյուղի Զինվորական մարմին, որի կազմում, բացի դաշնակցականներից ընդգրկվել էին տեղի ազդեցիկ անձինք:

Ինքնապաշտպանական ութերորդ շրջանի մեջ էին մտնում Սև Քաղաքը, Սպիտակ Քաղաքը և Հայոց Քիշլի գյուղը: Այդ խիստ արդյունաբերական շրջանը թեև հրդեհների բռնկման առումով խիստ վտանգավոր էր, բայց քանի որ թուրք տարրը շատ քիչ էր, այդ պատճառով չկար այն մտավախությունը, որ կարող էր հարձակումների ենթարկվել [2]:

Այդ շրջանի միակ խոցելի տեղը եղել է թուրքական Քիշլի գյուղի մոտակայքում գտնվող Մանթաշյանի գործարանը, բայց նրա բարձրաբերդ ամրակուռ պարիսպները հակառակորդի հարձակման պարագայում մեծ հնարավորություն էին ընձեռում հուսալիորեն պաշտպանվելու համար:

Զինվորական մարմինը անակնկալներից խուսափելու նկատառումով, այնուամենայնիվ, այդ շրջանի պաշտպանության համար առանձնացրել է մար-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 9:
[2] «Հայրենիք» ամս. 1933, թիւ 1, էջ 141:

տական խումբ: Շրջանի ինքնապաշտպանությունը իրականացնում էր նուխեցի Ավետիս Ավետիսյանի գլխավորած տեղի ՀՅԴ «Հրայր» կոմիտեն [1]:

Աբ. Գյուլխանդյանի բնութագրմամբ Ավետիս Ավետիսյանը «Մի եռանդուն անձնուրաբիւն էր և Սև քաղաքի աշխատաւորութեան մէջ ունէր զգալի հեղինակութիւն: Որովհետև այդ շրջանը ոչ այնքան վտանգաւոր էր յարձակման տեսակէտից, որքան հրդեհի. Ավետիս Ավետիսյանը աշխատում էր գործարանատերերի վրայ ծանրաբեռնել ինքնապաշտպանութեան ամբողջ գործը: Մասամբ նրան յաջողուեց այդ»:

Ինքնապաշտպանական հաջորդ՝ իններորդը՝ Բիբեյրաթի շրջան էր: Քանի որ Բիբեյրաթի տարածքը ամբողջովին նավթային էր, համարվել է խիստ վտանգավոր շրջան: Բայց այդ շրջանի բնակչության մեծամասնությունը լեզգիներ էին, որոնք համամիտ չլինելով զինված բախումների՝ չեզոք դիրք էին գրավել: Այդ շրջանի թույլ և վտանգավոր տեղը եղել են Շիխովա գյուղի թուրքերը և Մուխտարովի հանքերի բանվորները, որոնց ղեկավարվել են հայության նկատմամբ ատելությամբ տրամադրված հանքերի սեփականատեր Մուխտարովը և նրա գործերի կառավարիչ Թալիշ բեկ Թալիշյունովը:

Ինքնապաշտպանության մյուս գոտին՝ նավթաշրջանն էր, որտեղ գտնվում էին տարբեր ընկերություններին պատկանող նավթահորերը, գրասենյակներն ու ձեռնարկությունները, նավթապահեստները, ծառայողների և պաշտոնյաների բնակարանները, ինչպես նաև բանվորական կացարանները, որտեղ իրենց ընտանիքներով բնակվում էին հազարավոր բանվորներ:

Այդ ժամանակ նավթահանքերում աշխատել են տարբեր ազգության պատկանող 50.000 բանվորներ և նավթային մի շարք ընկերությունների բազմաթիվ պաշտոնյաներ, ինժեներներ և տարբեր բնույթի գործավարներ ու արհեստավորներ:

«Ըստ ազգութեան՝ այդ աշխատաւորները բաժանված էին այսպէս՝

Ռուսներ՝ 15.000

Հայեր՝ 8.500

Թաթարներ՝ 5.500

Պարսիկներ՝ 13.700

Կազանի թաթարներ՝ 2.700

Լեզգիներ՝ 4.800

Միւս ազգերից՝ 1.800

Ընդամենը՝ 49. 500» [2]:

Ըստ Բաքվի Զինվորական մարմնի տվյալների, նավթահանքերում աշխատող 9.000 հայերին եթե ավելացնենք նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև բազմաթիվ մեծ ու փոքր գործարաններում և արհեստանոցներում աշխատողներին, ապա ընդհանուր հաշվով կստանանք ավելի քան 13.000 անձ [3]:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 142:
[2] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 4, էջ 125:
[3] Նույն տեղում:

Այդ շրջանի ինքնապաշտպանության կազմակերպման դժվարությունները պայմանավորված չէր միայն այն հանգամանքով, որ նավթաշրջանը գրաղեցնում էր հսկայական տարածք: Նավթաշրջանը գտնվում էր թուրքական գյուղերի տարածքում, որոնց բնակիչները հայտնի էին հայության նկատմամբ տածած ատելությամբ և ավարառության նկատմամբ դրսևորած նկրտումներով: Ընդհարումների բռնկման պարագայում, այդ գյուղերի բնակիչները հագամանքների թելադրանքով անկասկած կհրդեհեին նավթահանքերը, իսկ հանքերի մեջ կային բազմաթիվ կացարաններ, որտեղ բնակվում էին հազարավոր բանվորներ:

Զինվորական մարմինը նավթաշրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելիս առաջնորդվել է հետևյալ նկատառումով.

1. Ուշադրությունը կենտրոնացրել է միայն բանվորների և հանքերում գտնվող բնակարաններում ու կացարաններում ապրող բնակչության պաշտպանությունը ապահովելու վրա:

2. Հանքերի պաշտպանությունը և այնտեղ աշխատողների անվտանգությունը պարտավոր էին ու պիտի ապահովեին իշխանությունները և հանքավայրերի տերերը: Օրինակ, քանի որ նավթահանքերը պետական գանձատուն էին մուծում տարեկան 130 միլիոն ռուբլի, հետևաբար պետությունը շահագրգռված էր պաշտպանել նավթահանքերը և թույլ չտար, որ թուրք ամբոխը հրդեհեր ու ոչնչացներ իր ֆինանսական կարևորագույն հենասյունը:

«Մեր ենթադրութիւնները.-գրում է Աբ. Գյուլխանդանեանը,-աւելի ևս հաստատում էին նրանով, որ կառաւարութիւնը անենից առաջ զբաղուեց նաւթային շրջանի պաշտպանութեամբ եւ մեծ քանակութեամբ զօրքեր կենդրոնացրեց այդ շրջանում» [1]:

Սակայն, չէր բացառվում, որ ընդհարումների բռնկման դեպքում եթե թուրք ամբոխը ներխուժեր այդ տարածքը և հրդեհեր նավթահանքերը, ապա Զինվորական մարմնի պարտականությունը պիտի լիներ վտանգված շրջանից դուրս բերել հայ բնակչությանը և տեղափոխեր անվտանգ վայր: Այդ նպատակով կազմվում է նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմին, որի անդամներ էին «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամներ Հ. Շահրիկյանն ու Գրիգոր Աղաջանյանը [2]:

Ինքնապաշտպանությունը հաջողությամբ կազմակերպելու համար նավթաշրջանը բաժանվում է մի քանի զինվորական մասերի և յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է Զինվորական մարմին, որը ենթարկվելու էր նավթաշրջանի Զինվորական մարմնին:

Նավթաշրջանի ինքնապաշտպանական շրջաններն էին.

1. Բալախանի նավթաշրջանը, որի պաշտպանությունը հանձն էր առել Միրզոյևի նավթահանքի աշխատողները:

[1] «Հայրենիք» ամս., 1935, թիւ 4, էջ 148:
[2] Նույն տեղում:

Բալախանի նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու էր ՀՅԴ տեղական կոմիտեն, որի անդամներն էին «...Սահակ Մատինյանը, Ստեփան Տէր Մկրտչեանը, Ռաֆայել Մելքոնեանը եւ ուրիշներ:

...կռուի ժամանակ գործի ղեկավարութիւնը պիտի վերցնէին իրենց վրայ Ռաֆայել Մելքոնեանը եւ իր եղբայր՝ Օվէն»[1]:

2. Զաբրատի ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանի նավթահանքերում աշխատող բանվորների զգալի մասը նախիջևանցի հայերն էին: Զաբրատի տարածքում էր գտնվում Մանթաշևի մեքենագործարանները և Փիթոևի «Արամազդ» ընկերության հանրակացարանները, որտեղ բնակվում էին մեծ քանակությամբ հայեր:

Շրջանի ինքնապաշտպանության ղեկը, ինչպես մյուս շրջաններում, դարձյալ ստանձնում է ՀՅԴ տեղական կոմիտեն, որի պատասխանատուն եղել է Էջմիածինի Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Բարսեղը, որը կուսակցության մեջ հայտնի էր խմբապետ Արամելիք անունով[2]:

3. Ռոմանի ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանում թուրքական Ռոման գյուղի հարևանությամբ գտնվել են Մանթաշև Կասպյան ընկերությունը, Մելիքովի և Փիթոյևի նավթահանքերը: Ռոմանի շրջանում հայությունը թուրք տարրի համեմատ կազմում էր բանվորության փոքրամասնությունը:

4. Սաբունչու ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանը Բաքվի հետ կապված էր երկաթուղով: Այնտեղ էր գտնվում Հարություն Շահրիկյանի և Գրիգոր Աղաջանյանի գլխավորած նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմնի կենտրոնավայրը:

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի, ընդհարումների նախօրեին «...նաւթաշրջանի ինքնապաշտպանութեանը նուիրուած էին ոչ աւելի քան 250 հոգի, որոնցից 170-ը շրջաններում, իսկ թուցիկ խմբերում՝ 80:

...ամբողջ Բաքվի շրջանի ինքնապաշտպանութեան համար կենտրոնացած էին ոչ աւելի քան 700 հոգի...»[3]:

Իհարկե, եթե նկատի ունենանք թուրքական կողմի ունեցած ուժերի գերակշռությունը և այն հսկայական տարածությունը, որը պիտի պաշտպանեին Բաքվի Զինվորական մարմնի հրամանատարությամբ գործող ընդամենը 700 մարտիկները, անտարակույս չափազանց դժվարին խնդիր էր:

Բաքվում շաբաթ օրը՝ օգոստոսի 20-ին տեղի ունեցած դեպքերից մեկ օր անց՝ օգոստոսի 21-ին տագնապալի ու շիկացած իրավիճակ է ստեղծվել Բալախանի նավթարդյունաբերական շրջանում և գյուղում: Թուրքական կողմը

[1] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 1, էջ 148-149:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] «Հայրենիք» ամս., 1933, թիւ 2, էջ 153:

մասնավոր սպանությունների միջոցով հայերին ահաբեկելու մարտավարությամբ գործելը շարունակել է կիրառել նաև նավթաշրջանում:

«Կառուցարութիւնը,-գրում է Հ. Շահրիկյանը,- դադարացրեց քաղաքի եւ Բալախանիի միջեւ երկաթուղու երթեւեկութիւնը՝ գուցէ փետրուարեան օրերում կատարուածի նման Բալախանից գինուած թուրք ամբոխի դէպի քաղաք խուժելը արգելելու համար: Բայց մասնաւոր սպանութիւնները սկսուեցին նոյն օրը(նկատի ունի օգոստոսի 21-ը-Հ.Գ.): Մինչեւ երեկոյ հինգ հայ վիրավոր եւ դիակներ բերեցին հիւանդանոց: Մերոնք փակուեցին իրենց բնակարաններում, սպասելով դրսի յարձակմանը»[1]:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին թուրք հրոսակախմբերը չբավարարվելով մասնավոր սպանություններով, հարձակվել են այն հիմնարկների և գրասենյակների վրա, որտեղ աշխատողների մեծ մասը հայեր էին: Հետևել է հայկական կողմի պատասխան հարվածը, որի հետևանքով սպանվել է երկու թուրք:

Նավթաշրջանի Զինվորական մարմնի անդամ Հ. Շահրիկյանը նկատի ունենալով թուրքական կողմի տրամադրվածությունը, դիմում է Բալախանի ոստիկանապետին, որպեսզի զորք ուղարկեին նավթահանքերի պաշտպանության համար: Շատ չանցած ոստիկանապետը ուղարկում է նախ հեծյալ կոզակների, ապա նաև հետևակ զինվորների, որոնց, պարզվում է, ուղարկել էին ոչ թե պաշտպանելու նավթաշրջանը, այլ «...շրջապատելու, բանտարկելու համար, որովհետեւ թոյլ չէին տալիս ոչ միայն դրան առաջ երեւալու, հիւանդանոց գնալու, ուտելիք, ջուր ճարելու՝ այլ մինչեւ անգամ պատուհանից նայելու: Հրացանները շարունակ ուղղված էին դէպի պաշարուածները, ամէն մի անզգոյշ նայվածք վարձատրւում էր գնդակահարութեամբ»[2]:

Նավթահանքերի շրջանում թուրքական կողմը նկատի ունենալով այդ տարածքի յուրահատկությունը, չի բավարարվում միայն հարձակումներ ձեռնարկելով: Այս անգամ նրա հարձակման հիմնական թիրախը, իհարկե նախևառաջ հայերին պատկանող նավթահանքերն էին ու բանվորների կացարանները:

Զորքի և ոստիկանության ներկայությամբ թուրք հրոսակները հրդեհում են բազմաթիվ նավթահորեր և հրդեհն արագորեն տարածվելով՝ ընդգրկում է նավթաշրջանի մեծ մասը:

Նավթահանքերում կատարվող դեպքերից անհանգստացած արդյունաբերողները Նոբելի ընկերության ներկայացուցչի մասնակցությամբ պատգամավորություն են ուղարկում գեներալ-նահանգապետի մոտ եւ խնդրում միջոցներ ձեռնարկել դադարեցնելու նավթահանքերում կատարվող իրադարձությունները: Ընդառաջելով արդյունաբերողների խնդրանքին «...գեներալ գուբերնատորը հեռագիր է տուել գեներալ Սուետլովին, որ հայերին եւ պարսկահպատակ թիւրքերին չը հալածի եւ տեղական թիւրքերին երես չը տայ...»[3]:

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 9:
[2] Նույն տեղում, էջ 10:
[3] «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 167:

Բաքվի դեպքերը լուսաբանող վավերագրերի պնդմամբ գեներալ Սվեթլովը նույնպես կաշառված է եղել թուրք վերնախավի կողմից եւ վճռական քայլեր չի ձեռնարկել կատարելու նահանգապետի եւ անգամ փոխարքայի հրահանգները [1]:

Վերոհիշյալ վավերագրերի վկայությամբ նավթաշրջանի բոլոր ինքնապաշտպանական շրջաններում տեղի ունեցած կռիվներն առանց բացառությամբ սանձազերծել են թուրքերը: Թեպետ զորքն ու ոստիկանությունը մեծամասամբ պաշտպանել են թուրքական կողմին, այնուամենայնիվ, հայ ինքնապաշտպանական ուժերն արժանի դիմադրություն են ցույց տվել թուրք հրոսակախմբերի հարձակումներին և կռիվներում ունեցել են անհամեմատ քիչ զոհեր:

Նավթահանքերում տեղի ունեցած դեպքերը լուսաբանող սկզբաղբյուրները ընդհանուր գծերով ներկայացնելով հայ մարտական ուժերի հերոսական գործողությունները, չեն նշում կռիվների մանրամասները, հրամանատարների ու մարտերում աչքի ընկած մարտիկների անունները [2]:

Օրինակ, «Բալախանի կոտորածը օգոստոսի 20-23-ը» խորագիրը կրող հուշագրությունը ներկայացնում է Բալախանի շրջանում գտնվող Կասպական ընկերությանը պատկանող գործարանի վրա թուրք հրոսակների հարձակման ժամանակ բանվորների կազմակերպած ինքնապաշտպանությունը:

Գործարանի բանվորները, որոնց միացել են նաև մի քանի փոքր ֆիրմաների ծառայողները, ընդհանուր թվով մոտ 1500-2000 հոգի պաշտպանական դիրքեր են գրավել ընկերության գրասենյակի բակում և մի քանի օր կարողացել են դիմագրավել թուրքերի հարձակումներին:

Ըստ հուշագրության հեղինակի «...պաշտպանելու համար ունէինք 55 բերտան հրացան, 185 ատրճանակ զանազան զանազան սիստեմայի: Իսկոյն եւէք երեք հոգի մենք, բաժանեցինք բակը տասներկու դիրքի, եւ ընտրելով ամեն մէկ զէնք բանեցնողին փոխանորդ, որոնք փոխում էին ժամը մի անգամ»[33]:

Օգոստոսի 22-ին և 23-ին հայ մարտիկները թեև մեծ դժվարությամբ, բայց, այնուամենայնիվ, կարողանում են հետ մղել թուրքերի ձեռնարկած հարձակումները: Չկարողանալով ընկճել հայ մարտիկների դիմադրությունը՝ թուրքերը օգոստոսի 24-ի առավոտյան հրդեհում են գրասենյակի շուրջը գտնվող նավթի աշտարակները և «...կրակը սկսեց իր հրեղեն լեզուներով լափել նավթոտ փայտեա վիշկաները» [4]:

Բանվորները թեպետ փորձել են հանգցնել հրդեհը, բայց նրանց ջանքերն ապարդյուն են անցել: Խուճապի մատնվելով հրդեհի սարսափազդու տեսարանից՝ բանվորները լքում են ընկերության գրասենյակի տարածքը և մեկնում կայարան [5]:

[1] Տե՛ս «Հայրենիք» ամս., 1924, թիւ 13, թծ. 344, գ. 4, 5, 6, 7, 8, 9:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ» թծ 344, գ. 8, էջ 2:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:

Ինչպես արդեն նշվել է, ընդհարումների ժամանակ դեպքերի բերդարանքով, թուրք ամբոխի դեմ երբեմն կռվել է նաև զորքը: Հանանման մի դեպք տեղի է ունեցել Բալախանի գյուղի կռվի ժամանակ, երբ զինվորները հայ մարտիկների հետ միագործակցությամբ դիմագրավել են թուրք ամբոխի հարձակումները:

Հանձնարարելով այդ կռիվը ներկայացնող վավերագրի, Օգոստոսի 21-ին և 22-ին «Այդ տեղ(նկատի ունի Բալախանի գյուղը-Հ.Գ.) գտնվում էր մի ջոկատ, զինուորական կազակ, որոնք այդ երկու օրում շատ լաւ էին վերաբերում դեպի հայերը եւ Բալախանի գիւղից թուրքերի յարձակումների դէմ կռուում էին հայերի հետ...»[1]

Կռվի ժամանակ զինվորները իրենց փամփուշտները քիչ լինելու պատճառով մինչեւ անգամ փամփուշտ են վերցրել հայ մարտիկներից: Հերթական անգամ մարտադաշտում մատնվելով անհաջողության թուրք ամբոխը նույն օրը երեկոյան հրդեհում է գյուղի հարեւանությամբ գտնվող նավթահորերը: Ուշագրավ է, որ այս անգամ զորքն ու ոստիկանությունը դարձյալ համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել խոչընդոտելու թուրք ամբոխի գործողությունները:

Ավելին, զորքի կողմից կատարվում է անսպասելին:

Ըստ վավերագրի «Մի կողմից հրդեհը սկսեց ամէն կողմից բոցավառել, միւս կողմից՝ զորքերը, որոնք դեռ խաղաղ ժամանակից Բոմանի, Բալախանի, Սաբունչի գիւղերի կողքին՝ պոստ էին դրած, կամ անգործ մնացին եւ կամ փամփուշտ տուեցին»[2]:

Ավելի քան անհասկանալի ու տարօրինակ է եղել այն զինվորների վերաբերմունքը, որոնք հայ մարտիկների համագործակցությամբ երկու օր շարունակ դիմագրավել էին թուրք ամբոխի գրոհները:

Կռիվների հաջորդ օրը՝ օգոստոսի 23-ին զինվորներն անսպասելիորեն լքում են իրենց զբաղեցրած հենակետերը և տեղափոխվում գյուղի ներքնակայքում գտնվող բլուրը, ընդսմին պատճառաբանելով, որ իրենք կատարում են հրամանատարության հրահանգը: Հայ մարտիկներն ու գյուղի բնակիչները չկարողանալով սթափ գնահատել իրավիճակը, թողնում են իրենց դիրքերն ու հետևում զինվորներին: Թուրքերն անհապաղ գրավում են զինվորների և հայ մարտիկների թողած դիրքերը և կրակ տեղում հետապնդողների վրա:

Թվում է, որ զորքը պիտի ամրապնդվեր բլրի վրա և հանձնարարեր տեղապահ թուրքերի ուղղությամբ՝ օգնել, որպեսզի հայ մարտիկները նորից կարողանան չի պաշտպանական հուսալի դիրքեր գրավել: Սակայն, «...զորքը բլրից էլ փամփուշտ տալով, հանձնում են հայերին հետեւել իրենց, եւ հայերը կորստաբեր լինելով իրենց դիրքը՝ անդամայ հետեւում են զորքին...»[3]

Թուրքերն անարգել ներխուժում են գյուղ և տիրվում թալանի ու ավերի:

Այդ օրերին նավթաշրջանում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը ամենայն հավաստում է, որ բավարար քանակությամբ մարտունակ ուժեր չու

[1] ՀՅԴ ԿԱ» թծ 344, գ. 8, էջ 2
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, գ. 3

նենալու պատճառով Բաքվի Զինորական մարմնին և Հ.Յ.Դաշնակցության կառույցներին չի հաջողվել ըստ ամենայնի կազմակերպել քաղաքի հարակից հայկական բնակավայրերի և նավթահանքերում ու գործարաններում աշխատող հայ բանվորության ինքնապաշտպանությունը:

Վավերագրերից մեկը ներկայացնում է դարձյալ Բալախանի տարածքում գտնվող Թումայև և Արշալույս ընկերություններին պատկանող ձեռնարկությունների վրա օգոստոսի 23-ին թուրք ամբոխի հարձակման մանրամասները [1]:

Ըստ վավերագրի, այն պահին երբ թուրք ամբոխը հարձակում է գործում, ընկերության ներկայացուցիչներն ահաբեկված հարձակվողների բազմաքանակությունից և նրանց արձակած վայրի ու սարսափազդու աղաղակներից, հեռախոսով օգնություն են խնդրում ոստիկանությունից, թեև այդ ժամանակ ընկերությանը պատկանող տարածքում եղել են զինվորներ:

Ոստիկանությունը չի արձագանքում նրանց խնդրանքին և օգնություն չի ուղարկում: Դրությունը դարձյալ փրկում են ձեռնարկություններում գտնվող հայ ինքնապաշտպանական ուժերը, որոնք համապատասխան դիրքեր գրավելով՝ կարողանում են հաջողությամբ դիմագրավել ամբոխի հարձակումները:

Ուշագրավ է ձեռնարկություններում գտնվող զինվորների վերաբերմունքը: Նրանք փոխանակ օգնելու հայ մարտիկներին դիմագրավելու հարձակումները, դուրս են գալիս տարածքից ու հեռանում: Կատարվում է անսպասելին, հայ մարտիկները հետևում են զինվորներին ու նույնպես հեռանում:

«...Ճանապարհին,-շարունակում է վավերագիրը,- դարձեալ ընդհարումներ են պատահում: Զորքը թողնում, փախչում է, բայց տղերքը թուրքերին փախցնելուց յետոյ դարձեալ գալիս են եւ տղերանց ստիպելով բերում են ոստիկանատուն, որտեղ նրանց զինաթափ անելով ուղարկում են Տեխնիչէսկի նաղգոր» [2]:

Ճանապարհին զինվորների ուղեկցությամբ իրենց ընտանիքի անդամներով նրանց է միանում Միրզոևի և մի քանի այլ շրջանների նավթահանքերի բանվորները, որոնցից շատերը զինված են եղել: Հայ բանվորների թափորը շարժվում է հիվանդանոց, որը գտնվել է Նոբելի գրասենյակի մոտակայքում: Հիվանդանոց հասնելուն պես թուրք ամբոխը հարձակվում է նրանց վրա: Հայ զինյալները դիրքեր են գրավում և համազարկերով դիմավորում հարձակվողներին:

Այս պարագայում դարձյալ ավելի քան զարմանալի է եղել զինվորների գործելակերպը: Նրանք կարծելով, որ հայերն են իրենց վրա կրակում, դիրքեր են գրավում Նոբելի գրասենյակի մոտ գտնվող ռուսական եկեղեցու բակում և համազարկեր տեղում հիվանդանոցի բակում խմբված բազմության վրա:

Նույն օրը, երեկոյան նավթահանքերում տեղաբաշխված զորքի հրամանատարի հրահանգով պիտի զինաթափեին հայերին և ուղարկեին քաղաք, իսկ չենթարկվողներին սպառնում էին գնդակահարել: Ավելին, հաջորդ օրը առավոտյան չսպասելով հայկակա կողմի պատասխանին, զորքը հրանոթներից

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 344, գ. 7:
[2] Նույն տեղում:

կրակ է տեղում հիվանդանոցի և «Տեխնիչէսկի նաղգոր»-ի շենքի վրա, որտեղ պատսպարվել էին հազարավոր հայեր:

Ի՞նչ պիտի արվեր: Հիվանդանոցից որպես պատգամավոր հրամանատարության մոտ են գնում ազգությամբ ոչ հայ բժիշկներ, պարզելու բնակչության պատճառներն ու խնդրելու դադարեցնեն կրակը:

Պարզվում է, որ այդ ամենը կատարվել է հայերի հանգստացրած, մեծամասամբ ուստ, երդվյալ հայատյաց ոմն Շաբոնի և թուրք ոստիկանների ցանկությամբ, որոնք կարողացել էին կաշառել ռուս սպաներին և նրանց հավատացրել, որ հիվանդանոցում ու «Տեխնիչէսկի նաղգոր»-ի շենքում գտնվող բազմությունն ունի մեծ թիվ են կազմում ցարական իշխանությունների հանար մեծ վտանգ ներկայացնող հեղափոխականներ: Նրանք պատգամավոր բժիշկներին ասել են, որ միայն այն դեպքում կդադարեցնեն հրետանակոծությունն ու հարձակումը, եթե բանվորները զինաթափվեն, դուրս գան հիվանդանոցից և մեկնեն քաղաք [1]

«Բժիշկ պատգամավորը,- նշում է վավերագիրը,- ասաստված վերադարձավ: Հիվանդանոցում եւ «Տեխնիչէսկի նաղգորում» պատսպարվածները ճարահատյալ զինաթափ են լինում, բայց այս գործողությունը վերջանում է կես ժամ ուշ քան տրված երեք ժամը» [2]:

Հայերի դանդաղկոտությունից «սաստիկ բարկացած» հրամանատարը զինվորներին հրամայում է կրակել հիվանդանոցում և Տեխնիչէսկի նաղգորում գտնվող բազմության վրա և պահանջում, որ հայերն անպայման զինաթափվեն ու դուրս գան: Բժիշկներին հաջողվում է խնդրելով ու մեծ ջանքեր գործադրելով համոզել հրամանատարությանը հետ վերցնել հրամանը, իսկ հայերը զինաթափվելով դուրս են գալիս հիվանդանոցից և Տեխնիչէսկի նաղգորի շենքից ու ուղևորվում քաղաք, վավերագրի բնորոշմամբ «... թողնելով Բալախանին ասի ճարձակ թուրքերին եւ նրանց պաշտպան ոստիկանութեանն ու զինորական պաշտոնեաներին» [3]

Բալախանիի նավթահանքերից ու կացարաններից հայ բանվորների հեռանալը [illegible] ազդեցություն է գործում այս շրջանների [illegible] Բոնոմի Արտաշես, Ստեփան, Մանթաշև, Սարգսյանի, Պետրով և այլ ընկերությունների բանվորների տրամադրության վրա: Բանվորները տեղեկանալով զորքի և ոստիկանության կողմից հայերի նկատմամբ իրականացվող զինաթափումների [illegible] հանձնարարությունները [illegible] հասնում են Բաքու

[illegible] Բալախանիի ոստիկանությունն ու զորքի

[1] [illegible]
[2] [illegible]
[3] [illegible]

հրմանատարությանը հղած բազմաթիվ դիմումներն ու օգնության աղերսները իզուր են անցնում:

Օգոստոսի 26-ին Բիբի-Էյբաթում գտնվող Մանթաշյան ընկերության նավթահանքերի վրա հարձակվում են Մուխտարովի գործարանի թուրք բանվորները: Չնայած թուրք ավազակախմբերը վաղորդա շատ լավ զինված ու կազմակերպված էին, բայց հանդիպելով հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությանը և տալով մի քանի զոհեր և վիրավորներ՝ հեռանում են ընկերության տարածքից ու միանալով նավթահանքերում վիտացող հրոսակախմբերին՝ թալանում են Խատիսյան ընկերությանը պատկանող արհեստանոցները և սպանում այնտեղ գտնվող արհեստավորներին [1]:

Նույն օրը երեկոյան, ըստ «Դրոշակ»-ի տեղեկացման «Ռոմանի շրջակայքում տեղի ունեցած դեպքերից յետոյ կօգակները շրջապատեցին Մանթաշեանի, Փիքոյեանի եւ մի քանի ուրիշների նաւթահանքերը եւ առաջարկեցին հայ ազգաբնակչութեանը՝ տեղափոխուել քաղաք իրենց պաշտպանութեան տակ: Բայց նախքան առաջնորդվելը, բոլորից վերջերին զէնքերը» [2]:

Հ. Շահրիկյանի հավաստմամբ գործին միջամտել են օտար ֆիրմաների ներկայացուցիչներն ու հիպատոսները, որոնք Բաքվի գեներալ նահանգապետին հղած բազմաթիվ բողոքներով ստիպել են, որ զորքն ու ոստիկանությունը օգնություն ցույց տան Մանթաշյանի ընկերության նավթահանքերում պաշարված բանվորներին [3]:

Օգոստոսի 27-ին նավթահանքերում այլևս ոչ մի հայ աշխատող չէր մնացել, բոլորը տեղահանվել և տեղափոխվել էին քաղաք:

Թվում է, որ նավթահանքերում աշխատող հազարավոր հայերին քաղաք տեղափոխելով իշխանություններն ու զորքը դրսևորել են հայանպաստ վերաբերմունք: Բայց իրականում այդ ամենը նավթահանքերը հայերից ազատելու քաղաքականություն էր: Նավթահանքերից հայերին տեղահանելով զորքն ու ոստիկանությունը նույն վերաբերմունքին չեն արժանացրել թուրք բանվորներին, որոնք անարգել ներխուժել են հայերին պատկանող նավթահանքերն ու բռնագրավել այդ տարածքում գտնվող ձեռնարկությունները: Իրենց գործողություններն արդարացնելու համար թուրքերը ասել են, որ «...յետ են խլում հայերից այն հողերը, որոնք երբեմն իրենց էին պատկանում եւ որ հայերը յափշտակել են...» [4]:

Թուրքերի նպատակը հստակ էր, այրելով նավթահանքերը՝ նրանք ձգտում էին ոչ միայն ունեզրկել հայ արդյունաբերողին և բանվորներին, տեր դառնալ նրանց ունեցվածքին, այլև նպատակ ունեին թույլ չտալ, որ նրանք վերադառնան նավթահանքերն ու վերսկսեն աշխատանքները:

---

[1] Տե՛ս «Դրոշակ», 1905, թիւ 10, էջ 149:
[2] Նույն տեղում:
[3] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 21-22:
[4] «Դրոշակ», 1905, թիւ 10, էջ 149:

Բաքվի երկրորդ ընդհարման, հատկապես հրդեհի, հետևանքով սարսափելի աղետի է ենթարկվել նավթաշրջանը: Օգոստոսյան դեպքերը լուսաբանող վավերագիրը ներկայացնելով այդ օրերի այնտեղ տեղի ունեցած սարսափագին դեպքերի մանրամասները, չեն նշում նավթաշրջանի կրած նյութական վնասների չափը: Այդ բացը լրացնում են Աբ. Գյուլխանդանյանն ու Ա-Դ-ն:

Համաձայն Աբ. Գյուլխանդանյանի տվյալների, նավթաշրջանն այդ ժամանակ ունեցել է 2035 գործող նավթային բուրգեր, որոնցից այրվել են 1894-ը, փրկվել՝ 141-ը: Նրա հաշվարկմամբ յուրաքանչյուր բուրգ իր մեքենաներով արժեր ավելի քան 25.000 ոսկի ռուբլի: Հրդեհների հետևանքով միայն նավթարդյունաբերողների կրած վնասը մոտավոր հաշվով կազմում էր 50-60 միլիոն ռուբլի, որին պիտի գումարել ոչնչացված բազմաթիվ գործարաններ, արհեստանոցներ, շենքեր, որոնք իրենց ընդհանուր արժեքով չէին զիջում նավթարդյունաբերողների գույքի արժեքին: Եթե այդ ամենին գումարվի բանվորների գույքի արժեքն ու խնայած դրամները, ապա պիտի հաշվել, որ ընդհանուր վնասը կազմում է 100 միլիոն դոլար [1]:

Բացի դրանից, «...աւերուած եւ հրդեհուած շրջանները տալիս էին տարեկան 338 միլիոն փութ նավթ:

Փութի միջին արժէքը հաւասար էր 18 կոպէկի: Եւ որովհետեւ մոտաւորապէս մի տարի ոչ մի աշխատանք չկատարուեցաւ, հետեւապէս պետութիւնը եւ նաւթարդիւնաբերողները զրկուեցին աւելի քան 60-70 միլիոն ոսկի ռուբլուց...» [2]:

Ըստ Ա-Դ-ի տվյալների, Բաքվի նավթային շրջանը ունեցել էր ավելի քան 2500 դեսյատին տարածություն, որից մշակված է եղել միայն 1000 դեսյատինը: Այդ հազար դեսյատին տարածքում միմյանց կողքի գործել են, «3000-ից աւելի վիշկաներ, բայց աւերող կրակը լափել եւ տեղը թողել էր միմիայն 1763 հատը»:

Հրդեհների և ավերվածությունների հետեւանքով իրենց գրասենյակներով հանդերձ ամբողջովին այրվել էին «Կասպիական ընկերութիւնը, Ռունօ, Թումաեւ, Արշալոյս, Մանթաշեւ, Փիքոեւ, Միրզօեւ, Մելիքով, Արամազդ, Ադամով, Տէր Յակոբովներ, «Վօտան» գործարանները, Շիրուան, Կովկասեան, Կակագ, Սաուչաստնիկ, Բադուգա, Պետրով, Բալախանեան ընկերութիւնները, իշխան Գագարին, Գալպերին եւ շատ ուրիշ ֆիրմաներ» [3]:

Իհարկե, այրված և ավերված նավթահորերի, գործարանների, արհեստանոցների, գրասենյակների ու շինությունների մեծ մասը պատկանում էր հայերին:

Ընդհարումների և նավթահանքերում բռնկված հրդեհների հետևանքով, բնական է, որ նախևառաջ ծանրագույն իրավիճակում էր հայտնվելու բանվորությունը, որը զրկվել էր աշխատանքից ու ապրուստի միջոցներից: Միայն Բալախանի նավթահանքերում աշխատում էին 30, 000 բանվորներ: Հազարավոր հայ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Ա-ԴՕ. Նշվ. աշխ., էջ 36:

բանվորներ նույնպես կորցրել են աշխատանքը և հայտնվել ծանրագույն կացությունում:

Դեռևս փետրվարյան դեպքերից հետո, երբ ընդհարումները բռնկվում են նաև գավառներում, Բաքվում աշխատող բանվորներից շատերը մտահոգվելով իրենց ծնողավայրերի ու հարազատների ճակատագրով՝ վերադառնում էին իրենց ծնողավայրերը: Այսուհանդերձ, Բաքվի երկրորդ ընդհարումից հետո քաղաքում գտնվել են ավելի քան 25.000 հայ երիտասարդներ, որոնք աշխատելու նպատակով Բաքու էին եկել տարբեր բնակավայրերից: Գավառներում շարունակվում էին բախումները, և շատ ավելի նպատակահարմար ու օգտակար կլիներ, եթե Բաքվում կուտակված հազարավոր հայ երիտասարդներ մեկնեին իրեց բնակավայրերն ու զինվորագրվեին ինքնապաշտպանական խմբերին:

Այդ օրերին ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեն և Զինվորական մարմինը արժանվույնս գնահատելով այդ հանգամանքը, ակտիվ գործունեություն են ծավալել համոզելու նավթահանքերի այրվելու հետևանքով անգործության մեջ հայտնված քաղաքում գտնվող հայ երիտասարդներին, որ մեկնեն գավառներն ու մասնակցեն այնտեղ ընթացող մարտերին:

Բաքվի Զինվորական մարմնի անդամներ Ա. Դյուլխանդանյանն ու Հ. Շահրիկյանը իրենց հուշագրություններում հավատացնում են, որ ընդհարումների նախօրեին ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն և Զինվորական մարմինը կարողացել են , ճիշտ է ոչ այնքան մեծաքանակ, մարտական խմբեր կազմավորել գրեթե բոլոր ինքնապաշտպանական շրջաններում: Նավթահանքերում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը հավաստում է, որ թեպետ ինքնապաշտպանական շրջաններում իրոք գործել են մարտական ուժեր, սակայն նրանք, այնուամենայնիվ, չեն կարողացել լիովին ապահովել հայ բանվորների ու նավթահանքերի կացարաններում բնակվող նրանց ընտանիքների անվտանգությունը:

Ինքնապաշտպանական այն շրջաններում, որտեղ ՀՅԴ կոմիտեները գործել են առավել կազմակերպված ու արդյունավետ, հայ բնակչությունը անհամեմատ ավելի քիչ է մարդկային և նյութական կորուստներ ունեցել:

Օրինակ, Նուխիի ՀՅԴ «Ճաղկաձոր» կոմիտեն և Զինվորական մարմինը հենց փետրվարյան դեպքերից անմիջապես հետո ձեռնամուխ են եղել լուծելու այդ շրջանի ինքնապաշտպանության կազմակերպմանը վերաբերող խնդիրները: Զինվորական մարմինը կազմակերպել է ոչ միայն մարտական ուժեր, այլև որոշակի կարգ է սահմանել, որը պարտադիր է եղել հայ բնակչության համար [1]:

ՀՅԴ Ճաղկաձորի շտաբը շրջանը հայտարարել է պատերազմական դրության մեջ և բնակչությանը ներկայացրել է հետևյալ պայմանները.

«1. Երեկոյան ժամի 8-ից յետոյ արգելւում է փողոցներում շրջելը...

2. Արգելւում է հրացան եւ ատրճանակ կրակելը...

3. Արգելւում է ցերեկները փողոցներում խմբւելը:

4. Արգելւում է հարբեցողութիւնը:

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 351ա, գ. 16:

5. ... պէտք է պատրաստ սպասել փտանգին, իսկ այն ընտանիքները, որոնց առաջարկուած է տեղափոխուել, մի նշան եղած րոպէին տեղափոխուեն շտաբները:

6. Վերոյիշեալ պայմաններից չեղողները կենթարկուին խիստ եւ խիստ պատասխանատուութեան» [1]:

Անտարակույս, Զինվորական մարմինը և ՀՅԴ կոմիտեները որոշակի աշխատանքներ կատարել էին ինքնապաշտպանական ուժեր կազմավորելու և հայ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, սակայն հարցը, ինչը միանշանակորեն ցույց տվեց ժամանակը, չէր սահմանափակվում սոսկ զինվածությամբ ու մարտական խմբերի կազմավորմամբ: Շատ կարևոր էր Զինվորական մարմինների կիրառած մարտավարությունը: Պիտի ասել, որ ի տարբերություն Բաքվի առաջին՝ փետրվարյան ընդհարումների, երբ Նիկոլ Դումանը անհամեմատ փոքրաքանակ ուժերով համարձակորեն դիմում էր հարձակողական գործողությունների, երկրորդ՝ օգոստոսյան բախումների ժամանակ Զինվորական մարմինը գործել է ոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական մարտավարությամբ:

Բացի դրանից, կար ևս մի հիմնավոր պատճառ: Զինվորական մարմինը համոզված լինելով, որ բախումների վերսկսման պարագայում գորքն ու ձեռնարկատերերն անպայմանորեն հոգ կտանեն ապահովելու նավթահանքերի ու ձեռնարկությունների անվտանգությունը, այնքան էլ չեն հոգացել կազմակերպելու նրանց պաշտպանությունը: Իսկ հետևանքն ավելի քան սարսափելի էր հատկապես հայերի համար:

Հարց է ծագում, ինչո՞ւ իշխանությունները ինչպես հարկն է համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել պաշտպանելու նավթահանքերը և թույլ տվել թուրք հրոսակներին այրելու բազմաթիվ նավթահորեր, գործարաններ ու տարբեր նշանակության շինություններ, երբ նավթահանքերի պաշտպանության համար վաղօրոք կենտրոնացրել էին ոստիկանական ուժեր և հազարավոր զինվորներ: Չէ որ այդ նույն նավթահանքերից տարեկան միլիոնավոր ռուբլիներ էին հոսում պետական գանձարան, և բացի դրանից մի շարք պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում նաև Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը նավթահանքերում ունեին իրենց մասնաբաժինները:

Բաքվում և նավթահանքերում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող սկզբնաղբյուրները, նույնիսկ ՀՅԴ կոմիտեների կազմած զեկուցագրերը, թեև այս հարցի պարզաբանման վերաբերյալ չեն տալիս համակողմանիորեն փաստարկված ու սպառիչ պատասխան, բայց նշում են մի շարք հանգամանքներ, որոնք թելադրում և ուղղորդում էին ռուս զինվորականների, հատկապես բարձրաստիճան սպայական կազմի և ոստիկանության վերաբերմունքն ու գործողությունները:

1. Թուրք պարագլուխների կողմից ռուս զինվորականների, հատկապես բարձրաստիճան սպայական կազմի և ոստիկանության կաշառված լինելու իրողությունն ու անբարոյական կեցվածքը:

[1] Նույն տեղում:

Ըստ Հ. Շահրիկյանի «...ոստիկանությունը մեծ մասամբ այն կողմն է՝ ինչ-որ էր փեղորուարեան կոտորածների ժամանակ: Սրանց մեծ մասը մահմեդականներ են կամ Նապաշիձեի կազմակերպութեան պատկանող վրացիներ. եւ մանաւանդ ոստաններ եւ կազակներ. որոնք անթիւ կաշառքներ առնելով թուրքերից՝ թոյլ են տալիս մահմեդականներին ոճիրներ. բռնութիւններ գործելու...» [1]:

Իր կարծիքը հիմնավորելու համար Հ. Շահրիկյանը վկայում է նավթահանքերում կատարված հետևյալ դեպքը. թուրքերը ծովափին կրակում են կառքով անցնող մի հայի վրա. որի մասին դեպքին ականատես պրիստավի օգնականը զեկուցում է գեներալ նահանգապետին: Միաժամանակ այդ նույն դեպքի կապակցությամբ գեներալ նահանգապետին են դիմում ոստիկանությունն ու թուրքերը և հայտնում. որ կրակել են ոչ թե թուրքերը. այլ առանց պատճառի իրենց վրա կրակ են տեղացել հայ զինվորները [2]:

2. Հայերին պատկանող նավթահանքերի ու հայ բանվորության նկատմամբ ցարական իշխանությունների դսևորած վերաբերմունքը:

Հանրահայտ իրողություն է. որ ցարական իշխանությունների գնահատմամբ հայությունը և նրա ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-քաղաքական կուսակցությունները ի տարբերություն մահմեդականության. դիտվում էին որպես առավել կազմակերպված ու հեղափոխական. հետեւաբար կայսրության անվտանգությանը սպառնացող վտանգավոր հակապետական տարր: Եւ իզուր չէ. որ նույնիսկ ընդհարումների ավարտից հետո պետական պաշտոնյաները ջանքեր էին գործադրում. որպեսզի խոչընդոտեին հայ բանվորների վերադարձը նավթահանքեր: Ուշագրավ է. որ նավթահանքերի հայ բանվորության նկատմամբ իշխանությունների դրսևորած համանման վերաբերմունքը հավանության է արժանացել ոչ միայն թուրք. այլև ռուս և այլ ազգություններին պատկանող արդյունաբերողների ու գործարարների կողմից:

«Մինչեւ պատերազմը վերջանալը,-նշում է «Դրօշակ»-ը,- բւում էր թէ կառավարութիւնը վախենալով մի գուցէ Կուկասում հայկական շարժում սկսուի. գրգռեց թուրքերին հայերի դէմ, որպեսզի հայերը ժամանակ չունենային քաղաքացիական կեանքի պահանջներով զբաղուել...Հակահայկական այս արիւնոտ քաղաքականութեանը այժմ միանում են եւ օտար կապիտալիստների հայահալած դաւերը-դուրս քշել արդյունաբերական շրջանից հայ աշխատաւոր դասակարգը» [3]:

3. Հայ ինքնապաշտպանական ուժերի. հատկապես նրանց հրամանատարների խիզախությունն ու կռիվներ մղելու վարպետությունը:

Ընդհանրացնելով 1905 թ. օգոստոսին նավթահանքերում տեղի ունեցած դեպքերն ու նրանց հետևանքները. կարելի է ընդունել. չնայած այն իրողությունը. որ Բաքվի Զինվորական մարմնին և Հ.Յ.Դաշնակցության կառույցներին չէր հաջողվել ըստ ամենայնի կազմակերպել նավթահանքերում ու մոտակայքում աշխատող հայ բանվորության ինքնապաշտպանությունն ու լիովին ապահովել նրա անվտանգությունը. այնուամենայնիվ. եթե չլիներ հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը. իրավիճակն անկասկած կլիներ բազմիցս ավելի ծանր ու սարսափելի:

Բաքվում հայ-թուրքական թվով երրորդ ընդհարումները վերսկսվում են հոկտեմբերի 20-ին և շարունակվում մինչև հոկտեմբերի 25-ը: Ինչպես նախորդ երկու ընդհարումների ժամանակ. այս անգամ ևս նախահարձակը դարձյալ թուրքերն էին: Հարավային Կովկասում ծավալված ընդհարումների ժամանակ թուրքական կողմը իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում առաջնորդվում էին հետևյալ մարտավարությամբ.

«1. Կաշառքով եւ այլ միջոցներով սիրաշահել ու ջերմ հարաբերություններ հաստատել պետական. զինվորական եւ ոստիկանական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

2. Վարկաբեկել ու մտացածին շինծու մեղադրանքներ վերագրել հայկական կողմին. իրենց ներկայացնել որպես ցարական իշխանությունների հավատարիմ ու նվիրված քաղաքացիներ. իսկ հայերին որպես հեղափոխականներ և պետության համար վտանգավոր ու անհավատարիմ տարրեր:

Նրանք այդ գործելակերպին հավատարիմ էին նաև Բաքվի առաջին ու երկրորդ դեպքերի ժամանակ և երրորդ ընդհարման նախօրեին առաջնորդվել են դարձյալ նույն մարտավարությամբ: Եթե նախորդ ընդհարումների ժամանակ Բաքվի իշխանությունները հայերի նկատմամբ դրսևորած իրենց վերաբերմունքն արտահայտել են ոչ այնքան բացահայտ. ապա այս անգամ գործել լիովին բացահայտ. թուրքերի եւ այլ մութ ու խուլիգանական ուժերի հետ անբաքույց միասնական ու համերաշխ:

Ինչպես հայտնի է. 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակվել է ցարի Նիկոլայ 2-րդի ստորագրած մանիֆեստը. համաձայն որի ցարական Ռուսաստանը հռչակվում էր սահմանադրական միապետություն. Բազմազգ կայսրության միլիոնավոր քաղաքացիներ ցնցությամբ են ընդունել ցարի կողմից «շնորհած» մանիֆեստը և իրենց ուրախությունն ու գոհունակությունը բազմաթիվ բնակավայրերում արտահայտել են տոնախմբություններով և խաղաղ գոյգերով. Բաքվի երրորդ ընդհարումը ներկայացնող վավերագրի տեղեկություններից պարզվում է. որ ի տարբերություն կայսրության մյուս բնակավայրերի. որտեղ տոնախմբություններին մասնակցել է հիմնականում ժողովուրդը. Բաքվում ի պաշտպանություն մանիֆեստի. իշխանությունների թելադրանքով հանդես են եկել թուրքերն ու ռուս սեհարյուրակայիները [1]:

Հայկական կողմը. ի դեմս Դաշնակցության. թեև այնքան էլ խանդավառված չի եղել մանիֆեստով. ավելի ճիշտ նրան վերաբերվել է բացասաբար. բայց տե-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 13, էջ 6-7:
[2] Նույն տեղում, էջ 7:
[3] «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 166:

Տես ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 3, էջ 12

ցանկալի դեպքերի տեղիք չտալու պատճառով. իրեն դրսևորել է գուսպ և հավասարակշռված: Համանման դիրքորոշման համար ՀՅԴ-ն մեղադրել է լուրջ փաստարկներ:

Բախումների բռնկումից մի քանի օր առաջ՝ հոկտեմբերի 16-ին Բաքվի ՌՍՄԴԲԿ կոմիտեն, այսինքն բոլշևիկները գործադրել են հայտարարում և իրենց ձեռնարկումն արդարացնելու ու ավելի կազմակերպված բնույթ տալու նպատակով գործում քարոզչություն են ծավալում և աշխատում մյուս քաղաքական կազմակերպություններին, այդ թվում՝ Հ. Յ. Դաշնակցությանը համոզել, որ համընդհանուր գործադուլը ցույց կտա, որ հայ և թուրք աշխատավորությունը իշխանությունների դեմ պայքարում միասնական են ու համերաշխ:

Համաձայն վերոհիշյալ վավերագրի, ՀՅԴ չէր կարող ընդառաջ գնալ բոլշևիկների առաջարկությանը, քանի որ արդեն գաղտնիք չէր, որ թուրքական կողմը հավատարիմ մնալով իր որդեգրած մարտավարությանը, չի մասնակցի գործադուլին և առիթը կոգտագործի վարկաբեկելու հայերին, նրանց մեղադրելով, որպես հակապետական, թշնամի ու վտանգավոր տարրեր [1]:

Ավելին, քաղաքում տիրող իրավիճակը, թուրքական կողմի պահվածքը հուշում էր, որ պիտի զերծ մնալ ավելորդ չկշռադատված ու վնասակար քայլերից և պատրաստ լինել դիմագրավելու մոտալուտ դեպքերին:

Քանի որ համաձայն մանիֆեստի ազատություն էր շնորհում նաև քաղբանտարկյալներին, ժողովուրդը ոգևորվելով այդ օրենքով, հեկտեմբերի 19-ին հավաքվում է քաղաքի Պարապետի հրապարակում ու կարմիր դրոշներ պարզած շարժվում բանտ՝ ազատելու քաղբանտարկյալներին: Հավաքին մասնակցել են քաղաքի հայ բնակիչներից շատերը, որոնք հույս են ունցել, որ բանտից ազատ կարձակվեն նաև գեներալ Նակաշիձեի սպանության կապակցությամբ ձերբակալված հինգ հայերը, որոնց մահապատիժ էր սպառնում: Սակայն, նրանց սպասվում էր դառը հիասթափություն: Բանտի մերձակայքում ցուցարարների վրա կրակ են բացում պահակախմբի զինվորները և տասնյակ մարդիկ սպանվում են և վիրավորվում [2]:

Ավելի սարսափելի դեպքերը սկսվում են հաջորդ օրը՝ դեկտեմբերի 20-ին:

Ինչպես արդեն նշվել է, իշխանությունների թելադրանքով Բաքվում ի պաշտպանություն մանիֆեստի հանդես են եկել թուրքերն ու ռուս սևհարյուրակայինները, որոնց կազմակերպած «հայրենասերների» մանիֆեստացիային միանում են նաև լեզգիները և կոզակները:

Հոկտեմբերի 20-ին «հայրենասերների» մանիֆեստացիա անվան տակ հանդես եկող ամբոխը շարժվում է քաղաքի փողոցներով և սկսում սանձազերծել կոտորածներ, թալանն ու ավերը:

ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն դիմում է իշխանություններին և պահանջում միջոցներ ձեռնարկել դադարեցնելու քաղաքում տեղի ունեցող ջարդն ու ավարառությունը: Բայց ապարդյուն, սարսափազդու դեպքերը քաղաքում շարունակվում են, իսկ իշխանությունները որևէ քայլ չեն ձեռնարկում դադարեցնելու «հայրենասերների» գործողությունները:

Ի՞նչ պիտի արվեր: Այլընտրանք չկար: ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն և Զինվորական մարմնի հրահանգում են քաղաքի ինքնապաշտպանական ուժերին դիմել զենքի և անխնա կոտորել բոլորին, անգամ «...ռուսական զորանաս, որոնք կհամարձակուին յարձակուել հայերի վրայ...» [1]:

Բաքվի երրորդ ընդհարումը ներկայացնող սկզբնաղբյուրները նշում են, որ հայկական մարտական ուժերը մոկ են ինքնապաշտպանական մարտեր, սակայն չեն ներկայացնում կռիվների մանրամասները: Այս առումով, բերևս միակ բացառությունը, կարելի է ասել, կազմում է Զինվորական մարմնի կենտրոնատեղերից մեկում (Բաքվի հայու բարեգործական ընկերության «Աղքատանոց» շենքն է-Հ.Գ) տեղի ունեցած կռվի համառոտ նկարագրությունն է:

Հոկտեմբերի 24-ին թուրք ամբոխն ու կոզակները հարձակվում են այդ շենքի վրա: Թեպետ շենքում գտնվել են նաև կանայք և երեխաներ, սակայն ամբոխն ու կոզակները որևէ ուշադրության չարժանացնելով նրանց յացին, փորձում են պայթեցնել շենքը: Շենքում գտնվել են հայ մարտիկներ, նրանց թվում Բաքվի առաջին կռիվների հերոս նշանավոր Մարտիրոս Չարուխչյանն ու Շամախեցի Արտեմը, որոնց իրականացրած մարտավարությամբ խափանվում է հարձակվողների ծրագրած եղեռնագործությունը: Համաձայն հայ մարտիկների մշակած մարտավարության, շենքի ներսում գտնվող ուժերը բաժանվում են երեք մասի, որոնցից մեկը՝ Շամախեցի Արտեմի գլխավորած մարտախումբն մնալու էր ներսում, որպեսզի պաշտպաներ ներսում գտնվողներին, իսկ մյուսները Մարտիրոսի և Սենիկի գլխավորությամբ պիտի արագորեն դուրս գային շենքից ու հակառակորդի համար անսպասելի «...տարբեր կողմերից պէտք է յարձակուեին ցուցարարների եւ զօրքի վրայ...» [2]:

Հայ մարտիկների ձեռնարկած գրոհը պսակվում է լիակատար հաջողությամբ: Նրանք սրընթաց հարձակումով ջախջախում են իրենց պաշարող թուրքերին ու կոզակներին և փրկում շենքում պատսպարվածներին անխուսափելի սպանդից [3]:

Կասկած լինել չի կարող, որ եթե չլիներ հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունները, ապա թուրքական կողմը որևէ պարագայում չէր դիմի իշխանությունների միջնորդությանը և խնդրելու հաշտությունը:

Երրորդ ընդհարումների ժամանակ կկրկնվում է նույնը: Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը և հատկապես հոկտեմբերի 24-ին Մարտիրոս Չարուխչյանի և Շամախեցի Արտեմի գլխավորած մարտախմբերի նվաճած տվավորիչ հաղթանակը հարկադրում են Բաքվի նահանգապետ Ֆաղեեւին դադարեցնել թուրքերի ու ռուս սևհարյուրակայինների կազմած «հայրենասերների» մանիֆեստացիայի կազմակերպած թափորները և միաժամանակ հրաման արձակել արգելելու ցույցերն ու միտինգները:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 12-13:
[2] Նույն տեղում, էջ 13:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 16:

ԳԼՈՒԽ 5

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսում ընդհարումները բռնկվում են 1905թ. նոյեմբերին, այսինքն այն ժամանակ, երբ արդեն ամիսներ շարունակ կռիվներ էին ընթանում Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում: Թիֆլիսում ընդհարումների համեմատաբար ուշ սկսվելը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. նախ, Թիֆլիսը Կովկասի փոխարքայի նստավայրն էր, այնտեղ էին գտնվում փոխարքայության վարչական և ոստիկանական գլխավոր մարմինները: Քաղաքում էին բնակվում փոխարքայության բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ընտանիքներով: Քանի որ ընդհարումներ ծավալվելու պարագայում կարող էին վտանգավոր կացություն հայտնվել պաշտոնյաների ընտանիքները, ուստի թվում էր, որ հանուն իրենց անվտանգության նրանք թույլ չէին տա, որպեսզի կռիվներ բռնկվեն նաև Թիֆլիսում:

2. Թիֆլիսը կովկասյան ազգերի, այդ թվում նաև հայության մշակութային եւ կրթական հաստատությունների կենտրոնավայրն էր, ինչպես նաև մի շարք քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների, մասնավորապես Հ. Յ. Դաշնակցության ղեկավար մարմնի՝ ՀՅԴ Արեւելյան բյուրոյի նստավայրը:

3. Հայությունը կազմում էր Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը: Համաձայն Ա-ԴՕ-ի տվյալների, «1864 թիւն Թիֆլիսն ունէր 66 հազար բնակիչ, 1874թիւն՝ 100 հազար, 1897թիւն՝162 հազար, 1903 թիւն 210 հազար, իսկ 1905 թիւն այդ թիւը հասաւ արդէն 240 հազարի»[1]:

Քաղաքի ընդհանուր բնակչության բազմացմանը զուգընթաց, աճել է նաև հայ բնակչության թիվը: Ըստ ոստիկանության տեղեկությունների, Թիֆլիսում 1905թ. ապրում էին 84000 հայեր, 57000 ռուսներ, 55000 վրացիներ, 13000 թուրքեր[2]:

Համաձայն Ալ. Խատիսյանի, որն այդ ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխն էր, «Թիֆլիսի 15 հազար շէնքերէն 11 հազարը կը պատկանէին հայերուն, բոլոր մեծ հիմնարկութիւնները՝ թատրոն, գրադարան, դրամատուն, խանութ կը պատկանէին հայերուն, 300 հազար աղգաբնակչութենէն 120 հազարը հայեր էին, 80 հազարը՝ վրացիներ, 70 հազարը՝ ռուսներ եւ 30 հազարը՝ այլազգիներ»[3]:

Բոլոր տվյալները վկայում են, որ այդ ժամանակ հայերը ոչ միայն կազմում էին Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը, այլև նրան է պատկանել քաղաքի մշակութային, կրթական, բանկերի ու այլ հաստատությունների, ինչպես նաև պետական պաշտոնյաների (քաղաքագլուխ, վարչության անդամներ, քաղաքային բժիշկներ) մեծագույն մասը:

Քաղաքագլխի և այլ կարևորագույն պաշտոններ այդ ժամանակ ընտրովի են եղել: Համաձայն գործող օրենքի, ընտրելու իրավունք տրվում էր միայն

[1] Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ390:

վաճառականներին ու քաղաքում անշարժ գույք ունեցողներին: Քանի որ Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը հայերն էին, ապա քաղաքագլխի և մյուս պաշտոնյաների ընտրության ժամանակ, բնականաբար, ունենալով զգալի գերակշռություն՝ հաղթել են: 1870-1916 թթ. Թիֆլիսը ունեցել է 11 քաղաքագլուխներ, որոնցից հինգ հայեր էին[1]:

Այս հանգամանքը,-նկատում է Ալ Խատիսյանը,-կը վիրաւորէր վրացիներու ինքնասիրութիւնը, մանաւանդ որ Թիֆլիսը՝ ըլլալով ամբողջ Կովկասի կեդրոնը՝ կարեւոր ազդակ մըն էր Թուրքիոյ եւ Պարսկաստանի յարաբերութիւններու համար: Թիֆլիսի դերը մեծ էր ամբողջ Կովկասի առեւտրի համար»[2]:

Ի տարբերություն քաղաքի, նահանգում բնակչության հարաբերակցությունը բոլորովին այլ էր: Համաձայն «Кавказский календарь на 1905 год»-ի նահանգի բնակչությունը հասնում էր 970000-ի, որից 219000-ը հայեր էին, 113000-ը՝ թուրքեր, իսկ մեծամասնությունը՝ վրացիներ[36]:

Քաղաքում հայ բնակչության մեծամասնություն կազմելու իրողությունը այն պատրանքն էր ստեղծում, թե թուրքերը չեն համարձակվի կռիվներ սկսել Վրաստանի մայրաքաղաքում, որտեղ կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Իրոք, ընդհարումների առաջին ամիսներին նրանք աշխատում էին իրենց հանգիստ պահել՝ վախենալով, որ զինված ընդհարումները կարող են իրենց համար կործանարար հետևանքներ ունենալ:

Ցարական կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումը իր արձագանքն է գտնում Կովկասի քաղաքներում և բնականաբար նաև Թիֆլիսում: Կովկասում գործող հեղափոխական կազմակերպությունների խնդիրն էր պարզել պայքարի դրոշը և կովկասյան ազգերին, անկախ նրանց ազգային ու կրոնական պատկանելիության, մասնակից դարձնել ցարիզմի դեմ մղվող պայքարին:

Ինչպիսի՞ մարտավարությամբ պիտի գործեր ՀՅԴ: Հայ-թուրքական ընդհարումները չթուլացող ուժգնությամբ շարունակվում էին: ՀՅԴ պիտի՞ պայքարեր երկու ճակատներում, թե՞ իր ուշադրությունն ու կարողությունը բեռեր կազմակերպելու ու առաջնորդելու կովկասահայության ինքնապաշտպանությունը: Ճիշտ է, այն մտայնությունն էր տիրում, որ Թիֆիսում ազգամիջյան բախումներ - չեն սկսվի, սակայն ՀՅԴ, այնուամենայնիվ, որոշակի քայլեր է ձեռնարկել կազմակերպելու թիֆլիսահայության մարտական ուժերը:

Թիֆլիսահայության ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Նիկոլ Դումանի և Ռոստոմի առաջարկությամբ ՀՅԴ Արևելյան բյուրոյի հանձնարարությամբ ստանձնում է Արմեն Գարոն:

«Դաշնակցութեան բոլոր ակտիւ ուժերը,-գրում է Արմեն Գարոն,- զօրակոչած են գաւառներու պաշտպանութեան համար: Իսկ Թիֆլիսի ինքնապաշտ-

[1] Տե՛ս Խատիսեան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, էջ 74:
[2] Նույն տեղում:
[3] «Кавказский календарь на 1905 год», 1905, 3-й отд., ст. 46:

պանողական գործը ինձ էր յանձնուած: Հինգ հարիւրակ ունէի Թիֆլիսի մէջ և հազիւ 200 կտոր գէնք մեծ ու պզտիկ»[1]:

Այդ նշանակումը պատահական չէր: Արմեն Գարոն մասնակցել էր Օտոմանյան բանկի գրավման գործողությանը և այդ պատճառով արդեն մեծ ճանաչում ու հեղինակություն էր ձեռք բերել:

«Արմեն Գարոյին,-գրում է նրա կենսագիրներից Ղազար Չարըգը,- յանձնուած է Թիֆլիզի հարիւր հազարաւոր հայութեան ինքնապաշտպանութեան գործը: Մեծ տարողութեամբ եւ պատասխանատու գործ մը, ուր Պանքայի (նկատի ունի Բանկ Օտոմանը-Հ.Գ.) հերոսը անգամ մը եւս հայ ժողովրդին ի սպաս պիտի դնէր, իր ռազմական եւ իմացական կարողութիւնները...»[2]:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի և Զինվորական մարմնի հանձնարարությամբ քաղաքի ինքնապաշտպանական ուժերը կազմակերպելու ու առաջնորդելու նպատակով Թիֆլիս են գալիս գենքի գործածությանը տիրապետող բազմաթիվ քաջավարժ մարտիկներ:

Արդեն ամիսներ շարունակ ընթացող կռիվների փորձը հավաստում էր՝ եթե թուրքական կողմը փորձեր կռիվներ սանձազերծեր նաև Թիֆլիսում, ուր հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը, ապա անպայմանորեն կօգտագործեր սահմանամերձ շրջանների մարտական ուժերը: Նման մարտավարություն թուրք առաջնորդները կիրառում էին առանց բացառության բոլոր այն շրջաններում, ուր թուրքերը չէին կազմում բնակչության մեծամասնությունը: Անհրաժեշտ էր համապատասխան քայլեր ձեռնարկել և զրկել հակառակորդին նման մարտավարություն կիրառելու հնարավորությունից:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ՀՅԴ Արևելյան բյուրոն միջոցներ է ձեռնարկում կազմակերպելու նաև Թիֆլիսի մերձակա հայկական բնակավայրերը, մասնավորապես Բորչալուի գավառը, ինչպես նաև Ղազախ-Շամշադին-Իջևան շրջանները: ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ Ղազախ-Շամշադին-Իջևան ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնում է Սկաբարեցի Սաքոն: Նա իր հարուստ մարտական կենսագրությամբ հանրահայտ դեմք էր: Նրան ճանաչում ու ակնածանքով էին վերաբերվում ոչ միայն հայերը, այլև թուրքերը: Անկասկած նշանավոր ռազմիկի ներկայությունը ոգեշնչում էր հայությանը, իսկ թուրքերին՝ երկյուղ ներշնչում:

Թեպետ Սաքոյի գլխավորած ինքնապաշտպանական ուժերը գործում էին Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ, բայց ընդհարումների ողջ ընթացքում սերտորեն համագործակցել են Թիֆլիսի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության հետ, քանի որ անհրաժեշտության դեպքում պիտի օգնեին ու աջակցեին միմյանց:

Սկաբարեցի Սաքոն կազմում է իրեն վստահված ինքնապաշտպանական շրջանի ռազմական հատակագիծը և այն ներկայացնում է ՀՅԴ Արևելյան

[1] Արմեն Գարո, Ապրած օրեր, Բոսքրն, 1948, էջ 165:
[2] Ղազար Չարըգ, Յուշամատեան Բարձր Հայքի, Պէյրութ, 1957, էջ 550:

բյուրոյին ու Երևանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանին[1]:

Համաձայն այդ հատակագծի, հայ մարտախմբերի կողմից ստեղծուած խիստ հակողություն էր սահմանվում Ղազախից Շամշադին ապա նաև Իջևանի բնակավայրերը միմյանց կապող կարևորագույն նշանակություն ունեցող հաղորդակցության ուղիների վրա: Ղազախ-Շամշադին-Իջևան տարածքը բաժանվում է երեք ինքնապաշտպանական շրջանների և «...իրարանցիր լիազօրին (ինքնապաշտպանական շրջանի հրամանատար-Հ.Գ.), -գրում Սաքոն,- առանձին հրահանգ տուեցի, գաւառը յայտարարում եմ զինուորական դրութեան մէջ եւ երեք շրջանների մէջ գտնուած ձիաները, զէնքերը, զինամթերքները նաեւ 87 թուից բոլոր պահեստի կրթուած զինուորները եւ բայերը մտնում են անխտիր երեք լիազօրների հրամանատարութեան տրամադրութեան տակ. Այլեւս բոլոր ծառայողները, պէտերը եւ բոլոր գործող անձինք իրենց զէնքերով եւ ձիերով ենթակոմիտէների հայեցողութեամբ մտնում են նոյնպէս լիազօրների տրամադրութեան տակ»[2]:

Այսուհանդերձ, հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ էր գենք ու զինամթերք: Ըստ Սաքոյի կազմած տեղեկագրի, Ղազախ-Շամշադին և Լոռիի շրջանների մարտախմբերի մարտիկներից յուրաքանչյուրը ունեցել է ընդամենը 30-50 փամփուշտ[1]:

Այդ օրերին տարբեր բնակավայրերից Սաքոյին և շրջանների զինվորական լիազորներին են ներկայացել բազմաթիվ գյուղացիներ ու պահանջել գենք ու զինամթերք: Կարելի էր ժողովրդին զինել, բավարարել նրա պահանջները, եթե լիներին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Ի՞նչ պետք է արվեր:

«...Կարգադրեցի,-նշում է Սաքոն,- անյապաղ փող ժողովել ամէն մի դիմող հասարակութիւնից իւրաքանչիւրը ըստ իւրեանց կարողութեան եւ այդ փողերը առանձին ցուցակով յանձնեցի Պ. Սմբատ Յարութիւնեանին գնալ Մեծ քաղաք (նկատի ունի Թիֆլիս-Հ.Գ.) գնելու հարկաւոր ռազմամթերքները եւ զինելու վերաբերեալ բոլոր մասերը»[2]:

Չբավարարվելով այդ ամենով, գենք ձեռք բերելու նպատակով Սաքոյի առաջնորդած մարտախմբերը հարձակվել են նաև թուրքական գյուղերի վրա և կարողացել մի քանի տասնյակ հրացաններ ու հազարավոր փամփուշտներ վերցնել նույնիսկ գավառի պետական պաշտոնյաներից:

Մի ուշագրավ հանգամանք՝ համաձայն Բորչալուի գավառում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների մանրամասները ներկայացնող փաստաթղթի,

[1] Տե՛ս ՀՅԴ ԱԿ, թղթ 450, գ. 15, էջ 22-23:
[2] «Հայրենիք» ամս., 1959, թիվ 3, էջ 79:
[3] Տե՛ս նույնը տեղում:
[4] Նույնը տեղում:

ինքնապաշտպանական ուժերի կազմակերպման աշխատանքներին մասնակցել է նաև Հովհաննես Թումանյանը[1]:

Ուզումնար գյուղում կայացած ժողովրդական հավաքում դիմելով ներկաներին՝ Հովհ. Թումանյանը ասել է.«... վտանգի տակ գտնող հայութիւնը՝ Ձեզ. իր հայ եղբայրներին օգնութեան է կանչում եւ Լոռայ այդ քաջարի ժողովուրդը չպէտք է զլանայ օգնութեան հասնելու վտանգի տակ գտնող իր հայ եղբայրներին ու քոյրերին: Հայեր. վտանգը մեծ է եւ սպառնում է հանուր հայութեան. պէտք է զինուել. պատրաստուել՝ Ձեր ֆիզիկական գոյութիւնն ու պատիւը պաշտպանելու համար: Ասում է Յովհաննես Թումանեանը. գաւառի ժողովրդի հոգեբանութեանը ծանօթ. իւր գեղեցիկ ոճով պարզում է դրութիւնը եւ հրաւիրում է լոռեցիներին զէնք ձեռք բերել ու պատրաստուել...»[2]:

1905թ. օգոստոսին Բորչալուի գավառի Զինվորական մարմինը ունեցել է ընդամենը «...վստահելի հրացաններ. մոսին-բերտան 91 հատ-50 ական փամփուշտներով: Ոչ վստահելի. հին սիստեմի ամէն տեսակ զէնքեր-60 հատ. շատ քիչ ռազմամթերք: Ատրճանակներ ամէն տեսակ-28 հատ. սառը զէնքեր՝ սուր. դաշոյն. գերանտի. եռաժանի 100-ից աւելի եւ 46 ձիեր»[3]:

Քանի որ զենքերի քանակը ավելի քան սահմանափակ էր. Զինվորական մարմինը մարտական խմբերում ընդգրկում է ֆիզիկապես ուժեղ. մարտնչելու վճռականությամբ օժտված երիտասարդների: Հակառակորդի հարձակման դեպքում բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով կառուցվում են պաշտպանական ամուր հենակետեր ու խրամատներ:

Պիտի ասել. որ Սկաբրեցի Սաքոյի գլխավորած Զինվորական մարմինը կարճ ժամանակահատվածում կարողանում է Զիֆոնի աջակցությամբ ձեռք բերել զգալի քանակությամբ զենք ու զինամթերք ու գրեթե բոլոր գյուղերում կազմակերպել մարտական խմբեր[4]:

Զինվորական մարմինը լուրջ աշխատանքներ էր իրականացնում նաև Թիֆլիսում: Արմեն Գարոն թեպետ հանրահայտ դեմք էր. բայց չուներ կռիվներ վարելու բավարար փորձառություն: Այդ պատճառով թիֆլիսահայության ինքնապաշտպանությունն ամրապնդելու նպատակով. Կոփեցի Պետոյի գավառ մեկնելուց հետո. քաղաքի Հավլաբար թաղում կենտրոնացած մարտական ուժերի հրամանատարությունը ստանձնում է հայ ազատագրական պայքարի անվանի գործիչ. բազում կռիվների մասնակից Տուրբախը. որը իր հետ Թիֆլիս է բերում «...իր պատրաստած անձնազոհ հայդուկները. որոնք իրենց փորձառու հրամանատարի հետ մեռնելու պատրաստ են»[5]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է. որ նույնիսկ այն օրերին. երբ ջարդարար սուրը սպառնում էր կովկասահայությանը. դաշնակցության շարքերում կային այնպիսի գործիչներ. որոնք ձգտում էին կուսակցության գործունեությունը նպատակաուղղել ի շահ կայսրությունում ծավալվող հեղափոխության:

Պիտի ասել. որ այդ ժամանակ Դաշնակցությունն իր կազմակերպական և հատկապես մարտական կառույցներով ավելի հզոր էր և ազդեցիկ. քան մյուս քաղաքական կուսակցությունները: Կարևորելով նաև այդ իրողությունը՝ ռուս և վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները ջանքեր էին գործադրում համառուսական հեղափոխական շարժման մեջ ընդգրկել նաև Դաշնակցությանն ու թիֆլիսահայությանը: Իսկ այդ օրերին Բաքվում. Երևանում և Նախիջևանում թուրքական հրոսակախմբերն արդեն փորձել էին իրականացնել հայկական կոտորածներ. իսկ հայաբնակ մյուս վայրերից. մասնավորապես Գանձակից և Արցախից. պարբերաբար Թիֆլիս էին հասնում տագնապալի լուրեր:

Դաշնակցության համար արդեն որևէ գաղտնիք լինել չէր կարող. որ ընդհարումները տարածվելով ու խորանալով. վաղ թե ուշ կբռնկվեն նաև Թիֆլիսում: Այսուհանդերձ. փոքր-ինչ անհասկանալի է այդ օրերին Դաշնակցության գործունեության ուղղվածությունը: Պատրաստվելով ինքնապաշտպանության. ՀՅԴ բազմիցս տեսնելով և համոզվելով ցարիզմի հակահայ տրամադրվածությունն ու ձեռնարկումները. զուգահեռաբար մյուս կուսակցությունների համագործակցությամբ գործուն կերպով մասնակցում է իշխանությունների դեմ ուղղված բողոքի ցույցերի և գործադուլների կազմակերպման աշխատանքներին:

Նոյեմբերին. Կովկասի մի քանի քաղաքներում. այդ թվում նաև Թիֆլիսում տեղի են ունենում. Արմեն Գարոյի գլխավորությամբ «Նոյեմբերեան մեծ գործադուլները». որոնց կազմակերպիչներից մեկը եղել է Դաշնակցությունը[1]:

Ավելին. թիֆլիսահայության համար բախտորոշ նշանակություն ունեցող ժամանակում. հեղափոխական շարժմանը իրենց մասնակցությունն ու անելիքները որոշելու նպատակով. ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեն ժողով է գումարում և ընդունում հայության շահերին ու կացությանը բոլորովին չհամապատասխանող որոշում:

«Ժողովի մեծամասնութիւնը.-նշում է Արմեն Գարոն.-եկաւ այն եզրակացութեան. թէ պէտք է Մետեխի բանտին վրայ յարձակուիլ եւ բոլոր քաղաքական բանտարկեալները ազատել: Չէ որ Ռուսաստանի զանազան քաղաքներէն լուրեր կային. թէ նոյնանման բաներ էին կատարուած. եւ մենք՝ Դաշնակցականներս ինչո՞վ էինք անոնցմէ պակաս»[2]:

Արմեն Գարոն. որպես Թիֆլիսի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար. սթափ գնահատելով Մետեխի բանտի վրա հարձակում գործելու հետևանքով իշխանությունների կողմից թիֆլիսահայությանը սպառնացող

[1] Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 450, գ. 15, էջ 15:
[2] Նույն տեղում, էջ 19:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 19-21:
[5] «Հայրենիք» ամս., 1923, թիւ 5, էջ 40:

[1] Արմեն Գարո, նշվ. աշխ., էջ 164:
[2] Նույն տեղում:

վտանգը, կորուկ կերպով մերժում է գինվորներ տրամադրել իր իսկ արտահայտությամբ նման «թեթեւամիտ ձեռնարկի» իրականացմանը:

Թիֆլիսահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում իր մասնակցությունն է ունեցել նաև Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը: Հնչակյանները նույնպես կազմավորել են մարտական խմբեր և այդ օրերին դաշնակցականների հետ որևէ լուրջ տարաձայնություն չեն ունեցել:

Քանի որ հիշյալ ժամանակահատվածում կայսրության տարածքում ծավալվող հեղափոխական շարժման հետևանքով, ռուս քաղաքական կուսակցությունների գործունեությունը գտնվում էր հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, այդ պատճառով նույն կարգավիճակում էին գտնվում նաև Դաշնակցությունն ու Ս.Դ. Հնչակյան կուսակցությունները:

Կովկասի փոխարքայության ոստիկանական ծառայության կազմած տեղեկագրերը պարունակում են տեղեկություններ նաև Հ.Յ. Դաշնակցության ու Ս.Դ. Հնչակյան կուսակցությունների գործունեության վերաբերյալ:

Տեղեկագրերից մեկում, կազմողները ներկայացնելով հայ ազգային կուսակցությունների համառոտ նկարագիրն ու նրանց փոխհարաբերությունը՝ ընդգծում են, որ մինչև վերջին ժամանակներս, այն է՝ հայ-թուրքական ընդհարումների բռնկումը, «Դաշնակցություն»-ը և «Հնչակ»-ը միմյանց նկատմամբ ունեին թշնամական հարաբերություններ: Սակայն, իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ Կովկասում բռնկվում են հայ-թուրքական կռիվները: Այդ հանգամանքը հարկադրում է հայ հեղափոխական կազմակերպություններին իրեց ուժերի գգալի մասը կենտրոնացնել ու նպատակաուղղել ոչ թե իրենց ծրագրային խնդիրների կենսագործմանը, այլ ազգակիցների ինքնապաշտպանության կազմակերպմանը [1]:

«Մեր ունեցած տեղեկությամբ.-ընդգծում է տեղեկագիրը.-սույն տարվա հոկտեմբերին, «Դաշնակցություն»-ը եւ «Հնչակ»-ը միմյանց միջեւ հաշտություն են կայացրել» [2]:

Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ տեղեկագրի ներկայացրած տվյալները Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների փոխհարաբերության մասին, իրոք համապատասխանում է իրականության: Ճիշտ է, տվյալ ժամանակահատվածում ՀՅԴ իր կազմակերպական կառույցներով, մարտական ուժերով և ժողովրդի մեջ ունեցած հեղինակությամբ ավելի ուժեղ էր ու ազդեցիկ, այնուամենայնիվ, հնչակյանները նույնպես իրենց հնարավորությունների սահմաններում մասնացել են կովկասահայության, մասնավորապես Թիֆլիսի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Քանի որ Թիֆլիսում քաոսային և անկառավարելի իրավիճակ էր տիրում, իսկ բնակչությունը պարբերաբար տարածվող սարսափազդու լուրերից անհանգիստ վիճակում էր գտնվում, ուստի Հնչակյան կուսակցության մարտական խորհուրդը «...քաղաքի բոլոր կէտերում պահակախմբեր էր նշանակելաւելացնելով թէ խուզարկու եւ թէ բռուցիկ խմբերի թիւը» [1]:

Քաղաքում բնակչությանը սիրաբեկելու նպատակով սարսափազդու և սադրիչ լուրեր տարածողները եղել են փոխարքայության հատուկ ծառայությունների գործակալները, որոնք շրջելով քաղաքի փողոցներով՝ անհարգալից ու վիրավորական արտահայտություններ են արել դաշնակցականների ու հնչակյանների հասցեին: Բացի հատուկ ծառայությունների գործակալներից, քաղաքում ավելի հաճախակի են կրկնվում կողոպուտի ու մարդկանց վրա հարձակվելու ու նրանց թալանելու դեպքերը:

Քաղաքի հայ բնակչության հանգիստը ապահովելու և սադրիչ գործողություններ կանխելու նպատակով, հնչակյանների մարտական խմբերը քաղաքի պահակախմբերի հետ միասին գիշեր ու ցերեկ պարեկություն են արել քաղաքի փողոցներում:

Պատրաստվելով ինքնապաշտպանության՝ հայ ազգային կուսակցությունները ընդհարումները կանխելու և խաղաղություն հաստատելու նպատակով, այնուամենայնիվ, փորձել են ձեռնարկել որոշակի քայլեր: Ընդհարումների նախօրեին ՀՅԴ խաղաղություն հաստատելու կոչով բազմիցս դիմել է ժողովրդին ու մահմեդականությանը: Խաղաղություն հաստատելու նկատառումով Դաշնակցությունը բանակցում է քաղաքական կազմակերպությունների հետ: Նոյեմբերի 21-ին կայանում է ՀՅԴ Կենտր. կոմիտեի անդամների և ՌՍԴԲԿ Թիֆլիսյան կոմիտեների, ապա նաև քաղաքի թուրք բնակչության ներկայացուցիչների հանդիպում-խորհրդակցությունը:

Ըստ Ալ. Խատիսյանի «Ընդհանուր իրարանցումին մէջ, տեղի ունեցաւ յեղափոխական կուսակցութեանց մարմիններու խառն ժողով, որուն կը մասնակցէին վրացական Սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը(այն ժամանակ ռուսական կուսակցութեան հատուած մը միայն), Հ. Յ. Դաշնակցութիւնը, Էս-Էրներու կուսակցութիւնը եւ վրաց ֆեդերալիստները» [2]:

Ժողովը ընդունելով, որ քաղաքում յուրաքանչյուր պահի կարող է աղետ բռնկվել, փոխանակ կշռադատված վճիռներ կայացներ ու վճռական քայլր ձեռնարկեր կանխելու աղետը, կայացնում է մի տարօրինակ որոշում, այն է «...ատոր (նկատի ունի աղետը-Հ.Գ.) առաջքը առնելու միակ միջոցն է գտնել վրացի բանուորները: Ժողովին հրավիրուեցաւ ոստիկանապետ Մարտինովը, որուն յանձնարարուեցաւ տեսակցել փոխարքային հետ, զեկուցել անոր, որ վրացի բանուորները պատրաստ են իրենց վրայ առնել կարգի պաշտպանութիւնը՝ պայմանաւ որ պետական պահեստներէն իրենց յանձնուին 600 հրացան» [3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 130, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 2:

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 39:
[2] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 74:
[3] Նույն տեղում:

Փոխարքա Վորոնցով-Դաշկովը ընդունում է նահանգապետի ու զորքերի հրամանատրի առաջարկությունը և կարգադրում, ըստ Ալ. Խատիսյանի հավաստման, 600 հրացան հանձնել Թիֆլիսի բանվորներին, որոնք պիտի օգնեին կարգ ու կանոն հաստատելու քաղաքում[1]:

Ալ. Խատիսյանը խոստովանում է, որ վրաց սոցիալ-դեմոկրատներին ու բանվորներին 600 հրացան տրամադրելը կատարվել է նաև իր համաձայնությամբ և խորհրդով: Ավելին, «Ես.-գրում է Ալ. Խատիսյանը.-վստահեցուցի Փոխարքային, որ այդ միջոցը(նկատի ունի վրաց սոցիալ-դեմոկրատներին ու բանվորներին 600 հրացան հանձնելը-Հ. Գ.) լաւագոյնն է՝ չարիքին առաջ առնելու համար...Փոխարքան կանչեց զինուորական պահեստի պետը եւ կարգադրեց 600 հրացան յանձնել Թիֆլիսի բանուորներուն, ի զարմանս զինուորական եւ քաղաքացիական իշխանաւորներուն»[2]:

Ըստ «Արշալոյս»-ի հավաստման, փոխարքայի հրամանով վրաց մենշևիկներին հանձնում են ոչ թե 500 կամ 600 հրացան, այլ «...1.200 հրացան իրենց փամփուշտներով: Հրամանը կատարում է հենց նոյն գիշերը... Կազմակերպում են «դրուժինայի» խմբեր, որոնք և սպիտակ դրօշակներով անցնում են փողոցից-փողոց, ամէն տեղ աշխատելով խաղաղար դեր կատարել»[3]:

Իր ընդունած որոշման անհրաժեշտությունը հիմնավորելու համար, փոխարքան՝ կոմս Վորոնցով-Դաշկովը որպես հիմնարար փաստարկ, ընդգծում է երկու հանգամանք.

1. Քաղաք ներխուժած 6500 զինված մարդկանց բռնի զինաթափումը անհնարին էր, քանի որ «...ոստիկանութիւնը գործադրել արեց, իսկ զօրքերը հարկադրուած էին պահպանել քաղաքը գլխաւորաբար Բորչալուի գաւառի կողմից եկող զինված թուրք խմբերից...»[4]:

2. Քաղաքի նեղլիկ փողոցները հազարավոր հայ և թուրք զինված մարդկանցով բռնված լինելու պատճառով քաղաքում ստեղծվել էր չափազանց վտանգավոր ու պայթունավտանգ իրավիճակ: Քանի որ նման պայմաններում զորքի ու ոստիկանության գործողությունները դարձել էին անհնարին, ուստի «...ես որոշեցի 500 հրացան բաց թողնել մաքուր սոցիալ-դեմոկրատական(մենշեւիկ) բանտրական կուսակցութեանը, որը յանձն առաւ յետ պահելով իր սկզբունքից՝ չօգտագործել այդ զէնքը կուսակցական նպատակներ հետապնդելու համար, օժանդակել հայերի եւ մուսուլմանների խաղաղեցմանը...»[5]:

Հարց է ծագում, եթե քաղաքում գտնվող 8000 թվակազմ ունեցող բանակն ու դրան գումարած նաև ոստիկանությունը ի զորու չէին կանխել աղետն ու խաղաղ իրավիճակ հաստատել, ապա ի՞նչ կարող էին անել վրաց սոցիալ-դեմոկ-

[1] Նույն տեղում, էջ 75:
[2] Նույն տեղում, էջ 76:
[3] «Արշալոյս», 1905, նոյեմբերի 27:
[4] ՀԱԱ, 1022, g. 3, գ. 111, թ. 1:
[5] Նույն տեղում, թ. 2:

ռատական կուսակցության ղեկավարությամբ գործող 500 կամ 600 բանվորները, անգամ զենքեր ստանալու պարագայում:

Չնայած Դաշնակցության, ինչպես նաև հնչակյանների ձեռնարկած քայլերին, նոյեմբերի 22-ին՝ երկուշաբթի օրը, Թիֆլիսում բախումները սկսվում են և ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այս անգամ ևս նախահարձակը թուրքերն էին: Այդ օրը Թիֆլիսի քաղաքային տան մեջ դարձյալ հանդիպում էին քաղաքական կուսակցությունների և քաղաքային վարչության ներկայացուցիչները: Ժողովում հանդիպման մասնակիցները քննարկել են ժողովրդական միլիցիա կազմավորելու հարցը: Դեռ որոշում չկայացրած, թուրքական կողմից ժողովականներին է ներկայանում նրանց ներկայացուցիչը և հայտնում հետևյալը. «Ես գալիս եմ թուրքերի թաղից, այնտեղ մեծ յուզմունք եւ երկիւղ է տիրում: Հայերի վերաբերմունքը անտանելի են, մեզ խուզարկում են, անպատուում, սպառնում: Ես թուրքերի կողմից յայտնում եմ ձեզ, որպէսզի իմանաք եւ ապագայում մեզ չմեղադրէք...»[1]:

Թուրքերի կողմից դա վաղօրոք ծրագրված դիվանագիտական քայլ էր: Նրանք մի քանի ժամ անց արդեն պիտի սկսեին հարձակումը և իրենց գործողություններն արդարացնելու համար նման հայտարարությամբ փորձում էին ժողովականներին հավատացնել, որ եթե բռնկվեին բախումները, ապա դա կատարվելու է հայկական կողմի անտանելի վերաբերմունքի պատճառով:

Թիֆլիսի ինքնապաշտպանական մարտերը զուտ մարտավարական առումով կարելի է բաժանել երկու շրջանի, առաջին շրջանը՝ նոյեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 26-ը, իսկ երկրորդ շրջանը՝ նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը: Առաջին շրջանում թուրքերը սկսում են կռիվը, բայց հարձակում չեն ձեռնարկում: Համաձայն «Արշալոյս»-ի տվյալների, նոյեմբերի 22-ին երեկոյան ժամը 8-ին թուրքական թաղի կողմից թուրքերը միահամուռ կրակ են տեղում հայկական թաղերի ուղղությամբ:

«Երէկ,-նշում է Արշալոյսը,-երեկոյեան ժամը 8-ին յանկարծակի սկսուեց իրարանցում: Լսուեց հրացանաձգութիւն թուրքական թաղի կողմից եւ իսկոյն ամէն ինչ իրար խառնուեց: Շատերը փախուստի դիմեցին, կան սպանուածներ...»[2]:

Հրացանաձգությունը շարունակվել է նաև հաջորդ օրը: Նոյեմբերի 22-23-ին կատարված հրացանաձգության հետևանքով սպանվում են 2-3 և վիրավորվում 4-5 հոգի :

Կայսր Նիկոլայ 2-րդին ներկայացրած վերոհիշյալ զեկուցագրում, ներկայացնելով նոյեմբերի 22-ին Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերը՝ փոխարքան նշում է. «...22-ի գիշերից սկսած քաղաքի ասիական մասում դաժան հրաձգութիւն էր կատարվում հայերի յեւ թուրքերի միջեւ, վորից աւելի տուժեցին վերջիններս՝ շնորհիւ հայկական մասի լեռնային դիրքի»[3]:

[1] «Արշալոյս», 1905, նոյեմբերի 27:
[2] Նույն տեղում, նոյեմբերի 23:
[3] ՀԱԱ, ֆ. 1022, g.3, գ. 111., թ. 1:

Հաջորդ օրը փոխարքայի հրամանով. սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչների առաջնորդությամբ. բանվորներնրից կազմված խմբերը, զինված փոխարքայի կարգադրությամբ առացած հրացաններով. քաղաքում խաղաղ կարգավիճակ հաստատելու նպատակով. դուրս են գալիս փողոց:

Խաղաղ իրավիճակը շարունակվել է ընդամենը երկու օր: Համոզվելով. որ իրենց գործողություններին չէին կարող խոչընդոտել ոչ զորքը և առավել ևս բանվորներից կազմված «խաղաղապահ» ուժերը. գավառից քաղաք ներխուժած թուրք զինյալները տեղի թուրքերի համագործակցությամբ վերսկսում են հարձակումը հայկական թաղերի վրա:

Պիտի ասել. որ Թիֆլիսի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ հայկական մարտական ուժերի հրամանատարության կիրառած մարտավարությունը եղել է համակողմանիորեն կշռադատված եւ արդյունավետ: Նախ. քաղաքի հայկական թաղերի անվտանգությունը առավելագույնս ապահովելու նպատակով կառուցվել են բազմաշերտ պաշտպանական գոտիներ. որտեղ մշտապես հերթապահել են մարտական խմբերը: Նույն օրը՝ նոյեմբերի 22-ի և լույս 23-ի գիշերը քաղաքի յուրաքանչյուր հայկական թաղում. համաձայն վաղօրոք մշակած մարտավարության. մշտարթուն Ա. «...կանգնած էին յեղափոխական զինուորները եւ կամաւորները: Ամէն տեղ նկատելի էր ինքնապաշտպանութեան պատրաստի ոյժը...» [1]:

Բ. Կատարվել է մարտական ուժերի վերադասավորում: Նկատի ունենալով. որ կռիվները սկսվելու դեպքում հակառակորդը նախնառաջ կփորձի հարձակում ձեռնարկել քաղաքի հայկական ամենամեծ թաղի՝ Հավլաբարի վրա. Զինվորական մարմինը ինքնապաշտպանական ուժերը բաժանում է երկու հիմնական մասի: Մի մասը Տուրքախի գլխավորությամբ կենտրոնանում է Հավլաբարում. իսկ մյուս մասը Արմեն Գարոյի հրամանատարությամբ Քուռ գետի աջ ափին: Եթե թուրք հրոսակախմբերը փորձեին ներխուժել Հավլաբար և հայկական մյուս թաղերը. ապա կհայտնվեին Տուրքախի և Արմեն Գարոյի գլխավորած մարտախմբերի խաչաձև հարվածների տակ: Բացի հիմնական մարտական ուժերից. քաղաքի տարբեր թաղերում կազմավորվել են նաև թռուցիկ մարտախմբեր. որոնք անհրաժեշտության դեպքում պիտի անհապաղ օգնության շտապեին վտանգված շրջաններին:

Մարտախմբերը զինելու համար օգտագործել են «Զէնք-ինչ տեսակի ու ժամանակի ուզենաք. Մաուզերի եւ Բէրդանի հրացաններ. տեսակ-տեսակ ատրճանակներ. դաշոյններ. սրեր. կացիններ. ու մեծ-մեծ դանակներ...» [2]:

Գ. Հայկական մարտական ուժերի հրամանատարությունը. հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը. այս անգամ արդեն կիրառում է ավելի ակտիվ մարտավարություն: Ընդհարումների բռնկման հաջորդ օրը ևեթ՝ նոյեմբերի 23-ին. հայ մարտական ուժերը նախահարձակ են լինում և ամբողջովին շրջապատում թուրքական թաղն ու իրենց հսկողության տակ վերցնում արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիները:

«24 ժամուն մէջ.-գրում է Արմեն Գարոն.-մեր զինուորական կազմակերպութիւնը կատարեալ ձեւ մը առաւ: Ռուս ոստիկանութիւնը բաշխեցաւ հրապարակէն եւ Թիֆլիզի իրական տէր դարձաւ Հ.Յ. Դաշնակցութիւնը: Մեր պահակները կը կանգնեցնէին. կը խուզարկէին նոյն իսկ ռուս ոստիներ. որպէսզի անոնք զէնք ու ռազմամթերք չտանէին դէպի թրքական թաղը» [1]:

Չնայած այն իրողությանը. որ ընթանում էին տակ դիրքային կռիվներ և երկուստեք դեռևս չէին ձեռնարկել հարձակողական գործողություններ. այնուամենայնիվ. հայկական կողմը իր դրսևորած կազմակերպվածությամբ որևէ կասկած չէր թողնում. որ կռիվների շարունակման դեպքում անպայմանորեն պարտության կմատնի թուրք հրոսակախմբերին:

«Դաշնակցական խումբերու կազմն ու կեցուածքը.-գրում է Մ. Վարանդյանը.-ընդհանուր հիացման առարկայ էին: Հիացումով կը դիտէր մեր մարտական շարքերը նաև հռչակաւոր Սօլօլակի հայ պճնազարդ. օտարացած բուրժուազիան...եւ կը տրամադրէր իր շքեղ պալատները մեր զինուորական մարմիններուն...» [2]:

Եթե ընդհարումների արդյունքում հայկական կողմը նվաճեր հաղթանակներ. ապա անկասկած կբարձրանային հայության և նրան առաջնորդող քաղաքական կազմակերպությունների հեղինակությունը: Իսկ հայության և նրան առաջնորդող ՀՅԴ կարգավիճակի ու հեղինակության բարձրացումը բնավ ձեռնտու չէր ոչ միայն իշխանություններին. այլև վրաց քաղաքական կազմակերպություններին: Հավանաբար դա էր պատճառներից մեկը. որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը. ընդհարումները դադարեցնելու և քաղաքում խաղաղություն հաստատելու համար. ընդունում է որպես միջնորդ հանդես գալու վրաց սոցիալ-դեմոկրատների (մենշևիկ) առաջարկությունը: Ավելին. համաձայն Արմեն Գարոյի. փոխարքան ոչ միայն ընդունում է վրաց մենշևիկների առաջարկությունը. այլև նրանց է հանձնում 500 հրացան [3]:

Այդ մասին. ինչպես արդեն նշվել է. վկայում է նաև Ակ. Խատիսյանը. որը որպես իշխանության ներկայացուցիչ. կարծես փորձում է արդարացնել ու անկողմնակալ ներկայացնել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

Խաղաղություն հաստատելու նպատակով իշխանությունների ձեռնարկած քայլերը որևէ արդյունք չեն տալիս: Եթե սոցիալ-դեմոկրատների զինված խմբերը ազատորեն շրջում էին հայկական թաղերում. ապա թուրքերը ոչ միայն չեն թույլատրել նրանց մուտք գործելու իրենց թաղերը. այլև դույզն-ինչ չեն արձագանքել նրանց կոչերին: Պարզվում է. որ թուրք պարագլուխները. օգտվելով այն հանգամանքից. որ քաղաքում պարենկություն էին անում վրաց

---

[1] «Արշալոյս», 1905, նոյեմբերի 23:
[2] Նույն տեղում:

[1] Արմեն Գարո. նշվ. աշխ.. էջ 167:
[2] Վարանդեան. նշվ. աշխ.. էջ 354:
[3] Տե՛ս Արմեն Գարո. նշվ. աշխ.. էջ 167:

սոցիալ-դեմոկրատների զինված խմբերը. կարողանում են նոյմբերի 27-ին սահմանամերձ գավառներից քաղաք տեղափոխել 250 ձիավոր և հետիոտն մարտիկներից բաղկացած զինյալ հրոսակախմբի [1]:

Վրացի սոցիալ-դեմոկրատները ոչ միայն չեն արգելել թուրքերի մուտքը քաղաք, այլև շատ լավ հարաբերություններ են հաստատել նրանց հետ:

«Թիֆլիզեցի թուրքերի կողմից,-նշում է «Արշալույս»-ը,- դա ռազմական մի խորամանկ խաղ է, որով ուզում են նախ հայերին ցույց տալ, որ իրանք ոյժ ունեն, իսկ երկրորդ՝ մեծ թալանի ու աւերածութեան դէպքում հնարաւորութիւն ունենան ապագայում ասելու. Մենք ի՞նչ մեղաւոր ենք. եկոր թուրքերն էին, թալանեցին ու տարան...» [2]:

Քաղաքում թուրքական նոր ուժերի ներկայությունը ավելի է շիկացնում առանց այդ էլ տիրող լարված ու տագնապալի իրավիճակը: Վրաց սոցիալ-դեմոկրատները քաղաքի հայ բնակչությանը սարսափի մատնելու և Դաշնակցությանը ու հնչակյաններին իրենց կամքը թելադրելու նպատակով լուր են տարածում, որ քաղաք են ներխուժել ավելի քան 14000 թուրք զինյալներ: Իրականում հինգշաբթի և ուրբաթ օրերին քաղաք էին մտել ընդամենը 1500 թուրք զինյալներ:

Վրաց սոցիալ-դեմոկրատների առաջնորդներ Ժորդանիան և Ռամաշվիլին հայերին ու թուրքերին հաշտեցնելու ու քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով գալիս են Հ.Յ. Դաշնակցության շտաբը և վերջնագրի կարգով ներկայացնում են թուրքական կողմի հետևյալ պայմանները.

«1. Հայոց կաթողիկոսը անձամբ պէտք է երթայ Շէյխ-իլ-Իսլամի մօտ ներողութիւն խնդրելու կատարուած սպանութիւններու համար:

2. Հայ հոգևորականութիւնը եկեղեցիներուն և փողոցներուն մէջ պէտք է դատապարտէ կատարուած սպանութիւնները և հաշտութեան քարոզներ ընէ ժողովրդին:

3. Հ.Յ. Դաշնակցութիւնը նոյն մտքով թռուցիկներ պիտի հրատարակէ եւ միթինկներ կազմակերպէ քաղաքին զանազան մասերուն մէջ:

4. Անմիջապէս պէտք է յանձնել իշխանութեանց սպանուած 70 թուրքերուն ոճրագործները...» [3]:

ՀՅԴ կողմից Ժորդանիայի և Ռամաշվիլու հետ կայացած հանդիպմանը մասնակցել են Համո Օհանջանյանն ու Հովհաննես Քաջազունին: Որպեսզի հայերին ընդունել տան իրենց ներկայացրած պայմանները, վրացիները դարձյալ վկայակոչել են քաղաքում գտնվող 14000 թուրք զինյալներին, որոնք սպառնում էին կոտորել բնակչությանն ու քարուքանդ անել Թիֆլիսը:

«Թիֆլիսը,- ասել են Ժորդանիան եւ Ռամաշվիլին,- Կովկասի յեղափոխութեան օճախն է եւ մենք պարտաւոր ենք յանուն Ռուսական մեծ Յեղափոխութեան զիջումներ ընել եւ ընդունել թուրքական կողմի պայմանները...» [4]:

[1] Տե՛ս «Արշալույս», 1905, նոյեմբերի 29:
[2] Նույն տեղում:
[3] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 367:
[4] Արմեն Գարո, նշվ. աշխ., էջ 172:

Արմեն Գարոյի հավաստմամբ, եթե չլիներ իր վճռական միջամտությունը, ապա Դաշնակցությունը տեղիք տալով վրաց սոցիալ-դեմոկրատների մտացածին սպառնալիքներին, կընդուներ Ժորդանիայի և Ռամաշվիլու միջոցով իրենց ներկայացված թուրքերի պայմանները [1]:

Շաբաթ օրը՝ նոյեմբերի 29-ին, սկսվում է Թիֆլիսի երկրորդ կռիվը: Չնայած այն հանգամանքին, որ նահանգապետը խոստացել էր ավելացնել զորքերի թիվը, այդ ու նախորդ օրը քաղաքում զինվորներ գրեթե չեն երևացել: Ժամը 4-ին թուրքերը մի քանի ուղղությամբ սկսում են հարձակումը, և վրաց սոցիալ-դեմոկրատների զինվորները, խուճապի մատնվելով, գցում են հրացաններն ու դիմում փախուստի: Հայ մարտիկները խուճապի մատնված վրացիներից վերցնում են 40 հրացան:

Կիրակի առավոտյան թուրքերը, գավառներից եկած ուժերով համալրելով իրենց մարտաշարքերը, և հարձակվում են հայ ինքնապաշտպանական մարտախմբերի ուժերի դիրքերի վրա: Հայ ինքնապաշտպանական ուժերը, հետ մղելով թուրքերի գրոհները, դիմում են հարձակման և մոտենում նրանց դիրքերին: Շնորհիվ կշռադատված ու ճկուն մարտավարության՝ հայ մարտական ուժերը հակառակորդի նկատմամբ ձեռք են բերում վճռական գերակշռություն: Քուռ գետի աջ ափին դիրքավորված Արմեն Գարոյի գլխավորած մարտախմբերի հարվածներին զուգընթաց, հակառակորդի վրա գրոհում են նաև Տուրբախի գլխավորած Հավլաբարի մարտական ուժերը:

Ներկայացնելով այդ վճռական պահը՝ Արմեն Գարոն նշում է. «Կիրակի ամբողջ օրը տաք կռիւ էր բոլոր դիրքերուն վրայ: Մերոնք քանի մը տեղ յարձակողականի սկսան եւ մօտիկցան թուրքերու ամենավտանգաւոր դիրքերուն: Հալաբարէն Տուրբախը իր դիրքերէն լաւ մը խաչեց թրքական դիրքերը» [2]:

Պարտություն կրելով՝ թուրքերը դիմում են փախուստի և փորձում են դուրս գալ քաղաքից, բայց հանդիպում են հայ թռուցիկ խմբերի դիմադրությանը, որոնք ամուր փակել էին քաղաքի բոլոր ելքերն ու մուտքերը:

«Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը արժանավոյն գնահատելով թուրք հրոսակախմբերի դեմ հայ ինքնապաշտպանական ուժերի տարած հաղթանակը՝ նշում է. «Որքան եւ Թիֆլիսի ջարդն ու կոտորածը «Շէյթանի» կողմի փառաւոր ծրագրով էր կազմուած, աւելի զգուշութեամբ, հեռատեսութեամբ ու խնամքով, քան ռուս-ճապոնական պատերազմի ծրագրերն ու մարշրուտները, այնուամենայնիւ, նրա «խոփը այս անգամ քարին դիպաւ»,-Շէյթանի յառաջամարտիկ բանակը թաթարական յարձակումը ամենախայտառակ անյաջողութեան հանդիպելուց յետոյ երկրորդ թիկնապահ բանակը, կարգաւոր եւ ոչ կարգաւոր խուլիգանական բանակը այլ եւս չյանդգնեց ցարդ երեւան գալ...» [3]:

[1] Նույն տեղում, էջ 174-175:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 100, թ. 2:

Թիֆլիսի ինքնապաշտպանական մարտերին մասնակցել են նաև Հնչակյան կուսակցության նախձեռնությամբ կազմակերպված մարտախմբերը: Այդ օրերին ընթացող կռիվների մասին պատմող վկան՝ «Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը, անդրադառնալով ինքնապաշտպանական մարտերին հնչակյանների մասնակցությանը, նշում է. «...Հնչակեան մարտական Ա. բանակը կռուի օրերին դիրքեր էր բռնել կռուի ամենավտանգաւոր դիրքերում՝ Շէյթան-բազարի եւ պիւրի Մէյդանի շրջակայքում, ճակատ առ ճակատ թուրքական յառաջապահ գնդերի, որքան եւ նոյն Հնչակյան Ա. բանակի թռուցիկ երկու կողմեմ խմբերը այս ու այն կողմերից պանում էին թուրքերով բռնուած բաղերը եւ հերոսական քաջագործութիւններ անում, մի քանի անգամ յետ մղելով հարիւրաւոր հոգիներից բաղկացած թաթարական բանակը, սոսկալի ջարդ տալով նրանց...» [1]:

Վավերագրի գնահատմամբ իրենց նվաճած հաղթանակի արդյունքում փրկվեց Թիֆլիսը, իսկ հաղթանակը ձեռք բերվեց շնորհիվ հեղափոխական բոլոր ուժերի և կուսակցությունների միասնական ու համախմբված ջանքերի:

Դեկտեմբերի 1-ին կռիվները Թիֆլիսում դադարում են: Թուրքերը վերջնական ջախջախումից փրկվելու նպատակով պարզում են սպիտակ դրոշ և իշխանությունների միջնորդությամբ հաշտություն կնքելու խնդրանքով դիմում են հայկական կողմին: Իշխանություններն արագ արձագանքում են թուրքերի խնդրանքին: Քաղաքի փողոցներում անմիջապես հայտնվում են ռուս զինվորները ու «...Ամէն կողմ ազդարարուեցաւ, թէ այլեւս կռուելն արգելուած է» [2]:

Արմեն Գարոյի գնահատմամբ «Այդպէս կվարուէին ռուսները ամէն տեղ, երբ իրենց պաշտպանեալ թուրքերը կյաղթուէին, շուտով կմիջամտէին՝ կռուին վերջ տալու համար» [3]:

Հայկական մարտական ուժերը զուտ վրեժխնդրության նկատառումով կարող էին կոտորել բազմաթիվ թուրքերի, բայց դրսևորելով ասպետական վերաբերմունք՝ ընդառաջում են թուրք պարագլուխների խնդրանքին և դադարեցնում կռիվները: Օրինակ, «Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը պատմում է, որ գավառից Թիֆլիս ներխուժած թուրքերը պարտություն կրելուց հետո, երբ հեռանում էին քաղաքից, կառքերով, ձիերով, ֆուրգոններով տանում էին հայերից թալանած ապրանքները: Հնչակյան մարտիկները կարող էին անմիջապես հարձակվել ավարառուների վրա ու շրջապատելով՝ զինաթափել նրանց և խլել բոլոր կողոպուտը, սակայն ներկայանում են քաղաքագլխին ու հայտարարում, «...նորանոր թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, այդ բանը չենք անում եւ թողնում ենք ձեզ, որ միջոցներ ձեռք առնէք դրա առաջն առնելու»: Քաղաքագլուխը խոստացաւ դիմել այդ մասին գեներալ Մալամային» [46]:

[1] Նույն տեղում:
[2] «Պատմագրութիւն...», հ. Բ, էջ 367:
[3] Նույն տեղում:
[4] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 100, թ. 2:

Թուրք պարագլուխներից մեկը, երախտագիտությամբ գնահատելով հայկական կողմի հումանիստական վերաբերմունքը, նշել է. «...ձեր խմբերը մեզ աւելի շատ կոտորածներ տուին, բայց եւ ականատես եղանք ձեր շատ ասպետութիւններին, դուք չարատաւորեցիք ձեր զէնքը՝ անմեղ եւ անզէն մարդկանց արիւն թափելով...» [1]:

Թիֆլիսի երկրորդ կռիվների ժամանակ, ըստ Արմեն Գարոյի, «Թուրքերու զոհերն եղան մինչեւ 500 հոգի սպանուած ու վիրաւոր, իսկ մենք ունեցանք 8 սպանուած ու 60 վիրաւոր» [2]:

Հայկական մարտական ուժերը անվիճելի հաղթանակ են տանում նաև շրջաններում: Պիտի ասել, որ բոլոր այն ինքնապաշտպանական շրջանները, որոնք գործել են Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ, ի սկզբանե առաջին իսկ հնարավորության դեպքում դիմել են հարձակողական գործողությունների: Նույն մարտավարության ջերմեռանդ կողմնակից էր նաև Սկաբարեցի Սաքոն: Նրա գլխավորած մարտական ուժերը իրականացրել են մի շարք հարձակողական գործողություններ, որոնցից առավել ուշագրավն ու արդյունավետը թուրքական ավելի քան 1500 բնակչություն ունեցող Փոլադ-Այրի գյուղի կործանումն էր:

Թիֆլիսում կռիվների ավարտից հետո, այնտեղ գտնվող մարտիկներից շատերը մեկնում են տարբեր շրջաններ՝ համալրելու տեղի ինքնապաշտպանական ուժերի մարտաշարքերը:

Անդրկովկասում ազգամիջյան բախումները շարունակվում էին, իսկ Թիֆլիսում՝ Կովկասի փոխարքայի պալատում, իշխանության ներկայացուցչների, հայ և թուրք բնակչության կողմից ընտրված երեսունական պատգամավորների մասնակցությամբ, գումարվում է խորհրդաժողով՝ պարզելու ընդհարումների պատճառներն ու մշակելու իրական միջոցառումներ՝ ազգամիջյան թշնամանքին վերջ տալու, խաղաղություն հաստատելու նպատակով:

Փետրվարի 20-ին սկսված խորհրդաժողովում բացման խոսքով հանդես է գալիս փոխարքա Վորոնցով-Դաշկովը և չխորշելով փաստերի խեղաթյուրումից, հայտարարում, որ ինքը ջանքեր չի խնայել մուսուլմանների ու հայերի միջև շարունակվող կոտորածները դադարեցնելու գործում: Այս բացահայտ սուտն արտահայտելուց հետո փոխարքան երկու կողմերի ներկայացուցիչներին կոչել է փոխըմբռնման ու խաղաղ համագործակցության: Ելույթն ավարտում է հետևյալ խոսքերով. «Հարցն այն չէ, թէ ով է մեղաւոր այս շփոթի մէջ, այլ այն, թէ երկրի նիւթական բարօրութիւնը կործանող չարիքը դադարեցնելու համար ո՞ր միջոցներն են իրական: Այդ չարիքը ձեռնտու է միայն աւազակների եւ յեղափոխական կազմակերպութիւնների համար» [3]:

Ելույթի վերջաբանում Վորոնցով-Դաշկովը կանխամտածված շեշտում է երկու կարևոր հանգամանք.

[1] Նույն տեղում:
[2] Արմեն Գարո, նշվ. աշխ., էջ 176:
[3] «Մուրճ», 1906, փետրվար, էջ 170:

1. Ազգամիջյան բախումների պատճառների ու նրանց քննարկման կարևորության անտեսում:

2. հավասարություն դնելով հեղափոխական կազմակերպությունների ու ավազակների միջև՝ ընդհարումների մեղքը, ինչպես նախորդ հանդիպման ժամանակ, բարդել հեղափոխական կազմակերպությունների, մասնավորապես Հ.Յ. Դաշնակցության վրա, որը տվյալ ժամանակահատվածում արդեն ամենահզոր կազմակերպությունն էր ողջ Անդրկովկասում:

Փոխարքայի վերոհիշյալ հարցադրումների շուրջն էլ ծավալվում են հայ և թուրք պատգամավորների վիճաբանությունները: Հայության ներկայացուցիչները, պահանջելով քննարկել ընդհարումները ծնող պատճառները, պնդում էին, որ դրանք գլխավորապես պայմանավորված էին իշխանությունների թույլտվությամբ ու անտարբերությամբ: Իսկ թուրքերի ներկայացուցիչները, պաշտպանելով փոխարքայի «հարցն այն չէ թե ո՞վ է մեղավոր» թեզը, քծնությամբ գովաբանում էին «ժողովրդի շահերին ու խաղաղությանն անշահախնդրորեն» ծառայող իշխանություններին: Ազգամիջյան կռիվների գլխավոր մեղքը վերագրելով Դաշնակցությանը՝ թուրքերը պահանջում էին Կովկասի սահմաններից հեռացնել դաշնակցականներին և ֆիդայական խմբերին:

Միանգամայն հասկանալի տեսակետ է: Ընդհարումների ընթացքում ցարական իշխանությունները և նրանց կամակատար թուրք երևելիները խորապես համոզվեցին, որ իրենց հայակործան ծրագրերը խորտակվեցին գլխավորապես Դաշնակցության հմուտ կազմակերպվածության ու ֆիդայիների հերոսական գործունեության շնորհիվ [1]:

Լեոյի կարծիքով՝ ընդհարումների պատասխանատվությունը Դաշնակցության վերագրելով՝ թուրքերը հետապնդում էին նաև հետևյալ նպատակը. «...նույն այդ դաշնակցականները հայդուկային խմբեր էին կազմում եւ տանում Թուրքիա՝ կռվելու համար: Այս նույնպէս մեծ յանցանք էր համաթուրանական պրոպագանդի ենթարկված բեգերի աչքում եւ այդ յանցանքների համար էր, որ թիւրքերը Անդրկովկասում յարձակւում էին իրենց հարեւան հայերի վրա» [2]:

Խաղաղության կեղծ լոզունգներով քողարկելով իրենց հիմնական նպատակները՝ նրանք ձգտում էին Դաշնակցության կազմակերպություններին ու ֆիդայիներին Կովկասից հեռացնելու միջոցով հայությանը զրկել իր մարտունակ ուժերի աջակցությունից և ավելի դյուրին պայմաններ ստեղծել հայակործան ծրագրերի իրագործման համար:

Մի քանի օր ընթացող խորհրդաժողովում լսելով երկու կողմերի ներկայացուցիչների ելույթներն ու առաջարկությունները՝ Վորոնցով-Դաշկովը ընդհարումները դադարեցնելու նպատակով առաջարկում է.

1. Հաստատել այս տարի քոչի կանոնաւորման մասին եւ դաշտային աշխատանքների ապահովման մասին յանձնաժողովի եզրակացութիւնները.

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 51:

2. Հիմնել փոխարքայի կառավարութեան կից առանձին խորհուրդ երկու ազգերի ներկայացուցիչներից.

3. Նահանգապետերին եւ գաւառապետերին կից նույն հիմքերով կազմել խաղաղարար յանձնաժողովներ, այն նպատակով, որ տեղական իշխանությունները կարողանան դիմել նրանց՝ հայ-թուրքական յարաբերությունների առիթով, գավառական յանձնաժողովները պետք է գաւառի գիւղերը շրջելիս ամեն կերպ նպաստեն բոլորին այնքան ցանկալի խաղաղութեանը» [1]:

Այս առաջարկությունները հայ և թուրք պատգամավորների ուշադրությանը ներկայացնելուց հետո փոխարքա Վորոնցով-Դաշկովը հայտնում է նաև, որ անկախ այս ամենից, ինքը կարգադրելու է, որպեսզի ադմինիստրացիան ամենակտրուկ միջոցներ ձեռք առնի ոչ միայն արմատախիլ անելու անկարգությունները, այլև ճնշելու և խիստ պատժելու մեղավորներին ու ապահովելով ազգաբնակչության համար հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը:

Մարտի 6-ին կայացած վերջին նիստում Վորոնցով-Դաշկովը որպես եզրափակիչ խոսք համագումարի մասնակիցներին հայտնում է. «Թագաւոր Կայսրին հաճոյ է, որ հայ-մուսուլմանական թշնամութիւնը դադարեցի եւ նա պէտք է դադարէ: Ձեզ եմ դիմում, պարոններ, որ դուք եւս գործ դնէք Ձեր ազդեցութիւնը դադարեցնելու համար յարձակումները եւ թալանները: Հաղորդեցէք ժողովրդին թէ թագաւորի կամքը եւ թէ այն խիստ միջոցների մասին, որոնք պէտք է շարունակեն մինչեւ չարիքի արմատախիլ լինելը...» [2]:

Ցարիզմն արդեն բացահայտել էր իր իսկական դեմքը, և իրական արժեքից զուրկ որոշումները չէին, որ պիտի կարգավորեին իրավիճակը Անդրկովկասում ու հայերից հեռացնեին նրա գոյությանը սպառնացող վտանգը:

Հայկական կողմը ներկայացնելով ու գնահատելով ցարական իշխանությունների վարած քաղաքականությունը, որպես կանոն, քննադատում և բացասական կողմերով է ներկայացնում ցարական պաշտոնյաների, սկսած փոխարքաներից (Գոլիցին և Վորոնցով-Դաշկով), մինչև ստորին աստիճանավորների վերաբերմունքը հայության նկատմամբ, հատկապես հայ-թուրքական ընդհարումների ժամանակ:

Օրինակ, իրենց համոզմունքներով և վարքագծով զգալիորեն տարբեր են եղել Գոլիցինն ու Վորոնցով-Դաշկովը: Ճիշտ է, որպես ցարական բարձրաստիճան պաշտոնյաներ նրանք պարտավոր էին իրականացնել կայսրության շահերին համահունչ քաղաքականություն, բայց որպես տարբեր անհատականություններ չէին կարող չունենալ իրենց յուրօրինակ համոզմունքներն ու նրանցով պայմանավորված գործելակերպ և վարքագիծ:

Գոլիցինը իր համոզմունքով ու վարքագծով եղել է ընդգծված հայատյաց: Դրա լավագույն և անժխտելի ապացույցը նրա սադրանքով կայսր Նիկոլայ

[1] «Մուրճ», 1906, փետրվար, էջ 170:
[2] Նույն տեղում:

2-րդի կողմից ընդունված հուլիսի 12-ի օրենքն է, ապա նաև նրա գլխավորած իշխանության հովանավորությամբ ու բողոտությամբ Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումները:

Վորոնցով-Դաշկովը ի տարբերություն Դոլիցինի, եղել է ավելի քաղաքակիրթ, փոքր-ինչ ավելի մեղմ և դիմացինի կարծիքը լսող ու գնահատող:

Նրան, որպես փոխարքայի և անհատի, հայ-ազգային-քաղաքական գործիչներից վատ չի բնութագրում Ալ Խատիսյանը, որը լինելով Թիֆլիսի քաղաքագլուխը, ապա նաև Անդրկովկասի քաղաքների միության նախագահը, հաճախակի է շփվել ու բազմապիսի հարցեր քննարկել նրա հետ:

«Բազմիցս անգամներ,-գրում է Ալ. Խատիսյանը,- եղած եմ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի մոտ եւ ամէն անգամ ալ, ինձ ընդունած է, մանրամասն լսած է իմ զեկուցումներն ու առաջարկները եւ համապատասխան կարգադրութիւններ ըրած հայ ժողովրդի պաշտպանութեան համար՝ գիւղերու եւ քաղաքներու մէջ»[1]:

Նիկոլայ 2-րդին ներկայացրած զեկուցագրերից մեկում(1905 թ. դեկտեմբերի 5) փոխարքայի արծարծած նկատառումներից պարզվում է, որ նրա համար այնքան էլ ընդունելի ու հաճելի չի եղել այն ամենը, ինչը 1905 թ. կատարվում էր իրեն վստահված փոխարքայության սահմաններում[2]:

Նույն զեկուցագրում կայսրին ներկայացնելով Անդրկովկասում տեղի ունեցած դեպքերի մանրամասները՝ Վորոնցով-Դաշկովը խոստովանում է. «Կայսրության մեջ ծավալված հեղափոխական շարժումն անդրադարձել է յեվ Կովկասի վրա: Ըստ որում յես նախ աշխատել էի դրա դեմ .կռվել խաղաղ ճանապարհով, աշխատելով խուսափել ավելորդ ռեպրեսիաներից, որոնք ըստիս, կարող եյին արյունահեղ ապստամբության հանգեցնել յերկիրը, վորը զինվել է դեռևս իմ նախորդի ժամանակ: Վերջին դեպքերը խախտեցին իմ առողջությունը յեվ ես այժմ պարկած եմ... Այս հանգամանքը կապած նրա հետ, վոր գուցե ձերդ մեծություն, իմ քաղաքականությունը Կովկասում չենք գտնում ժամանակակից պահանջներին համապատասխան՝ դրդում է ինձ, տեր առաջարկ անել ձեզ, հետ կանչելու ինձ իմ դիրքերից...»[3]:

Համագումարի ավարտից հետո ընդհարումները, ինչպես խոստացել էր փոխարքան, չընդհատվեցին: Հայ ինքնապաշտպանական ուժերի համար թուրք հրոսակախմբերի հարձակումներն արդեն չէին կարող լինել անակնկալ ու խիստ վտանգավոր:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի գնահատմամբ՝ «Տագնապներով լի հուսահատական այդ շրջանում ահաբեկ հայ ազգաբնակչության գլխավոր նեցուկը Դաշնակցությունն էր: Բախտավորություն էր, որ նա էր կանգնած գործի գլուխը, նա էր զորահավաքի ենթարկում ազգի ներուժը՝ դեմ հանդիման գնալու և կասեցնելու ոտքից մինչև գլուխ զինված տասնյակ հազարավոր արյունարբու խուժանի հարձակումները: Ադետներն ամբողջ Անդրկովկասում աներևակայելի ծավալ կառնեին, եթե Դաշնակցության զինված խմբերը, հին փորձված զինվորների ղեկավարությամբ, հրապարակ չիջնեին իրենց հատուկ անձնուրացությամբ»:

Դաժան փորձությունների ենթարկվելով ցարական բյուրոկրատիայի և համիսլամական գաղափարներով առաջնորդվող թուրք պարագլուխների կողմից սանձազերծված ազգամիջյան ընդհարումներում՝ հայ ժողովուրդը հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճեց ապրելու և հարատևելու իրավունքը: 1905-1906 թթ. հայության գոյապայքարում անգնահատելի են քաջակորով հայորդիներ Նիկոլ Դումանի, Սեբաստացի Մուրադի, Վարդան Մեհրաբյանի, Քեռու, Սեպուհի, Սևքարեցի Սաքոյի, Համազասպի, Սմբատի, Հաճի Հակոբի և բազում այլ հերոսների անգնահատելի ծառայությունները: Հարազատ ժողովրդի բախտորոշ ժամանակաշրջանում հայտնվելով դեպքերի կիզակետում՝ հայ ֆիդային անձնական օրինակով հայությանը ներարկեց մարտնչելու, ազգի գոյությունն ու արժանապատվությունը պահպանելու անխորտակ կամք և պայքարի անհաղթ ոգի:

Կարելի է ասել, որ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում հայության ինքնապաշտպանությունը համաժողովրդական պատերազմ էր, ազգային-ազատագրական պայքարի անքակտելի բաղկացուցիչ մասը, որին կովկասահայության հետ մեկտեղ իր մասնակցությունը ունեցավ նաև արևմտահայությունը: Այն շարժումը, որ հայ ժողովուրդը ծավալել էր ընդդեմ ցարիզմի, սկսած հայոց դպրոցների փակումից և 1903 թ.-ից, ավարտվեց 1905-1906 թթ. ազատագրական պայքարի հաղթանակով:

[1] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 73:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 3, թ. 3:
[3] Նույն տեղում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի 90-ական թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի ասպարեզ է մտնում Հ.Յ. Դաշնակցությունը: Ի տարբերություն Արմենական և Հնչակյան կուսակցությունների, ՀՅԴ արդեն 1895թ. Արևմտյան Հայաստանում և բազմաթիվ այլ հայաբնակ վայրերում հիմնած իր ապակենտրոն կառույցների գործունեության շնորհիվ ձեռք է բերում նկատելի կշիռ ու հեղինակություն:

Հնչակյան կուսակցությունը, առավելապես նախապատվություն տալով տարանջատ, խաղաղ բնույթի մասնակի գործողություններին (Գում Գապուի, Բաք Ալիի ցույցեր), ձգտում էր գրավել Եվրոպական տերությունների ուշադրությունը: Գաղտնիք չէ, որ գործունեության նման մարտավարություն չունեցավ և չէր կարող ունենալ որևէ շոշափելի դրական արդյունք: Սասունի 1894թ. ինքնապաշտպանական կռիվներից հետո Հնչակյանները Արևմտյան Հայաստանում կորցնում են առանց այն էլ ունեցած սահմանափակ հեղինակությունը:

Արմենական կուսակցությունը, որի գործունեությունը սահմանափակված էր գլխավորապես Վան քաղաքով ու հարակից գավառներով, 1896թ. «Վանի մեծ կռիվ» անվանումը ստացած ողբերգական դեպքերից հետո զրկվելով իր ղեկավար գործիչներից, ինչպես նաև մարտական ուժերից, անկում է ապրում:

Կարելի է ասել, որ այդ երկու կուսակցությունների թուլացումը լայն ասպարեզ է բացում Հ.Յ. Դաշնակցության(ՀՅԴ) գործունեության համար: Հայության շրջանում ՀՅԴ հեղինակության բարձրացմանը նպաստեցին նաև հետևյալ հանգամանքները. 1. Հնչակյան կուսակցության համեմատ, ՀՅԴ կազմակերպում էր ավելի մեծ թվով մարտական խմբեր, որոնք կռիվներ էին մղում թուրքերի, ինչպես նաև քրդական հրոսակախմբերի դեմ: 2. Կուսակցության շարքերում ընդգրկում էր արևմտահայ ազդեցիկ գործիչների (Հրայր Դժոխք, Աղբյուր Սերոբ, Վազգեն, Վարդգես, Կոմս և այլոք), որոնք իրենց հեղինակությամբ և գործելակերպով Արևմտահայաստանն ու արևմտահայությանը հոգեհարազատ էին դարձնում Դաշնակցությունը, իսկ Դաշնակցությանն՝ արևմտահայությունը: 3. ՀՅԴ հայդուկային խմբերի գործուն մասնակցությամբ կազմակերպեց Արևմտահայաստանի մի քանի շրջանների (Ախլաթ, Շատախ, Վան) ինքնապաշտպանությունը:

Ճիշտ է, ՀՅԴ նույնպես իրականացրել է բազմաթիվ ձեռնարկումներ Եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու նպատակով, բայց ի տարբերություն Հնչակյանների, զենք ու զինամթերք և մարտական ուժեր, ինչպես նաև գործիչներ Երկիր ուղարկելը մշտապես եղել է նրա գործունեության հիմնական բաղադրամասերից մեկը:

Եթե ընդհանրացնենք Հ.Յ. Դաշնակցության 1895-1908 թթ. գործունեության ուղղվածությունը, ապա պիտի առանձնացնել նրա որդեգրած ռազմավարությունից բխող մարտավարական հետևյալ ուղղությունները.

1. Հայդուկային խմբերի միջոցով արևմտահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու մարտավարությունը: 1895-1897 թթ. ՀՅԴ Արևմտյան Հայաստանի զանազան շրջաններն է ուղարկում հայդուկային խմբեր, որոնք խնդիր ունեին հասնել նախանշված վայրն ու զորավիգ կանգնել և ջարդերից պաշտպանել այդ շրջանի հայ բնակչությանը: Դաշնակցության նախաձեռնությամբ Երկիր մեկնած մարտախմբերից հատկապես արգասաբեր էր Ախլաթ գավառում Աղբյուր Սերոբի մարտախմբի գործունեությունը: 1895 թ.-ին մուտք գործելով Ախլաթ գավառ՝ Սերոբը գյուղերն է ուղարկում իր մարտախմբի անդամներին, որոնք կարողանում են կազմակերպել հայ բնակչության ինքնապաշտպանությունը և փրկում ախլաթահայությանն անխուսափելի կոտորածից: Արդյունավետ էր ՀՅԴ կազմակերպած Հրայր Դժոխքի, Արամ Արամյանի ու Տուրբախի գլխավորած մարտախմբերի մասնակցությունը Բասենի և Խնուսի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերին:

2. Դաշնակցության գործունեությունում առանձնահատուկ նշանակություն ունեն ահաբեկչական գործողությունները, որոնց զոհն են դարձել հայ ազգային-ազատագրական պայքարին հակադրվող ռուս և թուրք պաշտոնյաներ ու թշնամուն ծառայող հայ մատնիչներ: Ահաբեկչական գործողությունները ազատագրական պայքարում անհրաժեշտ են ու անխուսափելի, եթե տեղի են ունենում ճիշտ ժամանակին և ծրագրված մեծածավալ գործողություններին զուգընթաց: Քանի որ Հ.Յ. Դաշնակցության համար դյուրին խնդիր չէր մեծածավալ գործողությունների կազմակերպումը, ուստի ահաբեկչությունների միջոցով փորձում էր ստիպել թուրք և ցարական պաշտոնյաներին, ինչպես նաև քուրդ ցեղապետերին ու հրոսակախմբերին՝ մեղմելու հայության նկատմամբ իրականացվող բռնությունները:

3. Ժամանակն ապացուցեց, որ օսմանյան իշխանությունների սանձազերծած կոտորածների ժամանակ հայ ազգային կուսակցությունների և մասնավորապես ՀՅԴ կողմից կենսագործված տոկ պաշտպանողական բնույթի գործողությունները, այն էլ սահմանափակ քանակությամբ, որևէ նշանակալի ազդեցություն չէին կարող ունենալ արյունալի դեպքերը կանխելու, արևմտահայությանը ջարդերից պաշտպանելու և Հայկական հարցը որևէ կերպ լուծելու գործում: Անհրաժեշտ էր փոխել գործելակերպը, կյանքի կոչել ժամանակաշրջանի յուրահատկություններին համահունչ պայքարի նոր եղանակներ: Հ.Յ.Դաշնակցությունը որդեգրում է պայքարի նոր մարտավարություն, այն է՝ անցում պաշտպանական գործողություններից հարձակողականի: Դրանով ՀՅԴ նպատակադրվում է մեծադրդող գործողությունների արձագանքով ոչ միայն ինչ-որ չափով սարսափի մատնել թշնամուն ու սանձել հայության նկատմամբ գործադրվող բռնությունները, այլև Հայկական հարցի վրա բևեռել եվրոպական տերությունների ուշադրությունը: Արդյունքում կազմակերպվում են «Բանկ Օտտոման»- ն ու «Խանասորի արշավանք»- ը: Եթե Խանասորի արշավանքը վրեժխնդրության առումով ունեցավ դրական արդյունք, ապա մեծ տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու ջանքերը մնացին անհետևանք:

Վրեժխնդրության նպատակով կազմակերպված հարձակողական բնույթի Խանասորի արշավանքը, կարելի է ասել, մասամբ արդյունավետ էր: Ջախջախվեց քրդական Մազրիկ ցեղը: Այդ մասին, ինչպես արդեն նշվել է, հետա-

գայում Սարգիս Օհանջանյանի հետ հանդիպելիս խոստովանում է նաև Մագրիկ ցեղի առաջնորդ Շարաֆ աղան [1]:

Խանասորի արշավանքը դրականորեն է գնահատել նաև Խրիմյան Հայրիկը: Ըստ Հայկ Աճեմյանի, երբ Հայոց Հայրիկը լսում է արշավանքի մանրամասները, հուզմունքով ասում է. «Կէցցեն մեր յեղափոխականները. աւելի աղէկ է, որ Խանասորներու մէջ զարնենք զարկուինք, արիւն թափենք, քան թէ պետութեանց պալատներու մէջ աղերսենք ու լանք...» [2]:

Այսուհանդերձ, հերթական անգամ չիրականացվեցին եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու Դաշնակցության ակնկալիքն ու հետապնդած նպատակը:

Զուտ վրեժխնդրության առումով կարելի է առանձնացնել նաև «Մոսուն-Զորի արշավանքը»: Արդյունքում՝ մարտական խմբերը ոչնչացնում են Մոսունի և Զորի թուրքական զորանոցներն ու պահակակետերը, բայց այդ գործողությունները բացարձակապես բավարար չէին հարկադրելու թուրք իշխանություններին՝ դուրս քաղելու Սասունը իրենց ուշադրությունից: Մանավանդ որ արշավանքի ձեռնարկման օրերին Սասունում ընթացող մարտերն արդեն ավարտվել էին, և Անդրանիկի գլխավորած մարտական ուժերն անցել էին Վան: Մոսուն-Զորի արշավանքը կրկին հավաստեց այն ճշմարտությունը, որ խաբուսիկ ու երկդիմի են զարիզմի քաղաքականությունն ու վերաբերմունքը հայ ազատագրական պայքարի ու հայության նկատմամբ:

4. Հայդուկային-պարտիզանական մասնակի գործողությունները, չնայած իրենց հերոսականությանը, չէին կարող դրական փոփոխություններ մտցնել արևմտահայության կյանքում: Հարձակողական բնույթի մարտական-ցուցական գործողությունները նույնպես էական որևէ ազդեցություն չգործեցին, դույզն-ինչ չփոխեցին Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների վերաբերմունքը: Ժամանակաշրջանն ու ազատագրական պայքարի փորձը թելադրում էր վերանայել գործունեության պատմության գիրկն անցած եղանակներն ու ձևերը և առաջնորդվել առավել կենսունակ ռազմավարությամբ ու մարտավարությամբ:

Հայդուկային պայքարի և ահաբեկչական, ինչպես նաև հարձակողական բնույթի մարտական--ցուցական գործողությունների մարտավարությանը զուգընթաց ՀՅԴ գործունեությունում, հատկապես 1898թ.ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովից հետո, արմատավորվում է նաև ընդհանուր ապստամբություն կազմակերպելու մարտավարությունը: ՀՅԴ մի շարք գործիչներ(Հրայր Դժոխք, Գուրգեն, Վարդգես, Աշոտ Երկաթ, Վահան և այլք) ձգտում էին խուսափել ժամանակավրեպ, ազատագրական պայքարին նպաստ չբերող անարդյունավետ ձեռնարկումներ իրականացնելու մարտավարությունից և կուսակցության ուժերը կենտրոնացնել ընդհանուր ապստամբություն կազմակերպելու վրա: Պիտի նշել, որ եթե ընդհանուր ապստամբության կազկազմակերպումն անտարակույս չափազանց բարդ, իսկ Հայաստանի պարագայում գրեթե անիրագործելի խնդիր էր, ապա հնարավոր էր արևմտահայության անաղմուկ, գաղտնի գինուն ու այդ մարտավարությամբ ավելի հուսալի ինքնապաշտպանության կազմակերպումը:

Ընդհանուր ապստամբություն կազմակերպելու աշխատանքները, ինչպես արդեն նշվել է, ՀՅԴ գործունեությունում սկսվել են 1898թ. 2-րդ Ընդհանուր ժողովից հետո և շարունակվել մինչև 1904թ. Սասունի ապստամբությունը, ապա նաև մինչև 1908թ. հուլիսյան սահմանադրության ընդունումը: Այսուհանդերձ, ՀՅԴ գործունեությունում գերիշխում էր հայդուկային-մասնակի գործողություններով Եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու մարտավարությունը: Արդյունքում՝ մի քանի ահաբեկչական գործողություններն ու Առաքելոց վանքի կռիվը: ՀՅԴ կիրառած նման մարտավարությունը հանգեցրեց 1904թ. ապստամբության: Սասունի ապստամբությունը, որն իրականում վերածվեց ինքնապաշտպանության, թեպետ բազմաթիվ հերոսական էջեր գրեց ազատագրական պայքարի պատմության մեջ, սակայն ավարտվեց պարտությամբ և դույզն-ինչ չարժանացավ եվրոպական տերությունների ուշադրությանը:

5. 1895-1904թթ. Դաշնակցության գործունեության առավել նշանակալի ուղղություններից էր մարտական ու գինատար խմբերի կազմավորումը: Արևմտյան Հայաստան մեկնող մարտական ու գինատար խմբերի մղած կռիվները թեպետ վեր են որևէ գովասանքից, բայց հանգամանքների բերումով այդ հերոսամարտերը նույնպես չնպաստեցին և չէին կարող նպաստել հայ ազատագրական պայքարի արդյունավետ ելքին:

6. Հանրահայտ իրողություն է, որ Հ. Յ. Դաշնակցությունը ձևավորվել էր արևմտահայ խնդրի շուրջը, և կուսակցության ծրագրում տեղ գտած հիմնադրույթներն ու Ընդհանուր ժողովների ընդունած որոշումները հիմնակում վերաբերում էին Արևմտյան Հայաստանի ազատագրմանը :

Այսուհանդերձ, 1903 թ-ից Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, որոնք գլխավորապես պայմանավորված էին Հայկական հարցի եւ կովկասահայության նկատմամբ ցարական Ռուսաստանի դրսևորած քաղաքականությամբ: Համայն Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդի կողմից հաստատված հայ եկեղեցու կալվածքների ու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակումից հետո Հ. Յ. Դաշնակցությունը որդեգրում է ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմավարությունը և պարզում հեղափոխական պայքարի դրոշն ընդդեմ հզոր կայսրության: Այդ թվականից սկսած Դաշնակցությունը իր գործունեությունում բացում է պայքարի երկրորդ՝ Կովկասյան ճակատը:

ՀՅԴ և նրա նախաձեռնությամբ ստեղծված Ինքնապաշտպանության Կենտրոնական կոմիտեի գործուն մասնակցությամբ Կովկասահայության ծավալած միասնական և անզիջում պայքարը ունեցավ իր դրական արդյունքը: 1905թ. օգոստոսի 1-ին ցար Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը, ու հայ եկեղեցուն վերադարձվեցին բռնագրավված կալվածքները, և վերաբացվում են դպրոցները:

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.1457, գ.2, գ.16, էջ11:
[2] Աճեմեան Հ., Հայոց Հայրիկ, Թաւրիզ, 1927, էջ 702:

7. 1905 թվականը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող այնպիսի իրադարձություններով, որոնք անակնկալ էին ոչ միայն բովանդակ հայության, այլև ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-հեղափոխական կուսակցությունների համար: Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական ընդհարումները, և այս անգամ արդեն արևելահայության վրա է ծառանում ցարդերի սպառնալիքը:

Ցարական իշխանությունների հովանավորությունից ու թողտվությունից գոտեպնդված, մահմեդական զինյալ հրոսակախմբերը 1905 թ. փետրվարի սկզբներին հայկական կոտորածներ են սանձազերծում Անդրկովկասում պանիսլամիզմի կենտրոն Բաքվում: Կոտորածներն արագորեն տարածվում են Երևանի նահանգ, Զանգեզուր, Արցախ, և հայաբնակ բոլոր շրջաններն ու ընդհուպ մինչև Թիֆլիս: Կովկասահայության միակ փրկությունն էր՝ ապավինել սեփական ուժերին և կազմակերպել ինքնապաշտպանությունը: Կարելի է աներկբա պնդել, որ հայ ազգային-ազատագրական պայքարում կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպումը Դաշնակցության գործունեության ամենանշանակալի ու ամենաարդյունավետ էջերից են, եթե ոչ ամենաարդյունավետը: ՀՅԴ առաջնորդությամբ հայ ինքնապաշտպանական ուժերը տոնում են լիարժեք հաղթանակ և կովկասահայությունը փրկվում է անխուսափելի կոտորածից:

Հայ ազգային-ազատագրական պայքարը ընթանում էր չափազանց դժվարին ու բարդ պայմաններում: Հայոց Ազատամարտի ղեկը ստանձնած Դաշնակցության համար դյուրին չէր մշակել ժամանակի յուրահատկություններին ու պահանջներին համահունչ ազատագրական պայքարը կազմակերպելու կենսունակ հայեցակարգ և արդյունավետ ու գործող մարտավարություն: Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի քաղաքական կյանքում կատարվող տեղաշարժերի, ինչպես նաև Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների դրսևորած վերաբերմունքի թելադրանքով ՀՅԴ հարկադրված որդեգրում և փորձում էր կենսագործել տարաբնույթ մարտավարություն: Երբեմն նույնիսկ Ընդհանուր ժողովի որոշումները կարող էին յուրովի կենսագործվել ՀՅԴ կառույցների և առանձին գործիչների կողմից: Օրինակ. Խանասորի արշավանքի ձգձգումը, կամ Գևորգ Չավուշի հայդուկապետության շրջանը: Թեպետ արդեն կար հայդուկային-մասնակի գործողությունները դադարեցնելու մասին 2-րդ Ընդհանուր ժողովի որոշումը, բայց Գևորգ Չավուշի Սասուն վերադառնալուց հետո Դուրան-Բարձրավանդակում տիրող իրավիճակի թելադրանքով հայդուկային կռիվները դարձյալ վերսկսվում են և շարունակվում մինչ 1908թ. սահմանադրության ընդունումը:

Եթե ընդհանրացնենք ՀՅԴ 1895-1908թթ. գործունեությունը, ապա պիտի ասենք, որ այն ընթացել է չափազանց բարդ պայմաններում և ունեցել հակասական ընթացք ու արդյունք: Որպես կանոն ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկները բոլոր մարտական գործողություններում թշնամու մեծաքանակ ուժերի դեմ մարտնչել են մինչև վերջին հնարավորությունը: Բազմաթիվ են դեպքերը, երբ ազատագրական պայքարին զինվորագրված մարտիկները, բնավ չհուսալքվելով և տեղի չտալով Երկիր մեկնող խմբերի կրած անհաջողություններից, կազմակերպիչներից հատուցում պահանջել են թույլ տալ և օգնել իրենց մեկնելու Երկիր:

Օրինակ հարց է ծագում, ինչպիսի՞ արդյունք կունենային Ալբերտ Սեդրակի, Նիկոլ Դումանի, Գևորգ Չավուշի, Անդրանիկի, Սերգեյ Սեդրակի, Սեդրակի, Խանի և մյուս մարտական գործիչների ղեկավարությամբ եղած հերոսամարտերը, եթե դրանց գլխավորած մարտական և զինատար խմբերը հանդիպած ու ապտակված լինեին ոչ թե տասնյակ, այլ հարյուրավոր, առավել ևս հազարավոր ասպետների և բավարար քանակությամբ զենք ու զինամթերքով: Հանրահայտ իրողություն է, որ Հ. Յ. Դաշնակցությունը իր գործունեության ընթացքում կարողացել է առավել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք տեղափոխել Վան և հասցնել տեղի Շամի կենտր. կոմիտեի տնօրինությանը: Նույնիսկ Դուրան-Բարձրավանդակի հասցեագրած զենքերը ՀՅԴ Վանի (Շամ) կենտր. կոմիտեի ներկայացուցիչները պահեստավորել են իրենց զինապահեստներում և շատ հաճախ զանազան պատճառաբանությամբ չեն հանձնել հասցեատիրոջը:

Նկատի ունենալով Սասունի լեռնականների և տարոնահայության ազատելու անհողդողդ կամքն ու խիզախությունը, կարելի է հաստատապես պնդել, որ եթե Վանի պահեստներում ամբարված այն հարյուրավոր ասպետներն ու տասնյակ հազարավոր փամփուշտները, որոնք մատնությամբ 1908թ. հունվարին բռնազավթեցին թուրք իշխանությունները, ժամանակին տեղափոխվեին և հանձնվեին հասցեատիրոջը, ապա որևէ կասկած լինել չի կարող, որ միանգամայն այլ ընթացք ու արդյունք կունենար Սասունի և Տարոնի 1915թ. ինքնապաշտպանությունը:

Պատմական այդ ժամանակահատվածի օբյեկտիվ վերլուծությունն ու սկզբնաղբյուրների, հուշագրությունների անկողմնակալ մեկնաբանությունը մատնանշում է, որ ազատագրական պայքարի առավել արժեքավոր և ուշագրավ էջերը կազմում են այն հերոսամարտերը, որոնք մղել են հայդուկապետներից հայկական կամավորական գորախմբերի հրամանատարներ դարձած հայրենակիցները: Ֆիդայիները Անկասկած բազում մարտերում կոփված ֆիդայիների անգնահատելի մարտական ավանդույթներն էին, որոնք մեծապես պայմանավորեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեծագույն նվաճումը 1918թ. մայիսյան հերոսամարտերում հայկական կանոնավոր գորամասերի առնչությունն ու հաղթանակներն ու Հայոց անկախ պետականության (Հայաստանի Հանրապետության) վերականգնումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ 1. «ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԻՑ»

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ 1.
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԿՈՒՎԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1895-1896 թթ.

1. 1. ՀՅԴ մարտավարության խնդիրները ըստ 1895 թ. Ընդհանուր- ռայոնական ժողովի որոշումների----------9
1. 2. Մխլաթ գավառի ինքնապաշտպանությունը---------- -----17
1. 3. Հայդուկային խմբերի Դերիկա վանքը և «Խարիսխ» գործարանը----28
1. 4. Շատախ գավառի ինքնապաշտպանությունը---------- ----39
1. 5. 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը (Վանի «Մեծ կռիվը») ----- 59
1. 6. Վանի «Պստիկ կռիվները»---------- 86
1. 7. Վազգեն Դերոյանի մարական խմբի մուտքը Վան---------- --115

ԳԼՈՒԽ 2.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԿՈՒՎԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ (ՏԱՐՈՆ, ՍԱՍՈՒՆ)

2. 1. Խաթավինի և Ավերակ ջրաղացի հերոսամարտերը----------124
2. 2. Խաստուրի կռիվը. (Խան-Պետրոս, Բարսեղ Թիրաքյան)----------142
2. 3. ՀՅԴ գործունեությունը Դուրան -Բարձրավանդակում (1898-1903 թթ.)--157
2. 4. Սասունի ապստամբությունը----------174

ԳԼՈՒԽ 3.
ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԶԻՆԱՏԱՐ ԽՄԲԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1903-1904 թթ.)

3. 1. «Մրրիկ» զինատար հեծելախմբի անցումը Սասուն----------200
3. 2. Խանի և Օնիկ Ներուզի մարտական խմբերը Բասենի մարտերում--218
3. 3 Աշոտ Երկաթի մարտական խումբը----------225
3. 4. Կայծակ Վաղարշակի «Դժոխք» զինատար հեծելախումբը ---------232
3. 5. «Որսկան» մարտական խումբը Զարդանիսի կռվում----------239
3. 6. Մոսուն- Զորի արշավանքը----------247

ԳԼՈՒԽ 4.
ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒՇԻ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ————261

ԳԻՐՔ 2. «ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ»

ԳԼՈՒԽ 1.
ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՈՒՄԸ----------291

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԹԱԹԱՐ) ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ————326

2. 1. Երևանի նահանգի ինքնապաշտպանության կազմակերումը----------340
2. 2. Իրավիճակը Նախիջևան քաղաքում և գավառում----------345
2. 3. Ընդհարումների վերսկսումը Երևան քաղաքում----------363
2. 4. Ինքնապաշտպանական մարտերը Երևանի նահանգի գավառներում և Երևան քաղաքում----------381

ԳԼՈՒԽ 3.
ԳԱՆՁԱԿ ՆԱՀԱՆԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. 1 Գանձակ քաղաքի և գավառի ինքնապաշտպանությունը ----------450
3. 2. Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերը---------- -----496
3. 3. Ինքնապաշտպանական մարտերը Արցախում---------- 501

ԳԼՈՒԽ 4.
Բաքվի երկրորդ եւ երրորդ ընդհարումները----------537

ԳԼՈՒԽ 5.
Ինքնապաշտպանական մարտերը Թիֆլիսում ----------569

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------590

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՌԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՋԵՐ ՆՐԱ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԻՑ

Հրատարակիչ-տնօրեն՝ Մարտին Զիլֆուղարյան
Խմբագիր՝ Սերգեյ Գասոյան
Սրբագրությունը՝ Սոնա Բաբլոյան
Շարվածքը՝ Լալա Մելքոնյան

Շապիկի նկարում՝ 1904 թ. Սասուն մեկնող Նիկոլ Դումանի զինատար խումբն է:

Ստորագրված է տպագրության 30. 03. 2012
Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60 84 1/32
Ծավալը 27,5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օր.

Տպագրված է «Գրիգոր Տաթևացի» տպարանում
ՀՀ ք. Երևան, Ֆանարջյան 48